



Հարգելի՛ ընթերցող.

ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտը, չհետապնդելով որևէ եկամուտ, իր կայքերում ներկայացնելով հայագիտական հրատարակություններ, նպատակ ունի հանրությանն ավելի հասանելի դարձնել այդ ուսումնասիրությունները:

Մենք շնորհակալություն ենք հայտնում հայագիտական աշխատասիրությունների հեղինակներին, հրատարակիչներին:


*Մեր կոնտակտները՝*

*Պաշտոնական կայք՝ <http://www.armin.am>*

*Էլ. փոստ՝ [info@armin.am](mailto:info@armin.am)*

# ՆԻՐ ԽՈՒՄԱՆ

ԵՄԵՆ 3.  
ԽՈՒՄԻԿԻ



ԵՂԻՇԷ Յ. ՄԵԼԻՔԵԱՆ

# ՀԱՐՔ - ԽՆՈՒՍ

Յ Պ Ա Ր Ա Ն  
ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ ՀԱՅՈՑ  
ՄԵՇԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՑ  
ԱՅՔԻԻԿԱՍ, ԼԻՔԱՑԱՑ



202

1915-ի ՀԱՅԿԱԿԱՆ ՄԵՐ  
ԵՂԵՌՆԻՆ ՆԱՀԱՏԱԿՈՒՈՂ  
ԽՆՈՒՍՑԻՆԵՐՈՒ  
ԵՒ  
ՄԱՆԱԻԱՆԴ  
ԹԱՆԿԱԳԻՆ ՀՕՐՄ՝  
ՅՈՎՀԱՆՆԷՍ ՎԱՐԺԱՊԵՏ  
ՄԵԼԻՔԵԱՆԻ  
ԱՆՄՈՒԱՆԱԼԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ  
ԵՂԻՇԷ Յ. ՄԵԼԻՔԵԱՆ

Գիրքիս նիւթերու դասաւորման, ինչպէս նաեւ սրբագրութեան աշխատանքները սիրալոյսով կերպով կատարած է հայրենակից՝ Պրն. Արտաշէս Տէր Խաչատուրեան (Պէյրուք), որուն մեր սրտագին շնորհակալութիւնները կը յայտնենք ջերմօրէն :

*Ե.Յ.Մ.*



ԵՂԻՇԷ Յ. ՄԵԼԻՔԵԱՆ

## Ե Ր Կ Ո Ւ Խ Օ Ս Ք

---

Մեր բնագաւառի՝ Խնուսի պատմութիւնը, «Հարֆ-Խնուս» անունով է որ լոյս կ'ընծայենք այս հատորով:

Խնուսցի եւ ոչ-խնուսցի գրիչներ, տարբեր ժամանակներու մէջ, զանազան յօդուածաշարքերով, Հա՛յ թէ օտա՛ր մամուլի մէջ գրած են անոր տեղագրական, ազգագրական ու բնիկ ժողովուրդին ապրումներուն և մարտնչումներուն մասին: Սակայն, որքան որ մեզի ծանօթ է, առանձնապէս զիրքով մը, Խնուսն ու Խնուսցին չէ ներկայացուած հանրութեան:

Մեր այս համեստ աշխատանքը կատարած ենք երկար տարիներու ընթացքին, հայրենի հողէն ու ջուրէն, արեւէն ու աստղերէն հեռու, օտար՝ բայց հիւրընկալ երկնակամարի մը ներքեւ, Ամերիկեան հալոդ ու ձուլոդ և մնչիչ միջավայրին մէջ: Յամառ ու յարատեւ աշխատանքով կրցած ենք մէկտեղել, այն հինը եւ նորը, ինչ որ հնարաւոր դարձած է, եւ զայն նուիրել որպէս սրտագին ՁՕՆ, 1915-ի ՀԱՅԿԱԿԱՆ ՄԵԾ ԵՂԵՌՆԻ ընթացքին նահատակուող ԽՆՈՒՍՑԻՆԵՐՈՒ ԽՆԿԵԼԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ ընդհանրապէս, եւ առանձնապէս իմ թանկագին ՀՕՐՍ՝ ՅՈՎՀԱՆՆԷՍ ՎԱՐԺԱՊԵՏ ՄԵԼԻՔԵԱՆԻ անմոռանալի յիշատակին:

Եօթը տարի առաջ լոյս տեսած «ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՏԱՐՍԻ ԱՇԽԱՐՀԻ» պատմագիրքին մէջ, տուած ենք Խնուս (Հարֆ) գլուխին տակ, Խնուսի տեղագրական ամփոփում մը, ու նաեւ 1915-ի «Խնուսի տեղահանութիւնը» եւ «Իմադրութիւնները»: Ներկայ

հատորը, սակայն, իր ամբողջութեամբ լոյս կ'ընծայուի, անլի ընդարձակ՝ ներառեալ իր տեղագրութիւնով, վիճակագրութեամբ, քարտէսով, բանահիւսութիւնով, դէպքերով ու դէմքերով, ու գաւառաբարբառով:

Լիակատար գործ մը տուած ըլլալու յաւակնութիւնը չունինք. սակայն, ինչ որ կրցած ենք հաւաքել ու լոյս ընծայել, կը հաւատանք որ իր տեսակին մէջ առաջինն է, որուն համար ուրախ ենք եւ ինքզինքնիս վարձատրուած կը զգանք:

Այս աշխատանքի ընթացքին, շա՛տ կամ քիչ, բոլոր այն օժանդակութիւններուն համար, զորս ստացած ենք մեր հայրենակիցներէն, բոլորին ալ խորապէս սրտագին շնորհակալութեան խօսք ունինք:

### ԵՂԻՇԷ Յ. ՄԵԼԻՔԵԱՆ

## Խ Ն Ո Ւ Ս Ե Ի Խ Ն Ո Ւ Ս Ց Ի Ք

Գրեց՝ ՆՇԱՆ ՊԷՇԻԿԹԱՇԼԵԱՆ

Տուրուբերան նահանգի՝ Մարդադի գաւառին կեդրոնական ոստանն է հնուար, դալար դրասանգներով դարպաս, ուրկէ կ'երթան ՏԱՐՕՆ (Մուշ), Բարձր Հայք (Կարին) եւ Վասպուրական (Վան): Երեքն ալ հնուսէն նոյն հեռաւորութեամբ եւ նոյն մերձաւորութիւնով, բայց Մուշը անլի մօտ, հոգեկան քանապարհով:

Խնուար Բիրակն է, այսինքն լին, լեռ ու լո՛յս... Իսկ Բիրակնը դրախտն է, այսինքն հայրահողը հազարան ակերու եւ չորս աւագ գետերուն... Ու դրախտը եղեմն էր Եւայատէր Ադամին... Խնուսն է ուրեմն երկրային Արքայութիւնը, չլմփացող ջուրերով, բուրումնաւէտ բուսականութեամբ, երգեցիկ գեղեցկութիւններով, վսեմօրէն վեհապետական, եւ լարիւրիքնս լեռներու, լիներու, լոյսերու...

Ահա թէ ի՛նչու Խնուսի կ'ըսեն.

— ԵՐԿՆԻ ՎՐԱՅ՝ ՅԻՍՈՒՍ,

ԵՐԿՐԻ ՎՐԱՅ՝ ԽՆՈՒՍ...

Խնուսիք եղեմցիներ են, դրախտականներ: Ահա՛ թէ ինչպէս իւրաքանչիւր Խնուսիքի հոգիին մէջ կը շոգայ տեսիլ մը արքայութենէն, կը գունավառի նկար մը դրախտէն, ու տակաւին կը պարզուին պատկերներ՝ Պատմութենէն Հայոց:

Խնուս-Բիրակն է որ կ'առաքէ հայաշխարհին Արաքսն ու Արածանին. երկու առաւելապէս հայանուէր գետերը, մին արձակելով հիւսիս եւ արեւելք, միւսն արձակելով հարաւ եւ արեւմուտք: Զուրերու բարութեամբ բեղմնաւորելով հայահողը, բանբիւններով բերկրութիւն տարածելով ու ամբողջ Հայաստան աշխարհը հրաշափոխելով իր մեծանկարին, այսինքն գայն վերածելով «Երկիր դրախտավայր»ի:

Այո՛, Խնուս-Բիրակն է որ իր ծոցի անսպառ ստինքները կը պարպէ. յանուն հայրենիքի շէնութեան:

Եւ դարձեալ Խնուս-Բիրակն էր, որ կ'ընդունէր, բաց գրկի մը նման. հարաւէն ու հիւսիսէն առաքեալ մեր գլխագիր Գիծերը, ու զանոնք կը միացնէր ի՛ր Գիծերուն, յանուն Սուրբ գործին...

Խնուսիքին նիւթականն ու աննիւթականը ի սպաս դրուած էին. յանուն հայրենագործութեան:

Մտե՛ք խոցոտուած հնուսցիին հոգիէն ներս, ու պիտի տեսնէ՛ք իշխանական բերդի իր բարձրագիւր դղեակը, իր պարտէզներով: Թէեւ շատ բան աւերուած է գուլումէն, սակայն, միշտ իր մրգաստանին մէջ պիտի գտնէ՛ք ֆաջուքեան բազմաբամա ծառը, ու անկէ ծլած պտուղները արդարութեան: Եւ աղբիւր մը ծառին հով, որ կը խոխոջէ հոգեբուխ հայրենասիրութիւն ու կ'ոռոգէ իր շրջակայքը: Պիտի շնչէ՛ք բոյրը բարեկամութեան եւ պիտի լսէ՛ք երգը եղբայրութեան: Եւ լերան վրայ պիտի ողջունէ՛ք անսահման պարգուքիւնն ու պայծառութիւնը իր հայկականութեան: Եւ պիտի երգէ՛ք.

— ԵՐԿՆԻ ՎՐԱՅ՝ ՆԱԶՈՎՐԵՑԻ,  
ԵՐԿՐԻ ՎՐԱՅ ԱԼ՝ ԽՆՈՒՍՑԻ...

Խնուսցիին ներքին վառ կապոյտ կամարին վրայ տարածուած է Նագովրեցիին Յիսուս, որպէս ոսկելոյս, ու անոր ներքեւ, բաց պարտէզի պէս սփռուած է հնուսական Տարօնականութիւնը: Վերէն Նագովրեցիին կը ժպտի, վարէն հնուսցիին կը ժամերգէ: Ու ժամերգութիւնը հնուսցիին՝ խենթացած պատարագ մըն է սիրոյ եւ կարօտի: Զի հնուսցիին է ա՛յն Հայերէն, որոնք հայրենաբաղձութենէ տառապելու, հայրենաբաղձութենէ գժուելու առաքինութիւնը ունին:

Ինծի կը թուի թէ հնուսցիին, իբրեւ Տուրուբերանցի հայրենուէր, իր կուրծքին լայնքին ներքեւ ունի թեւարաց, գոհարաբիր ու ոսկեհուր փետուրներով արծիւ մը: Այդ տարօրէն, այդ տարագիր արծիւը, թէ՛ կ'ուտէ հնուսցիին թոքն ու սիրտը, թէ՛ կը սնուցանէ իր շունչով: Եւ հնուսցիին ե՛ւ կը սպառի, ե՛ւ կը սպառագիւնուի:

Խնուսը գեղակերտ նկար մըն է Հայոց Պատմութեան մէջ: Ու հնուսցիին շինուած է իր ֆաղափին, իր լեռներուն, իր լիներուն ու իր լոյսերուն պատկերին պէս:

Այդ մեծանկարին մէջ կ'երեւին հնուսցի գլխագիր Գիծերու գունդեր. ահա մէկ ֆանի բոցեղէն անուններ անոնցմէ.— Առիծ Աւագ, Անարօ, Բաղէ, Շուշէ Մասօ, Մարտիրոս, Բերդեցի Տիգրան, Հարամիկցի Տիգրան, Շէյխ Զիլան-Արտաշէս, Բջօ Աբրօ, Այվագ Մուշեղ, Սիմօն Մկրտիչեան ու հմբապետ Փիլոս, եւ դեռ այնքան ֆաջամարտիկ ու խորանարժան հենքերը հնուսի: Տակաւին Հարամիկ աւանին հնարամիտ Մելիքները, խրոխտ ու խիզախ, խելանի ու խանդավառ հայրենասիրութեամբ եւ հերոսութիւնով լեցուած կուրծքերով Մելիքները, որոնց կան շառաւիղներն ի Ֆիլատելֆիա, Եղիշէ եւ Սիրաֆ Մելիքեան, հայր եւ որդի: Նաեւ արուեստագէտները հնուսի.— խաղաղներ ու ասոդիկներ եւ երգասացներ, որոնք հոգեկան մթնոլորտները կը զարդանկարէին երգելով.

— ԱՐԵՒՆ ԷՍՏԵՂ ՎԱՌՄԱՆ Է,  
ԶՈՒՐԸ ԴԵՂ ՈՒ ԴԱՐՄԱՆ Է...

Այս թագաւորական թափօրին մէջ կը տեսնեմ բարձրացած խաչ մը, որ տեսնագրելով կ'օրհնէ՝ հնուսի և իր գեղջերուն համայն մարտիկներն ու մարտիրոսները, բոլոր մեռածներն ու մնացածները: Այդ խաչը աջին մէջն է

մեր հոգեւոր հօր ու միանգամայն մեր եղանակաւոր եղբօր՝ հնուսցի Սուրէն ֆահանայ Բաբախեանին, որ յուզուելով կը յիշէ ու կը յուշէ հնուսի խելերն ու հոնարհները, հրարձակելով գովք ու գեղօն: Կը բարձրացնէ խաչը անդադար, որպէսզի վերելակէ թափօրը, ու դառնայ ամէնուն տեսանելի: Որպէսզի թափօրը, ֆաշուած խաչին մոգական մագնիսէն, ունենայ վերելք ու շողշողայ լերան վրայ լուսապսակեալ: Իր բարձրացուցած խաչը կը վերածուի գրիչի, որուն թանաֆը լոյսն է բիւրակնեան: Ու թափօրը կը վերելակէ յամբարբար եւ յարատեւօրէն՝ համերգով մը, որուն կ'ընկերակցին սրինգները հովիւներուն եւ հովերուն:

Այս հնուսական նկարը ունի է տեսիլի, որուն վրայ լոյս կը ջրվիծէ Աստուած:

Կ'անկախեմք այդ նկարը մեր հոգեկան հիւրասրահին մէջ, գայն շրջանակելով մեր սիրով, ու անոր առջեւ վառելով մաս մը մեր մարմինէն, մո՛մ, ու մաղթելով.

— Սիրելի հնուսցիներ, սրբազան խնուսը պահեցէ՛ք ձեր հոգիներուն մէջ, պահպանեցէ՛ք ու ձեր զաւակներուն փոխանցեցէ՛ք, իբրեւ նուիրական նկար, իբրեւ Տուրուբերանեան տապանակ ուխտի, իբրեւ երգասաց *Երազ*, որ պիտի իրականանայ, եթէ գայն ակամայ լքելէ յետոյ, չլքենք նաեւ կամաւորապէս: Ու կը մաղթեմ մոլեգնօրէն.

— ԵՐԿՆԵՆ ԵՐԿԻՆ ՈՒ ԵՐԿԻՐ՝ ՅԻՍՈՒՍՈՎ,  
ԵՐԿՆԵ ԵՒ ԶԵՐ ԾՈՎ ՀՈԳԻՆ՝ ԽՆՈՒՍՈՎ:

(Առնուած «Լուսարեւոյ» գիրքէն, տպուած Փարիզ, 1956):



# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

էջ

Երկու խօսք — Եղիշէ Յ. Մելիքեան  
Խնուս եւ Խնուսցիք — Նշան Պէշիկթաշլեան

է  
թ

Ա. Մ Ա Ս

## ՀԱՐՔ-ԽՆՈՒՍ ՏԵՂԱԳՐՈՒԹԻՒՆ ԵՒ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ԳԼՈՒԽ Ա.

ՀԱՐՔ-ԽՆՈՒՍ -- Ընդհանուր Տեղեկութիւններ

3

ԳԼՈՒԽ Բ.

Խնուս Բերդ

18

ԳԼՈՒԽ Գ.

Խնուսի Հայաբնակ Գիւղերը

25

Վիճակադիր Խնուսի Հայաբնակ Գիւղերու

95

ԳԼՈՒԽ Դ.

Խնուսի Քրդաբնակ Գիւղերը

97--101

ԳԼՈՒԽ Ե.

## ԽՆՈՒՍԻ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Վանքեր

102

Եկեղեցիներ

104

Աւետարաններ

106

Յիշատակարաններ

107

Դպրոցներ

107

Դպրոցներ, Մշակութային Միութիւններ

108

	<b>ԷՋ</b>
<b>ԳԼՈՒԽ Զ.</b>	
Հաւատալիքներ	110
Տնային Բժշկութիւն	113
Երկրագործութիւն	115
Մեղուարուծութիւն	116
Պարտիզամշակութիւն	118
Զինորսութիւն	120
Պանիրի Դեղ	122
<b>ԳԼՈՒԽ Է.</b>	
Նշանաւոր Տուներ եւ Անձեր	123
Մելիքեան Գերդաստան	124
Խնուս Բերդեցի Մահաթեան Գէորգեան Ընտանիքը	162
Խնուս Բերդի Սիմոնեան Ընտանիքը	165
Գովանդուկ Գիւղի Պղէ Մխոյի Տունը	171
Վարազդատ Անտոնեան	173
Տէր Սուրէն Աւագ Քհնյ. Բարախեան	176
Տէր Եղիշէ Աւագ Քհնյ. Մխիթարեան	180
Տէր Բարդէն Քհնյ. Գասպարեան	181
Փօլ Կարապետեան	183
Փրոֆ. Յարութիւն Տիրացեան	184
<b>ԳԼՈՒԽ Ը.</b>	
Պատուելի Սիմոն Դաւիթեանի Օրագրութիւնը	186
<b>ԳԼՈՒԽ Թ.</b>	
1890—1895 Խնուսի Դէպքերը	214
<b>ԳԼՈՒԽ Ժ.</b>	
Յեղափոխական Դէպքեր եւ Դէմքեր	223
<b>ԳԼՈՒԽ ԺԱ.</b>	
Խնուսի Դիմադրութիւնը եւ Ջարդը	269
<b>ԳԼՈՒԽ ԺԲ.</b>	
Քիւրտերը	299
<b>ԳԼՈՒԽ ԺԳ.</b>	
<b>ԽՆՈՒՍՑԻՆԵՐ ԱՇԽԱՐՀԻ ԶԱՆԱԶԱՆ ՄԱՍԵՐՈՒՆ ՄԷՋ</b>	
Ամերիկայի Միացեալ Նահանգներուն Մէջ	309
ՀԱՅԱՍՏԱՆ Ապրող Խնուսցիներ	319
Սուրիա Ապրող Խնուսցիներ	323
Լիբանան Ապրող Խնուսցիներ	327


**Բ. Մ Ա Ս**  
**ԲԱՆԱՀԻՒՍՈՒԹԻՒՆ**

	<b>ԷՋ</b>
Ժողովրդական Երգեր եւ Պարերգներ	334
Աշխատանքի Երգեր	374
Մանկական Երգեր	380
Երգիծանք եւ Գովք	393
Օրհնութիւն եւ Անէճք	413
Յեղափոխական Երգեր	417
Քիւրտերէն եւ Քրքերէն Երգեր	423
Առածներ	429
Հանելուկներ	444
Պար	454
Ժամանց եւ Ջրօս	455


**Գ. Մ Ա Ս**  
**ՀԱՐՔ - ԽՆՈՒՍ ԳԱՒՈՒՄԱՐԲԱՌ**

Երկու խօսք	467
Գաւառաբարբառ Ա—Ֆ	469

**ՅԱՆԿ ՆԻՒԹԵՐՈՒ**



Մասշտաբը 1:40,000



Քարտուս նկուսի և Շրջակայքի

Ա. ՄԱՍ

# ՀԱՐՔ - ԽՆՈՒՍ

ՏԵՂԱԳՐՈՒԹԻՒՆ ԵՒ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

# ԳԼՈՒԽ Ա.

## Հ Ա Ր Ք - Խ Ն ՈՒ Ս

### ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

#### ՊԱՏՄԱԿԱՆ ԵՒ ԱՒԱՆԴԱԿԱՆ

Հին Հայաստանի քաղաքական-աշխարհադրական բաժանումով, Խնուս կը ղրուի Տուրուբերանի նահանգին մէջ, Հարք անունով, ամփոփելով իր Երկրամասին մէջ Խնուս - Խաւուրի շրջանը (տես ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆ, Հայր Ղեւոնդ Ալիշան, 1853, Վենետիկ, Քաղաքական նկարագիր Հայոց Մեծաց, էջ 23) :

Խնուս եւ Հարք, մեր բնաշխարհի այս վաղեմի ու պատմական Երկու անուններն ալ, մէկը միւսէն աւելի հին ու բնիկ են: Չամչեան Խնուսի կու տայ Տուարածատափ անունը եւ կը զնէ Խնուսը իրրեւ «հին Տուարածատափ գաւառ ի Տուրուբերան, այն է Խնուսայ Երկիր» (Չամչեան, Բ. Գիրք, էջ 954): Դարձեալ կը յիշատակէ Վարաժնունիք անունը, որուն հետ կապուած կը մնան բազմաթիւ պատմական դէպքեր, որոնցմէ մին է յունազաւան Փիլարտոս հայ իշխանի սխրագործութիւնները (Չամչ., Ա. Գիրք, էջ 213—219, Բ. Գիրք, էջ 997): Դարձեալ Չամչեան Հարք անունն կը կապէ Դաւիթ Անյաղք փիլիսոփայի անունը. «ի Հարք գաւառէ, ի Հերթն, կամ Հերեան կամ Ներքին գեղջէ» (Չամչ., Ա. Գիրք, էջ 780): Գրիգոր Մաղիստրոս եւ Մաղաքիա Օրմանեան կու տան Խնուս, Խնուն անունները: Թէ այս վերջին անունները ո՞րքան աւրնչութիւն ունին հալոյիներու ժամանակաշրջանին հետ՝ տակաւին առեղծուած է, թէպէտեւ 1916-ին, ռուսական զրաւման շրջանին, ազգազրազէտ Երուանդ Լալայեան մասնակի պեղումներով եւ հետազոտութեամբ կը փորձէ ըսել թէ հալոյիներու պատմական հետքերը կը գտնուին Խնուսի մէջ:

Հարք անունը մեր բանասէրներէն Հայր Ղեւոնդ Ալիշան այսպէս կը մեկնարանէ. — «Մեր դիւցազնահայր Հայկ նահապետը, իր հաստատուն բնակութիւնը եւ իր տիրական արուոր հաստատեց բարձրաւանդակ Երկիր մը, Հայաստանի կեդրոնին մօտ եւ ոչ հեռու Արածանիէն, այսինքն հիմնական Մուրատ-Չայ գետոյն ազբիրներէն, որ է արեւելեան նիքատ: Հայկ այս

դաշտին անուր անուանեց Հարք, որպէսզի ցուցնէ թէ հոն հաստատուեցան անոնք, որք Հայոց ազգին հայր եղան. հոն տեղս աւան մըն ալ շինեցին, գոր անուանակոչեցին Հայկաշէն»։ Քոյս գերմանացի ցանապարհորդը կը յիշէ այս դաշտի անունը, որ հիմա *Սնուս* կը կոչուի, գիւղ մը *Հայկ* կամ *Փայկ* անուամբ, *Սնուսի բերդէն* դէպի հիւսիս-արեւելք, մէկ ժամ հեռի»։

**Չամչեանի Հայոց Պատմութեան Ա. Հատորին մէջ (էջ 59) ա՛յսպէս կը կարգանք.**— «Յաւանդութիւնս գրուցացն *Ոլիմպիոսորոսայ* իմաստասիրի աւարտի, թէ Սեմայ առեալ գորդիս իւր չուեաց ընդ արեւմուտս *Հարաւոյ*, գտանել իւր բնակութիւն, եւ հասեալ առ երկայնամիստ լեռամբ ի դաշտի մի, ընդ որ գետ անցանէր. դադարեցաւ առ գետովն ամիսս երկուս, և գլեանն առ որով նստաւ կոչեաց յանուն իւր *Սիմ*։ Չայն երկիր տուեալ միոյ ի կրտսերագոյն հարդոց իւրաց, որում անուն էր ասէ *Տարրան*. դարձաւ անդրէն յարեւելս հարաւոյ, ուստի եկեալն էր, գտանել զայլս պատշաճաւոր տեղիս այլոց որդոց իւրոց։ Իսկ *Տարրան* մնացեալ անդ հանդերձ ուստերօք եւ դստերօք եւ արամբք ևնցին, կոչեաց զգաւառն զայն յանուն իւր *Տարօն*. եւ աշխարհն եւ յետոյ կոչեցաւ *Տուրուրերան*։ Ապա բաժանեաց գորդիս իւր յայլ եւ այլ տեղիս այնր գաւառի, յորմէ եւ տեղին այն կոչեցաւ *Յրօն*, այսինքն ցրումն կամ բաժանումն։ Եւ զի *Ջրուան* որդի նորա մնաց անդր առ հոր իւրում, յետ մեռանելոյ *Տարրանայ* լեռն սոյն կոչեցաւ նաեւ *Ջրուան*։ Սոյնպէս եւ որդիք *Քամայ* եւ *Յարեթի* բազմացեալ յորդիս սփռեցան յերեսս այնր աշխարհի յայլ եւ այլ գաւառի ի մեծն *Հայաստան*. որդիքն *Քամայ* գաւառնաք աւարեմտից, եւ որդիք *Յարեթի* գաւառնաք լեռնն *Մասեաց*։ Եւ ամենեցուն նուազ էր մի լեզու, եւ մի բարբառ. եւ որպէս հաւանական թուի այն էր լեզու *Հայոց* գորմէ տես ի վախճանն առաջին գրոյս ի ծանօթութիւն»։

*Տեղական վաղնջական աւանդութիւնը այնքան տառջ կ'երթար, որ Սնուսի գաւառին եւ Սրմանց կամ Բիւրակնեան սարերուն կը կապէր նախամարդուն՝ Աղամի պատմութիւնը, եւ ըստ այդ աւանդութեան Պինկէօլի սարը Աստուծոյ ստեղծած դրախտն է, իսկ Պինկէօլի արեւելեան լանջերու պատուանդանին վրայ դոնտուղ Հարամիկ հայաբնակ զիւղաւանն ալ՝ Աղամին ու Եւային բնակավայրն է եղած, իսկ զիւղին մօտակայքի Սելիմօրուք կոչուած բլրակին վրայ, պաղ աղբիւրի մը վերեւը, կը ծրարէր Աղամի որդիքն՝ Աբէլի չիրիմը։ Միեւնոյն ատեն Հարամիկ հայաւանին անուան ստուգարանութիւնն ալ կը կապէր Հայկ նահապետի որդի Հարմայի անուան հետ։*

Հարամիկ եւ Քաղքիկ հայաւաններու մերձ ձորակ մը, տեղական աւանդութեամբ «Ի մի լարի» կ'անուանուի, իբրև թէ համուր բերդ լեռան վրայ բնակող որսորդ Ղամէք, իր բերդէն իջած պահուն, այս վայրը իր նետ ու ազեղը կը լարէ. նոյն պահուն, անբեւոյթ ձայն մը կ'ըսէ «Ի մի լարի»։ *Նա այստեղ, որսորդ Ղամէք սպաննած է հողապործ Կայէնը, որուն գերեզմանն ալ ցոյց կը տրուէր ձորին առընթեր բլրակի մը վրայ եւ բնիկներէն կ'անուանուէր Կայէնի Բլուր։*

*Աւանդական այս հեքիաթունակ պատմութիւնը ինքնին բնորոշիչ էր։ Սնուսցին՝ Սնուսը կ'ընդունէր իբրև Դրախտի վայրը, եւ անոր կու տար մարդկութեան օրրանը ըլլալու հնամենայ փառքը, ինչ որ Հայկ դիւցազնահայր նահապետի դիցարանութեամբ Հայոց վաղնջական օրրանը ըլլալը իր մեծագոյն փառքը կը համարէր, այն խոր համոզումով թէ Հայկի բարբառը եղած է Դրախտի խօսուն լեզուն, եւ այդ բարբառով արձագանգած են Սրմանց աստուածաստեղծ սարերը եւ Սնուսի երգներանդ ծագկաւէտ ձորերն ու ծործորները, ուր Հաղարան Բլրուլը իր սիրոյ մեղեդին գեղգեղած է քաֆուր վարդով ծոցուոր, վարդի թուփին տակ, արծաթ աղբիւրի կոչկոչին միախառնուելով։*

**ԽՆՈՒՍԻ ԳԱԻԱՌԸ**

*Սնուսի սահմաններն են Կարինը, Դերջանը, Քղին, Բասէնը, Ալաշկերտը, Մալազկերտը, վերի եւ վարի Պուլանուխները և Վարդօն՝ Մշոյ կողմէն։ Երբ-ժամատուած է հետեւեալ լեռներով. արեւմուտքէն Պինկէօլ կամ Բիւրակնեան լեռները, հարաւ-արեւմուտքէն Ղանդար Տաղն ու հալխալ լեռը. ասոնք Ծուշարի սահմանը կը պահէ Քղիի կողմէն։ Խամուր բերդի սարը Զեռնակայ թեւերով կ'ընդգծէ Մշոյ եւ Պուլանուխներու սահմանը, դառնալով զէպի արեւելք Գոգալ-Պապա, եւ Հագր-Պապա լեռները, հիւսիս արեւելքէն Սպիտակ-Սար կամ Աղբի Տաղ իր երկու թեւերով՝ Դեղթափ եւ Չեմէն լեռները. ապա անցնելով հարաւարի (Դասնաւուրք) եւ Կէօփուի (Տուարածատափ) լեռնադաշտերը, ուր կ'եզերուին Գապպէլ Տաղն ու Երեւան լեռը, որոնք կը սահմանեն Ալաշկերտն ու Բասէնը։*

*Իր աշխարհագրական դիրքով կը նկատուի Հայաստանի սիրտը եւ պորտը։ Հաւասար հեռաւորութեան վրայ կ'իյնայ էրզրումի, Վանի եւ Պիթլիսի նահանգներէն։*

*Այս գաւառը հարուստ էր լեռներով ու դեռերով եւ կ'արժէ հանգամանորէն անդրադառնալ անոնց։*

**ԲԻԻՐԱԿՆԵԱՆ ԼԵՌՆԵՐ.**— Բիւրակնեան լեռները ընդարձակ բարձրաւանդակի մը կազմութիւնն ունին եւ կը ձեւացնեն ամբողջական զանգուած մը, որ իր բարձունքէն ջուր կը բաշխէ Հայաստանի ամէն կողմը։

*Բիւրակնեան լեռներու այս հսկայ զանգուածը փարթամ պահ մըն է՝ Հայաստանի բարձունքին վրայ, եւ զետեղուած է Մշոյ Ս. Կարապետէն հիւսիս, ընդգրկելով Վարդոյի, Սնուսի, Ծուշարի եւ Թեքմանի շրջանները։*

*Ճշգրիտ գաղափար մը կ'ունենանք Բիւրակնեան զանգուածի մասին, եթէ լեռնային այս դրախտավայրի սահմանագծումը Կենճի հիւսիսէն, Ս. Կարապետի Հաւատամք լեռնէն (8081 ոտք բարձրութիւն) սկսինք ուղիղ դէպի հիւսիս արեւմուտք, Սերմիս, Զարեշ եւ հալխալ լեռներու բարձունքներով, սահման ընդունելով այն ակունքները, որոնց ջուրերէն կը կազմուի ձապաղձուրի կամ Կոյնիւկի գետը եւ Լեղիկ գետը, որ Քղի հասնելով կը կոչուի Քղիի գետ։*



Պինկեօլ

Այդ ակունքները Եուզարի սահմանին մէջն են եւ կը հոսին դէպի արեւմուտք եւ հարաւ, միանալու համար Մուրատ գետին, որ իր կարգին Վարդոյի եւ Խնուսի գետերը ընդունած է, բոլորն ալ Բիւրակնի նոյն գագաթներէն քամուած:

Բիւրակնի նոյն գագաթներէն ու լճակներէն գետակներ կը հոսին, այս անգամ դէպի արեւելք, կազմելու համար Արաքսի Բիւրակնեան ճիւղը, որ Չուչարէն ու Թեքմանէն կ'անէ բազմաթիւ գետակներ եւ կ'իջնէ Բասէնի դաշար:

Բիւրակնեան լեռներու սահմանափոխ կ'անցնի այդ գետակներու ակունքներէն, այսինքն Թեքմանի ջրաբաշխական գագաթներէն մինչեւ Բասէնի Եսպան գիւղը: Այդ վայրէն քիծը Արաքսի հունը բռնելով կ'իջնէ դէպի հարաւ, միշտ դէպի Արաքսի ակունքները: Գէս ճանապարհին կը բռնէ Աղվիւրանի լիւրան գագաթը եւ կը հասնի Խնուսի դաշար, որ դաշտալին հարապատ մէկ պատան է Բիւրակնեան բարձրաւանդակին: Գաշտի հիւսիսէն քիծը կրօնանք երկարել մինչեւ Ղարաչոպան գիւղը, ուրկէ Խնուսի գետին հոսանքը բռնելով կը թեքուինք դէպի արեւմուտք եւ եամաւը լեռներու բարձունքներէն:



Պինկեօլի բարձրաւանդակը

րով կ'իջնենք Չարպուհար, ուր Ալաշկերտէն հոսող Արածանին եւ Վարդոյէն հոսող Պինկեօլ սուն իրարու կը միանան: Չարպուհարէն սահմանափոխ կը հասնի Մշոյ դաշտի առաջին գիւղը՝ Ծխաւու, ու կը թեքուի դէպի արեւմուտք, Սերկի լեւան կողերով կը միանայ Ս. Կարապետի Հաւատամք բարձունքին:

Ահա այս շրջափոխին մէջ կ'իջնայ Բիւրակնեան լեռնային բարձրաւանդակը, որ իր այդ տարածութեամբ Մշոյ դաշտէն երկու անգամ մեծ է: Բիւրակնեան լեռնակուտակը ամբողջական է իր այս շրջափոխին մէջ: Ոչ մէկ քարտէս կամ աշխարհագրութեան գիրք իր ցուցմունքներով լրիւ գաղափար մը կրնայ տալ Բիւրակնեան դրախտի մասին: Մասնակի որեւէ պտոյտ Խնուսի կողմերը կամ այցելութիւն մը Վարդոյի շրջանը, ամբողջական գաղափար չի տար այն վեհափառ աշխարհի մասին, որ բիւր ակերով, աղբրակներով, լճակներով բիւրեղազարդ երկրամաս մըն է:

Բիւրակնեան լեռներու ընդհանուր անունին հետ, զանազան մասեր մասնակի լեւան մը անունը կը կրեն: Սերկի լեռը Ս. Կարապետի լեռն է, որ ունի 9000 ոտք բարձրութիւն: Հաւատամքը՝ 8081 ոտք բարձրութիւն: Բիւրակնեան գագաթներէն Սրմանց լեռը ունի 10710 ոտք բարձրութիւն, Պինկեօլի գագաթը՝ 10757 ոտք բարձրութիւն: Եուզարի լեռները՝ 9000 ոտք բարձրութիւն: Թեքմանի լեռները՝ 9500 ոտք բարձրութիւն: Խնուս քաղաքի կոնակը բարձրացող լեւան գագաթը 10000 ոտք բարձրութիւն ունի:

Ուշագրաւ երեւոյթ մըն է այն իրողութիւնը, որ Բիւրակնեան լեռնային բարձրաւանդակին մաս եղող այս ընդարձակ տարածութիւնները 8000

ոտք բարձրութեան վրայ կը գտնուին. իսկ ամենէն բարձր գագաթները 10757 եւ 10710 ոտք բարձրութիւն ունին: Որով փոքր տարբերութեամբ բարձրաւանդակ մըն է, լեռնային դաշտ մըն է Բիւրակնեան աշխարհը: Անոր ծայրամասերն են որ ձորեր ու խորխորատներ ունին: Միջին մեծ մասը գոլաւոր համատարած մարգագետին մըն է, անսահման ծաղկաստան մը, ուր հազար ակունքներ աչք կը բանան, լճակներով եւ աղբիւրներու ակերով:

Եթէ Հայաստանը երկինքէն առկախ լեռնակղզի մըն է, ապա ուրեմն Բիւրակնեան բարձրաւանդակը երկինքին բացուած հսկայ սեղան մըն է, իր ակունքներով երկինքի աստղերուն հետ մրցող:


Սասունի լեռները վեհափառ բարձունքներ ունին. պարող լեռնաշղթաները զիրար կը խաչաձեւեն: Անդունդներն ու խորխորատները զլիսու պտոյտ կու տան: Գեղեցիկ է Սասուն, բայց է նաև ահատեսիլ եւ սարսուղեցիկ: Սակայն Բիւրակնեան բարձրաւանդակը միայն գեղեցիկ է, վեհ խորհուրդներով լեցուն գեղեցկութեամբ: Աշխարհէն կտրուած՝ առ երկինք բացուած սրբազան սեղան մը, ծաղկալից, կանաչադարձ, պսպղուն ակունքներով, երգեցիկ թռչուններով լեցուն եւ անոնց համերգով աղօթքի կանգնած բնութիւն մը: Արեւածագին խոտերու եւ ծաղիկներու վրայ իջած ցօղերը կը պսպղան, կարծես թէ երկինքի բոլոր աստղերը վար թափած են Հայաստանի այս բարձունքներուն վրայ, ազամանդէ շողեր արձակելու համար: Լայն հորիզոններ ընդգրկող խաղաղութիւն մը, խորհրդաւոր լռութիւն մը կը տիրէ ամէն կողմ, ու թռչուններու համերգն է որ կը բարձրանայ դէպի երկինք:

Չմայլումի ու վերացման մէջ կը զգաք գոյութիւնը Աստուծոյ, որ երկինքէն իջած է Բիւրակնեան բուրաստանի մէջ, ու կը համոզուիք որ եթէ Աստուած դրախտը աշխարհի մէջ տեղ մը պիտի գտնուէր, միակ տեղը Բիւրակնեան աշխարհը պիտի ըլլար:



Ազ տաղը եւ Խնուսի դաշտը կարաւէն դիտուած

ԱՂ-ՏԱՂ ԵՒ ԽԱԼԻԱԶ. — Խնուսի դաշտէն դէպի հիւսիս կը բարձրանայ Աղ-Տաղը կամ Սպիտակ լեռը, 6265 ոտք բարձրութեամբ, ու աւելի հիւսիս կը միանայ Խալիազ լեռան, որ 6780 ոտք բարձրութիւն ունի: Այս լեռնաշղթաները Խնուսի շրջանի հիւսիսային մասը կը բաժնեն Բասէնէն եւ Ալաշկերտի շրջանէն: Մեծ դանդուած մը կը կազմուի Աղ-Տաղէն, Խալիազ լեռնէն եւ Շարիան լեռներէն, որոնք կը լեցնեն Բասէնի, Ալաշկերտի եւ Խնուսի միջև երկամ տարածութիւնը: Աղ-Տաղի լեռնաշղթան կ'երկարի դէպի արեւելք եւ Խնուսի գետին հետ յառաջանալով կը միանայ արեւելեան Եփրատին եւ սահմանակից կ'ըլլայ Պուլանուսին եւ Մալազկերտին:




Խամուր լեռ

ԽԱՄՈՒՐ ԼԵՌՆ. — Խամուր լեռը ունի 9846 ոտք բարձրութիւն: Կը տարածուի Խնուսի եւ Պուլանուսի միջև: Արածանիի աջ կողմը կը միանայ Ջեռնակ լեռան, որ կը շարունակէ իր թեւը մինչեւ Մալազկերտի առջեւէն անցնող Արածանիի արմուկը:

Գ Ե Տ Ե Ր

ԽՆՈՒՍԻ ԳԵՏ. — Խնուսի գետը կը բխի Բիւրակնեան լեռներու ամենէն բարձր գագաթէն (10757 ոտք) եւ քանի մը ճիւղերով կ'իջնէ Խնուս: Մէկ ուրիշ ճիւղը կը բխի Կիւմկիւմի Պաշքենտ գիւղի բարձունքէն եւ Հարամիկ գիւղին մօտ կը միանայ Խնուսի գետին: Շուշարի Կարակալա եւ Ազվերան լեռներէն կը կազմուի գետ մը, որ Խնուսի դաշտին մէջ, Չաուրմէ գիւղին մօտ, կը միանայ Խնուսի գետին: ԽՈՉԼՈՒԻ գետակը եւ ԿԷՕՔ ՍՈՒ գետակը Աղ-Տաղի լեռներէն կը բխին եւ Ղարաչոպան գիւղին վերը կը միանան Խնուսի գետին:





Արափ գետը՝ Խնուսի եւ Բասէնի միջեւ

Խնուսի գետը կը մտնէ Պուլանուխ գաւառը եւ Համզաչէխ գիւղի հարաւէն կը միանայ Եփրատին:

ՊԻՆԿԵՕԼ ՍՈՒ. — Վարդոյի գետն է, որ կը բխի Բիւրակնեան բարձր գագաթներէն երեք-չորս փոքր ճիւղերով եւ կ'իջնէ Կունտեմիր գիւղին առջև, անկէ զառիթափ հոսանքներով կ'իջնէ Չարպուհար, իր մէջ առնելով ԿԻԻՄ-ԿԻԻՄԻ գետակը, որ նոյնպէս կը բխի Բիւրակնեան 10770 ոտք բարձունքէն: Վարդոյի գետը կը միանայ Եփրատին, Չարպուհարի Խնձոր գիւղի արմուկին մօտ:

ՄԵՂԴԻ ԳԵՏ կամ ԿԵՕՆԻԿ ՍՈՒ. — Ճապաղջուրի գետն է, որ կը բխի Բիւրակնեան լեռներէն եւ բազմաթիւ ճիւղեր ընդունելով իր մէջ, կը միանայ Եփրատին: Գետակներու բազմաթիւ ճիւղերու բերումով այս շրջանը կոչուած է Ճապաղջուր:

ԲԻԻՐԱԿՆԵԱՆ ԼՃԱԿՆԵՐԸ. — Բիւրակնեան 3—4 լճակները, որոնք աղբիւրի աղուներէն մեծ են եւ բաւական տեղ լճացած կը պահեն ու ապա կը հոսին, կը գտնուին 8000 ոտք բարձրութեան վրայ:

\* \* \*

Խնուսի գաւառը կը բաղկանար 336 գիւղերէ եւ կը բաժնուէր հինգ շրջաններու, հետեւեալ նոր ու հին անուններով.

- 1.— Խնուս — Հարփ.
- 2.— Շուշար — Վարաժնուհիփ.

3.— Թագման կամ Թարգման, Մարդաղի կամ Մանանաղի.

4.— Խարաեագի — Գասնաուրփ.

5.— Կէօֆուս — Տուարածատափ:

Այս հին: շրջաններէն կարելի է գտնել հին Մանանաղին, որ կ'ընդգրկէ Շուշարի եւ Թագմանի մէջ խոշոր երկրամասը ու կը հասնի մինչեւ Դերջան:

Այս հինգ հողամասերու տարածութիւնը կը հաշուուէր մօտաւորապէս 500 քառակուսի մղոն, ծովու մակերեսէն 5-500 ոտք բարձր գիրքով: Խնուսի գաւառի տարածութիւնը, որ միայն հայկական գիւղերով բնակուած էր, կը սահմանուէր 10—12 ժամ երկայնութիւն, 6—8 ժամ լայնութիւն: Հայր Ղ. Բնճիճեան կը սահմանէ «յարեւմտից յարեւելս 10 ժամու քանապարհ, իսկ լայնութիւն իբր 6 ժամու քանապարհ»: Մինչ ուղեկիր Լինչ կը սահմանէ Խնուս-Բերդէն մինչեւ Գոպալ ծայրագաւառի հայկական գիւղը՝ 34 մղոն: Գարձեալ անդիպացի ուղեկիր Այնուորդ կը գրէ 1840-ին. «Խնուս կը գտնուի Խորիզմիական ջերմաչափի եռացման աստիճանի վրայ, 5239 ոտք», եւ կ'աւելցնէ. «Տիփսիսի օդաչափով 5686 ոտք: Արօս գիւղի մէջ առնուած արեւի միջօրեական բարձրութիւնը, որ է հարաւային լայնութեան 39 աստիճան 17' 40" ... Կըլասֆորի բնութիւնը Խնուսը կը դնէ լայնութեան 39 21' 42" աստիճանին»:

Գարեգին Վրդ. Սրուանձտեանց, իր «Համով-Հոտով» (Կ. Պոլիս, 1884) գիրքին մէջ այսպէս կ'արտայայտուի.

«Խնուս. այս գաւառը կ'իյնայ Կարնոյ, Բասէնի, Ալաշկերտի եւ Մշոյ, Վարդոյի, Մանագիւրտի եւ Պուլանըխներ գաւառաց միջև. դիրքը մեծաւ մասամբ լեռնային. ունի նաեւ ընտիր դաշտային մասեր, ջուրն եւ օդը անմեման: Հողը արգասաւորութեամբ կարի հոչակեալ: Գաւառագլուխն է Խնուսի Բերդը. կը վերաբերի Կարնոյ: Գետը՝ Խնուսայ ջուրը, որ կ'իջնայ Բիւրակնէն եւ շրջելով շատ մը գեղերը՝ Գարաչօպան գեղի առջեւէն կ'անցնի կ'երթայ Պուլանըխ եւ կը խառնուի Եփրատին: Երասխայ ծագումն ալ այս գաւառէն է, որ կը բխի նոյնպէս Բիւրակն լեռնէն եւ մեծ վտակ մը կազմելով՝ Թարնու գեղի մօտէն իջնալով դէպի Քիւլլիլի եւ Մէնիսիլի գեղերը, անելով՝ կ'երթայ կ'անցնի Բասէնը: Կան եւ շատ մը վտակներ: Բոլոր այս գաւառի լեռները նշանաւոր են ջրերով եւ արօտներով, որոց մայր քաղաքին է Բիւրակն: Բիւրաւոր խաշիւփ, անդեայ եւ ընտիր ընտիր մշոյց կ'որոճան, ու ազգի ազգի թռչունք կը դայլայլեն այդ դրախտներուն մէջը:

Հնագոյն բերդեր եւ դերբուկներ շատ կան: Բնակիչք հաստակազմ, առոյգ եւ գեղեցիկ: Հայաբնակ գիւղօրայք գաւառիս՝ 25: Աշիրաք քաղաքն են մաս մը Հասնանցիք, Զիլանցիք, եւ մաս մը՝ Զիբրանցիք: Կան նաեւ Զագայ կամ Տմրիկ ըսուած խեղճ քաղաք, որ Գըզըլապալ են, 1000 տան չափ: Հայք իբր 14127, Վանք՝ 1, Մժնկերտու Ս. Կարապետ: Վարժարանք Հայոց՝ 8. Ուսանող՝ 296»:

1914-ի ուռն-թրքական պատերազմէն կամ հայկական մեծ եղեռնէն առաջ, հայաբնակ գիւղերը կը համրուէին 35—38, իսկ միւս գիւղերու ոմանց

մէջ կը բնակէին շատ սահմանափակ թիւով հայեր, որոնք կա՛մ արհեստաւորներ եւ կա՛մ «մարարա»ներ էին: Ամբողջ դաւառի Հայոց թիւը կը հաշուուէր աւելի քան 25·000՝ 1895-ի դէպքերէն մինչեւ 1915 ըստ տարուան ժամանակամիջոցին:

Քիւրտերը տիրացած էին լեռնային շրջաններուն՝ Խամուր-Բերդի եւ Պինկէօլի խոտառատ, ջրառատ եւ ծաղկաւէտ բարձունքներուն, մանաւանդ Թազմանի, Խարանապի եւ Կէօքսուի ընդարձակ լեռնադաշտերուն եւ հովիտներուն, արգասաբեր արտերուն ու դալարապեղ մարդերուն, ուր առաւելապէս խաշնարածութիւնը ընդհանրացած էր եւ համբաւուող դարձած:

Շէն եւ բարդաւաճ էին հայաբնակ գիւղերը, մանաւանդ 1908-ի Օսմանեան Սահմանադրութեան ընծայած ազատութեան կարճ ժամանակամիջոցին. ծաղկեցուցած էին երկրագործութիւն, խաշնարածութիւն, մեղուարուծութիւն (տես Կարնոյ «Յառաջ», 1909, Արշակ Կ. Թիւթիւնճեանի յօդուածաշարքը՝ «Խնուս Տեղապրական»), հաւարուծութիւն եւ տնային դանազան արհեստներ՝ պանրաշինութիւն, օճառաշինութիւն, ոստայնանկութիւն, գորգագործութիւն, ներկարարութիւն: Ներկը կը պատրաստէին ծաղիկներէ եւ բուսարմատներէ: Գորգագործութեան մէջ ծաղկեցուցած եւ համբաւի հասցուցած էին «Նախշ է Ֆարօ» ըսուած պճնումը:

Արհեստն ու առեւտուրը ընդհանրապէս Հայոց ձեռքն էր: Սալաֆտար՝ դրամական փոխառու, եւ սարաֆ՝ դրամափոխ՝ հայեր, չերքէզներ, թուրքեր եւ քիւրտեր հաւասարապէս այս գործով կը զբաղէին: «Թէճիբութիւն»ը՝ մեծաքանակ արջառներու եւ ոչխարներու վաճառման գործը, որ նախասահմանադրութեան շրջանին մենաշնորհն էր չերքէզներու եւ թուրքերու, Սահմանադրութեան օրերուն հայերուն ալ գործը դարձաւ եւ սկսաւ նախանձը շարժել նախորդներուն:

Խնուսի բնական հարստութիւններն էին աղահանքերը, քարահանքերը, քարածուխի հանքը, պղինձի հանքը, քարիւղի հանքը (Նըֆթըք՝ Խամուր-Բերդի սարալանջերուն վրայ, իսկ Խաթրանլըղ, մերձ Թաշքեսասանի, Փալանթոքեան սարի հիւսիս-արեւելքը) եւ արծաթի հանքը (Սպիտակ սարի լանջերուն՝ Բուրհան եւ Տետէվերան գիւղերու մերձակայքը):

Խնուս-Բերդի ձորին մէջ, Կարմրական ձորաբերանը, գետին առնիթեր, կային հանքային երկու ակեր, քով քովի, որոնցմէ մէկուն ջուրը դառն էր, իսկ միւսինը՝ թթու. այս ակերը կը կոչուէին Զերմուկներ: Զրաբուժութեան հաւատքով հիւանդները հոն կ'երթային լողանքով բուժուելու: Մարուֆ հայկական գիւղին քով կար հանքային տիղմ մը, որ կը կոչուէր Պլնկիկ եւ որ շատ ծանօթ էր իր բուժիչ յատկութիւնով: Գովանդուկ դիւղաւանի քովը գտնուող ջուրի ակերէն մէկը կը կոչուէր Թալալոց. «Նորէնցք» ըսուած լուսնային հիւանդութենէ՛ գարնուող մանկիկները այս ջուրով կը լողցնէին եւ ջուրը կը խմցնէին հիւանդին բուժուելու հաստատ հաւատքով:

Աղահանքերը հետեւեալ անուններով ծանօթ էին. Թաթոսի-Տուլլան. ասիկա կ'իյնար Թազման-Շուշար-Վարդօ շրջանին, այսինքն հին Մարգաղիի մէջ, ու թերեւս Խնուսի տրուած Մարգաղի կամ Մարգաղի անուանումը աս-

կէ ծագում առած ըլլայ: Օրմանեան իր Ազգապատումին մէջ այս շրջանը կը դնէ Մարգ-Աղի:

Մշկանայ-Տուլլան, Սպիտակ-Տուլլան եւ Կարմիր-Տուլլան, որոնք կը գտնուին Զեռնակայ սարին վրայ, որ է Խամուր բերդի մէկ բազուկը, բոլորն ալ աղի հոսուն ջուրեր էին, զորս շոգիացնելով կը չորցնէին: Կային նաեւ էլ-պիս գիւղի քովի աղի Շորախները, ինչպէս նաեւ Գովանդուկ հայաւանի մօտակայ աղահանքը, որ ժամանակին գիւղի Հայոց սեփականութիւնը եղած է, սակայն մեր օրերուն թուրք կառավարութիւնը խլած էր սեփականութեան եւ շահարկութեան իրաւունքը եւ միւս աղահանքերու հետ մենաշնորհը դարձած էր Փրանսական ընկերութեան մը:

Կային նաեւ քարահանքեր, որոնք կը շահագործուէին տնաշինութեան, կամուրջի կամարներու, երկանաքարի, գերեզմանաքարի, ջրաղացի աղօրիներու, ձիթահանքի, ինչպէս նաեւ աղբիւրներու եւ ջրամբարի համար յատուկ փորուած գուռերու համար:

Արօս հայաւանի մերձակայքը կար քարահանք մը, որ իր կարծր ու անկիղկի ընոյթով շատ նշանաւոր էր. այս քարի մասին Լինչ իր Արմենիայի մէջ յիշատակութիւն կ'ընէ: Խնուս-Բերդի ձորին մէջ կար քարահանք մը, որուն քարը սեւ էր եւ զոր կ'անուանէին փուք-ֆար. քարահանքէն հանուած պահուն խոնաւ ու դիւրաբեկ վիճակ ունէր. դիւրութեամբ կը կոփէին, նոյնիսկ կը սղոցէին, սակայն կարճ ժամանակ ետք երբ արեւի տակ մնար, հետզհետէ կը կարծրանար եւ աւելի դժուարաբեկ կը դառնար. ծանօթ էր նաեւ իր այն ընոյթով՝ որ ո՛չ տաքը եւ ոչ ալ պաղը ներս կը թափանցէր: Քարածուխի հանք մը կը գտնուէր Խնուս-Բերդի արեւմտակողմը, վիթխարի ձորաբերանի քարաժայռերու բացուածքներու սկզբնաւորութեան. դժբախտաբար անոր շահագործումը եւ գործածութիւնը արգիւրուած էր կառավարութեան կողմէ:

Խնուսի դաշտը ջրառատ էր. Պինկէօլի հազարան ակերէն սկզբնաւորուող Խնուսի գետը կամ Արածանին, օճապտոյտ գալարումով, ժապաւէնի մը պէս կ'երիզէր դաշտը արեւմուտքէն արեւելք, ոռոգելով իր արտորայքը: Կար նաեւ ստորերկրեայ դեղ մըն ալ, որ Խըթ գիւղին մօտերը, Քառասուն Մանուկ կոչուած սրբավայր-ուխտատեղը կը յայտնուէր: Համբարձման տօնին օրը կը սկսէր յորդիլ, քառասուն օր անընդհատ կը բարձրանար, տասնչորս առուններու կը բաժնուէր ու կը ջրէր իր շրջակայ գիւղերու արտորայքը: Քառասուն օր ջուրը կը մնար անփոփոխ, ապա քառասուն օր աստիճանաբար ջուրը կը սկսէր նուաղիլ եւ ցամքիլ: Այս ստորերկրեայ գետը Գարեգին Եպօ. Սրուանձտեանց անուանուած է Խնուսի Նեղոսը:

Խնուսի մարդագիտիկները, արօտատեղիներն ու արտերը դիւթական էին. հողը այնքան արդասաբեր էր որ Խնուսցիին կու տար ամենարարձր որակով ու քանակով արմտիք. իր գարնցան ցորենի հացը շատ համեղ էր: Անկէ պատրաստուած խմորը աճուն ու եփուն էր եւ մեծ համբաւ շինած էր իր եւ շրջակայ դաւառներու մէջ: Իր արօտատեղիներէն մէկը կը կոչուէր «Ախր Զիման», այսինքն յաւերժադալար. այնքան հարուստ էր երփներանգ ծաղիկ-

ներով ու խոտաբոյսերով, որ այստեղ արածող դուարն ու ոչխարը շատ շուտ կը գերնային. տեսնուած էր որ անոնց ատամները ոսկեգոյն կը ներկուէին՝ այդ շրջանի մէջ արածելու ընթացքին:

Խնուսի օդն ու ջուրը շատ առողջարար էին, կլիման բարեխառն էր. խոտաշունչ ձմեռները յաճախ տեսնուած էր որ գիշերուան մը ընթացքին զօտեկապ մը ձիւն տեղար. ահաւոր ձիւնամբրիկներ ալ տեղի կ'ունենային, իսկ գարնան սկիզբները ձիւնահիւսերու փլուզումները մարդկային եւ կենդանիներու զոհեր կը խլէին: Գարունը եւ աշունը մեղմ եւ հաճելի կ'ըլլային, թէև յաճախ անձրևայի: Ամառը տաք ու չոր, ցերեկները մրկող տաք, իսկ գիշերները զով, Պինկէօլէն փշոզ գեփիւտի սփոփանքով:

Խնուսի ժողովուրդը, ընդհանուր առումով, առողջ ու կայտառ էր, բարձրահասակ ու հուժկու, քաջ ու կորովի, լեռնականի խորհրդապաշտական շաղախով թրծուած:

Սեւաշեայ ու սեւահեր, անսովոր չէին շիկահեր ու կապուտաշեայ այրեր, կանայք ու փոքրիկներ, հայոց թէ քիւրտերու մէջ, որոնց տարբեր ցեղի պատկանելու դանդաղութիւնը դժուարաւ կ'ապացուցանէին. արեգակնային թեթեւ այրուցքի դրոշմով թուխ եւ ձիւնապիտակ մորթ երկու ցեղերն ալ ունէին: Հոս մէջբերենք Լինչի Արմենիայի Բ. հատորէն (էջ 288) հետեւեալը. «Չէվիլմէ գիւղը, հոն ուրկէ գետը անցանք, ունի 150 տնակներ. շրջապատուած է ուռիներու համեմատի ովախով մը, որ Դեղքափ սուր միացման կէտին վրայ փունջ կը ձևացնէ: Հանոյքով տեսանք կարմրագոյն վայրի վարդերու ցանկ մը, բազմաթիւ փոքր աղջիկներ, գրեթէ մերկ, ջուրին եզերքը, շուքին մէջ կը խաղային. մենք ապշեցանք՝ տեսնելով անոնց մազերուն գեղեցկութիւնը»:

Աղլային աւանդութիւններու հանդէպ ունէին բուռն ու խորունկ սէր եւ յարգանք. իրենց համար նուիրական էր ընտանիքի, տան ու տոհմի պատիւը: Յարգանք ու ակնածանք ունէին ծնողաց եւ տարեցներու հանդէպ. մասնաւոր սէր եւ յարգանք կար քաւորով՝ կնքահօր եւ խաչեղբոր հանդէպ: Խոր համոզումով հաւատք ու սէր ունէին բաղմամբիւ ու բազմազան սուրբերու եւ սրբատեղիներու հանդէպ: Ամենանուիրական ու ամենալիխաւոր ուրտատեղին՝ Մշոյ Սուլթան Սուրբ Կարապետի վանքն էր. որեւէ գործի սկսելէ առաջ իրենց խնդրանքն ու աղաչանքը կ'ըլլար. «Յա՛ Մշոյ Սուլթան Սուրբ Կարապետ, դու օգնական եւ պահապան էղիս իմ բանին ու գործին»...:

Ուխտատեղիներ էին՝ Չաւուրմայի Ս. Աստուածածին եկեղեցին, ուր ուխտի կ'երթային Աստուածածնայ տօնին. Արօսի մօտերը, Արջաձորի քարայրի մը մէջ Նորեւածի վանքը. հոս ուխտի կ'երթային Նաւասարդի կամ Վարդափառի տօնին. Պուռնազ գիւղի Թուխ Մանուկը եւ Ս. Սարգիսը. Խընդիւրմիայի Գողալ-Պապան եւ Հաղար-Պապան. Խալաւուշի Վանքիկ եւ Շարան Քարերը. Խընթ գիւղի մերձակայ Քառասուն Մանուկը. Հարամիկ գիւղաւանի Թուխ Մանուկը, մերձակայքի Արէլի Գերեզմանը եւ երկու գետերու (Գանէլ գետ եւ Խնուսի գետ) տեղայի մէջի Քրոէֆ ըսուած շրջանի քարաբլուրներու վրայ գտնուող Խաչ-Քարերը, Օձի-Խաղիւնան, ուր Համբարձման տօնին օրը հե-

տաքըքիւր երեւոյթ կը պարզուէր՝ անթիւ ու անհամար սեւ օձերու կուտակուելով, արեւադալէն մինչեւ արեւալատ, երբ այդ օձերը յաջորդ օրն իսկ բոլորովին կ'անյայտանային, հրաշքի նմանող երեւոյթի մը տպաւորութիւնը թողով ժողովուրդին վրայ. Մժնկերտու Ս. Կարապետի վանքը, որուն մասին մեզի հասած աւանդութիւնը արդէն արձանագրած ենք այդ գիւղի մասին գրուած էջին մէջ:

Հին հաւատալիքներու, առաւելապէս նախապաշարումի զօրաւոր ազդեցութիւնը կը պահուէր ժողովուրդին մէջ. համայութիւնը «Համայիլ» բանալ, դիւթանք՝ «Նուսխա» գրել, բախտի նայիլ, աղով «Կապս ընել», շար աչքէ ազատ մնալու համար «Թըլլսում» կապել, կապոյտ «Հըլուն» կապել, — ասոնք կ'ըլլային առողջութեան համար, հիւանդութեան դէմ, առեւտուրի յաջողութեան համար, բարեբեր հունձքի համար, անտեսանելի մնալու համար, դանձ գտնելու համար, սիրոյ համար, փեսակապի, կապարձակի համար:

Բախտազուշակներն էին ընդհանրապէս քահանաներ, տիրացուներ, վարժապետներ, տարեց մամիկներ, գնչու կիներ, շէխեր եւ մուլաներ: Գուշակելու ձեւերն էին՝ թիւ չափել, գարիի կամ կորեկի հատիկներ նետելով՝ համրել ու հմայել, ձեռքի ափի գիծերու նայիլ, թաս մը ջուրի մէջ նայիլ, մեղանը (մուրկէպ) ափի մէջ առած նայիլ, աստղերուն եւ լուսնին նայելով զուշակել, թռչուններու եւ անասուններու ձայներէն զուշակել, եւայլն:

Կային մազադաթեայ Աւետարաններ, որոնց զօրութեան եւ հրաշալուորութեան մասին շատ մեծ հաւատք ու երկիւղածութիւն ունէին: Այդ Աւետարաններուն ուխտի կ'երթային խունկ ու մոմով եւ նուէրներով: Այդպիսի Աւետարաններն էին՝ Խողուայ Շէկ Աւետարան, Խալաւուշայ ոչն Մոյսէսի կամ Քոչօ Տան Աւետարանը, որուն համար կ'ըսուէր թէ Ս. Մեսրոպի ձեռագիր Աւետարանն է, եւ զոր 1915-ի տեղահանութեան ատեն Աւետարանի տանտիրուհին գիւղէն դուրս մենաւոր ծառի մը արմատներուն տակ կը թաղէ: Օր մը վերադառնելու յոյսով. ատիկա արդէն անհետ կորսուած է: Գուպայայ իրիցու՝ Տէր Աւետիսի տան Մեռելարոյց Աւետարանը, Գովանդուկի Սրբէ տան Շէկ Աւետարանը եւ Ճուրթ տան Կարմիր Աւետարանը, Հարամիկու իրիցու Խոչ տան Աւետարանը, Էլպիսու Խուլ Աւետարանը, եւ ուրիշներ:

Բնորոշիչ էր Խնուսցիներուն վերաբերումը իրենցմէ յաւէտ բաժնուող սիրելի յիշատակին հանդէպ. մեռելը մահուան օրը՝ մայրամուտէն առաջ կը թաղէին. գերեզմանափորը, ինչպէս նաեւ գաղաղակիրները դրացիներն էին. մեռելը տաք ջուրով եւ օճառով կը լուային, անլուայ ձերմակ կտաւով կը պատանքէին, քահանան թաղմանական կարգին «Տան Կարգն» տունի մէջ կը կատարէր, «Եկեղեցույ Կարգն» եկեղեցույ մէջ, «Գերեզմանի Կարգն» ի գերեզմանատանն, եւ ապա «Ի Տուն երթալն»՝ ի տուն մեռելին: Յաջորդ օրը գերեզմանատուն երթալով «Յեկողք» կամ «Մեծի Այգուց կատարելոյ», ապա եօթներորդ օրը «Եօթնանրիծ» կամ «Մեծի Եօթնօրէից կատարելոյ» եւ «Քառասներեայ սուղէ հանելոյ» կարգը հոգեհանգիստ կատարելով՝ «Քառասունքն» կը հանուի: Յաւարտ թաղման, տուն կը դառնային, հոգեճաշ կը տրուէր յուղարկաւորներուն: Քառասունքն ետք, ինչպէս նաեւ մահուան տարեկ-

ցին առթիւ, հոգեհացի սովորութեամբ, գիշեր ատեն թարմ հաց թխելով՝ արշալոյսին կը բաժնէին դրացիներուն, աղքատներուն եւ ճամբորդներուն: Աստուածածնայ տօնին զերեզմանոց կ'երթային՝ հին եւ նոր ննջեցելոց հոգիին համար թարմ հաց, գաթա, հալուա, պանիր, վարունգ եւ ուրիշ ուտելիքներ կը բաժնէին. երբեմն ալ հերիսա կը տրուէր:

Ամուսնական հարցերու նկատմամբ, եկեղեցական օրէնքներէն եւ ազգային աւանդութիւններէն շեղուած աններելի գանցաութիւն կը նկատուէր:

Եօթը պորտի հեռաւորութիւնը քահանան վկաներով կը ստուգէր ու առաջնորդարանի արտօնադրով միայն պատկի արարողութիւնը կը կատարէր: Սիրային բացառիկ երեւոյթներու հետեւանքով՝ աղջիկ կը փախցնէին, կողմերու ընտանիքներու միջեւ անխուսափելի կռիւներ ալ տեղի կ'ունենային, երբեմն աղիտաւոր հետեւանքով, երբեմն ալ կղերականի կամ ականաւոր անձերու միջնորդութեամբ եւ բարեխօսութեամբ՝ հաշտութիւն կը գոյանար եւ պակազրութիւնը կը կատարուէր:

Գիւղերու մէջ փոխյարաբերութիւնները խանգարող երեւոյթներն էին՝ ջրատուքի ու ջրաղացի կարգ չպահելը, արտ ու կալի, արդիւրած արօտատեղիներու մէջ անասուններու մուտքը, հարստութեան, արգասաբեր հոգերու, լաւագոյն անասուններու եւ զանազան իրերու նկատմամբ եղած գովասանքներու եւ պարսաւանքի հետեւանքով ծագած վէճեր եւ կռիւներ:

Գիւղերու մէջ ոստիկանութիւն գոյութիւն չուներ. նախնական վէճերու հաշտարար մարմինը քահանան, վարժապետը, ոչնչն ու համբաններն էին: Կռիւները ծայրայեղութեան հասնելու պարագային՝ կատաւարութեան կը դիմէին: Յեղափոխութեան ժամանակաշրջանին՝ դատ ու դատաստանը յեղափոխականները կը տեսնէին՝ կատարեալ զաղտնապահութեամբ. անաստողները կը պատժուէին:

Ձիրար կ'ողջունէին հետեւեալ բարեւաձեւերով եւ բարեւախօսքով: Առաւօտեան պահուն, բարի-լոյս կամ բարեւ կ'ըսէին՝ նախ աջ ձեռքը օդի մէջ տանելով, ապա շրթունքներուն մօտեցնելով եւ ձակտին դնելով: Բարեւ ստացող, ձեռքի միւկնոյն շարժումով կը պատասխանէր՝ Աստուծոյ բարին կամ Ծաթէ վրազ կարմիր արեւ: Միջօրէի պահուն կ'ըսուէր.— Բարի օր, որուն պատասխանը կ'ըլլար.— Բարին վրբ քրդի, քու տան ու տեղին, բանին ու գործին:

Իրիկունը կ'ըսուէր.— Բարի իրիկուն: Կը պատասխանուէր.— Աստուծու բարին: Ճաշի պահուն՝ ներս մտնողը կը բարեւէր.— Բարաբէն, որուն պատասխանը սեղանին հրամցնելն էր:

Աշխատանքի կամ նոր գործի սկսած պահուն, բարեւաձեւն էր.— Բարաբէն, բարի աշխատիք, խալայի գայ ձեր գործը: Ասոր պատասխանը զանազան ձեւով կը տրուէր: Մեկնելու պահուն կ'ըսէին.— Մնաք բարով: Պատասխանը.— Երբաք բարով: Գիշեր բարի.— Ձեզ լոյս բարի, Տեր ընդ ձեզ, եւ այլն:

Ձիրար կ'անուանակոչէին առաջին անունով, եւ Արբահամը կ'ըլլար՝ Արբօ, Աբօ, Աբրէ: Յովհաննէսը կ'ըլլար՝ Յովօ, Յովան, Օհան, Յովիկ, Կոթէ: Մկրտի-

չը կ'ըլլար՝ Մկրէ, Մկրօ, Մկուճ, Մկօ, Մճօ: Կարապետը կ'ըլլար՝ Կրպօ, Կրպէ, Կարօ: Գրիգորը՝ Գրգօ, Գրգէ, Գրէ, Գոգօ: Ու այսպէս բոլոր անուններն ալ կը կրճատուէին, երբեմն ալ աւելորդ անուններով կ'որակէին, ինչպէս Քանքառ, Քաքաճ, Նիթօ, Դոդօ, Մոճէ, Պոյօ եւ այլն:

Տխողոսներն էին.— Մեղիք, Չորպանի, Ագա, Էֆենտի, Պարոն, Տիրացու եւ վարժապետ:

\*\*\*

Խնուս մաս կը կաղմէր Կարնոյ կուսակալութեան, թէեւ անկէ առաջ ալ, Մշոյ փաշայութեան հետ կը մտնէր Բաղէշի վիլայէթին մէջ: Երբ թրքական սուլթանները հայկական արեւելեան նահանգները կը ճանչնային Ալիէթի էրմէնի եւ Հայերը ազատ էին զէնք կրելու, այդ ժամանակաշրջանին՝ իր շրջապատի այլակրօն եւ այլացեղ ժողովուրդները հաշիւի կ'առնէին իր դիմադրականութիւնը:

Փրանսացի ճանապարհորդ Փիլիք Ամետէ Ժորէս կը գրէ. «Իջանք Խրուսի աւազանը: Գնացինք գիշերելու Խոզլի, հայկական գիւղ մը, որուն բնակիչները, հակառակ Եւսուֆ փաշայի հրամանին, յաւառօրէն մերժեցին մեզի ապաստան տալ: Առաջին անգամն էր որ մեմք կը պատահէինք քրիստոնեաներու, որոնք դիմադրութիւն ցոյց կու տային բուրքերուն: Սակայն Հայաստանի այս մասին մէջ կառավարութեան իշխանութիւնը համարեա թէ ոչինչ է եւ հայ գիւղացիք զինուած են ու պատրաստ կուտելու Քիւրտերու յարձակումներուն դէմ, որոնց հետ միշտ կռիւներու մէջ են եւ չեն վախճար ո'չ սպառնալիքէ, ո'չ նախատինքնէ եւ ո'չ ալ մահէ»:

Ազգային-եկեղեցական իշխանութեամբ, երկար ժամանակաշրջանով կապուած էր Մշոյ Ս. Կարապետի վանքին, մինչեւ 1880, երբ Մազաքիա վրդ. Օրմանեան Կարնոյ իր առաջնորդութեան օրերուն կը գատէ Ս. Կարապետի վանքէն եւ կը կապէ Կարնոյ առաջնորդութեան՝ տեղապահով մը, մինչեւ 1908-ի Օսմ. Սահմանադրութիւնը, երբ այլեւս կը դառնար անկախ առաջնորդութիւն, քանի որ զաւանս ալ Գայմազամութեանէ կը փոխուէր Միւթէսարաֆութեան, եւ կը շինուէր քարուկիր նորակառոյց առաջնորդական շէնքը, առաջնորդ ունենալով Դատուանցի Մկրտիչ Վրդ. Չլխատեան:

\*\*\*

Խնուսի դերը մեծ եղած է մեր ազգային վերագարթնումի օրերուն: Հայ յեղափոխական շարժումներու ընթացքին, անոր բարախուն երակներէն մին եղած է ան, Կովկասէն Սասուն յեղափոխական շարժման կապը պահելով՝ հայրուկ սուրհանդակներով եւ անման վախտներով:

Եղած է ժամանակ, որ Խնուս միակ յարմար դիժն է մնացեր՝ Տարօն-Սասնոյ (Դուրան բարձրաւանդակ) եւ Կովկասի միջեւ կենդանի կապ պահող:

Ազատութեան եւ հայրենիքի սիրոյն համար, հայրենասէր Խնուցիի սիրտը շատ բարաստուն է եղած, անխոր մասնակցելով հայ յեղափոխական կուսակցութեանց՝ Հնչակեան թէ Դաշնակցական: Մասնակցած է հետեւեալ Փետտայական արշաւանքներուն.— Կուկունեանի արշաւատումբին, Խանասորի արշաւանքին, Ալաշկերտի Խաստուր գիւղի կոտին, Խանի խումբին, Արծիւ խումբին (Հնչակեան), 1905-6 թուականներու հայ-թաթարական ընդհարումներուն՝ Կովկասի մէջ, եւ 1914-ի հայ կամաւորական բանակին՝ բազմաթիւ կամաւորներով:

1916-ին, երբ սուսական բանակը կը գրաւէ Խնուսը, ջարդէն եւ տաւազութիւնէն ճողորպածները կը վերադառնան իրենց աւերակ երգիքներու տակ եւ աւանդական փիւնիկի նման Խնուս կը սկսի յառնել իր մոխիրներէն:

Շատ կարճ ժամանակի մէջ գիւղերը կը սկսին շէնչալ, ինչպէս Հարամիկ գիւղը կը դառնայ կեդրոն ազգային կեանքի. հոն կը հիմնուի օրրանոց-դպրոց, գաղթակայան եւ այլն:



Որբերը՝ մարզանքի պահուն

Հայրենի երգիքէն կենդանութիւն աւետող խնկարոյր ծուխը կը սկսի բարձրանալ, գալոց օրերու սրբազան հաւատքի ներշնչումով:

Տարբարխտարար շատ կարճ կ'ըլլային վերաշինութեան այս շրջանը եւ 1918-ի մեծ նահանջը խնուցի խլեակները քշելով կը տանի ու կը դնէ Արազածի փէշերուն, անկէ իր բնազատութիւն հրայրքով առլցուն, հանապաղ նայելու Բիւրակնեան սարի հաղորամեայ ճակատին...:

# ԳԼՈՒԽ Բ.

## Խ Ն Ո Ւ Ս Բ Ե Ր Դ

### ԽՆՈՒՍ - ԲԵՐԴ

5550 սոք բարձրագիւղ՝ գեղեցիկ եւ բանաստեղծական գիրքով, նստած է Պինկէօլ-Բիւրակն, կամ աւելի նախնի անուամբ մկրտուած Սրմանց-Սարի արեւելեան լանջերու պատուանդանին, անդնդախոր ձորակի մը մէջը, ու ջրորդանի ժայռահերձ գոյգ մը բարձրաւանդակներու վրայ: Ձորի մէջէն հոսող ջուրը, Խնուս գետ կամ Արարածանի սկզբնաւորութիւնը, քաղաքը կը բաժնէր երկու մասի.— Արեւելեան՝ աջ կողմի թաղամասերը կը կոչուէին Խաստալար, ձորքմահլէ, եւ Բազդէ: Արեւմտեան՝ ձախ կողմը Հիւսէյն-աղայի թաղը. սոսր եւ չուկայի վերջաւորութեան կէտին՝ գետին ափակից կար հին մզկիթը: Ժամու թաղը, անկէ աւելի անդին Պալու-Քիթը, որ կ'իյնար Սայլուայ ձորափին: Գարկեախը իր ստեղծաւոր առապարով օղակուած շարձուն կամ չուկային, եւ Խայապաշին. այս վերջին թաղամասը, ամենէն ընդարձակ եւ արդիական թաղն էր: Հոս կը գտնուէին դատարանը՝ հիւսմէք, խըշլանքը (գորանոց) եւ ընդարձակ զինուորական մարզադաշտը, թրքական Թուշտիէ վարժարանը, նոր մզկիթն ու մատրէսէն, եւ բանտը՝ մափուսխանէն:

Ժամու թաղի սկզբնաւորութեան, գետին առնթեր, ժայռին վրայ կառուցուած էր Հայոց Սբ. Աստուածածին քարաշէն եկեղեցին, իրեն պատկից ծաղկոց-դպրոցը, նորակառոյց քարաշէն՝ Միացեալ-Ընկերութեան վարժարանը, դարձեալ նոր եւ քարաշէն առաջնորդարանը, երիտասարդաց ակումբը: Յիշենք նաեւ Մահլա-պաշին, որ բոլոր թաղերու ճամբաներու մեկնակէտն էր, երկփեցեակ մը ծորակաւոր աղբիւրներու առջեւէն հազիւ երկու քարընկէց հեռու, Միլլաթպաշի Յակոբ աղայի տան մերձակայքը, Մոկլոյեաններու Արմենակ աղայի եւ իր եղբայրներու, ինչպէս նաեւ Միքայէլեաններու՝ Գարբիէլ աղայի եւ իր եղբայրներու նորակառոյց չուկան, խանութները, խանը եւ բազմաթիւ նոր ու քարաշէն տուներ պարտէզներով եւ ցանկապատներով:

Գետի աջ ափին, ժայռային բարձրաւանդակին վրայ, տակաւին կը յամենար Հին Բերդը, իր աւերակ միջնաբերդով եւ խաթարուած աշտաւաղով: Ուղեգիր Էվլիա Էֆ.ի, 1647 թուականին այսպէս կը գրէ բերդին մասին.— «Քառակուսի եւ ամուր կառուցուած բերդ մըն է, բարձր սարահար-

քի մը կեդրոնը, ամէն կողմէ բարձրահայեաց լեռներով շրջապատուած: Բերդին պարիսպին բարձրութիւնը 10 կանգուն, շրջապատը 6.000 քայլ է, հիւսիսակողմը դուռով մը: Բերդին արեւելեան կողմը կայ վնիս աղբիւր մը: Բերդին ստորոտը, պարիսպին տակ երկաթէ վանդակ մը կառուցուած է՝ որ ամբարտակ կազմելով կ'արգիլէ ջուրի հոսանքը, եւ պարտէզներու մէջ կը ցրուէ ջուրը: Բերդին դուռը այս աղբիւրին մօտ է: Բերդը կառուցուած է Ատրպատականի տէր Ուզուն-Հասանի հօրեղբայր Շահ-Շափուրէն: Բերդի բնակչութիւնն էր 1.200 տուն *Մահմուտի* փերտեր: Տուները բոլորն ալ ծածկուած էին հողով, եւ կարելի չէր կոմիսոր տեսնել: Բերդը ունէր եօթը մզկիթ, խան մը, բազմիք մը եւ փոքր փողոցներ»:

*Ֆրանսացի ուղեգրներ՝ Գէորգ Փիսոն եւ Ալյէր Տըվրլէ, 1890-ին իրենց «Ուղեւորութիւն ի Փոքր Ասիա» ուղեգրութեան մէջ այսպէս կը գրեն.* — «Խնուս՝ մեր տեսած քաղաքաց մէջ ամենահետաքրքրականն է, շինուած ժայռահերձ պատուածքի մը մէջ, որմէ գետ մը կը հոսի սուրալով: Հին բերդին տեղը կը ցուցնեն աւերակ միջնաբերդ մը, աւերուած, խաքարուած աշտարակ մը, եւ քանձապարիսպ որմերով բեկորներ՝ եկեղեցւոյ սիւներու պէս ուղղաբերձ կանգնած, հայկական ոճով: Սակայն այս ամէնը շատ փոքրաշէն է ժայռերու վիթխարի շարքերուն համեմատուլքեամբ»: *Գէորգ Փիսոն կը խօսի նաեւ հանքային ջուրի աղբիւրի մը մասին, որ կը պտնուէր նոյն ձորակին մէջ, ինչպէս նաև քարածուխի հանքին մասին, որ կը պտնուէր քաղաքէն դուրս ձորի երկայնքին:*

Հ. Ֆ. Պ. Լինչ, *Անգլիացի ուղեգրը, իր «Հայաստան-ուղևորութիւններ եւ ուսումնասիրութիւններ» երկհատոր գիրքին մէջ, գլխական հետախույզութիւններով նկարագրած է Հայաստանի իր ուղեւորութիւնները, զորս երկու անգամ կատարած է՝ 1893-4 եւ 1896-98: Խնուսի մասին այնքան մանրամասնօրէն նկարագրութիւններ կ'ընէ, որ մարդ կը զարմանայ իր հետաքրքրութեան եւ հմտութեան վրայ: Թելադրելի է որ հետաքրքրուող մը կարգայ Անգլերէն երկու հատորները, կամ անոնց Հայերէնի թարգմանուած երկու հատորները. (Թարգմանիչ Լեւոն Լարենց, 1913 Կ. Պոլիս). սքանչելի գործ: Լինչ կը գրէ. «Խնուսի Գայմագամին հարցուցի, թէ Խնուսի բնակիչներու թիւը կրնա՞յ ըսել ինծի. անմիջապէս անիկա իր տումարները բացաւ. ըստ իրեն, Խնուսի մէջ կան 387 տուն եւ բազմաթիւ խանութներ: Տուներուն մէջէն 250-ը իսլամ, իսկ 137-ը հայ: Գայմագամը կարծիք յայտնեց նաեւ, որ հայերուն թիւը պակաս նշանակուած է, որովհետեւ անոնք մարդահամարէն կը փախչին, զինուորական տուրք չտալու համար:*

*Վիտալ Գինէ, իր «Ասիական Թուրքիա» (Փարիզ, 1890) գիրքին մէջ կ'անդրադառնայ Խնուսի եւ գրեթէ միևնոյն նկարագրականը կ'ընէ անոր մասին, ինչ որ Գէորգ Փիսոն եւ Ալյէր Տըվրլէ նկարագրած են, աւելցնելով միայն, որ պետիւն վրայ կան երեք քարաշէն հին կամուրջներ, հին մզկիթ մը եւ հանքային ջուրի աղբիւր մը:*

*Անգլիական հիւպատոս Պրէնդը՝ 1838-ին կը գրէ. «Խնուս կը վերաբերի Մուշի փաշայութեան եւ հնթադարար 130 տունէ կը բաղկանայ»:*

*Մ. Կ. Միրախորեան՝ 1884 թուականին կը գրէ. «Խնուս քաղաքիս թիւն այժմ հազիւ 300 տունի կը հասնի, յորոց 180 տունը հայ եւ մնացեալը 120 տուն մահմետական են: Տուներնին ընդհանրապէս քարաշէն կ'ընեն, վասնզի ամէն կողմ շինութեան համար յարմարագոյն քարեր լի են՝ քիսագոյն, դիրատաշ եւ համեմատաբար թեթեւ գանգուածով»:*

*Ա. Դո, իր «Էրզրումի, Վանի եւ Բիթլիսի վիլայէթներ» (1912) գիրքին մէջ կը գրէ. «Խնուս-Բերդը կը բաղկանայ 325 տուն հայ եւ 600 տուն բուրք-փիրտ բնակչութեան»:*

*«Բնաշխարհիկ Բառարան» 1903-ին համար կը զնէ 160 տուն հայ բնակչութիւն:*

*Օսմանեան Սահմանադրութեան՝ 1908-1915 Խնուս Բերդի բնակչութիւնը կը հաշուէր մօտաւորապէս 1000 տուն, որուն մօտաւորապէս կէսը հայ եւ կէսը թուրք-քիւրտեր էին:*

*Խնուս-Բերդ քաղաքը՝ կառավարութեան կեդրոնն էր: Հին ժամանակները երբ տակաւին թուրք կառավարութիւնը հայկական արեւելեան նահանգները կը ճանչնար որպէս «Ալիէթի էրմէնի», կը կառավարուէր մեծիքներով (երկու մելիքներ, Մելիք Պօղոս՝ որ կը բնակէր Հարամիկ գիւղը, եւ Մելիք Գասպար՝ որ կը բնակէր Գարաշոպան գիւղը). բէկերով (լազիկ եւ քիւրտ), աղաներով: Ապա միւսուրութիւն, զայմադամութիւն եւ միւսասարէֆութիւն: 1908-ի Սահմանադրութեան զայմադամութիւնէ միւթասարէֆութեան բարձրացաւ, սակայն տեղացի ազդեցիկ բէկերը չհանդուրժելով Բարձրագոյն Դռնէն եկած միւթասարէֆի մը գերիշխանութեան եւ ներկայութեան, դարձեալ փոխուեցաւ զայմադամութեան: Գայմագամ մը բէկերու ստորադասեալն եւ կամակատարն էր:*

*Ժամանակ առ ժամանակ, պետական հայ պաշտօնեաներ ալ եղած են, միւսքանքրգ մավիւնի, սանտուխ էմինի, աղնամ մամուռի, իտարայի ազա, միւսիւր, քահսիլտար, քոմիւէր, փոլիս եւ ժամտարմա: Ժամտարմանէն էին՝ բերդէն — Հայպուկ Գասպարն ու իր տղան: Հարամիկէն ժամտարմա Սարգիս, իր տղան Միսակը, եւ իր եղբայր Շահվալատը: Ժամտարմա Սարգիս 1895-ի գէպքերուն հայեր պաշտպանած ըլլալուն համար դաւադրօրէն կը սպաննուի: Շահվալատն ու Միսակը, յեղափոխութեան շրջանին, զսպանի օմանգակներն էին յեղափոխականներուն:*

*Հայկական ազգային իշխանութեան կեդրոնն ալ Բերդն էր: Նախատահանադրութեան շրջանին թոյլ եւ կամայական իշխանութիւն մը կը տիրէր. մասամբ մը կապուած Մշոյ Սր. Կարապետու փանքին, մասամբ ալ առաջնորդական տեղապահով մը կապուած Կարնոյ Առաջնորդութեան: Սակայն Սահմանադրութեան սկիզբի օրերուն իսկ վերակազմուելով դարձաւ առանձին առաջնորդութիւն, կապուելով ուղղակի Կ. Պոլսոյ Ազգ. Պատրիարքարանին, եւ այդ կապը աւելի զօրացաւ, երբ Զաւէն Արք. Պատրիարքը ըտրուելով, Տիգրանակերտէն դէպի Կ. Պոլիս իր առաքելական ճամբորդութեան ընթացքին՝ Հայկական Նահանգներու մէջէն, անցաւ Խնուսէն ալ եւ մեծ խանդավառութեամբ ողջունուեցաւ խնուսիներէն, որոնց զպատմաներուն ծանօթ էր՝ իր Կարնոյ առաջնորդական պաշտօնավարութեան շրջանէն:*

ԶԼԽԱՏԵԱՆ ՎՐԴ. ԵՒ ԱՆՈՐ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹԻՒՆԸ

Սահմանադրութեան շրջանի առաջին առաջնորդը ընտրուեցաւ՝ արմաշական կրթութեամբ՝ ուսեալ, քաջ ու կորովի, Դատուանցի՝ Զլխատեան Մկրտիչ (Շուշտակ) Վարդապետը: 1909-ին՝ յեղակարծօրէն՝ Կիլիկեան կոտորածներու ահաւոր օրերուն, ընդոստ կազմակերպեց մարտական խումբեր, Խնուս գաւառի բոլոր հայ գիւղերու մէջ՝ դիմազրաւելու բոլոր պատահականութիւնները: Իր նախաձեռնութեամբ՝ եւ խնուսցիներու պատրաստակամութեամբ կառուցուեցան երկու քարուկիր շէնքեր. առաջնորդարան եւ դպրոց:

Օրմանեան Պատրիարք, իր «Խոհք եւ խօսք»ի մէջ՝ անդրադառնալով Զլխատեան վրդ.ի մասին, կը գրէ. «Մկրտիչ Զլխատեան, աւագանի անունով Յովնան, Դատուանցի, երկրորդ շրջանի (Արմաշ) աշակերտներէն, որ կուսակրօնութեան յանձնառու չըլլալով, մեկնած էր Դպրեվանէէն, եւ երբ Տրապիզոնի վիճակէն Ղզանայի վրայ ուզեցին փախանայանալը, ես՝ ինքս ձեռնադրեցի Սկիւտարի (Պոլիս) Ս. Կարապետ եկեղեցիին մէջ, 1898, Յուլիս 12-23-ին, Դպրեվանքուց փախանայութեան դիմելը ֆաջալերելու դիտմամբ: Տրապիզոնի վիճակէն Սելանիկի գաղութին փախանայագործելու փոխադրուած էր, երբ պատահական արկածով երէցկիներ և գաւակը կորսնցուց: Անկէ ետք Եթովպիոյ գաղութին փախանայութեան յղեցի, եւ անկէ դառնալէ ետք արեգայ օրհնեցի: Առաջնորդական պաշտօններու մէջ մնաց ժամանակ մը, եւ Զաւէն Պատրիարքի Տիարպէֆիբէն գալէն ետք, վիճակին տեղապահութեան կոչուեցաւ, մինչեւ վերջին տարագրութեան միջոցը: Վստահելի լուրեր կրակով սպաննուած ըլլալը կը հաւատեն: Բաւական գործուէնութիւն ունէր, սակայն իր կենցաղին մասին աննպաստ խօսքեր շատ եղան»:

Նորակառոյց շէնքերուն հիմնաքարերուն առաջինը իր կոնակը առած՝ օրինակ հանդիսացաւ ժողովուրդին: Իրեն հետեւեցան Խնուս-Բերդի հայ մեծամեծները: Քարեր կը բերուէին ձորամէջի քարահանքէն: Դպրոցի շէնքին կառուցման աշխատանքին նկարագրութիւնը կ'ընէ Կարնոյ «Յառաջ» թերթը: Թղթակից Սմբուլ-Մշեցի, այսպէս կը նկարագրէ. «Ոգեւորութեան ու ցնծութեան մի մեծ տօն է Յուլիս 4-ը (1909), անցնելի թուական կը մրնայ Խնուսի իրականութեան մէջ: ... Ուրախութեան ամենէն արժանին այն էր, որ համայնական աշխատանք էր տիրում այդ տեղ. պէտք էր ներկայ գտնուիլ թէ որպիսի՝ ուրախութեամբ հասակաւորները, եւ նոյն իսկ ամէն բանէ փախող հարուստ դասակարգը՝ կ'աշխատէր ձորակից ֆարերը շալկած վերելու նոր դպրոցի տեղ բերելու, փախանայ եւ ուսուցիչ, վաճառական եւ արհեստաւոր, աշակերտ եւ փոքրիկ մանուկներ, մի խօսքով բոլորը կ'աշխատէին:

— Համօ', Համօ', տե'ս, ի՞նչ աղէկ ֆար կայ հունայ... եւ ահա աշխատաւորութիւնը կը շարժուէր:

— Էլօ', Էլօ', Էկօ', Էկօ' ֆար խլրաւ, յընգան Էկար:

— Հա՛՛մ ճեր, ճրգի մեռնիմ, յանուն Աստուծոյ ֆար չկայ, դէ՛, ֆար բերէֆ:

— Յելա՛ւ, հա՛, ֆար յելաւ, իմ շալակ վերցու...:

Բերդի հայ համայնքը իր լիրա-դրուշները չի խնայի, ինչպէս եւ կը մնայ աշխատաւորութիւնը նոյն ոգեւորութեան թափի մէջ: Քաջալերութեան արժանի է Յակոբ Էֆ.ի Տիրացեան, ծերունի՝ բայց երիտասարդ, դպրոցին աւելի ոյժ տուողը. «Գեղը կանգնի գերան կը կոտրէ»:

Յուլիս 25 (1909) թուականով ուրիշ թղթակցութիւն մը Խնուսցի ստորագրութեամբ, կը գրէ. «Անկարագրելի եռանդով եւ գովելի պատրաստակամութեամբ առաջնորդարան հաւաքուեցան նիւթապէս կարող անհատներ, եւ հաւաքուեցաւ 50 օսմանեան լիրա միայն վաճառականներէ, որոնց անուանացանկն է.

Ալէֆսան Էֆ. Տիրացեան	200	դր2.
Աւետիս աղա Խաղիսագեան	400	դր2.
Արմենակ աղա Մոկլոգեան	700	դր2.
Արամ աղա Մելիֆոնեան	100	դր2.
Միսակ աղա Մահտեսի Գէորգեան	400	դր2.
Միսակ աղա Աւագեան	100	դր2.
Յովհան Էֆ.ի Մալխասեան	100	դր2.
Գէորգ աղա Փալանեան	100	դր2.
Սեդրակ աղա Շահմուրատեան	400	դր2.
Սեդրակ աղա Մահտեսի Յովհաննէսեան (Մկօ Յովն)	100	դր2.
Գարրիէլ աղա Միֆայէլեան	100	դր2.
Վարդան աղա Սիմոնեան	200	դր2.
Յակոբ աղա Սերոբեան (Միլլաթ-պաշի)	100	դր2.
Սարգիս աղա Փոթիկեան	150	դր2.

Աստուծէ գատ, Սեդրակ աղա Շահմուրատեան՝ 4 ոսկի ամէն տարի վճարելու պայմանէն գատ, սկսուած գործի յաջողութեան հաւանականութիւնը շատցնելու դիտումով, 20 օսմանեան ոսկի ալ միայն այս տարուան համար նուէր տուաւ: Գովելի է եւ նշանակալից Բերդի հասարակութեան այս ձեռնարկը»:

Դպրոցը՝ Միացեալ Ընկերութեան վարժարաններէն էր եւ կը կոչուէր Կեդրոնական Բարձրագոյն Վարժարան: Մրապիրն էր, պատրաստել ուսանողներ Կարնոյ Սահասարեան Վարժարանի երկրորդ դասարանի հաւասար կրթութեամբ: Ուսուցչական կազմը բարձրագոյն կրթութեամբ օժտուած անդամներէ կը բաղկանար, որոնք էին՝ Արօսցի Հրաչեայ վարժապետ, Էջմիածնի Գէորգեան ձեռնարանէն շրջանաւարտ, հայերէնի եւ հայոց պատմութեան դասախօս, նաեւ հեղինակը Հայաստան քրդերէն այբբենարանին, որուն մասին Կարնոյ «Յառաջ» թերթը 1909 Յուլիսի թիւ 4-ի մէջ կը գրէ. «Խնուսցի ընկեր Հրաչեայ՝ պատրաստած է Հայաստան փութերէն այբբենարան մը:

որ լոյս պիտի տեսնէ «Յառաջ»ի հրատարակութեամբ»։ Թրքերէնի ուսուցիչըն էր Մկրտիչ Էֆ.ի Մանսուրեան։ Ֆրանսերէնի ուսուցիչն էր՝ Յովհաննէս Շահմուրատեան, Վահան Մելքոնեան՝ աշխարհագրութեան եւ դեղագրութեան, Պայպիտցի Սուրէնը՝ ուսողութեան եւ մարմնամարզի։ Այս վերջին երեքը Մանասարեանի շրջանաւարտներ էին։

Տեսուչն էր Վահան Տիրացեան՝ շրջանաւարտ Մոսկուայի Լազարեան ձեմարանէն։ Եղած է թատերագիր, եւ Կովկասի հայոց դերասանական խումբի յուշարարը՝ Թիֆլիս բնակած շրջանին։ Սահմանադրութեան առաջին տարին ծնողքին եւ եղբայրներուն հետ հայրենիք վերադարձած էր։

Չլիսատեան Վրդ.ի առաջնորդական պաշտօնը թէեւ խանդավառութեամբ սկսաւ, սակայն անփառունակ վերջաւորութիւն մը ունեցաւ։ Կտրիճ եւ ըմբոստ վրդը, ու կտրիճ եւ ըմբոստ խնուցին, չկրցան դիրար հասկնալ ու ըմբոսնել։ Վրդ.ին մէկ սայթաքումը առիթ ընծայեց, բիրերով ու թուք ու մուրով գայն իր պաշտօնէն վտարելու։ Չլիսատեանին յաջորդեց Վանեցի Արզար վրդ. Եօթնեղբայրեանը, որուն պաշտօնավարութիւնը տեւեց մինչեւ 1915-ի մեծ եղեռնը։ Առաջինի ու աստուածավախ Արզար վրդ.ը եղաւ առաւելապէս կղերական առաջնորդ, մինչ վարչական ու քաղաքական գործերու հմուտ առաջնորդի մը հմայքը կը թուէր թէ ունէր Չլիսատեան վարդապետան խոռվելով խնուցիներէն դնաց Տիգրանակերտ՝ ուր առաջնորդելու հրաւիրուած էր. եւ ուր մեծ եղեռնին թուրք բարբարոսութիւնը գինք խարոյկի բարձրացուց։

\* \* \*

Խնուս-բերդը ունէր առատ ջուր։ Բազմաթիւ սառնորակ աղբիւրներ կային, յիշենք մէկ քանիները, որոնցմէ ոմանք բարերարներէ (Խէր սահապի) մասնաւորապէս կառուցուած էին, քարաչէն կամարներով եւ ծորակներով. կամարներու անուրներէն առկախ շղթայակապ կլայելուած թասերը, յոյնած ու ծարաւի անցորդներու պապակը յագեցնելու դիւրութիւն կ'ընծայէին։ Այդպիսի աղբիւրներ կային Ալթիպարմազի տան ցանկապատի մուտքին, Մուխու Միսակի տան գրան առջեւ, Միլլաթպաշի Յակոբ աղայի տան գրան առջեւ։ Խայապաշի շուկայի ճիւղ մուտքին՝ Գարկեանի եւ Խասալխանայի դիմացը՝ վեցեակ մը քարէ ծորակաւոր աղբիւրներ կը հոսէին քարակոփ գուռերու մէջ։ Խասալխարի աղբիւրը իր անմահական սառնորակ ջուրով կը բխէր Պաղչայի պատուանդանի գետափի մերձակայ շորածայրի մը կուրծքէն, քարէ բնական ծորակէ մը։ Պաստալարէն քարնկէց մը հետեւ, Կարմրակամ ծորարբանը հանքային ջուրերու զոյգ մը աղբիւր ու աւազաններ կային, որոնցմէ մէկուն ջուրը դառն էր, իսկ միւսինը թթու, շատ կապախառն։ Աղկաղային, ածխաթթու — աղ պարունակող այս ջուրէն կը խմէին ստամոքսի հիւանդութենէ բուժուելու համար։ Մորթային հիւանդութիւններէ բուժուելու համար ալ այս ջուրով կը լողնային։ Հանքային այն ջուրերու մասին, Եւրոպացի բոլոր ճանապարհորդներն ալ յիշատակութիւն կ'ընեն։ Աղբիւրներէն դատ, կար նաեւ արուեստական ամբարտակ մը, ուրկէ

ջուրը բաշխուելով, առուակներով կը վազէր Խայապաշի նորակառոյց տուներու պարտկաններուն մէջ։ Գետի ջուրէն օգտուելով, գետին ափամերձ քանի մը ջրաղացներ կառուցուած էին։

Խորունկ ձորին մէջ կային ընդարձակ քարայրներ եւ քարահանքեր. քարի տեսակ մը որ շատ գործածական էր, փութ քար կ'անուանէին, որուն անդրադարձած ենք այս գիրքին մէջ։

Գետին վրայ երկու կամուրջներ կային, մէկը ձորի թաղի շուկայի վերջաւորութեան՝ մզկիթին մօտերը, ուրկէ կամուրջի ճամբան ստորերկրեայ դաղտնի անցք ունէր դէպի բերդը, որ սակայն կառավարութեան կողմէ արգելափակուած էր։ Միւս կամուրջը, Բերդին եւ Սայլու դիւղին միջեւ, Կարմրակամ ձորի եւ Բերդի ձորի ջուրերու խառնուրդի միացման կէտին վրայ կառուցուած էր, որուն քարաչէն մէկ տուտը քանդուած ըլլալով, այդ բաժինին վրայ փայտէ կառուցուածքով լրացուած էր։ Կ'անուանուէր Սահակի կամուրջ։

ԺՈՂՈՎՈՒԹԻՒՆ ԱՊՐԵԼԱԿԵՐՊՐ

Խնուս-բերդի ժողովուրդի՝ հայերու, ինչպէս նաեւ թուրք-բիրտերու ապրելակերպը՝ հազուստ-կապուստը, բնակարանը, կահկարասին եւ ուտելիքը զգալի կերպով տարբեր էին գիւղացիներու ապրելակերպէն։ Մինչ գիւղացին միայրկանի, գրեթէ գետնափոր եւ կոնածեւ տանիքներով տուններու մէջ կը բնակէր, բերդեցին երկյարկանի, կամ եռայարկ քարաչէն եւ առողջարար տուններու մէջ կը բնակէր։ Հազուստը դարձեալ կը դանազանուէր։ Բերդեցին կը հազուէր խառն տարազ։ Նկատելի էին հին հայկական տարազը, արանց թէ կանանց քով, ինչպէս եւ թուրք-քրտական տարազը, եւ նաեւ եւրոպական տարազը սէքրի փանթօլ, եախա-կաւաթ, փարսիգօ (վերարկու), փայլուն կաշի կօշիկներ — փոթիկնկալոշ, սկարփիկն, գանտուրա, ճիգմէ, եւրոպական ձեւի կօշիկ եւ կրկնակօշիկ — լաստիկ, առաւելապէս ուսական ապրանք։ Գիւղացին կը հազուէր տաք եղանակին՝ հաստ, ճերմակ, կարմիր (շիրա), եւ կապոյտ (գայ) կտաններէ պատրաստուած շապիկ, շապրնկեր։ Պաղ օղերուն անոնց վրայ կ'աւելնար տեղական գործ՝ բուրդէ շալփար, այծի մազէ ապա, լուսպոյն պայմաններուն ասուիկ շալփար, եւ վերարկու (փալթօ)։ Կօշիկը՝ ձմեռ աստի հուժ կաշիէ՝ շալուխ, եւ ծանր գանտուրա, որուն ներքանը ծածկուած կ'ըլլար կլոր գլուխով գամերով եւ պայտածեւ երկաթեայ նալչայով։ Ամառները կը հազնէին դրպալկ-շաբալիս եւ սալ։

Ուտելիքները նմանապէս կը տարբերէին։ Գիւղացին առաւելապէս կը սնանէր՝ օրը օրին քաւնդրան մէջ թխուած թարմ հացով, հացահատիկներէ պատրաստուած կերակուրներով, ամառուան ընթացքին՝ երբ կաթ ու մածուց, իւր ու պանիր, հաւ ու հակիթ, բանջարեղէն ու ձուկ առատ էր, ամառնցմով կը սնանէին։ Մսեղէն կերակուրները՝ հիւրերու, կամ հարկեցուցիչ պարագաներու կը պատրաստէին։ Հալուան ու գաթան ամէն եղանակին



կար, մանաւանդ ճամբու պաշարի համար ընկալեալ սովորութիւն էր զայն ունենալ: Աշնան եւ ձմրան, ցուրտ օրերը սկսելուն մսեղէնի պորձածութիւնը կ'աւելնար. առատ կ'ըլլար մասնաւորաբար բարեկենդանի օրերուն, սակայն մեծ պահքը կու գար վերջ տալու մտակերութեան:

Բերդեցի ունեւոր դասակարգը յաճախ, իսկ ասեմաքը՝ հազիւ շարաթափերջին մսեղէն կերակուրներ կ'ունենային: Սահմանադրութեան շրջանին, երբ քիչ մը աւելի ազատութիւն եւ առատութիւն կար, հայերը՝ թուրք-քիւրտերէն աւելի ուրախ-զուարթ, հաճոյք ու վայելքով կեանքը կ'ապրէին:

ՆՇԱՆԱՒՈՐ ԸՆՏԱՆԻՔՆԵՐ

Խնուս-բերդի թուրք-քիւրտ նշանաւոր բէկեր եղած են հետեւեալները, Իւսուֆ Փաշայի տղան՝ Խուռչուտ բէկը, որ իր ժամանակին եղած է հայասէր եւ մեծ բարեկամ հայոց: Իր մասին սերաստացի Եղնիկ Վրդ., 1866 Յունուար 15 թուակիր նամակով Խրիմեան Հայրիկին ուղղեալ իր նամակին մէջ կը գրէ Խուռչուտ բէկի մասին (Տես Դիւան Հայոց Պատմութեան, Գլ. ԺԳ., էջ 65): Նաեւ Սբ. Երուսաղէմի միաբան Յակոբ Եպ.ի նամակը՝ ուղղուած Երուսաղէմի Պատրիարքական փոխանորդ Փիլիպոս Վրդ.ին՝ ի Կ. Պոլիս. գրուած 1869 Օգոստոս 20 (Հ. Տ.) ի Նահանգ Խնուսայ, ուր կը յիշէ Խուռչուտ բէկի կատարած քաջութիւնը, որ կը ձերբակալէ աւազակ Ֆալամազը եւ իր որդին, Սբ. Կարապետու Վանքի բախանը. որով կ'ազատուին Վանքի միաբանութիւնը, եւ շրջակայ գիւղերը, եւ կը խնդրէ որ Պատրիարքարանը պատուանշանով մը Խուռչուտ բէկը պատուէ, (Տես Դիւան Հայոց Պատմութեան, Գ. Գիրք, էջ 554):

Պահրի բէկ, Խուսրով բէկ, Ալի աղան, Լազկի սերունդէ՝ Նոյ բէկ, Նիւսրատին բէկ, Մուհամմադ բէկ: Ալատտին բէկերու սերունդէն Հիւսէյն աղան եւ Մահմուտ աղան, Ղուրտ Օղլու Մահմատ բէկը՝ որ 1895-ի դէպքերու ժամանակ եղած է Խնուսի խայտախամը եւ մեծապէս օգնած խնուսցիներուն:

Հանրածանօթ Հայ ընտանիքներ եղած են՝ Հինէն եւ մեր օրերուն, Տիրացեան Սարաֆ Էղօն, Յակոբ էֆ.ին, Ալէքսան էֆ.ին եւ իրենց զուակները: Միլլաթ-Պաշու կամ Սերոբեան Յակոբ աղան եւ Ղազար աղան: Մալխասեան Յովնան էֆ.ին՝ ապուկաթ, եւ իր տղան փոլիս Արամը, Կարապետը եւ իր տղան՝ Երուանդ: Սիմոնեան ընտանիքը, եօթը եղբայրներ, որոնք ծանօթ էին նաեւ Ալթիպարմազէնք որակումով, իրենցմէ Ալթիպարմազ՝ Վարդան աղան, ամենէն հանրածանօթ եւ ղեկավարն էր: Առանձնապէս տուած ենք այս ընտանիքի պատմութիւնը: Մահմետի Գէորգեան՝ կամ Մուխսու ընտանիքը, Խաչատուր էֆ.ին, Տիգրան էֆ.ին, Միսակ աղան եւ իրենց զուակները: Բարսեղ էֆ.ին, Տէր Բարթողիմէոս եւ իր տղան, Տիգրան՝ անուանի դաշնակցական, թէ՛ Խնուսի մէջ եւ թէ՛ Կովկաս, 1906-ի հայ-թաթարական կռիւներու իր մասնակցութեամբ եւ կատարած քաջութեամբ: Միքայէլեան եղբայրներ, որոնցմէ հանրածանօթը Գարրիէլ աղան էր. այս եղբայրներէն Փանոսը, իրբեւ ուսումնական մարդ, ոպեհարցութեան հետեւելուն, Հազարեակի ընթերցանութեան պահուն խելագարուած էր: Խաղաղ-եան Աւետիս աղան, Ղազար աղան, Վերտիչ աղան: Վերջինս ծանօթ էր նաեւ

«Թաքօ» յաւելեալ անունով, միականի ըլլալուն համար: Թէեւ փոխադրուած էր Կարին, իր տղուն՝ Միսակ աղային հետ, սակայն ամառները Խնուս կ'անցընէր, կալուածական շահերը հաւաքելու համար: Մոկլոգեան եղբայրներ, իրենցմէ Արմենակ աղան հանրածանօթ էր եւ կը զլխաւորէր իրենց առեւտուրը եւ ընդհանուր գործերը:

Շահմուրատեան Սեղրակ աղան, անուանի էր իր հարստութեամբ եւ գինարուքով՝ առանց սակայն գինովի մը տհաճ երեւոյթները հրապարակաւ ցուցադրելու: Մահմետի Յովհաննէսեան (Մկօ-Յովոյի) Սեղրակ աղան: Խալօ Մելքոն աղան եւ իր եղբայրը Գասպար աղան, եւ Մելքոնի տղաք՝ առեւարական՝ Արամը եւ ուսուցիչ՝ Վահանը: Քրմոյեանները Ալէքսան, Արմենակ եւ Արամը, որոնցմէ Արամը ունէր արդիական խանութ մը, ուրկէ կարելի էր գնել ղեղ, մեքենայ, գոհարեղէն-զարդեղէն, ժամացոյց, զէնք, նոյնիսկ հեծանիւ: Փալանձեան Գէորգ աղան, որ աթթարիայի յաջող գործ ունէր, եւ սքանչելի ձայն, ու յաճախ ալ կ'երգէր: Փոթիկեան Սարգիս աղան: Աւազեան Միսակ աղան:

ԱՐՀԵՍՏԱՒՈՐՆԵՐ ԵՒ ԱՌԵՒՏՐԱԿԱՆՆԵՐ

Արհեստաւորներէն նշանաւորներն էին դերձակ՝ Թէրզի Յովհաննէս աղան: Կօշկակար Խաղօ-Սեղրակ աղան: Խաղաղորդ եւ սրկար՝ Միխիթար աղան եւ իր տղաքը: Ոսկերիչ՝ Ղազար աղան: Դարբին՝ ուստա Ղազարն ու Կակոն: Հացթուխ՝ մշեցի Փոլուսի Յովհաննէս. հսկայ Ֆիլիքական արտաքինով եւ արտասովոր բիրտ ուժով օժտուած, պատկառազու արտաքինին հետ միախառնուած էր բարի ու շէնշող բնաւորութիւն մը. իր ուժը կը ցուցադրէր արծաթ դրամի վրայի գրերը եղծանելով, բթամատի եւ ցուցամատի միջեւ շփելով: Արհեստով մունետիկ՝ Թալալ-Նազար, պարթեւ հասակով հսկայի մը երեւոյթով. օժտուած էր աստուածատուր սքանչելի ձայնով: Չայնը զանգակի նման կ'արձագանգէր, մեր օրերու Զէնով-Օհանն էր: Կային նաեւ ջուլհակներ, կարպետ և խալի (գորգ) գործողներ: Նշանաւոր ներկարարներ էին՝ Սրգէ-Գիրգոր եւ իր տղաքը՝ Խաչատուր եւ Արամ (մեծ հայրս եւ մօրեղբայրներս), որոնք իրենց ներկը կը պատրաստէին ծաղիկներէ եւ բոյսերու ու տունկերու արմատներէ: Ներկարանը շինուած էր ձորի թաղը գետի ափին, քարափոր կարասներով, եւ տան մէկ մասը կը կազմէր: Մեծ հայրս ներկարար էր, քարակոփ, որմաղիւր եւ ոսկերիչ: Իւրաքանչիւր արհեստը եղանակին յարմար կը գործածէր: Քարակոփութեան ընթացքին երբ գնար (խոշոր) քար մը պոկուելով կը գլորուի ձորի տունկերու վրայ, կոնակը քարի գէմ կու տայ եւ կը կեցնէ, սակայն ծանրութեան ճնշումի հետեւանքով՝ այդ պատահարէն քառասուն օր ետք մահացաւ: Վիտալ-Գինէ Քրանսացի ուղեգիրը այս ներկարանի մասին յիշատակութիւն կ'ընէ, իր «Ասիական-Թուրքիա» գիրքին՝ Խնուսի մասին գրուած բաժնին մէջ:

Նշանաւոր սափրիչներ էին՝ Պէրպէր Սաֆարն ու Միսակը: Համբաւուր սրճարանապետ էր եւ պաղպաղակ (տոնտուրմա) պատրաստող՝ Խահվէճի Օֆիկը: Նշանաւոր խանութպան էր Թոփալ Համիտ աղան: Ամէն ինչ կարելի էր գնել ասոր խանութէն: Օրին մէկը թուրք գինուորական սպաներ

կը մտնեն Թոփալ Համիտի խանութը եւ կը հարցնեն. «Լսեր եմք, քէ դուն ամէն ինչ կը ծախես քու խանութիդ մէջ: Արդեօք, շան փին (աղտեղութիւն) ալ կը ծախսես».— Թուրքերէնով եղած հարցումին Համիտ աղան կը պատասխանէ.— «Եաշի մի, եօգսա խուռուսի (թափցը, թէ ոչ չո՛րը):

Սահմանադրութեան ընձեռած ազատութենէն քաջալերուած, հայեր սկսան անասուններու մեծաքանակ առեւտուրով ալ զբաղիլ, մինչ նախասահմանադրութեան շրջանին՝ քէնիրութիւնը, այսինքն մեծաքանակ ոչխարի հօտերու արտածման մենաշնորհը՝ չէր քէզ Թամիր աղային եւ Պախօ Սալըտ աղային կը պատկանէր: Անոնք էին, որ Խնուսի համրաւաւոր դամակաւոր ոչխարը (մոռ-խոյուն), կ'արտածէին մինչեւ Պոլիս, Հալէպ եւ Դամասկոս կամ Շամ:

Հայ առեւտրականներու մէջ, մեծ թիւ կը կաղմէին բաղէշցիները: Անոնք զործի տիրացեր եւ հարստացեր էին, թէ՛ իրենց նախաձեռնութեամբ ու ձեռնհասութեամբ, եւ թէ՛ զանազան ճարպիկ դարձուածքներով: Ասեղ դերձան, եւ յուլունքներ ծախելու փերեղակութեամբ կը սկսէին զործի եւ չուտով կը հասնէին խանութպանի եւ վաճառականի դիրքին: Բաղէշցի ճարպիկութեան մասին, վանեցի Գարեգին Եպօ. Սրուանձտեանց այսպէս կը գրէ իր «Համով-Հոտով» գիրքին մէջ.— «Մեծ մաս մը եւս կայ չարչի, որք Մշոյ դաշտ, Պուլսնիքներ, Խնուս, Ալաշկերտ, վանայ գաւառներու գեղերը լեցուն են, եւ ամէն տեսակ ապրանքներ կը տանին ի վաճառ: Ընդհանրապէս չափազանցօրէն հոչակուած է Բաղէշցի վաճառականաց եւ վաճառողաց շահասիրութիւնը մարդ խաբելու մէջ: Գեղացիք Բաղէշցոց համար կ'ըսեն քէ, «Եզը կը վերցնեն, տակը հորթիկ կը փնտռեն» —: Թող յստակ ըլլայ որ այս պարբերութեան մէջըրումով բնաւ միտում չունիմ Բաղէշցի վարկարեկելու:



Խնուս քիթ

## ԳԼՈՒԽ Գ.

# ԽՆՈՒՍԻ ՀԱՅԱԲՆԱԿ ԳԻՒՂԵՐԸ

ԱՂՃԱՄԵԼԻՔ  
ՎԱՄ  
ԽԱԶԱՄԵԼԻՔ

Շինուած էր Խամուր բերդի լանջերուն ստորոտը, Ձեռնակայ բերդին ու կիրճին՝ Գէղուկի մօտերը: Իր արտերն ու արօտավայրերը կը տարածուէին մինչեւ Պուլսնուխ, եւ կը գծէին սահմանը Խնուսի եւ Պուլսնուխի:

Կը պատմուէր թէ պարսկական գերիշխանութեան ժամանակ այս գիւղը կը բնակի Եղեր հայ մելիք մը՝ Աղաճան կամ Պաշան անունով, եւ գիւղը իր անունով կոչուած է եղեր Աղ(ա)ճան Մելիք կամ Խաչան Մելիք, ու ժամանակի ընթացքին փոխուած Աղճամելիքի:

Աղճամելիքի մերձակայքը՝ Կաղճինի Փուլ ըսուած տեղը, 1850 թուականին՝ Երբ գիւղացիները կը փորեն կաղճին հանելու, հողէ ամաններ շինելու համար, տարօրինակ մեծութեամբ մարդկային կմախք մը կը գտնեն: Նախապէս գտնուածը դանկը կ'ըլլայ, իսկ յետոյ, յաջորդաբար կը գտնեն կմախքին միւս բաժինները: Գիւղին կտրիճները խոշոր ոսկորները՝ չուաններով կը կապեն, իսկ աւելի պզտիկ կտորները յարդի սակառները լեցուցած գիւղը կը տանին, եւ իրարու միջեւ կը բաժնեն: Այդ ժամանակները, Սբ. Կարապետի վանքի վարդապետներէն մէկը պտղի հաւաքելու առիթով գիւղը կու գայ. գիւղացիները կը պատմեն իրենց գիւտի մասին, եւ իրենց կարծիքը կը յայտնեն՝ թէ դեւի, աժտահարի կմախք է, եւ այդ ոսկորներէն կտոր մըն ալ կու տան նուիրակ-վարդապետին, հետը Սբ. Կարապետի վանքը տանելու համար: Վարդապետը այդ ոսկորը հետը վանք տանելով կը բեւեռէ վանքի բակի մեծ դրան ճակտին, իսկ յետոյ այդ ոսկորը կը զործածուի եղեր որպէս կշիռքի նժարի մէկ կողմը իրրեւ նուկի կամ օխա ծանրութեան տեղ: Այս ոսկորներու գիւտին լուրը կը տարածուի եւ կը հասնի մինչեւ Էրզրում: Երկու անգլիացիներ Էրզրումի փաշային խաւազներուն հետ կու գան Խնուս, եւ միւտիւրին հետ կ'երթան Աղճամելիք: Գիւղացիները կը տանին եւ կը սկսին փորել Կաղճինի Փուլը, սակայն նոր բան մը չեն կրնար գտնել, իսկ գիւղացիներու քով գտնուած ոսկորները եւ դանկը առնելով կը վերադառնան Էրզրում: Այդ արտասովոր գտնելը եւ ոսկորները կը տարուին Անգլիա՝ Լոնտոնի Արքայական Թանգարանը: (Տեսնել այս մասին Գ. Վ. Սրուանձտեանց, «Գրոց ու Բրոց», էջ 49-51):

Աղճամելիքի մօտակայքը, աղի հանքեր — Տուզլա — տանող ճանապարհին վրայ՝ գտնուած է սպիտակ սրբատաշ քարով խաչ-քար մը, որուն վրայի քանդակը կը ցուցնէ եղեր եպիսկոպոսի պատկեր, պատարապի զդեստներով, խաչը ձեռքին, չաթալ-թազը գլուխը դրած, գլխուն վրայ երկու կողմէ ջահեր կախուած: Եպիսկոպոսի աջակողմը՝ վայրի ոչխար մը զինք ծծող գտնուած կը լսէ: Տապանաքարին բոլորտիքը, գիրերու շրջանակէն ներս՝ փորագրուած են աղանձներու նկարներ: Այս խաչքարին մօտ գտնուած է նաեւ ուրիշ տապանաքար մը, որուն վրայ փորուած է երկրագործի արօրի խոփը: Այս տեղերը գտնուած են նաեւ հին ոսկեղրամներ:



Ժածան քար — Լումաճուղաքար —

Աղճամելիքի հողմասերուն՝ Զեռնակայ սարին վրայ՝ կան հին բերդի մը աւերակները: Նոյնպէս այս գիւղին մօտերը կը գտնուի խնուցիներուն շատ ծանօթ Ժածան-Քար կոչուող՝ շարժող քարը: Այս հսկայական ապառաժը

կանգնած է անհաւատալի թուող հողասիւնի մը վրայ: Շատ անգամ տեսնուած է որ հովի ուժգնութենէն քարը կը շարժի, եւ սակայն չի տապալիր հողասիւնին վրայէն: Գիւղացիները փորձած են շղթաներով կապել եւ գոմէշներու ու եղներու ուժով քաշել՝ վար ձգելու համար, սակայն անկարելի եղած է իր դիրքէն խախտել:

Այս գիւղացիները ընդհանրապէս կը զբաղէին երկրագործութեամբ եւ խաչնարածութեամբ, նաեւ որսորդութեամբ. նշանաւոր որսորդներ կային այս գիւղացիներէն:

Գիւղին նշանաւոր ընտանիքներն էին — Պաթօ Օհանի տունը, Սանըմի Տօնոյի տունը: Պաթօ Օհանի էնկէի աղջկայ նշանախօսութեան առթիւ, նոյն գիւղացի երիտասարդ մը աղջկան սիրահարած ըլլալով, երբ կը տեսնէ որ աղջիկը հարսնութեան պիտի տանին Քաղքիկ գիւղացի ոչս Կարոյի տղուն՝ (ոչս Կարօն Քաղքիկու մեծահարուստ Յակոբ աղայի եղբայրն էր)՝ կը դիմէ քերտ աւաղակապետ Շահօ-Պալլոյի տղուն Համգոյին, եւ կաշառք խոստանալով կ'ուզէ որ աղջիկը փախցնէ: Այս դաւին լուրը՝ ոչս Կարոյի աղջիկը՝ որ Աղճամելիք հարսնութեան տարուած էր, անմիջապէս հօրը կը հասցնէ: Այդ պահուն Քաղքիկ կը գտնուին նոյն գիւղացի յայտնի Փէտայիներ՝ Միմօ Օհան, Մարկոսի Միսակ, Փուրթօ Սաղար, Իկիթի Պօղոս, Աղճամանի Արրօն եւ ուրիշներ՝ որոնցմէ ոմանք տրդէն Փիրար ըլլալով՝ թուրք կառավարութենէն կը հետապնդուէին: Ասոնք խումբ մը կազմելով անմիջապէս կ'երթան Աղճամելիք եւ կ'իջևանին Պաթօ Օհանի տունը: Համգոն երբ կը լսէ որ Օհան եկած է, իր ծառաներէն մէկը կը ղրկէ անոր քով եւ կը հրաւիրէ իր տունը: Օհան մօտին հրացանով զինուած՝ երկու ընկերներու հետ կ'երթայ Համգոյի տունը եւ անոր կ'ըսէ թէ եկած է հարսանիքի, եւ հարսը պիտի տանի Քաղքիկ: Համգոն նկատելով որ դաւը երեւան ելած է, ինքզինք կը չքմեղացնէ, որպէս թէ խնդիրը իրեն սխալ տեղեկացուած է, եւ քանի որ հիմա իրողութիւնը լսեց, ներողութիւն կը խնդրէ Օհանէն եղած թիւրիմացութեան մասին, եւ բարի ճանապարհ կը մաղթէ: Այդ զիշեր Օհանի խումբը հարսնցուն եւ անոր ծնողքը միասին առնելով կու գայ Քաղքիկ եւ պսակադրութիւնը կատարելով՝ խնդիրը կը փակուի:

Աղճամելիքի էր Կուկունեան արչաւախումբին մասնակցող հայդուկ՝ Հլղաթ Մինասեանը, որուն մասին Արգամ Պետրոսեան այսպէս կը գրէ. «Եւրղաթ (Հլղաթ) Մինասեան, Խնուսցի, Աղճամելիք գիւղից տասնութամեայ մի հսկայ՝ որին Գողեաթ մականունով էինք մկրտել, անչափախառութեան պատճառով՝ ու քամեայ տաժանակիր աշխատանքի դատապարտուեցաւ»:

1909-ին, Օսմ. Սահմանադրութեան օրերուն, երբ հայ պանդուխտներ երկիր կը վերադառնային, երեք վանքի պանդուխտներ Խնուսի վրայով դէպի Պուլճանուխ ճամբորդած ատեն՝ տուժանցի Միսակ Օֆիկեանի հետ Աղճամելիքի մօտերը կը կողոպտուին եւ կը սպաննուին ճիպրանցի Սատիի եւ Աւտոյի խուլամներէն, երկար հետապնդումներէ ետք: Հայ կին մը որ բռնութեամբ ամուսնացած էր հորմզանցի քերտի մը հետ, լուր կու տայ հայոց, որոնք կառավարութեան տեղեկացնելով՝ ոստիկանութիւնը վաշտ մը հեծե-

լազորք հետապնդելով հորմզանցի Օզոյի-Սլոյի լամուկները, Վահտի տղայ Ամարը, Ահմոյէ-Գրէժը եւ Սատի տղան Շաֆզին՝ կը ձերբակալեն: Կը յայտնուի որ կողոպուտի քանակը մինչեւ 1700 ոսկիի ապրանք եւ կանխիկ դրամ եղած ըլլայ: Այս ոճիրին մասին Խնուսէն Կարնոյ Յառաջ թերթին գրած է թղթակից մը մանրամասնօրէն:

**ԱՐՕՍ**

Գիւղը շինուած էր գեղատեսիլ եւ ուղղական դիրքով բլուրի մը վրայ: Գիւղին առջեւէն կ'անցնէր Արածանիի սկզբնաւորութիւն կազմող ջուրը, որ կը կոչուէր Խնուս գետ: Մեր մատենագիրները, Արօսը կը դասաւորեն Տուրուբերանի Վարաժնունիք գաւառին մէջ: Գիւղին մերձակայ հայոց գերեզմանատան մէջ կը դանուէր կիսաւեր հին եկեղեցի մը, որուն համար կը պատմուէր, թէ ժե. դարուն շինուած է, երբ այդ օրերուն գիւղը կը բաղկանայ եղբր աւելի քան 300 տուն հայ բնակիչներէ: Մեր օրերուն Արօս ունէր 48 տուն հայ, եւ 8 տուն քիւրտ բնակիչներ: Ունէր նորակառոյց քարաշէն եկեղեցի մը եւ դպրոց: Եկեղեցիին տանիքը կը հանդէսէր չորս քարէ սիւներու վրայ: Միակտուր քարասիւններ էին, իւրաքանչիւր 6 մեթր բարձրութեամբ:

Հետաքրքիր երեւոյթ մը ունէին Հայոց գերեզմանոցի տապանաքարերը. քարերուն վրայ խաչանշաններ չկային, այլ քանդակներ ձիու, ուղտի, եղջիւրաւոր խոյի, եղնիկի եւ այլ անասուններու: Մանուկներու տապանաքարերը օրօրոցի ձեւով: Վերջապէս իւրաքանչիւր տապանաքար կը թուէր շինուած ըլլալ իր պատուանդանը հանդէսով մեռելի ինքնութիւնը եւ ապրած կեանքը բնորոշող նկարներով: Օրինակ, մարտիկի մը շիրմաքարին վրայ քանդակուած էր զէն ու գրահ, կամ գրահաւոր այր ու ձի: Հողապորժին՝ իր մանկաղը, արհեստաւորին՝ իր մուրճը կամ մկրատը եւ այլն: Նման տապանաքարեր ցարդ գոյութիւն ունին պարսկահայոց գերեզմանատուններուն մէջ:

Հայր էփրիկեան արտայայտուելով այս գիւղին մասին՝ կը գրէ.  
«ԱՐՕՍ կամ ԱՐՈՍ.— Գիւղ Տուրուբերանի Վարաժնունիք (Խնուս) գաւառի մէջ, 50 տուն բնակչօք, յորոց 10 քուրք եւ եւ մնացածը հայ: Հայք ունին նորաշէն եկեղեցի մը եւ ծաղկոց մը 40-50 ուսանողաց համար: Ժողովուրդը ջերմեամաղ է, եւ մեծ սէր ունի ուսման եւ դաստիարակութեան: Գիւղիս գերեզմանատան մէջ աւերակ հին եկեղեցի մը կայ, շինութեան քուակամն անծանօթ է, բայց կը համարուի ժե. դարու գործ, որոյ շէն եղած ժամանակ, կը պատմուի, թէ զիւզս ունէր 250 տուն հարուստ բնակիչ: Տապանաքարերը շինուած են ձիու կամ ուղտի կերպարանօք: Արօսի արեւմտեան հարաւակողմը երկու քարնկէց հեռու լեռան մը լանջին մէջ կայ միակտուր քարէ փորուած եկեղեցի մը, որոյ արձանագրութիւնք բոլորովին անբնութիւնի դարձած են. մէջը ցարդ կան մկրտարանը եւ խորանը: Կը տեսնուին նաեւ քանի մը հին խաչեր եկեղեցւոյ պատերու ներսի կողմերուն վը-

րայ: Գիւղիս արեւելեան հարաւակողմն ալ, մէկ ժամ հեռու, կայ ընտիր քարահանք, որոյ դիրատաշ քարերէն շինուած են այժմեան եկեղեցւոյ չորս միակտուր սիւները 6 մետր բարձրութեամբ» (Բնաշխարհիկ Բառարան, էջ 344):

Արօս գիւղը իր բնական դիրքով կը նմանի Հայաստանի բնիկ թռչուն արօսին, իր վզիկը երկայն, կուրծքը քաջի պէս դուրս ցցուած, գլուխը բարձր բռնած կ'իջիւէ աջ ու ահեակ:

Արօսի արեւմտեան-հարաւակողմը, գիւղէն քանի մը քարնկէց հեռու, Արջաձոր կամ Նորեւածայ ձորի ափամերձ քարաբլուրի լանջին, քարայրի մէջ, կար միակտուր քարափոր եկեղեցի մը՝ ծանօթ «Նորեւածի Վանք» անունով, եւ քարափոր եկեղեցւոյ մէջ անաղարտ կը մնար քարակոփ խորանը, մկրտութեան աւազանը եւ պատերուն վրայ քանի մը հատ քարափոր խաչեր:

Հայկական ազատագրութեան վերադարձումին, Փէտայական մարտնչուծի օրերուն, «Նորեւածի Վանք» եղած է ապաստանարանը թէ՛ տեղացի եւ թէ՛ Կովկասէն երկիր մտնող մեր նշանաւոր հայդուկ-մարտիկներուն: Կովկասէն-Տարօն՝ Խնուսի դժով անցնող հայդուկային խումբերը եւ խմբապետները՝ Սերօր, Հրայր, Անդրանիկ, Գէորդ-Չաւուշ, Սեպուհ, Նիկոլ, Գուրգէն, Կորիւն, Փիլոս, Դերենիկ, Մմբուլ եւ դեռ ուրիշներ, խուզարկութեան եւ կամ բնդհարուծի վտանգի պահուն՝ ապահով կերպով թաղնուած են այս վանքը:

Յեղափոխականները իրենց գործունէութեան կեդրոն դարձուցած էին այս գիւղը, եւ Արօս մեկնակէտն էր, Կովկասէն-Տարօն, եւ Տարօնէն-Կովկաս, եկող, գացող հայդուկային եւ զինատար խումբերուն: Հպարտօրէն պէտք է արձանագրել որ այդ խումբերը առաջնորդող վալատները խնուցիներ էին: Թուենք անոնցմէ ոմանց անունները՝ Տումանայ Գօգօ-Աւազ (հետագային ենթէջօյ փոխադրուած էր), Արօսի Մելոն, Մարուֆայ Կատանի-Աւազ: Գովանդուկայ էղոն ու Խըչոն: Քաղքիւ Օհան ու Շէկ Յակոն: Խալաւուշայ Մարտիրոսն ու Շուշէ Մօսոն: Եահիացի Շէկ Դաւիթն ու Սաֆոն, եւ դեռ ուրիշներ:

Քանի՞, քանի՞ ջահիլ ու ջիւան Խնուսցի քաջ երիտասարդներ «Նորեւածի Վանք»ի եկեղեցւոյ խորանին առջեւ ծնրադիր՝ Աւետարանի, խաչի ու խանչալի վրայ երդումով ուխտած են զինուորագրուել «Ղեկերութեան տըղայ» կամ «Ջանֆէտայի» ըլլալու, հայ ազգին սիրոյն եւ անոր ազատագրութեան համար կոռուելու խոր զիտակցութեամբ եւ վսեմ հաւատքով:

1895-ի գէպքին՝ կամ ինչպէս որ սովոր էինք ըսել «Թալանի տարին», արօսցիներ զինուած զէնքով, խաչերկաթով, գերանդիով, բիրերով, քարերով եւ պարսատիկով, հերոսական զիմաղրութիւն ցոյց տուած է գիւղին վրայ

յարձակող թշնամի քերտ համիտիկներուն եւ խուժանին: Չօր. Սեպուհ՝ որ 1895-ի դէպքերուն եղած էր Խնուս եւ մասնակցած կոիւններուն, Արօսի կոիւնի եւ արօսցիներու մասին հիացումով կը խօսէր, դրուատելով անոնց քաղութիւնները, երբ հանդիպում ունենայինք եւ խօսքը Խնուսի մասին ըլլար: «Հայրենիք» օրաթերթի եւ ամսագիրի մէջ զանազան առիթներով գրած է Խնուսի մասին իր յիշատակները: (Տես «Հայրենիք» օրաթերթ, 1937, Նոյեմբեր 7 եւ 9: Նաև «Հայրենիք Ամսագիր», 1943, Յուլիս-Օգոստոս, էջ 85):



Սեպուհ

Արօսի ժողովուրդի գլխաւոր զրաղումն էր երկրագործութիւն, խաշնարածութիւն, ջուլհակութիւն, քարակոփութիւն, որմաշինութիւն. կային մանր առեւտրականներ եւ կալուածատէրեր: Նշանաւոր որմաղիր վարպետ էր Ուստա-Մարտոն, որ իր արհեստը կատարելագործած էր Կ. Պոլիս: Նշանաւոր էին նաև Քօջօ Յարթէն, Յունօ Սարգիս եւ Արշակ եղբայրները: Արշակ՝ Խնուս-բերդի կառավարութեան մէջ Խտարայի ազա էր: Առանձնապէս թէ՛ Արօս գիւղի, եւ թէ՛ Խնուսի գաւառին մէջ նշանաւոր էր երգասաց եւ պարերգ յօրինող՝ Տըխկըկայ Յակոն: Արօսցի էր նաև յայտնի յեղափոխական եւ ուսուցիչ, Տէր Ղեւոնդեան Հրաչեայ վարժապետը, շատ աւելի հանրածանօթ «Թօփալ Վարժապետ» որակումով, իր կրթութիւնը առած էր

նախ Սր. Կարապետի վանքը, եւ ապա Էջմիածնի Գէորգեան ձեմարանը: Հեղինակն էր քերտերէն այբբենարանի եւ քերականութեան: Իր մասին Կարնոյ «Յառաջ» թերթը, (1909 Յունիս, թիւ 4), այսպէս կը գրէ. — «Խնուսցի ընկեր Հրաչեայ պատրաստած է հայատառ ֆիւրտերէն «Այբբենարան» մը, որ լոյս պիտի տեսնէ «Յառաջ»ի հրատարակութեամբ»: «Յառաջ» իբրև ծանօթութիւն կ'աւելցնէ. — «Հետաքրքրական աշխատութիւն մ'է, որուն բովանդակութիւնը վերցուած է գուտ ֆրտական կեանքէ: Ուրախալի է որ այս եւ ապագային լոյս ընծայելիք նման գրքեր, պիտի աջակցին մեր դրացի ֆիւրտ ժողովուրդին մէջ ուսումն ու կրթութիւնը տարածելու եւ ֆազաֆալըրթութեան ցամբուն մէջ դնելու գանձմք»: Աւելցնենք որ Կարնոյ Ամբրիկեան Միսիոնարութիւնն ալ սկսած էր հետաքրքրուիլ քերտերով, եւ Խնուսի Չաւուրմա գիւղէն թաժտին անունով քերտ ուսանող մը կը զատախարակէր իր դպրոցին մէջ միսիոնարական հեռաւոր նպատակի համար:

Արօսի մերձակայքը կային ընտիր քարի հանքեր: Այս քարահանքերէն մէկը նշանաւոր էր իր քարի արտասովոր տաքութեան դիմանալու բնոյթով: Բրուտները այս քարէն կը շինէին իրենց հնոց-փուտերը, ամանները թրծելու համար: Անգլիացի ճանապարհորդ Լինչ՝ այս քարահանքի մասին գրած է իր «Արմէնիա» գիրքին մէջ: Այս քարահանքներու շնորհիւ արօսցիները զարգացուցած էին քարակոփութեան արհեստը: Կը պատրաստէին ջրադացի աղօրի, դինգ-անիւ քար, հացահատիկները կեղուելու գործածութեան համար, ձէթհանքի, հնոցի եւ անիւի քար, երկանաքարեր՝ (զորս մենք սովոր էինք երկանք ըսել), տապանաքարեր, կամուրջի կամարաքարեր, քարէ ծորակներ, ազուզաներ, աղբիւրներու կամարներ, եկեղեցիի կամարներ, որմեր, սիւններ, աւազաններ (գուռ), սանտ, լող, եւայլն:

**ԳԱԲՐԻԷԼԻ ԳՈՄ**

Նորաշէն փոքր աւան մըն էր. Օսմանեան Սահմանադրութեան սկիզբի տարին հիմնուած, Խնուս-բերդ ընկող, առեւտրական բիթլիզցի Գաբրիէլ աղա Միքայէլեանի դրամով, որպէս ազարակ-ամարանոց: Խնուս-բերդէն դէպի արեւելք Փայկ՝ քրտարնակ եւ Չաուրմա՝ հայարնակ գիւղերու միջեւ ճորափի եզրին քարայրի մը (մուղարայ) մօտերը: Այս աւանը կը բաղկանար 13 տուն հայ ընտանիքներէ, որոնք կը զբաղէին երկրագործութեամբ եւ անասնապահութեամբ, որպէս Գաբրիէլ աղայի մարապանքը: Դպրոց եւ եկեղեցի չունէին: Կապուած էին կամ Չաուրմայի եւ կամ Խնուս-բերդին:

**ԳԱՐԱԶՈՊԱՆ**

Խնուս գաւառի հայարնակ գիւղերու ամենամեծ, բաղմամարդ եւ նիւթական նախանձելի վիճակով գիւղաւանն էր: Ունէր 220 տուն բնակչութիւն: Կը բաժնուէր երեք թաղամասերու: Հարուստ էր մշակելի ընդարձակ արտերով եւ դրախտանման արօտատեղիներով: Մասնաւոր յիշատակութեան արժանի

են Սեկրետրի Ձոր եւ Գարագեօզ կոչուած շրջաններու արտերն ու մարգերը, որոնց սահմանը կը հասնէր մինչեւ Բուրձնուխներ :

«Բնաշխարհիկ բառարան» այսպէս կը գրէ .— «Գարաչոպան կամ Քարաչոպան, մեծ գիւղ հայոց Տուրուքերանի հնուս գաւառի մէջ : Ունի 150 տուն՝ բաժնուած 3 թաղերու : Գեղեցիկ է տեսարանն, օդն կենսատու եւ ջուրըն առատ : Գիւղացուց նիւթական վիճակն լաւ կրնայ համարուիլ . ունին Ս. Յակովբ անուամբ քարուկիր եկեղեցի մը 3 խորանաւ եւ 6 սիւներով : Տանիքին վրայ, երկու գերաններու մէջտեղ, կախած են Տփղիսէն բերուած երկու բաւական մեծ զանգակներ : Գարաչոպանի հայոց մէջ կը գտնուին այնպիսի անհատներ, որք ձայն ունին հնուսայ դատարանին մէջ եւ մեծ ազդեցութիւն գաւառին վրայ : Տեղույս գիւղացիք սովորութիւն չունին իրենց ննջեցելոց տապանաքարին օձել տալու, այլ քարին կիսակլոր ձել մը կու տան եւ կը նմանցընեն ըզտու եւ աւելի յանախ ձիւ՝ հանդերձ թամբովն, որ նշան է մեռնողի ձիւկարծութեան եւ քաջարտութեան» :

Գիւղը շինուած էր ընդարձակ բլրադաշտի մը վրայ, Արածանիի ափին, և կ'իյնար դաշտին արեւելակողմը : Իր սահմանները կ'ընդգծէին Սպիտակասարի, Գոպալայ-Գէղուկի, Գոզլ-Պապա եւ Հաղը-Պապա լեռներով, մինչեւ Ձեռնակ-սար եւ Աղի-Հանքերը :

Գիւղաւանը նահիէ-միւտիւրիկ՝ զիւղախումբերու կեդրոն էր : Ժամանակ մը միւտիւրը համազիւղացի հանրածանօթ ընտանիքէ Իսրայէլ Հաղրոյեանն էր :

Ուսումն ու կրթութիւնը տարածուած էին գիւղին մէջ : Ունէին ազգային դպրոց մը վեց դասարանով եւ Սր. Ղեւոնդեան անունով՝ որուն տեսուչը ազգային վերագործութեան եւ յեղափոխութեան շրջանին, կարնեցի յայտնի վաճառական Սարաֆ-Հաճոյի փեսան՝ Սանասարեանէն շրջանաւարտ՝ անուանի Վահէ վարժապետն էր, որ երբ համիտեան դատան օրերուն ձերբակալուեցաւ որպէս յեղափոխական, 1903 կամ 1904 թուականներուն, ձմեռ ատեն, շղթայակալ, եւ ապա բալխիւրի մը վրայ կապած, ժանտարմաներով տարին էր գրում : Ճանապարհին՝ իրեն տրուած նեղութիւններէն եւ շարժարանքներէն ազդուած, հարցաքննութեան ատեն իսկադարութիւն կեղծելով ազատուած էր բանտարկութենէ, թէեւ բանտարկութենէ ազատ մնալու գաղտնիքը, Սարաֆ-Հաճոյի դեղին ոսկիներու շլացուցիչ տեսքին մէջ ծրարուած ըլլալը կը փրփրային :

Այս դպրոցէն շրջանաւարտ մը, առանց քննութեան կ'ընդունուէր Սանասարեան վարժարան, եւ տարի մը ուսանելով կը ստանար աւարտական վկայական . այդպիսի շրջանաւարտ մըն էր Տէրտրոջ Սիմոնի տղան՝ Միհրան Տէր Յովհաննէսեան :

Բնիկ այս գիւղացի էր, Կարնոյ մէջ յայտնի վաճառական՝ Չաքարեան եղբայրներու մեծ ընտանիքը, որ տեղափոխուած էր Կարին եւ առեւտրական մասնաձեւեր ունէր Պոլիս, Մարսէյլ (Ֆրանսա), Ղարս (Կովկաս), եւ տէր էր գիւղին մէջ հողային բազմաթիւ կալուածներու եւ քարաշէն կարգ մը խանութիւններու : Եղբայրներէն կրտսերը՝ Եղիշէն, կը մնար գիւղը, կառավար-



Պետրոս Էփ. Զաֆարեան

րելու կալուածներն ու ստացուածքները, իսկ եղբորորդիներէն՝ Անդրանիկը, որ Ֆրանսա երկրագործութիւն-գիւղատնտեսութիւն ուսանած էր, Օսմ. Սահմանադրութեան շրջանին՝ եկած էր գիւղը, հետը երկրագործական վարող եւ հնձող մեքենաներ բերելով, գործածութեան դնելու համար : Իրրեւ երկրագործ եւ խաչնարած՝ Գարաչոպանցիները մեծ համբաւ ունէին դաւառին մէջ : Անուանի ձիւկարծ եւ ձիարոյժներ ալ կային : Ձիարչաւի մէջ յաճախ յայտնի քիւրտ թոռն ձիւկարներու հետ՝ խօշմա կամ ջիրինդ, արչաւի մրցման կը մտնէին, եւ առաւելագոյն յաղթանակով դուրս կու դային : Կը բուծանէին Խնուսի համբաւաւոր նոյրը, Քիւլէյլան կամ Նազէ սերունդով կ'անուանէին, որոնց վաճառումը կ'ըլլար դատաւորի արտօնապիտով եւ սերունդին իսկականութեան վաւերականութիւնը երդուեալ վկաներու հաստատումով : Ձիւկարութեան եւ քաջարտութեան իրենց պատմութիւնը աւանդաբար շրթունքէ-շրթունք, եւ սերունդէ-սերունդ փոխանցուած կ'ապրէր, որուն կը միանար նաեւ կոթողական պատմութիւնը, որ կը տեսնուէր ննջեցելոց տապանաքարերուն վրայ, կոփածոյ թամբուած եւ զրահուած երկվարներու, կամ ամբողջական այր ու ձիւ պատկերացումով : Յատկանշական էին այս գիւղի գերեզմանոցի տապանաքարերը . շատ քիչ խաչաքանդակ ունէին իրենց վրայ, նրման Արուս եւ Սայլու գիւղերու գերեզմանաքարերուն :



Հովիտ Խոյրճյան — Գարաչոպանցի կուրիս կինը. որ իր տանը շեցուց Գամիշի մէջ: Մեռած 1954-ին:

Գարաչոպանցի չարեմատիական խանգովաւ զգացումներով. սղգ-  
վին վերադարձումի շրջանին իր առաւելագոյն մասնակցութիւնը աւոււ չայ  
վերադարձումի թեւան ընդ շանրապէս. իսկ Ն. Յ. Դաշնակցութեան մասնաւոր-  
ապէս. Գարաչոպանցի խումբերուն միանալով. երկրին մէջ. երկրին զուրս՝ Կով-  
կաս. թիւ սոյլուր:

Նին իր քրտաւ սղին. նոր թափով մը. յեղափոխական «Ման կամ Ազատու-  
թիւն» պրոչիւն տակ. սկսուա պայքարի մանկ սիրող թուրք եւ քիւրտ բռնակա-  
լու թեւան. զէմ: 1941-5 թուականներուն Խոյրճի մէջ պատահած զէպքերու մա-  
սին. «Հայրենիք» սանապքի մէջ Խոյրճի իր «Հայ յեղափոխականի մը մի-  
տակները» պրոչիւնաց մէջ. Նախահայր կը գրէ Գարաչոպանցի մասին.

«Գարաչոպանցի կուրիս — Միւսյն Պալանուիւր. չէր որ փորձեր կ'ընէր  
սպարտանոս երես. Կրտսական շանտառակաւ թիւ նեն թէն: Նայն թմբուա սըտամ-  
պրտա թիւ նէր կը նկատուաւ Երեսն Գարաչոպանցի Խոյրճի. Կուսակցի մէջ:  
1942-ին զիտարանցի Կրտսական թէկը. որ Երեսնակի գաւնակըաւ կը պատականէ.  
Կ'ուսկ իրմէն նմանապէս զինկ թայաւ Երեսն իր շանտառակով գաւնակէ քաւա աշի-  
րկ թեւան. սանապքա թեւանց: Թայգ պիւնապքա թեւան կը Երեսնակի. մասնաւորա-  
պէս Գարաչոպանցի պիւնակ մէջ Կրտսական թէկը գարաչոպանցի Երեսնակի թեւան-  
թեւան. պրոչիւն շեմ տագիւր իրմէն իրմէն կամ Երեսն ա զ պաւ. ա զ թեւանց. Երեսն թեւան-  
Երեսնակի թեւան. ա զ սանապքի թեւան ա զ պաւ Երեսնակի թեւան. Կրտսակ  
Գարաչոպանցի կը սանապքի սանապքա գարաչոպանցի Երեսնակի թեւան կը Երեսն  
Կրտսակի թեւան պիւնակ: Կրտսակին թէկը չի կրնաւ սանապքա ալ. սանապքա ա-  
թիւնը. սանապքի կը Երեսնակի թեւան կը սանապքա աշիւրկի. Երեսնակի կը Երեսնակի թեւան յար-

ձակում կը գործէ գիւղին վրայ: Հայերը բաւական լաւ գիտուած, ամբողջ օր  
մը կը կուրին ու դուրս կը էշնէ քիւրտերը իրենց սահմաններէն»:

Գարաչոպանցի՝ Անդրանիկ Մխիթարեան՝ Միսո Սահակի տղան, եղած է Ռուբէնի յուշերու, ինչպէս նաեւ պատմական կարեւոր վաւերագիրներու գասաւորողն ու արտադրողը: Ռուբէն «Հայ յեղափոխականի մը յիշատակ-  
ները» գիրքի Ա. հատորի յառաջարանին մէջ կը գրէ. «Անդրանիկ անուով խնուսցի երիտասարդի մը յանձնեցի գասաւորելը, արտագրելը այդ կարեւոր պատմական վաւերագիրներուն»:

1915-ի զէպքերու մասին մենք կ'անդրադառնանք «Խնուսի ինքնապաշտ-  
պանութիւնն ու ջարդը» գլուխին մէջ. հոս հարեւանցի յիշենք որ 1915-ի Մա-  
լիս 2-ին, գիւղը կը պաշարուի համիտիէներու եւ քիւրտ-թուրք չէթէներու կողմէ միւտիւրին գիտակցութեամբ եւ հրահանով: Գիւղացիները յարձակու-  
մին դիմադրելով, կուր կը սկսի: Միւտիւրը նկատելով որ հայերը լաւ գիտուած կը կուրին, դաւադրօրէն կը կանչէ զիւղի ականաւոր անձերէն քանի մը հոգի, եւ կը խոստանայ զիւղը պաշտպանել, եթէ գիւղացիները իրենց զէն-  
քերը իրեն յանձնեն: Միւտիւրի պաշտպանութեան ապաւինողները կը ջարդը-  
ւին, իսկ գինեալ խումբը կուրելով դուրս կու գայ գիւղէն, բարձրանալով Գո-  
զալ-Պապա սարը, ուրկէ դարձեալ կուրելով՝ նահանջող թրքական բանակի ճակատը ճեղքելով՝ կ'անցնի ուսական սահմանը եւ կը միանայ հայկական կամաւորական բանակին:

Գիւղի հանրածանօթ ընտանիքներն էին, Հազրո տունէն Գասպար, Յար-  
թէն, Կիրակոս եւ Իսրայէլ եղբայրները: Ատեն մը, Իսրայէլ զիւղի նահիէ-  
միւտիւրն էր: Հինէն ծանօթ էր Մելիք-Գասպարի տունը, երբ Գասպար եղած է Խնուսի մելիքներէն մին: Չաքարեանները, որոնց մասին արդէն յիշատա-  
կութիւն ըրինք: Անուանի էին Միսո-Սահակն ու Տէրտրոջ-Սիմոնը. ասոնք եր-  
կուքն ալ յայտնի յեղափոխականներ էին եւ ուսումնական մարդիկ: Սարհատ-  
եան ընտանիքը, որոնցմէ Մկրտիչը՝ էրզրում փոխադրուած էր եւ կը գրա-  
դէր առեւտուրով: Կարինէն տեղահանուած, աքսորի ճամբու ընթացքին նա-  
հատակուած է. կինը՝ Տիկ. Լուսինն եւ զաւակները՝ Մելիք եւ Սեդրակ, ար-  
ժանի ժառանգորդները իրենց նահապետական տան, կ'ապրին Պէյրուի (Լի-  
բանան): Հանրածանօթ առեւտրականներ են, ծանօթ — Սարհատեան Եղ-  
բայրներ: Ունին երկու վաճառատուն — Մելիք եւ Տարօն: Մանօթ են նաեւ աղ-  
լային-հանրային կեանքին մէջ: Յիշենք նաեւ շատ հանրածանօթ Խոր-Սրբէն  
եւ յայտնի յեղափոխական Պէյճեան Երեսնակի. նաեւ նշանաւոր նուագածու-  
ներ՝ գուսան — գաւռնայով նուագող՝ Կիւրու տղաք՝ Սեթոն եւ իր եղբայր-  
ները:

Գիւղացիներու զլխաւոր գրազոււմն էր երկրագործութիւն, խաշնարա-  
ծութիւն, մեղուարուծութիւն, հաւաքուծութիւն. արհեստաւորներ ալ կա-  
յին՝ դարբին, կլայագործ (զալայնի), ջուլհակ, բրուտ, դերձակ, խոտեղէզ  
փսիւթ եւ նստարան՝ խրսիլ ու գրմալի հիւտողներ, նաեւ յաջող առեւտրա-  
կաններ: Ընդհանուր առմամբ գիւղը բարեկեցիկ էր. կային նաեւ հարուստ-  
ներ ալ:



Սարխատեան եղբայրներ իրենց ընտանեկան կազմով

Գիւղը ունէր ջրաղացք եւ ձիթհանք. նաեւ Սահմանադրութեան շրջանին նորակառոյց քարաշէն խանութներ: Հաստատուած էր հեռագրատուն եւ նամակատուն ալ: Գիւղաքաղաք մը դառնալու հաւանականութիւնը կը զգացուէր արդէն, երբ հասաւ ահաւոր պատերազմը եւ տեղի ունեցաւ հայոց մեծ եղեռնը:

**ԳԱՐԱՊՈՒՐԱՔ**

Հոս կը բնակէին 4 տուն հայ ընտանիքներ: Ասոնց արհեստը քարակոփութիւն եւ ջաղացպանութիւն էր: Գիւղը քրտարնակ էր: Ունէր ընդարձակ արօտատեղիներ, որ մեծ առաւելութիւն կու տար խաշնարածութեան: Խնուսի շրջանէն արտածուած ոչխարի հօտերը, արտածումէն առաջ, 2 կամ 3 շաբաթուան համար ճարակելու կը տանէին այս արօտատեղիները, ուր այնպիսի սնունդ կը ստանային, որ իրենց սովորութիւն կու տար մինչեւ Պոլիս, Հալէպ եւ Շամ քաղաքներ:

**ԳԱՐԱՔԷՕՓՐՈՒ**

Գիւղը շինուած էր Արածանի գետի ափին, զուարճալի տեսարանով տափարակ դաշտադէպի մը վրայ: Ըստ աւանդութեան, գիւղը իր անունը առած է գետին վրայ կառուցուած սեւ քարերով կամուրջէն, եւ կամուրջն ալ կառուցուած է Գարա-Գոյունլուներու տիրապետութեան շրջանին: Էրզրումէն դէպի Բաղէշ, ապա Պարսկաստան տանող կարաւանի ճամբան կ'անցնէր այս գիւղէն, եւ գիւղին կու տար բացառիկ զիրք մը տնտեսական առաւելութիւններով. որովհետեւ գիւղացիները եկող անցնող կտրուաններուն իրենց ապրանքները ծախելով, եւ անոնցմէ ալ ապրանք գնելով՝ բացառիկ շահ մը կ'ունենային, իրենց սովորական զբաղումներէն դատ: Գարաքէօփուցին ուսման եւ կրթութեան հանդէպ ջերմ սէր ու զուրկուրանք ունէր: 150 տուներէ բաղկացած այս գիւղը ունէր քարաշէն եկեղեցի մը եւ նորակառոյց դպրոց մը՝ Սր. Մեսրոպեան Աղգ. վարժարան, հինգ դասարանէ բաղկացած: Հօրեղբայրս՝ Վահան վարժապետ՝ տարիներով ուսուցիչ եղած էր այս գիւղին, եւ համիտեան դաման օրերուն իբրեւ յեղափոխական ձերբակալուելով կարնոյ Կեղրոնական բանար մնաց մինչեւ Օսմ. Սահմանադրութիւնը: Բանտէն ազատուելէ հոք քահանայ ձեռնադրուեցաւ այս գիւղին համար:

Գիւղացիներու զբաղումն էր երկրագործութիւն եւ անասնապահութիւն: Կային նաեւ մանր առեւտրականներ եւ արհեստաւորներ՝ ջուլհակ եւ գորգագործ: Վերջինները առաւելագէտ կիներ էին: Օսմ. Սահմանադրութեան շրջանին, Դաւիթ Մուրատեան (Խարբերդ-Հիւսէյնիկցի) եւ Ճանճիկեան Կարապետ աղա (կարնեցի) շերամարուծութեան գործ հիմնելու նպատակով գետամերձ բլրակներու վրայ, Մազրա Ձար կոչուած տեղը, շերամարուծութեան յատուկ թթենիներ տնկեցին ընկերովի: Ընտրուած հողին վրայ ահնկալուածէն պէտք արդիւնաւոր կերպով առնկիրը աճեցան: Շերամարուծութեան նախնական աշխատանքները արդէն սկսած էին, երբ 1915-ի մեծ եղեռնը եկաւ ու տարաւ իրեն հետ ամէն ինչ: Դաւիթ Մուրատեանի զաւակներէն ազատուած է Փայլակը եւ կը բնակի Պոլիս:

Գարաքէօփուցիք ջերմեռանդ եկեղեցասէր էին, բայց եւ այնպէս անորակելի հայհոյանքներու պաշար ունէին, այնքան շեշտուած կերպով, որ անունը գուսաներգակը՝ Խնուսի գիւղերու մասին յօրինած դաստաններու մէջ Գարաքէօփուցի մասին ըսած է մեռել ֆֆրոդ գարաֆօփրցիք եւ այդ հայհոյանքը այս բառերը ունէր... մեռելի հոգու, ճրագի, ճամպրուկի, ձէթի, պատրոյգի, պլպլան լոյսի, եւայլն:

Այս գիւղին մէջ նշանաւոր ընտանիքներ էին Հազրօ Մեղքոնի, Հերապի, Պուտաղի, Մեղէի, Ռէս Կախոյի, Սիմօ Գրոյի, խարբերդցի Դաւիթի, Խաթի Մուրատի, Թաշճու, Խապիթմալ Աւաղի տունները: (Աւաղի տղան՝ Բաղրատ, որուն դասընկեր էի Խնուս-բերդի Միացեալ Ընկ. վարժարանի ուսանողութեան շրջանին, կը նկատուէր արտասովոր ձիրքով եւ ուշիմութեամբ օժտուած ուսանող):

Այս գիւղացիները քաջ կռուողներ էին: Յեղափոխութեան շրջանին,



բազմաթիւ երիտասարդներ հայրենասիրական ոգիով մտած են կուսակցութեան շարքերը, մասնակցած են թէ՛ տեղական հայդուկային կուիւնտերուն, եւ թէ՛ 1905-ի Կովկասի Հայ-Թաթարական կուիւնտերուն: Անուանի էին՝ խմբապետ Շապոն, Պուտաղի Տիգրան, Սիմօ Գրոն, որոնք 1915-ի դէպքերուն հերոսարար կուսեցան թշնամիին դէմ: Պուտաղի Տիգրան սպաննուեցաւ կուիւնտ ընթացքին: Շապոն որ պատերազմի ընթացքին զաղտնի եկած էր Կովկասէն Խնուս, կուսելով կրցաւ անցնիլ ուսական սահմանը՝ միանալով Կամաւորական բանակին, իսկ Սիմօ Գրոն կուիւնտըն էաք ծպտուած կը հասնի Խնուս-բերդ, ու անկէ ալ կը տարալրուի Արարական անապատը: Զինազաղարին Հալէպ կը հասնի, ուր իր կրած տառապանքներէն խելազարած, կ'ուզարկուի Պոլիս, Սր. Փրկիչ հիւանդանոցը եւ հոն կը մեռնի: Հաղբօ տունէն պատանի Արամը՝ տեղահանութեան օրերուն կ'աքսորուի մինչեւ Խարբերդ, ուր մերթ իրբեւ չէրքէզ, եւ մերթ ալ հայ զաղթական՝ քանի մը ամիս կ'ապրի: Այս շըրջանին կը պատուհասէ ու կը սպաննէ խորբերդցիներու ծանօթ Ճին-Մամօ անունով ոճրածին թուրքը, անոր պարտէզի բնակարանին մէջ: Այս սպանութեան մասին «Հայրենիք» օրաթերթի 1937 Մարտ 3, թիւ 7547-ի մէջ «Սուրբ Ստեփանոսի հերոս»ը խորհրդով գրած ենք: Արամ, Տէրսիմի վրայով ազատուելէն ետք՝ դարձաւ Խնուս, սակայն 1918-ի մեծ նահանջին՝ կուիւնտ ընթացքին սպաննուեցաւ հերոսի մահով:

Յեղափոխութեան շրջանին հայդուկային խումբերու ճամբան Կովկասէն-Տարօն՝ Խնուսէն կ'անցնէր: Մեր անմահ հայդուկ՝ Անդրանիկ Խնուսէն անցած ատեն Գարաքէօփուի մասին հետեւեալ դէպքը կը պատմէ. «Երեկոյեան դուրս եկանք Գովանդուկէն, կ'երթայինք Խարաքէօփու: Ճանապարհին մեզ հանդիպեց 300 ձիաւոր, հէնց տեսնելուց փախանք թագնուեցանք խտերու մէջ: Մեր վայտը մեզմէ 20 քայլ առաջ կ'երթար. յանկարծակի գալերնուս պատճառաւ՝ նա կանգնեց հրամանատարի առաջ: Զօրապետը պռաց: «Գու՛մ ո՞վ էք»: Վալատ Խուրշուտին (խնուսցի) բռնեցին: Ըսին «Ինչո՞ւ քու ընկերները փախան. ո՞ր կ'երթայիք»: «Կ'երթայինք Բերդ, մանգաղ առնելու»: «Տերեկով ինչո՞ւ չէիք երթար, գիշերով կ'երթայիք»: «Ճանապարհին՝ քրդերից վախնալուս համար գիշերով կ'երթայինք»: «Դէ՛հ, լա՛ւ, գաւակնե՛րըս, ոչինչ չկայ, գնացէ՛ք» — կ'ըսէ գորփի հրամանատարը, եւ ձիաւորները կը հեռանան: Երբ անոնք հեռացան, վայտնալու սուլելով մեզ հաւաքեց, (մեմ ալ կը լսէինք անոնց խօսակցութիւնը), ու գնացինք Գարաքէօփու: Վալատը զրկեցինք գիւղը որպէսզի մեզի տեղ պատրաստէ եւ իմանայ գիւղի դուրսը՝ թէ գորփ, քիւրտ կա՞յ: Վալատը գնաց գիւղ, բայց ճանապարհին իրեն ծանօթ քիւրտերը բռնեցին եւ զինք, որ իրենց քիւրտերէն խաղ (երգ) կանչէ, որովհետեւ ինք յայտնի էր որպէս քիւրտերէն լաւ խաղ կանչող: Մեմ գիւղէն դուրս մարագներու մէջ կը սպասէինք: Սպասեցինք երկուր ու կէս ժամ, ոչ ոք եկաւ: Լուսարացին մօտ՝ աշխատելով մարագի դուռը տեղէն հանեցինք և ներս լեցուեցանք: Բոլորս սաստիկ յոգնած էինք, տղերքը պառկեցան, իսկ ես արթուն մնացի, պահապան եղայ: Արեւը բաւականին բարձրացած էր, նկատեցի որ մի կին-եկաւ դրան առաջ, կողով մը շալկած, բանալի մտցրուց

ներս. դուռը բացաւ: Ես դրան ետեւ թագնուեր էի, իսկ տղերքը պառկած էին դրան նիշդ դիմացը: Երբ կինը ներս մտաւ տղայոցը տեսաւ, վախցաւ, ուզեց փախչիլ, թագնուած տեղիցս բռնեցի նրան, ու ըսի. «Մայրի՛կ, չվախնաս, մեմ հայ եմք. եկանք, յոյսը բացուաւ, մտանք մեր մարագը: Յոգնած ներսը մամբորդ եմք: Կարելի՞ է, երթաւ հաց բերես մեզի, եւ ըսես այսինչ-այսինչ մարդերուն, որ գան մեր բով: Հարցուցի՝ «Գիւղը գօ՞րփ կամ քիւրտ կա՞յ»: «Ձաւակներս, 25 քիւրտ կայ»:

Տղերքը արթնցան, մտիկ կ'ընէին մեր խօսակցութեան, աչքերնին նրմուելով: «Բացի էս երկու մարդուց, ուրիշ ոչ ոքի չպիտի ըսես, մեր տնեցոցն ալ չպիտի ըսես»: Եւ կողովը յերգ լեցուց ու գնաց: Մի ժամ չտեսած, պառաւր կրկին եկաւ, կողովը կոնակը դրած: «Ձեր ըսած երկու մարդուն ըսի, քրդերու պատճառաւ չկրցին գալ» ըսաւ: Բայց կողովը լիքն էր: Կողովի չորս բոլորտիքը դրած էր քալամի (կաղամբ) թուփ, մէջտեղը դրած էր պտուկ մը մածուն, եւ 20 հաց, ծածկած կրկին կաղամբի թուփերով: Յանգնեց մեզի, կերակրեց, կշտացանք: «Մեզի կրնա՞ս կուժ մ'ալ ջուր բերել» — ըսինք: «Համբերեցէ՛ք, գաւակներս, կը բերեմ»: Գնաց եւ կէս ժամ ետք ջուրն ալ բերեց: Ապա յերգը լեցուց կողովին մէջ եւ գնաց: Գնալէն առաջ, ըսաւ. «Տղերք, էնպէս բերեք եմ էս մածունն ու հացը, որ մեր տնեցիքն ալ չեն իմացեր»:

Անմահ Անդրանիկի այս դրուագը Գարաքէօփուցի հայ մայրիկի հայրենասիրութեան եւ զոհարարութեան, ինչպէս նաեւ զաղտնապահութեան մէկ փառաւոր էջը կը կազմէ, եւ այսպիսի անձնագործ մայրիկներու թիւը շատ էր, եւ ամէն հայ գիւղի մէջ անպակաս էր:

**ԳՈՒԶԻՍԱՐ**  
 ԿԱՄ  
**ԽՈՒՀԱՍԱՐ**

Գիւղը շինուած էր Բիւրակնեան լեռան լանջերուն, զեղատեսիլ բլուրի մը վրայ, Խնուս-բերդէն ժամ մը հեռու, հարաւ-արեւելեան կողմը: Այս գիւղին տէրն էր՝ ակնյայտնի քիւրտ Շէխ-Սայխը: Իր հովանիին տակ կ'ապրէին քանի մը տուն հայեր:

Շէխ-Սայխ հոս հիմնած էր քարաշէն մզկիթ մը եւ կրօնական դպրոց մը մէտրէսէ, ուր իր շուշին տակ կը դաստիարակուէին եւ կը մեծնային մուսուլման մասճետական մուրուսներ եւ մուլլաներ: Շէխ-Սայխ մուսուլման մասճետական եւ աւելի մուսուլման քիւրտ էր: Աշակերտն ու հետեւորդն է եղած համբաւաւոր Հաճի Հայտար կամ Կեալօ ըսուած կրօնապետին, որ սպաննուած էր հայոց կողմէ 1895-ի հայկական կոտորածներու նախօրեակին: Անոր սպանութիւնը սարսեցուցած էր ու թունդ հանած Խնուսի, ինչպէս նաեւ շրջանի գաւառներու քիւրտերը: Շէխ-Սայխ 1915-ի եղեռնի օրերուն Պիղատոսի գիւղը բռնեց հայոց հանգէպ. իր հետեւորդներուն հրահանգեց. — Հայոց ջարդին չմասնակցիլ, այլ ջանալ քրիստոնեայ հայերը հաւատարմութեամբ մասճետական քիւրտին կապել: Շէխ-Սայխ ինքզինք

ՄԲ

Կանուանէր՝ Շէխ-Սայիտէ Փիրանի, եւ Փիրէ Փիրան: 1925-ի քրտական ապրտամբուեան ատեն Մուսթաֆա-Քէմալի յաղթական բանակը զինք կը ձերբակալէ եւ նոյն տարուան Ապրիլ ամսուն Տիպրանակերտի մէջ կախաղան կը բարձրացուի:

Այս զիւղը նշանաւոր էր ծխախոտի մաքսանենդներու թաղստոց ըլլալուն համար:

**ԳՈՊԱԼ**  
ԿԱՄ  
**ԿՈՊԱԼ**

Շինուած էր Խնուսի ծայրագաւառին. Խնուս-բերդէն զէն զէպի հիւսիս-արեւելք գրեթէ 10 ժամուան հեռաւորութեամբ, սիկային հողի ընտիր խաւերով ծածկուած ընդարձակ արտերու եւ արօտավայրերու շրջապատով: Սպիտակ սարի եւ Գաղպէլ լեռան արեւելեան զառիթափերէն զոյսացող երկու զետակներ, մէկը Գէօք-սոււի վրայով, միւսը Գարաեայիէն հոսելով՝ կու գան եւ երեք բլուրներու ծոցը ծրարուած զիւղին սկզբնաւորութեան տափարակ հարթութեան մը վրայ կը միանան:

Գոպալի հողային տարածութեան սահմանը կը զծուի Ալաշկերտի սահմանը հասնող հողամասով, որուն միացման կէտը կը նկատուէր Գուրախան եւ Մուրիան քրտական զիւղերը, որոնք մաս կը կազմեն Անթափի շրջանին, որ կը մտնէ Խնուսի գաւառին մէջ, եւ կ'օղակէ Խնուսի, Ալաշկերտի եւ Մալազկերտի գաւառները: Յիշենք այստեղ, որ Անթափ նշանաւոր դարձաւ յեղափոխութեան շրջանին, երբ հոս զտնուող պետական զինապահեստին վրայ կը յարձակին հայերը, եւ մեծ թիւով զէնքեր կը տանին:

Գոպալ կը բաղկանար 65 տուն հայերէ եւ 20 տուն քիւրտերէ: Այս զիւղը հաստատուած է զիւղին տէր դարձած էր հասանանցի աշիրաթէն Աճամ-օղլի Իւսուֆ աղան: Սուլթան Համիտի բռնակալ իշխանութեան շրջանին, զիւղին հայերը կը վայելէին Իւսուֆ աղայի բարեկամութիւնը եւ հովանաւորութիւնը: Իւսուֆ աղան զիւղի հայերէն բաւական թիւով հայ երիտասարդներ իրեն զուլամ — զինեալ ծառայ — առած էր, զինելով զանոնք կամ իր զէնքերով, եւ կամ ունեւորներուն պարտադրելով զինուել իրենց սեփական զէնքերով եւ կուուիլ իր հրամանատարութեան տակ աշիրաթական կոիւններուն: 1904-ին՝ աշիրաթական մեծ կռիւ տեղի կ'ունենայ հասանանցի Իւսուֆ աղայի, եւ ջիրրանցի Թաթաին բէկը կը պարտուի՝ բազմաթիւ սպաննուածներ եւ վիրաւորուածներ ձգելով կոիւի դաշտը: Կըսէին որ այս կռիւի յաղթանակը Իւսուֆ աղան կը պարտի Գոպալայ տէրտորջ՝ Տէր Աւետիս Քհնյ-ի երկու տղոց՝ Յակոյի եւ Գեւոյի քաջագործութեանց: Թաթաին բէկը վրէժխնդրութեամբ, այս կռիւէն երկու տարի ետք դաւադրութեամբ սպաննել կու տայ Յակոն եւ Գեւոն՝ Գոպալայ Գետուկ ըսուած կիրճին մէջ:

Աճմու տունը աւանդական բարեկամութիւն ունէր հայոց հանդէպ: Գոպալի քահանան, Տէր Աւետիսը կը պատմէր որ Աճմու տան քոռուկները իր քահանայութեան շրջանին — ինք 110 տարեկան էր եւ 80 տարի քահանայ

— իրենց մեռելները մահմետական ծիսակատարութեամբ թաղելէն ետք, զինք պիտի կանչէին որ երթար եւ քրիստոնէական ծէսով գերեզմանը օրհնէր, եւ խաչով խաչակնքէր, որ գոռնափշտիկ չըլլային, ու այս աւանդական սովորութիւնը իրմով չէր սկսած, այլ իր նախորդներէն իրեն փոխանցուած էր:

Հայասէր Իւսուֆ աղայի տղան՝ չար ծնունդ Ֆէյզուլլան, որ ամուսնացած էր Խըրթ հայկական զիւղը բնակող Շէխ-Մուրատի աղջկան հետ եւ հօրմէն զատուելով տեղափոխուած էր հոն, 1915-ի ջարդերուն՝ զազանային արարքներով մասնակցեցաւ, նեւ արատ մը բերելով իր ազնիւ գերզաստանին եւ բարի, ազնիւ ու հայասէր հօր անունին:

Գոպալի եւ Գարաչոպանի սահմաններուն մէջ, Սպիտակ սարի եւ Գոպալ-Պապա լեռան միացման կէտին սարսափազդեցիկ կիրճ մը կայ. ասոր Գոպալայ Գետուկ անունը կը տրուէր: Քիւրտ աւազակներ բազմաթիւ ոճիրներ գործած են այս կիրճէն անցնող ճամբորդներու վրայ: Այս կիրճին մէջ կատարուած ամենաքստմնելի ոճիրը եղած է, Տէր Աւետիսի զաւակներէն Յակոյի եւ Գեւոյի սպանութիւնը: Օսմ. Սահմանադրութեան շրջանին սակայն՝ սպաննուողներու եղբայրներէն Սեդրակ եւ Միսակ՝ երկուորեակ եղբայրները՝ ոճրագործ քիւրտերէն մէկը սատկեցուցին, սրպէս արդար վրէժխնդրութիւն:

1915-ի ձմեռը, պատերազմի օրերուն, երբ հայոց հանդէպ հայածանքը անհանդուրժելի դարձած էր, գոպալցիները փոխվրէժի պատրաստութեամբ, շարժումը սկսելէ առաջ, կը դիմեն առաջնորդ Արգար Վրդ-Եօթնեղբայրեանի խորհուրդին եւ թելադրութեան, ափսոս սակայն որ վրդ-ի խոհեմութեան յորդորները արգելք դարձան շատ լուրջ կերպով կազմակերպուած շարժումին: Գոպալցիները կը մտածեն եւ կը կազմակերպեն զինեալ յարձակում Տութաղ-Սըլըճեղուկէն նահանջող թրքական՝ Պաղտատէն եկած արար գորարանակին վրայ, որ անկազմակերպ խուժանի նման կը նահանջէր պարտուած ու հալածուած՝ ռուսական բանակէն, եւ ձմեռուան ձիւնէն ու ցուրտէն: Այս շարժումը յաջողութեամբ կրնար պսակուիլ: Գոպալցիները մէկ, կամ առ առաւելն երկու ժամէն կրնային անցնիլ ռուսական սահմանը եւ ազատուիլ զալիք արհաւիրքներէն: Այս շարժման մասին եւ տեղեկացայ, երբ 1915-ի Յունուար ամսուն փորձեցի Գոպալ երթալ, ինձի համագիւղացի թուրք ժանտարմայի մը ընկերակցութեամբ: Ես կ'երթայի Տութաղ որպէս քէլիքաֆ մամուրի, եւ ունէի կեղծ վասիքա մը, այն մտադրութեամբ որ Տութաղէն փախէի ռուսական սահմանը. սակայն չար բախտէս զիւղին մէջ զտնուող ժանտարմաներու կասկածանքին վրայ բռնուեցայ եւ հազիւ կրցայ ազատուիլ, ինձի ընկերացող ժանտարմայի խրոխտ կեցուածքին եւ մօրեղբայրներուս ու քեռայրիս միջամտութեամբ եւ կաշառքով:

Կատապարութիւնը հոտն առնելով գոպալցիներու շարժումին, հարիւրեակ մը հեծելազօրք փութացուց զիւղը պատժողական գործողութեան համար. բարեբախտարար նահանջող թրքական բանակի հազարապետի մը պատահական ներկայութիւնը արգելք կը հանդիսանայ որեւէ գործողու-

թեան. միայն քանի մը անձեր կը տարուին Գարաչոպան՝ միւտիւրին հարցաքննութեան համար եւ անոնք ալ ազատ կ'արձակուին:

Ջարդի ընթացքին զիւղացիներէն խումբ մը զինուած երիտասարդներ՝ կռուելով զօրս կու գան զիւղէն եւ թրքական նահանջող բանակը ճեղքելով՝ կ'անցնին ուսական սահմանը ու կը միանան Հայկական Կամաւորական բանակին: Այս կռուողներուն մէջն են եղած Տէր Աւետիսի երկու տղաքը Սեղրակն ու Միսակը, ինչպէս նաեւ Տէր Աւետիսի թոռը Մովսէսը՝ Սոփիա քրոջս ամուսինը: Մովսէս իր փախուստէն քանի մը շարաթ անցնելէն ետք, նոր փախստականներէն կը լսէ որ կինը եւ երեք տղայ զաւակները՝ Հայկ, Հրաչ, Հերակլէս՝ ջարդէն ազատուելով զիւղն են մնացեր: Ճիշդ այդ օրերուն ուսական բանակն ալ կը սկսի յառաջխաղացքի: Մովսէս ուս կողակներու յառաջապահ ջոկատին հետ կը մտնէ զիւղը եւ կը գտնէ կինը եւ զաւակները հիւանդ վիճակի մէջ: Կողակները խուզարկութիւն կատարելէ ետք, կը յայտնեն թէ զիւղէն պիտի հեռանան: Այս կացութեան մէջ, քոյրս քալելու անկարող ըլլալուն, կողակները պատգարակի վրայ դնելով զայն՝ իրենց հետ կը փոխադրեն մինչեւ Ալաշկերտի Գարաքիլիսէ, ուր քոյրս կը մահանայ. իսկ զաւակները որոնք 5-8 տարիքի մէջ էին, զեռայրս զանոնք Ղարսի որբանոցը կը դնէ, հոս սակայն երեքն ալ կը մեռնին տարափոխիկ հիւանդութենէ: Մովսէս կը մնայ կամաւորական բանակի մէջ մինչեւ անոր կազմալուծումը:

Գոպալ ունէր եկեղեցի եւ դպրոց (ազգային նախակրթարան): Քահանան էր 110 տարեկան, քաջառողջ եւ իմաստուն՝ Տէր Աւետիսը: Նահապետական ընտանիքի մը բոլոր աւանդութիւններով կ'ապրէին իր եօթը զաւակները, բազմաթիւ թոռները եւ թոռներուն զաւակները: Նախապէս արդէն յիշած ենք որ Տէր Աւետիսի զաւակներէն Յակոն եւ Գեւոն եղբրական մահով մեռած էին, մէկն ալ բնական մահով. միւս զաւակները կ'ապրէին տակաւին 1915-ի կոտորածին. քանի մը ազատուողներէն զատ՝ միւսները բոլորը զոհ դացին տարազրուութեան եւ կոտորածին:

Գոպալցիներու համար Տէր Աւետիսի տունը ծանօթ էր — իրիցու տուն — անունով, եւ կ'երգուէին. — իրիցու սան Մեռել-Յարոյց աւետարանին վրայ:

Տէր Աւետիսի ձեռագիրով համայնի մը այժմ կը գտնուի Պէյրութ (Լիբանան) ընկող Սարհատեան եղբայրներուն քով. այս համայնիլ՝ Տէր Աւետիս նուիրած է Սարհատեաններուն, Մելիք Սարհատեանի մկրտութեան առթիւ: Մելիքի մայրը Տիկ. Լուսիա Սարհատեան տարազրուութեան շրջանին պահած է իր քով եւ ազատած է կորուստէ:

Գոպալցիներու զլխաւոր զբաղումն էր երկրագործութիւն եւ խաշնարածութիւն. ձիարուծութիւնն ալ ոմանց արհեստն էր: Կային քանի մը նշանաւոր ձիարոյժներ: Կային նաեւ ջուլհակներ, ասոնք տնային դէզկախով բուրդէ թելերով — մեզար — գոգնոց, — բէրու մեզար — դաշտէն ոչխարներու կաթը հողէ կ'թոցներու մէջ լեցուցած բէրու մէզարի մէջ դնելով կըռնակին առած տուն կը բերեն, — ջանիմ — մանր տեսակի բուրդէ հիւսուած ծածկոց. այր մարդոց շալվար, եւ տնային գործածութեան յատուկ ուրիշ իրեղէններ կը պատրաստէին:



Տիգրան Գորգմագեան (ձախ կողմը)

Կային քանի մը առեւտրականներ, 4-5 խանութներ: Ասոնք Կարինէն ապրանք կը ստանային եւ յաջող գործ ունէին, իրենց առևտուրը զիւղացիներուն, ինչպէս նաև շրջանի քիւրտերուն հետն էր: Այդ առևտրականներն էին՝ Տէր Աւետիսի տղաք — Կարապետ, Սեղրակ եւ Միսակ: Գորգմագեան Նազար աղան եւ իր տղաք — Տիգրան եւ Արամ: Խնուս-բերդէն Գոպալ տեղափոխուած իմ մօրեղբայրները — Պաշատուր եւ Արամ Սարգիսեան: Օսմանեան Սահմանադրութեան, Կարնոյ բանտէն ազատ արձակուելով, այս զիւղացի ծանօթ յեղափոխական Յեկօ Մկրտն ալ մանր առևտուրով կը զբաղէր: Հանրածանօթ էին նաև ուն Յակոյի եւ Աբրոյի տուները:

Գոպալցի հողագործ մը, արտը հերկած ժամանակ, հողի մէջէն կը գտնէ հողաչէն թրծուած բղեկ մը, որուն մէջ կ'ըլլան հին ոսկեղբամ, եւ երկու հատ զոհար աղերով ոսկի մատանիներ: Աղերու քարը սեւ էր, մէկուն վրայ այր մարդու դիմանկար իսկ միւսին կանաչի դիմանկար փորագրուած: Այս մատանիները գտնուեցան Սահմանադրութեան շրջանին: Մօրեղբայրս Պաշատուրը գնեց հողագործէն եւ էրգրում տանելով՝ հոն անթիկամներուն ծախեց լաւ գնով:

**ԳՈՎԱՆԴՈՒԿ  
ԿԱՍ  
ՎՈՎԱՆԴՈՒԿ**

Գիւղը կը բաղկանար 120 տուն հայ բնակիչներէ : Շինուած էր գետէն (Արածանի) հազիւ երկու քարանկէց հեռու, գեղատեսիլ դիրքի մը վրայ : Իր եւ Պուռնայ կամ Բուռնայ գիւղի սահմաններու հարթավայրին ստորտէն կ'անցնէր ստորերկրեայ գետ մը . այս գետին ջուրը տեղ-տեղ կը յայտնուէր, ստեղծելով յորդեղու եւ հունէն դատուելու, կ'երթար եւ կը թափէր Արածանի գետը՝ Գովանդուկի մերձակայքը :

Գովանդուկի հարաւային կողմը, կէս ժամ հեռաւորութեամբ ձորակի մը մէջ, կար շատ ընտիր քարահանք մը : Այս քարահանքին մերձակայքը կար բրդազայի, ձիթահանքի եւ աղօրիքի քարեր : Այս քարահանքին մերձակայքը կար բրդազայի մը կարմիր Գաթայ անունով : Բլրակին աջ կողմը կար ուրիշ ձոր մը, որ կ'անուանուէր Խամշով ձոր, այսինքն եղեկնուտ ձոր : Այս Խամշով ձորի մերձակայ արդասարեւ արտերն ու արօտատեղիները բռնազբաւուած էին Լաքալուտայի շէրքէզներէն . հողատէրերէն ոմանք ալ վաղթած էին կովկաս, սակայն 1908-ի Սահմանադրութեան վերադարձան անոնք, եւ սահմանադրութեան պարզեւած մասնակի ազատութենէն քաջալերուած՝ կրցան տիրանալ իրենց պապենական հողերուն, դատ ու դատաստանէն աւելի՛ իրենց ղէնքին ուժով :

Խամշով ձորի արեւմտեան կողմը Գիւղարա կոչուած լեռան ստորոտը՝ կը գտնուի լիճ մը՝ Ազր Կէօլ անունով : Այս լիճին ջուրը այնքան զուլայ է եւ յատակի աւաղը ճերմակ, որ լճակի ափին նստող դիտող մը, պատրանքը կ'ուշադրէր, թէ ասոր ջուրը այնքան ծանծաղ է, որ ձեռքը ջուրը խոթելով կրնայ յատակի աւաղէն ափ մը դուրս հանել, բայց լիճը 200 խուլան՝ այսինքն մարդահասակ (կամ մարդուն թեւերուն բաց տարածութեան չափանիշը, որ հաւասար է եարտայի մը) խորութիւն ունի : Տեղական աւանդութեամբ մը, այս լիճին մէջ հրեղէն ձիեր կ'ապրին եղբւր, եւ սակայն ամէն մարդ տեսնելու բախտը չ'ունենար, եւ թէ՛ Խնուսի ազնուացեղ Քէիլան ձիերը սերած են այս լիճին հրեղէն ձիերէն : Իսկապէս որ Խնուսի ձին համբաւուող էր : Ազնուացեղ ձիերը կ'անուանուէին Նագէ կամ Քէիլան : Այս մասին բաւական վկայութիւններ կան մեր մատենագիրներէն, ինչպէս նաեւ օտար ուղեգիրներէ :

Այս լճակէն քիչ հեռու կը գտնուէր աղի հանք մը, որ ժամանակին կը պատկանէր գովանդուկցի հայերուն . հանքին շահագործումը դադարեցուած էր Սուլթան Համիտի դաժան իշխանութեան շրջանին՝ թուրք կառավարութեան կողմէ :

Գիւղին մերձակայքը կային աւերակներու դերուկներ, քանի մը հնամենի ծառերու բունարմամբերով, ուրկէ կը բխէր հանքային ջուր մը, եւ այս վայրը կը կոչուէր Թալալոց : Մանուկներու ջրային հիւանդութիւն Թալկցնել կոչուած հիւանդութիւն ունեցող մանուկները կը տարուէին հոս՝ բուժուելու համար : Հիւանդ մանուկները կը լողացնէին այս հանքային ջուրով, եւ նոյն տեղը հանքային ջուրին ստրիկեր հալուափիլ անունով ծանօթ՝ աղբերակին ջուրէն հիւանդին խմցնելով, հիւանդը կը բուժուէր : Այս միեւնոյն աւերակներու մերձակայքը գտնուած են անյիշատակ ժամանակներէ մնացած հայկա-

կան գերեզմաններ, խոշոր տապանաքարերով : Գտնուած են նաեւ յախճապահիներ : Գովանդուկի մերձակայքը կը գտնուէին աւերակները Գարա-Մահմէտ եւ Բոկ-Մահմէտ անունով երկու փոքր գիւղերու :

Գովանդուկ ունէր քարաշէն շատ հին եկեղեցի մը, Սբ. Գէորգ անունով : Եկեղեցիի կողքին կար նաեւ դպրոց Սբ. Լուսաւորիչ անունով : Այս գիւղացիները ուսումնաստենչ էին : Խրիմեան Հայրիկի Մշոյ Սբ. Կարապետի վանքի վանահայրութեան օրերուն, այս գիւղէն երկու ուսումնաստենչ երիտասարդներ՝ Պորէն Մկրտիչեան եւ Մկրտիչ Մուրատեան կը տարուին Սբ. Կարապետի վանքը ուսանելու : Հոն իրենց ուսումը ստանալով կը վերադառնան իրենց գիւղը, եւ անձնուիրարար կը սկսին ուսուցչական պաշտօնի, սակայն կարճ կը տեւէ անոնց պաշտօնավարութիւնը : Բախտի անողոք մէկ հարուածով, այս երկու սրտակիր ու եղբայրացած երիտասարդ վարժապետները, մէկ շարթուան մէջ նոյն առէն կը հիւանդանան, եւ նոյն պահուն կը մեռնին, խորունկ սուգի մատնելով իրենց սիրելիներն ու ամբողջ գիւղը : Այս վարժապետները դասընկերն են եղած Զաւուրմեցի հանրաժանօթ Գրիգոր վարժապետ Տօնաւետեանի :

Գովանդուկ գիւղի նշանաւոր ընտանիքներն էին՝ Ռէս Մհերի տունը, Ստեփէ տներ, Ճութէ տներ, Սրբէ տներ, Պաղէ Մխոյի տուն, որ ծանօթ է եղած նաեւ Մշո-Ընծօ տուն անունով : Մխոն կամ Մխիթարը՝ հերոսական դրուագ մը ունեցած է չէրքէզներու հետ ունեցած իր կռիւի ընթացքին : Դէպքը՝ որ տեղի կ'ունենայ 1892 թուականին Յուլիս ամսուն, հետեւեալ ամփոփ տեղեկութիւնը կը գտնուի Հիւսիսային Ամերիկայի Միացեալ Նահանգներու Նիւ Եորք քաղաքին մէջ հրատարակուած Հայք թերթին մէջ (Հրատարակութիւն Հայոց Հայրենասիրական Դաշնակցութիւնի կազմակերպութեան, խմբագիր՝ Տօթթ. Մ. Ս. Գարրիէլեան) : «1892 Յուլիսին, Ահմէտ օղլու Պաթալ անուն ֆիւրտ մի (մինչ պէտք է ըլլայ չէրքէզ Պաթալ բէկ) ձին ֆշեց եկաւ ի Գովանդուկ (հնուսի գաւառում) եւ Մուլիս անուն հայու մը չորս եղբերն յափըռտակեց : Այդ ատեն դեռ ֆրիստոնէից գէնֆ կրելու արգելքն վերջին յստութեան հասած չէր, եւ Մուլիս ռիվալպէր մ'ունեցալով եւ տեսնելով որ ֆուրգն գիւրն գործածելու վրայ էր, կրակեց : Երկուքին հրագէններն ալ միահաղոյն պարպուեցան, եւ երկուքն ալ անդէն ինկան մեռած» :

Մխոյի կռիւի պատմութիւնը լսած մեր մեծերէն, հետեւեալն է.— 1892-ի ամառը, հունձքի ժամանակ, երեք չէրքէզներ կը յարձակին Մխոյի անասուններուն վրայ՝ կողոպտելու համար : Լուր կը հասնի Մխոյին որ չէրքէզները՝ իր եղներէն չորս հատ տարեր են : Մխոն դիմուած կը հետապնդէ չէրքէզները, հասնելով անոնց կը սկսի կռուիլ, կը սպաննէ չէրքէզ Պաթալը եւ անոր ընկերներէն երկրորդը, ու կը վերաւորէ չէրքէզ Իսմայիլը : Մխոն կարծելով որ Իսմայիլն ալ սպաննուած է, երբ կը մօտենայ անոր, վերջինը կը կրակէ Մխոյին վրայ, եւ Մխոն կը վերաւորուի : Մխոն իր ստացած վէրքէն կը մահանայ, իսկ Իսմայիլի վերքը թեթեւ ըլլալով կ'առողջանայ : Մխոյի մահէն ետք, իր քաջադործութիւնը փառաբանելով ժողովրդային երգ կը յորինեն իր վրայ «Խուլկիօ, խուլկիօ» անունով դժբախտարար երգին բառերը

ինծի անձանօթ կը մնան: Դէպքէն եւ Մխոյի մահէն առեն մը անցնելէ ետք, Մխոյի տղան եւ ոչս Մհերի տղան՝ Դաւիթ, կը սկսին հետապնդել չէրքէզ Իսմայիլը, եւ օր մը, երբ Պուլանուի Եօնջալու գիւղը՝ հանրածանօթ մեծահարուստ Խչէի տունը հիւր կ'ըլլան, լուր կը տրուի իրենց որ չէրքէզ Իսմայիլը գիւղէն կ'անցնի: Իսմայիլ լսելով որ Մխոյի տղան եւ Մհերի Դաւիթ գիւղն են իջևանած ինք այլևս չ'ուզեր գիւղը մնալ, սակայն գիւղին մէջէն անցած ատեն կը նկատուի Մխոյի տղայէն: Մխոյի տղան եւ Դաւիթ կը հետեւին Իսմայիլի, եւ գիւղէն դուրս բռնելով զայն, կը սպաննեն ու կ'անհետանան: Ատեն մալիլի, եւ գիւղէն դուրս բռնելով զայն, կը սպաննեն ու կ'անհետանան: Ատեն մը ետք սակայն՝ երկուքն ալ կը ձերբակալուին եւ կը բանտարկուին, բայց ի վերջոյ կ'ազատուին բանտէն: Տարիներ ետք Հայկական Ազատագրութեան վիճակագրութեան Երևանի Երկրաչափական օրերուն, իրրեւ յեղափոխական (Դաշնակցական) Դաւիթ ձերբակալուելով՝ Խնուսէն տարուեցաւ Կարնոյ Տաշխանը, կեդրոնական բանտը եւ 101 տարուան բանտարկութեան վճիռով (իդուամ) մնաց բանտարկուած, մինչեւ 1908-ի Սահմանադրութիւնը, երբ քաղաքական բանտարկեալներու ներման հրամանով ազատուեցաւ եւ վերադարձաւ Խնուս: 1915-ի դէպքերուն երբ զինուած խումբով մը կուուելով կը փորձէ ուսական սահմանը անցնիլ, կուրի ընթացքին կը սպաննուի:

Գովանդուկի ուրիշ դէպքի մը մասին, Ռուբէն իր յուշերուն մէջ այսպէս կը գրէ. — «Ղարաչապանի օրինակը բնականաբար պիտի վարակէր նաեւ միւս գիւղերը»: 1893-ի դէպքերուն ակնարկելով, կ'ըսէ. «Նոյն քիւիւն, Գովանդուկ հայ գիւղին մէջ (Խնուս), քիւրտները ըստ սովորութեան կ'ուզեն առեւանգել հայ կիւն մը, բայց գիւղացիք կը դիմադրեն, կը սպաննեն քանի մը քիւրտներ, եւ կ'ազատեն հայ կիւնը»:

Մխոն մեծ հայրն է՝ այժմ Տիւրատեղիի Սր. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ հոգեւոր հովիւ Տէր Եղիշէ քհնյ. Մխիթարեանի, իսկ Դաւիթ՝ մօրեղբայրն է Տէր Եղիշէի:

Այս գիւղէն էին նաեւ Մալխասեան Յարթէնի տղաք՝ Համազասպն ու Դաւիթը, ինչպէս նաեւ Գէորգեան ձեմարանէն շրջանաւարտ Աղեքսանդրը:

Գովանդուկցիներու գլխաւոր զբաղումն էր հողագործութիւն եւ անասնապահութիւն. կը զբաղէին նաեւ արհեստներով եւ մանր առեւտուրով:

**ԵԱՀԻԱ**  
**ԿԱՄ**  
**ԵԱՀԻԷ**

Խնուս բերդէն դէպի հիւսիս արեւելք ծայրագաւառի հայաբնակ գիւղն էր, Թարգմանի եւ Կէօկսուի հողամասերուն սահմանակից. իրմով կը վերջանար հայաբնակ գիւղերու սահմանը, ուրկէ անդին կը սկսէին քրտական գիւղերը եւ կը հասնէին մինչեւ Բասէն: Գիւղի հարաւէն եւ հիւսիս-արեւմուտքէն կը բխէին հինգ ջրառատ աղբիւրներ, որոնք գիւղին մերձակայքը իրարու կը խառնուին եւ կը կազմեն գետակ մը. այս ջուրերով թէ՛ արտերը

կ'ոռոպուէին եւ թէ՛ ջրաղացը կը դառնար: Եահիայի սահմանակից Թարգմանի մեծագոյն հողամասը հայերով բնակուած է եղեր ժամանակին, բայց 1829-ի ուսական զբաղման շրջանին, ուս զօրավար Պասկեպիչի բանակին հետ, Կարնոյ առաջնորդ հնուացի Կարապետ եպիսկոպոսի թելադրութեամբ կը գաղթեն Կովկասեան Հայաստան, եւ այդ շրջանը կ'ամայանայ հայերէ, որոնց տեղ կը բնակուին զընդհանր աշխրաթին պատկանող քիւրտներ, որոնք Հայրոյն Սէյֆէտին բէկի տունէն զալով հոս կը հաստատուին. իրենց գրութաւորն էր վայրազ Խուլի-Խան բէկը:

Գիւղը Եահիա անուանակոչուած ատառ է՝ իր հարաւակողմը գտնուող հին, աւերակ վանքին անունէն, որ Ս. Յովհաննէս եղած է: Քիւրտերէնով Յովհաննէսը կը կոչուի կամ կը հնչուի Եահիա: Գիւղին եկեղեցւոյ անունն ալ Ս. Յովհաննէս էր:

Եահիա ունէր 40 տուն հայ բնակիչ, եւ 30 տուն քիւրտ: Հայերը թէ՛ հայախօս էին եւ թէ՛ քրտախօս:

Եահիա գիւղի պատուհանն էր տիրահոջակ քիւրտ աւաղակապետ Ալին, Խնուս-բերդի թուրք երեւելիներէն եւ պետական պաշտօնեայ Իսախէֆի փեսան: 1909 Հոկտեմբեր ամսուն Ալի աղայի շուրջը կ'առեւանդէ Մելքոնի աղջիկ Եղնարը, որ աղբիւր գացեր էր ջուր բերելու. զայն կը տանի Ալի աղային տունը. զայրացած գիւղացիք կը յարձակին Ալի աղայի տան վրայ՝ աղջիկը աղատելու. սակայն կատարած քիւրտը Եղնարը կը սպաննէ եւ կը փախի: Եղնարի արեւնաթաթախ գիւղը դուրս կը հանուի:

1911-ին, Սահմանադրութեան շրջանին իսկ, Ալի աղան կը գրաւէ Եահիա գիւղի Տէր Սարգիսեան Խաչոյի եւ Ասոյեան Արոյի արտերն ու չայիլները, նաեւ կը բռնադրաւ հողերը Ստեփանեան Խաչոյի, Կարոյեան Մելքիքի, Ջրոյեան Կարոյի, Բղդոյեան Մխոյի, Ասմարի տղոց Գասպարի եւ Ջաբարի, եւ զանոնք ալ գիւղէն կը վտարէ:

1913 թուականի Յուլիս ամսուն խումբ մը հայեր, Կովկասէն հայրենիք վերադարձին՝ Եահիայի վրայոյ կ'անցնին եւ կ'իջևանին գիւղը: Ալի աղան զանոնք կը կանչէ իր խոնախը. հարցաքննելով կը հասկնայ թէ խումբը կը բաղկանայ խնուցիներէ եւ մշեցիներէ: Մշեցիները կ'ըլլան Վարդենիս գիւղէն՝ Աւետիսեան Մելքոն, Յարթերը գիւղէն՝ Մարտիրոսեան Մխիթար, Իրիզակ գիւղէն՝ Կարապետեան Տիգրան. իսկ խնուցիները հինգ երիտասարդներ՝ Գարաչոպան գիւղէն: Ասոնց քով գտնուած 50 ոսկի դրամը եւ զոյքերը կողոպտելով գիւղէն կը վտարէ. եղած բողոքները «ձայն բարբառոյ յանապատի» կը մնան:

Եահիա ունէր եկեղեցի եւ քահանայ. դպրոց չկար: Գիւղացիներու զբաղումն էր երկրագործութիւն եւ խաշնարածութիւն: Զիարուծութեան, ձիափարձութեան եւ որսորդութեան մէջ նշանաւոր էին:

Գիւղին մերձակայքը կը գտնուէր մարդաման հսկայական ժայռ մը: Այս ժայռը կը կոչուէր Քար-Սիրտ, որուն մասին աւանդութիւն մըն ալ կար: Եահիացի էր յայտնի հայդուկ եւ սուրհանդակ-վալատ Սաֆոն:

**ԵԼՊԻՍ**  
ԿԱՍ  
**ԵԼՊԻՍ**

Գիւղը կառուցուած էր Խնուս-բերդէն դէպի արեւելք մէկ ու կէս ժամ հեռաւորութեամբ, Արածանի ափին, ձորահովիտի մը մէջ, բարձրաբլուր հողաթումբի մը առընթեր: Գիւղին զիմացը, հողաբլուրէն քարընկէց մը հեռու, ընդարձակ հարթութիւն մը կար, որ կը կոչուէր Շոռաղներ: Հեռուէն կը թուէր թէ սպիտակ սաւանով մը ծածկուած ըլլալու է այդ տեղը: մինչդեռ աղի հողն էր, որ այդ երեւոյթը կը պարզէր: Գիւղացիները կ'օգտուէին այդ աղի հողէն՝ աղջուր պատրաստելով առօրեայ գործածութեան համար: հողը, ջուրի մէջ լուծելով, կ'անցընէին աւաղէ քամոցներէ, ուրկէ մաքուր աղջուր կը ստանային: Գիւղին մէջ կը բնակէր Խնուս-բերդի թուրք աղաներէն Մահմուտ աղայի տղան՝ Շուքրին, եւ տիրացած էր գիւղին: Շուքրին երբ կու գայ գիւղը հաստատուելու, գիւղի տանուտէրներէն՝ Բազոն կը հակառակի եւ կ'ուզէ արդիւնէլ, սակայն անկարող կ'ըլլայ: Շուքրիի վերաբերումը հայոց հանդէպ բարեկամական ըլլալով, իր հովանաւորութեամբ գիւղացիները բաղդատարար դրացի հայ գիւղերուն՝ աւելի հանգիստ եւ բարեկեցիկ կ'ապրէին: Հարամիկցի Տիգրան Մուրատեանը երբ կու ունեցաւ



Խմբապետ Փիլոս Մարգիսեան

թուրք գիւնուր զիւցի Փալուլ օնպաչիին հետ, զայն վիրաւորելով՝ ինքն ալ վիրաւոր, երբ գիչերով փախաւ եւ ապաստանեցաւ Շուքրի աղային տունը, Շուքրին պաշտպանեց Տիգրանը եւ ազատեց ձերբակալութենէ: Դժբախտաբար այս միեւնոյն Շուքրի աղան 1915-ի տարագրութեան եւ ջարդի օրերուն՝ իր ձեռքերը թաթխեց հայ արիւնի մէջ:

Գիւղը ունէր դպրոց եւ եկեղեցի: քարաչէն եւ պատմական եկեղեցին կը կոչուէր Սբ. Գէորգ: Կար նաեւ ջրաղաց եւ ձիթհանք: Գիւղացիները կը զբաղէին հողագործութեամբ եւ խաչնարածութեամբ: Գիւղին նշանաւոր ընտանիքներն էին Բագոյի եւ Գեւոյի տուները: Այս գիւղին մէջ նշանաւոր նուազածու մը կար: ծանօթ էր ամրոցը դաւառին մէջ զուռնաճի Սըֆօ անունով: նշանաւոր էր նաեւ իր գուռնայի պիպիչներով (նուազարանին եղեգեայ յառաջամասը, որ նուազողին շրթունքներուն կը հանդէպ):

Այս գիւղացի է մեր նշանաւոր հայդուկ՝ խմբապետ Փիլոսը:

**ԵՂՐԴԼԻ**

Հինգ տունէ բաղկացած նորակառոյց այս գիւղը կ'իյնար Ենիքէօյ եւ Խոզլի հայկական գիւղերու սահմանին վրայ: Հիմնուած էր խոզլիցի տանուտէր Գասպարի կողմէ, եւ ասոր համար ալ առաւելապէս կ'անուանուէր Գասպարի գեղ:

Տանուտէր Գասպարի նահապետական տունը, իր զաւակներով եւ թոռներով, կը բաղկանար մօտաւորապէս 70-80 անդամներէ, որոնք կը բնակէին այս հինգ տուններուն մէջ եւ կը կառավարուէին իրենց նահապետ Գասպար պապի իմաստուն վարուելակերպով, շատերուն նախանձը շարժելով: Այս ընտանիքը որքան ալ որ գիւղ-ազարակ մը հիմնած ու հոն կը բնակէր, սակայն իր կապը Խոզլիի հետ չէր կտրած, եւ կը նկատուէր խոզլիցի համրա ընտանիք մը:

**ԵՆԻՔԷՕՅ**

Գիւղը կառուցուած էր գեղատեսիլ դարաբլուրի մը վրայ, Սպիտակ-սարի լանջերուն, Խնուս-բերդէն դէպի հիւսիս-արեւելք՝ 3 ժամ հեռու, եւ սահմանակից Խոզլու եւ Խըրթ հայաբնակ գիւղերուն: Ունէր 50 տուն հայ բնակչութիւն, նաեւ քանի մը տուն քիւրտեր, որոնցմէ մէկը գիւղի աղան էր, որդին Տուման հայաբնակ գիւղի աղային, հոչակաւոր աւազակապետ Շառլի: Այս աղան կը կոչուէր Շառլի-Պալլօ: Իր հօրմէն ժառանգած էր Տումանի ազայութիւնը եւ աւազակութիւնը: Իսկ Սուլթան-Համիտէն ալ պարզեւտրուած էր համիտիէ հեծելազօրքի հարիւրապետութեան աստիճանով: Արիւնարբու Համիտի գահակալութեան շրջանին, Պալլոն կ'առեւանդէ Տումանի հայ քահանային գեղանի կոյս աղջիկը, զոր բռնաբարելէ եւ փրկագին ստանալէ ետք միայն ազատ կ'արձակէ: Դարձեալ միեւնոյն Պալլոն սպաննել կու տայ տումանցի Յովհաննէս Մկրտիչեանը, եւ ենիքէօյցի յեղափոխական

գործիչ՝ Յովսէփը, ինչպէս նաև անմահ վալատ եւ յեղափոխական, նախկին տուժանցի Գօղոյի-Աւազը, որ տեղափոխուած էր Ենիքէօյ եւ դարձած էր Պալլոյի գոլամներէն: Վրէժխնդիր եւ կտրիճ Գօղոյի-Աւազը, հայ ազջրկան առեւանդուելուն իրր փոխվրէժ, ինքն ալ մեծ գաղտնապահութեամբ կ'առեւանդէ Պալլոյի աղջիկը եւ սպաննելով կ'անյայտացնէ: Պալլոյի բոլոր ջանքերը ի գուր կ'անցնին իր աղջկան առեւանդիչը գտնելու: ալօտ կասկած կ'ունենայ Աւազին վրայ, եւ երկար ժամանակ հետապնդելով դատաւորէն սպաննել կու տայ Աւազը, եւ գլխատուած գանկը կը զրկէ իր Պանուժին նուէր, որպէս զի կինը Աւազի գլխուն վրայ նստած բաղնիք առնէ, եւ ատով իր աղջկան վրէժը լուծուած ըլլայ: Գօղոյի Աւազի սպանութեան պարագան առեղծուածային էր. զրոյց մը կար, թէ իսկապէս Պալլոյի աղջկան առեւանդումի եւ անյայտացումի առնչութեամբ Պալլոն սպաննել տուած էր Աւազը: Ուրիշ մէկ գաղտասուկ, թէ յեղափոխութիւնը Աւազը դէքորի ենթարկած էր, կուսակցութեան 20 հրացանները իւրացուցած եւ ծախած ըլլալուն համար: Ստոյգ էր սակայն, որ Աւազի գլխատուած գանկը տրուած էր Պալլոյի կնոջ: Աւազակարարոյ Պալլոն, սակայն, իր արդար պատիժը ստացաւ 1911-ի ամառը, սպաննուելով իր սպաննած հայերու վրէժխնդիր Եղբայրներէն: Այս մասին կը կարդանք Թէոդիկ «Ամենուն Տարեցոյց» 1911 (էջ 388). «Տուժան հայաբնակ գիւղը, Խնուս. ժամանակին գրաւող, եւ տեղացի Յովհաննէս Մկրտչեանը, նաեւ Ենիքէօյի յեղափոխական գործիչ Յովսէփն ու իր իսկ եղբայրը մեռցնող Շահօ-Խալիս հարստահարիչ ֆիւրտը, համիտիէի հարիւրապետ, եւ Համիտի սիրելին, կը սպաննուի իր վրէժխնդիր եղբայրներէն ի Խնուս»:

Ենիքէօյ ունէր եկեղեցի եւ դպրոց: Քահանան էր հարամիկցի ծերունաւորը Տէր Սահակը: Գիւղէն դուրս բլուրի մը ստորոտը կը գտնուէր «Թուխ-Մանուկ» անունով սրբավայր մը: Այս սրբավայրին ջովնտի բլուրի հողին տակէն գտնուեցաւ հսկայական շէնք մը, ոմանք վանք մը, կամ եկեղեցի մըն է կ'ըսէին. ուրիշներ թէ անյիշատակ ժամանակներէ մնացած բերդ մըն է, նոյնիսկ փորձուելով անուանել զայն «Քօր-Օղլու, կամ Արշակ Թագաւորի Բերդ»: Այս շէնքը գտաւ գիւղացի հոգաւորը մը: Հոգաւորը ծր բլուրի մը վրայ իր արտը հերկած ատեն արօրին խօփը բռնէ մը կը բռնուի, ըծկան եղներուն ուժովին քաշելովը արօրին խօփը կը կտորի, Երկաթեայ բաժինը կը մնայ հողին մէջ: Հոգաւորը կը ստիպուի հողը փորել խօփը գտնելու համար, եւ ահա կը տեսնէ որ խօփը բռնուած է սրբատաշ քարի մը վրայ ամրացուած երկաթէ անուրէ մը: Լուր կը տրուի գիւղացիներուն, եւ ամէն մարդ բահ ու բրիչով կու գայ հողը փորելու: Բաւական փորելով կը բացուին շէնքին պատը, գուրոսի պարիսպին մասերը, քարէ աղուզանքը եւ զանազան իրեր: Թուրք կառավարութիւնը իմանալով այս գիւտին մասին, ոստիկանական ուժով զաղրեցնել տուաւ պեղումը:

1907 թուականին մեր գիւղի -Հարամիկ- ուսուցիչն էր Կարնոյ Սանասարեան վարժարանէն շրջանաւարտ, կարնեցի Պրն. Աւետիս Սարոյեանը: Պրն. Աւետիս Կիրակի օր մը, խումբ մը աշակերտներ հետը առնելով, տա-

բաւ մեկ Ենիքէօյ՝ տեսնելու այդ նորագիւտ շէնքը: Ելանք բլուրին վրայ, իջանք փորուած տեղը, դիտեցինք արտասովոր մեծութեամբ պատի սրբատաշ քարերը, քարէ աղուզանքը, եւ յոյնութենէն հանդէսը համար փրուուեցանք գետին, մինչ Պրն. Աւետիս սկսաւ չափել ու չափչփել քարերու լայնքն ու երկայնքը, պատի բարձրութիւնը, քարէ աղուզանքու արտասովոր կոփուածքն ու աղուցուածքը: Ժամերով պտըտելէն ետք, մայրամուտին գիւղ վերադարձանք: Այս շէնքին մասին, Թէոդիկ իր 1911 «Ամենուն Տարեցոյց»ին մէջ, էջ 388 այսպէս կը գրէ. «1910 Յունիս 11, հայաքերթ կը գրեմ, թէ Խնուսի Ենիքէօյ հայաբնակ գիւղի մերձակայքը, հողի տակ քահուած հին եկեղեցի մը կը գտնուի, 157 ուտ Երկայն, եւ 57 ուտ լայն. հրակայ ֆարեքով կերտուած»:

Այս գիւղը ունէր խոտաւէտ ընդարձակ արօտատեղիներ եւ արգասաբեր արտեր, որոնք կ'ոռոգուէին Քառասուն-Մանուկ կոչուած ջուրի ակերէն, նախնական ձևի ջրարաշխական առուներով: Գիւղացիները կը զբաղէին հողագործութեամբ եւ խաշնարածութեամբ, կը մշակէին զանազան հացահատիկներ:

Գիւղին մէջ կային երեք կրպակներ, որոնք մանր առեւտուրով կը զբաղէին: Կար նաև ձիթհանք եւ ջրաղաց, որոնք հայոց սեփականութիւն էին:

**ԹԱՆՏՐԼԻ ԿԱՄ ԹՈՆՏՐԱԿ**

Գիւղը կառուցուած էր, երբեմնի հայաբնակ, սակայն Սուլթան Համիտի բռնակալութեան օրերուն հայոց վտարումով քրդաբնակ դարձած՝ Փայկ կամ Հայկ գիւղին հիւսիս արեւմուտքը՝ Դեղթափ սարի լանջերուն: Բնակչութիւնը 5 տուն հայեր էին: Գիւղին մերձակայքը կը գտնուէին քարէ բազմաթիւ թոնիրներ, ուրկէ աւած է իր անունը: Կ'ենթադրուէր թէ այս գիւղը, կամ իր շրջակայքը, ժամանակին Թոնդրակեցի աղանդաւորներով բնակուած է եղեր: Գիւղացիները կը զբաղէին հողագործութեամբ եւ խաշնարածութեամբ:

**ԹԱՐԱՁԻԳ**

5 տուներէ բաղկացեալ հայաբնակ փոքր գիւղ մըն էր, կառուցուած Խնուս բերդի հարաւարեւմտեան կողմը Պինկէօլ լեռան ջրառատ լանջերուն: Այս գիւղացիները մարապաներ էին Խնուս բերդի Պաղջա կոչուած թաղը բնակող հարուստ եւ հողատէր բէկերուն:

**ԼԱՔՊՈՒՏԱՂ**

Կառուցուած էր Արածանի գետի ափին, գեղատեսիլ դիրքի մը վրայ, Ձեռնակայ սարի ստորոտները: Մինչև 1903 թուականը, այս գիւղը հայերով բնակուած էր. այդ թուականներուն չէրբէզներ բռնութեամբ գալով ու հոս հաստատուելով, հայերը բոլորն ալ գիւղը ձգելով կը հեռանան. ոմանք կ'երթան հայկական զանազան գիւղերու մէջ հաստատուելու, իսկ մեծամասնա-

բար կը գաղթեն Կովկաս: Կովկաս գաղթողները Օսմ. Սահմանադրութեան (1908) երկիր վերադարձան, սակայն չէքքէզներէն չկրցան իրենց կալուածները ետ ստանալ:

Չէքքէզներու գլխաւորն էր Ասլան բէկ: Ասոնք զիւզին տիրանալով սկսան նոր տուներ շինել: Տուները քարաշէն եւ երկյարկանի էին. դուրսի պատերը տարին երկու անգամ ճերմակ զածով կը ճերմկցնէին: Չէքքէզներու վերաբերումը հայոց հանդէպ աւելի բարեկամական էր, քան քիւրտերու վերաբերումը: Չէքքէզները քիւրտերու եւ թուրքերու հետ ամուսնութիւն չէին կնքեր. խնամութեան համար կ'երթային Բուլանուխի Սիմոն չէքքէզարնակ զիւզը, կամ Մալազկերտի Սարտաւուտ եւ Ռստամգետուկ զիւզերը, եւ կամ Խնուսի Չարրօհոր չէքքէզարնակ զիւզը:

Լաբպուտաղ ունէր քարաշէն եկեղեցի մը, որ լքուած կը մնար: Չէքքէզները սակայն եկեղեցին քանդելու փորձ բնաւ չըրին:

**ԽԱԼՉԱՌԻՇ  
ԿԱՐ  
ԽԱԼՉԱԼՈՅՍ**

Կառուցուած էր Խամուր բերդ լեռան ստորոտին. բնապատկերը կ'ընդգծուէր հովիտին մէջէն գալարուող Դանիէլ գետի գեղածիծաղ դարատափերով. կոնակը՝ հարաւէն՝ Խամուր բերդին տուած, հիւսիսակողմէն՝ իր եւ Հարամիկ զիւզին միջեւ կանգնած էր Գաւռնովներու բարձրադիր բլուրը Մոտոտ բուլի գաղաթով: Ճակատը դէպի արեւելք, իր եւ Քաղքիկ զիւզին միջեւ կը սահմանուէին Խնուսի ամենապեղատեսիլ եւ ծաղկաւէտ Յախոռչիւմանի, այսինքն յաւերժադալար մարդապետինները:

Գիւզին մօտերը կը գտնուէր կիսակեր եկեղեցի մը՝ Վանքիկ անունով. ուխտատեղի էր, որուն մերձակայքը բլուրն ի վեր կը գտնուէին Շարան Քարեր: Այս քար-արձանները նման էին ոչխարներու, որոնց մասին աւանդութիւնը հետեւեալ պատմութիւնը ունէր.— ոչխարներու հօտ մըն է, որ քարացեր է իր հովիւին, բէրուորներուն ու գամբոին հետ, աստուածային պատուհասով ուխտադրուած հովիւին պատճառով: Ամսու տուն մը, կ'ըսուեան ճիւղ տաքին, երբ բէրուորները նստած՝ ոչխարներու կաթը կը կթեն, տապէն ու ծարաւէն կը տառապին ու ջուր չունին, հովիւը իր կապակը հօդին սփռելով՝ զոյգ մը սպիտակ գառներու հետ ծնրադիր կ'աղօթէ Աստուծոյ ու մակաղատեղի մերձակայ Վանքիկի սուրբին, որ ջուր բխեցնէ իրենց համար, խոտանալով սպիտակ գառնուկները մատաղ ընել: Կը կատարուի հովիւին աղաչանքը. ջուրը կը բխի, բոլորն ալ ջուրը կը խմեն, բայց ուխտադրուած հովիւր փոխանակ սպիտակ գառները մատաղելու, սպիտակ ոջիւ կը գոհէ...: Եւ այն պահուն պատուհասուելով ակնթարթի մը մէջ հօտն ու հովիւը, բէրուորն ու գամբուր տեղն ու տեղը քար կը կտրին:

Գիւզը ունէր 85 տուն հայ, եւ 15 տուն քիւրտ բնակչութիւն: Գիւզախումբի կեդրոն էր (նախիկ մաւտիւրլիկ): Քիւրտ՝ Ղիպրանցի աշիրէթի թո-

ուսներ՝ Աղմային, Ջնդին, Սէլիմ բէկ եւ Սատին տիրացեր էին զիւզին:

Գիւզը ունէր եկեղեցի եւ դպրոց: Եկեղեցիին անունը Սբ. Սարգիս Չորսօր էր, որուն շինութեան համար հետեւեալը կը պատմէին.— Անգամ մը, թուրք զինուորական սպայ մը՝ կ'այցելէ զիւզը: Հետաքրքրուելով զիւզի մասին, զիւզացիներէն կը հասկնայ, որ հայերը եկեղեցի չունին. կը կանչէ զիւզին հայ երեւելիները եւ կը ստիպէ որ եկեղեցի մը շինեն, խոտանալով որ ինք պետութենէն եկեղեցիի շինութեան հրամանը (Փէրման) պիտի բերէ: Արտօնադիրը բերելով, զիւզացիները աշխատանքի կը լծէ եւ եկեղեցին շինել կու տայ:

Գիւզացիներու գլխաւոր զբաղումներն էին երկրագործութիւն, իաշնարածութիւն, անասնապահութիւն: Ջուլհակութեան եւ դորդագործութեան արհեստին մէջ ալ վարպետ էին: Այս զիւզացի կին մը շատ հմուտ եղած է դորդերու ճիւղէ-Փարօ կոչուած ծաղկազարդումին, եւ շատ յաճախ կը կանչուի եղեր քիւրտ գորգագործ արհեստաւորներուն այդ մասնաւոր ծաղկազարդումը սորվեցնելու, կամ գանոնք առաջնորդելու:

Կային նաեւ քանի մը մանրավաճառներու կրպակներ, որմադիր արհեստաւորներ, նուազածուներ եւ ժողովրդական երգիչներ. յիշենք անոնցմէ խաղաղ Շուշէ թումօն, գաւռնաքի Խուռուտ, որուն նուագելու մուրազը ստանալու առնչութեամբ հետեւեալ մանրավէպը կը պատմէին.— Խուռուտ ուխտի կ'երթայ Մշոյ Սուլթան Սբ. Կարապետի վանքը, որպէսզի գուռնա փչելու (նուագել) մուրազն առնէ: Ծնրադիր կ'երթայ Սբ. Կարապետի գերեզմանին վրայ, ու հոն իր գուռնան ղնելով կը սկսի այսպէս աղօթել. «Է՛հ, չանկիլի զիւան, Մշոյ Սուլթան Սբ. Կարապետ, մեռնի՛մ քրդի, ու քու սուրբ դօրաց, էն՝ ո՛րն որ քրդի չհաւատայ, գրնտուր հօր հօդին...»: Երբ յանկարծ կը յուշարերի, կը տեսնէ որ վանքի վարդապետներէն մէկը քովը կայնած՝ մտիկ կ'ընէ: Վարդապետը խօսքը ուղղելով Խուռուտին, կը հարցնէ. «Օրհնա՛ծ՝ էտ ի՞նչ էր կ'ըսէիր, էտ հրմայ աղօթք կ'էլզնի՞»: Խուռուտը գառնալով վարդապետին՝ կ'ըսէ. «Պուրպան էլզնի՛մ քրդի, վարդապետ, թոպա՛յ, թոպա՛յ, էլ հեղ մը լէ էտ հրմայ աղօթք չըմ կնի»: ու մուրազն առած՝ տուն կը գառնայ, եւ հետագային կը գառնայ նշանատու գաւռնաքի Խուռուտը:

Նշանատու գաւռնաքի (փողփուշ) էր Իրիցու Մօսոն՝ Մովսէս Տէր Չարեան, որ 1910-ին գաղթած է Հիւսիսային Ամերիկա եւ շարունակած է իր նուագածութիւնը, մեր բնաշխարհի երգերու եւ պարերգներու սիրատուոր եւ սրտամալիկ անուագական եղանակներու թրթուացումով: Ասոնցմէ ոմանք երգապնակներու վրայ առնուած են որպէս թանկագին մասունք: Մեռած է 1963-ի Փետրուարին:

Պալչատուչիներու մասին մեր բնաշխարհի անանուն գուսանը՝ իր յօրինած Խնուսի զիւզերու գովքին մէջ, զոր բնթերցողը պիտի գտնէ մեր գիրքին «Բանահիւսութիւն» գլուխին ներքեւ, կ'ըսէ՝ խալչալ քաշող խալչաուչիք՝ անոնց ռազմասէր եւ քաջակորով նկարագիրը բնորոշելով:





Մովսէս Տէր Զաքարեան (խալչաուշցի)

Յիշենք անոնցմէ ոմանց անունները, որոնք 90-ական թուականներու ազգային վերագարթնումի դժնդակ օրերուն դրին իրենց կեանքը հայ յեղափոխութեան սեղանին, զոհաբերուելու աղզին ազատութեան ի խնդիր: Այդ մարտիկներն են՝ Անտրոն, Բաղէն, Իրիցու Օհան, Խանտիլի Մարտիրոս, Սիմէն, Զուլէ Մօսոն եւ Շուշէ Մօսոն: Թէոդիկի «Ամենուն Տարեցոյց»ին մէջ այսպէս է արձանագրուած, Շուշէ Մօսոյի մասին. «Խալիլ Զաուշ (Խնուս) գիւղէն, Շուշոյեան Մովսէս (Մօսոյ), որ ֆուրդերու դէմ դրած էր 6 տարի, խարոյկի կը մատնուի 1907 ապրիլ 18-ին (1910, էջ 257):

Պալչաուշի պատմութեան հետ սերտ առնչութիւն ունի քիւրտ նշանաւոր կրօնապետ Հաճի Հայտարի սպանութեան դէպքը, որ տեղի ունեցած է 1895-ի հայկական ջարդերու՝ կամ ինչպէս սովորաբար կ'ըսուէր Քալանի տարիի նախօրեակին, Պալչաուշ, Հարամիկ եւ Քաղքիկ հայաքնակ գիւղերու սահմանին՝ Դանէլ գետի կամուրջին մերձակայքը: Սպանութեան մեղսակիցներ նկատուած են խալչաուշցի տէրտէրոջ տղան Հրոն (Հրանդ) եւ սասունցի Աւե-Ստեփան, որոնք սակայն անյայտանալով կ'ազատուին ձերբակալուելէ: Տէրտէրոջ տղայ Հրոյի տեղ, թիւրիմացութեամբ կը ձերբակալուի հնչակեան գործիչ եւ Տամատեանի գործակից Տէր Զաքարեան Օհան: Օհան դատավարութեան ատեն, գիտնալով հանդերձ Հրոյի մեղսակցութիւնը, որեւէ ակնարկութիւն չ'ընէր, եւ Կարին տարուելով կը դատապարտուի 15 տարուան

ընդարդելութեան եւ կը զրկուի Սինոպի բանտը: Պատիժին ժամանակամիջոցը յրացնելով ազատ կ'արձակուի, սակայն բանտին տառապանքներէն անդամալոյժ, հիւանդապին վիճակով կը վերադառնայ Կարին: Կարնոյ առաջնորդարանը աղաքինման համար կը զրկէ զայն Թիֆլիս, ուրկէ Սահմանագրութեան օրերուն կը զրկուի Պոլսոյ Սր. Փրկիչ հիւանդանոցը: Տարիներով հիւանդանոց մնալով 1914-15-ին պատերազմի շրջանին, անդամալոյժ վիճակով հայրենիք կը վերադառնայ, եւ խժոժօրէն կը նահատակուի իր գիւղին մէջ, հայրենի հողին վրայ:

Միեւնոյն դէպքին առնչութեամբ կը ձերբակալուի նաեւ նոյն գիւղացի Ըոթօն (Առաքել), որ բանտէն ազատուելէն ետք, Կարնոյ ազգային իշխանութեան կարգադրութեամբ, կը զրուի Լուսաւորչայ վանքը, պատուարուելու համար:

Հաճի-Հայտարի սպանութեան առնչութեամբ, Աւե-Ստեփանի վրայ յօրինած էին հայերէնով եւ քիւրտերէնով, հետեւեալ երկու տուննոց երկը.

Պուլտրն, պուլտրն Ստեփան,	Հա պընէտայ, պընէտայ,
Զարկեց, սպանեց Ստեփան,	Մալա կէաֆէ Հանիտայ,
Տարաւ քաղեց Ստեփան,	Սըր լը հրսփէ սըփիտայ,
Կէֆօն վառեց Ստեփան:	Լը ֆուներէէ տարիտայ:

Հաճի-Հայտարի սպանութենէն կարճ ժամանակ ետք, տեղի կ'ունենան նախապէս յիշատակուած 1895-ի հայկական թալանի եւ կոտորածի դէպքերը: Դէպքին հետեւանքով Պալչաուշ աւելի մեծ չափով կ'ենթարկուի թալանի, աւերի ու աւերածութեան եւ զարհուրելի խոշտանկումներու: Բանտարկեալ Ըոթոյի քոյրը՝ Սուլթան, քիւրտերու կողմէ խոշտանկումի կ'ենթարկուի, մախաթով ստիւնքները կը ծակտան: Միեւնոյն շարժարանքին կ'ենթարկեն նաեւ յայտնի յեղափոխական՝ Մարտիրոս Պանտիլեանի մայրը:

1908-ի Օսմ. Սահմանագրութեան շրջանին, ուսման եւ կրթութեան փափաքող ուսանողութիւնը, կ'երթար Մուշ, Կարին, մինչեւ Պոլիս: Պալչաուշէն Կարնոյ Սանասարեան վարժարանը կ'երթար Արամ Պօղոսեան: Պոլիս կ'երթան Սուրէն Բարախեան եւ Վարազդատ Անտոնեան: Արամ եւ Վարազդատ զոհ զոհուցին 1915-ի մեծ եղեռնին: Սուրէն՝ այժմ Տէր Սուրէն Քհնյ. Բարախեան, հոգեւոր հովիւն է, Տիթրոյիտի Ս. Սարգիս Հայաստանեայց Առաքելական եկեղեցիին:

Պալչաուշցի նշանաւոր բնտանիքներ էին՝ Բաբխու տուն, Վրդոյենց տուն, ոչս Մովսէսի(\*) կամ Քոչոյ տուն, Տէր Զաքարենց կամ Իրիցու տուն, Ուստա Սարգիսի տուն:

(\*) Ռէս Մովսէսի որդին է՝ փրոֆ. Արզար Մովսիսեան: 1915-ի մեծ եղեռնին որբացած, 1916-ին՝ ռուսական բանակին հնուսի գրաւման շրջանին՝ հրաշքով վերապրած, փոքր տարիքին կը տարուի Երեւան, ուր կրթութիւնը կը ստանայ, ապա կ'ուղարկուի Մոսկուայի Համալսարանը. անկէ շրջանաւարտ ըլլալով կը վերադառնայ Հայաստան: Այժմ Երեւանի Համալսարանի փրոֆէսոր է: Ատեն մը եղած է Հայաստանի Լուսաւորութեան նախարարի օգնական:

Հետաքրքիր անձնաւորութիւններ էին՝ Ասլո Աւտալը եւ ֆոն ուստա Յակոն: Առիթով մը, երբ Ասլո Աւտալ կ'աղօթէ, մըմնջելով նարեկէն հետեւեալ հատուածը, — Մահ ոչ տեսցէ զմեզաւորն, նախ քան զապաշխարհու- թիւն իւրոյ: — նոյն պահուն, ուստա Յակոն սրամտօրէն դիտել կու տայ Աւ- տալին՝ — «Աւտալ, խուրպան, իտա բռնելն որ դուն բռներ իս, քրդի մահ չը մօտենայ»: Աւտալ փոխադարձելով կ'ըսէ. «Ճա լք ըտոր համար է որ ա- ղօթք կ'էնիմ, ֆաւ-կոր (կոյր) Յակօ...»:

**ԽԸՐԹ**  
**ԿԱՄ**  
**ՀԵՐԹ**

Գիւղը շինուած էր Սպիտակ սարի լանջերուն. կը բաղկանար 40 տուն բնակչութենէ: Կէսը հայեր էին, իսկ միւս կէսն ալ քրերտեր:

Գիւղի տէրն ու տիրականն էր քրերտ շէյխ Մուրատը, եւ ինքզինք կ'ըն- գունէր, թէ կը սերի Քառասուն Մանկունք կոչուած աղբերակներու բիւծ կէտին՝ կղզիացած հողաթումրին վրայ թաղուած՝ Քառասուն Մանկունք ա- նունով ծանօթ սուրբին սերունդէն: Քառասուն Մանկունքը հայոց համար հայ քրիստոնեայ քահանայի մը աճիւններու դամբարանն էր, խաչկոփ տա- պանաքարով, եւ Յովհաննէս Աբրա անունով, մինչ քրերտերու համար՝ մաս- նաւորապէս շէյխ Մուրատի համար, իր նախահայր սուրբ Հայր Բաբա անու- նով ընդունուած էր, եւ դամբարանի երկու ծայրերուն մահմետական գերեզ- մանաքարի պէս՝ երկու քար տնկելով կրօնափոխած (Տես Գ. Վ. Սրուանձ- տեանց, «Գրոց ու բրոց», էջ 47-48): Նաեւ Եղիշէ Յ. Մեկիքեան, «Յովհան- նէս Աբրա Վահագունի — խնուցի», Հայրեմիք Ամս., Նոյ. 1949, էջ 86: Նաեւ, սասունցի պատուելի Սիմէոն Դաւիթեանի «Օրապրութիւնը», ձեռա- գիր, անտիպ, թուական 1853 Խնուս Զեւիթէ գիւղ, տարեց գիւղացիէ մը՝ որ ժամանակակից եղած է հայ քահանային՝ լրածը զրած է: Օրագիրը կը գտնուի մեր տրամադրութեան տակ:

Այս գիւղին մարդակերպները եւ մշակելի հողերը շատ բարեբեր էին: Կ'ոռոգուէին Քառասուն Մանկունք ակն — աղբիւրներու ջուրերէն, որոնք տարուան Մայիս, Յունիս եւ Յուլիս ամիսներուն կը յորդէին եւ մասնաւոր առուններով կը բաշխուէին շրջակայ գիւղերու տրտերուն: Այս ամիսներէն ետք ջուրերը կը ցածքէին: Համբաւաւոր էր այս գիւղին մածունը:

Խըրթայ մածունը, Տումանայ չոր սեր,  
Մեղր ու կարագը Հարամկուն, դուն կեր:

Նշանաւոր էր նաեւ գիւղին մերձակայքի լեռներուն վրայ բուսած խա- ւարծիլը (խաւրձիլ): Ժողովրդական գուսանի գովքին արժանացած կ'եր- գուէր. —

Թըրթո՛ւաշ, անո՛յշ ոսկեծիլ,  
Խըրթայ սարու խաւրձիլ:

Գիւղը ունէր կարմիր կաւ, եւ կ'անուանէին կարմիր կաւ գուփ, որմէ պաւառի բրուտները թրծուած պատուական խեցամաններ եւ ջուրի ազուգա- ներ կը պատրաստէին:

**ԽԸՐՄԽԱՅԱ**

Գիւղին բնապատկերը բարձրաւանդակի մը խարակ- ներով շրջապատուած էր. խարակներու աստիճա- նական ճեղքուածքներէն հասարակաց ճամբայ մը կը բացուէր դէպի գիւղը: Արածանին՝ գիւղին կողերը քերելով, տեղ-տեղ կ'ոռոգէր արտերն ու մարդերը, ու կ'անցնէր Ներքին Բուլանուխ: Գիւղին հիւսիս-արեւելքէն կը բարձրանար Գողըլ Պապա սարը, որուն Ուոյլի Պապա անունն ալ կը տրուէր: Սարը ունէր ջուխտակ մը զապաթներ, որոնցմէ մէկը ծանօթ էր Գողըլ Պապա, իսկ միւսը Հաղըր Պապա անուններով: Լերան ան- ուանակոչութեան մասին կար հետեւեալ ժողովրդական աւանդութիւնը. — Թէ ժամանակին Պարսկաստանէն խոյեցի ճգնաւոր մը գալով այս սարին գա- զաթը ձգնելով, ատոր համար ալ սարին անունը կոչուեր է Ուոյլի Պապա (խո- յեցի հայրիկ) կամ աղաւաղուելով փոխուեր է Գողըլ Պապայի: Սարի զապա- թը հսկայական ապառաժի մը ծերպը, որպէս ճգնաւոր սուրբի ճգնարանը՝ ուխտատեղի դարձած էր, ուր ուխտի կ'երթային հայերը եւ քրերտերը: Քրեր- տերը կը պնդէին թէ այս սուրբը իրենցն է, եւ երգ մըն ալ կ'երգէին անոր նուիրուած այդ երգէն հետեւեալ երկու տողը կը մնայ մեր յիշողութեան մէջ. Գողըլ Պապա, նը տըշտէ. Հաղըր Պապա լը պըշտ է, այսինքն Գողըլ Պապան չի վախնար, Հաղըր Պապան իր կոնակն է:

Ուրմիսայա կը բաղկանար 45 տուն հայերէ եւ 5 տուն քրերտերէ: Իրենց գրաղումն էր առաւելապէս երկրապործութիւն եւ խաշնարածութիւն: Հայե- րը ձիաբուծութեան մէջ նշանաւոր էին. կը բուծանէին ֆէիլան ազնուացեղ ձիեր ու երբ վաճառքի հանէին. զնորդները ընդհանրապէս քրերտ թոռուննե- րըն էին, եւ կը գնէին իրենց սահմանած կամ նշանակած գնով:

Եկեղեցի եւ դպրոց չունէին: Գարաշոպան հայկական մեծ գիւղ-աւա- նին մերձակայքը գտնուելուն համար՝ հոն կը դիմէին իրենց կրօնական ծի- սակատարութեանց համար. ինչպէս նաեւ իրենց զաւակներու կրթութեան համար միջոց ունեցողները հոն կը զրկէին:

Ուրմիսայա կառուխնձոր դարձած էր հասանանցի Աճմու Ուսուֆ աղա- յի եւ ջիրբանցի Թաժտին բէկի միջեւ, գիւղին տիրանալու համար:

**ԽՈԶԱՆ**

4 տուներէ բաղկացած փոքրիկ գիւղ մըն էր: Կը գտնուէր Բիւրակնեան լեռան լանջերուն, շրջա- պատուած էր քրդական գիւղերով: Բնակիչները կը գրաղէին ջաղացականութեամբ. կը խօսէին թէ՛ հայերէն եւ թէ՛ քրերտերէն:

**ԽՈԶԼԻ**

120 տուներէ բաղկացեալ հայարնակ մեծ գիւղ- աւանը կառուցուած էր Սպիտակ-սար կամ Դեղ- թափ կոչուած լեռան խարսխային գառիթափե- րուն վրայ: Իր եւ Աղվերան գիւղի սահմաններուն մէջ կը գտնուի խորունկ

ձոր մը, որ կ'անուանուէր Խանլի-Տէրէ (արնձոր), ուր կատարուած բազմաթիւ ոճիւրներէն ստացած է իր անունը:

Խողլի անուան մասին, երկու տեսակ մեկնարանութիւն կար. հայերը կը մեկնարանէին, որ հին ժամանակներ զիւղին մերձակայ Սարթ-մէջա անունով անտառին մէջ ապրող վայրի խողեր կը հաւաքուին այս զիւղին մէջ, որով կ'ըլլայ խողերով լի տեղ, եւ զիւղը կ'անուանուի՝ Խող-լի, այսինքն, խողերով լեցուն տեղ: Իսկ թուրքերու եւ քիւրտերու ստուգարանութիւնն էր՝ Խող-Ալի կամ Գըզ-Ալի: Իրերե թէ, խողի նմանող, եւ Ալի անունով մահմետականի մը անունէն՝ զիւղը կոչուած է Խող-Ալի: Այլ ստուգարանութեամբ մըն ալ՝ Գըզ-Ալի. պարսիկ Ալի անձի մը անունով մկրտուած է զիւղը, որուն զերեզմանն ալ, զիւղին վերելի հովիտին մէջ, մեծամեծ ընկուզենիներով շրջապատուած վայր մը ցոյց կու տային:

Խողլիի հարաւ-արեւմտեան կողմը լայնանիստ բլուրի մը վրայ՝ կար ընդարձակ ծառաստան մը Հաճու Պաղջա անունով. այս անտառանման ծառաստանի ծառերը (բարտի, ուռի, կաղնի, չամ կամ մայրի եւ այլն) անկած եւ մշակած էր քղեցի Հաճի Յովհաննէս Բարաղամեան: Հաճի Յովհաննէս աւելի հանրածանօթ էր խնուցիներուն Հաճի-Գրապրգ անունով. բողոքական էր եւ քարոզչութիւն ալ կ'ընէր: Կ'ըսէին որ իր հօրեղբայրներէն մէկը եպիսկոպոս եղած է: Հաճի Յովհ. Բարաղամեան ծառամշակութիւնը սորված էր Անգլիա ապրած շրջանին: Խողլիի իր պարտէզին մէջ չինած էր շուրի շատրուան, որուն քով չինած էր նաեւ քարէ դամբարան մը, եւ անոր քարէ կափարիչին վրայ զրած էր իր անունը, ծննդավայրը եւ զերգաստանի մասին ծանօթութիւններ: Սահմանադրութեան շրջանին Պաղջան ծախեց Զաքարեան եղբայրներուն, պայման դնելով որ յետ մահու իր աճիւնները ամփոփուին իր չինած քարէ դամբարանին մէջ. սակայն 1914-ի աշնան ոռու-թրր-քական պատերազմի նախօրեակին Խնուսէն զացեր էր Կովկաս՝ Շորակեալ՝ Ղարսի շրջան, ուր նոյն տարին կը մահանայ յառաջացեալ տարիքի մէջ, եւ իր ձեռակերտ քարէ դամբարանը չարժանացաւ իր աճիւնները ամփոփելու: Հաճի-Յովհաննէս եւրոպական ծառամշակութեան օրինակով տնկած էր նաեւ Կարնոյ միլլէք-պաղջան, կարնեցիներուն շատ հանրածանօթ հանրապարտէզը, եւ արժանացած էր կառավարութեան զնահատութեան:

Հայկական յեղափոխական շարժման օրերուն խողլիցին ջերմ հայրենասիրութեամբ հիւրասիրած, սպաստան տուած, խնամած եւ օժանդակած է հայ յեղափոխականներու, թէ՛ Հնչակեան եւ թէ՛ Գաշնակցական զինատար խումբերուն, եւ Կովկասէն-Սասուն՝ Խնուսի զիծով անցնող հայդուկներուն: Մեր անմահ հայդուկ Զօր. Անդրանիկ իր յուշերուն մէջ (Հայրենիք Ամսագիր, 1930, թիւ 5, էջ 109), Խողլիի մասին այսպէս կը գրէ. «Առաւօտ՝ լուսաբացին հասանք Յախիա (հայ-բրդախառն գիւղ). վախտնիս գնաց, լուր տուաւ մի տան հայերուն, նրանք ալ եկան տարան մեզ մի թաւայի (ախտո) մէջ: Այդ օրը անցկացրինք մտաւորներու մէջ. մեզ հիւրասիրեցին, կերակրեցին, երեկոյեան ճանապարհ ինկանք, հասանք Խնուս, Խոզու — Գասպարի գիւղ, որ մի նահապետական տուն էր. Գասպար իրեն տղաներով եւ քոռնե-

րով, մօտ 70 հոգի առանձնացած է Խոզու գիւղէն, եւ այդ է որ կ'ըսուի Գասպարի գիւղ»:

Հայրենիք Ամսագիրի մէջ, Վ. Իսկէնաէրեան (մեզի աւելի Դերենիկ անունով ծանօթ) իր յուշերուն մէջ «12-ից մինչեւ 101 տարին» կը գրէ Խընուսի եւ խնուսի իր յեղափոխական ընկերներու մասին: Իր ընկերները եղած են քաղքիւ Օհան եւ խալչաուլցի Խանտիլի Մարտիրոս եւ Շուշէ Մօստն: «Առաջին իսկ հայեացքից երեւում էր, որ տեղացի հայերը մի առանձին խնամք էին ցոյց տալիս դէպի հայդուկները: Որքան էլ որ նրանք մտածում էին իրենց ընտանիքների ապահովութեան մասին, նոյնքան եւս աւելի շատ զնահատում էին մեր կեանքի ապահովութիւնը: Նրանք դողում էին մեր վերայ միջոց այնպէս, որչափ որ մի հայր՝ իր միմուռն ազգի որդու վրայ: Նրանց յիշողութեան մէջ դեռ եւս քարմ էր իրենց այդ նէմէրտ սարի վրայ Արարոյի եւ իր ընկերների կոխու ու նահատակութիւնը» (1940, թիւ 12, էջ 105):

Խողլի ունէր եկեղեցի, դպրոց, եւ շատ նշանաւոր մտազգայնական տարան մը, որ ծանօթ էր Խողլուայ Շէկ-Աւետրան անունով. այս աւետարանին խուլը՝ մասնաւոր ծառայողը, Կոյս-Հոոս անունով, տարիքաւոր հայ աղջիկ մըն էր:

Խողլի կը բնակէին քանի մը տուն հայ բողոքականներ. ասոնք ունէին վարժարան մը, զոր կը գործածէին իրրեւ դպրոց եւ ժողովարան-աղօթատեղի, եւ ենթակայ էին իրզրումի Ամերիկեան Պորտ ընկ. բողոքական միսիոնարներուն, եւ կը վայելէին անոնց նիւթական օժանդակութիւնն ալ:

Խողլի ունէր ջրաղաց եւ ձիթհանք, ընդարձակ մարդագետիներ եւ արգասաբեր արտեր. այդ իսկ պատճառաւ զիւղացիներու գլխաւոր զրաղումըն էր հողագործութիւն եւ անասնապահութիւն. կային նաեւ քանի մը կրթականներ, որոնց տէրերը յաջող գործ ունէին, որովհետեւ իրզրումէն դէպի Բիթլիս եւ Վան, ու ապա Պարսկաստան գացող կարաւաններու գլխաւոր իջեւաններէն մէկն էր:

Խողլիի մերձակայ Սպիտակ սար կամ Խողլուայ սարին վրայ կը գտնուէր Սարդ-մէշա անունով անտառը: Հոս 1895-ի դէպքերու նախօրեակին՝ այրուած է քիւրտ նշանաւոր չէխ Հաճի-Հայդարի դիակը: Հաճի-Հայդար կը սպաննուի հայ յեղափոխականներէ, Դանէլ դետի կամուրջին վրայ, Քաղքիկ եւ Հարամիկ գիւղերու միջեւ: Դիակը, որ իր մարտունակներէն կը փրկուէր, քանի մը անգամ հայոց կողմէ տեղէ տեղ փոխադրուելէ ու թագցրելէ ետք, վերջապէս կը տարուի Սարդ-մէշա եւ հոն կը հրկիզուի. ու որպէս թէ այդ ժամանակուան իր մուրուտ՝ եւ հետագային նշանաւոր Շէխ-Սայիտը, միշտ զիշերները երազով կամ տեսիլքով կը յայտնէ Հաճի-Հայդարի դիակին թաղստափայրը, ու երբ կ'երթան փնտռելու, չեն գտներ, վերջապէս երբ դիակը կ'այրուի, այդ ստեղծ կը յայտնէ որ Կեարոն՝ այսինքն Հաճի-Հայդարը՝ Երկինք բարձրացաւ:

Խողլիի մէջ նշանաւոր ընտանիքներ էին՝ Հել-Հելի տունը, իր տղան՝ Գասպարը, Կոչտոյի տունը, ոչս Աւտալի տունը:

ՀԱՐԱՄԻԿ

Գիւղականը կը բաղկանար 180 տուն ընակիչներէ, որուն 150 տունը հայ էին, իսկ 30 տունը թուրք-քիւրտեր: Սակայն 1906-ին՝ ժամանակաւոր կերպով մտատարապէս 30 տուն Կովկասէն դաղթած թաթար-մուսաճիրներ թուրք կառավարութեան թելադրութեամբ և բռնութեամբ բնակութիւն հաստատեցին, որով տուներուն թիւը բարձրացաւ 210-ի:

Գիւղը կառուցուած էր զոյգ մը բլուրներու կողերուն: Արեւելեան բլուրը, որ կը կրէր հայոց գերեզմանատունը, կը կոչուէր Իրիցու դար: Բլուրի պատուանդանէն կը սկսէր հայոց տուներու շարքը, հասնելով Թուխ Մանուկ մատուռին՝ դպրոցին ու եկեղեցիին: Արեւմտակողմն էր Լակլիւս դարու բլուրը. ասոր կողքին կառուցուած էր Տէրտրոջ թաղը, եւ անուանակոչութիւնը ստացած էր Տէր Սողոմոնին եւ իր մերձաւոր աղապաններու նախնիքներէն, որոնք Մշոյ Կառնէն գիւղէն դաղթած եւ հոս հաստատուած էին:

Գիւղին հիւսիս-արեւմուտքը կ'իյնար թուրքերու թաղը եւ ծանօթ էր Տափկներու քաղ անունով, ուրկէ կը սկսէր Յարի ձորի գեղատեսիլ բլրահովիտը: Պաղ ջուրով նշանաւոր աղբիւրին դիմացը, քով քովի, ուղիղ գծի մը վրայ շինուեցաւ Մուխաթիքներու թաղը: Այս մուսաճիրները 1905-6-ի Կովկասի հայ-թաթարական ընդհարումներուն հետեւանքով դաղթելով՝ եկան եւ հաստատուեցան հոս եւ ուրիշ հայաբնակ գիւղերու մէջ: Սուլթան Համիտի գահակալութեան գուլումի օրերուն էր, որ այս մուսաճիրները եկան Խընու. կառավարութեան հրամանով եւ պարտադրանքով՝ աշնան երկու ամիսներուն, եւ ամբողջ ձմեռը՝ մինչեւ դարուն, հայերու տուներուն մէջ բնակեցան եւ կերակուեցան, թէ՛ իրենք եւ թէ՛ իրենց անասունները: Գարնան՝ երբ կառավարութեան օգնութեամբ հայոց կալուածներուն վրայ բռնութեամբ տուներ կը շինէին, մեծ կոիւ տեղի ունեցաւ իրենց եւ հայերու միջեւ. կոիւի ընթացքին գիւղի տաճիկներէն ոմանք մուսաճիրներու կողմը բռնեցին եւ մասնակցեցան կոիւին: Կոիւը ստացաւ հայ-թրքական-թաթարական ընդհարումի բնոյթ:

Մուսաճիրները կը կուռէին հարայի ըսուած երկար փայտէ մահակներով, որոնց ծայրը գունդ էր եւ գամերով ծածկուած: Հայերը կը կուռէին սովորական ձեռնափայտերով, կամ ձեռքերնին անցած որեւէ փայտով կամ քարով: Կոիւը սկսաւ իրիկնամուտի պահերուն: Շարաթ օր մըն էր, այդ պահուն եկեղեցւոյ մէջ ժամասացութիւն տեղի կ'ունենար: Գուրսի աղմուկէն ժամուրները իրարանցումի մատնուեցան: Ժամկոչ Արրահամը խոյացաւ դէպի եկեղեցւոյ դասը, եւ Տէր Սողոմոն քահանային յայտնեց թէ մեծ կոիւ է, հասէ՞ք, հայերն ու մուսաճիրները զիրար կը սպաննեն: Քահանան դադրեցուց ժամասացութիւնը եւ դառնալով ժողովուրդին, փոխանակ «Երթայք խաղաղութեամբ», ըսաւ հասէք կոռուողներուն օգնութեան եւ կոռուեցէ՛ք: Տէր Սողոմոնը եւ հայրիկս՝ Յովհաննէս Մելիքեան դուրս գալով եկեղեցիէն, բարձրացան Սիմօ Ըռքէի տան տանիքը, ուրկէ կը տեսնուէին կոռուողները,

որոնք Թուխ Մանուկի մատուռի քովէն սկսած էին կոիւը եւ իրարու գլուխ ու թեւ կոտրելէն արեան հետքեր թողելով, իջած էին ձորը, հասարակաց ճամբուն վրայ, գիւղին ձիթհանքին եւ աղբիւրին առջեւը, ուր կոռուողներուն օգնութեան հասնողներուն թիւը երկու կողմէն կը բազմանար: Մուսաճիրներու: գլխաւորները կը հրահրէին կոիւը սաստկացնելու համար, որուն ի լուր, Տէր Սողոմոնը, հայրիկս եւ Սիմօ Ըռքէն խոհեմութիւնը եւ խաղաղութիւն հաստատելու խօսքերը մէկզի ձգած, սկսան բարձրաձայն պոռալ եւ բոլորը կոիւի մղել, նոյնիսկ կանանց հրահանգելով որ կոռուողներուն փայտ ու մարթակ, կեռ, ակիշ եւ խաչերկաթ հասցնեն, նոյնիսկ մանկիկոն (մանուկաղ) ու գերանդի տանին: Հետզհետէ մութը վրայ կը հասնէր: Մուսաճիրները լաւ ծեծ մը ուտելով, գլուխէն եւ թեւէն բազմաթիւ վիրաւորեալներ ունենալով, փայտի կոիւէն պարտուած դիմեցին զէնքի: Հայերը նմանապէս դիմեցին զէնքի, քանի մը համազարկերէն ետք, զէնքերու ձայները դադրեցան: Մուսաճիրներն ու թուրքերը իրենց թաղը քաշուեցան, հայերն ալ իրենց տունները քաշուեցան, սպասելով նոր յարձակումի, սակայն կոիւը չփրկուեցաւ: Թուրքերը լուր զրկած էին Խնուս բերդը եւ կառավարութեան յայտնած, թէ Փետայիներ լեցուած են գիւղը եւ իրենց հետ կոիւ ունեցած են: Կէս գիշերը անցած էր, սուարի ասկեարը (հեծելազօրք) գիւղը պաշարեց, սակայն գիւղը չմտաւ մինչեւ առաւօտ. ու երբ արեւը սկսած էր հորիզոնին վրայ բարձրանալ, այն ատեն զինուորները գիւղ մտան, սկսան հայոց տունները խուզարկել և ձերբակալել առաջին հերթին գիւղին երեսիլիները, և անոնք որոնք մատնուած էին թուրքերէն: Չերբակալուածները Խնուս բերդ տարուեցան. անոնցմէ ոմանք ծանօթ թուրք պաշտօնեաներու բարեխօսութեամբ եւ կաշառքով ազատուեցան, իսկ մեծամասնութիւնը բանտարկուեցաւ: Բանտարկուածներէն ոմանց թեթեւ բանտարկութեան պատիժ տրուեցաւ, իսկ քանի մը հոգի ալ ծանր պատիժի ենթարկուեցան Կարնոյ Կեղրոնական բանտը զրկուելով 101 տարուան վճիռով: Այս ծանր պատիժով բանտարկուեցան Տէրտրոջ Գասպարը եւ Բատուհանի Մաթոսը:

1908-ի Օսմ. Մահմանադրութեան առաջին օրերուն իսկ, հայերու կողմէ յայտնի եւ գաղտնի միջոցներով մուսաճիր թաթարները վտարուեցան գիւղէն եւ տուններին ալ քանդուեցան: Այս վտարման ու տուներու քանդումին՝ գիւղի բնիկ թուրքերն ալ օգնեցին, որոնք նախանձով լեցուած էին մուսաճիրներու հանդէպ, եւ գիւղը աղատուեցաւ անոնցմէ:

Գիւղին առջեւէն կ'անցնէր Խնուս գետը կամ Արածանին: Այստեղ իրարու կը խառնուէին երեք ջուրեր— Դանէլ գետ, Դեղթափի ջուր եւ Խնուս բերդի մէջէն անցնող Խնուս գետի ջուրը: Գետախառնումի միացման կէտին վրայ կային բազմաթիւ քարաբլուրներ արտասովոր երեսոյթով: Այս քարաբլուրները Հարամիկ եւ Քաղքիկ գիւղերու սահմանամէջն էին: Հարամիկ գիւղի սահմանին մէջ ինկող քարաբլուրներուն մէջ, եղեկներով եկերուած լճակ մը կար, ուր կը գտնուէին ջրային բազմաթիւ վայրի թռչուններ, որոնցմէ նշանաւոր էին գունաղեղ բազերն ու սապերը, զորս որսալու կ'երթային մերձակայ գիւղերու թռչնորսները: Լիճին մերձակայքը կը գտնուէին Խաչ

Քարեր ըստե՛ս երկու հսկայական խաչարձաններ, որոնց վրայ քանդակուած էին կղերականի նկարներ մական ի ձևովին, չաթալ թաղ ի գլխին. քառաթեւ եւ ճաճանչաւոր խաչերով եւ խաղողի ողկոյղներով երկրուած : Այս վայրը ուխտատեղի էր, ուր ուխտի կու գար ժողովուրդը զանազան առիթներով : Այս խաչքարերուն մերձակայքը, արտի մը մէջ, հարամիկցի Իրիցու Կարապետի Պետոն կը գտնէ եկեղեցական հին անօթներ եւ սկիւրքամաներ : Երբ տուներ կը բերէ, միեւնոյն գիշեր երազ կը տեսնէ եւ Պաշ Քարերու սուրբը իրեն նը կը բերէ, միեւնոյն գիշեր երազ կը տեսնէ եւ Պաշ Քարերու սուրբը իրեն նը կը բերէ, թէ այդ անօթները եւ դրամը պէտք է վերադարձնեն իր տեղը, կը յայտնէ, թէ այդ անօթները եւ դրամը պէտք է վերադարձնեն իր տեղը, կը յայտնէ, թէ այդ անօթները եւ դրամը պէտք է վերադարձնեն իր տեղը, կը յայտնէ, թէ այդ անօթները եւ դրամը պէտք է վերադարձնեն իր տեղը, կը յայտնէ, թէ այդ անօթները եւ դրամը պէտք է վերադարձնեն իր տեղը, կը յայտնէ, թէ այդ անօթները եւ դրամը պէտք է վերադարձնեն իր տեղը :

Պաշքարերուն մօտ նաեւ կար տաշուած, հարթ եւ հսկայական գնար քար մը. կենթադրուէր թէ այդ քարին տակ գանձ թաղուած կայ, որուն համար Յակոբ Մուրատեան (Պարբերդ հիւսէյնիկցի) ոպեհարցութեան փորձերով ջանաց գանձին տեղը գտնել, պեղումներ ալ կատարեց, սակայն բան չգտնուեցաւ : Այս քարարւուրներուն մէջ կը գտնուի նաեւ Օձի խաղիմա անունով ծանօթ բլուրը, ուր ամէն տարի Համարձման տօնին ժողովուրդը այցի՝ կամ ինչպէս սովոր էին ըսելու ուխտի կ'երթար. այս քարարւուրին վրայ առաւօտեան արեւածագին՝ անհաշիւ սեւ օձեր կը յայտնուէին : Ասոնք վրայ առաւօտեան արեւածագին՝ անհաշիւ սեւ օձեր կը յայտնուէին : Ասոնք վրայ առաւօտեան արեւածագին՝ անհաշիւ սեւ օձեր կը յայտնուէին : Ասոնք վրայ առաւօտեան արեւածագին՝ անհաշիւ սեւ օձեր կը յայտնուէին :

1916-ին, ուսումնական պատերազմին, ուստական բանակին ինտուր գրաւած շրջանին, ազգայնորակ տերուանդ Լալայեան ինտու կ'այցելէ : Այս քարարւուրները ուսումնասիրելով, կը հետեւցնէ թէ խարտիներու պատմութեան հետքեր կը գտնուին անոնց մէջ :

Գիւղին մօտակայ բլուրի մը գարատափին վրայ՝ որուն ճամբան գիւղացիք Սէլի Մուրուք կ'անուանէին, իսկ վայրը՝ Չաղրղան, ծառեր եւ աղբերակ մը կային. ըստ աւանդութեան, հոս ապրած են նախամարդուն՝ Աղամի երկու որդիները, եւ այդ պրակ մը ծառերը՝ Կայէնի ծառեր, իսկ կարկաշա-հարկու որդիները, եւ այդ պրակ մը ծառերը՝ Կայէնի ծառեր, իսկ կարկաշա-հարկու որդիները՝ Աբէլի Յաղբուր կ'անուանէին : Ուխտատեղի էր այս բլուրը, ուր կ'երթային հայեր, ինչպէս նաեւ քրիստոս եւ թուրքեր անխտիր, իրենց ցաւերէն բուժուելու հաւատքով, եւ որպէսզի ուխտերնին ընդունելի ըլլար, իրենց հապուտներէն լաթի կտոր մը կը կարէին ու կը կապէին ծառերուն :

Գիւղին բնապատկերը հիանալի էր, մանաւանդ գարնան, երբ դաշտ ու դուրան, արտ ու արօտատեղի երկներանց ծաղիկներով, գունազեղ կանաչներով ու թուփերով զգեստ պճնազարդ յաւերթահարսի մը կը նմանէր. դիտողը կը սքանչանար : Բնութեան այս զլլխիչ երեւոյթին կը միախառնուէր Պինկէօլի հազարան-բլրալիներու երգը, բարի հովիւին սրինդին դիւթական ձայնը, եւ բարձրիկ սարերու դարնանային սուրբ ու սերտութիւնը :

Գիւղը հարուստ էր կաւի եւ կաղճինի հանքերով : Բրուտները այս դեղնորակ կաւին կը խառնէին ինքի գիւղի կաւահանքէն բերուած կարմիր կաւը եւ կը շինէին տնային գործածելի խեցամաններ — կուժ, կոտիկ, քասա, բլիկ, պուտուկ, ջրոս, կարաս, ձձուձ (խոնց), եւայլն : Կաղճինը կը գործածէին լուացքի տան. անով թէ՛ լաթեր կը լուային եւ թէ՛ լոպանքի տան մագեր կը լուային. կանայք մասնաւորապէս կաղճինով կը լուային իրենց վարսերը, որովհետեւ կաղճինը թէ՛ մորթի առողջութիւն կու տար եւ թէ՛ մազի տեսքը կը գեղեցկացնէր, մասնաւոր փայլ տալով անոր :

Գիւղը ունէր ստոնորակ երկու մշտահոս աղբիւրներ. կար նաեւ Մեծ-Առուն, որուն ջուրը ամբարտակով մը հանուած էր գետէն՝ Չեւիբէ գիւղին առջեւէն. ինտու գեղ հայկական աւերակ գիւղին վրայով կու գար, թէ՛ արտերը կ'ոռոգէր եւ թէ՛ երկու ջաղացներ կը դարձնէր՝ Մուրատի եւ Սալմա-նի ջաղացներ, ու կ'երկարէր մինչեւ Շապատին գիւղին դիմացը ու կը թափէր գետը :

Արգասարեր արտերու եւ գալարագեղ մարգագետիններու սահմանը շատ ընդարձակ էր. մէկ կողմէն կը սկսէր Բուրհան քրտարնակ գիւղին առջեւէն, երկարելով մինչեւ Սպիտակ-սարի փէշերով՝ կը հասնէր դէպի դաշտի Շապատին եւ Մարուք գիւղերու սահմանները. իսկ միւս կողմէն կը սկսէր Չեւիբէ գիւղէն դէպի Ելպիս գիւղը, անկէ Գուսնովտանի շրջանով մինչեւ Պալչաուը եւ Քաղքիկ գիւղերու սահմանները :

Հետեւեալ անուններով ծանօթ էին արտերն ու մարգագետինները — Սեւ հողեր, Յակոնտան, Բանադրէժներ, Գուսնովտան արտեր, Քրոնի արտեր, Ուլուս ձորու արտեր, Յոբի ձորու արտեր, Լակլակու դարի արտեր, Չաղցի վիզի ջրարրի արտեր, Գեղի վերի Աղբիմ արտեր, Չրքօ չայիբներ, Խալջով ձորու չայիբներ, Խնուս գեղի չայիբներ եւ ուրիշներ :

Գիւղը ունէր եկեղեցի, երկու վարժարան, եւ բողոքականաց ժողովարան մը. այս ժողովարանը բաւական խոշոր շէնք մըն էր. կը գործածէին որպէս դպրոց եւ ժողովարան-աղօթատեղի : Բողոքականաց դպրոցը երկսեռ էր. անոր ծախքերը կը հոգար էրզրուժի Ամերիկեան միսիոնարութիւնը : Բողոքականութիւնը մուտք գտած օրէն (1840) մինչեւ 1915, միշտ ալ ունեցած են բարձր կրթութեամբ քարոյիչ-դաստիարակներ. Պատ. Սիմոն Դաւիթեան (սասունցի), Պատ. Պօղոս Քարահատեան (պիթլիցցի), Պատ. Մատթէոս Հովիտեան, քարոյիչ-ուսուցիչ՝ Արշակ Թիւթիւնձեան (երզնկացի), Պատ. Թաղևոս Աուկասեան (երզնկացի) : Արշակ Թիւթիւնձեան Սահմանադրութեան շրջանին Հարամիկին փոխադրուեցաւ ինտու բերդ, եւ այդ տարիներուն բազմաթիւ թղթակցութիւններ գրած է ինտուի մասին Կարնոյ Յառաջ թերթին մէջ : Ա. Թիւթիւնձեան յեղափոխական խառնուածքով, ազատամիտ եւ հայրենասէր մարդ էր : ինտուի տարեկրութեան հետ իր անունը սերտիւ կապուած է ու անմոռանալի պիտի մնայ :

Առաքելական եկեղեցւոյ յարակից Սբ. Սահակեան վարժարանը կը հոգացուէր մասամբ Պոլսոյ Հայոց Ազգային Պատրիարքարանի նպաստով, մասամբ ալ աշակերտներու՝ ունեւորներու թոշակով : Պատրիարքարանի նը-



Պաշտօնավարած է Մարզուանի Ամերիկեան գոլէճը: Տարագրութենէն ճո-  
զսպրեւոյ՝ առեն մը պաշտօնավարած է Պոլիս, ապա Յունաստան՝ Աթէնքի  
Ամերիկեան գոլէճը, ուրկէ կ'անցնի Հարաւային Ամերիկա, անկէ ալ Ամերի-  
կայի Միացեալ Նահանգները: Միրազենցի հայրը՝ Պատ. Մուրատ Միրազ-  
եան, որ իր կրթութիւնը կ'առնէ Պոլսոյ իրաւարանական վարժարանը,  
1880-ական թուականներուն կը նախընտրէ վերադառնալ հայրենիք եւ պաշ-  
տօնավարել որպէս քարոզիչ-վարժապետ՝ իր ծննդավայր Հարամիկի եւ անոր  
մերձակայ Չեւիրմէ գիւղերուն մէջ:



Փրոթ Վահան Միրազեան

1913-ին Սահմանադրութեան օրերուն Աւետիս Մանուկեան եւ իր կինը  
Աղաւնին (Միրազեանի աղջիկ), իրենց կրթութիւնը Մարզուանի Ամերիկեան  
գոլէճէն ստացած, նախընտրեցին իրենց հայրենի գիւղը, եկան եւ լծուեցան  
ուսուցչական պաշտօնի. նոյնպէս եւ Աւետիսի եղբայր Մարտիրոսը, որ կըր-  
թութիւնը էրզրումի Ամերիկեան բարձրագոյն վարժարանէն ստացած էր,  
նախընտրեց Չեւիրմէ գիւղին վարժապետութիւնը: Ասոնք կը սերէին թոն-  
դրակեցի աղանդաւոր Գաղանձի Գէորգի սերունդէն: Երկու եղբայրներն ալ  
զոհ պացին 1915-ի մեծ եղիոնին, սպաննուելով գիւղին մէջ: Գարեգին Տէր  
Սողոմոնեան, կրթութիւնը ստացած Մշոյ Ներսէսեանէն, նախընտրեց գիւ-  
ղին վարժապետութիւնը, ինչպէս նաեւ կուսակցական ու հանրային գործի-  
չի հանրանուէր ասպարէզը: Կարճ ժամանակով Պոլիս ալ այցելեց, եւ վերա-  
դարձաւ աւելի ջերմ խանդով ու եռանդով գործի լծուելու: 1915-ի ղէպե-  
րուն ինքնապաշտպանութեան համար կռուող խումբի մը ղեկավարը զար-  
ձաւ, եւ թողու գիւղի Աւերակ ճաղացի կոիւին նահատակուեցաւ: Արտաշէս  
Մուրատեան, կրթութիւնը ստացած Արմաշի դպրեւանքը, սակայն առանց  
կղերական սքեմ հազնելու՝ վերադարձաւ հայրենիք, առեն մը ուսուցչու-  
թիւն ընելով Պալչատու գիւղին մէջ, ապա ընտանեկան դժբախտ ղէպքի մը  
հետեւանքով անցաւ Կոփկաս, Սեւ ծովի ափին Սոխում քաղաքը, ուր առեն  
մը ուսուցչութեամբ զբաղելէ ետք, ձերբակալուեցաւ որպէս դաշնակցա-  
կան, եւ պատերազմի ընթացքին բանտէն ազատուելով, 1917-ին Կարին գի-  
րար դասնք, ուրկէ անցաւ Խնուս, ուր պաշտօնի կերպով ասպատակային  
խումբ մը կազմելով, դարձաւ Խամուր բերդի եւ Պինկէօլի քերտերու ար-



Աւետիս Մանուկեան

հաւիրքը: Հայաստանի Հանրապետութեան շրջանին, ներքին դաւադիր տար-  
բերու մաքրագործման աշխատանքին իր մասնակցութիւնը բերաւ Շորակեա-  
լի շրջանին մէջ: Քրտական ապստամբութեան շրջանին՝ Պարսկաստանէն ան-  
ցաւ Արարատի շրջանը, եւ դարձաւ ապստամբներու ղեկավար՝  
չէյի Ջիւլան անունով: Իր լուսանկարը քրտական տարագով կը  
տեսնուի 1928-ին Ամերիկա հրատարակուած քրտական «Հօյպուն»ի  
կողմէ «Տը Քէյս աւ Քիւրտիստան րիէնսք Թըրքի» գիրքին, էջ 57-ի  
խմբանկարին մէջ՝ Պէտրիաններու հետ: Հետագային խաբէութեամբ  
բոլշեւիկներէն ձերբակալուելով՝ հայ-պարսկական սահմանին վրայ, կը  
բշուի Միսիր: Ժամանակին չկիրստ Աղարէկովը զրեց թէ ինչպէ՛ս համայնա-  
վարները՝ սպառնալիքով եւ խաբէութեամբ, Արտաշէսի մեծ եղբայրը՝ Լե-  
ւոնը կը զրկեն հայ-պարսկական սահմանը եւ ծուղակ լարելով եղբոր միջո-  
ցաւ եղբայրը կը ձերբակալին եւ Արտաշէսը կը քշեն Միսիրի սառնամանիքը:

Հարամիկցին Ամերիկեան բողոքական միսիոնարներու միջոցաւ Ամե-  
լիքանի ճամբան ալ կը սորվի: 1877-ին գիւղէն առաջին անգամ Ամերիկա  
պանդիտողը կ'ըլլայ Պետրոս Գէորգեան (Գեւո-Պետոն), որ կը հաստատուի  
Պոսթըն քաղաքը, ուր ճաշարան մը բանալով, յաջող գործ կ'ունենայ: Տա-  
րիներ ետք, 1892-ին կամ 93-ին, բաւական մեծկակ գումարով մը կը վերա-  
դառնայ հայրենիք, բայց 1895-ի ղէպերուն հետեւանքով նորէն կը թողու



Արտաշէս Մուրատեան (ֆրսական տարագով), կանգնած ձախէն առաջինը:

Հայրենիքը, կ'երթայ Կովկաս, Սեւ ծովի ափերուն՝ Թուխապսէ քաղաքը եւ տարիներ հաջ, Սահմանադրութեան շրջանին, ընտանիքը եւ երկու տղայ զաւակները քովը տանելով հոն կը հաստատուի: Պետոն ամուսինն էր մեծ հօրաքրոջս՝ Փալոյի. իր զաւակներէն՝ Սեղրակը այժմ կ'ապրի Ֆրանսայի Մարսէյլ քաղաքը:

Հետզհետէ գիւղէն Ամերիկա կը մեկնին Առաքել Յովհաննէսեանի (Հըլլօ Ըռքէ) եւ իր եղբոր՝ Պողոսի զաւակներէն Սահակ (Քեռի), Յովհաննէս, Դաւիթ, Մկրտիչ, Լինան, որ ամուսնացած կ'ըլլայ խարրերդցի Պատ. Գարեգին Զիթչեանին հետ, Պողոսի թոռը՝ Սողոմոնի տղան՝ Յարէթ, եւ մայրը Մայրամ, մօրեղբոր կինը՝ Գիւլալ (Սիմօ Պետոյի աղջիկ): Մուրատեան Կարապետի (Առաքել Յովհաննէսեանի փեսան) տղաք՝ Յարութիւն, Մուրատ եւ Գրիգոր՝ ծանօթ ճորճ Մուր անունով, Միրապեան Հայկ եւ Արամ, Մելիքեան Տիգրան, Աղէկեան Աղեքսանդր եւ Գեղամ: Գասպար Կարապետեան (Տընկոփ Սերոբի տղան): Թուիկ (Միրապեան) Պէրպէրեան, Մուշեղ Պանամիրեան, Սիմոն Սեղրակեան (Մհերի Պուռչուտի տղան Սանտրիկ):

Համիտեան զուլումի օրերուն պանդխտութեան կ'երթային Կովկաս՝ Պարս քաղաքը: Հոն կ'ապաստանէին նաեւ այն յեղափոխականները, որոնք թուրք կառավարութեան կողմէ ֆիրաք կոչուելով կը հետապնդուէին եւ կը հալածուէին: Այդպիսի ֆիրաք-պանդխտներ էին՝ Մուրատեան Յակոբ եւ իր տղան՝ Տիգրան, Մելիքեան Վահան վարժապետ, Բաղուհանի Դաւիթ: Միրզօ Բենոն, Սեթոն եւ Աւետիս: Գրպէ Մխիկ: Գեւէ Մօսոն: Մելիքեան

Արշակ: Գեւօ Միսակ (Տըֆթօ), Գարկ-Մուրատի Մուշեղ, որ 1906-ին Թիֆլիզի հայ-թաթարական կռիւներուն՝ հերոսարար կոուելով, թաթար մոլլայի տունը կրակի տալով, նոյն պահուն Կոնոռի սարին բանակած ուս կողաքներէն կը զարնուի: Իր մահը կը սպայ Թիֆլիզի հայութիւնը: Կը թաղուի Հաւլարբարի հայոց դերեղմանատունը եւ վրան շքեղ կրանիթէ դամբարան մը կը կանգնուի: Սահմանադրութեան շրջանին ֆիրաք-պանդխտները երկիր վերադարձան: Արշակ Մելիքեան եւ բրուտ Սաֆարի Մուշեղ հոն մնալով պատերազմի ընթացքին կը միանան Հայկական Կամաւորական շարժման՝ Անդրանիկի բանակին մէջ:



Եղիշէ՛ Շահվալատի Սամսունի տղան

Յեղափոխութեան շրջանին իրրեւ յեղափոխականներ զործած եւ հանրածանօթ դառնալով՝ թուրք կառավարութեան կողմէ հետապնդուելով ձերբակալուածներն էին՝ Կարապետի Պետոն՝ Քեռի ծածկանունով, Վահան վարժապետ Մելիքեան՝ հետապալին՝ Սահմանադրութեան շրջանին՝ Տէր Վահան քհնյ., Բաղուհանի Մաթոս, Տէրտրոջ Գասպար՝ զարթիա Սարգիսի տղան, Մհերի Սեղրակ, ուստա Յակոն: Ասոնք բանտարկուած էին Կարնոյ Կեղրոնական բանտը (Տաշխան) 101 տարուան վճիռով, եւ բանտէն ազատուեցան Սահմանադրութեան հռչակումով: Կային երեք հայ զարթիաներ՝ զարթիա Սարգիս, իր եղբայրը՝ Շահվալատ, եւ տղան՝ Միսակ: Զարթիա Սարգիս քիւրտերու հետ ունեցած կռիւի մը ընթացքին կը սպաննուի: Քաջ ուղմիկ



մը եղած է: Իր շիրմաքարը՝ գերեզմանատան մէջ, կը ներկայացնէր արձա-  
նածե այր ու ձի մը զրահարարձ, եւ վրան փորագրուած էր. «Ես կ'ըսէի թէ  
ես եմ. այն ուր կ'ըսէ թէ ես եմ, կ'ըլլայ ինծի պէս, ինչպէս որ ես եմ»: Շահ-  
վալատ եւ Միսակ խիստ դաղտնապահութեամբ կ'օժանդակէին յեղափոխու-  
թեան:

Նախասահմանադրութեան զուլումի օրերուն, անկամ մը ջանալէգար-  
ներ զիւրը եկած, մեր տունը հիւր իջած էին. կը գտնուէին այն հիւրասեն-  
եակը՝ զոր հայրս մեր դրացի Միսո-Գոսպէ Յովոյէն վարձած էր, մասնաւո-  
րապէս այգւիսի հիւրերու համար: Ջանալէգարները յանկարծ կը յարձակին  
հօրս վրայ եւ կը փորձեն զայն խեղդել: Նոյն պահուն մեր ծառան՝ Ղպտու  
Սարգիս փոստով կերակուր կը տանի հիւրերուն. կը տեսնէ թէ սենեակի  
դուռը փոցուած է եւ հօրս օգնութեան աղաղակը կը լսէ: Կը փորձէ դուռը  
բանալ, բայց չկրնալով կը սկսի պոռալ եւ օգնութիւն կանչել: Այդ պահուն  
հօրս հօրեղբայրը՝ Բաղտասար ամուն կը հասնի եւ դուռը խորտակելով,  
կ'ազատէ հայրիկս: Ջանալէգարները սակայն հայրս ձերբակալելով, ուղեցին  
գիւղէն դուրս հանել, որպէս թէ մօտակայ Մարուֆ գիւղի գորտոնը (պահա-  
կանոց) տանելու, Բաղտասար ամուն, Գասպար հօրեղբայրս, մայրս հետե-  
ւեցան հօրս, ես ալ իրենց ետեւէն կ'երթայի. գիւղէն դուրս ելած էինք եւ  
հասած Չաղղան, ուր Սէլի Մուրուք ըսուած ճամբան երկուքի կը բաժնուէր:  
Յանկարծ նկատեցինք որ դէմէն՝ Շապատին գիւղի կողմէն, երկու զարթիա-  
ներ կու գային: Ասոնք զարթիա Շահվալատն ու Միսակն էին: Նկատելով որ  
հայրս Ջանալէգարներէն շրջապատուած է, անմիջապէս հեռուէն պոռացին  
անոնց, որ կանգ առնեն, հակառակ պարագային պիտի կրակեն իրենց վրայ:  
Ջանալէգարները առաջին սպառնալիքին կարեւորութիւն չտուին, սակայն  
երկրորդ սպառնալիքին հետ երբ օդին մէջ կրակ բացին, Ջանալէգարները տե-  
ղի տուին: Եկան Շահվալատն ու Միսակը, եւ հայրս ազատելով՝ գիւղ վե-  
րադարձանք:

Մեր օրերուն գիւղին մէջ հետեւեալ նշանաւոր դէպքերը պատահե-  
ցան: Տիգրան Մուրատեանի եւ գիւղացի թուրք ասկեար՝ Փալուլ օնպաշիի  
կռիւր: Գիւղի ռէս Մարգարի (Շէպօ) սպանութիւնը Կորիւնի՝ (Գոմասայ Իսօ)  
կողմէ: Ճարխատիւնի եւ Օզմանի Այիի, երկու աղաներու կռիւր, գիւղին տի-  
րանալու համար: Հարուստ հայ կուլան աղայի հացահատիկներու՝ ցորեն եւ  
զարի՝ բոնազրաւումը գիւղացիներէն, երբ փոխադրութիւնը տեղի կ'ունե-  
նար գիւղի վրայով, թանգ տարի էր, հացահատիկը սուղ էր, եւ զրեթէ սով  
կը տիրէր:

Սահմանադրութեան օրերուն՝ 1910-ի դարնան, Խնուս բերդի մէջ Խա-  
լօ Մելքոնի Արամի եռայարկ շէնքին փլուզումով մահացումը գիւղի երկու  
քահանաներուն՝ Տէր Վահան քհնյ. Մելիքեանի եւ Տէր Թորգոմ քհնյ. Տօնա-  
պետեանի ու ռէս Պետոյի, որոնց մարմինները սպաւորներու մեծ բազմու-  
թեամբ բերուեցան գիւղ եւ թաղումը կատարուեցաւ:

1914-15-ի դէպքերու յիշատակութիւնը դանց կ'ընենք, որովհետեւ ա-  
տիկա մաս կը կազմէ «Խնուսի ջարդը եւ տեղահանութիւնը» զատ գլուխի մը:

Գիւղացիներու զբաղումը զլիաւորաբար երկրագործութիւն եւ խաշ-  
նարածութիւն էր:

Կային 5 խանութպաններ, որոնք տեղական պահանջքին համաձայն  
ապրանքներ կը ծախէին: Գլխաւոր առեւտուրը հագուստեղէնի, հիւսուածե-  
ղէնի կտորներու վրայ կ'ըլլար. երկրագործի գործիքներու եւ թեթեւ նպա-  
րեղէնի վրայ ալ գործ կ'ընէին: Կային 3 դերձակներ, վարպետ քարակոփ-  
ներ, որոնք Սահմանադրութեան շրջանին Կովկասէն վերադարձողներ էին:  
Ոնցամաններ պատրաստող վարպետ բրուտներ ամբողջ գաւառին մէջ նշանա-  
ւոր էին: Անոնց նախնիքները Մուշէն գաղթած եկած եւ Հարամիկ հաս-  
տատուած էին: Այդ ընտանիքներն էին՝ բրուտներ Գարէ Մուրատի տուն,  
Կապոյի (կոյր Կարապետ) տղաք Գալուն ու Սեդոն, Պուշանի տղաք՝ Սաֆարն  
ու Սահակ իրենց զաւակներով: Կային հանրածանօթ պարերգակ-խաղասաց  
Արրօ Շանոն եւ Կնոն, երկու եղբայրներ, ինչպէս նաեւ յազրցի Կարապետի  
տղան՝ Յովսէփ, աւելի ծանօթ Տնկոի Կոթէ: անունով: Երկու աշուղներ, ա-  
չազուրկ Աշուղ Ղազար, եւ հեքիաթ սասց Ոսկերիչ Կնոն (Տամպուրաճի-  
Աշուղ): Գիւղի անգրագէտ բանաստեղծ ու պատրաստարան-առակախօսն էր  
Սամէլի Սանոսը: Ան կ'առակախօսէր հայերէն, թրքերէն ու քիւրտերէն լե-  
զուներով: Հետեւեալը օրինակ մըն է իր առակախօսութենէն, զոր հարսա-  
նիքի մը առթիւ, երբ երկու ինամիներու միջեւ՝ առաքելական եւ բողո-  
քական յարանուանութեան պատկանելուն առթիւ, վէճ կը ծագի, քահա-  
նա՞ն, թէ պատուելի՞ն պսակի արարողութիւնը կատարելու համար՝ կ'ըսէ.—  
«Կուստո, դու խրապ պուի, սէ քէշիշ, ու տու ժամկոչ տէտա պուի, եֆի ռիէ  
պար է, եֆ ժի հըրտու ճաւան կար է. մէհիտեաֆի դան, աւ ժի նապարէ»:  
Այսինքն՝ գիւղ, դուն աւեր դառնաս. երեք քահանայ եւ երկու ժամկոչ ու-  
նիս, մէկ քհնյ.ի մօրուքը ձերմկած է, միւսին ալ երկու աչքերը կոյր են,  
ժամկոչին միճիտիէ մը տուին, ան ալ սուլուկ է:

Գիւղին՝ ու նոյնիսկ ամբողջ գաւառին մէջ, ամենէն նշանաւոր խաղա-  
մոլը Բադասն էր:

Գիւղին նշանաւոր ընտանիքները՝ մօտաւորապէս երեք քառորդ դարու  
ընթացքին, հասնելով մինչեւ 1915-ի մեծ եղեռնը, հետեւեալներն էին — Մե-  
լիք Պողոսի տունը, Իրիցու՝ Տէր Գէորգի տունը, Միսօ Գոսպէ տունը, Հըլօ  
Ըոքէի տունը, Գապանճի Գէորգի տունը, Միրայի տունը, Սիմօ Ըոքէի տու-  
նը, Միրցօ Տունը, Բաղուհանի տունը, Մհերի Ուուշուտի տունը, բրուտ  
Գարէ Մուրատի տունը, խարբերոցի Կարապետ Մուրատեան եւ Յակոբ Մու-  
րատեան: Խորեքցի երեք եղբայրները՝ Սահակ (Շէպօ), Մարգար (Քան-  
քառ), Յովոն (Քաքաճ). այս վերջինները գաղթած են Մշոյ Խորեք գիւղէն,  
ատոր համար ալ նոյն անունով ծանօթ էին:

Մելիք Պողոս նշանաւոր եղած է թէ՛ գիւղին մէջ եւ թէ՛ գաւառին մէջ,  
իր քաջութեամբ, հեղինակութեամբ եւ հարստութեամբ: Ժողովուրդը մե-  
լիքին հարստութիւնը սահմանելու համար կ'ըսէ եղեր, որ Մելիքի հարստու-  
թիւնը եթէ գետը լեցնեն, ջուրը իր ընթացքը կը փոխէ: Գազանճի Գէորգ  
եղած է թոնդրակեցի աղանդի հետեւորդ մը, եւ Պասքեւիչի բանակին հետե-

ւող զաղթականութեան հետ անցած է Կովկաս: Այդ շրջանին աղանդաւորներու դէմ սկսուած հալածանքին հետեւանքով վերադարձած է Հայրենիք՝ իր գիւղը: Գաղանճի Գէորդ ճանչցուած է եղեր որպէս տիրացու Գէորդ անունով եւս: Հրօ Ըոքէն՝ իսկական անունով Առաքել Յովհաննէսեան, իր ժամանակին կարողալ-գրել գիտցող մարդ, կը յարի բողոքականութեան: Իր միջոցաբողոքականութիւնը մուտք կը գանձ գիւղը: Իրեն գործակից կ'ըլլայ կոյր բողոքականութիւնը մուտք կը գանձ գիւղը: Իրեն գործակից կ'ըլլայ կոյր բողոքականութիւնը մուտք կը գանձ գիւղը: Ասոնց մասին Պատ. Սիմոն Գաւթեան իր «Օրաբրուտ Կարապետ» Կապօն: Ասոնց մասին Պատ. Սիմոն Գաւթեան իր «Օրագրութեան» մէջ այսպէս կը գրէ. «1856 Ապրիլ 8. (Հ. Տ.): Հարամիկէն Պրն. Առաքել եկաւ Բոփս՝ շատ խօսեցայ իրեն եւ քանի մը ազօրք գրեցի եւ տուի իրեն. խօսք տուաւ որ պիտի քանայ համոզել Կարապետին, որ ինք եւ ան յայտնուին (այսինքն բողոքականութեան յարին): Նուիրակը (Ս. Կարապետի, Ե. Յ. Մ.) գրգռեք է Առաքելին հայրը, որ իր գաւակը դուրս բնէ տունէն: Պրն. Առաքել գնաց իրենց գեղը եւ յայտնապէս մեծ պահքը կերաւ եւ խօսեցաւ իր ծնողքը ելան տունէն գացին ուրիշ գեղ, և կրկին դարձան իրենց տունը՝ ստիպեցին որ Պրն. Առաքել տունէն ելլէ, քանի որ իրենց կրօնքը չ'ընդունիր: Պրն. Առաքել աւ բաներուն չդիմանալով կրկին ետ դարձաւ. նոյն տոնն ան երկու անտարանականներուն բաւական նեղութիւն պատճառեց իր ետ դառնալը: Ապրիլ 23-ին Հարամիկէն կոյր բրուտը և նղիագար Բոփս եկան ու ինքզինքնին կատարելապէս յայտնեցին: Պրն. Առաքել իրենց հետ ծածուկ միաբանութիւն ունի, եւ խօսք տուած է կրկին յայտնուելու»:

Պատ. Սիմոն հետագայ էջերուն մէջ դարձեալ կը յիշատակէ Պրն. Առաքելը, եւ կ'ըսէ որ անիկա յարելով բողոքականութեան իր համախոհներով կը կազմէ բողոքական համայնք մը, դպրոց կը բանայ միսիոնարաց նիւթական օժանդակութեամբ, կը թուրիւնը կը տարածէ, թէ՛ իր զաւակներուն բարձրագոյն կը թուրիւնը կու տայ զանոնք զրկելով էրզրումի Ամերիկեան միսիոնարաց վարժարանը, եւ թէ խնուցի եօթը երկսեռ երիտասարդներ կը զրկէ միեւնոյն վարժարանը, որոնք բոլորն ալ կը զաւանս վարժապետներ եւ վարժուհիներ եւ կը պաշտօնավարեն էրզրում, Երզնկա, Քղի, Բասէն եւ Ալաշկերտ:

Առաքել Յովհաննէսեան խոր ծերութեան հասած, գիւղացիներէն կը կոչուէր Հայրիկ. մեռաւ 1903 թուականին: Թաղումը կատարեցին գիւղին երկու քահանաները եւ բողոքականաց պատուելին: Մեր առաքելական դպրոցի աշակերտները չապիկ հալած՝ Գասպար վարժապետի առաջնորդութեամբ մասնակցեցանք թաղումին: Մեր աշակերտներէն՝ Ֆրիսոյի տղայ՝ Միսակը, գերեզմանատունէն վերադարձած ատեն յայտնեց, որ ինք հրեշտակ մը տեսաւ Հայրիկի գերեզմանին վրայ, եւ թէ հրեշտակը ըսաւ որ դուն այս գիւղեր պիտի մեռնիս: Նոյն գիւղեր Ֆրիսօ Միսակ մեռաւ եւ ցերեկին իր թաղումը տեղի ունեցաւ:

Գիւղին թուրքերէն նշանաւոր ընտանիքներ էին, Սալման աղայի տունը, Մահմուտ աղայի տունը, Մուղտատ աղայի տունը, Հաճի աղան եւ իր տղան՝ Պալլատ աղան, Մուսա աղան եւ եղբայրը՝ Հաճի Արիֆ եւ Փարխատին աղան:



Երզրումէն խմբակար. Ա. կարգ. Եղիշէ Մելիքեան (գլխաբաց), Բ. կարգ Ժախէն աջ՝ Եղիշէ Խանամիրեան, Արտաշէս Մուրատեան. Գ. կարգ. Մուշեղ Խանամիրեան: Նկարուած 1917-ին:

Հարամիկ գիւղի մասին լայնօրէն անդրադարձած ենք, որովհետեւ նախ մեր ծննդավայրն է, երկրորդ այն պատճառով, որ ան մեր օրերուն նշանաւոր էր ազգային գործերու այլազանութեամբ-յեղափոխական, կրթական, հանրային, եւայլն:

Մեր ծննդավայր գիւղին մասին այս գրուածներու ընթացքին վերագարթնող յիշատակները մեր աչքերէն արցունք, սրտէն հառաչ խլած են, իսկ մեր շրթունքները զեհեհեհական անէծք հոլոված են բարբարոս տաճիկ-թուրքին...:

**ՄԱՐՈՒՖ**

Գիւղը կը գտնուէր տափարակ զաշտի մը վրայ, Արամանիի գետափին, 45 տուն հայ բնակչութեամբ: Ոստիկանական կեդրոն մը՝ գորտոն հաստատուած էր հոս, Խնուսէն Պուլանուխ գացող պետական փոստին դիւրութիւն ընծայելու համար. հոս կը փոխուէին փոստին ձիերը եւ ժանտարժանները:

Մարուֆցիները կը զրազէին հողադործութեամբ եւ խաշնարածութեամբ: Ունէին երկու ձիթհանք (ձիթղաց) եւ կ'արտադրէին առատ ձէթիւղ. ասոր համար կ'որակուէին «ձիթի ջրոտ, էտ մարուֆցիք»: Իսկ խոշոր եւ բարձրահասակ կազմուածք ունենալուն համար ալ կ'ըսէին «յերկէն չո- եւ բարձրահասակ կազմուածք ունենալուն համար ալ կ'ըսէին «յերկէն չո- քեր, էտ մարուֆցիք»: Մարուֆ անուան ստուգարանութիւնը կու գայ պարս- ֆեր, էտ մարուֆցիք»: Մարուֆ անուան ստուգարանութիւնը կու գայ պարս- ֆեր, էտ մարուֆցիք»: Մարուֆ անուան ստուգարանութիւնը կու գայ պարս- ֆեր, էտ մարուֆցիք»:

Մարուֆ անուան ստուգարանութիւնը կու գայ պարս- ֆեր, էտ մարուֆցիք»:

**Մ Ճ Ն Կ Ե Ր Տ**

Գիւղը կառուցուած էր ձորակի մը մէջ, գետակի մը եզերքին, Պինկէօլ սարի գեղածիծաղ լանջե- րուն, Խնուս բերդաքաղաքէն մօտաւորապէս ժամ մը հեռաւորութեամբ, դէպի հիւսիս-արեւմուտք՝ Կարին տանող հասարա- կաց ճանապարհին առնթեր:

Գիւղին դիմացը, գեղատեսիլ բլուրի մը վրայ, կառուցուած էր Սբ. Կարապետ անունով պատմական վանքը: Ըստ աւանդութեան, այս վանքը դաստակերան է Գրիգոր Լուսաւորիչի: Գրիգոր Լուսաւորիչ, երբ Սբ. Կա- րապետի մասունքը Կեսարիայէն Հայաստան կը փոխադրէ, իւրովի կ'ըսէ. «Ուր որ ֆերմակ ջորին առաջին անգամ ծուկ չոքի, հոն պիտի կանգնեմ վանք մը, եւ ամփոփեմ մասունքը սուրբին»: Այդպէս ըստ, այս մասին կը գրէ. «Իբրեւ եկին մօտ եղեմ ի գետն Եփրատ իբրեւ ձիւն արշաւանօք երկու, եւ դեռեւս ընդ փոքրածորակ մի անցանել կամէին ընդ ջուր մի սակաւ, ըզ- տեղի առին սպիտակ ջորիք կառացն, ուր կային գանձքն ան-ային՝ նշխարք անոցա. ոչ կարացին անցանել ընդ ձորակն: Եւ յայտնեալ հրեշտակ տեսան ա- սէ՝ Գրիգոր, հանեցաւ Տէր բնակել սրբոց Աստուծոյ ի տեղւոջդ» (Պոլիս, 1822, էջ 300): Երբ կը հասնին Մժնկերտի առջեւ, ձորակն ու ջուրը անցնե- րով, բլրակին վրայ ջորին չոք կը զարնէ՝ սակայն չի նստիր: Գրիգոր Լուսա- ւորիչ խոստումին համաձայն կը կառուցանէ այդ վանքը եւ կ'անուանէ սուր- բին անունով՝ Սբ. Կարապետի վանք:

Վանքը իր ժամանակին բաւական հարուստ կալուածներ ունի եղեր. իր շրջակայքի աւերակները, քանդակաւոր դամբանները վկաներ էին իր պատմական անցեալին: Խաչքարերէն ոմանք՝ երեք եւ կէս մեթր բարձրու- թիւնով, եւ երեք չորրորդ մեթր լայնութիւնով, կէս ընթեռնի արձանա- գրութիւններով. մեծագոյն խաչքարի մը վրայի թուականն էր 2Ա — 901 (1452):

Գիւղին եւ վանքին մասին, ուղեգիր Մ. Կ. Միրախորեան, այսպէս կ'արտայայտուի. «Ըստ աւանդութեան՝ «վանուցս շրջապատը ժամանակին քաղաք եղած է». արդարեւ ոչ ոք, կրնայ տարակուսիլ, երբ մի անգամ տեղ-

ւոյս հանգամանքներն ուշի ուշով դիտէ: Այս տեղի Սբ. Կարապետն՝ փայ- տեայ փոքրիկ դուռնէ մը ի դատ, ուրիշ բան մը չունի, որ յիշեալ գիւղի 8-10 տուն հայոց հետ, Տէր Յովսէփ ծերունի, այլ կրակոտ քահանայի՝ Տէրի Քէ- շիչ մականունեալ, պաշտպանութեան տակն կը գտնուէր, որում երբ այցե- լութիւն տալոյ պէտք զգացի, ինձ ջերմ փափաք յայտնեց վանուցս վերա- պայծառութեան մասին, ի շնորհս հանգանակութիւն մը, զոր ըրած, եւ քանի մը սենեակներու հիմունք դրած էր, եւ երկու կանգուն բարձրութեամբ բար- ձրը թողի վիճակի մէջ կը կենար: Այլեւորներէն տարեւորագոյնը ինձ պատ- մեց ասելով թէ. «Մեր վանքն ասկէ 50-60 տարի յառաջ՝ հողային բազմաթիւ կալուածներ ունէր. գիւղի մէջ հարուստ հողատէր եւ հանրածանօթ էր Ամ- բոյեան ընտանիքը: Ասոնց հողերէն լաւագոյնները թուրք կառավարութիւնը գրաւելով զինուորական մարզարանի եւ գորանցներու վերածեց» («Նկարա- պրական ուղեւորութիւն», Գ. հատոր, էջ 115):

Մժնկերտի հետ կապուած գեղեցիկ յիշատակներով կը համակուինք, վերջիչելով Օսմանեան՝ 1908-ի Սահմանադրութեան այն երջանիկ օրերը, երբ Խնուս բերդէն եւ գիւղերէն դպրոցական աշակերտներս ուսանելու հա- մար Կարին կ'երթայինք: Մեր կարաւանի մեկնակէտը, աշնան դպրոցական տարեշրջանի սկիզբին եւ տարեվերջի արձակուրդին՝ տուն վերադարձի հան- դրուանը, Մժնկերտի վանքի պատուանդանի հեղասահ գետակի եզերքին, բարտի եւ ուռիներու պուրակին մերձ՝ կանաչադարձ մարգարտինն էր: Հոս՝ ուսանողներու ծնողները, ազգական ու բարեկամներով հաւաքուելով, տոնական օրուան երեոյթը կը ստանար: Օճախներ կը վատուէին, սամավար- ներ կ'եռային, օղին ու աղանդերները սեղանները կը զարգարէին. կեր ու խում, երգ ու պար, դահուլ-գունդայի նուազը ձորը կը թնդացնէր մինչեւ լուսու աստղը ելլելը, երբ կարաւանը կը սկսէր շարժիլ. բաժանումի տը- խուր տպաւորութեան արտայայտիչ արտասուքներով այտերնիս ահօսուած իրարմէ կը զատուէինք, իսկ արձակուրդի առթիւ տուն դարձին՝ կ'ողջա- դուրուէինք:

Մժնկերտ ունէր 5 տուն հայ եւ 40 տուն քիւրտ բնակչութիւն: Գիւղա- ցիներու զլխաւոր զբաղումն էր՝ աշնանամուտին՝ փայտահատութիւն, աւե- լի ձիւղը մերձակայ պուրակներէն վառելափայտ կտրելով՝ վաճառել: Ա- մառուան ընթացքին Պինկէօլի սարէն ձիւնակոյտեր կամ սառոյց բերելով Խնուս բերդ, կը ծախէին: Տարուան ամէն եղանակին յարմար արապաճու- քիւնով ալ կը զրազէին: Գարուն, ամառ ու աշուն, եղան սայլերով փոխա- դրութիւնը կը կատարէին իրզրումէն Խնուս, մինչեւ Պուլանուի, Մուշ ու Բաղէչ: Ձմրան եղանակին, դառնիկ կամ բալիսիքներով փոխադրութիւն կը կատարէին, եղներով եւ կամ մարդկային ոյժով: Կառապաններու զլխաւո- րը՝ կտրիճ երիտասարդ մըն էր՝ Մանուկ անունով:

**ՇԱՊԱՏԻՆ**

50 տուներէ բաղկացեալ զուտ հայաբնակ գիւղը՝ շինուած էր Խնուս գետի մերձ՝ հարթ դաշտա- գետինի մը վրայ: Սր. Գէորգ անունով քարաշէն եկեղեցի մը ունէին եւ Արամեան անունով նախակրթարան մը: Գիւղացիները կը գրագէին հողապորժութեամբ եւ անասնապահութեամբ: Կորեկի մշակումը այս գիւղացիներուն յատուկ էր, որուն համար Խնուսի գիւղերուն գոգքը հիւսող անձանօթ գուսանը ըսած է «կորեկ ցանոգ շապատիցիք»:

90-ական թուականներու աղլային վերազարթնումի օրերուն, շապատիցիներու ասպնջականութիւնը վայելած են յեղատիրական գործիչներ, Ֆէտայական խումբեր եւ խմբապետներ՝ Մուրատ Պոյաճեան, Սերոբ Փաշա, Հրայր, Տուրբախ, Գէորգ Չափուչ, Անդրանիկ, Կորիւն, Փիլոս եւ ուրիշներ:

Անգամ մը Ֆէտայիներու փնտռուքի համար կառավարութիւնը խիստ խուզարկութեան կ'ենթարկէ գիւղը՝ ձերբակալելու Գրգոյի տղաք՝ Օհանը, Յակոն եւ Միսակը, իրենց տունը պէրտանկի հրացան մը գտնուելուն համար, մինչ՝ այդ հրացանը կը պատկանի եղբւր շերքէյ Թամր աղային, որ գայն գրաւի դրած է հոն: Միսակը ձերբակալելով, շատ կը ծեծեն, սակայն ան անվեհերօրէն կը յայտնէ. «Ի՛նչ կ'ուզէք ըրէք, կ'ուզէք սպաննեցէք, ես բանէ մը տեղեակ չեմ»: Քանի մը օր ետք սակայն, Օհան եղբայրը Քաղզիկ գիւղին մէջ կը ձերբակալեն եւ Միսակը ազատ կ'արձակեն:

Այս գիւղին մէջ նշանաւոր ընտանիքներ էին Թաճուս տունը՝ Շահնապարը, Աբրոն, Յակոն ու Գեւոն, եւ վերը յիշուած Գրգոյի տունը:



Հրայր

**ԶԵԻՒՄԵ  
ԿԱՄ  
ԶԱՒՈՒՐՄԱ**

180 տուն հայերէ եւ 4-5 տուն քիւրտերէ բնակուած: Գիւղաւանի բնապատկերը կ'ընդգծուէր հովիտին մէջջն գալարուող Դեղթափի ջուր գետի գեղատեսիլ ափերուն, ուտնիններու պուրակներու հովանիին տակ, տափարակ դաշտի մը վրայ, շրջանակաձև նստուածքով, եւ շրջապատուած ընդարձակ դալարա- գեղ մարգագետիններով եւ արգասաբեր արտերով:

Գիւղին արեւմտեան կողմը հողարլուրներու կիսակեր պարիսպներու հետքերը տակաւին կը տեսնուէին: Այս պարիսպները ժամանակին (1750 թուականին), Խնուսի լազկի բէկերու հողարերդերու պարիսպները եղած են, իսկ գիւղն ալ անոնց ազարակը: Հայր Ղուկաս վրդ. Ինճիճեան, իր «Աշխարհագրութիւն չորից մասանց աշխարհի» գործին մէջ անդրադառնալով այս գիւղին՝ կը գրէ. «Իշխանութիւն երկրիս սեպիական է պէյլի՝ որ է ազգաւ լէզկի. զի ի պատերազմիլն Օսմանեանց ընդդէմ Դահմասին, պէյլի ուրումն ի լէզկի ազգէն, արարեալ ասէն քաջագործութիւն երեւելի ի կողմանէ Օսմանեանց. յայն սակա այս տեղի շնորհեցաւ յարժունուստ՝ ցեղին նորա: Եւ ի քաղաքին նմուսայ բնակին ոչ սակաւ բազմութիւն նոյն լէզկի ազգին», (Հատոր Ա., էջ 81):

Եւրոպացի ուղեգիր՝ հայասէր Լինչը՝ իր երկու ուղեւորութեանց ընթացքին՝ 1893-94 եւ 1898-99 անցած է Խնուսէն. իր «Արմենիա» գիրքին մէջ Զեւիրմէի մասին կու տայ հետեւեալ նկարագրականը. «Խնուսէն (քաղաքէն) մեկնեցանք ու հասանք Պինկէօլ սուի հովիտը, մինչեւ հայկական մեծ գիւղը՝ Զեւիրմէ, հետեւեցանք անոր օճապտոյտ ջրանցքին: Ցած խարակներ, որոնք բաղկացած էին լնային երկրաբանական մնացորդներէն, կ'եզերեն այն մարգիքը, որոնց մէջէն գետը կը հոսի: Զեւիրմէ գիւղը, հոն՝ ուրկէ գետը անցանք, ունի 150 տնակներ, շրջապատուած է ուռիներու հանելի ովասիտով մը, որ Դեղթափ սուի միացման կէտին վրայ փունջ կը ձեւացնէ: Գետնախրման եւ դրամենիի քանի մը մանր արտեր ցոյց կու տան, բէ կեանքի աստիճանաշափը քիչ մը աւելի բարձր է հաս: Հանոյքով տեսանք կարմրագոյն վայրի վարդերու ցանկ մը: Բազմաթիւ փոքր աղբիկներ, գրեթէ մերկ, ջուրին մէջ կը խաղային. մեծք ապշեցանք՝ տեսնելով անոնց մազերուն գեղեցկութիւնը: Այս գիւղացիներէն ոմանք բողոքական են, ջերմեռանդ աշակերտները Սր. Զեւիրմէ, որ էրզրումի Ամերիկեան միսիոնարութեան ղեկավարն է: Անցեալ տարիներու ընթացքին, երբ հունձքը գէշ եղած է, Սր. Զեւիրմէ օգնած է անոնց, բայց յառաջիկայ տարուան համար սփանջելի հունձք մը կ'ակնկալեն: Միսիոնարները հաստատած են այդ գիւղին մէջ դպրոց մը եւ որբանոց մը: Այս գիւղը մեծ պատիւ կը բերէ ամերիկացիներուն, որովհետեւ գիւղացիները քաղաքավար են ու վրանին լաւ կը խօսուի: Նիւթական բարգաւաճման ալ մասնակից եղած են. քիչ անգամ տեսած էինք արջառի եւ անիւնու այսֆան բազմութիւն» (Բ. Հատոր, էջ 288):

Զեւիրմէ եղած է թոնդրակեցի աղանդաւորներու զօրաւոր կեդրոն մը. այս մասին սասունցի Մովսսարի Հեթինք կամ Հեթենաց գիւղացի պատ.

Միմէնոն Դաւթեանի «Օրագրութեան» մէջ, սկսեալ 1852 թուականին, Խնուսի Չեւիրմէ դիւղը պաշտօնավարած ժամանակին կը գտնենք հետեւեալը. «1852 Սեպտ. 9, մր. Տընօրը եւ Ե. Յօհաննէսը Խնուս բերդ գացին, Խնուսի կառավարիչին հետը խօսելու մեր հալածուած եղբայրներու վիճակին վրայով՝ որոնք որ վնասուած էին գեղէն, եւ իրենց արտերը չորցած եւ ապականած էին անտերուսն ըլլալէն: Փանի մը անձանց հետ խօսեցայ մեր սենեակին դուռը, նաեւ շատ երկար խօսեցայ գեղին ռէշին հետը. աս մարդը աղէկ գիտէր վարդապետաց անպարկեշտ գործերը, եւ իրենց գեղին քահանային պատմութիւնն ալ ինձի ըրաւ, որ 60 տարի առաջ նանչուցած է շատերուն քէ եկեղեցին մուրաբիւն ունի. ուստի բռներ՝ շատ շարչարքեր են ատ քահանան, ան ալ վախէն մամետական կրօնքը ընդունել է ու ազատուել. ուրիշ մարդու մըն ալ երկու ականջները ու քիթը կտրել են մեր հայերը, իսկ մնացածները վախուն տեղերին սասանել են, բայց մինչեւ հիմա ատ գեղին մէջը կան քանի մը տուններ, մեր բարեկամներն ալ անոնցմէ են: Աս իրիկունը շատ խօսեցայ Խնուսի եղբայրներուն հետը, եւ իրենց նախնիքներէն մնացած սովորական ազօթֆները գրեցի, աս ազօթֆները իրենց աշխարհաբար լեզուովն էր:

«1853 Յուլիս 25.— Ծերունի մարդ մը կար հոս, իրիկուն քովս եկաւ ու պատմեց . . . . վրայով որ 60 տարի առաջ սկսել է իրենց մէջը Աւետարան քարագել, եւ 13 անձանց չափ կրկին գազտուկ մկրտել է, որոնցմէ երկուքը տակաւին մինչեւ հիմա ողջ էին. բռներ են աս երէցը ու էջմիածին տարեր են եւ բանտ դրեր են. կէս գիշերին կ'ելլէ սենեակի կարպետը կտորկտոր կ'ընէ եւ չուանի պէս կը շինէ, պատուհանէն կը կախուի եւ կը փախչի, ու աս փախչելով կ'երթայ Լոնտոն: Փանի մը տարիէն վերջը կրկին կը դառնայ Խնուս: Աս քահանան գիրք մը ունի եղեր, որուն անունը «Քանալի նըշմարտութեան» է եղեր. աս գիրքին մէջը հայոց եկեղեցիին մուրաբեան վրայով շատ բաներ գրուած է եղեր, եւ իրենց համար աշխարհաբար ազօթֆներ ալ:


«1857 Սեպտ. 15.— Կարնեցի Յօհաննէսեան Սարգիս եկաւ Խարսայ, որ ինքը հին աւետարանականաց մէկն էր, ու ռուսի երկիր երեք անգամ բանտը մտած է նշմարտութեան համար, պատմեց «Քանալի նշմարտութեան» գրքին վրայով, որ ինչպէս կը պատմէր շատ հին գիրք մը ըլլալու է, գրքին հեղինակը Յարութիւն Արշեանց Մամիկոնեան գրած եւ տուած է բարեկացի Մօհրեանց Գրիգորին: Գրքին քուսկանը 985 է, Փրկչին քուսկան: Թուղթը Մագաղաթ, գիրը մետրոպեան:»

ՄԱՆՕԹՈՒԹԻՒՆ.— «Քանալի նշմարտութեան» օրինակը անգլիացի Ֆրէտերիք Կանիքեր գտած է Սր. էջմիածնայ ձեռագիրներուն մէջ եւ ընդօրինակած է ՌՊԷ (1897-ին). այդ ընդօրինակութեան լրումին դրուած է հետեւեալ յիշատակարանը. «Գրեցաւ ի գաւառն տարոնոյ յամի տեառն 1782. իսկ ըստ հայոց ՌՄԼ-ին (1230) . . . . Ամենապայծառ Յովհաննէս վախագունայն . . . . այլ սկսայ կարգաւ գրել գտարք խորհրդարան եւ գրանալի նշմարտութեան, վասն սիրոյն խնդրողաց եւ ընդունողաց: Նաեւ երես

անկեալ ջերմ սիրով եւ հաւատով խնդրեմ ի ձեզ, զի դուք գթերութիւն, զպակասութիւն եւ զաղաւմունս շարադրութեան կամ քերթողութեան, այլ եւս թէ զվանկից, թէ զգրոց, թէ զքառից եւ թէ ըզբանից եւ թէ զուրբ մասանց արհեստին: Եթէ ի սոցանէ զաղաւմունս եւ զպակասութիւն ինչ գտանիցէք, ոչ եթէ ի մէնջ եղեալ է, այլ անվարժ գրչաց գոյով ի սմա մտնալ է»: (Տեսնել նաև Հայրենիք Ամսագիր-ի մէջ մեր գրութիւնը «Յովհաննէս արքայ վահագունի — խնուսցի», 1949, Նոյեմբեր, էջ 86):

Ամերիկեան միսիոնարութիւնը Խնուս մուտք կը գործէ 1840-ին եւ Չեւիրմէի մէջ կը հիմնէ դպրոց-որբանոց մը, քարաչէն՝ խոշոր եւ զեղեցիկ շէնքի մը մէջ, զոր միսիոնարութիւնը շինել կու տայ իր դրամովը: Առաջին բողոքականները զիւղին մէջ կ'ըլլան Մալօ Մետրոպեան, Պետրոս Գազանճեան, Յարութիւն Թարկէեան եւ Պաղտասար Պրտէեան: Իրենց առաջին ուսուցիչ-քարոզիչը եղած է Մարտիրոս անունով հայ մը, որուն դէմ խիստ հալածանք կը հանուի, եւ իր մահուան հետեւանքով հալածանքն ու թշնամութիւնը աւելի կը սաստկանան: Մարտիրոսը թաղելու համար ո'չ միայն հայոց գերեզմանոցը՝ այլ եւ պա'րզ հող մը իսկ չի թոյլատրուի: Բողոքականները կը դիմեն էրզրումի Ամերիկեան միսիոնարութեան, եւ անպի. զերհիւպատոսին, որպէսզի դիմում կատարեն էրզրումի փաշային: Փաշան դիմելով էրզրումի հայոց եպիսկոպոսին՝ արտօնութիւն կը ստացուի թաղումը կատարել յարտաւոյ գեղջէ հողի մը վրայ: Այս հողին Ղարիպներու գերեզմանոց անունը տուած էին: Մարտիրոսէն ետք կու գայ պատ. Միմէնոն Դաւթեան: Ան ալ իր սկիզբի տարիներուն կ'ենթարկուի հալածանքի եւ խստութիւններու, սակայն իր յարատեւ աշխատանքով կը հաստատէ դպրոց եւ ժողովարան եւ կը կազմուի բողոքական համայնքը:

Չեւիրմէ ունէր սրբատաշ քարաչէն եկեղեցի մը՝ Սր. Աստուածածին անունով: Եկեղեցին շինուած էր զիւղին արեւելակողմը, տափարակ գետինի մը վրայ, գերեզմանոցն ալ իրեն առընթեր: Աւանդութիւնը կը պատմէր, թէ Մժնկերտու Սր. Կարապետի վանքը՝ վարպետն է կառուցած, իսկ Սր. Աստուածածին եկեղեցին ալ՝ աշակերտը: Եկեղեցիին կառուցուածքը երբ կը լրանայ, աշակերտը կու գայ Մժնկերտ իր վարպետին քով, միասին կ'ելլեն վանքի տանիքը եւ հոնկէ կը դիտեն Սր. Աստուածածնայ եկեղեցին. ասոնց իրարմէ հեռաւորութեան միջոցը հազիւ ժամ մը կ'ըլլայ: Վանքին դիրքը բարձրադիր բլուրի մը վրայ էր, մինչ եկեղեցին տափարակ գետինի վրայ, ու սպառաժանելիք ձորի ուղիղ բացուածքէն յստակ կը տեսնուէր: Ըստ ավանդութեան ձորը կը կոչուէր Հայկաձոր: Վարպետը նկատելով, որ իր աշակերտին կառուցած եկեղեցին աւելի զեղեցկակերտ է, քան իր կառուցած վանքը, նախանձէն ինքզինք վանքի տանիքէն վար կը նետէ ու կը մեռնի: Ինկած տեղը կոպածոյ շիրմաքար մըն ալ ցոյց կու տային՝ որպէս շիրմը վարպետին: Սր. Աստուածածնայ եկեղեցին ուխտատեղի էր. ամէն տարի Սր. Աստուածածնայ տօնին ժողովուրդը ուխտագնացութեան կ'երթար հոն:



Նստած ձախտն աջ՝ Գասպար Դարբինեան (չեւուրմեցի, մեռած), Արժ. Տէր Եգիշէ Բինյ. Մխիթարեան (գովանտուկցի), Երանու Հլոյեան (սայլուցի, մեռած), Մանուկ Սոպաջեան (բերդեցի): Կանգնած, ձախտն աջ՝ Սանտրիկ Միեբեան (հարամիկցի), Գէորգ Գասպարեան (մժնկերացի), Միհրան Սիմոնեան (բերդեցի): Նկարուած 1950 թ., Ֆրէզնո (Քալիֆորնիա):

Խրիմեան Հայրիկի Սբ. Կարապետի վանքի վանահայրութեան օրերուն, բազմաթիւ խնուցի ուսանողներ կ'ընդունուին վանքին վարժարանը. ասոնցմէ մէկը՝ այս գիւղացի Գրիգոր Տօնաւետեան՝ Հանրաժանօթ Գրիգոր վարժապետ անունով, դպւառի մէջ ճանչցուած էր իբրեւ լուսաւորիչ մը, իր գրիչովն ու թուղթովը:

Պատուելի Սիմէոն Դաւթեան, իր «Օրագրութեան» մէջ (1853 Յուլիս 25), կը յիշէ Մաղաք անունով հայ մը այս գիւղին մէջ, զայն որակելով. «Աս Մաղաքը, աս հնուսայ փիլիսոփան էր». դարձեալ կը յիշէ որ աս գիւղին մէջ 80 տարեկան մարդ մը խաղ ու պարասաց էր, ու աս մարդուն ձայնը շատ անոյշ էր...: Այս գիւղի զաւակն է Հայաստանի մէջ Հանրաժանօթ Աշուղ Շահէնը, որ 1915-ի մեծ եղեռնէն ազատուելով կ'ապաստանի հոն:

Գիւղին Հանրաժանօթ ընտանիքներն էին՝ Մալօ տուն, Ֆարհատի Մանուկ աղայի տուն, Գրիգոր վարժապետ Տօնաւետեան եւ իր տղան՝ Տիգրան,

դարբին Կալօն, Հանրաժանօթ յեղափոխական (հնչակեան) Յեսաւ եւ դեռ ուրիշներ:

Ամերիկա Քալիֆորնիոյ Մըտէսթօ քաղաքը կը բնակի այս գիւղացի Գասպար Դարբինեանը իր զաւակներով: Գ. Դարբինեան իր ուսումը ստացած է Կարնոյ Սանասարեան վարժարանը եւ կանուխէն զաղթած Ամերիկա:

Գիւղացիներու զլխաւոր դրազումներն էին՝ երկրագործութիւն եւ անասնապահութիւն: Ընտանի կենդանիներու մէջ ունէին նշանաւոր ձիեր եւ զոմէշներ: Թռչնազգիներէն մեծ թիւով հաւ, բնտանի բաղ եւ սաղ կը բուծանէին: Մեղուի փեթակներ ալ կը պահէին մեծ քանակութեամբ. մեծահարուստ Մանուկ աղան ունէր բազմաթիւ փեթակներ: Կային նշանաւոր արհեստաւորներ — դարբին, պղնձագործ (խազանի), անագագործ (խալայնի, կլայնեղոյ), ջուլհակ, զորգագործ, կողովագործ եւ փսիաթագործ (խսիլ գործող):

**ՊՈՒՌՆԱԶ  
ԿԱՄ  
ԲՈՒՌՆԱԶ**

Գիւղը շինուած էր Սպիտակ սարի ստորոտին, Գիտուրայ կոչուած տեղերը, ուր ստորերկրեայ ջուրեր կը յայտնուէին, ոռոգելով շրջակայքի արտորայքը, կ'անցնէին իր եւ Գովանդուկ գիւղի միջեւ գտնուող հողամասերէն եւ կը թափէին Արածանի գետը: Գիւղը կը բաղկանար 45 տուներէ, որոնցմէ 5-ը քիւրտեր էին: Ունէին զպրոց եւ Սբ. Սարգիս անունով եկեղեցի մը: Ե-



ՏՈՒՐՊԱՆ

կեղեցիի շրջակայքը կային արտասովոր խոշորութեամբ խաչաքանդակ տապանաքարեր: Կար Թուխ Մանուկ անունով մատուռ մըն ալ, ուր ժողովուրդը ուխտի կ'երթար. ջերմատենդէ (դող) տառապողներ՝ այս սրբատեղին կը դիմէին բժշկուելու հաւատքով:

Գիւղացիներու զբաղումն էր երկրագործութիւն եւ անասնապահութիւն: Նշանաւոր էին այս գիւղին ձիերը: Հոս կային քանի մը տուն հայ բողբոջակոններ:

1895-ի դէպքերուն, յայտնի հայդուկ Տուրքախը այս գիւղը կը գրտնուի, երբ քիւրտերը գիւղին վրայ կը յարձակին թալանելու համար: Տուրքախ կը բարձրանայ գիւղի առջեւի առուակի եզերքին գտնուող հաստարուն ծառի մը վրայ, եւ աննկատելի կերպով կը սկսի կոտիլ քիւրտերուն դէմ եւ կ'ազատէ գիւղը կողոպուտէ: Քիւրտերու մէջ կը տարածայնուի, թէ իրենց դէմ կոռուղը, Դէրէ Սը. Սարգիսն է եղած, այսինքն՝ եկեղեցւոյ անուանատէր Սը. Սարգիս Զօրավարը:

**ՍԱՆՈՒՈՐԻ  
ԿԱՄ  
ՍԱՐՈՒՍԼԻ**

Գիւղը՝ հովիտի մը վրայ շինուած ըլլալով, երեսը կը բանար արեւելակողմէն Գողըր Պապա եւ Հազըր Պապա սարերուն: Օժտուած ըլլալով արգասաբեր արտերով եւ արօտատեղիներով, իր բնակչութիւնը երկրագործ եւ խաչնարած էր: Նշանաւոր էր իր կանպետի (կանեփ) արտագործութեամբ, ընտիր ձիերով ու քաջավարժ ձիաւորներով: Հինէն ի վեր, այս գիւղացիները զէն ու զրահի ալ վարժ եղած են: Սալուորկայ Ղազարը անուն հանած քաջ ու կտրիճ Ֆէտայի էր (հնչակեան): Պաղտօ անունով քաջակորով սալուորցի հայու մը մասին, ուղեգիր Մանուէլ Կ. Միրախորեան իր «Նկարագրական ուղեւորութիւն» գործին Գ. Հասորին մէջ կը գրէ. «Գարաշնպան» մինչ ամէն ոք ի քուն մտնելոյ վրայ էր, եւ կալապաններէն ոմանք դէմքերնին դարձուցած ընդդէմ նորածին լուսնոյ՝ կ'երգէին մի երգ, յանկարծ գիւղիս հիւսիսակողմն Սալուորի անուն հայ գիւղի ոչխարաց հօտի վրայ գոգեր յարձակած էին. մինչ այս, մինչ այն, տեսնուեցաւ որ մի կարմահասակ ծերունի՝ անուանեալ Պաղտօ, կուրծքը լայն, բայց եւ մագոտ, գլուխն գունդ, ցակատն դուրս ինկած, իւր մէկ թեւին տակ խուրձ մը գէնք, եւ միւս ձեռքը բռնած մի ներմակ գամբիկ, ի գիւղս մտաւ հաւարով աղմկաւ: Զամբիկն աչքի մէջ ընդունած գնդակի հարուածէն, նման զգայուն մարդոյ, արտասուք կը թափէր, եւ գիտես թէ բնականի զգացումնք եկած էին անլեզու կենդանւոյն վրայ, ոչր ետեւի ոտքէն եւս սուրէ հարուածուելով արիւն կը հոսէր յերկիր՝ ազբիւրի նման: Մեր Պաղտոյի ետեւէն հասաւ մի երիտասարդ իւր հետ ունեւալով երկու բարձրահասակ գոգեր, որք ի շնորհս կառավարութեան տեղս գտնուած երկու պաշտօնէից, տարուեցան գիշերանց ի Բերդաբազաֆն, ուր շարքայ գարնընեցան. դատաւորի հարցման վրայ, թոնոզները պարգապէս կառավարութեան պատմած էին, թէ սոքա յարձակեցան մեր հօտին վրայ եւ մեմք մեր

կեմաց վերջին վտանգովն զիրենք բռնեցինք ու 4-էն 2-ը յաջողեցան փախչիլ. տեղւոյ գայմագամը զիւր պարտք կը կատարէ եւ դէպքն այսպէս կը վերջանայ:

«Մի ամիս ետքը, գաւառիս մէջ կրկին ինձ պատահեցաւ մեր քաջասիրտ Պաղտօն, որ իւր յիշեալ գամբիկ հեծած կ'երթար հնուս բերդ, բայց այս անգամ ձին միակամի դարձած էր ամիս մը առաջ ընդունած հարուածէն: Բնական էր որ Պաղտոյին հարցնէի, ո՞ւր կ'երթաս, մանաւանդ որ իւրեան հետ արդէն կանխաւ ծանօթացած էի, եւ թէ միեւնոյն կողմն կը ցանապարհորդէիք ի միասին. սիս իւր պատասխանն, գոր տուաւ մի շատ վեհանձն զգացմամբ, «կ'երթամ ափ անելու մեր ոչխարաց վրայ յարձակող, եւ զիմ անմահն ձին վիրաւորող գողերուն, եւ զիրենք բանտէն դուրս հանելու» (էջ 107):

Սալուորի նշանաւոր էր իր ընդարձակ եւ հարթ կալերով, այնպէս որ օրինակելի հարթութիւն մը բնորոշելու համար, յաճախ կ'ըսէին. «կը նմանի սալուորկանց կալեր»:

Սալուորի կը բաղկանար 30 տուն հայ բնակչութենէ. գովելի եւ օրինակելի առաքինութիւնով օժտուած էին, ունէին սէր, միարանութիւն ու համերաշխութիւն: Եկեղեցի եւ դպրոց չունէին. Գարաշնպանի մօտ ըլլալուն համար՝ իրենց զաւակները հոն դպրոց կը դրկէին, եւ հոգեւոր մատակարարութեան համար ալ հոն կը դիմէին: Ունէին փոքրիկ մատուռ մը, ուր ուխտի կ'երթային բոլոր գիւղացիները, մանաւանդ ջերմատենդէ բռնուողները, որոնք դողը կապելու կու տային պառաւ կիներու կողմէ ըսուած աղօթքով եւ իրենց հայուստէն կտոր մը հանգոյցելով ու հոն թողելով:

Սալուորի ծննդավայրն է Խորհրդ. Հայաստանի զբաղէտներէն՝ Յակոբ Ֆիրուսցիի:

**ՍԱՐՈՒՈՒ  
ԿԱՄ  
ՍԱՐԼԻ**

Գիւղին բնապատկերը կ'ընդգծուի Խնուս բերդի հարաւարեւելեան կողմէն հսկայական ապառաժներու բնական ձեղքուածքէն զոյացած վիթխարի ձորաբերանի բարձրաւանդակով, ընդարձակ հարթ տարածութեան մը վրայ: Գրեթէ Խնուս բերդի մէկ արուարձանն էր: Բերդեցիները իրենց մեռելները Սալուորայ գերեզմանոցը կը թաղէին, առանց նկատի առնելու այն տաժանակիր վերելքը ձորէն մինչեւ բարձունքը, Սահակի կամուրջէն դէպի Սալու, ուր ուսամբարձ կը տանէին ննջեցեալի նաշը, աւելի քան հարիւր ոտք քարէ աստիճաններէ բարձրանալով, զագաղակիրներն ու սզաւոր յուզարկաւորները:

Գիւղը կը բաղկանար 45 տուն հայ ընտանիքներէ եւ մօտաւորապէս 10 տուն քիւրտերէ: Քիւրտերէն նշանաւոր էր՝ Դեւրիչ աղան. իր վերաբերումը հայոց հանդէպ բարեկամական էր: Անկամ մը Գէորդ Զաւուշ, երբ Խնուս եկած Արօսայ Նորելաձի վանքի քարայրին մէջ զաղտնի ժողով կ'ունենայ, քարայրի մուտքին վրայ պահակ կեցած Ֆէտայիները կը նկատեն որ քիւրտ

ավիճեցրը (որսորդ) ձորէն անցնելով՝ զիրենք տեսած են, և ֆիսալի, ֆիսալի պտուղով կը փախին զէպի Սարու զիւզը: Պահակները լուր կու տան Գէորդ Չառչին թէ քիւրտերէն նկատուած են: Մինչ Գէորդ Չառչ զիրքեր բռնելով կը պատրաստուի զալիք կոխին, սակայն, սպասման պահը կ'երկարի, իրիկուն կ'ըլլայ, մութը կը կոխէ, բայց ոչ ոք կը յայտնուի: Հետագային յայտնի կ'ըլլայ, որ, որսորդները զացեր են Գեւորիչ ազգային և լուրը տուած, ու Գեւորիչ ազան լուրը զազանի պահած է, որով ընդհարում տեղի չ'ունենար, և Ֆէտայիները քարայրէն կը հեռանան աննկատ կերպով: Այս Գեւորիչ ազան 1910-ի զարնան երբ Խալօ Մելքոնի Արամի խանութը փլաւ, ինքն ալ խանութին մէջն էր, պատուհանի զոյր նստած կ'ըլլայ և փլուզումի ատեն կծկուած ըլլալով պատուհանի մը մէջ՝ ստոյգ մահէ կ'ազատի:

Գիւզը ունէր քարաշէն դարաւոր հին եկեղեցի մը՝ Սր. Սահակ անունով, և նախակրթարան զպրոց մը: Եկեղեցիին յարակից էր զերեզմանոցը: Տապանաքարերը կոփուած էին նժոյցի, ձիւ, ուղտի, խոյի, նիպակաւոր մարտիկի, օրօրոցի, երկրագործի՝ արօրի, խոփի և մանկազի նկարներով:

Գիւզացիները կը զբաղէին երկրագործութեամբ և խաշնարածութեամբ. բանջարածաղկութիւնն ալ մուտք դտած էր: Լաւ որսորդներ կային. որսորդութիւնը իրենց համար զրօսէ աւելի, շահի և ապրուստի միջոց էր: Արհեստաւորներ ալ կային, ջուլհակ, դարբին, նալպանտ և նուագածու: Կար նշանաւոր դահուլճի (գուսանահար) Գրէն: Գրէի մասին կը պատմէին, թէ ձմեռնային սաստիկ ցուրտ օր մը, ինք ու իր զուռնածին Խնուս բերդ հարսանիքի մը նուագելու գացած են. զիւզ վերադարձին, երբ ձորը կը մըտնեն, կը պաշարուին խումբ մը անօթի ու կատաղի զայլերէ: Գրէն նկատելով որ փրկութիւն չկայ, զուռնածիւն կ'ըսէ, որ ապատուելու միակ միջոցը նուազը սկսիլն է, և կը սկսին նուագել: Գուսանի և զուռնայի նուագով զայլերը կը սկսին պար բռնել, քարէ աստիճաններէն ոտք ոտք բարձրանալով, վերջապէս կը հասնին ձորափի բարձրաւանդակը և զիւզը մտնելով կ'ազատուին զայլերէն:

Երդ ու պարասաց Պալիկն ու Երանոսը նշանաւոր էին թէ՛ զիւզին և թէ՛ չըջակայ զիւզերուն մէջ: Հանրածանօթ ընտանիքներն էին Մհերի Ծահնագարի տունը, Խրչէ տունը, Հըլօ տունը և Սաղէի տունը:

Այս զիւզէն են հայդուկ և ձիւաւորներու խմբապետ Սաղէի Եղոն (Եղիպար Սաղէեան): 1918 Յուլիսին, Հայաստանի Հանրապետութեան օրերուն կը մասնակցի Սիսիանի կոիւններուն և հերոսական մահով կ'իյնայ պատերազմի դաշտին վրայ: Վաշտապետ Արշակ Հլոյեան, Անդրանիկի կամաւորական բանակին մէջ արտասովոր քաջութիւն կը ցուցադրէ: Հանրապետութեան չըջանին ասպատակող խումբով մը թիկունքի մաքրագործման հայրենասիրական պարտականութիւնը կը կատարէ: Բուլշեւիկեան արշաւանքի օրերուն, կը մասնակցի Լեռնա-Հայաստանի կոիւններուն. հետագային Երեւանի մէջ բուլշեւիկներէն կը զնդակահարուի:

Արշակի եղբայրը՝ Երանոսը, հին հայդուկ, մասնակցած հայդուկային կոիւններու, թէ՛ Երկիրը, և թէ՛ Կովկասի հայ-թաթարական ընդհարումներուն Սեպուհի խումբին մէջ, ուսերէն ձերբակալուելով կ'աքորուի Սիպիր, ուրկէ կը փախչի, կու գայ հայրենիք՝ Սահմանադրութեան օրերուն: Թրքական բանակին զինուորակոչուելուն հետեւանքով՝ կ'անցնի Ամերիկա: Ծառայած է ամերիկեան բանակին և Քայիֆորնիոյ նահանգապետին զնահատուած իր կամաւոր ծառայութեան համար:

**ՍՈՒԿԻԹԼԻ**

Գիւզը կը գտնուէր Պինկէօլի սարալանջերուն վըրայ, Խնուս բերդի հիւսիս-արեւմտեան կողմը: Իր անունը առած է իր մերձակայքի խիտ ծառաստաններէն: Ժամանակ մը եղած է հայաբնակ փոքր զիւզ մը՝ մինչև 1885 թուականը, անկէ ետք քիւրտերը բռնութեամբ տիրացած են զիւզին: Հայերը հեռացած էին զիւզէն. մեր օրերուն այլևս քրտական զիւզ էր: Բնակիչները առաւելապէս կ'ապրէին խաշնարածութեամբ, փայտահատութեամբ և ձիւնափաճառութեամբ: Ամբան տաքերուն Պինկէօլի սարը բարձրանալով խարակներու մէջ բնականէն ամբարուած սառած ձիւնը կը բերէին Խնուս բերդ և կը ծախէին ժողովուրդին, և մասնաւորապէս սրճարաններուն, զաղ ըմպելիք և պաղպաղակ պարաստելու համար:

**ՏՈՒՄԱՆ**

Գիւզը կառուցուած էր Խամուր բերդ լեռան արեւելեան թևին, Ձեռնակայ սարի զեղատեսիլ լանջերուն, ուրկէ կ'անցնէր հասարակաց ճանապարհը կամ փոստա եղիւն, որ կ'երթար զէպի Պուրանուխ: Գիւզը կը բաղկանար 70 տուն բնակիչներէ, սրուն 60 տունը հայեր էին, իսկ 10 տունն ալ քիւրտեր: 1873 թուականին հոս կը հաստատուի բլրքցի քիւրտ աշխրաթէն յայտնի աւաղակապետ՝ Ծահոն. իսկ մեր օրերուն զիւզի ազան էր իր տղան՝ Խալոն: Խալոն հանրածանօթ էր սրպէս աւաղակապետ, և համիտիկ հեծկապօրքի հարիւրապետ: Ծինած էր քարուկիր փօշկ (ապարանք) մը, ուր զրած էր իր կիներէն մէկը՝ քանի մը զաւակներու հետ. իսկ փօշկ մըն ալ շինած էր Ենիքէօյ հայկական զիւզին մէջ, ուր նմանապէս կ'ապրէր իր մէկ ուրիշ կիւնը, և ինք ալ փոխն ի փոխ մէկ կամ միւս զիւզը կ'ըլլար:

Տումանի հողերուն վրայ ընդարձակ կառուածներ ունէր Խնուս բերդեցի Մուխի Գէորդի Միսակ ազան: Տուման նշանաւոր էր իր արտերով և արօտատեղիներով: Համբաւուր էր իր սեր ու մածունը: Առածի կարգ անցած էր Տումանի մասին ըսել՝ Խընըստա Տուման, ախիրաքտէ իման:



Տուժմանի պատմութեան հետ կապուած է Մշոյ Յորհնոց գիւղացի Յակոբ Տէր Աւետիսեանի, կամ աւելի հանրաձայնօթ Յակոբ Սարկաւազի անունը: Յակոբ Սարկաւազ, որպէս հայ եւ քիւրտ ժողովուրդներու մերձեցման քարոզողի մեղսակցութեամբ կը բանտարկուի Մշոյ բանտը, սակայն Սուլթանի Համիտի սեղանապետ, քիւրտ Նուրի Պահրի փաշայի աջակցութեամբ բանտէն կ'ազատուի, եւ դարձեալ իր թելադրութեամբ կը զբաղուի Խնուս, Տուժման գիւղը, Նուրի Պահրի փաշայի քիւրտ ազգականներու պաշտպանութեան տակ: Հոս իրեն տուն, տեղ, արտ արուելով կը հաստատուի իր ընտանիքով եւ կ'ապրի: Սակայն կարճ ժամանակ ետք կիներ կը մեռնի. այրիանալով՝ խնուսցիները կը բաղձան դայն փարզապետ ձեռնադրել տալ եւ Խնուսի առաջնորդ ընտրել: Դիմում կը կատարեն էրզրումի այդ օրերու առաջնորդ Դերձակեան Եպիսկոպոսին, սակայն խնուսցիներու փափաքը չ'իրականանար, որովհետեւ Կ. Պոլսոյ Հայոց Պատրիարք Աշրքեան Խորէն սրբազանը արդիւք կը հանդիսանայ, այն պատճառաւ, թէ Յակոբ Սարկաւազ Համիտի աչքի փուշն է եղած, կառավարութեան դէմ զօրաւոր բողոքներ ներկայացնելուն համար:

Տուժման ունէր եկեղեցի եւ դպրոց, Սահմանադրութեան շրջանին աւելի բարեւոք վիճակով: Գիւղացիներու զլխաւոր գրաղումն էր հողագործութիւն եւ անասնապահութիւն:

**ՓԱՅԿ  
ԿԱՄ  
ՀԱՅԿ**

Այս գիւղը կառուցուած էր ձորաբերանի մը վրայ, հսկայական ապառաժ սլաքով մը փակած ձորին գիմացը, ձորին միւս կողմը, քարայր մը կար, որուն մէջ միակուտը քարակոփ եկեղեցի մը կար, իր դարաւոր հնութենէն միայն քարափոր խաչերու ստուերներն էին մնացած. ալեւորներու աւանդութեամբ քոնդրակեցիներու ժամ եղած է. մեր օրերուն լքուած վիճակի մէջ էր, եւ գիւղին բէկերը կը գործածէին որպէս ոչխարի հօտերու դոմ:

Ձորին մէջէն կ'անցնէր Դեղթափի ջուրը. ասոր կը խառնուէր Մժնկերտէն եկած գետակին ջուրը: Գիւղը կ'իյնար Խնուս բերդէն դէպի արեւելք, մէկ եւ կէս ժամ հեռաւորութեան վրայ: Իր մօտակայքը կը գտնուէր Թոնդրակ կամ Թանտրլի՝ ըստ քիւրտերու Չըլ Թրնտուր (Քառասուն Թոնիլ) գիւղը, որուն համար կ'ըսուէր, թէ իր ատենին եղած է Թոնդրակեցի աղանդաւորներու կեդրոնը: Լինչ, իր «Հայաստան» գիրքին մէջ կ'ըսէ. «Թոնդրակ անունով երկու գիւղեր կան, մէկը Ալատաղի ստորաւոր՝ Ալաշկերտ-Պայազիտ շրջան, միւսը՝ Ալատաղ կամ Սպիտակ սարի ստորաւոր, Խնուսի մէջ»: Թանտրլի մերձ էր նաեւ մեր օրերու Չեւիրմէ գիւղաւանին, ուր Թոնդրակեցիներու մնացորդներ կը գտնուին եղեր մինչեւ 1837-45 թուականները:

Փայկ կամ Հայկ գիւղի մասին աւանդութիւնը կ'ըսէր, որ հայոց նահապետ Հայկի առաջին ձեռակերտ բնակավայրն է եղած, ինչպէս եւ դաւառն ալ կոչուած է Հարք: Գերմանացի հոչակաւոր ճանապարհորդ-ուղեգիր՝ Քոխ, կը հաւատայ, թէ այս գիւղն է եղած հայոց նախահայր-նահապետ

Հայկի հիմնած եւ բնակած գիւղը: Քիւրտերէն հնչումի Փը-հայ-իկ կամ աւելի կարճը Փըլիկ մեկնարանութիւնը այն էր, թէ հայկական Հայկ անունը, ժամանակի ընթացքին՝ շրթունքէ շրթունք աղաւաղուելով եւ քիւրտերէն փիր (մեծ նահապետ) իմաստով բառին նախահնչուն փրին յաւելումով եւ չափազանցումով, Հայկը փոխուած է Փայկի:

Մեր բանասէրներէն՝ Հայր Աւետիգ Ալիշան, իր «Յուշիկը հայրենեաց հայոց»-ին մէջ այսպէս կը գրէ Հայկ կամ Փայկ գիւղի մասին. «Բայց այս ամենայն տեղերս՝ որ մեր դիւցազնին անունը կը կրեն, չէին իր հաստատուն բնակութիւնն. կամ սիրայոժար տեղերը, եւ իր տիրական քոռը. այս ետքին ուրիշ բարձրաւանդակ երկրի մը վրայ հաստատեց Հայաստանի կեդրոնին մօտ, եւ ոչ հեռու Արածանիէն՝ այսինքն հիմակուան Մուրատ չայ գետոյն աղբիւրներէն, որ է արեւելեան Եփրատ: Հայկ այս դաշտին այնպիսի անուն մը տուաւ, որ մեկալոնց պէս լաւ յարմարած է, այսինքն անուանեց Հարք, որպէս զի ցուցնէ թէ հան հաստատեցան անոնք, որք հայոց ազգին հայր եղան: Հոն տեղս աւան մըն ալ շինեց, որուն հարկաւ իր անունը տուաւ, այսինքն է Հայկաշէն. Քոխ գերմանացի ճանապարհորդը կը յիշէ այս դաշտին մէջ՝ որ հիմա Խնուս կը կոչուի, գեղ մը Հայկ կամ Փայք անուամբ» (Ա. հատոր, Բ. տպագր., 1921, էջ 95):

Մինչեւ 1895 թուականը, այս գիւղը եղած է հայաբնակ, յորմէ ետք, համիտեան բռնակալութեան ահաւոր օրերուն, քիւրտերու հալածանքներէն մնացեալ 50 տուն հայութիւնն ալ հեռանալով, դարձած էր քրդաբնակ, հոն կը բնակէին աւազակաբարոյ բէկեր՝ զբաղելով աւազակութեամբ:

**ՔԱՂՔԻԿ**

Գիւղին բնակարը կ'իյնայ Խնուսի դաշտին հարաւակողմը՝ Պամուր բերդ սարի պատուանդանը: Ըստ տեղական վաղնջական աւանդութեան, նախամարդուն՝ Աղամորդի Կալէնի շինած քաղաքի տեղն է այժմու Քաղքիկ գիւղը, որ բնական ահուելի քարալեռնակոյտերով (քրոէֆ) շրջապատուած է եւ առջեւէն կ'անցնի Սր. Դանիէլ անունով գետը: Գետին վրայ կառուցուած էր քարուկիր սքանչելի ճարտարապետութեամբ կամուրջ մը. տեղացիներէն կը պատմուէր կամուրջի կառուցման աւանդութիւնը: Կամուրջը կ'իյնար Քաղքիկ եւ Հարամիկ գիւղերու սահմաններուն վրայ:

Դանիէլ գետը իր սկզբնաւորութիւնը կ'առնէ Պամուր բերդ սարէն, մեծնալով կու գայ եւ կը խառնուի Արածանիին՝ Հարամիկ, Քաղքիկ եւ Շապատին գիւղերու սահմաններուն վրայ: Դանիէլ գետը Արածանին թափելէ առաջ Սեւ հողեր եւ Քրոէք ըստած քարաբլուրներուն միջեւ ընդարձակ եւ կայուն վիճակ մը կը ստանայ, մամռապատ եղերքներով, կը դառնայ փտանգաւոր, ուր ո'չ մարգիկ, ո'չ իսկ անասուններ կը համարձակին ջուրը մտնել, որովհետեւ ջուրը մտնողը յակամայից կը քաշուի դէպի սղմալից յատակի կաւային եւ կաշուն հողը: Դէպքեր պատահած են, որ գետի այս մասին մէջ մարգիկ եւ անասուններ խեղդուած են:

Գիւղին մերձակայքը կը գտնուին Շահօվերտի կամ Շահօվերտն անունով աւերակներու գերբակներ, որոնց մասին տեղացիները կը պատմէին, թէ հին բաղաքին մնացորդներն են: Երջակայքը կան նաեւ Ար. Գանիկէի խաչքարերով աւերակները, ասոնցմէ դատ նաեւ Քաղքիկ անունով ծանօթ աւերակները:

Գիւղին մէջէն կ'անցնէր ջուրի տու մը եւ կ'անուանուէր Խառն ի Փոզան:

Ախրը Չիման կամ Յաւերժադարար անունով բնդարձակ եւ շատ հոչակասը մարդպետին մը, այս գիւղին հոգային սահմանին մէջ կ'իյնար: Այս մարդպետինը գարնան եղանակին իր երգներանց ծաղիկներով, զրախտային երեւոյթ մը կը պարզէր: Հոս կը բուսնէին բլթեմ եւ անթառամ անուաներով ծանօթ երկու տեսակ անձման տեսքով եւ զգլխիչ բոյրով ծաղիկներ: Աւա՛ղ, անտէր է ան այսօր. օձերն ու կարիճները կը սողան այն բլուրին վրայ, զոր Օձի Խաղինա կ'անուանէինք. վարպն ու վիթը ուրիշ վայրի գազաններու հետ կը ստուերեն այդ զրախտալայրը:

Գիւղին հարաւակողմը, Խամուր բերդ սարի լանջերուն ձորակ մը կը բացուի, որ կ'անուանուէր Ի Մի Լարի: Ըստ աւանդութեան այս ձորին քով որսորդ Ղամեքը՝ իր բերդէն վար իջած ատեն, եղբայրասպան Կայէնը նկատելով, սպաննելու դիտումով իր աղեղը կը լարէ, երբ յանկարծ աներեւոյթ ձայն մը կը լսէ, որ կ'ըսէ քէ մի լարեք, եւ այս ասացումքը դարերու հոլովումով կ'ըլլայ ի մի լարի: Աւանդութիւնը սակայն Կայէնը կը սպաննէր Ղամեքի նետ ու աղեղով, եւ գերեզմանն ալ ցոյց կու տար ձորափի բլրակին վերայ, Կայէնի գերեզման անունով, ինչպէս Արեւի գերեզմանը ցոյց կու տար Հարամիկ գիւղին մերձակայքը, Սէլի Մօրուք կոչուող երկու ճամբաներու միացման կէտին առնթեր՝ Չաղրզան անունով բարձրադիր ու գեղատեսիլ բլրակի մը վրայ:

Աշխարհագրական նկարագրութիւններէն եւ աւանդական այս պատմութիւնները հպանցիկ ակնարկով մը տայէ ետք՝ կ'անցնինք մեր օրերու Քաղքիկ գիւղի ներկայացման: Գիւղը կը բաղկանար 110 տուն հայերէ եւ 10 տուն քիւրտերէ: Գիւղը ունէր եկեղեցի եւ դպրոց, ջրաղաց, ձիթհանք, եւ հացահատիկներ գտող մեքենայ, որ մարդկային ոյժով կը բանեցուէր: Գըլ-խաւսը գրադումներն էին՝ հոգադործութիւն, անասնապահութիւն, հաւաբուծութիւն եւ մեղուարուծութիւն: Այս գիւղացի մեծահարուստ Ղուկասեան Յակոբ աղան կը պահէր մեղուներու բազմաթիւ փեթակներ: Յակոբ աղան կը գրաղէր նաեւ առեւտուրով: Իր աղան՝ Յովհաննէսը, քանի մը տարի Կարնոյ Սանասարեանը ուսանելով, թերաւարա՝ դարձաւ Խնուս, եւ հօրը հետ առեւտուրով կը գրաղէր. առեւտուրով կը գրաղէին նաեւ Խզրոյի Սեդրակ եւ Միսակ եղբայրները, եւ պիթլիղցի շարչի Յովհաննէսը: Այս գիւղին նշանաւոր ընտանիքներէն Մինասի Մանուկ աղայի աղան՝ կարմրաթուշ Միսակը, թէեւ լուսնոտութենէ կը տառապէր, սակայն օժտուած էր նկարչութեան եւ մեքենաչինութեան սքանչելի ձիրքերով. վարպետ դիմանկարիչ եւ

դաշտանկարիչ էր. նկարներու համար դործածած ներկերը ինք կը պատրաստէր ծաղիկներէ եւ տունկերու արմատներէ: Համիտեան բոնակարութեան օրերուն շինած էր փայտէ հնձող մեքենայ մը. թուրք կառավարութիւնը իմանալով մեքենային դործածութիւնը, արդիւնէրով՝ զրաւեց եւ սաստեց նման գիւտերու հետեւիլ: Մինասի Մանուկ աղան սպաննուեցաւ համիտեան բոնակարութեան ահաւոր օրերուն բրլաքցի քիւրտ աշխրաթի պետերէն՝ Սէլիմ բէկի ձեռամբ, Աղջամելիք եւ Քաղքիկ գիւղերու միջեւ Շահօվերտն կամ Շահօվերտի բնուած պատմական աւերակներուն մէջ:

Քաղքիկցի նշանաւոր հայրուկներ էին՝ Փուրթօ Ղադար, Սիմօ Օհան, Շէկ Յակոն, Աղաճանի Աբրոն, Մարկոսի Միսակ, Իկիթի Պօզոս եւ Իկիթի Միսակ: Ասոնցմէ ոմանք ո՛չ միայն հայրուկներ էին, այլ եւ նշանաւոր վալատներ: Իկիթի Միսակն ու Չառֆասի Եղոն նշանաւոր դանգրէժ կամ խաղզէր, այսինքն երգասաց՝ յօրինող եւ երգողներ էին, առաւելապէս քիւրտերէնով կ'երգէին:

Հոս ակամայօրէն չակերտ մը բանալով, քանի մը խօսք պիտի բսնք Վ. Իսկէնտէրեանի կամ մեզի՝ խնուցիներուս շատ ծանօթ Դերենիկին, իր «12-ից մինչեւ 101 տարի» յուշերուն մասին, որոնք լոյս տեսան Հայրենիք ամսագրի 1940-ի թիւ 1, 11 եւ 12-ի մէջ, ուր կը խօսի Խնուսի եւ խնուցիներու մասին, ու մասնաւորապէս Քաղքիկու Օհանի մասին, որուն հետ ասօջին անգամ Կովկասէն Տաճկահայաստան կ'անցնէ: Ծամբորդութեան նկարագրութեան մէջ այսպէս կ'ըսէ. «Թէեւ ինձ բան չէին ասում, սակայն, Մօսուի, Մարտիրոսի եւ Օհանի քրտերէն խօսակցութիւնից հասկանում էի, որ քանակաբար կորցրել ենք: Ամէն յոյս կտրած, մտածում էինք բեռան ձիերը բռնել, բեռները բաց անել, պատրաստի փամփուշտները բաժնել մեր միջեւ, ձիերը զարնել եւ Սուկաւտի գագաթին ապաւինիլ: Լսեցի այդ խօսակցութիւնը, արիւնս խուժեց գլուխս, կամացուկ մօտեցայ Փիլոսին (Մարալ) ու ասացի. «Փիլոս, էս հարրած յիրքի (Օհան) պատճառով, մենք գնալու ենք Հայաստանի գիւղերիս... Զէ, ես չեմ քողմի որ գործը էսպէս վերջանայ...: Փիլոս ջան, աչքերդ չոքս արա, էս խայտառակները մեր գլխին խաղ չխաղան»: Յուշերուն մէջ դարձեալ կ'ըսէ. «Ես եւ Փիլոսը երդուել էինք քանքու անցած դարձածը երբեք բերան չբերել... Այդ գէպերէն քառօրյա դարանցնելէ ետք սակայն, երգմնադրուծ Դերենիկ իր յեղափոխական անձնագրո՛ւ ընկեր՝ Օհանը «լիրք» կ'անուանէ, ու դարձեալ նոյնչափ անձնագրո՛ւ ուրիշ երկու ընկերներ Մէրբէ Մէրան, «քաջաց քաջ» խաչատուրի Խանտիլի Մարտիրոսն ու Շուշէ Մօսոն «խայտառակներ» կ'անուանէ: Այն Մօսոն, որ 1906-ի ձմեռ, պարտականութեան ճամբան վրայ՝ որպէս Գէորդ Չառչի սուրհանդակը, Կովկասէն-Տարօն ճանապարհին՝ իր ծննդավայր գիւղին մէջ հերոսական մահով ինկաւ, վերջին փամփուշտը կրակելէն ետք՝ հրկիցուելով իր պապենական տան երգիկին տակ: Կը տարակուսինք թէ այդ աններկի սրակումը Դերենիկի ձեռքով գրուած է, իսկ եթէ մեր տարակուսանքին մէջ կը սխալուիք, ուրեմն պիտի ընդունինք որ աշխարհը սպականած է, երբ հայ յեղա-

փոխական հայրուկ մը, իր մարտիրոսացած հայրուկ ընկերներու յիշատակին կը բռնէ: Եթէ հրաշք մը տեղի ունենար, Օհանը, Մարտիրոսն ու Մօսնն իրենց անյայտ շիրիմներէն գլուխներն վերցնէին, Դերենիկին պիտի ըսէին. «Հէյ կիտի Դերենիկ, մոռցեր ես որ այդ նայն նամապարհին, քիրտերուն հանդիպելով կոխի բռնուեցանք: Կոխի ընքացքին քու մասին հրացանը ձեռքէդ իյնալով՝ գլորուեցաւ դէպի սուրբ փոխանակ դուն քու զենքիդ ետեւէն երթալու ու պատիւդ փրկելու, քաջ Մարտիրոսը կոխով իջաւ սուրբ, եւ մտին հրացանդ բերելով՝ հայրուկի պատիւդ փրկեց... ասոր ի՞նչ ըսել...»:

Այս ակամայ չափերուր գոցելով, Քաղքիկի մասին մեր ունեցած ծանօթութիւններու էջը փակելէ առաջ, արձանագրենք քաղքիկցի այն երիտասարդներուն անունները, որոնք Ամերիկա գաղթած էին — Խզրօ տունէն Յարթէնը, Արէթը եւ Բաղտիկը: Յարթէնն ու Բաղտիկը Համաշխարհային պատերազմին միանալով Կովկաս գացող վրէժխնդիր հայ կամուտներուն, կը կուտին քաջութեամբ եւ վրէժխնդրութեամբ. իսկ Արէթ 1939-ին կը մեռնի Տիթրոյի մէջ, իր բնաշխարհի կարօտը սիրտին...:



Գեյքավան՝ Խամուր լեռան բարձունքին

ՎԻՃԱԿԱԳԻՐ ԽՆՈՒՍԻ ՉԱՅԱԲՆԱԿ ԳԻՒՂԵՐՈՒ				
	ՄԱՆՈՒԷԼ Կ. ՄԻՐԱՊՈՐՏՆԱՆ 1885	ԲՆԱՇՆԱՐՀԻ ԲԱՌԱՐԱՆ 1905	ՉԵՂՈՒՄԸ 1915	
	ՀԱՅ ՏՈՒՆ	ՀԱՅ ՏՈՒՆ	ՀԱՅ ՏՈՒՆ	ՔԻՒՐՏ ՏՈՒՆ
1. Խնուս բերդ	180	160	325	600
2. Աղնամեղիք կամ հաչամեղիք	36	25	45	7
3. Անտալագոմ	—	—	5	—
4. Արօս	36	45	48	5
5. Գաբրիէլի գոմ	—	—	13	—
6. Գարաչապան	150	130	220	—
7. Գարապուրաք	—	—	4	10
8. Գարաբէտօրի	65	57	150	5
9. Գրգմուսա	20	—	—	10
10. Գոլմիսար կամ հոլիասար	—	—	2	15
11. Գապալ	37	59	56	25
12. Գովանդուկ (Կոմանդուկ)	90	80	120	—
13. Եահիա	28	22	40	10
14. Ելպիս	50	52	65	10
15. Եղրղլու կամ Գասպարի գեղ	—	—	5	—
16. Ենիքէօյ	25	30	50	5
17. Թանաքլի կամ Թոնդրակ	—	—	5	15
18. Թարածիգ	—	—	5	—
19. Լաֆյուտաղ	20	12	—	—
20. Խաչաուշ կամ Խաչալոյս	50	48	85	30
21. Խրրք	45	22	40	24
22. Խրրմիսայա	26	19	45	6
23. Խոզան	—	—	4	10
24. Խոզլի	85	84	120	5
25. Հարամիկ	93	112	150	—
26. Մարուֆ (Մարդ)	28	26	45	—
27. Մժնկեբա	15	—	5	40
28. Մոլաաուտ	—	—	1	12
29. Շապատին	23	22	50	—
30. Զեիքմէ կամ Զաուրմա	115	108	180	4
31. Պեկուրտի	—	—	4	15
32. Պուրնագ կամ Բուռնագ	30	30	40	5
33. Սալուորի կամ Սարուալի	10	10	30	8
34. Սաղլու կամ Սաղլի	20	33	45	5
35. Սոկիթլի	12	—	—	15
36. Տուրան	45	35	90	20
37. Փայկ կամ Հայկ	50	—	—	35
38. Քաղքիկ	43	45	110	15
	1427	1266	2202	1024

ԳՈՒՄԱՐ

Այս վիճակագրութիւնը պատրաստուած է 1915-ին եւ լոյս տեսած է էջմիածնի «Արարատ» պաշտօնաթերթին մէջ (1915 Յունիս, էջ 463):

**Սննուսի հայաբնակ գիւղերու տուներու ցանկը.**

Գիւղերու անուանք	տուներու թիւը	ազատուածները
1. Գոպայան	136	48
2. Կովանտուկ	158	18
3. Գարաշոպան	400	50
4. Կըրբմիայեա	52	10
5. Սալորիկ	30	ազատուող չկայ
6. Պուրնաղ	60	»
7. Խըրթ	45	»
8. Խոզլու	230	»
9. Խարաքէօփու	200	»
10. Հարամիկ	200	»
11. Տիւման	30	»
12. Մարուֆ	30	»
13. Շապաղին	60	»
14. Չաուրմայ	250	»
15. Էլփիս	45	»
16. Պալչայուշ	200	»
17. Ախճամէլիք	30	»
18. Բաղքիկ	150	»
19. Արօս	140	»
20. Խնուսայ բերդ	300	»
21. Եէնի քէօյ	40	»
22. Գարապուտաղ	30	»
23. Հէլէլի Գասպարի գեղ	30	»
24. Եահեայ	40	»
25. Եէքմալ	6	»
26. Պարակուիթ	8	»
27. Մժուկերտ	15	»

2915

Վասն ճշտութեան կը հաստատենք

առ-ժամեայ քարտուղաբ

Նազարէք պ. Մեղիյեան

1915 յունիս 1  
Մանագիւրտի-բերդ



**ԳԼՈՒԽ Դ.**

**ԽՆՈՒՍԻ ՔՐՏԱԲՆԱԿ ԳԻՒՂԵՐԸ**

Սննուս գաւառը կը հաշուէր 336 գիւղեր: Հայաբնակ գիւղերու թիւն էր 38: Քրտարնակ գիւղերու թիւն էր 298, որոնցմէ իւրաքանչիւրը 5-20 տուներէ կը բաղկանար:

Հայաբնակ գիւղերուն բաւական լայնօրէն անդրադառնալէ ետք՝ կ'անցնինք տեսնելու քրտարնակ գիւղերը: Շատ յաճախ բաւարարուած ենք անոնց անուններուն յիշատակումով, տեղ-տեղ պղտիկ ծանօթութիւններ տուած ենք: 298 քրտարնակ գիւղերէն միայն 155-ը կրցած ենք տալ հոս:

Արապօ	Խօթուէշ
Խոլիմախսուտ	Քերձ
Շահվերան կամ Շահվերտի	Խոտեւան
Խըզըլախմատ	Դիւանի Հիւսէյն
Խոնգուտ	Կուստէ Համօ
Խասէ կամ Խաշէ, Կաշէ — Իր ժամանակին՝ թոնդրակեցի ազանդաւորներով բնակուած բլլայը կը յիշատակէ Գրիգոր Մազիստրոս իր թուղթերուն մէջ:	Ալօ
Խզմուսա — Ատենին 20 տուներէ բաղկացեալ հայաբնակ գիւղ մը եղած է:	Գումրկան
Խարապուրախ — 8-10 տուն հայ բնակչութիւնը, 1896-ի դէպքերուն հետանալով՝ գիւղը կը դառնայ քրտարնակ:	Շատր
Քաւառ	Խանգրէթ
Հըզեր	Խոլի Մախսուտ
Նըֆթըք — Այս գիւղին մերձակայքը բարիւղի որոշ նշաններ կային:	Նատիր Շահ
Թըրքիշ	Հանի Եուսուֆ
Դեմիրճի	Խամուր — Այս գիւղը, ժամանակին եղած է հայաբնակ պատմական գիւղաւան մը:
Դըռնոնք կամ Թըռչոնք	Կանիէ Մշկան — Այս գիւղին մերձակայքը կը գտնուին աղի հանքեր, մերմակ կամ պաեագ տուզա, կարմիր կամ իրրմրգի տուզա, եւ մշկան տուզա: (Տեղացիները կը նախընտրէին կարմիր աղը եւ աղջուրը):
Թանկերակ	
Հորմըզան	

Վերի 30 գիւղերը, կը գտնուէին Խամուր բերդի սարալանջերուն, պատմական Վարաժնուցիքի շրջանը:

Ազվերան — Արաքս գետի մէկ ճիւղին վրայ կառուցուած. ջուրը այնքան յորգահոս (զրախ) է այս գիւղին մօտ, որ վայրի բազերն անգամ չեն իջնար (համարձակիր) ջուրը մտնել: Գիւղին մերձակայքը կը գտնուի շատ վտանգաւոր կիրճ մը՝ Ազվերանայ Գէտուկ անունով:

Բօռ ջուր կամ Գոռ ջուր — Արաքսի մէկ ճիւղին վրայ կառուցուած:

Կիւզլ Տէրէ  
Չամուռլի  
Թոփրագգալէ

Վերի երկու գիւղերը 1906-ին՝ Կովկասէն գաղթած քաթար մուհաճիրներով բնակուած էին:

Խոզան  
Անտալագոս  
Պուրիան կամ Բուր Հան  
Դատավերան

Գունտուզ — Իր մերձակայքը՝ Սպիտակ սարի վրայ, ենթադրաբար արծաթի հանքի նշաններ կային, որուն համար հայրս այդ լեռի հողերը տափու (իրաւատիրութեան օրինական թուղթ) ըրաւ, Սահմանադրութեան շրջանին:

Վերի 10 գիւղերը կ'իյնան Սպիտակ սարի լանջերուն: Սպիտակ սար կամ Ազ տազ՝ արեւմուտքէն, Ազվերանի Գէտուկէն սկսելով ծանօթ էր Դեղքափի սար անունով. իսկ արեւելեան կողմէն դէպի Կեօֆուս — Գարաեագ — Անթափ շրջանը կ'ըսուէր Սպիտակ սար, եւ կը միանար Գոզըլ Պապա սարին, որ կը սահմանակցէր Պուլանուտիին:

Այս շրջանը կը համեմատի պատմական Տուարածատափին:

Կեալէռէշ (Սեւ բերդ) Փայվերան

Չաւուշի գիւղ — Փայվերանի եւ Կեալէռէշի միջեւ:

Կունտէ Պարոյր (Պարոյր գիւղ) — Չաւուշի գիւղէն մէկ ժամ վեր գէպի արեւելք՝ խոշոր վտակի մը երկու եզերքներուն վրայ: Ունի շատ աւերակներ, զորս քաղաքատեղի ըլլալ կը կարծեն:

Չուլլու — Մէջիթլու քրտաբնակ-գիւղէն մէկ ժամ գէպի արեւելք եւ Փայվերանէն մէկ կուկէս ժամ դէպի արեւմուտք, ուր կար տգի հանք:

Գրգըլգալէ կամ Խըզըլխալէ (ԱզՂկայ բերդ)

Ապտուլլա  
Բըռուս  
Խարապուրախ

Վերի 10 գիւղերը Գարաեագի շրջանին մէջ են՝ պատմական Դասնաուրք:

Խըզըլխանա  
Հըպան  
Ջըրգընա  
Տորախան

Քէշիշան կամ Քէշիշ Աւրան — Քէշիշ Վերան — Այս գիւղին նշանաւոր գէպի մը մասին, տեսնել Հայր Ղուկաս վրդ. Ինճիճեանի «Աշխարհագրութիւն շորից մասանց աշխարհի», Ա. հատոր, էջ 84:

Քըքաննի  
Գունիմարա  
Գումրգան  
Հանի Սէիտ՝ Պէկգատի Անմատի գոմ:

Խըզըլխան  
Հօրէգոմ  
Ռաշան  
Մուրիան  
Նագէ  
Գարամանիսա  
Բոկ Մահմատ  
Քէօշի կամ Հանի Ամիր Քէօշ  
Տուկրաշէն

Վերի 18 գիւղերը կ'իյնան Կեօֆուսի Անթափ շրջանը, պատմական Տուարածատափ:

Խարախուլա  
Գոզալդարա  
Խըտօնուս  
Խըրպէգօր կամ Խէրպըձոր  
Մատրաֆ — Անուանի էր աւագակարայ ընկերներով եւ մերձակայքի ճահճներով եւ թունաւոր օձերով:

Թաշֆեմու  
Թաշֆեսան  
Խանպէկի  
Սեւիկ  
Տիւգիւրտ  
Տէլիկքաշ

Քիւլլի — Արաքս գետի ափին կառուցուած, նշանաւոր էր իր քարաշէն կամուրջով, եւ ոչս կակոյի տունով: Հայութիւնը Կովկաս գողթած էր ուս-թրքական պատերազմին հետեւանքով, Ջօր. Պասքելիշի նահանջող բանակին հետ:

Շախշախ — Քիւլլիէն գէպի հարաւ, մէկ ժամ հեռու, Արաքս գետի աջ ափին: Հին աւերակ քաղաքի մը զերբուկները կը գտնուին իր մերձակայքը:

Չաքուլիս — Քիւլլիի եւ Գարապուրաքի միջեւ:

Խաթրանլար — Այս գիւղին մերձակայքը քարիւղի հանք կար: 1908-ի Սահմանադրութեան շրջանին, կարնեցի մեծահարուստ Փատրմոճեան ընտանիքը շահագործուի արտօնութիւն ալ ստացաւ, սակայն զորքը կիսատ մնաց, հայկական ծանօթ գէպերուն հետեւանքով:

Խարափուղար — Տիւրք յիշատակ: 1915-ի տարադրութեան ահաւոր օրերուն, Խնուէն-Կարին՝ մեր 800 խնուցի տարադիրներու տարապարհակ աշխատանքի տանելու ճամբան, այս գիւղէն անցաւ: Գիւղին դիմաց, ըլլուրին ստորտին, Գասպար հօրեղբայրս յանկարծամահ ինկաւ: Իւրաքանչիւրս՝ ճանապարհին առնթեր քարերէն խիպար մը դնելով հօրեղբորս անշնչացած դիակին վրայ՝ քարաբլուր մը կազմուեցաւ:

Գարաֆիլիսէ — Սր. Աստուածածին անունով հայկական մատուռի մը աւերակները կը գտնուէին այս գիւղին մերձակայքը:

Սէօյլէմէգ  
Առնիս  
Կուրէ Հասան  
Ալթուն

Աւնիկ — Այս գիւղին մերձակայքը կային հին բերդի մը աւերակները:

Թաքոս — Իր մերձակայքը կը զըտնուէր Թաքոս տուղա ստորերկրեայ աղ ջուրի հանքը:

Դէրէլէր  
Եոննալու  
Բելաջապու  
Պուզլու

Օտապաշու Չաւուրմա — Նախապէս եղած է զուտ հայաբնակ մեծ գիւ-

դաւան: Հոս կը գտնուին արտա- սովոր մեծութեամբ քառասուն գերեզմաններ, որոնց երբխար անունը կու տային: Իւրաքանչիւր գերեզմանի երկայնքը քսան կան- գուն կը շափուէր, խաշակիր տա- պանաքարերով: Այս շրջանին մէջ կը գտնուէի նաեւ Բորժի Մատուր անունով պատմական վանք-ճրդ- նարանը:

Քեչելու  
Մէնիսուր  
Մեյիմ

Վերի 31 գիւղերը Թագմանի շրջա- նին մէջ են՝ պատմական Մարդաղի:

Թաշֆեսան — Այս գիւղին մօտա- կայքը կայ հսկայական խորհու- րատ մը, ուրկէ կը հոսի վտակ մը: Ձորին բարձրութենէն կը սկսի ընդարձակ հարթութիւն մը դէպի արեւելք, եւ քարքարուտ ճանապարհով դէպի հիւսիս-ա- րեւմուտք՝ կը հասնի Սանամ Քա- րեր կոչուող երկու հսկայական ապառաժներուն, որոնց մէջէն կ'անցնի հասարակաց ճամբան: Սանամ Քարերու մասին հետեւ- եալ աւանդութիւնը կար, թէ Սանամ անունով գեղազէմ հայ աղջիկ մը կ'առեւանդուի, եւ ա- ուեւանդիչները երբ կը հասնին այս քարերուն, հոս Սանամ ի- րենցմէ կը խնդրէ որ թող տան քիչ մը հանդէի եւ ազօթէ: Խնդրանքը կը պլացուի իրեն, ո- րով ինքն ալ կ'ըմբոստանայ ճամ- րան շարունակել: Հոս առեւան- գիչներու բարբարոսական ա- րարքը կը հասնի իր զազաթնա-

կէտին, եւ Սանամ կը յօշոտուի ... ու իր անունով ապառաժները կ'անուանուին Սանամ Քարեր:

Խրզրլնա — Պինկոյ սարի լանջին: Իր մերձակայքը կը գտնուէր պղինձի հանք Խրզրլնու Խազանիւղ անու- նով: Իր պղինձը կը շահագոր- ծուէր նախնական ձեւով:

Քուլնա — Իր մօտերը կը գտնուէր քարայր մը, Խնուսի եւ Վարդոյի սահմանին վրայ, որուն համար կ'ըսուէր թէ ներսը՝ քարածեղքէ մը միշտ մեղր կը թափի:

Խարղաշ  
Մուլխուրան  
Պէկուրտի  
Մուլատաուտ  
Բաղջա — Խնուս բերդաքաղաքի հա- րաւակոյմը, բնակուած քիւրտ եւ լաղկի բնակչրով:

Ղալանի  
Վերանշահար  
Շէկակ  
Խըսըխի  
Գարաղազման  
Գումէ Մահմէտ  
Բաշչիֆլիկ  
Բոստան  
Խարաղան  
Խըզըլթէփէ  
Խալանուխ  
Խուրուհուխ — Այս գիւղին մերձա- կայքը կը գտնուէր խորունկ ձոր մը եւ պատուական յետանաքարի հանք մը:

Խարանի  
Խըրխըսուր  
Սըլսըզ — Խղլպաշ կամ շարեկցի ա- զանգասոր քիւրտերու գիւղ:  
Պաշֆէոյ — Խղլպաշ գիւղ. ժամանա- կին հայաբնակ եղած է, սակայն 1877-ին հայերը զաղթած են կով-

կաս: Երկու կամ երեք հայ ըն- տանիք կ'ապրէին հոս: Երեւանի Սուեդուէկեան թատրոնի վաստա- կաւոր դերասան՝ Ժան Էլոյեան այս գիւղէն է:

Թըրպէգօր — Խղլպաշ գիւղ:  
Մերկէզըր — Խղլպաշ գիւղ. կը կոչ- ուէր նաեւ Մերկէ Չարկ:  
Սոկիւթլի — Խղլպաշ գիւղ. ժամա- նակին եղած է հայաբնակ:  
Թըրպէզըրպ — Խղլպաշ գիւղ:  
Խարապա — Խղլպաշ գիւղ:  
Միրսէիտ — Խղլպաշ գիւղ. շինուած էր Խնուս բերդ քաղաքի՝ հին բերդի աւերակներուն մերձակայ- քը:

Բարմաղսըզ  
Պաշֆէնտ  
Ալի Մուր  
Դուն Գում  
Չոկնու  
Էլոքիս  
Էրկամս  
Թոլով  
Ի Նախ  
Կանի Պագ  
Մալասօր  
Մէրմէր գում  
Հալիֆէ

Վերջին 14 գիւղերը բնակուած են իսլաւաշներու կողմէ:

Վերի 43 գիւղերը Շուշարի շրջանն են, մերձ պատմական Մանանաղի գա-ւառին:

Համգան կամ ձերկոյի գիւղ — Էր- գրումէն-Մուշ տանող ճամբուն վրայ, Շուշարի սահմանաղու- խին, Պինկէօլի հիւսիսային ստո- ըտը, Խնուս բերդէն Եօթը ժամ հեռու, բլուրի մը վրայ, ուր կը գտնուէին Քէօռ Օզլի անունով բերդի մը նշանաւոր եւ ընդարձակ աւերակները:

Սեղնաքար կամ Սեղնաքար Մաման կամ Մամիկոնեան — Էրզրու- մէն Պինկէօլի վրայով դէպի Ս. Կարապետ տանող ճամբուն վրայ կ'իյնայ:

Խըրքան  
Պաստոֆ  
Դաշլիէն  
Ղալանի  
Սեւրքան  
Կէօֆօղլան  
Մէրխուֆ  
Քէչէլան

Չարպուօր — Չէրքէյներու գիւղ, Խնուսի եւ Վարդոյի սահմանակէ- տին, Արածանի գետին վրայ. յի- շած ենք նախապէս Լաքպուտաղ գիւղը:

# ԳԼՈՒԽ Ե.

## ԽՆՈՒՍԻ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԱՍՏՍՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Խնուս գաւառի տեղադրութիւնն ու պատմութիւնը տալու առն՝ անդրադարձած ենք շրջանին մէջ գտնուող վանքերուն, եկեղեցիներուն, աւետարաններուն եւ դպրոցներուն: Հոս կ'առանձնացնենք զանոնք, տեղադրական եւ պատմական յաւելեալ տեղեկութիւններ տալով:

Դժբախտարար ցանկը ամբողջական չէ: Անոնց անունները կը վրիպին շատ յաճախ մեր յիշողութենէն եւ չենք ալ կրցած ուրիշ տեղ գտնել: Այն ինչ որ գտած ենք, կ'արձանագրենք հոս:

### ՎԱՆՔԵՐ

**ԲՈՐԺԻ ՄԱՍՈՒՐ ՎԱՆՔ.**— Մոռացութեան մատնուած այս դարաւոր վանքը կը գտնուի Թաղմանի կամ Մարդաղիի շրջանը, որ ժամանակին հոծ հայութիւնով բնակուած էր, եւ սակայն 1829-30 ոռուսական բանակին Կարինէն նահանջի հետեւանքով, հայութիւնը կը զաղթէ Կովկաս, եւ այս շրջանը կ'ամայանայ: Վանքը ժամանակին նշանաւոր եղած է՝ ուր ապրած է, անապատական սուրբ՝ Երանելի Գինդ, Մեծն Դանիէլի աշակերտը, եւ ծաղկեցուցած է միարանութիւն մը, ուսուցանելով աստուածային կրօնը, եւ սահմանելով, կամ օրէնք դնելով ուղիղ կարգերով՝ աշխարհի վրայ մարդկային կեանքը ապրել: Այս վանքը ապրած է նաեւ Յովհաննէս Աբրայ Վահագունի, Թոնդրակեցի աղանդաւոր մը, որուն մասին, Պօղոս վրդ. Մհերեան կը գրէ. «Թագմանի մէջ կար վանք մը, կամ մեհաստան մը, ուր առեմ մը ապրած է տաղանդաւոր Յովհաննէս անունով աբբայ մը, 1774-1781 քուսկաններուն, որ կեղծ եպիսկոպոս սեւանալով, սեռնադրած էր 14 քահանաներ եւ պատմառ դարձած բագմաթիւ իրարանցումի եւ խոսովութիւններու: Թերեւս Հալիլ Բարա անունով ծանօթ եւ նահատակուած, իր գերեզմանը կը ցուցնէին, Խրեմուսի Խրքք հայաբնակ գիւղին մերձակայքը, Քառասուն Մանուկ կոչուած սրբատեղը, որ ուխտատեղի էր հայոց եւ քրդաց»:

**ԳՈԳՍՈՒԱՅ ՎԱՆՔ.**— Խնուսի Կէօքսուի շրջանին մէջ կը գտնուի աւերակ վանք մը, հաւանարար Ժ. դարուն կառուցուած, որուն մասին «Նոր Դար» օրաթերթին մէջ գրուած է. «Խնուսի գաւառակից մէջ Գոգսուայ վանքը գտնուում է մի գեղեցիկ ձորի մէջ... Պատերը փլած են եւ մնացել է միայն խորանը: Գուցէ Ժ. դարուն հիմնուած է: Սրբատաշ քարի մը վրայ կայ՝ «Շինեցաւ եկեղեցիս ի թագ. Աշոտ...» (1897, Թ. 121):

**ԹՈՒԽ ՄԱՆՈՒԿ ՎԱՆՔ.**— Այս վանքը Ենիքէօյ գիւղին մերձակայ հողադուրի մը ներքեւէն գտնուեցաւ 1907 թուականին: Գիւղացի հողագործ մը, արտը վարած առնն, արօրը պատահարաւ կը բռնուի քարի մը. արօրին խոփը հողէն հանելու առնն՝ կը բացուի վանքին պատը. հետզհետէ պեղում կատարելով շէնքը կը յայտնուի: Թուրք կառավարութիւնը արգիլեց պեղումը շարունակել, սակայն 1908 թուականին, Օսմ. Սահմանադրութեան օրերուն, պեղումը շարունակուեցաւ եւ սրբատաշ քարերով շէնքը լրիւ յայտնաբերուեցաւ, 157 ոտք երկայնքով եւ 57 ոտք լայնքով:

**Ս. ԿԱՐԱՊԵՏՈՒ ՎԱՆՔ.**— Վանքը կառուցուած էր Մժնկերտ գիւղին մերձակայքը, գեղատեսիլ դիրքով բլուրի մը վրայ. առջեւէն կ'անցնէր Դեղ-Թափի ջուրը: Ըստ աւանդութեան, այս վանքը դաստակերտն է Դրիգոր Լուսաւորչի (Տէ'ս «Ապաթանդեղոս», էջ 300): Վանքին խաչարձաններուն վրայի թուականը (ՋԱ=901): Եկեղեցիին դմբէթը 3 եւ կէս մէթր տրամագիծով շէնքին կեդրոնը կը բարձրանայ: Պաշարներուն մեծութիւնն է 3 եւ կէս մէթր բարձրութիւն, երեք չորրորդ մէթր լայնութիւն:

**Ս. ՅՈՎՀԱՆՆԷՍԻ ՎԱՆՔ.**— Եահիա հայաբնակ գիւղին հարաւային կողմը կը գտնուին այս վանքին աւերակները: Լուսարարեան այսպէս կ'արտայայտուի. «Եահիա Յովհաննէս գիւղը կը թուի թէ իր անունը առած ըլլայ իր մօտերը գտնուած վանքի մը աւերակներէն» («Գաւազանագիրք», էջ 138):

**ՆՈՐԵԼԱՍԻ ՎԱՆՔ.**— Վանքը կը գտնուէր Աբոս հայաբնակ գիւղին մերձակայքը, Արջաձոր կամ Նորելաձայ ձոր կոչուող խորունկ ձորի մը հարաւակողմը, բարձրադիր քարայրի մը մէջ: Նշանաւոր էր մեր օրերուն ալ. թէեւ պաւառի հայերը ուխտի կ'երթային հոս, սակայն, վանքը կը մնար անուանական: Առաւելապէս դարձած էր ապաստանարանը հայ յեղափոխականներուն: Ֆիրաք ֆէտայիները վտանգի պահերուն եւ յեղափոխական շարժումներու ընթացքին՝ հոս կ'ապաստանէին: Քարայրին մուտքը դժուարամատչելի էր, մալլցելով պիտի բարձրանային մուտքին հասնելու: Շատ անգամ, հոս ապաստան գտած են՝ Գէորգ Չառուշ, Հրայր, Կորիւն, Փիլոս, Դեբենիկ եւ ուրիշներ:

վԱնՔիկ.— Այս աւերակ վանքը կը գտնուէր Խալիլշատուշ կամ Խալալոյս հայաբնակ գիւղին մերձակայքը: Նշանաւոր ուխտատեղի էր: Իր մօտերը կը գտնուէին Շարան Քարերը: Այս քարերը ոչխարի նմանութեամբ, իրարու ետեւ շարուած արձանացած կը մնային: Շարան Քարերու աւանդութիւնը մենք տուած ենք առանձին էջով մը:

**ԵԿԵՂԵՑԻՆԵՐ**

ՍՈՒՐԲ ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ.— Խնուս բերդ՝ քաղաքի քարաշէն եկեղեցին կառուցուած էր ձորաբերանին, բարձրագիւր քարաբլուրի մը վրայ, առջեւէն կ'անցնէր Խնուսի դետը կամ Արածանիի սկզբնաւորութիւնը կազմող ջուրը: Երկրաշարժի մը հետեւանքով, պատերէն մին կը ճեղքուի, սակայն, վարպետ որմադիր մը դայն կը նորոգէ եւ ապահով կը դարձնէ:

ՍՈՒՐԲ ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ.— Չաւուրմա գիւղի Ս. Աստուածածին եկեղեցին սրբատաշ քարերով կառուցուած էր, գիւղէն դուրս, գետափէն քարընկէց մը հեռու տափարակ դետինի մը վրայ: Առջեւէն կ'անցնէր հասարակաց ճանապարհը, որուն առընթեր էր գերեզմանոցը:

ՍՈՒՐԲ ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ.— Ենիքէօյ գիւղին մէջ:

ՍՈՒՐԲ ԳԷՈՐԳ.— Գովանդուկ գիւղը ունէր շատ հնամեայ եկեղեցի մը՝ Ս. Գէորգ անունով: Երջան մը գիւղը բազմամարդ եղած է եւ եկեղեցին երկու հովիւներ ունեցած է:

ՍՈՒՐԲ ԳԷՈՐԳ.— Ելպիս գիւղի Ս. Գէորգ եկեղեցին կառուցուած էր գիւղէն դուրս բարձրագիւր հարթութեան մը վրայ, քարաշէն, հին եւ անյիշատակ ժամանակի շէնք էր: Առջեւէն կ'անցնէր հասարակաց ճանապարհը: Եկեղեցիին գիւրքը կ'իշխէր գիւղին, գիւղին առջեւէն անցնող Արածանիի սկզբնաւորութիւն եղող գետին եւ Շոռաղներ ըսուած աղապետին:

ՍՈՒՐԲ ԳԷՈՐԳ.— Խողլի գիւղը ունէր անշուք եկեղեցի մը:

ՍՈՒՐԲ ԳԷՈՐԳ.— Շապատին գիւղի եկեղեցին քարաշէն էր՝ Ս. Գէորգ անունով: Շինուած էր հասարակաց ճանապարհին առընթեր, գետեզրէն հապիւ քարրնկէց մը հեռու:

ՍՈՒՐԲ ԳԷՈՐԳ.— Սայլու գիւղի եկեղեցին կառուցուած էր Կարմրական ձորաբերանի բարձրագիւր՝ հարթ գետնի մը վրայ, գիւղէն դուրս: Իր

անմիջական քովն էր գերեզմանատունը, ուր կը թաղէին թէ՛ իրենց եւ թէ՛ բերդաքաղաքի ննջեցեալները:

ԹՈՒԽ ՄԱՆՈՒԿ.— Մարուֆ գիւղին մէջ:

ԹՈՒԽ ՄԱՆՈՒԿ.— Պուռնաղ գիւղը ունէր Թուխ Մանուկ անունով եկեղեցի, նաեւ նոյնանուն սրբատեղի մը, սուրբին դամբարանով, որուն համբաւը տարածուած էր զաւատին մէջ, թէ իրեն գացող հիւանդները կը բուժուին: Կար նաեւ Ս. Սարգիս անունով տաղաւար մը, ուր ուխտի կ'երթային ել կամ քամի ունեցողները՝ բժշկուելու հաւատքով: Եկեղեցիին շրջակայքը կային արտասովոր խոշորութեամբ տապանաքարեր:

ԹՈՒԽ ՄԱՆՈՒԿ.— Տուժան գիւղին մէջ:

ՍՈՒՐԲ ԿԱՐԱՊԵՏ.— Գոպալ գիւղը ունէր անշուք եկեղեցի մը՝ Սուրբ Կարապետ անունով: Քահանան՝ Տէր Աւետիս անունով՝ հարիւրամեայ քաջառողջ եւ իմաստուն անձ մըն էր:

ՍՈՒՐԲ ՂԵՒՈՆԴԵԱՆ.— Հարամիկ գիւղի Ս. Ղեւոնդեան եկեղեցին՝ խոշոր եւ անշուք շէնք մըն էր. իր նախորդը եղած է քարաշէն, կառուցուած բլրակողքին: Բլուրին վրայ էր գերեզմանոցը: Աւերակ եկեղեցիին քովնտի՝ կար Թուխ Մանուկ անունով մատուռ մը, ներսը քառաթեւ խաչքարով շիրմաքար մը, որ հաւատացեալ ուխտաւորներու խունկ ու մոմի եւ ձէթի խաւով մը ծածկուած էր:

ՍՈՒՐԲ ՄԵՍՐՈՊ.— Գարաքէօփրի գիւղը ունէր անշուք եկեղեցի մը, Ս. Մեսրոպ անունով:

Ս. ՅԱԿՈՒԲ.— Աղջամելիք գիւղը ունէր հին, քարաշէն եկեղեցի, իսկ գիւղին մերձակայքը կային նաեւ վանքի մը աւերակները, որոնք կ'իյնային զոյգ մը ընդարձակ բլուրներու միջեւ:

ՍՈՒՐԲ ՅԱԿՈՒԲ.— Գարաչոպան գիւղը ունէր քարուկիր եկեղեցի մը՝ Ս. Յակոբ անունով: Կառուցուած էր 6 քարասիւններու վրայ: Ունէր 3 խորաններ, զանդակատուն՝ երկու դանդակներով: Զանդակները բերուած էին Թիֆլիս քաղաքէն:



Ս. ՅԱՐՈՒԹԻՒՆ.— Խըրթ գիւղը ունէր քարաշէն մատուռ մը:

Ս. ՅԱՐՈՒԹԻՒՆ.— Քաղքիկ գիւղը ունեցած է քարուկիր եկեղեցի, մեր օրերուն, սակայն, անշուք եկեղեցի մը կար, շինուած՝ գիւղէն դուրս, աւերակ եկեղեցիին մերձակայքը:

Ս. ՅՈՎՀԱՆՆԷՍ.— Եսհա գիւղին մէջ:

ՍՈՒՐԲ ՍԱՐԳԻՍ.— Արօս ունէր երկու եկեղեցի: Մէկը կը գտնուէր գիւղին գերեզմանոցին մէջ, որուն համար կը պատմուէր թէ ԺԵ. դարուն կառուցուած է՝ Սուրբ Սարգիս անունով (Տես «Նկարագրական ուղեւորութիւն ի հայաստանի գաւառս», Մանուէլ Կ. Միրախորեան, հատ. Ա., էջ 28-29): Նոր եկեղեցին շինուած էր միակտուր և քարասիւներու վրայ, իւրաքանչիւր քարասիւնը և մէթը բարձրութեամբ: Կառուցուածքը սրբատաշ քարերով էր, քանի որ Արօսի մօտակայ քարահանքերը գիւրութիւն կ'ընծայէին:

ՍՈՒՐԲ ՍԱՐԳԻՍ ԶՕՐԱՎԱՐ.— Խալչաուշ կամ Խալչալոյս գիւղը ունէր Ս. Սարգիս Զօրավար անունով եկեղեցի մը: Կը պատմուէր, թէ թուրք պետական պաշտօնեայ մը, անգամ մը գիւղը կ'այցելէ, եւ կը նկատէ որ գիւղը եկեղեցի չունի. գիւղացիները հաւաքել կու տայ եւ կը ստիպէ որ եկեղեցի շինեն, խոստանալով որ պետութեան արտօնութիւնը ինք պիտի առնէ, եւ արտօնութիւնը — ֆէրման — առնելով, եկեղեցին շինել կու տայ:

Լաքուտաղ գիւղի եկեղեցին կը մնար տակաւին. կիսաւեր ու ամայի էր. 1888 թուականին՝ հայերը բռնութեամբ գիւղէն կը վտարուէին, եւ շէրքէզներով կը բնակուի: Եկեղեցիին անունը անձանօթ է մեզի:

**ՆՇԱՆԱՒՈՐ ԱԻԵՏԱՐԱՆՆԵՐ**

- ԳՈՊԱԼ — Տէր Աւետիսի՝ կամ Իրիցու տան Մեռել Յարոյց Աւետարան:
- ԽԱԼԻՂԱՍՈՒՇ — Քօջօ տան Աւետարան, որուն համար կ'ըսուէր թէ Մեսրոպ Մաշտոցի ձեռամբ գրուած է:
- ԽՆՈՒՍ ԲԵՐԴ — Մեռել Յարոյց Աւետարան:
- ԽՈՉԼԻ — Շէկ Աւետարան: Շատ համբաւ ունէր գաւառին մէջ: Աւետարանին մասնաւոր ծառայող, կոյս տարեց աղջիկ մը կար շոտ (Հոփսիմէ) անունով: Աւետարանի զուլն է կ'ըսէին:
- ՀԱՐԱՄԻԿ — Իրիցու Խջօ տան Աւետարան:
- ՊՈՒՌՆԱԶ — Թուր Մանկայ Աւետարան:
- ՍԱՅԼՈՒ — Մհերի տան Աւետարան:

**ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐ**

ԽՈՒՍ  
ԱՐՔ. ԳՐԻՋ

1318

... Աւարտեցաւ ի թուականութեան Հայոց ՉԿԵ եւ ի թաղաւորութեան Հայոց Օշնի եւ ի Հայրապետութեան Տեառն Կոստանդինայ ի գիւղաքաղաքն որ կոչի Խնուխ ընդ հոյանեաւ Սր. Ածածնիս: Որք հանդիպիք ամայ անմոռաց յիշեցէք Պարոն Լիպարիտն եւ զՄեծ Պարոնն եւ զգերարոյս գտակն իւր զնուրատին...

Գրիչն է Արք. քննյ.: Ձեռագիրը ԺԷ. դարէն կ'երևայ, հասանօրէն օրինակուած 1318ին գրուած նախապաղափարէ, ուստի գրիչն, ստացիչն եւ քաղաքը կարող է նոյն օրինակողէն ըլլալ, որ շահագործած է միայն հին յիշատակարանը:

1587

Դաւիթ Գեղամեցի  
ԽՈՒՍ

... Ես Դաւիթ եպիսկոպոս յերկրէն Գեղամայ ի խոննակ... Ժամանակիս որ Աւսմանլու (օսմանլու) ազգ ի յարեւելեաց աշխարհին... շատ բերդաքաղաք էառ, եւ զԹարեղ քաղաքն էառ, զի այս ամ Ժ. ամ եղի որ յարեւելից աշխարհն վտանգի կայ, սով, եւ մահտարածամ. եւ ես սուտանուն Դաւիթս գրեցի զՍուրբ Աւետարանս ի յերկիրս Խնուս, եւ գիւղս որ կոչի Արան. ընդ հոյանեաւ Սուրբ Սարգիս... ի թվ. ՌԼԶ, ի կաթողիկոսութեան տեսան Գրիգորի յաթոն Ս. էջմիածնի. վաղուց հետէ զիւր չէի գրել. եւ էի տեղացս զարիպ, եւ հոյս շատ ունէի:

«Թորոս Աղբար», Բ. հատոր, էջ 446:

1676

ԽՈՒՍ Ղարաթօրփու

Մաշտոց, գրեալ ձեռամբ Կարապետ Դպրի ի թվ. ՌՃԻՆ զի գալան Խնուսայ ի գիւղն Ղարաթօրփու, յիճակին Սր. Կարապետ ի յատաճորդութեան Սր. տխարն Տն. տհրեղ-ին Թաթևասի եւ Ընթատակէսի ամէն, Ստացոյ՝ Մարթա, վասն նորրնծայ քննյ. տէր Դաւիթս:

Ձեռ. բրտի թաղեցի Այվաշարեան Ստեփանի սեփական: Ընդոր. Գեղամ էջ:

**ԳՊՐՈՑՆԵՐ**

- ԽՆՈՒՍ ԲԵՐԴ — Խաչիսաչեան անհատական վարժարան:
- Ս. Գէորգեան վարժարան, Գ. դասընթացք:
- Միացեալ Ընկերութեան վարժարան, Ը. դասընթացք, 1909-ին:
- Ամերիկեան Միսիոնարաց, բողոքական վարժարան:
- ԱՂՃԱՄԵԼԻՔ — Ներսէսեան վարժարան, Գ. դասընթացք:
- ԱՐՕՍ — Խորէնեան վարժարան, Գ. դասընթացք:
- ԳԱՐԱԶՈՊԱՆ — Ս. Ղեւոնդեան վարժարան, Զ. դասընթացք:
- ԳՈՎԱՆՏՈՒԿ — Ներսէսեան վարժարան, Գ. դասընթացք:
- ԳՈՊԱԼ — Ազգային նախակրթարան, Գ. դասընթացք:
- ԵՆԻՔԷՕՅ — Դիմաքսեան վարժարան, Գ. դասընթացք:
- ԽԱԼԻԶԱՍՈՒՇ — Ազգային վարժարան, Գ. դասընթացք:
- ԽՈԶԼԻ — Ազգային վարժարան, Գ. դասընթացք:
- Ամերիկեան Միսիոնարաց, բողոքական վարժարան, երկսեռ:
- ՀԱՐԱՄԻԿ — Ս. Սահակեան վարժարան, Ե. դասընթացք:
- ՉԵՒԻՐՄԷ — Ազգային նախակրթարան, Գ. դասընթացք:
- ՇԱՊԱՏԻՆ — Աբամեան վարժարան, Գ. դասընթացք:
- ՔԱՂՔԻԿ — Ազգային նախակրթարան:

Գաւառի մնացեալ հայաբնակ բոլոր գիւղերն ալ վարժարան ունէին. մանաւանդ 1908-ի Օսմանեան սահմանադրութեան ընծայած շատ թէ քիչ ազատութիւնը, աւելի առիթ եւ դիւրութիւն տուաւ ուսման եւ կրթութեան տարածման:

**ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆՆԵՐ**

**1.—ՄԱՄԻԿՈՆԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ (1878-1880)**

Խնուսի մէջ կազմուած հնագոյն ընկերութիւններ չեն յիշուիր: Մեզի ծանօթ մշակութային առաջին ընկերութիւնն է «Մամիկոնեան Ընկերութիւն»ը, որ կը յիշուի 1881 Նոկտ. 3-ին, պատահական ճամբորդէ մը՝ Պետրոս Շիւշերեանէ, որ Խնուսի այցելութիւն մը տալով՝ հոն կը գտնէ «Մամիկոնեան Ընկերութիւն» մը, բայց առիթ չ'ունենար տեսնուելու ընկերութեան անդամներուն հետ (Հայրեմիք, Պոլիս, 1881, թ. 862):


Մեզի հաւանական կը թուի թէ ընկերութիւնը հիմնուած ըլլայ 1878-1880-ին:

**2.— . . . . . ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ (1880-1883)**

Խնուսի առաջնորդական փոխանորդ՝ Եսայի վրդ. Ղեւոնդեան, երեք տարիի չափ, 1880-1883, վարած է իր պաշտօնը: 1880-1883 տարիներուն՝ Խնուս քաղաքի եւ գիւղերուն մէջ ընկերութիւններ հիմնած է, որոնց նպատակը եղած է «բարեգործութիւն»: Դժբախտաբար ո՛չ մէկ տեղ հանդիպած ենք այդ ընկերութիւններու անուններուն, որոնք «քանի մը հատ» եղած են (Տե՛ս Արեւելք, Պոլիս, 1888, թ. 1480): Այդ ընկերութիւններէն մէկը կրնանք նշանակել անձամօք անունով ընկերութիւն մը՝ հիմնուած 1880-1883ին:

**3.— ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆ (1910)**

Կը յիշուի 1910 Ապրիլ 8-ին՝ իբրեւ «նորահաստատ միութիւն»: Հիմնուած կ'երեւի 1910 Մարտի վերջերը կամ Ապրիլի սկիզբը: Իր նպատակն է. «Ոյժ տալ համայնքի կուլտուրական, զրական, թատերական, հասարակական զանազան պահանջների պահանջներն» (Յառաջ, Կարին, 1910, թ. 30): Իր ծրագիր-կանոնագիրն է Կարնոյ «Երիտասարդական Միութեան» կանոնագիրը՝ «յարմարցուած Խնուս բերդի միջավայրի թոյլատրելի պայմաններին» (Անդ):



Մկրտիչ Վրդ. Չլխատեամ

# ԳԼՈՒԽ Զ.

## ԱԶԳԱԳՐՈՒԹԻՒՆ

### ՀԱԽԱՏԱԼԻՔՆԵՐ

Տունէն ներս մտնելու ատեն, աջ ոտքը առաջին անգամ սեմէն ներս զնելը՝ նշան է յաջողութեան, բարխաւորութեան:

Ճամբորդութիւն սկսելու պահուն, ապակեղէն կամ հողէ աման կոտրելը՝ նշան է յաջողութեամբ կը կատարուի ճամբորդութիւնը:

Ճամբորդին ետեւէն ամանով ջուր կը թափեն եւ ամանը կը կոտորեն. շուտով եւ յաջողութեամբ տուն դառնալու բաղձանքին արտայայտութիւնն է:

Ճամբորդութեան սկսած պահուն, սեւ կատու դէմ ելլելը, նշան է ճախողութեան, մտադրուած գործի անյաջողութեան:

Անժամանակ հաւախօսը, նշան է դժբախտութեան, չար պատահմունքի: Տան երկնց անդամը անմիջապէս կը հրամայէ. «Էտ հաւու վիզնի Ֆլտէք»:

Ականջը կանչելը, նշան է բարի կամ չար լուր ստանալու: Ենթական կ'ըսէ «Յանկանսի ճնկաց, խէ՛ր, խէ՛ր, խէ՛ր էղնի»:

Աջ աչքին խաղալը՝ նշան է դժբախտութեան, չար պատահմունքի:

Մոծբակ քերելը՝ նշան է յուսախարութեան, շփոթութեան:

Ցուցամատր բերան մտցնելով եւ հանելով ցոյց տալը, նշան է մերկութեան, ազբառութեան, խեղճութեան:

Բթամատր վերի ծնօտի ատամին կպցնելով, ծնօտը վերցնելը՝ նշան է պարճանքի, անկարելիութեան եւ անիրականութեան:

Չեռքերը խաշկապ, կուրծքի վրայ կապելը՝ նշան է սուգի, դժբախտութեան:

Իրիկուան պահուն, շան երկար ոտնոցը նշան է փոքր մանուկներու համաճարակ հիւանդութեանց. (Չարը բարիի փոխելու հաւատքով՝ կօշիկ մը երեսն ի վար կը գարձնէին):

Իրիկուան պահուն յուսնկայի բակ բռնելը նշան է յաջորդ օրը անձրեօկու:

Իրիկուան պահուն, յուսնկայի սկաւտակի կարմրապոյն երեսոյթը՝ նշան է համաճարակի, արիւնահեղութեան եւ տարճամ մահուան:

Բերանը հող թալել (նետել, դնել): Ճամբորդութեան ատեն, յայնժամ եւ անօթի ուղեւորը եւ իր ձին, երբ ուտելիք չկրնային գտնել, մարդը՝ նախ իր բերանը պողունց մը հող կը թալէր, ապա նաեւ ձիուն բերանը, մինչեւ իջեւան հասնելը:

Դէպի օտարութիւն (ղարկալութիւն) մեկնողի մը հետ՝ ասի մը հող կը դնէին թաշկինակով կամ մասնաւոր լաթի կտորի մը մէջ, եւ կ'ըսէին, ուր որ երթաս, զարկալ երկրի ջուրը խմած ատեն, փշուր մը հող քու բերան թալէ, որ շըփոխուիս եւ հիւանդանաս: Յատկանշական է այս երեսոյթը՝ հայրենիքի եւ հողի սէրը բնորոշելու եւ առողջ՝ հայրենիք վերադառնալու մաղթանքով:

Հագուստը երբ հագուած է, ու եթէ կարի պէտք բոլոր, կու՞թ մը կար չեն կարեր, վատ նշան կը նկատեն, կարծելով որ ենթական շուտ կը մեռնի. միայն պատանքն է որ մարդու մարմնին վրայ եղած ատեն կը կարեն:

Թոնիրի մէջ թխուած հացին առաջինը, թոյլ չեն տար որ տղաքը ուտեն, այդ հացը ուտողը «կ'որբուէրնայ», որով այդ հացը կամ ճարնկանին եւ կամ տան շունին կու տան:

Կոխք — Մոցուոր կին մը, երկու տղամարդոց մէջտեղէն անցնել կը զգուշացնէին. ծնուած երեխան կոխ կ'ըլլայ, եւ ժամանակին չի կրնար սոքի ելլել եւ քալել:

Երեխայի մը ծննդեան պահուն, տատմէրը երեխայի տկանջին ինչ որ բաներ մը փափաւալով, երեսն ի վար կործուած մաղի մը վրայ կը դնէ եւ կը սկսի աղ քսել մարմնին: Գետինի կամ ուրիշ ատարկայի վրայ չի դնել, որ պէտքը շարերը չզարնեն երեխան:

Մեռելի մը հանդիպած ատեն, երեք քայլ ետ-ետ երթալով, մտովի բտելու է. «Ի՛նչ գի'ս կոխեցիր. ես ալ քե'զ կը կոխեմ»:

Մեռելի մը դիակը յուցնելու համար, ջուրը բացօթեայ կը տաքցնեն. այդ կըրակէն ալ թոյլ չեն տար որ գործածեն: Ան որ կրակը գործածէ անոր ընտանիքին մէջ շուտով մահ կը պատահի:

Նուրիկ բանջարի համար կ'ըսէին, թէ Տիրամէկը՝ Յիսուս որդին նուրիկ բանջարի տերեւներով խանձարուրեր է, ասոր ի յիշատակ, «Թթման իրիկուն» նուրիկ բանջար կ'ուտէին:

Սբ. Յակոբ՝ Մծրնայ հայրապետի պահուց Ծարաթ օրը՝ բաղնիք չեն տաներ: Բաղնիք առնողին մաղիքը շուտ կը ճերմկին եւ ծերութեան ատեն այ գլուխը կը ժածայ (կը շարժի):

Նաւոց — Հարսն ու փեսան չար աչքի հետու պահելու համար, նուոց կամ նարոտը, պատկազրութեան արարողութենէն ետք, պիտուն կը պահեն մինչեւ տաղաստի գիշերը, ու երբ նարոտը վերցնեն, կ'ըսեն՝ նուոցքը քուկեցին:

Երեխայի պարսպ օրօրոցը չեն օրօրեր, սրպկայի օրօրոցի տէր երեխան փոքի ցու շունենայ ու չմեռնի:

Մայիս ամսու վերջերը, կոխական պահուց շարժուն տեղացոց անձրեւի ջուրը օրհնուած է կ'ըսեն. դուրսը գրուած մասնաւոր ամաններու մէջ տե-

դացող անձրևի ջուրով խնոցը — ձձում — կը հարեն, կաթի եւ իւղի ամանները անով կը լուան, որպէսզի կաթն ու իւղը առատանան:

Գարնանամուտին, երբ առաջին անգամ ամալը կը դոռայ, ամէն ոք կռնակը քարին, կամ քարէ պատին կու տայ, որպէսզի, կռնակը քարի պէս զօրաւոր ըլլայ եւ տարուան ընթացքին առողջ մնայ:

«Շվուտ դուրս՝ Մարտ ներս»: Փետրուար ամիսը «Շվուտ» չար ողիի ընորոշումով, ամսուան վերջին օրը՝ երբ ամբողջ ձմեռը տուններու մէջ կը բնակի, մարդոց վնասելու հետամուտ կ'ըլլայ, որով «Շվուտ» չար ողին անվընաս դարձնելու համար, հանդիսաւոր կերպով բնակարաններէն դուրս կը վտարեն: Մարտ 1-ի լուսազէմին, զիշերանց՝ մարդիկ կը հաւաքուին, պատուած լաթեր հագած, ձեռքերին հաստ դաւազաններ, անասուններու չորցած կաշիներուն, կամ պղինձէ ամաններուն հարուածելով, բարձրադաղակ պոռայով կը պոռաին եւ հանդիպակաց տուններու, ախոռներու, գոմերու, մարապներու դուռներուն եւ պատերուն դաւազանով զարնելով կը պոռան. «Շվուտ դուրս, Մարտ ներս», այսինքն չարը դուրս, բարին ներս:

Աւազ Ուրբաթ օր, կիները կար կը կարեն, այրերը հող կը փորեն՝ կամ կը փշկեն (փլունկ — սրածայր փայտ, դաւազան) Յուդայի աչքը հանելու համար:

Ծագկապարդին՝ եկեղեցիի մէջ օրհնուած ուրի ծառի ճիւղերը տուն կը տանին, անով իրարու կռնակին կը զարնեն, որ ցաւ ու չոռէ ազատ մնան: Նոյն ճիւղէն կտոր մը կը կապեն ձձումէն կախուած չուանէն, այն հաւատքով, որ ամբողջ տարին՝ կարազը առատ եւ օրհնուած ըլլայ:

Տէրնտեսին (Տեառնընդատալ)՝ եկեղեցիէն բերուած, վառուած մոմի կրակով, տանիքի վրայ մասնաւորապէս դրուած չոր խոտը, կամ ցախը կը վառեն, եւ նոր ամուսնացողներ՝ հարսն ու փեսան կը ցատկեն կրակի դէզին վրայէն, որպէսզի ցաւ ու չոռէն ազատ մնան: Հանգող կրակին փոշին կը հաւաքեն, որմէ ափ մը հովին կու տան, վառուած կրակին մուխը եւ փոշին ո'ր արտերու եւ հանդերու կողմը երթայ, այդ հողերէն առատ հունձք կը ստանան: Մոխրի ամբողջութիւնը դոմին եւ ախոռին մէջ կը ցանեն:

Համբարձման տօնին օրը, դաշտը տապկոցի կ'երթան, առաւելապէս հաւկիթ կը տապկեն, խորովածներու եւ ուրիշ կերակուրներու հետ, կեր ու խումէ ետք, կը պարեն եւ կ'ուրախանան: Վիճակի երգեր երգելով, խաղեր կը խաղան: Պոտերու եւ ծաղիկներու մէջի երեքնուկներէն, չորս տերեւներովները կը փնտռեն, գոնողը բախտաւոր կը համարուի: Ազապ աղջիկները չորսնուկը գտնելով, կը հաւատան, որ այդ տարեշրջանին ամուսնութեամբ կը բախտաւորուին: Չորսնուկները տուն կը տանին, իւղի բղիկի եւ ալիւրի փեթակի մէջ կը դնեն՝ առատութեամբ բախտաւորուելու համար:

Վարդավառին, յաւարտ եկեղեցական արարողութեան, ժամէն դուրս կլիկին ետք, իրարու վրայ ջուր կը սրսկեն:

Ս. Աստուածածնայ տօնին, երկուշաբթի մեռելոցի առթիւ գերեզմանոց կ'երթան, ուր քահանան կու գայ, իրենց հին եւ նոր ննջեցելոց հոգւոյն ի յիշատակ հոգեհանգիստ կատարել կու տան, գերեզմանները օրհնել տա-

լով, տպա տուներէն բերուած բարիքները կը բաժնեն ներկաներուն: Ընդհանրապէս ուտելիք կը բաժնեն, հալուայ, գաթայ, թարմ հաց, պանիր, վարունգ եւ այլն: Ոմանք ալ, զիշերը՝ թարմ հաց եփելով, առատուան կանախ՝ սպամամութին՝ կը բաժնեն ժողովուրդին:

Օրսփրէկ — Մեծ պահքի եօթը շաբաթներուն, կանոնաւոր պահք պահելու համար, տունին մեծ մայրիկը կը պատրաստէ օրոճրէկը, եօթը փետուրներ տեղաւորելով զլուխ մը չոր սոխի, կամ գունդ մը պինդ խմորի վրայ, եռադոյն նարտով մը ամբացուած, թոնրատան երզիքէն կը կախուի, որպէս Մեծ Պահքի օրացոյց: Եւ ամէն կիրակի՝ արեւպատին, տան երեխաներէն մէկը, տան տանիքը ելլելով, թեպտը մը կը քաշէ օրոճրէկէն եւ երզիքէն վար՝ դէպի թոնիրը կը նետէ. յաջորդ օր, թոնիրը վառած պահուն, փետուրը այրուելու է: Եօթը փետուրները երեք տարբեր դոյններով են: Առաջին հինգ շաբաթներու փետուրները թխագոյն են, Զ. կամ Ծագկապարդի շաբաթեան փետուրը՝ սև խորքով, սպիտակ բիծելով կէտկիտուած, իսկ Զատիկուան շաբաթեան փետուրը՝ սպիտակ կ'ըլլայ:

### ՏՆԱՅԻՆ ԲԺՇԿՈՒԹԻՒՆ

ԹԱԹԱՐԽԱՄԻ (կուրաղիքի հիւանդութիւն) — Երբ մէկը փորցաւի խիթով կը տանջուի, եւ ցաւը աջ կողմը ըլլայ եւ դառնայ պորտին բոլորով, «Թաթարխամի է» կ'ըսէին: Բուժումը կը կատարէին հետեւեալ կերպով: Պապկորուս մը (երեխան դեռ չծնած, հայրը մեռածը պապկորուս է) այր կամ կին, հիւանդին ստամոքսը եւ փորը մերկացնելով, վրան պղինձէ պաղ լանգառի (պնակ) մը կը դնէր, եւ փայտէ բանալի մը ձեռքը, անով կը զարնէր պղինձէ պնակին եւ ինքնիրեն կը հարցնէր ու կը պատասխանէր այսպէս. —

- Թաթարխամի, նէրտա՞ն կեալիրսէն.
- Թաթ ալընտան.
- Վուրարա՛մ.
- Վուրամագսան.
- Վուրարա՛մ.
- Վուրամագսան.
- Վուրարա՛մ.
- Վուրամագսան.
- Վուրարա՛մ, հէ՛մ տա, ջանքն ալարամ:

Այս արարողութեամբ խիթը կ'անցնէր: Երբեմն այ, տարօրինակօրէն, բժշկութեան կերպն էր, իչու քուտակի թարմ թրիքը պաղ ջուրի մէջ լուծելու եւ մետաքսէ կտորէ մը անցնելու քամուած ջուրը ենթակային խմցնելու խիթը կ'անցնէր:

ՄՈՐՔՐՈՒԿ — Մորթին վրայ, մարմնոյն զանազան տեղեր, վարդագոյն պալարներ կը կաղմուեն, ստամոքսի խանգարումէ, գրուանքէ, երբեմն ալ վախէ առաջ եկած. ասոր մօրքրուկ անուներ կու տան: Բուժելու համար, պապկորուս այր մարդ կամ կին, խարանը (այծէ մայէ հիւսուած պարան)՝ պաղ ջուրի մէջ թաթխելով, պալարներու վրայ կը դնեն, եւ այս գործողութիւնը բաւական մը շարունակելով, պալարները կ'անցնին:

ՋՐՎԱԹ — Մէյ բոնուելու հիւանդութեան բուժում: Այս հիւանդութիւնը բուժելու համար, խունկը պաղ ջուրի մէջ լուծելով, կը խմցնէին ենթակային, ջրվաթը կը քակուէր:

ԱՂԻՔՆԵՐՈՒ ՊՆԴՈՒԹԻՒՆ — Իբրեւ դարման, կապարի մանր կտորներ կը կլլեցնէին ենթակային՝ աղիկապը քակելու համար:

ԲՈՎՈՒՌԵՑՔ — Մանկական հիւանդութիւն: Կեղծմաշկ տարափոխիկ հիւանդութիւն: Տնային բժշկութեամբ, մեծ մամիկները փորձառութեամբ կը բուժէին: Կիրէ պատրաստուած, մասնաւոր շաղախ մը, դուրսէն՝ կոկորդին վրայ կապելով, կամ շան լակտոններու փինը չորցնելով, փոշիացածը ձուղով մը կոկորդէն ներս կը սրսկէին: Յուսահատ պարապաներուն, կամ դուրսէն կոկորդը անկլիով կը չրատէին (կտրել, ճեղքել) եւ կամ մատը կոկորդը տանելով ուռեցքը կը պատուէին յոյնիսկ փայտէ զգալի կամ քարեմանի պոչը շղարշով մը փաթթած, կոկորդը կը խոթէին ուռեցքը պայթեցնելու համար:

ԽԼԻԿ ՅԵԼԻ, ՀՈՂԻԿ ՄԱՇԻ — Խիլ — շիւղ, փայտի, ծղօտի կամ յարդի մանր կտոր: Շատ անգամ աչքի մէջ հող, եւ կամ շիւղ կ'իյնայ: Այս հողը եւ կամ խիլը աչքէն հանելու համար, աչքին կոպերուն բարակ մաշկը թեթեւ մը բռնելով, թարթիչները կը շարժեն, ցաւէն եւ յուզմունքէն աչքը կը ջրոտի, եւ շիւղը կամ հողը դիւրաւ դուրս կու գայ. մինչ այս գործողութիւնը տեղի կ'ունենայ, գործողութիւն կատարողը այսպէս կ'երգէ.—

Քոչիկ մ'էկաւ Հնտստանայ,  
 Վրէն բարձած Խորասանայ,  
 Թէ Հաց ուղեց, Հաց տուեցի,  
 Թէ ջուր ուղեց, ջուր տուեցի,  
 Աղէկ աղատ Խըզմէք էրէցի,  
 Բերի էս տեղ ճամբու դրի Սալճուկ:  
 Սալճուկ խանում.— Ես քեզ մատաղ,  
 Դուն ինձ սատաղ,  
 Բաժուժ մի չե՞ս տար,  
 Իմ մեծ արոն, կ'առողջացնէ:  
 Կ'ուզես ըսէ,  
 Սանամէր,  
 Աստուածամէր,  
 Կ'ուզես—կնիկ:  
 Խլիկ յիլի,  
 Հողիկ մաշի...

— Ընդունի՞նք որ ասիկա երկեցողութիւնով բժշկութիւն է:

ԽՈՒԹԻԿ — Մանուկներու յատուկ հիւանդութիւն, որուն հետեւանքով ձայնը կը քաշուի, խօսելու անկարող կ'ըլլայ. այդ պարագային, գլխուն վրայ, հոդեաուն բուսած մատը կ'ածիլեն, եւ նշղրակով արիւն կ'առնեն, որուն խորիկ զարմեյ անուներ կու տան: Արիւնահոսութիւնը գաղբիկ ետք, ձայնը կը բացուի:

### ԵՐԿՐԱԳՈՐԾՈՒԹԻՒՆ

Կը մշակէին հետեւեալ հացահատիկները — ցորեն՝ դարնցան եւ աշրնցան, բոսա ցորեն, խարախալըխ ցորեն, տարեկան ցորեն, գարի, կորեկ, գրլիւլ (Լիլիպտացորեն), կաւաւտ: Գարնցան ցորենը կը սերմանէին գարնան, Մարտ ամսուն փերջեր, կամ Ապրիլ ամսուն սկիզբը, եւ կը հնձէին Յուլիս ամսուն փերջեր: Այս ցորենին ցողունը բարձրահասակ, հասկը քիտաւոր, հատիկները մանր եւ ձուածեւ էին, ընդհանրապէս հացի համար կը գործածէին, որովհետեւ խմորը անուն էր եւ դիւրակփ, ու հացն այ համեղ: Աշնցան ցորենին ցողունը կարճահասակ էր: Ասիկա կը սերմանէին աշնան, կը ծլէր ու քանի մը մատնաշափ կանաչութիւնը կը ծածկուէր ձիւնին տակ մինչեւ գարուն: Այս ցորենին հատիկները գարնցան ցորենի հատիկներէն խոշոր էին եւ կլորածեւ, ընդհանրապէս կը գործածէին ձուար, բլղուր, աղաւն եւ խաշուած հատիկի համար: Ազանձի մէկ տեսակը հատիկները կը խորիկէին աղջրէ անցնելով, եւ հետը կը խտնէին դարձեալ՝ աղնձուած եւ աղջրուած կանեփի հատիկներ (կանպետ) եւ կ'ուտէին առաւելապէս պահոց օրերը: Ար. Սարգիսի պահքին աղանձուած ցորենը աղօրիքով կաղային, անոր ալիւրէն փոխինք եւ ճաշ կը պատրաստէին: Փոխինքը մեղրի կամ շաքարի ջուրով կը շաղէին եւ կլոր գունդեր շինելով կ'ուտէին. իսկ ճաշը կ'ուտէին կանեփի հատիկներէն հանուած ձէթ—իւղով:



Արօրով արար կը հերկեն

Քոսա ցորեն — ասոր հասկը առանց քիստի էր, հատիկները կլոր էին աչնցանի նման, եւ դործածութիւնն ալ անոր նման էր: Խարախալը՛ս ցորեն — կարճ ցողուն ունէր, հասկը ութանկիւն էր, հատիկները միւս ցորեններու հատիկներէն աւելի բազմաթիւ էին հասկին վրայ, խոշոր ու կլորաձեւ՝ կարմրագոյն: Ասոր հացը համով էր. նախընտրելի էր սակէ պատրաստուած ածիկը: Տարեկան ցորեն — արտեր կային, որ եթէ մէկ տարին ցորեն ցանեն, յաջորդ տարին առանց սերմանելու կրկին ցորեն կը բուսնի. այս ցորենին կ'ըսեն տարեկան կամ շաւտար ցորեն:



Խնուսցի կիներ պլզուր կը մաքրեն

Քարի — հացահատիկ մը, զոր շատ քիչ անգամ ուտելու համար կը դործածէին. անասուններուն կը կերցնէին, ընդհանրապէս ձիերուն կեր կու տային զիրցնելու եւ ուժովցնելու համար:

Կորեկ — բարձր ցողունով, լայն տերեւներով, յուրանը կարճ, շատ մանր, կլոր ու դեղին հատիկներով. ասով հաց կը պատրաստէին եւ կ'անուանէին կորեկ-հաց:

## ՄԵՂՈՒԱԲՈՒԾՈՒԹԻՒՆ

Մեղուարուծութիւնը մեծ ընդունելութիւն գտած էր, համբաւուար էր Հարամիկի մեղրը: Պատուելի Պօղոս Քարահատեան (պիթլիզցի), որ ժամանակին գիւղին բողոքականներուն քարոզիչ-վարժապետը եղած է, մեղու-

ներու բազմաթիւ փեթակներ կը պահէ եղեր, նաեւ կ'օժանդակէ այն անձներուն՝ որոնք իր փորձառութենէն կ'ուզեն օգտուիլ: Պատ. Պօղոս, սակայն, չկրնար լոյ տակալ թուրք կառավարութեան հալածանքին՝ կը զաղթէ Ամերիկա, իր փեթակները կը ծախէ գիւղին հայերուն եւ թուրքերուն: Գիւղին մէջ ամենաշատ փեթակ սնեցողներն էին՝ թուրք Հաճի աղան, Խորբու Սահակը (Քանթառ-Սահակ) եւ հայրիկս: Մեր փեթակներուն թիւը, Սահմանադրութեան շրջանին, երբ աւելի ազատութիւն կար եւ մեղրի բարբարոս զողութիւնն ալ նուազագոյնին իջած էր, կը հասնէր մինչեւ 80-ի:

Օսմանեան Սահմանադրութեան շրջանին, մեղուարոյժ Աղեքսանդր Բյնուներն, Կովկասէն գէպի Մուշ իր ճամբորդութեան ընթացքին, երբ Խնուսէն կ'անցնէր, կարճ ժամանակով այցելեց քանի մը գիւղեր, ուր մեղուարուծութիւնը փորձառարար զարգացուցած էին: Այցելեց Խարաքէօփրի՝ Գաւիթ Մուրատեանին, նաեւ Քաղքիկ գիւղը՝ Յակոբ աղային, որոնք մեղուի փեթակներ շատ ունէին: Երբ մեր գիւղը եկաւ, ուր մեղուի փեթակներ շատ կային, ծնողացս թելապրեց, որ կաւաչէն փեթակները փոխարինուին փայտաչէն փեթակներով եւ արուեստական մեղրարջիջներու զործածութիւնը որդեգրեն, աւելի սոսառ մեղր ստանալու համար: Մայրս, որ փորձառական մեղուարուծութեան ծանօթ էր, համաձայն չգտնուեցաւ Բյնուների թելադրութեան, սակայն հօրս պնդումին վրայ՝ փորձեց: Փորձը սակայն ցոյց տուաւ, որ արուեստական մեղրարջիջին եւ փայտաչէն փեթակին մեղրը, կաւաչէն փեթակին եւ մեղուներու կազմած մեղրարջիջէն արտադրուած մեղրին համր եւ հոտը չունէր:

Տեղական երկու տեսակ շինուած փեթակներ կը դործածէին. անոնցմէ մէկը կը շինէին ուտիի ճիւղերէ եւ կաւոյէ: Ուտիի ճիւղերը նախ կը չորցնէին, ապա ջուրը կը դնէին, երբ կեղեւը կակուղնար, ջուրէն հանելով կը կեղուէին. այս կակուղ վիճակին կմախքը կլորածեւ հիւսելով կը չորցնէին, յետոյ ներսէն եւ դուրսէն կաւ հողով կը ծեփէին եւ կը չորցնէին, եւ պատրաստ կ'ըլլար զործածութեան: Կար նաեւ ուրիշ տեսակ մը, միայն կաւ հողէ շինուած:

Արշակ Կ. Թիւթիւնճեան՝ Խնուսէն՝ Կարնոյ Յառաջ թերթին ուղարկած է «Անասնարուծութիւն եւ մեղուարուծութիւն» վերնագրով յօդուածաշարք մը, ուրկէ կը քաղենք հետագայ հատուածը.

«Խնուս ունի ծաղկալի դաշտեր ու լեռներ՝ ունի մեղմ կլիմայ, այս պատճառաւ մեղուարուծութիւնն ալ մուտ գտած է հոն: Արգասաւորութիւն ունեցող փեթակէ մը, որ բանի մը անգամ պարզ (պարս) ձագ տուած է, հազիւ 1-2 եւ առ առաւելն 3 օրս մեղր կ'ելլէ, իսկ ստերջ մնացած փեթակ մը՝ մէկ լիտրէն մինչեւ 3 լիտր մեղր կու տայ: Փեթակ մը կ'ապրի առ առաւելն 3-4 տարի, եւ երբեմն մէկ տարի միայն: Տեղս մեղրին լիտրը կ'արժէ՝ հալածը 20-24 դահեկան, իսկ անհալը կամ բազարջ մեղրին լիտրը 30-36 դահեկան:

«Ուրախութեամբ կարգացինք «Յառաջ»ի ԻՓ․ քիլին մէջ մեզուարոյձ Ն․ Գառապարեան էֆէնտիի շահեկան յօդուածը գիղատնտեսութեան մասին եւ իր բարի ձեռնարկը մեզուարոյձութիւն սարկեցնելու համար գաւառացիին: Երանի քէ նա հանէր յառաջիկայ զարուն հմուտ այցելել եւ նոր դրութեամբ գործնական դասաւանդութիւններ բնէր: Բաւական քիւով փեթակներ կը պահուին հայաբնակ Հարամիկ, Քաղփիկ, Արօս, Չեւիւմէ եւ ուրիշ գիւղերու մէջ: Մէկ փեթակը կ'արժէ 35-40 դահեկան»:

## ՊԱՐՏԻԶԱՄՇԱԿՈՒԹԻՒՆ

Մտածչակութիւնն ալ մուտք գտած էր: Հարամիկ զիւղին շրջակայքը ծառաստաններ ունէին՝ Տէր Սողոմոնը: Իր ջաղացքին շրջակայքը բարդի եւ ուռի ծառեր տնկած էր: Բազուհանի Դաւիթ ծառեր տնկած էր զիւղին տակ իրենց մէկ հողին վրայ, սակայն ծախեց Յակոբ Մուրատեանին․ վերջինը աւելի ընդարձակեց: Հայկազուն Մուրատեան՝ Սահմանադրութեան շրջանին նոր ծառաստան մը սկսաւ մշակել Քրոտի բլուրներուն մերձ, ջրառատ հողամասի մը վրայ, ուր պտղատու ծառեր ալ տնկեց եւ զեղեցիկ շատրուան մըն ալ շինեց:

Բանջարեղէնի մշակումն ալ մուտք գտած էր: Եթէ ծառամշակումը ներմուծողը քղեցի Հաճի Յովհաննէս Բարազամեանն էր, բանջարամշակումը դարգացնողն ալ խարբերողի Դաւիթն էր: Իրմէլ գատ նշանաւոր բոստանիներ էին նաեւ Թորոն, Պողսէն, Գալոն, Յարթէնը եւ քանի մը ուրիշներ: Կր մշակէին սոխ (քանի մը տեսակ), սխտոր, ճակնդեղ՝ որ բազուկ անունով աւելի հանրածանօթ էր, ճերմակ եւ կարմիր տեսակներով, որոնց տերեւները ամառուան ընթացքին կը քաղէին եւ անոնցմով կերակուր կը պատրաստէին․ իսկ արմատը աշնան կը հանէին, արտասովոր խոշորութիւնով եւ քաղցրահամ կ'ըլլար: Ճակնդեղի լաւագոյն գնորդները քիւրտերն էին․ Թէ՛ հումը կ'ուտէին եւ Թէ՛ եփուածը․ իրենց լիզուով արլիս կ'անուանէին, Թէպէտեւ բազուկ անունն ալ հաւասարապէս կը գործածէին:

Շողգամ եւ բոզկ — բողկի մանր, կարմիր, տեսակը կար, եւ արտասովոր խոշորութեամբ սեւ կեղեւովը կար, որ շատ կծու կ'ըլլար: Կար նաեւ ճերմակ եւ քաղցր տեսակը, որ սակայն միջակ մեծութիւն ունէր: Կաղամբ — աւելի հանրածանօթ քալամ անունով, իր քաղցր համովն ու մեծութեամբ շատ նշանաւոր էր․ 25-30 օխա ծանրութիւնով կաղամբներ սովորական էին: Կաղամբը Թէ՛ հումը կ'ուտէին եւ Թէ՛ Թթուածը: Թթուն կը դնէին Թէ՛ լման տերեւները եւ Թէ՛ շերտաւածը․ այս վերջինը բոստամբ կ'անուանէին: Վարունգ եւ սեխ — վարունգը խիար անունով ծանօթ էր, իսկ սեխը՝ կլար: Սեխի տեսակ մը փրքեխ անունով ծանօթ էր, շատ հոտաւէտ եւ քաղցրահամ էր: Ձմերուկ: Դդում, տեսակներով, բարակ երկայն եւ կանաչագոյն, որուն տալմա խապաղի անունը կը տրուէր․ ուրիշ տեսակ մը պալ խապաղի անունով ծանօթ էր՝ իր քաղցրահամ ըլլալուն համար: Դեղին եւ կարծր կեղեւով,

խոշոր եւ կլորածեւ դդումը կը չորցնէին ձմեռուան համար, ասոր կեղեւը հանելով, կը շերտէին, ժապաւէնի նման երկար կտորները պարաններուն վրայ կախելով կը չորցնէին եւ կ'ամբարէին: Այս դդումին չորը ծանօթ էր ուաչալ անունով:

Արեւելածաղիկի եւ կանափի (կամպետ) մշակումը շատ մեծ ընդունելութիւն գտած էր: Առաջինին կուտերը հումը կամ խարկուած — աղնձուած կ'ուտէին․ կամպետի հատիկները նմանապէս աղնձելով կը խառնէին խառուած ցորենի հատիկներուն (հատիկ) եւ աղնձուած ցորենի հատիկներուն (աղանձ):

Մաղտանոս (աղատքեղ), որուն մէկ տեսակն ալ աշօքիկ կ'անուանէին, հաճելի անուշահոտութիւն մը ունէր․ կերակուրները համեմելու համար կը դործածէին՝ մասնաւորապէս ոսպնապուրի եւ թանապուրի մէջ: Շամին կամ ծմել (սպանաղի տեսակ մը), զոր խաչելով սրպէս աղանդեր՝ եւ կամ հակիթով տապկելով կ'ուտէին: Լուրխ՝ որուն կանաչը եւ հատիկաւորը կար հատիկները պարկիճներէն հանելով, չորցուածը կփելով կ'ուտէին: Փաքաքէս՝ ծանօթ կառքօլ անունով: Փետնախնձոր, հումը կ'ուտէին, որ քաղցրահամ էր: Պղպեղ (տախտեղ կամ տախտեղ) — կանաչ եւ կարմիր տեսակներով․ կանաչը անուշահամ, իսկ կարմիրը կծու կամ մոռ կ'ըլլար: Բոստաններու եղերքները տամուկ ափերու ափերուն առատորէն կը մշակուէր համեմարոյս անանուխը, ու իր ուրիշ մէկ տեսակը՝ դախն: Չղլիխը հոտաւէտութեամբ օծուն ռեհանը նմանապէս կը մշակուէր:

Առանին ձեռնադործ արհեստներու մէջ կիները բուրդէ, այծեմայէ եւ թիֆթիկի թելերէ կը գործէին խալի (գորգ), կարպետ (կապերտ), ջէջիմ (կարպետի նմանող խիտ գործուածքով, գոյնզոյն տողերով, զորս կարով իրարու կը միացնեն), բերումիգար, թեռ (պարկ), հապուկա կամ խուրճիմ (երկու աչքէ պարկ, որ նախշուն եւ նուրբ գործուած կ'ըլլայ), բուն (գուլպայ)՝ թիֆթիկ եւ մուխառամ բուրդէ գոյնզոյն նախշերով, սախ (ծունկէն սկսեալ սրունքի վրայ հասնելիք երկարափող գուլպայ առանց ոտնամասի, սրունքակապ), արախչի (զլխարկ), սրտանոց-կրծկալ եւ սրտանոցի կապ, միգարի թել (կապ) եւ միգար (գոզնոց), խոնջան թել (կապ): Քսակ (գոյնզոյն յուլունքներով նախշուած): Ժամացոյցի ծածկոց (սահաթ-խապի): Ձեռնափայտի ձեռնանցկապ (գոյնզոյն եւ ծոպաւոր), քանթէլիա՝ ասեղով, ճաղով եւ ֆոփէնակով բանուած, զոր հազուատներու զարդարանքի, ինչպէս նաեւ բարձերու անկողիններու, դարակներու եւ պատուհաններու վրայ կը գործածէին:

Այրերը խոտեղեկէ փախթ (նիլէ խսիլ) կը հիւսէին, միագոյն կոշտ տեսակը եւ գոյնզոյն նախշուած նուրբ տեսակը: Յորենի ծղօտները յատուկ

Եղանակով մը պատրաստելով, գոյնըդոյն ներկելով, անոնցմէ ծխախոտի տուփ եւ հարսանեկան սրտակ կը հիւսէին: Պսակին ծղօտները եռալոյն կ'ընէին, խարխոխը ցորենալոյն՝ բաց սակեղոյնի նմանուզութիւնով, հիւսուածքը կարմիր եւ կապոյտ. պսակազրութեան արարողութեան ատեն նոր փեսայի ճակատին կը կապէին:



Խնուսի Հարամիկ գիւղացիներ փալախէն գեմ կ'ալորեն

Ուռի ծառի ճիւղեր յատուկ կերպով պատրաստելով (ջուրը դնելով որոշ ժամանակ մը, ապա հանելով եւ կեղուելով) անոնցմէ սակառ, կոզով եւ ամբար կը շինէին:

### ՉԿՆՈՐՍՈՒԹԻՒՆ

Չկնորսութեան համար կը գործածեն ուռկան: Ուռկանի մէկ տեսակը, որ անյիշատակ ժամանակներէ գործածութեան դրուած է, կը պատրաստէին կանեփի ցողունէն պատրաստուած թելերէ, լայն աչքերով հիւսուած ցանցի նման, որուն չորս անկիւնները կ'ամրացուէին մասնաւոր պատրաստուած աղեղնաւոր ձուկերու, եւ ասոնց կորութեան միջին հաւասարութեան՝ կը կապուէր երկար ձուկ մը: Այս ձուկը կը բռնէին եւ ուռկանը ջուրը կ'իջեցնէին եւ կը բարձրացնէին՝ մինչեւ ջուրէն դուրս գալը, մէջը ձուկեր կը մնային: Այս ձեւի ձկնորսութիւնը պզտոր ջուրի մէջ աւելի յաջող կ'ըլլար:

Ուրիշ ձեւի ուռկան մը, որ սաչմա քոռ կ'ըսուէր, դարձեալ կը պատ-

րաստէին վուշի թելերէն: Այս ուռկանը բաց կ'ըլլար, թելերուն ծայրերէն իւրաքանչիւրին՝ մասնաւոր պատրաստուած կապարի կտորներ կ'անցընէին: Չկնորսութեան պահուն, ձկնորսը ուռկանին մէկ ծայրը ատամներով կը բռնէ, եւ միւս ծայրը արայ թափով մը կը սփռէ ջուրին երեսը եւ թոյլ կուտայ որ ամբողջ ուռկանը իջնէ մինչեւ ջուրին խորը, գետին հասնելու շափ, ապա ուռկանին կեղրոնը կապուած լարը քաշելով, ուռկանը կը հաւաքէ եւ ցամաք կը քաշէ, որուն մէջ ձուկերուն հետ ջրային ուրիշ կենդանիներ ալ դուրս կու գան:

Թարթով ձկնորսութիւն.— Թարթը լայն բերանով կողով մըն է, հիւսուած ուռի ծառի ճիւղերէն, որուն տակի մասը աւելի նեղ է: Որպէս թակարթ կը դրուի հոսուն ջուրի առջեւ: Ջուրը վերէն վար կը թափի կողովին մէջ, ձուկն ալ միասին: Ձուկը երբ կողովին մէջ իյնայ, այլևս չի կրնար դուրս ելլել: Որոշ ժամանակ ետք, կողովը լեցուած ձուկերը մէջէն կը հանեն: Այս ձեւի ձկնորսութիւնը գիշեր ժամանակ աւելի յաջող է:

Ճիւղ կտրելով ձկնորսութիւն.— Գետարեւանէն բաժնուած ջուրին հոսանքը՝ կամ ճիւղը կը կտրեն: Երբ ջուրը նուազի, որոշ կէտերու վրայ ձուկերը դիւրութեամբ կը բռնուին: Այս ձեւի ձկնորսութիւնը համայնական է, որովհետեւ աշխատանքը շատ է: Ջուրի հոսանքը կտրելու համար, հոսանքին դէմ պատուար կը կապեն, ծառի եւ մացառի ճիւղերով, որոնց վրայ կը շարեն շիւմ կամ ֆիւմ, մերձակայ կանաչապատ հողէն քառակուսի կտրուած հողաշերտերով՝ իրենց բուսարմատներով, որոնք իրարմէ դիւրաւ շեն պատուիր, եւ պատուարը կը կապեն:

Չկան դեղով ձկնորսութիւն.— Չկան դեղը կամ թոյնը կը շաղեն խմորի մէջ, եւ խմորը գնդիկներու վերածելով ջուրը կը թափեն, առաւօտեան կանուխ, արեւածայրին: Հաղիւ ժամ մը անցած, այդ խմորի գնդիկները ուտող ձուկերը դեղուած կամ թունաւորուած ջուրին երեսը կ'ելլեն, եւ հետըզհետէ կը քշուին դետափները, ուր ձկնորսները դիւրութեամբ կը հաւաքեն:

Խոնդատով ձկնորսութիւն.— Խոնդատը իր մարդահասակ ցողուններուն վրայ, դեղնապոյն վարդանման կոկոններ կը բանայ: Խոնդատին ցողունները կտրելով ջրաթաթախ քարերուն կը դարնեն, ցողունները եւ կոկոնները ձգմելով ջուրը կը թափեն, ջուրը կը սկսի փրփրիլ, օձառանման պղպձակներ արտադրելով: Այս պղպձակները երբ ձուկերը կուլ տան, կը դիտովնան կամ սովորաբար կ'ըսէին՝ կը դեղուին: Ձուկերը դեղուած կամ դիտովցած՝ գետի եզերքները կը քաշուէին, ուր ձկնորսները դիւրութեամբ կը բռնէին:



Տէգով ձկնորսութիւն.— Ամառ ժամանակ, արեւադարձային օրերուն, ձուկերը՝ կէսօրուան պահերուն, երբ արեւը դեռիթը բարձրացած է, կը սկսին խայտալ. շատ անգամ ինքզինքնին ջուրէն դուրս՝ օդին մէջ ցատկելու խաղեր կ'ընեն: Ձկնորսը ջուրին մէջ, տէգը կամ այլ անունով խշտիկը պատրաստ բռնած, արագ շարժումով ձուկը կը զարնէ տէգով եւ դուրս կը նետէ:

Կրակով ձկնորսութիւն.— Ամառ գիշերները, գետափին կրակ կը վառեն: Ձուկերը լոյսին ի տես, կը մօտենան կրակին: Ձկնորսները փայտի հարուածներով կը զարնեն ձուկերուն եւ կը բռնեն:

Ձկան ծուար.— Ձկան ծուարը՝ ձուկերու հաւաքատեղն է ձմեռ ատեն: Առհասարակ ձուկերը, ձմեռ ատեն, սառած ջուրի տակ, գետերու անկիւնաւոր տեղերը, ուր դիւրաւ կարելի է պատսպարուիլ, կը հաւաքուին: Փորձառու ձկնորսները, նման տեղերու վրայ կը կասկածին թէ ձկան ծուար կայ, կ'երթան՝ սառոյցը կը կտրեն եւ ձուկերը շատ դիւրութեամբ կը բռնեն:

### ՊԱՆԻՐԻ ԴԵՂ

Շըպ (պաղլեղ), դխոր (լման գլուխը), սեւ արուկ (սեւ սալոր), հազար թերթիկ (ոչխարի ստամոքս, թարմ կամ չորցուածը, նախընտրելի է թարմը եւ անլուան), աղ, շաքար, չամիչ (սեւ տեսակը), չոր սոխ, շտուկ ջուր, (շտուկ, մակարդուած մածունէն զատուած կամ քամուած բաց կանաչաւուն ջուր):

Այս նիւթերը, իւրաքանչիւրէն որոշ չափով միախառնելով (չափը փորձով գտնելու է) շտուկ ջուրին, լեցնել ամանի մը մէջ, հում հաւկիթ մը դնել ամանին մէջ եւ ամանը փաթաթելով տաք տեղ պահել: Հաւկիթը երբ ջուրին երեսը ելլէ, նշան է որ պանիրի դեղը հասած է, եւ պատրաստ դորձածուելու:

Պանիրի դեղը Մեծ Պահոց առաջին շաբթուն կը սկսին պատրաստել, մինչեւ Զատիկ արդէն հասած կ'ըլլայ եւ այդ օրերուն անասունները, դուար ու ոչխար կը սկսին ծնիլ, եւ հետզհետէ կաթը կ'առատանայ: Պանիր շինելու լաւագոյն եղանակը Յունիս եւ Յուլիս ամիսներն են:

## ԳԼՈՒԽ Է.

# ՆՇԱՆԱԻՈՐ ՏՈՒՆԵՐ ԵՒ ԱՆՁԵՐ

Խնուս պաւառի նշանաւոր ընտանիքներու կամ տուներու անունները յիշատակած ենք արդէն ասկէ առաջ: Յարմար կը դատենք անոնց ամփոփ մէկ ցանկը հոս ներկայացնել: Բոլորն ալ արժանի են մասնաւոր յիշատակութեան, բայց ո՛չ այս գիրքին էջերը, ո՛չ ալ մեր ծանօթութիւնը բաւարար են նման աշխատանքի մը համար: Այն ինչ որ կրցած ենք մեր եւ մեր ծանօթներու աշխատանքով մէկտեղել, հետագայ էջերուն մէջ կը հրամցնենք ընթերցողին վայելքին:

- Ազնամելիք.— Խաժօ Օհանի եւ Խանրմ Սանոյի տուները:
- Գարաշուպան.— Հազրոյի, Մելիք Գասպարի, Զաքարեաններու, Միս Սահակի, Տէրտորջ Սիմոնի, Սարճատեաններու տուները:
- Գարաֆէօփիլու.— Հազրոյի, Մելքոնի, Հիրապի, Պատալի, Միլէի տուները:
- Եղարտի կամ Գասպարի գեղ.— Տանուտէր Գասպարի նահապետական տունը:
- Խալչաուշ.— Բարխու, Վրդոյենց, Ռէս Քօչոյի, Տէր Զաքարեանի, Ուստա Սարգիսի տուները:
- Խոզլի.— Հել-Հելի եւ Ռէս Աւտալի տուները:
- Կոբալ.— Տէր Աւետիսի, Ռէս Յակոյի եւ Աբրոյի տուները:
- Կովանուռլի.— Ռէս Մհերի, Ստեփէ ձութէի, Սրգէի, Պաղէ Մխոյի տուները:
- Հարամիկ.— Մելիք Պողոսի, Տէր Գէորգի, Միրազի, Սիմօ-Ըռքէի, Միրզոյի, Մհերի, Խուռչուտի, Բրուտ Մուրատի տուները:
- Մարուֆ.— Կատանի Աւագի եւ Ասոյի տան կտրիճները:
- Մժնկերտ.— Ամրոյեան ընտանիքը:
- Շապատիւ.— Գրգոյի եւ Թաշու տուները:
- Ձեւիք.— Մալոյի, Ֆարհատ Մանուկի տուները:
- Սայլու.— Մհերի Շահնապարի, Խըչէի, Հըլոյի, Սաղէի տուները:
- Քաղփիկ.— Յակոբ Ղուկասեանի, Մինասի Մանուկի տուները:

### ՄԵԼԻՔԵԱՆ ԳԵՐԳԵՍՅԱՆՐ

Մեր ընտանիքին պատմութիւնը գրի առած ենք մեր պատանեկութեան օրերուն՝ ծնողներէ եւ տարեց ազգականներու պատմածներու յիշողութիւններով. նաեւ հետագային՝ 1915-ի մեծ եղեռնէն վերապրելէ ետք, Ռուսաստան քափառած շրջանին՝ հայրենակիցի մը պատմածներէն: 1919-ին՝ երբ Մոսկուայէն Օտեսա եկանք, հոն հանդիպեցանք տարեց հայրենակիցի մը՝ Առափէլ Տացու Տիրացեանին: Այս հայրենակիցը շատ յիշատակներ ունէր մեր ընտանիքին եւ Մելիք Պօղոսի մասին: Պատմածներէն մաս մը գրի առինք, այնքան, որքան որ հնարաւոր էր այդ օրերուն Օտեսայի մէջ փաղափարակաւ կոխներուն արհաւիրքը ապրողի մը՝ եւ մեզի նման օտարականի մը համար: Ամերիկա՝ Պոսթըն բընակող հայրենակից — համագիւղացի՝ լուսակարիչ Սահակ Առափէլեան, մեր ընտանիքի մասին իր յիշատակները գրած եւ զրկած էր մեզի: Ասուց կողմին օգտուած ենք նաեւ սասունցի պատուելի Սիմէոն Գաթեանի օրագրութիւններուն մէջ Մելիք Պօղոսի մասին գրուածներէն՝ 1852-ին հընուս պաշտօնավարած ժամանակին գրի առնուած: Օգտուած ենք նաեւ «Դիւան հայոց պատմութեան» Գիւտ աւագ քինյ. Ազանեանցի, Գ. թղ հատորէն. «Սուրբ Կարապետի մի համարու պատմութիւն», այն մասերէն ուր յիշատակութիւններ կան Խնուսի եւ Մելիք Պօղոսի մասին. նաեւ Գարեգին եպս. Սրուանձտեանցի նամակներէն, եւ Երուսաղէմի նուիրակ Յակոբոս եպս. ի՛նչ Խնուսէն 1869-ին Կ. Պոլիս Պատրիարքարանին գրուած նամակներէն: Նաեւ մեր ազգական՝ տարագրութենէն վերապրած եւ Գամիշլի բնակող՝ Մարիցայի գրած նամակէն:

Մեր բնագաւառին մէջ, ձմեռնային երկար դիշերներուն, ժամանցի տոհմիկ սիրուն սովորութեամբ, իրիկունները թոնրատան մէջ տաք եւ օրհնուած թոնիրին բոլորտիքը՝ հեքիաթախօս մամիկները, իսկ օտաներու եւ արտոններու սաղուններու մտերիմ բուխերիկներուն շուրջ՝ հեքեաթասացներն ու աշուղները՝ հաւաքոյթներուն կ'երգէին ու կը պատմէին հեքեաթներ, ընդելուզուած համախնորով եւ հանելուկներով: Յաճախ երգերուն անբաժան մաս կը կազմէր նուազը՝ սազ ու քամանչայով, սրինգ ու նարով, որոնց առընթեր պատմութիւններ կ'ըլլային նաեւ նշանաւոր ընտանիքներու, անուանի անձերու, որոնց կեանքին հետ կապուած զանազան դրուագներ կը պատ-

մէլին, սրպիսիք էին՝ կոխներու մէջ ցուցադրած քաջազործութիւնը, գօտեմարտութեան եւ ձիարշաւներու մէջ տարած յաղթանակը, պարելու, առակախօսելու եւ զուարճարանելու տաղանդը, հարստութեան, նշանաւոր արտ ու արօտապահիներու, արօր ու դուխանի, քէհլան նազէ ձիերու, բուղայ (արու) դամէչ ու ամուլ կզներու, մարտնչող խոյի, նոխաղի, աքաղաղի, գէլիկեղզուներու եւ այլնի մասին:

Մեր բնագաւառին մէջ, մեր զերդաստանը, ճանչցուած նշանաւոր ընտանիք էր (ընտանիք՝ այսինքն միեւնոյն արիւնք սերած անձեր, հայր, մայր, որդիներ, եղբայրներ, հօրեղբոր որդիներ, իւրաքանչիւրը իր պարտք ու իրաւունքով, իրբեւ նուիրական սուանդ, նաեւ ընտանիքին անունը եւ պատիւը բարձր պահող հասարականութիւն): Զանազան ստիթներով՝ հայրս, մայրս եւ մեր ընտանիքի տարեց անդամները մեր զերդաստանի ապրումներուն հետ աննշաթիւն ունեցող նշանաւոր զէպերու մասին կը պատմէին: Անոյ ձայնով եւ շնորհալի պատմող՝ ձերտնապարզ եւ լուսադուրկ (լուսազրկուած էր քերտերու հետ անեցած կոխի մը հետեւանքով եւ կ'ըսէին «սեւ ջուր է իջեր աչքերը») մեր Դազար ամուն շատ կը սիրէր պատմել մեր ընտանիքի մասին: Հայրս անգամ մը ըստու, թէ մեր ընտանիքի մասին մեր տան տարեցներէն լսածները, ինչպէս նաեւ Մելիք Պօղոսի մասին գիտցածները՝ զրի առած է եւ մոմպատ շորի մը մէջ ծրարած՝ պատմել տեղ մը կը պահէ: Այդ գրութիւնները, ինչպէս նաեւ ուրիշ հին գիրքեր, 1915-ի ջարդին կորան անհետ, ինչպէս ջնջուեցաւ մեր ամբողջ զերդաստանը:

Մեր նախնիքները Սասնոյ գաւառէն եկած, Խնուս հաստատուած են: Դազէն՝ մեր հանին, կը պատմէ կղեր, թէ թուականը անձանօթ տարի մը՝ օսմանցիմ եւ անամը կուրի կը բռնուին: Սասունցի հայ իշխանները աճաճին շատ դուշման կ'ըլլան, օսմանցու քէրէն (կողմ) կուրի կ'երթան աճաճ ուղի: Կուրիները տուն կը դառնան, մեր նախնիքներէն երկու եղբայրներ, իրենց ճամբուն վրայ կը հանդիպին Խնուս Պամբ բերդի եւ Բինդէօլի սարերն ու ձորերը, հոյն ու ջրերը շատ կը սիրեն, կ'որոշեն որ Սասունը թողուն եւ դան հաստատուին Խնուսայ գաւառը:

Աբուն՝ մեր մեծ հայրը, կը պատմէ կղեր, որ սասունցի հայ իշխաններու եւ քերտ Ալաւին բէկերու միջեւ կոխ կը ծագի: Մեծ կոխ կ'ըլլայ, շատ արիւնահեղութիւն տեղի կ'ունենայ: Քերտերը կը պարտուին եւ կը փախին. հարածուելով հայ իշխաններուն կողմէ՝ կը քուրին մինչեւ Խանտիլի Խալէն: Կուրի մասնակցող հայերուն մէջ կ'ըլլան նաեւ մեր նախահայրերէն երկու եղբայրներ՝ Օհան եւ Մհեր անունով: Օհան եղբայրը կ'երթայ Ճապաղուր, հոն կը հաստատուի: Այդ ընտանիքը հետագային կը ճանչցուի Մահտեսի Օհաննէսեանց տուն անունով: Մհեր եղբայրը կու գայ Խնուս, կը հաստատուի Պամբ բերդի սարալանջերուն գանուսող հայկական Պամբ բերդ անունով մեծ գիւղաւանը: Հետագային կը ճանչցուի Մելիքեանց տուն անունով:

Մալազկերտի եւ Խնուսի բէկերու(\*) միջեւ մեծ կռիւ տեղի կ'ունենայ 1762 թուականներուն: Կռիւին հետեւանքով Խամլըբըզ գիւղաւանը հիմնա- յատակ կը քանդուի: Հայ բնակչութիւնը կը ցրուի, որոնցմէ մաս մը կ'եր- թայ կը հաստատուի Խնուս բերդաքաղաքը, որ թիշնէր զանազան տեղեր: մեր նախահայրը կու գայ եւ կը հաստատուի Հարամիկ գիւղաւանը: Հետագային մեր ընտանիքն երկու եզրայրներ անուանի կը զատնան՝ Պօղոս եւ Պետրոս: Պօղոս կ'ըլլայ մեր զաւառի մեղիք, իսկ Պետրոս եզրայրը՝ Հարամիկ գիւղա- ւանի ոչս: Մեր ընտանիքն ալ կը սկսի մակամուսնուիլ Մելիքեան:

### ՄԵԼԻՔ ՊՕՂՈՍ

1919-ի Յունիսին՝ ամսուան մը արհաւիրակի ճամբորդութենէն տառա- պակոծ, Մոսկուայէն Օտեսա հասանք: Հոս անակնկալօրէն հանդիպեցանք Խնուս բերդեցի Տիրացեան հանրաժանութ ընտանիքէն՝ Առաքել Տալուին: Առաքել Տալուին՝ իր տարիքը 90—100-ի միջեւ կախած էր, սակայն սասող էր Փիլիքապէս, զօրաւոր յիշողութիւնով օժտուած: Խնուսի սիրովն ու Բիւնդօլի կարօտովը քակեց իր յուշերու կծիկը՝ սկսաւ պատմել այսպէս. «Խարսայ կռիւի տարին (1877), երբ ռուսական բանակը Խնուսէն ետ քաշուեցաւ, ես իմ ընտանիքով անոնց հետ եկայ Ռուսաստան. 40 տարի է որ Օտեսա կը բնա- կիմ...: Հիմա պատմեմ ձեր ընտանիքի մասին: Շատ լաւ կը յիշեմ քու մայր- իսկի մեծ հայրը՝ Սրգէն, իր տղաները՝ Գիւրգըրը, Օհանն ու Ասվատուրը. իսկ հայրիկիդ մեծ հայրը՝ Մելիք Պօղոսը մեր երկրի մեղիքն (\*\*) էր, իսկա-

(\*) Խնուսի բէկերու մասին՝ տես Հայր Ղուկաս վրդ. Ինճիճեանի «Աշխարհագրու- թիւն» գիրքը, որ կ'ըսուի. «Իշխանութիւն երկրիս (Խնուս) սեպիական է պէյի՝ որ է ազ- գաւ լեզկի. զի ի պատերազմին օսմանեանց ընդդէմ Գահմասին (պարսից Շահ Գահմաս), պէյի ուրումն ի լազկի ազգէն արարեալ ասնի քաջագործութիւն երեսիլի ի կողմանէ օսման- եանց, յայն սակս այս տեղի շնորհեցաւ յարժունուստ ցեղի նորա, եւ ի քաջաբն Խնուսայ բնակին ոչ սակաւ բազմութիւն նայն լեզկի ազգին: Ունի Խնուս քազում գիւղօրէս, որք ըստ մեծի մասին թիմար են եւ զիսմէթ, այլ ի նորումս ոչ սակաւ քանդեցաւ այս սանազ հա- մօրէն, վասն զի պէյն Խնուսայ եհար զՄալազկերտ, իսկ փաշան Պայագիտոյ յօգնութեան ե- կեալ Մալազկերտի բէկին, եհար եւ ապականեաց զբազում սահմանս Խնուսայ (Ա. հատոր, էջ 81):

(\*\*) Մելիք անուան համար տես Հայր Ղուկաս վրդ. Ինճիճեանի «Աշխարհագրութիւն» գիրքը, որ կը գրէ. «Կառավարութիւն Հայաստանեայց է եւ իշխանութիւն ինչ զկնի քալան- դարին, կոչեցեալ Մելիք. որ ըստ պաշտօնի՝ նոյն է ըսել երկրորդ քալանդարի. որ իբրեւ դատաւոր քաղաքի, եւ ժողովող տրուցն արժուոյն՝ կարող է հարկանել, տանջել, ընդ տուգա- նօք արկանել. եւ գամեմայն իշխանութիւն ի գործ անել, բացի յարեմեհդութենէ. սոքա եւ ըստ մեծի մասին լինին յազգէս Հայոց, այս իշխանութիւն Մելիք կոչեցեալ գոյ է նաեւ ի սահմանն օսմանեանց, մասնաւոր յայն կողմն, որ կոչի Բիւրտիստան, գոր օրինակ ի Մոկս, ի Շատախ, եւ ի Մուշ եւ այլն» (Ա. հատոր, էջ 50): (Հիւպատոս Պրէնզի տեղեկագրով Խնուս 1838-ին կը վերաբերէր Մուշի փաշայութեան):

պէս նահապետ էր, իր աներեւակայելի քաջութեան, բարութեան ու ողորմա- ծութեան, մարդասիրութեան ու հարստութեան համար ժողովուրդը անսահ- ման սէր ու յարգանք ունէր իրեն հանդէպ:

«Բէլ-աժտահարի կը նմանէր: Իր ֆիզիկական ուժը ահ ու սարսափ կը ստրածէր իր թշնամիներուն վրայ: Քաջ ու կտրիճ էր, իր դատն ու դատաս- տանը արդար էր, վճիռը կտրուկ էր: Կառավարութիւնը անուանապէս կը նստէր Խնուս բերդ, սակայն մեծ դատ ու դատաստան ձեր տան մէջ կը տես- նուէր: Մելիք Պօղոսն էր դատաւորը. իրմէ կը վախճային՝ հայը, թուրքը, քիւրդը, չերքէզն ու լազկին: Բերդին բէկերը, որոնք լազկի ճիւղ (սերունդ) էին, եւ շատ կատրած բաներ, օսմանցու խռալէն (պետութիւն) բէկութիւն ունէին, բայց կը վախճային ու կը հնազանդէին Մելիքին տուած վճիռներուն: Կուած էր շատ մը աւագակներու դէմ (աւագակներ շատ կային Խնուսի սա- րերուն վրայ) եւ բոլորին ալ յազքած էր: Իր գէնքերն էին մզրախ ու փշթօնք:

«Թանկ տարի մը կ'ըլլայ. ենիշէրիները կու գան ձեր գիւղ՝ Հարամիկ՝ ցորենի հորերը կոզոպտելու: Գիւղացիները սարսափած ենիշէրիներու սպառ- նալիքներէն՝ կը բանան գիւղին մէջ մնացած միակ հորը, եւ ցորենը կը բառ- նան եզներուն վրայ, որպէսզի ենիշէրիները տանին: Մելիք Պօղոս կ'ընդդի- մանայ գիւղի մեծերուն եւ ենիշէրիներուն: Երբ ենիշէրիները ցորենի բեռնե- րը առած գիւղէն դուրս կ'ելլեն, գիւղին մօտակայ հասարակաց նաւրուն ա- ողնքեր Խնուս-գեղ ըսուած դաշտավայրը՝ Մելիք Պօղոս իր հետեւորդներով կը յարձակի ենիշէրիներուն վրայ, սարսափելի կռիւ մը կը սկսի: Մելիք իր ձին հեծած, մզրախը կը գարկէ եւ երկու ենիշէրիներ մզրախի վրայ առած կը ձգէ մօտակայ գետին մէջ: Ենիշէրիներու ընկերները այս սարսափելի տեսա- րանին ականատես ըլլալով, կը թողուն իրենց մեռած ընկերները եւ կը փա- խին: Մելիք Պօղոս ցորենի բեռներով գիւղ կը վերադառնայ եւ ցորենը կը բաժնէ գիւղացի կարօտեալներուն: Այս դէպքէն ետք կը սկսի կանոնաւոր կերպով հալածել ենիշէրիները եւ Խնուսի դաշտը մաքրել անոնցմէ եւ ժողո- վուրդը ազատել անոնց աւերումէն ու հարստահարութենէն: Այս դէպքին ա- ողիքով յիշատակութեան խոշոր քար մը կը կանգնեցնեն նաւրուն աղբիւրը եւ կ'անուանեն Թիքման քար:

«Անգամ մը Խնուս բերդի բէկերը իրարու հետ կռիւի բռնուեցան: Ես իմ աչքերով տեսայ, արիւնահեղ կռիւ էր, խանչալներով, թուրերով ու նա- չախներով իրարու կը զարնէին: Բերդի խայմախամն ու զարքիաներ վախե- րուն չիշխցան (համարձակիլ) մօտեմալ կոռուղներուն. եկաւ Մելիքը, բառա- ւան (հաշտարար) եղաւ, կոռուղներու սուրերուն ու նաչախներուն դէմ թե- ւերը բարձրացուց, առանց վախճալու մոլեգնած կոռուղներէն: Ունեմ գի- նաթափ ըրաւ, ունեմ ալ իր սաստին անսալով դաղրեցուցին կռիւը: Կռիւին վերջ տալէ ետք, գնաց խայմախամի խոնախը, քփեց խայմախամին երեսը իր վախկոտ անտարբերութեան համար, եւ շարաք մը դէպքէն անցնելէ ետք, խայմախամը աղլ (պաշտօնանկ) ընել տուաւ:

«Թանգ տարի մը, հացի պակաս եւ սղութիւն կար: Մուլթաղիները իրենց ունեցած հացահատիկները սուղ գնով կ'ուզէին ծախել: Ազդեցիկ բէ-

կերէն մէկը կ'ուզէր իր ունեցած հացահատիկները Մուշ դրկել՝ հոն աւելի սուղ գնով ծախելու: Մեյլիք Պօղոս իմանալով այս բանը, իր մարդիկը կարաւանի ետեւէն դրկելով, ցորենի բեռները կէս նանապարհէն վերադարձնելով՝ սակագին դնել կու տայ, ծախելով կարօտ ժողովուրդին»:

Առաջել Տացուն խորունկ հառաջելով, ախ մը քաշեց, եւ դարձեալ սկսաւ աշպէս. «Հէ՛յ վախ, հէ՛յ վախ, հէ՛յ վախ... Հէ՛յ կիտի Մեյլիք Պօղոս, քանի՞ խորունկ իս խորունցի...: Լա՛ս,՝ ձեր տուն վանք էր, ձեր սեղան միշտ բաց էր. (Հիւրերը կերակրելու համար սեղանը միշտ բաց կը մնայ եղեր, երկու հացթուխ կիներ, երկու կիներ ալ կերակուր պատրաստող, ասոնց հետ նստել երեք ծառաներ սեղանին սպասարկելու. միշտ պատրաստ: Կաթն ու մածունը, սերն ու կարպր, թանն ու թացանը այնքան առատ կ'ըլլան, որ տունին մեծ բաց բակէն կաւաչէն ազուլաներով յաւելեալ թանը կը հոսեցնեն զէպի տունին առջեւէն անցնող հասարակաց ճանապարհին առընթէր գիւղին մեծ առուն): Մտնող, ելնող, հայ քրիստոնեան՝ քէ անօրէն այլազգին՝ կ'ուտէր, կը խմէր ու գոհունակութեան մազքանքներով կը մեկնէր:

«Ձեր տան ախտները(\*) ձիերով, գովէշներով, մատակներով, կովերով ու եզներով լեցուն էր: Ձեր ոչխարի ճիւղերը (հօտ) դաշտերը կը լեցնէին, որոնց գովերը շինուած էին Գըռէք ըսուած սեղը, ձեր գիւղի եւ Դանէլ գետերու միջեւ: Մեզր ու կարագ, սէր, մածուն ու պանիր ջուրի պէս կը վազէին ձեր մառաններէն: Հատ ու հաշիւ չկար Մեյլիքին տան հարստութեան: Ժողովուրդը գնահատելու համար Մեյլիքին հարստութիւնը՝ կ'ըսէր. «Եթէ Մեյլիքին հարստութիւնը Դանէլի գետը լեցնեն, գետը իր ընթացքը կը փոխէ...»:

«Մեյլիք Պօղոսի անունը ո՛չ միայն Խնուսի դաշտին մէջ հանրածանօթ էր, այլ նաեւ տարածուած էր ու հասած Մուշ, Բաղէշ, Պուլանուխներ, Ալաշկերտ, Պայազիտ, մինչեւ Արզրում ու Ստամպոլ. այնպէս որ օսմանցու Սուլթանը կանչեց զՄեյլիք Ստամպոլ ու անոր նշան տուաւ»:

(\*) Մեյլիքին ձիերու ախտը — ձիանոց — շինուած էր իր *այվանի* — քարաշէն երկյարկանի սենեակ — ետեւի պատին կից: Այվանը կը նայէր բայց դաշտին: Առջեւը ընդարձակ գետին կար, ուրկէ կ'անցնէր հասարակաց ճամբան: Այվանի մեծ դուռնէն ներս, սալայատակուած բակին մէջէն, աջ կողմին վրայ քարէ աստիճանները կը հանէին մինչեւ այվանի մուտքը. բակէն ներս մուտքի վերջաւորութեան կէտէն՝ դարձեալ քարէ աստիճաններով կը բարձրանային վերի օտան: Օտան ունէր քարաշէն երկու բուխերիկներ — մէկը օտայի ճակատի պատին մէջ բացուած, իսկ միւրը աջակողմեան պատին մէջ: Օտան երկու բաժանում ունէր, փայտէ ճաշերով բաժնուած. մէկը՝ գլխաւոր բուխերիկի կողմերը տարեցներուն յատկացուած, իսկ միւրը՝ երիտասարդներուն: Օտան տանող առաջին սանդխամասին՝ դէպի աջ կը բացուէր ձիանոցին դուռը: Ձիանոցի դէմն էր դարմանոցը եւ ձիերու քամբերու կազմածի պահարանը: Այվանի դրան երկու կողմերը կոփուած երկու խոշոր քարեր կային, որոնց վրայ երկաթէ անուրմեր ամրացուած էին, քէ՛ ձիերը կապելու եւ քէ՛ չարագործ ու յանցաւոր մարդիկ անուրմերուն կապելով պատժելու համար:

\* \* \*

Հայրենակից համադիւղացիս՝ լուսանկարիչ Սահակ Առաքելեան (Հրէ-լօ Բոքէ Սահակ), որ Ամերիկա զտղթած էր 1889 թուականին (կրթութիւնը Այնթապի Ամերիկեան դղէճը ստացած), նամակով մը Պոսթրնէն հետեւեալը գրած է մեր ընտանիքին մասին:



Սահակ Առաքելեան

«Սիրելի եղիշէ՛ ես Ամերիկա եկայ 1889-ին. բնական է որ քեզ անձամբ չեմ գնացար, բայց ո՛վ ըլլալդ գիտեմ եւ շատ ուրախ եմ քեզմէ լսել...: Հիմա կանգ առնեմ. աչքերս արտասուքով կը լեցուին: Երեսակայութեան աչքերով Հարամիկի վրայ կը նայիմ, կը տեսնեմ տուներ, դաշտեր, գետեր ու առուակներ, խոտի դէզեր եւ ամպրոցներ (չորցած ֆակորի դէզ) եւ սիրելի դէմքեր՝ մեր հայրերուն, մայրերուն, եղբարց եւ քոյրերուն, աւա՛ղ այլեւս անոնք հոն չեն, հալեցան, շոգիացան եւ անցան գացին...:



ընեն: Կ'աղաչեմ զիս ազատե՛ք: Այսպէս Մեիլիին անունը եւ համբարը կը տարածուի մեր եւ շրջակայ գաւառներուն մէջ, այնպէս որ, ո՛չ քիւրտ, ո՛չ չէրքէզ(\*) կրնային անոր ընդարձակ կալուածներուն վրայ յարձակումներ ընել:

*Հետեւեալ դէպքն ալ կը պատմէին Մեիլիի մասին:*

«Անգամ մը Բերդի աղաներուն խումբերուն միջեւ կռիւ մը կը ծագի, նաչախներով եւ քուրքերով իրարու կը գարնեն. ո՛չ ոք կը համարձակի մօտ երթալ այդ կռիւին, բայց Մեիլիին իբր քաջ ասպետ, կը մտնէ երկու հակառակորդ խումբերուն միջեւ, ձեռքերը բարձրացուցած քուրքերուն դէմ, կը յանդիմանէ, կը յորդորէ որ դադարին կռուելէ եւ կը յաջողի դադարեցնել կռիւը: Տանիկ գայմագամը եւ ուրիշներ հեռու կայնած՝ չեն համարձակիր միջամտել:

«Անշուշտ Մեիլիին կեանքը լեցուն էր մեծ գործերով եւ քաջութիւններով, տարակոյս չունիմ այդ մասին, սակայն կը ցաւիմ որ աւելին չեմ գիտեր: Ինչպէս ըսի երազի նման կը յիշեմ Մեիլիին՝ իր ներմակ նժոյգին վրայ, հեծած (ձիուն անունն էր *Կըւրէ*, որ քիւրտերէն կը նշանակէ՝ *Լողիկ*) կ'երթար հոս ու հոն, իբր իշխան: Ինքն էր որ դատ ու դատաստան կը տեսնէր հնուսայ մէջ: Իր դատն ու դատաստանը արդար էր, եւ ամենուն ընդունելի: Պատիւ հայութեան...»:

**ՍԱՀԱԿ ԱՌԱՔԵԼԵԱՆ**  
(Հըլօ Ըոքէ Սահակ)

(\*) Կովկասէն գաղթած չէրքէզները կը հաստատուին Տարօն-Տուրուքերանի շրջանները, եւ իսազազ հայ ազգաբնակչութեան դէմ հալածանքներ կը սկսին, սակայն հայերը շուտով կը սկսին հակահարուածի, որուն հետեւանով չէրքէզներուն մեծ մասը կը գաղթէ դէպի հարաւ: Անոնց մնացորդները հաստատուած էին Խնուսի մէջ Լաւպուտազ գիւղը, Վարդոյի եւ Խնուսի սահմանին վրայ Զարբուօր գիւղը, իսկ Բուլանուսի մէջ՝ Սիմոն, Յոտնչոր, Կրպօ եւ ուրիշ գիւղերը:

1859-ին Խնուսէն Պոլսոյ Ազգային Պատրիարքարան ուղարկուած Հանրապրութեան պատճէնը.

Ամենապատիւ եւ վեհափայլ Սրբազան Պատրիարք բնաւիցս Հայր. եւ Ազգային կրկին Քրիստոսագումար ատենակալք


Բարեբաւր Տիարք.

Սրբոյ Կարապետի հանրահռչակ Մենաստանիս բոլոր Հայ վիճակայնոցս երեսին վերայ տրամութեան եւ տիրութեան ժպիտները կը տեսնվի նկարեալ. եւ անհամար սրտմաշիկ կարգերն անհանգստութեան մէջ հասարակութիւնը գրկեր քաղեր են. վասն զի յետ վախճանի Բագրատունի Տէր Կարապետ Ծ. վրդ.ի արքնահամբաւ առաջնորդի մերոյ Համայն Հայոցս նոյնպիսի հովիւ մը չկայ, որ Քրիստոսեան լայն համբան բռնելով անցուցանէ զնուաստութիւն մեր անվնաս ըստ հոգւոյ եւ ըստ մարմնոյ յայն ցանկալի սահմանն արդարութեան եւ բարեկարգութեան ասեմք. չկայ այնպիսի լուսաւոր անձ մը այս մեր վիճակներուն մէջ. չկայ առաջնորդ ուղիղ բաժանօղ, որ մեք ալ անոր շարժաց ետեւէն պարտաւորիմք երթալու:

Քանզի յայտնիկ ատուրս ամենայն խնուսցիս յայս մեր սուրբ ուխտը գնացինք. զանազան գործերու ակնատես լեալ նմլեցաւ մաշեցաւ սրտերնիս, մանաւանդ ուսումնարանի անբարեկարգ վիճակը տեսնալով մեծ ցաւ եղեւ մեզ. վասն որոյ կը հարկադրիմք բազմադերս այս խնդիրը արձակել յատեան Ձեր իրաւայտի, եւ անտարակոյս կը մնամք, որ ազգասիրական հոգւով պիտի բարեհաճիք ընդունելու եւ իրական կերպով պիտի յօժարիք կատարելու ի սէր բազմահայ Տարօնեան վիճակացս:

Լուսաւոր եւ ոսկեղէն դար մը կը համարվի այս դարը, որ ուսման գովանի ասպարէզը կը ջանան լուսաւորեալ անձինքներ բանալու, եւ յամենուրեք դպրոցներ. բարեկարգելու կը վաստակին. արդէն մեք գրկեալ սոյն ուսառատ բարիքներէն, եւ այս հինգ ամսոց օրերը խաւար օրեր գլխնուս վերայ քափվեր է. ուստի կ'աղաչեմք Ձերոյ վեհափառութեան, որ գթառատ խնամքներուդ անձրեւներու ցօղերը առատացնէք նուաստիցս վերայ, եւ Կարնոյ այժմեան փոխանորդ ուսումնափայլ Մամբրէ Տարօնացի գիտնական վարդապետը ՚ի վնս Իննակնեանն Գլակայ, յուղարկելու շնորհ բերէք Ձեր կողմանէ փոխանորդ եւ դպրոցաց հոգաբարձու եւ ուսումնապետ, մինչեւ ցրնալու քիւրտներուդ այլ արժանաւոր առաջնորդի: Քանզի ինքն խոհեմ եւ ուսումնական անձ մըն է, մանաւանդ Հայրեմասիրական ջերմիկ ջերմիկ եռունց սրտին մէջ պահելով՝ պիտի մխիթարէ գհասարակութիւն երկրիս ձեզ ալ մեծ բերկրանք մը պատնառելով, որ միշտ ազգօգուտ գործոց վերայ է զարմանքնիդ:

Այս յիշեալ ուսումնական վարդապետի վերայ է միտքերնիս վերջապէս, եւ բոլոր Հայքս Հոգեւոր կառավարութեան Մշոյ Սր. Կարապետի վանաց՝ ազերսաւորի նման ձեռքերնիս երկարացնելով կը խնդրեմք ՚ի բարեբար



1859-ին Խնուսէն Կ. Պոլսոյ Ազգային Պատրիարքարան ուղարկուած հանրագրութիւնը

Տիարցոյ՝ որ այս պաշտօններով օր յառաջ յերկիրս յուղարկելու յօժարութիւն տայք, յատուկ կոնդակաւ կը մխիթարէք մեր նուաստութիւնը ով բարեբար Տիարք այս ձեր բարեսրտութեամբ. կը մխիթարէք որ բանիրուն եւ քարոզիչ վարդապետ մը նուաստիցս կը յուղարկէք. եւ պարզ ասեմք, կը մխիթարէք անխնամ մնացեալ դպրոցաց Հայ մանկտիները, եւ մեծ բազմութիւն մը Հայոց ձեր համար, ձեր փառաւորութեան համար եւ երջանկութեան բարեմաղք կը հանդիսացուցանէք առ Տէր:

1859 Յունիս 20, ի Խնուս

Մնամք ամենապատիւ բարձր Սրբազնութեան ձերում եւ բարեբար Տիարցոյ անննանուէր Խ. Ծ. ժողովուրդի Խնուս նահանգի:

Հորիզոնական Ա. շարք. — Ն» Մելիք Պօղոս Մելիք Գասպար Ռէս Մկրտիչ, Ն» Ռէս Գեվորգ Մելիքեան, Բաղասաար Մուրատեան:

Բ. շարք. — Ն» Հրամկու Ռէս Պետրոս, Խօրոյ Գրիգորեան, Գասպար Մխիթարեան, Յօհաննէս Բաղասաարեան, Ռէս Աւտալ, Ն» Խարթուրվայ Ռէս Պօղոս, Իրիցփոխան Առաքել, Պառնկայ Ռէս Պատէն:

Գ. շարք. — Ռէս Մեհեր, Մուրատ Պղէեան, Խրոմիսայի Ռէս Եղօյ, Կօպալայ Ռէս Յարութ, Մարութայ Ռէս Կօրէն, Չաուրմայի Ռէս Սարքիս, Իրիցփոխան Կարուստ, Ռէս Մխիթար Յովոսեան:

Դ. շարք. — Գրիգոր Պաղասաարեան, Ռէս Աւաք Մահտեսի Եղազարեան, Մանուկ Գրիգորեան, Ռէս Պաղասաար Քօջօեան:

\*\*\*


**Քաղուածքներ սասունցի պատուելի Սիմէոն Դաւիթեանի օրագրէն, Մելիք Պօղոսի մասին: Պատուելի Սիմէոն ծնած է 1820-ին Սասնոյ Հեթիւք գիւղը: Հեղինցի Տէր Աբրահամի սերունդէն է: Իր օրագրութիւնները մեզի տրամադրած է իր հարսը տիկին Եսթեր Սիմոնեան, որ կը բնակի Քալիֆորնիոյ Տրէզնօ քաղաքը:**

«1853. Օգոստոս 20, Խնուս Չաուրմա գիւղ. — Աս օրերուս մարդիկ քիչ կու գան կ'երթան քովերնիս, Ռուսիայի պատերազմին պատճառաւ. կը խորհին որ գուցէ ուսը առնէ առ Տանկաստանի հողը ու գիրենք ախար քշէ, կամ չարչարէ, անոր համար մեզմէ (քաղաքականներէ) քիչ մը հեռու կը կենան: Մեր եղբայրներէն՝ որ 75 դահեկան կ'ուզէին գեղին ծախք որ տայինք Մելիքին, Ալի աղային գրեցի որ — *մենք հայ չենք* — (ընդգծումը մերն է), որ վնարենք առ ըստակը. բաշխեց, ա՛լ չառաւ մեզմէ. գեղէն 800 դահեկան առին:

«1854, Մարտ 15, Չաուրմա կամ (Չելիքմէ) գիւղ. — Ալի աղան հոս եկաւ ուրիշ գեղ մը երթալու համար, եւ թլփատութեան հանդէս մը կատարելու, եւ ինծի ըսաւ թէ «Մելիքին այրի գաւկին համար կոյս աղջիկ մը պիտի ուզեմ եւ շուտով պսակել պիտի տամ», եւ իրեն ըսի թէ՛ անոց օրէնք ա՛յ

հրաման կու տայ որ որբեւարին կոյսին հետ ամուսնանայ, եւ ո՛չ ալ այս օրերուն մէջ պսակ ըլլալու է, «ես ընել կու տամ ըսաւ»:


«1854, Յունիս 15.— Բերդին ազգապետ հայ իշխանը ծեծ կերաւ տանիկ խատիէն, առանց օրինաւոր պատճառի, ու նեղանալով՝ ինք եւ իր երեք զաւակները հոս եկան (Չաւուրմա գիւղը), բովս եկաւ երէկ տեսութեան, այսօր ալ խօսեցաւ Մելիքին անիրաւութիւնները, որ տանիկի մը ընկերացեր է ազատաց ապրանք ուտելու:



«1854, Յունիս 4, Չեւիքմէ.— Այսօր Մելիքին խաղ կանչողը եկաւ Բերդ գնաց կառավարիչին իմացնելու թէ՛ փրտները աս գիշերս Մելիքին ոչ-խարները կտրտեր են թուրով: Մելիք աս երկրին (հնուս) ամենէն հարուստ իշխանն է, եւ միշտ իր բովը երկու խաղ կանչող կը պահէ, մէկը տանկերէն խաղ կանչելու, եւ մեկալը փրտերէն. երանի թէ՛ ասոնց տեղ աւետարանական փարօղիչ մը պահէր իր տունին մէջ:

«1854, Նոյեմբեր 21, Չաւուրմա.— Աս գիշեր 24 մաքի գողցան ռէսին գումէն, ու աս օրս դարձեալ գտան Մելիքի ոչխարին նիւղին մէջ, (այս ամբաստանական հատուածի սունչութեամբ. նկատի ունենալու է օրագրողին բողոքականի հանգամանքը, եւ Մելիքին բողոքականութիւնը հալածողի պարագան: Օրագրողի ամբաստանութիւնը ռէսի գումէն գողցուած 24 մաքինբաւն Մելիքին ոչխարի նիւղին մէջ գտնուիլը ապացոյց մը չունի Մելիքը ա-

րատաւորող, մանաւանդ երբ նկատի ունենանք օրագրողին այն վկայութիւնը թէ «Մելիքը այս երկրին ամենահարուստ իշխանն է»: Ուրիշ պարագայ մը նաեւ գոյութիւն ունի եղեր այդ ժամանակ. Մելիքը պետական հարկ կամ տուրք գանձելու իրաւասութիւն ունի եղեր. ամենայն հաւանականութեամբ 24 մաքիններու պատմութիւնը սերտ սունչութիւն ունենայ ատոր հետ, չարափոխուելով գողութեան վերագրուի երիտասարդ ազանդաւորի մը կողմէ: Դարձեալ երբ նկատի ունենանք օրագրողի այն որակումը, որ ունի Հայաստանեայց Առաքելական եկեղեցիի մասին, գայն անուանելով Մաշտոցական: Այդ օրերու իշխանական արժանապատուութիւնը՝ պատմութիւնը տարբեր կերպով կը գնահատէ):



«1855, Փետրուար 10.— Խուռուտ բէկ իմ սենեակս եկաւ: Փետր. 15-ին մալազկերտցի մարդիկ եկան բովս, Մելիքն ալ ատոնց հետ. շատ ընդարձակ խօսակցութիւն ըրինք մեր հայոց խեղճութեան վրայ: Քանի մը հայրապետաց սխալմունքները ցուցուցի իրենց, ըսին մենք այդպէս հայրապետ չենք ընդունիր: Երբոր անոնց հետ կը խօսէի՝ գեղին երեցն ալ Մելիքին բովը նրատած էր, անոր ականջին կը փսփսար թէ՛ ինչ որ կ'ըսէ սուտ է, մի՛ հաւատար: Հարցուցի թէ երեց. — Ի՞նչ է գողտուկ կը խօսիս այդ մարդուն ականջին, սուտ գրուցեց, ու ըսաւ թէ բան չեմ խօսիր, կարծեց թէ ես չլսեցի:

1852 Թուականին, Էրզրումի Ամերիկեան բողոքական միսիոնար՝ պատուելի ճաշուա Փիլատի՝ Ամերիկա հրատարակուող «Միշնըրի Հէրըլտ» թերթին թղթակցութիւն մը կը գրէ հայ բողոքականներու մասին. մասնաւոր-



բելով իր խօսքը Խնուսի հայ բողոքականներու՝ կամ աւելի ճիշդը թոնտրակեցի աղանդաւորներու մնացորդաց նկատմամբ յարուցուած հալածանքի մասին, Խնուսի հայ իշխան Մելիքին կը վերագրէ եղածը:

\* \* \*

Մելիք Պօղոս զոյգ մը դամբաններ կ'ունենայ եղեր, Զալում եւ Բողըռ անուններով, զորս յատկապէս կը պահէ եղեր իր ոչխարի հօտերուն հսկելու համար. այս շուները շատ անգամ դայիբը կը բռնեն, կը խեղդեն եւ դիակները քաշելով կը բերեն տուն: Բերդի բէկերէն մէկը կը նախանձի այդ շուներուն, շարամուտեամբ կ'ուզէ սատկեցնել տալ շուները, թափառաշրջիկ մուրացիկ քիւրտի մը միջոցով: Այս քիւրտը ասեղ ղնելով հացի մը մէջ, գաղտնի կերպով հացը շունին կը կերցնէ, եւ շունը կը սատկի: Փամանակ մը անցնելէ ետք դարձեալ նոյն քիւրտը մուրացիկանի դիմակով կը մտնէ մեր տան բաց բակը. ցերեկ ատեն շղթայակապ շունը քիւրտը նկատելուն պէս վրան կը յարձակի եւ կը սկսի խածնել ու թաթերուն մէջ առած կ'ուզէ խեղդել: Այդ պահուն մեր տնեցիները կը հասնին եւ արիւնաթաթախ քիւրտը կ'ազատեն շան թաթերէն: Կու գայ Մելիքը, նախ քիւրտի վէրքերուն սպեղանի դնել (քուել) կու տայ, յետոյ կը հարցաքննէ քիւրտը. — «Ի՞նչ չարիք ես հասցուցած մեզի, որ շունս վրադ յարձակեցաւ»: Քիւրտը երդուելով կը պատասխանէ. — «Մելիք ոտքերուդ խուրպան, ես ոչ մէկ չարիք քու տան ու տեղին հասցուցած եմ. վալլա՛, պիլլա՛, թալլա՛. կ'եքդուիմ, ու ես ո՞վ եմ, որ հաւարակութիւն ունեմաւ քու տան չարիք հասցնելու»: Մելիք դարձեալ կը հարցնէ. «Ըսէ՛, մի՛ վախնար, մի՛ ստեր. դուն անպատեառ գէշ բան մը քրած ես, որ շունս քեզ խեղդել կ'ուզէր, այլապէս շունը քեզ կը խածնէր, բայց պիտի չուզէր խեղդել»: Քիւրտը խոստովանելով կ'ըսէ. «Ես մեզայ, Մելիք ոտքդ անոգ կ'իյնամ, ես հացի մէջ ասեղ ղնելով քու շանդ տուի եւ շունդ սատկեցաւ. բայց ես մեղաւոր չեմ. քու քշմամիները՝ Բերդի բէկերը՝ զիս զրկեցին եւ ընել տուին այդ չարութիւնը, քու բախտն եմ ինկեր՝ ազատէ զիս»: Մելիք Պօղոս քիւրտը ազատ կը թողու, եւ կ'ըսէ իրեն. «Գնա՛, ըսէ՛ էտ նամարտ բէկերուն, որ ես իրեցի հախէն կու գամ»: Այս միջադէպին հետեւանքով կոխ տեղի կ'ունենայ բէկերուն եւ Մելիքին միջեւ, բէկերու ծառաներէն մէկուն սպանութիւնով կոխը կը վերջանայ:

\* \* \*

Մելիք Պօղոսի համբաւը կը հասնի մինչեւ Ստամպոլ: Սուլթանը զայն Պոլիս կը կանչէ: Մելիք Պօղոս՝ իրեն հետ նաեւ Ղարաչոպանայ Մելիք Գասպարը՝ միասին կ'երթան Պոլիս: Հաղուած իրենց բնաշխարհի տարազը, զինուած խըլըն-խալխանով (այդ ժամանակ հայերը զէնք կրելու իրաւունք ունին եղեր), հեծած համբաւաւոր Խնուսի բէխլան նժոյգներ: Սուլթանին տը-

պաւորութիւնը այնքան լաւ կ'ըլլայ որ երկու մելիքներուն պատուանշան կու տայ եւ Մելիք Պօղոսին ֆէրման կու տայ:

Մելիք Պօղոսն ու Մելիք Գասպարը երբ Խնուս կը վերադառնան, Խնուսի ժողովուրդը՝ հայ, քիւրտ թէ թուրք՝ մեծ ընդունելութիւն կու տայ, տարածելով անոնց համբաւը: Այս մելիքներուն իշխանութեան օրերուն՝ Խնուսի ազգային-եկեղեցական գործերը կապուած կ'ըլլան Տարօնի Սբ. Կարապետի վանքի իշխանութեան հետ: Այդ օրերուն Սբ. Կարապետի վանքին վանահօր ընտրութեան առթիւ՝ 1859 թուականին՝ պայքար տեղի կ'ունենայ: Խնուսի մեծամեծները Մելիք Պօղոսի պիտակութեամբ հանրապրութիւն մը կը պատրաստեն եւ Պոլսոյ Ազգային Պատրիարքարան զրկելով, կը խնդրեն, որ Սբ. Կարապետի հանրահօշակ մենաստանին վանահայր նշանակուի, այդ օրերուն Կարնոյ ստաշնորդական փոխանորդ ուսումնափայլ Մամբրէ Տարօնացի գիտնական վրդ. ր: Իրենց ձայնը լսելի կ'ըլլայ եւ Տարօնացին կը կարգուի Գլխակայ վանահայր: Հետագային Խրիմեանի վանահայրութեան օրերուն իր ղէմ սկսուած պայքարի ընթացքին՝ Խնուսի մեծամեծներն ու քահանաները Խրիմեանի հանդէպ բարեկամական վերաբերում կ'ունենան:

Անգամ մը Խրիմեան հայրիկ մեր տունը հիւր կ'ըլլայ, կը խօսի Մելիքին եւ մեծ հօրս, որպէսզի հայրիկս զրկէ էջմիածին՝ Գէորգեան ճեմարան ուսանելու: Մելիքը եւ մեծ հայրս համաձայն կ'ըլլան, սակայն մեծ մայրս՝ Նանէ Գոհարը՝ համաձայն չ'ըլլար, եւ լալով կը ներկայանայ Խրիմեան Հայրիկին եւ կը խնդրէ որ իր Յովհաննէս որդին չտանի էջմիածին, որ վարդապետ ըլլայ:

Խրիմեան Հայրիկ՝ մեծ մայրիկիս խնդրանքին տեղի կու տայ, եւ հայրիկս չի զրկուիր Գէորգեան ճեմարան, եւ կը զրկուի ճեմարանական կրթութենէ: Սբ. Կարապետի վանքի վարժարանը աւարտելով կը վերադառնայ Խնուս եւ տարիներով զանազան գիւղերու մէջ վարժապետութիւն կ'ընէ. ասոր համար ալ հանրածանօթ էր Վարժապետ անունով: Հայեր թէ քիւրտեր զինք Վարժապետ կ'անուանէին, նոյնիսկ այն շրջանին՝ երբ դադրած էր վարժապետութիւն ընելէ:

ՄԵԼԻՔ ՊՕՂՈՍԻ ՄԱՀԸ

Հայրս եւ Ղազար ամուն պատմած էին՝ որ Մելիք Պօղոս մեռած էր անրնական մահով եւ խորհրդաւոր պարագաներու տակ: Պատմութիւնը հետեւեալն էր. — Խնուս բերդի բէկերէն խնճոյք մը կը տրուի ի պատիւ Ստամպոլէն Խնուս եկած թուրք փաշայի մը: Այս խնճոյքին կը հրաւիրուի նաեւ Մելիք Պօղոսը: Մելիք իր հետ կը տանի իր խաղասացները՝ խնճոյքին աւելի փայլ տալու համար: Խնճոյքին ընթացքին Մելիքին թոյնախառն սուրճ կը հրամցուի: Մելիքին մահը անմիջականօրէն տեղի կ'ունենայ: Կանխամտածուած ու դաւադրօրէն կատարուած ոճիւրը ծածկելու համար, բէկերը

յանցապորժը փնտռելու կեղծ փորձեր խակ կը կատարեն: Աւաղ որ ոճիրը գործուած էր. Մելիքին մահուան գոյժը կը տարածուի Խնուսի եւ շրջակայ գաւառները:

Սպաւորներու հսկայական բաղմունքին մը, վեց զոյգ դոմէշներ լծուած սայլով մը կու գայ Մելիք Պօղոսի անշնչացած մարմինը կը փոխադրէ Խնուս բերդէն Հարամիկ՝ իր գիւղը: Թաղմանական արարողութիւնը կը կատարեն Մշոյ Սր. Կարապետի վանքի վանահայրը եւ շրջաններէն եկած հոգեւորականներ: Թաղմանական թափօրին հետ, դադաղին կը հետեւի Մելիքին ճերմակ նժոյցը (Կըլքէ) գարդարուած անոր գէնքերով եւ հագուստներով, իբրև ընկալելու յարգանքի աւանդական սովորութիւն:

Եօթը օր ու եօթը գիշեր եօթնամբիժ կը կարգան, եւ երիտասարդները կը հսկեն գերեզմանին, առ ի պուշուրթիւն տեղի ունեցած տարածայնութեանց՝ թէ Մելիք Պօղոսի թշնամիները մտադրած են դիակը առեւանգել: Եօթներորդ օրը, մեծ թափօրով եւ կրօնական արարողութեամբ հսկայական տապանաքար մը շիրմին վրայ կը դնեն: Տարիներու ընթացքին, սակայն, հայոց հանդէպ աննպաստ գէպքերու հետեւանքով, թուրք եւ քիւրտ բարբարոսութիւնը խորտակած էր տապանաքարը, կը մնար միայն շիրմին պատանդանի հարթաքանդակ ժայռանման քարը, որուն վրայ իրրև արձանագրութիւն փորագրուած էր «Մելիք Պօղոս», մինչ բուն տապանադիրը փորագրուած կ'ըլլայ խորտակուած շիրմաքարին վրայ: Խորտակուած եւ փճացած էր նաև Մելիքին հսկայական հարստութիւնը: Հոգային բազմաթիւ կալուածներէն, հետեւեալ արտերու եւ արօտատեղիներու անունները տակաւին կը յամենան մեր յիշողութեան մէջ, մեր սիրտը խոցոտելով, յաւէտ կորուսեալ մեր ընաշխարհին վշտին առընթեր: Գեղի տակի Յաղբին արտեր, Կաւ գրի Յաղբիմներ, Գուռնավտան, Քրոնէֆ (\*), Սեւ հողեր, Սէլի Մօրուֆ, Ուլուս ձորու կողեր, Յոքի արտեր, Բանաղրէժներ, Յակոնտան, Բոգ բլեր, Լակլըկու դար, Խաւնով չայիր, Չաթօ չայիր եւ Խանտուտներ, որոնց սահմանը գիւղէն կը սկսէր եւ կը հասնէր մինչև Ենիքէօյ-Բուրհան, ու Սպիտակ սարի կողերով կ'երկարէր գիւղը: Մեր ընտանիքի ճիւղաւորումով, մեր (դասեր) ազգականներ աւանդական մասնայատուկ հասկացողութեամբ, պետական օրէնքէն անկախ, իւրաքանչիւր դաս իրեն սահմանուած հողը կը մշակէր, եւ կամ հողի մշակութեան իրաւունքը ժամանակաւոր կերպով կը ծախէր, կամ վարձու կու տար. այս ճիւղաւորումով հանդերձ, մեր գերդաստանի մականունը կը մնար Մելիքեան կամ Մելիքենց տուն:

(\*) Քրոնէֆ կամ քարեր, հոգամաս մըն էր գմայլիի դիրքով, ընդարձակ տարածութեամբ, քարաբլուրներով եւ փոքր ջրառատ հովիտներով լեցուն, Խամուր բերդի ստորաջր՝ Քաղիկ եւ Հարամիկ հայաբնակ գիւղերու սահմաններուն վրայ, Դանիէլ եւ Խնուս գետերու տեղային մէջ: Այս հոգամասին վրայ շինուած են եղեր Մելիքին ոչխարի հօտերու գոմերը, որոնց աւերակները կային մեր օրերուն: Կար նաև հովիւի քարը, որուն մէջ փորուած էր հովիւին հուշար (հիւզակ):

Մեր օրերուն Մելիք Պօղոսի յիշատակէն մնացորդ հետեւեալ իրերը կային — զոյգ մը արծաթակոթ փշքոփ տարձանակներ, սուրճի երկու հատ արծաթեայ դաւաթներ (խատեֆ), ընկուզենի փայտէ մահճակալի կաղմածը, որուն Մելիքի քալսք կ'ըսէին, կեռ երկաթներով (չէնկէլ) իրարու կ'ապուցուէին: Թախտին արտասովոր խոշորութիւնը ինքնին ապացոյց էր անոր տիրոջ Ֆիլիքեական կաղմին: Թախտին մասերը խուրճի մը պէս իրարու հետ շղթայով մը կապուած կը պահուէին մեր տան վերի օտային մէջ, մասունքի մը նման: Մայրս կը պատմէր թէ 1895-ի թալանի տարին, քիւրտերը մեր տունը թալանած ատեն, փորձեր են թախտը տանիլ, վերի օտային քաշած բերած են մինչև մեր տան բաց բակը, սակայն հոն ձգած եւ պացած են: Թալանը դադրելէն ետք, մերինները իրենց ապաստանարաններէն տուն դարձին կը գտնեն թախտը, եւ կը փոխադրեն իր հին տեղը՝ վերի օտան, ուր կը մընար մինչև 1915-ի մեծ եղեռնի օրերը:

Արծաթակոթ փշքոփ տարձանակներու թաղուն պահարանն էր մեր մեծ թոնրատան պատին գլուխը, գերաններու բարձին տակ: Այդ պաղտնիքը մեր ընտանիքի անդամներուն յայտնուեցաւ միայն 1908-ին, Օսմ. Սահմանադրութեան ազատութեան օրերուն: Սուրճի արծաթէ դաւաթները, որոնք Մելիքին՝ Ստամպուլէն բերած դաւաթներուն մնացորդներն էին, 95-ի թալանի տարին, քիւրտերը մեր տունը կողոպտած ատեն տարած էին, սակայն յետոյ հնարաւոր եղած էր հայ ոսկերիչի մը միջնորդութեամբ թալանճի քիւրտէն գնել զանոնք:

Սպիտակ բուռ խանչալ մը որ ունէր իր պատմութիւնը. «Մեծ հօրեղբայրս՝ Յարութիւնը, խանչալը գրաւի կը դնէ եղեր բուրհանցի քիւրտ Թաժտօ աղային մօտ. այս բանը կ'ըլլայ Մահմուտի նեմգամտութեամբ. խանչալը մեք գաւով կը տեսնէիք Թաժտոյի մէջքին կապուած, սակայն անհրմար եղաւ գայն ետ առնել որեւէ գնով: Նոյնիսկ Սահմանադրութեան ընծայած լաւագոյն օրերուն, Գասպար հօրեղբայրը եւ Ղազար ամուրի տղան՝ Համոն փորձեցին խաղով մը ձեռք ձգել ու պահել խանչալը, սակայն չյաջողեցան»:

\* \* \*

1910 թուականին աշակերտ էի Խնուս բերդ, Միացեալ Ընկերութեան վարժարանը: Գարնանային դեղեցիկ օր մըն էր. որոշուած էր դպրոցի աշակերտութիւնն ու ուսուցչական կաղմը միասին դաշտապտոյտի երթալ: Միևնոյն օրը հօրս հօրեղբորդին, Տէր Վահան քհնյ. Մելիքեան, իրեն հետ նաև Հարամիկ գիւղացի Տէր Թորոյոմ Քհնյ. Տօնապետեան (աշխարհական՝ Յակոբ վարժապետ) եւ գիւղի ոչն Պետոն Բերդ եկած էին հանրային գործով: Մօրս կողմէ ինծի աղպական Ուրո Մելքոնի տղուն՝ Արամին խանութը պտնուած ատեն, եռայարկ շէնքին փլուզումով, փլատակին տակը մնացին եւ խեղդամահ եղան:

Եռայարկ շէնքը կը պատկանէր Համիտ աղային: Երկրորդ եւ երրորդ յարկերը վարձակալ չունենալուն համար, անխնամ վիճակի մէջ կը մնային:

Այդ տարուան յորդառատ անձրեւներէն՝ տանիքի փայտերը ջուր տոնելով եւ փտակելով հողի ծանրութենէն յանկարծակի խորտակուելով, փլուզուածը կը հասնի մինչեւ ատաջին յարկը:

Յեղակարծօրէն պատահած այս դէպքը ցնցեց ամբողջ քաղաքը: Կատա- վարութիւնը բանակը օգնութեան կանչեց, զօրքը փլատակ շէնքը պեղելով դուրս հանեց խեղդամահ երկու քահանաներուն, ոչսին եւ Արամին զիակնե- րը. իսկ կիսախեղդ վիճակով դուրս հանեցին Սարլու զիւղացի ջիւրտ Դեր- վիշ աղան: Վերջինը ապրեցաւ եւ տեղի տուաւ մահմետականներու կողմէ ամբարտաւան արտայայտութեանց: Արկածին լուրը ձիաւոր մը բերաւ դաշ- տավայրը (Պորունկ ձոր) Արամի եղբոր՝ ուսուցիչ Վահանին: Երբ քաղաք եկանք, տեսայ որ առաջնորդարանը շրջապատուած էր հսկայ բազմութիւ- նով, զիակաները առաջնորդարան բերած էին, գիշերը հոն պահեցին, յաջորդ օր հայրիկս զիւղացիներու հետ սայլերով եկաւ, քահանաներու եւ ոչսին մարմինները զիւղ (Հարամիկ) փոխադրեցինք, և երկու քահանաները մէկ դա- զագի մէջ, նոյն գերեզմանին մէջ միասին թաղեցինք, քանի որ երկուքը դա- սընկերներ եղած էին Սր. Կարապետի վանքի վարժարանը, միասին աւար- տած, միասին քահանայ ձեռնադրուած եւ միասին վախճանած:

Ճանապարհին՝ երբ զիւղ կու գայինք, տխուր դէպքին առիթով, հայ- րիկս վերջիչեց Մելիք Պօղոսի յեղակարծ եղերական մահը, եւ ըսաւ. «Բերդի բէկերը քունաւորեցին Մելիքը. իր մահուան լուրը երբ տուն հասաւ, մեծ բազմութեամբ վեց գումէշներ լծուած սայլով եկանք Բերդ եւ դիակը գիւղ տարինք: Ես այդ ատեն հագիւ թէ քու տարիքիդ էի», եւ աւելցուց, «Տղաս, մեր գերդաստանէն ասիկա երկրորդ անգն է որ եղբրական պայմաններու տակ կը մահանայ, եւ դիակը Բերդէն գիւղ կը փոխադրենք: Աստուած երբորդը

\*\*\*

Ասիկա օրինակն է նամակին մեր ազգական Մարիցային (հօրեղբոր որդի Տէր Վահան քահայ.ի աղջկան), գրուած Գամշլիէն (Սուրիա) 1938, Փետրուար 21-ին:

Յարգելի եւ կարօտալի եղբայրս՝  
Եղիշէ Մելիքեան, ի Ֆիլատելփիա

Սիրելիս, մեր գերդաստանէն լուրեր ուզած էիր. սիրելիս, միակ այս- քան գիտեմ որ Մելիքը շատ մեծ ազդեցութիւն ունէր որ եթէ վեց մը, կամ դատ մը գիւղացիներուն մէջ ըլլար, կառավարութեան չէին երթար. իրենց դատը մեր տունը եղած էր, ինք կը պատժէր, եւ ինք ազատ կ'արձակէր, ա- տոր համար կառավարութիւնը շատ նախանձեցաւ իմ դատայիս վրան եւ ի- րեն հրաւիրագիր կը գրկեն, խնայքի կը հրաւիրեն, եւ իր դէմ եղած ուտե-

լիքները կը քունաւորեն, եւ ինք հնուսի բերդին մէջ քունաւորուած կը մեռ- նի եւ հնուսի բերդէն իր դիակը կառքի վրայ դնելով տուն կը գրկեն. եւ իր կիմն ալ ամիս մը յետոյ սրտի կսկիծէն կը մեռնի: Միմակ այսքան լսած եմ մեր հօրեղբոր՝ Ղազարի մօրմէն. միշտ մեզի կը պատմէր, բայց մենք չենք տեսած. թէ մեր տան հարստութեան մասին կը հարցնես, հարստութիւնը ան- չափ էր, ունէինք սեփական հօտեր եւ հովիւներ, նոյնպէս կովեր, եզներ, ձիաներ, գումէշներ անթիւ էին: Մշտնջենական մեր կաթը կը կթէին եւ ջորիներուն վրան բարձած հօրեղբորս՝ Պաղտասարին տուն կը բերեն եւ այն- տեղ կը հարեն, իսկ կը վերցնեն եւ բանին համար խոզովակներ շինած հօ- րեղբորս տունէն միկնելու ջաղացի սաուն ուստա Արքային դրան դէմ. բանը այդ խոզովակներուն մէջ կը թափէին եւ կու գար այդ սաուն ջուրին հետ կը խառնուէր: Ուրիշ գիտնալիք չունիմ, իմ գիտցածս այս է:

### ՄԵՐ ԸՆՏԱՆԻՔԻՆ ՃԻԻՂԱԳՐՈՒԹԻՒՆԸ

Սասունէն գալթած եւ Խնուս հաստատուած մեր նախահօր անունը ե- ղած է Մեքը. իրմէ մինչեւ մեր մեծ պապ Մելիք Պօղոսի ժամանակամիջոցը եւ յաջորդներուն անունները կը մնան անծանօթ: Մելիք Պօղոս հօրս մեծ հայ- րին էր: Պօղոսին արու գաւակներն էին՝ Մանուկ, Մելքոն, Գասպար, Բաղ- տասար, Ղազար, իսկ աղջիկներ՝ Գոհար, Աննա, Մարգարիտ (Մաքօ):

Մանուկի եւ իր կնոջ՝ Գոհարի (\*) գաւակներ. — Յարութիւն, Յով- հաննէս, Գասպար, Մկրտիչ, Սեղրակ, Միսակ, Նազար. երկու աղջիկներ. — Յալօ եւ Զաւահիր:

Մելքոնի եւ իր կնոջ՝ Զարգարի գաւակներ. — Տոնապետ, Վահան, Միսիկ, եւ աղջիկ մը Շուշան անունով:

Գասպար ամուրի՝ մեռած երիտասարդ տարիքին:

Բաղտասարի եւ իր առաջին կնոջ գաւակները երկու աղջիկներ — Աթ- լաս եւ Սանամ: Երկրորդ ամուսնութենէն՝ տղայ մը՝ Արամ անունով, եւ աղ- ջիկ մը՝ Ասլիկ անունով: Բաղտասար եղած է զիւղախումբի պետ (նախէ միւտիւր):

Ղազարի եւ Տուտէի գաւակներ, երեք տղաք — Տիգրան (6 տարի Ա- մերիկա եղած. երկիր վերադարձած 1910-ին), Համօ (Օսմ. Սահմանադրու- թեան առաջին անգամ բանակ կանչուած հայ զինուոր. մասնակցած Պալ- քանեան պատերազմին, քաջութեան նշան ստացած, եւ չառուութեան աստի- ճանի բարձրացած: Զինուոր էր մինչև 1919-ի զինադադարին՝ Պոլսոյ մօտա- կայ Կէլվէ զիւղաքաղաքը: Հոս իր հազարապետը կրօնափոխութիւն կ'առա-

(\*) Գոհար՝ իմ մեծ մայրիկս՝ Եսիկա գիւղի ոչնէս հայոյի աղջիկը, շատ փոքր տարի- քի մէջ մեծ հայրիկիս հետ կ'ամուսնացնեն: Մելիք Պօղոս երբ շէկ մագերակ սիրուն Գոհա- րը կը տեսնէ, կ'ուզէ իր տղուն, մեծ հարսանիք կ'ընեն: Ամուսնութենէն ետք մանկական ան- մեղութեամբ՝ մեծ հայրս եւ մեծ մայրս իրարու հետ կը խաղան, ու կը ծծուին եղբր, միմ- չեւ որ տարիքին կը հասնի եւ այր ու կնոջ գիտակցութիւնը կ'ունենան:

Հարկէ, սակայն չընդունելուն համար կը քուլի Կեսարիոյ կողմերը եւ կ'ան-  
յայտացուի: Այս վերջին տեղեկութիւնը ինծի հաղորդեց խարրերդցի տոբթ.  
Յոփն. Գամպուրեան, երբ պատահմամբ 1919-ի զինագաղարի օրերուն զինք  
Պոլիս տեսայ), Պետէ. աղջիկներ — Ազնէ, Ազգուլ, Նարգուլ, Սատաֆ:

Գոհար (\*) ամուսնացած Գոլանդուկ զիւզի հանրածանօթ ոչս Մհե-  
րի հետ:

Աննա՝ մեռած երիտասարդ տարիքին:

Մարգարիտ, ամուսնացած Բուսնազ զիւզը, այրիացած եւ վերամուս-  
նացած Չաուրմա զիւզացի Մանուկ աղայի հետ:

Մանուկի զաւակներէն Յարութիւն ամուսնացած էր Պուլանուխայ  
Եօնճալու զիւզի հանրածանօթ ոչս Խչէի աղջկան հետ: Կինը կը մեռնի, կը  
վերամուսնանայ մեր զիւզի իրիցու Գեւէ աղջկան հետ. զաւակներ՝ Արշակ,  
Սէնօ, Էլօ, Խորէն, աղջիկներ — Սարգի եւ Խանէ: Արշակ եղած է կամաւոր  
զինուոր Անդրանիկի բանակին մէջ, վիրատուրուած Պիթլիսի կոիւներուն.  
միւս զաւակները զոհ գացած են 1915-ի ջարդին:

Յովհաննէս՝ հայրս, մայրս՝ Ազգութ (Խնուս բերդեցի Սրգէ Գրիգորի  
աղջիկը), զաւակներ — Եղիշէ, Հմայեակ-Եղիշէ, Լեւոն, աղջիկներ՝ Ալ-  
մաստ, Սօֆիա-Ծիածան, Ալթուն, Սանամ, Նազենիկ: Մեծ եզրայրս՝ Եղիշէ,  
քոյրերս՝ Ալթուն, Սանամ եւ Նազենիկ փոքր տարիքին մեռած են: Ալմաստ  
մեծ քոյրս Խնուս բերդ, Մանուկ Ամրոյեանի հետ ամուսնացած էր: Սօֆիա-  
Ծիածան քոյրս ամուսնացած էր Գորալ զիւզի Տէր Աւետիսի թոռան՝ Մով-  
սէսի հետ: Ատեն մը Կարին բնակելով, պատերազմի նախօրեակին Գոպալ կը  
փոխադրուի: Չարդի ատեն Մովսէս զինեալ խուճրով մը կռուելով կ'անցնի  
ոռուական զիծը, եւ կը մտնէ Դրոյի բանակը: Քանի մը շարաթէն ոռուական  
յառաջխաղացքին հետ, կողակ յառաջապահներու հետ կու գայ Գոպալ, կը  
զտնէ քոյրս եւ երեք տղայ զաւակները: Քոյրս հիւանդ ըլլալով կը փոխադրէ  
Գարաքիլիսէ, ուր կը մեռնի: Երեք զաւակները Խարս՝ որբանոց կը տանի,  
ուր երեքն ալ կը մեռնին համաճարակէ:

Մայրս 1909 Դեկտեմբերին մեռած է: Հայրս 1911-ին վերամուսնացած  
է մշեցի Գէորդ Փայրանճեանի այրիացեալ քրոջը հետ: 1915-ի ջարդէն ա-  
զատուելով երբ Խամուր բերդէն զաշար իջանք, ժանտարմաներէն ձերբա-  
կալուեցանք. տարուեցանք Բերդ. զիս հօրմէս զատեցին եւ բանտարկեցին:  
Հայրս՝ Լեւոն եզրօրս եւ մեր ընտանիքի միւս անդամներուն հետ աքսորեցին  
Խնուսէն Վարդոյ, ճանապարհին Չրո. Ու Չաթ ըսուած կիրճին մէջ կը խող-  
խողուին:

(\*) Գոհար մեծ մայրն է, մօր կողմէն՝ Եղիշէ քիմյ. Միթիթարեանի: Մեծ մայրն է  
է նաեւ Խալչաուշցի տիկին Արեգնազ Տէր Չախարեանի, եւ եզրօրը Արգար Մովսիսեանի, որ  
ըստ «Նորիդային Հայաստան» թերթի տուած տեղեկութեան Խ. Հայաստանի Լուսաւորու-  
թեան փոխ-կոմիսար եղած է:

Գասպար, կինը Ջաւահիր. զաւակներ՝ Երկու տղայ — Աւետիս եւ Մա-  
սիս եւ տասներկու աղջիկ: Գասպար հօրեղբայրս՝ Խնուսէն Կարին քուած  
ատեն, ճանապարհին յանկարծամահ եղաւ Գարափունար քիւրտ զիւզին առ-  
ջեւ, լերան ստորոտը: Հոն թաղեցինք ժանտարմաներու թոյլտուութեամբ,  
ի զին հօրեղբօրս մէջքի գօտիին: Թոյլատրուեցաւ մօտ 600 խնուսցի աքսո-  
րականներու քարաբլուր մը կանգնեցնել զիսկին վրայ, իւրաքանչիւրը ար-  
ցունքով օծուած քար մը դնելով: Կինը եւ զաւակները տարազրուած ու ան-  
հետ կորսուած:



Տիգրան Ամրոյեան, Խնուս-բերդեցի, քրֆական տարագով: Օսմ. Սահ-  
մանադրութեան հայ առաջին զինուորներէն՝ որոնք կը կանչուէին բանակին  
ծառայելու: Իր զինուորական ծառայութիւնը կատարած է Պոլիս:

Մկրտիչ՝ մեռած 1900-ին, քիւրտերու հետ ունեցած կռիւի հետեւան-  
քով: Կինը՝ Հերթոյ եւ զաւակները՝ Փայլակ, Սիրանոյշ կը գտնուին Հայաս-  
տան, տեղերնին անծանօթ:

Սեդրակ եւ Միսակ մեռած երիտասարդ տարիքին:  
Նազար, 1915-ի տարազրուութեան Կարին-Մամախաթուն ճանապարհին  
վրայ տարապարհակ աշխատանքի ընթացքին թոպամահ, Նարտիւան թուրք  
զիւզին մօտերը:

Պարո, մեծ հորաքոյրս՝ ամուսնացած զիւզին մէջ Գեւօ Պետոյին: Պետոն Ամերիկա եղած է 1887-ին և երկիր վերադարձած 1892-ին. զաւակներէն Սեղբակ կ'ապրի Մարսէյ:

Ջաւահիր՝ հորաքոյրս ամուսնացած Խնուս բերդ, Խաչօ Մխակին՝ ընտանիքով աքսորուած:

Մեկքոնի զաւակներ — Տօնապետ-Վահան (Տէր Վահան քհնյ.), Մխիկ և Ծուշան:

Տէր Վահանի զաւակներ — Մարիցա, Հայկանոյշ, Խանէ: Տէր Վահան արկածով վախճանած 1910-ին՝ Խնուս բերդ: Երիցուհին և զաւակները տարապրուած: Մարիցան՝ ամուսինը և զաւակները կորսնցնելով, ինք ապստուած էր. կը բնակէր Գամշլի՝ Սուրիա. հոն մեռաւ 1948-ին:

Մխիկ, Երկար տարիներ ապրած Սարիխամիշ. ունէր յաջող գործ «Լիմոնաթի Չաօթ»: Երկիր վերադարձաւ 1908-ին: 1915-ին ինչապս քապուրի մէջ, տարապարհակ աշխատանքի ընթացքին թողածմահ, Կարին-Մամախաթուն ճամբուն վրայ, «ափ մը հողի» և անշուք փոսի մը իսկ շարժանանալով...:

Ծուշան ամուսնացած, կ'ապրէր Կաղզուան՝ Կովկաս:

Մեր ընտանիքի պատմութեան այս էջը փակելէ առաջ, անոր իբրև անբաժան մաս, մեր անձնական կեանքի շատ ամփոփ պատմութիւնը կ'ուզենք միացնել անոր:

**ՄԵՐ ՏՈՒՆԸ**

Մեր պապենական զիւղը՝ Հարամիկ, Խնուս բերդաքաղաքէն երկու ժամ հեռու, դէպի արեւելք, շինուած էր զոյգ մը բլուրներու լանջերուն, թիկունքը՝ Բինդէօլին, երեսը՝ Սիփանայ սարին:

Խնուս գետի կամ Արածանիի ջուրը կ'ընթանար զիւզին առջեւէն, ահօսելով դաշտ ու դուրան, ու նախնական ձեւի ջրաբաշխական ամբարտակներով ոռոգելով արտօրայքը: Մեր զերդաստաններու տուները շինուած էին արեւելեան բլուրի պատուանդանին՝ դաշտի հարթութեան հասնող կէտի սկզբնաւորութեան, ուրկէ կը սկսէր հասարակաց ճանապարհը, որուն վարի մասը ճանապարհէն զատուելով կ'եղերէր մեր կայերը, և երկու — Մեծ և Մունտառ — առունները:

Մեր տան մուտքը կը սկսէր սալաշատակուած բաց բակով մը: Բակին աջ կողմը՝ պատին կից շինուած էր օճախ մը, և փոքրիկ թոնիր մը: Ասոնք փոխն է փոխ ամառնային իրիկունները՝ կամ օրուան մէջ որևէ անակնկալ պէտքի մը կը զործածուէին: Բակի երկրորդ զրան մուտքէն ներս, ուղիղ ճակատը կը բացուէր մեծ ախտի դուռը, յայն ու երկար մուտքով մը: Այս մուտքը՝ ձմեռնային երկար ու ցուրտ դիշերներուն՝ կը ծառայէր անասուններուն դարմանի պահեստատեղ: Ամառ առնալ ամենազով տեղն էր հոս: Տօթէն և յողնութեանէն հանգիստ փնտռող մեծերը հոս կու դային հանգչելու, կ'ընկողմանէին բարձի մը՝ ձեռ ի ծնօտ՝ հաւնինջ մը առնելով: Հայրս ա-

մառուան տօթին՝ յետ միջօրէին խանութը դոցելով՝ կու դար հոս մէկ կամ երկու ժամ հանգչելու: Բակին ներսը, աջ կողմը՝ մառանն էր, իսկ ձախ կողմը՝ կը բացուէր դուռը մեր մեծ թոնրատան, ու մեր նահապետական տան օրհնեալ թոնիրը ամէն օր կը վառուէր կերակուր եփելու և հաց թխելու համար: Թոնրատան մէջէն առանձին մուտքով և քարէ աստիճանով շինուած էր վերի օտան, և աոր դիմացը մեր ննջասենեակը:

Մենք՝ երեխաներս երբ կ'ըր ճաշասեղանի շուրջը շարուէինք, փայտաչէն ցածրիկ քարսիներու (աթոռներու), կամ եղեգահիւս նստարաններու (գմպիլ) վրայ նստած մեր թիւր մէկ ու կէս տասնակ կ'ըլլար. ու եթէ պատահէր որ տաք թանապուր էր մեր ճաշը, այն առնալ մօրս հրահանգիչ թելադրանքով փայտաչէն շաշատ դրանները կը շարէինք քառային բոլորտիքը, և ձեռքերնիս իրարու մօտ բերելով իրարու վրայ բոլորելով կը կրկնէինք «ճանճիկ պաղիկ...» խօսքը՝ մինչև որ ապուրը պաղէր և սկսէինք ուտել:

Պատանեկութեանս օրերուն, ևս ապրած եմ թէ՛ զիւղը և թէ՛ Խնուս բերդաքաղաքը: Գիւղը՝ հօրենական տունս, իսկ քաղաքը՝ մօրեղբայրներուս տունը: Մօրեղբայրներս՝ Խաչատուր և Արամ, իմ վրաս շատ կը դուրդուրային, ու ևս ալ բուռն սիրով կ'ապուած էի իրենց: Գիւղին չափ քաղաքն ալ ծանօթ էր ինձի: Գիւղին մէջ իմ յիշողութեանս կ'ապուած են պատանեկութեանս օրերու խաղավայրներէն հետեւեալները — Կալերը, Սարօ շայիրը, Քոսի աղբիւրը, Խաչ քարերը, Նախհոնը, Ուլուս ձորը, Լակլիւս դարը...: Քաղաքը իր Ձորու թաղովն ու Խայապաշխովը, Կարմրական ձորովն ու Խաթալարի աղբիւրով, Ժամու Պալերով, ու Հիւսէյն աղի Չապցի Վիլովը, գորս երբեք չեմ կրնար մոռնալ: Իրիկնամուտին մեր խաղերը կ'ընդհատուէին հետեւեալ երգով.—

Ամէկ ուր տուն,  
Լակլիակ ուր բուն,  
Խաչ գաւազան իմ քեռու տուն,  
Օսկի սմտուկ իմ պապու տուն:

Այսպէս շարունակուեցաւ մինչև 1908-ի Օսմ. Սահմանադրութիւնը. անկէ ետք մօրեղբայրներս քաղաքէն Գոպալ զիւղը տեղափոխուեցան: Սահմանադրութեան առաջին երկու տարիները ևս կ'ուսանէի Միացեալ Ընկ. դըպրոցը (Բերդ), և կը մնայի քեռայրիս՝ Մանուկ Ամրոյեանի տունը, մինչև 1910-ի ամառը: Դպրոցէն շրջանաւարտ ըլլալով, աշնան՝ Հայրս զիս և Լեւոն եղբայրս զրկեց Կարին, հոն Ամերիկեան միսիոնարաց հաստատութեան մէջ գիշերօթիկ ուսանող:

Իմ նախնական կրթութիւնս ստացած եմ հօրմէս: Նախապէս յիշած եմ արդէն թէ Հայրս երկար տարիներ վարժապետութիւն ըրած էր, և ծանօթ էր «Վարժապետ» անունով. ապա ուսուցիչներս եղած են հօրեղբայրս՝ Վահան վարժապետը (Տէր Վահան քհնյ.), մշեցի՝ Կառնէն դիւզին՝ Գասպար վարժապետ Թիւթիւնճեանը, կարնեցի Աւետիս վարժապետ Սարոյեանը (Սանասարեանցի), իսկ 1908-էն մինչև 1910, երբ Խնուս բերդ Միացեալ Ընկ. վար-

Ժարանն էի, հետեւեալներն էին ուսուցիչներս, տեսուչ՝ Վահան Տիրացեան (Մոսկուայի Լազարեան ճեմարանէն շրջանաւարտ, թատերադիր և Կոմիսսիոնական Հայոց Դերասանական մայր խումբին բաղմամեայ յուշարար. 1908-ին՝ ծնողքին, ընտանիքին և երկու եղբայրներուն հետ Թիֆլիսէն հայրենիք վերադարձած), ուսուցիչներ՝ ճեմարանական Հրաչեայ վարժապետ (արօսցի), Մկրտիչ Էֆ. Մանսուրեան (արարկիրցի), Սանասարեանի շրջանաւարտ, բերդեցի Յովհաննէս Շահմուրատեան, Վահան Խալոյեան և պայտադիտցի Սուրէն:

Իմ ուսանողական կեանքի ամենէն երջանիկ և ուսանելի շրջանը եղած են այդ երկու տարիները. տունէն ետք, հո՛ւս էր որ պիտի կազմուէր իմ ազգային նկարագիրը, և ասիկա տառելապէս երջանկայիշատակ Հրաչեայ վարժապետի շունչովը: Չորս տարի աշակերտած եմ Կարնոյ Ամերիկեան Բարձրագոյն՝ Իտալիէի աստիճանով վարժարանը, որ ծանօթ էր նաև Մասեայ վարժարան անունով:



Ես և Կրտսեր եղբայրս՝ Լեւոն՝ Կարին ուսանողութեան շրջանին (1912):

1914-ի Համաշխարհային պատերազմին հետեւանքով Թուրքիա «սէֆէր պէրլիկ» հռչակեց, և ընդհանուր դորակոչի սկսաւ: Յուլիս ամիսն էր. դրպրոցական արձակուրդիս այդ տարի Կարին մնացի: Զինուորական կրթութիւն ստանալու բաղձանքով, զինուորայրուեցայ Թրքական բանակի տապօ քապուրի Դ. զուեղին. իմ դասակիս, ինչպէս նաև տասնեակիս թիւերն ալ 4 էին. 4 էր նաև իմ զինուորական ինքնութիւնս ճշդող վկայագրին թիւը, և 4 ամիս բանակ մնացի:

Իմ բանակատեղիս էր Կարնոյ մօտ հանքային ջուրերով նշանաւոր Իլիճա գիւղը: Թուս-Թրքական պատերազմի նախօրեակին, սահմանամերձ բանակի հայ զինուորները սկսան զինաթափ ընել. մեր բաժնին հայ զինուորներն ալ զինաթափ բրին, և մեզ ուղարկեցին Տէվէ Պոյունի բերդերու ճանապարհաչիւղութեան աշխատանքին: Բռնադատեալ այս նոր ձևի աշխատանքին չկրնալով հանդուրժել, դարձայ զինուորական փախստական և անցայ Խնուս: Մօտ երկու ամիս մեր տունը թաղնուած կ'ապրէի: Այս վիճակը այնքան անհանդուրժելի դարձաւ, որ հօրս համաձայնութեամբ 1915-ի Յունուար ամսու երկրորդ շաբթուն, համապիգացի թուրք ժանտարմայի մր (Իսօ Սալլէի) ընկերակցութեամբ, կեղծ պաշտօնագրով մր, իրբև հետադրական պաշտօնեայ (Թէլկրաֆ մամուրի) փորձեցի երթալ Արաչկերտ, և հոնկէ ալ փախիլ ռուսական բանակի գրուած շրջանը: Յուրտ առուօտ մր, գիւղէն մեկնեցանք. հաղիւ հասած էինք Պօղ Փուլ լսուած բլուրը, ուրկէ ճամբան կ'անցնէր բարձրութենէ մր, որ գառիթափով կը միանար Խնուս գետին, հոս գայլերը մեր ճամբան կտրեցին: Երկուքս ալ զինուած էինք. Սալլէն «խուրտ, խուրտ» բսելն ու կրակ բանալը մէկ եղաւ: Ես ալ հետեւեցայ իրեն: Գայլերը փախան, մենք շարունակեցինք մեր ճամբան: Սալլէն վատ նշան համարեց գայլերուն հանդիպումը: Իրիկուն էր երբ հասանք Գարաչուպան: Հիւր եղանք մեր խնամի Հաղոս Կիրակոսին: Կիրակոսի օտան լեցուն էր թուրք զինուորականներով, Տութաղէն նահանջող բանակի մնացորդներով: Խնամի Կիրակոս իմ ճամբորդութեան պատճառը երբ հասկցաւ, նախ դարձացաւ որ հայրս թոյլատրած է ինձի՝ նման քայլ մր առնել, բայց երբ ծանօթացաւ կացութեանս, դառնութեամբ մր բաւ. «Լաօ, ծով յրմկոզնի օձուց լէ կը փաքթուի, է՛լ ի՛նչ ըսիմ, Սր. Կարապետ քեզի օգնական...»:

Առտու կանուխ ճամբայ ինկանք գէպի Գոպալ. երբ Գոպալայ Գէղուկը հասանք, ճամբան մեր գէմը անվերջ կարաւանի ծայրը սկսաւ — նահանջող զինուորներու, ժանտարմաներու, քիւրտերու և բեռնակիր հայերու: Կէսօր էր՝ երբ հասանք Գոպալ: Երբ մօրեղբորս տան առջև կայնած ծանօթ գիւղացիի մր հետ կը խօսէի՝ զիմացէն երկու ժանտարմաներ երևցան: Սօսակիցս անյայտացաւ, ժանտարմաները մօտեցան, ո՛վ ըլլալս հարցուցին. պատասխանեցի թէ քէլկրաֆ մամուրի եմ և Տութաղ պաշտօնատեղիս կ'երթամ: Օսլայուած օձիքով, կոկիկ հազուստս պահ մը համոզիչ թուեցաւ պաշտօնեայ մր ըլլալուս: Քանի մը քայլ հեռանալէն ետք վերադարձան և ուղեցին որ իրենց ընկերանամ հազարապետին ներկայանալու համար: Իմ մերժելս պատճառ դարձաւ որ երկու ժանտարմաները թեւերէս բռնած քաշքշէլէն տանին ի-

րենց իջեւանը: Երբ ներս մտանք, Հարցաքննութեան մը սկսան. ճիշդ այդ պահուն ինձի ընկերացող ժանտարմա Խալլէն ներս ինկաւ: Հրացանը կրակելու դիրքով ուղղեց ժանտարմաներուն եւ սպաննալով ու խելագար աղմուկով հրամայեց որ դիւ ազատ ձգեն: Ժանտարմաները անակնկալի եկած, իրենցմէ մէկը որ չաւուշ էր, ուղեց այդ հանդամանքէն օդտուիլ եւ Խալլէն լուցնել, սակայն Խալլէն կատաղի կերպով կը պոռար ու կը հայհոյէր: Այդ իրարանցումի պահուն ներս մտան մօրեղբայրս եւ քեռայրս, ու իրենց հետ ժանտարմա մը. վերջինը եկած էր հազարապետին հրամանով: Այս յայտնութիւնով Խալլէն հանդարտեցաւ, կացութիւնը պարզուեցաւ, եւ ազատ արձակուեցայ: Զիս բռնող ժանտարմաներուն հետ բարեկամական խոստումներ տալով իրարմէ բաժնուեցանք: Երկու ամիս ետք նոյն ժանտարմաները դիւղ եկած էին՝ հանդիպում ունեցանք: Բարեկամութեան իրենց խոստումը յարգեցին, երբ այդ օրերուն հայոց հանդէպ հալածանքը իր գաղաթնակէտին հասած էր: Կրնային վրէժխնդիր ըլլալ, սակայն ո՛չ մէկ շարիք հետցուցին, եւ իմ խնդրանքիս վրայ, իրենց իջեւանած հայ ընտանիքին հանդէպ մեզմ վերաբերում ցոյց տուին:

Նահանջը գոցած էր իմ յոյսի ճամբան: Յուսախար տուն դարձայ. դէպքերու արագ դարգացումով, կարճ ժամանակ ետք տեղի ունեցաւ տարագրութիւն ու ջարդ:

Հօրս բարեկամ քիւրտերու պաշտպանութեամբ, մեր ընտանիքը եւ քանի մը դրացի ընտանիքներ ջարդէն ազատուեցանք. սակայն երբ գիւղը վերագարձանք, ձերբակալուեցանք եւ տարուեցանք Խնուս բերդ, ուրկէ երեք հօրեղբայրներուս հետ մեր ընտանիքէն գատուեցանք եւ հազարի հասնող մեր կարուանը՝ գինուորական տարիքի այրեր՝ քուեցանք Կարին, հոնկէ ալ ուղարկուեցանք Կարին-Մամախաթուն ճանապարհաչինութեան վրայ աշխատելու ինչապէս քապուրի մէջ: Հոս սկանառես կ'ըլլայի կարնեցիներու տեղահանութեան: Տարապարհակ աշխատանքի ընթացքին հազարաւոր խնուցիներու գերեզմանը եղաւ Սանսար տէրէն, Շոզալարի ձորը, Տէկիրմէն տէրէէն մինչեւ Գոթերի կամուրջը ու Եփրատի եզերքները, մինչեւ Վժան գիւղը: Հազիւ քանի մը հարիւր հոգի կրցանք տոկալ մինչեւ 1915-ի աշունը, երբ վերջնականապէս մեզ տարագրեցին դէպի Խարբերդ: Երզնկայէն մինչեւ Քեմախ՝ ճամբորդութիւնը արհաւիրալի էր: Քեմախի կամուրջի գլուխը մեզի ընկերացող ժանտարմաները սկսան խումբի յետնորդները սպաննել, եւ կը ջանային մեզ ջուրը թափել, օդտուելով այն առիթէն, որ իրենց հրամանատար Սէյրան էֆ.ն խումբէն կարուած՝ առաջ անցած էր: Սէյրան էֆ.ն՝ խումբին ուշանալը նկատելով, սրարչաւ վերագարձաւ դէպի մեզ եւ սաստեց ժանտարմաները, հրամայեց խումբին՝ ճամբան շարունակել: Երեկոյ էր երբ Քեմախ հասանք՝ անձրեւէն թրջած, յոգնած, անսուղ եւ սարսափահար: Տէրսիմի լեռնային ճանապարհներով քուեցանք Ակն. հոնկէ Արարկիւր, եւ Կիւմիւշ Մատէնի վերայով հասանք Խարբերդ:

Խարբերդ հասնելու երկրորդ օրը, որոշեցի անպատճառ փախչիլ: Մէջք-թէպի շէնքէն դուրս հանած ատեն՝ քովի խորունկ ձորը (խորխորատը) նետուե-

ցայ: Ժանտարմա մը դիւ եւ ուրիշ փախչողներ նկատելով, ետեւիս ինկաւ: Ես հետքս կորսնցուցի, եւ Մէկիրէ մտնելով, առաջին առիթով ապաստանեցայ գերման միսիոնարաց շէնքը: Պատուելի էճման եկաւ եւ հրամայեց դարապետ Կարապետ աղբոր, որ մեզ դուրս փոխէ: Կարապետ աղբոր՝ սրտաբեկ ու շըլմորած, իր խցիկի փոքր պատուհանէն ճամբան մեզի ցոյց կու տար: Ծիշդ այդ պահուն փրկարար ձեռք մը ինձի հասաւ: Էճմանի կառավար՝ մալաթիացի որբ մը՝ աննման պատանի Մանուէլը, մօտեցաւ Կարապետ աղբոր եւ խնդրեց որ մինչեւ մութը կոխելուն սպասէր, ինք թաղստոց մը դիտէր, ու դիւ հոն պիտի տանէր: Մութ էր, եկաւ Մանուէլը էճմանի եայլի կառքով ու տարաւ դիւ սէֆգիլաթէ գերծ նկատուած՝ տարեց հայ կնոջ մը տունը, որուն տղան ալ կոտորածի վայրէն փախած՝ թաղնուած էր մօրը քով, տան մէջ՝ գաղտնի թաղստոցի մը մէջ, ուր իրեն հետ երկու շարաթ մնացի: Խուզարկութեան եւ սէֆգիլաթի շուկ մը պատճառ դարձաւ, որ Մանուէլը դար եւ դիւ Ամերիկեան Հիւանդանոց փոխադրէր իրբեւ հիւանդ արարի ամերիկացի բժիշկ՝ Տոքթ. Աթֆիւսընը ապաստանարան տուաւ իր հիւանդանոցին մէջ, ուր մնացի մինչեւ 1916-ի գարունը: Հիւանդանոցին մէջ, իրբեւ հիւանդապահ գիւս գործի գրու բժիշկը: Իր մահէն ետք երկու անգամ ձերբակալուեցայ: Առաջին ձերբակալութեան ամերիկացիներու միջամտութեամբ ազատուեցայ. երկրորդ անգամին՝ բանակէն փախայ. կարճ ժամանակ մը թաղնուած մնացի, երբ առիթը եկաւ տէրսիմի խալլաչ քիւրտերու առաջնորդութեամբ եւ երկու օսկի փրկապնով Տէրսիմ ապաստանեցայ:

Ամառ էր, ուստական բանակի յատաջխաղացումը հասած էր Երզնկա: Խալլաչ կրօնապետ՝ Աէիտ Զէմայի առաջնորդութեամբ անցայ Երզնկա, ուստական գրուման շրջանակը, ազատուելով թրքական գեհեւէն:

1916-ի Յուլիսի վերջերը հասայ Կարին, ուր մնացի մինչեւ 1918-ի Փետրուար ամիսը: Երբեքս ձեռքս հայկական բանակի գինուորական ճառագիւթեան մէջ ըլլալով, Կարնոյ նահանջին՝ նահանջող բանակին հետ հասայ Ազեքսանդրապոլ. անկէ անցայ Լոսի՝ Զարթոյլի. կարճ ժամանակ հոս մնայի ետք անցայ Թիֆլիս: Հոս գինուորական վարժարան մտնելու արձանագրուեցայ: Այդ օրերուն թուրք եւ գերման բանակը Թիֆլիս մտաւ, անգամ մը եւս թուրքերու արհաւիրքը մեզ կը հալածէր: Թիֆլիսէն ռազմավիրական ճանապարհով տաժանելի ճամբորդութեամբ՝ քայլելով անցայ Կովկասեան Լեռնաշղթան, Տարիալի կիրճը, իւնքուշներու սարսափը երեք օր տարելով՝ երբ բոլշեւիկներու գնդացիներու սպաննալիքէն՝ իւնքուշները Տարիալի կիրճը բացին, ծովածաւալ հայ փախստականներուն թոյլատրելով անցնիլ Հիւսիսային Կովկաս: Հիւսիսային Կովկասէն անցայ Արմաիր, Յարիցին (Ստալինկրատ), ուր քաղաքացիական կռիւր մեծ թափ ստացած էր: Առտու մը Վոլկայի ավիին կողակներու եւ Ստալինի (ժիլեյի կամանախը) բանակներու ընդհարման պահուն գնդացիներու կրակին տակ երկու ժամ փոսի մը մէջ կըրկըւած՝ մահը դիմադրաւորի մը սարսափը ապրեցայ: Ստալինի բանակը կողակները նահանջի մատնելով՝ կռիւր դադրեցաւ: Երբ պանդոկ վերադարձայ, պատերն ու պատուհանները ծակած ու փշրուած էին: Յարիցինէն Վոլկայի

վրայով նաևով անցայ Սարաթով: Հոս արդէն դէպի Սիպիր Հաղորդակցութեան գիծը կտրուած էր չեի գորարանակի մը կողմէ, որ կը կոռէր բոլշեւիկներու դէմ: Այս օրերուն Սարաթով ականատես կ'ըլլար բազմաթիւ հայ գաղթականներու ներկայութեան ու անցքին, որոնց մէջ էին մեր նշանաւոր հայդուկները, զինուորականները, ազգային գործիչները: Հոս տեսայ Վարդանը, Մուրատը, Սեպուհը, Քորգոմը եւ մեր կովկասահայ եղբայրները, որոնք օր մը մեզ գաղթական արհամարհական անունով մ'կրտած էին...: Այսօր արդէն իրենք ալ մեզի նման գաղթական էին, ցաւ ի սիրտ:

Յուլիս ամսուն Սարաթովէն մեկնելով՝ Ռիսպան, Թամպով, Կազլով, Թուլա գիծով հասայ Մոսկուա: Վահան Տէրեանի բարեխօսութեամբ, արտաքին գործոց երկրորդ կոմիսար՝ Լեւոն Գարախանի միջոցաւ Ամերիկա մեկնելու անցադիր ստացայ եւ մեկնեցայ դէպի Արխանկէլ: Ճամբորդութեան ընթացքին, Արխանկէլ չհասած՝ Վոլոկտայի կայարանը ձերբակալուեցայ բոլշեւիկներէն, չգործած մեղքիս համար, հետեւեալ պարտադաներուն տակ: Կայարանէն գնացքը շարժիլ սկսած էր, երբ մեր տեղաւորուած վակոնի դռնէն՝ ուսու զինուորական մը ներս մտաւ: Ես որ մուտքի դրան քով կայնած էի, զինուորականը՝ որ բոլշեւիկ կոմիսար էր, առանց իր ինքնութիւնը յայտնելու, գրպանահատի մը շարժուածքով (այդ ստեն զրպանահատներ կը վխտային կայարաններու մէջ) ձեռքը ուսիս վրայէն տարաւ աջ կողմիս ծոցի զրպանս: Ես անմիջապէս ձեռքը բռնեցի եւ իր թեթեւ մարմինը ուսիս վրայէն քաշելով տախտակամածին վրայ ձգեցի: Երբ ոտքի կանգնեցաւ, բարկութեամբ յայտնեց որ ինք զինուորական կոմիսար է եւ սկսաւ ուսական համբուսուող հայհոյանքին, եւ ձեռքը տարաւ ատրճանակին: Ես զինք կանխելով՝ արագ շարժումով մը բռնեցի դաստակը ու քանի մը անգամ տախտակամածին ծնրադրեցի: Երբ կոմիսարին ատրճանակը պատեանը մտաւ ու բարկութեան նպաները մեղմացան, ես ինքզինքս դտայ բանտին մէջ: Վակոն բանտին մէջ կոմիսարը իր օգնականներով եօթը անգամ դիւ հարցաքննութեան կանչեց, միշտ սպառնալով զիս գնդակահարել: Իմ պատասխանս միշտ կ'ըլլար, որ զիս գնդակահարելուդ համար պատասխանատու պիտի ըլլաս Լեւոն Գարախանին, ու Գարախանի անունը իր որոշ ազգեցութիւնը ունեցաւ: Ես փոխադրուեցայ ուրիշ բանտ մը՝ Մոսկուա զրկուելու՝ հոն դատուելու համար: Բանտին մէջ դէմս ելաւ ալաշկերտցի քիւրտ մը, թրքական ռազմադերի մըն էր: Ռուսերէն հարցուց ինչ ազգի պատկանիլս, հայ եմ ըսի եւ սկսայ հետը քիւրտերէն խօսիլ: Ուրախութենէն կարծես խելադարուեցաւ, թուէր թէ հայրենիքէն հազարաւոր մղոն հեռու, Սիպիրիոյ դռներուն ինծի հանդիպելով՝ փրկարար հրեշտակի մը հանդիպած էր, երբ ես նոյնքան փրկարար հրեշտակի մը երեւնալուն կը սպասէի, ստոյգ մահէն ազատուելու համար:

Մոսկուա ուղարկուեցայ, հոն դատուելու, եւ ո՛վ գիտէր թերեւս զընդակահարուելու: Մեր գնացքը լեցուն էր ամէն ազգէ լրտեսներով, որոնք սահմանազրուիւր ձերբակալուած Մոսկուա կ'ուղարկուէին դատուելու. առանց մէջ էր Մոսկուայի նախկին քաղաքապետ Գեներալ Սանտարսկին: Գրնացքը երբ Մոսկուայի կայարանը կանգ առաւ, ջրկատ մը շեկիստներու խիստ

հսկողութեան տակ տարուեցանք Լուպեանքա փողոցի Չեկայի (Չէրիզվէչայի կոմիտէ) բանտը, կամ աւելի ճիշտը՝ սպանդանոցը: Տասնչորս օր, օրը երեք անգամ հարցաքննութիւնը, երեք անգամ մահուան դուռը բախելու շափ դածան էր: Տասնհինգերորդ օրուան վաղ առաւօտեան Լուպեանքայի բանտէն դուրս հանեցին. զրան առջեւ կեցած էր սեւաներկ հսկայ ինքնաշարժ մը, մէջը լեցուցին, մեզի հետ երկվեցեակ մը դածան շեկիստներ մըտան ներս եւ ինքնաշարժը սկսաւ շարժիլ: Սաւար էր ներսը. մեր մութ մըտածումները միշտ մահուան հետ էին: Յանկարծ ինքնաշարժը կանգ առաւ, դուռը բացին, եւ հրամայեցին դուրս ելլել. հոս՝ հսկայական պարիսպներով բանտ մը փոխադրուած էինք, որուն անունը թիւն Թականսկի Տուրմա է:

Քառասունք մը նստայ հոս ապաշխարհելու համար, բայց ո՞ր մեղքիս համար, ես չէի գիտեր, չէին գիտեր նաեւ բանտին պաշտօնեաները, երբ առիթը կը ներկայանար իրենցմէ հարցնելու: Օր մըն ալ կէսօրուան ճաշի պահուն բանտապետին զրասնակար կանչուեցայ: Առանց հարցաքննութեան ազատ արձակուեցայ: Լեւոն Գարախանի հեռախօսը հրաշքը կատարած էր: Թականսկի բանտի ետեւի կողմի պարիսպի դռնակէ մը դուրս շարժուեցայ: Ազատուած էի պարսպապատ բանտէն, սակայն դուրսը աւելի ընդարձակ ու անպարիսպ բանտը կար, ու այդ բանտը հսկայածաւալ Ռուսաստանն էր, ուրիշ այդ օրերուն մարդիկ միայն հրաշքով կրնային դուրս ելլել: Բանտէն ազատուելէ ետք՝ Մոսկուայէն Սարաթով մեկնեցայ: Ձմեռը հոն անցուցի, Մայիս ամսուն վերադարձայ Մոսկուա, Հայաստան երթալու արտօնադիրով, Մոսկուայէն Ուքրանիա անցայ: Յուլիսին Օտեսա հասայ: Օտեսան դառնութեան վերջին բաժակը ցմբուր քամել տուաւ: Հոս ապրուած օրերը ինքնին երկար պատմութիւն է, արկածալի եւ անմոռանալի:

Օտեսայի մէջ ամենամեծ ուրախութիւնս եղաւ Հայաստանի Հանրապետութեան քաղաքացիութեան պաշտօնագիր ստանալս, Հանրապետութեան դիւանադիտական ներկայացուցիչ Նեղիշ Մելիքեանէն: Իր եւ իմ անուան համանմանութեան առնչութեամբ կատակելով ըսաւ. «Նեղիշ Մելիքեան մը, Նեղիշ Մելիքեանի մը պաշտօնագիր չի կրնար տալ, բայց նկատելով քու պարագան, այդ դիտումնաւոր սխալը պիտի գործեմ, ինչ որ «սուրբ» սխալ է, եթէ այդպիսի սխալ աշխարհի եւ մարդկութեան մէջ գոյութիւն ունի»:

ստորագրելով անցադիրս, շնորհաւորեց զիս: Ուրախութեամբ անցադիրս գրպանելով մեկնեցայ. դժբախտաբար երկու ամիս ետք, Պոլիս՝ Ղալաթիոյ կամուրջին գլուխը գրպանահատներ տարին դրամապանակս՝ որուն հետ նաեւ իմ թանկագին անցադիրս:

Օտեսայէն, առաջաստանաւով դէպի Ուրիմ փախուստի փորձ մը ըրինք, սակայն, Սև ծովուն բացերը հազիւ ելած, անգլիական, Փրանսական եւ ուսսական՝ Տէնիքիի իշխանութեան զրահաւորները բռնեցին մեզ: Երբ մութը կսխեց, սկսան Օտեսան ուրախուծել, քառասուն եւ ութ ժամուան ուրախութենէն ետք բոլշեւիկները քաղաքը լքեցին: Զրահաւորները խարսխեցին Օտեսայի նաւահանգիստը, եւ Տէնիքիի բանակը մտաւ քաղաք ժողովրդական խանդավառ ընդունելութեամբ:



Ռուսական գրահատուրին հրամանատարը մեկ խիստ հարցաքննութեան ենթարկեց, կասկածելիները գտելով միւսները ազատ արձակեց: Օրէ օր անգլիական գրահատուրներու թիւը կը շատնար: Հետաքրքիր ժողովուրդը կ'իջնէր քարափը խարսխուած գրահատուրները դիտելու: Օր մը, մենք ալ քարափը իջանք գրահատուրները դիտելու: Անգլիացի ծովային սպայ մը, քարափը ելլելով, հոն խոնուած հետաքրքիր ժողովուրդը դիտելով կը քալէր. երբ մեր կեցած տեղը հասաւ, կանգ առաւ, մտեցաւ Պր. Լեւոն Կ. Լիւլէճեանին (Քալիֆորնիոյ Ֆրէյնօ հրատարակուող «Մշակ» թերթի խմբագիր եւ իմ աներորդին), որուն կուրծքին վրայ նկատած էր մասոնական վարդակոճակը: Անրացատրելի բարեացակամութեամբ, ձեռքի սեղմումով խօսեցաւ, եւ խոստացաւ իր բարոյական օժանդակութիւնը մեզի: Արդարեւ իր օժանդակութեամբ հնարաւոր եղաւ խտարական շոգենաւով մը Օտեսայէն մեկնել Ռուսմանիոյ եւ Պուլկարիոյ վրայով դէպի Պոլիս:

Դաշնակից բանակներու գրաման շրջանն էր. աւելի քան երեք ամիս Պոլիս մնացի, եւ գործեցի ամերիկեան «Նիր Իսթ Րիլիֆ»ին շատ լաւ վճարումով, եւ վայելելով գլխաւոր պաշտօնեայ պրն. Ճանսթրնի բարեացակամութիւնը: Հոս պարտք կը պատմ յիշատակել անունը պրն. Բիւզանդ Եղիայեանի, որուն միջոցաւ գործը ինձի տրուեցաւ:

Երեք ամիս գործելէ ետք, որոշեցի Ամերիկա երթալ: Անցազիր առնելու դժուարութիւն ունեցայ: Դիմեցի պրն. Ճանսթրնին՝ խնդրելով իր օժանդակութիւնը: Շատ սիրով օժանդակեց ինձի: Իր հետ գացինք Ամերիկեան Դեսպանատունը: Հոն իր միջոցաւ ստացայ անցազիրս, բոլոր ծախքերը ինք հողաց եւ Ամերիկա մեկնելու յաջողութիւն մաղթելով ինձի, շնորհակալութեամբ իրմէ բաժնուեցայ: Ինձի տուաւ նաեւ հետեւեալ յանձնարարականը:

NEAR EAST RELIEF

13, Rue Petits - Champs, Constantinople  
 Stamboul Store  
 Valide Sultanim Hasta Khan.  
 Tchappah. Stamboul  
 December 1st. 1919

To Whom it May Concern  
 The bearer, Yagesha Melikian, has been in the service of the American Relief Committee (Near East Relief), formerly at Erzroom under our Mr. Stapleton, as dragonian, secretary, buyer, etc. for over two years, under most difficult conditions from August 1916 to 1918, and later as assistant Manager of this Store for the sale of necessities to the necessitous, at reduced prices, where discretion, judgment and responsibility were exceptionally demanded.  
 I heartily recommend him.

Stephen R. Johnston Mgr.  
 (Ex. G. S. G. H. a. A. E. F.)



Եղիշէ եւ Սիրվարդ Մելիքեան




Սիրաֆ Մեկիֆեան

1919 Դեկտեմբեր 15-ին Պոլսէն մեկնեցայ Ամերիկայի Միացեալ Նահանգները: 1920 Յունուար 23-ին հասայ Նիւ Եորք եւ միեւնոյն օր եկայ Տիւլտեյֆիա: Փետրուար 28-ին ամուսնացայ խորրերդջի հանրածանօթ դաստիարակ Լիւլէճեան Կարապետ վարժապետի դստեր՝ Սիրվարդին հետ: Ընտանիք կազմելով, ունեցանք երկու զաւակ՝ տղայ մը եւ աղջիկ մը: Տղաս՝ Խորէն-Սիրաք ամուսնացած է, այժմ մեծ հայրիկ եմ երեք թոռնիկներու — երկու մանչ եւ աղջիկ մը:



Աջէն ձախ՝ Եղիշէ Յ. Մեկիֆեան, թոռնիկը՝ Բապրթ Արմէն, թոռնիկը՝ Խորէն Սիրաֆ կրտսեր, տղան՝ Խորէն Սիրաֆ:

Հիմա որ կեանքիս այս հակիրճ պատմութիւնը կը վերջակէտեմ, շարժանկարի ժապաւէնի մը նման, ապրած օրերս իրենց բոլոր քաղցրութիւններով ու դառնութիւններով կու դան ու կ'անցնին աչքիս առջեւէն: Խնուսը՝ իմ մանկութեան ու պատանեկութեան ամենաքաղցր ու նուիրական յիշատակներով. ապա Կարին, Համաշխարհային Պատերազմը, Չարդն ու տեղահանութիւնը, աքսորը դէպի Կարին, Երզնկա, Քեմախ, Ակն, Արարկիր, Մատէն, Խարրերդ, Տէրսիմի լեռները, դարձեալ Երզնկա, Կարին, ապա Կովկաս, ու հոնկէ ալ Հիւսիս, մինչեւ Սիպիրի սառնամանիքը, վերադառնալով ուսական տափաստանները, Ուքրանիա, Ռումանիա, Պուլկարիա ու Պուլխ, հոնկէ ալ Յունաստան, Իտալիա, եւ հուսկ ուրեմն անցած արհաւիրքէն, ու բոլշեւիկկան յեղափոխութեան ահռելի սարսափէն, կտրելով ահաւոր տարածութիւն մը լեռներու, ձորերու, դաշտերու, գետերու, ծովերու եւ լայնատարած ովկիանոսի, որոնք կամուրջ մը կապած են Խնուսի Հարամիկ դիւ-



Ասիկա մեքենայի գիտի մենաշնորհի (փաթեմք) լուսանկարն է:

Մեխիկանի բնամկիք — Աջեմ՝ Նոյբեհ, Սիրիսարդ, Բոնիկիք՝ Միշեկ, Խարսը՝ Արաբի, տղամ՝ Սիրաբ, Կանգնած՝ ճախեմ՝ Բոնիկիք Խորեմ-Սիրաբ, Կրտսեր, ազգիկը՝ Լուսի, Բոնիկիք՝ Քեհեմ-Աննա, Բոնիկիք՝ Բաղդոս-Արմեհ:





Այս լուսանկարը առնուած է Նիւ Եորք Քոլումպիա Պրոսէկտիսի սիսթըմ Թէլէվիզընի կայանէն: Աջէն դէպի ձախ Թէլէվիզընի մեքենային քով կայնած է տղաս, Խորէն-Սիրաք, մէջտեղինը ես եմ, սուրճի մեքենայի մէկ տեսակը, եւ Թէլէվիզընի կայանին իստեակը: Նկարուած 1952-ին:

դէն, մինչեւ Ամերիկայի Միացեալ Նահանգներու ազատութեան օրրան Ֆիլատելֆիա՝ բազմամիլիոն քաղաքը:

Ամերիկայի մէջ քառորդ դարու մը ազատ կեանքը ապրած էի՝ երբ Ամերիկան՝ Համաշխարհային երկրորդ պատերազմին մասնակցեցաւ: Տղաս այդ օրերուն զինուորական տարիքի մէջ կը գտնուէր: Կանչուեցաւ զինուորական ծառայութեան: Մօտաւորապէս երկու տարի ամերիկեան բանակի օդային բաժանմունքին մէջ ծառայելով, բանակէն ազատ արձակուելէն ետք երբ տուն վերադարձաւ, սկսաւ անկախ գործի մը — սուրճի մեքենայաշինութեան (ինքնագործ) Բըտ-Մելիքեան ընկերութիւնը կազմելով, մեքենայի գիւտի փաթէնքը ստացան իրենց անունով, Խորէն Սայրըս Մելիքեան եւ Լօյս Բըտ անուններուն արձանագրուած: Գիւտին թէ գործին մասին ամերիկեան մամուլը, ռատիոն եւ հեռացոյլը (թէլէվիզիոն) զրեցին եւ խօսեցան: Մասնաւոր գնահատանքի (սայթէյշըն) արժանացան Ֆիլատելֆիոյ քաղաքապետէն, եւ Չէմպըր աֆ Քամըրսէն. ամերիկեան մամուլէն:—

Forbes Magazine of business, Jan. 15, 1948, page 20, Million Dollar coffee Pot, by Don Wharton. The Readers Digest, April 1948, «They Hit the Coffee Jackpot,» page 127, by Don Wharton. Coin Machine Journal, 1947, Feb. Post Exchange and Ships Service, 1948, March. Everybody's Weekly, Sept. 26, 1948. The Philadelphia Inquirer. Liberty magazine, June, 1950, Page 26-27.

Հայ մամուլէն հետեւեալները անդրադարձան — Հայրենիք, Ապրիլ 20, 1948, եւ Նոյեմբեր 6, 1948, Մշակ, Հոկտեմբեր 15, 1948, Սուրբոյ Արեւելք, Եգիպտոսի Յուսարք, Տարօնի Արծիւ (Միացեալ Նահանգներ) բացառիկ թիւ 31, 1950, եւ այլն: Մեքենայաշինութեան հետ զուգընթաց՝ հեղուկ սուրճի խտացուած-սառած տեսակի գործածութիւնը շուկան հանեցին առաջնութեան իրաւունքով: Սուրճի գործածութեան նոր կերպ մը, որ կը թուի թէ ամերիկեան հասարակութենէն լայն ընդունելութեան պիտի արժանանայ: «Գուրք Քօֆի» օթօմաթիք սուրճի մեքենայի գիւտը, եւ «Գուրք Քօֆի» հեղուկ խտացուած-սառած սուրճի գործածութեան արձանագրութիւնը ամերիկեան ճարտարարուեստի պատմութեան մէջ, վարկը կ'երթայ հաւասարապէս ամերիկացի Բըտ, եւ ամերիկահայ Մելիքեան անուններուն: Ինծի համար հպարտանքը ո՛չ միայն Մելիքեան անունին է, այլ նաև հա՛յ անունին:

Իմ երկրորդ հայրենիք, Ամերիկայի Միացեալ Նահանգներ, հալածական թուրքին ու բուլղարիկին ձեռքէն, եկայ քու հիւրընկալ փեքը, որդեգրուեցայ՝ քու ազատ հանրապետութեան, ազատ քաղաքացի դառնալով, ու վայելելով քու պարգեւած ազատութեան եւ լայնախոհութեան անսահման բարիքները: Սրտանց կ'ըսեմ «Աստուած օրհնէ Ամերիկան»...:

# ԽՆՈՒՍ ԲԵՐԴԵՑԻ ՄԱՀՏԵՍԻ ԳԵՈՐԳԵԱՆ ԸՆՏԱՆԻՔԸ

(Պատմեց՝ Տիկին Արեգնազ Գանտիլեան, Մուխոս Միսակի աղջիկ՝ Խալօ Մելիքանի Արամի կինը)

Անձանօթ թուականի մը, Մահտեսի Գեորգ՝ Դերջանէն կը գաղթէ եւ կու գայ կը հաստատուի Խնուս բերդ: Կ'ունենայ երկու տղայ զաւակ՝ Յովհաննէս եւ Մկրտիչ անուններով. եւ երեք աղջիկ, որոնցմէ երկուքը կ'ամուսնացնէ Կարին եւ հօն կը բնակէին, իսկ երրորդ աղջիկը կ'ամուսնանայ պարսկահայի մը, եւ կը փոխադրուի Պարսկաստանի Թաւրիզ քաղաքը: Հետագային՝ հարուստ եւ անժառանգ ըլլալուն համար, յառաջացած տարիքին՝ 1909-ին կը գրէ Միսակ աղային, որ իր զաւակներէն Արամը զրկէ իրեն՝ որդեգրելու եւ հարստութիւնն ալ անոր ժառանգ ձգելու. սակայն իր այդ փափաքը չ'իրագործուիր:

Գեորգի մեծ տղան՝ Յովհաննէսը կ'ամուսնանայ Ճապողուրի քհնյ.ի Մարիամ անունով աղջկան հետ: Կառավարական պաշտօնեայ կ'ըլլայ Խնուս բերդին մէջ: Խնդրոյ մը առթիւ կարնեցի հայու մը հետ կուի կ'ունենայ եւ կը թշնամանայ այդ հայուն հետ: Օրին մէկը առտու կանուխ իր պաշտօնատեղին կ'երթայ, իր ներկայութիւնը ցուցնելու, յետոյ տուն դառնալով կը հեծնէ իր ձին, կ'երթայ Կարին, հակառակորդ հայը անոր տան դրան առջեւ կը սպաննէ, եւ նոյն օրը կը դառնայ Խնուս. ձին կը կապէ ախոռը, եւ կ'երթայ իր պաշտօնատեղին, ներկայութիւնը ցուցնելու եւ ապա կը վերադառնայ իր տունը: Երբ ախոռը կը մտնէ, կը տեսնէ որ ձին (տրաքած) սատկած է, արագ փազքի եւ յոգնութեան հետեւանքով: Կարինէն լուր կու տան Խնուս, թէ Յովհաննէս աղան Կարին եկած՝ իր թշնամին սպաննած եւ վերադարձած է. սակայն չեն կրնար վաւերացնել, որովհետեւ միեւնոյն օրուան մէջ՝ առտուն եւ իրիկունը իր պաշտօնատեղին եղած է, եւ տեսնողները կը վկայեն, նաեւ այն պարագան, որ միեւնոյն օրուան մէջ Խնուսէն Կարին երթ ու դարձը անկարելի կը նկատուի հեռաւորութեան պատճառաւ. եւ ինք անպարտ կ'արձակուի: Յովհաննէս կ'ունենայ երեք աղջիկ զաւակ. մէկը կ'ամուսնանայ Կարին, երկրորդը՝ Մուշ, իսկ երրորդը՝ Պուլանուխ՝ Կրտան աղային:

Մկրտիչ կ'ունենայ երեք մանչ, եւ երկու աղջիկ զաւակներ. տղաք՝ Միսակ աղա, Խաչատուր էֆ. եւ Տիգրան էֆ.: Աղջիկներ՝ Նարդուս եւ Ասանէթ (պապկորուս): Նարդուս կ'ամուսնանայ կարնեցի Փիլիպոս էֆ.ի հետ: Ասանէթ կ'ամուսնանայ կարնեցի Հմայեակ Ռշմաճեանի հետ եւ կը գաղթեն Ամերիկա ու կը հաստատուին Պրուքլին (Նիւ Եորք):



Արշակ Գեորգեան (Խնուս բերդեցի), կինը եւ զաւակները (Հայաստան):

Մկրտիչ 1887-ի ուս-թրքական՝ կամ ինչպէս սովոր էինք ըսել Խորասայ կուիին, ուսական բանակին հետ կ'երթայ Ռուսաստան ու այլեւս չի վերադառնար: Միսակ աղան իր տասնեւհինգ տարեկան հասակին կ'ամուսնանայ խնուս-բերդեցի Սրբէի թոռան՝ Ալթունի հետ: Կ'ունենան հինգ զաւակ, երեք տղայ՝ Արամ, Արտաշ եւ Լուսթիկ. եւ երկու աղջիկ՝ Արեգնազ եւ Կիւլլի (Վարդուհի), որոնք ջարդէն ազատուելով կ'անցնին Կովկաս: Արեգնազ այժմ կ'ապրի Ամերիկա՝ Տիթրոյիտ, իսկ Կիւլլին՝ կ'ապրի Ռուսաստան՝ Եգատէրինտար: Միսակ աղան մէջլիսի անդամ էր. հարուստ ընտանիք ճանչցուած էր. Տուման զիւղը իր ազարակն էր, ուր ունէր շատ կալուածներ: Ինք եւ տղաքը 1915-ի ջարդին եւ քարոյին զոհ գացած են:

Խաչատուր էֆէնտի կ'ամուսնանայ խնուս-բերդեցի Սահակի աղջկան՝ Նիկարի հետ. տղայ զաւակ մը կ'ունենայ Գարեգին անունով: Խաչատուր էֆէնտին ծանօթ էր որպէս յայտնի յեղափոխական. կառավարութիւնը միշտ զինք կը հետապնդէր: Անգամ մը 1894-ին, երբ Խաչատուր զիւղը կ'ըլլայ, մասնութեամբ կը ձերբակալեն զինք՝ ինչպէս նաեւ ուրիշ երկու անձեր, Խաչոյի Սեդրակ և Քէշիշ օղլուեանց Ստեփանը (Թոփալ Առաքելի եղբայր): Վերջին երկուքը ամբաստանուած են, իրր թէ ազգով ու կրօնքով ուս՝ երկու թուրք զօրաց փախչելուն մասնակցած են, իսկ Խաչատուր էֆէնտին իբր

Թէ Պալիլ շատ-շ գիւղը վաղտնի լրտեսութիւն բրած է, յետոյ ոչ մէկ ապացոյց ունենալով՝ բոլորն ալ ազատ թողուած են: Վերջին անգամ բերդեցի Մըլրօ Յովն. կը մատնէ Պաշատուր էֆէնտին ոստիկան Մահմէտին լուր տալով, Պաշատուր էֆէնտին կը տարուի էրզրում եւ հոն Տաշխանի (բանտ) մէջ կը մեռնի:

Տիպրան էֆէնտին Սանասարեանի առաջին շրջանաւարտներէն՝ Խնուս կու գայ եւ կ'ամուսնանայ Սայլու գիւղացի Մելիքի աղջկան՝ Շարբաթին:



Սեդրակ Գեորգեան

(Մաքրուհի) հետ. կը փոխադրուի Կարին, կը գառնայ ոստիկան, կը բարձրանայ մինչեւ ոստիկանապետութեան (սէր քոմիսէրի) աստիճանին: Իբրեւ յեղափոխական և ընկերը Արամ Արամեանցի՝ որուն կախաղանի վճիռը տրուելուն մեղսակից նկատուելով, կուսակցութեան կողմէ ղերորի կ'ենթարկուի: Երկու անգամ ձախող մահափորձի կ'ենթարկուի Սայլու գիւղին մէջ իր աներորդի Ռիկոյի կողմէ: Կը սպաննուի իր աղջկան Սիմէի ձեռքով: Տիպրան էֆէնտին ունէր երեք վաւակ՝ աղայ մը՝ Տուրսուն (Գէորգ), աղջիկներ՝ Վերգին եւ Համասփուս:

## ԽՆՈՒՍ ԲԵՐԴԻ ՍԻՄՈՆԵԱՆ ԸՆՏԱՆԻՔԸ

Գրեց՝ ՄԻՀՐԱՆ ՍԻՄՈՆԵԱՆ  
(Մեռած Ֆրէզնօ, 1962-ի Մայիսին)

Սիմոնեան զերդաստանը Խնուս բերդի, այսինքն քաղաքի հայութեան մէջ երկրորդ տեղը կը զբաւէր, եթէ առաջինը չէր, իր հարստութեամբ, թէ՛ զրամական եւ թէ՛ հողային:

Սիմոնեան ընտանիքը եօթը եղբայրներ էին, ամէնքն ալ կը բնակէին մէկ եւ հասարակաց յարկի մը տակ, 75-80 հոյի, մեծ ու փոքր:

Այս բաղմութեան մէջ փոքրը միշտ կը յարգէր խոնարհաբար մեծը եւ պատրաստ էր լիովին կատարելու անոր հրահանգները, կարգապահ զինուորի մը նման:

Իմ մեծ հայրս մեռած էր, նաեւ մեծ մայրս, զորս տեսնելու բախտն ունեցած չեմ:

Իւրաքանչիւր եղբայր ունէր իր անձնական գործը, որուն լծուած կ'ըլլային այդ եղբոր գաւակները, բայց գործը կը կառավարէին մեծերը:

Սիմոնեան զերդաստանի առաջին մեծ եղբայրը, այսինքն աւագը, ծընած ու մկրտուած էր Խնուս բերդի մէջ: Անոր անունը Սեդրաք էր, բայց զրացի թուրքերը զայն կը կոչէին Սաֆար: Պատճառը սա էր.—

Մեր զրացիներէն մէկը, բարեսիրտ ու համակրելի թուրք ընտանիքի մը մեծը, կնքահայր եղած էր Սեդրաքին: Եւ որովհետեւ ան ծնած էր թըրքական արշաւանքի մը յայտարարութեան օրը, ուստի անոր անունը դրած էր Սաֆար, որ թուրքերէն կամ արարելէն լեզուով կը նշանակէ արշաւ, պատերազմ (Աճէմ սէֆէրի, Պաղտատ սէֆէրի, Մըսրը սէֆէրի, Լեայն):

Թուրք ընտանիքը չափազանց մօտ էր մեկի: Անոր բոլոր անդամները կը խօսէին հայերէն, ու մինչեւ անգամ Զատիկի ու Մնունդի տօներուն կը հանէին իրենց զլխու ճերմակ փաթթոցը եւ կ'երթային հայոց եկեղեցին:

Սեդրաք ծանօթ էր «Տացու» անունով զինք ճանչցող հայերէն եւ իր իսկ ընտանիքի անդամներէն: «Տացու», ինչպէս գիտենք տաներէց բառին կրճատումն է եւ յարգական տիտղոս մը:

Սեդրաք կարճ էր հասակով, եկեղեցասէր էր, բարեսիրտ, առատաձեռն, հիւրասէր ու հայրենասէր: Ան հայր էր տաներկու մանչերու եւ մէկ աղջկայ: Ամուսնացած էր Հարամիկ գիւղի հանրածանօթ Իրիցու գերդաստանէն Կարապետի աղջկան՝ Կըթունի հետ:

Պարտք կը զգամ հոս շեղումով մը պատմելու համաճարակ հիւանդութեան մը պարագաները:

Խնուս բերդի մէջ ատեն մը, 45 տարի առաջ, համաճարակ հիւանդութիւն կը ծաղի, որուն հետեւանքով Սեղրաքին տասը երիտասարդ տղաները կը մեռնին ու կը թաղուին:

Կը մնան անոր երկու տղաները միայն — ամենէն մեծը եւ ամենէն փոքրը: Շատ չանցած ասոնք եւս կը վարակուին բոքուռուցք (տիֆթէրիա) կոչուած հիւանդութեամբ:

Սեղրաք Սիմոնեան խորհելով որ անոնք ալ կրնան մեռնիլ, զանոնք կը տանի ծառերով չըջապատուած ընտանեկան պարտէզը, ուր աղօթելով կը հսկէ անոնց վրայ: Սակայն չգիմանալով որդիներու չարչարանքին, կը փոխէ միտքը, կը դառնայ տուն, կ'առնէ սուր ածելի մը ու վերադառնալով հիւանդ որդիներուն մօտ, կռնի փուշ ըսուած բոյսը կը խրէ անոնց կողորդի վէրքին, իսկ վրայէն ալ կը քաշէ ածելին:

Սիրտը չգիմանալով կը հեռանայ իր որդիներէն եւ կ'երթայ տուն՝ իր եղբոր կնոջ ըսելու որ կարգադրութիւն ընեն թաղելու երկուքն ալ: Տեսնելով ածելի եւ արիւն՝ տապեր ձեռքը, կինը կ'անիծէ դայն, խորհելով թէ ան մորթած է իր երկու որդիները:

Երբ տնեցիք կ'երթան տեսնելու տղոց վիճակը, կը ստուգեն որ անոնք կ'ապրին եւ կը քնանան իրենց հօրը յուսահատօրէն բացած վէրքին իբր արդիւնք: Ուստի «Չղաթուփ» կոչուած բոյսով կը փաթթեն եւ զանոնք կ'ազատեն մահուանէ:

Լուրը կը տարածուի ամբողջ քաղաքին մէջ: Հայ թէ թուրք ընտանիքներ, որոնց զաւակները բռնուած էին այդ մահարեք հիւանդութենէն, կը զիմեն իրեն, ինչդրելով որ նոյն գործողութիւնը կատարէ իրենց զաւակներուն կեանքը փրկել փորձելու: Արդարեւ, շատեր կը փրկուին: Սակայն ասիկա սկիզբ մը եւ հիմ կ'ըլլայ որ այնուհետեւ ան ընդունուի որպէս ժողովրդական բժիշկ:

Տասը զաւակներ կորսնցնելէ ետք, օր մը կինը կ'ընկճուի եւ ամիս մը ետք կը մեռնի 28 տարեկան հասակին, ետեւը թողելով մեծ որդին՝ Եղիշէ, աղջիկը՝ Ազապի եւ փոքր որդին՝ Միհրանիկ: Հաղիւ մէկուկէս տարի անցած ան նորէն կ'ամուսնանայ Քաղքիկ զիւղէն 18 տարեկան կոյս աղջկայ մը հետ, Հըրլաթեան գերդաստանէն: Այս ամուսնութենէն կը ծնին երեք մանչեր եւ երկու աղջիկներ:

Համաշխարհային առաջին մեծ պատերազմի երկրորդ տարին թուրք բարբարոս կառավարութիւնը կ'աքսորէ ամբողջ Սիմոնեան գերդաստանը միւս հայերուն հետ: Բոլորը կը թալանուին եւ կը կողոպտուին տարազրութեան սկիզբը եւ միջոցին, եւ յետոյ կը սպաննուին կամ կը մեռնին:

Ողջ կը մնայ այժմ Սիմոնեաններու մէկ որդին միայն, Միհրան, որ 25 տարի է ի վեր կը բնակի Ցրէզնօ, Քալիֆօրնիա: Ողջ կը մնայ նաեւ աղջիկ մը, Ազապի, որ ամուսնացած՝ կ'ապրի Սիւրիոյ մէջ:

Այս տողերը գրողն է յիշեալ Միհրանը:



Միհրան Սիմոնեան (սխուսցի) եւ որդին՝ Միհրանիկ

ՎԱՐԴԱՆ ՍԻՄՈՆԵԱՆ

Սիմոնեան գերդաստանի երկրորդ եղբայրն էր Վարդան, որ այդ անունով մկրտուած էր՝ Վարդանանց Զօրավարաց Ուրբաթ օրը ծնած ըլլալուն համար:

Վարդան կարճ էր հասակով, շատ ճարպիկ էր եւ գործունեայ: Անոր աջ ձեռքին բթամատին կից աւելորդ մատ մը կենալուն համար թուրքերուն կողմէ կը կոչուէր «ալթրփարմազ» կամ վեցմատնեայ: Եւ մեր տունն ալ անոր աւելորդ մատին պատճառաւ յաճախ կը կոչուէր «Ալթրփարմազենց տուն»:

Վարդան ամուսնացած էր Հարամիկ զիւղացի Զիւնիկ անուն աղջկայ մը հետ: Այս ամուսնութենէն ծնան 10 մանչ եւ մէկ աղջիկ զաւակ:

Գերդաստանին կանանց վրայ վերահսկիչի եւ տան ներքին գործերու կառավարիչի դերը ստանձնած էր անոր կինը:

Տան բոլոր անդամներուն «Ապլա»ն էր անիկա: Անոր անունը չէին տար: «Ապլա» կը նշանակէ մեծ քոյր, ինչպէս «աղա» կը նշանակէ մեծ եղբայր: Եթէ հարսներու միջեւ վէճ կամ անհասկացողութիւն ծագէր, ան էր իրա-

ւարարը կամ հաշտարարը: Յանցաւորը կը ստանար իր պատիժը Սիմոնեան գերդաստանի Տան ներքին կանոններուն համաձայն:

**ՄԻՍԱՔ ՍԻՄՈՆԵԱՆ**

Միսաք կը կոչուէր երրորդ եղբայրը, որ կը պարապէր մսագործութեամբ: Թուրք պահակազօրքի հայթայթման ճիւղին հետ՝ Միսաք Սիմոնեան կը կատարէր պայմանագրութեան համեմատ սահմանուած մսի առեւտուրը:

Ամուսնացած էր Չաւուրմա գիւղէն Աթլաս անուն աղջկայ մը հետ: Ունեցան 6 մանչ եւ 3 աղջիկ զաւակ:

**ՅԱՔԷԹ ՍԻՄՈՆԵԱՆ**

Գերդաստանին չորրորդ եղբայրը կը կոչուէր Յաքէթ, որ դժբախտաբար ունեցաւ կարճ կեանք մը եւ մեռաւ 28 տարեկան հասակին, ամուսնական կարճ կեանքէ մը ետք:

Իր այրին մնաց տան մէջ, բայց երկու տարի ետք Սիմոնեանները ամուսնացուցին զայն սուլկարի մը հետ եւ իրենց եղբոր բաժինը յանձնեցին կնոջը: Սիմոնեանները միշտ կ'այցելէին իրենց նախկին հարսին տունը, կը յարգէին զայն ու անոր ամուսինը եւ կը վարուէին անոնց հետ իբր եղբայր կամ մօտիկ ազգական:

**ԿԱՐԱՊԵՏ ՍԻՄՈՆԵԱՆ**

Հինգերորդ եղբայրը կը կոչուէր Կարապետ: Ասոր պարտականութիւնըն էր կատարել դուրսի մարապաներուն հետ գործառնութիւնները — ոչխար, կով, գոմէշ, եզ եւ ձի կու տար, եւ կամ հողագործութեան համար անոնց կը հայթայթէր ցորեն, գարի, կտաւատ եւ կամ այլ սերմնացուներ ու պիտոյքներ:

Կարապետ յաղթանդամ էր ու երկայնահասակ: Ամուսնացած էր Խնուս բերդ քաղաքի մէկ ընտանիքին Հայկանոյշ կոչուող աղջկան հետ: Բախտաւորուած էին 5 մանչ եւ 4 աղջիկ զաւակներով:

**ՄԿՐՏԻՉ ՍԻՄՈՆԵԱՆ**

Մկրտիչ կը կոչուէր վեցերորդ եղբայրը, որ երկայնահասակ ու գեղեցիկ անձ մըն էր: Ան վերակացու էր մարապաներու վրայ, ուստի կ'օգնէր իր Կարապետ եղբոր:

Ամուսնացած էր Յլորիցա անունով աղջկայ մը հետ, Գարաքէօփրիւ գիւ-

ղէն: Ասոնք ունեցան 1 մանչ եւ 1 աղջիկ: Մանչը մեռաւ փոքր հասակին, իսկ աղջիկը, որ կը կոչուի Աղաւնի, հիմա ամուսնացած է եւ կ'ապրի Հայաստան:

Մկրտիչ բարի բնաւորութիւն ունէր: Ընկերային-քաղաքական համոզումներով Սոցիալ-Դեմոկրատ Հնչակեան էր, մինչ միւս վեց եղբայրները Դաշնակցական էին:

**ԵՈՒՎԱՆ ՍԻՄՈՆԵԱՆ**

Եօթներորդ եղբայրը Եուվան կը կոչուէր: Ան պարապեցաւ նախ կօշկակարութեամբ, բայց քիչ ժամանակ ետք բացաւ մանրավաճառի խանութ (աթթերիէ):

Եուվան ամուսնացաւ Հարամիկ գիւղէն խարբերդցի Կարապետ Մուրատեանի աղջկան Մարիցայի հետ: Անոնք ունեցան 2 մանչ — Լեւոն եւ Վարդգէս:

Եուվան պատկանելով Հ. Յ. Դաշնակցութեան, անդամ էր այն Յանձնախումբին, որ հանդանակութեան ձեռնարկեց յանուն Հ. Յ. Դ. Արեւելեան Բիւրոյին: Հանդանակիչ Յանձնախումբի միւս անդամներն էին՝ Նիկոլ (ուսասհայ), Արմենակ Քրմոյեան (խնուսբերդցի), Քեոի Պետօ (Հարամիկ գիւղացի) եւ Նիկոլ Կարապետեան (Խնուս բերդցի): Հանդանակութեան միջոցին մատնութիւն կ'ըլլայ: Ներսէն Արմենակ Գարապաշեան թուրք ոստիկաններէն կը լսէ մատնութեան մասին եւ լուր կու տայ:

Հանդանակիչներն այդ պահուն կը զտնուէին էրզրում եւ իսկոյն կը հեռանան Բարձր Հայոց մայրաքաղաքէն: Ոստիկանութիւնը, սակայն, կը հետապնդէ զանոնք եւ կը ձերբակալէ բոլորը: Ամէնքը կը զրկուին էրզրում, ուր կը բանտարկուին: Հարցաքննութիւնը խիստ կ'ըլլայ, բայց ձերբակալեալները չեն խոստովանիր իրենց «ոճիրը»: Այնուհանդերձ թուրք դատարանը մահապատիժի վճիռ կու տայ անոնց: Բնականաբար լուրը կը հաղորդուի Խնուս բերդի ընտանիքներուն:

Գոյժի օրը լացի ու սուգի տան կը վերածուի Սիմոնեան նահապետական գերդաստանին մեծ բնակարանը: Բայց եղբայրները չեն յուսահատիր ու կը վճռեն փրկել իրենց եղբոր կեանքը:

**ՓՐԿՈՒԹԵԱՆ ՃԱՄԲԱՆ**

Վարդան Սիմոնեան երկու հարիւր օսմանեան հնչուն ոսկի առած կը փութայ էրզրում, իր թուրք փաստարանին հետ կը ներկայանայ կուսակալին: Փաստարանը ծունկին վրայ դրած ոսկիին քսակը՝ կուսակալին կը ներկայացնէ Վարդանը՝ որպէս եղբայր Եուվանի եւ կը խնդրէ որ բեկանուի վճիռն ու նոր դատաւարութիւն նշանակուի: Կուսակալը նախ կը մերժէ, առարկելով թէ վճիռը տրուած է օրինական կարգով եւ համաձայն դատական կանոններու: Ասոր վրայ ձայն կ'առնէ Վարդան եղբայրը եւ խօսքն ուղղելով կուսակալին կ'ըսէ, ի միջի այլոց.



— Վալի փաշա-Ֆէնտի, անցեալ անդամին այս քաղաքին մէջ կախուցան Արամ եւ իր բնկերները: Ասոր համար ձեր վրայ հրաւիրեցիք էրզրումի եւ ամբողջ հայութեան գոգոհութիւնը: Եթէ չմիջամտելով պատճառ դառնաք ասոնց ալ կախուելուն, ընդհանուր հայութիւնը պիտի կանգնի ոտքի եւ գործը պիտի վերջանայ արիւնհեղութեամբ: Քու ժողովուրդն է որ պիտի կոտորուի եւ ի՞նչ պիտի ըլլայ քու շահը:

Փաշան ի պատասխան կը հարցնէ մտատանջ.

— Ի՞նչ կրնամ ընել...:

Վարդան եղբայրը կը պատասխանէ.

— Շատ զիւրիւն բան է: Դատավճիռը տուող անդամներէն ոմանք կը վարձատրենք պղտիկ նուէրներով, իսկ զուք կ'ըսէք թէ երազ տեսած էք: Կը կարգադրէք որ այդ բանտարկեալները քննութեան մը ենթարկուին, նկատելով որ նոր հիմեր գտնուած են անոնց անմեղութիւնը ապացուցանող: Եթէ բան մըն ալ չըլլայ, նոր քննութեամբ մը անոնց մահավճիռները կը փոխէք ցկեանսի կամ 101 տարուան կալանքի:

Վալի փաշան տեսնելով Վարդան եղբոր համարձակութիւնը եւ անկեղծ կեցուածքը, մանաւանդ ոսկիի քսակը, յաջորդ առտու մունետիկ կանչելու համար որ երազ տեսած է դատապարտեալներու մասին եւ նոր դատավարութիւն նշանակած է:

Իրաւ ալ տեղի ունեցաւ այդ դատավարութիւնը եւ մահապարտներու վճիռը փոխուեցաւ 101 տարուան բանտարկութեան: Անոնք չորս տարի բանտ մնալէ ետք, Օսմանեան Սահմանադրութեան հռչակումին՝ ապառ կ'արձակուին Կարնոյ բանտէն:

Շուվան երբ բանտ գնաց իր որդիներէն Լեւոն Ա տարեկան էր, իսկ Վարդաէս՝ 2 տարեկան: Տուն հասնելուն իր որդիները կը խառնուին ուրիշ տնեցի տղաներու եւ ներկայանալով իրեն՝ կ'ուզեն ստուգել թէ ան պիտի ճանչնա՞ր իր հարազատ զաւակները:

Ան չի ճանչնար եւ ցոյց կու տայ իր եղբոր զաւակները: Բոլորը կը ծիծաղին այս առթիւ եւ կ'ուրախանան այնուհետեւ յիշելով անոր սխալանքը:

\* \* \*

Հոս կը փակեմ Սիմոնեան գերդաստանի մասին գրութիւնս: Կարելի էր շատ աւելի գրել, բայց ես կը գոհանամ այսքանով:

Ֆրէզնո, Քալիֆ. Օգոստոս, 1943

### ԳՈՎԱՆԴՈՒԿ ԳԻՒՂԻ ՊՂԷ ՄԽՈՅԻ ՏՈՒՆԸ

Գրեց՝ ԵՂԻՇԷ Ա. ՔԷՆՅ. ՄԽԻԹԱՐԵԱՆ

Պատճած են, որ մեր ընտանիքը, Սասնոյ Ընկուզնակ գիւղէն գաղթած ու եկած հաստատուած է Խնուսի Գովանդուկ գիւղը: Գիւղին հիմնադիրները եղած են՝ Պղէի տներ, Ապօ Մհերի տներ, Սրպէ տներ եւ Հաշարատներ:

Սասնոյ Ընկուզնակ գիւղէն գալով կը հասնին Մշոյ Ալվառինջ գիւղը: Բազմանգամ ընտանիքին մէկ եղբայրը կամ հօրեղբայրը կը թողուն Ալվառինջ, միւսները կ'անցնին Մշոյ Թիլ գիւղը, ընտանիքին մէկ անդամն ալ հոն կը թողուն, (մինչեւ 1915-ի ջարդերուն ատեն՝ դեռ կը խօսէին այդ երկու գիւղերու մեր ազգականներու մասին) ու կ'անցնին Խնուս Կովանդուկ գիւղը եւ կ'ըլլան հիմնադիրները: Կովանդուկ հասնող ու հաստատուողները եղած են մեր նախահայրերուն երկու եղբայրները, մէկուն անունը Ընձօ, միւսին անունը Մշո: Թէ ե՛րբ, ո՛ր տարիներուն եւ թուականներուն, ու քաղաքական ճակատադրական օրերուն, ես չե՛մ գիտեր:

Պղէ տներ կը կոչուէինք: Պղէն, այս երկու եղբայրներէն որո՞ւն տղան կամ թոռը եղած է, ճշգրիտ չեմ գիտեր. լսած եմ, սակայն, որ Պղէն Մուրատ անունով տղայ մը ունեցած է, Մուրատի տղան Մխոն կամ Մխիթարը եղած է մեծ հայրս: Մուրատի կինը՝ Նանէ Նուպար եօթը տարի գիւղին ռէսը եղած է. իր գերեզմանաքարին վրայ կարդացեր եմ այս յիշատակարանը:

Մեծ հայրս՝ Մխիթարը, մեր տունին համբաւին եւ արժանապատուութեան դէմ նկատելով Լաքալուտաղի չէրքէզներու եւ շրջանի քիւրտերու յաճախակի աւաղակութիւնները եւ թալանը, 1892-ին, օր մը Խնուս բերդէն գիւղ վերադարձին, ծառաները զինք զիմաւորելով կ'ըսեն որ, աւաղակները թալանը տարին: Մխոն իր սեւ նժոյզը կը մտրակէ որ հասնի աւաղակներուն, սակայն, նժոյզը, իմաստունի դրան առջեւէն վազող ջրաղացքի առուի կամուրջէն անցնիլ չ'ուզեր, բայց մշակները ձիու սանձէն բռնած քաշելով կ'անցընեն կամուրջէն: Մեծ հայրս գողերու ետեւէն կը հասնի Խամշով ձոր ըսուած տեղը. կռիւի կը բռնուին: Գողերէն երկուքը կը սպաննէ, երրորդը վիրաւոր

կ'իյնայ: Մեծ հայրս իր ձեռքն կ'իջնէ, երբ կը մօտենայ վիրաւորին, վիրաւոր աւազակը կը կրակէ եւ մեծ հայրս ծանրապէս կը վիրաւորուի, եւ օր մը ետք կը մահանայ: Աւազակը կ'անհետանայ: Դէպքէն քանի մը տարի անցնելէ ետք, կը ստուգուի, թէ լաքպուտաղցի Իսմայիլ անունով չ'էրքէզն է եղած մեծ հայրս սպաննողը:

Հօրեղբայրս՝ Կարապետը եւ հանրածանօթ դաշնակցական Քեռի Դաւիթը, երկար հետապնդումներէ ետք, օր մը երբ Պուլանուխ կ'երթան, Եոնճալու գիւղը գտնուած ատեն անակնկալօրէն կը լսեն որ չ'էրքէզ Իսմայիլը գիւղը կը գտնուի: Իսմայիլ լսելով որ, Քեռի Դաւիթը եւ Հօրեղբայրս՝ Կարապետը գիւղը եկած են, կը փորձէ գիւղէն փախչիլ, սակայն Քեռի Դաւիթը եւ Հօրեղբայրս՝ կը հետեւին իրեն եւ զայն կը բռնեն Մուրատ գետի եզերքը եւ կը սպաննեն, ապա դիակը կտրտելով կը լեցնեն պարկի մը մէջ եւ կը նետեն Մուրատ գետը: Մատակը Չարբօհարի մօտերը գետափը կը քուրի: Հոս ջուրէն հանելով կը թաղեն եւ հողաթումրին վրայ մզրախ մը կը տնկեն: Ես տեսած եմ այդ գօռը եւ մզրախը, երբ Խնուսէն Ս. Կարապետ կ'երթայի:

Իսմայիլի սպանութենէն ատեն մը ետք, Քեռի Դաւիթը, հայրս եւ Կարապետ Հօրեղբայրս կը ձերբակալուին եւ կը տարուին Կարնոյ բանտը, 101 տարուան բանտարկութեան դատապարտուելով, յեղափոխական ըլլալու յանցանքով: Օսմ. Սահմանադրութեան (1908ին) բանտէն ազատուեցան: Երբ գիւղ վերադարձան գիւղացիները գիւղէն դուրս գիրենք դիմաւորեցին, ասիկա շատ լաւ կը յիշեմ:

Մեր ընտանիքէն բաժնուած Հօրեղբայր մը Պուլանուխ գացեր եւ հաստատուեր է Եոնճալու գիւղը, եւ կազմած Եոնճալուայ ոչն Խչէի տունը: Այս տունը հանրածանօթ էր եւ ազդեցիկ, հարստութեամբ եւ ընտանիքի բազմանդամութեամբ:

Հօրս Հօրեղբայրներէն երկուքը անուանուած էին իրենց նախնիքներուն Ըռճոյի եւ Մշտոյի անուններով: Այս Մշտոն խոր ծերութեան հասած կ'ապրէր մինչեւ 1915-ի Չարդերու ժամանակ, տեսայ իր սպանութիւնը: Մեր ընտանիքին անդամներուն թիւն էր 45, որոնք բոլորն ալ կորսուեցան 1915-ի Չարդի եւ տեղահանութեան օրերուն:

## ՎԱՐԱՋԴԱՏ ԱՆՏՈՆԵԱՆ

Խնուսի Պաշալոյս գիւղի նահապետական ընտանիքներէն Անտոնեան Մելքոնի որդին էր Վարազդատ, 1888 թուականի ծնունդ:

Պարտիզազոյն եւ զանգուր մագերով, բաց վարդապոյն մորթով, գեղազէմ, նրբակազմ եւ զեղուղէչ հասակով համակրելի պատանի մը, եւ իր տարիքին անհամապատասխան լըջութեամբ անձ մը...:

Օսմ. Սահմանադրութեան երկրորդ տարին կը մեկնի Պոլիս ուսանելու: Առաջին տարին շատ դժուարութիւններու կը հանդիպի, մինչեւ որ շքնորհու ազնուական հայու մը՝ փրոֆ. Արրահամեանի՝ կը մտնէ Ռոպէրթ գոլէճը՝ իրրեւ գիշերօթիկ, միեւնոյն ատեն թեթեւ աշխատանք մը ստանձնելով:



Նրկարահասակը՝ վարազդատ Անտոնեան (խնուսցի), կարծախասակը Խաչիկ Զուլփայեան (Էտեմիշցի): Նրկուիմ ալ պէրպէրիանակամ:

Մինչեւ ուղն ու ծուծը հայ հողիով պատանի, կը թողու Ռոպէրթ գոլէճը իբրեւ խորթ միջավայր մը, եւ յաջորդ տարին կը ջանայ մտնել հայկական բարձրագոյն վարժարան մը:

Երկար նեղութիւններէ ետք կը յաջողի մտնել իբրեւ գիշերօթիկ՝ Սկիւտարի Պէրպէրեան վարժարանը: Հազիւ 2 տարի բոլորած՝ վրայ կը հասնի Ա. Համալսարանին պատերազմը եւ Վարազդատը կը կանչուի զինուոր: 1914-ին, իբրեւ սպայ կը մարզուի Պոլսոյ հարպիէի սպայից վարժարանին մէջ: Բայց, հոն ալ երկար չի մնար: Անհանդարտ հողի մը ունէր: Կը վերադառնար Խնուս, իր գիւղը...

1915-ի չարաշուք օրերուն, տարօրինակ երկունքի մէջ է Վարազդատ. կը նախազգայ ահաւոր վտանգը որ կախուած է հայ ժողովուրդի գլխուն. հերոսի մը յանդգնութեամբ եւ երիտասարդ առաքեալի մը իմաստութեամբ կը հրահրէ իր գիւղացիները զէնք առնել, զէնք վերցնել ու կռուիլ, «զէնքով միայն կայ փրկութիւն»ի հաւատքով:

Եւ սակայն ի զո՛ւր, ինք կը մնայ առանձին: Ու միս մինակը՝ հետը առած իր եղբայրն ու Տէր Աւետիս քահանան՝ կը բարձրանայ լեռը, կը շրջապատուի իր դիրքին մէջ բազմաթիւ քիւրտերէ, բայց, այս անվահեր երիտասարդը հերոսաբար կը կռուի մինչեւ իր վերջին փամփուշտը, եւ ազատուելու յոյսով երբ նպաստաւոր դիրք մը փնտռելու կ'ելլէ, կ'իյնայ քիւրտերու համազարկին տակ:

Կտոր-կտոր կ'ընեն անոր եւ Տէր Աւետիսին մարմինները եւ կը թողուն արեւուն տակ: Քանի մը օր ետք, գիւղէն մէկ երկու յանդուզն պառաններ կ'երթան կը գտնեն, կը հաւաքեն անոնց նշխարները, կը բերեն գիւղ եւ կը թաղեն եկեղեցիին դաւիթին մէջ:

Այսպէս գրուած էր ճակտին գիրը այդ աննման, այդ հայկազարմ Վարազդատին...: Լոյս թող կաթի անոր աճիւնին վրայ:

Վարազդատի գրիչէն ելած նամակ մը ունինք ձեռքի տակ, զոր որպէս սրբազան մասունք մը կը յանձնենք հետագայ էջերուն: Նամակը վկայութիւն մըն է Վարազդատի հայրենասիրական ոգիին եւ զրական ճաշակին:

1914 Յունվար 1, Պոլիս

Մովսէս եւ Ջաֆար Տէր Ջաֆարեանց,  
Սուրէնին դրկած նամակնիդ ես ալ կարգացի. առի հոն եղած իմ բարեւը, շնորհակալ եմ: Ջաֆար ջան, զգացումներ, հոգիներ չեն մեռնիր, անոնք կը փոխեն զանազան ազդեցութիւններու ներքեւ իրենց ուղղութիւնը, իրենց եռանդի չափն ու որակը, բայց երբեք չեն մեռնիր: Երկար ժամանակէ ի վեր բաժնուած ենք իրարմէ, Ջաֆար ջան, միշտ կը յիշենք գֆեգ, քու քաղցրը ժպիտը միշտ կը քաւալի աչքերուս առջեւ, եւ քու խորտակի խնդուած-ֆիդ ձայնը միշտ կը հնչէ ականջիս. որքան ալ որ հեռու ըլլաս, որքան որ ծովերն ու ովկիանոսները մեզ գատեն իրարմէ, դարձեալ այն կապը որ կը կապէ մեր սրտերը իրարու, պիտի խօսի մեր սրտին խորերէն, լեռներու կրնակէն, հորիզոններու ետեւէն, փրփրած ու կատաղած ովկիանոսներու փրփրադէզ ալիքներու վրայէն, պիտի հնչէ քու խնդուֆիդ մեղրանոյշ ձայնը, պիտի հնչէ այրուած ու վառուած սրտիս. սուգի ու շիւսնի ձայնէն խլացած ականջներուս, քու քաղցր ժպիտը բալասան պիտի ըլլայ փետրատուած յոյսերուս եւ էրէրուն ու գերերուն հագոյս:

Պարտեզի մէջ կը հաւաքուինք ծառին շուրջ, կը յիշենք գֆեգ, կը յիշենք Հանէսեաններու խեղդ տղան, անոր նետած ֆարերը, կը յիշենք ու կը խնդանք, կը խնդանք ու կը յուզուինք, կը յուզուինք ու կու լանք երբեմն:

Մարտիրոս գնաց երկիր, շատ ուրախ էր. գնացած օրը եկաւ դպրոց (Պոլիս, Ռոպէրթ գոլէճ), տեսնուեցանք յետոյ գնանք: Յունան հոս Մարտիրոսի տեղ օթել կ'աշխատի, շատ լաւ է. Յունան խելացի է խնուցի բոլոր տղայոցմէն:

Ջաֆար ջան, գնացի երկիրը տեսայ շատ գէշ դրութեան մէջ է. արդէն Մովսէս հիմա պատմած է քեզ մեր մասին, երկրի մասին, եւ այլն:

Մովսէս՝ երկիր չէ ինկե՞ր միտքդ, դու ու քու Աստուած Մժնկերտու(\*) ծառերու տակի օդին կը յիշե՞ս, հարամ ըլլայ քէ անուշ, ի՞նչ ըսեմ. գիտեմ պիտի պատասխանես քէ — դուն գիտես. լաւ:

Ընկերական քերտ բարեւներով եւ համբոյրներով՝

ՎԱՐԱԶԴԱՏ

(\*) Մժնկերտու ծառերը, մեկնակէտմ էր, Սահմանադրութեան օրերուն խնուցի ուսանողներու կարին եւ Պոլիս մեկնող կարաւանին, տօնակամ օրուան նմանո՞ղ. հոն կը հաւաքուէին ուսանողներու ծնողներն ու ազգականները «բարի նախապարհի» մաղթանքներու համար: Անդրադարձեր ենք սառ:

### Տ. ՍՈՒՐԷՆ Ա. ՔԶՆՅ. ԲԱԲԱԽԵԱՆ

Տէր Սուրէն ծնած է Խնուսի Խաչալոյս\*) գիւղը 1897-ին :Յեղափոխական անցեալ ունեցող Բարախեան բազմամեզամ եւ անուանի տունէն՝ Վարդան Բարախեանի որդին է . մայրը՝ Սէլվին (ծնեալ Ասլոյեան) նոյնպէս խաչալոյսցի քաջակորով հայ կին մըն էր :

Իր ծնողքին եօթներորդ եւ վերջին զաւակն է : Մանկութիւնն ու պատանեկութիւնը ապրած է իր ծննդավայրին մէջ : Հայերէն դիրերն ու քերականը կարողալ ու գրել սորված է իր ուսումնատենչ հօրմէն : Իր նախնական ուսումը առած է գիւղին վարժարանին մէջ և աւարտած Խնուս բերդի Միացեալ Ընկերութեան նախակրթարանը, որուն տնօրէնն էր Խնուսի Աբօս գիւղէն Հրաչ վարժապետը, որ պատուական մտաւորական մըն էր եւ յեղափոխական մը :

(\*) Խաչալոյսը Խնուսի անուն ունեցող գիւղերէն մէկն էր : Կառուցուած էր Բիրակն (Պիմկէօլ) լեռան արեւելեան բերին՝ Ղամէֆի արեւմտեան մէկ փէշիմ վրայ : Առջեւէն կ'անցնէր Արածանիի մէկ ճիւղը՝ Դանիէլ գետը, եւ դիմացը կը փռուէր Խնուսի մշտադալար դաշտը, որուն հետ կապուած է դրախտին աւանդութիւնը :

Խաչալոյս անունը առած է այն բազմաթիւ խաչքարերէն, որոնք պահակներու պէս կանգնած կը հսկէին իր շորս կողմը : Թրքական տիրապետութեան ժամանակ Խաչալոյս անունը փոխուած է Խաչալուսէ կամ Խալիլ չաւուշի :


Հագիւ մէկ մզոն հեռաւորութեամբ՝ լեռն ի վեր Ղամէֆի կուրծքին վրայ ունի հնամենի վանքի մը փլատակը, որ կը կոչուի վանքիկ եւ գիւղին գլխաւոր ուխտատեղին էր . ուխտատեղի էին նոյնպէս Շարան Գաբըրը, Թաւալոց Աղբիւրը, Չաթալ Գաբը :

Ունէր իր եկեղեցին՝ Ս. Սարգիսը, բովիկն ալ իր դպրոցը, որ բաց կը մնար մեծ աւտեն միայն, եթէ ուսուցիչ մը գտնուէր :

Հակառակ Խնուսի կղզիացած մէկ անկիւնը քաշուած կծկուած ըլլալուն՝ Խաչալոյսը նկատուած էր քաջութեան բերդ մը . ան կշիռ ունէր Խնուսի բոլոր գիւղերուն մէջ : Իր անուն հետ կապուած էր Շէյխ Հանի Հայտարի ահաւոր ահաբեկումը : Անոր քաջարի մէկ գաւակն էր, Սիմոն Մկրտիչեանը, որ ահաբեկած էր տխրահռչակ բոմբարէր Տիգրանը :

Իրն էին անվեհեր հայդուկները՝ Օհան Տէր Զաքարեանը, Անտրօ Բատէն, համտիլի Մարտիրոսը, Օգոս Դանէլը, Սրգէ Ղզրոն, առիւծասիրտ Շուշէ Մօսոն, Զուլէ Մօսոն, Մնոն, Սեբոթի Պետիկ, Կարօ Գեւոն, Սահակի Կոսոն, Ասոն, Հոտանի հաշիկ, եւ դեռ քանի-քանիներ :

Յանդուզն գիւղ մըն էր Խաչալոյսը... : «Խանճի (դաշոյն) քաշող» եւ «ականջ կտրող» գիւղ մը կը տարփոզուէր ժողովրդական երգի մը մէջ :



Սուրէն Ա. Քինյ. Բարախեան

Օսմանեան Սահմանադրութեան ընձեռած թոյլտուութենէն օտուելով՝ ուսումնաճարաւ բազմաթիւ հայ ուսանողներու պէս՝ ան ալ կը դիմէ Պոլիս, իր ուսումը կատարելագործելու համար:

Ուսանողներու յատուկ բազմաթիւ դժուարութիւններու յաղթահարելով կը յաջողի իրրեւ ազգային պիւնթոնի սան ընդունուիլ Սկիւտարի Պէրպլէրեան բարձրագոյն վարժարանը, մասնաւոր կարգադրութեամբը յաւելտ անմոռանալի Վուսթեանին:

Կ'աւարտէ Պէրպլէրեանը յոյժ պատուարեր յիշատակութեամբ եւ Պըսակաւոր ի Գիտութիւն վկայականով:

Իր ուսուցիչները եղած են վարժարանին տնօրէնը՝ Շահան Պէրպլէրեան, Դուրեան Սրբազանը (յետոյ Պատրիարք Երուսաղէմի), Լեւոն Թաշճեան, Տիրան Զարբեան (Ինտրա), Տիգրան Զէօկիւրեան, հայր եւ որդի Գարեգին եւ Գեղամ Գաւաֆեաններ, Ստեփան Կուրտիկեան, Իգնատիոս Մուրատեան, Լեւոյն:

1915-ի չարաշուք տարին է: Փախտական կ'ապրի Պոլսոյ մէջ՝ թաղէ թաղ, կը ձերբակալուի, կը բանտարկուի Երեք ամիս եւ կը տարուի զինուոր...: Երեք տարի թրքական ամէլէ քապուր կոչուած աշխատանքի դժոխատիպ վաշտերուն մէջ շարշարուելէ ետք, կը վերադառնայ Պոլիս եւ կը նուիրուի ուսուցչական ասպարէզի:

Կը պաշտօնավարէ 2 տարի Գարակէօղեան որբանոցը, 2 տարի ալ Սկիւտարի Պէրպլէրեան վարժարանը: Վրայ կը հասնի Քեմալական շարժումը, որուն պատճառաւ 1922-ին խոյս կու տայ Պոլիսէն, եւ Շաւարշ Միսաքեանի, Շամտանճեանի, Յովհաննէս Ամատունիի եւ ուրիշներու հետ կը մեկնի Պուլկարիա՝ Վառնա քաղաքը, ուրկէ ալ Ահարոն Տատուրեանի, Սահակ Տէր Թովմասեանի եւ Յովհաննէս Արուսեանի հետ, ազգային 50 ուսանողներու շարքին, կը մեկնի Փրակայի համալսարանը ուսանելու...:

Հոն 2 տարի զիտական ուսմանց հետեւելէ ետք, կը թողու Փրական եւ կը մեկնի Փարիզ, հոն կատարելագործելու համար զիւղատնտեսական իր ընտրած մասնագիտութիւնը, բայց, ստեղծուած անել պայմաններուն պատճառաւ, կը տիպուի աշխատիլ Ռընոյի զործատան ձուլարանին մէջ 4 տարի շարունակ...:

Այս պայմաններուն մէջ՝ իրրեւ ուսուցիչ կը հրաւիրուի Պէյրութի ազգային Ս. Նշան վարժարանի տնօրէն՝ Վարդան Գէորգեանէ:

Հոն կը մեկնի 1928-ին եւ կ'ընդգրկէ նորէն ուսուցչական ասպարէզը, եւ այնուհետեւ յաջորդաբար կը պաշտօնավարէ ազգային Ս. Նշան վարժարանը, Գահիրէի մէջ նոր հաստատուած Պէրպլէրեան վարժարանը, Պէյրութի մէջ նորաբաց Համազգային ձեմարանը, եւ ապա, Գամիշլիի, Պիթիասի եւ Լաթաքիոյ ազգային վարժարաններուն մէջ Երբեմն որպէս ուսուցիչ, Երբեմն ալ որպէս տնօրէն՝ ընդամէնը 25 տարի...:

Տէր Սուրէն եղած է նուիրեալ եւ խանդավառ ուսուցիչ մը եւ ջերմեռանդ սպասարկու մը Հայ Ողիին: Ուր որ պաշտօնավարած է, սիրուած ու յարգուած է ամէնքէն անխոր, թէ՛ աշակերտներէն եւ թէ՛ ժողովուրդէն:

Կ'ամուսնանայ Լաթաքիոյ Ղրնկմիէ պիւրը՝ 1938-ին, պիթիասցի Զափարեան Գէորգի եւ Մայրամի աղջկան Շուշանիկին հետ՝ կնքահայրութեամբ Տոքթ. Յակոբ Պէրպլէրեանի:

Քահանայ կը ձեռնադրուի Լաթաքիոյ Ս. Յակոբ Եկեղեցիին մէջ՝ 1941ին, ձեռամբ Աջապահեան Սող Սրբազանին եւ խորտաւիշակութեամբ Բերիոյ բարեջան առաջնորդ՝ Գերշ. Տ. Զարեհ վարդապետ Փայասլեանի (Երանաշ. Հայրապետ Մեծի Տանն Կիլիկիոյ):

Լաթաքիոյ մէջ կը քահանայագործէ հինգ տարի, միեւնոյն ատեն վաբելով տեղւոյն Ազգ. Ս. Յակոբ վարժարանին տնօրէնութիւնը մեծ ձեռնասութեամբ, վայելելով իր ժողովուրդին անխառն սէրն ու յարգանքը:

Ընդառաջելով Տիթրոյիտի Ս. Սարգիս Եկեղեցւոյ Հոգարարձութեան հրաւերին, 1946-ին կը մեկնի Տիթրոյիտ, արտօնութեամբը Բերիոյ թեմին առաջնորդ՝ Տ. Զարեհ հայր սուրբին, եւ ահա՛, 16 տարիներէ ի վեր իրրեւ հոգեւոր հովիւ կը ծառայէ Տիթրոյիտի դժուարահաս ժողովուրդին՝ արժանանալով ամենուն համակրանքին ու գնահատանքին:

Հայոց եկեղեցիին եւ անոր հօտին իր մատուցած բարեք ծառայութիւններուն առ ի վարձատրութիւն՝ Մեծի Տանն Կիլիկիոյ Ն. Ս. Օ. Տ. Տ. Զարեհ Ա. Երջանկայիշատակ կաթողիկոսը շնորհած է անոր աւագ քահանայի տիտղոս եւ պատիւ եւ լանջախաչ կրելու իրաւունք:

Ուսուցչական եւ քահանայական երկարամեայ եւ արդիւնաւոր պաշտօնավարութեան կողքին՝ Տ. Սուրէն Ա. քհնյ. Բարախեան ծառայած է նաև հանրային կեանքի այլ մարզերուն մէջ:

Մինչեւ իր քահանայ ձեռնադրութիւնը, ծառայած է Հ. Յ. Դաշնակցութեան շարքերուն մէջ, ուր որ գտնուած է, եւ եղած է ուղղամիտ, պարտաճանաչ եւ գաղափարական կուսակցական մը, տրամադրելով անոր նպատակին ու գործին իր կարելի ճիգերը:

Տէր Սուրէն մասնաւորապէս անդամակցած ու կապուած է Հ. Մ. Ը. Մ-ին, Պոլսոյ մէջ անոր հիմնադրութենէն սկսեալ: Սկիւտարի մէջ վարած է սկաւուտական շրջանային խմբակատի պաշտօնը՝ դործակցութեամբ Հայկ ձիգմէճեանի: Ծառայած է Հ. Մ. Ը. Մ-ին՝ իր գտնուած քաղաքներուն մէջ՝ Վառնա-Փարիզ եւ մանաւանդ Պէյրութ, ուր երկար ատեն վարած է Շրջանային Վարչութեան քարտուղարութիւնը, կորովի ատենապետութեամբը յաւելտ ողբացեալ Տոքթ. Բենիամին Գուլպեանի: Իր զործակցութիւնը փրստուած է միշտ միջմասնաճիւղային ֆութպոլի մրցումներուն եւ տողանցներուն կազմակերպութեան համար եւ իրրեւ Հ. Մ. Ը. Մ-ի հանդէսներուն ատենախօս...:

Եղած է պերճախօս եւ զրաւիչ բանախօս մը եւ նոյնքան պերճախօս քարոզիչ մը՝ մեծապէս տպաւորելով իր ունկնդիրները:

Տէր հայրը ունի նաև զրելու շնորհ: Գահիրէի մէջ 1931-ին տպած է «Հայաստանի լեռներու աւանդութիւնները» զրքոյկը, որ սպասած է: Քերթուածներ, յօդուածներ ու թղթակցութիւններ զրած է Ազգակին, Յուսա-

բերին, Ազդարարին, Յառաջին, Հայրենիքին ու Ասպարէզին: Քերթուած ու արձակ գրութիւններու ձեռագիրներ կը մնան պահուած:

Ունի հազարգական եւ համակրելի բնասրութիւն եւ բնկերակցութիւն: Երգելու շնորհ ալ ունի: Բնասնկան ու բնկերային նեղ շրջանակներու մէջ շատ կը փնտուռէին իր գեղջուկ երգերը:

### ՏԷՐ ԵՂԻՉԷ Ա. ՔՀՆՅ. ՄԽԻԹԱՐԵԱՆ

Տէր Եղիշէ ծնած է 1902 Ապրիլ 15-ին, պատմական Տարօն-Տուրուրե-րանի, Խնուս գաւառի Գոփանդուկ գիւղը: Իր ծնողքին չորրորդ զաւակն է. աւագանի անունով Հմայեակ: Որդին է գիւղին եւ գաւառին հանրածանօթ բն-տանիք՝ Պղէ Մխոյի սրգի Խուրչուտի եւ Ատլասի: Մայրը՝ Ատլաս գաւակն է եղած համազիւզացի հանրածանօթ եւ ազդեցիկ Մհեր աղայի եւ Գոհարի: Մեծ մայրը՝ Գոհար, գաւակն է եղած Խնուս գաւառի Հարամիկ գիւղի Մե-լիքեան բնտանիքին, որոնք կը սերին մեծահամբաւ Մելիքեաններէն:



Տէր Եղիշէ Ա. Քհնյ. Մխիթարեան

Նախնական կրթութիւնը ստացած է գիւղին ներսնական վարժարանը: 1911-ին կը զբոսի Մշոյ Ս. Կարապետի վանքը: 1915-ի ջարդերուն եւ տա-րազրութեան օրերուն ազատուելով կը քշուի Կարին, Երզնկա-Կարին նստա-պարհներուն վրայ տարապարհակ աշխատանքի — ամէլա քապուրի — մէջ: Նոյն տարուան աշնան կը տարազրուի: Ծանապարհին երբ Արարիկը կը հաս-նի, հոնկէ կը փախչի եւ ապաստուելով կը մնայ շրջանի գիւղերը, մինչեւ 1918-19, ուրկէ կ'անցնի Խարբերդ, կը մտնէ Ամերիկեան սրահնոցը, ապա 1922-ին փախստական կ'անցնի Հալէպ, ուրկէ Պէլլութ եւ կը մտնէ Ամերիկեան սր-րահնոցը: 1923-ին Պէլլութի Ազգ. Առաջնորդարանի երկրորդ քարտուղարի պաշտօնով տարի մը ծառայելէ ետք կ'անցնի Երուսաղէմ, ուր Ժառանգաւո-րացին չորս տարի աշակերտելէ ետք, չուզելով կուսակրօն ըլլայ, կ'անցնի Մարսէլ (Ֆրանսա), ուր 1928-ին կ'ամուսնանայ Օր. Լուսին Սարգիսեանի հետ, բախաւորուելով Երեք աղջիկ եւ մէկ տղայ գաւակներով: Նոյն տար-ուան Դեկտեմբերին քահանայ կը ձեռնադրուի Գրիգորիս Էպս. Պայաքեա-նի ձեռամբ:

1938-ին դժբախտութիւնը կ'ունենայ կորսնցնելու Երէջկինը: Կը վերա-մուսնանայ 1940-ին, Տիկ. Հայկանոյ Թերզեանի հետ: Իր պաշտօնավարու-թեան ընթացքին, 1937-ին կ'ընտրուի առաջնորդական փոխանորդ Միջին-Հարաւային Ֆրանսայի շրջանին մէջ եւ 9 տարիներ պաշտօնը կը վարէ մեծ ձեռնհասութեամբ: 1946-ին՝ պատերազմէն ետք, Հիւսիսային Ամերիկայի Այ-գային Կեդրոնական Վարչութեան հրաւերով կը ստանձնէ Ֆիլադելֆիոյ Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցւոյ հոգեւոր հովուութիւնը, պաշտօն մը, զոր կը վարէ 5 տարի, ապա Ազգ. Կեդր. Վարչութեան սրտումով կը ստանձնէ Տրէզնոյի (Քալիֆորնիա) Եկեղեցւոյ հոգ. հովուութիւնը:


Հայաստանեայց Առաքելական Եկեղեցիին եւ անոր հօտին իր ժառու-ցած անձնուէր ծառայութեան համար, մասնաւորապէս Քալիֆորնիոյ մէջ իր դէմ շղթայակերծուած անարակելի պայքարի օրերուն՝ «հովի քաջ, զնէ զանձն իւր» ի խոր գիտակցութեամբ՝ արժանացաւ դնահատանքի եւ ի վեր-ջոյ վարձատրութեանը Մեծի Տանն Կիլիկիոյ Երջանկ. Ն. Ս. Ս. Տ. Տ. Զա-րեհ Ա. կաթողիկոսի շնորհած տապ քհնյ. ի տիտղոսին եւ յանջախաչ կրելու իրաւունքին: Մաղկեայ փիլոն կրելու վարձատրութիւնը ստացած է Մար-սէլ պաշտօնավարութեան ընթացքին: Մտայած է Հ. Յ. Գալուստիական շարքերուն մէջ՝ մեծ նուիրումով եւ խոր գիտակցութեամբ:

### Տէր ԲԱՐԳԷՆ ՔԶՆՅ. ԳԱՍՊԱՐԵԱՆ

Տէր Բարգէն, աւագանի անունով Երուանդ, ծնած է Խնուսի Մարուֆ գիւղը՝ 1907-ին: Հայրը՝ Տէր Համբարձում քհնյ.՝ նահատակուած է 1915-ին, ինչպէս նաեւ բազմանդամ ընտանիքին միւս բոլոր անդամները: Հրաշքով փրկուած է միայն Տէր Բարգէն:

1919-ին սպաստանած է Մուսուլի հայկական որբանոցը, ապա դըտնուած է Պաղտատ-Պասրա մինչեւ 1922: Մէկ տարի մնացած է Երուսաղէմ ուր ստացած է նախնական կրթութիւնը: 1923-ին անցած է Հալէպ եւ պարապած կահպարծութեամբ մինչեւ 1950: Այս շրջանին եղած է Տարօն-Տուրուրերանի հայրենակցական միութեան Երիտասարդաց միութեան հիմնադիրներէն եւ հայրենակցական միութեան անդամ եւ քարտուղար 1927—1948: Մտռայած է նաեւ Դաշնակցութեան շարքերուն մէջ:

1950 Սեպտ. 10-ին քահանայ ձեռնադրուած է Հալէպի Ս. Քառասուն



Տէր Բարգէն Քհնյ. Գասպարեան

Մանկանց Եկեղեցւոյ մէջ, ձեռամբ հոգելոյս Տ. Տ. Զարեհ Ա. կաթողիկոսի, երբ ան առաջնորդն էր Բերիոյ թեմին:

Քահանայործած է Հասիչէ, Տերպետի եւ Ռասուլայն քաղաքներուն եւ շրջաններու հայութեան: Հինգ տարի վարած է Հասիչէի ազգ. վարժ.ի տնօրէնութիւնը եւ դասաւանդած հայերէն եւ կրօն: Հոգեւոր հովուութեան եւ տնօրէնութեան զոյգ պաշտօնները վարած է մինչեւ 1956, երբ Հիւս. Ա-մերթիւայի Ազգ. Կեդր. Վարչութեան հրաւերով եւ կարգադրութեամբ եկած է Ֆրէզնօ, առանձնելով Ս. Երրորդութիւն Եկեղեցւոյ ժողովուրդին հոգեւոր հովուութիւնը, պաշտօն մը, զոր կը կատարէ մինչեւ այսօր:

### ՓՈԼ ԿԱՐԱՊԵՏԵԱՆ

Որդին է հարամիկցի Գասպար եւ Փառանձեմ Կարապետաններու: Ծնած է Ճիլատեյֆիա եւ ներկայիս 45 տարեկան է: Կարապետան գաշնակահար, յօրինող եւ խմբավար է միաժամանակ: Իր երաժշտական ուսումը ստացած է Փենսիլվանիոյ եւ Թամրլ համալսարաններուն մէջ եւ շրջանաւարտ է Քրթթիս Ինսթիթիութ աւ Միւլիֆէն:

Եղած է Ճիլատեյֆիոյ Օրերա Քրմբանիի Երաժշտական տնօրէնը եւ Նիւ Եորք քաղաքի Քամիւնիթի Օրերայի խմբավարը:




Փոլ Կարապետեան

1963-ի պարնան՝ Օր. Ճրիտլինկ Վակների (հռչակաւոր երաժիշտին թոռը) կողմէ հրաւիրուեցաւ մաս կազմելու այն խմբակին, որ 1963-ի ամբան ընթացքին Պայրոթի մէջ — Գերմանիա — ուսումնասիրութիւններ պիտի կատարէ դէպի Գերմանիոյ առաջնակարգ օրերայի շէնքերը եւ Օր. Վակնէրի հետ պիտի մեկնի Յունաստան, շրջապատյաի մը, ուսումնասիրելու տեղւոյն պատմական թատրոնները:

### ՓՐՈՓ. ՅԱՐՈՒԹԻՒՆ ՏԻՐԱՑԵԱՆ

Փրոֆ. Յարութիւն Տիրացեան, ծնած է 1925-ին Տիթրոյիտ (Միչիկըն), Միացեալ Նահանգներ: Զաւակն է Սնուս բերդեցի հանրածանօթ Տիրացեան գերդաստանէն Սեդրակ եւ Լուսին Տիրացեաններուն: Սեդրակ Ամերիկա գաղթած, Լուսին Ամերիկա ծնած՝ Հարամիկ գիւղէն Դաւիթ Պօղոսեանի դուստրը, բախտաւորուած են 4 մանչ եւ 1 աղջիկ զաւակներով:



Փրոֆ. Յարութիւն Տիրացեան

Փրոֆ. Յարութիւն Տիրացեան իր համալսարանական կրթութիւնը ստացած է Ուէյն Սթէյթ Ինժիվերսիթի մէջ: 1959-ին Ուէյն Համալսարանէն Պսակաւոր Ճարտարապետութեան տիտղոսը ստանալէ ետք, տարի մը կը պաշտօնավարէ Տիթրոյիտի քաղաքապետարանի ջրարաշխական բաժնին մէջ: Կը վերադառնայ Ուէյն Համալսարանը թէ՛ իբրեւ ուսանող եւ թէ՛ իբրեւ օգնական ուսուցիչ: Երեք տարի՝ զուգընթաց ուսանելէ եւ դասաւանդելէ ետք, կը ստանայ Վարպետի տիտղոսը: Իր յառաջդիմութեամբ եւ փայլուն գործունէութեամբ ուշադրութիւնը կը գրաւէ Ամերիկեան Ազգային Գիտական Հիմնարկութեան (Նաշընըլ Սայանս Ֆաունտէյշըն), որ կը հրաւիրէ զայն տարի մը եւս շարունակելու իր գիտական ուսումը Էն Արպըրի Միչիկըն Համալսարանին մէջ: Այս ուսման հետեւելու համար՝ Ազգային Գիտական Հիմնարկութիւնը 11.000 տոլարի կրթաթոշակ կը յատկացնէ իրեն: Ուսումը

կը շարունակէ ճարտարապետական բարձրագոյն տիտղոսը ստանալու համար: Դեռ շրջանը չլրացուցած, կրթաթոշակ մը կը ստանայ նաեւ Ամերիկեան Առողջապահական Սպասարկութենէն, 15 ամսուան համար: 1962-ի Յունիսին կ'արժանանայ ճարտարապետական առողջապահութեան ճիւղին մէջ տրուած ակադեմական ամենաբարձր տիտղոսին:

Ուէյն Համալսարանը կը հրաւիրէ Տիրացեանը Փրոֆ.ի պաշտօնին՝ քաղաքական ճարտարապետութեան (Սիվիլ Ինճինըրիք) բաժնին մէջ:

Տիրացեան ծառայած է ամերիկեան բանակի օդային բաժնին մէջ պատերազմի ընթացքին եւ 1943-1946-ին՝ իր ծառայութեան ընթացքին եղած է Հաւայեան կղզիները՝ Իվօ Ճիմա եւ Սէյրան: Փրոֆ. Տիրացեան ամուսնացած է եւ ունի երեք զաւակներ — մանչ մը եւ երկու աղջիկներ:

Փրոֆ. Յարութիւն Տիրացեան անդամ է ամերիկեան գիտական եւ ճարտարապետական ընկերակցութիւններու:






# ՔԼՈՒԽ Ը.

## ՊԱՏՈՒԵԼԻ ՍԻՄՈՆ ԴԱԻԹԵԱՆԻ ՕՐԱԳՐՈՒԹԻՒՆԸ

Պատուելի Սիմոն Դաիթեան ունի ընդարձակ օրագրութիւն մը, որուն մէջ արձայանդած է ո՛չ միայն իր անհատական ապրումներուն, այլ նաեւ իր ապրած ժամանակաշրջանի եւ հասարակութեան ընդհանրական ապրումներուն: Իր այս հանդամանքով ալ ահաւասիկ կրնայ թանկացին վկայութիւն մը հանդիսանալ ՓՔ. դարու կիսուն Խնուս գաւառի սոցիալափոփոխութեան բարձրուն: Իր այս արժանիքին համար է որ յարմար կը դատենք անկէ ընդարձակ մէջբերումներ ընել, յուսալով որ օրագրութեան ամբողջութիւնը օր մը կրնայ լոյսին գալ:




Պատուելի Սիմոն Դաիթեան

Պատուելի Ս. Դաիթեան ծնած է 1820-ին Սասնոյ Հեթինք գիւղը: Երկար տարիներ պաշտօնավարած է Խնուս եւ Բաղէշ, ապա անցած է Նիկոմիդիա, ուր մեռած է 1900 թուին՝ 80 տարեկանին:

Իր օրագրութիւնը մեկի տրամադրած է իր հարսը՝ տիկին Եսթեր Սիմոնեան, որ կը բնակի Քալիֆորնիոյ Տրէյնո քաղաքը: Օրագրութեան հարադատութիւնը պահելու մտահոգութենէն թելադրուած՝ խուսափած ենք ուղղադրական եւ լեզուական թերիները սրբադրելէ. զոհացած ենք միայն կէտադրական թերիները ճշգրտով՝ դրութեան իմաստի աւելի ճշգրտութիւն տալու հեռանկարով:

Օրագրութեան բնագիրին մասին դաղափար մը կազմելու համար տըւած ենք երեք նկար:



# ՄԱՍՈՒՆՅԻ ԵՒ ՏԱՐՕՆԱՑԻ ՀԵԹԵՆԱՑ ՓԸՆԿՈՑԻ ՄԱՐԿՈՍԻ ՈՐԴԻ՝ ՄԱՐԳՍԻ ՈՐԴԻ՝ ԴԱԽԹԻ ՈՐԴԻ՝ ՍԻՄԷՅՈՆԻ ՕՐԱԳՐՈՒԹԻՒՆ

1820-ին ծնած եմ իմ բուն հայրենական գիւղը Հեթենք: Իմ հօրս անունը Դաւիթ, մեծ հօրս Սարգիս, մեծ հաւուս անունը Մարկոս, անոր հօր անունը Ղուկաս, անոր հօր անունը դարձեալ Սարգիս, եւ անոր մեծ հաւը հեղինցի տէր Աբրահամ: Մօրս անունը Ղուսմար: Մայրս կախարդութիւն կ'ընէր: Մարդիկ երբ որ հիւանդ ըլլային, կը կանչէին մայրս՝ ան ալ կ'երթար քիչ մը աղ կ'առնէր իր ձեռաց մէջ ու կը սկսէր յաճախ յօրանջելով եւ բերանը ծոմով կը պարծնէր, ու տէր «չար աչքը չար փուշ» չար փուշն ի կրակ, թէ ծուծն է՝ ծուծէն ոսկորին ելնէ, թէ ոսկորն է՝ մորթին ելնէ եւ խափանի»: Անդամ մը Վանքին առաջնորդը, կանչեց եւ գոմէջին վրայ աղօթել տուաւ:

Երբ որ մահտարածամը իմ հօրեղբայրը, անոր կնիկը եւ իմ մեծ հայրս սպաննեց՝ իմ հայրս, իս եւ մեծ եղբայրս Ստեփան առաւ եւ փախաւ Առաքելոց վանքը եկաւ, ուր որ իմ հօրաքոյրս անտես էր: Տուն մնացին իմ փոքր եղբայր եւ իմ քոյր Շուշան: Հօրաքոյրս ինծի քերական մը առաւ ու իս կարգալու տուաւ լուսարար Խալիֆա Ազամին քով:

Ան նոյն տարին ուսար առաւ Կարին, ու մարացիք նայեցան թէ իրենք պիտի զրկուին Հայաստան երկրէն, սկսան յարձակիլ հայոց ազգին վրայ, ու կողոպտեցին շատ դեղեր եւ վանքեր, Մշոյ Սր. Կարապետու վանքն ալ մտան եւ չարաչար թալլեցին. վարդապետները ժամուն պատկերներ վրանին կապելով ծածկեցին իրենց մերկութիւնը ու փախան վանքէն:

Մարացիք գանձ գտնելու համար Սր. Կարապետի գերեզմանը հիմէն քակեցին եւ շատ խորունկ փորելով տակն ու վրայ ըրին: Մարաց կնիկները կը փորէին, կ'ըսէին «Ո՛վ պառաւու տղայ, ե՛լ նայէ թէ քեզ ինչ կ'ընեն»: Աս անոր համար կ'ըսէին, որովհետեւ բնաւ հրաման չկար որ կնիկ մարդ կամ ազգիկ անոր գերեզմանին վրայ երթայ. Յօհաննէսին զլուխը կտրել տուող կնիկ ըլլալուն պատճառաւ:

Ամիսէն եւեւ կրեցին վանքէն ինչ որ կար — արծաթէ խաչեր, սրկիներ, կանթեղներ, շուրջառներ, չապիկներ եւ ուրիշ եկեղեցական զարդեր. ամէնը տարին. երկաթէ մեծ դուռներն ալ կտորտեցին եւ տարին: Կը բռնէին հոն մնացող միաբանները եւ սաստիկ տանջանքով կը ստիպէին որ ցուցնեն իրենց ոսկիի եւ արծաթի տեղեր: Վանքին ցորենները, ալիւրները, զրքերը եւ այլ ամէն ունեցածները տարին, լոկ պատեր եւ սենեակներ մնացին: Ժամուն մէջի քարէ սիւններուն տակը կռանով աշխատեր են ծակելու ու ասոնք

չատ պատեր ծակեր են եւ գետիններ խորունկ փորեր են ըստակ գտնելու համար: Հին ձեռագիրներ մեծ սանի մը մէջ կը լեցունէին եւ վրան ալ ջուր, ու փայտով կը խոտնէին, այսպէս շատ հին ձեռագիրներ կորսուեցան: Մարաց մեծերը վանքէն տարած ոսկեղօծ զարդեր եւ ոսկեթել շուրջառներ ու չապիկներ իրենց կնիկներուն ջօղ եւ վերարկու շինեցին. եւ խաչեր ու սրկիներ իրանց ձիւրուն ռախդ շինեցին: Աս վանքի վարդապետներէն մէկ քանինը Առաքելոց վանք եկան:

Ես 9 տարու էի ան ատեններ, ու իմ ձայնս զեղեցիկ էր, իս կը կանչէին եւ մարերէն (քերտերէն) խաղ ըսել կու տային: Շատ անգամ Թարգմանչաց զերեզմաններուն արձաններուն տակը կ'երթայի եւ շատ աղօթքներ կ'ընէի ու անոնցմէ շնորհք կ'ուզէի որ իմաստուն ըլլամ: Երբեմն շատ լալէս եւ ան արձաններուն երեսը թախանձելէս զկնի հոն կը ննջէի, մեծ յոյսով կը ննջէի որ անոնք երազի մէջ ինծի կամ կորեկ, կամ գինի խրմնէին, որովհետեւ հին ծերերը կը պատմէին թէ երազի մէջ որ մարդուն որ կորեկ լեցնեն բերանն ի վար, ան ամենը շնորհք եւ իմաստութիւն է:

Մեր ժամանակի գիտութիւնը քերականութեան բառերը հօլովել եւ քանի մը բայեր խոնարհեցնելն էր: Շարական եւ նարեկ լրմնցնելն զկնի, կարգալ լրմնցուց կ'ըսէին, ուստի վարդապետներ եւ միաբաններ գիտէին քիչ մը շարական եւ գիրք կարգալ. ալ ինքզինքնին կարօտ չէին սեպեր ուրիշ բան սովորելու: Գիտութիւն կը ծառայէր տղիտութեան. ան որ քիչ մը հմուտ ըլլար բանի մը՝ ծաղր կ'ընէին զանիկա ըսելով՝ Արիստոտել եւ եղեր...:

Բարեկենդանի օրերուն Արեղաբոզ կ'ըսուէր: Աս օրերուն մէջ ամեն մէկը ազատ էր իր ուզածը ընելու եւ ըսելու. միաբաններ կը ժողովուէին եւ իրենց համար ոչխար կ'ուղէին մեծաւորէն ու կերակուր կ'ընէին, կ'ուտէին կը խմէին եւ կ'ելէին տնտեսի տան մէջ պար բռնելու, վարդապետները եւ տիրացուները մէկտեղ բռնութիւնով տնտեսն ալ կը հանէին խաղցունելու. երբեմն վարդապետներ ասանկ օրերու մէջ իրենց լաթերն ալ կը փոխէին: Ան վերջի գիշերօթան բաները որ սոսրը վանքին մէջ կ'ըլլար, ո՛չ Գօլթոյ ամենաչար փողոցին մէջ կ'ըլլայ եւ ոչ ալ քերտերուն մէջ:

Երուսաղէմայ վարդապետ մը եկաւ եւ Բաղէշու առաջնորդութիւն անոր տուին, ես ալ փոքրաւոր եղայ, եւ Բաղէշ գացի: Բաղէշ սաստիկ հիւանդացայ, մահուան մօտ: Ատ իմ վարդապետս շատ հպարտ եւ յամառեալ էր, իշխանները առաջ շատ սիրեցին զինք, բայց վերջը թշնամի եղան իրեն: Ամբաստու վանքէն սր. նշանը գտնալ տուին ու վարդապետին վրայ դրին այդ յանցանքը: Բաղէշ քաղաքը չամիչ շատ առատ էր եւ տման, ուստի ամէն մարդ իր տունին մէջ օղի կը հանէր, կնիկներն ալ չափազանց օղի կը սիրէին:

Հոտ Կարմրակ անունով ալ մը կայ, որուն համար կ'առատեցին, թէ Քրիստոսի քթին խլիքն է, շատ սաստիկ կը պաշտեն, մինչեւ անգամ շատ տաճիկներն ալ մոմ եւ մատաղ կը բերին անոր, եւ հայերու երգումը ան է, մահամետականներն ալ Կարմրակ կ'երգուին, շատ սուտ ու մուտ հրաշքներ կը պատմեն անոր համար:

Իշխաններ յաջողեցան իրենց ջանքին մէջ, ու ուրիշ առաջնորդ մը բերին իրենց, յանկարծակի եկաւ վրանիս, ու մեզ ձմրան դուրսը ըրին, քիչ մը եղ զողջաւ վարդապետը եւ հետերնիս առինք: Անկէց ելանք Մառնիկ եկանք, երկու օրէն ետք անկէց ելանք Ջրիկ գացինք, քանի մը օր հոն կենալէն վերջ ելանք Սուրբ Կարապետի վանք գացինք: Օր մըն ալ իմ վարդապետը սաստիկ ծեծեց իս, մինչեւ որ իմ քթէս արիւն վալեց, ես ալ զինք ձգեցի ելայ, վերջը մարդ ձգեց մէջը ու ուղեց, բայց ես ալ չըզացի. ժամանակ մը հացադործ եղայ, ժամանակ մըն ալ վարժապետի օգնական:

Ատ ատեններ վարդապետի մը փոքրաւորը իր վարդապետէն ըստակ զողջաւ ու վարդը հանեց իր քովէն, անոր տեղ ես գացի. ատ վարդապետը խօսք տուաւ ինծի որ իր երթալու վանքին վարժապետ եւ դրագիր ընէ իս: Ինք գիր եւ գրել չէր գիտեր, եւ վանքն ալ անանկ մարդ չկար, ուստի իր հետ մեկտեղ Սր. Յօհաննու վանք գացինք:

Ան եկող դարուն սաստիկ սով եղաւ Մշոյ երկրին մէջ, եւ շատ մարդիկ փախան ուստի երկիր եւ ուրիշ տեղեր գացին, ոմանք ճամբուն մէջ, ոմանք տուներու մէջ կը մեռնէին, հաց ունեցողները գիշեր կ'եփէին որ հոտ չելէ: Մարդուն մէկ ինծի լալով պատմեց իր գաւկիւն կակծալի մահը, միշտ հաց կ'ուզէր, կ'ըսէր՝ հայր կտոր մը հաց, հայրն ալ կ'ըսէ եղեր, թէ որդի քիչ մը համբերէ, կը բերեմ, նորէն կը սկսի թախանձել, հայր կտոր մը հաց, այսպէս կտոր մը հաց, կտոր մը հաց, շարունակելով մինչեւ վերջին շունչը հաց, հաց, ըսելով հողին կ'աւանդէ: Մէկ քանի ծնողք ալ չեն կրցեր դիմացեր իրենց գաւկիւն թախանձանքին՝ ջուրը կը ձգեն: Մարդոց կերպարանքը սոսկալի բան մը դարձած էր. իրենց երեսները մեռելի դոյն ունէր, ամուր չէին կրնար քալել, շուտով կ'իյնային:

Ատ ատեններ 13 տարու պատանի մը դարձանալի կերպով զողութիւն կ'ընէր, զոցուած դռներէն ներս կը մտնէր, եւ սեր ու հաց կը զողնար: Անգամ մը բռնուեցաւ ու ըսաւ թէ ինչպէս ընեմ, ուրիշ ճայ չկայ իմ մայրն ու եղբայրներս պահելու: Մշոյ վերին թաղին աւագերեցը՝ ժամուն խաչեր եւ կանթեղներ զողջաւ ծախեց եւ իր ընտանիքը ազատեց սովէն: Վանքին առաջնորդը իմացաւ եւ ամիսը տուաւ երեցին մօրուքը: Դարձեալ մշեցի երիտասարդ մը ինքզինք զողութեան տալով, շատ ժամեր աւրեց, եւ շատ սեղաններ կողոպտեց: Երկրին կատավարիչը կտրեց իր երկու ականջները, բայց օգուտ չեղաւ, իր մէկ ձեռքն ալ կտրեց, տակաւին մէկ ձեռքով շատ ժամեր կողոպտեց: Ատ երիտասարդը կ'ըսէր կառավարիչին. «Սուրբեր ի՞նչ կ'ընեն ոսկին արծաթ, ոսկին արծաթ վարդապետները ուտելուն տեղը, ես կ'ուտեմ, վարդապետները ինձմէ աւելի չար են»: Սովէն ետք ժանտախտ հիւանդութիւն ինկաւ, ես Սր. Յօհաննու վանքէն փախայ Առաքելոց վանքը գացի. հոն կուրաւցի Պետրոս եպօ. աքսոր էր, անոր քիչ մը գրագրութիւն ըրի, եւ անկէց ալ փախայ Սասուն գացի Մատին Առաքելոց վանք, 15 օր հոն կեցայ, նորէն մեր տունը դարձայ, ու անկից ալ ելայ Խուր երթալու: Մինչեւ Տիգրանակերտ գացի, եւ ուղեցի որ ան տեղաց առաջնորդին քովը մտնեմ որ իմ ուսումս կատարելագործեմ, բայց ան չընդունեց իս. դարձեալ տրտում եւ

յուսահատ Խուր դարձայ, Սր. Յօհաննու նուիրակը թող չտուաւ իս, իր հետը պտտցուց այն ձմեռը թեմին մէջ, եւ իրեն գրագրութիւն կ'ընէի. անոնք որ իրենց հոգեբաժին իրենց կենդանութեան կու տային, գիր մը կը գրէի եւ կու տայի անոնց՝ նուիրակին ձեռքով, ան գիրը պիտի պահէր մինչեւ իր մահուան ատենը՝ որ ալ ուրիշ մարդ հոգեբաժին չառնէր:

Ատ նոյն վանքին մէջ ծերունի վարդապետ մը կար, որուն նման բնաւ չկար ան երկրին վանքերը, իր աչքերը կոյր եւ ականջները խուլ էին, շատ պոռալով հազիւ թէ կրնար հասկնալ, շատ անգամ կ'երթայի ատ մարդուն քովը, իրմէ իմաստուն խօսքեր լսելու, Շարականէն, Նարեկէն եւ սր. զրոց խօսքերը կը մեկնէր ինծի:

Ատ գարնան երկու ելիտի վանքը եկան. մէկը ինքզինք հիւանդի տեղ դրաւ ու կեղծեց թէ գիւհար է, մեծաւորը հրաման ըրաւ որ Խիճ Աւետարանը բանանք այդ ելիտիին վրայ, որ բժշկուի եւ վանքին մատաղ բերէ:

Քանի մը օր կենալէն ետքը, գիշեր մը մտան ժամուն մէջ, Խիճ Աւետարան, Անանիա Առաքելոյ Աջ, Սր. Յակոբայ Գաղաթ, եւ ուրիշ վեց մասունք ալ, 23 խաչ, շուրջառ զողջան առին տարին:

Հին գրչագիր փնտռելու եւ օրինակելու շատ փափաք ունէի: Առաքելոց վանքին մէջը երեք էջէն մաղաղաթ ճառ մը կար մեքորպեան զրով, անկից շատ քարոզներ օրինակեցի, եւ վանքի հին գրքեր քակեցի եւ կարդացի: Վեց Հագարեան կար, շատ աղնիւ եւ զեղեցիկ զրով, քիչ մը անիկայ կարդացի, բայց բան մը չը հասկցայ: Ինծի մեղք չէր երեւնար կախարդութիւն ընել, բայց մեղք կ'երեւնար թէ որ սպօրինաւոր միջոցի մը համար գործածուէր: Իմ վարժապետն էր վանքի թօփուղեան Յակոբ վրդպ.՝ որ վերջը Լիմ Անպատայ վանահայր եղաւ:

Ատ ատենները իմ վարժապետէս նամակներ եկան ինծի, ան կը հրաւիրէր Անպատ տանելու: Ես միտքս աւելի հաստատեցի Երուսաղէմ երթալ, քան թէ անպատ: Իմ հայրս եւ մայրս բնաւ չէին ուզեր որ իրենցմէ հեռու երկիր մը երթամ: Իմ հայրս շուտով աղջիկ մը խօսեցաւ ինծի համար որ ամուսնացնէ, ու կապէ իս: Շատ ցաւով կը յիշեմ որ օր մը իմ ծերունի հայրս իս շատ խրատեց ու ըսաւ այսպէս. «Որդի, դուն կ'երթաս ուրիշ երկիր ու գֆու հայր, եւ գֆու մայր տրամուրեան մէջ կը քողուս, մեր արցունքներէն դուն կուշտ պիտի չուտես»: Հօրս արցունքներ զօրաւոր կ'ըլլային քանի մը օր մտքիս զեկը դարձնելու որ չերթամ, սակայն կրկին կը հաստատուէի երթալուն վրան: Վերջապէս Օպոստոս ամսուն (1842) վանքէն ելայ Յարութիւն վրդպ.ի հետ մէկտեղ, տիրացուները հետս մինչեւ Մուշ եկան, քանի մը օր Մուշ կեցանք, բարեկամներ տեսանք, եւ Մուշէն ելանք Սր. Կարապետի վանքը գացինք, անկից Բալու գացինք, ու ան երկիրները ժողովք ընելով գացինք մինչեւ Եղեսիա, հոն Յարութիւն վրդպ. ծայրադոյն իշխանութիւն առաւ նիկողոյսու կախկոպոսէն: Երբ Հալէպ գացինք, հոն վրդպ. իր միտքը փոխեց պապական ըլլալու, զինք համոզեցի որ անանկ բան մը չընէ եւ մեր ընկերութիւնը չը կտրէ. չհամոզուեցաւ, հոն Բերիայի մէջ կուլ ըրաւ հետս, իս եւ իր փոքրաւորը ծեծեց, բոլոր ձիերը առաւ, ու ալ հետս հաց չկերաւ.

ես ալ հոգևտուն ինծի սենեակ մը առի, եւ էջ մըն ալ զնեցի որ ուխտաւորաց հետ Երուսաղէմ Երթամ: Գնացինք Երուսաղէմ, հոն ինծի դարպաս չառին՝ ես միարան կ'ըլլամ ըսի, իս Պատրիարքին փոխանորդին՝ Կիրակոս եպիսկոպոսին փորձաւոր տուին: Իմ պարզմտութեան եւ հաւատարմութեան համար շատ կը սիրէր իս: Ինք աւագ սարկաւազ մը ունէր իր քովը, որ ան ձգէր իր փիլոնը, անիկա քէնց հանեց, ու հապէշ մը առաւ իր քովը եւ իս սարկաւազին տեղը անցուց: Ես շատ կը կարգայի հայ վարպէ. մեկնութիւնները, փափաքեցայ իրմէն կրկին ճարտասանութիւն առնել, բայց չտուաւ: Արմաշու վանքէն վարժապետ մը եկաւ ուխտի, Պատրիարքը անիկայ պահեց որ աթոռին միարաններուն գիտութիւն սորվեցնէ, անիկց կրկին ճարտասանութիւն դաս առի, եւ քիչ մըն ալ խտարէին:

Ան նոյն տարին որ Երուսաղէմ Եկայ, հօրս եւ մօրս պատանք եւ մոմ խրկեցի զնաց: Միարաններէն յատուկ վարդապետ մը կայ աս դործին վրայ գրած, կտաւ կ'առնէ աժան, ու անոր վրան արձեւ կերպարանք մը կը շինէ Քրիստոսի խաչելութիւն՝ եւ մէկ հատը քանի մը զահեկանի կը ծախէ: Աս պատանքներուն գինը շատ մեծ գումար մը ստակ կ'ըլլայ: Կ'առնեն այլ ապրանքները հոն պացող ուխտաւորները ու կը տանին գերեզմանին քարին վրայ կը քսեն, որ իրր թէ լուսաթաթախ կ'ըլլայ, ու այսպէս ամէն մարդ իրեն համար եւ իր բարեկամներուն համար կը տանին իրենց երկիրները: Մինչեւ որ իմ խրկած պատանքները կ'երթայ, հայրս կը մեռնի ու առանց Երուսաղէմի պատանքի գերեզման կը դրուի:

Տեառնդառաջի մօտ ինծի խօսք եկաւ, թէ թող պատրաստուի որ Տեառնդառաջին սարկաւազ ձեռնադրուի: Ես պատասխան տուի թէ չեմ ըլլար. լուսարարապետ եւ ուրիշ վարդապետներ կանչեցին իս եւ խրատեցին որ աս բանը չը լսուի ինձմէ եւ թէ Պատրիարք չլսէ ըսին: Բայց ես յայտնապէս խօսեցայ թէ սարկաւազ չեմ ըլլար: Իմացաւ Պատրիարք, սրդողեցաւ եւ ուզեց որ զիս ծեծէ, սակայն վարդապետները աղաչեցին եւ իս ազատեցին: Իմ սենեակս առին ինձմէ, եւ իմ հանդերձներս առաւ իմ եպիսկոպոս, ու իս արտաքսեցին, քովը ցուրտ ու դատարկ սենեակ մը դրին: Երուսաղէմի մէջ որ ամենքն ալ առաջուց մտերիմ բարեկամ էին, երկու բարեկամ մնացին, մէկը իմ երկրացիս որ նորեկ արեղայ մըն էր, եւ երկրորդ՝ իմ եպիսկոպոսի մայրապետը. ա'լ ուրիշ բարեկամ չունէի: Տորեկները կը փախէի Ձիթենեաց լեռը, ու իրիկունները մըթնուն կու գայի վանքը:

Օր մըն ալ լուսարար եկաւ, ձեռքէս բռնեց եւ հանեց դասէն, ըսելով որ Պատրիարքը չ'ուզեր որ իր աչքին դէմը երեւնաս: Ա'լ մէկը երեսս չէր նայէր, ամենքն ալ կը մեղադրէին եւ իմ անմտութիւնս կը պախարակէին ըսելով՝ շատերը իրենց կեանքը սաստիկ նեղելով եւ խեղճութիւնով հոս շատ տարիներ կ'անցունեն սարկաւազ ըլլալու համար, ու տակաւին քիչերուն ձեռք կ'անցնի, իսկ քուկդ երեք տարի լման չեղաւ, քեզ սարկաւազութեան կը հրաւիրեն, դուն չես ըլլար: Ոմանք ալ նախանձութեան համար աւելի կը քաջալերէին որ սարկաւազ չ'ըլլամ:

Ճշմարիտ է որ շատ վրդպաներ եւ սարկաւազներ կային, որոնք եպիսկոպոս

կամ ուրիշ երեւելի վրդպաներէ պաշտպանող չունէին, սաստիկ յուսահատութեան եւ տրտունջի մէջ էին: Այս տեսակ մարդիկ բնաւ երբեք չէին ուզեր որ նոր միարան մը կամ ձայնաւոր մը մնար Երուսաղէմի մէջ: Պատրիարքը հրաման ըրած էր որ Եսասաղնիս իս ծեծէ, վանքին դուռը տարաւ իս, իմ նոր հանդերձները հանեցին ինձմէ, ու հին կրտորտած շալ մը թողուցին վրաս, բռնադատեցին իս որ վանքէն երթամ: Ես շատ թախանձեցի որ կենամ մինչեւ մեծ Չատկին, բայց դարպասօճին շատ յիշոց տալով, Չորիի մը վրայ դնել տուաւ իս ու փոխեց:

1845-ին Ելայ Երուսաղէմէն, անկէց Եաֆա եկայ, հոն Դաւիթ վրդպ. ին նամակ եկած էր, որ համոզէ իս կրկին դառնալ Երուսաղէմ սարկաւազ ըլլալու: Պէյրուզ պացի, 12 օր կեցայ, Պետրոս վարդպ. որ առաջուց կը ճանչնայի հոն տեսայ իր հանդերձով եւ մօրուքով, որ Մաշտոցականաց ժամը չէր երթար, այլ ամերիկացուց քարոզչաց հետն էր: Ուրիշ տիրացու մըն ալ կար հետս, որ Երուսաղէմէն վաճառէր էին, սղերդցի էր: Անկէ նաւը մտայ 1845-ին ու դիմեցի Իզմուռնիայ եւ Կոստանդնուպոլիս: Իզմուռնիայ ամերիկացի քարոզիչներ գտայ, եւ հետս Աւետարան մը ունէի որ Երուսաղէմին մէջը ուրիշ մէկցի վրդպ. ի մը օչնութիւնով մարաց լեզու թարգմանած էի: Երկուսու նստայ ու Պօլիս Ելայ, ուրիշ պատանիի մը հետ Եաղճի խան պացի: Պօլիս ձեմարան մտայ գիտութիւն սորվելու, ես կարծեցի թէ բոլոր աւետարանականները (բողոքական) անկեղծ եւ արդար են, ուստի իմ ոսկիներս որ Երուսաղէմէն հետս բերեր էի, գլխուս բարձին տակը կը դնէի չըխորհելով թէ պիտի գողցուի: Օր մըն ալ նկատեցի որ տարեր են, կառավարիչին ըսի, ըսաւ որ չեմ գիտեր, թէ ո'վ տարեր է:

1849 Յունիսի 6 Նիկիոմիդիայի Աւետարանական դպրատունը վարժապետութեան պաշտօնով պացի եւ հոն կեցայ: 25 աշակերտներ ունեցայ, հին փլած շէնքի մը մէջ, որ երբ սաստիկ հով կ'ըլլար, վար կ'իջնէինք: Ամուսնացայ 1850 աշնան ամիս Սեպտ. 17-ին:



1852 Օգոստոս 25, Կարին հասանք: Սեպտեմբեր 1. Թանը պացի եւ մէկցի 7 դերձակներու հետ տեսութիւն ըրի: Ինչ ծուռ ու վատ լուր լսեր էին իմ վրայովս, ըսին ինծի: Եւ ես ալ ցուցուցի իրենց թէ ես Աստուծոյ Աւետարանին կը հնազանդիմ եւ անոր կը յանձնեմ ինքզինքս եւ ասանկ խօսքեր ըրի եւ մեկնեցայ հոնէն: Այս իրիկունը շատ խօսեցայ Խնուսի եղբայրներուն հետը եւ իրենց նախնիքներէն մնացած սովորական աղօթքները գրեցի, այս աղօթքները իրենց աշխարհաբառ լեզուովն էր ու Քրիստոսի բարեխօսութիւնովն էր:

Սեպտ. 7. Կարինէն Ելանք եւ Եղբայրները ու մը. Փիփոթին հետերնիս եկան մեզ ճամբու դնելու. ժամէն էլել հետերնիս եկան. աս կարճ ճամբորդութեանը մէջը քաջալերական եւ օգտակար խօսքեր խօսեցանք Եղբայրներուն: Սարկաւազ վարդապետին մնաս բարով ըսած ատենս արցունքով լեցուց իր աչքերը ու ձեռքերս բռնելով եւ երեսս համբուրելով ետ դարձաւ: Ան

նոյն իրիկունը Թաթուրիկ զեզը իջանք, սա զեզին քահանան բաւական քակուած էր նախապաշարմունքներէ. լսեր է Մկրտիչ վարդապետէն Ղարսայ վանքը բաւական արթնացած էր, բայց ասոնց մեղքին վատթարութիւնը իմանալու. անանկ վարդապետութիւնով մը խաշակնքեց իր երեսները սեղանին վըրայ, որ հազիւ թէ մէկ քանի հոգիներ իմացան, սա բանը ընելով մեղի եւ անոնց բարեկամութիւնը բրաւ:

Սեպտ. 8. Իրիկուն Չաուրմէ եկանք ու Մալօի տունը հիւր եղանք: Երկու բազիլէցի եւ մէկ զիւզացի քովս նստեցան, որոնց հետ երկարօրէն խօսեցայ:

Սեպտ. 9. Մը. Տընօր եւ Ե. Յովհաննէս Բերդը գացին Խնուսի կառավարչին հետը խօսելու մեր հարածուած եղբայրներու վիճակին վրայով, որոնք սր վըռնաուած էին զիւզէն եւ իրենց արտերը չօրցած եւ ապականուած էին անտերունջ ըլլալէն: Շատ երկար խօսեցայ զեզին ու յայն հետը, սա մարդը իրենց զեզին քահանային պատմութիւնն ալ ինծի բրաւ, որ 60 տարի առաջ ճանչցուցած է շատերուն թէ եկեղեցին մոլորութիւն ունի, ուստի բոներ շատ չարչարեր են ատ քահանան, ան ալ վախէն մահմետական կրօնքը ընդուներ է ու ապատուեր: Ուրիշ մարդու մըն ալ երկու ականջները ու քիթը կտորեր են մեր հայերը, իսկ մնացածները վախուն տեղերնին սասաներ են, բայց մինչեւ հիմայ ատ զեզին մէջը կան քանի մը տուներ, մեր բարեկամներն ալ անոնցմէ են: Մալօին մօրը հետ խօսեցայ յաւիտենական դատապարտութեան եւ փրկութեան վրայով: Խնուսէն ելանք զիւզեր մը քիւրտի զեզ մը կեցանք Չարպուհուր զեզին վերեւը, ու հետեւեալ օրը Մուշ գացինք: Ան իրիկուն հոն անցուցի, եւ հետեւեալ առաւօտը մինակ ելայ մեր զեզը երթալու՝ Հաւատովորիկ:

(Մանօթ. 1852 Սեպտ.ի վերջերը Խնուսէն կը մեկնի դէպի Մուշ, ուր կը մնայ ատեն մը, ապա կ'անցնի Տիգրանակերտ, Խարբերդ, Արարիկ (որուն համար օրագրութեան մէջ կ'ըսէ. — Արարիկը իջանք Հէճինեան Պրն. Կարապետին տունը. իր երկու եղբայրները աւետարանական էին, բայց ամուսիններն աստիկ Մաշտոցական: Շարունակելով իր ճամբորդութիւնը կ'երթայ Տիվրիկ, Սննար, Սեբաստիա, Եղնիկա, Ամասիա, Մարսըվան, Սամսոն եւ Խոնկէ Կ. Պոլիս:)

1853 Յուլիս 20. Կարինէն ելանք ժամը 5-ին. ան զիւզեր Փալանթօքանին լեռանը տակը կեցանք, ու հետեւեալ օրը անկից ելանք ժամը 6 ԽՂՏԻ Ղուրին վրայ եկանք: Աս Ղուրին ձախ կողմը ուրիշ Ղուր մըն ալ կար. ասոնք բլուրի մը տակը կը միանան իրարու հետ ու կ'երթան Երասխ զեզ կը խառնուին: Ան իրիկուն Թաթուս զեզին վերի կողմին զեզին աջ կողմը իջանք, ուր որ երկու կռիւ եղաւ, մէկ մը ուրիշ ճամբորդ քիւրտեր եկան ու դաշոյն եւ ատրճանակ քաշելով կ'ուզէին մեր հետ եղած քիւրտը մեռցնել, քիչ մը ձեռքով եւ գաւազանով իրարու զարկին: Երկրորդ մեր Ղորեպանները կռիւ ըրին եւ մէկը մէկու զարկին:

Յուլիս 22. Ելանք զիւզեր ատեն Երասխ զեզը անցանք, եւ նոյն օրը Չէվիրմէ եկանք:

Յուլիս 25. 5 աշակերտով սկսաւ դպրատունը: Մալօի հետ խօսեցայ,

թէ դուք իրարու վրայ վստահ ըլլալու էք, ու թէ ամէն բանի մէջ անխարդախ եւ անկեղծ ըլլալու էք: Ինծի ըսաւ որ, պապայիս զերեզմանին վրայ երթանք ու երկու զլուս Աւետարան կարդանք, ըսի թէ իր հոգիին համար կարդանք, չէ՛, ըսաւ. հայերը տեսնեն ու ըսեն թէ ասոնք ալ իրենց զերեզմաններուն վրայ կը կարդան, չէ՛ որ ըսի, ծուռ զաղափար տուած կ'ըլլանք անոնց: Պրն. Բարսեղին հետ խօսեցայ վարժապետի մը պատրաստութեան վրայօք: Տիրացու Մաղաքին հետը խօսեցայ. ուզեց ինձմէ Մատթէոսին մեկնութիւնը:

Մերունի մարդ մը կար հոս, իրիկուն քովս եկաւ ու պատմեց . . . . . վրայով որ 60 տարի առաջ ըսկսեր է իրենց մէջը աւետարան քարոզել, եւ 13 անձանց չափ կրկին գաղտուկ մկրտեր է, որոնցմէ երկուքը տակաւին մինչեւ հիմայ ողջ էին, բոներ են այս երեցը ու էջմիածին տարեր են եւ բանտ դրեր են, կէս զիւզերին կ'ըլլէ սենեակին կապերտը կտոր կտոր կ'ընէ եւ չուանի պէս կը շինէ պատուհանէն կը կախուի եւ կը փախչի, ու աս փախչելով կ'երթայ Լոնտոն:

Քանի մը տարիէն վերջ կրկին կը դառնայ կու դայ Խնուս. սա քահանան զիրք մը ունի եղեր որուն անունը Բանալի Բշմարտութեան է եղեր: Աս զրքին մէջ հայոց եկեղեցիին մոլորութեան վրայով շատ բաներ գրուած է եղեր, եւ իրենց համար աշխարհարար աղօթքներ ալ: Մաղաքը եկաւ ու հարցուց ինձմէ թէ՛ Քրիստոս քանի՞ անգամ լացաւ, երկու անգամ ըսի, չէ՛ ըսաւ հինգ անգամ լացաւ, երբոր բացի ու իրեն ցուցուցի ընդունեց: Աս Մաղաքը սա Խնուսայ փրկիստիան էր, բայց աշխարհարար զիրք մը դժուարաւ կրնար կարդալ, հպարտանալով մը ըսաւ, ես Աստուածաշունչը մաղեր եմ, եւ ամէնը փորիս մէջը լեցուցեր եմ:

1853 Օգոստոս 1. Բերդը գացինք բղեչիւր տեսնելու, հոն հարցուց թէ դուք անզլլացուց կրօնակի՞ց էք: Սուրճ խմեցինք եւ ելանք կրկին զեզերնիս դալու: Աս իրիկուն Սարգիս անունով հակառակ մը կար՝ ըսաւ թէ բրօղեստաններուն երեցը հոս պիտի չթողունք, կամ ան պիտի կենայ կամ ես եւ ուրիշ վատ խօսքեր բրաւ: Այս զիւզեր գողերը մաշտոցականաց ժամը մտան ու տարան բուրվառը, երեցին փիլոնը ու կանթեղները եւ ինչ որ գտած են: 90 տարուան ծեր քիւրտի մը հետ խօսեցայ ըսաւ ես ալ կը հնազանդիմ ատ օրէնքին, ատիկայ Աստուծոյ օրէնքն է:

Օգոստոս 20. Աս օրերուս մարդիկ քիչ կու գան կ'երթան քովերնիս, Ռուսիայի պատերազմին պատճառաւ, կը խորհին որ գուցէ ուսը առնէ աս տաճկաստանի հող ու զիրենք աքսոր քէ կամ չարչարէ, անոր համար մեզմէ քիչ մը հեռու կը կենան, ոմանք ալ կ'ըսեն, թող ան բանը անցնի, անշուշտ պիտի յարինք Աւետարանին:

Մեր եղբայրներէն որ 75 դահեկան կ'ուզէին զեզին ծախք որ տայինք Մելիքին, Ալի աղային զրեցի թէ մենք հայ չենք որ վճարենք ատ ըստակը, բաշխեց, ալ չառաւ մեզմէ. գեղէն 800 դահեկան առին:

Օգոստոս 23. Աս իրիկուն ժամը 5-ին պրն. Մխիթարին հետ ելանք զեզէն ու Աղուէրան գացինք, որ հետեւեալ օրը Մուսուլէն եկած զօրքին հետը ճամբայ ելանք Կարին երթալու: Քիւրտերը եւ զօրքը կռիւ ըրին սա զե-

դին մէջը, ու խոսովեցան զօրքին մարդիքը ելան գեղէն ճամբայ Լըթալու: Մինչեւ ժամը 5-ին սա գիշեր ճամբայ գացինք:

Օդոստոս 25. Թաշքէսան գեղը իջանք, քիչ մը հաց կերանք ու ելանք, ցորեկը ժամը 8-ին Կարին հասանք:

Սեպտեմբեր 2. Սուբոտիցի վարժապետ պրն. Յարութիւն քոփս եկաւ եւ տեսութիւն րբաւ հետո, գանապան բաներու վրայով խօսեցանք իրարու հետ, Արջուց վանուց պատմութիւնը րբաւ ինծի, որ Ղազար վարդապետը հոն առաջնորդ ըլլալու գացեր է, ցուցուցած են իրեն ու ըսած են ամեն նոր եկող առաջնորդ սա արջու գերեզմանին երկրպագութիւն պիտի ընէ եւ թէ ան գերեզմանին քովը աղբիւր մըն ալ կայ որ ցուապարներուն բժշկութիւն կու տայ: Ղազար վարդապետը կը բարկանայ ու ան ջուրը գոցել կու տայ, եւ կ'ըսէ թէ դուք սաստիկ կոտապաշտ էք: Ատ բանին համար Ղազար վրդպ.ը իբրեւ հերետիկոս համբաւուեցաւ ու պատիւէ ինկաւ ան երկրին մէջ:

Սեպտ. 29-ին Կարինէն ելանք. սա իրիկուն չրկրցանք Հերտեւ հասնիլ, Աղճալար հասանք ու տաճկի մը տուն իջանք, հետեւեալ օրը Հերտեւ գացինք հայու մը տուն իջանք: Պետրոս վրդպ.ին հետ շատ օգտակար նիւթերու վրայով խօսեցայ:

1853 Հոկտեմբեր 1. Վարդապետը եկաւ իս ճամբու դնելու տան տիրոջ հետ: Աս իրիկուն Քիւլլու իջանք քիւրտի մը տուն, լու եւ փոշի շատ կաք սա իջեւանին մէջը, շատ անհանդիստ եղանք: Պրն. Վարդաւանին հետ շատ օգտակար խօսքեր խօսեցայ: Երասխ գետին վրայ երկեցինք եւ աղօթք ըրի:

Հոկտեմբեր 2. Ելանք Ձէվիրմէ գնացինք, եղբայրները տեսայ եւ ուրախացայ. Մալոյին սենեակը իջանք շատ նեղութիւն կար տեղի եւ մաքրութեան կողմէ, ընտանիքս մէկ կողմ նստած, մարդիկ բազմացան, Կարինէն բերած երկու վարպետներն ալ մեր սենեակն էին: Քաղքկայ երէցը իս կանչեր էր, գացի, ժամը մինչեւ 5-ին խօսեցայ:

Հոկտ. 5. Աս իրիկուն Մալոյին դէպը էրեցին:

Հոկտ. 6. Այլ աղային փոքր նամակ մը խրկեցի, մեր տունին շինուելուն համար: Ինք մարդ խրկեց ու 400 դահեկան ուղեց Թամէի աղբիւնին համար:

Հոկտեմբեր 17. 1 նամակ Նատր աղային գրեցի մեր տունին շինութեան համար:

Հոկտեմբեր 18. Այսօր ուէյը Նատր աղին խրկեց թէ գեղացիք տան տեղ չեն տար: Անկից պատասխան եկաւ թէ քու եղբայրդ թող տայ տան տեղ մը:

Հոկտեմբեր 19. Այսօր շատ տրտմութեան մէջ եմ, ո՛չ տունի տեղ կու տան եւ ո՛չ ալ ուղղակի խօսք մը մեզի:

Հոկտեմբեր 20. 1 նամակ Մր. Փիփօթիին գրեցի՝ որ խրկէի երբ որ թղթատարը ճամբայ ելաւ, կառավարիչին կողմէն մէկ քիւրտ մը եկաւ ու աղաչեց որ չխրկեմ, եւ ըսաւ թէ ինք արտօնութիւն ունի կառավարիչին կողմէն ինծի տունի տեղ տալու: Իսկոյն եկաւ եւ տեղ ցուցուց, արտին տէրեքքը չուտով ժողովուեցան եւ կոխ ըրին ու դէմ կեցան տալու: Վերջապէս շատ վէճ

եւ հակառակութիւն ըլլալն ետք գացին: Բանուորները սկսան աշխատիլ, ես յուսով լեցուեցայ թէ ալ խոսովութիւն պիտի չըլլայ:

Հոկտեմբեր 21. Երբոր այսօրուան թղթատարը ճամբայ ելաւ Կարին երթալու, չուտով բանուորները քոփս եկան ու բռին թէ արտին տէրը մեզ վանուց անկից, ի՞նչ ընենք: Դժուար մտածութի մէջ ինկայ ան ատեն, թէ որ առջի օրուան գրած նամակ տայի թղթատարին, շատ ծախք պիտի ըլլար Կարինէն հոս մարդ բերելու, ու գուցէ անոր երթալն ետքն ալ կրկին թող տային մեզի շինելու եւ մենք ալ ու մեր ըրած բողոքն ալ սուտ պիտի երեւնար մարդոց: Բայց թէ որ ան նամակները չի տայի, կասկած կար թէ սա տեղաց կառավարիչով պիտի չը լրմննար մեր գործը: Շատ խորհեցինք, չխրկեցի առջի օրուան նամակները:

Աս օրերս քիւրտերը որ պատերազմի համար ասկից կ'անցնին կ'երթան, շատ նեղութիւն կու տան մարդոց. քանի մը անձանց վարտիկները հանեցին, գուլպան առին, ըստակ եւ արտերուն մէջը բանուորներուն զըլխարկները բռնութեամբ առին: Այսօր կէսօր որպէս թէ քիչ մը սպահով եղայ՝ թէ ալ կոխ պիտի չըլլայ:

Կրկին կառավարիչին մարդը եկաւ ու ըսաւ թէ, թող ան մարդուն արտին մէջը չը բանին, մինչեւ որ ես մարդ խրկեմ, եւ իրենց տեղը ցոյց տամ: Այսօր կառավարիչն նամակ առի որ գրած էր, թէ ըսկսած տեղը չիմէ:

Հոկտեմբեր 22. Ատափազարէն Յ. Պ. Տ. Սահակեան ստորագրութեամբ նամակէն (նամակագիրը ընդի բարեբոցի է). — «Տարակոյս չունիմ եղբայր քէ դուն շատ գործ պիտի ունենաս Խնուսի մէջ, շատ կ'ուզեմ որ որչափ որ կարելի է իմանաս ատի տեղեկութիւնով, ու համաձայնաբար գրես ինծի քէ քահանան ինչ յանցանքով բռնուած եւ խրկուած է էջմիածին: Արդեօք իր արքունիքի մէջ պատահաւով, կամ քէ Անգղիայէն վերադառնալէն վերջ սկսեցի է խօսիլ ու քարոզել ատի տեղապաշտութեան դէմ, քէ ո՞ւր տեղէն ստացեր է ան ձեռագիր գիրքը «Բանայի ճշմարտութեան» ու ի՞նչ է եղեր ան քահանային վարքը, ու ինչո՞ւ ուրացեր է քրիստոնէութիւնը: Քանի որ ան քանի մը մարդիկ դեռ կենդանի են, ու քանի որ դուն հոտ ես, շատ կ'ուզեմ քաջ տեղեկութիւն ձեռք բերել անոր վրայով, ու քէ որ կարելի է բուսականներուն վրայով ալ: Կը խնդրեմ եղբայր որ մարդասէր ըլլաս գրել ինծի Աղմաւելիքի դիմացը եղած Ղամբ բերդին վրայով. համարողութեան մէջ պիտի դնեմ ասոնք: Կը թուի ինծի քէ Ձէվիրմէի մօտն ալ անանկ երեւելի հին բան մը կայ ըսուեցաւ ան ատեն, նշանակելու արժանի բան մը քէ որ կայ մարդասէր եղիք անոր վրայով տալ ինծի համաձայն տեղեկութիւն:

Կը յիշե՞ս արդեօք որ կարինի մէջ ալ պատմութիւն ըրին մեզի քէ արքուն մէկը կայ եղեր, ու կաղ Յակոբ աղան մատներ է բղշխիմ ու կտրել տուեր է անոր քիթը, քէ որ կրնաս բաւական յիշել անոր վրայով, մարդասէր եղիք համաձայն գրել ինծի անոր վրայով:

ՄԱՆՕԹ.— Թուի թէ ակնարկութեանը Ձեւիմէ եւ Փայի կամ Հայի գիւղերու սահմաններու վրայ գանուող քարայրներուն մէջ եղած քարակոփ եկեղեցիի մասին է (Ե. Յ. Մ.):

Կը կարծեմ թէ լաւագոյն պիտի ընես թէ որ գրես Կարին՝ Պրն. Յակոբին ու իմանաս իրմէն ու վերջը գրես ինձի, կը յուսամ թէ պիտի ներես ինձի ասանկ նեղութիւն տալու համար:

Շատ ուրախ եմ սիրելի եղբայր այն պատրաստած բառարանին համար ու մեծապէս շնորհակալ եմ ձեզմէ անոր համար, ու կը յուսամ ալ թէ աշխատութիւնդ պարագ պիտի չելլէ, հասցա օգտակար պիտի ըլլայ ժամանակին ազգերնու մէջ: Թէ որ կը հանիք գրեցէք ինձի, թէ կա՞նք Հայաստանի մէջ աս բառերուն հայերէնները: — *Թարխանայ, օլուի:* Ու մեծապէս շնորհակալ եմ ձեզմէ ան տուած աշխարհագրական լուրերուդ համար, ու յոյժ կ'ուզեմ լսել ան կերպ բաներու վրայով: Արդարեւ յոյժ գարմանալի բան մըն է այն ջուրը, թէ որ տեղացիներին ըսածին պէս կը սկսի վագել միշտ Յունիսի ու թերրորդ օրը, կամ թէ քիչ օրեր տարբերելով ամէն տարի, ու այսքան օրերու միջոց վագելէն ետեւ կրկին կը ցամփի:

Յիշեցէք եղբայր որ, երբ որ կը նախապահարդէիմք մէկտեղ 1852-ին, բաւական կը խօսէիմք ձեր սիրելի Հայաստանին բառերուն վրայով, որոնք չէին գտնուեր բառարաններուն մէջ, ինչպէս *պիտր, կոյթ, գարծինի, դառնճի:* Ասոնք չկան ձեր դրկած բառերուն մէջ: Նաեւ աղէկ կը յիշեմ որ երբ որ օր մը կ'անցնէիմք լեռներու մէջէն ձորի մը վրայէն, ու երբ հատաւ ձորը, ու մենք ալ դառնալու եղանք անոր ծայրին վրայէն, որ այն ծայրը լեռներու մէջն էր, այն ծայրին կամ անցքին համար անուն մը տուիր, որ կը գործածեն Հայաստանի մէջ, ան անունն ալ չկայ ատ բառերուն մէջ: Շատ կը խնդրեմ որ ուրիշ բառեր ալ եթէ միտքդ կ'իյնան հետզհետէ գրես ու զրկես ինձի»:

1853 Նոյեմբեր 19. Այսօր Մալոյին սենեակէն ելայ եւ իմ նոր շինած տունս եկայ, որուն պատերուն ձեւերը տակաւին թաց են: Այս երկու օրեր մէկ տեսակ մը գողութիւն եղաւ գեղին մէջ: Գեղին նախորդը մարդուն մէկուն գողը բացեր եւ մաքի մը գաղտուկ հաներ ու գէղերուն մէջ մորթեր կը քերթէ եղեր, շուտով կը բռնեն: Գեղը բերին եւ ատ մարդուն տունը մտան վեց ոչխարի ալ դմակ գտան, որ անոնք ալ քանի մը օր առաջ կորսուած էին: Բայց հայեր վախցան նախորդ քերպը դատաստանի քաշել, իրենց դէզերէն եւ մարդներէն վախնալուն համար:

Դեկտեմբեր 20. 4 սօմար ցորեն ձրի ժողվեցին գեղէն եւ քիւրտի մը տունին կառավարիչին հրամանաւ: Անոր ամէն կենդանիներ գեղացիք պիտի հողան մինչեւ գարուն ձրի, ու իրեն ալ վառելիք եւ ուրիշ պակասութիւններ պիտի հոգան:

1854 Յունիւլ. 14. Աս Խըթման, Բերդը՝ Դանիէլի գիրքը կարգալուծն համար իրար ձեծեցին, զբաղակալով զարկեր մէկուն զլուրը պատուեր են ժամուն մէջ: Խօյլու ալ ասանկ կռիւ մը եղաւ, ժամարարը թաղը գլխէն վար առաւ եւ շուրջառը մէկդի դրաւ ու գնաց մէկ քանի բռունցք մարդուն մէկուն գլխուն զարկաւ, անկից գնաց զգետներ հագաւ: Մէկալ մարդն ալ նեղուեցաւ իր ժամուն տուած Աւետարանը քաշեց տարաւ, եւ վարագոյրն ալ որ իրեւ յիշատակ տուած էր ան ալ առաւ:

Փետրուար 26. Բաւական խոտ դիպեցին մէկ տանիք մը եւ երէցը փրկուով կու գայ եւ ատ գէղին չորս կողմը կ'օրհնէ, ու ետքը հրաման կ'ըլլայ որ վառեն. ամէն մարդուն տունէն մէկ մէկ ցախէ աւելի փայտին ծայրը անցուցած կը սպասեն դէպին վառելուն: Վառածին պէս ամէն մէկ իր ցախէ աւելը կ'երկնցնէ կը վառէ եւ իր տանիքին վրայ տանելով կը զնէ եւ անոր լոյսով իր ճրպար պիտի վառէ: Եւ որչափ մանր տղաք կան՝ ան ատեն դուրս պիտի հանեն եւ Տերնտեսին զիմացը բերեն, որ շուտով ոտք ելլեն: Այն ցախէ աւելը բոլորը շէն վառեր, կը պահեն որ Զատիկ Խըթման իրիկունը անով կերակուր եփեն:

Աս երկիր սովորութիւն կայ որ կնիկ մը երբ որ դաւակ ծընանի, լրման քառասուն օր դուրս պիտի չելլէ եւ արեւ պիտի չտեսնէ. անանկ ալ նոր հարս մը ցորեկ ընա՛ւ դուրս պիտի չելլէ, գոնէ մինչեւ վեց ամիս: Աս Տերնտեսին օրը, տղարեւ կնիկը ա՛լ լման չը պահեր իր քառասունք, անանկ ալ նոր հարս: Քաւորը քիչ մը փոխիւնք կը շինէ եւ կ'երթայ հարսին տունը ու հարսը կ'առնէ եւ դուրս Տերնտեսին զիմացը կը հանէ, ա՛լ անկից ետք հարս ազատութիւն ունի երբեմն դուրս ելլելու:

Երիտասարդները պիտի ցատկեն եւ անցնին Տերնտեսին կրակէն, ու նոյն տարուան նոր փեսան ալ պիտի ցատկէ անցնի: Կ'երեւի թէ աս տղայ հանել եւ կրակէն անցնելը մեր հին կռապաշտ նախնիքներէ մնացած սովորութիւն մըն է: Էրած խոտին փոշին տուններին կը տանին ու կը պահեն ցորենին սերման մէջ, որ պարուն ցորենին հետք ցանեն, որ ցորեն շատ գայ:

Մարտ 15. Այի աղան հոս եկաւ ուրիշ գեղ մը երթալու եւ թրփատութեան հանդէսը կատարելու համար, եւ բաւ ինձի՝ Մելիքին այլի դակին համար կոյս աղջիկ մը պիտի ուզէ եւ շուտով պսակել պիտի տամ, ես իրեն ըսի թէ՛ անոնց օրէնք ո՛չ հրաման կու տայ որբեւայրին կոյսին հետ ամուսնանալու եւ ոչ ալ աս օրերուն մէջ պսակ ըլլալու, ես ընել կու տամ՝ ըսաւ:

Մարտ 29. Քանի մը օր առաջ Խոյլուայ ժողովուրդը ձեծեցին իրենց երէցը: Կառավարիչին դացին պանդատի:

Ապրիլ 27. Կովանդուկայ երկու հոգի եկան որ իմանան թէ մենք ի՛նչ տեսակ հաւատք ունինք. հասկցուցի մեր հաւատքը, եւ հարցուցի դուք քրիստոնէս՞ չէք, այո՞ ըսին:

Ապրիլ 29. Մարլոյայ մարդ կրկին քոյս եկաւ եւ տարած զբերքը ետ բերաւ, վրդպ. չը հաճիր բտելով: Իր հետք ուրիշ պատանի մըն ալ կար, Կտակարան մըն ալ անոր տուի, եւ յորդորեցի որ կարգայ, երկու օրէն վերջ պատանին գիրքը ետ խրկեց: Փայեկու մարդ մը ըսեր է որ ինք ուրիշ Աւետարանի չը հաւատար, այլ միայն Բերդի Աւետարանին (քանզի անիկա զրչեայ է):

Մայիս 1. Պրն. Գրիգոր՝ Բերդը գնաց խօսելու: Աստուածաշունչէն քիչ մը վկայութիւն գրեցի եւ Աստուածաշունչն ալ տարաւ:

Մայիս 3. Տէր Բարսեղ քոյս եկաւ երեք անգամ: Այս անձը այրի երիտասարդ մըն է, եւ շատ ալ խօսուած է իր վրայով, ինք ըսաւ՝ թէ որ իմ առաջնորդէս հիմա ինձի թոյլտուութիւն մը ըլլայ, կ'ամուսնանամ: Աստուծ-

մէն թողտուութիւն ունի՞ս հարցուցի ես, այո՛, ունի՞մ բաւ, ուրեմն ինչո՞ւ Աստուծոյ չես նայիր: Ես այսպէս տեսած եմ, այսպէս կ'ընեմ, ահա ա՛յն մարդիկ կը յայտնեն թէ իրենք ամուսնանալէն կ'արդիւնեն:

Մայիս 28. Այսօր մէկ տուն մը գացի, այն տունին տէրը հիւանդ ըլլալով խրկեր Աւետարան մը բերեր է Բերդէն, որպէսզի իր ցաւերուն բժշկութիւն տայ: Գացի հոն Աւետարանը բանալու եւ կարդալու. գեղացիք դիպուեցան տունին մէջ, Աւետարանին սիրոյն, սրովհետեւ այս Աւետարանին փրան շատ հաւատք ունէին: Աւետարանին անունը Մեռել Յարոյց Աւետարան էր: Քիչ մը խօսեցայ բազմութեան թէ շատ պարտական են Աւետարանին խօսքերուն հնազանդելու: 45 կամ 50 թաշկինակներով փաթթած հին Աւետարան մըն էր, վերջ ու առաջն ալ թափած էր: Կրկին փաթթեցի եւ տեղք դրի:

Մայիս 29. Հարամկու Առաքելի հետը խօսեցայ, ըսաւ թէ վրդպտ.ը միշտ իս կը խրատէ թէ՛ անոնք մուրեքալ են, անոնց հետ խօսիլ կամ գործ ունենալ ալ անփայլ է:

Յունիս 15. Բերդին այգապետ հայ իշխանը ծեծ կերաւ տաճիկ խատիէն, առանց օրինաւոր պատճառի, ու նեղանալով ինք եւ իր երեք զաւակները հոս եկան, քոյս տեսութեան եկաւ երէկ, այսօր ալ եկաւ եւ խօսեցաւ Մելիքի մասին:

Յունիս 24. Քառասուն Մանկանց աղբիւրը գացի գեղացւոց հետը, հինգ աղօթիքի շուր ելած էր, մինչեւ 20 օրէն էլեւ պիտի առատանայ: Հոնկէց ելանք Սօլլու եկանք, հոն բաւական խօսք եւ վէճ եղաւ դանապան նիւթերու վրայով: Մարդիկ ըսին մենք ալ պիտենք որ վրդպտ.ը մեզ կը խաբէ, բայց ի՛նչ ընենք, ասանկ տեսած ենք: Մարդուն մէկը մեր եղբայրներէն մէկուն հարցուց թէ՛ դուք կը հաւատա՞ք զՔառասուն Մանուկ. անոր մէկալ ընկերը ըսաւ անոր, անխելք մարդ՝ ատոնք զՍր. Կարապետ չեն հաւատար՝ որուն Քառասուն Մանուկը սէիս ըլլալու արժան չէ՛ ո՞ւր կը մնայ Քառասուն Մանուկ:

Յունիս 3. Պարաչօպանայ մէկ մարդու մը հետ բաւական խօսեցայ: Անթառամն ալ երկու խօյուցի կնիկներու հետ բաւական խօսեցաւ: Այս օրերս շատ մեծ վախ կայ՝ թէ որ ատճկի Կարսայ բանակը յաղթուի, քիւրտերը շատ մեծ վնաս եւ աւերմունքներ պիտի տան հայաբնակ գեղերուն: Գեղացիք ամէն մէկ իր ունեցածը Բերդը փախցուցին: Այսօր լուր եկաւ Գանուբի տաճկին բանակը եւ ճորոխ գետին ու Ախլցխայինը յաղթուեր ու ջրբուրդէր են: Մեծ սոսկում ձեռք մարդոց սրտերու մէջը աս լուրը:

Յունիս 4. Այսօր Մելիքին խաղ կանչողը եկաւ Բերդ գնաց կառավարիչին իմացնելու թէ քիւրտերը աս գիշեր Մելիքին ոչխարները կարտեր են թուրով:

Մելիք աս երկրին ամենէն հարուստ իշխանն է, եւ միշտ իր քովը երկու խաղ կանչող կը պահէ, մէկը տաճկերէն խաղ կանչելու, եւ մէկալը քիւրտերէն, երանի թէ անոնց տեղը աւետարանական քարոզիչ մը պահէր իջ տունին մէջ:

Յունիս 6. Պրն. Պետրոս Կարին գնաց հրացան բերելու:

Յունիս 10. Բերդի վարժապետ եկաւ եւ քիչ մնաց որ յայտնուէր, նուիրակը իրեն բեր էր որ, գնա՛ կղտի եղիր, ես քեզ թողութիւն կու տամ, ու բրթէստան մի՛ ըլլար:

Յունիս 13. Պրն. Պետրոս Կարինէն եկաւ:

Յունիս 14. Քաղցիւ երէց քոյս եկաւ եւ հարցուց մեր հաղորդութիւնը եւ մկրտութիւնը, հարցուց թէ ինք բրթէստան ըլլայ՝ իրեն պարտքերը կը հոգա՞նք բրթէստանները: Ես ըսի իրեն թէ որ պարտքէ ազատելու համար կ'ըլլաս, աղէկ է որ բնաւ անանկ բան մը չընես, բայց թէ որ հոգիի փրկութեան համար կ'ըլլաս, ատանկ բան մը յուսալու չես:

Յունիս 22. Այսօր լսեցի որ Բերդին քահանան ըսեր է ու իր առաջին պատարապին վրայ ու իր կարգին վրայ երգում բրեր է՝ որ եթէ ուսը գալու ըլլայ՝ ու տիրէ աս երկրին, ինք իր ձեռք պիտի սպաննէ Բերդին վարժապետը, եւ իմ տունս ալ մէջներին կը բաժնեն եղեր:

Սր. Կարապետու վանքէն լուր եկաւ, որ իրենց նորեկ առաջնորդ Գրիգորիս Եպիսկոպ. երբ որ գացեր է վանքին մօտեցեր է, միաբանները իրենց սովորութեան պէս խաչալամով, շուրջառնելով, բուրվառով, Աւետարանով եւ մոմերով զինք զիմաւորելու կ'ըլլեն, բայց առաջնորդը մինչեւ անգամ իր ձիէն ալ վար չէ իջեր, միայն գաւազանը առեր եւ ձիով վանքը մտեր է: Անոնց սովորութիւնը անանկ էր, որ առաջնորդը պիտի ձիէն իջնէր, շուրջառ հագնէր, եւ գաւազան տոնէր եւ իր առջեւէն զոյգ բուրվառ ծխուէր, եւ այսպէս «Ուրախ լեր սուրբ եկեղեցի» ըսելով վանքը տանէին: Աս մարդը չընդունեց աս բաները, եւ վանքին խաչեր եւ ըսկիհներն ալ հալեցնել կու տայ եւ երկու հատ ալ ազնիւ շուրջառ: Աս բաներու պատճառաւ միաբանները կ'ատեն զինք, եւ առաջի առաջնորդը կը փնտռեն, որն որ քանի մը վարդապետներ աքտորեց:

Օգոստոս 26. Մահտեսի Եղիան պատմեց թէ Քաթսիկայ Մահմէտ պէկը ձեռնադրել տուաւ իր գեղին քահանան, որ բնաւ կարդալ չգիտէ: Եւ ըսաւ թէ ես հարցուցի ձեռնադրուած ատենները թէ, նարեկ կարդացե՞ր ես, ըսաւ ես միայն Մաղմոս կրնամ կարդալ, ուրիշ բան չեմ գիտեր, եւ ըսաւ ի՞նչ ընեմ. Մահմատ պէկը ըստիպեց իս՝ որ ձեռնադրուիմ ու իր գեղը մնամ, որ իր գեղի հայերը ուրիշ տեղ չերթան:

Սեպտեմբեր 1. Անդղիացիք եկան, գացի քովերնին եւ խօսակցութիւն ըրինք:

Սեպտեմբեր 5. Գեղէն ելայ Աղվէրան գացի, հետեւեալ օրը ընկերացայ վանքի հայազգիի մը եւ տաճիկի մը Կարին երթալու: Ճամբան խօսեցայ հայուն հետ կրօնական բաներու վրայով: Ըսաւ ինձի, դուք սուտ մարդարէ եւ սուտ առաքեալ էք, մեր ազգին մէջ նոր բան կը խօթէք, եւ այլն:

Սեպտեմբեր 7. Կարին մտանք:

Հոկտեմբեր 16. Մուշէն ելայ Սնուս գալու, քանի մը հայ ջորեպաններ ճամբուն մէջ ինձի յիշոց ըրին, եւ մէկը զարկաւ ինձի եւ ձիէն վար ձգեց իս, եւ խանչար քաշեց վրաս ու կոտրեց իմ հովանոցս. այս օրը շատ քոր-



տուժ էր իմ անձս: Հետեւեալ օրը չէ միւս օրը Խնուս հասայ եւ կառավարիչին խօսեցայ, բերեց բաւական ծեծեց ջարականք:

Հոկտեմբեր 19. Ղուսչուտ պեկը իմ տունս եկաւ քանի մը քիւրտերով եւ սիրով տեսութիւն բրաւ ու զիր մը ինծի գրել տուաւ Մր. Պրանթին:

Հոկտեմբեր 28. Ալայ կ'մինին եւ Խօլաղասին քովս եկան ու կրօնական նիւթերու վրայով խօսեցանք, ասոնք յայտնեալ կրօնք չէին ընդունել, միայն մարդուս խելքը եւ փիլիսոփայութիւնը է կ'ըսէին ճշմարիտ. բոլոր մարդարէները սուտ կը հանէին. ես հարցուցի ինչո՞ւ սուտ են, անոր համար ըսին՝ որ բաժանում ձգեցին ազգերու մէջ:

Գեկտեմբեր 18. Արօսցիք եկան Անօն տանելու, որոնց հետ տաճիկ մըն ալ կար:

1854 Յունիսար 5. Մահտեսի Գլօրդին հետը եւ կարնեցի Միքայէլին հետը խօսեցայ ազգին տղիսութեան եւ անմիաբանութեան վրայով, ընդունեցին եւ հաճութիւն տուին:

1856 Մարտ 31. Բերդ գացինք Աւաղին եւ Մալոյին հետ լսելու արքային հրովարտակը:

Ապրիլ 4. Յարութիւն գնաց Հարամիկ՝ այն նոր համոզուած եղբայրները քաջալերել, որ յայտնուին: Հարամիկէն պարոն Առաքել եկաւ քովս, շատ խօսեցայ իրեն եւ քանի մը աղօթք գրեցի եւ տուի իրեն: Խօսք տուաւ որ պիտի ջանայ համոզել Կարապետ որ ինք եւ ան յայտնուին: Նուիրակը գրագուեր է Առաքելի հայրը որ իր գաւազը դուրս րնէ տունէն: Պրն. Առաքել գրնաց իրենց գեղը եւ յայտնապէս մեծ պահքը կերաւ եւ խօսեցաւ, իր ծնողք ելան տունէն գացին ուրիշ գեղ եւ կրկին դարձան իրենց տունը, եւ ըստիպեցին որ պրն. Առաքել տունէն ելնէ, քանի որ իրենց կրօնքը չ'ընդունիր: Պրն. Առաքել աս բաներուն չգիմանալով կրկին ետ դարձաւ:

Ապրիլ 23. Հարամիկէն կոյր բրուար եւ եղիպար քովս եկան ու ինքզինքնին կատարելապէս յայտնեցին: Պրն. Առաքել իրենց հետ ծածուկ միաբանութիւն ունի եւ խօսք տուած է կրկին յայտնուելու:

Մայիս 10. Երեք տուն Հարամիկից յայտնուեցան, մէկը կոյր բրուարն էր:

Մայիս 20. Հայեր գրպարտութիւն բրին մեր վրայ թէ նոր եկող միւտիւրին վրայ գանկատանաց գիր գրած ենք, այսպէս ընելով մեծ թըշնամի ըրին ան մարդը մեզի, ուստի մեր տունին զիմացը որ նախկին կառավարիչը ուրիշ մարդէ մը առեր եւ մեզի տուեր էր չէնքի համար, նոր միւտիւրը բռնութեամբ առաւ ինձմէ:

Մայիս 25. Խըրդմիսայի մարդուն եւ կնկան բաւական կարգացի եւ խօսեցայ սուրբ գրքէն:

Օգոստոս 25. Յարութիւն իշխանին եւ պրն. Գրիգորին հետ խօսեցայ ազգին յառաջդիմութեան եւ կրթութեան վրայ, ըսին՝ մեր կրթութեան եւ ուսմունքի զարգացումը տաճիկներէն մեզի տուած ազատութիւնէն կախում ունի, մինչեւ որ տաճիկները չը կրթուին մեր ազգ չկրնար կրթութիւն ունենալ:

Հոկտեմբեր 22. Մալոյին մայրը՝ Սարվար, թաղեցինք սաստիկ ձիւնոտ օդով մը:

1857 Փետրուար 18. Նուիրակ վարդապետը եւ միւտիւրը չափէն աւելի կը պտրտին, հայերէն ով որ բտակ առեր է իր ինամիէն աղջկան (խալան) բռնութիւնով ետ դարձնեն, եւ աս բտակէն 30 դուռուչ վանքին է եւ քանի մըն ալ փոքրաւորին է: Կ'երեւի վանքին յատուկ օգուտ մը ըլլալուն համար աս ճամբան բռնեցին, ու ո'չ թէ բարեկարգութեան համար: Քանզի գուսաններ եւ գուտնաներ ու գանազան պիղծ խաղերը վերցնելու բնաւ ձայն ձուն չկայ: Նուիրակ իր փոքրաւորը կարգեց էլլախ, ինք գնաց հոն եւ գուսան գարնել տուաւ, թէ որ իրենց միտքը ազգը բարեկարգել ըլլար, անշուշտ պատիժ մը կամ ըսպանալիք մը պիտի ընէին ասանկ մարդոց, ան մարդուն հետ առջի պէս բարեկամ եւ ուսել խմելու ընկեր են: Գեղիս երէց, երբ որ իր թոռը կարգեց եօթ անգամ թօնիրի բոլոր պտըտցուց հարս ու փեսան:

Մարտ 2. Կէօքուէն մարդ մը եկաւ ու պատմեց իր խոստովանիլը քահանային՝ թէ ինք 12 հատ բաղու հաւկիթ կտորած է: Քահանան կ'ըսէ. ամէն մէկ հաւկիթի համար օր մը պահք պահէ, եւ երկու օր ալ ինծի աշխատէ, մեղքը կը թողուի:

Հերթն կնիկ մըն է, կ'ըսէ իր մեծ որդւոյն՝ որ 45 տարեկան մարդ մըն է, գնա՛, կ'ըսէ, խոստովանէ՛, ինչ որ քահանան կ'ըսէ, դուն ալ նոյնը ըսէ: Տղան կ'երթայ, կը խոստովանի, քահանան ինչ որ կ'ըսէ ինքն ալ նոյնը կ'ըսէ. քահանան կ'ըսէ. «Աստուած թողութիւն շնորհէ», ինքն ալ կ'ըսէ Աստուած թողութիւն շնորհէ: Քահանան կ'ըսէ. արձակեմ գեղ. ինքն ալ կ'ըսէ. արձակեմ գեղ: Քահանան կ'ըսէ, Տօնօ որդի, ես գը՛ւ մեղք պիտի թողում, թէ դո՛ւ զիմ մեղքս պիտի թողուս: Ես ինչ որ կ'ըսեմ, դո՛ւն ալ նոյնը կ'ըսես: Տօնօն կ'ըսէ: Իմ մամ ընծի զէտ սորվեցուց:

Մարտ 4. Պօղոս վրդապ. եկաւ քովս, ու գացինք մէկտեղ Սուքօն տեսնելու, քիչ մը կատակ եւ անվայել խօսքեր խօսեցաւ գեղի ուխտին դէմ, որ չեկաւ իրեն ժողովք տալու, քանի մըն ալ ծաղրական առակներ ըսաւ, գնաց մեր դպրոցը պահպանիչ ըսելու տղայոց, պահպանիչին մէջը բարեխօսութեամբ Ած.ոյ եւայլն, եւայլն ըսաւ: Աս բանը ըսաւ ինծի հաճոյ երեւնալու համար:

Յուլիս 20. Հարամիկ զիւղէն 4 բարեկամները հրաւիրեցին իս երթալու հոն, գացի ու բարի յաջողութիւնով քարոզեցի, դուրսէն ալ զիտողներ կային, ու քանի մըն ալ մանր տղաքներ կային, եւ կար ան որբեւայրի քահանան, որ կ'ուղչը մեզի գալ կարգուելու համար, ու չէ թէ Քրիստոսի համար: Իրեն ըսինք որ, թէ որ ընկեր մը իրեն գտնէ՝ կը պսակենք, ալ անկէց էւելի բան չենք ըներ իրեն:

Կրկին գացինք Հարամիկ գիւղը ու քանի մը հոգիով ժողով ունեցանք, եւ եղբոր մէկուն մայրը առաւ իր գաւազը ու գնաց ուրիշ գեղ, չընդունելով մեզ իր տունը քարոզելու, բայց մենք քաջալերեցինք մեծ տղան ու իր ամուսինը, որ քաղցրութիւն եւ համբերութիւն յուսան Աստուծմէ: Սաստիկ հով եւ ցուրտ էր:



Գրիգորին կրկին՝ Մաշտոցին դառնալին իշխանաց եւ 4 վարդապետաց թախանձանքովը: Ու ըստիպեց իս, ի սէր Ածոյ. որ երթամ Հարամիկ, ըսաւ թէ վարդապետներ բարն փախաւ, եւայլն: Կարապետ շատ ստիպելով իս առաւ տարաւ Հարամիկ քաղերով: Ալ չհամարձակեցայ Առաքելին տունը երթալու: Սուլէման աղային սենեակը գացի: Վարդապետները չուզեցին խօսիլ, ան զիշեր հոն մնացի, հետեւեալ առտուն ելանք, Անապատայ Իգնատիոս վարդապետը առանձին տեսութիւն մը բրաւ հետս, եւ հարցուց ինձմէ թէ ինչպէս ընդունեցի աւետարանականութիւնը: Ինք աղէկ մը համոզուած էր, որ հրաշագործութիւն կ'ըլլայ Անապատին վարդապետաց մէջ, բայց չէ թէ հիմակուանին, այլ հին վարդապետաց մէջ: Հարցուց ինձի թէ հոգետեսութեան շնորհի՞ւ առիթ երբ որ ձեռնադրուեցար: Ո՛չ, ըսի: Աս զեղին մէջ միայն Եղօն եւ կոյր բրուտ Կարապետը մնացին Քսի. կողմ: Շատ մեծ տրտմութիւն ունեցայ աս բանին վրայ: Առաքել եւ Գրիգոր որչափ որ համբուրեցին վարդապետին ձեռքը, բայց զեռ ճամարտութեան զէմ բան մը խօսած չեն, ու ժամն ալ գացած չեն: Կարապետն ու Եղօն խորհեցան ու զեղը ձգեն եւ Խնուս զեղը գան, քանզի հոն անտանելի կ'ըլլայ իրենց մնալ:

Նոյեմբեր 30. Քաղքիկ գացի աս կիրակի ու իրիկուն կարդացի, քարոզեցի եւ աղօթեցի քանի մը մարդոց հետ: Քիչ մը վէճ ըրին, բայց սիրով վարուեցան: Մէկը ըսաւ թէ ես ատոնց Աւետարանը չեմ ընդուներ, միւսները յանդիմանեցին անիկա:

Դեկտեմբեր 16. Միւտուրէն մարդ եկաւ ու մեզ տարաւ Բերդ, հոն մաշտոցականաց իշխանները դատին տեղը եկան որ դատաստանի մտնենք: Ըսին որ տաճկաց դատաստանադիրքը ինչպէս որ վճռեց, մենք սիրով կ'ընդունինք: Միւտուրը յորդորեց որ մենք մեզմէ աս բանը լրմնցենք առանց խատիրն երթալու: Մենք իրենց իշխանները եւ ժողովքէն տաճիկ անդամ մը գացինք առանձին տեղ մը, իրենց ըսինք որ կտորած քարերու տեղ կրկին քար դնենք, անոնք ալ յօժարեցան աս բանը ընդունելու:

Յարութիւնի մեծ որդին՝ Պետրոս, որ անդաւակ որբեւարի մըն էր, կը միաբանի տիրացու Մալխասին հետը Մուշ երթալու եւ մաշտոցական աղջիկ մը առնելու: Կ'երթան Քրդադոմ ու հոն կը ձեւանայ ինքն ալ իբրեւ մաշտոցական հայ ու կը պսակուի Մալխասին մօրաքեռ աղջկան վրայ եւ կու գան հոս: Եկած իրիկունը մաշտոցականները խրատեցին զարթիէ մը ու խըրկեցին աղջիկը բռնութիւնով առին Յարութիւնին տնէն: Աղջիկն ալ չէր ուզեր առնել աս տղան, մէկ մը որ բրօթէստան էր, երկրորդ որ այրի էր: Շատ ըստիպեցին զաղջիկ որ ըսէ թէ ես ասիկա կ'ընդունիմ ինձի իբրեւ այր, չըսաւ, ու միշտ տաճիկն մօտ կ'երթար ըսելով թէ ես ասիկա չեմ ուզեր: Տաճիկը կ'ըսէ, աղջիկ թէ որ կ'ուզես աս տղան քեզի էրիկ ըլլայ, ըսէ մեզի որ քեզ չտանինք ասկից: Աղջիկը կ'ըսէ, ես չեմ առներ ասիկա, կը բռնեն աղջիկը ու զիշերով կը հեծցնեն ձիուն վրայ ու կը տանին Արօս: Եւ հետեւեալ օրը կը տանին Բերդ: Մալխասն ալ ծեծեցին ու բանտարկեցին, ու միւսչեւ հիմա դեռ աղջիկը իրենց քով է ու տղան ալ կ'ըսէ ես մաշտոցական եմ:

1858 Յուլիս 29. Մր. Տընձօր եւ Թրօպրիճ եկան Կարինէն ու 31-ին գացինք Հարամիկ Պօղոսի տունը ու հոն խօսուեցաւ Տէրօջը խօսքը:

Ժողովք աղային զործի համար, եղբայրները որոշեցին որ Մալօն իրենց աղային երեսփոխան ըլլայ: Ու գրեցին Պօլիս անոր հրամանագիր մը բերելու, որ մէճլիս նստի, Մալօն յանձնառու չեղաւ ըսելով, պիտի ըստիպուիմ սուտ բանի համար վկայել տաճիկներուն հետ, եւ այլն: Խօսեցանք որ ատիկա արգելք չէ:

Օգոստոս 1. Ելանք Խնուսէն եւ մր. Տընձօրին եւ մր. Թրօպրիճին հետը գացինք Կարին: 8-ին Կարինէն ելանք Քէօփրիքէօյ գացինք, անկից Ենի-գեղ, անկից ուրիշ գեղ մը եւ հետեւեալ առտուն մտանք Կարս: Ու պատեւրազմի տեղերը պտտեցանք ու Կարսայ բերդին մէջ ալ: Երկու օրէն ետք Պէնկլի Ահմէտ հայոց զեղը եկանք եւ Կիրակին հոն անցուցինք: Հետեւեալ օրը ուսուէն եկող մալանկաններուն զեղը գացինք եւ զիշեր մը անոնց հիւր եղանք: Աս մարդիկ բոլորովին աւետարանական քրիստոնէաներ են, ճիշտ հարցուցինք իրենց կրօնական դադափարները, ամէն ճամարտութեան համար վկայութիւն Մր. Գրեքն կը բերէին: Իրենց Մր. Գիրքը ուսաց լեզուով էր: Կնիկներ եւ աղջիկներ մէկտեղ հոգեւոր երգ երգեցին մեզի:

Օգոստոս 23. Կարինէն եկանք Խնուս: 26-ին անոնք գացին Մուշ:

Հոկտեմբեր 7. Խնուսէն ելայ եւ եկայ Սուլուիս, զիշեր մը հոն կեցայ: Հետեւեալ օրը գացի Սինամբիկ եւ միւս օրը եկայ Մուշ մր. Տընձօրը տեսնելու: Շարաթ օր գացինք Ունան զիւզը եւ Կիրակի հոն անցնելով շատ վէճեր եւ հակառակութիւններ ըրին մեզի հետ հոն: Տիրացու մը՝ Պօղոս տարօնացի զիրք բերաւ եւ կարդաց, մենք ըսինք որ Մր. Գիրք բերէ, ան ըսաւ որ ան զիրքն ալ հոգեով Սրբով գրուած է: Գիւղին ուշայր ուղեց մեզ զեղէն հանէ Կիրակի օր, մենք գացինք իր օտան եւ հոն 20 մարդոց քարոզեցինք:

Մուշէն անցանք Կեզի, անկէ ալ գացինք Երզնկան: Հոն Արարկերէն եղբայր մը կար եւ կը քարոզէր, բայց զեռ յայտնի ժողովուրդ չկար: Քանի մը խըզըլպաչ տաճիկներ եկան քովերնիս եւ խօսք տուին որ իրենք պատրաստ են ընդունելու քրիստոնէութիւնը: Անոնց սէխ երբ որ իր ժողովուրդին տուն հաց կ'ուտէ այսպէս կը գոհանայ, թէ որ հոն մահմետական չըլլայ: «Հէր քիմ պիգէ վերտի ուսամ, քէհնաօթի օնա օլսուն հարամ. բահմաթ Հուսէյնա, անիլէթ Եգիտէ, սըֆրասի քէլիլ պերէֆէթի իպրահիմ հալիլ, արթա Էսփիմէէ, տաշա քօֆալմիէ: Էլի տօլու պօշ օլայ, խազանան սախ օլայ, փիրիմ հիւնֆեար հանի Պէկթաշի վալի պերէֆէթի օլայ»: 3 օրէն եկանք Կարին: Կարինէն անցայ Հերտեւ: Նոյեմբեր 2 եկայ զեղ:

Նոյեմբեր 27. Կարինէն մր. Թրօպրիճ եւ պրն. Մանուկ եկան հոս: 28-ին Մալոյի Ղաղարի հարսանեաց հանդէսը կատարեցինք:

Դեկտեմբեր 15. Ելայ Խնուսէն եւ գացի Խարաքէօփրու, ու Յարութենց տունը հիւր եղայ: Մերոնի Մանաս եկաւ քովս, որ 87 տարու կար եւ զեղի գիտնականը սեպուած էր, թէպէտ կարդալ բնաւ չէր զիտեր:

1859 Մարտ 7. Հարամիկու պրն. Առաքել, բրուտ Կարապետ եւ Եղօն, ինդրեցին որ գրեմ Կարին մր. Տընձօրին որ իրենց օչնութիւն ընէ վարժա-

պետ մը տալու իրենց զաւակները կրթելու համար. վարժապետը իրենց գեղէն ըլլալով 60 դըշ. ալ բնկերութիւնէն օդնութիւն ըլլայ իրենց :

Մարտ 15. Գացի Հարամիկ եւ քարոզիցի, Տ հոգի կային սոցոթքի : Լուր եկաւ թէ Ղուտչուտ պէկ 30 ոսկի տուեր է փաշային եւ աւեր է Խնուտի միւտուրութիւն ու պիտի դայ :

Աւալի տղաներ պատուեցին Հախէի զլուխը, պիտի երթայ Բերդ գանդատ, չթողուցի :

Յուլիս 2. Կարինէն եկած հրամանագիրը տարի միւտուր Ղուտչուտ պէկին ու զուրցեցի Յօհանի վրայով, որ էլպիս զեղէն ինք իր տունով կը վաճակէին : Միւտուր յատուկ զապթիէ դրած էր, որ դուրս ընէ գիւղէն, եւ Հարամիկ պիւղն ալ մեր մանկավարժը օլամ կը խրկեն Կիրակի օր բռնութեամբ, ու իր արտը բռնի առած էին ձեռքէն, եւ հոս Խնուտ գեղն ալ բրօթէստաններուն ջուր չեն տար իրենց արտերը ջրելու համար : Մալուն եւ մեր գեղին ուէյան ալ Բերդ խրկեցի : Միւտուր կանչեց գիրենք : Քանի որ աւետարականներու մէջ ճշմարիտ սէր եւ միաբանութիւն չկայ, մեծ պատեհութիւն է մաշտոցականաց որ նեղեն եւ հարստահարեն գիրենք :

Մարտ 7. — Պաղօն հիւանդացաւ քաղի ցաւով, եւ ձեռքէն ու գլխէն շատ բազում արիւն ստին ու մեռաւ : Խատին եկաւ Բերդէն, բայց անոնք թաղեր էին Պաղօն, որովհետեւ վէրք չկար վրան : Խատին իս եւ Մալուն տարաւ Բերդ ու հոն երեք անգամ մէճլիս եղաւ : Պաղոյի եղբայր Սրգէն 3 վկայ բերաւ թէ բրօթէստաններու 3 պատանիներ իմ եղբայրս սպաննեցին : Վկաները կանչուեցան ու վկայեցին որ գիշեր ժամը 4-ին երբ որ Սրգէի օտայն կ'ելլեն, կը տեսնեն որ 3 հոգի ժողովուած են Պաղօի վրան ու կը ծեծեն իրար, կ'երթան կը բաժնեն, եւ Մելլոն կ'ըսէ թող տուէք ես երթամ Սրգէին քովը եւ նայիմ թէ Պաղօն ինչո՞ւ իս պիտի ծեծէ, երբ որ կու գան օտայի դուռ, Մելլոն փայտով կը զարնէ Պաղոյի գլխուն : Աս երեք վկաները՝ մէկը Սրգէի գգիրն էր, մէկը իր ազգական, եւ միւս քիւրտը իր ղէղի պահող :

Ապրիլ 6. Մր. Նափ եկաւ Բաղէչէն : Եւ այն իրիկուն բաւական ժողովք ունեցանք : Հուսէյն աղան եկաւ եւ վկայեց թէ, ես առաջ տեսայ Պաղօն որ առողջ էր ու դնաց իր ձիթխած եւ օր մը վերջ կրկին դացի եւ տեսայ որ հիւանդ էր, եւ հարցուցի թէ ինչո՞ւ համար հիւանդ ես, ըսաւ, պօղազս ուտեցեր է. իր ձայնն ալ կըտրած էր, եւ իր գլխէն եւ ձեռքերէն 2 օգայ արիւն առած էին, որ ես տեսայ ան արիւնը : Կէսօրէն վերջ մեռաւ Պաղօն : Այս վկայութիւն Հուսէյն աղան վկայեց մր. Նափին առջեւ :

Ապրիլ 9. Վեր. Նափ գնաց : Եւ նոյն օրը կարնեցի Խալիթ էֆէնտին որ պիտի երթար Բաղէչ միւտուր ըլլալու, եկաւ հոս եւ 10-ին գնաց :

1861 Մարտ 15. Մուշ : Մամբրէ վարդապետ որ մշեցի էր ու գիտնական անձ մը հայոց լեզուին մէջը, քարոզեց վերի թաղի ժամը, թէ բրօթէստաններու քարոզիչները սուտ մարգարէներ են, առաջ մեղր կը ցուցնեն ձեզի, իսկ վերջը դառն խարէութիւնով կը խաբեն ձեզ :

Մայիս 1. Գացինք Օձ քաղաք եւ Երուս : Երուսի մէջ երկու հին եկեղեցիներ կային. մէկը մեծ՝ 4 սիւնի վրայ կառուցուած, ոչուն երկայնու-

թիւնը 40 ոտք եւ լայնութիւնը 37 : Աւալ սեղանին աջ կողմը գրուած էր շինութեան թուականը, որ 160 տարի էր իր շինուիլը : Քիւրտեր ախոս բեր էին իրենց : Իսկ մէկալ փոքր եկեղեցին, բնակիչ քիւրտեր ըսին որ երկու տեսակ հայեր բնակած են եղեր տակնօք հոն, մէկը բուն հայ, իսկ մեկալը քօրեան հայեր, որ բնաւ պահք չեն պահեր եղեր : Աս եկեղեցին սեղան չունէր միւսին պէս : Հաւանական երեւցաւ ինձի որ Թոնտրակեցոց եկեղեցի է եղեր :

Մայիս 7. Երանք Խնուտ երթալու : Աս ձմեռ, որ Հարամիկ գեղը 60 անձինք բրօթէստան եղեր էին, իրենց ազջիկները Ձկիրմէի բրօթէստաններուն տուին, 3 պսակ բրի : Վէճ եղաւ եղբայրներուն մէջ թէ խալան՝ այսինքն փեսայն օժիտ առնել պէ՞տք է թէ չէ :

Մայիս 25. Խնուտէն Երայ եւ 26 Մուշ հասայ :

Մայիս 28. Անդկիացի գոնջօյցի հետը գացինք քաղաքիս (Մուշ) 3 ժամերը եւ մէկ ճամբին պարտեալ, ժամուն մէկին մէջը գրչապի Աւետարան մը կար, որուն Հայոց թուին ՁԼԲ (1483) էր, Արճէչ գրուած Սարգիս կաթողիկոսի օրովը : Ասոր Քերկէ տաննց Աւետարան ալ կ'ըսեն եղեր :

Օգոստոս 22. Վեր. Նափի եկաւ Բաղէչէն : Գացինք Առաքելոց վանք : Մեծաւորի փոխանորդը մէճ բրաւ հետս եւ ուղեց հաստատել թէ բրօթէստաններէն զատ բոյսը եկեղեցիները մէկ են, եւայն : Ժամը գացինք եւ մեծ մազպաթեայ 3 կ'ջն «ճատ»ը նայեցանք, որ գրած էր կարնեցի Վարդան քահանան, Փրկչի թուին 1204 : 3 տարի ընցուցած է : Տաճարի դրան թիւ հայոց ՇՁԳ (1134) . Ղուկաս, Թորոս եւ Գրիգոր շինած են ան ապանոց դուռը : Աւանդութիւն կայ թէ առ դուռը Մամիկոնէից աւեր վանուց դուռը ըլլայ : Մամիկոնէից վանքը Սր. Յովհաննու վանից լերան անդիի կողմն է :

Աւետարան մը գտանք գրչայ մազպաթ, թուին հայոց ՇԳ (1055) : Գիրք Սահմանաց : Թուին ՉԿԹ (1320), Լեւոն Թաղաւորի առեւը գրած, ի Վայոց պաւառ :

Այսմաւուրք : Թուին ՉԾԳ (1305), Առաքելոց վանքը գրած :

Աւետարան թուին ՉԽԱ (1292), Հեթում Թաղաւորի ժամանակը : Ան առեն տաճիկը առին զՀոովմկլայ :

Թարգմանչաց քարերուն թուականը՝ ՇՂԳ (1144) :

Սր. Յովհաննէս վանքը՝ ճառի գրով Աւետարան : Թուին Հայոց 625 : Ի Սերաստիայ, ձեռամբ Կոստանտիայ կրօնաւորի :

Սր. Ստեփանոսի գրան վրայի զերեզմանի քարին թուական ՈԲ (1153), Յովսէփ հանդուցեալ ի Քրիստոս :

Օգոստոս 29. Մուշէն Երանք մր. Նափին հետը գացինք Խորեր, անկից Որկնոց, Լիզ, անցանք Դրմերտ, հոն ըլլուրի վրայ եղած ժամուն եւ գերեզմանատան գրերը քննեցի : Սեպաձեւ գիրով քար մը կար գրուած, ժա-

ԾԱՆՕԹ.— Պատ. Սիմոն Դաւիթեան գործածած է հայկական բուականը. փակագիծի մէջ գրուած բուանշանները կը ներկայացնեն փրկչական բուականը եւ աւելցուած են մեր կողմէ (Ե. Յ. Մ.) :

մուն հարաւային կողմը գերեզմաններու քարերուն մէջ: Այն օր Կողնի մնացինք եւ 30-ին հասանք Բաղէշ:

Սեպտեմբեր 9. Ելանք Բաղէշէն մր. Պրպէնքին հետ մէկտեղ եւ Էկանք Դատուան, չորս ու կէս ժամէն:

Սեպտ. 10. Հասանք Գծուակ, հաց կերանք եւ Էկանք Ախլաթ ու միւտուրին գացինք. ան ալ հայազգիի մր տունը մեզ խրկեց հիւր ըլլալու: 12-ին Ախլաթէն Էլանք եւ պարտկոյններուն մօտ ճամբան՝ ծովին կողմը 2 հատ դրամբեթներ կային պարտկային գրերով: Աս դրամեթները Մեղրապետի աղբիւրին քովը շինուած ճիշտ դրամեթին պէս էին: Ախլաթէն Արծկէ 5 ժամ է: 13-ին Արծկէէն Էլանք եւ 4 ժամէն Առիս հասանք: Առիս գիւղին քովը բորակի լիճ մը կայ, որուն մէջը բազմաթիւ բաղեր եւ ուրիշ սպիտակ թռչուն մը՝ կոռունկի չափ, բայց երբոր կը թռչին կարմրադոյն են, որոնք խիստ գեղեցիկ տեսք մը կ'ունենան, երամներով կը շրջին ատ լճին մէջը, բայց Վանայ ծովին վերայ չեն պտըտիր: Ծառ մը փետուրներ թափուած կային լճին հարաւային կողմը: Ես 50 դրէշէն աւելի ժողվեցի, այնչափ ալ Պրպէնք ժողվեց: Ծառ գեղեցիկ տեսարան մը կը ներկայացնէ ան փոքրիկ լճակը իր ջուրերուն վրայ կեցած բազմաթիւ թռչուններովը, մանաւանդ բաղերու ձագերովը: Իրիկուն արեւը մար մտնելուն հասանք Նորչնջող գիւղը: Կիրակին հոն անցուցինք: 14-ին Էլանք Նորչնջողէն հետեւինս քերտ մը առնելով գացինք Լաթար, հաս քահանայ մը ունէր գրչայ Աւետարան մը, 36 շորերու մէջ փաթթած: Ծաղիկ Աւետարան կ'ըսեն անոր, որ Հիզան քաղաքին մէջ դրուած էր, Տէր Զաքարիայի ձեռք թուին Հայոց Պժէ (1368), յաւուրս արքային Խարա Ուսուֆայ: 16-ին Լաթարայ Էլանք գացինք Կոփայ վանք եւ հոն խեցեմորթէ քարացեալ ժայռը գտանք. ան քարերով վանքի մեծ դուռը կոփեր էին:

Լաթարայ Էլանք գացինք Եօնճալու, անկէ անցանք Համզաշխա եւ անկէ Էլանք գացինք Խնուս: 21-ին քարոզեցի Հարամիկ: 24-ին քարոզեցի Զէվիրմէ, 25-ին Էլանք Զէվիրմէէն Էկանք Խարազը, որ 8 ժամ հեռու է:

Հոկտեմբեր 2. Վան հասանք: Հետեւեալ օրը մր. Քօքըն եւ իր զաւակները գացին: Ասոր սպասուորը Միրոն շատ տրտունջ կ'ընէր մր. Քօքընի դէմ, եւ ըսաւ քանի մը անգամ հաղորդութիւն ըրած չեմ, պատճառը ատ մարդն է: 6-ին գացինք Վարաղայ վանք եւ տեսանք Սենեքերիմ Արծրունեաց թաղաւորին եւ իր կնկան Խուշխուշին եւ Պետրոս Գետաղարձին գերեզմանները ժամուն մէջը, դարմացայ՝ քանի որ հայրապետական կանոն կայ որ մեռելի սակոր բնաւ չլսնուի Էկեղեցիին մէջը: Սեպտեմբեր 10-ին Էլանք հոն, ճիշտ Դրամերտ գիւղին գերեզմանատան քարին զրին պէս: 8-ին Վանէն Էլանք, մր. Պէրպէնքին հետ, կը նեղանար եւ յանդիմանեց իս, որ իրմէն ետ կը մնայի, քանզի իմ ձիս կազ էր, եւ ինք կը վազցնէր իր ձին: Բարկացաւ ինծի եւ բոսա, Սըմուն, պր. Սիմոն, ես չեմ ճանչնար, պիտի ետ չմնաս: Վարդապետներու քով ասանկ բարկութիւն եւ աղաղակ տեսած չէի իմ մանկութեանս ատեն: Ես ան ատեն խորհեցայ որ ասոնք եպիսկոպոսէն ի՞նչ տարբերութիւն ունին: Եպիսկոպոս մը իր արեղային հետը անանկ ա-

նարգ կերպով չվարուիր: Ես որ իրը թէ 13 տարի աշխատած եմ եւ հովիւ եմ, լոկ սպասուորի մը պէս Պրպէնքին հետը կը պտըտէի, ու չէ թէ հաւասար եղբոր մը պէս: Միտքս եկաւ որ Հոռոմայու աղնուականներն ալ այսպէս առաջ ըսկսած են եղեր վարուիլ ուրիշ փոքրիկ քաղաքներու եւ զեղերու հովիւներու հետ, մինչեւ որ պապականութիւնը յառաջ եկած է:

Մր. Պրպէնքին ըսի, ինչո՞ւ չուտով դարձանք վանքէն, չէ որ մենք քանի մը շարաթ պիտի մնայինք: Ըսաւ ես իմ սիրելի կնիկս չեմ կրնար միւնակ ձգել: Ըսի իրեն, հապա՛ Բաղէշէն ելած ատենս իմ կնիկէս նամակ առի, որ իմ մէկ հատիկ արու զաւակս սաստիկ հիւանդ է, ես ինչպէ՞ս ձգեցի եկայ, ըսաւ Ածոյ յանձնելու ես, ըսի, դուն չե՛ս կրնար յանձնել Ածոյ քու կնիկդ: Ըսաւ իմ կնիկս օտար է: Ըսի՛ մենք հայ աւետարանականներս աւելի կը հաւածուինք եւ կը նախատուինք մեր ազգէն, քան թէ դուք:

1862 Օգոստոս 30. Մր. Նափին հետ Օգոստոս 20-ին նոր եկող խայմախամ Շէֆքի ԼՔէնտիին գացինք տեսնելու, ասկէց առաջ զայմազամը Մուշ կը նստէր եւ միւտուրը՝ Բաղէշ կը նստէր, հիմա Բաղէշ եղաւ զայմազամըդ եւ Մուշը միւտուրըդ:

1863 Մայիս 21. Տիգրանակերտ: Քննութիւն ըրին պրն. Թովմասին, գոհացուցիչ պատասխաններ տուաւ շատ բազմութեան առջեւ: 22-ին ձեռնադրութեան արարողութիւն եղաւ, ուր ներկայ կային 1300-ի չափ անձինք: Պատուելի Խարա Գրիգորը խրատ առ Էկեղեցին, պատուելի Պարնըմ քարոզեց: Պատուելի Ռիչէրտսն խրատ առ հովիւ: Ես աղօթեցի հայերէն: Պատուելի Մարտիրոս հաճութեան ձեռքը տուաւ: Պատուելի Ռիպս ձեռնադրութեան աղօթք: Պատուելի Նափ երգեց եւ պատուելի Ոգր կարդայ Ս. Գիրքը: Պատուելի Ուլիէմս վերջի աղօթք արարերէն լեզուով:

24-ին անգղիացի հիւպատոսը գացի տեսայ եւ ցուցուց ինծի խիստ հետաքրքրական դրամներ, քարեր եւ զրքեր: Տիգրանին արծաթ դրամը եւ պղինձը. ասորոց, յունաց եւ հոռոմայեցոց հին ըստակները. խիստ շատ: Տիտոսի եւ Վէսպասիանոսի ըստակ, որ Երուսաղէմ առնելէն վերջը կոխեցին ան դրամը, դրամին մէկ երեսը հրէից զիրովն է: Քիւֆի Փօրմ գրով շատ սեւ քարի մը կտոր, եւ ուրիշ ազնիւ քարեր, եւ տեսակ տեսակ մատանիներ եւ ասորերէն Աւետարան մը, որ 1000 տարիէն աւելի հին է:

Տիգրանակերտցի Մկրտիչ վրդպ.ը տեսայ եւ խօսեցայ, Աւետարանին հակառակ չէ, բայց անհոգ է: Ասոր քովն ալ մեսրոպեան գրով Աւետարան մը կար մալաղաթեայ ու շատ հին առանց թուականի:

26-ին Էկանք Կրէսիան եւ զիշեր մը հոն մնացինք: 27-ին եղիտաց հետ խօսեցայ, թլփատութիւն ունին, մէկէն աւելի կնիկ կ'առնեն, իրենց տղաքները Մահմէտի անունով կը կանչեն, առտուն դէպի արեւը նայելով քանի մը աշխարհային բաներ կ'ուզեն Աստուծմէ եւ կ'երթան բաներնին: Թէ որ մահմետական մը կամ քրիստոնեայ մը իրենց դառնայ, բնաւ չեն ընդուներ, երբ որ իրենցմէ մէկը իր կամքով երթայ ուրիշ կրօնի ու զղջայ ու նորէն դառնայ, անհար է անոր կրկին ընդունուիլը, կ'աշխատին անիկա մեռցնել քան թէ ընդունիլ: Ողջախոս են, բայց խիստ զոռ են: Գինի կը խմեն, քաջ են, եւ

սրտանց մահմետականութեան թշնամի են: Տարին 3 օր ծով կը պահեն: Ոչ Կիրակի ունին եւ ոչ Ուրբաթ: Հայոց հետ աւելի սիրով կը բնակին, քան թէ տաճկաց հետ: Մայրաք Հայասին բարեխօսութեան կ'ապաւինին: Տալուս՝ զեւ ըսել է, բայց իրենք կ'երեւի որ բարի հրեշտակաց կու տան ան անունը, քան թէ շար հրեշտակաց:

28-ին Երանք Աղերդ գալու, ճամբուն վրայ անթիւ անհամար մարախներ տեսանք, աշնչափ յեցուած էին գետին մէջ, որ գետին ելրէն հոտ կու գար: Աղերդու տուներու եւ խանութներուն մէջը լեցուեր էին:

Յունիս 12-ին Մուշէն եկայ Էրուս, եւ թոնդրակեցոց ժամը գննելու գացի: Հայերը թորեցոց ժամ կ'ըսեն, ու Էրուսի մէջ բնակող քրիստոնէր Տէրէ Դորեան կ'ըսեն: Ուրիշ ժամ մըն ալ կայ գեղին մէջը՝ որ հայերուն է եղեր, շատ գեղեցիկ շինուած: Հայոց գերեզմանոցը ուրիշ է, եւ թորեցոց գերեզմանները իրենց եկեղեցւոյն դրան առջեւն է: Ժամուն երկայնութիւնը իմ ոտքովս 30 եւ լայնութիւնը 27: Դուռը ուղիղ արեւմուտք, պատին քարերը խիստ շատ մաշած էին, եւ հալած անձրեւէն: Գերեզմանի քարերուն վըրայ զիր շկար: Որչափ որ հին են թոնդրակեցիք կամ իրենց վերջին ատենները, աշնչափ հին է ատ եկեղեցիին շէնքը: Տարոնոյ Երկրի մէջը ատոր նման հին չէնք մը մընացած չէ: Մոկաց վերելի Աստիկան բերդը ատոր չափ հին չըլլար: Ժամուն ներս եւ դուրս խաչ չկայ, միայն քանի մը մանր խաչեր դուրսի պատերուն վրայ փորուած են, յայտնի բան է որ նոր բան են անոնք: Բայց գերեզմանին քանի մը քարեր ունին փորուած խաչ վրանին, որոնք շատ հին կ'երեւին:

Հայոց գերեզմաններուն մէջը միայն քար մը գտայ, որուն վրայ գրուած էր «Խաչս բարեխօս առ Աստուած վասն Կարապետի մօր»։ միւս գրերը եւ թուականը կորսուած են: Ուրիշ շատ խաչեր ալ կային քարերու վրայ փորուած, առանց գրի. իմ կարգացած գիրս նոր էր, խաչ քարի վրայ: Քարին ամէն փորուածքէն եւ ձեւէն յայտնի էր որ շատ հին չէր:

Յուլիս 1. Հասայ Վան, եւ անմիջապէս գացի հայոց գրատուն, Տէր Ատովմեան պրն. Մկրտիչը տեսնելու: Հոն նստած էր ուսաստանցի Առաքելը, շատ խօսեցայ իրեն հետը: Առաքել ըսաւ. «Մենք ձեր (բրտեհստանից) վրայ աշնչափ գէշ համարում ունինք որ, թէ որ քեզ առանձին տեղ մը տեսնելու ըլլայի, կ'ուղչի քեզ սպաննել»:

Վարժապետը եկաւ, ազգին խեղճութեան վերայ խօսք ըրաւ. Ես ըսի զո՛հ եղէք որ տաճիկի կառավարութեան տակն էք, թէ որ ուրիշ քրիստոնեայ կառավարութեան տակ եղած ըլլայիք, հիմա զուցէ հատնելու մօտ պիտի ըլլար հայոց ազգը: Սիրով ընդունեց այս խօսքը, եւ ինքն ալ էկէլցոց թէ՛ ուսաց հայ գորապետ Պէրուզով, Թիֆլիզու փոխարքան եւ Ջալալեան Սարգիս եպիսկոպոս, անցած տարիներ միարանութիւն ըրին եւ բազում բտակ տուին Ներսէս կաթողիկոսի սարկաւազին, եւ խոստացան անոր որ զինք ալ եպիսկոպոս ընէ, միայն թէ թունաւորէ վկաթողիկոս: Սարկաւազը կը մեռցնէ վկաթողիկոս, որուն յաջորդն է հիմա Մատթէոս կաթողիկոսը: Ջալալեան աս բանը կ'ընէ որ ինք ըլլայ կաթողիկոս, բայց չյաջողեցաւ, սար-

կաւազը եղաւ վարդապետ: Քառասնից ելլելէն վերջ եւ պատարազ մը մատուցանելէն վերջը, ա'լ ուրիշ պատարազ չ'ընէր, որչափ կը ստիպեն չ'ընէր: Շատ անգամ ստիպելէն վերջը, կը խոստովանի որ իր խեղճը զինք կը տանջէ, չի կրնար պատարապել, եւ կը խոստովանի որ Ջալալեանի թեւադրութեամբ ինք թունաւորած է զներսէս: Ջալալեան կը բերուի Էջմիածին որ պատժուի, բայց իր կողմնակիցները զէմ կը կենան, ու այսպէս Թիֆլիզ երկու կողմ եղած է հիմա, մէկը կը բողոքէ թէ թող Ջալալեան պատժուի, իսկ միւս կողմը կը պաշտպանէ: Ռուսաստանի մէջ գտնուած շատ հայերու խորհուրդը եւ շատ եկեղեցականաց ան է որ Ջալալեան կաթողիկոս նստէր եւ աշխատէր ամբողջ հայոց ազգը ուսացնէր. Պոլսոյ հայեր աս բանը իմանալով, ոտք կոխեցին թէ՛ քանի որ ազգին մեծ մասը տաճիկ հողին մէջն է, պէտք է որ աս անգամին ալ ան հողէն կաթողիկոս նստի եւ նստեցուցին զՄատթէոս:

1863 Դեկտեմբեր 10. Մուշ: Խնուսէն Պետրոս եկաւ եւ ձի մը բերաւ իս Խնուս տանելու, որ իր եղբայրը պակեմ: Խնուս շատ սիրելի ժողովներ ունեցայ, եւ Մալոյի սենեակը իրիկուններ մինչեւ 30-ի չափ մարդիկ կու գային, կ'երգէինք եւ կ'աղօթէինք: Խնուսցի Յօհաննէս եւ արապկերցի պրն. Յարութիւն եկած էին Խնուս քարոյելու: Կիրակի առտուն Խնուս քարոզեցի, եւ կէսօրին Հարամիկ գացի, հոն քարոզեցի եւ զիշերն ալ հոն անցուցի: Երկուշաբթի եկայ Խնուս գեղ եւ եղբայրներ հրաւիրեցին մեզ եւ բազիլէցի Յարութիւն իրենց տուները պատիւ տալու, շատ հաճելի խնճոյքներ ունեցանք:

1864 Հոկտեմբեր 11. Երանք Որմիայէն, 13-ին հասանք Կեափալու, 14-ին Սալմաստ: Մր. Շէթին հետ գացի Հաթրայան եւ Փայաճուկ հայու գիւղերը, սիրով կ'ընդունէին զմեզ: Ուսումնական Յակոբ Մեկիքովին (Բաֆֆի) հետ տեսութիւն ըրի. վիպասանական զիրք մը յօրինած էր հայոց եկեղեցականաց գէմը Թիֆլիզու լեզուով:



# ԳԼՈՒԽ Թ.

## 1890-95-Ի ԽՆՈՒՍԻ ԴԵՊՔԵՐԸ

Գ Գ Բ

Քիւրդերի զլխաւոր աշիրները, որոնք բնակուում են Գէօկ սու, Թաքման, Չեռնակ եւ այլ տեղեր, հետեւեալներն են.— Ջրորկցիք, 7-800 ձիաւոր՝ Ղուլի բէկ ցեղապետի հրամանին տակ. Հասանանցիք, Բարա բէկի հրամանի տակ՝ 3-400-ի չափ ձիաւոր. Ջիրրանցիք, Սէլիմ բէկի հրամանին տակ՝ 5-600 ձիաւոր: Բացի վերոյիշեալներից՝ կայ մօտ 8-900 հետեւակ զիւրդ խուման՝ բազկացած զանազան աշիրներից, միացած 150-200 չէրքէզների հետ, որոնց ստաջնորդում են շէյխ Ահմէտ, Օմարի տղայ Սատան, Բրոյէ Ուսօ, Մրհրկ, Նատօ եւ իր եղբայրները եւ մի քանի ուրիշներ, որոնք ամբողջ զաւառի մէջ ճանաչուում են՝ բարբարոս, անպաթ եւ կատաղի արիւնոտըտ աւաղակներ:

Այս ամբողջ խառնիճազանճ բազմութիւնը, զանազան խմբեր կազմած, ամէն կողմից յարձակուում են այս ու այն գիւղի վրայ՝ օրը ցերեկով, կողոպտում, թալանում, աւերում, սպանում եւ անհաշիւ կողոպտումներ անելուց յետոյ հեռանում են, առանց մի որեւէ ընդդիմադրութեան պատահելու, առանց մի վախ ունենալու: Այնպէս որ, Հոկտեմբեր 20-ից մինչեւ 27-ը, Պնուսի յարձակում կրած գիւղերը ներկայացնում են ամայութեան եւ անմարդարնակութեան մի տեսարան: Ահա իւրաքանչիւր գիւղի միայն վնասուածների եւ սպանուածների համառօտ հաշիւը, որովհետեւ հնարաւորութիւն չունեցայ ստուգելու իւրաքանչիւր գիւղում՝ որքա՞ն անասուն, որքա՞ն հացահատիկ եւ տնային կահ կարասիներ եւ ստացուածքներ են տարուած:

Բուռնազ .— 25-30 տուն. սպաննած են 22 երիտասարդ եւ հասակ առած մարդիկ. վիրաւորած են 13, անյայտ են 7 հոգի, որոնց մէջ կան 3-7 տարեկան մանուկներ: Ամբողջ գիւղում ոչ մի բան չէ մնացել. տներից մեծ մասը վառուած է, բնակիչները զրկուած բոլոր կայքից, մերկ, քաղցած, թափառում են այս եւ այն կողմ:

Ղարա-Քէօփրու.— 80-90-ի չափ տուն ունի. սրանցից սպաննուած են 3 հոգի, վիրաւորուած 4, վախից մեռած են 2 հոգի. բացի հացահատիկներից՝ միւս բոլոր ստացուածքները եւ կայքերը յափշտակուած են: Մինչեւ հիմա էլ այս գիւղումն են զիւրդ նշանաւոր աւաղակներ՝ Փախի Ահմէտը եւ Մըհրէկը, որոնք գիւղացիներից պահանջում են 150 լիրա եւ բացի այն երեք

հրացանները, որոնք իրել են գիւղացիներից, նորից ուզում են 5-ը. պահանջում են նաեւ այն երիտասարդներին, որոնք վախից չկարողանալով մնալ գիւղում, հեռացել են: Գիւղացիներից մի քանիսը զանգատուել են զայմագամին եւ ինզրել, որ ինքնակոչ հիւրերին հեռացնէ գիւղից: Գայմագամը բաւականացաւ. զանգատուողներին բռնատարկելով:

Մարուֆ.— Մարուֆը ունի 30-40 տուն: Այդտեղ սպաննուած են 4 հոգի, յափշտակուած է 70-ի չափ տաւար եւ մի քանի տան կահկարասիներ, որ գիւղացիք Մարուֆից փախցնելիս են եղել Հարամիկ գիւղը: Սպաննուած 4 հոգին էլ զրանցից է լինում: Պէտք է խոստովանել որ Պալօ բէկ, բաշկիցի Համիդի գայմագամը, օրինակելի կերպով պաշտպանում էր Մարուֆ եւ Տուման գիւղացիներին եւ, եթէ Մարուֆից կան սպաննուածներ, պատճառը նրանց՝ Պալօ բէկին չվատահանալը եւ գիւղից փախչելն է լինում, սրանք Հարամիկ գիւղում թալանուում եւ սպաննուում են հարամիկցիներին հետ: Իսկ երբ Շաքիր փաշան երկրորդ անգամ, այսինքն ամսոյս սկիզբները եկաւ Պնուս, այդ Պալօյին, ոչ միայն մերժել էր իւր ներկայութիւնից, այլ ինչպէս ասում են՝ սպառնացել էր:

Շարագին.— Շարագին ունի 60-70 տուն, ամբողջովին թալանուել, ոչ մի բան չէ մնացել գիւղում, բացի մի քանի հորերում լեցուած հացահատիկներից, զորս թշնամին չէ կարողացել գտնել:

Քաղքիկ.— 100 տուն: Սպաննուած են 11 հոգի, վախից մեռած 1, վիրաւոր 5 հոգի. բացի մի քանի անասուններից, ամբողջովին յափշտակուած է: Գիւղացիք փախչում են Չուուրմէ գիւղը, այնտեղ մնում են 8 օրից աւելի. այդ ժամանակում զիւրդ խումանը տներից թալանում է ամէն մի բան եւ անխնայ կտարտում է՝ ինչպէս ամէն տեղ, այստեղ էլ նոյնպէս բոլոր պատահած իրեղէնները:

Հարամիկ.— 150 տուն ունի, օրից 110 տունը հայեր են, մնացածները տաճիկներ: Սպաննուած են 17 հոգի, տարուած են 200-ի չափ տաւար, 5-600 ոչխար եւ մի տաւար տան միջի իրեղէններ:

Ելրիս.— 60-70 տուն, սպաննուած չկայ, բայց բոլորովին թալանուած է, չմնաց ոչ մի անասուն, միայն մնացել են հորերում պահած հացահատիկները:

Պալի-Չուուչ.— 50-60 տուն: Ամբողջովին թալանուած է, սպաննուած չկայ. ժողովրդի մեծ մասը դեռ չէ վերադարձել գիւղ, չըջում են այս եւ այն կողմերում:

Ենկիքէօյ.— 30-40 տուն: Սպաննուած են 7 հոգի, վախից մեռած 3: 2 մարդ զնում են Բերդը զանդատելու, բացի այն, որ ոչ ոք ուշադրութիւն չէ դարձնում սրանց բողոքին, մի իւրբաշի (հարիւրապետ) իր նիզամներին սպաննել է տալիս սրանց, պատճառ բերելով թէ՛ սրանք ցոյցեր են արել կառավարութեան դէմ: Գիւղացիք բոլորն էլ փախչում են Չուուրմէ գիւղը: Թշնամին ամբողջապէս թալանում է գիւղում եղածները. անօգնական գիւղացիք, զրկուած ամէն ինչից, կառավարութեան ստիպմամբ, նորից վերադառնում են իրենց տները. ապրելու ո՛չ մի միջոց չունին, գիշերում են խո-

նաւ գետնի վրայ: Սրանց գրութիւնը վերին աստիճան անմխիթարական է եւ միեւնոյն ժամանակ օգնութեան կարօտ:

Եղբարու.— 20-25 տուն: Այս գիւղացիք երբ նկատում են թշնամու յարձակուիլը, իրենց երեխաների ձեռքից բռնած՝ փախչում են Խոզի գիւղը: Թշնամին գիւղը ամբողջապէս թալանում է: Այս գիւղից էլ ոչինչ չէ ապատուում, բացի տների շարս պատերից, շէն ապատուում մինչեւ անգամ հորերում պահուած ցորենները, զրացի գիւղերի քիւրղ բնակիչները գիտնալով հորերի տեղերը, ցերեկ եւ գիշեր սայլերով գատարկում են հացահատիկները եւ տանում: Բնակիչների մի մասը առաջուց պահուած տնային իրեղէնները ծախելով է՝ իրեն պահում, մի մասն էլ այս եւ այն շաւուրմէջի բարեկամների հասոյթներով է կառավարուում:

Ղարա-Բուզաղ.— 8-10 տուն: Սրանք էլ գիւղը եւ կենդանիները թողնելով թշնամուն, փախչում են Խոզի:

Խոզի.— 60-70 տուն: Այս գիւղը երկու օր կարողանում է գիմաղբել քիւրղերի յարձակման, զինուած լինելով միայն գերանդիներով եւ մանչաղներով: Գիւղի բնական զիբքը եւ այլ հանգամանքներ նպաստում են հայերին ընդգիմաղբել: Վերջապէս գիւղացիք երբ տեսնում են երկրորդ օրուան կատաղի խուժանի աւելի ստուարանալը, միեւնոյն ժամանակ երբ նկատում են զինուորներ էլ նրանց մէջ, այլեւս անկարող լինելով գիմաղբել, բարձրանում են մօտակայ սարը, ուր երկու օր առաջ բուսական ձիւն էր եկել: Երբ այդ նկատում է թշնամին, հասցիւն բազմութեամբ մի յարձակումով լեցուում է գիւղի մէջ եւ շփախոյններից 15 հօգի ամենամանկութ կերպով կա՛մ գնդակահարում են եւ կա՛մ սրախողոզ են անում: Իսկ սար բարձրացողները ոտաբորիկ, մերկ՝ գիշերում են ձեան վրայ, ցրտին դո՛ւ են լինում: 3-4 մանուկներ, իսկ հիւանդներ անհաշիւ: Երկրորդ օրուան կէսօրին հաղիւ մի կերպ փախչում են եւ լեցուում Չաւուրմէ գիւղը, թէեւ նրանք սարի գլխին պաշարուած են լինում: Տեսարանը աճուկ էր. կանանց եւ աղջիկների լաց ու կոծը, մանուկների ծիչը ու աղաղակը՝ «Մամօ՛, հաց տուր գիւի»՝ մանաւանդ ամենացաւալի տեսարան է ներկայացնում յղի կանանց երկունքի մէջ լինելը, նրանց զրութիւնը փախչելու ժամանակ. ո՞վ կարող է մտածել մի բոպէ, որ այդպիսիներին ոչ ոք չի կարեկցում: Սրանցից հաղիւ հազ մի քանիսը կարողանում են հասնել Չաւուրմէ, մի քանիսը զանազան դառն նեղութիւններ կրելով, վերջապէս սարը ձեան վրայ ծնում, իսկ մէկը՝ հայ նահապետական ընտանիքի համար ամենասարսափելին, որ համեստ, ամօթխած եւ պարկեշտ կինը առաջին պատահող օտար տղամարդու խնդրում է տատմայր դառնալ: Խլաթցի Պօղոսը երբ լսում է հայ կնոջ այդ աստիճան անօղնական մնալը, արտասուքը աչքերում կատարում է տատմօր դերը եւ կնոջը եւ նրա մանուկին անվնաս հասցնում Չաւուրմէ: Այսպիսի սրտառուչ տեսարաններ շատերին պատահեց: Խոզիցից այժմ վերին աստիճան անօղնական են եւ ամէն մի բանից զրկուած: Ծատերը երկու-երեք օր քաղցած են մնում:

Արօս.— 30-40 տուն: Այս գիւղից միայն յափշտակում են 3-400 ոչխար եւ 150 տաւար: Ժողովուրդը թէեւ զո՛հ չէ տուել, բայց շատ մեծ սար-

սափի մէջ է: Այս գիւղը եւ Չաւուրմէն, ա՛հից ստիպուած են քիւրղ հեծելազընդերի ամէն կամայականութեան բաւականութիւն տալ, որոնց ոչ մէկը չի կարելի տանել: Բայց ի՞նչ պէտք է անէ խեղճ խնուսցին. նա ստիպուած է տանել այդ ամէնը, քանի որ ոչ ոք իւր բողոքը չի լսիր, արդարութիւն պաշտպանող չկայ:

Վերջապէս Հոկտեմբեր 29-ին Ծաքիւր փաշան Կարինից եկաւ Բերդը՝ հաշիւ պահանջելու կատարուած չարագործութիւնների եւ սխրագործութիւնների համար: Հէնց առաջին օրը, երբ Ծաքիւր փաշան մտնում է Բերդը, Յակոբը էֆէնտին եղելութիւնը մանրամասն նկարագրում է սուլթանի հաւատարմին եւ արդարութիւն պահանջում թշուառ ժողովրդեան, որ ապրելու ամէն միջոցից զուրկ է: Խեղճ Յակոբը էֆէնտին կարծելով, որ ի գութ կը շարժէ բոլոր պապանութիւնները կատարել տուողին, պատմում է մի քանի սրտառուչ տեսարանների կատարուած անպիտութիւնները: Բայց Ծաքիւր իսկոյն հրամայում է նստացնել ամենամութ բանտում եւ խիստ կերպով վարուել կեափուրի հետ:

Ահա ձեզ բարենորոգչի պաշտօնը: Մէջլիսի հայ ազգի անդամը, այն էլ էֆէնտի տիտղոսով, ճշմարտախօսութիւն եւ արդարութիւն պահանջելու համար բանտ է նստում, իսկ հազարաւոր իզրաչիների, համիդիէի հազարապետների եւ այլն բէկերի անպատմելի կերպով կատարած պապանութիւնները անպատիժ են մնում:

Այն բէկերը եւ առաջնորդները, որոնք մի ամբողջ պաւառ ամայութեան եւ թշուառութեան մատնեցին, զրկուում են Ծաքիւր փաշայի բարեսրտութիւնից եւ արժանանում փաշայի հետեւեալ յանդիմանական խօսքերին. «Ո՞րքիւր օլուլլարի, սիզէ ամրը օլոււտի շու կեափուրլարի քէմիւ՞, եօպսա թալան էթմիլէ» (խողերի որդիք, ձեզ հրամայուեց այս անօրէններին կոտորելու՞, թէ կողպատելու):

Քիւրղ համիդիները համեմատաբար աւելի բարեխիղճ վարուեցին քան արիւնարբու տամիկական պաշածեանները, որովհետեւ բարձրագոյն հրամանի համաձայն քիւրղերը պէտք է սրախողոզ անէին հայերին եւ ոչ թէ թալանէին: Բայց քրդական խուժանը աւելի բուսականացաւ թալանով, քան թէ հրահանգի համեմատ՝ սպանելով: Իսկ եթէ ճշդութեամբ կատարուէր այն պատուէրը, որը տուել էր Ծաքիւր փաշան, այժմ Խնուսում մի հայ անպամ չէր կարելի դառնել:

Ծաքիւր փաշան 4 օր մնաց Խնուսի բերդում եւ այդ 4 օրուան ընթացքում հազարաւոր բողոքներ տուին միամիտ հայերը՝ իրենց կրած վնասների եւ զրկանքների համար բաւականութիւն պահանջելով. բայց ոչ մի բաւականութիւն չստացան, միայն այս անորոշ խօսքերն էին լսում Ծաքիւր փաշայից. «Սիզ քէնտի երլարբնտէ կէտըն, սիզըն սօբընըզ էյի օլաքագ սըր» (Դուք ձեր տեղերը վերադարձէք, ձեր վերջը լաւ կը լինի):

Այսպիսի մութ խօսքերից ինչ պէտք է եղրակացնէր խեղճ յուսահատ ժողովուրդը, քանի որ ո՛չ մի կերպ չպատժուեցին չարագործները, ո՛չ մի միջոց ձեռք չառնուեց հայերի զրութիւնը ապահովելու: Դեռ եւս մի թոյլ



յոյս մնացել է այդ վշտակիր ժողովուրդի սրտում. «Իր ապագան տեսնել բարելաւուած». բայց այդ աննշան յոյսը բոլորի մէջ չկայ. մի որոշ մասը աւելի արկածներ է սպասում. նա սպասում է զեռ աւելի թշուառութիւնների դո՛ւ դառնալ:

«Իրօշակ», 1894, քիւ 10, Յուլիս-Օգոստոս

1795

Անցեալ Հոկտեմբեր ամսոյ սկիզբներից Խնուսի ամբողջ ժողովուրդը ա՛հ ու սարսափի մէջ էր գտնուում: Ամէն կողմից, ամէն մի մարդուց՝ քիւրտից, տաճիկից, ասիկներէից, բէկերից եւ քիւրտ ցեղապետներից լսուում էր. «Հայեր, ձեր օրհասը մօտ է»: Քրդերն ասում էին. «Շաքր փաշա բընաւէ դաւալաքէ ամբը դայեա կօւմանան, սարէ ֆլայ ժեքըն, քալանէվան բըպըն» (Շաքիր փաշան թաղաւորի անունով հրաման է տուել քիւրդերին, թէ հայերի զլուխները կտրեցէք եւ նրանց ունեցածները կողոպտեցէք): Իսկ Խնուսի բերդում բնակող տաճիկները եւ զօրքերը, ամէն մի պատահած հայի՝ թէ՛ բերդեցիներին եւ թէ՛ զիւզացիներին սարսափեցնում են այս խօսքերով. «Գեաւուք էրմէնիլէր, կիւնիլէրիզ ազալմիշ տրը, փատիշահ ամբը էքմիշ սիզի քեսմիա», այսինքն՝ անօրէն հայեր, ձեր օրերը քիչ են մնացել, թաղաւորը հրաման է արձակել ձեզ կտտրելու: Ահա այս տեսակ սարսափեցուցիչ խօսքերի եւ սպառնալիքների տպաւորութեան տակ էին գտնուում ամբողջ Խնուսի հայ զիւզացիները, երբ Բայազէտից եկաւ Շաքիր փաշան եւ անցաւ Կարին: Այդ օրերումն էր, այսինքն Հոկտեմբեր 2-3-ին, որ Խալի-Չափուշ խստն զիւզի՝ քիւրդերի հետ բնակող հայերը, թուով 60 տան չափ, թալանուեցին, թէ՛ զիւզի մէջի եւ թէ՛ չըջակայ քիւրդերից: Հայերի բոլոր ունեցածները՝ անասունները, հացահատիկները, տնային կահ կարասիները, բոլորը տարան, ոչինչ չթողեցին: Գիւզացիք՝ թիւրքերի յարձակումից վախեցած՝ փախան այս եւ այն չըջակայ հայ զիւզերը, մանաւանդ որ, քիւրդերի յարձակման ժամանակ զիւզում գտնուած զօրքերը ո՛չ մի պաշտպանութիւն չէին ցոյց տուել հայերին, աւելի զօրքերի անտարբերութիւնից սարսափած զիւզացիք, առանց ուշադրութիւն գործնելու իրենց ստացուածքի կողոպտուելուն, միմիայն իրենց կեանքը փրկելուց ապաստելու համար, փախչում են այս եւ այն կողմերը: Մինչեւ այժմ էլ այդ զիւզի մի քանի երիտասարդներ քիւրդերի սարսափից փախնայով, չըջում են այս ու այն չըջակայքի համարեա աւերակ դարձած զիւզերում եւ չեն փտտահանում իրենց տներն երթալ: Մի շարքից յետոյ՝ դայմագամը ձեւացնելով, որ նոր է իմանում ստացուածքների մի աննշան մասը յետ խելով քիւրդերից, աալիւ է հայե-Խալի-Չափուշի զէպըր, հաւաքում է փախստական հայերին եւ թալանուածքին եւ նորից ամենքին վերադարձնում իրենց տները:

Միքանի օր անցնելուց յետոյ, խալի-չաուշիները խնդիր են ներկայացնում դայմագամին եւ ցոյց տալով աւագակ քիւրդերի անունները, որոնք զիրենք թալաններ են, պահանջում են իրենց անասունները: Գայմագամը բարկացած հայհոյում է զրանց եւ մի քանիսին էլ բանտարկում, որոնք մինչեւ այժմ էլ զեռ բանտերումն են եւ ամենաթշուառ դրութեան մէջ: Բացի այդ,

մի քանիսներն էլ, որոնք զիւզից փախչելիս են լինում քիւրդերի յարձակման ժամանակ, զրանցից մի քանիսը նոյնպէս ձերբակալուում եւ բանտ են տարուում:

Հոկտեմբեր 7-ի զիւզերը՝ քիւրտերը միացած զօրքերի (զրսարգարներ) հետ յարձակուում են Ղարաքէօփրու զիւզի վրայ եւ զիւզի առաջից տանում են 400-ի չափ ոչխարներ եւ միւսնոյն ժամանակ կանչում հայերին. «Եկէ՛ք, եկէ՛ք մենք ենք տանողները, Ֆախի Ահմէդը, Ուսոյէ Բրոն» եւ այն անուններ տալիս: Գիւզացիք քիւրդերի կողմից այդքան փտտահութիւն ունենալը՝ որ ոչխար յափշտակած ժամանակ այդպիսի մի հրուէր կանչեն հայերին, տարօրինակ բան համարելով, դիմում են զիւզում գտնուած միլազիմին, որը՝ 10-15 զինուորների հետ, առաջնորդուում է Բաղէշի փաշայի հարէմին՝ Կարինից-Բաղէշ:

Գիւզացիների թախանձանաց թէ՛ «Օգնեցէք մեզ, մեր զիւզի բոլոր ոչխարները յափշտակեցին քիւրդերը եւ դեռ եւս չեն հեռացել, զիւզին մօտ են, օգնութեան հասէք», միլազիմը բոլորովին անփոյթ կերպով պատասխանում է՝ «Կեափուրլար ցէ իստէօսըզ պեմուէն, սիզրն այնալի վէ սիրմէլի թիվանգլարընըզ վար, սիզ կէտըն դէօնտարըն. սիզըն իչընտա 800 ջանփետալար վարտըր» (Անօրէններ, ի՞նչ էք ուզում ինձնից, դուք ունիք այնալի եւ սիրմալի հրացաններ, դուք պնայէք, դարձրէք ոչխարը, ձեր մէջ պահուած կան 800-ի չափ անձնուրացիներ): Միլազիմի այս պատասխանից աւելի վախեցած, զիւզացիք թողնում են ոչխարները քիւրտերի ապաա կամքին եւ իրենք քաշուում իրենց տները:

Այդ միջոցները Բերդում սպանում են Չաքարէ անունով մի երիտասարդի, որը չէ բարեւում եղել իւզարաշուն: Ղօզլի զիւզում սպանում են՝ Մնօ անունով մի զիւզացու, որ դաշտից ցորեն է կրելիս լինում: Հոկտեմբեր 8-ին Գոփանդուկ զիւզից Շիրվանշէխ տանող ճանապարհի վրայ սպանում են 18 տարեկան շիրվանշէխից մի երիտասարդի՝ Չաքարէ անունով, վիրաւորում են նրա ընկերոջը՝ Թամօ Յարթենին: Հոկտեմբեր 11 եւ 12-ին յարձակում են Աղջամելիք եւ էլըխ զիւզերում գտնուած հարուստ տների վրայ եւ հրացանի գնդակներով սարսափեցնում զիւզացիներին եւ հեռանում են դաշտից, տանելով ոչխարները եւ տաւարները: 17-ին եւ 19-ին յարձակում են Բուռնազ եւ Ղարաքէօփրու զիւզերի վրայ, առաջինից խլում են ոչխարների հօտը՝ 300-ի չափ, իսկ երկրորդից՝ 150-200-ի չափ տաւար: Բուռնազից չփտտահեցան ընկնիլ աւագակների յետեւից, իսկ Ղարաքէօփրեցիք թէեւ ընկան, բայց, բացի ոչ մի տաւար չդարձնելը, սպանուեցին՝ Սահակ եւ Խաչիկ երկու հօրեղբոր որդիները եւ վիրաւորուեցին՝ Արթին եւ Միսէկ անունով երիտասարդները: Այս բոլորը ցերեկով է լինում:

Նկարագրածս բոլոր անկարողութիւններն արել են՝ յայտնի ցեղապետ քիւրդերը, որոնց յականէ յանուանէ ճանաչում են բոլորը, հայ թէ քիւրդ, մեծ ու փոքր:

Այսպիսի զէպքերում զիւզացիք գանդատուում են դայմագամին կա՛մ բողոքաւերելով եւ կա՛մ բերանացի կերպով: Բացի այն, որ ոչ մի զրական

բաւականութիւն չէ տալիս զիւզացիներին, թէ եւ զիւզացիք մէկ մէկ տալիս են աւազակների անունները, զայժմայամբ ալ զպիտիներին խսկոյն բանտ է նստեցնում, որոնք համարձակում են քրդերի ցեղապետների վրայ դանդաղութեամբ, զրանք մինչև հիմա էլ բռնատում են, անասելի նեղութիւններ կրելով: Մի քանի զիւզացիներ զիմում են զայժմայամբ եւ պաշտպանութիւն խնդրում. զայժմայամբ ալ զպիտիներին միայն մի թեթեւ պատասխան տալով, ասում է. «Քիւրտէր սիզըն ուստիւնա կելտիկի վագքտա, հիջ գարշի գոյմայրն, նիչիւն քի Փատիշաքըն աւրի տրը, էկէր սիզ սաղ գալտըզ, սիզըն մալլարըզ պէն գէրի ալըր վերիէօրըմ սիզա» (Քիւրտերը ձեզ վրայ յարձակած միջոցին, երբեք մի զիմարէք, որովհետեւ թագաւորի հրամանն է, իսկ եթէ դուք ողջ մնացիք, ձեզանից տարուած բոլոր ստացուածքները, ես ետ կ'ստանեմ եւ ձեզի կը վերադարձնեմ):

Այլ եւս ոչ մի կասկած չկար, որ կառավարութեան թելադրութեամբ մի սարսափելի վտանգ է սպառնում հայերին, վտանգը անխուսափելի է դառնում: Սկսած Հոկտեմբեր 20-ից մինչև 28-ը, ամբողջ Խնուս գաւառը զանազան քիւրդ աշխրէթների յարձակումներից աւերակ դարձան զիւզերը, սպանուեցին եւ զանազան կողմեր փախան բնակիչները, սմանք էլ զոչ դարձան ցրտի, վախի եւ քաղցի: Մի առ մի իւրաքանչիւր զիւզերի մէջ պատահած դէպքերը նկարագրելը աւելորդ համարելով, խնդրում եմ առ այժմ բաւականանալ այսքանով:

«Ռոշակ», 1896, Փետր., քիւ 11, էջ 84:

Խնուսի Հարամիկ հայ զիւզին մէջ, երբ հայ բնատանիքներ իրենց վաւակներով մեռած են...: Սոփի աղէտներն հերիք չէին, թուրք կառավարութիւնն ալ սկսած է իր ճշուումները ու հայրածանքները օր աւուր վրայ բազմապատկել: 1894 Հոկտեմբեր 28-ին զարաքէօփրիւցի Հիրապի կղզոր տղուն երկու եղները զիւզերով կը յափշտակեն:

Հոկտեմբեր 30-ին Պուրնապոյ 150 ոչխար կը տանին օր ցերեկով Քէօջք զիւզի քիւրտերը:

Սեպտեմբեր 28-ին, Փայիկ քիւրտ զիւզին գլխաւորներէն՝ Արիֆ աղան, Եուսուֆ աղան եւ Ղասրմ, այս երեքը հեծեալ, հետերին 15 ծառաներ առած, Չեւիմէ զիւզին վրայ կը յարձակին, բայց զիւզացիները կը դիմադրեն եւ մէկ քանիները վիրաւորուելով ետ կը փախցնեն առանց բան մը տալու:

Հոկտ.ին Արօս հայ զիւզէն 10 կով ու եղ բռնութեամբ կը տանին, զիւզացիները մեռցնելու աստիճան ձեռնէլէ ետք: Ուսթա Մարտոն եւ իր եղբորորդին, իրենց տունը գէնքեր պահելու ամբաստանութեամբ ձերբակալուած ու Կարին տարուած էին: Կարնոյ բանտին մէջ տրուած խոշտանգումներուն չկրնալով դիմանալ, եղբորորդին կը մեռնի. իսկ ձերունի Մարտոն՝ Բերդ կը փոխադրուի, ուր ցարդ կը մնայ շղթայակապ:

Նոյեմբեր 5-ին, Խոզլու զիւզին մօտ, Պուրհանլի քուրդերէն, Սատոյի տղան՝ Խուլուն եւ ճէլալի երեք քուրդեր, պանդխտութեան դացող քսան հայեր կը թալլեն, ամէն գանգատի դէմ՝ խուլ կը մնայ կառավարութիւնը:

Նոյեմբեր 7-ին, իբր թէ երկրին անդորրութիւնը պահպանելու համար, Խնուս եկող զօրքերէն մէկ քանին Շապատին եւ Մարուֆ հայ զիւզերը կու գան եւ իրենց ձիերուն կերցնելու՝ զարի կը պահանջեն: Գիւզացիները կը յայտնեն աղաչանքով, թէ իրենց զիւզին մէջ զարի չկայ, բայց զօրքերը՝ ձեռնով, հայհոյանքով անպատճառ զարի կ'ուզեն: Վերջ ի վերջոյ, զիւզացիները կը ստիպուին իրենց ընտանիքին սնունդ ցորենը տալ զարիի տեղ: Այս անգամ զօրքերը չեն ուզեր իրենց ձիերուն կերցնել ցորենը, զոր կը պահեն, եւ իրենք, կ'երթան խոտի գէղերէն՝ բռնի խոտ բերելու համար: Հայերուն համբերութիւնը հատած, կը յարձակին զօրքերուն վրայ եւ զանոնք կը վռնտեն իրենց սահմաններէն:

Նոյեմբեր 12-ին, Շապատին զիւզէն Սրգոյի տղայ՝ Պղտոյի 22 ոչխարները զիւզերով կը վերցուին Տիւան զիւզի ճիւղանցի քուրդերէն: Բողբ կը տրուի կառավարութեան: Տրուած աղերսագիրները՝ իտարէի ժողովոյ անդամներէն Մուլա Խուլաճի Ահմէտ աղան, զայժմայամբ ձեռքէն խլելով կը պատռէ, եւ աղերսարկու հայը կը վռնտէ:

Նոյեմբեր 13-ին, ճիւղանլի Ֆէլլի աղային տղան՝ Սատի, Պուրհան քուրդ զիւզի միւլթէղիմը, իր հաւաքած տասանորդ ցորենը՝ Մարուֆ հայ զիւզին մէջ ամբարելու պատրուակով՝ տեղ մը կ'ուզէ զիւզացիներէն: Ասոնք երբ ժխտական պատասխան կու տան իրեն, կը կատղի, զիւզացիները այնքան կը ձեռնէ որ, մէկ մասը կը փախչի մօտակայ Շապատին զիւզը կ'ապաստանի, մինչև որ միւլթէղիմը զիւզէն կը հեռանայ:

Նոյեմբեր 14-ին, հոչակաւոր աւազակապետ Մուսա Պէկի որդին՝ Ալի Պէկը, տասնըջորսէ տասնըհինգ տարեկան պատանի մը, տասնըհինգ ձիաւորներով Խնուս բերդ երթալու միջոցին, Մարուֆ զիւզը կ'իջեւանի. երբ իր պահանջները չեն կատարուիր, սպառնալիքով կ'ըսէ զիւզացիներուն. «Գիտէ՞ք ես ով եմ, ես այն Մուսա Պէկի որդին եմ, որ հայերը Չուխուրի մէջ շամփուրով խոքովեց: Եթէ պահանջածներս չտաք, ես ալ կ'ընեմ միեւնոյնը»:

Նոյեմբեր 22-ին, փայիկցի քուրդեր, Չեւիմէ զիւզին մէջ ցորենի հոր մը բանալով, երկու սումար ցորեն կը գողնան:

1895 Յունուար 5-ին, Մննդեան Խթման իրիկուն, զըռքցի 70 զինեալ քուրդ ձիաւորներ կը լեցուին Պուռնաղ զիւզը, երբ հարսանիքէ մը կը վերադառնային: Ի՞նչ հարստահարութիւն ըսես չեն հասցուցեր հայ զիւզացիներուն: Տօնի ճաշ չեն ուտեր՝ մեղք համարելով, եւ կը պահանջեն նորանոր կերակուրներ պատրաստելու, եւ բռնի մօտ 200 հաւ կը մորթեն:

Յունուար 10-ին, հարկահաւաքիչ ոստիկանները Հարամիկ զիւզացի Կակոյի տղան՝ Միսոն այնքան կը ձեռնեն, որ մէկ ամիս կ'իտամեռ հիւանդ կը պառկի:

Յունուար 10-ին, յատկապէս Կարինէն զրկուած փոխ Մուհամմէտ էֆ., միասին առած 6-7 ձիաւոր ժանտարմաներ, յանկարծ Խալիլ Չաւուշ զիւզը կը մտնեն և Բարիսնց, Վրդոյնց, Ուստա Սարգսի և այլոց տունները մանրակրկիտ կը խուզարկեն, զէնք, եւ այլ եւ այլ վնասակար բաներ փրնուելու համար, բայց ոչինչ գտնելով, ձեռնուռնայն ետ կը դառնան: Միայն թէ Պետոյի տղան՝ Կարոն, որ նոյն օր Բերդէն վերադարձած էր, կը ձերբակա-

լեն, ըսելով որ կանխաւ տեղեկութիւններ բերած է խուզարկուելու մասին, բայց յետոյ անպարտ կ'արձակուի: Նոյնպէս ձերբակալուելով՝ քանի մը օրէն ազատ կ'արձակուի նոյն զիւզացի Սիմոն անուն անձը, որուն մասին գիւղրայ: Յիշեալ մասնիչը արձակուելէ ետք կ'որոտ է եւ չի զիտցուիր թէ ո՛ւր զացիք կը հաստատեն թէ քրդաց հետ միացած մասնութիւն կ'ընէ զիւզին գացեր է:

Յունուար 25-ին, նոյն խուզարկիչ պաշտօնեաները, Շապատին գիւղը գալով կը խուզարկեն Գրդոյեան Օհանի եւ անոր մեծ եղբոր՝ Յակոբի տուները: Աւելորդ չէ յիշել կանանց եւ տղայոց լաց ու կոծը, կրած սարսափը: Օհանի տունը մանրամասն քննելով եւ տան զանազան կողմերը պեղելով, ոչինչ կը գտնեն, միայն պէրտանի հրացան մը կը գտնեն, որ իբրեւ աւանդ տրուած էր չէրքէզ թամար աղայի կողմէ: Հրացանը գտնուելուն պէս, Օհանի եղբայր Միսակը կը ձերբակալեն իր տեղ: Միսակը Բերդ տանելով բաւական կը շարշարեն (անօթի, ծարաւ ու ցուրտ մարապի մը մէջ պահելով), որպէսզի իմաց տայ թէ հրացանը ո՞ր տեղէն է եւ թէ իրենց տունը հիւրաբար գտնուող բժիշկ Մուրատ անուն անձը եւ իր ընկերակից Արմենակը՝ ո՞ւր կը գտնուին եւ այլն: Նախ կը պատասխանէ, թէ՛ «հրացանը յիշեալ թամարին է, եւ թէ՛՝ այդպիսի մարդ ո՛չ տեսած եւ ոչ ալ տեղեկութիւն ունի»: Այս պատասխանին վրայ կը սպառնան, բայց անվեհեր կերպով կը շեշտէ. «Կ'ուզէ՞ք սպաննեցէ՞ք, ես տեղեկ չեմ»: Քանի մը օր ետք Օհանը Քաղքիկ գիւղին մէջ ձերբակալուելով, եղբայրը կը թողուն, իսկ զինք Մկրտիչ վարժապետ անուն անձին հետ Կարին կը տեղափոխեն: Այդ մտնիչը անձնական ատելութեամբ կուրցած մարդ մըն է, որ Օհանի հետ անձնական թշնամութիւն ունեցած ըլլալուն՝ այդ այգանելի ու զգուելի քայլը առած է:

Նոյն ամսուն հետզհետէ կը խուզարկեն Մարուֆ գիւղին մէջ Կատանի Աւագի, Ասոյի եւ այլոց տուները: Ղարաքէօփրի գիւղին մէջ՝ Ռէս Կակոյի, Մէլէի եւ այլոց տուները: Քաղքիկ գիւղին մէջ Արթին աղա Տիրացեանի տունը: Հարամիկ գիւղին մէջ Ռէս Մարգարի տունը: Չնայելով որ վնասակար բան չեն գտներ, այնու ամենայնիւ կը ձերբակալեն Ղարաքէօփրուի Ռէս Մարտոն, մարուֆցի Կատանի Աւագը, քաղքիկցի Արթին աղայի տղայ՝ Ալեքսան էֆ.ն եւ հարամիկցի Ռէս Մարգարը, զորս մի քանի օր պահելէ ետք, կը թողուն: Կ'երեւի թէ փոխը յիշեալ անձնաւորութեանց հետ դրամական հաշիւ մը կարգադրել ուղած է: Նոյնպէս կը ձերբակալեն Մղսի Գէորգեան Խաչատուր էֆէնտին, Խաղոյի Սեդրակը եւ Քէչիչօղլու Ստեփանը, թոփալ Առաքելի եղբայրը: Վերջին երկուքը ամբաստանուած են, իբր թէ ազգով ու կրօնքով ուս՝ երկու թուրք զորաց փախչելուն մասնակցած են, իսկ Խաչատուր էֆէնտին իբր թէ Խաղոյ Չաւուշ գիւղը զաղտնի լրտեսութիւն ըրած է. յետոյ ոչ մէկ ապացոյց ունենալով՝ բոլորն ալ ազատ թողուած են: Ձերբակալուած են նաեւ հարամիկցի Դաւիթ Մուրատեանը, Պողոս պատուելին (Քարահատեան) եւ չեւիրմէցի Ալեքսանը. ասոնց յանցանքը ինչ ըլլալը երբեք յայտնի չէ: Ասոնցմէ ոմանք փոխի Մուհամմէտը Կարինէն առաջին անգամ գալուն ձերբակալելով քիչ ժամանակ ետք թող տուաւ, իսկ Մարտ ամսուն սկիզբները կրկին անգամ ձերբակալելով, մինչեւ հիմա բանտը պահած է:

### ԳԼՈՒԽ Ժ.

## ՅԵՂԱՓՈՒՍԱԿԱՆ

### ԴԷՊՔԵՐ ԵՒ ԴԷՄՔԵՐ

Այս գլուխին մէջ ամփոփուած տեղեկութիւններուն համար վայելած ենք օժանդակութիւնը զանազան անձերու, որոնց անուան յիշատակումը անհրաժեշտ կը նկատենք: Չանազան առիթներով մեզի պատմած են Միսակ Ղարիպճանեան, Մովսէս եւ իր տիկինը՝ Արեգնազ Տէր Զաքարեան, Զաքար Տէր Զաքարեան, Արեգնազ Խանտիլեան՝ Մուխսու Միսակ աղայի աղջիկը: Իսկ զբաւոր կերպով իրենց տեղեկութիւնները մեզի փոխանցած են՝ Երանոս Հլոյեան եւ Միհրան Սիմոնեան, Ֆրէզնօ (Քալիֆորնիա). Քաղքիկ գիւղացի՝ Արփիար (Ալպերթ) Ղուկասեան, Լիոն (Ֆրանսա). Սարգիս Խուշուտեան՝ Խնուս բերդեցի, Թեհրան (Պարսկաստան): Բոլորին ալ մեր շնորհակալութիւնները կը յայտնենք:

Օգտուած ենք նաեւ Թէոդիկի «Ամենուն Տարեցոյցը» հատորներէն, Հայրենիք Ամսագիրի մէջ լոյս տեսած յուշագրութիւններէն, Դրօշակէն, Ս. Դ. Հնչակեան Կուսակցութեան Յիսուամեակ (1887-1937) բացառիկ թիւէն: Նաեւ հայերէն զանազան թերթերէ եւ պարբերականներէ:

### ՆԱԽԱՅԵՂԱՓՈՒՍԱԿԱՆ ՇՐՋԱՆ

Թրքական բռնակալ լուծին տակ, ինչպէս ամբողջ Թրքահայաստանի զանազան շրջաններուն, նոյնպէս եւ Խնուսի շրջանի հայոց ինքնապաշտպանութեան եւ ըմբոստացման զանազան շրջաններ կան: Ասոնք եղած են թէ՛

անհատական եւ թէ հաւաքական բողոքներու եւ ըմբոստացումներու շրջաններ. ժամանակ առ ժամանակ ցուցադրուելով, եկած հասած են մինչեւ ազգային վերազարթնումի՝ քարոզչութեան եւ յեղափոխութեան շրջանը:

Անտարակրօյ, որ անհատական մարտնչումներու եւ ըմբոստացման գործունէութիւնը բնականօրէն ապստամբական եւ ապստամբական ըմբռնումներով կարելի չէ ընդունիլ, անոնք եղած են պարզ անհատի ըմբոստ եւ հերոսական խռովումներ արդիւնք, առաւելագէտ թէ՛ տիրող կառավարութեան եւ թէ շրջապատի կիսափայտեան լէզկի, քիւրտ եւ թուրք տարրերուն դէմ: Սակայն զանոնք կարելի է նկատել սողմերը եւ սերմերը ապագայ աւելի բնականօրէն ըմբոստացումներու եւ անաւասիկ իրենց այդ արժէքով է որ հոս կը սեւեռուին:

Այս գլուխին մէջ նկատի պիտի առնուին Խնուս գաւառի ԺԹ. դարու ըմբոստութեան եւ յեղափոխութեան փորձերը, նաեւ Ի. դարու առաջին 15 տարուան ճիւղերը:

**ԽՈՏԵՏԱՆ**

Նախալեզափոխական շրջանի առաջին ըմբոստներէն կը նկատուի չաւուրմէցի Յակոբի տղան՝ Խոտետանը: Թուրք պետութեան հարկահաւաքը (Թահսիլտար) երբ հարկահաւաքման համար Չաւուրմէ կու գայ, քանի մը անգամ Խոտետանը ծեծի եւ չարչարանքի կ'ենթարկէ: Յաճախակի հալածանքի եւ չարչարանքի այս վիճակը անհանդուրժելի դառնալով, օրին մէկը, Խոտետան իւրօրի կ'ըսէ. «Վրէժ պիտի լուծեմ»:

Խոտետան վրէժխնդրական մտադրութեամբ, քանի մը ընկերներով կը փախի Կովկաս, հոն կ'աշխատի, շահած գրամով զէնք մը կը գնէ, եւ զինուած կը վերադառնայ հայրենի դիւղը:

Պետական հարկահաւաքը նորէն կու գայ, եւ կը լսէ որ Խոտետան՝ կամ կարճ անուեով Խոստոն՝ գիւղ վերադարձեր է: Այս անգամ, սակայն, երբ հարկահաւաքը կ'ուղչէ Խոստոն հալածանքի ենթարկել, ան հարկահաւաքը զինաթափելով, գիւղէն պետական հարկին ի հաշիւ հաւաքած դրամն ալ խլելով, կ'ըսէ հարկահաւաքին. «Գնա Խնուս բերդ եւ պատմէ գլխուդ եկածը»: Թահսիլտարը կ'երթայ Բերդ եւ կը պատմէ եղելութիւնը: Կառավարութիւնը, ուրիշ, աւելի վայրագ թահսիլտար մը՝ Մուսթաֆա էֆէնտի անուեով՝ կը զրկէ Չաւուրմէ՝ հարկ հաւաքելու եւ Խոստոն ալ պատժելու:

Խոստոն, սակայն, կը սպաննէ նորեկ թահսիլտարը, և անդամահատելով, մարմինը կը լեցնէ հապուկայի (պարկ) մէջ, եւ թահսիլտարին ընկե-

րացող ժանտարմային կը պարտադրէ, որ տանի անդամահատուած մարմինը Բերդ, եւ յայտնէ եղելութիւնը:

Ժանտարման Բերդ հասնելով, կը հարցուի իրեն թէ, Մուսթաֆա էֆէնտի՞ն է, հապուկային մէջն է, — կ'ըսէ ժանտարման: Որքան ալ որ չեն հաւատար ժանտարմայի բաժին, սակայն, բուսածը իրողութիւն ըլլալով, կառավարութիւնը կը սկսի Խոստոն հետապնդել: Այս դէպքէն ետք, Խոստոն արդէն ըմբոստ եւ քաջ յեղափոխական կը դառնայ:

**ԳՈՎԱՆԴՈՒԿՑԻ ՊԱՂԷ ՄԵՈՆ**

Պաղէ-Մխոն, իր գիւղին մէջ ծանօթ էր: Իրենց ընտանիքը ծանօթ էր նաեւ Մչտօ Ըոճօ անուեով: Օրին մէկը, ամառ ժամանակ, երեք չէրքէզներ կը յարձակին Մխոյի անասունները կողոպտելու: Լուր կը հասնի Մխոյին, թէ չէրքէզները, իր եղներէն չորս հատ տարեր են: Մխոն՝ զինուած, կը հետապնդէ չէրքէզները, հասնելով անոնց, Խամշով ձորի մերձակայքը, կռիւի կը բռնուի չէրքէզներուն հետ:

Կռիւի ընթացքին, Մխոն կը սպաննէ չէրքէզ Պաթալ բէկը եւ ուրիշ չէրքէզ մը: կը վիրաւորէ նաեւ չէրքէզ Իսմայիլը: Մխոն կարծելով, որ Իսմայիլն ալ սպաննուած է, անգողչութեամբ, կը մօտենայ Իսմայիլին, սակայն Իսմայիլը, որ թեթեւ կերպով վիրաւորուած կ'ըլլայ, յանկարծ կը կրակէ Մխոյին վրայ: Վէրքը մահացու կ'ըլլայ, եւ Մխոն քանի մը օր ետք կը մեռնի: Սակայն, Մխոյի տղան եւ Մհերի Դաւիթը՝ Մխոյի աներորդին, կը հետապնդեն Իսմայիլը, եւ վերջապէս, Բուլանուխի Եոնջալու գիւղին մէջ կը սպաննեն զայն:

\* \* \*

1890-ական թուականներուն, Սուլթան Ապտիւլ Համիտի գահակալութեան դաժան օրերուն, Խնուսի հայութիւնը մատնուած էր սարսափելի հալածանքներու եւ զուլումի: Մէկ կողմէն թուրք բռնակալ կառավարութիւնը, միւս կողմէն, Բինկօլի եւ Խամուրբերդի սարերուն թառած աւազակաբարոյ քիւրտ աշիրաթներէն կազմուած՝ Սուլթան Համիտի անուեով Համիտիէ ալայի գունդերը:

Ահաւոր այս գոյալիճակը մատնած էր զինք գերազոյն յուսահատութեան, որմէ աղատուելու համար, սկսած էր միջոցներ որոնել, անգամ արտապաղթի՝ քարքի քէպայի վրայ մտածել:

Ճիշտ էր որ քրիստոնեայ հայ ժողովուրդին հանդուրժելու եւ համբերելու, «քըլամիդ աջ երեսիդ եթէ գարնէ, ձախն ալ դարձուր»ը դեռ կը քարոզէր, սակայն, Հին Կտակարանի «Ակն ընդ ական, առամն ընդ առաման»ի

վարդապետութիւնն ալ սկսած էին ուսուցանել երիտասարդութեան, վարդապետի, քահանայի եւ վարժապետի շրթունքներով, եւ այդ արդար ըմբոստութիւնը սկսած էր արձագանգել հայոց լեռները, յայտնի ու գաղտնի երգելով:—

Ձայն մը հնչեց էրգրումի հայոց լեռներէն,  
Թունդ, թունդ ելան հայի սրտեր, գէնֆի շաչիւնէն...

Եւ ասոր կը յաջորդէր «Ազատութեան այն վառ սէրը, թունդ որոտաց մեր սրտումը»: Ազատութեան համար գոհուելու պատրաստակամ հայ երիտասարդը կ'երթար մտնելու յեղափոխական շարքերուն մէջ՝ ծնրազիր, խաչի, Աւետարանի եւ սուրի վրայ երգուելով, կը մկրտուէր ջանփէտայի:

Ըմբոստացումի եւ վրէժխնդրական քանի մը անհատական զէպքեր արդէն արձանադրած ենք, ահա տանք նոր զէպքեր:

**ՓՈՍՏԱՅԻ ԴԵՊՔԸ**

Շատ յանդուզն եւ զդայացունց զէպք մըն էր: Գետական փոստան յարձակման կ'ենթարկուէր Զեռնակ սարի կիրճէն անցնող ճանապարհին վրայ: Կը սպաննուէին սուրունին եւ քաքառը, ու նաեւ իրենց ընկերացող ժանտարմաներէն մէկը: Կը կողոպտուէր փոստայով փոխադրուող դրամը: Թալանճիները կ'անյայտանային:

Թուրք կառավարութիւնը, իր միտքէն անգամ չէր կրնար անցնել, թէ այս յանդուզն եւ զդայացունց արարքը, կրնար դերի եւ ստրուկ նկատուած հայոց կողմէն կատարուիլ: Դէպքին դերակատարները, քիւրտ աւազակները նկատելով, իրրեւ կասկածելի յանցաւորներ, Տուման գիւղին բռնի տիրացած, յայտնի աւազակապետ Շահոն, իր արբանեակներով ձերբակալուելով կը բանտարկուի Խնուս բերդի բանտը: Փոստայի զէպքին իրական պատմութիւնը կը մնար գաղտնիքներով ծրարուած, մինչեւ 1908-ի Օսմանեան Սահմանադրութիւնը, ու այն ատեն միայն կը յայտնուէր որ, 1891-ին կազմակերպուած Հ. Յ. Դաշնակցութեան մարտական խումբն էր, որ կոչուած էր դիմադրելու համիտիէներու եւ քիւրտ աշիրէթներու յարձակումներուն, ու եղած էր այս յանդուզն գործունէութեան գերակատարը: (Տես «Հայ յեղափոխականի մը յիշատակները», Ռուբէն, հատոր Գ., էջ 67):

Տուման գիւղի քահանային դեղանի աղջիկը կ'առեւանդուէր, գիւղին ազային Շահոյի տղուն՝ Խալլոյի կողմէ: Իրրեւ փոխվրէժ, նոյն գիւղացի կտրիճ հայ երիտասարդ՝ Գոյոյի Աւազի կողմէ կ'առեւանդուէր քահանայի աղջկան առեւանդիչ Խալլոյի աղջիկը: Քահանային աղջիկը, անասելի տանջանքները ետք, փրկապիսով կը վերադարձուէր իր ծնողքին: Սակայն, Շահօ Խալլոյի աղջիկը առեւանդուելէն ետք կ'անյայտացուէր:

**ՄԱՐՏԱԿԱՆ ԽՈՒՄԲ**

Հայ բոլոր գիւղերուն մէջ կը կազմակերպուէին զազանի կերպով մարտական խումբեր: Իւրաքանչիւր խումբը 5 կամ 10 անձերէ բաղկացած: Մարտական խումբի անգամ կրնային ըլլալ անոնք, որոնք կուսակցութեան անդամագրուելէն ետք, օժանդակ խումբի մը մէջ կը մարտակէին, մինչեւ որ կը դառնային փորձուած եւ վստահելի մարտիկներ: Մարտական խումբի անգամ մը պիտի ունենար իր գէնքը եւ որոշ քանակութեամբ փամփուշտ: Խումբի նոր անգամ մը կ'ընդունուէր խումբին որոշումով եւ հաւանութեամբ, եւ անհրաժեշտ պարագային, դուրս կը հանուէր խումբէն, չէզոքացուելով, ու մանաւանդ հսկելով անոր առօրեայ կեանքին եւ յարարելութեանց վրայ:

Մարտական խումբը պարտական էր պաշտպանել գիւղը՝ քիւրտ աւազակներու, համիտիէներու եւ ջանպէզարներու հարձանքներէն, եւ ի հարկին օգնութեան հասնիլ հոն, ուր պէտք զպացուէր իր օչնութեան: Մարտական խումբին խմբապետը եւ տասնապետը բնորութեամբ կը նշանակուէին: Անդամները, պարտաւոր կ'ըլլային սահմանուած անդամատուրքը վճարելու: Մարտական խումբին խմբապետը միայն գիտակ պիտի ըլլար խումբի զինական պահեստին եւ անգամներու անուններուն, կանխապաշտպանութեան մտահոգութեամբ, որպէսզի եթէ սեւէ մէկը ձերբակալուէր, դժուարին պարագային, մատնութեան առիթ չունենար:

Գիւղերուն մէջ, դատ ու դատաստանը կը տեսնէր խմբապետը, եւ տրուած որոշումը պարտադրարար ընդունելի էր կողմերուն: Գիւղին ուխտ եւ մէջլիսը կ'ընտրուէին կուսակցութեան ընդունելի թեկնածուներէն: Քահանան եւ վարժապետը, ժամկոչն ու զգիրը վստահելի անձեր եւ գործակից պիտի ըլլային խմբապետին:

Գիւղի ժողովուրդը պարտաւոր էր գիւղը իջեւանած ֆէտայիները պահելու, կերակրելու եւ անոնց ապահովութեան հսկելու: Տարին անգամ մը ընդհանուր հանգանակութիւն կը կատարուէր, որուն հասոյթը կը տրամադրուէր զէնքի զնման, նաեւ զպրոցի, եկեղեցիի եւ բանտարկեալներու օժանդակութեան:

Յեղափոխութեան շրջանին տիրող այս դոյափիճակէն ստեղծուած հոգեբանութիւնով, ժողովուրդը հետեւեալ ասացուածքը ունէր. «Յերեկուան լոյսին ու արեւուն հետ՝ Մահմէտը կ'իշխէ, իսկ գիշերուան աստղերուն ու լուսնեակի լոյսին հետ՝ Քրիստոսը», այսինքն, ցերեկ ատեն, թուրք կառավարութիւնն է իշխողը, իսկ գիշեր ատեն՝ յեղափոխութիւնը: Իրաւ ալ, այդ էր կացութիւնը:

Հայ յեղափոխութեան սկզբնական շրջանին, Հնչակեան կուսակցութիւնը մուտք գտած է Խնուս: Հնչակեանները աւելորդ անունով կը կոչուէին Զուռնիներ: Սակայն, կարճ ժամանակ ետք, երբ Դաշնակցութիւնը մուտք կը գործէ, աւելի կուս կազմակերպութեամբ, Հնչակեան կուսակցութիւնը տեղի կու տայ Դաշնակցութեան: Դաշնակցականները կը կոչուէին Համար-

ճակնիք: Սակայն, անհատ հնչակեաններէն շատերը, ինքնապաշտպանութեան, մարտական խուճրերու եւ հանրային գործերու մէջ, կը գործակցէին Դաշնակցութեան: Այդպէս եղած է Հրայրի ժամանակ, երբ տակաւին ինք հնչակեան եղած է: Հաս կու տանք անունները այն հնչակեաններուն, որոնք մեզի ծանօթ են.— Օհան Տէր Զարարեան՝ Պաշտուչ գիւղէն, Ազէքսանդր Մայրասեան (Յարթէնի տղան)՝ Գոյանդուկ գիւղէն, Կարապետ Մայրասեան՝ Նիկո Կարապետ, Խնուս բերդէն, Տեապոյային գաշնակցական: Պետրոս Կարապետեան (Քեօի)՝ Հարամիկ գիւղէն, Տեապոյային գաշնակցական: Յովհաննէս Մեյլիքեան (Վարժապետ)՝ Հարամիկ գիւղէն: Սամէլի Յարթէն՝ Հարամիկ գիւղէն: Դաւիթ Բառօհանեան՝ Հարամիկ գիւղէն, Տեապոյային գաշնակցական: Յակոբ Մուրատեան՝ Հարամիկ գիւղէն (բնիկ Խարբերդի Հիւսէնիկի գիւղատանէն): Չեօրմէ գիւղէն՝ Յեսուս: Հարամիկ գիւղէն Միրզօ Յովսէփ, որ անցած էր Կովկաս եւ հաստատուած Խարս:

## ՅԵՂԱՓՈՒՈՒԿԱՆ ԴԷՄՔԵՐ

Յեղափոխութեան շրջանի բնօրինակական դէպքերը ներկայացնելէ աւելի, հաս կը ներկայացնենք դէմքերը: Խուսափած ենք ժամանակագրական կարգը ընդգրկելէ, այլ հետեւած ենք այդ դէմքերուն այբուբենական շարքին:

**ԱԼԵԱԹՈՒՆԻ  
ԱԲՐԱՀԱՄ**

Կեղծ անունով Չեօրմէ խան, իսկ աւելի ծանօթ, իր փոքր կազմուածքին համար, Պուճուր Աբրօ անունով: Ծնած Խնուս բերդ, Ալիաթունենց կամ Տէր Մահակենց ընտանիքի զաւակ: Խնուս բերդի Ալատին բէկերու գերզաստանը կը բնակէր քաղաքին բարձր եւ գեղատեսիլ թաղամասը, որ պաղլա կ'անուանուէր: Պաղլայէն քաղաքի շուկան իջնելու ճամբայ մը կ'անցնէր Ալիաթունենց տան առջևէն: Ալատին բէկերու տղայոց յաճախակի անցուղարձի հետեւանքով, օրին մէկը, կրիւ մը կը փրթի Աբրօյի եւ Ալատին բէկերու տղայոց միջև: Աբրօն կը վերաւորէ բէկին տղան եւ կը դատնայ փախստական: Չորոյց կը շրջէր նաեւ, որ Աբրօն բէկին տղոցմէ մէկը կը բռնէ, լաւ մը ծեծելէ ետք, կրկնակօշիկը (կալօշ) բերանը կապելով, կը սպառնայ որ երթայ եւ հօրը ցոյց տայ: Փախստական Աբրօն, գաշնակցական շարքերու մէջ մտած, Խնուսէն կ'անցնի Կովկաս: Կարճ ժամանակուան ընթացքին իր քաջութիւնով աչքի կը դարձնուի եւ կը դատնայ Դաշնակցութեան ահաբեկիչ զինուորը: Կ'ահաբեկէ Խանի խումբին մատնիչ պարսից զեւսականատան զինուոր-

րական պաշտօնեան: Կը մտանակցի հայ-թաթարական կռիւներուն, մեծ քաջագործութիւններ կատարելով: Բազուի մէջ, Մանթաշովի քարիւղի արտադրութեան գործարանի (գալխք) մէջ, հսկիչի եւ պաշտպանութեան գործը իրեն կը մտահուի: Բազուի մէջ, ուսու մեծամասնականները (պուշեւիկ) իրենց ստորերկրեայ գործունէութիւններու միջոցին, հարուստներու զրամները բռնադատելու, կամ կողոպտելու յանդուգն փորձերու ընթացքին, Ստալինի կազմակերպած մէկ փորձը կ'ըլլայ յարձակիլ Մանթաշովի գործարանին վրայ, կողոպտելու շարթափճարներու համար բերուած պատրաստ զրամը: Աբրօն կողոպտիչները Տեապոյայի տղով, կողոպտուող բռնի առնելով կը վերադարձնէ Մանթաշովի պաշտօնէութեան: Ստալին, պարտուած՝ Աբրօյի քաջութիւնէն, կը սկսի Աբրօյի բարեկամութիւնը փնտռել, երբ առեն մը միասին բանտարկուած կ'ըլլան:

Աբրօն Բաթում եղած ժամանակ, օր ցերեկով Բաթումի մայթերուն վրայ կը սպաննէ թուրք զապան՝ Ալի փաշան: Ասիկա, այն Ալի փաշան էր, որ Սուլթան Համիտի հայաշարած իշխանութենէն Վանի մուֆաթիշ՝ քննիչ կը զրկուի: Ալի փաշան, Պուշեւ Վան ճամբորդութեան ընթացքին, երբ Խնուսէն կ'անցնի, գիշեր մը կ'իջևանի Գոյանդուկ գիւղատանը, եւ երբ կը հանդիպի ձիթհանքի մը մէջ գործող հայերու, որոնք զրկուակներ հազած կ'ըլլան, կը հարցնէ ինչ ըլլային, հասկնալէ ետք, ամբարտաւանօրէն կը յայտարարէ, «Երբ Վան հասնիմ, բոլոր հայերը այս վիճակին պիտի ենթարկեմ»: Ալի փաշան Վանի մէջ իր մուֆաթիշութեան ընթացքին հայոց հանդէպ ստսկալի հայածանքներ կը հրահրէ: Պալիս իր վերադարձը կը կատարէ Կովկասի վրայով: Ճամբորդութեան ընթացքին, երբ Բաթում կը հասնի, Աբրօն՝ օր ցերեկով, Բաթումի մայթերուն վրայ կ'ահաբեկէ փաշան, ե զիսկը մայթերուն վրայ թողելով կ'անյայտանայ:

Բազուի մէջ ահաբեկումի կ'ենթարկէ ստրիկանապետը. ձերբակալուելով Սիպիր կ'աքսորուի: Սիպիրէն փախուստով կը վերադառնայ Կովկաս, եւ կը մտնէ Հայ Կամաւորական բանակի Գ. գունդին մէջ, Համազասպի հրամանատարութեան ներքև: Հայկական Կամաւորական բանակի կազմալուծումէն ետք, ուստական բանակի Խնուս զրաման շրջանին՝ կու գայ Խնուս, ուր կուսակցական եւ հանրային գործերու լծուելով կը մնայ մինչև 1918-ի ընդհանուր նահանջը: Նահանջի ճամբուն, Խնուսէն գկպի Արաշկերտ, Գարաքիլիսէի մօտերը, գաւազորէն կը սպաննուի իրեն նախանձողի մը գաղտնի հրահանգով, պիթլիցի Տիգրանի զնդակով:

Աբրօյի մահէն ետք, խնուսցիները, զխաւորութեամբ Արտաշէս Մուրատեանի եւ Համազասպի, կը Տեապոյայէն ոճրագործը, եւ կը գտնեն սուտ հիւանդ պառկած Ղամարլուի հիւանդանոցին մէջ, ուրկէ բռնութեամբ դուրս կը հանեն, եւ կը տանին մօտակայ քաղերուն մէջ եւ շարաշար կերպով կը սպաննեն:

**ԲԱՏՈՒՀԱՆԻ  
ԴԱԻԻԹ**

Հարամիկ գիւղացի, իրենց ընտանիքը ծանօթ էր Բատո Օհանի տուն անունով: Դաւիթ շատ կանուխէն կը մտնէ յեղափոխական շարքերը: Նախ եղած է Նշակեան, սակայն հետագային երբ Նշակեան կուսակցութիւնը տեղի կու տայ Հ. Յ. Դաշնակցութեան, կը մտնէ դաշնակցական շարքերը: Գէորգ Չառչ երբ Խնուս կու գայ, Դաւիթ իր մարտական խումբով դիմաւորելու կ'երթայ, զայն Արօս գիւղէն Գովանդուկ տանելու համար: Հարամիկէն Արօս տանող ճամբուն վրայ, էլլոյս եւ Հարամիկ գիւղերու սահմաններուն վրայ, Դաւիթի խումբը կը հանդիպի քիւրտ աւաղակներու, թեթեւ ընդհարումով աւաղակները կը փախին եւ ճամբան ապահովուած, խումբը Գէորգ Չառչը դիմաւորելով կը տանի Գովանդուկ: Այս դէպքէն ետք կառավարութիւնը կը սկսի Դաւիթը հետապնդել ձերբակալելու համար: Դաւիթ կը դառնայ փախուսական (ֆիրաբ):

Անդամ մը, Քաղքիկ գիւղը կ'երթայ: Քրոջ տունը այցելութեան պահուն, քաղքիկցի Օհան, որ նմանապէս ֆիրաբ էր, գիւղին մէջ գտնուած թուրք ասկերներէն կը հետապնդուին: Օհան իր թագստոցէն ձին հեծնելով, եւ գինուորներու վրայ կրակ բանալով կը փախի կ'ազատի, Դաւիթն ալ կ'ազատի, եւ այս դէպքէն ետք, կ'անցնի Կովկաս:

Կովկաս եղած ժամանակ ալ, կուսակցական շարքերու մէջ գործօն դեր կ'ունենայ մինչեւ 1908-ի Օսմանեան Սահմանադրութիւնը, որմէ ետք կը վերադառնայ հայրենիք եւ կը լծուի խաղաղ աշխատանքի: 1915-ի դէպքերուն նախօրեակին համաճարակ հիւանդութեան զոհ գնաց: Կ'արժէ յիշատակել Դաւիթի մօր հերոսական մէկ դէպքը, որ հետեւեալն է. — Օրին մէկը, դող քիւրտ մը, իրիկնամուտին՝ անասուններու նախիրը գիւղ վերադարձած ատեն, կը խառնուի նախիրին, եւ կու գայ կը մտնէ Դաւիթէնց ախոռը: Դաւիթին մայրը կը նկատէ որ, քիւրտը ախոռ մտաւ. բաւական մը սպասելէ ետք, առանց մէկիւն բան մը բսելու, զգուշութեամբ կը մտնէ ախոռը, եւ կը նկատէ որ քիւրտը մտուրին մէջ՝ կոնակին վրայ պտտեալ անշարժ կը մնայ: Կը վերադառնայ տուն, կրակի վրայ մեղր կը հալեցնէ, և ամանով տաք մեղրը առած կը վերադառնայ ախոռ, ու կը գտնէ քիւրտը նոյն դիրքին մէջ. դզուութեամբ կը մօտենայ եւ հալած տաք մեղրը բերանը կը լեցնէ: Քիւրտը երբ տեղէն կը շարժի, մայրիկը անթխոցով կը սկսի հարուածել քիւրտը: Տաք մեղրը եւ անթխոցի հարուածները քիւրտը տեղն ու տեղը կը մեռցնեն: Դիակը անհետացնելու համար, ախոռին մէջ, սալերուն տակ փոս մը փորելով կը թաղեն:

**ԳԱԲԷ ՄՈՒՐԱՏԻ  
ՄՈՒՇԵՂ**

Ծնած է Հարամիկ գիւղը: Արհեստով բրուտ էր, ինչպէս եւ իր ընտանիքին բոլոր անդամները: Մուշեղ պարթեւ հասակով, գեղեցկադէմ, կտրիճ երիտասարդ ջանփետայի էր: Դաշնակցութեան սուրհանդակն էր: Իր արհեստին բերումով՝ հողէ ամաններ ծախելու համար, տեղէ տեղ, ճամբորդելու դիւրութիւններ ունէր, առանց իր վրայ կասկած հրաւիրելու: Սակայն գիւղին մէջ տեղի ունեցած զանազան դէպքերու հետեւանքով, իր վրայ կասկած հրաւիրելով, կառավարութեան կողմէ հետապնդուելով եւ ֆիրաբ դառնալով, կ'անցնի Կովկաս: 1905 թուականին, հայ-թաթարական ընդհարումներու օրերուն, խումբ մը համապիւղացիներու հետ, իրեն պէս ֆիրաբներ, կը գտնուին Թիֆլիս եւ կը մտնեն յայտնի դաշնակցական Տիգրանի (Տէր Բարթողիմէոսի տղան, խնուս բերդեցի) մարտական խումբին մէջ, եւ կը մասնակցին Խարբուղ՝ թաթարական թաղի կռիւներուն: Արմէն Գարօ այսպէս կը գրէ Մուշեղի մասին. «Վերջապէս Երկուշաբթի առաւօտ քրֆական դիրքերու վրայ երեւցան սպիտակ դրօշակներ եւ հրացանաձուլութիւնները անոնց կողմէ դադարեցան: Մերոնք դեռ եւս կը շարունակէին: Եւ ահա ուս գորքը մէջտեղ եկաւ եւ ազդարարեց ամէն կողմ թէ կռիւն այլեւս արգիւտած է: Թուրքերու գոհեմն եղան շուրջ 500 հոգի — սպանուած և վիրաւոր: Մենք ունեցանք 8 սպանուած եւ 60 վիրաւորներ: Նահատակուածներուն մէջ էր խընուցի Մուշեղը, Դաշնակցութեան ընտիր հայդուկներէն մին... ընկաւ, երբ Խարբուղ թաղին մէջ իր խումբով ներս խուժեց թշնամու դիրքը. կոտորեց եւ հրդեհեց: Թաղումը յուզիչ էր: Շատ ընկերներ լացին այդ անձնուէր երիտասարդին մահը. շատ մայրեր սգացին այդ Զարիպ Աղբօր համար, ինչպէս կ'անուանէին Մուշեղը՝ հալաբարցի կանայք» («Կովկասը 1915 թիւին», Հայրենիք Ամսագիր, Մարտ, 1923):

Մուշեղի յիշատակը յաւերժացնելու համար, մարմարակերտ շիրմաքար մը կը կանգնեցուի իր շիրմին վրայ, սակայն, տարիներ ետք, վրացի համայնավար իշխանութիւնը բարբարոսաբար խորտակել եւ անհետացնել կու տայ շիրմաքարը, հողին հաւասարեցնելով շիրմը: Աչուղ Ջիւանի կ'անմահացնէ Մուշեղի եւ անոր ընկերներուն յիշատակը՝ իր հետեւեալ ժողովրդական երգով. «Խնուսից գալող հայ գինուորները քաջ...»:

**ԳՈԳՕ ԱԻԱԳ**

Տունան գիւղէն: Աւալ եղած է դաշնակցական հին հայուկ եւ նշանաւոր վալատ: Ինք է որ կ'առաջնորդէ Սերոբ Փաշայի մարտական խումբը Կովկասէն երկիր. եւ մենք կը տեսնենք զինեալ խումբին մէջ՝ Սերոբ Փաշայի, ճարտարի, Զալալի եւ երեք ուրիշ հայդուկներու հետ նաեւ Աւալի նկարը: Տունան գիւղին տիրացած էր քիւրտ Շահօ Խալլոն, եւ իր հարստահարութիւնները դարձած էին ճնշիչ՝ հայութեան գլխուն: Գողոյի Աւալ, խիստ պաղտնապահութեամբ, վրէժխնդիր կը դառնայ Խալլոյի հանդէպ (որուն մասին մենք անդրադարձած ենք Ենիքէօյ գիւղի մասին գրած գլխուն մէջ), երբ

Աւագ, ինչպէս նաև Խալլոն, Տումանէն փոխադրուած էին Ենիքէօյ, և Խալլոն դարձած էր այս գիւղին ալ ազան:

Աւագ գործակցած է Տուրպախի և Հրայրի: Արամ Արամեան այսպէս կը գրէ. «Խնուսում ունիմ հայդուկային խումբ և կազմակերպութիւն, որը սկսած է կամաց կամաց գորակալ, թէև վերջին դէպքերը (1895—1896) նրան մի քիչ կազմալուծած են: Մեր բնկերներից Տուրպախ (կարսցի) և Աւագը (տեղացի) այնտեղ են»: (Գիւան Լ. Յ. Դաշնակցութեան, Ա. հատոր, էջ 293): Արամեան ուրիշ նամակի մը մէջ կը գրէ կուսակցութեան գէնքերուն մասին. «... Աւագի բերածները, 25 ատրնամակ: 11-ը սեւ՝ կազմնի մեծ



Սերոբ Ազբիւրի խումբը  
կանգնած՝ ձախէն երկրորդն է Գոգօ Աւագ

ատրնամակ, վրայից կտորուող, 7-ը ներմակ՝ կտորովի բոյլող, 7-ը սեւ՝ տակից կտորուող: Հրացաններ՝ բերդանկի, այնալի, դաբախի, յետոյ մասին: Խնուսում 22 հրացան, 2-ը նոր տեսակի»: Դարձեալ ուրիշ նամակի մը մէջ կը գրէ՝ ուղղուած Դաշնակցութեան պաշտօնական մարմինին. «Խնուսում ձերբակալուած են մերիմներէն երկու հոգի, որոնցից մին է յայտնի վալատ Աւագը»:

Աւագ ի վերջոյ դաւադրօրէն կը սպաննուի Շահօ Սալլոյի կողմէ:

**ԹՈՓԱԼ ԵՂԻՇԷ**

Եղիշէի մասին տեղակալ Մ. Աւետեան այսպէս կը գրէ: Եղիշէն խնուսցի էր և բաւական գրոց-բրոց: Իր մասնակցութիւնը բերած է Սարտարապատի գոյամարտին: Ան ալ լքելով նորակազմ Հայաստանը, հետեւած է Սմբատին և Անդրանիկին զէպի Զուլֆա — Խոյ, հոնկէ Զանդեղուր, և ապա Հայաստան վերադարձած է Սմբատի հետ:

Հայաստանի մէջ մասնակից եղած է Սմբատի բոլոր գործունէութեանց, ինչպէս Ղարսի պատերազմին, Գարապէքիւրի զէմ, իր հետեւակ վաշտով: ՂԵՐԸՊՈՂԻ զիմադրութեան, ապա Սմբատի հետ բարձրացած է Ալազեան գի բարձունքը:

**ԽՈՒՌՇՈՒՏԵԱՆ ԱԻԿ**

Խնուս բերդէն. ծածկանունով Եսաին: Եղած է հնչակեան: Տարիներ շարունակ եղած է գէնքերու մաքսանենց, և անուն հանած իր խիղախ գործունէութեամբ: Իր անոյճ ձայնով և երգած երգերով, փնտռուած և սիրուած է իր շրջանակէն: Սերոբ Փաշայի խումբին մէջ մտնելով, Խարսի մէջ, գէնքերու փոխադրութեան ատեն, փողոցի մը մէջ, ուս ք ժամտարմաներ կը փորձեն դայն ձերբակալել, սակայն չեն յաջողիր. ինք խուսափելով ձերբակալուելէ, փոխան իրեն, կը ձերբակալեն քիւրտ աւագակ մը:

Խարսի շրջանի գիւղերէն մէկուն մէջ գտնուած ատեն, ընկերոջ մը հետ, ուս երկու դիմուորներու հետ կռիւի կը բռնուի: Կը սպաննեն դիմուորները, և անոնց վրայէն կը գտնեն թրքական կառավարական պաշտօնական հրամանագիրներ: Հայ Եկեղեցական կալուածներու պաշտօնական փորձի օրերուն, Խարսի մէջ, Կնեաղի հետ, կը մասնակցի ցոյցերուն: Ռուս կառավարութիւնը դայն ձերբակալելով կը բանտարկէ. աքսորի վճիռ կը տրուի իրեն, սակայն վճիռը գործադրուելէն առաջ, կը յաջողի բանտէն փախչիլ: Հետագային՝ Ուշքիլիսէի (Ալաշկերտ) կռիւին կը սպաննուի:

**ԿԱՐԱՊԵՏԵԱՆ ԱՐԹ (ՔՆՈՒԻ)**

Խողլի գիւղացի: Շատ կանուխէն հնչակեան շարքերը մտած, Մուրատի յորդորներով: Կովկասէն երկիր կ'անցնի հայդուկային մարտական խումբի մը հետ, որուն մէջ կ'ըլլան Արարոն, ալի գոնանցի Լեւոնը, խութեցի Աւոն և ախլցխացի Վարդանը՝ 17 ընկերներով: Այս արշաւանքի ընթացքին Խողլի գիւղին մերձակայքը բլուրի մը վրայ, կռիւի կը բռնուին քիւրտերու հետ: Դէպքը տեղի կ'ունենայ Մայիս ամսուն վերջերը: Ամբողջ օր մը կռիւ տեղի կ'ունենայ: Քիւրտերէն կը սպաննուին զուրքցի աշխրաթէն՝ Խանօ բէկը և իր երկու ծառաները, քանի մը հոգի ալ կը վերաւորուին: Հայդուկներէն կը սպաննուի ալի գոնանցի Լեւոնը:



**ԿԻՐԱԿՈՍԵԱՆ  
ՅՈՎՍԷՓ  
(ՊԼԵՃԵԱՆ)**

*Գարաչոպան գիւղէն: Մնած է 1882 թուին եւ մե-  
ռած՝ 1907-ին: Անոր մասին Ա. Ջնդի Դրօշակի մէջ  
այսպէս կը գրէ. «Բնիկ հնուսի Գարաչոպան գիւ-*

*ղէն, առոյգ ու ամրակազմ, ուրախ ու շէնշող՝ ամբողջ նուազիւն, ամբողջ  
կենսունակութիւն էր անոր կեանքը:*

«Մօրը կողմէն թոռն էր գարաչոպանցի նշանաւոր Մկրէի Ասոյին, որ  
կը խարազանէր գաւառի այլանդակ բարբերը իր ժողովրդական գաւեշտական  
երգերով. կը նշուակէր կծծիներն ու կեղծ բարեկամները, վաշխառուներն  
ու բռնապետները, կղերն ու աշխարհականը:

«Յովսէփ աչֆի կը գարնէր իր թուխ, առնական համաչափ դիմագծու-  
թեամբ, անոյշ ու շիտակ բնաւորութեամբ: Իր նախնական ուսումը ստացեր  
է Մշու Միացեալ Ընկերութեան վարժարանին մէջ, որուն գոցուելովը Յով-  
սէփ ստիպուած կը լինի ստորին դասարաններէն թողուլ ուսումը, մնալ թե-  
րուս եւ դիմել արհեստի:

«Գաշնակցութիւնը թէեւ հնուսի մէջ մուտք գործած էր Տուրքախի ե-  
կած օրերէն ի վեր, բայց Գարաչոպանը չէր կարողացած կանգուն պահել  
կազմակերպուած խումբեր: Այնպէս որ երբ 1900-ին յեղափոխական երկրորդ  
եւ ուժգին հոսանք տարածուեցաւ Մուշ, Բուլանք, հնուս, եւ երբ խումբ-  
երու կազմութիւնը յառաջ տարուեցաւ մասսայօրէն՝ Գարաչոպան ինքզինք  
գտաւ նորութեան մը առջեւ. հոն ալ կազմուեցան խումբեր: Խումբի մէջ  
Յովսէփը առանձնապէս աչֆի կ'իյնար իր ետանդուն գործունէութեամբ: Նոր,  
բոլորովին տարբեր կեանք մըն էր, որ զինք կը փաշէր իր ալիքներուն մէջ:

«1900-ի աշնան մեկ Գարաչոպանում աշակերտ էինք: Մէկ երկու օր՝  
առաւօտ եւ երեկոյ, ուսուցչարանի դռնէն անցած պահուն, կը տեսնէինք  
մարդ մը որ Յովսէփին հետ այնտեղէն դուրս կ'ելլէր: Այս մարդը թէեւ գիւ-  
ղական տարագ ունէր, բայց չէր նմաներ մեր սովորական գիւղացիներուն,  
իբր խելացի եւ խորունկ հայեացքով ու լուրջ շարժումներով: Պատկառանք  
մը, իմաստութիւն մը կը նկատուէր այդ ցաւոտ նայուածքներուն մէջ:

«— Յովսէփ, քու հոգին մոռնիմք, իտա մարդ ո՞րն է, կը հարցնէինք:

«— Չըմ գիմա, վալլահ, չըմ գիմա, կ'ըսէր խորհրդաւոր ժպտով մը:

«Անցան ամիսներ. Սասունը պարզեց ապստամբութեան դրօշը եւ մեր  
հոգին հետաքրքրութեան կ'այրէր տակաւին գրասեղաններու վրայ: Մենք  
Սասունէն լուրեր կ'ուզէինք: Այդ լուրերը սրտապնդիչ էին — կառավարա-  
կան բազմաթիւ զօրքեր սպաննուած՝ բացի աշիրաթէն... այսպէս կը գրէին  
Սասունէն:

«Օր մըն ալ սակայն լսեցինք, որ Հրայրը ինկած էր Սասունի լանջին.  
կսկիծը մեծ էր՝ առաւել եւս խորունկցաւ այդ կսկիծը, երբ գարմանքով ի-  
մացանք, որ քանի մը ամիս առաջ մեր տեսած գիւղացին Հրայրն է եղեր...»:

\*\*\*

Գիւղին մէջ, անառակ երկու կիներէն մէկուն սպանութեան հետեան-  
քով Յովսէփ կը մատնուի, եւ ձերբակալուելով կը բանտարկուի: Տարի ու  
կէս Խնուս բերդ բանտարկութենէ ետք ազատ կ'արձակուի: Բանտին մէջ,  
բանտակից իր ընկեր Գասպար Մելլիքեանի մահը զինք խորապէս կը ցնցէ:  
Բանտէն ազատուելէ ետք, Յովսէփ կը շարունակէ իր յեղափոխական գոր-  
ծունէութիւնը Դերենիկի եւ Փիլոսի (Մարալ) հետ, եւ կառավարութենէն  
դարձեալ հետապնդուելով, կը դառնայ փախստական եւ Խնուսէն կ'անցնի  
Բասեն եւ Էգէպատ գիւղին մէջ հիւանդանալով կը մեռնի, շատ երիտասարդ  
տարիքին:

**ՀԸԼՈՅԵԱՆ ԵՐԱՆՈՍ**

*Մայրու գիւղէն, Հըլոյեան Մանուէլի եօթը տղայ  
զաւակներէն մէկը: Երանոսի եղբայրներն էին՝  
Կնեաղ, Արփիար, Արշակ, Ասուատուր, Լեւոն եւ  
Երուանդ: Երանոս կը մտնէ Դաշնակցութեան շարքերը, եւ մարտական խումբ-  
րի մէջ թրծուելէ ետք, կ'ըլլայ սուրհանդակ: 1904 թուականին կ'անցնի Կով-  
կաս: Հոն եղած ատեն կը մասնակցի Հայ-թաթարական կռիւներուն: Կռիւ-  
ններէն ետք, Քաղզիկ գիւղացի Սիմօ Օհանի ընկերակցութեամբ, զէնք կը փո-*




Երանոս Հըլոյեան

խաղընն խնուս: Խնուս հասնելէ քանի մը օր ետք, զիւզին մէջ կը ձերբաւուրի եւ կ'ենթարկուի ծեծի եւ տանջանքի, եւ կը բանտարկուի Խնուս բերդի բանտը: Վերջապէս, կաշառքով եւ հօրը թուրք բարեկամներուն միջնորդութեամբ, բանտէն կ'ազատի: Որպէս սուրհանդակ կ'ուղարկուի էրզրում, հոն բանտարկուած խնուսցի բարձրագոյն բանտարկեալներուն հետ կապ հաստատելու: Տանք քանի մը անուճներ այդ բանտարկեալներէն: Խնուս բերդէն Սիմոնեան Իվան, Մալխասեան Կարապետ, Քրմոյեան Արմենակ. Քաղքիկ զիւզէն՝ Իկիթի Պօզոս եւ Միսակ. Հարամիկ զիւզէն՝ Վահան վարժապետ Մելիքեան, Կարապետի Պետոն, Մհերի Սեթոն, Տէրտրոջ Գասպար, Բաղուհանի Մաթոս. Գոմանդուկէն՝ ոչս Մհերի Երկու տղաք՝ Դաւիթ եւ Միսակ. Գոսպալէն՝ Յեկո Մկրտն:

Բանտարկեալներուն հետ տեսակցութիւն ունենալէ ետք, էրզրումէն կ'անցնի Բասնի վրայով Խնուս վերադառնալու, ճանապարհին կը ձերբակալուի, ծեծի եւ կապանքի տակ զինք Հասանկալէ տանելու ճամբու ընթացքին կը յաջողի փախչիլ եւ վերադառնալ Խնուս, ուր ատեն մը ֆիրար մնալէ ետք, կ'անցնի Կովկաս: Կուսակցութիւնը դարձեալ պարտականութիւն կը դնէ իր վրայ, Բաթումի մէջ վատահամբաւ պարսիկ շարադործի մը վրայ դիւոր կատարելու: Պարսիկը սպաննելէն ետք կը ձերբակալուի, եւ կ'աքսորուի Սիպիր 20 տարուան դատաւճիռով: 6 ամիս Սիպիր աքսորական մնալով, կուսակցութեան օժանդակութեամբ կը յաջողի փախուստ տալ եւ կուզայ Պաքոս: Կը զրկեն Խօջավանք, հոնկէ մարտական խումբի մը հետ երկիր անցնելու: Մինչ խումբը երկիր անցնելու պատրաստութեան մէջ կ'ըլլայ, վրայ կը հասնի 1908-ի Օսմ. Սահմանադրութիւնը, եւ զիւրութիւն ընծայուելով կը վերադառնայ Խնուս: Ատեն մը ետք, թրքական բանակի զինուորական ծառայութեան կը կանչուի, սակայն փախուստ տալով կ'անցնի Ամերիկա:

Առաջին Համաշխարհային պատերազմին, կամաւոր կ'արձանագրուի Կովկաս երթալու եւ կոռուելու թուրքերուն դէմ, սակայն հիւանդանալով ետ կը մնայ: Հիւանդութենէն առողջանալով, ամերիկեան բանակին մէջ կը զինուորազրուի եւ պատերազմի վերջաւորութեան պատուաւոր ծառայութեան վկայականով ազատ կ'արձակուի: Համաշխարհային Երկրորդ պատերազմին, Քալիֆորնիա դառնուելով, զինուորական ծառայութեան կը մտնէ Քալիֆորնիոյ Սթէյտ Կարտի մէջ, եւ իր տարած կամաւոր ծառայութեան առ ի գնահատութիւն, նահանգին կառավարիչէն պաշտօնագիր մը կը տրուի իրեն, որուն օրինակը կը տեսնուի հոս:



Պր. Երանոս Հըլոյեան,  
1914 Քըրն Փոզոց,  
Ֆրեզնօ, Քալիֆորնիա

Սիրելի Պր. Հըլոյեան,  
Իբր Քալիֆորնիոյ կուսակալ, հանոյժով ձեզի կը զրկեմ ներփակ վկայագիրը՝ իբր գնահատութիւն Քալիֆորնիոյ Սթէյթ Կարտի մէջ ունեցած ձեր ծառայութեան:

Սոյն գնահատականը ձեզի յանձնելու առթիւ նկատի ունիմ այն պարագան թէ՛ ձեր ծառայութիւնը կատարելապէս կամաւոր էր, իբր հայրենասիրական պարտականութիւն, մատուցուած Ազգին՝ իր պատմութեան ամենամեծ ճգնաժամի ընթացքին:

Ձեր նահանգը երախտապարտ է այն ժամանակին եւ նիգին համար, գոր դուք գոհեցիք: Ուստի հանեցէք ընդունիլ իմ անձնական գնահատութիւնը եւ լուսագոյն մաղթանքս ձեր ապագային համար:

Անկեղծօրէն,  
Կուսակալ՝ Ըրլ Ուոքըն

**ԾԱՌԱՅՈՒԹԵԱՆ ՎԿԱՑԱԿԱՆ**

Կը վկայեմք թէ Երանոս Հրլոյեան պատուաւոր կերպով եւ հաւատարմութեամբ ծառայած է Քալիֆորնիոյ նահանգի գինուորական ոչժերուն մէջ, Համաշխարհային պատերազմի ստեղծած նգնաժամի ընթացքին, իբր անդամ Քալիֆորնիոյ Սթէյթ Կարտի:

Սոյն ծառայութիւնն ամբողջովին կամաւոր էր եւ մատուցուած իբր հայրենասիրական պարտականութիւն նահանգին եւ Ազգին:

Քալիֆորնիոյ Կուսակալ՝  
Ըրլ Ուոքըն

Զօրավար՝

Վ. Ա. Հէմքըն

Երանոս ապրած է ատեն մը Պոսթըն, ապա Տիթթոյիտ, յետոյ Փրէզնօ (Քալիֆորնիա) եւ մեռած է հոն՝ հայրենիքի բուն սիրովն ու կարօտովը:

**ՄԱԼԵԱՍԵԱՆ ԿԱՐԱՊԵՏ**

Խնուս բերդեցի. ծանօթ նաեւ Նիկօ Կարապետ անունով: Հանրածանօթ Մալխասեան ընտանիքէն. ուսումնական, հանրային գործիչ եւ յեղափոխական: Ժամանակ մը եղած է ուսուցիչ: Դաշնակցական, կազմակերպական աշխատանք տարած է Հրայրի գործակցութեամբ: 1904-ին, Հ. Յ. Դաշնակցութեան Բիւրոյի հանգանակիչ յանձնախումբի անդամակցութեան մեղսակցութեամբ, եւ նաեւ այդ օրերուն զուգարկապօղ՝ Մուխսի Գէորգի Տիգրան էֆէնտի (Ազրայէլի) սպանութեան մեղսակցութեամբ ամբաստանուած, կը ձերբակալուի. կարճ ժամանակ Խնուս բանտարկուելէ ետք, կը տարուի Կարնոյ Կեդրոնական բանտը 101 տարուան միջոցով: Բանտէն կ'ազատուի 1908-ի Օսմ. Սահմանադրութեան օրերուն: Խնուս վերադառնալով կը վարէ ազգային առաջնորդարանի քարտուղարութեան պաշտօնը, մինչեւ 1915-ի մեծ եղեռնը. զոհ կ'երթայ ընդհանուր ջարդին:

**ՄԱՆՈՒԿԵԱՆ ԿՆԵԱԶ**

Ռամիկ գիւղին մէջ:  
Յեղափոխութեան շրջանին, Կարին գտնուած ատեն, իր ընկերներէն՝ կարնեցի Տիգրան Մկրտիչեանի մատնութեամբ կը ձերբակալուի եւ կը բանտարկուի Կարնոյ բանտը, ուր սարսափելի ծեծի եւ տանջանքի կ'ենթարկուի: Բանտին մէջ կը ծանօթանայ իրեն բանտակից Արամ Արամեանին: Քաջալերուելով եւ օգտուելով Արամեանի ներկայութենէն, կը յաջողի բանտէն փախիլ: Հետապնդելով մատնիչ Տիգրան Մկրտիչեանը, կը յաջողի զայն սպաննել ու կը փախչի Կովկաս, հոն գտնելով իր ընկերները՝ Սողոյի գիւղացի խմբակետ Արրոն եւ բերդեցի Աւիկը: Ժամանակ մը Կովկաս մնալէ ետք, կ'անցնի Բասն, կու դայ Հասան Գալէ, եւ հոս կը սպաննէ դոմիտէր Մահմէտ էֆէնտին: Ձերբակալուելով, կը բանտարկուի Հասան Գալէի բանտը, սակայն քանի մը ամիս ետք, կը յաջողի բանտէն փախիլ ու անցնիլ Կովկաս: Կը մասնակցի հայ-թաթարական կռիւներուն:

Համաշխարհային պատերազմին կը միանայ հայ կամաւորական խումբերուն՝ Պլտիկ Աբրոյի (Պիճօ Աբրօ) խումբին մէջ. կռիւներու ընթացքին կը սպաննուի:

**ՄԵԼԳՈՆԵԱՆ ԱՐԱՄ**

Խալօ Մելգոնի Արամ անունով նաեւ ծանօթ: Խնուս բերդէն: Արամ պարթեւահասակ եւ զեղաղէմ երիտասարդ մըն էր, նշանաւոր նաեւ ձիավարութեամբ: Կտրիճ ու անվախ էր արտայայտութեանց մէջ: Արտասովոր զուարճախօսութեամբ օժտուած: Իր մասին, առանց վախնալու, կատակի տալով, թուրքերուն կ'ըսէր որ. «Ես ջանփէտայի եմ»: Թուրքերը գիտնալով որ Արամ դաշնակցական էր, սակայն, կ'ողէին անդիտանալ եւ զայն կառավարութենէն՝ հալածանքէ եւ հետապնդումէ ազատ պահել, կարենալ օգտուելու, անոր եւ անոր հարուստ հօր բարեկամութենէն:  
Արամ իր հօրը, շատ յաճախ կատակներով՝ սակայն, խորքին մէջ լըրջօրէն կը սպառնայ, որ կուսակցութեան համար առնուաղն 10 հատ մօտին հրացան առնէ, այլապէս՝ քեզ կը սպաննեմ՝ կ'ըսէ: Հայրը, խնդուքով կը պատասխանէ Արամին՝ ես երբեք քեզ չեմ մերժեր, քանի հրացան ուզես, քեզի համար կ'առնեմ, եւ պահանջածը կը կատարէ:  
Արամ Դաշնակցութեան խօսնակն էր ունեւոր հայերուն քով, եւ իր միջոցաւ կարելի կ'ըլլար զանոնք զոհողութեան մղել:  
Արամ եւ իր եղբայրը՝ Վահան, երկուքն ալ դաշնակցական էին: Ինք առեւտուրով, իսկ եղբայրը ուսուցչութեամբ կը զբաղէր: 1910-ի դարնան, Արամ արկածով՝ իր խանութի շէնքին փլուզումով, խեղդամահ եղաւ: Վահան եղբայրը, 1915-ի ապրիլեան եղեռնին զոհ գնաց, այն խումբ մը ակաւաւոր խնուսցի աքորականներուն հետ, որոնք աքսորի ճամբուն, Խնուսէն

դէպի Կարին-Երզնկա տանող ճանապարհին վրայ, Եփրատ գետի ափերուն, Սանսար Դարա բառած ձորին մէջ սպանուեցան:

**ՄԵԼԳՈՆԵԱՆ ԱՐՏՕ**

Ծանօթ Խենթ Սեթօ ծածկանունով: Ծնած է Տու-ման գիւղը, 1876-ին: Պատանի հասակին մտեր է յեղափոխական շարքերը (հնչակեան): Մասնակցեր է Խաթունիկի եւ Անթապի(\*) կռիւներուն, 10 օր, գիշեր ու ցերեկ կը ունենար գերազանց ուժերու դէմ: Խաթունիկէն հազիւ եօթը հոգի փախուստով կ'ազատին: Խենթ Սեթօն կը ձերբակալուի: Բանտին մէջ վերջապէս առիթ գտնելով, բանտին պատը կը ծակէ, կը փախի եւ կ'անցնի Կովկաս:

**ՄԵԼԻՔԵԱՆ ՅՈՎՀԱՆՆԵՍ ՎԱՐԺԱՊԵՏ**

Մելիքեան գերդաստանէն Մանուկի եօթը տղայ դաւակներէն երկրորդը: Կըթութիւնը ստացած Մշոյ Ս. Կարապետի ժառանգաւորաց վարժարանը՝ Խրիմեան Հայրիկի վանահայրութեան շրջանին: Ժառանգաւորաց վարժարանէն շրջանաւարտ ըլլալէ ետք Խնուս վերադառնալով, մասնաւոր ուսուցիչէ մը՝ Թուրք Իւսուֆ էֆ.էն թրքերէն լեզու կ'ուսանի, Խնուս բերդի մէջ, որովհետեւ Ս. Կարապետի ժառանգաւորաց վարժարանը թրքերէն չէր ուսուցաներ իր աշակերտութեան: Թրքերէնի ուսման ընթացքը լրացնելէ ետք, նոյն տարին կը ստանձնէ Քաղզիկ գիւղաւանի վարժապետութիւնը:

Հնչակեան կուսակցութեան անդամակցելով կը գործակցի Գարեգին Չթճեանի, երբ Չթճեան ուսուցիչ էր Խնուսի Չեւիմէ գիւղը: Հնչակեան Մուրատին ընկերակցելով, երբ կ'երթան Պուլանուի, Լիզ գիւղը իջեանած ատեն, Մուրատի մեկնումէն ետք, գիւղը խուզարկելու ատեն, կը ձերբակալուի եւ կը տարուի Բասեն՝ Հասան Գալէի բանտը: Կարճ ժամանակ բանտարկութենէ ետք, նոյն տարին, կը փորձէ Կովկաս անցնիլ: Գիշերային փախուստի պահուն, ռուս-թրքական սահմանադրուիսին, սահմանապահ զինուորներէն կը բռնուի ընկերներուն հետ, եւ անգամ մը եւս կը բանտարկուի Հասան Գալէի բանտը: Բանտէն ազատուելէ ետք, կը վերադառնայ Խնուս եւ դարձեալ կը զբաղի ուսուցչութեամբ, մինչեւ 1895-ի դէպքերու նախօրեակը: Հօրը մահէն ետք, ուսուցչութիւնը կը թողու եւ կը սկսի առեւտուրով զբաղիլ: Սակայն, կըթական գործը միշտ սրտին մօտ մնալով: Դպրոցի եւ եկեղեցիի հողածութիւնը միշտ ալ իր ուսերուն վրայ էր: Զոհ գնաց 1915-ի շարունակ:

(\*) Անթապ եւ Երզնկա, այս երկու ամուսնները, տարբեր պարագաներու ներքեւ, յեղափոխութեան շրջանին, կը յիշուին որպէս տեղը այն դէպքին, որ խնուսցիները կը յարձակին բուրբ պետական զինապահեստին վրայ, եւ ուր արիւմալի կռիւներ տեղի կ'ունենան: Այս երկու ամուսններէն ճշգրիտը Անթապն է, որ կ'իյնայ Խնուսի Գարաբագ քաղաքակալ շրջանին մէջ: Երզնկա ամուսնով վայր մը մեզի անծանօթ է Խնուսի շրջանին մէջ:

**ՄԵԼԻՔԵԱՆ ՎԱՀԱՆ ՔՀՆՅ.**

Հարամիկ գիւղէն, Մելիքեան գերդաստանի անդամներէն Մելիքոնի որդին: Կըթութիւնը ստացած Մշոյ Ս. Կարապետ վանքի ժառանգաւորաց վարժարանը: Հոնկէ շրջանաւարտ, կը վերադառնայ գիւղը եւ կը լծուի կըթական գործի, Խնուսի զանազան գիւղերուն մէջ, առաւելապէս Գարաբէօփրի մեծ գիւղաւանին մէջ վարժապետութիւն ընելով: Կը ճանչցուի Վահան Վարժապետ անունով: Կ'ամուսնանայ Գարաբէօփրի գիւղաւանի Թաշճու Յակոյի աղջկան հետ:

Հրայրի հետ, դաշնակցական գործիչի հանգամանքով, կազմակերպական աշխատանքներու կը մասնակցի: Թուրք կառավարութեան կասկածանքին ենթարկուելով, հետապնդումներէ խուսափելու համար կ'անցնի Կովկաս, կ'երթայ Սարիխամիշ, ուր կը մնար իր եղբայրներէն՝ Միսիկը: Ատեն մը անցնելէ ետք, Սերոբի հետ երկիր կը վերադառնայ: Կրկին հետապնդումներու ենթարկուելով, կ'անցնի Վան, ուսուցչութեան համար: Վանէն կ'անցնի դարձեալ Կովկաս եւ Կաղզուանի մէջ ուսուցչական պաշտօն կը վարէ, ապա Խնուս անցնելով, 1906-ին հետապնդուելով կը ձերբակալուի եւ կը տարուի Կարնոյ Կեդրոնական բանտը, ուր 101 տարուան վճիռով կը բանտարկուի:

Բանտին մէջ, կռիւի կը բռնուի կարտեանի հետ, որուն համար կրկնակ պատիժի կ'ենթարկուի, եւ մեկուսացուելով բանտին տանջարանը (փոլիսը\*) կը դրուի, ամբողջ շաբաթ մը եւ գրեթէ կիսամեծ դուրս կը հանուի: 1908-ի Օսմ. Սահմանադրութեան, երբ ընդհանուր ներումով բանտէն ազատ արձակուեցաւ, նոյն տարին քահանայ ձեռնադրուեցաւ ի Մուշ, եւ վերադառնալով Խնուս, եղաւ Գարաբէօփրի գիւղի հայոց քահանայ: Վախճանեցաւ 1910-ի Մայիս ամսուն, Խնուս բերդի մէջ արկածով՝ շէնքի մը փլուզումով, երբ հանրային գործով Խնուս բերդ եկած էր. իրեն հետ էին նաեւ Տէր Թորգոմ քհնյ. Տոնապետեան, Հարամիկ գիւղի ոչն Պետոն եւ բերդեցի Արամ Մելիքեան, որոնք բոլորն ալ զոհ գացին Արամի խանութի փլուզումին:

**ՄԵԼԻՔԵԱՆ ԿՆԵԱԶ**

Ծանօթ Շաշօ կեղծանունով: Գարաչուպան գիւղաւանէն. հազիւ 20 տարեկան կը մտնէ հնչակեան շարքերը: Քաջ կոտուղ է անահ զինուոր ճանչցուած էր իր ընկերներէն:

(\*) Փոլիս՝ Կարնոյ բանտին յատուկ, ստորերկրային մըն ու խնուս խցիկ մըն է. գարշահոտ եւ հեղձուցիչ օդով, ուր առնետները բանտարկեալին տանջանքները իրենց լրումին կը հասցնէին:

**Մ Հ Ե Ր Ե Ա Ն  
Գ Ա Ի Ի Փ**

Գոյանդուկ գիւղէն, որդին՝ դաւաճին մէջ հան-  
րածանութի ոչն Մհերին: Նախնական կրթութիւնը  
գիւղին մէջ ասնելէ ետք, կ'երթայ Մշոյ Ս. Կա-  
րապետ վանքի ժառանգաւորաց վարժարանը, ուրկէ չըջանաւորտ կը վե-  
րադառնայ Խնուս: Դաւիթ ազգական էր մեղի. մայրը, հօրս հօրաքոյրն էր.  
երբ մեր տունը գար, հայրիկիս հետ գրաբար կը խօսէին թէ ինչ կը խօսէին,  
մեզի անհասկնալի էր: Բնաւորութեամբ ըմբոստ եւ կտրիճ էր: Իր կրտսեր  
եղբոր Միսակին հետ կը զինուորացուին Գաշնակցութեան: Իրենց գործու-  
նէութեամբ երբ թուրք կառավարութեան աչքին կասկածելի կը դառնան,  
երկու եղբայրներն ալ կը ձերբակալուին եւ կը տարուին Կարնոյ Կեղրոնա-  
կան բանտը: Ռէն Մհեր, որ Թաթոս գիւղի աղահանքերու կառավարիչն էր  
(տաւալա մամուռի), իր գաւակներուն ձերբակալութեան հետեւանքով պաշ-  
տօնազուրկ կ'ըլլայ, եւ կ'ենթարկուի կառավարութեան հարածանքերուն:  
Դաւիթ եւ Միսակ բանտարկութենէն ազատեցան 1908-ի Սահմանադրութեան  
ընդհանուր ներումին շնորհիւ:

1915-ի ապրիլեան դէպքերուն, Դաւիթ եւ Միսակ զինեալ խումբով մը  
թրքական ռազմահակաւէն կոուերով ռուսական սահմանը անցնելու պտեն,  
կռիւի ընթացքին Դաւիթ հերոսական մահով կը սպաննուի: Միսակ կ'անցնի  
ռուսական սահմանը եւ հետագային կը հաստատուի Ալէքսանդրապոլ (Ալէնի-  
նական):

**Մ Ո Ւ Ր Ա Տ Ե Ա Ն  
Ա Ր Տ Ա Շ Ե Ս**

Հարամիկ գիւղէն. որդին էր հէֆիմ Յակոբ Մու-  
րատեանի: Արտաշէս իր նախնական կրթութիւնը  
ստացաւ թէ՛ գիւղին ազգային դպրոցը եւ թէ Գա-  
րաքէօփրի գիւղին ազգային դպրոցը, ուր ապրեցաւ երկու տարի, իր հօրեղ-  
բոր՝ Դաւիթի տունը: Արտաշէս 1908-ի աշնան Պոլիս գնաց եւ հոնկէ զրկուե-  
ցաւ Արմաշի դպրեվանքը ուսանելու: Երկու տարի ուսանելէ ետք վերադար-  
ձաւ հայրենիք, եւ ուսուցիչ եղաւ Խալշաուշ գիւղին ազգային դպրոցին մէջ:  
Երկու տարի ետք, ընտանեկան դժբախտ դէպքի մը հետեւանքով, անցաւ  
Կովկաս, ուր զբաղեցաւ ուսուցչութեամբ եւ կուսակցական գործերով: Զի-  
նական փոխադրութեան ամբաստանութեամբ, Սոխումի մէջ կը ձերբակալուի  
ռուս կառավարութեան կողմէ եւ բանտ կը մնայ մինչեւ 1917-ի ռուսական  
Փետրուարեան Յեղափոխութեան օրերը, երբ բանտէն կ'ազատի: 1917-ի Ապ-  
րիլին Կարին եկաւ, իրեն հետ նաեւ հօրաքոյրն որդին՝ Սեղրակ Գէորգեան,  
ուրկէ անցան Խնուս եւ քանի մը ընկերներով կազմակերպուելով՝ սուպատա-  
կեցին Խամուր բերդի լեռնարձակ քիւրտերը, որոնք բազմաթիւ շարիքներ  
հասցուցած էին հայերուն՝ 1915-ին: Սեղրակ վերադարձաւ Կարին, իսկ Ար-  
տաշէս մնաց Խնուս մինչեւ 1918-ի մեծ նահանջը, սպա անցաւ Երեւան: Հա-  
յաստանի Հանրապետութեան օրերուն, Ռուրէնի՝ Հայաստանի հայացումի  
նուիրական գործին իր պարտականութեան գիտակցութեամբ ծառայեց:

Ա. Ամուրեան հետեւեալը կը գրէ Արտաշէսի մասին. «Բնկեր Արտաշէս

Մուրապետանի մասին գիտցածներս: 1921-ին, Հայաստանի Հանրապետու-  
թեան անկումից յետոյ, մեր ղեկավար ընկերները եւ պետական գործիչները  
տարագրուեցին Զանգեզուրի վրայով դէպի Պարսկաստան:

«Ընկ. Արտաշէսն ալ տարագրութեան հետ եկաւ Թուրքի: Աշխոյժ ե-  
րիտասարդ էր, գրագէտ, միշտ քարտուղար էր բնտրում նայիրի (տարա-  
գիրների) Կոմիտէի եւ ընկերական ժողովների մէջ:

«1922-ին, երբ տարագրութեան մէջ «կաղեգորիաներ» ստեղծուեցին,  
այսինքն ըստ դիրքի եւ մեծութեան վնար էին ստանում Հայաստանի տարա-  
գիր կառավարութիւնից, շատ անախորժութիւններ պատահեցին: Մեր ընկեր-  
ներից շատերն ըմբոստացան, որ իրենց փչնկաստ էր տրուում անախորժու-  
թիւններ եղան, եւ որովհետեւ Վրէժի Կ. Կոմիտէի միջոցով էր որոշում նը-  
պաստի կաղեգորիան, ուստի եւ ընկ. Արտաշէսը ցաւալի բախում ունեցաւ  
Կ. Կ.-ի ներկայացուցիչի հետ եւ կախակալուեց երեք ամսով: Պատեալոր,  
անշուշտ, նիւթական ծանր կացութիւնն էր, որ ջղայնութիւն էր պատեալում  
ընկերներին:

«1924 թուին Հ. Յ. Գ. Թ. Բնդի. ժողովը (Փարիզի մէջ) որոշեց ոյժ  
տալ քրտական շարժումներին եւ նրանց վերածել ապստամբութեան:

«1928 թուին իրականացաւ այդ որոշումը. Արարատ լեռն ապստամբած  
(եւ այնտեղ ապրող) քրդերն ապստամբեցին թուրք կառավարութեան դէմ,  
զեկավարութեամբ Խա Նուրիի (որ թուրք նախկին սպաներէն էր, ազգով  
քուրդ), Բաղըր Խանի եւ ուրիշների:

«Հ. Յ. Գ. Բիւրն, Վրէժի (Ատրպատական) Կ. Կ.-ի միջոցով Արարատ  
ուզարկեց Արտաշէս Մուրապետանին (Շէյխ Չիլան կեղծանունով, Ե. Յ. Մ.),  
հետագային՝ նաեւ սպայ Վ. Գալստեանին, շարժումը կազմակերպելու եւ ղե-  
կավարելու համար:

«Արտաշէս Մուրապետան կարողացաւ կարն միջոցում մեծ հեղինակու-  
թիւն սեռն բերել քրդերի մէջ, կարծեմ ծածկանունով կոչում էր Մայիժ  
բէկ: Թուրք կառավարութիւնը մեծ թաւով զինուորներ էր կեղբոնացրել Ա-  
րարատի երեք կողմերը (չորրորդ կողմը Փոքր Արարատն էր, որ պատկանում  
էր Պարսկաստանին): Մեծ կորուստներ էր ունենում եւ օրական հազարաւոր  
ուսկիներ ծախսում, բայց չէր կարողանում ապստամբութիւնը գոյել:

«Այսպէս տեսեց երկու տարի: Թուրք եւ ռուս (քոչեւիկեան) դիտու-  
թիւններն սկսեցին Պարսկաստանի վրայ ննչում բանեցնել, որ որդիքի իբ  
հողի վրայ Հ. Յ. Գ.-եան գործունէութիւնը քրդական ապստամբութեան  
նկատմամբ:

«Ինչպէս Շաի քոմատիրութեան օրերն էին: վարչապետն էր Տէյմուր  
Թաղը: Մեր աչքի ընկնող ընկերներին Թեհրան կանչեց Թուրքից, նաեւ ներ-  
սէս Արքեպ. Մեյիֆ-Թանգեանին, եւ մերանցից պահանջեց վերջ տալ քրդու-  
կան ապստամբութեան ուղղութեամբ աշխատանքներին: Յաշտարտուեց  
նաեւ որ Փոքր Մասիսն էլ իրանը պիտի յանձնի թուրքերին:

«Մերոնք վերադարձան յուսահատ: Փոքր Մասիսը թուրքի յանձնե-

լով, պիտի խեղդուէր Արարատի ապստամբութիւնը, որովհետեւ պիտի օգակուէր չորս կողմից:

«Այդպէս էլ եղաւ: Իսա Նուրին եւ Վ. Գալստեան անցան Իրանի կողմը, իսկ Արտաշէսը գոհ գնաց չեկայի խաբէութեան: Մարդ է գնում Արարատ, Արտաշէսի մօտ եւ ասում է որ եղբայրդ (Լեւոն եղբայրը, որ Երեւան կը բնակէր, Ե. Յ. Մ.) ուզում է քեզ հանդիպել Սովետական Հայաստանի հողի վրայ, գաղտնի կերպով:

«Արտաշէսը հաւատք է ընծայում, եւ երբ անցնում է Սովետ. Հայաստանի հողը, ձերբակալուում է չեկայի կողմից, բանտարկուում եւ աքաղաղուում Սիբիր:

«1934 թուին նամակներ էր գրում Սիբիրից Թաւրիզի այն ընտանիքի 7-8 տարեկան աղջկայ անունով, որոնց մօտ ապրել էր անցեալում: Մի անգամ էլ իր նկարն էր ուղարկել Սիբիրից, պարսկական փահլաւի գլխարկով:

«Երկրորդ Աշխարհամարտի նախօրեակին այլեւս լուր չստացուեց նրանից: Վերջում իմացանք որ պատերազմի ընթացքին Սիբիրում մեռել է քոբախտից»:

**ՄՈՒՐԱՏԵԱՆ  
ՅԱԿՈՒՐ**

**Ծանօթ նաեւ Հէքիմ Յակոբ անունով. բնիկ Խարբերդի Հիւսէյնիկ զիւղէն: Ծառ կանուխէն գաղթած Խնուս եւ Հաստատուած Հարամիկ զիւղը, իր եղբոր Դաւիթի եւ Տօրեղբոր զաւակներուն՝ Մարկոսի եւ Դաւիթի հետ: Յակոբ կ'ամուսնանայ Հարամիկ զիւղէն Սըհոյի աղջկան Նրոյի հետ, եւ կ'ունենան 5 զաւակ — աղջիկ մը եւ չորս տղայ — Մուրատ, Տիգրան, Լեւոն եւ Արտաշէս: Յակոբ ծանօթ էր որպէս հնչակեան, եւ իր յեղափոխական գործունէութեամբ դարձած էր կասկածելի թուրք կառավարութեան աչքին:**

Զինք հետապնդող ժանտարմաներուն հետ, քանի՛, քանի՛ անգամ կը ուրիւր բռնուած եւ ազատած էր. անգամ մըն ալ Զեւերմէ զիւղացի Յեսաւի հետ, Հարամիկ եւ Զեւերմէ զիւղերուն սահմանին վրայ Խնուս Գեղ ըստած վայրին մէջ ժանտարմաներու դէմ կը կռուին, Յակոբ կը վիրաւորուի, սակայն, կ'ազատի, եւ դարձեալ կը շարունակէ իր գործունէութիւնը: Թուրք կառավարութիւնը 100 ոսկի պարգև խոստացած էր ամէն անոր, որ կարենար Հէքիմ Յակոբը ողջ կամ մեռեալ իրեն յանձնել: Սակայն թուրք կառավարութեան այդ բողոքները չիրականացաւ: Հէքիմ Յակոբ մնաց փախստական եւ թաղանթած, շարունակելով իր գործը, միշտ գործակցելով Հ. Յ. Դաշնակցութեան հետ: Ի վերջոյ, 1905-ին, իր տղուն՝ Տիգրանի հետ անցաւ Կովկաս եւ մնաց Խարս, մինչև 1908-ի Օսմ. Սահմանադրութիւնը, երբ քաղաքական յանցանորներու ընդհանուր ներսւմ յայտարարուեցաւ, վերադարձաւ Հայրենիք: 1915-ի դէպքերուն սպաննուեցաւ զիւղին մէջ իր բարեկամ թուրք Ծախրատիւի տան դրան սեմին վրայ:

Ըսինք որ Յակոբ ճանչցուած էր Հէքիմ Յակոբ անունով. թէեւ բժիշկ չէր, սակայն, տնային բժշկութենէ հասկնալով, բժշկութիւն կ'ընէր, եւ սիր-

ուած էր ժողովուրդէն, մասնաւորապէս քիւրտերէն, որոնք աշիրաթային կռիւներու հետեւանքով ստացած վէրքերնին բուժելու համար կը դիմէին իրեն եւ կը բուժուէին. թէ՛ զինք կը պաշտպանէին եւ թէ՛ կը վարձատրէին: Յակոբ կը բուժէր նաեւ աչքի հիւստիքները, որոնք շատ սովորական էին մասնաւորապէս քիւրտերուն մէջ:

**ՄՈՒՐԱՏԵԱՆ  
ՏԻԳՐԱՆ**

**Հարամիկ զիւղէն: Ծառ կանուխէն մտած էր Դաշնակցութեան շարքերը. թէեւ հայրը հնչակեան էր: Տիգրան իր գործունէութեամբ դարձած էր աչքառու: Այդ օրերուն զիւղին մէջ՝ ինչպէս շրջակայ բոլոր հայ զիւղերուն մէջ, թուրք կառավարութիւնը, յատկապէս կանոնաւոր զօրքեր տեղաւորած էր, հայ յեղափոխականները հետապնդելու զիտաւորութեամբ: Գիւղին մէջ, տասնեակ մը զինուորներ տեղաւորուած էին զիւղցի Փալուլ ծնապաշտի զլիտարութեամբ: Փալուլ եւ Տիգրան բարեկամացած էին իրարու որպէս արհեստակիցներ. երկուքն ալ գերձակութեան արհեստն ունէին: Փալուլ զիւղէր որ Տիգրանի հայրը ֆիրաք էր, եւ թէ թուրք պետութեան կողմէ 100 ոսկի զրլխագին նշանակուած էր՝ ողջ կամ մեռեալ զայն կառավարութեան յանձնողին: Փալուլ, սակայն, կը պուշանար Տիգրանի հայրը հետապնդելու եւ ձերբակալելու փորձ կատարելէ:**

Աշնանային անձրևստ՝ Կիրակի օր մըն էր: Տիգրան իրենց տան ծառային հետ, յետ միջօրէին, զիւղին ջրաղացը ապուս ապալու եւ զինք տալու համար ջրաղացը երթալին առաջ, եկաւ մեր Ղազար ամուսին տունը, ուր իր հայրը թաղանթած կը մնար: Նոյն պահուն, Յակոբի հետ խօսակցութեան նստած էին հայրիկս, Յովսէփ Պարսնեան եւ Յակոբ Ալլկեան: Տիգրան երբ ներս մտաւ, հօրմէն ուղեց դարասաղ ատրճանակը, վրան կապելու, որովհետեւ ջրաղաց պիտի երթար եւ զիւղերն ալ հոն պիտի մնար: Յակոբ Ալլկեան, դիտել տուաւ, թէ լա՛ւ պիտի ըլլար որ Տիգրան ատրճանակով ջրաղաց չերթար, քանի՛ որ հանրային վայր է եւ մէկը կրնայ ատրճանակը տեսնել, եւ զիւղին մէջ գտնուող թուրք զինուորներուն տեղեկացնել: Տիգրանի հայրը աննկատ թողուց այդ զիտողութիւնը, եւ ատրճանակը Տիգրանին տալով, աւելցուց. «Տղա՛ս, պէտք էր զիւղը ատրճանակով գոյնը գալիս»:

Տիգրան ջրաղաց երթալով, զինք ծեծելու պահուն երբ կը ծոխ, զիւղին թուրքերէն Տիտօ անունով տղայ մը կը տեսնէ ատրճանակը, եւ անմիջապէս զիւղը կը վազէ եւ Փալուլ ծնապաշտին լուր կու տայ: Փալուլ ծնապաշտն առանձին կու դայ ջրաղացը: Ջրաղացը կը գտնուէր զիւղէն դուրս գետամերձ թուրքի մը վրայ: Ներս մտնելով Տիգրանին կը հարցնէ, ատրճանակ ունի՞ս վրադ: Տիգրան փոխադարձաբար իրմէ կը հարցնէ. «Ո՞վ ըսաւ քեզի, որ ատրճանակ ունիս»: Փալուլ կը պատասխանէ. «Տիտոն տեսած է, եկաւ եւ ինձի ըսաւ, ուրեմն ատրճանակը ինձի յանձնէ»: Տիգրան կը մերթէ ատրճանակը տալ, եւ Փալուլին բռնութեամբ իրմէն առնելուն կ'ընդդիմանայ, եւ կը

սկսին կուրիլ: Փալուլ գինուորական քաաքուռա սուրբ քաշելով կը վարնէ Տիգրանի գլխուն: Նոյն պահուն, Տիգրանն ալ ատրճանակի զնդազով մը կը վիրաւորէ Փալուլը աջ ձեռքէն: Գնդակը ափին մէջէն անցած և բխամաթի սակորբ փշրած էր: Երկուքն ալ վիրաւոր, ջրաղացէն դուրս կու գան և կը շարունակեն կուրի: Տիգրան առիթէն օգտուելով, Փալուլը կը հրէ և կը ձգէ ջրաղացի առուն մէջ, և վրան կոխելով, կը խրէ տիգմին մէջ, և արազ ոստումով անցնելով առուն, կը մտնէ մերձակայ գետին մէջ, ու կը թաղնուի մացառախիտ տեղ մը, ամբողջ մարմնով, գլուխն ալ ջուրի մէջ, ցողուն մը բերանը առած, անկէ շնչելու համար: Փալուլ Տիգրանի հետքը կորսնցնելով, լուր կը հասցնէ զիւրը մնացած գինուորներուն, որ գան Տիգրանը փնտռելու: Միեւնոյն ատեն լուր կու տայ Քաղքիկ զիւրը գանուող պահակատեղի գինուորներուն, որոնք գալով կը սկսին փնտրտուի, սակայն, Տիգրանը չզանելով, երբ արդէն մտնէ ալ կոխեց, և կան զիւրը, և սկսան տունէ տուն խուզարկութիւն, ճեճ և ձերբակալութիւն: Դէպքին լուրը երբ Տիգրանի հօրը հասաւ, հայրը ծպտուած, զիւրին հայկական թաղէն փախուստով անյայտացաւ: Տիգրան և հայրը, նոյն գիշերը ապահով կը հասնին մօտակայ Ելախ զիւրը, և կ'ապաստանին Շուքրի աղային տունը:

1905-ին՝ զարնան վերջին ամսուն Կորիւն Մուշէն Խնուս Եկած էր: Տիգրան արդէն ֆիրաք էր. այդ օրերուն, Տիգրանին կը վատահուի Խնուս բերդի հարուստ հայերէն հանդանակութիւն կատարելու գործը: Տիգրան ծպտուած լալի հագուստով, զինուած, գաղտնի կերպով կը մտնէ Խնուս բերդ և հանդանակութիւնը յաջողութեամբ կատարելով, դուրս կու գայ քաղաքէն առանց միջազկոյի:

Հարամիկ զիւրի ոչն Կարգարի սպանութենէն ետք, Տիգրան՝ Կորիւնի հետ անցաւ Կովկաս, և մնաց Խարս, մինչև 1908-ի Օսմ. Սահմանադրութիւնը: Թրքական կառավարութեան՝ քաղաքական յանցաւորներու ընդհանուր ներման միջոցն օգտուելով վերադարձաւ հայրենիք, և ամուսնանալով լծուեցաւ խաղաղ աշխատանքի: 1915-ի ապրիլեան զէպքերուն, առաջին ձերբակալուողներէն եղաւ, և խումբ մը հանրաձայնօթ ձերբակալեալ հայերու հետ քշուեցաւ Կորիւն-Երզնկայի ճամբուն վրայ, Շողալարի ձորին մէջ և ըսպաննուեցաւ խումբին հետ:

**Շէկ ԴԱԻԻԹ**

Եահիա զիւրէն, ոչն Սաչոյի տղան: Հօրս մօրեղբայրն էր: Ծանօթ էր իր քաջութեամբ: Գիւրին և շրջանի բիրտերը կը ստրտափէին Քեօի Դաւիթէն: Իր քրդական տարազով, բիրտ թոտունի մը պէս կը շրջապայէր գաւառին մէջ, և շատ յաճախ, գաղտնի, զիշերաչին ճամբորդութեամբ Կովկաս կ'երթար, կու գար: Խարսի նահանգէն շարակալայիներ գոյն կը ճանչնային Շէկ Դաւիթ անունով՝ իր շիկահեր ու կապտաչուի բլլայուն համար: Քրդական տարազին ներքեւ ծրարուած էր Փէտոյի Շէկ Դաւիթը: Նշանաւոր վալաա

էր: Ինք և վալաա Սաֆոն ամենէն յոտանդաւոր ճամբորդով Կովկասէն երկիր՝ զէպի Սասուն մարտական խումբեր կ'առաջնորդէին: Իր կեանքը նուիրած էր աղպին: Հայ-թաթարական ընդհարումներու օրերուն, Հ. Յ. Գաշնակցութիւնը զինք կը զրկէ Չանդուկուր, ուր կը մտանակցի կոխներուն, մեծ քաջագործութեամբ: Օսմ. Սահմանադրութեան վերադարձաւ հայրենիք:

**ՇՈՒՇԷ ՄՈՍՕ**

Սաչաւուշ զիւրէն, անթիւհեր մարտիկ: Նշանաւոր էր որպէս սուրհանդակ երկրէն Կովկաս երթալ-գալու, յարարելութեան կապը պահելու, Գաշնակցութեան՝ երկրի և Կովկասի մարմիններուն միջև: Սուրհանդակութեան իր պարտականութեան ճամբուն վրայ, Սասունէն Խնուս կու գայ Գէորդ Չաուշէն և Ռուբէնէն նամակներ և յարեր Կովկաս տանելու: Երբ Խնուս կը հասնին և կը մօտենան իր զիւրին, ընկերներուն հասանութեամբ, կը գտնուի իրենցմէ և կ'երթայ Սաչաւուշ, ընտանիքը և գաւակները տեսնելու, և շուտով վերադառնալու, ընկերներուն հետ շարունակելու իր ճամբորդութիւնը:

Մասն զիւրը կը մտնէ, հեճոճ իր Զլչրան ձին և զինուած: Տունը եղած պահուն կը մասնուի: Գիւրին բիրտ բէկը և նախի, մուսուրը լսելով Մոսոյի զիւրը Եկած բլլայր, կը կանչեն զիւրին սէսը և կրտեն անոր, որ երթայ և Մոսոյին լսէ, որ ձին և զէնքը յանձնէ իրենց, իրենք ալ աչք կը դոցեն, որ զիւրէն դուրս ելլէ ու անցնի երթայ: Մասն, սակայն, զիւրին ոչնը հայհոյանքով կը փոխուէ և կը պատրաստուի կուրելու: Ընտանիքը և զաւակները դուրս կը հանէ տունէն, և երբ թշնամին կու գայ տունը պաշարելու, կը սկսի կուրիլ, ինք ներսէն, թշնամին գուրսէն: Ի վերջոյ, երբ թրշնամին կը տեսնէ որ կոխով չի կրնար Մոսոյին յայթել, սպառնալիկան մը տածումով, տունը հրդեհի կու տայ: Չոր խաթի խորձեր բերելով, գրան առջեւէն, տունը կրակի կու տան: Այրուած խաթի թանձր մասին, Մասն տան մէջ խեղդամահ կ'ըլլայ: Ոստիկանութիւնը հաստատելու համար Մոսոյին մահը, նախ, ներս կը զրկէ, թրքացած՝ Հայ-տաճիկ Հիտալաթ անունով ոստիկանը, որ կը ստուգէ Մոսոյին մահը, և յետոյ ոստիկանութիւնը կ'երթայ ներս:

Մոսոյի սպանութեան մասին, Քէոյիկի 1910-ի Ամենուն Տարեցայցը (էջ 257) կը գրէ. «Եսալիլ Չափուշ (Խնուս) զիւրէն Երզնկեան Մազկէս, որ քրդերու դէմ դրած էր 6 տարի, խարոյկի կը մատնուի 1907 Ապրիլ 18ին»:

Ռուբէն իր յուշերուն մէջ կը գրէ Մոսոյի մասին. «Մոսոն երթաւսարք էր, քաջ. զիւրիցի և ունէր զիւրիցի նշանած մըն ալ իր հայրենի գիւղին մէջ: Թէեւ ամէն 15 օրը անգամ մը ան կ'անցնէր իր գիւղին մօտէն Կովկաս երթալ գալու ատեն, բայց պարտաւորուած էր միայն երկնքի կառնկի նման հեռուէն դիտել իր հայրենի գիւղը և նշանածը. չէր կրնար ներս մտնել. գիւղը քրդախառն էր, ինչպէս նախ ոստիկաններ կային այն տեղ» (Հայրենիք Ամսագիր, Գ. տարի, 1926, թ. 6, էջ 112): Մոսոյի զէպքին մասին շարունակ

նակելով կ'ըսէ: «Անվեհեր Մոսոն կատգած է, կը քաշէ տասնոց ատրեանակը ու կը կրակէ գորգին վրայ: Արդէն 3 զինուոր սպաննած, ու կը թուի թէ Մոսոն շղթայէն դուրս ելլելու վրայ է, բայց ահա համագարկ կը բացուի իր վրայ, կը սպաննուի Մոսոն համագարկի գնդակներէն»: Այնպէս կը թուի թէ Ռուբէն լիովին ծանօթ չէ եղած Մոսոյի ընտանեկան պարագաներուն, քանի որ Մոսոն ամուսնացած էր եւ ունէր երկու տղայ զաւակներ, մէկուն անունը Զարգանդ, միւսինը՝ Հասրաթ: Մոսոյի մասին յորինուած ժողովրդական գովերգին մէջ, արդէն կը յիշուին անոր երկու զաւակներուն անունները:

**ՍԱՂԷ ԵՂՕ**

Եղիազար Սաղէեան, Սալու գիւղէն: Շատ կանուխէն կը մտնէ Դաշնակցութեան շարքերը: Մարտական խումբերու մէջ իր կատարած դործերը զնահատութեան արժանի ըլլալով, կը դառնայ սուրհանդակ: Յեղափոխութեան շրջանին, կուսակցութեան սուրհանդակութիւնը ամենազժուարին, պատասխանատու եւ արկածալից դործն էր, եւ Եղոն իր այդ պատասխանատու պարտականութիւնը միշտ ալ ապահով եւ յաջողութեամբ կը կատարէ: 1908-ի Օսմ. Սահմանադրութեան, թրքական բանակին մէջ զինուորական ծառայութեան կը կանչուի, սակայն, քանի մը ամիս ծառայելէ ետք, չկարենալով



Եղիազար Սաղէեան

հանդուրժել իր շրջապատի մտայնութեան, կը դառնայ փախուսական եւ կ'անցնի Կովկաս:

1914-ին, հայ կամաւորական բանակի կայմակերպութեան օրերուն, կամաւոր զինուորագրուելով, կը մտնէ Գ. Կունյին մէջ, Քեսիի հրամանատարութեան տակ: Ռուս-թրքական պատերազմին կը մասնակցի Մարիպոմիշի ճակատամարտին: Կը վերադառնա՝ ապագինել, ետք կը միանայ Արմաթի վաշտին եւ կը մասնակցի կռիւներու:

1918-ի մեծ նահանջի ընթացքին, ձիաւորներու խմբապետի աստիճանով, զինք կը գտնենք Միսիան-Գորիս շրջանի կռիւներուն մասնակից, եւ այդ կռիւի ընթացքին, յառաջացող թշնամիին ձեռքը՝ հայկական թնայնութիւնները գերի չթողելու հերոսական մարտնչումներու ընթացքին, պարտականութեան զիտակցութեամբ, հերոսաբար կ'իյնայ պատնէշին վրայ:

**ՍԱՐԳԻՍԵԱՆ ՓԻՂՈՍ**

Վաշտապետ Փիլոս, Ելպիս գիւղէն: Հ. Յ. Դաշնակցութիւնը Ննուս մուտք գտնելով, Փիլոս կը զինուորագրուի անոր, եւ կը դառնայ հայրուկ: Ննուսէն կ'անցնի Կովկաս. իր գործունէութիւնը առաւելապէս եղած է Կովկասի մէջ: Մասնակցած է հայ-թաթարական կռիւներուն, մեծ քաջագործութիւններով: Փիլոսի մասին, տեղակալ Մ. Աւետեան կը գրէ. «Փիլոսն այն ախասախմանադրական օրերու յեղափոխական մրն է. մասնակցած է թէ՛ հայ կամաւորական պատերազմներուն եւ թէ՛ Մարտարապետեան գոյամարտերուն, իբրեւ վաշտապետ ձիաւոր հարիւրակի: Փիլոսն այլ իր վաշտով լինելով Հայաստանը՝ հետեւած է Սմբատի եւ Անդրանիկի գործառնութեան ղեկով Զուլֆա եւ Խոյ, ուր աչքառու գործունէութիւն ունեցած է այդ ուղղութեամբ մզուռ դալոր կռիւներուն: Ապա Սմբատի հետ անցած է Զանգեզուր, այնտեղի ալ մահազորումներուն իր կարեւոր դերը կատարելով. դարձեալ Սմբատի հետ վերադարձած է Հայաստան:

«Փիլոս իր ձիաւոր վաշտով միշտ պատրաստ, իր անհնազանդութեամբ բերած է Հայաստանի սահմանային կռիւներուն, ինչպէս Եղիազարի կռիւներուն: Մասնակցած է Վարսի պատերազմին, Գարապէտի ճիւղի ղեկավարութեան ժամանակ Փետրուարեան ղեկավար, ապա անցած է Կարսից, անկէ ալ Կ. Պոլսու ու անկէից ալ անցած է Ֆրանսա՝ Տիսին, ուր տուն տեղ եղած է եւ կ'ապրի» (Հայ ազատագրական ազգային յիսնամեայ յուշամատեն, Փարիզ, 1956): ՏՄՍ Փիլոսի նկարը էջ 52:

**ՍԱՆՕ (ՎԱՂԱՏ)**

Անոր մասին Սեպուհ իր յուշերուն մէջ կը գրէ. «Սանոն մեր երկն եւ յառ աստիճանակներէն էր. Սանիս գիւղացի, հարազակ, հաստառ. անկախ եւ ազգասէր մէկը: Կը պատմելին որ, 1894-ին, երբ ան՝ Աքրան եւ Մարտարապետեան կիբ պիտի անցրնէր մուր գիշերին, իր անկախ գոյգ մը արեւիցը (չարտաթ)



կր քազցնէ հանապարհին՝ քարերէն մէկուն տակ, որ վերադարձին առնէ: Կերթայ Խնուս, հոն կր մնայ ամեր, գարունը եւ ամառը: Այդ հանապարհով լեռ բարձրացող քարեր կ'անցնին: Անձրեւ, ձիւն, եւայլն կ'ըլլայ: Եւ Սափոն այնքան լաւ յիշողութիւն ունէր, որ հետեւեալ աշնան՝ վերադարձին, այդ քարին տակէն իր քազցուցած տրեխները կը գտնէ: Արագաշարժ եւ սրատես էր: Անոր եւ քոյրի Սարգսի մասին կ'ըսեն, թէ գայլի աչիք ունին եւ մթուքեան մէջ աւելի կը տեսնեն: Բարձրահասակ, բարակ, ջղայնուտ էր, մեղմ բնաւորութեամբ, ոչ-ցուցամուր, համեստ, գործունեայ եւ լուսկեաց: 30 տարեկան էր եւ մագսանեկներու հետ եղած էր: Բայց ի՞նչպէս էր դաշնակցական դարձած: Թիֆլիսի մէջ բեռնակրութեամբ զբաղող հայ մը կար, Անդրէ անունով, բարձրահասակ եւ յաղթանդամ երիտասարդ մը, որ Խնուսի հալիլ-Չաուշ անունով գիւղացի էր, եւ սպանութիւն մը կատարած էր ու փախած Թիֆլիս: Օր մը, աշխատանքի համար, համալի կտուցուածքը մէջքին, շուկայ կ'իջնէ, ուր կը հանդիպի Քրիստափորին, որ լաւ մը կը դիտէ զինքը եւ բան մը գնելով կը յանձնէ անոր որ իրենց տունը տանի: Ճանապարհին յօսակցութեան կը բռնուին: Քրիստափորը կը հետաքրքրուի անոր կեանքով, կը հետաքրքրէ զայն յեղափոխութեամբ: Ապա կը մտցնէ գաղտնի դրարոց՝ գրել կարգաւ սուրբելու համար: Ահա այդ Անդրէի միջոցով է որ կը ծանօթանայ վախտ Սափոյին, եւ յեղափոխական գործի կը լծէ:

*Հոս տանք Թորգոմի (Թուման Թումանեանի) համարը.* «Վտակ գիւղ՝ ռուսական սահմանի վրայ, գէնի եւ դրօշակի վրայ կ'երդուինք՝ Որսորդ, քոյրի Սարգիս, խաստուրցի Յակոն, դրօշակի Տուրպախ, Սեպուհ, Առաքել, Աւետիս: Սահմանը անցնելով, կ'անցնինք գորակցի քիւրտ աշխարհի մէջէն, կը հասնինք Դեղբափի սարը եւ կ'իջնենք Խնուսի դաշտը: Ժողովուրդի օգնութիւնը անսահման էր: Բաժնուեցանք 4 մասի, եւ այդ օրը թէ՛ թէ՛ յըմեցինք եւ թէ միս ու տափ ապուր կերանք: Տուն մը կ'իջեանինք Թորգոմ, Մեմակ, Ֆարհատ, Տուրպախ եւ Սափոն: Այս տունը հայկական մի հալալ օջախ էր: Տան ձերուի հայրը շատ յեղափոխական խմբեր էր հիւրընկալել իւր յարկի տակ: Շատ հերոսների էր հանապարհել հայրենիքի ազատութեան համար մեռնելու:

«Այս տեղ վերցրինք նոր ուղեցոյց (վախտ), իսկ Սափոյին եւ Յակոյին իրանց ձիւներով յետ եմք հանապարհում: Նա աշդտեղ գալով, ձեր հարցախրութեան միանգամայն բաւականութիւն կը տայ: Թէ Սափոն ի՞նչ ծառայութիւն մատուց Դաշնակցութեան՝ *Մարիկ* խումբը միայն կարող է զգալ:

«Մենք իրապէս շնորհակալ ենք ձեզից որ մեր բախտը յանձնեցիք մի այդպիսի ուշիւ ու տաղանդաւոր ուղեցոյցի: Դա միանգամայն զովելի ոյժ է մեզանում. աշխատեցէ՛ք հովանաւորել եւ գործի օգտին ծառայեցնել դորան: Երկրորդ նամակս կը գրեմ Բարձրաւանդակից:

Ձերմ համբոյրներով՝

Ձեր ընկեր՝ Թորգոմ:

**ՍԻՄԷ**

*Սիմէ Պողոսեան-Մկրտիչեան: Սիմէի մասին մենք կու տանք «Դրօշակ»-էն ստնուած, Ա. Ջնգիի գրութիւնը:*

«Սիմէ Պողոսեան-Մկրտիչեան բնիկ Խնուսի Խալիլչաւուշ գիւղէն էր: Հասարակ, անգրագէտ մէկն էր, բայց շատ սիրուած էր իր բնկերներէն: Ամէն տեղ, ուր Սիմէն էր, լացը կը փոխուէր ծիծաղի, արցունքը՝ ժպտի: Սիմէն յայտնի եղաւ այն տերօրով, գործի գործ դրաւ հանրաժանօք բոմբէր Տիգրանին վրայ:

«Տեղը չէ կանգ առնել Տիգրան Ազրայէլի կատարած մատուցութիւններուն շարանին վրայ. սկսեալ Հրայրի ծանօթ ձեռքակալութենէն, Բասենի եւ Դաշտի գէնիներու բռնուելէն մինչեւ իր եղբրական վախճանը: Տիգրանը իրեն նախկին յեղափոխական եւ ապագայ մատնիչ, կը ներկայանար մեր հայկական Ազգէր: Անոր կեանքին վերջին գիծը լի էր ամէն ազտագութեամբ եւ գարշութեամբ:

«Մատնիչը վերջին տարիներուն, զգալով իր հյւէշային սերագործութիւններուն սարսափելի հետեւանքները, մանաւանդ ծանօթ լինելով յեղափոխական անողոք վրէժխնդրութեան, կը սարսափէր ու միջոցներ կը փնտռէր ինքզինք արդարացնելու համար: Սակայն յեղափոխականը վնաս էր անոր նակատագիրը. ո՛չ մէկ խորամանկութիւն, ո՛չ մի կոկորդիլոսեան արցունք կրնար խաբել զայն:

«Ու երբ տերօրիստները իրարու ետեւէ անյաջողութեան մասնուեցան, երբ երկարի սկսաւ կեանքը այն մարդուն, որ բազմաթիւ կեանքեր յամբեցուցած էր եւ որուն գոյութիւնը արատ մըն էր յեղափոխական բազկին, ահա այն ժամանակ դուրս եկաւ մէկը. որ մատնիչի մօտիկ ազգականներէն էր եւ որ գերադասեց ազգային նամուսը ազգականի կեանքէն. դա Սիմէն էր. բաւական քաւ սիրտ, գորեղ կամք եւ խորունկ ազգասիրութիւն պէտք էր՝ մօտիկ ազգական մը սպաննելու համար: Եւ Սիմէն մտադրած էր անպայման գործադրել իր մտածումը: Նա մօտեցաւ հօրեղօրորդոյն, մտաւ անոր ծառայութեան տակ, առանց երբեք կասկած ներշնչելու:

«Հօրեղօրորդի՛. կ'ըսէր յաճախ կատակով. մի՛ վախճար. ո՞վ կրնայ քեզ սպաննել. եթէ անպատճա՞ռ սպաննել պէտք լինի, այդ ես կ'ընեմ... Ամօք չէ՞ որ իմ ազգականս ուրիշները սպաննեն:

«Մատնիչը չէր կրնար կասկածիլ. թէ Սիմէն նշմարութիւնն էր որ կ'ըսէր կատակի ձեւով:

«Ու ահա օր մըն ալ. Խնուս բերդի մէջ հարսանիք(\*) մը կը պատահի: Մատնիչը հոն է. Սիմէի սիրտը կը տրոփէր. առիթը յարմար էր: Ժամ մը

(\*) Տիգրանի սպանութեան օրը՝ Տիգրանի եղբոր՝ Միսակ ազայի երկու ազգիկներուն՝ Արեգագի եւ Վարդանոյի (Կիւլլի) նշանախօսութիւնը տեղի կ'ունենայ եւ Սիմէն ներկայ կ'ըլլայ: Իրիկուան մութիւն, Տիգրան ռուս հանապարհ կ'երթայ. Սիմէն առիթը յարմար նկատելով ետեւէն կ'երթայ, արտաքննող մը մէջ կը սպաննէ Տիգրանը եւ կ'անյայտանայ:

վերջ անվեհեր ձեռք գետին կը տապալէ գայն ու քաղաքէն դուրս կը փախչի ագատ:

«Հարսանիքը տակն ու վրայ կը լինի. կը սկսի անմեղներու ձերբակալութիւնը: Սոսկալի իրարանցում. ոստիկանութիւնը կը ձերբակալէ նաեւ Սիմէի հայրը:

«Գեապուր օղլի, կա՛մ դու, կա՛մ զաւակդ պէտք է կախազան ելնէք:

«Ու ծերունին կը դողար ծեծի, խոշտանգումի անլուր չարչարանքին տակ:

«Երեք օր վերջ Սիմէն ինքզինք գտաւ Սասնոյ կատարներուն վրայ, այնտեղ, ուր արծիւները բոյն էին դրած...

\* \* \*

«Դեռ գարունը չբացուած, կոիւներն սկսան Սասնոյ մէջ. բախտը կը ժպտար հայ մարտիկներուն: Սիմէն այնտեղ է, կոուի տաք կեդրոններում: Ո՛չ մի մուսլի, ո՛չ մի կնիւն չմթագնեց անոր հոգին: Ընդհակառակն նա մնաց նոյն ծաղրաբան, նոյն շաղակրատ Սիմէն: Կոիւր՝ Սիմէի ներկայութեամբ մի հարսնիք էր:

«Յաճախ կը պատմէին իր զինակիցները, կը տեսնէինք որ կոիւի ժամանակ Սիմէի հետ կեցող տղան ծիծաղելով վար կ'իյնար...

«Դէ՛ տղայք, խնդալու ժամանակ չէ, կը դառնար խմբապետը:

«Պարո՛ն... պարո՛ն... Սիմէն է... ջարդեց մեզ խնդացնելով:

«Այսպէս, ծիծաղելով, երգելով նա դիմեց մահը: Գեղեցիկ է կոիւր հայրենիքի համար, գեղեցիկ է երգը մահուան վերջին բառերին: Բայց կրտուելով ու երգով դիմաւորել մահը՝ դա մի ծաղիկ է նետուած գերեզմանի վրայ: Ու Սիմէն մեռաւ այդ ծաղիկներուն մէջ:»

**ՍԻՄՕ ՕՀԱՆ**

Քաղքիկ գիւղացի: Աւելի ծանօթ՝ Քաղքիկու Օհան անունով: Իաշնակցութեան քաջ եւ ընտիր զինուոր: Մարտական խումբի մէջ անուանի կոուուղ: Եղած է սուրհանդակ եւ վալառ, երկրէն Կովկաս, Կովկասէն՝ երկիր զինատար խումբեր եւ հայդուկներ առաջնորդելով: Իր զինակից ընկերներն էին նոյն գիւղացի Մարկոսի Միսակ, Իկիթի Պօղոս, Շէկ Յակոն, Աղաճանի Աբրոն, բոլորն ալ դաշնակցական եւ թուրք կառավարութենէն հետապնդուող ֆիւրարներ:

Քաղքիկ գիւղին մերձակայ Աղճամելիք գիւղին հանրաձայնօք Պաժօ Օհանի տղուն՝ Էնկէի աղջիկը, հարսնցու կ'ուզեն Քաղքիկ, գիւղին ո՛չս Կարոյին տղուն: Աղճամելիքի երեսասարդ մը, աղջկան սիրահարած ըլլալով, սակայն, անկարող ըլլալով աղջկան ձեռքը խնդրել, կը դիմէ գիւղին քիւրտ աղային՝ Շահօ Պալլոյի տղուն՝ Համբոյին, եւ կաշտակելով՝ կ'ուզէ որ աղջիկը փախցնէ իրեն համար: Աղջիկը բնութեամբ փախցնելու լուրը կը հաս-

նի Քաղքիկ: Ռէս Կարոն լուր կու տայ Սիմօ Օհանին: Օհան եւ իր ընկերները զինուած, խումբով կ'երթան Աղճամելիք: Երբ Համբոն կը լսէ, որ Օհանը զիւրը պաշարեր է, իր ծառաներէն մէկը կը զրկէ Օհանին եւ կը հրատարակ իր քով: Օհան երեք ընկերներով կը ներկայանայ Համբոյին, եւ կը սպասանայ անոր, եթէ որեւէ փորձ ընէ աղջիկը փախցնելու: Քիւրտ աղան ներողութիւն կը խնդրէ Օհանէն եւ կը մեղադրէ հայ երեսասարդը: Ը՛ուզեր իրնզիր ունենալ Ֆէտայիներու հետ: Օհան իր խումբով, հարսնցուն եւ ծնողքը հետը առնելով կը վերադառնայ Քաղքիկ, եւ պատկազրութիւնը կատարելով հարցը կը փակուի:

Օհան ֆիւրար եղած ատեն, օրին մէկը, երբ քանի մը ընկերներով գիւղէն դուրս, թալստոց մը հանդիպում կ'ունենան, գիւղին մէջ նստած թուրք զինուորները զաշտ ելած ատեն, զանոնք կը նկատեն, կը փորձեն ձերբակալել, սակայն, Օհան եւ ընկերները կուտելով կը բարձրանան սարը եւ կ'անյայտանան:

Սիմօ Օհան մնաց միշտ ֆիւրար, յաճախ Կովկաս անցնելով եւ երկիր վերադառնալով, միշտ նոյն պարտականութեամբ, մինչև 1908, Օսմ. Սահմանադրութեան հռչակումը, Երբ այլևս ազատ էր, եւ կ'աղբէր միշտ լծուած հանրային աշխատանքի, երբ եկաւ 1915-ի մեծ եղեռնը, եւ ինք այդո՛ւ զո՛ւ զնաց անոր:

**ՍԻՄՈՆԵԱՆ ԻՎԱՆ**

Մեռաւ բերդէն, Սիմոնեան հարուստ եւ հանրածանօթ գերդաստանի եօթներորդ եղբայրն էր: Իժմե թէպէտեւ հարուստ բնածնիքն անդամ, բարեկեցիկ ազրող, սակայն, հայրենասիրական ոգիէն ձգուած կը մտնէ, Հ. Յ. Իտշնակցութեան շարքերը: Որպէս դաշնակցական բիւրոյի նշանակած Հանդանոսկութեան յանձնախումբի անդամ, Մեռոսի մէջ կատարուած Հանդանոսկութենէն ետք, կը զրկուի Բասեն ու հոնկէ երգրում (այս Հանդանոսկիչ յանձնախումբին անդամները եղած են նաեւ՝ Երկոյ՝ ուսումհայ, Արմենակ Քրճոյեան՝ Խնուս բերդեցի, Քեոսի Պետօ՝ հարսնիցի, Երկո Կարապետ, Կարապետ Մալխասեան՝ Խնուս բերդեցի): Հանդանոսկութեան մասին եղած մտածութիւնը ուսիկաններէն յսելով՝ Արմենակ Կարապետին յուրը կը հարցորէ ենթականերուն անմիջական պարագաներուն: Հանդանոսկիչները կը հետադրեցուին թուրք կառավարութենէն, եւ ի վերջոյ կը ձերբակալուին ու կալանուոր կը տարուին Կարնոյ Կեդրոնական բանտը: Իժմեի բանտարկութեան եւ մահովճիտին յուրը աննելով, անոր եղբայրներէն Վարդան տղան կը փութայ Կարթն եւ 200 օսմ. հնչուն սակիի գումարով կը յոյժողի մահովճիտը ցիկանս բանտարկութեան փոխել: Այս մասին իրողուած է Սիմոնեան զերդաստանի յատկացուած Էջեբուն մէջ:

1908-ի Օսմ. Սահմանադրութեան հռչակումով, Իժմե բանտէն ազատեցաւ, սակայն, 1915-ի մեծ եղեռնի նախօրեակին՝ Մարտ ամսուն՝ ձերբա-

կալուելով քշուեցաւ Էրզրում-Երզնկա, եւ ճանապարհին Սանսար Դարայի ձորին մէջ իր ընկերներուն հետ նահատակուեցաւ:

**ՏԷՐ ԶԱՔԱՐԵԱՆ  
ՕՀԱՆ**

Ծածկանունով՝ Սէֆիլ Օհան: Ծնած է Սալչաուշ գիւղը: Նախնական կրթութիւնը քահանայ հորմէն ստանալէ ետք, կը շարունակէ Մշոյ Ս. Կարապետի

Ժառանգաւորաց վարժարանը. չըջանաւորաւ ըլլալով կը վերադառնայ գիւղը: Անդամակցած է Հնչակեան կուսակցութեան, զործակցելով Միհրան Տամատեանի եւ Մուրատ Պոյաճեանի:

Հայրենիքէն հեռանալով, նախ կ'անցնի Պոլիս, հոնկէ ալ Աթէնք, ուր սերտ զործակցութիւն կ'ունենայ Յարութիւն Ճանկիւլեանի հետ: Հնչակեան Արշաւիր Շամլեան՝ կարնեցի, «Ներխոտասարգ Հայաստան»ի մէջ Օհան Տէր Զաքարեանի մասին գրած ատեն, կ'ակնարկէ թէ հնչակեան Աղասին իր յուշերուն մէջ կը գրէ Օհան Տէր Զաքարեանի Աթէնքի մէջ ունեցած զործուհեութեան մասին:

Օհան Տէր Զաքարեան Մուրատի խումբին հետ կ'անցնի Սասուն, ուրկէ կու գայ հայրենի գիւղը: 1895-ի հայկական դէպքերու նախօրեակին, Պընուսի մէջ հանրածանօթ բարբարոս՝ քիւրտ Հաճի Հայտարը կը սպաննուի: Հաճի Հայտար 1876-ի ռուս-թրքական պատերազմին մասնակցած եւ անուն հանած անպարտելի հերոս նկատուած էր քիւրտերէն, ու դարձած էր համբաւուր պատուհասը հայութեան զլխուն:

Վրէժխնդիր երիտասարդութիւնը կ'որոչէ Հաճի Հայտարը մէջտեղէն վերցնել: Օհանին ծանօթ սասունցի Ստեփանը, որ այդ օրերուն եկած էր Սալչաուշ, գիւղին այդ ատենուան քահանային տղուն՝ Հրանդի (Հրօ) եւ ուրիշ երիտասարդի մը՝ Առաքելի (Ըոքօ) հետ, կը հետապնդեն Հաճին, եւ Հարամիկ ու Քաղքիկ գիւղերուն միջեւ, Դանիէլ դետի քարաշէն կամուրջին վրայ, գիշեր ատեն հանդիպելով՝ կը սպաննեն եւ դիակը դետին ջուրերուն հոսանքին կը յանձնեն:

Օհան Տէր Զաքարեան, այս դէպքին մեղսակից նկատուելով կը ձերբակալուի եւ կը բանտարկուի, չփոթուելով Տէրտրոջ տղուն՝ Հրոյի տեղ, քանի որ ինքն ալ տէրտրոջ տղայ էր: Առանց իրատուանքի, Կարին տարուելով կը դատապարտուի 15 տարուան բանտարկութեան, եւ կը զրկուի Մինուպի բանտը: Այս դէպքին առնչութեամբ արդէն անդրադարձած ենք Սալչաուշ գիւղի մասին գրուած գլուխին մէջ:

Զաքար Տէր Զաքարեան, Ամերիկեան բանակի զինուոր, Առաջին Համաշխարհային պատերազմին կը մասնակցի Արկոնի ճակատամարտին, կը վիրաւորուի եւ թունաւոր կէզով կը թունաւորուի: Ռազմադաշտէն կը տարուի Փարիզի Ամերիկեան զինուորական հիւանդանոցը, ապաքինելով, պետութենէն կը վարձատրուի փրփրիլ հարթ հերոսական պատուանշանով, եւ



Եղիշէ Յ. Մելիքեան (հարամիկցի) եւ Զաքար Տէր Զաքարեան (խալչաուշցի) զինուորական տարագով: Նկարուած 1920-ին, Ֆիլատելֆիա:

Նախագահ Վիլսոնի ստորագրութեամբ վնահատական թուղթով՝ փրէզիտենշըլ սայթէշըն:

**ՔՈՄԻՍԵՐ  
ՏԻԳՐԱՆ(\*)**

Իր ժամանակին լայն լուսարանութիւններ գրուած են խնուցի քոմիսէր Տիգրանի եւ անոր ահաբեկման մասին, որ սերտօրէն կապուած է Հ. Յ. Դաշնակցութեան ամենաբուռն զործուհեութեան եւ Աշոտ Թաթուլի (Արամ Արամեան) կեանքին հետ, եւ աչքաուր դէպքերէն մէկն է Դաշնակցութեան:

Քոմիսէր Տիգրանը ինուս բերդեցի Մահտեսի Գէորգին տղան էր, Սանասարեան վարժարանի սաներէն մէկը, կրթեալ, կորովի եւ յոյս ներշնչող անձ մը: Շատ կանուխէն մտած էր Հ. Յ. Դաշնակցութեան շարքերէն ներսանոր մէկ խանդավառ զործիչն էր. կը գործէր Ագրայէլ կեղծ անունով, ի-

(\*) Խնուցի քոմիսէր Տիգրանի մասին տեղեկութիւններ հայրայքած է չեխիքցի Գասպար Դարբինեան, իսկ գրի առնողն է Տէր Սուրէն աւագ քնն. Բարսիսեան: Գասպար Դարբինեան իր ուսուցը առած է Կարնոյ Սանասարեան վարժարանը եւ մօտէն ծանօթ եղած է Տիգրանին: Գ. Դարբինեան զաղքած է Ամերիկա եւ հաստատուած Մըտէսքօ (Քալիֆորնիա): Նկարը տեսնել էջ 48:

րեն գործակից ունենալով Խնուսի Չեւիրմէ զիւղէն Մալոյեան Եսաւը եւ սասունցի Սմբատն ու Արամը: Սմբատն ու Արամը կ'ապրէին Կարին եւ կ'աշխատէին մշեցի Մանուկի խանին մէջ:

Քանի մը տարի առաջ, Քալիֆորնիա, Փրէզիտյի Հայաստան գերեզմանի հողին յանձնեցին Մըտէսթօ քաղաքը բնակող խնուցի Գասպար Դարբինեանը, որ ծնած էր Խնուսի Չեւիրմէ զիւղը: Մանուկեան օրերուն ծնողքին հետ եկեր հաստատուեր էր Կարին, եւ Կարնոյ մէջ իբրեւ ահանատես կը պատմէր Տիգրանի մասին: Այդ տեղեկութիւններն են որ կը փոխանցենք ընթերցողին:

Մահտեսեան Տիգրանը ճանչցուած էր իբրեւ անուն հանած յեղափոխական մը եւ կը փնտռուէր թուրք կառավարութեան կողմէ՝ Խնուսի մէջ: Ուստի Տիգրան կը գործէր փախստական վիճակի մէջ, եւ այդ տարին իբրեւ փախստական եկած էր Կարին եւ կ'ապրէր իր հօրաքրոջ տունը:

Իր գործակիցներն էին՝ մեր Չեւիրմէ զիւղէն Եսաւ Մալոյեանը եւ սասունցի Սմբատն ու Արամը, որոնք կ'աշխատէին մշեցի Մանուկի խանին մէջ: Անոնք յաճախ կը հաւաքուէին մեր տունը եւ կը խորհրդակցէին հօրս հետ: Ես ինքս ալ յաճախ ներկայ կ'ըլլայի իրենց զրոյցներուն:

Այդ տարին Եսաւն ու Սմբատը Սասունէն Կարին բերած էին ոէս Գըրդոյի տղան՝ Տեփոնն ու հարսը, որ վիրաւորուած էր Սասնոյ կռիւներուն մէջ, եւ կ'աշխատէին տեղեկագիր մը կազմել Սասնոյ շրջանի կացութեան մասին, զայն յանձնելու համար Թայմզի թղթակից Տիւլնին:

Այդ տեղեկագիրը կը պատրաստէին կաթողիկ Օննիկն ու Տիգրանը, որ յետոյ Կարնոյ մէջ եղաւ քամիսէր...:

Տեղեկագիրը կազմելէ Լոք, Սմբատն ու Եսաւը՝ Տեփոնն ու հարսը վերադարձուցին Սասուն եւ կրկին ետ եկան Կարին, որպէսզի այս անգամ Տիգրանը տանէին, ի հարկէ փախստական:

Բայց, Տիգրան չզնայց, պատճառը մենք չհասկցանք:

Այդ ատեն էր որ հռչակաւոր Շաքիր փաշան՝ իբրեւ ընդհ. զննիչը թուրք կառավարութեան՝ եկաւ Կարին:

Շաքիր փաշան հայատեաց մըն էր եւ դահիճ մըն էր հայոց, մինչ Կարնոյ կուսակալը՝ Րէուֆ փաշան, բաղդատարար մեղմ եւ լաւ մարդ մը կ'երեւէր:

Շաքիր փաշան կոչ մը հանած էր Տիգրանին համար, ըսելով. «Եթէ Տիգրանը անձնատուր ըլլայ, պիտի ներուի իրեն եւ կառավարկամ պաշտօն պիտի տրուի իրեն...»

Այս կոչին վրայ, Տիգրան ատանց իր կուսակցական ընկերներուն լուր տալու՝ կ'երթայ կը յանձնուի, եւ կառավարութիւնն ալ առ ի վարձատրութիւն՝ զայն քամիսէր կը նշանակէ, եւ այնուհետեւ մեր դաշնակցական Տիգրանը դարձաւ քամիսէր Տիգրան:

Կուսակցութեան զէնքերը, որոնք պիտի փոխադրուէին ներսերը, Տիգրանի քովն էին, անոր հօրաքրոջը տունը:

Ընկերները Տիգրանէն կը պահանջէն, որ կուսակցութեան զէնքերը իրենց յանձնէ: Տիգրանը կը մերժէ յանձնել, եւ ընկերներէն կը պահանջէ կազմել կուսակցական ատեան մը, որպէսզի անոր ինք բացատրութիւն տայ իր քամիսէր դատնալու մասին, յայտնելով միեւնոյն ատեն, թէ ինք այս վիճակով աւելի շատ օգտակար կ'ընայ հանդիսանալ կուսակցութեան:

Ի հարկէ ընկերները ա'լ չեն կրնար վստահիլ անոր եւ իրենց կարգին կը մերժեն անոր առաջարկը, եւ կուսակցական ատեան չեն կազմեր: Սակայն, կոմիտէի անդամներէն Սապոնճեան Միհրանը եւ Միլլէթը (խսկական անունով Յովհաննէս), որ մը կը յաջողին Տիգրանին հօրաքրոջ տունը մըտնել եւ զէնքերը տանիլ:

Տիգրան այս դէպքին համար կը մնայ զուսպ եւ որեւէ ատարկութիւն չ'ընէր:

Սակայն, այդ օրերուն կը զուգարկուի նաեւ հետեւեալ զէպքը. Արամ Արամեանը Կարսի շրջանէն նոր զէնքեր բերած է Բասեն՝ Թոտովբեան-Գոմաձոր զիւղը, եւ զեռ ո'չ մէկ տեղեկութիւն ունի Տիգրանին դարձին մասին: Նամակ մը կը գրէ եւ կը գրկէ Տիգրանին՝ Աւետիս անունով տղու մը հետ, որպէսզի իր բերած նոր զէնքերուն մասին կարգադրութիւն մը ընէ, եւ ուղղութիւն մը տայ զանոնք անմիաս տեղը հասցնելու համար:

Տիգրան այդ լուրը կը յայտնէ կառավարութեան եւ կառավարութիւնը կը յաջողի զիւրութեամբ ձերբակալել Արամը, զբաւել զէնքերը եւ փոխադրել զանոնք Կարին, ուր՝ Արամը կը զրուի բանտ, իսկ Տիգրանը կառավարութեան կողմէ կը վարձատրուի մէքիտիէ պատուանշանով մը: Տիգրան կ'առնէ նաեւ հրացան մըն ալ կուսակցութեան նոր բերուած զէնքերէն, կը տանի զայն իր տունը եւ կը պահէ իրեն համար, սակայն հրացանին վրայէն խարտոցելով կուսակցութեան զինանշանը:

Օր մը, Ղազարղեան Մկրտիչին տղան՝ Յովհաննէսը, Պասմաճեան Կարապետը, Խաչիկը, Ղարիբճանը եւ պատանի Գասպար ինքը այցելութիւն մը կու տան Տիգրանին՝ անոր մէքիտիէ պատուանշանը շնորհաւորելու համար:

Տիգրանին տանը մէջ, Յովհաննէս Տիգրանին հրացանը պատէն վար կ'առնէ, կը զննէ եւ կը ճանչնայ զայն. կը նշմարէ անոր վրայէն Դաշնակցութեան զինանշանին խարտոցուիլը եւ դառնալով Տիգրանին կ'ըսէ.

«Հէ՛յ կիտի Տիգրան, ժամանակին Դաշնակցութեան շունն էիր, իսկ հիմա քուրբին շունն ես...»

Տիգրանը կը պատասխանէ ամօթէն կարմրած. «Ի՞նչ ընեմ, ստիպուեցայ»:

Բանտին մէջէն Արամ կը փորձէ նամակ մը զրկել զուրբը՝ քաղաքի իր ընկերներուն (Արամ Արամեանը կարնեցի էր): Բանտին մէջ գողութեամբ բանտարկուած կարնեցի Սերոբ Մարալեանը, ձեւով մը կը բռնէ այդ նամակը եւ վատարար կը յանձնէ թուրքերուն:

Սերոբ Մարալեանը կ'աղատի, իսկ Արամը կը կախուի: Արամը կախուած ատեն հրաշունչ ճառ մը կը խօսի ի խնդիր ազգին ազատութեան եւ կը յուսադրէ ու կը քաջալերէ իր ընկերները:

Արամի թէ՛ կախման եւ թէ թաղման ժամանակ, ոստիկանութիւնը կը հետապնդէ հասկնալու համար անոր ընկերները:

Արամին ընկերն ու դասընկերը՝ Տիգրան Պաստրմաճեան (Արմէն Գարոյի հօրեղբայրը) զինուած կ'իջնէ հրապարակ եւ անոր դադաղին առջեւ կը խօսի կրակոտ խօսքերով եւ բոցալառ դայրոյթով...

Կը ստեղծուի ծանր կացութիւն. բայց, առաջնորդը՝ Զաւէն վարդապետ (յետոյ պատրիարք), կը յաջողի զրութիւնը փրկել:

Երկու տաճիկներ կախուած են Արամին հետ:

Հոս կանգ կ'առնէ քոմիսէր Տիգրանի մասին Գասպար Դարբինեանին գիտցածը...

\* \* \*

Կարին կ'եռար հայ ժողովուրդին ազատագրական պայքարի եռուղեով: Յեղափոխական շարժումը մեծ թափ առած էր. Հ. Յ. Դաշնակցութեան ազատութեան ահեղ պայքարի բարձրագու շեփորին կ'արձագանգէր էրզրումի հայոց լեռներէն պոռթկացող ձայնը...

Կարնոյ եռ ու զեռ կեանքը, ազատագրական խռովայոյզ շարժումը եւ յեղափոխական շունչը եւ երկնքին դէմ աշտարակուող Թաքուլիմ կախազանքը իբրեւ անասան վճիռը Հ. Յ. Դաշնակցութեան, փոթորիկի պէս կ'անցնին լեռնէ լեռ, եւ սիրտէ սիրտ, եւ կը պահանջեն վրէժը Թաթուլին...:

Պէտք էր սրբել սեւ արատը Ոնուսի ճակտէն. եւ ո՞վ պիտի կրնար լուծել այդ վրէժը, եթէ ոչ նոյնինքն Տիգրանի մէկ ազգականը՝ Ուշալոյս գիւղացի Մկրտ Պողոսին առիւծասիրտ որդին՝ Սիմոնը...

**ՔՐՄՈՅԵԱՆ ԱԼԵՔՍԱՆ**

Չեւիրմէ գիւղէն: Բնիկ պիթիւղցի Քրմոյեան հանրածանօթ ընտանիքէն: Դաշնակցական մարտական խումբի խմբապետ: Քիւրտերու հետ կռիւներ ունեցած էր, առանց սակայն Փիրաք դառնալու: Առեւտրականի եւ ունեւորի հանդամանքով, հանրային կեանքի մէջ համակրութիւն եւ վստահութիւն չահած էր իր շրջապատէն, թէ՛ բարեկամներէն եւ թէ՛ հակառակորդներէն: Գաղտնապահութեամբ եւ զիտակցարար կ'ընծայարեւէր իր ծառայութիւնը իր ազգին, իր պատկանած կուսակցութեան միջոցաւ: Մարտական եւ զինատար խումբերուն եւ յեղափոխական սուրհանդակներուն՝ Կովկասէն Տարօն անց ու դարձերուն, զաղտնապէս կը պահէր եւ կը խնամէր եւ զիւրութիւններ կ'ընծայէր, ապահով տեղերնին հասցնելու:

1908-1915 ապրեցաւ Հանրային եւ կուսակցական գործերու փարած եւ զոհ զնաց 1915-ի Թրքական անլուր բարբարոսութեան:



Ալեքսան Քրմոյեան

**ՔՐՄՈՅԵԱՆ ԱՐՄԵՆԱԿ**

Քրմոյեան բազմանդամ ընտանիքը, Պիթիւղէն գաղթած էր եւ եկած հաստատուած Ոնուս: Արմենակ կ'անդամակցի Հ. Յ. Դաշնակցութեան, եւ իր եռանդուն գործունէութեամբ աչքի կ'իյնայ: Թուրք կառավարութիւնը զայն հետապնդելով կը փորձէ ձերբակալել, սակայն, Արմենակ տարիներով փախըստական կ'ապրի եւ կը գործէ որպէս անձնագոհ յեղափոխական: Իր փախըստական օրերուն, Ղարաբէօփրի հայաբնակ գիւղին մէջ գտնուած ատեն, ծանօթ քիւրտերէ կը նկատուի, եւ քիւրտերը զինք կը մատնեն՝ կառավարութեան լուր տալով: Թուրք ասկեարները զիւրը պաշարելով կը ձերբակալեն զայն, եւ Ոնուս բերդ տանելով հոնկէ կը փոխադրուի Կարնոյ Կեդրոնական բանտը եւ 101 տարուան, այսինքն ցկեանս բանտարկութեան վճիռով կը մնայ

բանտը, մինչև 1908-ի Օսմ. Սահմանադրութիւնը, եւ ընդհանուր ներումով կ'ազատի բանտէն:

Կարնոյ բանտէն ազատելով կը վերադառնայ Խնուս իր ընտանիքին ու գաւակներուն մօտ: Սահմանադրութեան ազատ օրերուն, Կովկասէն Խնուս գէնքի փոխադրութեամբ կը զրազի կուսակցութեան գիտակցութեամբ: Ատեն



Արմենակ Վրմոյեան

մը յաջողութեամբ իրեն յանձնուած գործը կը կատարէ, եւ սակայն, կարճ ժամանակ ետք, ուսմբերու փոխադրութեան մը պահուն կը մատնուի, եւ Բասեն եղած ատեն կը ձերբակալուի ու կը տարուի Կարնոյ բանտը: Բարեբախտաբար ճիշդ այդ օրերուն, Արմենակ անունով ուրիշ մէկու մը ներման հրամանը կու գայ, եւ ինք որպէս այդ անձը ազատ կ'արձակուի եւ կը վերադառնայ Խնուս: Եղած սխալը շուտով յայտնի կ'ըլլայ, եւ դարձեալ Արմենակը ձերբակալելու հրաման կը տրուի: Կարճ ժամանակ փոխատական մնաց Խնուս բերդ: Ի վերջոյ յաջողեցաւ անցնիլ Ամերիկա եւ հաստատուիլ Քալիֆորնիոյ Տրէզնօ քաղաքը, ուր մեռաւ 1932 թուականին:

**ՏՈՒՐՊԱՆ  
ԽՆՈՒՍԻ ՄԷՋ**

1895 թուականին, Կովկասէն հայրուկային խումբեր կ'անցնին դէպի Տարօն: Հաղորդակցութեան ապահով գիծը կ'անցնէր Խնուսէն: Մարտական թէ գինատար խումբեր, Խնուս հասնելով, հանգչելէ ու կազդուրուելէ ետք կ'անցնին Տարօն: Սերորի խումբը կու գայ Խնուս, Շապատին գիւղին մէջ ապահով հանգչելէ ետք, կ'անցնի Տարօն: Անդրանիկ իր խումբով կու գայ Խնուս եւ Խողի գիւղին մէջ ապահով հանգչելէ ետք կ'անցնի Տարօն: Տուրպախ Խարսի մէջ, խնուսցիներէ կազմուած հայրուկային խումբով մը կ'անցնի սահմանը, եւ կու գայ Խնուս: Խնուսի մէջ Դաշնակցութիւնը մարտական խումբեր կազմած կը պատրաստուի պատահականութեանց դէմ: 1895 Հոկտ. 9, Պոլիս, Ս. Զաւարեանի նամակէն կը քաղենք հետեւեայր. «Մեր ուշադրութիւնն է դարձուած աւելի այս կողմերը: Կարնոյ, Խնուսի կողմերը բաւականի ուժեր ունին: Այս ամառ ու աշուն, ուղարկուած է 150 հրացան, նոյն քանակութեամբ եւ մանրերից, դրանից քիչ պակաս էլ պատրաստի է»:

Տուրպախի եւ Սեպուհի խումբերը Խնուս կը գտնուին, երբ 1895-ի դէպքերը կը սկսին: Քիւրտերը երբ կը յարձակին Պուսնայ գիւղին վրայ, կը հանդիպին Տուրպախի խումբին ղեկավարութեան: Տուրպախ գիւղը կը բռնէ գիւղին առջևի տուտակի եկերքին գտնուող մենաւոր հաստարուն ծառի մը վրայ, եւ առանց նկատուելու կը կուսի քիւրտերուն դէմ, գտնոնք զարմանքի եւ սարսափի մատնելով: Նոյնիակ քիւրտերը կը տարածայնեն, թէ իրենց դէմ կուռողը Դերէ Ս. Սարգիսն է կզած: Այսինքն, գիւղին հայաց եկեղեցիին անուանատէր Ս. Սարգիս զորախոր:

Արամ Արամեան, Կարնէն, 1896-ին կը գրէ. «Փետր. 24 ... Խնուսում նոյնպէս ունինք հայրուկային խումբ եւ կազմակերպուիք ինչ, որը սկըսած է կամաց կամաց գորակալ, քէեւ վերջին դէպքերը նրան մի քիչ կազմալուծել են: Մեր ընկերներից Տուրպախը (կարսեցի) եւ Աւագը (տեղացի) այնտեղ են: (Դիւան Հ. Յ. Դաշնակցութեան, Ա. հատոր, էջ 293): Դարձեալ Ա. Արամեան կը գրէ. «1896 Մայիս 10, Կարնի... Խնուսում մերոնցից ձերբակալուած են 2 հոգի, որոնցից մին յայտնի վալատ Աւագն է»:

**ԿՈՐԻԻՆ  
ԽՆՈՒՍԻ ՄԷՋ**

Կորիւն (Գոմսայ Իսօ) Խնուս եկած ու կացած էր շատ անգամ, իսկ 1905-ին Խնուս կու գայ տեղական՝ կուսակցական գործերուն մօտէն հետեւելու եւ կազմակերպելու համար: Երբ շրջան կ'ընէ Խնուսի ղլխաւոր գիւղերը, կու գայ Հարամիկ գիւղը, ուր կը բնակէր իր գինակից ընկերը՝ Տիգրան Մուրատեան: Գիշեր մը, ժողով կը գումարէ, գիւղին հայկական թաղին ծայրամասը, եւ յարմարագոյն ժողովատեղին կ'ընտրեն Մնացի մարտիր: Այդ գիշերուան ժողովին՝ հարցաքննութեան կը կանչուին բրուտ Գալուն եւ գիւղին ոչս Մարգարը՝ հանրաձայնօթ Շէպօ անունով: Բրուտ Գալուն կը խուսափի ժողովի երթալէ, սակայն, ոչս Մարգար կը ներկայանայ ժողովին, եւ երբ

Կորիւն զայն կը հարցաքննէ իր մեծ տղուն՝ Միսակի (մարտական խումբի անդամ) հրացանին մասին, ոչս Մարգար կը պատասխանէ, թէ Միսակի գէնքը իր սեփական դրամով գնած է, եւ կուսակցութեան արտօնութեամբ, զիւզին աղային՝ Փարխատինի ծառայութեան մտած, այն պաղտնի հասկացողութեամբ, որ Միսակ, յայտնապէս գէնք կրելու առաւելութեամբ, մարտական խումբին պահանջին հասնելու դիւրութիւն կ'ունենայ: Ռէս Մարգար եւ Կորիւն վէճի կը բռնուին: Վէճի տաք պահուն, Կորիւն՝ ոչս Մարգարի արտայայտութիւններէն վիրաւորուած, կը քաշէ ատրճանակը եւ կը կրակէ ոչս Մարգարին վրայ: Ռէս Մարգար ձեռքէն կը վիրաւորուի: Հրազէնի պայ-



Կորիւն (Գումայ իսօ)

թումով ժողովը իրարանցումի կը մատնուի, ձէթի ճրագները կը մարին եւ ժողովականները խուճապահար դուրս կը խուժեն:

Վիրաւոր ոչս Մարգար, արիւնլուայ վիճակով, կ'ուզէ դուրս ելլել, բարձրադաղակ կանչելով իր տղոց անունները՝ «Միսա'կ, Հաւօ', Գարէ', Խաւէ'ք, զիս կը սպաննեն»: Տիգրան Մուրատեան կը սաստէ, որ ձայնը կըտորէ: Սակայն, ոչս Մարգար կը շարունակէ աղաղակել: Այդ պահուն, Տիգրան սուրով տեղն ու տեղը կը լռեցնէ ոչս Մարգարը, եւ մարմինը ժողովատեղին դրան առջեւ թողելով, Կորիւնին եւ մարտական խումբին հետ զիւզէն կը հեռանան: Ժողովականներէն՝ Վահան վարժապետ Մելիքեան եւ Կարապետի Պետոն՝ Քեռին, կապերտի մը մէջ փաթթելով մարմինը, կը փոխադրեն զիւզին մեծ առուին մօտիկ՝ գարի ցանուած կանաչ արտին մէջ, եւ վրան կանաչութիւնով ծածկելով հոն կը թողուն:

Դէպքէն երկու օր ետք, զիւզին երեխաները, ճանապարհին վրայ, խաղի պահուն, անշունչ մարմինը կը նկատեն դարբի արտին մէջ, երբ շուները արդէն սկսած էին նեխած դիակը յօշոտել:

Դէպքէն օրը, բազմաթիւ ձերբակալութիւններ եղան: Ռէս Մարգարի քոյրը՝ Մըլրոն, որ մեկի դրացի էր, սպանութեան օրը, առաւօտուն կանուխ կեցած մեր տան պատուհանին առջեւ, բարձրադաղակ կ'ըսէր. «Վարժապետ, դու խապար ունիս քէ ո՛վ սպաննեց Մարգարը»: Այս ամբաստանութեան հետեւանքով հայրս ձերբակալեցին, սակայն, Խնուս բերդ քաղաքը տարուելէն ետք ազատ արձակուեցաւ: Ձերբակալուածներէն ոմանք, կարճ բանտարկութենէ ետք ազատ արձակուեցան, իսկ ոմանք ալ տարուեցան Կարնոյ Կեղրոնական բանտը, ուր մնացին, մինչեւ 1908-ը, երբ ընդհանուր ներման արժանանալով ազատ արձակուեցան:

Ռէս Մարգարի սպանութիւնը կը վերադէպն դաւաճանութենէն աւելի՝ իր եւ Տիգրան Մուրատեանին միջեւ եղած թշնամանքին արդիւնքը:

Ռէս Մարգար, բնիկ Մշոյ Խորեք զիւզէն զաղթած եկած էր եւ հաստատուած Հարամիկ զիւզը իր եղբայրներուն հետ, որուն համար ալ, ծանօթ էր որպէս Խորեքու Մարգար անունով:

Կորիւն այդ տարի աշնան Մուշէն եկաւ Խնուս եւ Տիգրան Մուրատեանի հետ անցան Կովկաս:

**Հ Ր Ա Յ Ր  
Խ Ն Ո Ւ Ս Ի Մ Է Ջ**

Հրայր-Դժոխք, ծածկանունն էր Արմենակ Ղազարեանի, Մշոյ Խորաղաճ զիւզէն: Հայ յեղափոխութեան սկզբնական շրջանին, Ս. Դ. Հնչակեան կուսակցութեան փարելով, կը գործէ Տարօնի շրջանին մէջ՝ Մուշ, Մասուն, Խնուս, Վարդօ եւ Պուլանուխ:

1894-ին, Կովկաս գտնուած միջոցին կը կապուի Դաշնակցութեան, հոն գտնելով իրական գործի ասպարէզը: Երջապտոյտ մը ընելով Ռուսաստան, յետոյ Բաթում եւ Խարս, ընտրեալ կորիճներէ կը կազմակերպէ մարտական խումբեր: Մարտական խումբ մը, Սերոբի (Աղբիւր Սերոբ) խմբապետութեամբ կ'անցնի Խնուս, ուր զինատար եւ մարտական խումբերու՝ զէպի Տարօն անցնելու դիւրութիւններ եւ ապաստանարան ստեղծուած էին Հրայրի աշխատանքներով: Յաջորդաբար Կովկասէն երկիր կ'անցնի Թուման Թումանեանի (Թորոպի) ձիւտը խումբը Խնուսի վրայով: Հրայր՝ Կովկասէն երկիր անցնելու ճամբուն վրայ, կը ձերբակալուի Բասենի Քէօփրի Քէօյ զիւզին մէջ, Արամ Արամեանի հետ: Հրայր կը տարուի Պիթլիսի բանտը եւ կը դատապարտուի 101 տարուան բանտարկութեան: Կ'ազատի բանտէն 1896-ի ընդհանուր ներումէն օգտուելով:

Խնուսը լուսազոյն կերպով կազմակերպելու համար, Հրայր խնուսցի կուսակցական գործիչներուն կը միացնէ, իր շատ մտերիմ գործակից՝ Մշոյ Աւրան զիւզացի Հայկ Վարդանեանը, որ կը մնայ Խնուս 1901—1904: Հրայր

1904-ին դարձեալ Խնուս կու գայ, դարձեալ մօտէն հետեւելու կազմակերպչական գործերուն, համետ գիւղացիի սովորական պարզ տարազով, գիւղէ գիւղ շրջապայտով: Խնուսցի Փէտայիներու ընկերակցութեամբ կը վերագանայ Սասուն: Եւ ա՛հա, տեղի կ'ունենայ Սասնոյ ապստամբութիւնը: 1904 թուականին, Ապրիլ ամսուն, Սասնոյ՝ Շէնիկ-Սէմալի կռիւներուն, ահարկ թուրքին ճակատադրական զնդակը վերջ կը դնէր Հրայրի կեանքին, սուղի մասնելով ամբողջ հայութիւնը, Տարօնի աշխարհը եւ խնուսցին, որ սորվեցուց իր գաւակներուն երգել Հրայրի երգը, անոր յիշատակը վառ պահելու համար:

Գերեզմանիս քող արձանին վրայ,  
Գրեն յաղթութեան քէ կոթող է սա,  
Թող տեսնէ Հայաստան. քող կարդան հայ ֆաջեր,  
Տեսնեն իրեանց ընկեր  
Նահատակ է պառկեր,  
Մոցն Հայաստանի:

Անձնուէր եւ ֆաջ Ղազարեանի պէս,  
Ցուցնեն ֆաջութիւն ֆաջ Արմէնի պէս,  
Գալարին աղիքներ. քափին զաղջ արցունքներ,  
Տեսնեն իրեանց ընկեր,  
Նահատակ է պառկեր,  
Մոցն Հայաստանի:

Յուսով եմ կնիւած աչացս վերջին ֆուն,  
Տեսնէ Հայաստան իւր ազատութիւն,  
Իմ գերեզմանիս ֆով քող կայնին ու ձայնեն,  
Ահա ազատութիւն,  
Եւ ահա փրկութիւն,  
Քաղցր Հայաստանին:

Հանգչին ոսկորներ մէջ իմ տապանին,  
Տեսնեն փրկութիւն մայր Հայաստանին:  
Այն ատեն քող կնիւն իմ գերեզմանիս վէմ,  
Ազատ դրօշակներով,  
Հայու զինուորներով,  
Ֆէտայիններով:

### ԳԵՈՐԳ ՉԱՌԻՇ ԽՆՈՒՍԻ ՄԷՋ

Ռուբէն իր յուշերուն մէջ խօսելով Գեորգ Չաուշի մասին, կը գրէ. «Մենք երկար ժամանակ է Վեր կտրուած էինք Կովկասէն, այն պատճառով որ Խնուս գաւառը, Կորիւնի հեռանալէն ետք, ֆայֆայուեր էր կազմակերպչական տեսակէտէ: Խնուսը կազմակերպել կարեւոր էր նաեւ անոր համար, որ այնտեղ ամփոփուած էր 25—30,000 հայութիւն, որ իբր օղակ կը հանդիսանար էրզրումի, Կովկասի ու Մշոյ աշխարհին միջեւ: Երբորդ պատճառ մըն ալ կար, որն էր՝ էրզրումի քրֆութիւնը ու Խնուսի ֆրդութիւնը տրամադրութիւններ ցոյց կու տային յեղափոխական գործունէութեան, ուստի անհրաժեշտ էր կազմակերպուիլ ու յեմարան ունենալ, որպէսզի կարելի ըլլար կապուիլ այդ հաւանական շարժման հետ: Չորրորդ պատճառն այն էր, որ Սասնոյ ու Մուշի չֆաւորները պէտք էր տեղափոխել Խնուսի դաշտին մէջ գալիք ձմեռուան ընթացքին:



Գեորգ Չաուշ



«Մենք հակառակ էինք ժողովուրդին ցրուելուն եւ կ'ուզէինք, որ եքէ պիտի հեռանայ իր օճախէն, գէթ տեղաւորուի մօտիկ գաւառներուն մէջ, ինչպէս Բուլանուխ, Սլիվան, Բշերիկ ու Խնուս, ուր հացը շատ առատ էր: Գէորգին երբայուն նպատակներէն մին ալ Խնուսի մէջ տեղաւորել էր քանի մը հազար կարօտեալ եւ գտնել սերմնացու եւ ուտելիք չփառններու համար:

«Գէորգ նամբայ կ'իյնայ դէպի Խնուս գաւառը, ուր երկար ժամանակ աշխատած էին Տուրպախ, Հրայր եւ ուրիշներ(\*): Իր շուրջ հաւաքած էր 25-ի մօտ ձիւտ, որոնցմէ 5-ը քրդեր էին, բոլորն ալ լաւ զինուած: Աշտի-շատէն մէկ գիշերուան մէջ ինքզինքնին կը նետեն Խնուսի Արօս գիւղը:

«Գէորգ Չաուշ առասպելական Քէօն Օղլին էր. անոր երեսու մը Խնուսի շրջանին մէջ յառաջ կը բերէ թէ՛ երկիրը եւ թէ՛ ուրախութիւն, թէ՛ վախ եւ թէ՛ հետաքրքրութիւն: Գէորգ կ'օգտուի իր հմայքէն ու արագ կերպով կը ձեռնարկէ իր առաջադրած խնդիրներուն լուծման: Շուտով կը յաջողի կանոնաւորել սուրհանդակային գործը Խնուսի եւ ռուսական Բասենի միջեւ, ու քանի մը սուրհանդակային խումբեր երթեւեկ կ'ընեն Ղարսի եւ Խնուսի միջեւ: Այս սուրհանդակներէն գլխաւորներն են խնուսցի Օհան, խալչաուշցի Մարտիրոս, Միսակ, Բիւրդ Աօօ, Ֆիլիք եւ ուրիշներ (\*\*):

«Նոյնպէս կապ կը հաստատէ Էրզրումի հետ, ուրկէ նամակներ ու իրեր կը ստանայինք «Խաչի» միջոցաւ (Աստուածատուր Խաչատրեան — պատմաբան, Սանասարեանի ուսուցիչներէն): Կովկասէն կուսակցութիւնը կը դրկէր ո՛չ միայն թերթեր, գրքեր, ռազմամթերք, այլ նաեւ մարդիկ, գործի համար: Այդ ժամանակ էր որ Խնուս Գէորգի մօտ կը հասնին Փիլոսը (Մարալը) եւ Դերենիկը, որոնք տարիի մը չափ գործեցին Մուշի և Էրզրումի շրջաններուն մէջ:

«Գէորգ կը կազմակերպէ նաեւ Խնուսի (Բիւրակն) կոմիտէութիւնը Արօսի Հրաչին նախագահութեամբ: Նոյնպէս հարուստ Խնուսի գիւղերուն մէջ տեղ կը պատրաստէ Դուրանի ու Բարձրաւանդակի ազգատներուն համար, որոնք հարիւրներով գացին Խնուս գաւառը եւ ձմեռը պատսպարուեցան: Գէորգի ամենամեծ օգտակարութիւնը սակայն հայ-քրդական յարաբերութիւններու սերտացման մասին կատարած աշխատանքն էր» (Հայ յեղափոխականի մը յիշատակները, Դ. հատոր, էջ 40):

(\*) Յարանցի Հայկ Տէր վարդանեան, կեղծ անունով Ղարսի վարդ, որ Հրայրի կարգադրութեամբ 4 տարի կազմակերպական աշխատանք տարած է, Սամոյ ապստամբութեան համար պատրաստելու: Կորիւն, Հրաչեայ՝ արօսցի, Ա. Ջնդի, Փիլոս, Դերենիկ, Գէորգ: Հնչակեաններէն՝ Գարեգին Զքնեան, Յակոբ Մուրատեան, Օհան Տէր Զաքարեան (Ե. Յ. Մ.):

(\*\*) Յիշեմք այդ ուրիշներէն հետեւեալները — վալտմեր Քաղկու Սիմօ Օհան, Իկիթի Պօղոս, Մարկոսի Միսակ: Խալչաուշցի Շուշ Մոսոն, Զուլէ Մոսոն, Անտրոն, Բադէն: Եսիհա գիւղէն՝ Շէկ Դաւիթ, Սաֆոն, խոզուցի Խուշուտ, Գոգօ Աւագ, Կատանի Աւագ, արօսցի Մանուկ, Արթուր սայուցի Սարգիս, Կնեագ, Երանոս. գարաբէտփրիցի Մելիք, Շապուհ, եւ երեք Բիւրսեր՝ Համզոն, Աւոն եւ Ֆըլոն (Ե. Յ. Մ.):

\* \* \*

Հետեւեալ յատկանշական դէպքերը կապուած են Գէորգ Չաուշի՝ Պընուս գտնուած ժամանակի զործունէութեան հետ:

Գէորգ Չաուշ երբ Պնուս կու գայ, իր առաջին հանդիպումները կ'ըլլան Արօս գիւղը, ու երբ կ'անցնի Քաղքիկ գիւղը, իրեն հետ արօսցի Հրաչեան, Պարաշոպանայ Միսօ Սահակ, Քաղքիկ Արրոն, Իկիթի Պօղոս եւ Փուրթօ Ղազար, կ'որոշեն Քաղքիկ կեդրոն ունենալ, ուր, որեւէ դէպքի ատեն, դիւրաւ կրնային հասնիլ շրջակայ գիւղերէն մարտական խումբերը:

Գէորգ Քաղքիկ գիւղէն զինեալ խումբով կ'ուզէ երթալ Գուլանդուկ. երբ խումբը կը հասնի գիւղին մերձակայքը, նոյն պահուն՝ դիչեր ատեն, գիւղէն դուրս կու գայ խրիսարտարը՝ Թրքական զօրքը, որ յեղափոխականները հալածելու համար գիշերները կը շրջի: Խրիսարտարի հրամանատարը երբ կը նկատէ դէմէն եկողները, բարձրաձայն կը հարցնէ՝ դուք ո՞վ էք: Գէորգ ինք ալ բարձրաձայն նոյն հարցումը կ'ընէ: Պատասխանը կ'ըլլայ՝ Ես խրիսարտարի պիմալաչին եմ, Գէորգն ալ կը պատասխանէ՝ Ես Գէորգ Չաուշն եմ: Կրնա՞մ հետս երկու զինուոր առած, գալ հետդ խօսելու: Պինպաչին կը համաձայնի: Գէորգ կը մօտենայ իր երկու զինուորներուն հետ պինպաչիին, եւ իրարու հետ խօսելով առանց միջադէպի, նոյնիսկ իրարու նուէրներ տալով, կը խոստանան հանդիպումը պաշտնի պահել, եւ իրարմէ կը բաժնուին:

Ուրիշ անգամ մըն ալ, Գէորգ կ'երթայ Պնուս բերդ, կ'իջեանի Կուլոյի Ղազարի տունը, ձորու վերին թաղ, կամ ինչպէս սովոր էին ըսել ձըրք Մախլէ: Գէորգ տեղեկացած էր, որ պետական հարկահաւաք (քահսիտար) Յայիմ Էֆէնտին, տուրքերու դանձումի ժամանակ, հայոց չափազանց նեղութիւններ կը պատճառէ: Գէորգ Տէրտրոջ Տիգրանի հետ, դիչեր ատեն, կ'երթան Յայիմ Էֆէն տունը, դուռը կը պարնեն: Էֆէնտին հայ ծառան՝ Զըքէի Յարէն, զրան ետեւէն կը հարցնէ՝ ո՞վ էք: Տիգրանը մեղմ ձայնով կ'ըսէ Յարէին, Եկողը Գէորգ Չաուշն է: Կիսարաց դոնէն, Գէորգն ալ կը հարցնէ՝ Էֆէնտին տո՞ւնն է, կ'ուզեմ զինք տեսնել: Ծառան կը պատասխանէ՝ այո՛, տունն է, բայց կը քնանայ: Գէորգ ծառային կ'ըսէ՝ գնա՛ զինք արթընցուր եւ ըսէ, որ Գէորգ Չաուշը Մուշէն եկած է, յատկապէս կ'ուզէ զինք տեսնել: Ծառան երբ Յայիմ Էֆէն լուր կու տայ, թէ Գէորգ Չաուշն է, Էֆէն կ'այլալլի, եւ կ'ըսէ՝ հարցուր թէ ի՞նչ կ'ուզէ: Ծառան կը յայտնէ Էֆէնին, թէ Գէորգ Չաուշ 400 ոսկի կ'ուզէ որպէս տուգանք, ժողովուրդէն տուրքերը հաւաքելու ատեն, անոնց տուած չարչարանքներուն եւ առած կաշառքներուն համար: Դրամը պէտք է տանի եւ այսինչ տեղը դնէ, — տեղին անունը տալով — ու եթէ այդ տեղը չդնէ, թող լաւ գիտնայ, որ օր մը կու գամ եւ զինք կը սպաննեմ: Յայիմ Էֆէն խոստումը կը կատարէ առանց գաղտնիքը երեւան հանելու:

Շուշէ Մոսոյի սպանութենէն ետք, երբ Գէորգ Խնուս կու գայ, ժողովի կը կանչէ Նորեւածի վանքին քարայրին մէջ մարտական խումբերու խումբապետները: Քարայրին մուտքին պահակներ կը դրուին: Պատահական որսորդներ կ'անցնին Նորեւածի ձորէն եւ կը նկատեն զինեալ պահակները: Թուրք որսորդները կ'երթան զիւրը՝ Սայլու, եւ Դարվէշ աղային լուր կու տան: Աղան կը սաստէ որ սեւէ մէկուն բան մը չըսեն, թէ ի'նք պիտի երթայ եւ կառավարութեան պիտի տեղեկացնէ, սակայն, Դարվէշ աղան լուրը զաղտնի կը պահէ: Գէորգ Չաուշ եւ ժողովականները պատրաստ կը սպասեն կռիւի, սակայն, մինչեւ մութը կռիւելը, ոչ ոք կը յայտնուի: Իրենք ալ քարայրը կը թողուն եւ կը մեկնին առանց միջադէպի:

Ասիկա կ'ըլլայ Գէորգի վերջին անգամ Խնուս գալը, եւ Մուշ վերադառնալով, կը պատահի Սուլուի կռիւը եւ այդ կռիւին Գէորգ կը սպաննուի հերոսական մահով, սուրբ մատնելով Տարօնի աշխարհը:



## ԳԼՈՒԽ ԺԱ.

### ԽՆՈՒՍԻ

# ԴԻՄԱԴՐՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՉԱՐԴԸ

Խնուսի տարագրութիւնը եւ Չարդը տեղի ունեցան թուրք պետական պաշտօնեաներու զիտակցութեամբ եւ հրահանգով: (1915 Ապրիլ ամսուն, Պոլսոյ թուրք կառավարութենէն եկած էր հետեւեալ հրահանգը. «Հայերը Օսմանեան կառավարութեան եւ կայսրութեան ապահովութեան ծայրայեղ վտանգ կը սպառնան: Աղղային պաշտպանութիւնը կը պահանջէ հրամայականորէն կանխազուշական խստութիւն՝ հայերը անվնաս դարձնելու համար»: Ահա այս հրահանգով էր, որ հայկական մեծ եղեռնին աղղանշանը կը տրուէր):

Խնուսի տարագրութեան եւ Չարդի ղեկավարներն էին՝ գայմազամ Թահիր պէյը, պիթլիսցի Ալի աղան, Հաճի Իսաֆ էֆէնտին, Նուրատին պէյը, Մուհամետին պէյը, Մահմուտ աղայի տղան՝ Շիւքրին, Քրդայ գումանտան Հաճի Համտի պէյը, քեաթիպ Միրզան, Խնուսի խատին, Խուլհասարայ Շէյխ Սայիտ էֆէնտին, Խրթայ Շէյխ Մուրատի տղան՝ Նուրին:

Չարդարարներն էին՝ քիւրտ համախիչներու հեծելակազորքը, չէթէները եւ քիւրտ խուժանը: Անոնց պակաս թողուցածները կը լրացնէին ժանտարմաները:

Ժանտարմայի յիննապետ Օսման չաուշը ամենավայրագ Չարդարարը եղաւ:

Չարդին մասնակից եւ մեղսակից քիւրտ պէյերն էին՝ Ղիբրանցի աշիրաթէն՝ Ֆէյլի պէյի տղաքն ու թոռները, Սէլիմ պէյ, Աղմային, Սատի աղան եւ իր զաւակները: Պլրքցիներէն՝ աւաղակապետ Շահօ-Պալլոյի տղաքը՝ Թաժտոն, Համզոն, Օզմանի Ալին ու Նատոն: Զրուքցի աշիրաթէն՝ Խուլիխան պէյն ու իր տղաքը՝ Ուսոն ու Մօսոն: Հասանանցիներէն՝ Գոպալայ Ուսուֆ աղայի տղան՝ Ֆէյլին եւ ուրիշներ:

1914-ի Յուլիսին, երբ տաճիկները «սէֆէր պէրլիկ» հռչակեցին ու ընդհանուր զօրահաւաքի սկսան, Ես Կարին ուսանող էի:

Զինուորական տարիքի մէջ բլլալով՝ Ես առաջին իսկ զօրակոչին զինուոր արձանադրուեցայ եւ մտայ թրքական բանակին մէջ՝ ծառայելու իբրեւ պարտաճանաչ քաղաքացի օսմանեան պետութեան: Իմ բանակատեղին հանքային ջուրերով հարուստ Իլիճա գիւղն էր: Ամսուան մը մարզանք ստացած

էի, երբ օր մըն ալ մեր գումարտակի հրամանատար Ահմէտ Էֆէնտին զիս մեր տասնեակին տասնապետ նշանակեց:

Այս առիթէն օգտուելով՝ արտօնութիւն խնդրեցի ծնողացս տեսութեան համար Խնուս երթալու: Խնդրանքս ընդունուեցաւ: Արտօնադրով Խնուս մեկնեցայ: Հոս ալ զօրակոչը ընդհանուր երեւոյթ էր: Զինուորական տարիք ունեցող ամէն մարդ կ'արձանագրէին, ոմանք բանակ կը զրկէին, ոմանց ալ կ'արտօնէին վերադառնալ դաշտային աշխատանքներուն, մինչեւ հունձքը հաւաքելը: Զինուորական ծառայութենէն սկսած կը թողուէին զինուորական փրկագին (50 հնչուն ոսկի) վճարողները:



Քրտական համիտիէ հեծելազօրք (Կիւմկիւմի շրջան)

**ԶՕՐԱՀԱՒԱՔԸ**

Զօրահանութեան ենթարկուեցան նաև Խնուսի քիւրտ աշիրէթները՝ համիտիէ հեծեալ եւ հետեակ զօրագունդերու մէջ: Սակաւաթիւ հայեր եւս, որոնք քրտերէն կը խօսէին, առնուեցան այդ գունդերուն մէջ:

Մեր գիւղէն զափթիա Սարգիսի տղան՝ Գասպարը առնուեցաւ համիտիէ հեծելազօրքերու մէջ, եւ դասակի մը հրամանատար նշանակուեցաւ: Անշուշտ քիւրտերը նկատի ունէին Գասպարի պատկառելի անհատականութիւնը, յեղափոխական անցեալը եւ անվախ մարտիկի հանգամանքը:

Համիտիէները կեդրոնացուեցան Խնուս բերդ, Գարաշոպան, Գովանդուկ, Հարամիկ եւ Զեւիթմէ հայկական գիւղաւաններուն մէջ, որոնք կառավարութեան կողմէ պարտաւորուեցան՝ իրենց մօտակայ հայ գիւղերու մասնակցութեամբ՝ պարենաւորել համիտիէները: Բարերախտարար կարճ ժա-

մանակէ մը ետք՝ ասոնք փոխադրուեցան Կարին՝ Կարին-Բասէն-Ալաշկերտ ռազմաճակատը:

Միայն Մուսա պէյի բանակը կը հաշուէր 20,000 հեծեալ եւ հետեակ: Յարաշարժ համիտիէ զօրագունդերուն տուած հարստահարութիւններէն զատ, կար նաև «Թէքէլիֆի հարպիէ»՝ պատերազմի հարկադրանքէն պետական պարտադիր փոխառութիւն: Այս անուան տակ հայ ժողովուրդը պարտաւոր էր իրմէ պահանջուած ամէն ինչ պետութեան տալ՝ եղ, կով, ոչխար, էջ, գոմէշ, ցորեն, զարի, խոտ, յարդ, գետնահինձոր, կաղամբ, գուլպայ, թաթնոց, անկողին, սփռոց, անկամ ձէթ ու ձէթի ճրագ: Ասոնց փոխարէն հարկահաւաք պաշտօնեան հասարակ թուղթի կտոր մը կու տար:

Գեկտեմբեր ամսուն կազմուեցան «Օլամճի թապուր» — բեռնակիր գունդերը: Բռնութեամբ այս բեռնակիր-գունդերուն մէջ առնուեցան նաև հայ կիներ, որոնք շալակով բեռ կը կրէին մինչեւ Կարին, Բասէն եւ Ալաշկերտ: Անոնցմէ շատեր ձիւնին, բուքին ու ցուրտին, ոմանք ալ անօթութեան եւ համաճարակի զոհ դացին:

Արձակուրդս վերջանալուն, Իսոյի Խալլէի ընկերակցութեամբ, մեկնեցայ Կարին եւ անմիջապէս գացի Իլիճա՝ իմ բանակատեղիս:

Ռուս-թրքական պատերազմը սկսած էր: Մեզ Իլիճայէն փոխադրեցին Մուսուրիայ գիւղը: Այստեղ հայ զինուորները զինաթափ ըրին եւ մեզ զլրկեցին «Տէվէ Պոյունի» խրամատներու ճանապահները նորոգելու աշխատանքին:

**ՓԱՆՍՏԱԿԱՆ՝ ԽՆՈՒՍԻ ԵՐԶԱՆԻՆ ՄԷՋ**

Այս նոր գոյավիճակին չկրնալով հանդուրժել՝ դարձայ զինուորական փախստական եւ անցայ Խնուս, ուր մնացի թապնուած եւ յարատեւ հետապնդումի ենթակայ: Զիս ձերբակալելու համար եկած ժանտարման մեր տունը իջեւանած էր. կերաւ, խմեց եւ պղտիկ նուէր մըն ալ գրպանը դնելով, Բերդ վերադարձաւ, տեղեկացնելու որ չէր կրցած զիս գտնել եւ ձերբակալել:

Այս վիճակը շարունակուեցաւ մինչեւ 1915-ի Յունուար ամիսը: Երբ հետապնդումը եւ կաշառքի մշտնջենական պահանջը այլևս անհանդուրժելի դարձան, հայրիկս թելադրեց որ Խալլէի հետ մեկնիմ Գոպալ, անկէ ալ փորձեմ փախիլ ռուսերու սահմանը, որ արդէն Գոպալի մօտերը հասած էր: Խալլէն, իբրեւ ժանտարմա, ես ալ «Թեքէկրաֆ-մէմուրի» շինծու պաշտօնագիրով մը՝ երկուքս ալ զինուած, դացինք մինչեւ Գոպալ: Հոս, սակայն, իմ չար բախտէս ձերբակալուեցայ գիւղը, բանակատեղիի Փըրդայ գումանտանի Հաճի Համտի պէյի զինուորներէն:

Եթէ չըլլային մօրեղբայրներուս եւ քեռայրիս միջամտութիւնը եւ Խալլէի ալ ճարպիկութիւնը, անպատճառ կալանաւոր Խնուս բերդ պիտի տարուէի եւ խիստ պատիժի պիտի ենթարկուէի: Անոնց օգնութեամբ ազատեցայ:

Սակայն, անհնար եղաւ ոռոսական սահմանը անցնիլ, եւ դարձեալ վերադարձայ գիւղս :

1914-ի աշնան, Խնուսի հայոց վիճակը աւելի վատթարացաւ : Զխուրայ Մուսա պէյը իր 20,000 հրոսակներով Պուլանուսի վրայով Խնուս եկաւ՝ Բասենի ճակատը երթալու : Իր ճամբուն վրայ ինկած Խնուսի հայկական գիւղերը՝ սարսափի ու աւարի ենթարկեց եւ 700 հեծեալներով շարթ մը մեր գիւղը՝ Հարամիկ կեցաւ : Գիւղին ոչ ոք՝ Տէրտրոջ Արշակը գիւղէն կը բացակայէր : Մուսա պէյ անոր եզրայրը՝ Գարեղինը քովը կանչեց եւ սարսափելի գանակոծման ենթարկել տուաւ : Գարեղինը ոչխարի տաք մորթի մէջ փաթթեցին, եւ երկու շարթ հիւանդ պառկեցաւ :

Խասրմ պէյը 10 ձիւորներով մեր տունը իջեւանած էր : Առանց քիւրտի մը ընկերակցութեան՝ ունէ հայ տունէ դուրս չէր կրնար ելլել եւ տեղ մը երթալ :

Օր մը Յունանի Յեսոյի կինը՝ Սանամ, կ'ուզէր իր հօր՝ Խոփերու Մարգարի (Շէպոյի) տունը երթալ : Ծամբան, երբ կը հասնի մեր Այվանի դրան առջեւ, Խասրմ պէյի ղուլամները կը բռնեն զինք : Կինը կը խնդրէ, որ ազատ թողուն, որ հօրը տունը երթայ : Քիւրտերը, սակայն, կը փորձեն բռնաբարել զայն : Յուսահատ կինը յանկարծ կը խոյանայ առաջին յարձակող քիւրտին վրայ, ձեռքէն հրացանը կը խլէ եւ կը զարնէ դրան առջեւի քարին եւ կը կոտրէ . դարձեալ կը յարձակի երկրորդ քիւրտի մը վրայ եւ անոր հրացանն ալ կը խլէ ու նոյնպէս կը զարնէ քարին ու կը կոտրէ : Լուրը հասաւ Խասրմ պէյին : Ան կանչեց իր ղուլամները, կինը բերել տուաւ ու հարցուց եղելութիւնը : Երբ լսեց պատմութիւնը, կոտրած հրացաններուն տէր երկու քիւրտերը ձեծի ենթարկեց իսկ Յեսոյին կինը քիւրտի մը ընկերակցութեամբ իր տունը ղրկեց :

Այդ օրերուն, անստուգութեան մատնուած հայ ժողովուրդի ծանր ու ճնշիչ վիճակի մասին մեր առաջնորդ Արպար վրդ. Եօթնեղբայրեան Կ. Պոլիս Հայոց Ազգային Պատրիարքարանին հետեւեալ պաշտօնական փաստաթուղթը ղրկած էր .

«Խնուս, 10 Հոկտ. (Հ. Տ.) 1914

«Կրակի գծին մերձաւոր հայ ազգաբնակչութիւնը պէտք ունի գերմարդկային համբերութեան այս անտանելի տառապանքին... : Արդարեւ, Սասնոյ մասնաւոր դէպքը, հոս ալ արձագանգ գտնելով, տարբերու համբերաշխութիւնը խանգարելու այլազան տարածայնութեանց տեղի տուած է : Այսօր որոշուած է 50 քիւրտ հեծեալագործ զրկել վիճակիս Գոպալ գիւղը՝ խուզարկութեան համար : Թէեւ առ ի նախագգուշութիւն գիշերանց մարդ զրկած եմ, սակայն կը զգամ թէ առանց իրական փաստի, ի՞նչ ահ ու սարսափ պիտի մատնուին խեղճ գիւղացիները : Տնտեսապէս քայքայուած վիճակի մասին աւելորդ կը համարեմ գրել, ըստ որում ընդհանրապէս ընդարձակօրէն ամէն փոստի գրած եմ, ու կը գրեմ Կարնոյ Առաջնորդարան : Վերջապէս կ'ապրինք

ահեղ տագնապալի օրեր եւ շուարած եմք, թէ ի՛նչպէս եւ ի՛նչով մխիթարենք անստուգութեան մէջ տուայտող հայ ժողովուրդը : Տէր տեսցէ եւ այց արասցէ» :

Մուսա պէյի համիտիկները մեկնելէն քանի մը շարթ ետք, Պաղտատի արարական զօրաբանակը եկաւ Խնուսի վրայով Տութաղ՝ ոսպմածակատ երթալու : Այս բանակին մէջ կային երկու հայ բժիշկներ՝ հալէպցի բժիշկ Արշակը եւ խարբերոցի (մալաթիացի) բժիշկ Խաչատուր Պօնափարթեանը :

Բժիշկ Պօնափարթեանը, մեր գիւղէն անցած ատեն, իջեւանեցաւ խարբերոցի Յակոբ Մուրատեանի տունը : Բժիշկ Արշակ, մեռաւ բժաւոր թիֆոյէն՝ Խնուս բերդի զինուորական հիւանդանոցին մէջ : Բժիշկ Խաչատուրը՝ Բասենի ճակատէն կրցաւ փախիլ եւ անցնիլ ոռոսական սահմանը :

Արար զօրաբանակի զինուորները նոր ժամանած ատեն, լաւ վերաբերում ունէին հայոց հանդէպ : Սակայն, երբ պարտութեան մատնուեցան Գըլըճկէտուիկի ճակատամարտերուն, իրենց մնացորդները, նահանջելով ձմեռուան ցուրտին, լեցուեցան Խնուսի հայկական գիւղերը եւ սկսան սոսկալի հալածանքներ յարուցանել հայոց հանդէպ :

Ալաշկերտի եւ Մալաղկերտի քիւրտերն ալ, որոնք ոռոսական բանակի յառաջխաղացումէն կը փախէին, Խնուս լեցուեցան եւ դարձան պատուհաս Խնուսի հայութեան գլխուն :

Ռուս-թրքական պատերազմի նախօրեակին, Խնուսի քիւրտ աշիրաթներէն ոմանց տարեց եւ փորձառու պէյերը, որոնք հայոց հանդէպ բարեացակամ վերաբերմունք ունէին, յարարերութեան մտան Խնուսի հայ ակառնաւոր անձնաւորութեանց հետ եւ փորձեցին բարուք յարարերութիւններ մշակել հետեւեալ հասկացողութեամբ . «Մինչեւ ոռոսական բանակին զալը, հայերը պաշտպանուին քիւրտերու կողմէն, իսկ ոռուսերու զալէն ետք, փոխադարձաբար քիւրտերը կը պաշտպանուին հայերուն կողմէն» :

Ընդհանուր հոգեբանութիւնը այն էր, թէ ոռուս շուտով պիտի գրաւէր Խնուսը : Այս հոգեբանութեան հետեւանքով՝ հայերը որեւէ լուրջ պատրաստութիւն չտեսան ապստամբութեան կամ ինքնապաշտպանութեան համար : Մասնակի պատրաստութիւններ կային միայն քանի մը գլխաւոր գիւղաւաններու մէջ, այն ալ Մարտ եւ Ապրիլ ամիսներու ընթացքին միայն, երբ արդէն ոռոսական բանակի յառաջխաղացքը կանդ էր առած եւ բարի յարաբերութիւն մշակելու տրամադիր եւ բարեկամ կարծուած քիւրտերը մոռցած էին իրենց խոստումը եւ սկսած էին նորանոր շահատակութեանց, հարկաւ թուրք կառավարութեան հրահանգով :

ՂԵԿԱՎԱՐՆԵՐՈՒ  
ԳԼԽԱՏՈՒՄԸ

Տիրող անստոյգ եւ օր ըստ օրէ աւելի անհանդուրժելի դարձող կացութեան դարձան մը գտնելու զիտաւորութեամբ, գիւղերէն ներկայացուցիչներ «մալաթիաներով» զիմեցին Խնուս բերդի իշխանութեան : Այս յարմար առիթէն օգտուելով՝ իշխանութիւնը ձերբակալեց գիւղական ներկա-

յացուցիչները եւ Բերդի ականաւոր հայերը՝ յանկարծակիի բերելով դանոնք: 150 հոգիէ բաղկացեալ այս բանտարկեալներէն հետեւեալ աշքառու անձնաւորութիւնները խիստ հակողութեան տակ անուեցան — Խալօ Մելքոնի տղան՝ Վահանը, Յովհաննէս Շահմուրասեանը, Իփան Սիմոնեանը, առաջնորդարանի քարտուղար՝ Կարապետ Մայրասեանը, բոլորն ալ դաշնակցականներ էին: դարձեալ, Մկո-Յովսի Սուքիասը եւ Արշակը, Քրմոյեան Արամը, Փալանճեան Գէորդը, Խաղիսազեան Աւետիս աղան եւ իր մեծ տղան՝ Արսէնը, արօսցի Տէր Ղեւոնդեան Հրաչեայ վարժապետը՝ դաշնակցական, էջմիածնայ Գէորդեան ձեմարանէն շրջանաւարտ եւ քիւրտերէն այրուբենի ու քերականութեան հեղինակը, Անթոյեան Մուշեղ աղան, Ալէքսան էֆէնտին եւ իր տղան՝ Կնեազը, հարամիկցի Մուրատեան Յակոբի տղան՝ Տիգրանը, նոյնպէս դաշնակցական, նաեւ հարամիկցի Մհերի Խուրչուտը, չեւիրմեցի Մանուկ աղայի տղան՝ Սահակը, բերդեցի Միքայէլեան Մեսրոպը, Մոկլոզեան Միսաքը, ձութէ Սարգիսը եւ ուրիշներ:

150 հոգիներ այս խումբը, չորս օրուան բանտարկութենէ ետք, բազմաթիւ չէթէներու եւ ժանտարմաներու հակողութեամբ, շղթայակապ զըրկուեցաւ իրր թէ Կարին՝ հոն դատուելու համար: Սակայն, յետոյ հասկցուեցաւ, թէ առանց Կարին հանդիպելու, այդ խումբը քշուած էր Դերջան-Երզրնկայի միջեւ Սանսար Դարայի ձորը (Շողալարի ձոր) եւ հոն բոլորն ալ խողխողուած էին:

Սպանդի ստոյգ լուրը բերաւ հարամիկցի թուրք Իսո-Սալլէն, զոր Յակոբ Մուրատեան յատկապէս զրկած էր խումբին ետեւէն, որպէսպիսի փախցնէր իր տղան՝ Տիգրանը: Խալլէն, երբ վերադարձաւ, ցաւով բոթը տուաւ եւ իրեն տրուած փրկապիտի կանխավճարն ալ վերադարձուց Յակոբին:

**ՋԱՐԴԸ ԿԸ ՍԿՄԻ**

Վանի ապստամբութեան լուրը Ապրիլ ամսուն սկսաւ շրջան ընել: Խնուսի գալմազամ Թահիր պէյը, գունդ մը ժանտարմաներու զլուխն անցած, Խնուս բերդէն ելաւ՝ իրր թէ Վան երթալու եւ ապստամբ հայերուն դէմ կռուելու համար: Գալմազամը Հարամիկի գիւղէն անցնելէն ետք, գումարտակ մը կանոնաւոր զինուոր եւս եկաւ եւ անցաւ Հարամիկէն: Երբ կը հասնին Շապատին գիւղի զիմացի Պող Փուլ ըսուած տեղը, հոն կը սկսին զիրքեր փորել՝ կռուելու համար, սրովհետեւ լուր ստացած էին, թէ ոռուսական բանակը կը յառաջանայ: Սակայն, մինչեւ մութը պատելը, երբ սրեւէ դէպք տեղի չունեցաւ, զինուորները վերադարձան Խնուս բերդ, իսկ գալմազամը մինչեւ Գարաչոպան գիւղաւանը պտոյտ մը ըրաւ եւ նոյնպէս վերադարձաւ Խնուս բերդ: Այս պտոյտէն ետքն էր սր սկսաւ ջարդը:

**ԳՈՒՂԱՆԴՈՒԿԻ ԿՈՒԻՒԸ**

1915 Մայիս 1.— Կովանտուկ գիւղաւանը կու գան համիտիէներ: Ասոնք իրրեւ հիւր կ'իջեանին հայոց տունները, եւ սակայն, յանկարծակիի բերելով, կը սկսին աւարի եւ ջարդի տալ գիւղը: Նոյն պահուն գիւղի մերձականերէն կը սկսի յայտնուիլ նաեւ քիւրտ խուժանը, որ կը միանայ համիտիէներու եւ նոյնպէս կը սկսի ալան-թալանի:

Հայ գիւղացիներէն զինուած խումբ մը, Դաշնակցական փորձառու հայդուկներու՝ Մհերի Դաւիթի, Մայրասեան Համազասպի ու Հնչակեան Աղեքսանդրի ղեկավարութեամբ, գիւղին մէջ զիրքեր կը բռնէ եւ օրհասական կռիւ կը մղէ համիտիէներու եւ քիւրտ խուժանին դէմ: Հայ քաջերու զնդակներու տարափէն համիտիէները եւ քիւրտ խուժանը կը փախչին գիւղէն: Թշնամիին նահանջի առիթէն օգտուելով՝ զինեալ փոքր խումբի պաշտպանութեամբ, անդէն ժողովուրդը կը փախչի Գարաչոպան գիւղաւանը, հոն նահիէ միւտիւրին պաշտպանութիւնը հայցելու:

Նահանջող թշնամին, նկատելով որ գիւղը կը պարպուի, կրկին ետ կը դառնայ եւ զօրաւոր յարձակողականով մը կը զբաւէ գիւղին մէջ մասը: Խումբը, սակայն կռիւը կը շարունակէ մինչեւ իրիկուն: Մութը կոխելուն, մերոնք կը թողուն գիւղը եւ կը բարձրանան մօտակայ Գող Պապա սարը, ուր հետզհետէ կը հաւաքուին զինեալ ու անդէն հայեր: Ու երբ կը սկսի անոնց թիւը ստուարանալ, կը ծրագրեն ամէն գնով փախչիլ ու անցնիլ ոռուսական դիժը:

Թշնամին գրաւելով գիւղը, կը շարունակէ ջարդն ու թալանը:

**ՍԱԼՈՒՈՐԻԻ ԿՈՒԻՒԸ**

1915 Մայիս 1.— Սալուորի գիւղին վրայ կը յարձակին Փրբզա գումանտան Համտի պէյի համիտիէներէն հեծելազունդ մը եւ շրջանի քիւրտ գիւղերէն եկող խուժանը: Գիւղացիներէն զինեալ խումբ մը կը դիմադրէ թշնամիին եւ հերոսաբար կռուելով, կ'ապահովէ անդէն ժողովուրդին փախուստի ճամբան: Փախչելով աղատուողները կ'ապաստանին Գարաչոպան, իսկ գիւղը կ'ենթարկուի թալանի եւ կոտորածի:

1915 Մայիս 2.— Խըրըմխայ գիւղը կ'ենթարկուի Համտի պէյի համիտիէներու յարձակման: Անդէն ժողովուրդը փախուստի կը դիմէ, մինչ գիւղացիներէն զինուած խումբ մը, կռուելով թշնամիին դէմ, կ'ապահովէ Գարաչոպան տանող ձորանցքի ճանապարհը, ուրկէ ժողովուրդը փախչելով կ'ապաստանի Գարաչոպան: Գիւղը մնացողները կ'ենթարկուին կոտորածի, իսկ զոյքերն ու ինչքերը՝ թալանի ու աւարի: Զինուած խումբը կը բարձրանայ Գող Պապա սարը, միանալով հոն հաւաքուած խումբին:

**ԳԱՐԱԶՈՊԱՆԻ  
ԿՈՒՒԻԼ**

1915 Մայիս 2.— Գարաչոպան գիւղաւանը նահիէ միւտիւրլիք էր: Միւտիւրը՝ Օսման Չաւուշի զլխաւորած դասակ մը ժանտարմաներով, նաեւ հեռադրատան պաշտօնեաներով եւ օրեր առաջ Գարաչոպան հրաւիրուած Մոռոյի, Սեւտինի եւ ասոնց չէթէներով կը պատրաստէ ջարդի եւ թալանի ծրագիրը: Երջակայ հայ գիւղերու դէպքերը պատրուակելով՝ միւտիւրը իր քով կը կանչէ Հազրոյի տղաքը՝ Իսրայէլը (նախապէս գիւղին միւտիւր եղած էր), Գասպարը, Կիրակոսը ու Չարարեան եղիշէն, եւ կ'առաջարկէ պաշտպանել զիրենք, ի հարկէ մեծկակ զուճարի մը տիրանալու ակընկալութեամբ:

Չարարեան եղիշէն, դաւը նկատելով, ճարպիկ խողով մը միւտիւրին քովէն զուրս կու գայ, անմիջապէս կը փախչի ու կը միանայ զինուած եւ կռուելու պատրաստ այն խումբին, որուն ղեկավարն էր Տէրտրոջ Սիմոնը, իրեն հետ ունենալով Համադասպը, յետոյ նաեւ Եսպուն, Պուտաղի Տիգրանը եւ ուրիշներ:

Միւտիւրը կ'առաջարկէ Իսրայէլին, որ խօսի եւ համոզէ հայերը զինաթափ ըլլալու եւ իր պաշտպանութեան յանձնուելու: Կը սպառնայ, որ եթէ զիմադրութիւն փորձեն, հետեւանքը աղետալի պիտի ըլլայ, նման այն գիւղերուն, ուր զիմադրութիւն տեղի ունեցած էր: Մինչ մէկ կողմէն միւտիւրը կը ջանար համոզել հայերը զինաթափ ըլլալու, միւս կողմէ դադտնի կը հրահանուէր համիտիէներուն, որ գիւղը պաշարեն:

Կէսօրուան ժամանակ համիտիէները եւ քիւրտ խուժանը կը յարձակին Գարաչոպանի վրայ: Կը սկսի կռիւր: Առաջին յաղթանակը կը տանին հայերը: Պարտուած համիտիէները եւ քիւրտ խուժանը 50 սպաննուածներ թողլով նահանջի կը զիմեն: Միւտիւրն ու Օսման Չաւուշը, տեսնելով քիւրտերուն պարտութիւնը եւ գետին փռուած դիակները, կը դաշրանան եւ տեղն ու տեղը կը սպաննեն Հազրո Իսրայէլն ու իր եղբայրները, ինչպէս նաեւ իրենց քով ապաստանած անդէն բոլոր հայերը, իսկ Մոռոյին եւ Սեւտինին կը հրահանուէր ջարդել հայերը:

Նոր յարձակողականով կռիւր կը վերսկսի: Հայերը կռուելով կ'ապահովեն փախուստի ճամբան, եւ անդէն ժողովուրդէն մաս մը կ'անցնի Գողըլ Պապա սարը: Թշնամին, միշտ զիրենք հալածելով, կը հետեւի իրենց: Սակայն, զինեալ խումբը, միշտ կռուելով, հերոսական ճիգերով՝ կ'արդիւն թըշնամին հասնելու անդէն ժողովուրդին:

Վերջապէս, զիշերով կ'անցնին Գոպալ գիւղի մօտերէն, ուր իրենց կը միանան զինեալ խումբ մը զոպալցիներ, ղեկավարութեամբ Տէր Աւետիսի տղոց՝ Սեդրակի, Միսաքի եւ Կարապետի տղուն՝ Մովսէսի: Ասոնց հետ կ'ըլլան նաեւ Գորգմաղեան Նազար աղայի տղաքը՝ Արամն ու Տիգրանը:

Պումբը, Գոպալէն Տորախան-Քէշիշան գիւղերու վրայով անցած ատեն, կը հանդիպի Սալիլ պէյի համիտիէներու յետապահներուն եւ անոնց հետ կռիւի կը բռնուի: Այս կռիւին կը սպաննուի Գովանդուկայ ոչս Մահերի տղան՝ Դաւիթը (հին յեղափոխական, եւ 101 տարուան վճիռով Կարին բան-

տարկուած եւ Սահմանադրութեան ազատ արձակուած՝ հօրս հօրաքրոջորդին էր):

Պումբ մը անդէն երիտասարդներ, որոնք կը հետեւէին զինեալ խումբին՝ ճամբանին կը կորսնցնեն եւ կ'իյնան լեռները: Օրերով թափառելէ ետք, անոնք կը բռնուին Սալիլ պէյի համիտիէներէն: Ասոնցմէ մաս մը կը սպաննուի, իսկ մնացեալները կը զրկուին ինչուս բերդ այն ամբաստանութեամբ՝ թէ «Ֆէտայիներ էին, ռազմաճակատէն բռնեցին»:

Չինեալ խումբը, երբ կը հասնի Արամանի գետի ափին, հոն կը յամենայ՝ սարսափելի յորդած գետէն անցնելու: Վերջապէս, ծառերէ լաստեր կը պատրաստեն, լաստերուն կառչած, ոմանք ալ լողալով կ'անցնին գետը, առանց սակայն արկածներէ զերծ մնալու:

Փրկուածները կը զիմեն ռուս զինուորական իշխանութեան եւ կը յանձնուին անոր:

Անդէն ժողովուրդէն ետ մնացողները, փոքր խումբերու բաժնուելով, լեռներու կածաններու մէջ կը թաղնուին, բայց, երկար չկրնալով տոկալ աւսթութեան եւ անստուգութեան, կ'իջնեն դաշտ ուտելիք ճարելու, սակայն ժանտարմաներէն կը ձերբակալուին, սաստիկ կը ծեծուին ու կ'իսամեռ կը տարուին ինչուս բերդ:

1915 Մայիս 3.— Խնուսի ծայրագաւառի գիւղերէն՝ Գոպալի վրայ կը յարձակի Սալիլ Սալիլը իր ճիւղերներով: Մաս մը գիւղացիներ կը փախչին եւ կ'ապաստանին հասանցի աշիրաթի Աճմու տղոց՝ Պապայի եւ Ռաշիտ աղայի գիւղերը, իսկ զինուած խումբ մը, Տէր Աւետիսի տղոց՝ Սեդրակի, Միսաքի եւ Մովսէսի ղեկավարութեամբ, կռուելով լեռը կը բարձրանայ ու կը միանայ Գարաչոպանի եւ Կովանտուկի խումբերուն: Ասոնք միասին կ'անցնին ռուսական զիծը ու կը մտնեն հայ կամաւորական խումբերու մէջ: Ուրիշ խումբի մը հետ, Գորգմաղեան Նազար աղան եւ իր տղաքը՝ Տիգրանը եւ Արամը փախչելով կ'անցնին ռուսական զիծը եւ կ'ապատին:

**ԳԱՐԱՔԷՕՓՐՈՒԻ  
ԿՈՒՒԻԼ**

1915 Մայիս 4.— Գարաքէօփրու գիւղին վրայ կը յարձակին հասանցի աշիրաթապետներէն Իկիթի Ուսուֆ աղան եւ Սալիլ պէյը իրենց

ճիւղերներով: Ասոնց կը միանայ մօտակայ քիւրտ գիւղերէն հասնող խուժանը: Անդէն ժողովուրդին մէկ մասը կը փախչի դէպի Գարաչոպան, մաս մըն ալ՝ Պումբու շէխերուն բարեկամ ընտանիքները՝ կը փախչին շէխերու գիւղն ու կ'ապաստանին անոնց մօտ: Լաքուտաղայ չէրքէյներու բարեկամ ընտանիքներ կը փախչին անոնց քով ապաստան փնտռելու: Իսկ զինեալ խումբ մը հայեր ալ Եսպունհի, Սիմօ Գրոյի եւ Պուտաղի Տիգրանի ղեկավարութեամբ, կռուելով կը լքեն գիւղը եւ կը քաշուին Գողըլ Պապայի սարը: Դաւիթ Մուրատեան եւս կռուելով գիւղէն զուրս կու գայ, սակայն իր ընտանիքը փրկուելու համար գիւղ վերադարձին կը սպաննուի:

Պուտաղի Տիգրան կը բաժնուի իր ընկերներէն եւ կը վերադառնայ

գիւղ: Գիւղը աւերակ ու ամայի գտնելով՝ անկէ կ'անցնի Խողլի եւ Հաճի Գրոպի պողջային մէջ կոխի կը բռնուի: Օրերով կոխը կը շարունակուի: Վերջապէս, Խողլուի կոխներէն ազատելով, քանի մը ընկերներով կը փորձէ երթալ Գողլ Պապայի սարը, սակայն, ճամբան, Բուռնապ գիւղը մտած ատեն քիւրտերէն կը նկատուի եւ կոխի կը բռնուի: Հոս հերոսական կոխ մղելու եւ թշնամիէն բազմաթիւ զոհեր խլելէ ետք, կը սպաննուի: Բարբարոս թշնամին կրակի կու տայ անոր զիրք բռնած տունը՝ հրոյ ճարակ վարձնելով զայն ալ իր տան հետ:

Ռուսական բանակի յառաջնադասումով չէրքէզները կը զաղթեն Խընուէն՝ իրենց հետ տանելով նաեւ իրենց քով ապաստանած հայերը:

Գարաքէօփրու մէկ օրուան մէջ ջարդուեցաւ, թալանուեցաւ ու ամայացաւ:

1915 Մայիս 4.— Տուճան, Մարուֆ եւ Շապատին զիւղերու հայերը ջարդուեցան եւ թալանուեցան Տուճանի Շահօ Խալլոյի տղոց՝ Քաժտոյի, Համպոյի եւ իր եղբոր Մօստկոյի ու Ալիի կողմէ: Զարդին ու թալանին մասնակից եղան չըջանի քիւրտերն ալ: Այս երեք զիւղերէն միայն Տուճանի մէջ Մուղտատ անունով հայ կտրիճ երիտասարդ մը, իր տան մէջ զիրք բռնելով, կուտեր էր հերոսարար եւ թշնամիէն 10-12 հոգի էր սպաններ:

Թշնամին, չկրնալով գրաւել անոր անխոցելի զիրքը, տունը կրակի էր տուեր: Չոր խոտի խուրճերու վրայ ձէթ էր լեցուցեր եւ տան դրան վրայ էր դրեր, որ տունը վառէր: Տան հետ Մուղտատն ալ հրոյ ճարակ էր եղեր:

Զարդէն ապատուողները ոմանք փախեր էին Քաղքիկ գիւղը, իսկ ուրիշներ ալ եկան Հարամիկ ու պատմեցին իրենց զիւղերու ահաւոր ջարդն ու թալանը: Տուճանցիներէն շատերը մորթուել էին իրենց տուներու սեմերուն վրայ:

1915 Մայիս 5.— Ալճամակիք պաշարուելով հասանանցի աշիրէթի քիւրտերէն, ահաւոր կոտորածի կ'ենթարկուի: Պաշարումը ա'յնքան յանկարծակի կ'ըլլայ, որ գրեթէ ոչ սք կը յաջողի փախչիլ: Հայերը կը մորթուին իրենց տուներու դրան սեմերուն վրայ: Դիակներու տակէն ապատուած վիճակով աղճամակիքից հայ մը, երբ ջարդի յաջորդ օրը Հարամիկ եկաւ, պատմեց թէ ինչպէս պաշտնապատ քիւրտերը սուրով, կացինով, նաչախով ու դերանդիով խողխողեր էին ծեր ու երիտասարդ, այր ու կին, մայր ու մանուկ եւ թալաններ ու աւերներ էին ամբողջ գիւղը:

1915 Մայիս 5.— Պուռնապի վրայ կը յարձակին Գուռնուզայ եւ Գատափերանայ քիւրտեր՝ մէկ կողմէն, իսկ միւս կողմէն ալ կը յարձակի հասանանցուց աշիրէթին՝ Ապտըլ Մէճիտը: Ապտըլ Մէճիտ, ուսուսական բանակի զոգաքներէն պարտուելով, փախեր եկեր էր Խնուս: Բանակ դրած էր Զեռնակայ սարին վրայ եւ բռնած Զեռնակայ կիրճը: Զարդերէն առաջ ալ ան ահ ու մահ կը սպուէր Խնուսի եւ Պուլանուիի հայերուն վրայ: Զարդի նախօրեակին,

Հարամիկէն Շահօվալատի Սամսոն Մշկան աղի հանքը գացած ատեն, Ապտըլ Մէճիտի համխախտները կը բռնեն զայն եւ կը սպաննեն: Պուռնապի վրայ յարձակած ատեն Ապտըլ Մէճիտի համխախտները եւ Գուռնուզայ ու Գատափերանայ քիւրտերը լուսպոյն պատտին համար իրարու հետ կոխի կը բռնուին: Գիւղին հայերը, այս պատեհութենէն օգտուելով, ոմանք կը փախչին Գարաչոպան, իսկ ուրիշներ ալ Խողլու կ'ապաստանին:

1915 Մայիս 6.— Խրոթ, Ենիթէօյ, Եղրղլու կամ Հէլ-Հէլի Գասպարի գեղ, յարձակման ենթարկուելով, անինայ կը ջարդուին: Կը թալանուին իրենց անասունները, տնային գոյքերը, հացահատիկները եւ ամէն ինչ: Զարդէն մաղապուրճ՝ այդ զիւղերու հայերէն մաս մը կը փախչի Խողլու, իսկ մաս մըն ալ եկաւ Հարամիկ եւ պատմեց իր զիւղերու ջարդի եւ թալանի մասին:

**ԽՈՋԼՈՒԻ  
ԿՈՒԻԵԼ**

1915 Մայիս 6.— Խողլուի վրայ կը յարձակին Գողլայի Աճմու Ուսուֆ աղայի տղան՝ Ֆեղլին եւ Մսոն իրենց հեծելազորքով: Ասանց ետեւէն կը հասնի եւ զիւղը կը մտնէ մօտակայ չըջաններէն հաւաքուած քիւրտերու խումանը:

Սուճը մը գինուած հայեր կը գիմադրեն թշնամիին եւ անդէն ժողովուրդի փախուստի ճամբան կ'ապահովեն: Ժողովուրդէն մաս մը կը փախչի Ղէպի Սարգմէլի անտառը, իսկ մաս մըն ալ կը քաշուի Հաճի Գողպի պողջայի ծառերուն մէջ: Այստեղ, գինուած խումբը զիրք բռնելով, կը շարունակէ կոխը մինչեւ իրիկուն:

Երբ զիւղը վրայ կը հասնի, կոխը կը դադրի: Անդէն ժողովուրդը կը փախչի գանապան ուղղութիւններով, իսկ գինուած խումբը կը մնայ իր զիրքերուն մէջ:

Այդ օր, կէսօրուան մօտ էր, երբ Խողլուէն փախստական խումբ մը հայեր եկան Հարամիկ: Այդ պահուն Հարամիկ իջևանած էր գայմապատ Քահիբ պէյը: Փախստական Խողլուցիներէն երկու հայեր կը ներկայանան գայմապատին եւ կը պատմեն իրենց զիւղի ջարդի եւ թալանի մասին: Գայմապատը, սառնասրտօրէն ունկնդրելով Խողլուցիները, կը հրամայէ. «Բերդ գացե՛ք. իմ փոխանորդս հոն է. անիկա պէտք եղած կարգադրութիւնը կ'ընէ»:

Խողլուի ջրաղացքին եւ Հաճի Գողպի պողջային միջև օրերով կոխներ տեղի ունեցան: Զրաղացքին մէջ կուտար Հարամիկի գինուած խումբն էր, իսկ Հաճի Գողպի պողջային մէջ՝ Գարաքէօփրուցի Պուռնապի Տիգրանը եւ իր ընկերներն էին կուտած:

1915 Մայիս 6.— Քաղքիկ գիւղը, Ենթարկուելով ջիրբանցի քիւրտե-  
րու աշխրէթապետներէն՝ Սելիմ պէյի եւ Սատի աղայի զուլամներու յար-  
ձակման, կը թալանուի եւ կը ջարդուի: Ջարդէն ազատուողները փախչելով  
եկան Հարամիկ եւ պատմեցին իրենց գիւղի եղերական վախճանի մասին:

Ժողովուրդէն մաս մըն ալ Սալչաուշ էր փախած: Ասոնցմէ քա-  
նի մը ընտանիք կ'երթան Խղզլաճմատ՝ Սելիմ պէյի գիւղը, պէյի կնոջ գը-  
թութեան ապաւինելու: Սակայն, բոլորն ալ կը ջարդուին: Ջարդի տեղէն  
քանի մը կիներ ու փոքր երախաներ միայն յաջողեցին փախչել: Անոնք ե-  
կան Հարամիկ:

Դժբախտաբար, Քաղքիկ որեւէ կռիւ ու դիմադրութիւն ցոյց չէր տը-  
ւած, հակառակ որ անուանի էր հին ու փորձառու յեղափոխական հայդուկ-  
ներով, որոնցմէ յայտնի էին Փուրթօ Ղազարը, Սիմօ Օհանը, Շէկ Յակոն,  
Քեոի Գեւոն, Իկիթի Միսակը եւ Արբոն:

Քաղքիկի գիւղացիները բոլորն ալ կ'ապաւինին իրենց բարեկամ կար-  
ծած քիւրտերու քով եւ անգթօրէն կը սպաննուին:

1915 Մայիս 6.— Ելպիս ջարդուեցաւ գիւղի աղային՝ Շիւքրիի ձեռամբ:  
Շիւքրին Խնուս բերդի աղբեցիկ ազաններէն՝ Մահմուտ աղայի տղան էր: Հա-  
միտեան ուժիւն, Ելպիս գիւղին տիրանալով, դարձած էր գիւղին աղան: Իր  
կրտսեր եղբայրը՝ Ֆախրատինն ալ, Հարամիկ գիւղի Հաճի աղայի աղջկան  
հետ ամուսնանալով, Հարամիկ էր հաստատուած: Այս երկու եղբայրները  
Մահմանդուլթեյնէն առաջ, հայկական հալածանքներու օրերուն, ճանչ-  
ցուած էին իբրեւ հայասէր: Նոյնիսկ քանի մը առիթներով անոնք օգնած էին  
հայ յեղափոխականներուն: Հարամիկի յայտնի յեղափոխական Յակոբ Մու-  
րատեանի տղան՝ Տիւրանը, 1905-ի աշնան Հարամիկ գիւղի ջրաղացքի մէջ  
զարկած էր Ջիլեցի Փալուլ օնպաչին: Փալուլը՝ հայ յեղափոխականները հե-  
տապնդելու եւ հալածելու համար Հարամիկի մէջ դրուած տասնեակ մը  
թուրք ասկերներու հրամանատարն էր: Տիւրան ինք ալ վերաւորուած փա-  
խած էր Ելպիս, Շիւքրի աղային քով, ի Շիւքրին ապաստան էր տուած Տիգ-  
րանին:

Ահա այդ Շիւքրի աղան էր որ խոստացեր էր պաշտպանել գիւղը եւ  
գիւղացիները: Իբր թէ ապահովութեան համար լեցուցեր էր հայերը գիւղի  
մարազներուն մէջ եւ դաւաճանօրէն ու անգթաբար հրդեհեր էր մարազներն  
ու ողջ-ողջ այրեր մէջի ժողովուրդը:

**ԵԼՊԻՍԻ ԶՐԱՂԱՑՔԻ  
ԿՈՒՒԵԼ**

Ջարդէն ազատուողներէն ոմանք Խնուս բերդ  
կը փախչին: Խնուս մը կտրիճ երիտասարդներ  
գինուած՝ կը մտնեն գիւղի ջրաղացքը, կը կըռ-  
ուին նամարտ Շիւքրիին դէմ եւ թշնամիէն բաւական զոհեր խլելով, կռիւը  
կը շարունակեն մինչեւ իրիկուն: Մուլթը կոխելուն, անվնաս կերպով գիւղը  
կը թողուն եւ կը թաղնուին մօտակայ անձաւներուն մէջ: Այս խումբին հե-

րոսներն էին՝ Կոսոյի Միսաքը, Տէրարոջ Վահանը, Յովհաննէսի Արշոն, Գէ-  
որգի Յունան եւ Խուրշուտի Գարէն:

Այս խումբը դէպքերէն երկու օր ետք, երբ կը վերադառնայ գիւղ, հոն  
պատահամբ կը հանդիպի հարամիկցի Հայկազուն Մուրատեանին, Պօղսէ  
Յովոյին եւ Բատուհանի Մկրէին: Ասոնք դիմուած ըլլալով, խումբին հետ Ել-  
պիսի ջրաղացքի մէջ գիրք կը բռնեն եւ կռիւի կը բռնուին թշնամիին հետ:  
Այս կռիւին մէջ հերոսաբար կ'իյնան Ելպիսցիները եւ հարամիկցի Բատուհա-  
նի Մկրէն. ծանր կերպով կը վերաւորուի Պօղսէ Յովոն, իսկ Հայկազուն Մու-  
րատեանը, անվնաս մնալով, կը թաղնուի ջրաղացքի շողտունը: Թշնամին,  
ջրաղացքը մտնելով, սպաննուածներու դէնքերը կ'առնէ ու կը հեռանայ:

Մուլթը կոխելուն, Հայկազուն թաղստոցէն դուրս կու գայ: Կը տես-  
նէ, որ Յովոն ողջ է, թէեւ ծանրապէս վերաւորուած: Յովոյի վէրքը կը կա-  
պէ եւ շալկելով դայն, ճանապարհէն դուրս դաշտի մէջով կը տանի մինչեւ  
Խնուս բերդ: Հոս երկուքն ալ կը ձերբակալուին եւ կը բանտարկուին:

Մայիսի վերջերուն, երբ մեր ընտանիքով քրտական Հըզեր գիւղէն վե-  
րադարձանք մեր գիւղը, ժանտարմաները ձերբակալեցին մեզ եւ Խնուս բերդ  
տարին: Երբ զիս եւ երեք հօրեղբայրներս տարին բանտ, հոն տե-  
սանք Հայկազունն ու Յովոն: Բնականաբար, սկսանք իրարու պատմել մեր  
գլխուն եկածները:

1915 Մայիս 7.— Սալչաուշ ջարդուեցաւ գիւղի քիւրտ ազաններէն՝ Սա-  
տի աղայի եւ զաղանաբարոյ միւտիւր Մստաֆայի զորձակցութեամբ:

Սարեբայական խոստումներով անոնք կը հաւաքեն ժողովուրդը եւ կը  
լեցնեն խոշոր մարդի մը մէջ: Այդ մարդի զրան առջեւ զինաթափ կ'ընեն  
յայտնի հայդուկ Զուլէ Մոսոն եւ իր տղան եւ տեղն ու տեղը կը սպաննեն:  
Մարդին մէջ լեցուած անղէն ժողովուրդը խումբ խումբ դուրս կը հաննեն եւ  
կացիներով ու նաչաղներով կը սպաննեն: Խումբ մըն ալ, մօտաւորապէս  
80-90 հոգի, կը տանին Խամուր բերդի սարին վրայ, քրտական Քաւառ գիւ-  
ղը եւ հոն կը ջարդեն:

Այս վերջին խումբին մէջ կ'ըլլան գիւղին քահանան՝ Տէր Աւետիսը եւ  
գիւղի ոչն Գոչոն (Մովսէս) ու իր եղբոր տղան՝ Բետիկը: Ռէս Գոչոյի բա-  
րեկամ Խըրէն դաւաճանելով՝ կը սպաննէ ոչնը: Ռէս Գոչոյի եղբոր տղան  
Բետիկը, ատրճանակով մը զինուած ըլլալով, կը կռուի քիւրտերուն դէմ,  
կը սպաննէ 4 քիւրտ եւ երկու հոգի ալ կը վերաւորէ, հուսկ յետոյ ինք ալ  
կ'իյնայ հերոսական մահով: Տէր Աւետիս քահանան ալ զինուած կ'ըլլայ, կը  
կռուի ու հերոսական մահով կ'իյնայ: Բարբարոս թշնամին կը յարձակի ան-  
չընչացած դիակին վրայ, կը յօշոտէ ու կը պղծէ:

Ջարդին ականատես Հարամիկ գիւղի Տէր Սողոմոն քահանայի աղջի-  
կը՝ Շահպազը, որ քիւրտ Ալոյէն առեւանգուած էր եւ գիւղ բերուած, կը  
պատմէ գիւղը մնացած հայ կիներուն՝ կռիւներու եւ ջարդի մասին:



**ՍՊԻՏԱԿ ՓՈՒԼԻ ԿՈՒՒԼ**

Պալչատուչ կաղմակերպուած դիմադրութիւն եւ կախ չունեցաւ, հակառակ անոր որ հաղուկային կոխներու մէջ թրծուած կտրիճները հոն էին՝ Վրդէ Բատէն, Իրիցու Օհան, Անտրոն, Սանտիլի Մարտիրոս (աննրման հերոսը), Օղտոյի Դանէլ, Զուլէ Մոսոն եւ գեւ ուրիշներ: Երկու կամ երեք հոգիներով կուսեցան միայն: Ասոնցմէ էր Վրդէ Բատէն, որ կուսեցաւ իր եղբոր երկու զաւակներուն՝ Բենոյի եւ Մամբրէի հետ: Զարդերու նախորեակին, զիւղէն դուրս, Սպիտակ Փուլ ըստած տեղը թաքստոց մը կը պատրաստեն եւ Զարդի օրը կը փախչին ու այդ թաքստոցին մէջ զիւրք կը բռնեն: Գիւրտերը, նկատելով թաքստոցը, վրանին կը յարձակին եւ կռուի կը բռնուին:

Թշնամին, երբ կը հասկնայ որ Բատէն է կռուողը, կը սկսի տարածայնել, թէ «Բատէն խումբ կազմած է, պիտի դայ հայերուն վրէժը լուծելու»:

Դժբախտաբար, այդ արդար վրէժիմդրութիւնը տեղի չունեցաւ: Բատէն տենդէ էր բռնուեր ու մեռեր: Օրեր ետք դիակն ալ գտնուեր էր իր թաքստոցին մերձակայքը, փոսի մը մէջ: Իսկ Բատէի եղբոր տղաքը շարունակէր էին կռուիլ, թաքստոցէ-թաքստոց տեղափոխուելով, մինչեւ որ ռուսական բանակը զրաւեր էր Պնուսը եւ իրենք աղատուեր էին:

**ՎԱՐԱԶԳՒԱՏԻ ԿՈՒՒԼ**

Անտոնեան Վարազդատը, զինուած հրացանով եւ տասնոց ատրճանակով մը, ինք եւ իր Տիգրան Եղբայրը կը բարձրանան Պամուր բերդի սարը: Երբ կը հասնին Արապո քրտական զիւղը, կը պաշարուին քիւրտերէն եւ կռիւի կը բռնուին: Այդ կռիւին ականատես եղող Ալիէ Օղմանի մայրը հիացումով պատմած է Պալչատուչի հայ կիներուն, Վարազդատի հերոսական կռիւի եւ ցուցադրած քաջութեան մասին, թէ ի՞նչպէս Վարազդատ կը սպաննէ վեց քիւրտեր, կը սպաննէ նաեւ իր եղբայրը, որպէս զի քիւրտերուն ձեռքը չիյնայ: Եւ երբ իր վերջին փամփուշտը կը կրակէ, ինքն ալ կ'իյնայ թըշնամիին համադարկէն:

Գիւրտ կնոջ տուած այս տեղեկութեան վրայ, Պալչատուչի հայ կիները զաղտնի կ'երթան Արապո, կը փնտռեն Վարազդատի եւ իր եղբոր դիակները եւ գտնելով կը բերեն Պալչատուչ ու կը թողնեն գերեզմանոցին մէջ:

Վարազդատ ուսանող էր Պոլսոյ Ամերիկեան Ռոպերթ դպրոցը: Պատերազմի ընթացքին զինուորական ծառայութեան կը կանչուի: Կարճ ժամանակ մը զինուորական մարզանք ստանալէ ետք, կ'որոշէ փախչիլ եւ գալ հայրենիք: Զինուորական համազրկեստով եւ դէնքով եկաւ հայրենիք եւ հերոսական մահով նահատակուեցաւ հայրենի սրբոցան հողին վրայ:

Յայտնի յեղափոխական (գաշնակցական) եւ հայդուկ, սուրհանդակ եւ զինատար խումբերու վալառ Մարտիրոսը, իրեն հետ խումբ մը ուրիշներ

եւս, նենդամիտ Սատի աղայի եւ միւտիւր Մստաֆայի խոստումներէն կը խարուին: Այս վերջինները, իրր թէ զիրենք ազատելու համար, պահակներու հակողութեամբ Արօսի մերձակայքը, Նորելածի վանքի քարայրը թաղցնելու կը զրկեն, միշտ հաւաստիացնելով, որ ռուսերը չուտով պիտի դան եւ իրենք չուտով պիտի աղատուին: Այս խումբը երբ ձորը կը հասնի, գաւաղիրները կը Զարդեն բոլորն ալ հոն ու դիակներն իսկ կ'անյայտացնեն: Օրեր ետք միայն Արջածորի մէջ կը գտնուի Մարտիրոսի նշանաւոր փափախը...:

1915 Մայիս 7.— Չեւիրմէն եւ իր մօտակայ Գարբիէլի Գոմը, նորաչէն զիւղազարակը Զարդուեցան եւ թալանուեցան համիտիէներէն, Փայկի քիւրտերէն եւ Բերդէն յատկապէս եկած թալանճի թուրքերէն:

Յարձակումը տեղի ունեցաւ կէսօրէ ետք: Հրացանաձուլութեան ձայնը, աղաղակն ու աղմուկը յստակ կերպով կը լսուէին մինչեւ մեր գիւղը՝ Հարամիկ, որովհետեւ հազիւ կէս ժամուան հեռաւորութիւն ունէին իրարմէ:

Զարդէն խուսափող ժողովուրդէն մաս մը փախչելով եկաւ Հարամիկ, իսկ մեծադոյն մասը՝ փախեր էր Պնուս բերդ:

Մարտիրոս Մանուկեան, հարամիկցի, որ այդ տարեշրջանին ուսուցչութեան պաշտօնով Չեւիրմէ կը մնար, խումբ մը զիւղացիներու հետ կը սկսի փախչիլ դէպի Հարամիկ: Մարտիրոս, ատրճանակով մը զինուած ըլլալով, իր վրայ յարձակող քիւրտերուն հետ կռիւի կը բռնուի եւ հնարաւորութիւն կու տայ իրեն հետ եղողներուն ապահով կերպով զիւղէն հեռանալու եւ Հարամիկ հասնելու:

Չեւիրմեցի խումբ մը զինուած հայեր, հին յեղափոխական Քրմոյեան Ալեքսանի ղեկավարութեամբ, զիւրք կը բռնեն բողբոջականաց քարաչէն ժողովարանին եւ քովի տան մէջ ու կը կռուին մինչեւ իրենց վերջին փամփուշտը: Սակայն, թշնամի գերազանց ուժին չդիմանալով՝ եղերական վախճան մը կ'ունենան եւ բոլորն ալ կը Զարդուին:

Գարբիէլի Գոմի հայութիւնը ամբողջութեամբ թալանի եւ Զարդի ենթարկուեցաւ Փայկի քիւրտերէն:

**ԱՐՕՍԻ ԿՈՒՒԼ**

1915 Մայիս 8.— Արօսի վրայ կը յարձակին համիտիէներ եւ չէթէներ մեծ ուժով: Ասոնց կը միանայ նաեւ շրջաններէն հաւաքուած զինուած քիւրտերու խումբեր: Արօսցիներէն զինուած խումբ մը հայեր, իրենց զիւղի քահանային ղեկավարութեամբ, կանխատեսելով զայիւրք արհաւիրքը, կ'որոշեն կռուիլ եւ կանուխէն զիւղի բարձունքներուն վրայ ռազմական դիրքեր կը պատրաստեն: Երբ թշնամին կը յարձակի զիւղին վրայ, խումբը կը սկսի կռուիլ եւ, թշնամիին բաւական զոհեր խլելով, հնարաւորութիւն կը ստեղծէ որ անգէն ժողովուրդը փախչի ու թաղնուի Նորելածի

կամ Արջածորի քարայրներուն մէջ, ուրկէ ժողովուրդը զիշերով կը փախչի Խնուս բերդ:

Կռուող խումբը նոյն օրը, մութը կտխելուն, կը լքէ զիւզին բարձունքներուն զիրքերը եւ կը քաշուի Նորեւածի քարայրները: Օրերով հոս կոխը կը շարունակուի: Թշնամիի գերազանց ուժին չկրնալով դիմանալ՝ շատերը կ'իյնան հերոսական մահով: Գիւղի քահանան այս կռիւէն մաղապուրծ ինքզինք կը հասցնէ Խողու, ուր կը միանայ հոն հաւաքուած զինեալ կռուողներու խումբին: Օրերով կը կռուի թշնամիի գերազանց ուժին դէմ: Բայց, ի վերջոյ, սաղմանիւթի և հացի պակասը՝ մէկ կողմէն, իսկ թշնամիին յարածուն ուժին ճնշումը՝ միւս կողմէն, կը պարտադրեն զիրենք մեռնիլ հերոսական մահով:

Նորեւածի քարայրներուն մէջ թաքնուածներէն ոմանք կ'ազատին, երբ ոռւսական բանակը կը զրաւէ Խնուսը:

Խնուս բերդ ապաստանողները կը տարազրուին, կը թալանուին ու կը ջարդուին Խնուսի եւ Վարդոյի միջեւ գտնուող լեռներուն վրայ:

**ՍԱՐԼՈՒԻ ԿՈՒԻԻԸ**

1915 Մայիս 9.— Սարլու, որ Խնուս բերդի մէկ թաղամասը կը նկատուէր եւ ձորակով մը անջատուած էր Բերդէն, կը պաշարուի համիտիներէն եւ պաղջացի ու խոլհասարցի քիւրտերէն եւ կը մատնուի թալանի ու ջարդի: Գայմապամ Թահիր պէյը, հայերը պաշտպանելու կեղծ դիտաւորութեամբ, Սարլու կը զրկէ Հաճի Իսաֆ Էֆէնտին ջոկատ մը չէթէներով: Բայց Իսաֆ Էֆէնտին փոխանակ հայերուն օգնելու, համիտիներուն կը միանայ եւ կը սկսի ջարդի ու կողոպուտի:

Հըլոյեան չորս եղբայրները զինուած՝ իրենց տան մէջ դիրք կը բռնեն ու կը կռուին մինչեւ իրիկուն: Կոխը երբ կը վերջանայ, եղբայրներէն Արփիարը կը նկատէ որ իր եղբայրները եւ իրենց ընտանիքները բոլորն ալ ըսպաննուած են: Իր կիներ, ազատուած ըլլալով, կը զիմէ իրեն և կը խնդրէ որ զինքը սպաննէ եւ չթողու որ թշնամիին ձեռքը իյնայ: Արփիար կը սպաննէ իր կիներ ու խեղճագորէն զուրս կը նետուի մութին մէջ իրենց տան քովի ծառաստանը եւ անկէ ալ կը բարձրանայ լեռը: Կռուելով տեղէ տեղ ու գիւղէ գիւղ, կը հասնի մինչեւ Զեռնակայ սարը, ուր քանի մը ընկերներով ամիսներով կը թափառի եւ վերջապէս կռիւի կը բռնուի ու կը սպաննուի:

Ջարդէն ազատուողները Բերդեցիներու հետ կ'աքսորուին եւ կը ջարդուին:

Եահիա 40 տունէ բաղկացեալ հայաբնակ գիւղը, որ Խնուսի դաշտէն անջատուած եւ շրջապատուած էր Կէօքսուի եւ Թագմանի շրջանի քիւրտ գիւղերով, ջարդի ու թալանի ենթարկուեցաւ սէօլէմէզցի Խուլի Խան պէյի՝ զը-

որքցի աշիրէթի քիւրտերէն: Զինուած խումբ մը հայեր, թէեւ օրերով կռուեցան քիւրտերուն դէմ, ի վերջոյ բոլորն ալ ջարդուեցան՝ թշնամիին գերազանց ուժին չզիմանալով: Քանի մը կիներ ու երախաներ ջարդէն ազատուելով, քիւրտերու ձեռքը գերի ինկան եւ անոնց քով մնացին, մինչեւ որ ոռուսական բանակը զրաւեց Խնուսը եւ ազատեց զիրենք գերութենէ:

Ջարդի եւ թալանի ենթարկուեցան նաեւ Մժնկերտի, Գարապուրաքի, Պէկուրտի, Թանտրլուի, Խոլհասարի, Մոլա Դառուտի, Անտալպուտի, Խոլանի եւ Քօնջուրի հայերը: Այս քրտախառն գիւղերու հայերը ջարդուեցան իրենց դրացի քիւրտերէն: Քօնջուր գիւղը ջաղացպանութեամբ զբաղող հարածիկցի երկու եղբայրներ՝ Բէկը եւ Լաւանդը, որոնք յաղթանդամ եւ հուժկու մարդիկ էին, ջրաղացքի կռաններով կը կռուին քիւրտերու դէմ եւ քանի մը քիւրտ կը սպաննեն: Եղբայրներէն Բէկը նոյնպէս կը սպաննուի, իսկ Լաւանդը կը յաջողի փախչիլ եւ քարայրներու մէջ թաքնուիլ, մինչեւ որ ոռուսական բանակը կը զրաւէ Խնուսը եւ կ'ազատի:

**ՀԱՐԱՄԻԿ ԳԻՒՂԻ ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԶԱՐԴԸ**

Ուշադիր ընթերցողը անշուշտ նկատեց, որ Խնուսի ջարդը, թուրք կառավարութեան կողմէ պատրաստուած, որոշ ծրագրով տեղի կ'ունենար: Եթէ կառավարութեան բուն նպատակը հայոց բնաջնջումն էր, տեղացի թուրքերուն եւ քիւրտերուն զլխաւոր շարժառիթն ալ հայոց հարստութեան տիրանալու մարմաջն էր:

Կազմակերպուած ջարդը սկսաւ գաւառի արեւելեան շրջանի գիւղերէն: Այս շրջանը ոռուսական բանակի պատերազմական դժին մօտ էր, եւ օրէ օր կ'ակնկալուէր ոռուսական զրաւումը: Որպէս զի այդ շրջանի հայկական գիւղերու հաւանական փրկութեան ճամբան փակուէր ու ոչ ոք կարենար փախչիլ եւ ոռուսական զիժը անցնիլ, համիտիներու Փըրզա գումանտան Հաճի Համտի պէյը բանակատեղած էր Գոպալ գիւղը եւ կը հսկէր սահմանին:

Անստոյգ կացութիւնը օրէ օր աւելի կը վատթարանար: Թրքական նահանջող բանակի թափթփուքները, Պաղտատի արաբական պարտուած բանակի մնացորդները, քիւրտ համիտիները եւ մուհաճիները կ'ասպատակէին գաւառը՝ մէկ ծայրէն միւսը:

Հայկական գիւղերու մէջ յարաբերութիւնները զրեթէ խզուած էին: Գիւղէ գիւղ երթեւեկութիւնը զիշերանց եւ գաղտնի կ'ըլլար, ան ալ հարկեցուցիչ պարազաններուն: Անակնկալ յարձակումները եւ կողոպուտները դիմազրաւելու համար, մեր գիւղին՝ Հարամիկի մէջ խումբ մը երիտասարդներ կազմակերպուեցան Տիգրան Մուրատեանի ղեկավարութեամբ: Յաճախ կը հաւաքուէինք իմ հօրաբորջ Փալոյի տունը: Ամէն իրիկուն հոն կու գային խումբին մասնակցողները՝ Տիգրան Յ. Մուրատեան, Հայկազուն Կ. Մուրատեան, Աւագ Վարժապետ, Գարեգին Տէր Սողոմոնեան (Քեմալեան), Յովհաննէս Կ. Մեղքոնեան, ուստա Մարկոս, Մհերի Սեթոն, Միս Գոպէ Միթիկ,

Մերօ Սեթոն, Ոչէ Աւոյի Մեսրոն, Յունանի Յովէն, Ոնճէ Յովիկ, զափթիա Միսաքի տղան՝ Լեւոնը եւ Ես: Խումբին Երէց անդամները փորձառու եւ անցեալ ունեցող հայրուկներ էին: Գիւղի հսկողութեան համար, զիւղի երթտասարդներէն ուրիշներ ալ խումբին մէջ առնուեցան եւ կազմուեցաւ պահակային զրուսիւն մը: Դիրքերուն համաձայն, Երկու կամ չորս զինեալ անձեր հերթապահութեամբ զիշերները կը հսկէին զիւղին: Այս զրուսիւնը շարունակուեցաւ մինչեւ Ապրիլ ամիսը:

Մարտ ամսի սկիզբները Տիգրան նամակ մը ստացաւ Գոմսայ Իսոյէն (Կորիւն): Իսոն իր ղէպքի մասին կը գրէր Տիգրանին Մշոյ Ս. Կարապետի վանքէն եւ կը զգուշացնէր Տիգրանը, որ թրքական նենգամտութեան զոհ չեղար: Ան փափաք կը յայտնէր որ Տիգրանը զինեալ խումբով մը Սասուն անցնէր՝ հոն միանալու իրեն:

Տիգրան ջանաց զինեալ խումբ մը պատրաստել թէ՛ մեր զիւղացիներէն եւ թէ՛ շրջակայ զիւղերէն՝ յաւելեալ ուժերով գալիք պատահականութեանց զիմազրուելու համար: Սակայն, իր ջանքերը ապարդիւն անցան, որովհետեւ ան ձերբակալուեցաւ եւ 150-նոց խումբին հետ աքսորուեցաւ:

Տիգրան ձերբակալուեցաւ Ապրիլ ամսու սկիզբները, իսկ ընդհանուր ջարդը սկսաւ Մայիսին: Չորս շարթուան այդ ժամանակամիջոցին մեր խումբը կը շարունակէր իր զաղտնի հաւաքոյթները, որոնց ընթացքին խումբը հաստատապէս որոշած էր զիւղին վրայ եղած յարձակման մը պարագային, զինեալ զիմազրուսիւն ցոյց տալ:

Խումբի բոլոր անդամներս զինուած էինք: Չեւիրմէ զիւղի ղէպքին իրիկունը այլեւս համոզուած էինք, որ թշնամիի յաջորդ յարձակումը պիտի ըլլար մեր զիւղին վրայ: Արդէն մեր զիւղին թուրքերը հաստատապէս յայտնեցին որ զաշտի բոլոր հայ զիւղերը թալանուած ու ջարդուած են եւ կարգը եկած էր մեր զիւղին:

Միեւնոյն ատեն անոնք յայտնեցին մեզի.

«Հայե՛ր, մեմք եւ դուք, մեր նախնիքներէն համագիւղացիներ, դրացիներ եւ բարեկամներ ըլլալով, ինչպէս ասկէ տարիներ առաջ՝ 1895-ի դէպքին ձեզ պաշտպանեցինք քիւրտերու յարձակումներուն դէմ, հիմա ալ կը պաշտպանեմք, պայմանաւ որ այս անգամին, երբ Մոսկովը գայ, դուք ալ մեզ պաշտպանե՛ք Մոսկովէն»:

Այս պայմանական հասկացողութեամբ եւ զիւղի թուրքերուն տուած հաւաստիացումներուն վստահելով, մեր զիւղին 150 տուն հայերը սկսան իրենց շարժուն գոյքերը փոխադրել թուրքերուն տուները եւ իրենք ալ ապաստանիլ անոնց տուներուն մէջ: Միայն թրքական թաղին եւ տուներուն մերձակից հայ ընտանիքները չփոխադրուեցան, այլ մնացին իրենց տուներուն մէջ: Խանոն եւ իր եօթը տղաքը, իրենց հետ նաեւ Խանոյի եղբոր Իսոյի տղան՝ Սալլէն՝ երդումներով հայրիկիս խոստացան պաշտպանել մեր ընտանիքը: Միեւնոյն իրիկունը մեր շարժական գոյքերէն մաս մը հետերնիս առնելով՝ փոխադրուեցանք Խանոյի տունը:

Հայրիկս վստահելով Խանոյի տղոց հաւաստիացումներուն եւ մանաւանդ յամառ կերպով շրջան ընող այն լուրերուն, որ ուսական բանակը կը յառաջանայ եւ Խնուսի գրաւումը այսօր-վաղը կամ ժամէ-ժամ կ'ակնկալուի, խօսեցաւ ինծի որ խոստովիմ կոիւին մասնակցելէ, քանի որ իրեն յայտնի էր մեր խումբին նպատակը: Իմ բացասական պատասխանիս վրայ, հայրիկս յուզուած տունէն դուրս եկաւ ըսելով թէ՛ «անգամ մը խանութքը երթամ գամ»:

Երեկոյեան, երբ հրացանս պահուած տեղէն հանեցի, սիրմէն վրայէն հանուած էր: Եղբորս հարցուցի թէ ինք լուր ունէ՛ր հրացանիս սիրմէնէն: Ըսաւ որ լուր չունէր: Այդ ատեն հայրիկս միջամտեց՝ ըսելով թէ ինքն էր տարած եւ մեր խանութի դարակներուն մէջ տեղ մը պահած:

Խանութ գացի: Բոլոր փնտուտուքներս ապարդիւն անցան: Սիրմէն չգտնելով՝ տուն դարձայ: Չէի կրնար հասկնալ թէ՛ ինչո՞ւ հայրս կ'ուզէր զիս զինաթափ ընել: Վախի արդիւնք չէր կրնար ըլլալ ատիկա, քանի որ ատկէ դեռ չորս ամիս առաջ գեղարին եւ արկածալի պայմաններու մէջ, ձմեռուան ձիւնին, բուքին ու ցուրտին, կը խրախուսէր եւ միջոցներ կը հայթայթէր, որ մեկնիմ ղէպի ուղղմամբ կատ' Գոպալ զիւղի վրայով, հոնկէ փախչելու, ուսական բանակին յանձնուելու եւ ազատուելու համար: Մինչդեռ այժմ արդէլ կը հանդիսանար, որ ես կոիւին մասնակցէի: Ատոր պատճառը, սակայն, իր համոզումն էր թէ՛ «Ռուսերը շուտով կու գան եւ կ'ազատինք»: Եւ այդ ընդհանրական համոզումը տարեցներու կողմէն արդէլք եղաւ լաւագոյն ինքնապաշտպանութեան կազմակերպուելուն:

Այդ իրիկուն մեր խումբը հաւաքուեցաւ Յակոբ Մուրատեանի տունը: Հրացանս եւ փամփուշտները հոն տարի: Տակաւին կը յուսայի դտնել հրացանիս սիրմէն եւ մասնակցիլ կոիւին:

Յակոբին տունը զիւղէն անջատուած ընդարձակ հողի մը վրայ շինուած էր: Ռազմական լաւ դիրք ունէր, կիշխէր զիւղ մտնող չորս գլխաւոր ճամբաներուն վրայ: Երբ Յակոբ իր այդ նոր տունը շինեց Սահմանադրութեան երկրորդ տարին, կանխամտածումով տանիքէն գրեթէ հինգ ոտք բարձրութեամբ պատնէշներ շինել տուաւ:

Խումբը նկատի առաւ այս առաւելութիւնը եւ ատոր համար Յակոբի տունը ընտրեց ինքնապաշտպանութեան կոիւի համար:

Խումբին ղեկավարութիւնը ստանձնեցին զապթիա Միսակը, Հայկազուն Մուրատեանը, Գարեգին Տէր Սողոմոնեանը եւ Ոչէ-Աւոյի Մեսրոն:

Մեր առաջին գործը եղաւ պարէնի պատրաստութիւն տեսնել: Եւ սկսանք ալիւր, հաց, իւղ, պանիր եւ ինչ որ հնարաւոր էր հաւաքել ու ամբարել Յակոբի տան մէկ սենեակին մէջ. Երկու խոշոր կարասներու մէջ ալ ջուր ամբարեցինք, թէեւ առուակ մը կը հոսէր տան քովէն:

Ամէն պատահականութեան համար խումբը պատրաստ էր, երբ զիւղի թուրքերէն պատուիրակութիւն մը եկաւ Յակոբի տունը եւ հոն հաւաքուած

գիւղի մեծերէն (Սողոմոն քհնյ., Յակոբ Մուրատեան, Կարապետ Մուրատեան, Պատ. Կարապետ Մեղրոնեան եւ ուրիշներ) պահանջեց որ խումբը զինաթափ ըլլայ եւ ապաստանի իրենց՝ թուրքերուն տուները: «Այլապէս — ըսին — մենք չենք կրնար ձեզ պաշտպանել»:

Զինաթափ ըլլալու եւ չըլլալու վէճ սկսաւ տարեցներու միջեւ: Հին յեղափոխական Յակոբ Մուրատեանը եւ Կարապետ Մուրատեանը վստահեցան թուրք պատուիրակութեան գլխաւորներէն Մուսա աղայի եւ Ֆարխատինի կեղծ հաւաստիացումներուն, թէ՛ «Ռուսերը այսօր կու գան, վաղը կու գան, հասած են Գոպալ ու Գարաչոպան եւ շուտով կ'ազատիք»: Եւ խոստացան զէնքերը յանձնել եւ ապաստանիլ աղաներուն տուները:

Թուրք պատուիրակութիւնը ուզեց որ այդ իրիկունն իսկ զէնքերը յանձնուին, Յակոբի տունը պարպուի եւ խումբն ալ ցրուի: Սակայն, խումբի ղեկավարութիւնը բացարձակապէս մերժեց զինաթափ ըլլալ, ընդհակառակն՝ ուզեց որ աղաները պատանդ պահէ՝ յաջորդ օրուան ղէպքին օգտաւործելու համար: Այդ նպատակով հրամայեց պահակներուն, որ թուրք աղաները չձգեն տունէն դուրս ելլել:

Կարապետ Մուրատեանը սակայն միջամտեց եւ համոզեց խումբի ղեկավարութիւնը եւ իր տղան՝ Հայկազունը, որ թուրք աղաները պատանդ չբռնեն: Յետոյ խօսեցաւ թուրք աղաներուն, որ զէնքերուն յանձնումը ըլլայ յաջորդ օրը: Այսպէս թուրք աղաները մեկնեցան Յակոբի տունէն:

Կէս գիշեր էր: Հայկազունին հետ Յակոբի տունէն ելանք ու գացինք Պանոյի տունը, ուր փոխադրուած էին մեր ընտանիքները: Հոն էին նաեւ պատ. Կարապետ Մեղրոնեանը եւ պատ. Թադէոս Ղուկասեանը իրենց ընտանիքներով:

Հայկազուն վերադարձաւ Յակոբի տունը, իսկ ես մնացի հոն: Ատտուանց ելայ գացի մեր տունը: Մեր բաց բակի քարէ աստիճաններէն վար կ'իջնէի, երբ դէմս ելաւ Խնճէ-Յարթին: Նկատեցի որ մեր բակի եւ տան դռները ծխնիներէն հանուած եւ գետին նետուած էին: Երբ ներս մտայ, տեսայ որ տունը թողած գոյքերը չկան: Յայտնի եղաւ որ գիշերով կողոպտած էին: Երբ մտայ մեր մեծ սենեակը, տեսայ որ պատի մէջի պահարանի դուռը կոտորուած էր, մէջի դրքերն ու թուղթերը թափուած էին սեղիւրի եւ տախտակամածի վրայ:

Մտաբեկ դուրս եկայ տունէն: Իջայ մեր մեծ ախոռի դուռը: Դուռը գոց էր, ներսէն անասուններուն բառաչը կը լսուէր: Ասկէ հասարակաց ճամբան անցնելով՝ իջայ մեր կալը, մօտեցայ մեծ առուին, որ կը բաժնէր Յակոբի տունը մեր կայէն ու գիւղէն: Յակոբի տան դրան մօտեցայ: Դուռը գոց էր: Սկսայ դուռը բախել: Ներսէն Հայկազունի եղբայրը՝ Սենեքերիմը հարցուց ո՛վ ըլլալս: Երբ ինքնութիւնս յայտնեցի, դուռը բացաւ. հարցուցի.

— Սենեքերիմ, եղբայրդ ո՞ր է:

— Ներսն են եղբայրս, Գարեգինը, զապթիա Միսակը եւ խումբի բո-

լոր տղաքր: Հոս են նաեւ հայրիկս, Յակոբը եւ ուրիշներ: Տաճիկ աղաներն ալ ճիշդ հիմա եկան:

Նոյն պահուն նկատեցի որ Գարեգինը աստիճաններէն վար կու գար: Միջանցքին մէջ կեցած՝ սկսանք խօսիլ: Գարեգին ուրախ էր որ եկած էի խումբին միանալու: Ըսի որ տակաւին չկրցայ հրացանս ամբողջացնել: Գարեգինը բաւ որ ինք իր տասնոց աստիճանակը կը գործածէ ու իր հրացանը ինծի կը տրամադրէ:

— Դուն ինձմէ աւելի փորձառու ես, քանի մը ամսուան զինուորական ծառայութեան մէջ մարզուած ես, — աւելցուց:

Թուրք աղաները դարձեալ պնդեցին որ խումբը զինաթափ ըլլայ:

Զապթիա Միսակը խումբին կողմէ բացարձակապէս մերժեց զինաթափ ըլլալ: Հայկազունը, սակայն, հօրը սաստիկ թախանձանքին վրայ, յանձնեց իր հրացանը Պանոյի Հասանին, բայց գաղտնի պահեց տասնոց աստիճանակը եւ հօրը հետ դնաց Պանոյի տունը:

Տէր Սողոմոն քհնյ.ի հետ Յակոբ Մուրատեանը եւ ուրիշներ ալ գացին Ֆարխատինի տունը:

Կէսօրուան մօտ էր, երբ եղբայրս եկաւ Յակոբի տունը եւ ըսաւ թէ հայրիկս զլս կր կանչէ եւ ինծի պիտի ըսէ թէ հրացանի սիւրմէն ուր պահած է:

Եղբօրս հետ գացի Պանոյի տունը: Հայրս բաւ թէ սիւրմէն կը գրտնեմ խանութի սետիւրին տակի քարէ կափարիչին ետեւ:

Պանութը Պանոյի տան բաւական մօտ էր: Դուրս ելայ խանութ երթալու: Հանդիպեցայ Մարտիրոս Մանուկեանին, որ ըսաւ.

— Ես ալ կու գամ խումբին միանալու: Եկուր հանդիպինք մեր տունը, եղբայրս՝ Աւետիսը տեսնեմ ու անցնինք երթանք:

Իլուրէն վար իջանք իրենց տունը, որ Պանոյի տան շատ մօտ էր: Հագիւ թէ տունը մտած եւ քանի մը խօսք փոխանակելով դուրս էինք եկած, երբ եղբայրս Պանոյի տունէն վաղելով եկաւ եւ բարձրաձայն ըսաւ.

— Փախէ՛ք, փախէ՛ք, համիտիէները գիւղին վրայ բռնեցին:

Այլեւս խանութը երթալու հնարաւորութիւն չկար: Եղբօրս հետ փախանք Պանոյի տունը: Աւետիսը իր կնոջ, գաւակներուն ու Մարտիրոսին հետ փախաւ իրենց դրացի Հաճու Շքոյի տունը:

Համիտիէները գիւղը պաշարեցին Լակլիու Դար կոչուած բլուրէն եւ հայոց դերեզմանատան կողմէն Պուրհանայ ճանապարհով մինչեւ Ուլուս ձորն ու Կաւ Գրեբը:

Պանոյի տղոցմէն չորս եղբայրները, Իսօ-Պալլէն եւ Մըթըպ Շեռոյի տղան անմիջապէս բարձրացան հայոց դերեզմանատան թաղածեւ բլուրը եւ գերեզմանատան քարերու ետեւ գիրքեր բռնելով, սկսան կռուիլ թշնամիին դէմ: Թուրքերէն ուրիշ կռուողներ ալ գիրք բռնեցին Յորի ձորի կողմը եւ սկսան կռուիլ համիտիէներու դէմ: Իսկ հայկական թաղէն, Յակոբի տան

դիրքէն խուճրդ սկսաւ կոտորել: Այդ օր, թշնամին բաւական զոհեր տուաւ եւ չկրցաւ մտնել հայոց թաղը: Օրուան հերոսն էր Սէյ Աւոյի Մեսրոն:

Կտրիճ Մեսրոն այդ օրը սպաննեց քանի մը համիտիէներ, իսկ երկրորդ օրն ալ սատկեցուց Քեաթիպ Միրզան: Ան Օսմանեան Սահմանադրութեան առաջին հայ զինուորներէն էր, չորս տարի թրքական բանակին մէջ ծառայած էր իբրեւ սահմանապահ՝ զինուոր սուս-թրքական սահմանին վրայ եւ համբաւ հանած էր զիւրանցի քիւրտ աւազակներուն հետ ունեցած ընդհարումներու ընթացքին:

Հաղարաւոր համիտիէներ եւ քիւրտ խուճանը առաջին զրոհին չկրցան մտնել զիւրը եւ նահանջեցին: Սակայն, Քեաթիպ-Միրզան, որ այդ ատեն գիւղն էր եւ յատկապէս Ոնուս բերդէն եկած էր ջարդը ղեկավարելու, տեսնելով որ համիտիէները կը նահանջեն, կը կանչէ Հաճի Արիֆը եւ կը թելադարէ որ Հաճի աղայի տղուն՝ Շերիֆ էֆ.ի հետ երթան համիտիէներուն ետեւէն եւ համոզեն որ ետ դառնան՝ կրկին յարձակելու գիւղին վրայ:

Երկրորդ յարձակման ատեն թուրք դիմադրողներէն ոմանք խուսափեցան կռուելէ եւ դաւաճանօրէն առաջնորդելով խուճանը, ջարդել տուին իրենց տուները ապաստանած հայերը:

Այդպէս ըրաւ Հաճի Արիֆը: Ան իր տան մէջ սպաննել տուաւ այն բոլոր հայերը, որոնք վստահելով իրեն՝ ապաստանած էին իր տունը եւ ապաւինած էին իր գթութեան: Հաճի Արիֆ դաւաճանօրէն իր դրան առջեւ գլխատել տուաւ զապթիա Միտակին եղբայրը՝ Գասպարը:

Գասպարը 1906-ին՝ զիւղին մէջ հայերու եւ մուսուլման թաթարներու միջեւ տեղի ունեցած մեծ կռիւին հերոսական դիմադրութիւն ցոյց տուած էր՝ կռուելով հարիւրաւոր մուսուլմաններու դէմ, մինչեւ որ հարիւրեակ մը թըրքական հեծելազօրք եկած պաշարած էր գիւղը եւ ձերբակալած զինք ու բազմաթիւ ուրիշ կռուողներ, որոնք բոլորն ալ տարուած էին Կարնոյ Կեղրոնական բանտը (Տաշխան) եւ 101 տարուան բանտարկութեան դատապարտուած: 1908-ի Սահմանադրութեան ատեն ընդհանուր ներումով ազատուած էր բազմաթիւ ուրիշ հայ բանտարկեալներու հետ:

Հաճի Արիֆի եղբայրը՝ Մուսա աղան եւ Սելիմ աղան նոյնպէս ջարդել տուին իրենց տուները ապաստանած հայերը: Սելիմ աղայի տունը ապաստանած հայ մը, որ կրցած էր տան պատը ծակելով փախչիլ, պատմեց թէ ինչպիսի՛ վայրագութեամբ ջարդած էին հոն ապաստանողները:

Ուլլոյի Հիւսէյնի տունը, ուր բազմաթիւ հայեր ապաստանած էին, ենթարկուեցան համիտիէներու յարձակումին: Տունը պաշարելով՝ ուղեր էին ներս մտնել եւ ժողովուրդը ջարդել: Միրապի Յովսէփը, որ Հիւսէյնի տունը ապաստանածներուն հետ էր, այսպէս պատմեց.

«Համիտիէները երբ տունը պաշարեցին, Հիւսէյնը տունը չէր, թալանի գացեր էր: Հրամայեցին Հիւսէյնի կնոջ, որ դուռը բանայ եւ հայերը յանձնէ, որպէսզի ջարդեն: Հիւսէյնի կինը ընդդիմացաւ, չուղեց դուռը բա-

նալ: Համիտիէները դուռը խորտակեցին եւ սկսան ներս խուճել: Ես ատրճանակ մը ունէի քովս, քաշեցի եւ առաջին կրակով համիտիէ մը գետին փռեցի. ետ քաշուեցան եւ սկսան համազարկի:

«Ես զիւրք բռնած էի եւ կը սպառնայի, որ եթէ ներս գան, պիտի զարնեմ: Ասոր վրայ չոր խոտ բերին եւ ուղեցին տունը կրակի տալ: Հիւսէյնի կինը սկսաւ խնդրել, որ տունը չվառեն: Սակայն, մտիկ չըրին իրեն. բերին հայ կին մը եւ ստիպեցին որ խոտը դրան առջեւ դնէ եւ կրակի տայ: Կինը համիտիէներու սպառնալիքին տակ, բերաւ խոտը եւ դրաւ դրան առջեւ: Ես ազդարարեցի կնոջ, որ եթէ խոտը վառէ, զինք պիտի զարնեմ: Երկու կողմէն կը սպառնայինք:

«Վերջապէս կինը, համիտիէներու սպառնալիքին ենթարկուելով, մտեցաւ որ խոտը վառէ: Չարկի կինը, բայց ուշ էր. կրակ առաւ խոտը եւ բռնկելով բոցերը սկսան լափիլով տան դուռը եւ արծարծուիլ տունէն ներս: Ոչ ոք կը համարձակէր դուրս ելլել, վախնալով կրակէն ու համիտիէներու գնդակներէն:

«Սկսաւ սարսափելի խուճապ մը: Ամէն մարդ ազատելու համար փորձ մը կ'ընէր: Ես քաշուեցայ տան ետեւի կողմը: Քանի մը հոգի միանալով՝ սկսանք պատը ծակել եւ դուրս փախչիլ: Առաջին անգամ ես դուրս ինկայ ծակէն ու անմիջապէս թաքնուեցայ տան քովնտի խարխուլ գոմը, մինչեւ մութը կոխելը:

«Թուրքերու խօսակցութիւններէն հասկցայ, որ տան մէջ մնացողներէն ոմանք մուխէն խեղդուած էին, ոմանք կրակէն այրուած, իսկ դուրս փախչողները ջարդուած էին քիւրտերէն»:

Յովսէփը այդ զիշեր կը փախչի եւ կը թաքնուի զիւղին մօտակայ Մուղտատ աղայի ջաղացքին մէջ: Յաջորդ օր, քիւրտ մը պատահմամբ կը մտնէ ջաղացքը: Ան կը սպաննէ քիւրտը եւ անոր լաթերը հաղնելով, կ'անցնի գետը եւ զիւղին մօտակայ Քարեր ըսուած քարաբլուրներուն մէջ կը թաքնուի: Քանի մը օր այդ տեղերը կը թափառի: Օր մըն ալ Շապատին եւ Հարամիկի գիւղերուն սահմանակից երկու գետերու խառնուրդին քով կը հանդիպի երկու քիւրտերու: Կռիւի կը բռնուի անոնց հետ եւ կը սպաննէ երկուքն ալ ու աննկատ կը փախչի կ'երթայ Գարաչոպան: Հոն քիւրտի լաթերը կը փոխէ եւ կը բարձրանայ սարը, ուր կը հանդիպի փախստական հայերու, որոնց հետ կը ձերբակալուի եւ կ'ուղարկուի Կարնոյ եւ Մամախաթունի միջեւ ճանապարհներու վրայ աշխատող «ինչաաթ թապուր»ը:

Անան այդ տեղէն կ'աքորուի Պարբերդ, ուրկէ փախչելով՝ կ'անցնի Տերսիմ, հոնկէ ալ՝ 1916-ին, երբ ուսական բանակը կը գրաւէ Երզնկան, կ'անցնի Երզնկա, հոնկէ ալ Կարին:

Մեր զիւղի ջարդէն օր մը առաջ գիւղը կու գայ Քեաթիպ Միրզան: Գիւղին թուրք աղաները հաւաքելով՝ անոնց կը յայտնէ Ոնուս բերդի մէջ Հաճի Ռաֆ էֆ.ի տունը գումարուած ժողովին որոշումը:

Այս ժողովին որոշումը կ'ըլլայ՝ տեղահանել հայութիւնը եւ տարա-

գրութեան ճանապարհին ջարդել Չարպուհարի չերփղներու զիւղին մօտերը եւ այրել կամ թափել Արածանի մէջ:

Սակայն, ուսուսական բանակի արայ յառաջխաղացման պատճառով, երկրորդ նոր ժողովի մը մէջ կ'որոշուի տեղւոյն վրայ ջարդերը կազմակերպել:

Երկրորդ յարձակման ատեն համիտիէներու եւ քիւրտ խուժանի զօրաւոր խումբ մը զրոհ տուաւ Խանոյի տան վրայ: Խանոյի տղաքը սկսան կրակել օդին մէջ, որովհետեւ համիտիէներուն զարնելէ կը զգուշանային: Յանկարծ խուժանը յարձակեցաւ տան դրան վրայ: Այդ պահուն Հայկապունը քաշեց իր տասնոց ատրճանակը եւ ըսաւ Խանոյի Հասանին.

— Եթէ կ'ուզես, միասին կուրինք, ապա թէ ոչ՝ քաշուիր պատուհանի զիւրքէն, ես կը կուրիմ: Քանի հատ փամփուշտ որ ունիմ, այնչափ մարդ պիտի սպաննեմ:

Եւ պատուհանէն սկսաւ կրակել ու առաջին իսկ զնդակով քիւրտ մը գետին փռեց:

Նոյն պահուն յարձակող քիւրտերէն մին սկսաւ պոռալ. «Փախէ՛ք, հա փախէ՛ք, ջիրբանցիք եկան»: Եկող ջիրբանցիները՝ Հփրու Ռաշոյի եւ Խուլոյի տղաքն էին: Անոնք կու գային մեզի օդնելու:

Ռաշոն ըսաւ հօրս.

— Ես խօսած եմ իմ եւ իմ եղբոր Խուլոյի տղոց, թէ երբ լսեն որ մեր զիւղի վրայ յարձակում տեղի կ'ունենայ, իրենք անմիջապէս օդնութեան հասնին:

Երբ ասոնք զիւղին կը մօտենան, Յակորի տան զիրքերէն մեր տղաքը կրակ կը բանան անոնց վրայ: Խուլոյի տղան՝ Մստոն կը սկսի բարձրաձայն պոռալ՝ ըսելու համար թէ իրենք բարեկամներ են, եկած են մեր Քիրվա Վարժապետին օգնելու (հօրս Վարժապետ անունը կու տային հայերու նման՝ քիւրտերն ալ): Մինչեւ որ զիրար կը հասկնան, Մստոն սրունքէն կը վերաւորուի:

Երբ Խանոյի տունը եկաւ, վէրքը կապեցինք: Քիչ մը հանդարտելէն ետք, սկսաւ գովասանքով խօսիլ մեր տղայոց քաջութեան մասին:

Իրիկնամուտին համիտիէները եւ քիւրտ խուժանը զիւղէն հեռացան: Թուրք աղաները իրիկունը Հաճի աղայի տունը կը հաւաքուին եւ կ'որոշեն, յաջորդ օրը, երբ համիտիէները կրկին յարձակին զիւղին վրայ, իրենք որեւէ զիմադրութիւն պիտի չընեն եւ հայերն ալ իրենց տուներէն դուրս պիտի հանեն ու պիտի չպաշտպանեն զանոնք:

Երբ Խանոյի Հասանը տուն վերադարձաւ, յայտնեց.

— Մենք այլեւս անկարող պիտի ըլլանք ձեզ պաշտպանել: Համիտիէները վաղը նորէն պիտի յարձակին զիւղին վրայ: Վրէժխնդրութեամբ լեցուած են, որովհետեւ իրենցմէ քանի մը հողի սպաննուած են եւ բաւական ալ վիրաւորուածներ կան: Աղէկ կ'ըլլայ որ դուք ձեր զլուխն ազատելու ճար ու ճամբային նայիք:

Այս յայտնութիւնը ընելէն ետք, Խուլոյի տղաքը՝ Մստոն ու Հասանը ըսին հայրիկիս.

— Այս զիւղերն իսկ, մենք ձեզ Հփր կը տանինք:

Մեր բնտանիքին անդամները հաւաքուեցան եւ մենք պատրաստուեցանք ձգելու Խանոյի տունը: Յանկարծ Փարխատինը ներս մտաւ, կանչեց հայրիկս ու Կարապետ Մուրատեանը եւ ըսաւ.

— Մի՛ վստահիք այս քիւրտերուն: Ասոնք ձեզ պիտի տանին իրենց զիւղը եւ հոն բոլորդ ալ պիտի կոտորեն: Եկէ՛ք, ես ձեզ կը տանիմ իմ տունըս, կը պաշտպանեմ, մինչեւ որ արհաւիրքը անցնի: Տեսէ՛ք Հեքիմ Յակորը, ձեր երկու քահանաները՝ Տէր Սողոմոնն ու Տէր Սահակը, պատ. Կարապետ Մելքոնեանը, բոլորն ալ իմ տունս են: Վստահեցէ՛ք ինձի:

Հայրս հաւատք չընծայեց Փարխատինի հաւատարացումներուն եւ մենք քիւրտերուն հետ փախանք սարը: Մեզի հետ եկան նաեւ բողոքականներու հովիւ պատ. Թաղէս Ղուկասեանը եւ մեզի մօտիկ զբացի երկու բնտանիքներ: Մինչեւ զիւղէն դուրս ելանք, մեր թիւը աւելի ստուարացաւ: Երբ Հփր հասանք, համբեցինք որ 90 հողի էինք:

Փարխատինի տունը ապաստանողները երկրորդ օրուան յարձակումին Փարխատինի կողմէն նուաստօրէն յանձնուել էին համիտիէներուն եւ բոլորն ալ զլխատուել էին անոր զրան առջեւ:

Խանոյի տունէն երբ դուրս եկանք, բարակ անձրեւ մը կը մաղուէր: Գիշերուան խաւարը կը թուէր թէ աւելի կը թանձրանար:

Մութին մէջ, փախն հարածական, հասանք զեռափր եւ նախհունէն գետը անցնելով մտանք Քարարլուներու մէջ: Հասարակ ճանապարհէն դուրս՝ փտանդաւոր արահետներով զիւղերը մինչեւ լոյս քալեցինք: Արշալոյսին հասանք Խզը Ահմէտ քրտական զիւղը: Քիւրտերը ուղեցին մեր վրայ յարձակիլ, սակայն, Մստոյի սպաննալիքէն ազդուած հեռացան մեզմէ եւ մենք շարունակեցինք մեր ճամբան:

Երկու շարաթ պահեցին մեզ: Այդ ժամանակամիջոցին պատահամար Հփր հանդիպեցաւ Շէյխ Սայիտ ԿՓ.ն: Քիւրտերը մեզմէ մաս մը զիւղէն դուրս տարին եւ թաքցուցին, մաս մըն ալ գոմի մը մէջ եւ զացին Շէյխին հարցնելու.

— Քանի մը հայեր ապաստանած են մեր քով, ի՞նչ կը հրամայէ Փիրը՝ պահե՞նք թէ սպաննենք:

Շէյխը կը թելադրէ. «Մի սպաննէք, այլ կրօնափոխ ըրէք եւ պահեցէ՛ք»:

Շէյխին մեկնելէն ետք, մեզ հանեցին թաքստոցէն: Եկանք Խուլոյի ախոռի օտան: Խուլոն եւ Ռաշոն յայտնեցին մեզի Շէյխ Սայիտի թելադրութիւնը: Հայրիկս ըսաւ անոնց.

— Մեզի համար մահը աւելի նախընտրելի է, քան հաւատափոխութիւնը: Աւելորդ է այդ մասին խօսիլ: Եւ լաւ կ'ըլլայ, որ մեզ վերադարձնէք մեր զիւղը, քանի որ կ'ըսէք թէ դաշտն ալ խաղաղած է:

Յաջորդ առաւօտուն պատրաստուեցանք վերադառնալ զիւր: Հաւաքուած էինք Խուրդի տան դրան առջեւ, երբ յանկարծ քիւրտերը սկսան հայհոյել իրարու եւ իրարու հետ կոուրիլ, միեւնոյն ատեն պոտոսցին՝ մեզի ալ սպառնալով, թէ մեզ բոլորս պիտի ջարդեն:

Այս անակնկալ սպառնալիքը սարսափի մասնեց մեզ. ամէն վայրկեան կը սպասէինք որ վրանիս յարձակին:

Այդ պահուն մահակ մը ձեռքը, տունէն դուրս եկաւ Խուրդի կինը՝ Քաւէն եւ զայրոյթով պոռաց բոլորին վրայ.

— Ով որ մօտենայ Քիրվա Վարժապետին կամ հայերէն ոեւէ մէկուն, այս մահակով անոր գլուխը կը ջարդեմ:

Ապա կռուողները իրարմէ զատելով՝ բոլորն ալ հանդարտեցուց եւ յետոյ մօտենալով հօրս, լալով ըսաւ.

— Քիրվա Վարժապետ, երկու աչքերս կուրնային, ես քեզ այս վիճակի մէջ չտեսնէի:

Այդ օրը Խանոյի երկու տղաքը Հղեր եկան: Անոնց եւ Հասանի ու Մըստոյի հետ մենք զիշերով Հղերէն վերադարձանք մեր գիւղը:

Խանոյի Հասանը պատմեց մեզի մեր գիւղի երկրորդ օրուան կռիւներու մասին: Նախ՝ ըսաւ, որ Պարխատինը նամարտութիւն էր րբա՞ծ եւ իր տունը ապաստանած բոլոր հայերը ջարդել տուած էր: Յետոյ պատմեց.

«Համիտիէները երկրորդ օրը շատ մեծ ուժով յարձակեցան գիւղին վրայ: Յակոբին տունը դիւրք բռնած ձեր հայ Փետայինները կանոնաւոր ասկարի պէս կը կռուէին: Համիտիէները չէին կրնար անոնց դիւրքին մօտենալ: Խչէ Աւոյի Մեսրոն կը հայհոյէր համիտիէներուն եւ ով որ դիւրքէն դուրս դար, դետին կը գլորցնէր: Աւելի քան 10 համիտիէներ սպաննուեցան: Անոնց հետ նաեւ Քեաթիպ Միրզան սպաննուեցաւ: Կռիւը շարունակուեցաւ մինչեւ իրիկուն: Անկարելի եղաւ գրաւել Յակոբի տունը:

«Երբ մթնեց, համիտիէները վերցուցին իրենցմէ սպաննուածներն ու վերաւորուածները եւ հեռացան գիւղէն:

«Պարխատինն ու Հաճի աղայի տղան Շարիֆը Քեաթիպ Միրզայի մարմինը տարին Բերդ: Մենք բնաւ չմօտեցանք Յակոբի տան եւ կռիւին ալ չմասնակցեցանք»:

Ջարդէն վերապրողները կառավարութիւնը հաւաքեց, այր մարդիկը խումբ-խումբ զրկեց Կարին-Մամախաթուն՝ ճանապարհաչիտութեան տաժանակիր աշխատանքին:

Ենիքէօյ թրքական գիւղի մօտերը աշխատած ատեն, մեր թապուրին մէջ բերուեցան Միրզօ Սեդոն եւ Խասօ Մարգսի Ալոն, որոնք խումբի հետ էին կռիւի առաջին օրէն մինչեւ Խոյլուայ աւերակ ջաղացի վերջին կռիւին եղբորական վախճանը: Իրենք հրաշքով ազատած էին եւ հետեւաբար պատմեցին մեզի.

«Ջարդին երկրորդ օրը երբ գիւղին վրայ նորէն յարձակեցան, այնպէս կը թուէր թէ ամբողջ Խոյլուայ քիւրտերը եւ համիտիէները հաւաքուած ե-

կած էին: Ամբողջ օրը կռուեցանք: Մեզմէ միայն երկու հոգի թեթեւ վերաւորուեցան: Թշնամին շատ կորուստ ունեցաւ: Մենք կ'ենթադրէինք թէ հարիւրներով անոնցմէ սպաննուեցան: Իրիկուան մութին թշնամին գիւղէն քաշուեցաւ, մենք ալ Յակոբի տունը լքեցինք եւ գացինք Տէրտրոջ ջաղացքը: Այնտեղ ծառերու եւ մացառներու «բուլբու» ու մէջ թաքնուեցանք:

«Յաջորդ օրը նորէն գիւղի վրայ յարձակեցան: Թշնամին, նկատելով որ մեր դիւրքերը լքուած էին, համապարկով մը յարձակեցաւ Յակոբի տան վրայ, ներս մտաւ եւ սկսաւ թալանի: Կէսօրուան մօտ թշնամին գիւղէն հեռացաւ:

«Մենք մեր թարսոսցներուն մէջ քանի մը օր աննկատ մնացինք: Օրին մէկն ալ, վերջապէս պահուն, նկատեցինք որ Գուռնովներու ճամբայէն կարաւան մը կ'անցնէր ժանտարմայի մը ընկերակցութեամբ: Յանկարծակի թերելով, բռնեցինք ժանտարման ու իրեն ընկերացողները եւ բոլորն ալ ըսպաննեցինք: Կարաւանի բռնեցէն մեզի համար պաշար վերցուցինք ու գիւղերով գացինք Խոյլու, որ այդ գծով փորձէինք անցնիլ Բասենի ճակատէն ռուսական սահմանը:

«Երբ Խոյլու հասանք, բարձրացանք սարը եւ մտանք անտառը: Հոս ճամբանիս կորսնցուցինք: Գիշերները կը քալէինք, ցերեկները կը հանգչէինք: Այսպէս քանի մը օր թափառելով՝ պաշարնիս հատաւ: Նոր պաշար ճարելու մասին կը խօսէինք ու կը քալէինք, երբ անակնկալօրէն անտառէն դուրս ելանք եւ նկատեցինք որ Խոյլուայ մօտերն ենք: Իջանք Հաճի Գուպի պաղջայի մօտերը եւ մտանք կիսուեր ջաղացքը՝ հանդէսը եւ պաշարի պատրաստութիւն տեսնելու համար:

«Երկրորդ օրն էր: Առաւօտեան քիւրտ մուհաճիք մը պարկ մը ցորեն շալկած՝ կու գար գէղի ջաղացք: Առանց մեզ նկատելու՝ մտաւ ներս: Բռնեցինք քիւրտը: Սարսափահար՝ ան խնդրեց որ չսպաննենք զինք: Պարկի ցորենը զրաւեցինք եւ քիւրտը քովերնիս պահեցինք:

«Կէսօր կ'ըլլար, երբ քիւրտին կինը եկաւ ամուսնոյն կտուէն: Յանկարծ մեզ նկատելով՝ սարսափահար պոռալով փախաւ: Քիւրտը մեզմէ խնդրեց որ թողունք զինք երթայ ու կնոջը հասնի եւ չթողու որ երթայ մեզ մօտնէ: Քիւրտը ազատ թողուլ կամ չթողուլ երկար վիճարանութենէ ետք, թոյլ տուինք որ ան երթայ: Քիւրտին մեկնումէն ետք, պատրաստուեցանք դիմադրուել հաւանական յարձակումը: Հայիւ թէ ժամ մը անցած էր, հազարաւոր համիտիէներ պաշարեցին ջաղացքը չորս կողմէն եւ բարձրաձայն աղաղակելով ու հայհոյելով, սկսան կրակել:

«Մեր խումբը 40 հոգիէ կը բաղկանար երբ Յակոբի տունը թողուցինք: Օրէ օր, սակայն, նոր փախստականներ կը միանային մեզի եւ Խոյլուայ ջաղացի կռիւին ատեն մեր թիւը 60-ի կը հասնէր արդէն: Իսկ մենք ունէինք միայն 15 հրացան՝ առատ փամփուշտով, քանի մը հատ ալ ատրճանակներ, նաեւ քանի մը սարուած հրացաններ՝ ստուարաթիւ թշնամիին դէմ:

«24 ժամ անընդհատ կռուեցանք: Գիշերուան մութին յուսահատական փորձ մը ըրինք թշնամիին շղթան ճեղքելու եւ լեռը բարձրանալու: Փորձը

անյաջող անցաւ եւ մեզմէ տասը զոհեր խլեց : Մեր փամփուշտները սպառելու մօտ էին :

«Առաւօտեան համիտիէները անձնատուութիւն առաջարկեցին : Երդումով պայման դրին որ մեզ Խնուս բերդ պիտի տանին՝ կառավարութեան յանձնելու : Պայման էր նաեւ որ Զապթիա Միսակը, Մեսրոն եւ Գարեգինը զինուած պիտի ընկերանային մեզի, իսկ միւսները զէնքերը պիտի յանձնէին իրենց :

«Մենք երկուքս՝ Սեդոն ու Արոն, ջաղացքի ջրամբարին մէջ թաքնուելով, հրաշքով մը ազատեցանք : Իրիկուան մութին, երբ խոր լուսիւն տիրած էր, մենք դուրս ելանք մեր թաքստոցէն եւ մեր նահատակ ընկերներու յօշոտուած դիակները արցունքով օծելով՝ թողինք ու փախանք : Գացինք Բերդ : Հոն մեզ ձերբակալեցին եւ զրկեցին էրզրում, հոնկէ ալ հոս՝ «խնշաթ թապուրի»ն :

«Պամուր բերդի քրտական Հզեր գիւղէն, ուր ապաստանած էինք, մեր գիւղը վերադառնալէն օր մը ետք, ժանտարմաները ձերբակալեցին մեզ եւ քշեցին Խնուս բերդ : Հոս գինուորական տարիք ունեցող այլ մարդիկը զատեցին իրենց ընտանիքներէն եւ բանտարկեցին :

«Բանտը լեցուն էր մեզի նման բանտարկեալներով : Ծարաթ մը բանտ մնալէ ետք, մօտաւորապէս 400 հոգիէ բաղկացեալ խումբ մը կազմեցին եւ մեզ հանեցին բանտէն ու տարին հայոց եկեղեցին : Գիւշեր մը հոս մնացինք : Միւս օրը մեզ քշեցին էրզրում ու անկէ ալ Երզնկա—Մամախաթունի ճանապարհներուն վրայ, տաժանակիր աշխատանքի» :

**ԽՆՈՒՍԻ  
ՏԵՂԱՀԱՆՈՒԹԻՒՆԸ**

1915 Մայիս 10-ին, համիտիէները եւ քիւրտ խուժանը, Խնուսի դաշտի հայկական գիւղերը ամբողջապէս ջարդելէ ու թալանելէ ետք, վերջին անգամ փորձեցին նաեւ յարձակիլ Խնուս բերդաքաղաքին վրայ, ուր կը նստէր կառավարութիւնը : Սակայն, կառավարական պաշտօնէութիւնը եւ Խնուս բերդի պէյերն ու ազաները, Բերդի հայոց ստացուածքները համիտիէներուն եւ քիւրտ խուժանին կեր չընելու միակ մտահոգութենէն զրդուած, արդիւեցին անոնց քաղաք մտնել :

Այս փորձէն ետք, սակայն կառավարութիւնը սիստեմաթիկ կերպով ինք կողոպտեց Բերդի հայութիւնը եւ դաշտի գիւղերու կոտորածներէն ճողորած եւ Բերդ հաւաքուած հայերը, ապա բոլորն ալ տեղահանեց : Տեղահանութիւնը արդարացիելու համար, մունետիկ կանչել տուաւ, յայտարարելով թէ՛ Բարձրագոյն Դրան հրամանով հայերը պիտի ուղարկուին Վերան Եւհիր՝ ապահովութեան համար և թէ՛ ճանապարհին ժանտարմաները զանոնք պիտի պաշտպանեն :

Տեղահանուած կարաւանին ընկերացուցած էին առաջնորդ Արզար վարդապետ Եօթնեղբայրեան եւ հանրածանօթ հայ ընտանիքներ : Սակայն,

կարաւանը երբ կը հասնի Վարդոյի շրջանը, քրտական Բաղկան եւ չէրքէզ Զարդուհօր գիւղերու սահմաններուն վրայ, Զրու ու Զաթ բուած կիրճին մէջ, Արածանիի ափին, կ'ենթարկուի յարձակման այդ շրջանի քիւրտերէն, կարաւանին ընկերացող ժանտարմաներէն ու չէթէներէն եւ սոսկալի կերպով կը ջարդուի :

Այս կարաւանին մէջ եղած էին անհատներ, որոնք հերոսաբար կոռուած էին թշնամիին դէմ ինչով որ կրցած էին : Անոնցմէ մէկը եղած էր բերդեցի հնակարկատ Մոճի-Կարոն, որ իր հերիւնով սպաննած էր երկու քիւրտ եւ անոնց դիակներուն կառչած գլորուած էր Արածանիի ալիքներուն մէջ :

Կր պատմէին որ Բերդէն խումբ մը գինուած երիտասարդներ, Եղիշէ Սիմոնեանի (Ալթիրարմազ) ղեկավարութեամբ, Բերդի ձորաբերանի քարանձաւներուն մէջ օրերով հերոսական կռիւ էին մղած թշնամիին դէմ եւ ինկած էին բազմաթիւ զոհեր խլելէ ետք :

Անուանական պաշտպանութեան համար կարաւանին ընկերացող ժանտարմաներու հետ կ'ըլլայ նաեւ փոլիս Արամը՝ Բերդի հանրածանօթ Մալխասեան Յովան էֆէնտիի տղան, տեղահանուած կարաւանի վերջին մնա-



Խնուսբերդեցի Սաֆամ Տիրացեանը եւ իր որդին՝ Արշակը : Զարդէն փրկուած՝ կը գտնուին Լեւինական (Խ. Հայաստան)



ցորդներուն հետ: Խնուս բերդէն զրեթէ ժամուան մը ճամբայ հետու Միւսէյիտ քրտական զիւղին հասած պահուն, Արամ կը նկատէ որ ժանտարմաները կասկածանքով կը հետեւին իրեն: Ինքն ալ կը սկսի կասկածիլ անոնց վրայ, մանաւանդ որ քիւրտերու կողմէ երբ մասնակի յարձակումներ կ'ըլլային կարաւանին վրայ, ժանտարմաները մեղմացուցիչ բացատրութիւններ կու տային:

Արամ այդ երեւոյթներէն հիասթափուած, կը դատուի կարաւանէն եւ իր ընտանիքին հետ կ'ուզէ վերադառնալ Խնուս բերդ: Միեւնոյն պահուն Արամին ծանօթ շուշարցի քիւրտ մը կը մօտենայ իրեն եւ թուզթ մը յանձնելով, կ'ըսէ.

— Ծահմուրատի Սեղրակը քեզի բարեւ զրկեց եւ ըսաւ որ այս թուզթը քեզի տամ եւ ըսեմ թէ Սեղրակ աղան կ'ըսէ՝ մենք կրակի մէջ ենք:

Ժանտարմաները կը մօտենան Արամին ու կ'ազդարարեն որ կարաւանէն չդատուի: Արամը սակայն, իր ընտանիքին հետ կը դատուի կարաւանէն, անմիջապէս դիւրք կը բռնէ եւ կը սկսի կռուիլ: Բայց երբ կը պաշարուի թըշնամիէն, այդ յուսահատական պահուն իր սիրելիները թշնամիին դադանային արարքներուն շատնելու սահմոկեցուցիչ մտախառնութենէն, նախ կը սպաննէ իր կիներ եւ դաւակները, կը վիրաւորէ հարազատ մայրը եւ քանի մը ժանտարմաներ ալ սպաննելով, կը հեռանայ կարաւանէն եւ կ'անյայտանայ մերձակայ անտառին մէջ:

Այս դէպքէն ետք, Արամը ամիսներով կը թափառի սարերը, կը թաքնուի քարայրներու մէջ, քանի մը անգամ կռիւներ կ'ունենայ եւ սակայն, ամէն անգամին ալ կ'ազատի: Անգամ մը վիրաւոր վիճակով կ'ապաստանի բերդեցի ծանօթ թուրքի մը տունը: Թուրքը կը խնամէ զինք մինչեւ որ վերջը կը լաւանայ: Անկէ ետք Արամ դարձեալ կը թաքնուի Նորելածի քարայրները եւ կ'ազատուի, երբ նոյն տարուան ձմրան ուսական բանակը կը գրաւէ Խնուս բերդը:

Թրքական գեհնէն ազատուելով, Արամ կ'երթայ Երեւան: Հայաստանի Հանրապետութեան օրերուն կը հաստատուի հոն: Սակայն, ի վերջոյ, Հայաստանի մէջ պոլշեիկական մողոքին քառութեան նոխալ կը դառնայ...

Չորու թաղէն որմապիւր Օսոյի եզրայրը՝ էլիկ եւ իր 6 բնկերները իրենց տան մէջ զիւրք կը բռնեն եւ կը կռուին: Կռիւը օրերով կը շարունակուի: Թուրքերը բաւական զոհեր տալէ ետք, կ'որոշեն տունը կրակի տալ: Էլիկ եւ բնկերները կը քաշուին իրենց տան մօտիկ ստորերկրեայ այն անցքը, որ ձորէն դէպի Պաղլա հին բերդի հետ յարաբերութեան զաղտնի ճանապարհ էր: Ի վերջոյ կ'ազատուին:

Խնուս բերդի հայոց տեղահանութեամբ եւ աքսորով կ'ամբողջանար Խնուս գաւառի հայութեան բնաջնջումը եւ աւերակ ու ամայի կը դառնար զարերով շէն ու պայծառ Խնուսը: Իր 25000 հայութենէն հազիւ կ'ազատուէին քանի մը հազար հողի, որոնցմէ հարիւրաւոր երիտասարդներ ուսական դրաւուած գօտին կը մտնեն ու անմիջապէս կը միանան հայ կամաւորական խումբերուն:

## ԳԼՈՒԽ ԺԲ.

### ՔԻԻՐՏԵՐԸ

Դարերով հայ եւ քիւրտ ժողովուրդները ապրած են նոյն հողին վրայ, նոյն երկնակամարին տակ, նոյն արեւին եւ աստղերուն ներքեւ: Եւ զարերով փոխն ի փոխ, հայոց եւ քիւրտերու վրայ գերիշխող պետութիւնները եղած են՝ մահմետական պարսիկը, արաբը, տաճիկ օսմանցին:

Օսմանեան պետութեան տիրապետութեան շրջանին, քիւրտը ծանօթ էր իր ընդհանուր դիժերով, որպէս սղէտ, անդրապէտ, կիսավայրենի, դող, աւազակ եւ մարդասպան, ու նաեւ ռազմասէր:

Քիւրտը ինքզինք կ'անուանէ իր լեզուով՝ կուրմանն, եւ հպարտութեամբ կը դաւանի, թէ սերած է արիական ցեղէն, եւ մնացորդն է արեւելքի հզօր պետութեան մը, զոր պատմարաններէն ոմանք կ'ընդունին մարաց ազգը: Կ'ընդունին թէ ցեղակից են հայոց, եւ թէ դարեր շարունակ զրացի: Կուրմանն քիւրտը իր լեզուով՝ կուրմաններէնով հայը կ'անուանէ Փլլահ: Գլըլպաշ, չարեկցի կամ զաղա քիւրտը, իր բարբառով հայը կ'անուանէ հարմենու: Քիւրտը ընդունած է, եւ ղեռ կ'ընդունի, թէ քիւրտերու եւ հայերու անջատումն ու թշնամութիւնները, ժամանակ առ ժամանակ, անողոք բախտի բերումով տեղի ունեցած են: Որ դարերու ընթացքին, իրենց եւ հայոց տիրապետող ազգերը, դիտումնաւոր կերպով թշնամանք սերմանած եւ յարուցած են իլանց եւ հայոց միջեւ, անջրպետ խորացնելով, նոյնիսկ մահացու թշնամիներ զարձուցած միմիանց, առաւելապէս թրքական գերիշխանութեան շրջաններուն: Ծանօթ իրողութիւն է, որ 1890-ին, Սուլթան Ապտիւլ Համիտ, իր անունով, քիւրտերէն կազմեց մասնաւոր բանակ, եւ անուանեց Համիտիկ Ալայի: Անոնց համար յատուկ դինուորական վարժարան բանալ տալով Կ. Պոլսոյ մէջ Ջատակէն Ջապիթէ Մէքրէպի եւ մարզելով ու զինուորական աստիճաններ պարզելով, դիտումնաւոր ատելութիւն եւ հալածանք հրահրեց հայկական վիլայէթներու մէջ ապրող հոծ հայութեան հանդէպ:

Ռազմասէր եւ անհանդարտ նկարագիրով քիւրտը, հայուն հետ եղած է թէ՛ բարեկամ եւ թէ՛ թշնամի: Աշիրաթական կռիւներուն, այն աշիրաթա-

*Handwritten notes and signatures on the right margin.*



Շէյխ Սայիտ, Խնուսի Խոյիասար գիւղէն: 1925-ին կախազան հանուած էլ-Ազարա. քրտական ապստամբութեան պետն էր:

պետը կամ ազան, որ իր ծառայողներուն (խուլամ) մէջ հայեր ունենար, շատ յաճախ կռիւին յաղթանակը հոն կը մնար: Այս իրողութիւնը քերտը շատ լաւ գիտէր եւ կը փնտռէր հայուն մարտականութենէն օգտուել:

Օսմանեան տիրապետութեան շրջանին, ըմբոստ եւ կիտանկախ քերտը երբեմն այնքան հզօր եղած է, որ սարսափեցուցած է օսմանցիին սուլթանը: Այս հզօրութեան ի տես, թուրք նենդամիա կատարութիւնը, փոխած է իր գործելակերպը, աշիրէթը աշիրէթի դէմ հանելով, աշիրէթը հայուն դէմ հանելով, եւ օգտուողը կ'ըլլար ինք՝ թուրքը:

Ժամանակ առ ժամանակ, թուրքը հանած է նաեւ հայը քերտին դէմ: Եղած է ատեն, որ հայը թուրքին հետ բարեկամանալով, կռուած է նուաճելու համար քերտը: 1832-էն մինչեւ 1847 թուականները, վանեցի հայը դիւրացուց նուաճումը Բէվանտուլի եւ Հէքթարի քերտերուն. իսկ զէյթունցի հայը թուրքին օժանդակելով նուաճեց Ալպլուսթանի քերտերը:

Քերտը ինքն իր մէջ անմիաբան է, բաժնուած բազմաթիւ աշիրէթներու եւ աղանդներու: Կուրմանճ քերտը մահմետական է, կը բաժնուի քանի մը աղանդներու՝ սիւննի եւ շիի: Իսլամական դաւանութեամբ սիւննիները կը բաժնուին՝ հանէֆի եւ շաֆէի: Կրօնապետը կամ շէյխը մեծ ազդեցութիւն ունի ժողովուրդին վրայ, եւ առաւելագէտ աստուք եղած են հայոց հանդէպ թշնամութիւններ յարուցանողները, ու դարձեալ խաղաղութիւն եւ բարե-

կամութիւն վերահաստատողները: Հասարակ ժողովուրդին նուիրական երգումը շէյխին անունով էր: Այդպէս կ'երգուէին Խնուսի եւ շրջանի քերտերը, իրենց շէյխին՝ շէյխ Սայիտի անունով, ինչպէս նաեւ Խոմշու շէյխերուն անուններով:

\*\*\*

**ՔԻՒՐՏ ԱՇԻՐԷԹՆԵՐ.**— Հասանացիներ, գիլանցիներ, հայտարանցիներ, ջիպրանցիներ, զըրբցիներ, բըլբցիներ, մօսկանցիներ:

**ՀԱՍԱՆԱՆՑԻՆԵՐՈՒ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԸ.**— Ըմբռնիչ, շաւշուներ, ֆարգներ, աւէտներ, Փիգիանցիներ, շէշիկցիներ, մամլկանցիներ, սայտանցիներ:

**ՍԱՅՏԱՆՑԻՆԵՐԸ** կ'ապրէին Խնուսի եւ Մանազկերտի շրջանները: Ասոնց ցեղապետներն էին Ըղախ, Տաթէն, Միրզի Մհէն, Ռաշիտ, Պապա, Իւսուֆ, Թամտին: Այս ցեղապետներէն սմանք համիտիէի գունդերուն միացած էին, իսկ աւելի հարուստ եւ զօրաւոր աղաները չէին միացած:

**ՀԱՅՏԱՐԱՆՑԻՆԵՐ** — Այս աշիրէթը միացած էր համիտիէի գունդերուն: Իրենց պետն էր Թամր աղայի տղան՝ Քէօն Հիւսէյն փաշան, եւ իր հօրեղբոր՝ Հասան աղայի տղան՝ Էմիր փաշան: Քէօն Հիւսէյն փաշան, որ ժամանակին, 1877 թուին, Արճէշի Արճօնից վանքին գառնարածն է եղած, 1890-ին, համիտիէներու կազմակերպութեան ատեն, կը նշանակուի համիտիէի գայմազամ, եւ հայերը կողոպտելով կը հարստանայ եւ կը դառնայ փաշա: Եւ որպէսզի իր ազդեցութիւնը աւելի մեծնայ, խորամանկութեամբ տարածանել կու տայ, թէ երազ տեսած է, երազին մէջ Մուհամէտ մարգարէն երեւցած է իրեն եւ ըսած, որ իմ հրամանով, դուն եւ թրքական Դ. զօրաբանակի հրամանատար՝ Երզնկա բանակաւորող Ձէքի փաշային կինը քոյր եւ եղբայր պիտի ըլլաք: Քէօն Հիւսէյն փաշան Մարգարէին կամքը կատարելու համար, լուր կը դրկէ Ձէքի փաշային, թէ եթէ արտօնէ, պիտի դայ երազը պատմելու, եւ ճամբայ կ'իյնայ Բաղնոցէն դէպի Երզնկա: Միեւնոյն ատեն Ձէքի փաշային կնոջ նուիրելու համար՝ հետը կ'առնէ 50 ոսկի բէշի-բիրիկ: Երզնկա հասնելով, կը ներկայանայ Ձէքի փաշային եւ կնոջը, եւ կը պատմէ երազը, եւ այդ բարբառստիկ առիթով, 50 ոսկի բէշի-բիրիկները կ'ընծայարբէրէ փաշային կնոջ, կը դառնայ մտերիմ բարեկամը Ձէքի փաշային, եւ կը վայելէ անոր պաշտպանութիւնը:

**ՁԻԲՐԱՆՑԻՆԵՐՈՒ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԸ** — Մախսուտներ, իըտոյեմի, տարպոյեմի, փէզիներ, բըլբցիներ, արապոներ, գապաշոներ:

Այս ցեղախումբը հաստատուած էր Խնուսի Խամուր բերդ լեռան լանջերուն եւ կը տարածուէր մինչեւ Պուլանուխ եւ Վարդօ:

**ՉԸԲԸՔՅԻՆՆԵՐ** — Այս ցեղախումբը դադարած է Հաղոյի շրջանին եւ Հաստատուած Խնուսի գաւառին պատկանող՝ Կէօքու, Թաղման եւ Զեռնա-կի շրջաններուն մէջ: Վայրազ ցեղախումբ մըն էին: Իրենց պետերը, Թաղ-մանի շրջանը՝ Սէօյլէմէյ գիւղը բնակող Խուլի Խան բէկը՝ Համխտիէի հազա-րապետ, եւ իր տղան Մոսոն, իրենց 7-800 ձիաւոր խուլամներով պատուհաս էին հայութեան: Սէլիմ բէկ, Սատին, Ազմային եւ Զնդին իրենց 5-600 խու-լամներով, Շահօ Նալլան իր խուլամներով: Կէօքուի շրջանը բնակող Տալ-տան բէկը բացառարար եղած է հայտակար եւ մօտիկ բարեկամ էր դրուածի հայ համբաւաւոր Բաստրմաճեան ընտանիքին:

Հայոց բարեկամ էր նաեւ, Մշոյ մութասարիՓ՝ Պահրի փաշայի ազ-գական Սայիտ պէյը, որ կը բնակէր Տուման հայաբնակ գիւղը, եւ ինք էր որ օգնած էր Յորկնոցայ Նալֆա Սարկաւազին, երբ թուրք կառավարութիւնը կը հալածէր Սարկաւազը:

Քոչուոր քիւրտերը, որոնք մնայուն բնակութեան վարժուած չէին, միշտ տեղէ տեղ թափառելով եղանակին համաձայն վրանարնակ կ'ապրէին. քրտական բառով ուլուս էին: Բնորոշելու համար ըստուած է. — Ի քանապար-հի ծնանին, ի քանապարհի սնանին, ի քանապարհի մեռանին:

**ՇԱՏԻԱՆՅԻՆՆԵՐ** — Ասոնք առհասարակ խաղաղ ցեղախումբեր էին, երկրագործութեամբ եւ խաչնարածութեամբ զբաղող:

**ԳԶԸԼՊԱՇ** կամ **ԶԱՐԵԿՅԻՆՆԵՐ** — Ասոնք կ'ապրէին Խնուս գաւառին պատկանող Շուշարի շրջանը, եւ կը տարածուէին մինչեւ Վարդօ, իսկ միւս կողմէն մինչեւ Դերջան եւ Դէրսիմ (Դէրսիմ իրենց կեդրոնն էր, ուր կը գտնուէր իրենց ղեկավարը): Ասոնց ղաւանութիւնը սակաւածանօթ է. թէ՛ Քրիստոսի եւ թէ՛ Մահմէտի պաշտամունք կը կատարեն միասին: Կը պատ-Քրիստոսի եւ թէ՛ Մահմէտի պաշտամունք կը կատարեն միասին: Կը պատ-թիւն ուեն Ալի Շիկահները, կը մկրտեն տղաքն ու կը թրփատեն: Հաղորդութիւն ուենին, կանայք անքօղ կը շրջին: Շատ անգամ թերախ Սուտերան կը կոչեն զիրենք, այսինքն «կրակը մարող», իբր այն թէ՛ գիշերային տօնակատարու-թիւններ կը կատարեն, ուր կը տիրէ ծայրայեղ անառակութիւն: Եկեղեցի կ'երթան, քրիստոնէական անուններ կը դնեն: Բազմակին են, կանանց փո-փոխութիւնը սովորական: Միւսրան կ'երթան ուխտի միեւնոյն գերեզմանոց, հայք եւ քուրդք, միեւնոյն նուիրական աղբերաց եւ նոյն օրինակ կը թողուն այն տեղերն ի նշան բարեպաշտութեան զգեստեղինաց կտորներ: Ամէնքն ալ շան տեղերն ի նշան բարեպաշտութեան զգեստեղինաց կտորներ: Ամէնքն ալ շան ծանր հիւանդութեան ժամանակ, մեծ հաւատք ունին Սէյիտի (մոլլա) չանթը ծանր հիւանդութեան ժամանակ, մեծ հաւատք ունին Սէյիտի (մոլլա) չանթը ջրոց մէջ եռացնելով առնուած ըմպելիին (մտպուխին): Գէորդ Փիտոն իր «Ուղեւորութիւն ի Փոքր Ասիա» գիրքին մէջ տուած է այս տեղեկութիւնը:

Ալիական են. թէեւ կը հաւատան Յիսուսի եւ Մովսէսի, Իսա եւ Մու-սա փէյղամպարներ անուանելով: Ալեւիները կը հաւատան հետեւեալ աւան-դութեան. — Երբ Մուհամմէտ մարդարէն կ'իմանայ որ ալեւի աղանդին մէջ մանուկ մը ծնած է, եւ օր աւուր անոր անունը ժողովուրդին մէջ կը տա-

րածուի, եւ տեսնելով որ, եթէ ան մեծնայ, իրմէ աւելի ժողովուրդականու-թիւն պիտի վայելէ, կը հրամայէ սրէ անցնել այդ շրջանի ալեւիներու երե-խաները: Երբ այդ հրամանը կը կատարուի, լուր կը տարածուի, որ Ալին հայ քահանայի մը տունը պահուած է, եւ ողջ է: Կ'երթան հայ քահանային եւ կը պահանջեն որ Ալին իրենց տայ: Քահանան կ'ուրանայ, եւ կ'ըսէ. «Ես երեք գաւակ ունիմ, երեքն ալ ձեզի մատաղ, բայց Ալիէն ես լուր չունիմ»: Քահանային երեք ղաւակներուն ղլուխները կը կտրեն եւ կը տանին: Քահա-նան իր երեք տղոց ղլուխները կու տայ, բայց Ալին չի յանձներ: Յետոյ քա-հանան Ալին կը փախցնէ ուրիշ երկիր մը:

Ալին կը մեծնայ, կ'ամուսնանայ, երախաներու եւ թոռներու տէր կ'ըլ-լայ, եւ կը կտակէ. «Որտեղ որ ալ պատահիմք հայերուն, պաշտպանեմք զա-նոնք, ապաստան տանք, նոյն իսկ մեր ընտանիքներուն ծոցը ընդունիմք: Այս կտակը չյարգողը յախտեմակաւորութեան մէջ Ալիին երեսը տեսնելու պիտի չարժանանայ»:

Իրենց կրօնապետը կ'անուանեն տէտէ կամ սէյիտ, որ մեծ ժողովը-դականութիւն ունի: Սէյիտները գիտեն երգել, քարոզել եւ փող կամ սրինգ նուագել: Սէյիտութիւնը ժառանգական է: Ժողովուրդին համար սէյիտը իր ամենաթանկալին հիւրն է: Հայ կղերին հանդէպ եւս մեծ յարգանք ունին: Կիները այր մարդոցմէ երեսները չեն ծածկեր: Սմորի վրայ խաչ կը դնեն: Ս. Սարգիսի տօնը, իրենց մեծաւոյն տօնն է: Հայոց հանդէպ բարեկամական վերաբերում ունին, եւ այդ երեւոյթը ցոյց տուին 1915-ի ընդհանուր հայ-կական տեղահանութեան եւ ջարդի օրերուն, Շուշարի եւ Տէրսիմի քիւրտե-րը:

Գլըպաշ քիւրտերուն լեզուն կուրմաննի լեզուէն տարբեր է, թէեւ կուրմաննի ալ կը խօսին: Տարբերութեան օրինակ մը: Կուրմաննի լեզուով կ'ըսուի. — Ուարայ ունէ, նան պուխօ: Քուտա քէոի, չի' հըյէ, չի' քուննէ: Եկուր նստէ, հաց կեր: Ո՛ւր կ'երթաս, ի՞նչ կայ, ի՞նչ չկայ: Գլըպաշը կ'ըսէ. Պէյթա ուշէ, նան պօրէ: Քո քըուայի էնօ, չի' էսթօ, չի' չընօ:

1916-ին, Պարբերդէն փախած եւ ապաստանած էի Տէրսիմ, Աղզոնիկ գիւղը: Եւ հոն մնացի Յունիս եւ Յուլիս ամիսներուն: Գիւղը ունէր կիսաւեր դարաւոր հայկական եկեղեցի մը, ուր կը բնակէինք քանի մը խնուսցի, մէկ վանեցի եւ մէկ պիթլիպի երիտասարդներ: Գիւղին տէրը, Կանկօ Չատէ Մահմէտ աղան մեծ ժողովրդականութիւն կը վայելէր: Բարեացակամ գրա-նուած էր ջարդերէն մազապուրծ ազատած հայերուն՝ ապաստանարան տա-լու իր գիւղին մէջ: Որքան ալ որ այս իրողութիւնը փրկապիտոյ տեղի ունե-ցած էր (քանի որ Պարբերդէն Դէրսիմ հայոց փախուստը դիւրացնելու հա-մար քիւրտերը որոշ դուրս կը ստանային), սակայն, կարեւորը այն էր, որ դրամը ստանալով իրենց յանձնառութիւնը կը կատարէին: Շատ դիւրին էր, դրամը ստանալէն ետք, իրենց պաշտպանութեան ապաւինած հայերը Դէրսի-մի լեռները տանիլ եւ անհետացնել: Բայց տէրսիմցի քիւրտը այդպէս չըրաւ. պահեց իր խոստումը. պահեց եւ պաշտպանեց իրեն ապաւինող հայը: Տէր-



Նզիշէ Յ. Մեկիքեան, Տերսիսի քրտական տարագոյ (1917, Կարին) :

սիմցի քիւրտին զէպի հայը ունեցած բարեկամական վերաբերումին մէկ երեւոյթը պատմեմ : Օր մը, Մահմէտ աղան զիս կանչեց եւ ըսաւ. «Լսած եմ, որ դուն հարբերդ եղած ատեն, Ամերիկեան հիւանդանոցի մէջ աշխատած ես, եւ բժշկութիւն գիտես» : Բացատրեցի, որ հիւանդանոցին մէջ վիրակապութիւն ըրած եմ, ասկէ տարբեր տեղեկութիւն թիւրիմացութիւն է : Աւելցուցուց որ, ըսին թէ հետզ զեզ ունիս : Երբ ընտրեցին Տէրսիս կը փախէինք, հետո ունէի վիրակապ, եւ փոքր սրուակ մը քիմիկչըր այտոսին :

Կանչեւ եմ, որ կոնակիս ցաւին զեզ մը ընես, եւ աւելցուց՝ ես հարմէնիներու վրայ վստահութիւն ունիմ, եւ պատմեց հետեւեալը : Ես երբ երիտասարդ էի, կարաւաններ կը զարնէի : Անկամ մը ոռմի (թուրք) ասկեարը մեզ բռնելու համար կռիւի եկաւ : Իրենց ուժը շատ էր, ընկերներէս քանի մը հոգի սպաննուեցան, ես ալ վիրաւորուած էի, բռնեցին եւ տարին Էրզրում : Բանտարկեցին Էրզրումի տաշխանը, 25 տարի բանտարկութեան վճիռով : Հազիւ տարի մը անցած էր բանտարկութենէս, երբ բանտին մէջ բանտարկեալ հայեր ինծի օգնեցին եւ բանտէն փախցուցին : Երբ ազատեցայ, Ալիի զլխով երզում ըրի, որ հարմէնիներուն բարեկամ պիտի ըլլամ, եւ որեւէ

ատեն երբ կրնամ օգնեմ իրենց : Ետտ տարիներ անցեր են, ես չեմ մոռցած իմ երզումս, եւ ասա կ'օգնեմ հայերուն, բոլորդ պաշտպանելով :

... Հիմա կոնակիս ցաւին զեզ մը ըրէ :

Մահմէտ աղայէն խնդրեցի որ կոնակը մերկացնէ, վրան զեզ զնելու համար : Կոնակը նախ թեթեւ շփումով, հետոհետէ արագացնելով շփումը, երբ մարմինը տաքցած էր, վրան բամպակով քիմիկչըր այտոսին քսեցի : Եփումին եւ ալքոհոլին ազդեցութիւնը ցաւին մեղմացում բերած էին : Մահմէտ աղային ըսի որ, այս զեզը կոնակը պիտի կարմրցնէ, արիւնի զոյն պիտի առնէ, բայց վախճալու բան մը չկայ : Իմ «բժշկութիւնս» օգնած էր Մահմէտ աղային կոնակի ցաւին : Մահմէտ աղան օգնած էր հայերուն լեռնակուտակ ցաւերը մեղմացնելու :



Խնուսի Զաւուրմա գիւղացի ֆիլիտ Թաժտինը, որ աշակերտ էր Էրզրումի Ամերիկեան վարժարանին մէջ (1910, Էրզրում) :

ԵԶԻՏԻՆԵՐ — Եղիտին քրդական ցեղ մըն է : Ճշգրիտ մարդահամար չունին. իրենց թիւը, ենթադրարար կը հասնի 50.000-ի : Կ'ապրին Պարսկաստանի եւ Տաճկաստանի սահմաններուն վրայ, եւ փոքր թիւով Հայաստանի մէջ : Եղիտիներու եւ կուրմանճ քիւրտերու միջեւ մշտական թշնամութիւն գոյութիւն ունի : Կուրմանճը եղիտիին հանդէպ անարդական արտայայտութեամբ, անոնց ամուսնութեան արարողութիւնը այսպէս կը պատկերացնէ. —

Չար պրզրն ու տու ճէրի,  
Ճալէ համա տը ճէրի,  
Տէայ խապուլ կըր, տը մէրի:

Այսինքն չորս այծ եւ երկու նոխաղ, այս արօտաւայրը կ'արածէին,  
դուն կ'ընդունին այս ամուսնութիւնը:

Եզիտը ինքզինք կ'անուանէ դէսնի, օտարները զայն կ'անուանեն՝  
եզիտ: Այս երկու տեսակի անուաները ստուգման կը կարօտին: Հաւանաբար  
եզիտ անունը կու գայ պարսկական եագտան շաստուած անունէն: Իրենց  
կրօնքը, հաւանական մէկ շառուիղն է մազդեզականութեան, խառնուած  
քրիստոնէական եւ մահմետական տարրերով: Քրիստոսը կ'ընդունին եւ կը  
մեծարեն որպէս մարդեղէն հրեշտակ, իսկ Մահմէտը որպէս մարդարէ՝  
Աբրահամի եւ ուրիշ մարգարէներու նման: Թէ՛ մկրտութիւն եւ թէ թլփա-  
տութիւն կ'ընդունին: Սատանան կ'ընդունին Աստուծմէ ստորադաս, եւ կ'ան-  
ուանեն մալաք քաուզ, այսինքն սիրամարդ թռչուն, եւ յայտնապէս բոլոր  
չարիքներու հեղինակը: Կը հաւատան որ Աստուած ոյժ շնորհեց սատանա-  
յին՝ աշխարհի վրայ 10.000 տարի տիրելու: Երբեք սատանային անունը ի-  
րենց բերանը չեն առներ, նոյն իսկ այն բառերը որ Շ (շէյթան) եւ Ս (սա-  
տան) տառերով կը սկսին, զանոնք զործածելէ կը զգուշանան: Բազմակնու-  
թեան կը հաւատան: Օտարականներու հետ յարաբերելէ կը խուսափին: Կար-  
դալ զրելը աւելորդ բան կը նկատեն: Գինի կը խմեն. խոյր միս ուտելէ կը  
քաշուին եւ կը մերժեն: Արեւին մատաղ կը մատուցանեն, տարեկան արջառը  
նախընտրելով: Գուրդուրանքով կը պահեն զրազաշտական սովորութիւնը՝  
աղօթել արեւապալին եւ մայրամուտին: Մեծարանք ունին օձին հանդէպ:  
Իրենց ամենասիրելի պատմութիւնը կամ հէքիաթը, պարսիկ բանաստեղծ  
Ֆէրուսի «Շահ Նամէն» է: Եզիտիներու օրինաւիրքը 1918-ին Փրանսերէնի  
Թարգմանած է Ֆ. Նաու — F. Nau, Recueil de Textes et de Documents  
sur les Yezidis.

Եզիտին կանոնած տեղը, եթէ շուրջը կլոր գիծ մը քաշուի, գիծին մէջ  
կը մնայ, եւ դուրս չ'ելլեր, եւ պաղատագին՝ գիծը զծողէն կը խնդրէ որ զի-  
ծը աւրէ: Հակառակ ուղղութեամբ, վերջացած կէտէն սկսելով, հասնի մին-  
չեւ սկսուած կէտը, այլապէս գիծին մէջը կը մնայ, կը մեռնի, եւ դժոխքի  
բաժին կ'ըլլայ:

Եզիտիները հայոց հանդէպ բարեկամական վերաբերում ունէին:  
1909-ին, Ս. Մննդեան տօնին առթիւ, եզիտիներուն կրօնապետը՝ Միր Իս-  
մայիլ էջմիածին կ'այցելէ, Մատթէոս Բ. Կոստանդնուպոլսեցի կաթողիկոսի  
պահակալութեան օրերուն, եւ ներկայ կ'ըլլայ սուրբ պատարագին:

\*\*\*

Մասնաւորելով մեր խօսքը Խնուսի շրջանի հայ եւ քիւրտ փոխարա-  
բերութեանց մասին, սխալած չ'ենք ըլլար, եթէ բռնեք, որ ժամանակ առ ժա-  
մանակ, տիրող քաղաքական կացութեան լոյսին տակ, քիւրտերը հայոց  
հանդէպ, թէ՛ թշնամական եւ թէ բարեկամական վերաբերում ցոյց տուած  
են:

Հայկական յեղափոխութեան շրջանին, եղան քիւրտ աղաներ, որոնք  
բարեկամական վերաբերում ցոյց տուին յեղափոխութեան եւ մանաւանդ  
հայ ջանփէտային, որոնց քաջազորութեան համար երգեր ալ հիւսեցին:  
1895-ի հայկական դէպքերուն, Խնուսի գայմապամը եղած է շուշարցի քիւրտ՝  
Սուրտ Օղլի Մահմէտ աղան: Դէպքերէն ետք, հայերէն թալանուած անա-  
սունները կողոպտիչներէն առնելով, վերադարձուցած է իրենց տէրերուն:  
Հաստանցի աշիրէթէն Աճմու տղաքը հայոց հանդէպ բարեկամական եղած  
են: Գոպալ զիւղին պատմութեան ընթացքին մենք յիշած ենք, որ Աճմու  
տղաքը իրենց մեռելները մահմետական ծէսով թաղելէ ետք, զերեզմանները  
հայ քահանայի ձեռամբ՝ Աւետարանի եւ խաչի կնիքով կնքել կու տային:  
Հայոց հետ կնքահայր՝ քաուր կամ քիւլա կ'ըլլային, փոխադարձաբար,  
մկրտութեան եւ պսակի, թլփատութեան եւ հարսանիքի առիթներով: Տիգ-  
րան Մուրատեանի հարսանիքին, Սատի աղան քիւլա եղաւ անոր պսակա-  
դրութեան:

1915-ի պատերազմի օրերուն, ռուսական բանակի արշաւանքները երբ  
այլեւս կը մօտենային Խնուսի, քիւրտերը հայոց հետ, փոխադարձ հասկացո-  
ղութեան մը փորձը ըրին, այն որ, հիմա մենք հայերը կը պաշտպանենք,  
իսկ երբ ձեր քեռին՝ ռուսը զրաւէ այս հողերը, դուք ալ մեզ պաշտպանեցէք:  
Դժբախտաբար, այդպէս չեղաւ: Թուրքը իր նենգամիտ քաղաքականութեամբ  
թշնամացուց քիւրտը հայուն դէմ, եւ քիւրտի ձեռքով հայը կողոպտել եւ  
ջարդել տուաւ:

Հայ-քրտական բարեկամական մերձեցման փորձեր տեղի ունեցած են:  
Առաջին Համաշխարհային պատերազմէն ետք, 1918 Փետր. ամսուն Խնուսի  
մէջ քրտական համապումար տեղի ունեցաւ, հայ-քրտական համերաշխու-  
թիւն մը ստեղծելու համար: Ասոր մասին Կ. Մասունի կը գրէ. «Տարօնի շր-  
ջանի զինուորական եւ վարչական կեդրոնը հնուսն էր: հնուսի եւ վարդոյի  
շրջաններուն մէջ մնացած էին բաւական թիւով քիւրտեր, որոնք կրնային  
վնասական դեր խաղալ պատերազմի միջոցին: Այս մտահոգութիւններէն ա-  
ռաջնորդուած՝ մեկ ուզեցին սերտ բարեկամութիւն մը ստեղծել Շուշարի,  
Թէքմանի, Բինգէօլի, Մազալէ Սորի եւ վարդոյի քիւրտերուն հետ: Շարք  
մը խորհրդակցութիւններ ունեցան վարդոյի եւ Մազալէ Սորի քիւրտ երե-  
ւելիներուն հետ, որոնք տակաւին չէին համոզուած, թէ թուրքը հայուն եւ  
քիւրտին հասարակաց թշնամին է: Հակառակ այդ երեւելիներու հաւաստիա-  
ցումներուն, քիւրտերը մեր նահանջի նանապարհները կը վտանգէին:

«1918-ի Փետրուար 7-ին, Խնուսի մէջ գումարուեցաւ քրտական համագումար մը, որուն կը մասնակցէին 35 աչքի ինկած ֆիւրտեր: Համագումարը հրաւիրուած էր հայերու կողմէ, հայ-քրտական համերաշխութիւն մը ստեղծելու, եւ ցոյց տալու որ բուրքերու յաղթանակը ո՛չ միայն հայերու համար աղէտալի պիտի ըլլար, այլ նաեւ քրտութեան մնացորդներու բնաջրնումն իր հետ պիտի բերէր: Այս ժողովին, Վարդոյի շրջանի ֆիւրտերն եկած չէին: Զինուորական եւ քաղաքացիական իշխանութեան կողմէ ես բախտն ունեցայ բանալու քրտական այդ ժողովը եւ մանրամասն քուեցի այն բոլոր ջարդերը, որ թրքական կառավարութեան կողմէ գործադրուած էին ֆիւրտ ժողովուրդին վրայ Տիգրանակերտի, Խարբերդի, Սղերդի եւ Հէֆես-րիի շրջաններու մէջ՝ 1916-էն սկսած: Մենք անկեղծօրէն ձեռք կը կարկանէինք ֆիւրտ ժողովուրդին. կը յայտարարէինք որ կը մոռնանք իրենց անցեալ ոնիրները, որոնց զլխաւոր պատասխանատուն քիւրք կառավարութիւնն էր, իր դրդումով եւ յետին մտքերով, եւ կ'ուզէինք որ բմրոնեն, թէ իրենց եւ հայոց բախտը իրարու շագկապուած էր եւ որ Հայաստանի ազատագրութիւնը ֆիւրտերու ազատութիւնն էր միեւնոյն ժամանակ» (Տաճկահայաստանը ուսուական տիրապետութեան տակ, 1927):

Հայ-քրտական բարեկամութեան եւ գործակցութեան փորձ եղաւ նաեւ Արարատեան քրտական ապստամբութեան ժամանակ: Այդ ապստամբութեան, հայոց կողմէ պատասխանատու եւ ղեկավար անձն էր՝ խիզախ եւ յանդուգն, Խնուսի Հարամիկ զիւզացի Արտաշէս Մուրատեանը:

Քիւրտերը չկրցան ըմբռնել թրքական նենգամտութիւնը. երբ զիտակցեցան այդ նենգամտութեան, արդէն շատ ուշ էր, եւ կարող էր զիրենք բնաջնջելու:

Առաջին Համաշխարհային պատերազմէն ետք, արդէն կէս դար կ'անցնի: Խնուսը ամայի է իր բնիկ տարրերէն՝ զլխաւորապէս հայերէն: Իսկ քիւրտերը, որոնք եթէ տակաւին Խնուսի լեռնաշխարհին վրայ կ'ապրին, երիտասարդները բնաւ չեն կրնար մոռնալ, իրենց պապերէն պատմուածքը, թէ օր մը իրենց հետ այդ լեռնաշխարհի վրայ կ'ապրէր նաեւ հայ ժողովուրդը, որուն ձեռքը թրատուեցաւ Թուրանի թուրով, եւ չէն ու պայծառ տունը հրկիզուեցաւ Խուրանի հուրով, եւ այն օրերու արդաւանդ հողերը եւ հանդերը դարձան ամայի ու անմշակ, փուշ ու տատասկ բուսաւ, վայրի վիթն ու վարազը դաշնակցած վայրի թուրքին հետ որջացան հոն:



## ԳԼՈՒԽ ԺԳ.

# ԽՆՈՒՍՑԻՆԵՐ ԱՇԽԱՐՀԻ ԶԱՆԱԶԱՆ ՄԱՍԵՐՈՒՆ ՄԷՋ

## ԽՆՈՒՍՑԻՆԵՐ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԻԱՑԵԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒՆ ՄԷՋ

ԱՂԷԿԵԱՆ ԱՂԵՔՍԱՆԳԻՐ — Հարամիկ զիւզէն: Ամերիկա գաղթած 1907-ին: Ապրած Պոսթըն. գրադած լուսանկարչութեամբ: 1917-ին երկիր վերադարձած:

ԱՂԷԿԵԱՆ ԳԵՂԱՄ — Հարամիկ զիւզէն: Ամերիկա գաղթած 1914-ին: Նախ ապրած Պոսթըն, ապա Տիթթոյիտ. գրադում՝ ղերձակ: Ամուսնացած. ունեցած է աղայ դասակ մը որ ուսուցիչ է:

ԱՄՐՈՅԵԱՆ ԳՐԻԳՈՐ — Խնուս բերդեցի: Ամերիկա գաղթած՝ Կովկասէն, 1906-ին: Ապրած Տիթթոյիտ. գործատու: Առաջին Համաշխարհային պատերազմէն ետք ամուսնացած Հարամիկ զիւզացի Գուգային հետ, որ տարազրութենէն վերապրած, Պոլսոյ վրայոյ կկած էր Ամերիկա: Մեռած են Տիթթոյիտի մէջ:

ԱՄՐՈՅԵԱՆ ԵՐԱՆՈՍ — Խնուս բերդեցի, Գրիգորի եղբայրը: Ամերիկա գաղթած 1910-ին. ապրած Տիթթոյիտ. ղերձակ: 1916-ին վերադարձած երկիր՝ Կովկաս: Մտած Հայ Կամաւորական բանակին մէջ:

ԱՌԱՔԵԼԵԱՆ ՍԱՀԱԿ (Հըլօ Ըոֆէ Սաիակ) — Հարամիկ զիւզէն: Կըրթութիւնը ստացած նախ Կարին՝ Ամերիկեան միսիոնարական դպրոցը, ապա Այնթապի Ամերիկեան դպրոցը: Ամերիկա եկած 1889-ին: Ապրած Պոսթըն. լուսանկարիչ: Մեռած 1944-ին:

ԱՐԹԻՆ — Քաղբիկ զիւզէն: Ամերիկա գաղթած 1910-ին: Ապրած Պոսթըն: 1917-ին երկիր վերադարձած, եւ 1918-ի նահանջի օրերուն, կռիւններու ընթացքին սպաննուած:

ԱՐՄԵՆԱԿ — Խնուս բերդեցի: Ամերիկա գաղթած 1915-ին՝ Ռուսաստանէն: Կարճ ժամանակ մը ապրած Տիթրոյիտ եւ մեռած:

ԱԻԵՏԻՍԵԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ — Խնուս բերդեցի: Ամերիկա գաղթած 1940-ին, Ֆրանսայէն: Ամուսնացած է եւ ունեցած երեք զաւակ — տղայ մը եւ երկու աղջիկ: Հաստատուած Իւնիէն Սիթի, Նիւ Ճորջի:

ԲԱԲԱՆԵԱՆ ՏԵՐ ՍՈՒՐԵՆ ԱԻԱԳ ՔՀՆՅ. — Խալչատու զիւղէն: Սիւրիայէն Ամերիկա գաղթած 1946-ին եւ ստանձնած Տիթրոյիտի Ս. Սարգիս եկեղեցւոյ հոգ. հովուութիւնը: Ունի ընտանիք եւ երեք զաւակ, երկու տղաք՝ Ասպետ եւ Բաֆֆի, աղջիկը՝ Սալբի: Տեսնել զրքիս էջ 181 իր կենսագրականը:

ԳԱՍՊԱՐԵԱՆ ՏԵՐ ԲԱԲԳԵՆ ՔՀՆՅ. — Մարուֆ զիւղէն: Սիւրիայէն Ամերիկա գաղթած 1956-ին: Ունի ընտանիք եւ հինգ զաւակ: Կ'ապրի Ֆրէզնո (Քալիֆորնիա): Հոգ. հովուէն է Ս. Երրորդութիւն Մայր եկեղեցւոյ: Տես իր մասին զրքիս էջ 188:

ԳԱՍՊԱՐԵԱՆ ԳԵՈՐԳ — Մժնկերտ զիւղէն: Բ. Համաշխարհային պատերազմէն ետք, որպէս ռազմապետի Գերմանիա գտնուելով, Անչայի միջոցաւ Ամերիկա բերուած: Կ'ապրի Քալիֆորնիա:

ԳԵՈՐԳԵԱՆ ՊԵՏՐՈՍ — Հարամիկ զիւղէն: Ամերիկա գաղթած 1888-ին: Արհեստով խոհարար. ապրած Պոսթրն: Երկիր վերադարձած է 1893-ին:

ԳՐԻԳՈՐԵԱՆ ԽԱԶԻԿ — Հարամիկ զիւղէն: Ամերիկա մուտքի թուականը անձանօթ: Կ'ապրի Լոս Անձէլըս (Քալիֆորնիա):

ԳՐԻԳՈՐԵԱՆ ՏԻԿԻՆ ԼՈՒՍԻԱ — Խնուս բերդեցի: Ամերիկա գաղթած 1924-ին: Կ'ապրին Նիակարաֆոլո: Ամուսինը Խաչիկ Գրիգորեան՝ վարդոյցի: Երեք տղայ զաւակ — Ներսէս, Յարութիւն եւ Հմայեակ: Ներսէս ծառայած է ամերիկեան բանակին՝ որպէս զիտնական արօմիկ Էնրիի բաժանմունքին մէջ, Օքրիճ Թէնիսի, եւ տակաւին կը պահուի իր պաշտօնին վրայ՝ մեծ գնահատանքով:

ԳԱՐԻՆԵԱՆ ԳԱՍՊԱՐ — Զաուրմա զիւղէն: Շատ կանուխէն Ամերիկա գաղթած, Հաստատուած Քալիֆորնիա, ապրած թէ՛ Ֆրէզնո եւ թէ՛ Մըտէսթօ քաղաքները, բազմանգամ ընտանիքով: Կրթութիւնը ստացած է Կարնոյ Սանասարեան վարժարանը: Քալիֆորնիոյ մէջ զբաղած է առեւտրով եւ այգեմշակութեամբ: Կալուածատէր այգիներու եւ մեծահարուստ, իր հայրենակիցներուն եւ հայութեան հանդէպ ջերմ սիրով կապուած: Մեռած է Ֆրէզնո: Զաւակները կը շարունակեն իրենց հօր գործը: Տեսնել զրքիս էջ 84-ի խմբակարգը՝ ուր ան կ'երեւի իր հայրենակիցներուն հետ:

ԽԱՆԱՄԻՐԵԱՆ ՄՈՒՇԵՂ — Հարամիկ զիւղէն: Ամերիկա գաղթած 1921-ին: Նախ ապրած Փրովիտէն, ապա փոխադրուած Ֆիլատելֆիա (ամուսնացած Ռուսաստան): Զբաղում՝ առեւտրական: Զորս զաւակ — երկու տղայ եւ երկու աղջիկ: Մեծ տղան՝ Արսէն ուսանած է փաստաբանութիւն:

այժմ փաստաբան է: Ծառայած է ամերիկեան բանակին: Ամուսնացած, ունի երկու տղայ զաւակ: Երկրորդ տղան՝ Աւետիս, օրէնսդիտութեան ուսանող. ամուսնացած, ունի աղջիկ զաւակ մը: Մուշեղ մեռած 1960-ին:

ԽԱՆՏԻԼԵԱՆ ՏԻԿԻՆ ԱՐԵԳՆԱԶ — Խնուս բերդեցի, Մուշու Միսակ աղայի աղջիկը: Նախապէս ամուսնացած Խնուս բերդ, Խալո Մելլոնի Արամի հետ: Վերամուսնացած Խանտիլեանի հետ՝ խարսեցի: Ամերիկա գաղթած 1919-ին: Ապրած է Տիթրոյիտ եւ հոն մեռած:

ԽՈՒՌՇՈՒՏԵԱՆ ՍԱՐԳԻՍ — Խնուս բերդեցի: Ամերիկա գաղթած 1912-ին: Ատեն մը ապրած Պոսթրն: Հոն քանի մը հայրենակիցներու հետ, որոնք դեռ նոր գաղթած են Ամերիկա, կ'աշխատին Վոթըրթաունի մէջ, Հաւտ Բըպըր անունով րնկերութեան մը գործարանը: 1916-ին Հայ Կամաւորական բանակին միանալու համար կ'երթայ Կովկաս, կը մտնէ Անդրանիկի բանակին մէջ: Ատեն մը կը մնայ Կովկաս, ապա կ'անցնի Թէհրան (Իրան), ուր կ'ապրի այժմ: Ունի երկու տղայ զաւակ. մեծը՝ Վարուժ, կրթութիւնը ստացած, տիրացած է հնադիտութեան՝ արքիէթօնի. երկրորդ տղան՝ Ռազմիկ, հետեւած է զեկադորութեան:

ԿԱՐԱՊԵՏԵԱՆ ԳԱՍՊԱՐ — Հարամիկ զիւղէն: Ամերիկա գաղթած 1912-ին. ապրած Ֆիլատելֆիա: Զբաղում՝ զերձակ: Ընտանիք (երկիր եղած ատեն ամուսնացած) եւ երեք տղայ զաւակ: Ֆրէզնո՝ Էլեքտրական ճարտարագէտ: Ճոյզֆ՝ առեւտրական, Բ. Համաշխարհային պատերազմին ամերիկեան զինուոր: Փոյ, զաշնակահար, յօրինող եւ խմբավար: Իր մասին տեսնել զրքիս էջ 189:

ԿՈՓՈՅԵԱՆ ՏԻԿԻՆ ԱՐՈՒՍԵԱԿ — Խնուս բերդեցի, Անդրանիկ Աւետիսեանի քոյրը: Ամուսնացած բերրիցի Լեւոն Կոփոյեանի հետ: Ունի տղայ զաւակ մը, որ ուսուցիչ է: Կ'ապրին Իւնիէն Սիթի, Նիւ Ճորջի:

ՀԸԼՈՅԵԱՆ ԵՐԱՆՈՍ — Սալու զիւղէն: 1910-ին Ամերիկա գաղթած. ապրած է Պոսթրն, Տիթրոյիտ եւ Ֆրէզնո: Ա. եւ Բ. Համաշխարհային պատերազմներուն զինուորադրուած է ամերիկեան բանակին եւ իր կատարած գնահատելի ծառայութեան համար վարձատրուած: Մեռած է Ֆրէզնո: Տես իր մասին զրքիս էջ 235:

ՂԱԶԱՐԵԱՆ ԲԱՂԴԱՍԱՐ — Քաղքիկ զիւղէն: Ամերիկա գաղթած 1910-ին: Ապրած Պոսթրն: Ամերիկահայ կամաւորական խումբին հետ Կովկաս մեկնած, մտած Անդրանիկի բանակին մէջ:

ՂԱԶԱՐԵԱՆ ՅԱԲԷԹ — Քաղքիկ զիւղէն: Ամերիկա գաղթած 1913-ին: Ապրած Պոսթրն, ապա փոխադրուած Տիթրոյիտ եւ հոն մեռած:

ՂԱՐԻՊԶԱՆԵԱՆ ՄԻՍԱԿ — Խնուս բերդեցի: Ամերիկա գաղթած 1913-ին: Ապրած Ֆիլատելֆիա: Ծանօթ էր Ամուս անունով: Իր դիւրահաղորդ բնակարանութեան շնորհիւ ունէր բարեկամներու լայն շրջանակ: Մեռած Ֆիլատելֆիա:



Խորեն (Սիրակ) Մելիքեան

ՄԵԼԻՔԵԱՆ ԵՂԻՇԷ — Հարամիկ զիւղէն: Ամերիկա զաղթած 1920-ին: Կ'ապրի Ֆիլատելֆիա, ուր ամուսնացած: Զբաղում՝ առեւտրական: Ունի երկու զաւակ — տղայ մը եւ աղջիկ մը: Տղան՝ Խորէն Սիրաք, կրթութիւնը ստացած Փէնսիլվէնիա եւ Բրիկեր (Ն. Ճ.) համալսարաններուն մէջ: Ֆիլատելֆիոյ Լասալ զոյճէն Պատուակալ Տոքթոր Իրաւաբանութեան վկայականով պատուուած: Գիւտարար եւ զործարանատէր: Տեսնել զբքիս էջ 146—160:

ՄԵԼԻՔԵԱՆ ՏԻԳՐԱՆ — Հարամիկ զիւղէն: Ամերիկա զաղթած 1904-ին: Ապրած է Փրովիտէնս: Երկիր վերադարձած 1910-ին:

ՄԻՐԱԳԵԱՆ ԱՐԱՄ — Հարամիկ զիւղէն: Ամերիկա մուտքի թուակաւոր անձանօթ: Ապրած Քալիֆորնիա եւ հոն մեռած:

ՄԻՐԱԳԵԱՆ ԹՈՒԻԿ (Պէրպէրեան) — Հարամիկ զիւղէն: Ամերիկա զաղթած 1916-ին: Ապրած Պոսթրն, սպա Շիկաքօ: Ամուսնացած. ունի երեք աղջիկ զաւակ: Փոխադրուած է Լոս Անճէլլոս, ուր կ'ապրի:

ՄԻՐԱԳԵԱՆ ՀԱՅԿ — Հարամիկ զիւղէն: Ամերիկա մուտքի թուակաւոր անձանօթ: Ապրած Քալիֆորնիա եւ հոն մեռած:

ՄԻՐԱԳԵՆՑ ՎԱՀԱՆ — Հարամիկ զիւղէն: Ամերիկա զաղթած 1915ին: Եղած է ուսուցչապետ Մարզուանի Անաթոլիա Գոյճէին եւ Յունաստան՝ Աթէնքի Ամերիկեան Գոյճէին մէջ: Ամերիկա հաստատուելով, եղած է շրջուն զործիչ Հ. Բ. Ը. Միւթեան: Կր բնակի Լոս Անճէլլոս: Ունի երկու տղայ զաւակ, որոնք ելեքտրական ճարտարապետներ են:



Մկրտիչ Մկրտիչեան



Արամ Մկրտիչեան



Վրէժ Մկրտիչեան



Վարդգէս Մկրտիչեան



**ՄԿՐՏԻՉԵԱՆ ԱՐՄԵՆԱԿ** — Խարաքէօփրու գիւղէն: Ամերիկա զաղթած է Պոլսէն, 1912-ին: Ունի ընտանիք եւ չորս տղայ զաւակ: Բ. Համաշխարհային պատերազմին չորս տղաքն ալ կը զինուորագրուին ամերիկեան բանակին: Մկրտիչ՝ անդրանիկ տղան, երկու եւ կէս տարի կը ծառայէ մըրչընտ մըրիմի մէջ: Արամ կը զինուորագրուի 1941-ին: 1944-ի Նոյեմբերին կը զբերուի գերմանական ճակատ: Հերոսաբար կը մասնակցի բաղմաթիւ կռիւններու: Կը կորսնցնէ իր կեանքը: Իր հերոսութեան համար կը վարձատրուի շքանշանով: Վրէժ՝ բանակ կը մտնէ 1943-ի Մարտին: Կը զբերուի Քաղապլանքա, ապա կը մասնակցի Հոռնի կռիւներուն եւ Հարաւային Ֆրանսայի արշաւանքին: 1943-ի Ծնունդին, Իտալիոյ մէջ կը մասնակցի Լոնկոյի ճակատամարտին, ապա երրորդ զօրամասին հետ կը մտնէ Աւստրիա եւ հոն կը մնայ մինչեւ զինադադարը: Վարդգէս կամաւոր կ'արձանագրուի օդանաւորական ճիւղին: 1943-ին, առաջին տեղակալի աստիճան կը ստանայ: Պի 29 ոմբածիկ օդանաւով ունեցած է 35 արշաւ թշնամի քաղաքներու եւ գիրքերու վրայ: Իր ցոյց տուած քաջագործութիւններուն համար, արժանացած է հետեւեալ շքանշաններուն 1. Awarded Air Medal with 5-Oak Leaf Clusters.

2. Two Presidential Citations. 3-4, Battle Stars in European theatre of war՝  
**ՄԵԻԹԱՐԵԱՆ ՏԵՐ ԵՂԻՇԷ ԱԻԱԳ ՔՀՆՅ** — Գովանդուկ գիւղէն: Մարտիչէն (Ֆրանսա) Ամերիկա զաղթած 1946-ին: Ունի ընտանիք եւ չորս զաւակ — տղայ մը՝ Օշին ճորճ, եւ երեք աղջիկ: Նախ հաստատուած Ֆիլատելֆիա, որպէս հոգ. հովիւ Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ, ապա փոխադրուած Ֆրէզնո (Քալիֆորնիա), Ս. Երրորդութիւն Մայր եկեղեցւոյ: Տես իր մասին դրքիս էջ 186:

**ՄՀԵՐԵԱՆ ԿՆԵԱԶ** — Սայլու գիւղէն: Կանուխէն Ամերիկա զաղթած: Ատեն մը Պոսթըն ապրելէ ետք, Օսմ. Սահմանադրութեան շրջանին երկիր վերադարձած:

**ՄՀԵՐԵԱՆ ՊՕՂՈՍ** — Սայլու գիւղէն: Ամերիկա զաղթած 1909-ին: Կ'ապրի Նիակարաֆոլս: Կը գրադի ճաշարանի գործով:

**ՄՈՒՐԱՏԵԱՆ ԵՂԲԱՅՐՆԵՐ** — Հարամիկ գիւղէն: Խարբերոյցի Կարապետ Մուրատեանի զաւակներ՝ Յարութիւն, Մուրատ, Գրիգոր. հաւանաբար Ամերիկա եկած 1890-ական թուականներուն: Գրիգոր ամուսնացած ամերիկուհիի հետ: Փաստարան: Ունի տղայ զաւակ մը: Յարութիւն եւ Մուրատ ամուսնացած, հայ ընտանիք, զաւակներ: Ապրած Փրովիտէնս Բոս Ալլէնտ: Իրենք մեռած, զաւակները կ'ապրին:

**ՅՈՒՆԱՆ** — Խողլի գիւղէն: Ամերիկա զաղթի թուականը անձանօթ: Ապրած Պոսթըն. երկիր վերադարձած:

**ՆԵՐՍԷՍԵԱՆ ՕՐԻՈՐԴ ԱԶՆԻԻ (Բժշկուհի)** — Արօս գիւղէն: Ամերիկա եկած 1916-ին, էրզրումի Ամերիկեան միսոնարաց օժանդակութեամբ: Ապրած Պոսթըն եւ ուսանած բժշկութիւն: Բ. Համաշխարհային պատերազմին կը մտնէ ամերիկեան բանակին մէջ ծառայութեան, Բէֆթընի աստիճանով: Կը զբերուի եւրոպական ռազմաճակատ: Անգլիոյ մէջ իր կատարած գործունէութեան

թեան համար, կը դնահատուի անգլիական արքայական պատուանշանով: Այժմ բժիշկ է ամերիկեան հիւանդանոցի մը մէջ, Պոսթընի արուարձանները: Բութ 128 (արուարձանին անունը):

**ՉՈՒԼԱՔԵԱՆ ՄՈՒՇԵՂ** — Խնուս բերդեցի: Ամերիկա զաղթած 1920-ին: Ապրած Նիւ Եորք: Ամուսնացած, վեց զաւակի հայր: Բ. Համաշխարհային պատերազմին ետք, ներգաղթած Հայաստան: Ներգաղթի օրերուն, երբ իր զաւակներէն երեքը յանձնուած էին՝ ծնողքին հաւանութեամբ՝ ամերիկեան կաթոլիկ հաստատութեան մը, խնամելու եւ դաստիարակելու, մերժեցին միանալ ծնողաց ներգաղթելու համար: Տիրան եպօ. միջամտելով, խընդիրը բարդանալով հասաւ մինչեւ ամերիկեան դատարան: Դատը վճռուեցաւ ի նպաստ կաթոլիկ հաստատութեան: Ծնողքը երկու զաւակներուն հետ միացաւ ներգաղթի կարաւանին եւ մեկնեցաւ Հայաստան:

**ՊԱՐՈՆԵԱՆ ԵԴՈՒԱՐԻ** — Խնուս բերդեցի: Ամերիկա զաղթած 1914-ին: Ապրած Պոսթըն. ամուսնացած, ունի աղջիկ զաւակ մը: Երկար տարիներ գործած Պոսթընի Սթէթլըր պանդոկի ճաշարանին մէջ, սպասեակներու զլիսակերի գիրքով: Մեռած է Պոսթըն:

**ՊՈՒԼՈՒԹԵԱՆ ՄԻՆԱՍ** — Չաուրմա գիւղէն: Ամերիկա զաղթած 1909-ին: Ապրած Ֆիլատելֆիա: Ամուսնացած է եւ ունեցած երեք զաւակ — աղջիկ մը եւ երկու տղաք՝ Վահան եւ Արամ: Արամ ծառայած է ամերիկեան բանակին:

**ՊՐՍՕ** կամ **ՊԱՂՏԱՍԱՐ** — Չաուրմա գիւղէն: Կանուխէն զաղթած Ամերիկա: Ապրած Տիթրոյիտ, ուր եւ մեռած է:

**ՊՕՂՈՍԵԱՆ ԱՔԷԹ** — Հարամիկ գիւղէն: Ամերիկա զաղթած 1914-ին: Ապրած Տիթրոյիտ: Եղած է ամերիկեան նաւային զինուոր Ա. Համաշխարհային պատերազմին: Ամուսնացած ամերիկուհիի հետ եւ ունեցած տղայ զաւակ մը: Զբաղում՝ առևտրական:

**ՊՕՂՈՍԵԱՆ ԴԱԻԻԹ** — Հարամիկ գիւղէն: Ամերիկա մուտքի թուականը անձանօթ: Ապրած Տիթրոյիտ, ունեցած է ընտանիք եւ զաւակներ: Ինք մեռած. կինը եւ զաւակները կ'ապրին Տիթրոյիտ:

**ՊՕՂՈՍԵԱՆ ՄԿՐՏԻՉ** — Հարամիկ գիւղէն: Ամերիկա մուտքի թուականը անձանօթ: Նախ ապրած է Փրովիտէնս: Երկիր վերադարձած 1910-ին: Կրկին Ամերիկա զաղթած 1914-ին, ապրած Տիթրոյիտ. ունեցած է ընտանիք եւ զաւակներ: Մեռած Տիթրոյիտ:

**ՊՕՂՈՍԵԱՆ ՅՈՎՀԱՆՆԷՍ (Պօզսէ Յովօ)** — Հարամիկ գիւղէն: Ամերիկա զաղթած 1896-ին, ապրած Պոսթըն, գործաւոր: Երկիր վերադարձած 1910-ին:

**ՍԵԴՐԱԿ** — Սայլու գիւղէն: Ամերիկա զաղթի թուականը անձանօթ: Ապրած Պոսթըն:

**ՍԵԴՐԱԿԵԱՆ ՀԱՄԱԶԱՍՊ** — Խալաուզ գիւղէն: Ամերիկա զաղթած Եգիպտոսէն, 1962-ին: Ամուսնացած, չորս զաւակ — երկու տղայ եւ երկու աղջիկ: Կը բնակի Փէլլոսայտ Փարք, Նիւ Ճըրզի:

**ՍԵՂՈՒՄՆԱՆ ՍԻՄՈՆ** (Մեերի Խուռչուտի տղան՝ Սամսրիկ) — Հա-  
րամիկ զիւղէն: Ամերիկա զաղթած (Պարսկաստանէն) 1945-ին: Կ'ապրի Օք-  
լէնա (Քալիֆորնիա), առևտրական: Ամուսնացած է եւ ունի չորս զաւակ,  
երեք աղջիկ եւ մէկ տղայ: Տղան՝ Կարապետ, ելեքտրական ճարտարապետ,  
եղած է ամերիկեան բանակի զինուոր:

**ՍԻՄՈՆՆԱՆ ՄԻՀՐԱՆ** — Խնուս բերդեցի: Ամերիկա զաղթած 1913-ին.  
ապրած Պոսթրն: Ամերիկեան բանակին ծառայած Առաջին Համաշխարհային  
պատերազմին: Ամուսնացած, առեն մը ապրած Տիթրոյիտ, ապա փոխա-  
դրուած Ֆրէզնո (Քալիֆորնիա): Ունի տղայ զաւակ մը՝ Միհրանիկ, որ  
այժմ կ'ապրի Քալիֆորնիա: Միհրան մեռած է 1962-ին: Տեսնել իր ընտա-  
նիքին մասին զրօքս էջ 171:

**ՍՈՂՈՅՆԱՆ ՀՐԱԶ** (Տէրտրոյ Գասպարի տղան) — Հարամիկ զիւղէն:  
Ամերիկա զաղթած 1922-ին: Ապրած Տիթրոյիտ. զբաղուած՝ հաղուստ մաք-  
րելու առևտուր: Փոխադրուած Լոս Անճէլլոսի արուարձաններէն՝ Կրրնատտ  
Հիլ: Ունի ընտանիք եւ զաւակներ: Տղան՝ Գասպար, ամերիկեան բանակի  
զինուոր օդանաւային բաժանմունքի մէջ: Օդանաւոր:

**ՍՈՊԱՃՆԱՆ ՄԱՆՈՒԿ** — Խնուս բերդեցի: Ամերիկա զաղթած Բ. Հա-  
մաշխարհային պատերազմէն ետք: Որպէս ռազմաղերի Գերմանիա գտնուե-  
լով, Անչայի միջոցաւ Ամերիկա մտած: Ամուսնացած, կ'ապրի Սանֆրանսիս-  
կո (Քալիֆորնիա):

**ՏԷՐ ԶԱՔԱՐՆԱՆ ԶԱՔԱՐ** — Խալչաուշ զիւղէն: Ամերիկա զաղթած  
1910-ին: Ապրած Պոսթրն: Ա. Համաշխարհային պատերազմին զինուորա-  
դրուած ամերիկեան բանակին, մասնակցած Մառնի եւ Արկոնի ճակատա-  
մարտներուն: Վիրաւորուած ու նաեւ թունաւոր կապ առած: Փարիզի Ամե-  
րիկեան հիւանդանոցին մէջ ապաքինելէ ետք, վերադարձած Ամերիկա,  
Փրիլի Հարք (ծիրանկոյն սիրտ) պատուանշանով պնահատուած իր քաջա-  
դորուութեան համար, նաեւ Սայթէյշըն (անուանում) պաշտօնագիր ստացած  
նախագահ Վիլսոնի ստորագրութեամբ: Մեռած Ֆիլատելֆիոյ զինուորական  
հիւանդանոցին մէջ: Նկարը տեսնել զրօքս էջ 255:

**ՏԷՐ ԶԱՔԱՐՆԱՆ ՄՈՎՍԷՍ** — Խալչաուշ զիւղէն: Ամերիկա զաղթած  
1911-ին: Նախ կը հաստատուի Փրանքլին (Մասաչուսէց), ապա կը փոխա-  
դրուի Պրըլինկթըն (Վէրմոնթ), հոնկէ ալ կը փոխադրուի Ֆիլատելֆիա:  
Վերամուսնացած՝ տարադրութենէն վերապրող համապիւղացի Տիկին Արեկ-  
նազի հետ եւ ունեցած երեք աղջիկ եւ տղայ զաւակ մը: Աղջիկներէն տիկին  
Աշխէն Արփաճեան օժտուած համալսարանական կրթութեամբ, տիկին Սօսի  
Խաչիկեան բարձրագոյն կրթութեամբ, Փօլ (Փայլակ) ելեքտրական ճարտա-  
րապետ, ծառայած ամերիկեան բանակի օդային բաժանմունքի մէջ: Մերի  
(Մարիամ) զիմաստուերներու խղաների նկարիչի շնորհալի ձիրքով օժ-  
տուած, փայլուն աղագայի խոստումով, տակաւին կ'ուսանի Փէնսիլվէնիա  
Աքադէմի աֆ դը Յայն Արթս, գեղարուեստից վարժարանը: Մովսէս մեռած  
1963-ի Փետրուար ամսուն, Ֆիլատելֆիա: Նկարը տեսնել էջ 58:



Օր. Մէրի Տէր Զափարեան՝ իր գծած երկու նկարներուն հետ —  
Յովհաննէս Ծիրազ եւ Մարտիրոս Սարեան:

**ՏԻՐԱՑՆԱՆ ՍԵՂՈՒՄ** — Խնուս բերդեցի: Ամերիկա զաղթած 1912-ին:  
Նախ ապրած Պոսթրն, ապա փոխադրուած Տիթրոյիտ: Ամուսնացած Ամերի-  
կա ծնած Լուսի Պօղոսեանի հետ, ունեցած հինգ զաւակ — չորս տղայ, մէկ  
աղջիկ: Զբաղուած՝ գործաւոր: Տղաքը Բ. Համաշխարհային պատերազմին  
ամերիկեան բանակին ծառայած:

Գուրգէն, ծառայած դաշտային հրետանիի խուզարկու խումբին մէջ՝  
23 ամիս, հարաւ-արեւմտեան ամերիկեան զօրաբաժնին մէջ սարճընթի առ-  
տիճանով: Եղած է Նոր Քալիտոնիա, Սոլոմոն կղզիներ, Նոր Հէպրիտէս եւ  
Ֆիճի Ալլընտ: Մասնակցած Փափուայի եւ Կուատալանայի կռիւներուն:  
Տասնըմկ ամիս ալ ծառայութիւն տուած է 26-րդ զօրաբաժնին հետ Եւ-  
րոպայի մէջ եւ եղած է Անգլիա, Ֆրանսա, Պելճիքա, Լիւքսեմպուրկ, Գեր-  
մանիա եւ Հորլանտա: Մասնակցած է Արտէնի, Միջին Եւրոպայի եւ Հոկնոսի  
ճակատամարտներուն:



Գուրգեն Տիրացեան



Ռուբէն Տիրացեան



Հէնրի Տիրացեան



Էտուրբտ Տիրացեան

Ռուբէն, ծառայած Մ. Ն. 72-րդ նաւային շինութեանց գումարտակին մէջ, եղած Հաւայիի, Մարշլիի եւ Մարիանայի կղզիները: Մասնակցած կռիւներու երկրորդ եւ երրորդ նաւային զօրաբաժիններուն մէջ, 30 ամսուան անըրծովեայ ծառայութեամբ, M-M 2C աստիճանով:

Յարութիւն (Հէնրի), ծառայած ամերիկեան օդային բաժանմունքի մէջ, սարնըքի աստիճանով: Մտայած է տասներինը ամիս Կեղրոնական Սաղազականի մէջ՝ Հաւայի, Իւօ Ճիմա եւ Սէյրան: (Իր մասին տեսնել զըրբիս էջ 190-ի մէջ):

Էտուրբտ, ծառայած է երկու տարի սարնըքի աստիճանով, Հետեւա-զօրաց բաժնին, Թէքսաս եւ Լուիզիանա նահանգներուն մէջ:

Քէմալեան ԱՆԴՐԱՆԻԿ — Խնուս բերդեցի: Տարադրութենէ վերապրած. կարճ ատեն մը Պոլիս պարելէ ետք, պատանի հասակին եկած Ամերիկա եւ հաստատուած Փրովիտէնս: Ուսանած դեղագործութիւն: Ամուսնացած է եւ ունեցած երկու զաւակ — տղայ մը եւ աղջիկ մը: Բարեկեցիկ վիճակ ունի: Իր բնակած նահանգին դեղերու մեծաքանակ վաճառքի ընկերակցութեան նախագահն է: Հանրածանօթ է եւ սիրուած իր շրջանակէն:

ՔՐՄՈՅԵԱՆ ԱՐՄԵՆԱԿ — Չաուրմա գիւղէն: Ամերիկա գաղթած 1910-ին: Ապրած Յրէզնօ (Քալիֆորնիա), ուր՝ ընտանիքը եւ զաւակները երկրէն դալով միացած են իրեն: Չբաղած է այդեղործութեամբ: Երկու տղայ զաւակները կ'ապրին Քալիֆորնիա: Մեռած է Յրէզնօ: Իր մասին եւ նըկարը տեսնել զըրբիս էջ 260:

### ՀԱՅԱՍՏԱՆ ԱՊՐՈՂ ԽՆՈՒՍՅԻՆԵՐ

Այս ցանկը պատրաստած է Ն. Մանուկեան անուանով խնուցի մը, 1930 բուականին եւ Հայաստանէն դրկած արտասահման:

ՄՈՒՐԱՏԵԱՆ ԼԵՒՈՆ — Հարամիկ գիւղէն. 4 անձ. կ'ապրին Լենինական:

ԱՄՐԷԵԱՆ ՆԱԶԱՐ ԵՒ ՀՄԱՅԵԱԿ — Խնուս բերդեցի. 4 անձ. կ'ապրին Լենինական:

ԳՐԻԳՈՐԵԱՆ ԱՐՇԱԿ — Խնուս բերդեցի. 7 անձ. կ'ապրին Լենինական: ՍՈՊԱՋԵԱՆ ԳԵՂԱՄ ԵՒ ԵՂԲԱՅՐԸ՝ ԱՎԵԱՆ — Խնուս բերդեցի. 9 անձ. կ'ապրին Լենինական:

ԽԱՐԱԳԱԻՈՒՐԵԱՆ ՏՈՒՐՍՈՒՆ — Խնուս բերդեցի. 4 անձ. կ'ապրին Լենինական:

ՄԱԼԽԱՍԵԱՆ ԱՐԱՄ — Խնուս բերդեցի. 6 անձ. կ'ապրին Լենինական:

ՄԱԼԽԱՍԵԱՆ ԳԵՂԱՄ — Խնուս բերդեցի. 4 անձ. կ'ապրին Լենինական:

ՏԵՐ ՄԱՐԳԱՐԵԱՆ ԳԵՂԱՄ — Խնուս բերդեցի. 4 անձ. կ'ապրին Լե-  
 նինական :  
 ԳԵՈՐԳԵԱՆ ԱՐՇԱԿ — Խնուս բերդեցի. 4 անձ. կ'ապրին Մայրկոպ :  
 ՊՏԷ ԱԼԱՀՎԵՐՏՈՒ ԿԻՆ ՔՆՔՈՒՇ — Խնուս բերդեցի. 5 անձ. կ'ապ-  
 րին Ղարաքիլիսէ :  
 ԳԱՍՊԱՐԵԱՆ ՊԵՏՐՈՍ — Բաշքէօյ զիւղէն. 6 անձ. կ'ապրին Լենինա-  
 կան :  
 ԳԱՍՊԱՐԵԱՆ ԳԵՈՐԳ — Բաշքէօյ զիւղէն. 2 անձ. կ'ապրին Լենինա-  
 կան :  
 ԹԻԼԿՈՒ ՄԵԻԿԻ ԱԻԿ — Խնուս բերդեցի. 4 անձ. կ'ապրին Երեւան :  
 ԹԻԼԿՈՒ ՍԱՐԳԻՍԻ ՏՂԱՔ ԱՆԴՐԱՆԻԿ ԵՒ ՄԻՍԱԿ — Խնուս բերդեցի.  
 4 անձ. կ'ապրին Երեւան :  
 ԶՔԷ ՂԱԶՈՅԻ ՏՂԱՆ ԱՍՈՒԱՏՈՒՐ — Խնուս բերդեցի. 8 անձ. կ'ապ-  
 րին Երեւան :  
 ՄԱԼԽԱՍԵԱՆ ԽԱԶԻԿ — Ենիքէօյ զիւղէն. 6 անձ. կ'ապրին Լենինա-  
 կան :  
 ԶԱՔԱՐԵԱՆ ԵՂԻՇԷ — Խարաչոպան զիւղէն. 6 անձ. կ'ապրին Լենի-  
 նական :  
 ՍԱՀԱԿԵԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ — Խարաչոպան զիւղէն. 1 անձ. կ'ապրի Լե-  
 նինական :  
 ՍԱՀԱԿԵԱՆ ԳԱԳԻԿ — Խարաչոպան զիւղէն. 2 անձ. կ'ապրին Լենի-  
 նական :  
 ՍԱՀԱԿԵԱՆ ՂԵՒՈՆԻ — Խարաչոպան զիւղէն. 4 անձ. կ'ապրին Լե-  
 նինական :  
 ԲԱՐՍԵՂԵԱՆ ԱՐԱՄ — Խարաչոպան զիւղէն. 6 անձ. կ'ապրին Լենի-  
 նական :  
 ՄԱՅՐՕ ՅՈՎՀԱՆՆԵՍԻ ԱՐԱՄ — Խարաչոպան զիւղէն. 4 անձ. կ'ապ-  
 րին Լենինական :  
 ՅԵՓՐԵՄ ԱԼՄԱՍՏ ԵՒ ԻՐ ՏՂԱՆ — Խարաչոպան զիւղէն. 2 անձ.  
 կ'ապրին Լենինական :  
 ՍԱՐԳԻՍԵԱՆ (ՊՕՂՈՍԵԱՆ) ԳԵՂԱՄ — Շապատին զիւղէն. 5 անձ.  
 կ'ապրին Լենինական :  
 ԿԱՐԱՊԵՏԵԱՆ ԼՈՒՍԻԿ ԱԻԵՅԻ — Խարաչոպան զիւղէն. 3 անձ. կ'ապ-  
 րին Լենինական :  
 ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆ ՄՆԱՑԱԿԱՆ ՆԱՀԱՊԵՏԻ — Խարաչոպան զիւղէն. 1  
 անձ. կ'ապրի Լենինական :  
 ՔՈԶԷԵԱՆ ՇՈՂՕ — Աբօս զիւղէն. 3 անձ. կ'ապրին Լենինական :  
 ԱԻԱԳԵԱՆ ՄԱՆՈՒԿ — Չաուրմա զիւղէն. 6 անձ. կ'ապրին Լենինա-  
 կան :  
 ԽՁԷԵԱՆ ՍԵԴՐԱԿ — Չաուրմա զիւղէն. 2 անձ. կ'ապրին Լենինական :  
 ՏԷՐ ԱՎՈՅԵԱՆ ՅԵՂՍԱՆ ԱՎՈՅԻ — Գոպալ զիւղէն. բոլոր թախուճ-  
 ները ողջ են, կ'ապրին Լենինական :

ՏՈՆՈՅԵԱՆ ՍԱԼՎԻ — Սալու զիւղէն. 5 անձ. կ'ապրին Լենինական :  
 ՄՀԵՐԵԱՆ ՄԻՍԱԿ ՄԿՐՏՁԻ — Գովանդուկ զիւղէն. 4 անձ. կ'ապրին  
 Լենինական :  
 ՄՀԵՐԵԱՆ ԼԵՒՈՆ ԴԱԻԹ — Գովանդուկ զիւղէն. 4 անձ. կ'ապրին  
 Լենինական :  
 ՄՀԵՐԵԱՆ ՔԱՐԱՄ ԴԱԻԹԻ — Գովանդուկ զիւղէն. 4 անձ. կ'ապրին  
 Լենինական :  
 ԳՐԳԷԵԱՆ ԱՂԵՔՍԱՆԴՐ ՅԱՐԴՈՅԻ — Գովանդուկ զիւղէն. 5 անձ.  
 կ'ապրին Լենինական :  
 ԶՆԴՈՅԻ ՅԱՐԹԷՆ — Գովանդուկ զիւղէն. 5 անձ. կ'ապրին Լենի-  
 նական :  
 ԹՈՐՈՅԻ ԱԻՈՆ — Գովանդուկ զիւղէն. 5 անձ. կ'ապրին Լենինական :  
 ՍԵՊԷ ԳՐԻԳՈՐ — Գովանդուկ զիւղէն. 2 անձ. կ'ապրին Լենինական :  
 ՄԻՆԱՍԵԱՆ ԳՐԻԳՈՐ — Գովանդուկ զիւղէն. 4 անձ. կ'ապրին Լե-  
 նինական :  
 ՄԻՆԱՍԵԱՆ ԻԿՈՆ — Գովանդուկ զիւղէն. 4 անձ. կ'ապրին Լենի-  
 նական :  
 ՍԱՐԳԻՍԵԱՆ (ՔԻՐՎԱՆԵԱՆ) ԱՐԱՄ — Գովանդուկ զիւղէն. 2 անձ.  
 կ'ապրին Լենինական :  
 ՃՈՒԹԷԵԱՆ ԼԵՒՈՆ — Գովանդուկ զիւղէն. 6 անձ. կ'ապրին Լենի-  
 նական :  
 ՀԱԶՈՒԵԱՆ ԳՍՊՕ — Գովանդուկ զիւղէն. 4 անձ. կ'ապրին Լենի-  
 նական :  
 ԽՁԷԵԱՆ ՕՀԱՆԵԱՆ ԱՐՇԱԿ — Գովանդուկ զիւղէն. 3 անձ. կ'ապրին  
 Լենինական :  
 ՏԷՐ ՕՀԱՆԻ ՏՂԱՅ ԱՐՇԱԿ — Գովանդուկ զիւղէն. 3 անձ. կ'ապրին  
 Լենինական :  
 ՍՀԷԵԱՆ ԿԻՐԱԿՈՍ — Գովանդուկ զիւղէն. 2 անձ. կ'ապրին Լենի-  
 նական :  
 ՄՇԵՑՈՒ ՀԱՄԲՈՆ — Գովանդուկ զիւղէն. 7 անձ. կ'ապրին Լենի-  
 նական :  
 ԲՈՒՂՈՒՐԵԱՆ ՎԱՀԱՆ — Գովանդուկ զիւղէն. 2 անձ. կ'ապրին Լե-  
 նինական :  
 ԲՂՏՕ ԳԵՒՈՅԻ ՏՂԱՆ՝ ՄՈՇՈՆ — Գովանդուկ զիւղէն. 5 անձ. կ'ապ-  
 րին Լենինական :  
 ՇԱՀԷՆԻ ԱՊՐԷՆ — Գովանդուկ զիւղէն. 4 անձ. կ'ապրին Լենինական :  
 ՄԱՐԷ ԱՊԳԱՐ — Գովանդուկ զիւղէն. 4 անձ. կ'ապրին Լենինական :  
 ՄԱՐԷ ԱՐՈՆ — Խարաքոփրի զիւղէն. 2 անձ. կ'ապրին Լենինական :  
 ՄԱՐԷ ՄԱՐՏՈՆ — Խարաքոփրի զիւղէն. 4 անձ. կ'ապրին Լենի-  
 նական :  
 ՄԱՐԷ ՄՈՎՍԷՍ — Խոմիսյա զիւղէն. 10 անձ. կ'ապրին Լենինական :

ԳՐԻԳՈՐԵԱՆ ՀԱՊԵ — *Խոմիայա դիւղէն*. 6 անձ. *Կ'ապրին Լենին-նական* :

ԲԱՒՈՅԵԱՆ ՎԸՐԴՕ — *Արօս դիւղէն*. 2 անձ. *Կ'ապրին Լենինական* :

ՔՈԶՈՅԵԱՆ ԼԵՒՈՆ — *Արօս դիւղէն*. 6 անձ. *Կ'ապրին Երեւան* :

(\*) Խնդրում եմ գրէի Սայլվու Ոչխէ Տոնէլի տներից ո՛վ կայ ազատուած : Քիլիշ Տո-նոյեան Զարդար՝ նոյնպէս խնդրում է գրէք ո՛վ կայ չաուրմէցի :

*Մի խօսքով մեր Խնուսի բոլոր դիւղերից եւ նոյնիսկ ամէն տանից կան ազատուած 1-ից մինչեւ 3 հոգի եւ աւելիներ, որոնք գտնուում են Հայաստանի գանազան շրջանները եւ անկարող էի բոլորին մէկ առ մէկ գրել եւ ձեզ տեղեկացնել :*

Բարեւներով՝ հայրենակից՝ Ն. ՄԱՆՈՒԿԵԱՆ

Մայիս 16, 1930 թ.

ՆՐԱՆՕԻԻ.— Այս ցանկը կու տայ փոքր քիւ մը խնուցիներու : Ասկէ գտա էջմիածնի շրջան՝ *Եղիվարդ*, եւ Լեւինականի շրջան՝ *Ոսկհասոկ* գիւղերուն մէջ կը բնակին խնուցի-ներ : Եղիվարդ եւ Ոսկհասոկ գիւղերուն մասին, 1938 րուականին, Գարեգին Արք. Յովսէփ-եանցի հետ (Ֆիլատելֆիա) ունեցած խօսակցութեան մը ընթացքին, յայտնեց այս գիւղե-րուն մէջ խնուցիներու բնակելու պարագան : Խնուցի ըլլալս գիտնալով, միեւնոյն ատեն խօսեցաւ բռնդրակեցի աղանդաւորներու մասին, նկատելով որ ես ալ պատմութեան ծանօթ եմ եւ նոր բան մը լսելու հետաքրքիր :


1830-ի եւ 1878-ի ռուս-թրքական պատերազմներուն հետեւանով, գաղթող խնուցի-ներ, հաստատուած են Ախալքալաքի շրջանը, եւ հաստատուած են *Թորիա*, *Ույմանա* եւ *Էշ-ախա* գիւղերը (Տես Հրաչեայ Անտոնանի «Մշոյ բարբառ»ը աշխատասիրութիւնը) :

Ե. Յ. Մ.



Վաստակաւոր դերասան Վլադիմիր (ժան) Էլոյեան. խնուցի :  
Կը գտնուի Հայաստան :

### ՍՈՒՐԻԱ ԱՊՐՈՂ ԽՆՈՒՍՅԻՆԵՐ



ԱՂԶԻԿ ՄԱՅՐԱՄ — *Խալչաուցի*. *Կ'ապրի Հալէպ եւ ծերուքեան պատճառով փոխադրուած է Աղբ. Ծերանոց* :

ԱՄՐՈՅԵԱՆ ՂԱԶԱՐ — *Բերդեցի*. *զործաւոր. ապրած եւ մեռած Հա-լէպ : Ունի մէկ աղջիկ եւ երեք տղայ : Երկուքը մեռած, իսկ միւսը՝ Մկըր-տիչ, ամուսնացած է :*

ԲԱՐԱԽԵԱՆ ԱԲԵԹ — *Խալչաուցի*. *Կ'ապրի Հալէպ. զործաւոր : Ունի մէկ մանչ, մէկ աղջիկ :*

ԲԱՂԷԵԱՆ ԼԵՒՈՆ — *Խալչաուցի*. *Կ'ապրի Գամշլի. բանուոր : Ունի մէկ մանչ, հինգ թոռնիկ :*

ԲԱՏՕ ՕՀԱՆԵԱՆ (նեքկայիս՝ Բատոյեան) ԳԵՂԱՄ — *Հարամիկցի. Կ'ապրի Հալէպ եւ Պէյրուիթ. ատաղձագործ : Ունի երկու մանչ եւ երեք աղ-ջիկ, 12 թոռնիկ : Մանչերէն Եղուարդը ուսուցիչ է Պէյրուիթի Համազդալիների Նշան Փալանճեան ճեմարանին մէջ :*

ԳԱՍՊԱՐԵԱՆ ԱՆՈՅՇ — *Խարաչոպանցի. մեռած՝ Հալէպ : Ամուսնա-ցած էր Խնուս բերդեցի Մուշեղ Գասպարեանի հետ, որ մեռաւ Հալէպ : Ունի քոյր մը որ այրի է՝ Զանո Սարգիսեան :*

ԳԷՈՐԳԵԱՆ ԱՐԱՄ — *Էլբիսցի. բանուոր. Կ'ապրի Հալէպ : Երկու ան-գամ ամուսնացած, իւրաքանչիւր կնոջմէ ունեցած երկուքական աղջիկ :*

ԵՐԷՑԵԱՆ ԼԵՒՈՆ — *Քաղքիկցի. բանուոր. Կ'ապրի Հալէպ : Ունի մէկ մանչ եւ երկու թոռնիկ :*

ԵՐԷՑԵԱՆ ՍԵՂՐԱԿ (Շոփէր Սեղրակ) — *Քաղքիկցի. բանուոր. Կ'ապ-րի Հալէպ : Ամուրի :*

ԶԱՔԱՐԵԱՆ ԵԴՈՒԱՐԴ — *Խարաչոպանցի. ուսուցիչ. Կ'ապրի Գամշլի : Ունի հինգ մանչ :*

ԶՔԷԵԱՆ ՍԵՒՏԻՆ (Արշակ) — *Բերդեցի. Կ'ապրի Հալէպ. բանուոր : Ամուսնացած. զաւակ չունի :*

ԿԱՐԱՊԵՏԵԱՆ ԱՐՏԱՇԷՍ — *Հարամիկցի. զործաւոր. ապրած եւ մեռած Հալէպ : Ունի երկու մանչ, հինգ աղջիկ եւ վեց թոռնիկ :*

ԿԱՐԱՊԵՏԵԱՆ ՀՐԱՆԴ — *Աղճամելիքցի. բանուոր. Կ'ապրի Հալէպ : Ունի երեք մանչ, մէկ թոռնիկ :*

ԿԱՐԱՊԵՏԵԱՆ ՏԻԳՐԱՆ — *Խարաչոպանցի. զործաւոր. Կ'ապրի Հա-լէպ : Ունի մէկ մանչ, ութը աղջիկ :*

ԿՈՒԼԷ ՄԱՅՐԻԿ (Ամրոյեան) — *Խարաչոպանցի : Ապրած է Գամշլի եւ հոն մեռած : Ունի մանչ զաւակ մը՝ Արտաշէս Ամրոյեան, որ ծանօթ է Կուլէ Արտաշ անունով : Արհեստով հողագործ : Ունի մէկ մանչ, երկու աղջիկ :*

ՂՈՒԿԱՍՏԵԱՆ ԼԵՒՈՆ — Քաղքիկցի. բանուոր. կ'ապրի Հալէպ: Ունի մէկ մանչ, երկու աղջիկ, եօթը թոռնիկ:  
 ՄԿՐՏԻԶԵԱՆ ԳԱՐԵԳԻՆ — Քաղքիկցի. կաթնավաճառ. կ'ապրի Լաթաքիա: Ունի երկու մանչ, երկու աղջիկ:  
 ՄՀԵՐԵԱՆ ՔԻՇՄԻՇ — Հարամիկցի. կ'ապրի Հալէպ՝ իր տղուն քով:



Խաչիկ Յովհաննիսեան

ՅՈՎՀԱՆՆԷՍԵԱՆ ԽԱԶԻԿ — Բերդեցի. ուսուցիչ: Ընտանիքը Լաթաքիա, սակայն ինք կ'աշխատի Պէյրութ: Ունի երկու մանչ, երկու աղջիկ: Գրական քննադատ: Ունի թատերական եւ մենադրական գործեր: Գրական ծածկանունն է Ս. Պալաթոն:

ՆԱԼՊԱՆՏԵԱՆ ԱԼԵԲՍԱՆ — Բերդեցի. ապրրած է եւ մեռած Հալէպ: Ունի մէկ մանչ՝ Արշակ, որ ամուսնացած է:

ՊԵՏՐՈՍԵԱՆ ԱՆՆԱ (Հաճի Աննա) — Էլբիսցի, կ'ապրի Հալէպ: Այրի:

ՊԵՏՐՈՍԵԱՆ ԱՌԱՔԵԼ — Տուամնցի. կ'ապրի Հալէպ: Ծերութեան պատճառով կը դստուի Ազգային Ծերանոց:

ՍԱՐԳԻՍԵԱՆ ՎԱՀԱՆ — Խողլուցի. կ'ապրի Գամշի: Բանուոր: Ունի երկու աղջիկ (ամուսնացած):

ՍՏԵՓԱՆԵԱՆ ԱՐԳԱՐ — Քաղքիկցի. բանուոր: Ապրած է Հալէպ եւ հոն մեռած: Ունի երկու մանչ (Յարութիւն եւ Անդրանիկ), մէկ աղջիկ: Ըն-



Նկարում Հալէպ, 1961. Ապրիլ 3. «Տարօնի Արծի» միութեան ակումբին մէջ: Չախէն աջ՝ հստած՝ Նշան Պէշիկբաշիեան, Ղեւոնդ Արք. Զեպէեան (Բեքիոյ Թեմի Առաջնորդ), Եղիշէ Մեկիբեան եւ Տսֆր. Գարեգին Երեցեան:



Նկարում Հալէպ, 1961, Ապրիլ 3. «Տարօնի Արծի» միութեան ակումբին մէջ: Նշան Պէշիկբաշիեան եւ Եղիշէ Մեկիբեան՝ խումբ մը տարօնցիներու հետ:

տանիքը ներկայիս կը բնակի Պէյրութ: Յարութիւն Ստեփանեանը ուսուցիչ է. ունի գրական շնորհ:

ՏԻԼՊԱՐ — Խալաթուչի. տարի: Կ'ապրի Գամշի: Ունի երեք մանչ:

ՕՀԱՆՆԱՆ ՎԱՀԱՆ — էլրիսցի. զործաւոր երկաթուղիի ընկերութեան մէջ: Կ'ապրի Հալէպ: Ունի երեք մանչ եւ երկու աղջիկ: Մէկ մանչը եւ երկու աղջիկները ամուսնացած:



Նկարուած Հալէպ, 1961, Ապրիլ 3, «Տարօնի Արժիւ» միութեան ակումբին մէջ: Խոււր մը տարօնցիներ կը պարեն Նդիշէ Մելիքեանի հետ:

## ԼԻԲԱՆԱՆ ԱՊՐՈՂ ԽՆՈՒՍՑԻՆԻՐ

ԱԼԹԻՊԱՐՄԱՂԵԱՆ ՄՈՎՍԷՍ — Բերդեցի. զործաւոր. ապրած է եւ մեռած Պէյրութ: Մէկ աղջիկ:

ԱՂԵԿԵԱՆ ԼԵՒՈՆ — Ուսուցիչ: Ապրած եւ մեռած Պէյրութ: Մէկ տղայ եւ երեք աղջիկ:

ԱՐՈՅԵԱՆ ՄԱՐԳՐԻՏ — Խալաթուչի. որրեւայրի: Կ'ապրի Պէյրութ:

ԲԱԲԱՆԵԱՆ ԱԲՐԱՀԱՄ — Խալաթուչի: Տէր Սուրէն աւազ քհնյ.ի եղբայրն է: Բանուոր: Ապրած եւ մեռած Պէյրութ: Ունի երկու մանչ, երկու աղջիկ:

ԳԵՌԳԵԱՆ ՍՄԲԱՏ — Չաւորմէցի. կ'ապրի Պէյրութ. զործաւոր: Ունի երկու մանչ (ամուսնացած) եւ երեք թոռնիկ:

ԷՆԿԵՆԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ — Յարօցի. զործաւոր. կ'ապրի Պէյրութ: Ունի երեք մանչ, երեք աղջիկ: Մէկ մանչը եւ մէկ աղջիկը ամուսնացած են եւ ունին մէկական զաւակ:

ԽԱԶԱՏՈՒՐԵԱՆ ՄԻՆԱՍ — Խարաչոպանցի. դերձակ եւ առեւտրական. երկար տարիներ ապրած Հալէպ, ներկայիս կը բնակի Պէյրութ: Ունի մէկ մանչ. չինգ աղջիկ:

ԿԱՐԱՊԵՏԵԱՆ ԱԶՆԻԻ — էլրիսցի. տարի: Երկու զաւակ — մէկ աղջիկ (ամուսնացած), մէկ մանչ:

ՀԱԶՐՈՅԵԱՆ ՆԱԲՈՒԼԵՈՆ — Խոմխայեցի. ուսուցիչ: Երկար տարիներ ապրած է Հալէպ. ներկայիս կը բնակի Պէյրութ: Ունի մէկ մանչ:

ՂԱԶԱՐԵԱՆ ԿԻԻԶԷԼ — Խարաքօփրցի. կ'ապրի Պէյրութ. սպասուհի:

ՂԱԶԱՐԵԱՆ ՄՈՒՇԵՂ — Քաղքիկցի. որմաղիր. ապրած է եւ մեռած Պէյրութ: Ունի չորս մանչ:

ՂԱԶԱՐԵԱՆ ՅԱՐՈՒԹԻՒՆ — Քաղքիկցի. կ'ապրի ձիպէյլ՝ Թուչնոց Բոյն: Գործաւոր: Ունի երկու մանչ, մէկ աղջիկ: Մանչերէն մեծը՝ Հայր Իսահակ վրդ. Ղազարեան, Երուսաղէմի Ս. Յակոբայ Միաբանութեան կը պատկանի:

ՄԱՐՏՈՅԵԱՆ ԱՆԹՈՒԱՆ — Քաղքիկցի. մեռած Պէյրութ. ատաղձազործ: Ունի երեք մանչ, մէկ աղջիկ: Մեռած 1963-ին:

ՄԻՐԶՈՅԵԱՆ (ՍԱՐԳԻՍԵԱՆ) ՎԱՀԱՆ — Հարամիկցի: Երկար տարիներ ապրած է Դամասկոս, իսկ ներկայիս կը գտնուի Պէյրութ: Ծարժավար: Ունի երեք մանչ, երկու աղջիկ եւ չորս թոռնիկ:

ՄԵՒԹԱՐԵԱՆ ԼԵՒՈՆ — Խալաթուչի. կ'ապրի Պէյրութ. բանուոր: Ունի մէկ մանչ, մէկ աղջիկ (ամուսնացած):

ՆԱԼՊԱՆՏԵԱՆ ՎԱՀԱՆ — Բերդեցի. կ'ապրի Պէյրութ. շապկազործ: Ունի երկու մանչ, երկու աղջիկ:

ՆԻԿՈՒԵԱՆ (ՏԵՐՏԵՐԵԱՆ) ՀՄԱՅԵԱԿ — Խարաքօփրցի. կ'ապրի Պէյրութ. արհեստաւոր: Ունեցած է երկու մանչ — մեծը մեռած՝ Եղուարդ, իսկ սղտիկը ամուսնացած է եւ ունի երկու զաւակ:



Նկարում Հալեպ, 1961: Չախեն աջ՝ Մինաս հաչատուրեան, եղիշէ Մելիքեան եւ Մելիք Սարհատեան:



Նկարում Պէյրուք, 1958 (Յունիս), Տէր եւ Տիկին Սեդրակ Սարհատեանի յարկին տակ: Նստած՝ ճախէն երկրորդը՝ Յակոբ Նագուպեան, Մեքր Սուրէն Սարոյեան, եղիշէ Մելիքեան: Կանգնած՝ աջէն առաջինը՝ Գրիգոր Գուրգեան:

ՊԱՂՏԱՍԱՐԵԱՆ (ՄԿՐՏԻԶԵԱՆ) ՆՈՒԱՐԴ — Էլբիսցի-Կ'ապրի Պէյրուք: Ամուսնացած եւ ունի երեք զաւակներ:

ՍԱՐԳԻՍԵԱՆ ԶԱՆՕ — Խարաչոպանցի. այրի. երկար տարիներ Հալէպ ապրած, վերջերս փոխադրուած Պէյրուք: Ունի երկու մանչ, որոնցմէ առաջինը ամուսնացած է:

ՍԱՐՀԱՏԵԱՆ ԼՈՒՍԻԱ — Խարաչոպանցի. ամուսինը կորսնցուցած 1915-ի ջարդին: Ունի չորս զաւակ — Մելիք, Սեդրակ եւ երկու աղջիկ:

ՍԱՐՀԱՏԵԱՆ ՄԵԼԻՔ — Խարաչոպանցի. Կ'ապրի Պէյրուք, վաճառական. տէր Մելիք վաճառատան: Ունի երկու մանչ, երեք աղջիկ:

ՍԱՐՀԱՏԵԱՆ ՍԵՂՐԱԿ — Խարաչոպանցի. Կ'ապրի Պէյրուք. վաճառական. տէր Տարօն վաճառատան: Ունի երեք մանչ, մէկ աղջիկ:


ՍԱՐՀԱՏԵԱՆ ԵՐՈՒԱՆԴ (աչազուրկ) — Խարաչոպանցի. Կ'ապրի Պէյրուք: Ունի երեք մանչ, երկու աղջիկ:

ՎԱՐԴԱՆԵԱՆ ԴԱՆԻԷԼ — Խալչաուլցի. ատաղձագործ. ապրած եւ մեռած՝ Պէյրուք: Ունի երկու մանչ:

ՎԱՐԴԱՆԵԱՆ ՆԻԿԱՐ — Խալչաուլցի. ապրած եւ մեռած Պէյրուք: Ունեցած է երկու մանչ՝ Վահան եւ Դանիէլ:

ՎԱՐԴԱՆԵԱՆ ՎԱՀԱՆ — Խալչաուլցի. Կ'ապրի Պէյրուք. կօշկակար: Ունի երեք մանչ, մէկ աղջիկ:

ՏՆԿՈՅԵԱՆ ՄԵՐՏՕ — Խարաչոպանցի: Վերամուսնացած Պէյրուք եւ հոն մեռած:



Նկարում Պէյրուք, 1958 Մայիսին, Համագայիմի Նշան Փալանեան ճեմարանի մուտքին: Եղիշէ Մելիքեան, ճախին՝ Գրիգոր Վարդանեան, աջին՝ Միսակ Միքատիչեան, երկուսն ալ ուսանող նոյն հաստատութեան մէջ:



Բ. ՄԱՍ

# ՀԱՐՔ - ԽՆՈՒՍ

ԲԱՆԱՅԻՒՍՈՒԹԻՒՆ

## ԲԱՆԱՀԻՒՍՈՒԹԻՒՆ

1920 թուականին, երբ Ամերիկայի Միացեալ Նահանգները հասանք եւ հաստատուեցանք Ֆիլատելֆիա, սկսանք հաւաքուիլ կատարել մեր բնաշխարհի ժողովրդական երգ եւ պարերգներուն: Այս աշխատանքին ընթացքին վայելած ենք օժանդակութիւնը մեր հայրենակիցներուն: Օգտուած ենք Մովսէս Տէր Զաքարեանէ եւ իր տիկնոջ՝ Արեգնազի յիշողութիւններէն: Մովսէս՝ նուագածուի իր հանգամանքով, պարերգները բազմաթիւ առիթներով նուագած եւ երգած է, որոնցմէ ոմանք երգասանակի վրայ առնուեցան 1956 թուականին: Դարձեալ օգտուած ենք Զաքար Տէր Զաքարեանէ, Տիկ. Արեգնազ Խանտիլեանէ (Խնուս բերդեցի, Մուխսու Միսակ ազայի աղջիկը), որ կը բնակէր Տիբրոյիտ: Հայրենակից Գեղամ Բատոյեան, Հալէպէն զրկած է գրաւոր ֆանի մը պարերգներ: Առաւելապէս վայելած ենք Տէր Սուրէն աւագ ֆիմյ. Բարախեանի թանկագին օժանդակութիւնը: Տէր Սուրէն 1940-ին Լաթափայէն զրկեց իր հաւաքած պարերգները:

Բոլորին ալ սրտագին շնորհակալութիւններ:

## ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԵՐԳԵՐ ԵՒ ՊԱՐԵՐԳՆԵՐ

### Հ Օ Յ Ն Ա Ր

Հօ՛յ նար, հօ՛յ նար, հօ՛յ նար,  
 Հօ՛յ նար, ջանը՛մ նար.  
 Նարը՛մ, նարը՛մ, նարը՛մ, նարը՛մ,  
 Նարը՛մ, նարը՛մ, նարը՛մ, նարը՛մ,  
 Հօ՛յ նար, ջանը՛մ նար:

Էրէրուն, հա՛ էրէրուն,  
 Ձուն էկեր վըր սարերուն,  
 Հալէր, կաթէր ֆարերուն,  
 Գըլգըլէր մըջ կըծներուն,  
 Կ'եկներ եարոջ բիջանուն,  
 Կաթէր շամամ ծոցերուն,  
 Մըլիհամ կ'եղներ խոցերուն:

Կէս գիշերին դուրս ելայ,  
 Լուսնեակն անոյշ կը ցուէր,  
 Ցուէր վըր Բալուայ սարուն,  
 Եարուկ բաղջէն անոյշ ֆուն,  
 Փուրսայի բարձն էր գլխուն,  
 Քընուկ էր, քըրտընուկ էր,  
 Սիրուկ էր, գարդուկ էր,  
 Պագուկ էր, կարմրուկ էր,  
 Վարդն յերեսին փռուկ էր,  
 Վախնամ թէ խոռվուկ էր:

## Փ Ա Փ Ո Ւ Ռ Է (ՊԱՐԵՐԳ)

Հէլ հէ, լէ՛ լէ՛, հէ, լէ՛ լէ՛,  
 Հէլ հէ, լէ՛, լէ՛, փափուռի.

Փափուռ նստի դուռ կ'իլայ,  
 Փափուռի շապիկ շիլայ.  
 Փափուռ յելի վըր սարուն,  
 Կ'իշկէ գաշուն ու զգարուն.  
 Փափուռ նստի վըր դարուն,  
 Միտֆ կ'էնէ օլոր տարուն.  
 Փափուռ նստի դէմ գոլուն,  
 Կ'իլայ վըր ուր սեւ հալուն.  
 Փափուռէ ջան, փափուռէ,  
 Հէլ հէ, լէ՛, լէ՛, փափուռէ:

\* \* \*

Փափուռ ջաղցէն եկաւ տուն,  
 Տան դուռ պառկուկ ֆօփկի շուն.  
 Փափուռ կորեկ կը ֆաղէ,  
 Թակէ ու ձարեմաղէ:  
 Փափուռի թումպան շիլայ,  
 Ուր կնիկ նստեր կ'իլայ:  
 Փափուռ իմալ լանկառի,  
 Ո՛ւր շապիկն է ժանկառի,  
 Գնա՛ Բարմազսըզ, արի՛,  
 Քիշոն պարէ, փափուռի.  
 Հէլ հէ, լէ՛ լէ՛, հէ, լէ՛ լէ՛,  
 Հէլ հէ, լէ՛, լէ՛, փափուռի:

## Պ Ա Ր Ե Ր Գ

Մըր տան յետեւ յարտ մի խոզան,  
 Ջըր տան յետեւ յարտ մի խոզան,  
 Ջուխտակ կռուակ մէջ կը թոզան,  
 Առնիմ գիմ եար, յելնամ գոզան:

Մըր տան յետեւ յարտ գարնցան,  
 Ջեր տան յետեւ յարտ գարնցան,  
 Բուլուկ-բուլուկ ջէյրան անցան,  
 Եարըս մէջն էր չը անչըցան:

Մըր տան յետեւ յառու հանած,  
 Ջըր տան յետեւ յառու հանած,  
 Կորի-կորի ռեհան ցանած,  
 Ռեհա՛ն ու ջան յիրար խառնած:

Մըր տան յետեւ բուլ մի տանձի,  
 Ջըր տան յետեւ բուլ մի տանձի,  
 Պսակոզիդ մուրուֆ խանձի,  
 Լեզուն մըջ բերնին պապանձի:

Մըր տան յետեւ ֆառսուն կարաս,  
 Ջըր տան յետեւ ֆառսուն կարաս,  
 Քառսուն կարսի գիւնին լէ խաս,  
 Ամէն կարսից կթխիկ մի տաս,  
 Ամէն կթխին պագիկ մի տաս,  
 Դատաստանին ջուհապի տաս:

## Հ Օ Յ Ն Ա Ջ Ա Ն Ը Ս

Հօյ նազանըմ, նազանըմ,  
 Ջան նազանըմ, նազանըմ,  
 Նազան, դու բարով էկար,  
 Կանաչ սարերով էկար,  
 Կարմիր սուրբով էկար,  
 Նըխշուն մեզարով էկար,  
 Ալմաստ օդերով էկար,  
 Օսկի ֆամարով էկար:

Հօյ նազանըմ, նազանըմ,  
 Պարի մէջի շէկ աղջիկ,  
 Էրթամ մամուդ հարցնիմ,  
 Օր թէ չիտայ, փախցնիմ:  
 Բարտի ծառը բարձր է,  
 Միրած եարը ֆազցր է,  
 Կերթամ կ'առնիմ զալակեօզ,  
 Ջմրիկ զարկէ, հանէ թոզ:

## Խ Ա Ն Է

Լէյի՛, լէյի՛, լէյի՛ հանէ,  
 Խելֆս գլխէս կ'առնէ տանէ...  
 Տնէն յէլի, էրի-պէրի,  
 Որն որ կ'իշկէ, հոգին կ'էրի:  
 Տնէն յէլի, ալ էր հագի,  
 Բարակ մէջկունք շալ էր կապի:  
 Տնէն յէլի, յընկի շորոր,  
 Կը նմանէր նըխշուն արօր:  
 Տնէն յէլի, էրի-պէրի,  
 Կը նմանէր նին ու փէրի:

Օրբեւէրներ, դառներ ի յետ,  
 Դառներ, իշկէր քու սուրի հետ:  
 Տնէն յէլի, գացի կաւի,  
 Գեղ-գեղաւի կայնաւ տաւի,  
 Զարուիս չորցեր, յոտներ ցաւի,  
 Աստուած սիրես՝ դարձի՛, արի՛:  
 Լէյլի՛, լէյլի՛, նազի ի հանէ,  
 Խելքս գլխէս կ'առնէ տանէ...:

## Ի Ի Ն Զ Ի Ն Ե Ր Ե Ա Ր Զ Ա Ն

Հինջիներ եար ջան,  
 Թունջիներ եար ջան,  
 Կապեր էր մըռնան,  
 Խորտակ եար ջան:

Հինջիներ եար ջան,  
 Փունջիներ եար ջան.  
 Լաւ աղջիկ էղներ,  
 Հօրդ տուն կ'էղներ:

Հագեր ես ֆըստան,  
 Կայներ ես բոստան,  
 Թառ բոյիդ խուրպան,  
 Նշանու եար ջան:

Հագեր էր ջուպէն,  
 Կայներ է խուպէն,  
 Զիմ ջիկար վառեց,  
 Էն աղջիկ՝ Նուպէն:

Կապեր ես շալը,  
 Կայներ ես կալը,  
 Քու մօրմէ ծծած  
 Կաթը հալալ է:

Ծառէն է կախուի,  
 Տըսուերկու տերեւ,  
 Յըսօր է փոխուի  
 Իմ օրն ու արեւ:

Հաւէն էնք քաշի  
 Տըսուերկու թէպուր,  
 Զէն տղէն քաշի  
 Անուն հաշատուր:

Ծառէն էնք քաշի  
 Տըսուերկու նիրան,  
 Զիմ սիրտն է դաղի  
 Էն տղէն՝ Միրան:

Միրա՛ն ջան, Միրա՛ն,  
 Ծառ չինար էղնիս,  
 Թողիր զիս տարան  
 Պէմուրատ մեռնիս:

Կը բերի՛ս նուրը,  
 Կը բանա՛մ դուրը,  
 Զըս բերի՞ նուրը,  
 Փակ մնայ դուրը:

Կը բերի՛ս կամպետ,  
 Իշկիմ քու նամբէտ.  
 Զըս բերի՞ կամպետ,  
 Զըմ իշկի նամբէտ:

Կը բերի՛ս օսկի,  
 Կը կենամ խօսքի.  
 Զըս բերի՞ օսկի,  
 Զըմ խօսի իսկի:

Հինջիներ եար ջան,  
 Փինջիներ եար ջան,  
 Բերեր իմ մըռնան,  
 Քեզ կ'առնեմ եար ջան:

## ՀՅՅ ՆԱՐ

Յելայ յերդիկ գաշեցի,  
 Զըհէլ կեանքս մաշեցի,  
 Թոպա՛, բանէ խապար չիմ,  
 Դո՛ւն՝ իմ մեղքս քաշեցիր:

Յելայ վըր բանձրիկ սարուն,  
 Կ'իշկիմ գաշուն ու գգարուն,  
 Էրէրուն, հա էրէրուն,  
 Միտք կ'էնիմ օլոր տարուն:

Ա՛խ, կանչիմ, յո՛ւր իս, յո՛ւր իս  
 Ես ծարաւ իմ, դո՛ւ ջուր իս.  
 Յընկնամ նամբէն ծուռ ու մուռ,  
 Յիգամ, հասնիմ ձրր տան դուռ:

Յելեր իս, կ'երթաս սէյրան,  
 Քու բօյ ու պօսին հէյրան.  
 Մէ՛կ՝ դուռ կեանամ, մէ՛կ՝ յերդիկ,  
 Էրուաւ, իմ հըգար — թերթիկ:

Իննա պէլ ու չինար բաժ,  
 Նըխշուն յաչֆեր, ծամեր կեաժ.  
 Կապեր իս լաչիտ շաշիկ,  
 Կաֆաւ իս, ֆէլիս յուշիկ:

Քու չինարի բօյն ու պօս,  
 Խելֆիդ մեռնիմ, Մարտիրոս.  
 Սբ. Կարապետ էրթանֆ ուխտ,  
 Թաֆ չը մնանֆ, էղնինֆ ջուխտ:

Յակոն կայնի կարմնջին,  
 Դուլապ գնդեր յանկնուին,  
 Խապար տարէֆ գոնֆընին,  
 Մեռնի հըմալ կըտրնին:

## ԸՍԻՄ ՊԱՐ

*(Սիրահարներ՝ տղայ-տղջիկ իրարու սէր յայտնելու նկատուածով,  
 իրարու մլըտիկ — կարմիր — խնձոր կը նետեն):*

Ըսիմ պար, չըսիմ պար,  
 Գետին դառնայ գուր ու դար,  
 Խնձոր քալիմ, արի՛ տար,  
 Զիս մի էնի դարպէդար:

Խնձորի կէս խաժուկ էր,  
 Մըկէլ կէսն արժըթուկ էր,  
 Խնձորնի թաւմաւ գօտիս,  
 Եարոջ համար պահուկ էր:

Ըսիմ պար, չըսիմ պար,  
 Գետին դառնայ գուր ու դար,  
 Նախըրգնէն ուռի ծառ,  
 Զիր ու չամիչ խառ ու մառ:

Նախըրգնէն ուռի ծառ,  
 Խնձոր քալիմ, արի առ,  
 Ուրբաթ, Շաբաթ, վառ է վառ,  
 Լոյս — կիրակի, արի՛ տար:

Հար, նո՛ր, նո՛ր, նո՛ր կ'իգայ,  
 Գարուն էղաւ, նոր կ'իգայ,  
 Խնձոր քալիմ, արի՛ տար,  
 Իմ բաժ, քու բաժ բարէբար:

Հինարի ծառին վրայ,  
 Զինարի ծառին վրայ,  
 Դրեր թափալիկ — փուսկուլ  
 Շէկիկ ծամերու վրայ:

Ես աղջիկ եմ, ալ կ'ուզեմ,  
Բարակ մէջքիս, շալ կ'ուզեմ,  
Յեք որ յիգամ ես ձրք տուն,  
Օսկէ շարան, շար կ'ուզեմ:

Աղջի, հանոր, հանանոր,  
Թուշրդ պագիմ յըմէն օր,  
Յիմցի, ընծի պագ մի տուր,  
Պաակի, ըսէ նոր օրօր:

### Տ Ի Լ Պ Ա Ր Ն Ա Ջ Ե Ր Ո Վ

*«Արտիկ մալուկ մի' մնայ,  
«Տունիէն հըմլայ չի մնայ»:*

**Տ**իլպար մի գայ մըր տան մօտիկ,  
Դո'ւն, անո՛յշ իս, շա՛տ խորոտիկ,  
Կարմիր տոտիկ, դո'ւ արտուտիկ.  
Տիլպար սագերով, նագերով:

Մըր ջուխտ գութան դաշտ կը բանի,  
Տիլպարն յելեր հաց կը տանի,  
Աչքով, ընքով մարդ կը սպաննի,  
Տիլպար սագերով, նագերով:

Տիլպար մ'ընցնայ մըր կալերով,  
Չուր լուսնկին գանգ սէլերով,  
Բոպիկ յոտքերդ ալ սոլերով,  
Տիլպար սագերով, նագերով:

Տիլպար մի' գայ մըր տուն ծուխ է,  
Յերեսդ կարմիր, յաչքերդ՝ թուխ է,  
Քու սաւտայէն սիրտս մուխ է,  
Տիլպար սագերով, նագերով:

Մըր տուն, ձրք տան մօտիկ-մօտիկ,  
Էրթանգ ֆաղինգ կանանչ խոտիկ,  
Բերինգ, դնինգ մարի մօտիկ,  
Տեսանգ, վի՞ր եարն է խորոտիկ:

### Ն Ի Ն Ը Մ Ն Ի Ն Ը Մ Ն Ի Ն Ա Յ Է

**Ն**ինը՛մ, նինը՛մ նինա՛յ է, հո՛յ եաման,  
Նինը՛մ շիրին շաքար է. թօ՛ եաման.

Ջաղջի դուռը տաշուկ է, նինա՛յ է,  
Վրէն խալմով ֆաշուկ է, հո՛յ եաման.  
Մեռնիմ խալամ ֆաշողին, նինա՛յ է,  
Խալամ ֆաշողն իմ եարն է, թօ՛յ եաման:

Ջաղջի բոլոր կանաչ է, նինա՛յ է,  
Աղջիկ տղին քանաչ է, հո՛յ եաման.  
Ջաղջի դիմաց բոգի է, նինա՛յ է,  
Աղջիկ տղին հոգի է, թօ՛յ եաման:

Ջաղջի յառուն ջուր կ'իգայ, նինա՛յ է,  
Աղջիկ տղին դուր կ'իգայ, հո՛յ եաման.  
Ջաղջի յառուն գուլալ ջուր, նինա՛յ է,  
Աղջի՛կ, տղուն պագ մի տուր, թօ՛յ եաման:

Ջաղջի բանդը արօտ է, նինա՛յ է,  
Աղջիկ տղին կարօտ է, հո՛յ եաման.  
Ջաղջի բոլոր գութ ու դար, նինա՛յ է,  
Տղա՛յ, արի գիս մի տար, թօ՛յ եաման:

Ջաղջի դուռը արօտ է, հո՛յ եաման,  
Աղջիկ տղին կարօտ է, նինա՛յ է.  
Ջաղջի դուռը աւագ է, հո՛յ եաման,  
Աղջիկ տղին մարագ է, նինա՛յ է:

Ջաղջի բանդը ջուր չի գար, նինա՛յ է,  
Եարս կորեր, տուն չի գայ, հո՛յ եաման,  
Առանց եարի, ի՞նչ էնիմ, նինա՛յ է,  
Քունս խոտեր, ֆուն չի գայ, թօ՛յ եաման:

Ջաղջի դուռը խամիշ է, նինա՛յ է,  
 Խամշի մէջ լէ էմիշ է, հո՛յ Խաման,  
 Աղբեր խաթրոդ չմնայ, նինա՛յ է,  
 Եարս քընց քեզ անո՛յշ է, թօ՛յ Խաման:  
 Նինը՛մ, նինը՛մ, նինա՛յ է, հո՛յ Խաման,  
 Նինը՛մ, շիրին շափար է, թօ՛յ Խաման:

## Ն Ի Ն Ը Մ Ն Ի Ն Ը Մ Ն Ի Ն Ա Յ Է

(ՏԱՐԲԵՐԱԿ)

Նինը՛մ, նինը՛մ նինայէ, հօ Խաման,  
 Նինը՛մ շիրին շափար է, թօ Խաման,

Աղջի, էրթանք մըր պարտեզ,  
 Զուրն էր յելի յառուի կէս,  
 Հանինք գիրարու հաւէս.  
 Նինը՛մ, նինը՛մ նինայէ...

Աղջի՛, քու անուն Սառէ,  
 Քու յաչքեր խառ ու մառ է,  
 Քու սատէն գիս կը վառէ.  
 Նինը՛մ, նինը՛մ նինայէ...

Աղջի՛, քու անուն Շուշան,  
 Արի էրթանք Սբ. Նշան,  
 Օսկի մատնիքսի նշան.  
 Նինը՛մ, նինը՛մ նինայէ...

Աղջի՛, քու անուն Նըխշուն,  
 Զըր դուռ կը պառկի սեւ շուն...  
 Զըմ դիմանայ չուր աշուն.  
 Նինը՛մ, նինը՛մ նինայէ...

Աղջի՛, քու անուն Թագուն,  
 Արի էրթանք մըր սագուն,  
 Պագ մի տուր՝ քո՛ւ հօր հոգուն.  
 Նինը՛մ, նինը՛մ նինայէ, հօ Խաման...

## Հ Ա Ր Ա Ի Ք Ա Մ Ի Ն

Հարաւ քամին մաղեց գիս,  
 Մըջ քու ծոցուն քաղեց գիս...

Կէս գիշեր, լուսնակ գիշեր,  
 Լուսնակն իր շողն էր գարկեր,  
 Եարսի բակն էր կայներ,  
 Բակնի շողով էր լեցուեր:

Կայներ էր դէմ յամպրոցին,  
 Շողն էր վըր սրտանոցին,  
 Մեռնէնք գուր սիպտակ ծոցին,  
 Դեղ ու մըլիամ իմ խոցին:

Կէս գիշերին դուրս յելայ,  
 Թուխ ամպն անոյշ կը ցուէր,  
 Լուսնակն յելեր լուսէ-լուս,  
 Կանչէք զՄըլըրսն յիգայ դուրս:

Սարէն փրծայ՝ յիջայ ցած,  
 Տեսայ դուռն էր կիսաբաց,  
 Մտայ, առայ քաժա հաց,  
 Անտէր շնիկ գիս մի խած...

Հարաւ քամին մաղեց գիս,  
 Մըջ քու ծոցուն քաղեց գիս...  
 Սալամ կափաւ երամով,  
 Զիս սպանիր քու դարտով:



## Հ Ա Ր Ա Ի Ք Ա Մ Ի Ն

(ՏԱՐՔԵՐԱԿ)

Հարաւ քամին մաղեց զիս,  
 Նարգուլ եար, Նարգուլ եար,  
 Մէջ քու ծոցուն քաղեց զիս,  
 Նարգուլ եար, Նարգուլ եար:  
     Իմալ իմ ես քու սիրուն,  
     Նարգուլ եար, Նարգուլ եար,  
     Ի՛նչ մեղրամոմ դէմ գոլուն,  
     Նարգուլ եար, Նարգուլ եար:  
 Յելեր է Հալպու քամին,  
 Նարգուլ եար, Նարգուլ եար,  
 Կը զարկէր շէկիկ ծամին,  
 Նարգուլ եար, Նարգուլ եար:  
     Ջուր կու գայ Բագմաց սարէն,  
     Նարգուլ եար, Նարգուլ եար,  
     Կը քափի մարմար քարէն,  
     Նարգուլ եար, Նարգուլ եար:  
 Գըլգըլայ մէջ կժներուն,  
 Նարգուլ եար, Նարգուլ եար,  
 Վերցուէր դրուէր փիմանուն,  
 Նարգուլ եար, Նարգուլ եար:  
     Թափէր շամամ ծծերուն,  
     Էղնէր մլիհամ խոցերուն.  
     Կէս գիշերուն դուրս յելայ,  
     Նարգուլ եար, Նարգուլ եար:  
 Լուսնեակն անոյշ կը ցոլար,  
 Նարգուլ եար, Նարգուլ եար,  
 Կը ցոլար Բինկօլ սարուն,  
 Նարգուլ եար, Նարգուլ եար:  
     Լուսնեա՛կ, քէ Աստուած սիրես,  
     Նարգուլ եար, Նարգուլ եար,  
     Բարե՛ւ էրէ իմ եարուն,  
     Նարգուլ ջան, Նարգուլ եար:

## Պ Ա Ր Ե Ր Գ

Քու պոյր չինարի ծառի կը նմանէր, եա՛ր, եարօ ջան:  
 Քու հակատ Հալպու մէյտան կը նմանէր, եա՛ր, եարօ ջան:  
 Քու յընճներ խալմով քաշած կը նմանէր, եա՛ր, եարօ ջան:  
 Քու մագեր բսկի թելի կը նմանէր, եա՛ր, եարօ ջան:  
 Քու աչքերդ պիլլորի շուշի կը նմանէր, եա՛ր, եարօ ջան:  
 Քու ակո՛ւժ շարած սատափ կը նմանէր, եա՛ր, եարօ ջան:  
 Քու յէրես Մըլըտու խնձոր կը նմանէր, եա՛ր, եարօ ջան:  
 Քու լեզուն պլպուլի խօսքի կը նմանէր, եա՛ր, եարօ ջան:  
 Քու պոկներ ճըղարի թղթի կը նմանէր, եա՛ր, եարօ ջան:  
 Քու բերան մեղրի փեքկի կը նմանէր, եա՛ր, եարօ ջան:  
 Քու մատներ մեղրէ մոմի կը նմանէր, եա՛ր, եարօ ջան:  
 Քու ձէնիկ կոընկու ձէնի կը նմանէր, եա՛ր, եարօ ջան:

## Պ Ա Ր Ե Ր Գ

Այնքեր իմ սարի ծէրին,  
 Կարօտ իմ ազիգ եարին,  
 Հէյ, սիրտ էրէ անջիգեար,  
 Մէկ հար էրէ իմ սրտին:  
     Գիշեր բիթուն քուն չունիմ,  
     Դարդու իմ, դադար չունիմ,  
     Քու անոյշ, վառման սիրուց,  
     Կ'էրիմ ու գուման չունիմ:  
 Սիրող սիրող գուման է,  
 Հալպ սաւտէն եաման է,  
 Իմ ջահէլ — ջիւան հոգին,  
 Քու բոց սիրո՛ւն հայրան է:  
     Սիրտսի մնաց մխալէն,  
     Աչքսի նամբէդ նայելէն,  
     Եար կը մեռնիմ դիւանայ,  
     Ծով աչքերուդ կարօտէն:

## Զ Ր Ն Գ Լ Ի Կ

Հանոր, նանոր, հանանոր,  
Զընգլիկ ու մընկլիկ, յըմնոր...

Զընգլիկ, գացի Բոնաշէն,  
Զընգլիկ, հատիկ կը խաշեն,  
Զընգլիկ, գիրար կը տաշեն,  
Զընգլիկ, քափանք քամաշէն:

Զընգլիկ, ալուն իմ քաղի,  
Զընգլիկ, գօտիս իմ շարի,  
Զընգլիկ, չեղաւ էս տարի,  
Զընգլիկ, բարին՝ գալ տարի:

Զընգլիկ, գացի ֆրդու գեղ,  
Զընգլիկ, բերի նուկի մ'եղ,  
Զընգլիկ, էփի ճուածեղ,  
Զընգլիկ, տարայ հովիւուն...

Զընգլիկ, ոչխար գէլ յընկաւ,  
Զընգլիկ, հովիւ խոռվաւ,  
Զընգլիկ, բերուոր շիւարաւ,  
Զընգլիկ, ֆթոց գլորաւ...

Զընգլիկ, գացի Ստամպօլ,  
Զընգլիկ, բերի փարա բօլ,  
Զընգլիկ, գնի ջուխտ մի սոլ,  
Զընգլիկ, հագանք դօրեցդօր:

Հանոր, նանոր, հանանոր,  
Զընգլիկ ու մընկլիկ, յըմնոր...

## Զ Ր Ն Գ Լ Ի Կ (ՏԱՐԲԵՐԱԿ)

Քացինք Գուլեսօր,  
Առինք ջուխտ մի սոլ,  
Հագանք դօրեցդօր:  
Գացինք ֆրդու գեղ,  
Առինք նուկի մ'եղ,  
Էփինք ճուածեղ,  
Տարանք հովիւուն,  
Առնէնք կաթ, մածուն:  
Հովիւ խոռվաւ,  
Քըթոց գլորաւ,  
Ոչխար շիւարաւ,  
Բերուոր մըլուլաւ...

## Կ Ա Ր Ք Է Զ Ի Ս

Ափկօ՛, կըֆօ՛, կարգէ գիս,  
Հէմ կի՛ւլ, հէմ վա՛րդ, հէմ նարգիս,  
Զոլի կոունկ, յէրկէն վիգ,  
Ափկօ՛, կըֆօ՛, կարգէ գիս...

- Նախորդ մարդու մի՛ տա գիս,  
Թողէ գկովեր, մոռնայ գիս.
- Զուլիակ մարդու մի՛ տա գիս,  
Թալէ գմագոգ, մոռնայ գիս.
- Հալուոր մարդու մի՛ տա գիս,  
Ակոայ չունի, կծէ գիս,  
Քըրպուն յելնայ ծեծէ գիս:

Հովիւ մարդու տուր ի գիս,  
Խըր մագու կաթ խմցու գիս,  
Սեւ կուլպի տակ ֆընցու գիս,  
Ուր գրկի մէջ նըմոէ գիս,  
Գիշեր էղնի, սիրէ գիս,  
Ափկօ՛, կըֆօ՛, կարգէ գիս...

## Կ Ա Ր Ք Է Զ Ի Ս

(ՏԱՐԲԵՐԱԿ)

Ափկօ', կբօ', կարգէ գիս,  
 Զոլի կռունկ, յերկէն վիգ,  
 Թունար մարդու մի'տայ գիս,  
 Համրէ գոսկին, մոռնայ գիս:

Ափկօ', կբօ', կարգէ գիս,  
 Գօլի կռունկ, յերկէն վիգ,  
 Թարգի մարդու մի'տայ գիս,  
 Առնէ գասեղ, թեղ, մատնոց,  
 Մոռնայ զընձի ու գիմ ծոց:

Ափկօ', կբօ', կարգէ գիս,  
 Բըլի կռունկ, յերկէն վիգ,  
 Վարժապետի չի տաս գիս,  
 Նստի կարդայ, մոռնայ գիս:

Ափկօ', կբօ', կարգէ գիս,  
 Զոլի կռունկ, յերկէն վիգ,  
 Զուլիակ մարդու կարգէ գիս,  
 Թալէ գմագոգ, գրկէ գիս...

## Տ Է Մ Ա Յ Ր Ա Մ

Տէ Մայրա'մ, Մայրա'մ, Մայրա'մ,  
 Լուսնակն յելաւ լուսէ լուս,  
 ԶՄայրամ կանչին հանին դուրս:  
 Կախաւ, հաւքեր կտրեցին,  
 Զկարմիր գինին խմցուցին,  
 ԶՄայրամ ցըւէն թոցուցին:  
 Տէ Մայրա'մ, Մայրա'մ, Մայրա'մ,  
 Տէրտուջ ազջիկ, Մայրա'մ,  
 Իմ ջան, քու ջանին հայրան...

\* \* \*

Զուրն է յընկի յառուըներ,  
 Աստուած գարկէ գպառուըներ:  
 Զուրն է յընկի ջաղցըներ,  
 Աստուած առնէ գաղջըկներ:  
 Զուրն է յընկի էտ կորդեր,  
 Աստուած պահէ գմեր խոռթեր:

## Հ Ի Ն Է Ր Ն Ա Ր Ի Ն Է Ր

Հինէր նարինէր, հօ'յ, հօ'յ,  
 Զինէր նարինէր, հօ'յ, հօ'յ,  
 Հինէր, ես բաղի մէջ էնք,  
 Շամամի թաղի մէջ էնք:

Սարեր, ձորեր խներով,  
 Գողտուկ կ'իգամ բըներով,  
 Հասնիմ ժածան քարու խէչ,  
 Զքի գտնամ գիշերով:  
 Հինէր նարինէր, հօ'յ, հօ'յ, ելն:

Տօ', տղա'յ, տղա'յ կալը տես,  
 Պաղ յաղբրի սալը տես,  
 Նանէս քըզի ազջիկ չիտայ,  
 Գնա գլխուդ նարը տես:  
 Հինէր նարինէր, հօ'յ, հօ'յ...

Տօ', տղա'յ, տղա'յ, ջա'ն տղայ,  
 Զանս քի դուրպան, տղա'յ,  
 Ծամս էրէ խարգան, տղա'յ,  
 Զարկ սեւ եգան, ջա'ն տղայ:  
 Հինէր նարինէր, հօ'յ, հօ'յ...

Խամուր բերդը տուն ունիմ,  
Մէջ լէ օսկի տուն ունիմ,  
Կըտրուկ ըսէ, շա՛ն աղջիկ,  
Հըգար քեզ պէս շուն ունիմ:  
Հինէր նարինէր, հո՛յ, հո՛յ...

Չուն նստեր Բինգօլ սարուն,  
Սպասէ չուր ի գարուն,  
Գարուն կարգուիլ չէղնի,  
Թըղ մնայ օլոր տարուն:  
Հինէր նարինէր, հո՛յ, հո՛յ...

Սուրբ Կարապետ ուխտ կ'էնիմ,  
Ծամերուս հուսկ ջուխտ կ'էնիմ,  
Օր թէ չիգաս զիս չառնիս,  
Իրիցու խէչ թուղթ կ'էնիմ:  
Հինէր նարինէր, հո՛յ, հո՛յ...

## Ի Մ Ա Լ Է Ն Ք

**Ի**մալ էնֆ, իմալ էնֆ,  
Իմալ էնֆ յես ֆու սիրուն,  
Մեղրէ մում տուր դէմ գուրուն,  
Հալէնֆ, թափէնֆ ֆարերուն:  
*Կրկնէրդ.*—Իմալ էնֆ, իմալ էնֆ...

Իմալ էնֆ յես ֆու դարտէն,  
Լոր մը թըռաւ մըր յարտէն,  
Կտրաւ իմ սրտի փարտէն:  
Իմալ էնֆ, իմալ էնֆ...

Իմալ էնֆ յես ճըր տանֆին,  
Լուս յընկնէնֆ վըր յերդըկին.  
Շողէնֆ, կաթէնֆ ֆու գրկին:  
Իմալ էնֆ, իմալ էնֆ...

Իմալ էնֆ յես ֆու յապով,  
Բաղեղ էնֆ կանաչ կապով,  
Փաթուէնֆ, յելնէնֆ ճըր պատով:  
Իմալ էնֆ, իմալ էնֆ...

Իմալ էնֆ ֆինով տարուկ,  
Դու՛ նրագ, յես լէ պատրուգ,  
Վառէնֆ, թափէնֆ ֆու գրկուկ:  
Իմալ էնֆ, իմալ էնֆ...

Իմալ էնֆ յես ֆու ծոցին,  
Կայներ իս խէչ յամպրոցին,  
Լուս տուիր սըրտանոցին:  
Իմալ էնֆ, իմալ էնֆ...

Իմալ էնֆ յես ֆու սիրուն,  
Յես՛ ալ, դու՛ յաղբրանց արուն,  
Բացուիս խէչն ի ջրերուն:  
Իմալ էնֆ, իմալ էնֆ...

## Ճ Ը Կ Ը Ն Դ Խ Ա Ղ

**Ե**ա՛ր, եա՛ր եաման, եա՛ր եաման,  
Հաւար եաման, Դէրը՛ֆօ.  
Հայլի իշկիմ, Դէրը՛ֆօ,  
Հաւար եաման, Դէրը՛ֆօ,  
Թուխ դեղ ֆաշիմ, Դէրը՛ֆօ,  
Դալիլ եաման, Դէրը՛ֆօ,  
Ճամբէղ իշկիմ, Դէրը՛ֆօ,  
Հաւար եաման, Դէրը՛ֆօ,  
Դալիլ եաման, Դէրը՛ֆօ,  
Հալի՛մ, մաշի՛մ, Դէրը՛ֆօ:

Ջուր է յընկի էն կորդեր,  
 Հաւար եաման, Դերը՛ֆօ,  
 Աստուած պահէ գէտ խոռթեր.  
 Դալիլ եաման, Դերը՛ֆօ:  
 Ջուր է յընկի յառուրներ,  
 Հաւար եաման, Դերը՛ֆօ,  
 Աստուած զարկէ գպառուրներ,  
 Դալիլ եաման, Դերը՛ֆօ:

Ջուր է թողած ջազցըներ,  
 Հաւար եաման, Դերը՛ֆօ,  
 Թըղ շատ ապրին աղջըկներ,  
 Դալիլ եաման, Դերը՛ֆօ:  
 Աղջըկներ, նըխշուն փէշեր,  
 Հաւար եաման, Դերը՛ֆօ,  
 Խըլայի կարմիր թըշեր,  
 Դալիլ եաման, Դերը՛ֆօ:

### Դ Է Ր Ը Ք Օ Չ Ա Ն

**Դ**երըֆօ հօյնա՛ր, հօյնա՛ր, հօյնա՛ր, Դերըֆօ ջան,  
 Դերըֆօն իմ եա՛ր, Դերըֆօն ֆում եա՛ր, եար ֆօ ջա՛ն...

Դերըֆօն յելեր կ'երթեր ի բեր, Դերըֆօ ջան,  
 Նա բերն էղներ, նա բերատեր, եար ֆօ ջան.  
 Դերըֆօն յելեր կ'երթեր կանկար, Դերըֆօ ջան,  
 Ծամերն հուսկեր խանկար, խանկար, Դերըֆօ հօյնա՛ր,  
 Դերըֆօ ջան:

Դերըֆօն յելեր կ'երթեր օղին, Դերըֆօ ջան,  
 Քրտինֆ զարկեր վգի տողին, եար ֆօ ջան.  
 Դերըֆօն յելեր կ'երթեր սընձի, Դերըֆօ ջան,  
 Նոր եար բռներ՝ թոզեց զընձի, Դերըֆօ հօյնա՛ր, Դերըֆօ ջան:

Դերըֆօն յելաւ, կ'երթեր յէգին, Դերըֆօ ջան,  
 Կը շօթօրեր՝ իմալ մաֆին, եար ֆօ ջան,  
 Քաղեց հաղող, լըցեց գօտին, Դերըֆօ ջան,  
 Որն որ ուտեր, յելներ հոգին, Դերըֆօ հօյնա՛ր,  
 Դերըֆօ ջան:

Դերըֆօն կայներ խէչ յամպրոցին, Դերըֆօ ջան,  
 Լուսնակ զարկեր սրտանոցին, եար ֆօ ջան,  
 Ջուխտակ շամամ մըջ ուր ծոցին, Դերըֆօ ջան,  
 Ռճրիկ էներ գրկանոցին, Դերըֆօ հօյնա՛ր, Դերըֆօ ջան:

Դերըֆօն յելեր կ'երթեր մարագ, Դերըֆօ ջան,  
 Ջուր ուտելիք մեղր ու կարագ, եար ֆօ ջան,  
 Դերըֆօն յելեր սեր ու սէյրան, Դերըֆօ ջան,  
 Նման անտեր չոլի ջէյրան, Դերըֆօ հօյնա՛ր, Դերըֆօ ջան:

Մենք սիրեր ենք գիրար կ'առնենք, Դերըֆօ ջան,  
 Ձըր դարտ ու տալին էլ ի՞նչ է, եար ֆօ ջան,  
 Դերըֆօ հօյնա՛ր, հօյնա՛ր, հօյնա՛ր, Դերըֆօ ջան,  
 Դերըֆօն իմ եա՛ր, Դերըֆօն ֆում եա՛ր, եար ֆօ ջան:

### Զ Ո Ի Գ Ե Ր Գ

**ՏՂԱՅ.**— Տղէն կայներ կարմնջին,  
 Դոլապ գնդներ յանկնուին,  
 Խապար տարէք զոֆննին,  
 Աղջիկ իտայ կտրնին:

**ԱՂՋԻԿ.**— Տղա՛յ, տղա՛յ, կալը տես,  
 Պազ յաղբրի սալը տես,  
 Նանէն ֆըզի աղջիկ չիտայ,  
 Գնա գլխուդ ֆարը տես:

**ՏՂԱՅ.**— Հա էսա, էսա, էսա,  
 Կանանչ ու կարմիր ֆէսա,  
 Գնա ֆու մամուն իօսայ,  
 Ջիս էնէ ուրին փեսայ:

ԱՂՋԻԿ.— Տօ՛, տղա՛յ, տղա՛յ, ալ կապով,  
 Հար ե՞ք ընցնաս մըր պատով,  
 Մըր պատ բըլաւ քու յապով,  
 Կորաւ զինդնի դոլապով:

ՏՂԱՅ.— Դոնով ընցայ, քափ քէլեցի,  
 Խանչալ գարկի, գերդիկ բացի,  
 Եարս տուն չէր՝ նստայ լացի,  
 Թաժա դարդով յեւայ գացի:

ԱՂՋԻԿ.— Էրթամ ըսիմ իմ աղբօր,  
 Յիգայ գարկէ խանչլով,  
 Հանէ գֆու կարմիր արուն,  
 Թափէ քու շէկ ծամերուն:

### ՀԱՄԲԱՐՉՄԱՆ ԵՐԿՈՒՇԱԲԹԻՆ

Համբարձման էրկուշաբթին,  
 Առայ գֆոցիսն ու գգերընդին,  
 Յընկայ գետան յակոնտան,  
 Քաղեցի, քաղթփեցի,  
 Հինգ խուրձ ու կէս կապեցի:  
 Քաղեցի վարդ, մանուշակ,  
 Փոեցի եորդան դոշակ,  
 Յիգայ իմ եար խանըմնակ,  
 Հուսկէ գծամերն քոթենակ,  
 Թալէ յետին հայենակ:

### ՀԱՄԲԱՐՉՄԱՆ ԵՐԿՈՒՇԱԲԹԻՆ

(ՏԱՐԲԵՐԱԿ)

Համբարձման էրկուշաբթին,  
 Վերցի գֆոցիսն ու գգերընդին,  
 Յընկայ հըտ յարտու ափին,  
 Քաղեցի, քաղթփեցի,  
 Ծորեցի, ծորթփեցի,  
 Մանտրի՛կ, մանտրի՛կ խորմեցի,

Խորումնի խուրձ կապեցի,  
 Կէմիկ չեղաւ խուրձ կապէնք,  
 Ծամերդ կէմիկ էրեցի,  
 Սէլիկ չեղաւ բարդ կրէնք,  
 Պառեկս սէլիկ էրեցի,  
 Ջկոունկ յամոլ լծեցի,  
 Ջարօս հօրիք լծեցի,  
 Ջնննուդ հօտադ դրեցի,  
 Ջսեւ օձ, խարզան էրեցի,  
 Ջոլէն գբարդ բերեցի,  
 Բերեցի, դէգ էրեցի:

Կալ ու կուտի հէյամն էր,  
 Քաղի գգարին ու գցորեն,  
 Կրեցի ու կալ լցի,  
 Օրան-օրան փրոեցի,  
 Լակլակ կոռի լծեցի,  
 Կիվիւ վրէն նստուցի,  
 Հըլա՛-հուլա՛ կանչեցի,  
 Օրան ծեծի, քըլըմեցի,  
 Մատուիս հօրսելի էրի,  
 Բերնով քամի փչեցի,  
 Թեղը քամամ էրնեցի:

Սըրսուռ հատեր շեղջ գարկի,  
 Գացի շահնէն կանչեցի,  
 Շահնէն քաֆով քաֆեց շեղջ,  
 Նստաւ կերաւ ձուածեղ,  
 Լիգեց գուր մատներն ու գպեխ,  
 Վերցուց գկոտ, չափեց կալ,  
 Ջիմ բընեքն էրի ջըլալ,  
 Երկու բուն կէս-կէս լըցի,  
 Հօտադ-մշկուն, հաւ քերուն,  
 Հախնի քըլմամ բաժնեցի,  
 Մընացածն ի տուն տարի,  
 Տարուայ բնադուն էրի,  
 Տարեբոլոր կուշտ կերանք,  
 Չուր օլոր տարին յելանք:

## Պ Ա Ր Ե Ր Գ

Դրլօ, դրլօ, դրլօ ջան,  
Դրլօ, դրլօ, սըննարի.  
Մշու դաշտը մշուշ է,  
Օդն ու ջուրը անուշ է:  
Դրլօ, դրլօ, դրլօ ջան...

Մալազկերտ մանր գեղ էր,  
Ջուրը հիւանդի դեղ էր:  
Դրլօ, դրլօ, դրլօ ջան...

Խնուս կ'ասեն աչաց լոյս,  
Աչաց լոյս է, սրտի յոյս:  
Դրլօ, դրլօ, դրլօ ջան...

Ալաշկերտ բարձր տեղ է,  
Սիրոյ սրտերուն նեղ է:  
Դրլօ, դրլօ, դրլօ ջան...

Սասնայ սարեր կանանչ են,  
Հերոսներն աննանանչ են:  
Դրլօ, դրլօ, դրլօ ջան...

Կօյնուկն ու Վարդօ գօգան,  
Մէկ-մէկէլէն գանազան:  
Դրլօ, դրլօ, դրլօ ջան...

Բաղ ու բաղջայ է Խլաթ,  
Մէջն է լեցուն մեղր ու կաթ:  
Դրլօ, դրլօ, դրլօ ջան...

Բուլանուխ դաշտ ու դուրան,  
Աղջիկներ մէջ շորորան:  
Դրլօ, դրլօ, դրլօ ջան...

## ՄԱՐՕ ԴՈՒ ԽՈՐՈՏԻԿ

Մարօ, դու խորոտիկ,  
Հայլին ի՞նչ կ'էնիս,  
Բարակ մէջքիդ վրէն,  
Քամարն ի՞նչ կ'էնիս...

Մարոն սարէն կ'իգայ,  
Շալակր շախ է,  
Օսկէքել ծամերը  
Բիջանուց կախ է:

Մարոն կոն է գարկի,  
Ախոռ Զիմանը,  
Ոչխարն ու գառ կ'արծէ,  
Սրտիկ դուման է...

Արի Մարօ, արի,  
Յօրի՞ նազ կ'էնիս,  
Սալամ կախաի պէս  
Խօսքս հազ կ'էնիս...

Արի՛ Մարօ, տանիմ  
Բարձրիկ լեռները,  
Օր թէ ես հոտուրտամ  
Քու ջուխտ նոները...

## Շ Ո Ւ Շ Օ

Շուշոն յելեր կ'երթէր օդին,  
Լուսնակ գարկի վրդի տողին,  
Ես խուրպան էնք ուր սսեղծողին,  
Մարալ Շուշօ, ջէյրան Շուշօ:

Մըր դրան յառէջ յարտ գարնցան,  
Ջուխտ քմ կտրին էկան անցան,  
Շուշոն տեսան, տեսնալ դարձան,  
Խորոտ Շուշօ՛, ջէյրան Շուշօ:

## Գ Ո Վ Ա Ս Ա Ն Ք

Ջաղցի թեւեր պոփի է,  
Աղջիկ տղին հոգի է:

Ջաղցի դռներ տաշուկ է,  
Խալամ վրայ ֆաշուկ է,  
Աղջիկ տղին մաշուկ է:

Ջաղցի թեւեր աւազ է,  
Աղջիկ տղին մարազ է:

Ջաղցի բոլոր կամար է,  
Աղջիկ տղին համար է:

Ջաղցի ծառեր նարկըզի,  
Պատոհիս չըմ առնի գֆըզի:

## Կ Լ Ո Ր Պ Ա Ր

Սասմայ կ'ելներ բարակ ծուխ,  
Նշանլու էնֆ Բուլանուխ,  
Ջարկեց մախնէն, թալեց պուխ,  
Յերես կարմիր, յաչֆեր թուխ:

Նախըրգընէն կը կէնէնֆ,  
Քոռ հընձըղուն նաշ կը դնէնֆ,  
Իմ մամ ֆըզի աղջիկ չիտայ,  
Ջահիլութիւն թարկ էնէնֆ:

Կաֆաւ կայներ զընարին,  
Կըտուց դրեր վըր ֆարին,  
Ես աղջիկ էնֆ, բէլլի էնֆ,  
Նշանլու էնֆ, դէլլի' էնֆ:

Քեզ կանչեմ յո՛ւր իս, յո՛ւր իս,  
Ես ծարաւ իմ, դո՛ւ ջուր իս.  
Ժամուց յելնող շէկ-տղայ,  
Քու սիրուն հէսիր յընկայ...

Շաղ իջեր գետին, հալեր,  
Բոպիկ հետիկն է կորեր,  
Առայ գետիկն ու գացի  
Եարոջ դուռ հանգոցուցի:

Եարիկս ի բաղջէն էր ֆուն,  
Փուրսայի բարձն էր գլխուն,  
Քներ էր, ֆրտներ էր,  
Վարդն յերեսին փըռուեր էր...

Գացի՛, գացի՛ հեռացայ,  
Բանձրիկ գեղին մօտեցայ,  
Գացի կ'առնէնֆ թաժա հաց,  
Անտէր շնիկ գիս մի խած:

Գացի Մուշ՝ բերի նուռ,  
Բերի թափի ժամու դուռ,  
Մ'իշկի ընձի ծո՛ւռ ու մո՛ւռ,  
Խելֆս գլխէս կ'իգայ ժո՛ւռ:

Կրակն ըրէ մահանա,  
Մըր տուն արի ու գնա,  
Հեղ-հեղ՝ իմ վրէն իշկէ,  
Սաւտէդ սրտիս հըռըշկէ:

Գետան բոլոր մանրուկ ուռ,  
Շուշօ մէրիկ ջիկրէն ծուռ,  
Շուշոն տարան տանկի դուռ,  
Շուշօ մօր սիրտ ցա՛ւ-մըմո՛ւռ:



Նարոջ դռնով ընցայ ես,  
Անձրեւ կ'իգէր, տղկայ ես,  
Արեւ զարկեց թըփռայ ես,  
Քընց քափուր վարդ բացուայ ես:

Ձեռնակայ բերդն է փըլեր,  
Նարիկս իր տակն է քներ,  
Քըներ էր ու քրտներ,  
Խիալով էր, ա՛խ կ'էնէր...

Խնուս բերդի Չորու թաղ,  
Նարս պառկուկ քրտնշաղ,  
Չուր յե՞ք կեանք փախէ-փախ,  
Արի, էնինք առ ու փախ...:

## Ե Ա Ր Ը Մ Գ Ո Ր Ա Ն Ի

Հըրէ 10, 10, 10, եարքմ գորանի,  
Հըրէ 1է, 1է, 1է, դոստըմ գորանի.

Գիշերուան լուսնեակն էր,  
Ցերեկուան արեւ,  
Նարուկ էկաւ ընցաւ,  
Չը տուեց բարեւ:  
Տեսայ մլուլեր էր,  
Նար, խոռվեր էր.  
Կանչի, եա՛ր-ջա՛ն, արի,  
Խըռով մի մընայ,  
Դունիէն՝ սուտ ու փուռ է,  
Մարդու չը մնայ...  
Հըրէ 10, 10, 10...

Տարօնի չորս բոլոր  
Մանտր ու բէտ գեղեր,  
Ձէն եարն որ սիրեր իմ

Խորոտկի ցեղ էր,  
Ցընգան որ գիս կ'իշկէր  
Իմ հոգուն դեղ էր...  
Հըրէ 10, 10, 10...

Ալաշկերտ Մալաշկերտ,  
Մանտր ու բէտ գեղեր,  
Էրկուքս մէկ շապկին  
Փողպղիկ նեղ էր,  
Քու բինգոլ աչքերը  
Թուխ դեղի տեղ էր,  
Քու մէյտան հակատը  
Ջըրընտի տեղ էր,  
Քու կարմիր թշները  
Պագելու տեղ էր,  
Քու շունչն որ կը շնչէր  
Իմ պըրնին դեղ էր...  
Հըրէ 10, 10, 10...

Ցորեն իմ ցանի, 10',  
Ցելեր է պառկի,  
Պըզտըկունց սիրեր իմ  
Չըմ կընայ թորկի,  
Շընութիւն թէ կ'էնէ  
Չըմ կընայ թարկի...  
Հըրէ 10, 10, 10...

Ցորեն իմ ցանի,  
Հետ գուրնի ական,  
Ծլեր, շաղ տուեր,  
Հետ արեգական,  
Աստուած թող օրհնէ՝  
Գեղ ու գեղական,  
Սիրեր իմ կ'առնեմ  
Ես՝ իմ սիրական,  
Հըրէ 10, 10, 10...

Բոստան իմ ցանի,  
Վըր դեմի դարուն,  
Աստուած որ օրհներ  
Ձէս տարուս գարուն,  
Էղներ շամամոք շատ,  
Ճամբէնք իմ եարուն:  
Հըրէ 10, 10, 10...

Բոստան իմ դրի  
Ծլեր բընի փող,  
Աստուած անիծեր.  
Ձիւրմալ յարս ու հող,  
Ձէղաւ շամամոք  
Ճամբէնք եարոջ փոխ...  
Հըրէ 10, 10, 10...

Գարուն էր, գարուն,  
Թողած ին գխոչեր,  
Էկած ին սէյր կ'էնին  
Ըտ գեղի ջոջեր,  
Հագած ին սոլեր,  
Պըխած ին գպոչեր...

Հըրէ 10', 10', 10', 10', եարբւմ գորանի,  
Հըրէ 1է', 1է', 1է', 1է', դոստըմ գորանի:

### Բ Ե Ր Ձ Ե Ն Ի Կ

Տարան Տիգօ, բերգենիկ,  
Քոփակ Տիգօ, բերգենիկ.  
Բերգենկայ պէս պար չկայ,  
Տիգոյի պէս եար չկայ:

Տիգոն գնաց գըոգըկի,  
Ուր արեւէն չըոգըկի.  
Տարան Տիգօ, բերգենիկ,  
Հա բերգենիկ, բերգենիկ:

Տիգոն գնաց եարոջ տուն,  
Քըշփեց.— Կորի', տոլի-շուն.  
Կաղըզվանայ ձորն էնիկ,  
Տարան Տիգօ, բերգենիկ:

Տըփիսիսու մկրատ բերինք,  
Տիգոյին ջուպա կտրինք,  
Յետի փէշեր կարն էնինք,  
Կըլապիտոն իսարն էնինք:

Տարան Տիգօ, բերգենիկ,  
Բերգենկայ պէս պար չկայ,  
Մարոյի պէս եար չկայ,  
Տօ, շուն Տիգօ, գէտ մ'էնի...

### Դ Ո Ւ Ր Ա Ն Պ Ա Ր

Ձուր փրցեր կ'իգայ սարէն,  
Կը թափի մարմար քարէն,  
Ձը սաղնայ սրտիս եարէն,  
Եար փախաւ Ուլուս ձորէն:

Յիրկուն էր, նրագն էր վառ,  
Գու կը լըմանիս զոգնի գառ,  
Օրբեւէրցի' գիսի առ,  
Կանչեմ եա՛ր, գիս էկօ տար:

Քու կանանչ արեւուն եար,  
Գեղի տըկով գիսի տար,  
Ձարկիմ գիմ դոշ քու դոշին,  
Իմալ հալվէն մըջ լօշին:

Լուսնեակ էն սարի տալտէն,  
Թողիմ կորիմ քու դարտէն,  
Յիջայ կալեր գաշեցի,  
Ձահէլ ումըս մաշեցի:

Նխշուն չոկեկ էդի մէջ,  
 Զաղջիկ կարգին գեղի մէջ.  
 Յորնէ խմորն է գնդուկ,  
 Եար դու նման իս պնդուկ:

## ԼՈՒՍՆԿԱՆ ԿԱՄԱՐ — ԿԱՄԱՐ

Լուսնկան կամար-կամար,  
 Դու ստեղծուեր իս ինձի համար.  
 Լուսնկան կամար-կամար,  
 Կապեր իս օսկի քամար:

Լուսնակը բակ է բռներ,  
 Փակեր ինձ օրը տան դռներ,  
 Քակեր ինձ ջուխտակ բեռներ,  
 Կտրեր ինձ կարմիր նռներ:

Լուսնակը կլոր, բոլոր,  
 Իմ նամբէն օլոր-մոլոր,  
 Ես ո՛չ կախաւ իմ, ո՛չ լոր,  
 Զսպասիս տարին բոլոր:

Լուսնակը շորորակէն,  
 Աստղերը օրօրակէն,  
 Պար բռներ ինձ օրը տան դուռ,  
 Ես քու սիրովն էղայ ծուռ:

Կէս գիշեր էր, դուրս յելայ,  
 Քու սիրուն՝ հիւանդ յընկայ.  
 Լուսնակն ի բակ յիջեր էր,  
 Բակ շողերով լցուեր էր:

Կայներ իս յաղբրի յակին,  
 Շող կ'իտաս արեգակին,  
 Ցուկ, շոգայ լուսնակին,  
 Յընճուրներդ աղեղնակ ինձ:

Ծամերուդ օսկի ծամ-թել,  
 Դոշիդ մոհան իմ փաթել,  
 Դուրապ գնդով յանկններ,  
 Թուխ-դեղ դրուկ թուխ յաչֆեր:

## Լ Ո Ւ Ս Ն Ա Կ

Լուսնակն զարկեր վըր չըմին,  
 Մեռնիմ քու թուխ բըռչըմին,  
 Լուսնակ գիշերն հովն անոյշ,  
 Թուխ յաչֆերդ ու կարմիր թուշ:

Լուսնակն յելեր լուսէ լուս,  
 Կանչէ՛ք զՄըլըրոն թըղ գայ դուրս,  
 Մըլըրօ, մ'անիծի զընծի,  
 Քըրդու դըռէն ծեծեցի:

Յառուէ յառու իմ թըռի,  
 Քառասուն կախաւ իմ բռնի,  
 Լուսուն յելայ՝ մէկ չկէր,  
 Կուշտս լըցուկ փարչ մը կէր:

Առայ բերանս, լեղի էր,  
 Թափի գետին, գինի էր,  
 Գինի, գինի, գինստան,  
 Աղբէր մ'ունիմ Շահրստան:

Մանոր հըլուն շարող է,  
 Թափթա շապիկ կարող է.  
 Աղբէր, աղբէր, ջան աղբէր,  
 Լայ ու մոջան, խան աղբէր:

Սարեր բռներ ձուն կ'իգայ,  
 Աղբէր քոջ դուր կ'իգայ,  
 Եարը եարոջ դուր կ'իգայ:

Նախըրգընէն ուռի ծառ,  
 Խնձոր քալիմ արի տար,  
 Խնձորի կէս խածուկ է,  
 Մըկէլ կէսն արծըթուկ է...

Տօ', տղա՛յ, տղա՛յ, ջա՛ն տղայ,  
 Փառփուռի փիննան տղայ,  
 Քափըր էրիկս չիմանայ,  
 Քեզ կ'էնէ եարա-փարա:

Սարեր յըմէն խըներով,  
 Գողտուկ կ'իգամ բըներով,  
 Սպիտակ սարի քարին տակ,  
 Քի կը գտնամ գիշերով:

## Պ Ա Ր Ե Ր Գ

**Մ**առի տըկու պազ յազրուր,  
 Մէկ դու խմէ, մէկ ինձ տուր.  
 Նստեր իս ու նըխշ կ'էնիս.  
 Հատեր էկան քըշ կ'էնիս,  
 Ազրօր բողջէն կանք ունէր,  
 Քրոջ բողջէն վարդ ունէր:

Իմ գլխու կանանչ փուշին,  
 Քու գլխու կանանչ փուշին,  
 Ջուխտակ ծծեր վըր դռշին,  
 Իմալ հալվէն մըջ լօշին:

Տանձով ընցայ տափ քեյեցի,  
 Խանչալ գարկի գերդիկ բացի,  
 Եարս տուն չէր նստայ լացի,  
 Տըզէն կ'իլէր, օրօրեցի:

Շուշոն գացեր բաղնի լուացֆ,  
 Տաշոնի կոտրաւ, սապոն գնաց,  
 Օրբուկ տղի շապիկ մնաց,  
 Խան Աւտայի խաթըր մնաց...

Յեյ ու էրթանֆ կըռընկու սար,  
 Քօշկ մը շինենֆ, մըռնանֆ հիսար,  
 Թըզ գայ վըր մի՛ շահն ու խոնդֆար,  
 Ուզէ հըրիք, կ'իտամ հըզար,  
 Շուշոյի թուխ յաչից համար:

## Ձ Ի Ի Ն Է Կ Ի

**Ձ**իւն էկի, էդի լափայ,  
 Քու դարդէն հալայ թափայ:  
 Ձիւն էկի աշնան արտեր,  
 Թածացաւ սրտիս դարտեր:  
 Ձիւն կ'իգայ վերին սարէն,  
 Կը թափի մարմար քարէն:  
 Ջուր յեյի էլիս-մէլիս,  
 Բագրկան զԱստուած սիրիս,  
 Ձիմ եար՝ գֆու հետ բերիս,  
 Թէ չբերիս, չըխերի՛ս...

## Թ Ո Ւ Խ Մ Ա Ն Ո Ւ Կ

**Թ**ուխ Մանուկ ուխտ եմ գացեր,  
 Սրտիս դոներն եմ բացեր.  
 Մուրազ կ'ուզեմ, մուրազ տուր,  
 Թուխ Մանուկ, մուրագատուր:

Բագրկան յիջաւ ձըր կալ,  
 Ձըր կով կըթէ, շինէ դալ,  
 Խութնի խումաշն ի Շամէն,  
 Օսկեթելն ի քու ծամէն:

Կնոն պառկեր ծառու շուֆ,  
 Խանչալնի գօտին ֆշուկ,  
 Ձէն տուր, կըտրնին յելնայ  
 Յուշիկ, գեղնի չիմանայ:

Քու ջուպէն կտրուկ կ'իգէր,  
 Անթարին ծալուկ կ'իգէր,  
 Կլապիտինով կրծկալ,  
 Շաֆէն՝ Շամախէն կ'իգէր:

Քաղֆէ ֆաղաֆ զըւըննայ,  
 Սար ու ձորը փաթըննայ,  
 Մոլորուկ եարս շատ գաշի,  
 Չգտայ, կեանֆս մաշի:

Նախըրգնէն թոգ-փոշի,  
 Իմ եարն է կապեր փուշի,  
 Ձեռֆի գոմպալն է մոշի,  
 Գովընտ ֆաշէ, կ'ուրմըշի:

## Ջ Ր Մ Ո Ն

Ջըմոն գացեր է սընձի,  
 Ջուր միտֆ դրեր է գընձի.  
 Ջըմոն գացեր գըռգըկի,  
 Ջիս որ չառնէ չըռգըկի:

Ջըմոն նստեր պատի տակ,  
 Քացեր գուր ծոցն սպիտակ.  
 Սպիտակ ծոցն է բռներ,  
 Ջուր ջուխտակ հոտոտ նռներ:

Ջըմոն հագեր է շիլայ,  
 Եարոջ յապով շատ կ'իլայ,  
 Շորորա Ջըմօ, շորորա,  
 Շէկուկ ծամերդ կ'օրօրայ:

## Ն Ա Ր Է

Նարէ, թըու, թըու, թըու, թըու Նարէ.  
 Նարէ, կոլի բոլոր մանտր ուռ էր,  
 Նարէ, Նարէի մէր՝ նիկրէն ծուռ էր:

Նարէ, ամպեր է ամպի նման,  
 Նարէ, շըֆըր իմ խանտի նման,  
 Նարէ, եար փշրէ թալէ բերան:

Նարէ, մանտրիկ թըփիկ երեսնոց,  
 Նարէ, աղջըկներու սպիտակ ծոց,  
 Նարէ, էտ խոթերուն դարտ ու բոց.  
 Նարէ, թըու, թըու, թըու, թըու Նարէ:

## Դ Է Կ Ի Տ Ի Կ Ի Տ Ի

Դէ կիտի մարէ իմ թումպան,  
 Տաս դուռուշ ա իմ խունջան.  
 Թումպան թալիմ վըր պանտին,  
 Թումպան գողցող աֆանտին:

## Դ Է Կ Ի Տ Ի Կ Ի Տ Ի

Դէ կիտի-կիտի, փափուռայ,  
 Փափուռի շապիկ շիլայ,  
 Տիարպէֆիր չաւուրմայ,  
 Էրկու մաֆի խաւուրմա,  
 Ջուլոն ուտայ, կշտանայ,  
 Դէ կիտի-կիտի փափուռայ,  
 Փափուռ ֆեարամի նինայ,  
 Փափուռ ֆեար ա, աճամ ա:

\* \* \*

Պօղոս Պետրոս դաշտ կը բանէն,  
Եաղութ, Զմբութ հաց կը տանէն,  
Հատ կը ֆելէն, հատ կը կանէն,  
Աշֆով ընֆով մարդ կ'սպաննէն:

\* \* \*

Տղէն կանէ վըր չմին,  
Օսկի գնդեր ակննին,  
Խապար տարէֆ գոֆընչին,  
Զաղջիկն իտայ կտրինին:

## Ղ Է Ն Տ Ի Լ Զ Է Ա Ր

**Ղ** է ն ա ի լ զ է ա Ր, զ ու մ ա ն մ է զ ա Ր,  
Ի չ ա տ — չ ա տ է, չ ի լ ի օ.  
Ղ է ն ա ի լ զ է ա Ր, զ ու մ ա ն մ է զ ա Ր :

Կէս գիշերին դուրս էլայ,  
Եարուկ մէջ ֆնուն տեսայ.  
Քներ էր, ֆրտներ էր,  
Վարդն երեսին ֆռուեր էր:

## Ի Մ Ա Լ Է Ն Ի Մ

**Ի** մ ա ՞ լ է ն ի մ ծ ա ն թ ի կ դ ա Ր տ ե Ր,  
Զ ու ն ա դ Ր ե Ր ա շ ն ա ն յ ա Ր տ ե Ր,  
Պ լ ը ն ա Փ ո ը մ, ա լ չ ա ի ս ք ե թ ը մ,  
Շ ա ի օ զ ա պ ու լ է զ ի ս ա ն է,  
Ո Վ ո Ր զ ա տ ն ա յ ի ս ա Ր ու ի ս Ր ա Ր է ն,  
Բ ե Ր ա ն զ ա տ ն ա յ ք ո թ ի Լ ա Ր է ն:

Իմա՞լ էնիմ ծանրիկ դարտեր,  
Զուն ա դրեր աշնան յարտեր.  
Իմա՞լ էնիմ ծանրիկ դարտեր,  
Մկներ կերան աշնան յարտեր:

Իմա՞լ էնիմ ծանրիկ դարտեր,  
Զուն ա դրեր բանարիկ սարեր.  
Իմա՞լ էնիմ ծանրիկ դարտեր,  
Հալեր թափեր մարմար ֆարեր:

## Ք Ո Չ Ա Ր Ի

**Ք** է, լ է, լ է, ֆոչարի,  
Քոչօ թըֆանֆ չըլֆանի,  
Լ է, լ է, լ է, ֆոչարի,  
Հըսպէ պոզէ, սուարի:

Քոչոն գացեր գըռզըկի,  
Զըկայ ըսաւ, չըռզըկի,  
Լ է, լ է, լ է, ֆոչարի,  
Կը կարգուիմ էս տարի:

Տերտեր կ'ըսէ, թըղ մնայ  
Կարգուիմ օլսը տարի,  
Լ է, լ է, լ է, ֆոչարի,  
Լ է, ուր լ է, լ է, ֆոչարի:

## Ա Ղ Ր Ո Ւ Թ — Զ Մ Ր Ո Ւ Թ

**Պ**օղոս, Պետրոս զա՛րտ կը ֆաղին,  
Ադրութ, Զմբութ յա՛րտ հաց տանին,  
Հաստ ու բարակ թե՛լ կը մանին,  
Խային մարդու ջա՛ն կը հանին:

\* \* \*

Աստուածածին ու հաշին,  
Բլբուլ յիջաւ մըջ բաղին,  
Քաղեց զխաթուն բարմաղին,  
Լցուց օսկի լանկառին,  
Ճամբեց եարոջ դիարին:

## ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՐԳԵՐ

### Գ Ո Ւ Թ Ա Ն Ի Ե Ր Գ

Գ ու թ ա՛ն, գ ու թ ա՛ն, աստուածաբան,  
 Առաւ յելաւ, առաւ յելաւ,  
 Ուր յամոլ տուն՝ ձեռքնի մանին,  
 Ուր մուռտըլ տուն՝ մուռտալ բերան,  
 Ազապ աղջիկ՝ ուժտնուորին,  
 Ուր խնձոր տուն՝ խնձոր գօտին,  
 Ուր խարզն տուն՝ խարզան ուր ձեռք,  
 Ուր փոշէ տուն՝ փոշին գլխուն,  
 Ուր մկնտուն, մուկնի բերան,  
 Հորաւոր, ջան հորաւոր,  
 Զկարմիր խնձոր համաւոր,  
 Կանանչ, կարմիր թագաւոր:  
 Գ ու թ ա՛ն յելաւ վըր սէլին,  
 Հորաւորի մամ էկաւ յեզին,  
 Հօտաղ, մանկալ թռան վզին,  
 Զկանչողին, չքողին,  
 Մամնի գզին...  
 Գ ու թ ա՛ն, գ ու թ ա՛ն,  
 Օսկէ տապան,  
 Զարկեց խորուն,  
 Հանեց տորուն,  
 Բարձաւ ջորուն,  
 Ճամբեց հեռուն,  
 Դարձաւ տիրուն,  
 Հետնի բերեց  
 Խունկ, ապրշում.  
 Խունկ՝ պաուրներուն,  
 Ապրշում՝ աղջիկներուն,  
 Գործ, հոռովէ՛լ, հէ՛յ, հէ՛յ...:

\* \* \*

Գ ու թ ա՛ն, գ ու թ ա՛ն, աստուածաբան,  
 Գ ու թ նի բուղէն յամոլ կ'ուզէր,  
 Շէկ յոտք կոտան կնճակ կ'ուզէր,  
 Հօտաղ ջան, հոռովէ՛լ, հօ՛յ, հօ՛յ...:

\* \* \*

Հէլէլ, հէլէլ մըր գութան,  
 Ճըլէլ, ճըլէլ ձըր գութան,  
 Ճիժ կը վաստըկէր Ծառգարդրին,  
 Հացն ու քերիչք համաւորին,  
 Խնձոր տուն՝ խնձոր գօտին,  
 Ազապ աղջիկ ուժտնուորին,  
 Աստուծոյ խէրն ու բարին յամըլուորին:

\* \* \*

Գ ու թ ա՛ն, գ ու թ ա՛ն, Աստրծու բան,  
 Զարկի խորուն, յելաւ տորուն,  
 Բարձայ ջորուն, տարայ հեռուն,  
 Փունջ մանուշակ նոր հարսներուն,  
 Բոլ խունկ ու մով՝ պաուրներուն,  
 Դալար վարոց՝ հօտըրներուն:  
 Ճիժ վաստկին կիրակմտին,  
 Հըրօրվարներ տան գութանին:  
 Ճամբորդն էկաւ՝ մըր մանկալին  
 Բարեւ չի տար, վա՛յ իր հալին:  
 Քառսուն սամի՝ պառեկ զարկի,  
 Քառսուն բըկի՝ գլխին զարկի:  
 Գ ու թ ա՛ն նստի գատ գին կ'ուզէ,  
 Գ ու թ նի բուղէն կռիւ կ'ուզէ:  
 Շէկ յոտք՝ կոտան, չոքնի՝ գետին,  
 Առանք յեյանք զխէրն ու բարին:  
 Խէրն ու բարին վըր մանկըլին,  
 Վըր իր կըտրին հօտըրներին,  
 Վըր իր մարալ յամուրներին,  
 Խէր, բարաբէն մըր գութանին:

## ԳՈՒԹԱՆԻ ԶԱՌԱԻԷԼԸ

ՄԱՃԿԼՈՒՈՐ.—

Օրհնեա՛լ ի Աստուած, գովեալ ի Աստուած,  
Գործ հառաւէ՛լ.  
Գութա՛ն, գութա՛ն, աստուածաբան,  
Առնիմ գգերնդին  
Յընկնամ գետան յակոնտան,  
Մկրտիմ գարտն ու խոզան,  
Յելնամ զոգա՛ն.  
Զարկիմ խորուն, հանիմ տորուն,  
Բառնամ վըր կարմիր ջորուն,  
Բոլ խունկ ու մոմ պառնրներուն,  
Եղ ու չորթան տանտրկներուն,  
Փունջ մանիշակ նոր-հարսներուն.  
Ճիծ վաստրկին կիրակմտին,  
Հօրաւորներ տան գութանին.  
Դալար վարոց հօտըղներուն,  
Գործ հառաւէ՛լ, հօ՛, հօ՛...

ՅԱՄՈԼ ՏՈՒՆ.—

Հառաւէ՛լ, հա հառաւէլ...  
Ճամբորդ մ'եկաւ հիծուկ իր ձին,  
Աչքերը ծուռ, քիթ վըր նակտին,  
Բարեւ չի տար մըր մանկալին,  
Զար աչք-չար փուշ, վա՛յ ուր հալին,  
Քառսուն սամի գարկիմ սլառկին,  
Քառսուն բըկի վըր ուր գանկին,  
Աչք չբանի մըր գութանին,  
Հա՛, հառաւէլ խէրն ու բարին,  
Գործ հառաւէ՛լ, հօ՛, հօ՛...

ՈՒԺՏՈՒՆ.—

Հառաւէ՛լ, գործ հառաւէ՛լ.  
Գութա՛ն, գութա՛ն, աստուածաբան,  
Առաւ յելաւ խէրն ու բարին,  
Խէրն ու բարին մանկըլւորին,  
Փոկն ու պանիւր յամըլւորին,  
Ազապ աղջիկ ուժտընւորին:  
Գութան կ'իլէր գուր գին կ'ուզէր,  
Գութնի բուղէն կոիւ կ'ուզէր,  
Գութնի կըռտան շէկ ու շիրին,  
Զո՛քն ի գետին, կուզն ի սամին,  
Կըննակ կ'ուզէր.  
Առաւ յելաւ, խէրն ու բարին,  
Գործ հառաւէ՛լ, հօ՛, հօ՛...

ԽԱՐԶՆՏՈՒՆ.—

Հառաւէ՛լն է վըր խարզընտան,  
Գութան, գութան աստուածաբան,  
Խէրն ու բարին վըր խարզընտան:  
Իմ խարզընիս շեփն է բարակ,  
Իմ գումշըներ էրկուս լէ շէկ,  
Մեր մանկըլւոր կը մնէր պէկ:  
Մանկըլւոր հեծաւ վըր մանին,  
Առաւ յելաւ խէրն ու բարին:  
Հառաւէ՛լն է վըր մըրկընտան, մուկն ի բերան...  
Հա՛ մըրկընտուն, հա՛ մըրկընտուն,  
Մընկներ ջարդան վըր քու գլխուն:  
Գործ հառաւէ՛լ, հօ՛, հօ՛...

ԽՆԶՈՐՏՈՒՆ.—

Հառաւէ՛լ, առաւ յելաւ խէրն ու բարին,  
Խէրն ու բարին վըր գութանին,  
Վըր խնձորտան.



Խնձորտունն էր խնձոր նման,  
Ուր ջուխտ եզներ մընին ջէյրան,  
Կ'առնին գգութան, կ'ելնան սէյրան,  
Գութան, գութան աստուածաբան,  
Գործ հառաւէլ վըր հօրիֆտան,  
Հա' հօրաւոր, ջա'ն հօրաւոր,  
Կարմիր խնձոր քի համաւոր,  
Մըր գութանին հառաւէլ տուր,  
Հօ', հօ', հօ'...

## ՄԿՆՏՈՒՆ.—

Գործ հառաւէլ.  
Մըր գութնի գործն է շատ յէրկէն,  
Մըր խարզընտան բերանն է լէն,  
Ուր խարզընի շեփն է բարակ,  
Կը կլիէ հա' հաստ ու բարակ:  
Ամպեր յէլան շարան-շարան,  
Լըցուան մըր խարզընտան բերան,  
Գործ հառաւէլ վըր խընձոր տան.  
Հօ', հօ', հօ'...

## ՀՕՐԻՔՏՈՒՆ.—

Գործ հառաւէլ.  
Մըր գութանի դաշտ կը բանէր,  
Ձըր գութանի դաշտ կը բանէր,  
Շէկ աղջիկնի հաց կը տանէր,  
Մէկ կը քէլէր, մէկ կը կանէր,  
Աչքով ընքով մարդ կ'սպաննէր.  
Գործ հառաւէլ...

Մըր գութանի դաշտ կը բանէր,  
Ձըր գութանի դաշտ կը բանէր.  
Մըր գութնի խոփ կը փիւպըլէր,  
Ձըր գութնի խոփ կը փիւպըլէր.

Յարտեր յըմէն հերկ ու հեղ,  
Մընէր արդար հալուկ եղ:

Հառաւէլ, բան չմնաց,  
Գործ սինոռին մօտեցաւ,  
Խէրն ու բարին շատացաւ.  
Խէրն ու բարին վըր խընձորտան,  
Վըր մըկընտան, վըր խարզընտան,  
Ուժտընւորին-յամըլւորին,  
Վըր մըր մարալ գումըններուն,  
Վըր մըր խնձորիկ եզներուն,  
Վըր գութանին, վըր ուր խոփին,  
Խէրն ու բարին մանկըլւորին:  
Մանկըլւոր հեծաւ տորի քուռակ,  
Բըռչամ քողեց պուրակ-պուրակ,  
Պառեկ գարկեց գպաղտատ-ուրագ.  
Գործ հառաւէլ, հօ', հօ', հօ'...

\* \* \*

Խոշ-խոշ քուռակն իմ հեծի,  
Արագի մօտն իմ գացի,  
Արա'գ, ընծի նամբախ տուր,  
Խորոտ եարս իմ կարօտցի:

\* \* \*

Գարուն է, գարուն,  
Ծաղկով գարդըրուն,  
Յելնէնք վըր դարուն,  
Հըտ աղիգ եարուն:

## ՄԱՆԿԱԿԱՆ ԵՐԳԵՐ

### Հ Ա Ր Հ Ա Ս Ի

Հար հասի, հար ձրձում,  
Մեղր ու կարագ...  
Թան ու քանջուր Աբոյին,  
Գուճու կոտոշ Գաբոյին:

Հար հասի, հար ձրձում,  
Տանիմ գփի գետն ընցում,  
Նանէն յիգայ չըցուցում,  
Կըքէն յիգայ չըցուցում,  
Հննդկայ պէս նըլվըլցում,  
Բադու պէս քըգի քոցում:

### Տ Ի Տ Ե Խ Ի Կ

Տիտեխի՛կ, տիտմարոխի՛կ,  
Ջուռնափչի՛կ, քուխմանուկի՛կ,  
Էփէ գաթայ ու կուլունայ,  
Եղնի վրէն ու պնպնայ,  
Հագնի իտա՛յ,  
Կապէ իտա՛յ,  
Խմէ իտա՛յ,  
Յելնայ իտա՛յ,  
— Վի՞ր տուն յիջնայ,  
— Գուգալի տուն.  
— Էս Գուգա՛լ,  
— Էն Մուրա՛տ,  
— Էս Դիլպա՛ր,  
— Էն Բադասա՛ր,  
— Էս Անո՛ն,

— Էն Շանո՛ն,  
— Էս կատո՛ւն,  
— Էն սլուկ մուկ,  
Փախնի էրթա՛յ:

### Տ Ի Տ Ե Խ Ի Կ

(ՏԱՐԲԵՐԱԿ)

Տիտեխի՛կ, տիտմարոխի՛կ,  
Ջուռնափչի՛կ,  
Թուխմանուկի՛կ,  
Էփէ գաթայ,  
Կուլունայ,  
Եղնի վրէն ու պնպնայ,  
— Ուտէ,  
— Խմէ,  
— Հագնի,  
— Կապէ,  
— Յելնա՛յ:

### Հ Ա Թ Ղ Ո Ւ

Հա թըռի՛, թըռի՛, թոցնեմ,  
Սեւ հաւու միս կերցնեմ,  
Պինկօլի ջուր խմցնեմ,  
Կտրին տղայ մեծցնեմ,  
Հա թըռի՛, թըռի՛, թոցնեմ:

Հա թըռի՛, թըռի՛, թոցնեմ,  
Խնձոր իս՝ գօտիս դնեմ,  
Օսկի իս՝ վզիս կախեմ,  
Ալմաստ իս՝ նակտիս կապիմ,  
Ջըզայ իս՝ գլխուս կարիմ,  
Հա թըռի՛, թըռի՛, թոցնեմ:

Յեղի կանի ու ֆելէ,  
 Իշկիմ բաժիդ ի՞նչ վելէ,  
 Աբոյին ըսիմ՝ բերէ,  
 Թարգին կտրէ ու կարէ:  
 Չանեղնակ սընէֆ դնէ,  
 Չամպերը բամպակ էնէ,  
 Չաստղիկներ կոնակ կարէ,  
 Մանոն հագնի ու վելէ:

### Թ Ե Թ Վ Ա Ջ Ր Ի Կ

**Թ** Ե Վ աջրիկ, յերկնավզիկ,  
 Սրբաջրիկ, յերկնավզիկ,  
 Բազմաջրիկ, յերկնավզիկ, կանաչ թըփիկ,  
 Էրթայ պառկի անոյշ ֆնիկ...

### Ն Ո Ր Ն Ո Ր

*Հուսինը նոր էլած ատեն ասիկա կ'ըսեն.*

**Ն** ո՛ր, նո՛ր, նորանոր,  
 Կանանչ, կարմիր թագաւոր,  
 Պապ գացիր, տղայ էկար,  
 Յեզր աշխըբֆէն ի՞նչ խապար:  
 — Աշխըբֆին՝ խէր, խաղաղութիւն,  
 — Մելիֆներուն՝ բարիչութիւն,  
 — Մահուան՝ թանգութիւն,  
 — Հացին՝ յէժընութիւն,  
 — Իմ նըժերուն՝ արեւշատութիւն,  
 — Իմ հոգուն՝ արֆայութիւն:

\* \* \*

Հէֆեաթ, հէֆեաթ պապս էր,  
 Խաշխաշ ֆուռակ տակս էր,  
 Շուտի շորեր պակաս էր,  
 Հաւով հիրիսէն փորս էր:

### Կ Ա Ր Կ Ա Չ Ա Յ

*Մառազարդի կիրակին, եկեղեցիէն անուած՝ ուռի օրհնուած  
 ճիւղեր ձեռքերնին բռնած, պատանիներ դուռնէ դուռ պտըտելով՝  
 կարկաչայ կը հաւաքէին՝ երգելով.*

**Կ**արկաչայ, կարին լաչայ,  
 Սեւ հաւը հաւկիթ կ'ածէ,  
 Ջիմ փայ կարկաչէն տուէֆ,  
 Օր թէ չիտաֆ զիմ կարկաչէն,  
 Կ'երթամ կ'ըսիմ պոլ իրիցուն,  
 Կ'իգայ կտորէ ձրը ձրձում:

Կարկաչայ, կարին լաչայ,  
 Սեւ եզան՝ սեւ յտունէն,  
 Կարմիր եզան՝ կարմիր յտունէն,  
 Կարմիր հաւկիթ ընծի տուէֆ...  
 Որն որ չիտայ զիմ կարկաչէն,  
 Կ'երթամ, կ'ըսիմ պոլ իրիցուն,  
 Կ'իգայ կտորէ ձրը ձրձում...

Կարկաչայ, կարին լաչայ,  
 Սեւ եզան՝ սեւ սամի թել,  
 Կարմիր եզան՝ օղ ու կոնակ,  
 Որն որ չիտայ զիմ կարկաչէն,  
 Էրթամ ըսիմ պոլ իրիցուն,  
 Յիգայ սըղկէ ձրը ձրձում...

### Ա Ն Չ Ր Ե Ի Ի Զ Ա Ր Ս

(ԲՈՒԳԵ ԲԱՐԱՆ)

**Բ**ուզէ բարան էկեր է,  
Շալէ շապիկ հագեր է,  
Կարմիր մեզար կապեր է,  
Փեթկի յետեւ կեցեր է:

Կարմիր կովու եղ կ'ուզէ,  
Տալաղ մեղրի հաց կ'ուզէ,  
Սեւ հաւու հաւկիթ կ'ուզէ,  
Մեծ կարսէն ածիկ կ'ուզէ:

Կուժէն կուժք մի ջուր կ'ուզէ,  
Ջո՛ւր տուէք գլխուն յըլնանք,  
Ե՛ղ տուէք փորուն ֆսենք,  
Յերկնէն անձրեւ կ'ուզենք:

Բուզէ բարան էկեր է,  
Ապջու ջրէն յելեր է,  
Շալէ շապիկ հագեր է,  
Կարմիր գոգնոց կապեր է:

Ջուր բերէք, գլխուն յըլնանք,  
Եղ բերէք, պորտին ֆսենք,  
Բուզէ բարնին փայ տուէք,  
Ուտենք, խմենք, ֆէֆ ընենք:

*Երաշտ տարին, երբ անձրեւ չկար, ցասման ժամ կը պահէին — աղօթք, պատարագ կ'ընէին: Յաւարտ պատարագին, ժամու գուռ կամ հրապարակի վրայ՝ հարիսայ կը բաժնէին աղքատներուն եւ անցորդներուն, որպէսզի աղօթէին որ անձրեւ տեղար: Բուզէ-բարանը, որ պատրաստուած կ'ըլլար ցախուելի մը շորեր հաղցնելով՝ խամածիկի նման, փայտի մը վրայ հեծցնելով, պատանիները խումբով կը պարտցնէին դուռնէ-դուռ եւ կ'երգէին բուզէ-բարանի երգը: Մեկնած պահուն տնեցիներէն մէկը, ծածուկ, աման մը ջուր կը թափէր խամածիկին վրայ:*

### ԳԱՐՆԱՆԱՄՈՒՏԻ ԵՐԳ

**Լ**ակըկո՛, հաճի պէկո՛,  
Յուստէ՞ն կ'իգաս,  
— Սեւ սարերուց.  
Ի՞նչ իս բերի,  
— Թուղթ մի սապուն.  
Վի՞ր կը տանիս,  
— Շուշկայ մամուն.  
Որ ի՞նչ էնէ,  
— Լուայ լաչին,  
Թալէ գլխուն,  
Յելնայ գարուն...

\* \* \*

Արեւ, արեւ դուրս յելի,  
Թուր ու թփանք թողեր իմ,  
Մըսրէ կապանք ֆաշեր իմ,  
Տաֆ-տաֆ շապիկ հագեր իմ:

### ԺԱՌՋԱՐԴԱՐ Է

**Մ**առգարդար է նըվըլան,  
Օրէգին է գըվըլան.  
Խուկի բաղարջ ու հատիկ,  
Բարով յիգայ մըր գատիկ:

\* \* \*

Ժամն ի խորան կը ցընծայ,  
Գեղն ի սեղան կը նըխայ,  
Մարդն առ Աստուած կը ժըպտայ:

\* \* \*

Ամէկ ուր տուն, (\*)  
 Լակլակ ուր բուն,  
 Խաչ գաւազան,  
 Իմ քեռու տուն,  
 Օսկի սնտուկ,  
 Իմ պապու տուն:

ԿԱՄ

Խաչ գաւազան,  
 Իմ գլխուն,  
 Թուր ու քֆանֆ,  
 Վերի տուն...

\* \* \*

Այբ, ժէ, ցէ, ոս,  
 Հաշի պուտուկ կ'եռայ,  
 Եաման նանէ, շո'ւտ էրէ,  
 Ես անօթնէ մեռայ...

## ԱՅԲՈՒԲԵՆԻ ԵՐԳԸ

**Ա**յբ, բեն, գեմ,  
 — Բրդեմ, ուտեմ, կամ  
 Պապդ հեգեմ:

Դա, եչ, գա,  
 — Տախտակ է սա:

Է, ըթ, քօ,  
 — Թոփալ քօ:

(\*) Մանկական այս երգը կ'երգեն զարնանամուտի իրիկունները, երբ պատանիները դուրսի խաղը դադարեցնելու պահը հասած կը նկատեն:

Ժէ, ինի, լիւն,  
 — Ժաժիկ կլուն կամ  
 Ժանկառի հըլուն:

Խէ, ծա, կեն,  
 — Փեթկի ծակէն կամ  
 Գանկդ ծակեն կամ  
 Զքերդ կը ծակեն:

Հօ, ճա, դատ,  
 — Հնձեղ կաղաթ, կամ  
 Կանչէ տղադ:

Ճէ, մեն, յի,  
 — Ճմուռ էնի կամ  
 Զէտի մ'էնի:

Նու, շա, ո,  
 — Խննիկ Դաւօ կամ  
 Թոփալ Դաւօ:

Զա, պէ, ջէ,  
 — Զամիչ պէտֆ չէ կամ  
 Քամի փչէ:

Ռա, սէ, վեւ,  
 — Տանֆի վերեւ կամ  
 Յըմէն լէ սեւ կամ  
 Կոտրի ֆու քեւ:

Տիւն, րէ, ցո,  
 — Տէր դուն կեցո' կամ  
 Տիրացո' կամ  
 Տէրտրացո':

Հին, փիւր, քէ,  
— Տղադ գրկէ կամ  
Թոփալ Գրգէ կամ  
Հերիք է:

Եւ, օ, ֆէ,  
— Բերանդ հոֆէ...

Ինի, մեն, իմ  
— Աստուած իմ...:

\* \* \*

Պատան եկաւ կուգէ կուգ,  
Ծոցերն յըլնի էր ընկուգ,  
Յըմնուն բաժնեց, էրկուս, էրկուս,  
Կիկոյին քառսուն էրկուս:

Պատան էկաւ խըլաթայ,  
Եզն ուր բոկէն կը կաթայ,  
Էփինք հալվա ու գաթայ,  
Կիկոն թըղ քիչ մընթմընթայ:  
Յըմնուն, էրկուս, էրկուս,  
Կիկոյին քառսուն էրկուս:

\* \* \*

Արա՛պ, արա՛պ,  
Վի՞ր կամն է պարապ,  
Կաման տէր մեռի,  
Յուտերն է կեռի:

\* \* \*

Էլիմ, էլիմ, էփէլ իմ,  
Կանկառ ցանիմ՝ չը վելիմ,  
Կանկառ էփոդ՝ ի՛մ մամն է,  
Կանկառ ուտոդ՝ ի՛մ պապն է:

\* \* \*

Յառջին, քոռ չարչին,  
Միջին, չամչի խէչին,  
Յետին, մտնայ գետին:

\* \* \*

Յերկրէ յերկիր ժուռ կ'իգամ,  
Գեղն որ մտնամ՝ ժուռ կ'իգամ:

\* \* \*

Կարապետ,  
Օսկի մետ,  
Հեծնամ ընցնամ,  
Դանէլ գետ:

\* \* \*

Լարան, լարան,  
Մազէ լարան,  
Յըմնուն տարան,  
Քի չըտարան:

\* \* \*

Հարսնիք հասաւ Ազըրգօլ,  
Էկաւ պոչով, գնաց խօլ:

\* \* \*

Ընթերցուածս Յոբայ,  
Երկու մարդ էկան Կոփայ,  
Ամէկու ձեռք մէկ-մէկ գոփայ,  
Վիրն որ գարկին, ըսին՝ թոպա՛:

\* \* \*

Ընթերցուած Առակաց,  
Քասէմ թըթու, գարէ հաց,  
Իրեմ մարդ յիջան ցած,  
Բերան ուրանց մնաց բաց:

\* \* \*

Համբարձի,  
Զէշ բառցի,  
Գետն ընցի:

\* \* \*

Կը բոցկըլտաս մըզի վառիս,  
Սո՛ւրբ է փոշիդ, յե(ր)բ որ մարիս,  
Զանկինի տուն, շա՛տ կարմիր իս,  
Նաչարի տուն, շո՛ւտ կը մարիս:

\* \* \*

Մո՛ւխ, մո՛ւխ, մըխըռտայ,  
Կատուի չանէն չըխըռտայ,  
Խաթուն էկեր կրակի,  
Զըկայ իտամ նըրագի:

\* \* \*

Լորիկ, լորիկ, էս տարի,  
Զյարտ ցաներ իմ գարի,  
Յուր որ կ'երթաս, շո՛ւտ արի,  
Որ կարգուինք, էս տարի.  
Օր թէ չէկար էս տարի,  
Թըզ մնայ օլոր տարի...

\* \* \*

Տուն իմ շինի գետան բերան  
Վըրէն թալի էրկու գերան,  
Մէկն էր կաղնի, մէկն էր ճիրան,  
Կաղնին կոտրաւ, մնաց ճիրան,  
Ճիրան փըթխաւ եարոջ բերան...

\* \* \*

— Զաղջպա՛ն, ջաղջպա՛ն,  
Յուստէ՞ն կ'իգաս ման ու ման.  
— Գացի կօշկրի շուկան,  
— Կ'երթա՛ս, դէ՛ գնա Դարկան,  
Գընա՛, ընծի հէլգ բեր,  
Էկո՛՛ գֆու հախ կ'իտամ,  
Խա՛չ կ'իտամ, մա՛ս կ'իտամ,  
Էրկու բերան պագ կ'իտամ...:

## Օ Ր Օ Ր

Այիկ էնիմ, օթօ՛ր, օթօ՛ր,  
Բուրիկ էնիմ, օթօ՛ր, օթօ՛ր:

## Պ Ը Պ Ն Է

Պըպնէ, պըպնէ բան,  
Պըպնէ բարըզլէ,  
Բարէ, բարէ հօ...  
Բարէ, բարէ ջան:

## Ն Ա Ն Է Ն

- Նանէն կերեր խաւըոծիլ,  
Աղջիկ ծներ օսկի ծիլ.
- Նանէն կերեր գաբի տակ,  
Տղէն ծներ պատի տակ.
- Նանէն կերեր թըթու թան,  
Աղջիկ ծներ վըթ-վըթան.
- Նանէն կերեր կարմիր նուն,  
Աղջիկ ծներ՝ մեծցուց ծուն.
- Նանէն կերեր թըթու ժախ,  
Աղջիկ բերեր բոռ ու կաղ.
- Նանէն կերեր ձուածեղ,  
Ջարկեց, թըրցուց բոռ հընձեղ.
- Նանէն կերեր թըթու նուն,  
Տղէն ծներ ժամու դուն:

\* \* \*

Մէննիմ քըզի խաթուն կեսուր,  
Քու ծուն տղուն խրատ մը տուր,  
Չերթայ պառկի գումշու մսուր,  
Շէկ ծամերուս, չիմար բոյխս,  
Ի՞նչ կայ խըսուր...

## Մ Վ Ա Ն Ե Ր Վ Ո Ւ Շ Ա Ր Թ Ի Ն

Խուկի բազարջ ու հատիկ,  
Բարով յիգայ մըր գատիկ:  
Դուն բացէ՛ք, պասն էկաւ,  
Ջընգընգալէն հարսն էկաւ:  
Ոսպ նարեցէ՛ք պասն էկաւ,  
Ածիկ չափոդ թասն էկաւ:  
Ածկի կարասն է կ'եփի,  
Բերան բացէ՛ք չըթափի...

## Ե Ր Գ Ի Ծ Ա Ն Ք Ե Ի Գ Ո Վ Ք

### Լ Ո Ւ Ե Ր Ո Ւ Ե Ր Գ Ր

Հաւար լուեր, մատաթ լուեր,  
Ծուն մըրթըներ, գպուն նըւեր,  
Ցերեկ գըրջին պատերն ի վեր,  
Գիշեր էղնի չոք ու նըւեր:

Լուեր էկան շարան-շարան,  
Էկան պառուս վզին թառան,  
Վզէն յելան չուր ի բերան.  
Հըգար տեղով արուն ծըծին,  
Քիթ ու մըռութ պիլա խածին:

Լուեր էկան խառան-խառան,  
Հասան, մտան պառուս մառան:  
Լուեր էկան շամալ-շամալ,  
Վախուս փախայ չուր Ռէս Քէմալ,  
Փարայ տուի, փարան չառան:

Լունի ըսեց — յօրի՞, յօրի՞,  
Ոջիլն ըսեց — առ ու կորի,  
Լունի ըսեց — իմա՞լ, իմա՞լ,  
Ոջիլն ըսեց — փիր ու քեմալ,  
Անիծ շըջեց գպառուս թամալ:

Լուեր հասան, կը խրխընջան,  
Ասցուցին զիս մութ քընջան,  
Կէս գիշերին՝ բաց-խուփ նընջան,  
Թողի, փախայ չուր ի Սընջան:



Լուեր էկան աղով մաղով,  
 էկան ջուխտ-ջուխտ թեփխաղ խաղով,  
 Ահէս մտայ թըրֆի կողով,  
 Զընկըռտացի ահով դողով:

Յելայ գացի չուր ի մըր Մուշ,  
 Հասաւ լուերու ծուռ չաուշ,  
 Փախայ մտայ գումշու կաշին,  
 Զէղնի բոնին յոտներս խաշին:

Հաւար լուեր, մատաթ լուեր,  
 Յերեկ գըրշին պատի տկեր,  
 Գիշեր էղնի չոֆ ու նըւեր:

## ԿՈՏ ՈՒ ԿԷՍ ԿՈՐԵԿ

Կոտ ու կէս կորեկ առի՝ ցանելու համար,  
 Ճըննըղներ բուման էկան՝ գընուհի համար,  
 Գընայ, քար վերցի, գարկելու համար,  
 Այ նըննդիկներ, կարմիր տոտիկ, սպիտակ փորիկ,  
 Ուտէֆ կըտիկ, ումպէֆ ջրիկ, առուի պըռկիկ,  
 Պըստիկ, մըստիկ... փախչիֆ էրթաֆ ծուռ գալու համար:

Խասըներ չախու քաշին՝ մորթելու համար,  
 Աղջըկներ թեւ քըտեցին՝ թեպրելու համար,  
 Պաուըներ պուտուկ դրին՝ էփելու համար,  
 Այ նըննդիկներ, եւլն.

Դուռ դրացի սինի նստան՝ ուտելու համար,  
 Տէրտէրներ խաչով էկան՝ օրշնելու համար,  
 Աշուղներ սագով էկան՝ գովելու համար,  
 Այ նըննդիկներ, եւլն.

## Ք Ր Չ Ա Լ

Քըչալ գացեր է սնահի,  
 Քըչի կոտնի կըռընծի:

Քըչալ գացեր է սոխի,  
 Վախնամ գլուխ սղոխի:

Քըչալ բերեր է սաւտուկ,  
 Քըչի պոպոնակ նըւտուկ:

Քըչալ գացեր է օղին,  
 Քըչի գլուխնի հողին:

Քըչալ գացեր է խոտի,  
 Քըչի գլուխ կը հոտի:

Քըչալ գացեր է տանահի,  
 Քըչի լեգուն պապանահի:

Քըչալ գացեր շուրի,  
 Քըչի լեգուն կլորի:

Քըչալ գացեր չորթնի,  
 Քըչի յըղեղ օրդնի:

Քըչալ գացեր ժամու դուռ,  
 Խընկան հոտէն խելֆնի ծուռ:

Քըչալ գացեր է ջաղաց,  
 Քըչու բերան մանցի բաց:

Քըչալ յելեր վըր դարուն,  
 Շափաղ գարկեր վըր սարուն:

Քրչալ ձեռքը բանոփի,  
Շունշանորդին անհոգի:

Քրչալ գացեր սարդմէշէն,  
Արջեր թափած թամաշէն:

Քրչալ գացեր է խանտակ,  
Գիլան ուտին զուր ջանտակ:

## ԹՈՒԹՈՒՆԻ ԵՐԳ

**Յ**արտ մ'ունէի ցանի թութուն,  
Կարկուտն էկաւ, զարկեց զրիթուն,  
Չըմնաց թութ մի տանէնք մըր տուն,  
Երուայ, վառայ՝ ես անթութուն:

Սահաթ չորսին էկայ յարտէն,  
Առայ թուղթ մի՝ կայնայ ջատէն,  
Պատոներ է յէրեսիս փարտէն,  
Երուայ, վառայ՝ ես անթութուն:

Չարուխ չկար՝ հագայ ես սոլ,  
Թութնի դարտէն յընկալ ես չոլ,  
Թութնի քրպէն թալի զիս գոլ,  
Երուայ, վառայ՝ ես անթութուն:

Էս օր հիւնգ օր՝ յեկայ պասէն,  
Ջեոֆ չտարայ մածնի ֆասէն,  
Սրտիս զարկեց թութնի թասէն,  
Երուայ, վառայ՝ ես անթութուն:

Ջահիլութիւն՝ դրի ես ֆաս,  
Նստած կ'էնին զթութնի բաս,  
Մեռնիմ հոգուդ, տուր մէկ նաֆաս,  
Երուայ, վառայ՝ ես անթութուն:

Թութուն ֆաշող աղա մարդ է,  
Բերան չառնող բոշա մարդ է,  
Թութուն, թութուն, ստիսի բիթուն,  
Երուայ, վառայ՝ ես անթութուն:

Թութուն չկայ՝ նստեր կ'իլամ,  
Վրէս ծիծղայ աշխարհ-ալամ,  
Թուղթ մի թութուն, ստիսի բիթուն,  
Երուայ, վառայ՝ ես անթութուն:

Թութուն ֆաշող շատ կը հագայ,  
Ճամբէն ֆէլէ սիրտ կը խգայ,  
Թութուն չէղնի՝ նստի մգայ,  
Երուայ, վառայ՝ ես անթութուն:

## ԽՆՈՒՍԻ ԳԻԻՂԵՐՈՒ ԳՈՎՔԸ

(Այս գովերգը՝ որպէս պարերգ կ'երգէին եւ կը պարէին):

**Է**մլէ զոզան, էմլի զոզան, (\*)  
Էմլէ զոզան, Զիարաթցիք:

Օսկոր կրծոզ՝ էտ Բերդեցիք,  
Հաու աւնի՝ էտ Սայլըվցիք:

Ժածիկ ու թան՝ էտ Տումանցիք,  
Զիթի նըռայ՝ էտ Մարուֆցիք:

Սունկի ուտոզ՝ էտ Խոզըվցիք,  
Գարի կրծոզ՝ էտ Խըռթեցիք:

Ազատ հպարտ՝ Հարամկցիք,  
Երկու դնէն՝ Չաուրմէցիք:

(\*) Իւրաքանչիւր երկատողի սկիզբը կրկնել այս մտքը:

հանչալ փաշոզ՝ հալչաուշցիփ,  
Քուրդ ու քըվայ՝ էտ Քաղքեկցիփ:

Կորեկ ցանոզ՝ Շապատընցիփ,  
Բէդ-բէդ ջարդոզ՝ էնկիփոյցիփ:

Թուր ու թըֆանփ՝ էտ Արօցիփ,  
Գովընտ փաշոզ՝ Գովանտըկցիփ:

Յէրկէն փուզ՝ էտ Նահիացիփ,  
Զուխա շալվար՝ հըրաչոպանցիփ:

Մեռել քըֆրոզ՝ հըրաֆօփընցիփ,  
Զրինդ իսազոզ՝ էտ Սալուտըցիփ:

Կամքի ժըժան՝ էտ Բուռնագցիփ,  
Տըն փեսացու՝ Մըժընկերտցիփ:

Գումպալ փէտով՝ էտ Գոպալցիփ,  
Զըլ տընտուր ին՝ էտ Փայեկցիփ:

## ԴԷ ԳՆԱ ԳԻԳԱՄ

**Պ**է՛, գնա՛, գիգամ, դու գնա՛, գիգամ, (\*)  
Քոփակ ֆնցում, յելնամ իգամ:  
Հա գնա՛, գիգամ, դու գնա՛, գիգամ,  
Փոշին հանիմ, յելնամ իգամ.  
Դէ՛, գնա՛, գիգամ, դու գնա՛, գիգամ,  
հմոր շաղիմ, յելնամ իգամ.  
Հա՛, գնա՛, գիգամ, դու գնա՛, գիգամ,  
Թունտիր միսիմ, յելնամ իգամ.  
Թունտիր վառիմ, յելնամ իգամ.  
Հացնի կողիմ, յելնամ իգամ.  
Ախոր ալիմ, յելնամ իգամ.

(\*) Իբաֆանչիբ տողի հետ կրկնել:

Ախոր ալիմ, յելնամ իգամ.  
Թրիփ թափիմ, յելնամ իգամ.  
Դաւար դարմնիմ, յելնամ իգամ.  
Դաւար ջրիմ, յելնամ իգամ.  
Յերդկներ կալում, յելնամ իգամ.  
Կովնի կթիմ, յելնամ իգամ.  
Շորերս հագնիմ, յելնամ իգամ.  
Քածը կթիմ, յելնամ իգամ.  
Քոփակ ֆնցում, յելնամ իգամ,  
Զարիներս (չարուխ) հանիմ, յելնամ իգամ.  
Քուրդ դնիմ, յելնամ իգամ:

## Պ Ա Ղ Է Մ Ի

**Մ**այլա բաշի Կակոյի տուն,  
Շատ նրնըւան Ակէի տուն,  
Ծոտոտ թոնդիր հնդրէի տուն,  
Շատ դաշմէր կէր Փուկոյի տուն,  
Էրկէն սոխաղմ Մուշոյի տուն,  
Օջի հանգուրց Մլէի տուն,  
Շատ փոս կէր Տօնէի տուն,  
Շատ արար կէր Կագոյի տուն,  
Դոֆի սիրոզ Ալուէի տուն,  
Ազա մշակ Ֆարհատի տուն,  
Իշու . . . Գէորգի տուն,  
Մասալ ըսոզ Պերիսէի տուն,  
Շատ թալիսանի Քուչուկի տուն,  
Ընէս մէնիս Սրգէի տուն,  
Հաւար տանոզ Մնէի տուն,  
Թագու պայոզ Օվորկայ տուն,  
Շատ փլիլան Արթոյի տուն,  
Շատ ճնկօ էր Թօրէի տուն,  
Զիսալ-միսալ Մաթոյի տուն,

Շատ ֆաչալ կէր Գսպոյի տուն,  
 Շատ քոփալ կէր Մլֆոյի տուն,  
 Կատու ուտող Աւէի տուն,  
 Շատ շանորդի Գրկէի տուն,  
 Զոլախ օտներ Հերապի տուն,  
 Շատ խորոտիկ Մէյրոյի տուն,  
 Քիչ խորոտիկ Ժամկոչի տուն,  
 Հոտուկ մրթուկ Հեպոյի տուն,  
 Իշու քշող Ակոյի տուն,  
 Դոլ զարկող Գրգոյի տուն,  
 Թրֆի քափող Խաչոյի տուն,  
 Շատ ուտամ կայ Մկրէի տուն,  
 Իրեֆ հոգի Տօնէի տուն,  
 Իրեֆ կարաս ու կէս Շարխոչի տուն,  
 Գուքնի լծող Մելֆոնի տուն,  
 Ճիտու պահող Ընֆոյի տուն,  
 Խորթու մօրուֆ Գեւոյի տուն,  
 Գուժու քողող Մալոյի տուն,  
 Սուտմա հեֆիմ Մնոյի տուն,  
 Զանկալ բէխեր Պտէի տուն,  
 Շատ սներով Սրգէի տուն:

## Ա Լ Է Ք Ս Ա Ն

**Ա**լէֆսան

Ու իր տըսուերկու փեսան,  
 Քըսան գերընդի,  
 Ու ֆառսուն լէսան,  
 — Նատին,  
 — Սըրին,  
 — Ուտին,  
 — Պառկին,  
 — Քաղին,  
 — Փոցխին,

— Բարդին,  
 Յետին անգամ համրին,  
 — Տեսան,  
 Բարդէն պակաս էր  
 — Քըսան:

## Ս. ԿԱՐԱՊԵՏԻ ՏԱՍՏԱՆ

**Մ**էկդին Պինկօլ, մէկ լէ մեծ չոլ,  
 Զայիր-չիման կուշտ ու բոլոր,  
 Ծառ ու նրդեր, կանանչ տերեւ,  
 Հաւեր խաղան խաչի վերեւ,  
 Զուխտակ զանգեր հետրաց զնգան,  
 Կաղ ու ֆոռեր կը սորսըփան:

Սբ. Կարապետ բարձր ու բոլոր,  
 Ճամբայ ունի ոլոր-մոլոր,  
 Կ'երթայ, կու գայ շատ ըխտաւոր,  
 Թէ՛ ճիւղոր, թէ՛ ոտաւոր:  
 Օսկի խնձոր ոտաւորին,  
 Զուղապ կ'իտայ ճիւղորին:

Սբ. Կարապետ մըջ պրակին,  
 Զուխտակ յաղբուր մըջ ուր բակին,  
 Ուր դուռ կ'իգէր գառն ու մաֆին,  
 Մատաղ կ'էղնէր լուս-կիրակին:

Սբ. Կարապետ՝ սրբերու խաս,  
 Եօթը տարի պահիմ զֆու պաս,  
 Յերդում կ'էնիմ սուրբ ժամու մաս,  
 Որ ես առնեմ զխոռթերու խաս:

Սբ. Կարապետ աղբուր ու ջուր,  
 Յոտֆըղ կ'իգայ շատ կաղ ու կուր,  
 Դու յըմնուն լէ մուրազը տուր,  
 Մուրագատուր Սբ. Կարապետ:

Աբ. Կարապետ կայնեցուցին,  
 Լուսեղէն շուրջառ հագցուցին,  
 Քրիստոս իր գիրկ մկրտեցին,  
 Մկրտիչն էր Աբ. Կարապետ:

Աբ. Կարապետ գլխատեցին,  
 Խալսերու ֆողէն հանեցին,  
 Բերին Մշու սար քաղեցին,  
 Լուսապսակ Աբ. Կարապետ:

Աբ. Կարապետ չայիր-չիման,  
 Բոլոր բարձր՝ մէրմէր դիւան,  
 Վանֆերն հեռուէն կ'երեւան,  
 Մշու Սուլթան Աբ. Կարապետ:

Աբ. Կարապետ նստեր սարին,  
 Մէջքը տուեր մարմար ֆարին,  
 Սէյիր կ'էնէ ուխտաւորին,  
 Մատաղ կ'ուզէ վարդավառին,  
 Լուսապսակ Աբ. Կարապետ:

Աբ. Կարապետ խորան-խորան,  
 Մէջ կ'օրօրուի օսկի օրրան,  
 Սաղմոս կ'ըսեն բերան-բերան,  
 Եօթը գլուխ Աւետըրան,  
 Եօթ անուան տէր Աբ. Կարապետ,  
 Յովհաննէս,  
 Մկրտիչ,  
 Կարապետ,  
 Մարգարէ,  
 Առաքեալ,  
 Մարտիրոս,  
 Եղիա:

## Հ Ա Ր Ս Ն Ե Ր Գ

Քիշերուայ զանգեր զարկեցին,  
 Օսկու հանգուրց յարձկեցին.  
 Զջիկար մամուց կտրեցին,  
 Օ՛յ, օ՛յ, լըմըն, խարիպոյ:

Զծամերդ մանտրիկ հուսկեցին,  
 Զձեռուիդ հինայ դրեցին,  
 Ժամու դռներով ընցուցին,  
 Օ՛յ, օ՛յ, լըմըն, խարիպոյ:

Էն ո՞րն էր յիջաւ սարէն,  
 Քառսուն յաղբուր բխաց ֆարէն,  
 Քսան ու չորս սուրբ մարգարէն,  
 Օրշնէ գթագաւորն ու զկոյս քագուհին:

Հանի՛կ, նանի՛կ, ջան նանի՛կ,  
 Հանի՛կ, հանանոր գիւլո՛ւմ,  
 Հը՛մ քալան էր, հը՛մ գուլում:

## Գ Ո Վ Ա Ս Ա Ն Ք

Քուխ-քուխ աչֆեր, յերկէն բաժ,  
 Կամար յունֆեր՝ խալմով ֆաշ.

Խորոտ հարսին ի՞նչ խըսուր,  
 Մեղքը ֆսեն գուր կեսուր:

Ծամ ու ծամքել՝ արծըթէ,  
 Խալմով ֆաշուկ սուրաթ է:

Դըռնով ընցար գիս իշկիր,  
 Վրէս կրակ հըռըշկիր:

Ժամու դուռը փակեր ին,  
Համայիլը փակեր ին:

Մեռնիմ ես ուր սուրբ գորաց,  
Մըզի պահէ անօրաց:

\* \* \*

Երկար իմ ես, պողպատ իմ ես,  
Կեցի՛, չուր ի յոտեսի բալիմ ներս,  
Երկար, պողպատ քամիմ, դու տես:

\* \* \*

Մատղի մտով շուն չը գէրնայ,  
Ժամու փուլով մարդ չմեծնայ:

\* \* \*

Վատ օր կ'ընցնի, վատ խօսք չընցնի:  
Վատ օր կ'աղէկնայ, վատ մարդ չաղէկնայ,

\* \* \*

Շվոտ խաբեց քաշեց նամբուն,  
Տարաւ զարկեց զնար քարուն,  
Չոքաւ իմեց զկարմիր արուն:

\* \* \*

Չագը օրգու հետ, սագը սագու հետ,  
Հաւը հաւու հետ, հայը հայու հետ:

\* \* \*

Ուտին գմըր գառն ու մաքին,  
Հըմտայ մըր հօր գանկին ք. ին:

\* \* \*

Չը հանիս ահնի սրտէն,  
Չը տանիս առ ու ամօթն յերեսէն:

\* \* \*

Մեղաւորի մեղաց,  
Թըմբի արդար վըր ուր տեղաց:

\* \* \*

Էրիկ, կնիկ կոռեցան,  
Յելան յերգիկ փոռեցան,  
Կովերն յախոռ անտէր փիցան:

\* \* \*

Երկինք է հուր, գետին ջուր,  
Կանանչ մեռոն սուրբ ու մաքուր:

\* \* \*

Խըշտ կնգուչներով,  
Գրողի գգիրներ,  
Շուկէք կը գվըռնին:

\* \* \*

Վանքեր անհամար,  
Գմբէթներ կամար,  
Ծաղիկ՝ խառ ու մառ,  
Ծառ՝ սալվի-չիմար:

\* \* \*

Խնու-բերդը խալայ է,  
Եար առնելը խալայ է,  
Եարոջ շապիկ շիլայ է,  
Դարդ քաշելը բալայ է:

\* \* \*

Մարոն էտ է,  
Յոտուին բէդ է,  
Առնիս էտ է,  
Չառնիս էտ է:

\* \* \*

Առանց ձուկի գետ չէղնի,  
 Առանց հաւու գեղ չէղնի,  
 Առանց մուկի տուն չէղնի:

\* \* \*

Կաղնի վարոց ֆօֆէհան,  
 Քաշէ հասնի կնկայ ջան,  
 Կընիկ սել օձու նման,  
 ԶԱդամ դրախտից եհան:

\* \* \*

Մարդ կայ արագ,  
 Մարդ կայ մարագ,  
 Մարդ լէ կայ  
 Մեղր ու կարագ:

\* \* \*

Մարդ կայ ման է,  
 Մարդ կայ քան է,  
 Մարդ լէ կայ՝ իշու բան է:

\* \* \*

Իմ գաւազան չամ է,  
 Իմ փիլոն խամ է,  
 Իմ քարոզ լէ անհամ է:

\* \* \*

Մարդ կայ որ հըզար ածէ,  
 Հըզար լէ կայ մէկ չածէ,  
 Էն մարդն որ հըզար ածէ,  
 Խեւու խէչ փուլ մը չածէ:

\* \* \*

Ղարիպն ի դարիպ յերկիր,  
 Թէ բեռով օսկի ածէ,  
 Ուր հող ու ջրէն գրկիր,  
 Բեռ օսկին՝ փոշի չածէ:

\* \* \*

Մեծերու մէջ մահլիս նստար,  
 Զքի յըմնուց ցած տեղ տար,  
 Հըզար խօսէն, մէկ խօսք ըսիս,  
 Հըզար չարէն շուտ խըլըսիս:

\* \* \*

Խելֆ ունեցողնի,  
 Խելֆնի ուրին կը պահէ,  
 Խելֆ չունեցողնի,  
 Ուրիշին խելֆ կը ծախէ:

\* \* \*

Զիու խույը չը բռնած,  
 Ուր յետեւէն մը՝ քէլի,  
 Ազգի հույը չը բռնած,  
 Ուր յառջեւէն մը՝ քէլի:

\* \* \*

Պզտըկուց ինչ սովրար,  
 Քարի վրէն գրուկն է,  
 Քառսուն անցաւ ինչ սովրար,  
 Պապի վրէն գրուկն է:

\* \* \*

Յակօ եաման է,  
 Թոզլօ տուման է,  
 Յախոռչիման է...

\* \* \*

Սեւ շան նրագուն,  
Ճիրա վըր քու սեւ հոգուն:

\* \* \*

Ամօթը դրեր ինք կամոտ,  
Կողպանքը փակեր ինք,  
Բալնիքը քամբեր ինք,  
Շուն Ապտուլ Համիտի մօտ:

\* \* \*

Յուրտ է, ցուրտ է,  
Մոլէն քուրդ է,  
Տէրտէր հայ է,  
Ջէվրք քայ է:

\* \* \*

Ամպ գըռաց,  
Մաքին բըռաց,  
Աքմաթիթնի համ գնաց:

\* \* \*

Ամառ՝ ամիրա,  
Զմեռ՝ գախիրա,  
Աշուն ու շուն,  
Գարուն ու նիշուն:

\* \* \*

Շվատ՝ օր քան գօր վատ,  
Տէրնտես՝ դարմանն է կէս,  
Մարտ ինին՝ լակլակ վըր բնին:

\* \* \*

Շվատ խաբեց հանեց քամբուն,  
Տարա գարկեց գնար քարուն,  
Զոքա խմեց գկարմիր արուն:

\* \* \*

Ինչ օր կ'ուզես դուրս էդի,  
Ս. Սարգսի շաքաթ գիշեր՝ ներս էդի:

\* \* \*

Գործը բոլորի,  
Զարը մոլորի:

\* \* \*

Լըպուք, լըպուք լագ է,  
Զոջկայ մամը խագ է:

\* \* \*

Ճուգ մարգարա, դու մուգ իս,  
Առանց քամի — դու բուք իս,  
Հը՛մ կ'աւիրիս, հը՛մ կը սուգիս:

\* \* \*

Գրոն ինծի մատանայ,  
Յոտէն գլուխ սատանայ.  
Գրոն կայնի վըր փլին,  
Փրթաւ, պատաւ մըջ տըլին:

\* \* \*

Հաւ լորիկ,  
Կաքաւ լորիկ,  
Ես կը թոխմ,  
Ես կը գարկիմ,  
Զարկեց լորուն,  
Քիսաւ ջորուն,  
Զորին գըռաց,  
Վըր իր տիրուն,  
Զըռաց, գընգաց  
Վըր սարերուն:



\* \* \*

Զընգիկ, հա զընգիկ,  
Թուր ու թըփանֆ, տընկըլիկ,  
Ավա նըտ է,  
Ավա կըտ է,  
Ծուռ մարգարէն,  
Ծակնի խտէ...:

\* \* \*

Ալալորում էրկուշաբթի,  
Աշխարհ ընձում էրեֆշաբթի,  
Ջուր պղտորաւ Զորեֆշաբթի,  
Խմոր թըթուաւ էն Հինգշաբթի,  
Լուսձֆ կ'էնիմ էս Ուրբաթ օր,  
Կը լսողընամ Շաբաթ գիշեր...  
Քոփա'կ, գկիրակին ս'ըն է բանի,  
Որ թէ ես լէ բանիմ...:

## Շ Է Մ Ք Ի Կ

Շէմֆիկ, մը' ժաժա,  
Ես իմ ժաժալու.

Տախտիկ մը' թնդա,  
Ես իմ թընդալու.

Հոգիկ մը' սըռա,  
Ես իմ սըռալու.

Ծառուկ մը' դոզա,  
Ես իմ դոզալու.

Տերեւ մը' թափի,  
Ես իմ թափելու.

Արեւ մը' պատի,  
Ես իմ պատելու.

Աստղեր մը' ցոլէֆ,  
Ես իմ ցոլալու.

Լուսնեակ մը' խարի,  
Ես իմ խարելու...:

\* \* \*

Հայր մեր յերկինֆ, հայտա տըր,  
Հաց փորուս դէմ ֆայտա տըր:  
Հայր մեր յերկինֆն է վկայ,  
Կերայ ֆըռչիկ' շատ փֆայ,  
Յընկայ յառուի մէջ' սըկայ,  
Յելայ դուրս' նստայ լկայ:

\* \* \*

Ինիկ-մինիկ, վարդիկ նինիկ,  
Յովասափ մոնիկ,  
Սարի ծաղիկ կոնիկ,  
Թունտըրայ վերելի ֆոռ աղջիկ:

\* \* \*

Խէր խուաւթ,  
Շան միս, կտաւատ,  
Էրկու շուն գացին Բաղտատ,  
Կռուան, էղան խաղֆ մալամաթ:

\* \* \*

Զար յաչֆ, չար փուշ,  
Զար փուշ թալ կրակ,  
Քոռ հընձըզուն պըլստրակ,  
Սըզկէ յըլնայ յաչֆ,  
Թէ չը ժըրաւ, թո'ւ, ֆու յերես:

\* \* \*

Մատնիք մը յընկաւ յերկնուց,  
Գընայ վերցի, կուցէ կուց,  
Ըսի՛ յակնի խամ քար է,  
Բախտէս, գոհար քարշիշ էր:

### Խ Ը Լ Բ Ա Ն Է

**Լ** է, լ է, լ է, լ է խըլբանէ,  
Խըլբօ քըֆանք չըր բանի,  
Մաւուս քարման չըր մանի,  
Պապուս գութան չըր բանի,  
Շուրվէն յարտնի չըր տանի,  
Անօթի ին, չըն բանի,  
Լ է, լ է, լ է, լ է խըլբանի:

### Ա Ր Ա Գ Ա Ն Օ Ս Ո Ւ Թ Ի Ի Ն

**Ք**եռի էլ առ, էն քոնայ լօռ ալուրէն:  
Ուլն յեյաւ ուռի ծառ, ուլն իր յոռով ուռն ոլորեց:

Մըր բաղջէն կայ տաս տաննի ծառ,  
Տաս տաննի ծառի ծէրին, տաս ծանր տանն:

Ձուկ սըլայ՝ ձուկ ուտիմ,  
Մուկ սըլայ՝ ձուկ ուտիմ:

## Օ Ր Հ Ն Ո Ւ Թ Ի Ի Ն Ե Ի Ա Ն Է Ծ Ք

### Օ Ր Հ Ն Ո Ւ Թ Ի Ի Ն

*Օ Ր Հ Ն Ո Ւ Թ Ի Ի Ն.*— Սրտարուխ մաղթանք է, ուղղուած այս կամ այն անհատին, անկէ յուսացուած նիւթական կամ բարոյական բարիքին համար:

*Մարդիկ կ'աղօթեն ասողջութեան, յաջողութեան, փորձանքներէ զերծ մնալու եւ նաեւ երկնային պարգեւին՝ անմահութեան արժանի ըլլալու համար:*

Ա.

Հափսարական  
Յանկանց էնողին:

**Ք**ազուկն փրկչական,  
Խնամք տէրունական,  
Չորս գլուխ կանոն,  
Սաղմոս ու շարական,  
Սուրբ Կարապետ,  
Բարեխօս էղնին,  
Ձեր տան ու տեղին,  
Մալին, տովաթին,  
Դատողին, բանողին,  
Ղարիպ-ղուրպաթին,

Բ.

Շէն մընայ ձրր օնախ,  
Չուր դատաստանին,  
Ձրր սատաղէն  
Մըր վարպետին,  
Ինչ խնդրէ՛ք՝  
Տէր կատարէ,  
Աստուած գճրր մէկն.  
Հըգար էնէ:

*Անէծք.*— Անէծք ըսելով կը հասկցուի, խօսքով ու սրտով չար մաղթանքներ կամ վատ կամեցողութիւն ցուցադրել անձի մը նկատմամբ, երբ այդ անձէն անիրաւութիւն մը կամ զրկանք մը կրած է, եւ կամ վրէժի նզրուութեան զգացումով իբր վերջին զէնք կը գործածէ, հակառակորդին կամ թշնամիին դէմ: Քանի մը հատ միայն կու տանք անոնցմէ:

## Ա Ն Է Ծ Ք

Չար աչքը՝ չար փշին,  
 Չար փուշը՝ չար կրակին,  
 Սըղկէ, յըլնայ, յաչքը ֆոռնայ,  
 Էլ չի գայ ձրբ դուռ:

\* \* \*

Անիծիմ ու անեմաս,  
 Խըռպիս ու գոթեմաս,  
 Բէտ-բէտ ցաւերու տիրանաս,  
 Ծակիս ու ծակոտիս,  
 Չը փրծնաս քու մահու ցաւէն,  
 Յելնաս հաւէն, նըլըթաս յընկնաս  
 Խըժխըժման էղի թաւէն:

\* \* \*

Գետին բոց էղնի,  
 Յոտֆերուդ տակ բամպակ էղնի,  
 Քու ըըսիս վըր սել ազուրսու  
 Պառեկին էղնի:

\* \* \*

Բոր բոնիս ու ըզունգ չունեմաս:  
 Աստծու կրակ թափի քու վրէն:  
 Սել տուման յիգայ վըր քու գլխուն:  
 Սել չուր յիջնայ վըր քու էրկու լուսուն:

## ՀԱՄԲԱՐՉՄԱՆ ՎԻՃԱԿ

Վիճակ, վիճակ, օսկի կոնակ,  
 Օսկին կապին քու պոպոնակ:  
 Յոտֆիդ հագած կարմիր մուրակ,  
 Ձիս մը թողի մնամ միմակ:

Օսկուց գլխուդ թագ կը շինիմ,  
 Ճուհար ակով մատնիք գնիմ,  
 Բմբուլ բարձով եաթաղ բանամ,  
 Ծոցըս մտիր որ գոհանամ:

Վիճակ նստի վըր իշուն,  
 Ագապ աղջիկ վիճկի շուն,  
 Նախշիմ գարախչին նիշուն,  
 Պահիմ չուր ի գալ աշուն...:

Համբարձում բարի տարեկ,  
 Փորուս կապի պալաք սարեկ,  
 Եղնի՝ մըր կովուն,  
 Ջթան՝ քու տիրուն:

## ՄԻՋԻՆՔԻ ԵՐԳ

Խուկի բաղարջ կը շաղինք,  
 Ծեծած կանպետով շաղինք,  
 Մէջ լէ չիր-չամիչ յըլնանք,  
 Ընկզի կըթուն չը մոռնանք:

Օսկի մատնիդ մէջ թալինք,  
 Տարին թունդրի մէջ կողինք,  
 Քառսուն մանկան աղօթինք,  
 Չալիկ դանկով բար կտրինք:

Ամէն օգուլ ուշաղին,  
 Բար-բար իտանք ուր բաժին,  
 Աչքինք վի՞ր բարի մէջէն,  
 Դուրս կ'ելնայ օսկի մատնիք:

Վիր բարէն որ դուրս յիգայ,  
 Տան դովլաթ գլուխն յելնայ:  
 Խուկի բաղարջ ու հատիկ,  
 Բարով յիգայ Մեծ Ջատիկ:

### Ճ Ր Ա Գ Ճ Ր Ա Գ

Ճըրագ, նըրագ, նշմարիտ,  
 Ճըշմարիտն է մարգարէն.  
 Մարգարէն հեծաւ քուռակ,  
 Քըշեց հասաւ Ուրֆա քաղաք,  
 Պողոքտիկ շըշեր քաշեց,  
 Էրկըթէ դռներ բացեց:

Դընկըռ, դընկըռ ձէն կ'իգայ,  
 Յելէք, տեսէք որ կ'իգայ,  
 Իրեք սպիտակ ձիաւոր,  
 Լուս-յերեսով, փառաւոր.  
 Մէկն է Յիսուս Քրիստոս,  
 Մէկն է Տիրամէր, Մայրամ կոյս.  
 Մէկ լէ մանուկ Սըք-Թորոս:

### ՅԵՂԱՓՈՆԱԿԱՆ ԵՐԳԵՐ

#### ԽՆՈՒՍԻՑ ԳԱԼՈՂ ՀԱՅ ԶԻՆՈՒՈՐՆԵՐԸ

ԱՇՈՒՂ ԶԻՒԱՆԻ

Քնուսից գալող հայ զինուորները քաջ,  
 Արեան դաշտից եկած եւ պարտաճանաչ,  
 Հի՛ն, հի՛ն վրէժ առնել էր փոցա պահանջ,  
 Քաջի պէս վագեցին թշնամու առաջ:

Մօտ՝ թուով տասն և չորս, և իրանք անվախ,  
 Ղեկավար Տիգրանն էր, գործում էր անկախ,  
 Անմահ Մուշեղ, Հերոս, Շապուհ եւ Մելիք,  
 Համագասպ, Մարտիրոս կանգնած էին դիրք:

*Խումբին մասնակցողները. — Տէրտրոզ Տիգրան, Տէր Բար-  
 Թողիմէոսի աղան, Ղեկավար՝ Խնուս բերդեցի:*

*Մուշեղ, Հերոս. կուրի օրը սպաննուած: Հարամիկ գիւ-  
 ղացի, Գարէ Մուրատի Մուշեղ:*

*Շապուհ եւ Մելիք. — Խարաքէօփրի գիւղէն:*

*Մարտիրոս. — Խալչաուշ գիւղէն: Խանտիլի Մարտիրոս:*

*Մոսօ. — Հարամիկ գիւղէն: Իրիցու Գեւէ Մոսօ:*

*Միսիկ. — Հարամիկ գիւղէն: Միսօ Գոսպէ Միսիկ:*

*Շապոն 1915-ի ձմեռը, ոռուսական բանակի հետախոյզ,  
 գաղտնի՝ Խնուս եկաւ կովկասէն: Հետը բերած էր որսկան շուն  
 մը, որ պատճառ դարձաւ թուրք կառավարութեան կողմէ զինք  
 հետապնդելուն, սակայն, ան կրցաւ փախչիլ եւ վերադառնալ  
 կովկաս:*

ԾԱՆՈԹ. — 1905-6 թուականներուն, կովկասի մէջ, հայ-քաքարական կռիւներուն  
 մասնակցած խնուցի հայ զինուորներուն ի յարգանս, Աշուղ Զիւանի յօրինած եւ նուիրած  
 է այս երգը: Ժողովրդական հանգանակութեամբ, Մուշեղի շիրիմին վրայ մարմարեայ կո-  
 քող մը կառուցանելով, իր յիշատակը յանրժայտուցած էին թիֆլիսցի հայեր:

Թաթոն ընտրեց Մոսո, Շապուհ եւ Միսիկ,  
Անուանեցան սրանք խմբեր թռուցիկ,  
Խարբուխ թաղի դիրքերումը միշտ անփուն,  
Այրեցին, ջարդեցին անգութ մոլի տուն:

Վրաստանի շքեղ Թիֆլիս ֆաղաքր,  
Ձէր անաչում կանխաւ իրա որդոցը,  
Երբ նրանք Մուղնու թաղում կանգնեցան,  
Այն ժամանակ հայերն ուրախացան:

Թէպէտ ֆաջ Մուշեղին նրանք զոհ տուին,  
Անգութ թշնամեացը շուտով յայթեցին.  
Կր լինի ազատութեան գրաւական,  
Քաջեր պատիւ բերին հայ Գաշնակցութեան:

## Մ Ո Ս Ո Յ Ի Ե Ր Գ Ը (\*)

Ձիւն էկեր, բռներ սարեր,  
Խուճրն հասաւ Շարան-ֆարեր,  
Մոսուն յիջաւ հալչաուշ,  
Խմբէն գատուաւ, մնաց ուշ:

Մոսուն, մոսին ու Ջէյրան,  
Տեսնողնի կտրէր հէյրան:  
Մուտուր, ասկարն ու Սատին,  
Մոսոյի տուն շուրջպատին:

Սատին, Օգոն ու Ջնդին,  
Տուհա էրին Մահմատին,  
Բոնինք Մոսուն, Ջէյրան ձին,  
Խլեմք Մոսոյի մոսին:

(\*) Խալչաուշի Շուշէ Մոսուն, 1907. Ապրիլ 18-ին իր տան մէջ խարոյկի մատնուեցաւ: Անդրադարձած ենք այս դէպքին: Այս տխուր առիթով յօրինուած է հետագայ երգը:

Խամբերդը բանձրիկ սար,  
Քրդեր իրզարով-իրզար,  
Պաշարեցին Մոսոյի տուն,  
Մոսուն ու մոսին արթուն...:

Բօռին փչեց — հրաման է,  
Մոսուն զարկէք, ֆէրման է,  
Թըֆանք թալին, գոռացին,  
Մոսո թալիմ՝ պոռացին:

Մոսուն ֆաշեց զուր մոսին,  
Պոռաց՝ գէնէր թըղ խօսին.  
Կանչեց զՕգոն ու Սատին...  
— Ես կը ֆ...նեմ գձեր դին:

Խալչաուշ բանձրիկ գեղ է,  
Շուշէ Մոսուն շատ նեղ է,  
Գէորգ Ջաուշին խապար,  
Թըղ հասու ֆըշանկ կապար:

Պաւէ Ջարգանդ՝ Մոսուն եմ,  
Կեաքէ Հասրաթ՝ Մոսուն եմ,  
Սուարէ Ջէյրան՝ Մոսուն եմ,  
Մոսին գէնքով՝ Մոսուն եմ:

Պաշարեր են Մոսո տուն,  
Դուռ ու յերդիկ պատեր ձուն,  
Կոխն երթալով տաքաւ,  
Մոսուն մինակ կոռեցաւ:

Խուրձ-խուրձ խոտը բերեցին,  
Տունը խոտով վառեցին.  
Սեւ սիւնի պէս մուխն առեր,  
Մոսուն ու տունն է վառեր...:

Տան դուռ կոտրին, ներս մտան,  
Մոսուն կիսամեռ գտան,  
Հայ-տանիկ հիտայաթ շուն,  
Յըմնուց յառաջ մտաւ տուն:

Մոսուն ծուխէն կիսամեռ,  
Կանչեց հիտայաթը նեռ,  
Ջուր կ'ուզեմ, տուր պուտ մի ջուր,  
Կա'մ ջուր, կա'մ իմ մահաւ յուր...

### ՖԷՏԱՅԻՆԵՐՈՒ ԵՐԳԸ

Յայտնի չըսին, գաղտնի խօսին,  
Ձէնք մէ յելեր, անուն մոսին,  
Քուրդն ու տանիկ նստած խօսին,  
Փէտայիներ քաջ են՝ կ'ըսին:

Նամակ էկաւ մեծ Մուրատէն,  
Խումբի պետերն՝ Անտրոն, Բատէն,  
Ձէնքեր բերին Հէգէպատէն,  
Բերին, կախին Անտրօ պատէն:

Նամակ գրէք Մուրատ փաշին,  
Ջուրն ինք դրի գոլ մի կաշին,  
Մըր սիրտ, հոգին հալին մաշին,  
Հրաման տուր, խումբը քաշին:

Խապար տըւին Ձէֆի փաշին,  
Ընկերութեան հրժեք գաշին,  
Խոզուայ սար, մէջ Սարդ-մէշին,  
Ջանֆիտայիք գէնքեր քաշին:

### Ա Շ Ո Ւ Ղ Ա Կ Ա Ն

Պաւ էնիմ, դաւ-դաւ էնիմ,  
Սեւ հաւեր մատաղ էնիմ,  
Օսկորներ տահար էնիմ,  
Յելնամ դուրս՝ սէյրան էնիմ:

Աղջիկներ, էկէք էրթանք մանտկի,  
Սեւ սարի տակ խանդկի,  
Օձ մը տեսանք, պըտպըտուն,  
Մէկ լէ տեսանք հըլվըլուն,  
Փախան մտան Սալվու տուն.  
Սալվին նստի, նըխշ կ'էնէ,  
Հաւեր էկան, քըշ կ'էնէ,  
Կիսուր մեռեր, վուշ կ'էնէ...

Քեաթիպ կրպէն ընցաւ հուն,  
էկաւ հասաւ Քոչօ տուն.  
Քոչօ էրինջն է կորի,  
Քեաթիպ կրպէ ձին տորի...

Հաւար կ'էնէր ուր քուր Ալթուն,  
Եամա'ն, կ'աննիմ Թավրէգ խաթուն.  
Թավրէգն էկաւ օլոր մուլոր,  
Գնանց մտաւ Յելփրսու ձոր,  
Ջուր ի հասաւ գետի բուր:

Գետան քերան մանտրիկ ուռ էր,  
Ձէթօ մէրիկ նիկրէն ծուռ էր,  
Ձէթոյի դարտ շատ մըմուռ էր.  
Մասրայ կարմուն յաղբուր-ակ էր,  
Ձէթօ մէրկան՝ դարտ ու կրակ էր:

## Խ Ն Ո Ւ Ս Գ Ե Ղ

ԱՆԴՐ. ՏԵՐ ՂԵՒՈՆԴԵԱՆ

Խնուսի գեղի մէջտեղը,  
Հրամայեց մեծ շէխը,  
Թորկեց զիս լաց ու շիւան,  
Եարս տարաւ մեծ պէխը:

Հէ՛յ, խապար տարէ՛ք Սարոյին,  
Տարան խորոտ վառոյին:

Իմ եարն անոյշ ճննդուկ է,  
Եարս սրտիս դեղուկ է,  
Մեծ պէխի սուր խանչալից,  
Զիմ սիրտ ճգուկ-ճղուկ է:

Անուն վառօ է եարիս,  
Խալ քաշեցի զիմ խալից,  
Էն մեծ պէխի կեռ թրից,  
Կտրան թելերն իմ սրտիս:

Խնուս գեղի մէջտեղը,  
Հրամայեց մեծ շէխը,  
Հրամայեց մեծ շէխը,  
Թորկեց զիս լաց ու շիւան,  
Թորկեց զիս լաց ու շիւան,  
Եարսի տարաւ մեծ պէխը,  
Եարսի տարաւ մեծ պէխը,

Տարան, տարան զիմ եարը,  
Տարան, տարան զիմ եարը,  
Խապար էրէ՛ք Սարոյին,  
Տարան խորոտ վառոյին:

## ՔԻԻՐՏԵՐԷՆ ԵՒ ԹՐՔԵՐԷՆ ԵՐԳԵՐ

Ռ Ո Ւ Է ԽՕ (\*)

Ռուէ խօ վէ նաքըմ,  
Փոռէ խօ շէ նաքըմ,  
Մէրէ քոթիէ խապուլ նաքըմ.  
Հաթըն ժըմէ դարա,  
Սաքընի մինա քեարէ,  
Ժը մը բըրըն գէոա գարէ,  
Խարիպէ լըգ գօրի,  
Դըլ զըւտան թըժի մորի,  
Մալա խարիպ թաղա ժորի,  
Խըզըգա Խըլուզըմ,  
Մըոնանա պընուզըմ,  
Պար խիգ պում,  
Խալ ժի պուքըմ:

ՀԱՅԵՐԷՆ (ազատ թագմանուած)

Երեսս չեմ բանար,  
Վարսերս չեմ սանտրեր,  
Գէշ ամուսին չեմ ուզեր.  
Հեռուէն մեզի եկաք,  
Իշու նման կայնեցաք,  
Ոսկեմման ազգիկ տարան,  
Ազգկան դուն խուրպան,  
Թեւերդ յուլունքներով զարդարած,  
Վերի թաղի ազգիկն ես դուն,  
Հասած ազգիկ եմ,  
Նման մանր մոնանի,  
Հերու ես ազգիկ էի,  
Հարս դարձայ այս տարի:

(\*) Երբ ազգիկը տղան չի սիրեր եւ ակամայ զայն կ'ամուսնացնեն, այս տեսակ պա-  
րագայի մը գրուած է Երեսուս երգը:

## Խ Ն Ո Ւ Ս Խ Ո Շ Է

**Խ**նուս խոշ է, Բինգօլ բէրտա,  
Տըլէմըն է մալֆ միրաթ, մասկանէ կոլան ուղարտան,  
Մալուլ, մալուլ, բրինտար ըզըմ:  
Մընու դիարէ ուի արուսօ,  
Պալէ խստի փալկա սուսօ,  
Կըրէտանէ հասնկամն, մինանի խըլֆէ տը Խընուսօ:

Հասան խուրպան, նիան նմա, մը լընկ դանի,  
Կանի նըմա, մըն աւ անի,  
Նալլաթ պէ լիսանա պը դըվու պը զըմանէ,  
Ուէզը ոըշըմ պոհա նակըմ,  
Ըգէ հըռըմ համ խըագէմ,  
Խօ խալըսկըմ, ըկը դան, նէդան,  
Դըրտէ դըլան աշկէրա կըմ:

Հասան խուրպան, կընըմ դրէժ նապըմ,  
Ջէռա զըրըմ, խըրապ նապըմ,  
Ջամ հըմուֆէսի փէյտա նապըմ:

Ուրգէ չի պըֆըմ մալ ու մէվան,  
Էվարֆի դըպէ, Եֆի դէ պը նավ ջիան:  
Հասանֆանմն մը սաֆընի պըր զընարէ,  
Թըֆընֆ պըրտա լըվան դարէ,  
Բաժնա հասնկամն գրաֆէ,  
Ֆընանի բաժկի, բաժնա Խուռշիտ է,  
մալա սուարէ:

Խընուս խոշ է, Բինգօլ պըշտան,  
Քամպախէ դըլէմըն դըր ֆէաթիէ,  
Մըսկինէ գուլան ու դարտան,  
Մալուլ, մալուլ, բրինտար ըզըմ:

Կընէ, ֆամբախա կունտէ մը Դութաղէ,  
Թաղա ժորի, թաղա ժէրի խօշ խոնախէ,  
Ռամ իսանիկի խօշստըմ հըրֆէ դաէ,  
Բըրընա պաըր ու պէրա իսալ սախ պէ,  
Մալուլ, մալուլ, բրինտար ըզըմ:

Եա միր, ալըր ֆեաթէ ֆօշկէ պալաֆ սարաշինէ,  
Խասիս դօլ ժօրինէ, տէտա մայինէ հըսպէ տը բօզինէ,  
Մանտայէ տը զէռինէ, ըկըր բուհար նաֆի,  
Խուագէ միրգաէ դինէ:

## Խ Ը Պ Ը Ր Տ Ա Ն

**Խ**ըպըրտան շաֆըրպաըրի գուլէ,  
Բուհայէ տը սըտ — հըգարի գուլէ,  
Էվարէ դաւ զըռիսի գուլէ,  
Խըգէմ փոզտա բըռիսի գուլէ,  
Ճաւ տի պուդըլ խըռըլս է գուլէ,  
Հանանօր, նանօր, նանօր:

Ճունըֆէ տօտանի գուլէ,  
Հըսապ, ֆըթապ նըգանի գուլէ,  
Մալա տա խըրապ կըր գուլէ,  
Կոնաէմըն սըրտա դանի գուլէ,  
Հանանօր, նանօր, նանօր:

## Ո Ւ Ա Յ Է Դ Ա Լ Ա Լ

**Ո**ւէգէ խըգալըմ, խըգալա նիակի մէզըն,  
Լը սըր մըռա, սըր դունէկի ըզըմանէ,  
Դը պըր մըռա, շուա ոաֆիէ,  
Ուէզը ֆեաթըմէ, տէտա տը պագըմ,



Կէլի նէշիրվանան, հունէ խոտէ քի տը հըպիմէ,  
Տաժէ քուլընկէ խօ մըրագ կըն,  
Խօտանէ նէշիրէ ըզըմ:  
Ուէգէ խըգալըմ, խըգալա նիակէ պը տանըմ,  
Գազըկէ դէստէ կէվրէ կէ խօ պըկըրըմ,  
Պըրէ խօ բըտըմ, շուրէ ուէ պըտանըմ,  
Աւա նէման, ու կանիկան լը սըր մը ոու գուռէ-գուռէ,  
Պարհ լէ խըստիէ, խըգէմա գէռին պոգտա դը գըվըռէինէ:

### ՔԻՒՐՏԵՐԷՆ ԱՍԱՑՈՒԱԾՔՆԵՐ

Մալ բար տըբըմ,  
Մալ բար նապէ,  
Վաթան շիրին,  
Դըսք սար նապէ:

\* \* \*

Սալէ ջար քի, սալամ է,  
Մըյէ ջար քի, մէվան է,  
Հըոօ, հըոօ, պէտամ է:

\* \* \*

Ագըլ դուգըլ,  
Չալէ չըմպըլ,  
Մըսիտէ խըմպըլ,  
Դաժէ, դուժէ,  
Հըֆթէ նուժէ,  
Խըլըն խաֆթան,  
Պըրտէ մըգէ...

### Ե Ա Ր Ը Մ Գ Ո Ր Ա Ն Ի

Խալանըն դիպընտա պիր տաշ օլայտըմ,  
Կեալանա-կիտանա եոլտաշ օլայտըմ,  
Եալազուգ եարմա սրտաշ օլայտըմ,  
Դէ եարէ՛, եարէ հա՛, եարըմ գորանի:

Խալանըն դիպընտա պիր քիւչուկ պագար,  
Կեալանա-կիտանա պախար պիր նագար,  
Ալթուն քամար իննա պէլընա սագար,  
Դէ եարէ՛, եարէ հա՛, եարըմ գորանի:

Խալանըն դիպընտա պէն կէօրտըմ օնի,  
Մավի տըր շալվարի, պաեագ տըր տոնի,  
Մէվլամ խըսմէթ էթսըն, ալայիմ սէնի,  
Դէ եարէ՛, եարէ հա՛, եարըմ գորանի:

Խալանըն դիպընտա չիֆթ լուլա փուղար,  
Պինկօլտան խալխան սու, պու չայտան ախար,  
Քէօփրուտան կէչան եար, իւզըմա պախար,  
Դէ եարէ՛, եարէ հա՛, եարըմ գորանի:

Ջակեարակ աքմիշամ, իկնայա պէնգար,  
Պաշի քոփ-քոփ օլմիշ, տիւկմէյա պէնգար,  
Կեալըն օլմիշ, պիր կիւն գափուտա կեագար,  
Դէ եարէ՛, եարէ հա՛, եարըմ գորանի:

### Հ Օ Յ Ն Ո Ւ Պ Ա Ր

Հօ՛յ նուպար, նուպար, նուպար,  
 վա՛յ տըլէ լէ՛, լէ՛, վա՛յ քամամ քուպար:  
 նուպար է, քա քուպար է,  
 Հօյ լօ՛, լօ՛, լօ՛, վա՛յ նուպար:  
 Կընըկան գօվընդ գըրդընէ,  
 վայ նուպար, քուպարամն,  
 Ած քօման եք է ամընէ,  
 Ռատմիսըմ պաշնէ հըռա:  
 Էվարէ ոօյ թունէմայ,  
 Սըռ դէրֆէթ, դօրէ նըմայ,  
 Սըպէյ է տավէ տայէ,  
 Սըր քինկէ գարիէ տայէ,  
 Ճավ պըլաք, բըծ գրաֆէ,  
 վայ նուպար, նուպար, նուպար,  
 վայ դըլէ. լէ՛, լէ՛, վա՛յ քամամ-քուպար:

#### Թ Ա Ր Գ Մ Ա Ն Ո Ւ Թ Ի Ի Ն Ը

Հօյ նուպար, նուպար, նուպար,  
 վա՛յ դըլէ, լէ՛, լէ՛, վա՛յ քամամ քուպար,  
 Իմ անգին նուպարն է,  
 Հօյ լօ՛, լօ՛, լօ՛, վա՛յ նուպար:  
 Աղջիկներ պար բոներ են,  
 վայ նուպար, քուպարամն.  
 Այս խումբէն մէկը իմն է,  
 Պագ մ'առնեմ. յետոյ գնա՛.  
 Իրիկուն է, օրը անցաւ,  
 Հովն իջաւ վըր գետերուն.  
 Առտու է, արեւ ծագէր,  
 Զարէի սրտին գարկեր,  
 Սեւ աչքին, բարձր հասակին,  
 վայ նուպար, նուպար, նուպար,  
 վայ դըլէ, լէ՛, լէ՛, վա՛յ քամամ քուպար:

### Ա Ռ Ա Ժ Ն Ե Ր

#### Ա

- Աստուած սար կը տեսնայ, ձուն կը դնէ:
- Աղուէս գուր պոչ շահատ կը կանչէ:
- Ածան հաւ կը կը շան կ'էղնի:
- Աղջկան որ թորկիս, ես՛ գղիօլնին կ'առնէ, ես՛ գուռ-  
 նանին:
- Աղխտը որ խելք ունենայ, չուխա կը հագնի որ դի-  
 մանայ:
- Անօթուքիւն՝ անամօթուքիւն:
- Անօթի փորով՝ հարսնետուն ու մահտուն մ'երթար, ա-  
 նօթի կը մնաս:
- Ասեղ թալիս գետին չընկնայ:
- Աստուած ամօթով չը թողէ:
- Ակաս, մակաս, դու էր պակաս:
- Ամանաթ ձի հեծնող, շուտ ցած կ'իջնայ:
- Ամէն ձորէն, ձէն մի կ'իգայ:
- Ամէն սրտի մէջ ասլան մի կը պառկի:
- Անգլուխ սամի է:
- Անէծք՝ անիծողի վրէն կը թափի:
- Անձրեւտ օր՝ հաւուն ջուր տուող շատ կայ:
- Աստուած քոն հընձողուն որ յանկաջ էնէ, վարդեվոնին  
 ձուն կը դնէ:
- Անուն կայ, անկունը չկայ:
- Արի իմ խէչ տիտիկ ըրէ, ինչ որ ըսիմ մտիկ ըրէ:
- Առուտո՞ւր, չէ՛, առ ու կուլ:
- Աղէկ ճիծ՝ օրօրոցէն, աղէկ գառ՝ խոչէն:
- Աստուած պահէ մանտր ձունէն ու բէդ-բէդ շունէն:
- Աստուած գնեղ լէ դրեր է, գղեղ լէ:
- Աստուած չամչըցնէ:

- Աստուած դարտ տուեր է, հետ լէ դարման:
- Աստուած թել կ'ենէ գմարդ, բայց չկտրէ:
- Ամպ օր, պառուուն առաւօտ է:
- Աղբըսի կով թը'ղ յղի էղնի, աշնան թը'ղ ծնի:
- Աղջիկ մամուն կրակ է, տղէն պապուն նրագ է:
- Աներն ու փեսէն, վայն է պատի թըթվի քսէն:
- Աստուած իտայ հաց ու քան, դարման ու ցան:
- Աստուած իտայ լաֆուն (*էգ թոչուն*), որ իտայ իր ձը-

գուն:

- Աշուն՝ զգարուն շուտ կ'իգայ:
- Ապոնեկ ու հպոնեկ աղբեր ին (*Ապոնեկ՝ ճնճղուկէն փոքր թոչուն, ճպոնեկ՝ լորամարդի ի նմանոյ թոչուն*):
- Անոյշ լեգուն օճը ծըկէն կը հանէ:
- Ամէն մարդ ուր էղով կը տապկուի:
- Արեւ էղնի, մարդու վրայ շող մի չկաթեցու:
- Աստուած մէկ, ուր ստեղծած հըգար ու մէկ:
- Արեւով անձրեւ կ'իգայ, գիլու հարսնիք է:
- Ամառ որ նստիս գովեր, ձմրան սատկին գժու կովեր:
- Ամբան շոգին, կը ճէննոայ մշկու հոգին:
- Աստուած չառնէ գահնի սրտէն, գամօթնի յերեսէն:

**Բ**

- Բերնէ-բերան, կ'էղնի գերան:
- Բարեկամի հետ առուտուր մ'էնի, կեր ու խում էրէ:
- Բոբիկ յոտք, կօշկրի դուռ:
- Բէդ յաչք, լուս չկայ:
- Բռշէն՝ փաշա չէղնի:
- Բռշի եղն որ շատ էղնի, գուր յոռ կը քսէ:
- Բըրոք ջրի մէջ, ձուկ կը գաշէ:
- Բերան չէ', Աւետրա՛ն:
- Բերանը ոսպ չտգկի:
- Բերնով յուգիմ, ինչո՞վ ուտիմ:
- Բան դրին փախաւ, հաց դրին հասաւ:
- Բաղտատ սխտոք ծեծին, հոտ մըր քիթ կ'առնէ:
- Բանձր ծառին քար թալոդ շատ:
- Բռշի տո՞ւն, ու նիշուն տո՞ւն:

**Գ**

- Գեղ կանի, գերան կը կտրէ:
- Գիլու գլխուն Աւետարան կարդացին, ըսեց. «Շուտ էրէք, ոչխար սարէն ընցաւ»:
- Գիլու ձագ տամազըղ չէղնի:
- Գործը որ վաղուան մնաց, գիտցիր որ կորաւ գնաց:
- Գողն որ գողէն գողցաւ, Աստուած յերկնուց գարմա-

ցաւ:

- Գողն որ տնէն էղնի, եզն յերդիկէն կը հանէ:
- Գործը իշու նման է, չո՛ւ, չո՛ւ ըսելով կը խլըսի:
- Գէլխեղդ շուն հեռուէն պէլլու կ'էնէ:
- Գինի՛ է, քան չէ', յըմէն մարդու բերնի քան չէ':
- Գէլ (գայլ) կը քնցու (*ճնարամիտ է*):
- Գիլու հետ կ'ուտէ, տիրու հետ վավո՛լէր կ'էնէ:
- Գէլը մըծ օրուան կը սպասէ, գողը մութ գիշերուան:
- Գարնան ցուրտը դանակ է, աշնան ցուրտը դմակ է:
- Գըռոտ էծ (*քոտտ այծ*) յաղբրի յակէն ջուր չի խմէ:
- Գարի ցանեցի, գըլգըլ բուսաւ:
- Գլորոդ քար, քարագոս չըկապէ:
- Գործ շիտկոդ սուտնի, գործ արոդ շիտակէն հըգար խաթ աղէկ է:

- Գառը գարնան, ձունը ձմրան:
- Գէշին փէշո որ քիսաւ, կտրէ գէն փէշն ու թալէ:
- Գողտուկ շոռղին տեսնող, շատ մարդ:
- Գուռեխ շան գլուխ՝ գիլու փորն է:
- Գող, սիրտնի դող:
- Գինին գմարդ չըմեոցու, հըմայ շան օրուան կը հասու:
- Գէլէն վախցող ոչխար չպահէ:

**Դ**

- Դեռ նոր քարի լոյս:
- Դէվէն (*ուղտ*) սընկլյանկնով (*խեցի*) կը ջրէ:
- Դէվէն կը կլու, մծեղ կը թֆու:
- Դարտակ կարաս շատ ձէն կը հանէ:

- Դուրս ֆահանայ, ներս սատանայ:
- Դուն ասդիկ, ես թելիկ:
- Դունչ պրունջ, յաչֆեր բղբուջ:
- Դօրո՞վ է, թէ գօրո՞վ է:
- Դատաստան կայ գալու, պատասխան կայ տալու:
- Դատէֆ, բանէֆ, բերէֆ մեզ, ուտենֆ, խմենֆ, օրհնենֆ

ձեզ:

- Դիով ֆում, գոպալ ֆում, գա՛րկ, հա՛ գարկ:
- Դիովի ձէն, հեռու գեղէն անոյշ կ'իգայ:

### Ե

- Ես ժամէն կ'իգամ, դու տէր ողորմեա կ'ըսիս:
- Ես ջաղցէն կ'իգամ, ուր գլուխ արուտ է:
- Ես ըսիմ մէկ, դու ըսէ հըզար ու մէկ:
- Ես ազն է պակաս, ես մաղ:
- Ես չըմ յուզի ֆու հետ խօսի, դու էկեր իս խնամախօսի:
- Ես իմ ֆըմէն, կ'ա(ր)ժեմ զըմէն:
- Երկինքը ամպոտ է:
- Երկու հովիւ՝ մէկ գաբանակ չէղնի:
- Եսը եւ դուն, կոխի բուն:
- Ես ազա՛, դու ազա՛, մըր բնադուն ո՞ր կ'ազայ:
- Եզն որ յընկնայ, դանակ ֆաշոզ կը շատնայ:
- Ես դրսէն կ'իգամ, ինֆ կ'ըսէ բարի լոյս:

### Զ

- Զուր թան թըթու չըհանէ:
- Զուր տուն բաղցերէ վըր խով իշուն:
- Զոխայ ջրէն մը վախնայ, հերհանդ ջրէն վախեցիր:
- Զարկեց ջորուն, ֆիսաւ լորուն:
- Զուր վար վարեր՝ զվարոց թալեր է:
- ԶԱդամ պագուկ է տեսի:
- Զէշ տուա ֆուռկու բտուածֆ:
- Զոնֆանջն ու փեսէն, վայ գթթուի ֆասէն:

### Է

- Էլու յաչֆ ֆըզի լոյս չիտայ:
- Էշը մատաղ չէղնի՛, իշու գին կ'էղնի:
- Էրկաթը տաֆ-տաֆ կը ծեծին:
- Էլին կը ֆարոզէ, ուրին կը լուրզէ:
- Էշ հեծնալ մէկ ամօթ, յիջնալ էրկու ամօթ:
- Էշն ի՞նչ գինայ նուշն ի՞նչ է:
- Էշ գուր եօթը լող գետի բերան կը մոռնայ:
- Էն դուլապի պրկիրը չես:

### Ը

- Ընցուկ-մոռցուկ:
- Ըսածդ որ գինաս, էտի ֆըզի փառֆ է:
- Ընձնէ յելեր է, ընձի լող կը սովբեցու:
- Ընձի չաւտնայ, իմ իշուն կ'աւտնայ:

### Թ

- Թանը առանց փշելու կը խմէ:
- Թրի կտրած կը սաղնայ, լեզուի կտրած չսաղնայ:
- Թափաւ թան, խափանաւ յըմէն բան:
- Թէ տեսան, ե՛ս իմ, թէ չտեսան, գո՛ղ իմ:
- Թըթու թան է, ֆրդու բան է:
- Թըմամ խօսֆ իշուն կ'ըսին:
- Թիզ ու կէս, գետնի դգէզ:
- Թողեց գԱւետարան, գտաւ գտամբուրան:
- Թըզ չըսին՝ է՛շ է, թըզ ըսին՝ գէ՛շ է:
- Թագաւորի ֆասէն լէ նանն կը պատի:
- Թունտիրն ու ժամ՝ մէկ բան ին:

### Բ

- Իշուն բեռ բաղցիր, վրէն լէ հեծիր:
- Իշու բեռնի ինչխըտը ծանտը էղնի, էնխըտը աճալա կը ֆէլէ:

- Ինքնիրեն ինկողը չիլայ:
- Իմ տան մշակն իմ, ուրիշին աղա-փաշա:
- Ինք լու մ'է, լեզուն սուն մ'է:
- Ինձի աւար, քեզի խաւար:
- Իշկէ որ Ծոազատիկն յիգայ:
- «Իմս» ու «ֆունը»՝ աւիրեր են տունը:
- Ի՛նչ որ բրդես, էն կը բըռթես:
- Իրիցու տան «օրհնեա տէր» չկայ:
- Ինչխըտըր յիմաստուն էզնիս, շատ մը գրուցի մէջ ան-  
գիտաց:

— Ինքր մանտը է, գինը ծանտը է:

### Լ

- Լեզուի տակ օսկոր չկայ որ չֆի:
- Լպոք բերան է:
- Լուն որ չըս հանի՝ գգութան կը կեցու:
- Լուի մը համար՝ գեորդան կը վառէ:
- Լուն թումպան է յընկի (*Արբունքի հասած է*):
- Լիք գացիր, դարտակ էկար:

### ԼԽ

- Խուփ գլորի, գպուտուկ գըտի:
- Խոցերսի խմրի...
- Խրատ խելին ի՞նչ էնէ, սապոն սելին ի՞նչ էնէ:
- Խօսերդ կշռէ, խոստումդ յարգէ:
- Խելը գացեր հարսնետուն, ըսեր «Իտա՛ աղէկ, քան զներ  
տուն»:
- Խելը սարխոշէն վախեցեր է:
- Խօսն որ բերնէն յելաւ, հըզար բերան կը հասնի:
- Խօսք ըսածը կլոր է, խորիէ վերջը գլորէ:
- Խօսէ՛, հա խօսէ՛:
- Խաւիձն ըսեց՝ իմ տակ օսկի է. շերեփն ըսեց՝ ես յուս-  
տէ՞ն կ'իգամ:
- Խելին տուին ձի, ըսեց՝ թամբ լէ տուէք ինձի:
- Խօսքով փիլաւ չէփի:

### Մ

- Մանր նստի՛ խիտը գաս:
- Մուռ յակօս՝ մեծ եզնէն:
- Մոռ ազուն Աստուած կ'աղայ:
- Մամնի յերկէն, խելքնի կարն:

### Կ

- Կուշտն անօթուն մանտը կը բրդէ:
- Կարոն կը հասնի Մարոյին, Մարոն չհասնի Կարոյին:
- Կնկայ մագերնի յերկէն է, խելքնի կարն:
- Կոշտը նստեր է գֆարու դարտ կ'իլայ:
- Կուժ՝ յադրի նամբէն կը կուտի:
- Կարդալը էփուկ հաց է, դրուկ մարդու ծոցֆ:
- Կատուին ըսին՝ ֆու փին դե՛ղ է. — փնեց ու անթխեց:
- Կը լըմնի բոշի ֆուլաֆ:
- Կոտկիրիքէն ուր կուտէն չփախի:
- Կը լըմնի մլտիկ խնձոր:
- Կշռէ գֆու եղ, կանչէ գֆու գեղ:
- Կտրիճնի մէկ անգամ կը մեռնի, վախկոտնի հըզար ու  
մէկ անգամ:
- Կնիկ չունի, խելք յուստէ՞ն:
- Կնտեր է գրուրդ, խառուեր է գգաներ:
- Կ'իտայ Աստուած գիր օրհներգ ամենուն:
- Կոնի կոն է...:
- Կոիւի մէջ չիր ու չամիչ չըն բաժնի:

### Հ

- Հայու յետին խելքն ընձի էզներ՝ կ'ըսէ տանիկը:
- Հըրի յառուն ջուր յիգայ, գորտան յաչքեր դուրս  
կ'իգայ:
- Հը՛մ գոզ է, հը՛մ գտան տէր գոզ կը հանէ:
- Հաստ ու բարակ մէկ գին:
- Հարցնողաց էղիր, որ գիտնական էզնիս:

- Հարի(ւ)ր լսէ, մէկ ըսէ:
- Հրգար կայ որ մէկ չարժէ, մէկ կայ որ հրգար կ'արժէ:
- Հմլայ հարսին, հմալ կեսուր կ'էղնի:
- Հրգար էրնէկ ուր տիրուն:
- Հաց դրին՝ հասաւ, բան դրին՝ փախաւ:
- Հըրիօր (*հոյնիսկ*) գշան լէ դուը (*սերունդ*) կը հարցուն:
- Հիներուն՝ քա՛, քա՛, նորերուն՝ ջո՛ւ, ջո՛ւ:
- Հաց վըր ծնկան, յաչք վըր կրնկան:
- Համբրով յիսուն, բակով քփսուն:
- Համտես, համտես, պուտուկնի կէս:
- Հեղ մի նալին, հեղ մի սալին:
- Հաւ մի գոթան, աժէ կով մի հոթան:
- Հողեղէն էկաւ, հրեղէն տարաւ:
- Հպարտ մարդու տակ փուտ է, գէն յըմէն որ կ'ըսէ՝

սուտ է:

- Համբերէ՛, քեռին կ'իգայ բան բերէ:
- Համայնքը քնուկ ասլան է, որ թէ յիմցաւ, է՛լ չի քնի:
- Հորովելով յակօս չբացուի:

**2**

- Ձուածեղի սիրուն, գթաւի պոչ կը լիգէ:
- Ձուկ ջրի մէջ բազար չէղնի:
- Ձուկ գլխէն է հոտի:
- Ձուն (ձիւն) վըր սարուն կը նստի:
- Ձին ուր տիրուց կը վախնայ:
- Ձուկ բռնողի յոռ կը տգկի (*թրջիւ*):
- Ձըմի հեծնող է...:
- Ձին ձիու իւէչ, եա՛ խուէն, եա՛ թուէն:
- Ձմբան ցրտուն, նիտան կէս գիշերին կը կանչին:
- Ձին ու ջորին կուտան, էշնի գնանց արան:

**ճ**

- Ճրագն ուր տակ լոյս չիտայ:
- Ճժուն գործ տուր, յետեւէն գնա:
- Ճիժ մահանայ, մամ կշտանայ:
- Ճանը նուգ է:

**Մ**

- Մարդուն տէր, որդուն հէր:
- Մէկ քարով էրկու նննուղ կը գարկէ:
- Մըր նրագն է, ուրիշին լուս կ'իտայ:
- Մուկ ծակ չպարտկի, գցախաւել պոչն է կապի:
- Մըրթըպի տո՞ւն՝ ու նիշուն տո՞ւն:
- Մեծ չընանչցողը, գլստուած լէ չնանչնայ:
- Մըր ժամ մ'իգայ, քու խունկ ու մոմ լէ մգի պէտք չէ:
- Մսի՛, մը՛ լսի:
- Մօրէ մերկ է:
- Մկան շեռ լէ՛ ջաղջին ֆայտա է:
- Մարդուս հոգէտ հրեշտակ լէ թըղ բէդ էղնի:
- Մոռ ուտողի լեզուն կ'իբիցի:
- Մեծին յանկան չտուողնի, անօթնէ կը մեռնի:
- Մարդու յաչքնի յելնայ, անուն թըղ չելնայ:
- Մէկ ձեռնով էրկու ձմերուկ չընուի:
- Մորէմուկ է (*ամուլ, անարգաստոր*):
- Մէկը մէկին յէգին կ'իտայ, մէկելնի հուր մի խաղող

չիտայ:

— Մէկնի ունի Շաքի, Շիրվան, մէկելնի չունի խեղդուե- յու չուն:

— Մէկնի հըրամ՝ շուտ յաջողի, մէկնի հըլալ՝ շուտ կո- րընչի:

— Մը բանձրնար շատ՝ կը կախուիս, մը խոնարհի շատ՝ կը կոխուիս:

- Մեղրիկ մատ-մատ, չամչիկ հատ-հատ:
- Մութ մթնեց, ահ պնդեց:
- Մը քշի գնարնկան, տես գէնի, խղնայ գգի:
- Մարդն ի հալաւ, էշն ի փալան:
- Մէկ մէկու յապով, գէլ գորթիկ կերաւ կապով:
- Մեռնի կնիկ, արի տնիկ:
- Մեղք գործեց կարպետ, ջառմէն քաշեց Հայրապետ:
- Մուկ ծկան դէմ՝ ասլան է:
- Մաղը խեմփին, շունը շէմփին:
- Մարդ կայ գերեց կը սիրէ, մարդ լէ կայ գերեցկին:
- Մեծ չեղած տեղը, մեծ քար մի դրէ՛ք:

- Մարտ վեց, ձուն վրը ձան ցեց:
- Մարտ ինին, լակլակ վրը բընին:
- Մէկու մը բախտն որ ծոփ, ձին յախտոփ մէջ է՛ջ կը դառ-

նայ:

- Մեղաց վարձքը մահ է, բաժին լէ սըտընի փայ է:
- Մեծ մարդն որ կայ՝ կրակ է, շատ մօտենաս կը վառիս, շատ հեռենաս՝ կը սառիս:

— Մէկը՝ լաւ է, էրկուքը՝ բաւ է, իրեքը՝ շատ գլխու ցաւ է:

- Մարդ գուր ձին ու կին՝ ուրիշի փոխ չիտայ:
- Մարդ մարդու ֆահանայ, մարդ մարդու սատանայ:

**Յ**

- Յըմնու յաչֆին նո՛ւշ իմ, ֆու յաչֆին փո՛ւշ իմ:
- Յերկինֆ ամպոտ է...:
- Յառաջ երթայ՝ գլխուն կը գարկին, յետ մնայ՝ յոռուն կը գարկին:

կը գարկին:

- Յոտֆով յընկնողը՝ կ'ելնայ, լեզուով յընկնողը՝ չելնայ:
- Յերեսնի կը շոփն, կ'ըսէ՝ անձրես կ'իգայ:
- Յուր որ կտրաւ կայ, ... գտիրու պայ:
- Յինֆն ուր շուֆէն կը դողայ:
- Յըմնօր տէրտէր գաթայ չուտէ:
- Յէրկէն յանկան է:
- Յընկող եզան վրէն դանակ ֆաշող շատ կ'էղնի:
- Յունֆ շինելու տեղ, գյաչֆ լէ հանեց:
- Յէրկինֆն է որ յալատ չունի:
- Յուշիկ ֆէլիմ, կ'ըսին՝ խեւ է, յիշտապ ֆէլիմ, կ'ըսին՝ դեւ է:

դեւ է:

- Յըմնօր իծու յոռ բաց է, օր մը լէ մաֆուն թըղ էղնի:
- Յաչֆսի ֆու յապով կը պաղի:
- Յարտ խախուտ, մահանէն կարկուտ:
- Յարտ Դրտոյին, սերմ Մրտոյին, կոընկներ վրէն կըռ-

ուրտին:

- Յէրեսնի գումշու կաշի է:
- Յոն տգկուի (թրջեւ), յուտայ (հոս) կնտուի (ածիլ-

ուիլ):

— Յըմէն յերկրին մէկ թագաւոր, յըմէն կնկան մէկ գըլ- խաւոր:

— Յառուըներու իզը, տուզը, տղոց մեղքը՝ աղջկներու վիզը:

- Յինֆ թիգ մ'է, լեզուն թիակ:
- Յըմէն մարդ էրիկ, գդլնոց լէ կնիկ:

**Ն**

- Նա՛ մարդանման, նա՛ մարդահաւան:
- Նըհախ էր, առաւ գուր պալէն:
- Նա մոլի մո՛ւլի է, նա տէրտրու ծո՛ւլի է:
- Նըխշուն արախշին, վայել է կտրնին:
- Նեղ տեղ, մարդ ուր մամու սիրողին պապօ կ'ըսէ:
- Նա՛ էծ ունի, նա՛ լէ ուլ, սատանի յանկան խուլ:
- Նատիմ գիրկդի, պընկիմ մուրուֆդի:
- Նոպաթ շաֆար է...:

**Շ**

- Շուն թոփըլտալէն շատկի, առանց ոսկորի կը սատկի:
- Շատ մը սիրի՛ առել կայ, շատ մը առի՛ սիրել կայ:
- Շատ ոժու հէր, շատ դարտի տէր:
- Շուն գշան միս չուտէ:
- Շուն կը հաչայ, ֆարվան կ'ընցնայ:
- Շան հետ պառկող՝ կ'ոջլոտի:
- Շան գա՛րկ, տիրուն յաթըր բրէ՛:
- Շան հաչելով ժամ չփլի:
- Շուն գտէր չնանչնայ:
- Շատ դատողին՝ շալէ շապիկ, ֆիչ դատողին՝ շարէ (ժԼ- տաքսէ) շապի՛կ:

- Շնտօ շուն է (ամէն բանի միջամտիս կ'ըլլայ):
- Շառ ու շառ էրեց, գուր հոգին ֆերեց:
- Շունը շուն է, ի՛նչ պալաֆ, ի՛նչ նիշուն է:
- Շունը յիշէ, փէտը ֆաշէ:
- Շան աչֆաքուրթենէն՝ գէլ գրոյն փողցի գլուխն է դրի:
- Շատ յազ գինամ, ձէն չունիմ:
- Շունը շնից, էրկուս լէ մէկ տնից:

## Ո

- Ոսպը ֆարոտ է:
- Ուրիշի յաչֆի խիլը կը տեսնայ, գուր յաչֆի գերան չտեսնայ:
- Ուրին ֆ...դ է, ուրիշին ֆարոզող է:
- Ուրագ գուր պոչ չտաշէ:
- Ուշ բուսար, շուտ ուսար:
- Ուրիշի ձեռքով գֆու փուշ մը՝ հանի:
- Ո՛վ ալարի (*ուշանայ*), ո՛չ դալարի:
- Ո՛վ Աստուած, մը տայ էնֆա՛ն շատ, որ գֆի ուրանանֆ, ո՛չ լէ էնֆա՛ն ֆիչ, որ դոնէ-դուռ մուրանֆ:
- Ո՞րն է ֆու յաչֆ հանի — ֆու բարեկա՛մ:
- Ո՛ր հարցուց, է՛ն սաղուց:

## Չ

- Չուրի աղ հասաւ, մատաղ խլըսաւ:
- Չըվնի չորս նոթ լէ կորցուցեր է:
- Չար աչֆ, չար փուշ:
- Չուրի չը նմանի, չը խնամի:
- Չկայ ուր տուն քոզ ու փոշի, գուր գլուխն է կապի ապրշմէ փուշի:
- Չըլին (*Փեարուար աճիս*) արիւն վագէ, ջուր չջագէ:
- Չուրի լուս կը լկլկայ:
- Չուրի շուշան գարդրուի, ժամը կ'արձկուի:
- Չը ծիծղաս վրը նեղածին, անկ ու կուրին, կ'իգայ ֆու դէմ:
- Չխնդաց շալաւորիկ, խնդաց կշտափորիկ:
- Չունիս օսկի, չէղնիս իսկի:
- Չուրի հարսն էկաւ հաւար, կոկոլ հաւ կերաւ ձաւար:
- Չուրի խըլավնի գպնի, գպունի հոգին կ'ելնայ:
- Չուրի յառուն ջուր յիգայ, գորտան յաչֆեր դուրս կ'իգայ:
- Չխոլրտայ Աստուած շէն տան վրէն, անձրեւ լէ ձան վրէն:

## Պ

- Պտպտուն կով կըթան կ'էղնի:
- Պաղտատ խալի կը գործին, նա լէնֆ կինայ, նա լէ կէրկէնֆ:
- Պաղտատ սխտոր ծեծին, գիտնի կ'առնիմ:
- Պատի վրայ ֆանն կայ:
- Պօ-օ ըսիս, լեղին կը պատուի:
- Պոքուր ես չիմ կտրած:
- Պարտքը տալով, մեղքը լալով:
- Պապու մահը տուն չէ ֆանդեր, մամու մահն է ֆանդեր:
- Պատը՝ պատ է, վատ լէ՝ վատ է:

## Ջ

- Ջաղջպան ալուրնի բէտ է, մեռնիս ապրիս էղածնի էտ է:
- Ջուր լցեր է սանդնի ու կը ծեծէ:
- Ջուրը չտեսած մը՝ բոպկնար:
- Ջուր կ'իգայ ջաղաց կ'աղայ, ծուռնի կ'ուտէ կ'էլնայ կը խաղայ:
- Ջուրը տեսնայ ձուկ կ'էղնի, կատուն տեսնայ մուկ կ'էղնի:
- Ջաղաց մտնողի գլուխ կ'ալրոտի:

## Ս

- Սէլը չգոռայ, սէլուր կը նըռայ:
- Սխտոր ծեծէ, որ խաշ ուտիս:
- Սար ու ձոր, տէրտրոջ *կամ* իրիցու փոր:
- Սուտասացի տուն կրակ յընկնայ, մարդ չաւտընայ:
- Սրբէ ֆրտինֆդ, բացուի սրտիկդ, շէննայ տնիկդ:
- Սար ինչֆան բանձր էղնի, ֆամբէն օր մը իր վրով կ'ընցնի:
- Սոխին ֆախցրնի չէղնի:
- Սըտանայական ինատ է, որ աղբէր աղբօր կ'ատէ:



**Վ**

- Վախցի բռնէն, քրչիէն, քոփալէն, իլլահի' քոփալէն:
- Վանք կը նստի, փողան կը հաչէ:
- Վերել քֆում' յունֆու է, ներքել քֆում' մուրուֆու է:

**Տ**

- Տախտակ պակաս է:
- Տարին հեղ մը' բարով իս. ամիս հեղ մը' խոնախ իս. յըմնօր, յըմնօր' անհամ իս: Քրդերէնով կ'ըսէին.— *Սալէ ճար կի' սալամ է. մէվէ ճար կի, մէվան է. հըռօ-հըռօ' պէտամ է:*
- Տէրտէր էդի, գեղեր յընկի, որ թէ չէդաւ, գետը յընկի:
- Տէրն է գուր սուրբ գորաւոր կ'էնէ:
- Տըլէն (*ցեխ*) յելաւ, տըլջուր յընկաւ:

**Յ**

- Յամաք անոն ազուէս է:
- Յռան մոզիկ գնախրի անուն կ'աւիրէ:

**Փ**

- Փայ էնոզին, փայ չմնայ:


**Ք**

- Քըռ ու փըս (*փափաակ*) սաւն կ'աւիրէ:
- Քըչալ դեղ գինէր, ուր գլխուն կ'էնէր:
- Քոլ իծուն կոսաշ չկայ, գինայ թէ հերուան ալունիկն է:
- Քոռ հընձոլ պէս մը' կոկոսայ:
- Քար խածեր ու կեցեր է:
- Քըզի կայ նախջեւան, ընծի չկայ չարխի չուան:
- Քանի ջուր փրփրի, քու հոգին հետ քրքրի:
- Քու յաչք, քու սրտի հայլին է:
- Քիչ բառցի, շուտ դարձի:

- Քուրդն իր թանը թըթու չհանէ:
- Քիթ ու մոթէն լու մը յընկնայ գետին, հըզար կտոր կ'էդնի:
- Քօզ վըր հարսին' էրնէկ փեսին, քօզն որ վերցուն' սել վըր փեսին:
- Քըչալ գլուխն ու արծըթէ սաչլը' իս:
- Քըչալ թըմէն' նստեր ձմէն, ինք իր քըմէն' կ'ա(ք)ժէ գմէն:
- Քումին գեղէն, կարգին գողէն:
- Քածն ու քոնքի (*զուգասորուկու ցանկութիւն*) յիգայ, քոփակնի Պաղտըտու կ'իգայ:
- Քիթ ցից, յընֆուներ (*յօնք*) կից:
- Քուրդ իր քէնը քառսուն տարուան մէջ կը հանէ:
- Քոյրն ըսաւ' աղբէր ունիմ. աղբէր ըսաւ' քոյր չունիմ:

**Օ**

- Օսկոր մի թալ բերան, թըզ էրթայ:
- Օձն որ օ'ձ է, գմարդ ջրի վրայ չիէթէ:
- Օձը դադձէն կը պատի, դադձ ծկու դէմն է բուսի:
- Օր քըն գօր, էրնէկ գէսօր:
- Օձի իէթած կը սաղնայ, լեգուի իէթած չսաղնայ:
- Օդորդ խօսք' ճոնց կամ ծոնց:
- Օձն իր շապիկը կը փոխէ, խույը չփոխէ:



### Հ Ա Ն Ե Լ Ո Ւ Կ Ն Ե Ր

Հարցում.— Էն ի՞նչ է,  
Յելայ յել,  
Կտրաւ սրտիս թել,  
Թափաւ մէջի սիսեռ:  
Պատասխան.— Կարկուտ:

Հարցում.— Էն ի՞նչ է.  
Ալահա միգար,  
Դիւանա բագար,  
Բանձր յեկեղեցի,  
Խորաններ չունի,  
Ճոխկ յաղբուր ունի:  
Պ.— Ձիթխաճ:

Հարցում.— Էն ի՞նչ է.  
Անջուր ջաղաջ,  
Անկրակ բաղարջ:  
Պատասխան.— Մեղր:

Հարցում.— Էն ի՞նչ է.  
Լուն թուա կարպետին,  
Ձէն տուա վարպետին,  
Ձէն գնանց Հրնտրստան,  
Ինք մընանց Գիւռնիստան:  
Պատասխան.— Հրացան:

Հարցում.— Էն ի՞նչ է.  
Բռնիմ ափով,  
Թողիմ աշխրֆով:  
Պատասխան.— Աչքեր:

Հարցում.— Էն ի՞նչ է.  
Մէկ սուն,  
Էրկու տուն:  
Պատասխան.— Քիթ ու պինջեր:

Հարցում.— Էն ի՞նչ է.  
Դեվէն գնանց բաղնիք,  
Պոչն ի մնանց տանիք: Կամ  
Յերկէն է պոչը,  
Կը կրէ քոչը:  
Պատասխան.— Շերեփ, չոկեկ:

Հարցում.— Էն ի՞նչ է.  
Ութն ութէն, էրկու թաթէն,  
Վեց յանկընէն, էրկու պոչէն:  
Պատասխան.— Կշիռք:

Հարցում.— Էն ի՞նչ է.  
Մանտր, մանտր եկեղեցի,  
Դանկով զարկի գդուռ բացի,  
Մտայ ներսը տաք պագեցի,  
Յելայ դուռը, թոփ թալեցի:  
Պատասխան.— Չմերուկ:

Հարցում.— Էն ի՞նչ է.  
Մեպրից անոյշ,  
Շաֆրից քաղցր,  
Նա բագրկան կը բերէ,  
Նա դուրֆանին կը ծախէ:  
Պատասխան.— Քնանալ, քուն:

Հարցում.— Էն ի՞նչ է.  
Թաւ կործման,  
Ջուրի վրան:  
Պատասխան.— Լուսնկան:

Հարցում.— Էն ի՞նչ է.  
Ձեռոք ցանիմ,  
Յաչօք քաղիմ:  
Պատասխան.— Դրեւ-կարդալ:

Հարցում.— Էն ի՞նչ է.  
Օձ մըջ ծովուն,  
Գլուխ փէլփլուն. Կամ  
Ես գոլ մը ունիմ,  
Գոլի մէջ օձ մի կայ,  
Օձու բերան օսկի մը կայ:  
Պատասխան.— Ճրագ, ձէթ ու  
պատրոյգ:

Հարցում.— Էն ի՞նչ է.  
Սեղան սատափ է,  
Յոտֆերն արծաթ է,  
Լուսնեակնի փակ է,  
Բալնիքն արեգակն է. Կամ  
Արեւ կը բանայ,  
Լուսնեակ կը փակէ:  
Պատասխան.— Պաղ (սառոյց):

Հարցում.— Էն ի՞նչ է.  
Էլ վըր էլին,  
Թագուր վըր սէլին,  
Թըֆանֆով զարկին,  
Ջկոզ ծակեցին,  
Ջարուն թաղէթաղ ցրուեցին,  
Ջօսկոր մըջ տան թաղեցին:  
Պ.— Ձձում, եղ եւ թան:

Հարցում.— Էն ի՞նչ է.  
Սպիտակ յարս մի ունիմ,  
Ձեռֆով կը ցանիմ,  
Բերնով կը քաղիմ:  
Պատասխան.— Դիր:

Հարցում.— Էն ի՞նչ է.  
Մըզի գատ մի կայ,  
Ջատոց է,  
Թագն ի գլուխ,  
Սկոց է,  
Գիշերուան մեռելյարոց է:  
Պատասխան.— Ճեռ (աքաղաղ):

Հարցում.— Էն ի՞նչ է.  
Հաւ մի թուա յերկնուց,  
Օսկի լանկառին կտուց:  
Պատասխան.— Արեւ:

Հարցում.— Էն ի՞նչ է.  
Բուխերիկ,  
Քու մօր էրիկ,  
Քանի զարկիմ,  
Չ'ըսեր հերիք:  
Պատասխան.— Ռաֆատան:

Հարցում.— Էն ի՞նչ է.  
Սեւ Սըլոն յելաւ սար,  
Հետ բերեց հինգ հրգար:  
Պ.— Ածելին եւ մագերը:

Հարցում.— Էն ի՞նչ է.  
Օլըրման, նիշուն թումպան,  
Նա' դին ունի, նա' լէ իման:  
Պատասխան.— Օձ:

Հարցում.— Էն ի՞նչ է.

Ծակ մը գտայ, մէջը մտայ,  
Ծակը կորաւ, ա՛լ չգտայ:

Պ.— Մասնիք, մատանի:

Հարցում.— Էն ի՞նչ է.

Ճամբայ կ'երթայ՝ ի՛գ չունի,  
Յետ որ կ'իշկէ, թո՛ւզ չունի:

Պատասխան.— Շուք, ստուեր:

Հարցում.— Էն ի՞նչ է.

Փիլպլան լեսան,  
Ջրէն ընցան՝ չը տեսան:

Պատասխան.— Զուկ:

Հարցում.— Էն ի՞նչ է.

Քըստ հուտայ,  
Քըս հունայ,  
Մտնայ բունջնի՝ քնանայ:

Պատասխան.— Աւել:

Հարցում.— Էն ի՞նչ է.

Սարէն կ'իգայ սվլան,  
Օսկի պիտեր փիլպլան:

Պատասխան.— Գերանդի:

Հարցում.— Էն ի՞նչ է.

Յերկէն աղիք,  
Պոչը ծագիկ:

Պ.— Գոստիկ մեղրամոմ:

Հարցում.— Էն ի՞նչ է.

Տասն ի վըր չորսին,  
Չորսն ու ծովը վըր ծնկան,  
Չը հաւնողնի  
Խուրպան էղնի ուր կնկան:

Պ.— Կովն ու կթող կինը:

Հարցում.— Էն ի՞նչ է.

Ամպն որոտաց՝ հով բերեց,  
Եզնի ծնաւ՝ կով բերեց:  
Երկինգ հով, գետին ծով,  
Եզնի ծնաւ՝ բերեց կով:

Վերեւ հով, ներքեւ ծով,  
Ջորին ծնաւ՝ բերեց կով:

Վերեւ հով,  
Գետին ծով,  
Յաւեց քով,  
Բերեց կով:

Պատասխան.— Աղամ եւ Եւան:

Հարցում.— Էն ի՞նչ է.

Փտուկ փէտ փորեցին,  
Չառիծ մէջ հորեցին:

Պ.— Սուրը եւ պատեան:

Հարցում.— Էն ի՞նչ է.

Գլուխն ի հող,  
Մուրուֆն ի շող:

Պ.— Բողկ կամ շողգամ:

Հարցում.— Էն ի՞նչ է.

Ջուլ փոէ տակ,  
Չլզուն առնէ ծակ:

Պ.— Էրկանք (աղօրիք):

Հարցում.— Էն ի՞նչ է.

Կ'երթայ քննց գնետ,  
Կանչէ քննց գնետ:

Պատասխան.— Ատրճանակ:

Հարցում.— Էն ի՞նչ է.

Ռափատէն,  
Կախուկ պատէն:

Պատասխան.— Մօրուք:

Հարցում.— Էն ի՞նչ է.

Էս դին դար,  
Էն դին դար,  
Մէջն անդադար:

Պատասխան.— Լիճ, գետ:

Հարցում.— Էն ի՞նչ է.

Փէտէ տղայ,  
Քանի գարկիմ, կը վըզվզայ:

Պ.— Սազ, նուագարան:

Հարցում.— Էն ի՞նչ է.

Էկաւ ասլնի պէս,  
Փռուաւ խսիլի պէս,  
Փախաւ հէսիրի պէս: կամ  
Սաւան մի կայ,  
Չաշխարհ կը պատէ,  
Ըզծով չը պատէ,

Պատասխան.— Զուն (ձիւն):

Հարցում.— Էն ի՞նչ է.

Ունի, ունի, բուն ունի,  
Կափւի պէս կըտուց ունի:

Պատասխան.— Սիսեռ:

Հարցում.— Էն ի՞նչ է.

Կապիս՝ կը քէլէ,  
Արձկիս՝ կը նստի: կամ

Կապիմ՝ կ'երթայ,  
Քակիմ՝ կը կենայ:

Պ.— Չարուխ (արեխ):

Հարցում.— Էն ի՞նչ է:

Քար վըր քարին՝ քար չէ,  
Հակիթ կ'ածէ՝ հաւ չէ,  
Կանաչ կ'արծէ՝ տաւար չէ:

Պ.— Կիրիւրայ (կրիւրայ):

Հարցում.— Էն ի՞նչ է.

Բոլորն է արծաթ:  
Մէջն է ոսկի:

Պատասխան.— Հաւկիթ:

Հարցում.— Էն ի՞նչ է.

Հունցֆայ չուր ի վան,  
Վանայ չուր ի Շիրվան,  
Նա սուն ունի,  
Նա գերան:

Պ.— Աղեղնակ (Միրանի գօտի)

Հարցում.— Էն ի՞նչ է.

Ամառ թէ ձմեռ,  
Յըմէն հեղ լէ ժանգառի է:

Պատասխան.— Երկինք:

Հարցում.— Էն ի՞նչ է.

Քանի կտրեմ՝ կ'յերկնայ,  
Քանի տաշիմ՝ կը հաստնայ:

Պատասխան.— Յորենի հոր:

Հարցում.— Էն ի՞նչ է.

Սեւ արայ պիտերն ոլորեց,  
Մէկէն հազար մարդ գլորեց:

Պատասխան.— Գիշեր եւ քուն:

Հարցում.— Էն ի՞նչ է.

Մարմին չունի, ձէն ունի,  
Փորձէ՛, չես կրնայ բռնի:

Պատասխան.— Քամի:

Հարցում.— Էն ի՞նչ է.

Ո՛չ էծ ունի, ո՛չ ուլ,  
Սըտընի յականջ խուլ:

Պատասխան.— Անծին. ամուլ:

Հարցում.— Էն ի՞նչ է.

Նստիմ հով,  
Կթիմ կով,  
Զմբիկ թալիմ,  
Պատիմ ծով:

Պատասխան.— Կարկուտ:

Հարցում.— Էն ի՞նչ է.

Սիպտակ ֆոլոսով ֆուրդը,  
Սուրի մը ոչխար կշտին՝  
Գիշեր ցերեկ գաշխարհի կ'իշկէ:

Պատասխան.— Լուսինն ու սասցեր:

Հարցում.— Էն ի՞նչ է.

Երկու գլուխ ունի,  
Յիսուն երկու աչք,  
Տասներկու ձեռք,  
Իրեք հըրիք վաթսուն մատներ:

Պատասխան.— Տարին, տօներ, ամիսներ,  
չարաթներ եւ օրեր:

Հարցում.— Էն ի՞նչ է.

Զանբուս անծրնին բառցուցին,  
Անդադրի տանֆով ընցուցին:

Պատասխան.— Աղ, ջորի, գետ, կամուրջ:

Հարցում.— Էն ի՞նչ է.

Մարագ մի ունիմ, Աստուծու շինած է,  
Մէջնի լեցուն մարմար ֆարեր շարած է:

Պատասխան.— Բերան եւ ակօաներ:

Հարցում.— Էն ի՞նչ է.

Բունիմ ափով, թալիմ թափով,  
Մեռնի տարով, ապրի բարով:

Պատասխան.— Յորեն ցանեղ (սերմանացան):

Հարցում.— Էն ի՞նչ է.

Մարդ անասուն,  
Թռչուն, գագան,  
Գոց աչօֆ տեսան,  
Աստուած բաց աչօֆ չտեսնայ:

Պատասխան.— Երագ:

Հարցում.— Էն ի՞նչ է.

Քանի՛ ուտիմ, դո՛ւր կ'իգայ,  
Քանի՛ քնիմ, ֆո՛ւն կ'իգայ,  
Խելֆսի ժո՛ւտ կ'իգայ:

Պատասխան.— Վիթ, զը՛րունեկ (պտուտակ):

Հարցում.— Էն ո՞վ էր որ.

20 հացով 100 մարդ կերակրեց:

Պատասխան.— Եղիսէ մարգարէն:

Հարցում.— Էն ի՞նչ է.

Ադամ գտախտակ ջուրն է դրի,  
Ինչ որ կ'էնէ, չի փտիր:

Կամ

Ադամի օրով տախտակ մի ինկաւ ջուր,  
Զուրի յըսօր չէ փտեր:

Պատասխան.— Լեզուն:

Հարցում.— Էն ի՞նչ է.

Մէկ օրօրոց, մէջնի տաս աղբրտիք պառկած,  
Երբ օրօրես տաս լէ կ'իլան:

Պատասխան.— Նուազարանի տաս լարեր:

Հարցում.— Էն ի՞նչ է:

Առտուն՝ չորս յոտֆով,  
Կէսօրին՝ երկու յոտֆով,  
Յիբիկուն՝ երեք յոտֆով:

Պատասխան.— Մանկութիւն, երիտասարդու-  
թիւն, ծերութիւն:

Հարցում.— Էն ի՞նչ է:

Սեւ սըլայ, ֆերմակ սըլայ,  
Միջու հրագ կը պըլպլայ. կամ  
Սեւ սըլայ, ֆերմակ սըլայ,  
Խաթուն կ'էնէ կը ֆըլվըլայ:

Պատասխան.— Աչք:

Հարցում.— Էն ի՞նչ է:

Ջրէ կզպանք, փէտէ բաղնիք,  
Նէշիրն (որս) ընցաւ,  
Նէչրուոր (որսորդ) խեղդուեցաւ:

Պատասխան.— Կարմիր ծով, Մովսէսի գաւա-  
ւազան և Իսրայէլի փախուսար Եգիպտոսէն:

Հարցում.— Էն ի՞նչ է:

Սուտան քիլիտ,  
Օտունտան անախտար,  
Աւ խաչտի,  
Աւջի քուքուլտի:

Պատասխան.— Կարմիր ծովէն Իսրայէլի փա-  
խուսար:

Հարցում.— Էն ի՞նչ է:

Հունցկայ շուր ի վան,  
Սպիտակ կոտիկ կործման. կամ  
Լիժ քանց լեւան,  
Թուփ, քուփ քրնց Աւետարան:

Պատասխան.— Սունկ:

Հարցում.— Էն ի՞նչ է:

Տուն մի ունիմ՝ տուն չէ,  
Հակիթ կ'ածէ՝ հաւ չէ,  
Սար ու ձոր կ'արծէ՝ դաւար չէ,  
Օր թէ գինաս, էն ի՞նչ է:

Պատասխան.— Կիրիբայ (կրիայ):

Հարցում.— Էն ի՞նչ է:

Հաւ մը ունիմ, հանայ, հանայ,  
Կոտրշուներ մըսըրխանայ,  
Լուսյազբբէն ջուր կը խիւէ,  
Արնծովէն ձէն կը հանէ:

Պատասխան.— Ամպն ու որոտում:

Հարցում.— Էն ի՞նչ է:

Արի՛, արի՛, կ'ըսեմ, չի գայ,  
Մի՛ գա, մի՛ գա, կ'ըսեմ, կ'իգայ:

Պատասխան.— Պռունկներ (չրթունքներ):

Հարցում.— Էն ի՞նչ է:

Սարէն գլորեցի, չը կոտրաւ,  
Չորէն գլորեցի, բան չեղաւ,  
Ջրնարի տակ դրի, անձէն քնացաւ,  
Ջուրն որ թալեցի, լիկաւ մնանց:

Պատասխան.— Թուղթ:

Հարցում.— Էն ի՞նչ է:

Չորս աղբէր մէկ արախչու տակ՝ կամ,  
Չորս էրիշտակ մէկ բլի տակ,  
Կ'իշկիմ, չըմ գըտնայ:

Պատասխան.— Կովու ծիծեր:

Հարցում.— Էն ի՞նչ է:

Անծիլն՝ անձնին բեռցուցին,  
Անդադար յերդիկէն ընցուցին:

Պատասխան.— Աղ, ջորի, կամուրջ:

Հարցում.— Էն ի՞նչ է:

Մեռնիմ, մահանամ,  
Դառնամ կեղանանամ,  
Ջաչս յերկին համբառնամ,  
Բազմաստեղօք պայծառանամ:

Պատասխան.— Ցորեն:

Հարցում.— Էն ի՞նչ է:

Ճամբայ կ'երթայ՝ ոտք չունի,  
Գետին նստի՝ յոռ չունի,  
Գլուխ ունի՝ մազ չունի:

Պատասխան.— Օձ:

Հարցում.— Էն ի՞նչ է.

Սեւ գերեզման փորեցին,  
Օրհնած ջրով ցօղեցին,  
Զմանկունք ուր մէջ քաղեցին,  
Մանկունք էն տեղ չմեռան,  
Ծլան, ծաղկան, կանչցան,  
Երջանկու քեան ծառ դարձան:

Պ.— Գուժան, աղօս, ցորեն, քրտինք:

Հարցում.— Էն ի՞նչ է.

Անծակ մարգրիտ, անուր դերձան,  
Աստուած կը շարէ, մարդ կը քակէ:

Պատասխան.— Նուռ:

Հարցում.— Էն ի՞նչ է.

Մըզի հոր մի կայ,  
Ալամ աշխարհ մէջնի կ'իմկնայ:

Պատասխան.— Ականջ:

Հարցում.— Էն ի՞նչ է:

Սեւ սատանէն, կախուկ պատէն:

Պատասխան.— Ձէթի կուժը:

Հարցում.— Էն ի՞նչ է:

Մսէ բերդ, երկաթէ քաննարա,  
Ոտք դրի, յեկայ, յիջայ:

Պատասխան.— Ձին եւ թամբը:

Հարցում.— Էն ի՞նչ է.

Հինգ աղբէր,  
Հինգ լէ իրարու հոր կը փորեն:  
Հինգ աղբըրտիք,  
Զորսը պատ կը շարեն,  
Մէկ լէ խիպար կը կրէ:

Պատասխան.— Բուճի (գուլպայ) ճաղեր:

Հարցում.— Էն ի՞նչ է.

Յէրկէն փողան, նեղ-մութ սողան,  
Սարկէրգներ (սարկաւազ) մէջ կը դողան:

Պատասխան.— Մեղուն եւ փեթակը:

Հարցում.— Էն ի՞նչ է.

Թիգ մի դեղին, յընկեր մէջ գեղին:

Պատասխան.— Դիւիթ, խալամ (գրիչ, մեղան):

Հարցում.— Էն ի՞նչ է.

Կոկիկ վառեկ մէկ յոտաց,  
Քառսուն շապիկ հագցուցած:

Պատասխան.— Կաղամբ (քալամ):

Հարցում.— Էն ի՞նչ է.

Պառաւ պառկեր է յառուն,  
Քառսուն գըմքիկ վըր յոռուն:

Պատասխան.— Կաղամբ (քալամ):

Հարցում.— Էն ի՞նչ է.

Դոլապ մի ունիմ չորս յաչք ունի,  
Ամէն մէկ յաչք՝ դոնիկ հաց մի կայ:

Պատասխան.— Ընկոյզ:

Հարցում.— Էն ի՞նչ է.

Կովը կանանչ, կապը կանանչ,  
Կովը կանանչ կապի տակն է պառկի:

Պատասխան.— Ձմերուկ:



Պ Ա Ր

**ՊԱՐԵՐ**

Դուրան պար *կամ* գովընտ,  
 Կլոր պար,  
 Եարքմ գորանի,  
 Շորոր,  
 Բութ ու կրունկ,  
 Թեփ-խաղ *կամ* թեւ-խաղ,  
 Քոչարի (մէկ տակ *կամ* երեք ոսփ),  
 Եար-խուշտա,  
 Ճըկընդ խաղ:

**ԵԱՐԽՈՒՇՏԱ**

Եարխուշտան կը պարեն երկու խումբ երիտասարդներ (*դօտով կարիճ*), թեթեւ հագուստ հագած, մերկ բազուկներով, պարելու պատրաստ, կարգով դէմ-դէմի կանգնած, իրարմէ մօտաւորապէս 10 քայլ հեռաւորութեան վրայ: Պարը կը սկսի ռազմաշունչ եղանակներու նուագով, *դահուլ-դուռնայով*: Պարին մասնակցողները, նախ կը սկսին թեթեւ պարել, եւ քայլ առ քայլ իրարու մօտենալ եւ ետ քաշուիլ: Յարձակող խումբը՝ ուտոստուն, համաչափ շարժումներով, պարելով կը մօտենայ տեղին վրայ անշարժ կանգնած, պաշտպանուող խումբին անդամներուն, որոնք իրենց աջ ձեռքերը բարձր բռնած, բաց ափով, կը սպասեն եկող հարուածին: Յարձակողը ուտոստումով կը հասնի պաշտպանուողին, եւ բաց ձեռքով, ուժեղ կը հարուածէ պաշտպանուողի ափին. երբեմն հարուածը այնքան զօրաւոր կ'ըլլայ, որ ձեռքերին կ'արիւնի: Յարձակումը առհասարակ երեք անգամ կը կրկնուի. երբեմն աւելի ալ կ'ըլլայ: Յետոյ դիրքերը կը փոխուին. պարը կը շարունակուի մինչեւ կողմ մը պարտուած յայտարարուի: Պարի ընթացքին՝ ձեռքը վար բերողը՝ խաղէն դուրս կու գայ:

**ԿԼՈՐ ՊԱՐ**

Կլոր պարը կը խաղան բազմութեամբ, պար տան տարողութեան չափով բոլորակ կազմած՝ պարբաշիէն մինչեւ պարի պոչ, իրարու ձեռք բռնած, այր ու կին, տղայ ու աղջիկ, բով բովի, շատ յանախ իրարու կից. ծնկածալիկ կը պարեն. պարերգի իւրաքանչիւր տողը, մէկ՝ կամ քանի մը հոգի միասին կ'երգեն փոխն ի փոխ, որպէս կրկներգ, ապա բոլոր պարողները միասին կ'երգեն եւ այսպէս կը շարունակուի:

**ԺԱՄԱՆՅ ԵՒ ԶԲՕՍ**

**Տ Ա Մ Ա**

Այս խաղը կը խաղցուի երկու հոգիով: Խաղին համար յատկապէս պատրաստուած տախտակի մը վրայ, երբեմն նոյնիսկ դուրսը, գարնանային պարզ եւ տափուկ օրերուն, տանիքներու վրայ, ուր հողը թեթեւ մը գծելով, այնպէս, ինչպէս գծուած կ'ըլլայ տախտակին վրայ, հետեւեալ ձեւով. հորիզոնական եւ ուղղահայեաց գծերով բաժնուած 64 քառակուսի աչքեր, որոնց վրայ, իւրաքանչիւր կողմը, տարբեր գոյներով 16 քառեր, կամ քառակուսի փայտէ կտորներ կը շարէ իր սահմանին վրայ. այսինքն 32 քառակուսիներու վրայ, որոնք կ'իյնան իրարու հակառակ, կէսի բաժնուած բաժիններու վրայ: Խաղը կը սկսին տախտակին Բ., Գ., Զ. եւ Է. գիծերուն վրայ: Իւրաքանչիւր կողմը կը ջանայ որ իր քառերը հակառակորդին թիկունքին ազատ կամ բաց գտնուած քառակուսիին մէջ հասցնէ. երբ անարգել հասնի ազատ տեղը, խաղը կը շահի, եւ անմիջապէս կ'ըսէ՝ *Տամա*:

**ՃԱՆ ԿԱՄ ՎԷԳԻ ԽԱՎ**

*Ճահ* խաղը պատանիներու յատուկ է. կը խաղան հետեւեալ երկու ձեւերով — կա՛մ շուրջբոլոր նստած, վէզը որոշ չափով օդին մէջ բարձրացնելով կը թողուն որ իյնայ, և ինկած վէզին ցուցադրած կողմէն կը հաստատեն թէ շահողը ո՛վ է, կորսնցնողը ո՛վ է: Ուրիշ ձեւ մը, որ բացօթեայ կը խաղցուի — որոշ գծեր գծելով, գծէն դուրս կայնած, գծին մէջի վէզը, իր ձեռքի վէզովը զարնելու եւ գծէն դուրս հանելու է, որով խաղը կը շահի:

- Ճան փուլ է.— Այսինքն՝ խաղը շահած է:
- Ճան գրոթ է.— Այսինքն՝ խաղը կորսնցուցած է:
- Ճան էյի է.— Այսինքն՝ վէզը ուղածին սկս կայնեցուցած է:
- Ճան խըռըխ է.— Այսինքն՝ վէզը ուղած կերպով չէ կայնած:
- Ճան միր է.— Այսինքն՝ կողմը որ կը տեսնուի իշխանական է, ու վէզ նետողը իշխան է կամ շահած է:
- Ճան էշ է.— Այսինքն՝ կողմը որ կը տեսնուի, էշ է. խաղը կորսնցուցած է:

Տ Ի Տ Ո Խ Ի Կ

Քանի մը երախաներ, հաւաքուած, ձեռքերը՝ կամ լաւ է ըսել, փափուկ թաթիկները մէկը միւսի վրայ դրած, կը սկսին խաղալ: Խաղը առաջնորդողը կը սկսի խաղը՝ այսպէս երգելով.—

- Տխտտիկ, տխտտարտիկ, զուռնայ փշիկ,
- էփէ զաղայ, կուլուճայ,
- Ուտէ՛,
- Խմէ՛,
- Հազնի՛,
- Կապէ՛,
- Յեղնա՛յ:

Խաղը յառաջանալով, թաթիկները մէկիկ-մէկիկ կը վերցուին իրարու վրայէն: Վերցուող թաթը, նոյն պահուն մնացող թաթին փոքր կամիք մը տալով խաղէն կը փախուի. այսպէս կը շարունակուի մինչեւ որ խաղը լրանայ:

Տ Լ Ո Ւ Ր

Պատանիներու խաղ: Չայն կը խաղան խումբով եւ կարգաւ: Երկու հոգի, դէմ-դէմի կանգնած, մէկը 8-10 մատնաչափ փայտի կտոր մը օդին մէջ կը նետէ, միւս ձեռնափայտով կը ջանայ զարնել փայտի փոքր կտորին, նշանակելուն հասցնելու համար: Այսպէս կարգաւ կը խաղան:

ԱՓԿՈՒՆՔ Կամ ԿՅՈ

Հինգ հատ կտոր խնամարեքով կը խաղան: Քարերը կը շարեն գետնի կամ տախտակամածի վրայ: Չախ ձեռքի ցուցամատը անցընելով միջնեմատին վրայ, բթամատին դիմացը, երկու մատները տախտակամածին վրայ կամրջածեւ կը բռնեն. քարերէն մէկը, աջ ձեռքով՝ գլխու բարձրութեան չափով՝ օդին մէջ կը նետեն, մինչ քարը օդին մէջն է, աջ ձեռքով՝ գետնի վրայի քարերը՝ չորս հատը՝ հատիկ-հատիկ, կամուրջին տակէն կ'անցընեն: Իւրաքանչիւր գործողութեան ընթացքին, օդին մէջ նետուող քարը վար գալէն առաջ, քարերէն մէկը կամուրջին տակէն անցընելու է, եւ վար եկող քարը բռնելու է, որ գետնին չիյնայ: Քարերը կամուրջին տակէն անցընելէ ետք, հինգը միասին ափին մէջ առած, աջ ձեռքով, նարպիկ շարժումով մը օդին մէջ կը նետեն, ափը դարձնելով, ձեռքին երեսին վրայ, քարերը հաւաքաբար բռնել կը ջանան, եթէ քարերէն մէկը, ձեռքին վրայէն վար իյնայ, խաղը կը կորսնցնէ, այսպէս՝ խաղը շահած կ'ըլլայ:

Ճ Ի Կ

Այս խաղը մանուկներ կը խաղան խումբով: Ամէն մէկը տեղ մը կը պահուի, եւ գաղտագողի կը նայի, որ միւսներէն առանց տեսնուելու, իր թագստոցէն դուրս գայ եւ ըսէ ճի՛կ, ճի՛կ, ճի՛կ:

ՊԱՅԸՆՏՎԵՑՈՒԿ

Այս խաղը մանուկներ կը խաղան. խումբին անդամները գանազան տեղեր կը պահուրտին. մէկը կը փնտռէ եւ կը փորձէ տեղերը գտնել: Երբ պահուրտողը տեսնուի, անունը կու տայ, եւ պարտաւոր է, թագնուած տեղէն դուրս գալ. ով որ շատ թագըստոցներ գտնէ, ան խաղը կը շահի:

ՋՆՁՕՐԻԿ

Այս խաղը պատանիներ կը խաղան: Պարան մը կը կապեն երկու սիւներէ կամ մերձակայ երկու ծառերէ: Պարանին կախ-



ուած վարի կյոբած մասին վրայ կը նստին եւ պարանին երկու կողմերէն կը բռնեն. առաջին առիթով՝ քովը գտնուող մէկը կըռնակէն հրելով կը տարուբերէ եւ թող կու տայ. այս նօնումը երկար ատեն կը տեւէ, մինչեւ որ թափը կոտրի: Խաղացողներ կան, որոնք առանց որեւէ օգնութեան, պարանին վրայ նստած, ոտքը գետնին կը գարնեն եւ այդպէս նօնումը կը սկսի:

Զ Ո Զ Ա Ն


Պատանիներու խաղ. առհասարակ կը խաղան գարնան: Զոգան խաղը կը խաղան, տանիքներու, փողոցի տափարակ գետնին, եւ կամ կալերու հողին վրայ: Գետնին վրայ, հողը կը գծեն կամ կը գաղեն խեցեղէնի կտորով մը, եւ կամ փայտով՝ քառակիւն, զայն բաժնելով 5 մասի կամ տունի: Խեցեղէնի կտորը, կամ տափակ փոքր քար մը, քառակիւնին առաջին տունին մէջ ձգելով. ձախ ոտքը ծնկածալ վեր բռնած, աջ ոտքով ցատկելով, քարը կամ խեցեղէնի կտորը գարնելով կը ջանայ գիծերուն վրայէն անցնելով դուրս հանել, որպէսզի խաղը շահի: Երբ խաղի պահուն քարը գիծին վրայ մնայ, կամ գիծին վրայ կոխէ, խաղը կը կորսնցնէ:

ԹԱՄՊԼԻ ՄՇԱԿ

Թամպլի մշակ խաղը կը խաղային խումբով: Պատանիներէն մէկը կը կզէր, ձեռքերը ծունկերուն բռնած, ամուր կեցուածքով: Խաղացողները կարգաւ կը ցատկէին կզած պատանիին վրայէն, ձեռքերը կոնակին դրած, սրունքնին լայն բանալով, որպէսզի կզողին չզպի, այլապէս այդ անձը խաղը կը կորսնցնէ, եւ կը փոխարինէ կզողը: Առաջին ոստումէն ետք՝ երկրորդին, ամէն մէկը, իր գլխարկը՝ փէս կամ արախչի պիտի դնէ կզողի կոնակին եւ ցատկի, առանց գլխարկներէն որեւէ մէկը վար ձգելու: Երրորդ ոստումին, իւրաքանչիւր ցատկազ իր գլխարկը կը վերցընէ եւ կ'անցնի: Գլխարկը վերցուցած պահուն, եթէ մէկէ աւելի վերցնէ, եւ կամ ուրիշ մը վար ձգէ կզողի կոնակին վրայէն, խաղը կը կորսնցնէ:

ՓԵՀԼԻՒԱՆ

Գարնան վերջին ամսուն, եւ ընդհանրապէս աշնանամուտին, փեհլուանը կու դար խաղալու: «Փեհլուանն է եկեր», ուրախութեամբ եւ բարձրաձայն ըսողներ կ'ըլլային, մանաւանդ ուրախ ու զուարթ երախաները, որոնք առաջիններն էին, որոնք կը հասնէին փեհլուանին խաղալայրը, որ առհասարակ կ'ըլլար ընդարձակ դետին մը կամ կալ մը, ուր աւելի դիւրութիւն կար ետտանի ցիցերը կայնեցնելու, որուն վրայ հաստարեստ լարը կամ շերիտը կապելով՝ փեհլուանը պիտի խաղար:



Փեհլուանը գործի վրայ

Փեհլուանութիւնը տուածուրիկ էր, այսինքն աստուածային պարզեւ: Ան երազ կը տեսնէր փեհլուան ըլլալու համար: Ուխտի կ'երթար Մշոյ Սուրբան Սբ. Կարապետի վանքը: Սբ. Կարապետի գերեզմանին վրայ ծնրադիր պիտի աղօթէր, անկէ մուրազ առնելու, փեհլուան դառնալու համար: Խաղալայրը՝ խաղի համար հետեւեալ կարգադրութիւնը կ'ըլլար: Ետանկիւն ցիցերու վրայ, հաստարեստ լարին երկու ծայրերը կ'ամրացնէին: Փեհլուանը հազուած կ'ըլլար դունաւոր բանուածքներով նախշուն՝ ճերմակ թոյլ շապիկ մը: Շապիկին վրայ հազած թեթեւ ու անթեւ բաճկոնակ մը, մէջքին կապուած մետաքսէ գօտի, ուսերէն վար, խաչածեւ յուլունքներէ շինուած մանր ու բէտ խաչեր, կուրծքն ու կոնակը զարդարելու: Կուրծքէն կախուած ետանկիւնածեւ արծաթատուփ նուխտան, չար աչքէ ու փորձանքէ ազատ պահելու հաւատքով: Կապոյտ տարատին հետ, սրունքներուն սեղմըած սախերը, որոնցմէ վար, ոտքերը բոպիկ: Գլխուն ցածիկ արախչի

վայելչորէն դրուած—հանդիսականներուն սիրոյն ու համակրանքին ենթարկուած :

Փեհչիւանին շքախումբն է իր Եալանցի խարտաշը, կամ ինչպէս կ'ըսէին պապա եղբորդր, գահուլծին եւ զուռնածին, հայրը կամ զինք հսկող եւ առաջնորդող ազգականը :

Խաղին սկզբնաւորութեան՝ կու գար գետին ամրացուած լարին մօտ, ուր երկար ձողը կամ քարագին պատրաստ էր լարին յեցած եւ բռնուած երկաթէ կեռով մը : Զողը կը վերցնէր երկու ձեռքով հաւասարակշռելով, լարին ծայրէն քանի մը քայլ հեռու, դետնին վրայ արագ քայլերով կը մօտենար լարին, մինչ գահուլ—զուռնան սրտագրաւ եղանակով կը նուազէր, ինք ազօթք մը մըմնջելով, խոնարհելով՝ ձողն ու լարը կը համբուրէր, ու ապա, բարձրաձայն կը կանչէր. «Ես Մշոյ Սուլթան, չանկիի դիւան, Եօթն անուան տէր Սք. Կարապետ, դու իմտատ կանգնիս...» եւ ճարպիկ ոտտումով մը, քարագին ձեռքը, կը սլանար լարին վրայ, վարէն դէպի վեր, ամենաբարձր միջոցը :

Դահուլ զուռնան պարերդ մը կը նուազէ, եղանակին հետ, կարծես կը պարէ լարին վրայ, մէկ ոտքին վրայ կեցած, միւսը կը ճօճէ օդին մէջ, եւ փոխն ի փոխ, ու դարձեալ բարձրաձայն կ'ըսէ. «Էի մեռնիմ քրզի, Եօթն անուան տէր, Մշոյ Սուլթան Սք. Կարապետ...» : Լարին վրայ կը նստի եւ ոտտումով կը ցատկէ ու կը կանդնի, եւ չաքմա կը դարնէ : Վարը Եալանցիմ՝ փեհչիւանին բոլոր խաղերը կը կապկէ, որուն հետ իր տարազն ալ, հանդիսականներուն խնդուքը կը շարժէ : Ալիւրտ երեսներով, տարօրինակօրէն շարժուած : Գլխուն՝ դրակը, ծայրին աղուէսի կամ կատուի պոչ մը կապած, ծայրին ալ փոքրիկ բոժոժ մը : Կոնակը արջի կամ այծի փոսթ մը, դանազան մեծութեամբ յուլունքներ կուրծքէն կախած, բոկոտն, ձեռքին ծուռ ու մուռ մական մը : Մերթ ընդ մերթ, լարը բարձր բռնող ցիցերուն մօտեցող մանուկները խնդացնելով կը փախցնէ, երբեմն ալ մօտենալով ամօթխած կիններուն, զանազան հտպիտ խաղերու ձեւեր ցուցադրելով զանոնք կը դուարրուն, զանազան նպատակը, նուէր հաւաքելն է : Մինչ փեհչիւանը կը խաղայ, դահուլծին ու զուռնածին իրենց նուագով խանդ ու եռանդ կը սփռեն. անդին Եալանցի խարտաշը խինդ ու ծիծաղ կը բերէ : Կը ցատկէ, ափափուտ կու տայ, նուէր կը հաւաքէ, եւ ահա լարին ներքեւ կայնած կը պոռայ փեհչիւանին.—

«Ես փեհչիւան խարտաշ» :

Վերէն փեհչիւանը կ'ըսէ. «Լապէ, Գան խարտաշ» :

Ու նորէն ինք է. «Հիւնա՛ր, հիւնար, քի՛մ իջիւն» :

Փեհչիւանը. «Հիւնարը Աստուծուն է, հիւնարը՝ Զանկիիդիւան՝ Եօթն անուան տէր Մշոյ Սուլթան Մուրատաուր Սք. Կարապետին է...» :

Դարձեալ. «Հիւնա՛ր, հիւնա՛ր քի՛մ իջիւն» :

«Հիւնարը, մեծաւորին, փոքրաւորին, մելիքին, երեսփոխին ու ալ»

աշխարհին համար է մէկ լի՛, տանգի խիչում, ... աղային է» ցոյց տալով ենթական :

Եալանցի խարտաշը կը մօտենայ աղային կամ ոեւէ ենթակայի, ափափուտ կ'առնէ առջեւը, ու ահա ոտքի կանգնած, ձեռք կապած կը կենայ, մինչեւ կը ստանայ նուէրը : Առատ նուէրներէն պապաեղբորդը ոգեւորուած, կը ձայնէ փեհչիւանին, որ կը սկսի աւելի բարդ խաղերու, ոտքերը կապած, պղինձէ կաթսայի մը մէջ կեցած, լարին վրայ կը քայլէ, կամ մերկ սուրբեր ոտքերուն կապած, կը պարէ, կամ լարին վրայ աթոռ մը դրած՝ վրան կը բաղմի, կամ սուրճ կ'եփէ, կամ երեք հաւկիթներ օդին մէջ վեր նետելով, կը բռնէ, կամ փոքր մանուկ մը շալակը ստած իր եւ անոր աչքերը կապած, լարին վրայ կը քայլէ : Կամ լարին վրայ ափափուտ կը դառնայ, զարմանք եւ հիացում առթելով հանդիսականներուն :

Լարին վրայ խաղալէն ետք, փայտէ երկայն ոտքեր հագած, կը շրջի դիւղին մէջ, բոլորին ալ տեսութեան արժանանալու, եւ միանգամայն նուէրներ հաւաքելու : Օրերով խաղը կը տեւէ, եւ երբ այլեւս վերջ կը գտնէ, իրենց փոքր կարաւանը գոհունակ սրտով, բեռներնին բառցած այն բոլոր գործիքները որ փեհչիւանին խաղին համար անհրաժեշտ են, դիւղէն դուրս կու գային, առաւելապէս դիւղին երախաներով շրջապատուած՝ բարի ճանապարհի ու յաջողութեան բազմազան մաղթանքներով, ու կրկին անգամ դալու ջերմիկ հրաւերով :

**ԽԱՐԱՏՈՒԶԱՆ**

Զմեռնային երկար գիշերներուն՝ Յիսնակաց օրերուն, դիւղացիները կը հաւաքուին ախոռներուն սագուները, կամ օտաները, ժամանցի համար : Աշուղներ կամ ասողիկներ, հէքեաթ կը պատմեն : Գիշերուան այդ պահերուն, երիտասարդներ կ'երթան հաւի գողութեան : Գողօն հաւերը կը մորթեն, շամփուրով խորոված պատրաստելով կը ճաշակեն : Այս ճաշին եւ ժամանցին խարատուգան անուներ կու տան :

**ՃԻՏՈՒ ԿՈՒԻԻ**

Աշնանամուտին, երբ դաշտային աշխատանքները այլեւս վերջ գտած են, տարուան պաշարը — բնաղում — ապահովուած, զանազան զրօսներու կարգին տեղի կ'ունենայ նաեւ ճիտու կոնիւր : Առհասարակ պատանիներ, իրենց խնամած եւ մեծցուցած արտադրները կուտեցնելու համար, տանիքներու վրայ, կամ կալի մը հարթ ու բնորոշ գիտնին վրայ, հանդիսականներու ներկայութեան՝ աքաղաղները կը կուտեցնեն : Կոնիւր սկսելու համար, կոյմերը կը սկսէին կանչել իրենց աքաղաղները անուսով, կոնիւր հրահրելու համար : Բարձրաձայն կը կանչէին. «Տըկ... տըկ... տըկ... տըկիչ...» մինչեւ որ աքաղաղները

րը կարծես այդ լեզուն հասկնալով, իրարու վրայ կը յարձակէին եւ կոխը կը սկսէր: Հանդիսականներուն աղմկալի ձայներուն ելեւէջներէն, աքաղաղները կակաչելէն մեծ թափով իրարու վրայ յարձակելով, մէկը միւսին կապառքը կտցահարելով կ'արիւնէին: Կոխը երբեմն ժամեր կը տեւէր: Երբ



Ճիտու կոխու (աքաղաղներու կոխու)

մէկը այլեւս պարտուած էր, կը փախչէր: Յաղթականը՝ կոկոզավիզ՝ թէեւ արիւնլուայ, սակայն, հպարտ կեցուածքով, բարձրաձայն՝ կու կու լիկու կը կանչէր, յայտարարելու թէ յաղթեցի: Կոխը կը վերջանար, հանդիսականները կը բաժնուէին, սակայն կոխի մասին խօսակցութիւնները օրերով կը շարունակուէին:

**ԳԱՅԼ ԽԵՂԴՈՒԿ**

Ձմեռնամուտին, երբ առաջին անգամ ձիւն կը տեղայ, գայլերը լեռներէն դաշտ կ'իջնեն: Առաջին ձիւնը թեթեւ կ'ըլլայ, եւ գայլորսները հեծեալ կը հալածեն գայլը. երբ կը հասնին գայլին, շատ վարպետութեամբ, մահակով կը զարնեն զլսուն. գայլը գլխադիր կ'իյնայ, որտղը կ'իջնէ ձիւն, գայլին բերանը փայտի կտոր մը անցնելով կը կապէ եւ ձիւնը քամակը առնելով զիւր կը բերէ: Գայլին ոտքը շղթայ մը կը կապեն, որուն մէկ ծայրն ալ կը կապեն աղօրիքի քար մը, եւ ընդարձակ կալի մը մէջ հանդիսականները շրջանակ մը կը կազմեն զիտելու գայլի եւ շունի կոխը: Գայլին բերանէն փայտի կտորը կը հանեն, եւ թոյլ կու տան կոսւելու: Այն շուները որ գայլէն չեն վախնար, կը կուտին, մինչեւ որ գայլը կը խեղդեն: Այսպիսի շուներուն



Գնչուն արջ կը խաղցնէ

գայլիկողը շուն կ'ըսեն: Գայլերը բնականէն դժուարութիւն ունին գլուխին կողմէ կողմ դարձնելու. այս պարագան շուներուն դիւրութիւն կ'ընծայէ շատ յաճախ յարձակում գործելու գայլին վրայ:

**ԳՈՄԷՇԻ ԿՈՒԻ**

Գիւղացիները գարնանամուտին, գրօսի համար, գոմէշներ կը կուտեցնեն: Գիւղին համբարները կը հրամայեն իրենց մշակներուն, որ գոմշակուի համար, գոմէշը պատրաստեն եւ տանին գիւղին այսինչ կամ այնինչ կալը կամ արտը, ուր կոխը տեղի պիտի ունենայ: Կուտող գոմէշները կ'անուանուին բուլա: Այս գոմէշները ձմրան տեւողութեան, ախոտներու մէջ կը պահուին, երբեք դուրս չեն հաներ: Շատ լաւ կը կերակրեն եւ կը գիրցնեն: Մարմինը յաճախ կտաւատի ձէթով կ'օծանեն: Կոտոշները մասնաւոր հոգածութեամբ կը սրեն: Գարնան առաջին անգամ դուրս հանած պահուն, հում հաւկիթ մը ճակատին կը զարնեն, որ աչք չառնէ: Մշակները եւ երիտասարդները, փայտէ գաւազանները ձեռքերին, գոմէշը շրջապատած՝ կ'առաջնորդեն կուտատեղը: Հոս կը բերեն հաստ շուաններ եւ խոշոր փայտեր՝ նախապատրաստութեան համար: Գոմէշներու կոխը, առհասարակ կը տեւէ ժամեր: Հանդիսականները ամէն տարիքի եւ սեռի, ինչպէս կ'ըսէին գիւղացիները, հաճոյքով եւ հրճուանքով հանդիսատես կ'ըլլային այս զրօսին: Կոխի ժամանակը եթէ երկարէր, եւ կուտող կողմերը անպարտելի մնային, կը վատէին իրարմէ եւ կոխը վերջ կ'ունենար: Իսկ եթէ կուտող գոմէշներէն մէկը պարտուէր, կը սկսէր փախչիլ: Յաղթականը կը հալածէր պարտուողը: Այս պարագային, շուանով կամ խոշոր փայտերով կը ջանային բռնել կամ կեցնել յաղթողը:

**ԳՈՒԼԱՇ**  
**ԿԱՄ**  
**ԳՕՏԵԿՈՒԻ**

Երկու ըմբիշներ, ձեռքերով իրարու կը փաթ-  
թուին, մէկը կը ջանայ միւսը գետին պռակեցնել  
կոնակի վրայ: Պայման է, որ յաղթողը յաղթու-  
ողին կոնակը գետին զարնէ, եւ առիթ չտայ որ կողմերու վրայ շարժի: Երբ  
որոշ պահ մը այդ գիրքին մէջ կը պահէ, յաղթական կը յայտարարուի:

Գօտեկութիւն պատրաստուելու համար, զօտեմարտողները մարմիննին  
իւղով կ'օժեն: Գօտեմարտի պահուն մերկ են, միայն կարճ տաբատ մը կը  
հագուին, զրեթէ մարմնոյն փակած: Մասնաւոր դատաւորներ կ'ընտրուին,  
եւ անոնք է որ զօտեմարտի ամբողջ տեսողութեան կը հետեւին շարժումնե-  
րուն եւ արդիւնքը կը յայտարարեն:

**ԼԱԶԿԻ ԳՈՒԼԱՇ**

Ասիկա տեսակ մը զրօս է, որ շատ աւելի յատուկ  
է պատանիներու: Լազկի զուլաչ բռնողները, երկու  
հողի կը պռակին տախտակամածի, կամ գետնի  
վրայ, հակառակ ուղղութեամբ, քով քովի: Իւրաքանչիւրը, մէկ սրունքը վեր  
կը բարձրացնէ, եւ կը փորձէ անցնել հակառակորտին սրունքին, եւ արագ  
շարժումով, կամ ոտուամով ենթական դարձնել զլիսուն վրայով, ուղղութիւ-  
նը փոխելով: Ո՛վ որ յաջողի հակառակորդը գլխուն վրայ դարձնել, յաղթա-  
կան կը հռչակուի:



**Գ. Մ Ա Ս**

**Հ Ա Ր Ք - Խ Ն Ո Ւ Ս**

**Գ Ա Ի Ա Ռ Ա Բ Ա Ր Բ Ա Ռ**

## ԵՐԿՈՒ ԽՕՍԻՔ

Խնուսի գաւառաբարբառը հաւաքած ենք իբրեւ *Հում նիւթ*: Խուսափած ենք անոնց հարագատութիւնը գտելէ, գտելէ կամ մեկնաբանելէ, այն արդարացուցիչ նկատումով, որ բառագիտութիւնը դժուարին է և նուրբ գիտութիւն է, եւ մեր ձեռնհասութենէն վեր. ուրեմն հաւաքած ենք զանոնք ինչպէս որ են, այբուբենական կարգով դասաւորած, այն համոզումով, թէ ապագային՝ հայ բառը, մանաւանդ գաւառաբարբառը ուսումնասիրող գիտնականին դոյզն ծառայութեան բաժին մը բերած կըրնանք ըլլալ:

Հաւաքուած բառերը, շատ անգամ, զանազան առիթներով կարդացած ենք հայրենակիցներու, անոնց հնչումները եւ հարագատութիւնը նշողորոշելու նկատումով: Կարդացած ենք հետեւեալ հայրենակիցներուն. — Խալչաուշցի Մովսէս եւ իր տիկնոջ՝ Արեգնազ Զափարեանի, Զափար Զափարեանի, Մուշեղ Խանամիրեանի՝ համագիւղացիս — Հարամիկ —, Տէր Եղիշէ Քենյ. Միսիթարեանի — Գովանդուկցի, որոնք կը բնակին Ֆիլատելֆիա, մեր բնակած քաղաքը:

Տէր Սուրէն քենյ. Բաբախեանի (Խալչաուշցի) եւ տիկին Արեգնազ Խանտիլեանի (Խնուս-բերդեցի, Մուղսու Միսակ աղայի աղջիկը), որոնք կը բնակին Տիբրոյիտ: Արեգնազ Զափարեան եւ Արեգնազ Խանտիլեան շատ հարագատութեամբ պահած են մեր գաւառաբարբառը, ու նաեւ երգերն ու պարերգները, ասացուածքներն ու սովորութիւնները, եւ արժանի են մասնաւոր յիշատակութեան:

Ա

ԱԲԵՂԱԹՈՂ — կարգի ու իշխանութեան բացակայութիւնը բնորոշող խօսք:

ԱԲՕ — մեծ հայր, մեծ պապ:

ԱԳԵՇՈՐ կամ ԱԳԵԿԱՊ — ծննդարեւորութեան առաջին մէկ երկու շաբաթներուն՝ այծի յետոյքին կապելիք շոր, լաթի կտոր:

ԱԳԵՓՈԿ — ձիու պոչի տակէն անցնող փոկ, երկու կողմէն ապուցուած թամբ:

ԱԳԼԱՓՈՒՍՏ — գլխովայր՝ ինքն իր վրայ դառնալ (մարդանքի ձեւ):

ԱԳՈՒԳԱՅ — հողաչէն կամ քարաչէն խողովակ (օր. քոնրի ագուգայ, ջուրի ագուգայ):

ԱԴԱՄԱՄՈՒԹ — արշալոյսէն առաջ թանձր խաւարը. այն մութը, որուն մէջ մերկութիւնը հաղիւ կը նշմարուի:

ԱԶԱՊ — Ամուրի, չամուսնացած, ազատ (օր. ագապ տղայ, ագապ աղջիկ, ագապ չարի):

ԱԶԱՊՉԱՐԻ — նոր փեսային ընկերացող երիտասարդներ, պսակադրութեան եւ հարսանիքի տեղողութեան:

ԱԶՆԱՒՈՒՐ — հսկայ, հզօր, ազնուական:

ԱԹՄԱԹԻԹՈՆ — կոճակածեւ արմատով բոյս մը՝ համեղ եւ ուտելի:

ԱԹՈՂԿԵԼ — հրել, ձգել, նետել. բարկութեամբ բաները մէկդի շարտել:

ԱԹՈՒՔ — փայտէ նստարան, աթոռ:

ԱժՆԻԿ — արժանի, համահաւասար:

ԱԼ — կարմիր, կարմրագոյն:

ԱԼԱԺԱՀՐԻ — բոյս մը, որ երբ հասուննայ՝ գլուխը հատիկներ կը բռնէ: Հատիկները չորցնելով անկէ ներկ կը պատրաստեն, ոչխարի՝ կամ այլ մորթեր խաղաղորդելէ ետք, անով դեղին կը ներկեն:

ԱԼԱԿՈՎԵԼ կամ ՍԼԱԿՈՎԵԼ — բանի մը վրայէն թեթեւ անցնիլ. թերի գործ ընել:

ԱԼԱՊ-ՉԱԼԱՊ — աճապարանք, իրարանցում, բան մը հապճեպով ընել:

ԱԼԱՊՈՒՃԻԿ — մանկական խաղ, ինքն իր վրայ շուրջանակի դառնալով:

ԱԼԱՐԻ — ուշանալ, դանդաղել:

ԱԼԵՆԻ — յայտնի, ամէն բան երեւան հանուած:

ԱԼԻԼ — կոյր, աչազուրկ, լուսազուրկ:

ԱԼՆԻ — առանց աղի, անհամ:

ԱԼՈՒՃ կամ ԱԼՈՒՉ — կեռասի նմանող վայրի պտուղ, կարմիր եւ դեղին գոյներով, անմշակ կ'աճի՝ լեռնալանջերու վրայ:

ԱԼՈՒՃԻԿ — փոքրիկ, դաճած, տարիքը չցուցնող (օր. ֆոլ իծուց կոտոշ չկայ, հերուսն արուսիկն է (թերեւս արուսիկ պէտք է ըլլայ):

ԱԼՈՒՐ — ալիւր՝ ցորենի, գարիի կամ որեւէ հացահատիկի:

ԱԼՐՏՈՒՆ — ալիւրի ամբար. ջրադաշի մասնաւոր գուռ կամ տաշտ,

ուր հացահատիկը աղալէն ետք կը լեցուի :

**ԱԼՔ** — շար ողի, դեւ, սատանայ :

**ԱՆԵԼ** — դուռ ետեւէն գոցել, թեթեւ փականք դնել :

**ԱՆԸՂ** — գրան փականք, ներսի կողմէն դործածուելիք ձեւով :

**ԱՆԼԻԼ** — արթննալ, դարթնիլ, մտածումէ սթափիլ :

**ԱԾԻԿ** — գարնանացան ցորենէ պատրաստուած քաղցրահամ ուտելիք : (Պատրաստութեան կերպը. — ցորենը ջուրի մէջ դնելով կը պահեն մինչեւ որ ծլի : Մըծ ցորենը նոյնութեամբ կը ձեծեն սանդի մէջ, անկէ գոյացած ջուրը ալիւրով չաղախած կ'իփեն խաւիժի նման, կը լեցնեն կարասները, 30 օր կը պահեն մինչեւ որ հասնի : Ասոր պատրաստութեան ժամանակամիջոցն է Մնունդէն մինչեւ Մեծ Պաս՝ երբ կը սկսին ուտել իրրեւ պահոց կերակուր) :

**ԱԾՈՒ** — արտի կամ բանջարանոցի մասերու բաժնուած հողաչերտ :

**ԱԿ** — բացուածք, ծակ (օր. աղբրի ակ, քոնիրի ակ) :

**ԱԿԱԿԻՉ** — դիմացինը արհամարհելով չսիրած խօսքերը կրկնելով զայրացնել :

**ԱԿԱՐ** — թէ որ, եթէ, պատահի որ :

**ԱԿՉԱԿԱՆՕՔ** — անկանոն, անհաճոյ, խառնիխառն :

**ԱԿԻՆ-ԿՐԱԿԻՆ** — հրահրել, իրարու խառնել (օր. ինչ ակիմ-կրակիմ կ'իտաս) :

**ԱԿԻՇ** — երկաթէ ձող՝ կոր ծայրով : Ամէն տուն կը գտնուէր : Խոհանոցային դործիք, կրակի խառնելու կամ ամանները թոնիրին մէջէն հանելու համար : Կոխներու ժամանակ ակիչը պատրաստի

դէնք էր. կինները անմիջապէս կը հասցնէին այլ մարդոց :

**ԱԿՆ** — մտանիտի ակ, թանկագին քար, գոհար :

**ԱԿՆԱՏ** — թակարդ, ծուղակ :

**ԱԿՆԻԿ** — տապալուած հաւկիթ, խորիխի բաց, վրան մածոն քաշուած :

**ԱԿՆՇՈՐ** — թոնիրի ակը գոցող լաթի կամ շորի դունդ :

**ԱԿՈՒԻ** — արուի, քանդուի (օր. քուտու ակուի) :

**ԱԿՈՒՍԺԱԿԻԿ** — քիչ մը ուտելիքի խոտում, փոքր նուէր, կաշառք :

**ԱԿՈՒՂԱՏԻԿ** — Մանկիկի մը առաջին ակոսն հանելու առիթով խաշուած ցորենի հատիկ : Սովորութիւն էր այս առիթով բարեկամներ հրաւիրել կոչունքի, ներկաները բոլորուած՝ երախային շուրջը, գանաղան առարկաներ կը դնէին երախային առջեւ. այդ առարկաներէն ո՛ր մէկը որ առաջին անգամ վերցնէր, այդ առարկան խորհրդանշող արհեստով պիտի բախտաւորուէր :

**ԱԿՈՒԿԻ** — ակոսն կապուել, ակոսն առնուել, պապանձիլ :

**ԱԿՐԱՏ** — նախաճաշ (օր. ակրոգայ է — նախաճաշի ժամանակ է) :

**ԱԿՕՆ** — բանկանութիւն, խելք, յիշողութիւն :

**ԱԿԱՆՉ** — խարկուած ձաւար, աղջրուած, կանեփի հատիկներով խառնուած :

**ԱԿԲԻՐ** — եղբայր :

**ԱԿԲԻՆ** — բերրի, պարարտութեան զրուած բերրի հող, արտ (օր. աղբիմ արտ) :

**ԱԿԲՈՒՐ** — աղբուր, ջուրի բխած տեղ :

**ԱԿԲՐԱՆՑ-ԱՐՈՒՆ** — կարմրագոյն

վայրի ծաղիկ մը, թաւշային երեւոյթով : Այս ծաղիկէն կարմիր ներկ կը պատրաստեն :

**ԱԿԲՐԳԻՐ** — եղբայրութեան, հարազատ բարեկամութեան ուխտ : Սր. Յարութեան Կիրակի առաւօտ եկեղեցիին մէջ Աւետարանի վրայ ձեռագիրը երգուելով եղբայրակցութիւն :

**ԱԿԵՂՆԱԿ** — բուրդ կամ բամբակ գրգելու աղեղնաձեւ գործիք :

**ԱԿԸՇԲԱՆՔ** — բոյս մը, սրուն չորցած տերեւները ծխախոտի պէս կը գործածեն : Ակոսայի ցաւը մեղմացնող բնոյթ ունի :

**ԱԿՂԷՉ** — մանր քար (օր. յաղիւզի քար) :

**ԱԿՈՒ** — թոյն :

**ԱԿՈՒԷՍ** կամ **ԱԿՎԷՍ** — հարսանեաց հանդէսին համար, փեսայի տունէն հարսնցուի տունը գրկուած նուէրներ (բարապալ) տանող անձը : Եթէ (ազգէս) ճարպիկ մէկը չըլլայ, հարսնցուի բարեկամները կը ջանան անոր անդրափարտիկին ետեւի մասը կտրել՝ մերկութիւնը ցուցադրելով, հասկցնելու որ իրենք աւելի աչքբաց են : Նաև խորամանկ, չորքոտանի վայրի կենդանի :

**ԱԿՈՒԸՍՈՒԿ** — սայլի առեղնեւոր վերայ տնկուած ցից :

**ԱԿ ՈՒ ՀԱՅ** — բարեկամութեան նշան (օր. իրարու հետ աղ ու հաց ենք կերել) : Յայթական բանկներու մուտքը կը դիմաւորէին աղ ու հացով :

**ԱԿՈՒՆ** — աղալու համար ջրաղաց տարուած ցորեն :

**ԱԿՈՒՊԱԹ** — անէձքի իմաստով ասացուածք. չար բախտի հանդի-

պելու չարակամ արտայայտութիւն :

**ԱԿՕԹՐԱՆ** — լուսարաց, արեւելք, մթնշաղ, աղօթարան :

**ԱՃԱՃԱ** — ուրիշի մը բերանէն խօսիլ, կապկել, դիմացինը նմանախօսելով ծաղրել, բարկացնել :

**ԱՃԼԱՃԵՊ** — արտառոց, տարօրինակ, արտասովոր, անսովոր :

**ԱՃՈՃ-ՄԱՃՈՃ** — գաճաճ, կարճահասակ, վիպական մարդ :

**ԱՃՈՒԿ** — Գնդերներու եւ փոքրի միացման կէտր :

**ԱՃՊԸՏԵՍ** — ալլանդակ, տարօրինակ երեւոյթ :

**ԱՄԱՆԱԹ** — աւանդ. բանի մը փոխարէն պահ գրուած իր մը. ուրիշէ մը իրեն վստահուած գոյք մը. հոյի (օր. Աժ. գաւաւաքս աւնէր) :

**ԱՄԲԻԾՔ** — հանդուցեալի մը հոգիին Լօթր օր յատուկ մատուցուած աղօթք (օր. Եօրնաւթիժ կարդացիմ) :

**ԱՄԵՆ** — խելօք, զգոյշ, հանդարտաբարոյ :

**ԱՄԻՇ** — սոսույտ խոտի երկրորդ հունձքի կանաչութեան շրջանի վիճակը կը կոչուի ամիշ :

**ԱՄՊԱԿ-ՉԱՄՊԱԿ** — անհամ, հակասական, իմաստէ դուրկ :

**ԱՄՊՇՈՂ** — ամառ ատեն թեթեւ ամպամած օդին հեղձուցիչ տաքութիւն :

**ԱՄՊՐՈՑ** — չորցած քակորի բրդաձեւ զէլ, բերդ, ամրոց :

**ԱՅԱՄ** կամ **ՀԱՅԱՄ** — ժամանակ, ժամկէտ, պահ :

**ԱՆԱՀՈՒՆ** — անսահման, անհուն, յաւիտենական :

**ԱՆԱՃ** — չաճող. ձագ մեղուի մեղր :

ԱՆԳՆԱԼ կամ ՅԱՆԳՆԱԼ — ուշանալ, անապան:

ԱՆԳՆԵԿ — առանց սերմանելու ինքնարոյս ցորեն, որ հունձքի ատեն՝ քաղուած ցորենի հասկերէն պետին ինկած հատիկներէն կը բուսնի:

ԱՆԵԿ — թարմ մածուն (քաղցրաւուն տեսակ):

ԱՆԵՂ — նետածիղ աղեղնաւոր փայտ (նետ ու աղեղ):

ԱՆԵՂՆԱԿ — ծիածան, ծիրանի պօտի, Ածոյ գօտի ռամկական ասացուածքով:

ԱՆԹԵՂ — թոնիրի մոխիրին տակ պահուած անմար կրակ:

ԱՆԹԵՏԱԿ — թեւի տակ, անութի տակ:

ԱՆԹԻՈՅ — թոնիրը կամ կրակը հրահրող կամ խառնող փայտ, ցից:

ԱՆԹՈՒԿԻԼ կամ ՇՆԹՈՒԿԻԼ — վտարել, հեռացնել, կշտամբել:

ԱՆԹՓՈՒԹ — անհամբեր, յարձակող, կոռուզան, շառատ:

ԱՆԻԾ — ոջիլին մանրուք տեսակը, մակարոյծ:

ԱՆԻՆՍ — անմարդարնակ, վայրի, ամայի:

ԱՆԻՍՈՆ — հովանոցաւոր տունկ, անուշահոտ հունտերով, կը պործածէին ողելից ըմպելիի պատրաստութեան համար՝ իբրեւ հոտաւէտութիւն:

ԱՆԽԱԼԱՏ — անարատ, գեղեցիկ, չըքնաղ. նաև կանացի անուն:

ԱՆԿԱՃ — ախանջ:

ԱՆԿՃԿԼԱՅ — աւետիս. ուրախ լուր մը տուողին նուէր. (օր. յանկնքիլէս ի՞նչ է):

ԱՆԿ ՈՒ ԿՈՒՐ — անդամալոյծ եւ կոյր:

ԱՆԿՈՒՃԻԼ — ախանջ դնել, գաղտնիք

մը իմանալու համար. պահուած տեղէ մը, ոտքի մատներու վրայ թեթեւ քալուածքով, տեղ մը թաղնուելով գաղտնիքին թափանցել:

ԱՆՀԱՄՊՐԱՆՔ — չհամբուելիք, անթիւ, անհամար:

ԱՆՈՒՈՐ — նշանաւոր, մեծ անունով, անուանի:

ԱՆՊԱԿ — անապակ, մաքուր, զուտ (օր. անպակ գիւնի, անպակ կաք):

ԱՆՅՆԵԼ — կրակը հանդցնել, մարել:

ԱՇԽԻԼ — թթուիլ, աւրուիլ, համ ու հոտը փոխել:

ԱՇԽՈՒԿ — թթուած, համը փոխուած (օր. աշխուկ կաք, աշխուկ փաշ):

ԱՇԽՈՐԴ — աւելորդ, հանդերձի աւելորդ մաս:

ԱՇՄՈՒՇ — աղջամուղջ, խաւարէն դէպի լոյս, մթնշաղ:

ԱՇՆԵԼ — կալի մէջ կամնելէ առաջ՝ իբրեւ նախնական աշխատանք կամնելու դիւրութեան համար խուրձերը քակել, եւ ցողունները փակել (օր. գկամ չլծի՛ս չուրի գկալնի աշնիւմ):

ԱՉԿՈՒԼ — աչք դպիլ, չարի հանդիպիլ, նախապաշարուածով կարողազրկուիլ:

ԱՊԱ — մաղէ հիւսուած բաճկոն:

ԱՊՈՎ կամ ՅԱՊՈՎ — համար (օր. ֆու յապով — քեղի համար):

ԱՊՈԿԵԼ — արագ եւ անհաճոյ երեւոյթով՝ կերակուր ուտել:

ԱՊՐԱՅ-ՏԱՐԱՅ — ապրանք պարունակող սակառի, պարկի եւ ուրիշ որեւէ բանի ծանրութիւնը իրական կշիռքէն կամ ծանրութեան գեղջելով հաւասարակութիւնը պտնելու գործողութիւն:

ԱՊՐՇՈՒՄ — մետաքս, թաւիչ:

ԱՊՐՋԱՆ — ապարանջան, թեւին կապելիք զարդ:

ԱՌ — ամօթիւածութիւն, զլաստութիւն (օր. առ ու ամօթ չունի):

ԱՌՍՉ — անպատիւ, առանց ամօթի, անզլաստ:

ԱՌԱԿ-ՉԱՌԱԿ — այլանդակ, հտպիտ. չսիրուելիք ձեւ առնել:

ԱՌԱՏԱՄ կամ ՌԱՏԱՄ — արօրի այն բաժինը, որուն վրայ կ'անցուի երկաթէ խօփը:

ԱՌԵՂ — սայլի երկայն եւ հաստատուն ձողեր: Այս երկու ձողերուն առջևի կողմը ներկայացնող ծայրերը իրարու կը միացուին՝ կոշուելով սէլի մօրուֆ. դէպի ետեւ լայն բացուածքով՝ վրան կը կառուցուի մարմինը:

ԱՌԶԵԼ — փայտէ գերանով կամ տախտակով կապուած եւ բարձրութենէ մը կախուած թախտընդհանրապէս ախոռներու մէջ կը կապեն դայն:

ԱՌԼԷՉ — յարալէզ (վիպական իմաստով):

ԱՌՆԾԻ — անձնական, սեփական, առանձին:

ԱՌՆՈՒԻԼ — վշտանալ, դիմացինին խօսքէն աղդուիլ:

ԱՌՈՒ — վաղուն ջուր. ջուրը բաժնելու համար ջուրի ճամբայ:

ԱՌՈՒԻԼ — արգելքի հանդիպիլ, բանի մը դէմ գալ:

ԱՍՏՂՓՈՒՇ — սրածայր փուշերով տունկ (ուտուելիք): Հետեւեալ աւանդութիւնը կար իր մասին — Քրիստոսի խաչելութեան փուշէ պսակը աստղափուշէն հիւսուած է եղեր. այդ իսկ պատճառով Սր. Կարապետու պահոց՝ այս տունկը չէին ուտեր, հայերու հետ նաև քրիստները):

ԱՍՏՆԱՒՈՐ — հարս երթալ, ամուսնանալ:

ԱՍՐԱԿՏՈՒՐ — ոչխարի բուրդը խուղել:

ԱՏԹԵԼ — աճապարանքով բան մը խառնել. անհող կերպով բանի մը վրայէն անցնիլ (խմորը շաղելու սկզբնական ձեւը):

ԱՐԱՆՉԻ — ճերմակ կամ գունաւոր կտաւի վրայ բանուած գտակ, զլխարկ, Տարօն-տուրուրերանցիներուն յատուկ. կը բնորոշուի իբրեւ հին հայկական տարազի մնացորդ:

ԱՐԴԱՐԱԿԱՆՉ — ամուրի, կոյս, մեղք չմտած. ամուսնացածի լսածները չլսած, չտեսած անձ:

ԱՐԵԳԻՆ — արեւը միշտ վրան գըտնուած դիրքով տեղ, արեւոտ վայր:

ԱՐԿ ՈՒ ՃԼՐԱՅ — կարգ ու կանոն (ճաշի կամ որեւէ գործի առիթով ըսուած):

ԱՐՄԱՆՔ-ՉԱՐՄԱՆՔ — հիացում, ըսքանչացում:

ԱՐՆՏԻՐ — ոճրագործ, մարդասպան, ոճրային արարք ընող:

ԱՐՇՈՒՆ — չափ՝ փայտէ կամ երկաթէ (Հալէպի) կանգունաչափ, միջնեմատէն մինչեւ ուսոսկրի խաղը՝ միջոցը չափին հաւասարեցնելով:

ԱՐՈՒԿ — չորցած սև սալոր:

ԱՐՈՒՇ-ԲԱՐՈՒՇ — հաշտ, անխով, բարեկամական վերաբերում:

ԱՐՈՒՐՔ — հեթանոսական ժամանակաշրջանէ մնացած ամուսնութեան արարողութիւն, պայմանադրութիւն, կախարդական իմաստով կախարդանք, նորապսակ զոյգերը մեղրալուսնի դիշերը սեռային յարաբերութիւններէ զրկե-



լու, կապելու չարամիտ կախար-  
դական զրույթիւն, թուզթ՝ զիւ-  
թանք, հմայիլ:

**ԱՐՁԱՍՊ** — քիմիական բնոյթով կար-  
ծրք քարի տեսակ մը, զոր դեղի  
եւ ներկի համար կը գործածեն:

**ԱՐՏՆՈՒԻՍ** — դաշտային աշխատանք-  
ները յաջողութեամբ լրացնելու  
առիթով մշակին տրուելիք նուէր:

**ԱՐՑՈՒՆՔ** — արտասուք:

**ԱՐՕՍ** — բարձրասրունք թռչուն, ա-  
րազիլի խոչորութեամբ: Նաեւ  
խոպան, անմշակ չհերկուած հող,  
մոլախոտ. նաեւ զիւզի անուն  
(Արօս գիւղ):

**ԱՐՕՏ** — կանաչ դաշտադառն, կեն-  
դանիներու արածելու դաշտա-  
վայր:

**ԱՐՐՐ** — երկրագործական գործիք,  
հողը հերկելու կաղմած: Նաեւ  
թռչուն, բազի նմանող, գունա-  
զեղ փետուրներով եւ նազելաճեմ  
քայլուածքով:

**ԱՐՐՐԽՈՅ** — վատ կերպով հերկուած  
արտ, հող:

**ԱՒԱ** — նման, հանդոյն, նոյնպէս (օր.  
շնաւա կը հաջէ):

**ԱՒԱՆԱԿ** — անբան անասուն, էջ, տը-

դէտ (օր. հեռի անգլէ, ի՛նչ աւա-  
նակ է):

**ԱՒԱՐԵԿ** — մատակ գոմէջի ձալ, մէկ  
տարեկան էջ գոմէջ:

**ԱՒԵՏԻԿ ՅՈՐԵՆ** — կարմրահատ ցո-  
րեն, առանց քիտի, անփուշ, քո-  
սա:

**ԱՒՃԻ** — սրսորդ:

**ԱՒՆԻԿ** — Տապկուած հակիթ. նա-  
խապէս սոխը իւղով խարկուած,  
յետոյ հակիթը սոխին վրայ լեց-  
նելով՝ միասին տապկուած:

**ԱՒՏԸՆԱՒ** — հաւատալ, բուռածը ճըշ-  
մարիտ նկատել:

**ԱՓԱՒ-ԹԱՓԱՒ** — աճապարանք, ըշ-  
տապ, իրարանցում, հապճեպ:

**ԱՓԼԹՓԵՒ** — խարխափել, խաւարի  
մէջ շօշափելով քալել:

**ԱՓԿԱԺ** — ձեռքի ափերուն վրայ  
կաթուած՝ փաթթուած թելերու  
ձեւը:

**ԱՓԿՈՒՆՔ** կամ **ԿՅՈ** — փոքրիկներու  
յտաուկ՝ ձեռքի ափով խաղցուե-  
լիք խաղ:

**ԱՓՍՈՆԵՒ** — հմայել, կախարդել (օր.  
աղով փստնեց, որ աչք չառնէ):

**ԱՖԼԱՖԻԹՈՆ** — դարհուրելի, վիշա-  
պաձեւ, սարսուղազեցիկ:

**Բ**

**ԲԱԳՃԻ** — պահապան, սպասուոր,  
ծառայող:

**ԲԱԶԿԹԱՆ** — քամուած՝ խտացած  
թան (շքնո):

**ԲԱԶԿԻԿ** — կարմրագոյն բանջար,  
կ՛ուտեն իբր աղցան:

**ԲԱԶՐԿԱՆ** — կարաւան:

**ԲԱԺ** — հասակ (օր. արեւը բաժ մէ  
յէլեր. բաժ մի ձիւն է էկեր):

**ԲԱԺԿԻ** — հաղորդութեան անխառն  
գինի:

**ԲԱԼԱԲՈՅ** — հրավառութիւն, խա-  
րոյկ, բոցավառ կրակ. հրդեհուած

խոտի կամ ցորենի ղէզերու ցու-  
ցաղբած մեծ կրակ:

**ԲԱԼԱՍ** — քուրջ, հին գորգ, խալի:

**ԲԱԼԽԻՐ** — սահնակ, մարդիկ կամ ա-  
նասուն կը լծէին քաշելու համար  
(Եգիպտոսի քալիսիւր, ձեռքի քալիսիւր):

**ԲԱԼՆԻՔ** — բանալի:

**ԲԱԿ** — գաւիթ:

**ԲԱԿՐԱՐ** — ծառայ, աղախին:

**ԲԱՀ** — երկաթ թաթով երկրագործա-  
կան գործիք:

**ԲԱՀՐԱ** — հացահատիկներէն վեր-  
ցուած պետական տասանորդ  
տուրք:

**ԲԱՂԱՐՁ** — Անթթիմոր հաց, կլոր եւ  
թանձր (խուկի բաղարջ):

**ԲԱՄԲՈՍԻԿ** — նորափթիթ ծաղկի  
բացուածք. բանջարեղէններէն կա-  
ղմորի նորարողը՝ վիճակը:

**ԲԱՆ** — գործ, աշխատանք:

**ԲԱՆԹՈՂ** — գործէ, աշխատանքէ  
զաղբիլ:

**ԲԱՆՁՐԱՐԵՒ, ԲԱՆՁՐԱՅ** — եկե-  
ղեցւոյ Սր. հաց, մաս, պատա-  
րագէն ետք ժողովուրդին կը բաժ-  
նուի:

**ԲԱՆՁՐԱԲՈՒՍԻԿ** — թեթեւ տեսակէ  
կարկուտ:

**ԲԱՆՁՐԱՆՑ** — բարձրէն, վերէն, օդին  
մէջէն:

**ԲԱՆՈՔԻ** — փայտէ պոչով կորածայր  
երկրագործական գործիք, ցորեն  
խոտ կամ որեւէ բուսեղէն խորձ  
կապելու համար կը գործածուի:

**ԲԱՇ** — ձիու վրի վրայի երկար մալ:

**ԲԱՊԱՅ** — ձեռքի հինգ մատները բա-  
ցած՝ պժպանքի ձեւով դիմացինին  
ցոյց տալ:

**ԲԱՌԱՒԱՆ** — միջնորդ, հաշտարար,  
կոռուող կողմերը հաշտեցնող:

**ԲԱՌՈՒՅՈՒՅԻՒՄ** — արեւի տակ նստիլ,  
արեւի լողանք առնել՝ դարնան

կամ աշնան եղանակի դաղջ տա-  
քութիւնով:

**ԲԱՍ** — խօսք, պատմութիւն, հին  
անցքերը վերյիշելով պատմել:

**ԲԱՏԱՆ** — ցանկապատ, պարիսպ:

**ԲԱՏԻԼ կամ ՊԱՏԻԼ** — իյնալ, սայթա-  
քիլ:

**ԲԱՐԱԽՈՐ** — դրան վերի սեմը:

**ԲԱՐԴ** — ցորենի կամ խոտի 30 խուր-  
ձերու դէզը: (Օր. բարդ մի խոտ,  
բարդ մի ցորեն, բարդ մի հաւ-  
կիք):

**ԲԱՐԴ ՈՒ ԿՈՒՏՈՑ** — բարդուած,  
դիպուած, կուտակուած խոշոր  
հաւաքածոյ:

**ԲԱՐԿ** — տաք, այրող, զօրեղ:

**ԲԱՐԿԵՆԴԱՆՔ** — բարեկենդան:

**ԲԱՐԿԵՆՆԱՅ** — բարեկենդանի այցե-  
լութեան առթիւ, բարեկամի մը  
տարուած ուտելիքի նուէր:

**ԲԱՐՈՒԱՆԵԿ** — կաշիի ողորկ կտոր  
մը, զոր կիները աջ ազդրերուն կը  
կապեն քարման մանեյուտ ատեն,  
իրբեւ նախազուգութիւն շրջազ-  
դեսոր կամ գողնոցը չմաշելու:

**ԲԱՐՈՒՇ** — հաշտ, խաղաղ, անզոր,  
անխոռով:

**ԲԱՐՏԻ** — ծառի տեսակ մը՝ արագ ա-  
ճող, բարձր եւ ուղղաձիգ:

**ԲԱՐՏՈՒ** — տան առիքի վրայ շար-  
ուած մանր փայտեր, որոնց վը-  
րայ եղէպ կամ խոտ կը փոեն, յե-  
տոյ հողը կը լեցնեն վրան:

**ԲԲԻԷՃ** — մագերը զգոցուած, գիսա-  
խոխ, այլանդակ, տղեղ երեւոյ-  
թով:

**ԲԴԵՒ** — անասունները պարարտաց-  
նել:

**ԲԹԽԵՂԴ** — բթամատով խեղդուած.  
բթամատով կատարուած ոճիւր:

**ԲԹՆՈՑ** — կաշիէ շինուած մատաձեւ  
մատնոց, բութ մատին կ'անցընեն

բաղահանքի ժամանակ :  
**ԲԵՀՐ** — բաց դաշտի մէջ ոչխարներու հօտը կթելու տեղ :  
**ԲԵՐՆԿԱԼ** — ողորկ փայտէ շինուած մահիկաձեւ կալանք, անասուններու բերանը կը կապեն, որ կալի մէջ անկարող ըլլան ուտել :  
**ԲԵՐՆՓՈՒՆ** — կերակուրի տեսակը փոխել : փոխարեւաբար՝ ըսած խօսքը փոխել :  
**ԲԵՐՇԱՆԿ** — կարաւանը առաջնորդող բոժոժներով եւ զեղեցկահիւս զորակերով զարդարուած ձի :  
**ԲԷԲԸԼ** — տղեղ, անբաղձալի երեւոյթ :  
**ԲԷԴ** — խոշոր, մեծ (օր. բէդ, բէդ ձիւն կ'իգայ. բէդ, բէդ մը՝ գրուցի) :  
**ԲԷԴՆԱԼ** — մեծնալ, խոշորնալ, հասակ նետել :  
**ԲԷԶՐԻԼ** — ձանձրանալ, յոպնիլ, գործի վերաբերեալ հետաքրքրութիւնը կորսնցնել :  
**ԲԷԼ-ԱԺՏԱՀԱ** — հսկայ, կտրիճ, քաջութիւն բնորոշող :  
**ԲԷՃ** — ուս, ուսուցիչ :  
**ԲԷՇԻԿ ԲԵԱՍՄԱ** — օրօրոցէն ամուսնութեան պայման կապել. տղան ու աղջիկ երբ ամուսնութեան տարիքին հասնին՝ կ'ամուսնացնեն :  
**ԲԸԺՊՈՒՏՈՒՆ** — բծաւոր, գոյնզգոյն :  
**ԲԸՇ** — նշան, բիծ, երեսի կամ մարմնի վրայ երեւցող :  
**ԲԸՌ** — վաղելով խաղցուած խաղ, չուռ, բերդ : Ոչխարի հօտէն զատուած եւ հեռացած մասը : Նաեւ բաւականաչափ, հաւանաբար «բուռ» մը իմաստով (օր. բըռ մի խնձոր բերի, բըռ մի ցորեն ցանցի) :  
**ԲԸՍԿ** — փունջ, երկայն քիչ մը մազ :  
**ԲԺԵԼ** — խոթել, մատը աչքը խոթել

(օր. բժեմ պտուղդ) :  
**ԲԺՈԺՈՒԻԼ** — բարկանալ, ինքն իրմէ խոռովել, բորբոքել :  
**ԲԺՈԺ** — աղօտ, աննկատելի, մշուշոտ :  
**ԲԻԼԱԿ** — բաղուկ :  
**ԲԻՃ** — վիժած, ընկեցիկ, ծնունդը անյայտ :  
**ԲԻՆԴ** — մանուկներու օրօրոցի կապ, ասով մանուկը կը կապեն օրօրոցին : Մօտաւորապէս հինգ մատնաչափ լայնք, հինգէն-վեց ոտք երկայնքով, մէկ ծայրը մասնաւոր փոքրիկ փայտի կտոր մը ամրացուած է, միւս ծայրին ալ մատնաչափ մը լայնքով ձեռահիւս «միզրի թեղ» կապը դրուած կ'ըլլայ :  
**ԲԻՅՈՒԿ** կամ **ՓԻՅՈՒԿ** — սատակ, դիակ, ընդհանրապէս անարդական իմաստով ըսուած (օր. քրդու փիցուկ, շան փիցուկ) :  
**ԲԼԲԸԼԱԼ** — անկապ, անիմաստ խօսիլ :  
**ԲԼԵԼ** — շատախօս, շաղակրատ, անիմաստ խօսիլ :  
**ԲԼԷ** — բայց :  
**ԲԼԹԵՄ** — դեղնադոյն եւ շատ հոտաւէտ ծաղիկ մը, չորցնելով տունի մէջ կը պահեն, ձմեռ եղանակին հոտաւէտութեան համար :  
**ԲԼՔԷՄՍԻ** — նորէն, հաւանաբար :  
**ԲԿԻ** — լուծի վրայի գոյգ մը ակնջանման փայտեր, փոկը բռնելու համար շինուած :  
**ԲՂԲՂԻԿ** — ջուրի փոքր սափոր, հողէ փարչ, որուն բերանը լման բացուածք չունի, այլ ծակ-ծակ է : ջուրը երբ պարպես՝ կը բղբղայ :  
**ԲՂԻՆՁ** — բեւեկնիի նմանող ծառ մը, որուն հունտերը ուտելի են եւ համեղ :

**ԲՂԱՄ** — խուխ, մաղաս, դեղին հիւթ, որ հազի պահուն թոքերէն դուրս կու գայ :  
**ԲՂՊՈՒՃ** — ուռեցք, բշտիկ, դժուար աշխատանքէն ձեռքերուն մէջ, երկար քալելէն ոտքերուն տակ, կամ այրուածքէ մարմնոյն վրայ զոյացած փոքր կամ խոշոր պղզպըձակներ :  
**ԲՆԱԿՈՒԻԼ** — բնակութիւն հաստատել, հիմնաւորուիլ, տեղաւորուիլ :  
**ԲՆԱՂՈՒՆ** — տարեկան ուտեստեղէնի պահուտ, հացահատիկի այլուր, իւր, պտնիր, եւլն :  
**ԲՆԻՆԱԼ** — դիտումնաւոր բանի մը շուրջ դառնալ, հոս-հոն անձայն փնտրուք ընել, խուզարկել :  
**ԲՆԻՈՒԼ** — փետուր :  
**ԲՆԻՈՒՋ** — պալար, երկնաբարի մէջի փայտ :  
**ԲՆՈՒԹՔ** — բնաւորութիւն, սովորութիւն :  
**ԲՇՏԵԼ** — յանդիմանել, կշտամբել :  
**ԲՈԳԻ** — եղեգանման բոյս մը, բարձրահասակ, ասոր արմատը դառն է, կը դործածեն տնային բժշկութեան մէջ :  
**ԲՈԼ** — շատ, առատ :  
**ԲՈԼՈՃ** — միջատ, զեռուն :  
**ԲՈԿ** — կոկորդ :  
**ԲՈԿՇՈՐ** — հարսնութեան ժամանակ քողի տակէն դուրսով եւ ծնօտով կապուած չոր. վարչամակ :  
**ԲՈԿՈՒՌԵՅՔ** — կոկորդի հիւանդութիւն, կեղծ մաշկ (տիֆթերիա) :  
**ԲՈԿՍ** — կլորածեւ թանձր հաց :  
**ԲՈՂՁԱ** — ծրար, կապոց, հաղուստներ ծրարելու յատուկ լաթ :  
**ԲՈՃԻ** — շուն, շնիկ :  
**ԲՈՅ** — հասակ (օր. բոյ ու պոսիդ խուրպան. բոյրդ բարձր սալվի չինար) :

**ԲՈՇԱ** — գնչու :  
**ԲՈՊԻԿ** — բոկոտն, ոտքը առանց դուրս պայտի եւ կօշիկի :  
**ԲՈՌԱԼ** — աղաղակել, բարձրաձայն կանչել :  
**ԲՈՌԵՆ** — վայրի մեղու, անասուններու յետոյքը կճող խոշոր ճանճի նմանող միջատ (օր. բռնիսը նախիրն է յընկի, մոզ կ'էնին) :  
**ԲՈՐԱԿ** — քարաղ, շատ աղի (օր. իտա շուրվէն հըմա՛լ աղի է, որ գիմաս թէ բորակ է) :  
**ԲՈՐԱՆԻ** — ճակնդեղի տերեւներէ կփուած կերակուր՝ վրան սխտոր եւ մածուն քաշուած :  
**ԲՈՒԴԻԿ** — կարճահասակ :  
**ԲՈՒԴԻԿ ԳՏԱԼ** — գորտի ձագ, երբ տակաւին փոխանցման չըջանի մէջ է :  
**ԲՈՒԴԻՆԵԼ** — շուրջանակի ինքն իր վրայ դառնալ :  
**ԲՈՒԼ** — մացառ, դաճաճ ծառերու բոյլ :  
**ԲՈՒՆԵՐԻԿ** — վառարան, օճախ, պատի վրայ բացուած կամարածեւ քարէ ծխնելոյզով կրակարան :  
**ԲՈՒՆՏԱՆ** — զրպարտութիւն, չարախօսութիւն :  
**ԲՈՒՂԱՅ** — չամլացուած արու գոմէջ :  
**ԲՈՒՃ** — բուրդի թելով հիւտուած գուլպայ :  
**ԲՈՒՊՈՒՇԻԿ** — ճակատին վերեւ փունջ մը երկայն մազ, զոր առհասարակ պատանիներ ու երիտասարդներ կ'ունենան զարդի համար :  
**ԲՈՒՆԻԿ** — ուռի ճիւղերէ հիւտուած ափսէի նման իր մը :  
**ԲՈՒՆԿԱԼ** — այն հաւկիթը որ միշտ բոյնին մէջ կը մնայ :  
**ԲՈՒՎԱԼ** — նորածին մանկան ծիծաղ, ժպիտ, երբ խանձարուրի մէջ է :

**ԲՈՒՏ** — անասունների վարձքով պահել (օր. մըր կավեր բուտնիմֆ տուի) :

**ԲՈՒԴԴ** — ասոր, ոչխարի եւ նման կենդանիներու մազ :

**ԲՈՒԱԼ** — ոչխարի մայիւն :

**ԲՈՒԴԵԼԻ** — փոխանակութեամբ ամուսնութիւն, եղբայր եւ քոյր մը կ'ամուսնանան ուրիշ եղբոր եւ քոյր մը հետ : Քիւրտերու մէջ այս սովորութիւնը շատ ընդհանրացած էր, իսկ հայոց մէջ հազուադէպ երևոյթ էր :

**ԲՈՒԼԸՆՈՒ** — դատարկացորտ, ծոյլ, աշխատանքէ փախչող :

**ԲՈՒՆԶՔ** — կեռասի նմանող վայրի պտուղ, մանր կուտով, համեղ :

**ԲՈՆԱՏՈՒՆ** — բանտ, արգելարան, մեկուսացման վայր :

**ԲՈՒՍԱՅՔ** — թթուած կաղամբ :

**ԲՐԴԳՁԱՍ** — կտրտած, զործածութենէ ինկած, քուրջի վերածուած :

**ԲՐԴԳՁԵԼ** — գանակոծել, ծեծել :

**ԲՐԴԵԼ** — մանրել, կտոր կտոր ընել, փոխարեքարտ կը նշանակէ չափազանցել (բրդէ', հա՛ բրդէ) :

**ԲՐԴՈՒՆ** — պատառ, բարակ հացի մէջ պանիր կամ միւս փաթթուած պատառ :

**ԲՐԴՈՆ** — մաս, կտոր, սակաւութեան նշան, քիչ մը :

**ԲՐԻՇԱԿ** — աւերակ, քար ու քանդ :

**ԲՐՈՇ** — պղինձէ փոքրիկ կաթսայ :

**ԲՐՈՐ** — Պղտոր, անմաքուր :

**ԲՐՈՒՏ** — կաւ-հողէ աման շինող արհեստաւոր :

**ԲՐՏԵԼ** — ետեւէ խնայով վազել, հարածել :

**ԲՐՏՈՆ** — մասնաւոր պատրաստուած կաւ, որմէ բրուտները աման կը շինեն :

**ԲՔՆԵԼ** — ձիւնամբրիկ : Բանի մը մասին չափազանցեալ խօսիլ. սուտի հաւատարող յայտարարութիւններ ընել :

Գ

**ԳԱԲ** — խաւարծիւի արմատ, զոր չորցնելով կը զործածեն որպէս լուծողական :

**ԳԱԲԱՆԱԿ** — թաղիքէ շինուած պարեգօտ, հովիւներու յատուկ, անոնց հասակի չափով, զոր Էբր անկողին եւ վերմակ կը զործածեն :

**ԳԱԲՈՍ** — գիշերային մղձաւանջ, չար ոգի, դեւ (օր. գարսս յի-

ջեր էր իմ վրէճ, անճախ յիմ-  
ցայ) :

**ԳԱԶ** — մացառանման փշալից բոյս, զոր կը զործածեն որպէս վառելանիւթ եւ անասնոց կեր :

**ԳԱԶ** — չափ մը, մօտաւորապէս մէթրի հաւասար :

**ԳԱԶՊԷ** — մանանայ (Բիւնկէօլի եւ Խամուր բերդի սարալանջերուն՝

կանաչ մացառներու վրայ առատ կ'իջնէ) :

**ԳԱԹԱՅ** — կարկանդակ, բոյրակ' իւրով թանձր հաց (խորիսխով կամ առանց խորիսխի) :

**ԳԱԽ** — ժամանակ, պահ, ատեն :

**ԳԱԿՈՇՏԵԼ** — խարխափել, մութին մէջ բան մը փնտռել :

**ԳԱՀ** — պահ, ատեն, ժամկէտ :

**ԳԱՄԲՈՍ** — բուսնոց, բուսնոցի հարուած : Բայը՝ գամբաստել :

**ԳԱՅՈՐ** — սրովհետեւ :

**ԳԱՆԶ** — զրամական հարստութիւն, նսեւ մեռելի մը հողիին համար կարգացուած աղօթք :

**ԳԱՇԵԼ** — փնտռել, ետեւէ ըլլալ :

**ԳԱՐԱՓ** — գլուխի մազերու մէջ մօրթի վրայի թեփ :

**ԳԱՐԵՀԱՏԻԿ** — աչքի կողին վրայ դուրս տուած բշտիկ (օր. գարեհատիկ է հանի, գեղին ու էս կ'եղնի) :

**ԳԱՒԱՐՍ** — կորեկի ընտանիքէն հացահատիկ :

**ԳԲԻԼ-ԳԱԲԻԼ** — ծռիլ, խոնարհիլ, բանէ մը պահուիլ :

**ԳԲՇԻԼ** — չորեքթաթ քալել (մանուկներու յատուկ) . երբ ոտքի նոր կ'ելեն, ասիկա նախնական փորձին է քալելու :

**ԳԴԱԼ** — զգալ :

**ԳԴԼՈՅ** — ծղօտէ կամ ուտենի ճիւղերէ հիւսուած արկղիկ, զգալի-  
բը մէջը պահելու համար :

**ԳԵԱԶԻ** — մետաքսաթելով նուրբ հիւսուածեղէն՝ կտոր :

**ԳԵՂ** — գիւղ, աւան :

**ԳԵՂԱԻՐԻ** — գեղջիկական սովորութեամբ, գեղջիկներն :

**ԳԵՐԱՆ** — հաստ փայտ, որ կը զործածուի տնաշինութեան համար :

**ԳԵՐԵՆԱԼ** — ստրկանալ, աղաչել,

խնդրել (օր. մեռայ, գերեցայ, զիմ խօսք բանի տեղ չդրեց) :

**ԳԵՐՆԵՆՈՒՆ** — զերանդիով հնձող անձ :

**ԳԶԵԼ** — բուրդ կամ բամպակ գտել : Նախնական վիճակը փոխել՝ զործածելի դարձնելու համար :

**ԳԶԻՐ** — գիւղի ծառայ, որուն վարձատրութիւնը գիւղին համայնքէն է :

**ԳԷԺ** — խենթ, պակասամիտ, յիմար :

**ԳԷԼ** — գայլ :

**ԳԷԼԽԱԶ** — սեւ կարծր քար : Աւանդաբար՝ այս քարով կայէնը ըստ պաննից իր Արէլ եղբայրը :

**ԳԷԼԽԱՆԶ** — Փետրուար ամսուն տեղի ունեցած սաստիկ ցուրտ, այնքան որ իրը թէ այդ ցուրտին պայր կը խանձի :

**ԳԷԼԽԵՂԴ** — գայլ խեղդող շուն : Այլարանորէն՝ կտրիծ :

**ԳԸԼՓ** — գունտ, պալար :

**ԳԸՌ-ԳԸՌՈՏ** — քոս, բոր, բորոտ, քերուրտուք հիւանդութիւն :

**ԳԻԺՈՒԿ** — անմիտ, գլխու պտոյտէ տառապող :

**ԳԻԺՈՒԼ** — գլխապտոյտ ունենալ, տաղտկիլ, արբենալ, խենդենալ :

**ԳԻԼ** — կաղծին հող, որ օճառի յատկութիւն ունի :

**ԳԻՆԱԼ** — գիտնալ, տեղեակ ըլլալ :

**ԳԻՆԱՐԲ** — դեղնապոյն անուշահոտ ծաղիկ, սուր՝ ախորժելի հոտով :

**ԳԻՆԻ** — ականջի օղ, զարդ :

**ԳԻՆԶ** — տունի մը, որուն հունտերը ուտելի են :

**ԳԻՍԿ** — մէկ տարեկան արու այծ :

**ԳԻՏՈՑԻԿ** — բանդէտ, գիտակից :

**ԳԼԽԱՒՈՐ** — ամուսին, էրիկ :

**ԳԼԽՎԻԼ** — բարձրութենէ վար իջնել, դիբը խախտիլ :

**ԳԼԿԸԼ** — եղիպտացորեն, մարացորեն :

ԳՂՈՒԼ — սխեռի ընտանիքէն սեւա-  
գոյն հացահատիկ:  
ԳԽԱԼ — ցանկայարոյց վիճակ (օր.  
աղուրնիկներ կը գխան):  
ԳԽՏՈՐ — սարկաղնի ծառի պտուղ,  
թէ՛ կանաչը, թէ՛ չորը կը դոր-  
ծածուի ներկ պատրաստելու հա-  
մար, նաեւ պանիրի դեղ պատ-  
րաստելու:  
ԳՂԻԾ — կաւ-հող, որուն ստորին խա-  
ւի վերեւ՝ կաւային խաւն է:  
ԳՃԿԻԼ կամ ԳՃԻԼ — ինքն իր վրայ  
ծռիլ, կուջ գալ:  
ԳՄՈՒԿ — մատի թանձրութեամբ  
բոյս մը (ուտելի):  
ԳՇԿՈՒՐ — անասուններու չորցած  
թրիք, քակոր:  
ԳՈԳ — մարմնի առջեւի մասը նստած  
ձեւով. կլոր. փոս:  
ԳՈԳՆՈՑ — կիներու հանդերձի մաս  
մը, որ մէջքէն վար՝ առջեւը կը  
կապեն, միակտոր, երբեմն բուր-  
դէ թելով կը հիւսեն, նախշերով  
բանուած:  
ԳՈԴԻ — ծոյլ, գործէ փախչող, դա-  
տարկապորտ:  
ԳՈՁ — մէզ, մարմնէն արտահոսող  
ջուր, ջրվաք:  
ԳՈԹԵՆՈՑ — անբուժելի վէրք, պա-  
լար:  
ԳՈԹԵՑՈՒԿ — հոտած, քոսոտ, բո-  
րոտ:  
ԳՈԼ — գաղջ, խոնաւութեան շոգիա-  
ցում (օր. գոլ կ'ելնէ, ամպ գոլ է.  
գոլն ընկեր է հող):  
ԳՈՂԸՄՈՒՐԻ — գողցուած ապրանք:  
ԳՈՂՏՈՒԿ — ծածուկ, գաղտնի, թա-  
գուն:  
ԳՈՄ — ընտանի կենդանիներու ա-  
խոտ:  
ԳՈՄՊԱԼ — Զեռնափայտ, գլուխը դա-

մերով զօրացուած. մահակ. փա-  
կան:  
ԳՈՌ — ոչ-քրիստոնեայի հողաթումբ,  
գերեզման:  
ԳՈՎԼՆԵՂ — շուրջ պար:  
ԳՈՐԱ — չափ, հաւասար, համար:  
ԳՈՐԾԵԼԻ — փայտածուխ. գութանի  
կալմի մասերէն մէկը:  
ԳՈՐՏՆՈՒԿ — մարմնի կամ ձեռքերու  
վրայ դուրս եկած պղտիկ ուռեցք.  
կոծիծ:  
ԳՈՐՏՈՆ — շղթայ, նաեւ նուրբ թե-  
լերէ հիւսուած կապ (արգիլեալ  
դիծ):  
ԳՈՒԲ — փոս (օր. գուր ու դար —  
խորտ ու բորտ):  
ԳՈՒԹՆՎԱՐ — գութանով հերկուած՝  
վարուած հող:  
ԳՈՒԼԱՇ — գօտեմարտ:  
ԳՈՒԼՈՒԼԱ — հրադէնի կապար, գըն-  
դակ:  
ԳՈՒՄԷՁ — եզան մէզ:  
ԳՈՒՄՐԱ — առատ, շատ, լեցուն:  
ԳՈՒՆԵՂ — կլոր բան, կծիկ (օր. խմ-  
րի գունդ, կաւի գունդ):  
ԳՈՒՌ — փորուած քարէ աւազան:  
ԳՈՒՌԳՈՒՌԱՅ — արագահոս ջուր,  
ջրվէժ:  
ԳՈՒՌՁ — դաւազան, մահակ, ձեռ-  
նափայտ:  
ԳՈՒՍԱՆ — նուազարան, դահու:  
ԳՈՒԱԼ — դոռալ, խուլ ձայն հանել  
(օր. ամպ գոռաց, մաքին բոաց,  
աքմաքիթոնի համ գնաց):  
ԳՈՒԲԵԼ — յանդիմանել, սուր դիտո-  
ղութիւն ընել:  
ԳՈՒԵՆՈՒԿ — խոր ծերութեան հա-  
սած, կքած, մաշած:  
ԳՈՒԵՆ — աղբանոց, փողոց:  
ԳՈՒՋԻԿ — սոխանման արմատաւոր

բոյս (ուտելի), դարնան եղանա-  
կին յատուկ:  
ԳՈՒԹԱՆ — թուխ նստող հաւ:  
ԳՈՒՄԽԵԼ — գորտուոր կերպով տաք-  
նայ, ջերմութեան բարձր աստի-  
ճանի հասնիլ:  
ԳՈՒՄՌԱԼ — շան մը անհամարձակ հա-  
ջոց:  
ԳՈՒՆԵԼ — մանուկները քալելու վար-  
ժեցնող փոքր կառք: Կալը բնորո-  
շելու իմաստը եւս կու տայ:  
ԳՈՒՍԵԼ — քսել, թեթեւ հպումով շը-  
փել:  
ԳՈՒՍՏԻԿ — մեղրամոմ, եւ իր փաթ-  
թըւած ձեւը:  
ԳՈՒՍՏԿԱԼ — կրծկտալ, ստամոքսէն  
թթուն դուրս տալ:  
ԳՎԱՁ — կարմրադոյն:  
ԳՎՁՏԵԼ — ծեծուիլ, բղկտուիլ, իրար  
անցնիլ:  
ԳՏՄՈՒՐԻԿ — ձրի եկած բանի մը տի-  
րանալ:

ԳՐԳՁՆԵԼ — կտոր-կտոր ընել, բզիկ-  
բզիկ ընել, պատուել:  
ԳՐԳՆՁԵԼ — հոսող ջուրի ձայն (օր.  
առուն կը գրգռէ):  
ԳՐԴՆԱԿ — դրանածեւ փայտէ գոր-  
ծիք, որով հացթուխը խմորը կը  
բանայ:  
ԳՐԵՆ — թարախ, շարաւ:  
ԳՐՄՓԱԼ — բարձր տեղէ մը վար էյ-  
նալով ձայն հանել:  
ԳՐՈՂ — հիւանդութիւն, անէծք (օր.  
գրողի տարուկ):  
ԳՐՈՒՐԻԿ — կաւ-հողէ շինուած եւ  
թրծուած սափոր:  
ԳՐՏԵԿԱՊ — մէջք, մինչեւ պօտին կա-  
պած տեղը:  
ԳՐՏԻ — մէջքկապ — մետաքսէ,  
բուրդէ, բամպակէ կամ կաշիէ:  
ԳՐՏՈՎ-ԿՏՐԻՃ — երիտասարդ, քաջ:  
ԳՅԼԹԻԼ — ռիսակալ, քինախնդիր  
ըլլալ. յարմար առիթով հակա-  
ռակորդը պատժելու սպառնալիք  
կարգալ:

Դ

ԴԱԴԱՐ — հանգիստ, գործէ դադա-  
րում:  
ԴԱԴՐԻԼ — յողնիլ, աշխատելէ կանդ  
առնել:  
ԴԱԴՐՈՒԿ — յողնած, պարտասաց,  
գործելու կարողութենէ ինկած:  
ԴԱԼ — կովի կամ ոչխարի առաջին  
կաթէն կը պատրաստուի: Կաթը  
տաքցնելէ ետք կը պղկցնեն,  
ինքնին կը թանձրանայ: Դեղնա-  
գոյն եւ թանձրահամ է, ո՛չ մա-

ծունի եւ ոչ ալ պանիրի կը նմա-  
նի:  
ԴԱԼԱՄՈՒԿ — կակուղ, լման չհա-  
սունցած պտուղ:  
ԴԱԼԱՐ — թարմ, կակուղ, կանաչ,  
փափուկ:  
ԴԱՆՁ — անանուխ, հոտաւէտ բոյս.  
չորցածը՝ կերակուրի մէջ կը դը-  
նեն, նաեւ թէյ կը պատրաս-  
տեն. պաղառութեան օգտակար  
է:

ԴԱԿԱՌԷԿ — չինցած, չորցած, կարծրացած :

ԴԱՀՈՒ — նուազարան, թմրուկ :

ԴԱՀՈՒԿ — բայիկեր, սահնակ, խզակ :

ԴԱՄԱՂ — քիմք, բերանի վերնամասը :

ԴԱՄՈՆ — թարմ սալոր :

ԴԱՅ — ձերացած, չորցած, դայաբուծիչը կորսնցուցած :

ԴԱՇԽՈՒՐԱՆ — ջուրի կուժ, կոնքի նման կառնուկ աման :

ԴԱՇՏ-ԿՈՏՐԻ — դարասուղի ճանապարհ. նպատակն դուրս գործ :

ԴԱԹԻՆՁ — վայրի խնձոր :

ԴԱՏԱԿԱՆ — աշխատող, գործաւոր, բանող, ապրուստը վաստակող :

ԴԱՏԱՆ — թաղիքէ շինուած ոտնաման :

ԴԱՏԻ — մեծ մայրիկ :

ԴԱՐ — հողաբլուր, գառիկեր, բարձր տեղ, դարուվար. կէս բլուր. 100 տարի :

ԴԱՐԴԱՐ — մանուկներու համար բուռած օրօր :

ԴԱՐՁ — ճան կոնաձեւ տանիքը բրունելու համար գործածելիք փոքր պերան : նաեւ հարսը հօրը տուն աչքելու թեւան երթ :

ԴԱՐՁՈՒՆՔ — փոխունք, ստամոքսը կտտայ :

ԴԱՐՁՈՒՈՐՈՒԿ — ախտավարակ, այրանդակ :

ԴԱՐՁՔ — չիւանդութիւնը վերակրկնել, հոգեպարձ, հոգեվարքի յապտուրմ :

ԴԱՐԿԱՆ — անասուններու ստեղծիք :

ԴԱՐ ՈՒ ԿՈՃԱՏ — դոյց եւ անդոյց :

ԴԱՐՏԱԿ — սրբապ, հասած, բերնցած (օր. դարտակ տուն, դարտակ փերակ) :

ԴԱՐ-ՏԱԿ — բլրի ներքե, գարտակ :

ԴԵԼԷՔԵԼ — գտանցել, ինքն իր հետ խօսել, բանդապուշել, դանդաշել :

ԴԵՂ — թոյն, գարման, հիւանդութիւն մը չկորսացնելու միջոց, կ'ըսուի նաեւ դեղ ու դուր, դեղ ու դարման :

ԴԵՂԴԻՐ — հաւու ստքի յղուած ուկոր կամ փետուր, որով կ'ինքն աշխարհին դեղ կամ ծարուր կը քաշեն :

ԴԵՂԹՎՓ — հակաթոյն գեղ՝ թոյնը թափող : Հաւատք կար ժողովուրդին մէջ, որ դեղթափ քարը Մայիս ամսուն տեղացոյց կարկուտի հետ երկնքէն վար կը թափի. գտնողը բախտաւոր կը նկատուի. ամենաբուժիչ յատկութիւն կը վերադրուի այս քարին : Դեղթափը Լթէ կաթի մէջ ձգեն, կաթը անմիջապէս պանիրի կը փոխուի :

ԴԵՂԾԱՄ — գեղձան մազ. նաեւ կանացի անուն :

ԴԵՂՈՒԻԼ — թունաւորուիլ : Միջատներէ, կամ սողուններէ խայթուած քիւն (դեղուներ է) կ'ըսեն : (Օր. մրր կով ամիշ կերեր ու դեղուներ է) :

ԴԵՂՐԱՐ — գեղ շինող, վէրքի վրայ գեղ դնող :

ԴԵՐԵՐԱԼ — երեբայ, գողգալ, հասարակչութիւնը կորսնցնել :

ԴՁԷՁ — բզկ, միջատ :

ԴԷՁ — ցորենի կամ խոտի խոշոր կոյտ :

ԴԷԼ — կը շուն. կը գործածուի նաեւ անբարոյակամի իմաստով (բազ) :

ԴԷՐԻ — գիւղերու մէջ տօնախմբութիւն, հրախոտութեամբ, նուազ ու պարով :

ԴԷՐՊ — հարուած, բուռն ուժով պարկ, ձեծ :

ԴԷՔԱ — թոնրատան մէջ շինուած՝ քարէ կամ կաշի մէկ կամ երկուստք բարձրութեամբ եւ նոյնչափ լայնութեամբ թուք, որուն վրայ խոհանոցի ամանները կը շարեն :

ԴԻ — կողմ : Աս դի, ան դի — այս կողմ, այն կողմ :

ԴԻԱՅՆԱԿ — մեր բնաշխարհի սովորութեամբ, մեր տեսակ, մեր սովորութեան նման :

ԴԻԱՐ — երկիր, տեղ, օտար վայր :

ԴԻԶԿԻՆ — Սանձ : Զին վարելու համար ակոսներուն մէջ տեղաւորուած երկաթ, որուն երկու ծայրերը կաշեթելեր անցուած՝ հեծեալը կը բռնէ ձին վարելու համար :

ԴԻՆԱՅ — այն կողմ :

ԴԻՆԿ — խոշոր քարանիւ, որով՝ ջրաղացի մէջ ձաւար կը ձեծուի, իսկ ձիթհանքի մէջ՝ կտաւատ :

ԴԻՇՏ-ԴԻՇՏ — այժեբը քշելու ծայրարկութիւն :

ԴԻՊՈՒԿ — խենթ, դիւահար, չար ողիէ դարկուած, ալքերու հանդիպած :

ԴԻԻԱԴԻԱԴԱՐ — վրդովիլ, խոզիլ, անհանգստանալ :

ԴԻԻԱՍԱՐ — կանանց երազափորձութիւն :

ԴԻՍԱՅ-ԴԻՏԱՅ — այս կողմ :

ԴԻՐ — անդամ : Քանի՞ դիր — քանի՞ անդամ : նաեւ ցորենի տեսակ մը, որը Ախլաթի շրջանը կը ցանեն : Անոր հատիկները շատ խոշոր են, մօտաւորապէս սիսեռի հատիչափ, համն ալ քաղցր է : Օղոստոս ամսուն կը ցանեն, եւ յաջորդ տարի Օղոստոսին կը հնձեն :

ԴԻՐՏ — հեղուկի տակուքը, օրինակ հալած իւղի կամ մեղրի տակը նստած թանձր խաւը :

ԴԼԸՄՓ — բարձրութենէ մը վար իջնալու ձայն :

ԴՄԱԿ — ոչխարի ազի, իւղի խոշոր պունդ :

ԴՄՇԿԼԵԼ — բոռնցքով հարուածել :

ԴՄՍՈՒԿ — բուռնցք :

ԴՆԿՍԵԼ — ձեծել, պանակոծել :

ԴՊԻՐ — տիրացու, կարգացող :

ԴՊՂՈՒԿ — խաղաղորդուած :

ԴՈԺԻՆՔ — բերանէն վազող լորձունք, չողինք :

ԴՈՒԱՊ — պատի մէջի պահարան. նաեւ սերունդ, սեռ (օր. ի՞նչ դալպի պէրկիր է) :

ԴՈՆՆԻ — ջաղացքի ձաղար, ուրկէ հացահատիկը կ'իջնէ աղօրիքին :

ԴՈՂԼ — ցեղ, սերունդ :

ԴՈՂ — ջերմատենդ, մալարիա, սարսուռ : նաեւ տող, կլոր գիծ, երկաթէ կլոր օղ, անուր :

ԴՈՂՅՈՒՈՐ — ջերմատենդէ տառապող անձ :

ԴՈՆԻԿ — եփուած կլոր թանձր հաց, մէջտեղը կլոր փոքր ծակով :

ԴՈՇ — պարանոց, կուրծք, վիզ :

ԴՈՊՐԱԴՈ — ճակատաբաց խօսիլ, աներկիւղ՝ ճշմարտութիւնը ըսել :

ԴՈՊԸԻՏԵԼ — կարկտան՝ կարկտանի վրայ կարել :

ԴՈՏ — խեցեղէն աման :

ԴՈՏԻԿ — մանր տեսակի հողէ աման, խեցեղէն փոքր սափոր :

ԴՈՐ — դէպի ո՞ւր, ո՞ր կողմ (օր. դորվէր կ'երթաս - ո՞ր կողմ կ'երթաս) : նաեւ հերթ, կարգ, առիթ, պատահութիւն, յաջորդութիւն :

ԴՈՐՈՐԱԼ — օրօրալէն քալել, ձերեբու, տկարներու կամ դիտողներու քալուածք :

ԴՈՒՆՁ — կզակ :

ԴՈՒՐ — հաճելի, ախորժեղի, սիրելի

(օր. դու իմ սրտին դուր էկար) : նաև փայտ ծակելու համար երկաթէ գործիք :  
**ԴՈՒՐԱՆ** — հարթ, հաստար, տափարակ :  
**ԴՈՒՐԵԼ** — հարթել, հաստարեցնել, շտկել, կարգի դնել :  
**ԴՈՒՐԵԿԱՆ** — սիրելի, համակրելի, գլխահարկ :  
**ԴՈՒՔԱ** — քիւրտի կին :  
**ԴՐԲԱ** — գլխական տուներու մէջ մարդահատակ պատ, հոսանքէ եւ տեսողութենէ պաշտպանուելու համար :

**ԴՐԿԵՑ** — գրացի, գրան կից (դուռ ու դրկեց) :  
**ԴՐՀՈՏ** — տունէ տուն, սենեակէ սենեակ, գոնէ դուռ հաղորդակցութեան համար բացուած գաղտնի ծակ :  
**ԴՐՆԴԻ** — սեմ, գրան չորս կողմի փայտեր, որոնց վրայ դուռը կը բացուի ու կը գոցուի (չարդարա) :  
**ԴՐՈՒՍՏ** — շիտակ, ուղիղ, եղածին պէս :  
**ԴՐՏԱԿ** — գուրի բռնակոթին հարուածող մասնաւոր մրճածեւ գունդ փայտ :

Ե

**ԵԱՌԿԱԼ** — խոփը արօրին կապող մասը :  
**ԵԱՐԽՈՒՇՏԱ** — ռազմական պար (տես բանահիւտական բաժինը) :  
**ԵԶԱՆՇՈՒԿ** — սղոցանման ատամներով, լայն ցողունով կանաչեղէն (ուտելի) :  
**ԵԶԱՎԱՍՏԱԿ** — ցորեն-հաց կամ որևէ հացահատիկէ պատրաստուած կերակուր (պուլգուր փիլա, կորկոտէ ֆաշ, կամ հէրիսա) :  
**ԵԶՆԱԿ** — ջրհորի բերանի բոլորակ քարէ կափարիչ :  
**ԵԼ** — գառիկեր :  
**ԵԼՄԱՆ** — յորդած, փարարած (օր. ելման գետ, ելման սիրտ) :  
**ԵԼՄԱՆ ԺԱՄ** — գարթօնք, արթննարու մամանակ :  
**Ե՛Խ** — ձայնարկութիւն. անասուններ

ըը՝ եղ, կով, գոմէջ եւայլն, ծանծաղ ջուրի մէջ նստեցնելու միտումով, պոչը կը բռնեն եւ ծայրը ծալելով, խնդրական ձայնով Ե՛խ, Ե՛խ, Ե՛խ կը ձայնեն, որպէսզի նստին :  
**ԵՂ** — իւղ :  
**ԵՂԻԿ** — կէս կանաչ ցորենի հասկերէ կապուած փունջ : Հասկերը երբ խարկեն, ափի մէջ առնելով կը փչրեն եւ հատիկները կ'ուտեն. այս ձևին կ'ըսեն խարախարման :  
**ԵՂԻՃ** — փշոտ, թունաւոր բոյս մը, որ երբ մարմնին դպի, մորթը կը բղրջի եւ կը քերուի. կ'ըսուի թէ եղիճով երբ մարմինը ծեծուի, «քամի» ըսուած հիւանդութենէն զերծ կ'ըլլայ :

**ԵՂՈՒԽԱԼ** — իւրի համար դործածուելիք կիրածեւ հողէ աման :  
**ԵՂՆԻԼ** — բլլալ, բան մը գոյութիւն առնել :  
**ԵՂՈՒՂՆԵԿ** — աղունի :  
**ԵՏԱԿ** — հեծեալ մը, երբ հետը երկրորդ ձի մը առնէ, ետակը այլ ձին է :  
**ԵՐԱՆ-ԷՐԱՆ** — ցորենը կամ որևէ հացահատիկ հովին տալով յարդէն դատել :  
**ԵՐԴԻՔ** — կոնաձեւ տանիքներու վրայ բացուած լուսամուտ, ուրկէ նաև մուխը դուրս կ'ելլէ :

**ԵՐԻՆՁ** — մէկ տարու էջ հորթ, կով :  
**ԵՐԿՈՒ-ՀՈԳՈՎ** — յղի, ծոցուոր :  
**ԵՐԿՈՒՄՍ** — փայտէ կամ երկաթէ երկրադործական երկժանի գործիք :  
**ԵՐԿՈՒՏԱԿ** — երկու ծալք, երկու խաւ (օր. երկուտակ հարս է) :  
**ԵՐՆԵԼ** — հովին հոսանքով հացահատիկները յարդէն դատել :  
**ԵՐՆՁԱԿ-ԵՐԻԺՆԱԿ** — փշալից բանջար, որուն մէջջինը (օրվան) կեղուիէ ետք կ'ուտեն :

Զ

**ԶԱԼ** — կապոյտ կտաւ :  
**ԶԱԿՈՆ** — օրէնք, կարգ, կանոն, պետութեան հրաման :  
**ԶԱՂ** — գիծ, նշանադիծ :  
**ԶԱՂԱԼ** — շնիկ :  
**ԶԱՂԱՐ** — դամբա, խոշոր շուն :  
**ԶԱՃ** — արջասպ, որ ներկի կամ օճառի պատրաստութեան համար կը գործածուի :  
**ԶԱՅ** — կորուտ, փնտս, փճացում, այրում :  
**ԶԱՆԳՈՒ** — տապանդակ. թամբին երկու կողմերէն կախուած երկաթէ թաթածեւ պտտուանդանով օղակ, որուն՝ հեծեալը կ'անցրնէ ստեբը :  
**ԶԱՆԿ** — զանգակ, կոշնակ :  
**ԶԱՆԿՈՒԼԱԿ** — փոքրիկ զանգակ, կաբաւանի ուղտերու կամ ձիի եւ ջո-

րիներու համետի վրայ կապուած զարդարող բոժոժ :  
**ԶԱՏ** — կերակուր, որի տեսակ, կ'ըսուի բնականուր առմամբ. նաև ասանձին, բոժոժ, ինքնիրեն :  
**ԶԱՏՈՒԻԼ** — բոժոժուիլ, յարաբերութիւն խօլի, ամուսնալուծուիլ :  
**ԶԱՏՈՒՈՐ** — գաշտի աշխատաւոր մը չակներուն կերակուր տանող անձ :  
**ԶԱՐ** — սփորէ կամ փոսիկէ խորանարդ փոքր իր, վեց երեսով. իւրաբանչիւր երեսի վրայ փորագրուած մէկէն մինչև վեց աչք :  
**ԶԱՐԶԱՆԴ** — դարձուրանք, սարսափ, ահ ու դող :  
**ԶԱՐԶՆՏԱԼ** — ահաւոր ցնցումէ շարժուիլ, զզրալ, սարսիլ, վրդովիլ :  
**ԶԱՐԿՈՒԱՄՔ** — կաթուածք, ուղեղա-

յին յանկարծական հիւանդու-  
թիւն:

**Ձէնի, ՁինԱ, ՁիՏԱ** — ափիկա, անի-  
կա, ափիկա:

**ՁԸՌ** — բոլորովին, ակներեւ, յայտ-  
նի (օր. զըռ խակ է, զըռ ծուռ  
է):

**ՁԸՐԿ ՈՒ ԲԸՐԿ** — անիրաւուած, զըր-  
կըւած. ունի նաեւ անէծքի ի-  
մաստ:

**ՁԸՐՊ** — ուժգին հարուած, ամրա-  
պինդ:

**ՁԻԼՖԻՆՈՐ** — հաւլունի թուր: (Այ-  
լարանօրէն՝ կը հաւատային, որ  
այս թուրը շինուած է կայծակի  
հարուածէն զոյացած հալած եր-  
կաթէ, և երկինքէն տրուած պար-  
զեւ է):

**ՁինԶ** — Ի՞նչ բանը, ո՞ր մէկը:

**ՁիԻԱՆ** — որոմ (սերմնահատիկ), ո-  
րուն իւզէն մալխաւ կը պատրաս-  
տեն, բորտած կենդանիներու  
վէրքերը բուժելու համար:

**ՁիԻԸՆԻՆԵԿ** — պտուտակ, հոլ, որ կը  
պտըտցուի կամ թելը բոլորը  
փաթթելով քաշել ու բաց թողլով,  
և կամ մտրակով միշտ մտրակե-  
լով:

**ՁիԿՈՏԱԼ** — կաղալ, կողմէ-կողմ կա-  
ղալէն քալել:

**ՁիՏՊԻԼ** — ակամայօրէն հրամցուած  
ճաշը բնորոշող արտայայտու-  
թիւն:

**ՁԼԱԼ** — խարդախ, կեղծ, չարա-  
փոխուած:

**ՁԼՔԻԿ** — բան մը խցել, նպատակա-  
ւոր կերպով տեղի մը վրայ կե-  
ցած՝ դարչապարովը նոյն տեղին  
վրայ անընդհատ դարնել:

**ՁՄԲԻԿ** — լողալու ժամանակ ոտքով  
ջուրին զարնել:

**ՁՄԷՆ** — բոլոր:

**ՁՄՊԱ** — հիւանդու յատուկ երկաթէ  
գործիք:

**ՁՄՊԻԼ** — խոտէ կամ եղէգէ գործը-  
ւած ցած նստարան. նաեւ ձէթ  
քամելու ժամանակ ձիթհանի պը-  
տուտակի տակ դրուած կըր  
և մէջը աղնձուած և ծեծուած  
կաւատով լեցուած խոտ-աթոռ,  
որուն միջոցաւ ձէթը կը քամուի.  
միջակ:

**ՁՄՓՁՄՓԱԼ** — վէտվտել. կցկտուր՝  
բայց զօրաւոր ձայն հանել ջուրի  
հետ դարնուելով:

**ՁՆԱԼ** — ապառաժ, ժայռ, արտասո-  
վոր խոշոր ու սեպ քար:

**ՁՆԳԼՈՒԿ** — զարդարուած:

**ՁՆԿԼԻԿ** — բոժոժ, զարդի համար  
գործածուած փոքր գանդակ:

**ՁՆԿՈՏԱԼ** — ցուրտէն կամ վախէն  
դողալ, ակոսները կափկափել:

**ՁՆՃԻԼ** — շղթայ, մետաղէ կապ, օ-  
ղակներէ կազմուած:

**ՁՈՁԱՆ** — պատանիներու յատուկ  
խաղ մըն է, կը խաղան դարնա-  
նամուտին՝ տանիքներու վրայ:  
Նաեւ ամառանոց, հոփնոց, ամառ-  
նային տաքերուն լեռներու վրայ  
անասուններու արօտատեղի:

**ՁՈՁՕ** — երկայնահասակ, բարձրա-  
հասակ, արտասովոր հասակ:

**ՁՈԼ** — տրեխ շինելու համար կը-  
տրուած կաշիի շերտ:

**ՁՈՄՓԱ** — երկաթէ կըրածեւ երկար  
ձող:

**ՁՈՊԻ** — կողիտ, ուժեղ, զօրաւոր,  
բոնակալ:

**ՁՈՐՊԱ** — բոնակալ, բիրտ ուժի տէր:

**ՁՈՒԼԱԼ** — յստակ, վճիտ, անխառն,  
մաքուր:

**ՁՈՒԼՈՒՄ** — չարիք, անիրաւութիւն,  
կեղեքում:

**ՁՈՒՊԱՐԱ** — ձրի աշխատանք: (Սո-

փորութիւն էր որ քիւրտ աղանե-  
րուն կամ բէկերուն, և ուէէ աղ-  
ղեցիկ մարդու՝ հասարակ ժողո-  
վուրդը ձրի աշխատանք կատա-  
րէր):

**ՁՈՒՌԵԱԹ** — դաւակ, բնկեցիկ, անա-  
ռակ որդի:

**ՁՈՒՌԵԱ** — փողաւոր նուագարան,  
անյիշատակ ժամանակներէ ի վեր  
գործածական զուռնան և զուսա-  
նր: Կ'բառի նաեւ դառնոյ:

**ՁՈՒՌԵԱՃԻ** — սրնկահար. փողիւն:

**ՁՈՒՏՐ** — զուտ, մաքուր, յստակ,  
անխարդախ (օր. գուտը ճնտրիկ  
դեղին ոսկի է):

**ՁՈՒՐԱՆՑ** — իւրեանց, իրենց:

**ՁՈՒՐՊԱԹ** — ուտելիք, կորեկի տաք  
հացով և կաթ ու մեղրով պատ-  
րաստուած (օր. գուրպիաթ էրնի  
չլմ ուտի):

**ՁՈՒՐ ՈՒ ԲՈՒՆՏԱՆ** — զրպարտու-

թիւն, ամբաստանութիւն, խե-  
ղաթիւրում:

**ՁՊԵԼ** — նիհարնալ, կշիռքը պակ-  
սիլ, գիրութենէ նիհարութեան  
փոխուիլ:

**ՁՌՁԱՅ** — շղթայ, նիւ, կղպանք  
(օր. դրան յետեւի գոզէն դիր):

**ՁՌՁՈՒՄ** — կոշտ, կոպիտ, անկիրթ,  
անքաղաքավարի:

**ՁՌԻՊ** — յորձանք, պտուտով սրըն-  
թաց ջուր, փտանդաւոր ջրանցք:

**ՁՌԿԱԼ** — յամառեցաւ, պնդազլու-  
թիւն բրտ:

**ՁՌԿԻԼ** — յամառիլ, պնդել, կամա-  
կոր բլլալ:

**ՁՎԻՏԻԼ-ՁՎԻՆԻԼ** — աննպատակ  
պարտիլ, թափառիլ, շրջապայիլ:

**ՁՐՄԲՈՑ** — բանի մը զօրաւոր զար-  
նուելէն յատմը կկած ձայն:

**ՁՐՐ** — զժուար, զօրաւոր, բոնակալ,  
հօր:

Ե

**ԵԳ** — իդական:

**ԵԼ** — այլ, ուրիշ:

**ԵԾ** — էգ այծ, այծ (արու այծը  
ճերի կ'բառի):

**ԵԿՕ** — Եկուր, արի(օր. հուտայ էկօ):

**ԵՂԼԱԻԱՇ** — սպեղանի (կը պատրաս-  
տեն ձէթ-իւղով և ցորեն ալիւ-  
րով, որմէ փոքրիկ բլթիկ մը կը  
շինեն վէրքին մեծութեամբ և  
զաղջ վիճակով կը դրուի վէրքին  
վրայ):

**ԵՂԻԸՆԵԿ** — աղաւնի:

**ԵՄԼԷ** — զարձեալ, վերստին:

**ԵՆԻԿ** — երկծիւղ փայտ, ջուլհակնե-  
րու գործիք:

**ԵՇ** — աւանակ, շորքոտանի կենդա-  
նի, անբան:

**ԵՍՂՄԱԼ** — այսպէս, ասանկ:

**ԵՎԱՏԱ** — անապարանք, շտապ,  
հապճեպ:

**ԵՏՂՄԱԼ** — այդպէս, ատանկ:

**ԵՐԻԹԻԿ** — մորթի հիւանդութիւն,  
քերուրտող վէրք (Էկզեմա):

էրէՄՈՒԿ — ամուլ, անծին, անպը-  
տուղ:  
էրէՐՈՒՆ — թափառական, անտուն,  
անտէր, անպատասպարան:  
էրԿԱՆՔ — աղօրթք, հացահատիկ ա-  
ղալու կոփուած բոլորակ տափակ  
քար:

էՐՈՒՆ — արիւն:  
էՐՈՒՐԹՔ — արարք, կատարած  
գործ (օր. էտ քու էրուրթքնի  
էրա՞ւ):  
էՅԿԵԼ — վիժեցնել, անասուններու  
նկատմամբ գործածելի (օր. կո-  
վը՝ գեռքքիկն է էցկի):

Ը

ԸՆՏԱՒՈՐ — ուխտաւոր, ուխտազը-  
նաց:  
ԸՂԵՂ — ուղեղ:  
ԸՆՁԻԿ — քիչ մը, փոքր ինչ:  
ԸՆՅԱԻ — մարեցաւ, հանդեցաւ (օր.  
կրակը ընցաւ, նրազը ընցաւ, ա-  
րեւը ընցաւ — կրակը մարեցաւ,  
ճրագը մարեցաւ, արեւը մարե-  
ցաւ):  
ԸՆՅՈՒ — մարէ՛, հանդեցո՛ւր (օր.  
կրակը կամ նրազը ընցու):  
ԸՆՔԱՊԱՊ — կնքահայր, խաչքաւոր:  
ԸՌԶԿԻԼ — անձիկ, աւելնալ, ծնանիլ:  
ԸՌԸՔԻԼ — խոտիլ, վշտանալ, նեղ-  
ուիլ, քէնտալիլ:

ԸՌՈՂՈՒԻԼ — քամուիլ, մրուրը տա-  
կը նստիլ, տեղաւորուիլ:  
ԸՌՊԻԿ — հացահատիկ չափող զոր-  
ծիք. փայտէ կամ մետաղէ, կոտի  
մէկ շորբորդը:  
ԸՌՌԻ, ԸՌՌԻ — մաքիները քշելու  
ձայն, ձայնարկութիւն:  
ԸՍՊԱՐ — ղեանափոս հիւղ, հիւղակ  
(hoirf):  
ԸՍՏԻՐ — հարազատ, անխարդախ,  
մաքուր:  
ԸՐՈՂՈՒԻԼ — տեղաւորուիլ, ղետեղ-  
ուիլ:

Թ

ԹԱԳՈՒՈՐ — նոր փեռայ, նորապսակ  
թաղաւոր:  
ԹԱԶԻ — սրտի շուն, բարակ:  
ԹԱԹԱՐՈՒՄ — կուրպետապ, փո-  
րի ցաւ, խոստուկ, խիթ:  
ԹԱԹՆՈՅ — ձեռնոց, քաքպան՝ միա-  
կըտուր կամ մատներով:  
ԹԱԺԱ — թարմ, նոր, առաջին ան-  
գամ գործածելի (օր. քաժա  
հաց):  
ԹԱԱԿ — զայլի բերանակապ: Գայ-  
լորսութեան ատեն, երբ զայլը  
ողջ բռնեն, բերանը փայտէ «բե-  
րնիկալ» կամ թալակ կը կապեն:  
ԹԱԼԵԼ — նետել, ձգել, հեռացնել:  
ԹԱԼԻՍ — կանեփի թելէ հիւսուած  
պարկ:  
ԹԱԼՅՆԵԼ — զառանցել, լուսնոտ ըլ-  
լալ:  
ԹԱԽԹ — թաղաւորական աթոռ,  
դահ, բարձրութիւն:  
ԹԱԽԼԱ — գլուխը ղեանին՝ սաքերը  
օղին մէջ՝ ինքն իր մրայ զատնալ  
(ագլախուստ):  
ԹԱԽՈՒՄ — ծիսափող. ղերդաստան,  
տոհմ:  
ԹԱԿ — թաթածեւ եւ տափակ՝ ծե-  
ծող փայտ, որով կը թակեն կա-  
պերտ, զորդ, բուրդ եւ կամ որ-  
եւէ թանձրամարմին հիւսուած  
կտորեղէն:  
ԹԱՀՈՐԻ կամ ԹՈՐԻՀ — բնու, կրբիք:  
ԹԱՂԱՐ — հողէ կամ թիթեղէ փոքր  
վառարան, ուր գործելի կրակը  
միշտ անթեղուած կը պահեն.  
ծաղկաման:  
ԹԱՂԹԻԿ — հաւի առաջին ածած  
հաւկիթը, առանց կեճեպի, թան-  
ձրը թաղանդով:

ԹԱՂԻՔ — բուրդէ շինուած (լմուած)  
կուլապ, քեչա, սիռոց:  
ԹԱՂԹՓԵԼ — անհետացնել, վատնել,  
եղած-չեղածը բաժնել:  
ԹԱԾ — տիպ, թապ, հացահատիկնե-  
րու շեղջերը կնքելու յատուկ  
փայտէ կամ թիթեղէ կնիք:  
ԹԱԾԿԱՐԱԿ — փայտաչէն տաշտածեւ  
չափաման՝ հացահատիկներ չա-  
փելու:  
ԹԱՄԱԶՈՒԿ — փոխառութիւն բրած  
ատեն վաւերական գրութիւն,  
պարտամուրհակ:  
ԹԱՄԱՄ — լման, լրիւ, կատարեալ:  
ԹԱՄԱՇԱ — հանդիսութիւն, ցու-  
ցադրութիւն:  
ԹԱՄԲԼԻՇԱԿ կամ ԿՐԱՄ ՈՒ ԿԷՉ —  
պատանիներու յատուկ դարնա-  
նամուտի խաղ:  
ԹԱՄՔ — թամբ, ձիերու կռնակը  
կապուելիք կաշեկէն նստարան:  
ԹԱՅ — երկուքին մէկը, երկուորեա-  
կին մէկ հատը:  
ԹԱՅՆԱ — գաղտնի, տոտնծին, թա-  
ղուն:  
ԹԱՆ — մածունէն կարապր գատելէն  
ետք մնացած ջրամար, որը թա-  
նապուրի համար կը գործածեն,  
կը խմեն եւ կը չորցնեն:  
ԹԱՆԱՊՈՒՐ — թանով եւ ձուարով  
կփուած տաք սպուր:  
ԹԱՆԹԱՂ — կախուղ, անտուր միս:  
ԹԱՆԽԱԼ — թանապուր, պարհաստով  
եւ թանով պատրաստուած:  
ԹԱՆՀԱՏ — քամուած թան, լոռ,  
ժաթիկ:  
ԹԱՇԱՆԱԼ — վէրք մը պաղառութենէ  
կամ անմաքութենէ վաթարա-  
նալ:



**ԹԱՇԿԻԼ** — յոզնիլ, խոնջենալ, ուժ է իյնալ, գործելու կարողութենէ իյնալ:

**ԹԱՇԿՈՒԿ** — յոզնած, պարտասած, գործը թողելու վիճակին հասած:

**ԹԱՊԼԻ**, **ԹԱԼԼԻ** — նարտ:

**ԹԱՊԼՏԻԼ** — տապալակիլ, պատկած տեղ ինքն իր վրայ դառնալ:

**ԹԱՊՈՒԹ** — փայտաշէն դալալ, քարակոփ դերեզմանափոս:

**ԹԱՌ** — ձուկ որսայլ թակարդ, թարր: Նաեւ հաւթառ, ուր հաւերը կը թափին:

**ԹԱՌԼԻԿ** — զլխարկ,արախչի, դգակ:

**ԹԱՌՈՒՄԱՌ** — աւերակ,ամայի, քարուքանդ:

**ԹԱՍ** — պղնձաշէն բաժակ, լայնաշուրթ՝ կլոր կամ բաժակաձև:

**ԹԱՍԱ** — սրտցաւ, մրմուռ, մորմոք, հոգս, վիշտ կոյացած հիւանդութիւն:

**ԹԱՍԱԿ** — գլխարկ, որուն վրայ մետաղ կամ յուլունքէ դարդեր կը շարեն. կանացի գլխարկ:

**ԹԱՒԱ** — տապակ, փահանաձև աման, կերակուր տապակելու համար:

**ԹԱՒՈՒՐ** — նման, նոյնատեսակ, նըմանորինակ:

**ԹԱՐԱՆՃԱ** — սանդուխ, քարէ կամ հողէ աստիճան:

**ԹԱՐԱՔ**, **ԹԱՃՐԻՔ** — պատի վրայ կապուած փայտէ յեցարան,որուն վրայ ամաններ կամ ուրիշ իրեղէններ կը շարեն:

**ԹԱՐԲ** — ձուկ որսալու ցանց, թակարդ. թառ. ջուրի առջև դըրուած կողով:

**ԹԱՐՈՒՍԱՌԱ** — սայլի երկու կողմերը տնկուած ձողեր՝ բնոր բռնելու դիրութեան համար:

**ԹԱՐՔԻ** — ձիու քամակ — գաւակին՝

ձիուորին հետ հեծած երկրորդ անձը. նաեւ երկու բաժանումով պարկը (խապուկա), գոր ձիու գաւակին կը կապեն, մէջը պաշար կամ դանազան առարկաներ լեցնելով:

**ԹԱՅԱՆ** — կաթնեղէն ամէն բան — թան, թանհատ, պանիր, կարագ, սեր, մածուն, կաթ:

**ԹԱՔ** — առանձին,միայնակ, ամուրի:

**ԹԱՅԹԱ** — մետաքսահիւս տպածոյ:

**ԹԵՉՆԻՔ** — թւենոց, գոր կանայք գործի պահուն կ'անցրնեն թւերնին:

**ԹԵԹՈՒԱՋՐԻԿ** — կաթնկեր մանուկը լողացուցած ատեն ծնօաշէն եւ ծոծրակէն բոնած թեթեւ ցնցում մը կու տան, սրպէսզի մանկան վիզը երկար եւ բարեձև աճի. այդ գործողութեան ատեն կ'ըսեն «թեթուաջրիկ, յերկնավզիկ, եւայլն»:

**ԹԵԹՔԵԼ** — թռչնոց զուգաւորում:

**ԹԵՂ** — կամնուած եւ դեռ յարգէն չդատուած հացահատիկի դէզ, կոյտ: Հնձուած արմտիքը՝ երբ կայի մէջ կամնելով կը մանրուի, հատիկները յարգէն գատելու համար, նախ կը հաւաքեն իրարու վրայ, եւ այդ հաւաքուածը կը կոչեն քեղ. ապա կը սպասեն որ քամի ելլէ, որ էրան բնեն, այսինքն, մանրուքը (մալաղման)՝ յարգ եւ հատիկ միախառն՝ հորսելիով հոյին կու տան. ցորենը՝ կամ ուրիշ հատիկներ՝ ծանր ըլլալով՝ անմիջապէս հովի հոսանքէն, թեթեւ յարգէն դատուելով՝ վար կը թափին, իսկ յարգը աւելի հեռուն կը թափի գետին:

**ԹԵՊՈՒՐ** — փետուր:

**ԹԵՌ** — սարկ, մաղէ կամ բուրդէ հիւսուած՝ միակտուր երկու բաժանումով:

**ԹԵՐ** — կողմնակցութիւն, համակարծիք, օգնութիւն:

**ԹԵՐԷՆ** — կողմնակցութիւն, օժանդակութիւն, կողմ բռնել, վիճարանութեան կամ կոխիլ ժամանակ:

**ԹԵՐՄԱՇ** — անտէր, ոգորմելի, արհամարհելի, հեզնելի. նաեւ կիսամաշ:

**ԹԵՓ** — հացահատիկներու կեղեւը, նաեւ ձկան կաշիի վրայի մասնիկները:

**ԹԵՓՈՒԿ** — թեփառատ ձուկի տեսակ մը:

**ԹԵՔ** — կոշտ, կոպիտ, շար:

**ԹՉՊԵՂ** — համբիշ:

**ԹԷԹ** — տաք, այրող, մրկող, այրելու աստիճանին հասած:

**ԹԷՆ** — խոնաւ, թաց:

**ԹԹԱՆ** — ձիւնի բարակ խաւ, խառնուած, թաթխուած:

**ԹԹՈՒՍՈՐ** — թթուած խմորի բաժին մը, ալիւրի խաւով մը տաշտին մէջ յարատւորէն կը պահուի՝ յաջորդական խմորաղէքի համար:

**ԹԹՈՒ** — աղանդեր, թթուած կաղամբ:

**ԹԹՈՒԱՐԱՃ** — բանջար-բոյս՝ թթու, ախորժահամ եւ ախորժաբեր:

**ԹԹԻԿԻՉ** — թթու համով՝ բանջար բոյս մը:

**ԹԹՉ** — թղաչափ, երկայնութեան չափ, ձեռքի բթամատէն մինչեւ ձեռքի մատը:

**ԹԹԹԷՆ** — դաշտի մէջ չորցած քակոր, չոր թրիք:

**ԹԻԼ**, **ԹԼԻԿ** — կակաղ, դժուարախօս:

**ԹԻՄԱՐ** — ձիու, ջորիի կամ աւանա-

կի՝ երկաթ թելէ խողանակով մաղերը մաքրելու գործողութիւն:

**ԹԻՍ** — դարչահոտութիւն. աղիքներու գրգռումով՝ յետոյքէն արտաքուտած:

**ԹԼՈՒՍՏ** — թլիկ, թաթ, կակաղ:

**ԹՄԻԼ** — լմննալ, վերջանալ, կատարուել (օր. տարին քմէր):

**ԹՆԹՈՅ**, **ԹՆԹՈՅՈՅ** — մասնաւոր փայտ՝ որով ճաշ կամ հարիսայ կը զարնեն կամ կը հարեն:

**ԹՊԸԹԻԼ** — համբերել, գուսպ ըլլալ, հանդուրժել:

**ԹՊՂԱ** — մանկական հիւանդութիւն, որով գոհը կապուանալով կը մեռնի:

**ԹՊՈՒԹ** — գուսպ, համբերող, խոհական (անքպուք — անզուսպ):

**ԹՈՒՅ** — բուրդէ կամ բամպակէ հիւսուածեղէնի ծալուածը, փաթթուածը:

**ԹՈՒԹԻԿ** — պտիկ գլխարկ, որ զըլխարկի մէջէն գործածելի է:

**ԹՈՒԼԿԻ** — աննկարազիր, անբարոյական, շացող, շուն, պիղծ, մեղկ:

**ԹՈՒԽԱՐ** — անհող, թոյլ, անտարբեր, բանի կարեւորութիւն չտուող:

**ԹՈՒ** — կաշիէ պարան, հաստ շուան:

**ԹՈՊ** — ձեծ, փայտի հարուած:

**ԹՈՊԱՅ** — երզում, ուխտ, կատարուած արարք մը չկրկնելու խոստում:

**ԹՈՒ** — ուռկան, փոխաբերաբար՝ դթութիւն հայցել (օր. բու թոռն իմ յընկի, այսինքն՝ դթութեանդ ապաւինած եմ): Նաեւ որդւոյ կամ դստեր գաւակ:

**ԹՈՍԱՅ** — ծոպաւոր դօտեկապ, գոր երիտասարդները մէջքերնին կը

կապեն ծոպերը շուրջանակի ցուցադրելով՝ հրապուրիչ երևույթով մը :

**ԹՈՐԻՅԾ** — ականջի ծակ, դինդ կամ մետաղե օդ կախելու համար :

**ԹՈՐԿԵԼ** — թողուլ, ամուսնալուծուիլ, բաժնուիլ, դատուիլ :

**ԹՈՓ** — թնդանօթ :

**ԹՈՒԹԵԱՅ** — աչքի հիւանդութիւն : նաև բուրամնալա խոտածաղիկ, որուն անունով հիւանդութիւնը կը բնորոշուի, եւ որմէ հիւանդութիւնը բուժելու դեղը կը պատրաստեն :

**ԹՈՒԹՔ** — յետոյքի աղիքի հիւանդութիւն (մալյապլլ) :

**ԹՈՒԽ** — զորչ զոյն (օր. քուլս դեղ, քուլս ծամ, քուլս ալ) : Թուխ՝ ծամ՝ կանացի անուն. Թուխօ՝ արական անուն :

**ԹՈՒԽԹ** — մէկ ութերորդը հոխային հմայակիր :

**ԹՈՒՃՈՒՃԻԿ** — թռչնապղինձը բուսածոքս :

**ԹՈՒՄՊԱՆ** — վարտիկ :

**ԹՈՒՆՏԻՐ** — թանիր. կառ շինուած վառարան, խոշոր ու փոքր տեսակ : Թանրատունը հողին մէջ կը թաղեն. նոր թանիրը մասնաւոր արարողութեամբ կը թրծեն, սրբութիւն նկատելով կ'օրհնեն. ունի խոշոր բացուածք, բերան. կը լորթաձև է : Մտերն են՝ կոպ, պարուկ կամ շրքուկ, սևտու : Թանիրը կը զործածեն հաց թխելու, կերակուր եփելու եւ ջեռուցման համար :

**ԹՈՒՇ** — այտ, երեսի երկու կողմի փափուկ մասերը :

**ԹՈՒԹԱՅ** — վարունդի, ձմերուկի, կամ զգամի կանաչ ցօղուններ : նաև պոտանեկական խոպ, որ տեղի կ'ունենայ երկու խոմբերու միջև : Խոպին մասնակցողները՝ պարան մը՝ զործուած խոտեղեղէ՝ ձեռքը բնած, որոչ կէտէ մը հակառակորդ խոմբէն մէկը նշանակէն երբ սկսի վաղել, ինքն ալ կը սկսի վաղել համեմուտ եւ հարուածելու, քանի զեւ փախողը իր խոմբին նշանակար չէ հասած, հակառակ պարագային խոպը կը կործնեցնէ :

**ԹՈՒՐ** — սուր, շեղբուր զէնք :

**ԹՈՒՎՈՒ** — թեթեւօլիկ, կէս խելագար, պակասամիտ :

**ԹՐԱԹԱՓ** — աճապարանք, հապճեպ :

**ԹՐԱՄՓԱ** — փոխանակութիւն, ապրանք մը փոխարինել :

**ԹՐԱՇ** — անելուիլ, խուզել, տաշել, քանդակել (օր. խալամ քրաշ) :

**ԹՐԻԹ** — կերակուր՝ թթու պատեղի թանձր ջուրով պատրաստուած — մանրուած հաց, պատեղ ջուր եւ արդար իւր իրարու խառնելով :

**ԹՐՈՒԿ** — խոտի տեսակ մը, որուն կանաչը անասունները չեն ուտեր, չորանայլն ետք երբ անձրեւէն կամ ձիւնէն թրջուի, այն ատեն կ'ուտեն :

**ԹՓԼԻԿ** — արանանունք, աչքի թարթիչ :

**ԹՓՈՒԼ** — բողբոջիլ, ծլիլ, ծաղկիլ, փթթիլ :

**ԹՓՈՒՇ** — թարմ, փթթած, նորարողութիւն :

**ԹՓՈՒՏԱԼ** — թափահարել, ինքզինք վերադառնելու շարժումներ ընել :

Ժ

**ԺԱԺԱԼ** — շարժիլ, տատանիլ, տարուբերուիլ, դողողջէլ :

**ԺԱԺԵՆ** — շարժուող, օրօրուող (օր. ժածան քար, ժածան ծառ) :

**ԺԱԺԻԿ** — կտրուած թան, թանհատ, լոռ :

**ԺԱԺՔ** — շարժ, երկրաշարժ :

**ԺԱՊ** — անկարօյս, խաւարծիլի ընտանիքէն. կը խաշեն եւ ՉԷ ժամ աղջուրի մէջ դնելէ ետք միայն՝ կ'ուտեն. կանաչը թունաւոր է. ասկէ աղցան կը պատրաստեն, նաև կը տապիկեն հակիթով եւ կ'ուտեն փխրաֆի հետ :

**ԺԱՂՐ** — զարչանք, թոյն, տակուրթիւն, սխ :

**ԺԱՄԿՈՉ** — եկեղեցիի սպասուոր, ծառայող, զանդահար. հրապարակով տանիքներու կտուրներէն աղօթքի հրախրող. կ'ըսէ՝ ծամ հրաւեցեք, օղորմի Աձ. ձեր ծնողաց :

**ԺԱՄՈՒՅ** — խաչահամրոյրի նըւէր, եկեղեցւոյ նիւթական նըւէր :

**ԺԱՆԳ** — փաս, թոյն, քոս :

**ԺԱՆԳԱՌԻ** — կապոյտ, երկնազոյն, բիւկապոյտ :

**ԺԱՆԳՔ** — ծամածուռ դիմադիծ :

**ԺԱՆԿՈՒՏԱԼ** — ժանկոտած, փաստած, թունաւորուած :

**ԺԱՐԺԵՆ** — վառելանիւթ, փակցանք, կպչանք :

**ԺԵՆ** — աղտ, խոտի կամ ծղօտի մանրուքներէն զոյսցած աղբ :

**ԺԷՒ** — ժայռ, ապառած, խոշոր քար, զնար :

**ԺԺԱՆՔ** — բուրդի կամ մաղի թընձուկ, խծուծ :

**ԺԺՈՒԼ** — թօթուուիլ, ծոմակիլ, ծեքծեքիլ :

**ԺԻԺ** — թնձուկ, խոտնուածք, անքակտելի կապ :

**ԺԻՐ** — աշխատակը, զործունեայ, կտրիճ, ուժեղ, պինդ :

**ԺՂԼԻԼ** — մտերմիկ սրբաբաց խօսակցութիւն, ժամանցի խօսակցութիւն :

**ԺՄԻԿ** — ժամանակ, յատուկ ժամ :

**ԺՄՆԱՅ** — արբունքի հասած, որոչ տարիքի մը հասած :

**ԺՈՂՎԱՄՈՒՐԻԿ** — հաւաքածոյ, զանազան նիւթեր հաւաքելով իրարու միացուցած եւ բան մը դոյացուցած :

**ԺՈՒՄ, ԺՈՒԿ** — ժամանակ, ճաշ մը, ճաշի ժամանակ, անգամ :

**ԺՈՒՌ** — խակ, տհաս, անհամ, խակ ու ժուռ, զլխու պոռոյտ, ման դալ :

**ԺՐԵԼ** — պնդել. ուժով կապել (օր. գօտիդ ժրէ, մէջքդ ժրէ, քայլքդ ժրէ) :

ԻՄԱԼ — ինչպէս, ինչ տեսակ:  
 ԻՆԱՅ — անիկա:  
 ԻՆԱՏ — քէն, սխ, խոտի, մէկէ մը  
 յարարերութիւնը խղելու արարք:  
 ԻՆՍ — մարդ, տոճմ, գերգաստան,  
 սերունդ:  
 ԻՆՍԸԶ — անմարդարնակ, ամայի,  
 վայրի:  
 ԻՇԿԵԼ — նայիլ, ուշադրութիւն դար-  
 ձրնել, բանի մը հետամուտ լլլալ:  
 ԻԶԼԻԿ — շապիկի վրայէն հագնելիք  
 թեթև հագուստ, պարեգոս:  
 ԻՍԿԻ — բնու, երբեք, ամենեւին:

ԻՎԱԶ — վայրի պտուղ մը, սեւ սա-  
 լորի նմանող, անկէ աւելի մանր:  
 ԻՏԱՅ — ատիկա:  
 ԻՐԻՑԱԿ — ալրեցու, վառեցու:  
 ԻՐԻՅԿԻՆ — երկցուհի:  
 ԻՐՂԱՏ — բանուտը, աշխատուտը:  
 ԻՐՔ — անձանօթ բառ մը, որուն ի-  
 մաստը պարագաներու բերուածով  
 միայն կրնայ հասկցուիլ. առաբ-  
 կայ. բան:  
 ԻՐՐՏ — բնակարան, անակ, խրճիթ,  
 ապաստանարան:

Լ

ԼԱԶՈՒԹ — եղիպտացորեն, գլիլ:  
 ԼԱԼ — լալ, արատասուել, ցաւի եւ  
 վշտի ազդեցութեան արտայայ-  
 տութիւն:  
 ԼԱԼԷ — կակաչ ծաղիկ, բազմերանդ  
 եւ գեղատեսիլ, սոխաւոր արմա-  
 տով:  
 ԼԱԼԽՈՒՓ — լացակամած, լալու ե-  
 րեւոյթ առած:  
 ԼԱԼՈ — մունջ, անխօս, համբ:  
 ԼԱԿ — կերակուրի աւելցուք, պոպ  
 կերակուր, շան կերակուր:  
 ԼԱԿԵԼ — լափել, լիցիլ, լափիցիլ:  
 ԼԱԿՈՇ — լայնարեւոն, լայնաշար-  
 թրն, աձեւ երեւոյթ:  
 ԼԱԿՏԱՆ — կորածեւ եւ կորածայր

փայտէ կամ ոսկորէ շինուած գոր-  
 ծիք մը, որով խտտեղէզը մանելով  
 կեմ կը շինեն:  
 ԼԱՂԱՊ — մականուն. տոճմի, գեր-  
 դաստանի, ընտանիքի որոշ ա-  
 նուն:  
 ԼԱՄՏԱՆ — սակառի կամ կողովի կա-  
 պր, որը կողով շալակողը ուսին  
 կ'անցրնէ բռնելու համար:  
 ԼԱՆԴԱԿ — պաղած կերակուր, ան-  
 համ եւ անճաշակելի երեւոյթով:  
 ԼԱՆԿԱ — աքացի, ոտքի հարուած:  
 ԼԱՆԿԱՌԻ — պղնձաչէն խոշոր պնակ:  
 ԼԱՆԿԵՌ — պղնձ կաթոսայի երկաթ  
 անկեր, կանթ:  
 ԼԱՉԻ — քթանի լաթէ գլխակապ:

ԼԱՊՈՐԷԶ — տիղմ, ցեխ, ցեխախառն  
 երեւոյթ:  
 ԼԱՊՍՏՐԱԿ — նապաստակ:  
 ԼԱՎԱ — աղաչանք, պապատանք,  
 գթութիւն:  
 ԼԱՎԱ ԸՆԿՆԻԼ — պաղատիլ, աղաչել,  
 խնդրել, գթութիւն հայցել:  
 ԼԱՐ — ոչխարի չորցուած եւ մասնա-  
 տը պատրաստուած աղիք:  
 ԼԱՐԱՆ — մազէ հիւսուած հաստ շը-  
 ւան, պարան:  
 ԼԱՐԽՈՒԻԼ — պտուկիլ, կոնակի վրայ  
 անհող կերպով երկինալ:  
 ԼԱՓԱ — ջրախառն ձիւն, նաեւ կտա-  
 ւատէ պատրաստուած խաւիժ, իր-  
 բեւ սպեղանի վերքի վրայ կապե-  
 լու:  
 ԼԱՔԱՆ — ոտնաման, հողաթափ, մա-  
 զի թելով պատրաստուած, ձմեռ  
 ստեն ձիւնի վրայ քալելու հա-  
 մար կը դործածեն:  
 ԼԱՕ — որդի, դաւակ, նաեւ մտերմիկ  
 արտայայտութեան կոչական:  
 ԼԵՂԻ — լեարդ (օր. վախէն լեղին  
 պատուա). նաեւ դառն, անա-  
 խորժ:  
 ԼԵՊ — պառաւ մամիկներէ շինուած  
 թախաման: Չար գիտումով՝ ու-  
 բիշներուն կաթն ու իւղը պակ-  
 սեցնելու համար կը դործածեն:  
 ԼԵՊՐԱՐ — բախտապուշակ:  
 ԼԵՍԱՆ — յեսան, քարի տեսակ մը, ու-  
 բուն վրայ գտնակ, մանկաղ, զե-  
 րանդի եւ ուրիշ գործիքներ կը  
 սրեն:  
 ԼԵՍՏ — մաշած՝ պղտիկցած դանակի  
 կամ սուրի շիզը:  
 ԼԵՐԴ — լեարդ:  
 ԼԵՐԴԻԼ — թանձրանալ, մակրդուիլ,  
 հեղուկ վիճակէն կայուն վիճակի  
 փոխուիլ:

ԼԵՐԹ — թոք:  
 ԼԵՓՈՒԿ — կլոր քարերով խաղցուած  
 մանկական խաղ, ափկունք, կցո:  
 ԼԷՇ — զիակ, անշնչացած մարմին,  
 սատակ:  
 ԼԺԱՄ — մաշած, ձեւափոխուած, բը-  
 նական երեւոյթը կորսնցուցած:  
 ԼԻԱՆԱԼ — գոհանալ, լեցուիլ, դոհա-  
 ցում ստանալ, բուարարուիլ:  
 ԼԻԹՍՆ — ձոյլ ուղրիկ երկաթ, ջրա-  
 պարի քարանիւի տակը կը դըր-  
 ուի՝ անիւր զիւրաւ դառնալու  
 համար:  
 ԼԻԺ — հարթ, հաստար, ողորկ,  
 տափակ:  
 ԼԻԼ — անձրեւի հետեւանքով լեռնե-  
 րէն վար քաշուող մանր աւաղնե-  
 րու մնացորդ. ցեխ. տիլ:  
 ԼԻՊԱՐԻԿ — շաղկաբատ, շաղկաղփ,  
 շատախօս, անամօթ:  
 ԼԻՍՈՆԵԿ — ծունկի կլոր ոսկոր:  
 ԼԻՏՕՆ — բրուտի տուրքին հարթ  
 քարը:  
 ԼԻ ՕՐ — հասարակ օր (օր. լի օր է,  
 կիրակի չէ. նա լին գինայ, նա  
 կիրակին). նաեւ լեցուն:  
 ԼԻՒԿ — դրան վերեւի սեմին վրայ՝  
 ներսէն հաստատուած փայտէ  
 նիւ. գուռը դոցելու համար կը  
 դործածուի. (օր. դրան լիսիկը  
 յրնկեր է): Մարդու լիսիկը յրնկեր  
 է. ալիսիքն՝ ձեւաքեր է:  
 ԼԽԼԽԱԼ, ԼԽՐՏԱԼ — տեղէն շարժիլ,  
 բնական վիճակէն ելլել (օր. ալ-  
 ուս կը լիսիկը, սէլի կուսուր կը  
 լիսիկը, բախի պոչը կը լիսիկը):  
 ԼԽԿԻԼ — թոտմիլ, քրքրիլ, բնական  
 երեւոյթը փոխել:  
 ԼԿԻԼ — հայիլ, կակուղնայ:  
 ԼԿԼԿԱԼ — կափկափել, ցուրտէն դո-  
 զալ, ինքն իրեն անիմաստ կեր-  
 պով խօսիլ:

- ԼՂԱԿՈՎԵԼ — ձևակերպող հասարակարարական: Փոխարկարար կրթության համար հեղինակներն մը տարբեր ձևով ներկայացնելուն:
- ԼՂԵԼ — կառավարող կամ ցեխով ձևակերպող կամ գեղարվեստի հարթել, հասարակացնել:
- ԼՂԶԵԼ — փշրել, ճնշումով մանրել, ջարդել, ջախջախել:
- ԼՂՃՈՐ — նիհար, վատոյժ, տկար, սրբորում, երեսոյթ փոխում:
- ԼՂՈՁԵԼ — անկանոն բաներ բնել, անհարմարութեամբ անձիւզ գործ բնել:
- ԼՄԵԼ — թողիք պատրաստելու ժամանակ փաթթողը ձմռել, ոտնահարումով սրտը աստիճանի հասցնել:
- ԼՄՊԱԼ — բանի մը գործունէլ, ակամայօրէն բանի մը գալիլ:
- ԼՆԿՈՒՏԱԼ — կողմի վրայ կողմիկող բալիլ:
- ԼՈԳ — Արարս գետի ջուրերուն մէջ գտնուող ձուկի տեսակ մը:
- ԼՈԶ — հատու գործիք. փայտէ կոթով, կոր ու սուր շեղրով, խոշոր գանակ:
- ԼՈԼԻԿ — թոնիրի մէջ թխում թանձրածե կըր հաց:
- ԼՈԼՈԶ — սրածայր, կոնածե (օր. լոլոգ քար, լոլոգ քոլոգ):
- ԼՈՆԿԵԼ — մորթագեր ընել, մերկացնել, կողոպտել:
- ԼՈՂ — լողալ, ջուրի մէջ խնդրիք վեր պահելու գործողութիւն:
- ԼՈՂ — ԼՈՂՔԱՐ — գլանածե քար, կը գործածեն տանիքներու հողը ամրացնելու, եւ որեւէ հող հասարակացնելու ու պնդացնելու համար:
- ԼՈՂԱԿ — լեղակ, դանդաղան ծաղիկներէ պատրաստուած գունաւորող նիւթ, ներկ: Լուսնի լրումին եւ

- նորումին կաթնիկը մանուկներու զէմբին կը քսէին, նորէնձ հեւանդութենէն զերծ մնալու հասարակ:
- ԼՈՂԼՓԱԼ — փափուկ բանի մը մէջ տարբերութիւլ, առատութեան մէջ լողալ:
- ԼՈՇ — թոնիրի մէջ եփուած բարակ հաց:
- ԼՈՇՏՈՎ — արմատաւոր տունկ, որ գոմէնի կը նմանի, վրան ողկոյցածե խողովի մանր պտուղի նման կը բռնէ: Ամենարուծիչ գիւթական հրաշալի յատկութիւնով օժտուած ըլլալը կը հաւատան, եւ քան եւ չորս տեսակ ցաւերու զեղ ու զարման կ'ընդունին: Լոշտակի մարդակերպ արմատը հողէն հանելու հետեւեալ նախապաշարումը կար — որ արմատը հողէն զատողը անխուսափելիօրէն պիտի մեռնէր. ասոր համար անասունի մը կը կապէին, որ հողէն դուրս քաշէր: Զոհուող անասունը՝ գառ, մաքի կամ այծ, տեղոյն վրայ միտը խորովելով կ'ուտէին, մարդիկն ալ մահէն զերծ կը մնային:
- ԼՈՊԿԵԼ — կեղուել, կողոպտել, ունեցածէն զրկել, մերկացնել:
- ԼՈՍ — թանհատ, ժածիկ. նաեւ խոնու տեղեր՝ քարերու կամ փայտերու վրայ բռնուած սպնդային կանաչութիւն. քարաղոս, դոս:
- ԼՈՍՅԱՅ — տարիքը առած, մեծցած, չորցած, ծերացած (օր. լոսցակ յիար):
- ԼՈՏՈՒ — ձմեռուան համար անասուններու ուտելիքի — յարդի եւ խոտի — բացօթեայ ամբար:
- ԼՈՐԻԿ — դնչու, բոշա, չիմկանա, մրբլպ, մրթլպ:

- ԼՈՐԽ — կաշեփող, թող, լուծր սայլի առեղներուն ամրացնող կապ. նաեւ կակուց ձիւն (գարնանամուտին հալող ձիւնի վիճակը):
- ԼՈՐՏԵԼ — բան մը նետել, շարտել:
- ԼՈՐՏԵՆՈՒԿ — մողզգանման սողուն մը:
- ԼՈՒ — մակարոյժ միջատ, որ կը սրնանի մարդոց եւ անասուններու արիւնով:
- ԼՈՒԼԱՅ — ծորակ, խողովակ, նաեւ ծխամործի գլուխ:
- ԼՈՒԾ — անասունները աշխատացնելու համար վզին դրուելիք մանուար փայտ, որ սամիով եւ սամեթելով կը կապեն վիզին. ծանրութիւն:
- ԼՈՒՍԱԲԱՅ — արշալոյս, ագամամութիւն յաջորդող լոյս:
- ԼՈՒՍԱՂԲԷՐ — Երուսաղէմ ուխտի գացողի ճամբու բնիկը:
- ԼՈՒՍԱՍՏՂ — լուսոյ աստղ, արուսեակ:

- ԼՈՒՍՈՒԿ — կայծոռիկ (միջատ):
- ԼՈՒՓ — ափ, բուռ, ճանկ, կուցք:
- ԼՈՔ կամ ԼՈԿՈՆ — որմաղիքներու պատրաստած յատուկ շաղախ՝ մածուցիկ նիւթ: Ասով վանքերու եւ քարաշէն կամուրջներու կամարները կը կապէին: Կը պատրաստէին՝ հաւկիթի ձերմկուց, մատակի հում կաթ, այծի մազ, (լուսոյնը կ'նոջ մազն էր) ,ե զած իրարու խոտնելով: Լաւ մը ծեծելով, շաղախը շուտ կը չորնար:
- ԼՊՈՒԹ — բուրդ գող կը անկէ թաղիք պատրաստող:
- ԼՊՈՒՔ — ճաղատ, աղուամազ, մերկ:
- ԼՊՈՒՔԵԼ — կեղուել, մորթագերծել:
- ԼՓՈՒՏ — աղտոտ, կեղտոտ, անհասոյ երկուցթ:
- ԼՔԹԻԼ — մաշիլ, անդործածելի դառնալ:
- ԼՅԻԿ — կարծր կտորէ շինուած քրտակ. լոգանքի պահուն մարմինը շփելով մաքրելու յատուկ էր:

Խ

- ԽԱԶ — սաղ, ընտանի թռչուն:
- ԽԱԼ — նշան, բիծ, որ երբեմն դէմքի վրայ կ'ըլլայ, եւ սիրունութիւն կու տայ գիմաղծին:
- ԽԱԼԱՄ — եղէզ գրիչ, փորագրութեան երկաթ-գրիչ:
- ԽԱԼԱՆ — պարպեւ, ընծայ, տուրք-նուէր (Տղան կողմէ տրուելիք՝ հարնցուի ծնողքէն պահանջուած

- նուէր), հարսնեղին:
- ԽԱԼԱՏ — արատ, պակասութեան նշան, դէմքի կամ մարմնի որեւէ մասի թերութիւն:
- ԽԱԼԻ — գորգ, խալիչա:
- ԽԱԼԽԱԼ — ապարանջան: Հին առեւ սոխորութիւն կայ եղեր, որ ոտքի ինչպէս նաեւ ձեռքի բազուկին վրայ ապարանջան կը կապեն:

**ԽԱՆՏԻԼ** — սխալուիլ, մոտացութեան տալ, տատանիլ, խտտելիլ:  
**ԽԱԿՈՒԿՈՒԹ** — ահաստեմ, վրձնած:  
**ԽԱՂ** — երգ, պար, գրօսանք, նենգամիտ դարձուածք:  
**ԽԱՂՈՐԴ** — ճամբիտ, արդար, իրաւացի, անթերի: Տեղին յարմար իրր երգմունք կը գործածուի:  
**ԽԱՂՔ** — այգանում, անուանարկում, խայտառակում:  
**ԽԱՃԸՐԿԱԹ** — խաչերկաթ, թոնիրի վրայ գործածելու համար յատուկ շինուած որոշ ձևի երկաթ, որ հարկ եղած ատեն կը գործածուի իրր գէնք:  
**ԽԱՄ** — խակ, ահաս, անփորձ, հում, կեղծուած:  
**ԽԱՄԻՇ** — եղէկ:  
**ԽԱՄՁՈՒՐ** — անասնահարկ, ոչխարներու զխահարկ, թուրք պետութեան տուրք:  
**ԽԱՅԹԱՆԹԵԼ** — մետաքսահիւս լայն եզրով թել-ժապաւէն:  
**ԽԱՅԼՈՆ** — ծխափող՝ կաւաղլուէ կամ փայտէ շինուած:  
**ԽԱՅՏ-ՐԱՆՏ** — երկաթէ կապանք, ձիերու առջևի երկու ոտքերը անցրնելով կը կղպեն, որով ուղած ժամանակ ձին բռնելու զիւրութիւն կ'ունենան:  
**ԽԱՆԴԱԿ** — փոս, հոգաչերտերու բացուածք, խրամ:  
**ԽԱՆԷՆ** — փշտա բանջար մը, որուն արմատը կ'ուտեն:  
**ԽԱՆԿԱԼ** — վարսի հիւսուածք, ճիւղ (օր. ծաւերն հուսկի խանկալ-խանկալ):  
**ԽԱՆԿԱՌ** — կիսատ, թերի, պակասուոր:  
**ԽԱՆԿՈՒԵԼ** — բանի մը գոյնը փոխել (օր. այս կտորի ռանգը խանկոներ է):

**ԽԱՆՁ** — հրդեհ, կրակ: Աշնանամուտին՝ դաշտին մէջ մնացած չոր խտերը, սկզբը երբ այրուին՝ խանն է ինկեր կ'ըսեն:  
**ԽԱՆՏՈՆ** — բուսարմատ (քաղցրահամ): Հողէն հանելէ ետք, քիչ ժամանակով արեւի տակ երբ մընայ, աւելի համեղ կը դառնայ:  
**ԽԱՇ** — ոչխարի կամ որեւէ անասունի ոտք ու զլուխէն խաշելով պատրաստուած սոսինձաւոր կերակուր:  
**ԽԱՇԱԽ** — երկաթ թելերէ շինուած վրձին, որ ձիերու մազերը մաքրելու համար կը գործածուի:  
**ԽԱՇԽԱՇ** — աֆիսն: Տունկ մը, որուն կոկոնները հասունելէ առաջ կը ձեղքեն, որպէս զի կաթը զուրս գայ: Այս կաթը կը թողուն որ թանձրանայ, կիսաչոր կը հաւաքեն և իր տերեւներուն մէջ փաթթելով գունդ-գունդ, ապա կը ծախեն գնորդներուն: Կոկոնի վրայ հասած հունտերը կ'ուտեն. ասոնք թմրեցուցիչ ազդեցութիւն չունին:  
**ԽԱՇՈՒՆԵԼ** — կիսակի ձիւլ. գործ մը անխնամ կերպով կատարել:  
**ԽԱՁ** — քառաթեւ նշանակ, քրիստոնէութեան հետեւողի նշանակ:  
**ԽԱՁԱՌԱԿ** — ստերը խաչածեւ հաստատուն զիրքով կանդիլ:  
**ԽԱՁԿԱԹԱՅ** — կարկանդակ: Հարսանիքի առթիւ մասնաւոր պատրաստուած, հինալուծի ատեն, հարսընցունին տունը կը տանին հինալի հետ:  
**ԽԱՁՓՈԿ** — հարսանիքի հանդիսութեան նոր փեսայի կուրծքին եւ վրդին խաչածեւ կտորած կապ:  
**ԽԱՊ**, **ԽԱՊՈՒՆ** — քարակապ կամար:

Վանքի, Էկեղեցիի կամ կամուրջի կամար:  
**ԽԱՊԱՍ** — ուտիք, պասէն եղնել:  
**ԽԱՌԱՆ** — գերան, սը անասունները դուրսը համար վիզը կը կապեն:  
**ԽԱՌԹԿՈՂ** — յամատ, ամբարտաւան, թեք:  
**ԽԱՌՊԱԼԻ** — սրտմտիլ, նեղուիլ, սրզողիլ:  
**ԽԱՍԱ** կամ **ԽԱՍԱՔԻ** — հարձ, սպորինի կին:  
**ԽԱՐԱՆ** — սարան, մագահիւս չուան, կապ:  
**ԽԱՐԱՐ** — այծի մազ կտորուած պարկ:  
**ԽԱՐԵԼ** — այրել, տաղել, անասուններու վրայ տաք երկաթով նշան դնել. իրարու շփուելէն վերք կամ քերթուածք յատուցանալ:  
**ԽԱՐՁԱՆ** — խարաղան, մտրակ՝ կենդանիները վարելու յատուկ:  
**ԽԱՐՁԱՆ** — ոչխարի դմակը հալած ատեն, իւղի տակը մնացած մանրուկ կտոր:  
**ԽԱՐՈՒԿ** — այծի մազ, կանեփի թել և թաղիքէ հիւսուած ոտնաման:  
**ԽԱՐՏԱՅԻԼԱԿ** — քահանայական ձեռնադրութեան արարողութեանց ընթացքին նորընծան առաջնորդող վրդ. կամ եպիս.:  
**ԽԱԻԱՆՈՍ** — թիթեղէ տուփ: Առհասարակ սուրճ, շաքար և կամ զեղօրայք պահելու աման:  
**ԽԱԻԸԼ** — բարեկամութեան երզում, ուխտ, պայման, դաշինք:  
**ԽԱԻԸՐԾԻԼ** — խաւարծիլ, գալիծիլ, բողբոջ ուտելի տունկ, ախորժիլի թթուով: Խաւարծիլը կը կեղուեն և կ'ուտեն, նաեւ սանդի մէջ կը ծեծեն, ջուրը կը քամեն, կ'ուտացնեն և կը պահեն ձմեռ ատեն

իրրեւ թթու կերակուրներու կը խառնեն: Ամառ ատեն, տաք օդին, պաղ ջուրի հետ խառնելով կը խմեն իրրեւ զովացուցիչ: Խաւարծիլը արմատը «գափ» կամ «խաշնդեղ» հողէն կը հանեն: Թելի վրայ շարելով ոչխարի վրդերէն կը կախեն: Ամբողջ ամառուան ընթացքին՝ հողէն ու ցողէն, արեւն ու անձրեւէն, և անասուններու շունչէն ազդուելով՝ կը դառնայ հրաշալի դեղ:  
**ԽԱՓ** — հանդոյց, խաղը, կապանք, կապ: Դիւրաւ արձակուող կապ:  
**ԽԵԼ** — բաւական մը, քիչիկ մը, սակաւ ինչ, պահ մը:  
**ԽԵՂԴ-ԱՇՈՒՆ** — աշնան վերջին օրերը:  
**ԽԵՃՈՐԳ** — կճեպ, կեղեւ, հաւկիթի արտաքին կարծր կեղեւ:  
**ԽԵՄՔ** — մաղի բոլորի փայտը, շուրջանակը, որուն վրայ մաղը կը գործեն լարով կամ ձիւ մաղէ թելով:  
**ԽԵՌՆ** — նենգամիտ, չարամիտ, դաւադիր:  
**ԽԵԻ** — խենդ, յիմար, խելազար, անմիտ:  
**ԽՁԱԿ** — սահնակ, բալխիբ, դահուկ:  
**ԽՁՈՒՁ** — կամնուած հացահատիկներու յարդի խոշորագոյն մաս, չորցած ցողուններ և խտեղէզի կտորներ:  
**ԽՁՏԵԼ** — պատուել, խլել, յարարութիւնը դաւերեցնել:  
**ԽԷԹԵԼ** — խայթել, թունաւորել, խոցել, կճել, կշտամբել, կսկծացնել:  
**ԽԷՁ** — քով, մօտ, կուշտ, բոլոր, շուրջ:  
**ԽԸՌՇ** — խոլ, ծղօտ, ցօղուն, չոր ճիւղեր, չորցած բարակ փայտ:  
**ԽԹՈՒԻԼ** — խրուիլ, կակուղ հողի

կամ ցեխի մէջ իննալ եւ չկրնալ  
 դիրքութեամբ զուրս դալ:  
 ԽԹՈՒՄ — պատէն ելլել, ուտիք, ար-  
 պիլուած կերակուր ուտելու ար-  
 տօնութիւն:  
 ԽԻԺ — շիւղ, ծղօտ, չոր խոտածիլ:  
 ԽԻՄԻՇԻԼ — մեկգրանալ, ախոտալ  
 (օր. չըմ խիմիչի խաա տղիմ ֆլօր  
 մի գարկիմ):  
 ԽԻՊԱՐ — մանր քար, որով փողոցնե-  
 րը կը սայալատակեն, կամ պատ  
 շարելու ատեն պատին միջոցը կը  
 լեցնեն:  
 ԽԼԱԹ — նուէր, փառքի պատմուճան:  
 ԽԼԱՅ — փառքի պատմուճան, պար-  
 դեւատրուած իր մը, շքեղ հան-  
 դերձ հարսանեկան կամ տօնական  
 օրերու յատուկ:  
 ԽԼԷՊԼԷ — անխմանալի խօսք, սա-  
 տանածին լեզու:  
 ԽԼԻՆՔ — քթի ծակերէն արտածորոզ  
 մածուծիկ նիւթ:  
 ԽԼՈՐԻԿ — անձրեւախառն մանր կար-  
 կուտ, բանջարբուսիկ:  
 ԽԼՈՒԸԼԱԼ կամ ԽԼՈՒԸՌՏԱԼ — խը-  
 լըտիլ, դաղտնի շարժում, դա-  
 ւազրուծիւն, ծածուկ գործունէ-  
 ութիւն ընել:  
 ԽԾՈՒԾ — կանեփի կամ վուչի տա-  
 կունք, ժժանք, թնճուկ:  
 ԽՃՄՈՒԹԵԼ — կամթեւ, մէկուն մոր-  
 թը կամ միսը երկու մատներով  
 սեղմել, ոլորել՝ ցուցնելու գի-  
 տումով:  
 ԽՄԻԼ — խամբիլ, թատամիլ, ցուկ  
 թեթեւալ, հանգստանալ:  
 ԽՆԱՄԻ — ամուսնական կապով բա-  
 րեկամութիւն:  
 ԽՆՃԻԿ — խնճոյք, ուրախութիւն,  
 դուարձութիւն, սիրարանութիւն:  
 ԽՆՉԵԼ — քիթը մաքրել:  
 ԽՇԸՄ — ցու, փորձանք, չարիք,

փառ պատահար:  
 ԽՇՏԵԼ — խրել, խոթել, սրածայր  
 երկաթով բանի մը դարնել:  
 ԽՇՏԻԿ — նիգակ, տէգ, սուր երկա-  
 թածայր ձող, որով ձուկ կ'որ-  
 սան, խկ կուտելու ատեն՝ իրր  
 պէնք կը գործածեն:  
 ԽՈՉԱՆ — շհերկուած, անմշակ հող:  
 ԽՈՉԻ — Երանի՛ թէ, իցի՛ւ թէ, բաղ-  
 ձանքի արտայայտութիւն:  
 ԽՈԹ — թեւատ, անզամահատ:  
 ԽՈԼ — պոչատ, սպին կտրուած:  
 ԽՈԼՈՒ — շիլ նայուածք, թթու դի-  
 մազիծով նայուածք, բարկու-  
 թիւն:  
 ԽՈԼԻՆՃ — մէջքի կամ վրդի ցու:  
 ԽՈՄՍԵԼ — մատնութիւն ընել, ուրի-  
 շի մասին վնասակար ակզեկու-  
 թիւններ հաղորդել:  
 ԽՈՆ — խմորի տաշտ, սեղան, ճաշա-  
 սեղան:  
 ԽՈՆՁԱ — ընտրեալ ուտելիքներէ եւ  
 առարկաներէ պատրաստուած նը-  
 ւէրներ, որ պղնձեայ սկուտեղիի  
 վրայ դրուած մկրտութեան կամ  
 հարսանեկան խրախճանքներու ա-  
 սիթով՝ բարեկամէ բարեկամի կը  
 դրկուի:  
 ԽՈՆՁԱՆ — վարտիկի ծալքէն անցը-  
 ւած մէջքակապ:  
 ԽՈՇ — ձիարչու, ձիերու վազք:  
 ԽՈՇԱՊ — չոր պտուղներէ եփուած,  
 ջրախառն պաղ կերակուր՝ պահոց  
 յատուկ:  
 ԽՈՇՐՈՒԿ — երեխաներու մորթի հի-  
 տանդութիւն, պայտրածեւ բշտիկ:  
 ԽՈՉ — խոյ, արու ոչխար:  
 ԽՈՒ — կիսատ, թերի, պակաս, կոտ-  
 բած բոժին, չար դիտաւորու-  
 թիւն:  
 ԽՈՒԹ — կտրիճ, Լերտասարդ, ու-  
 ժեղ:

ԽՈՏԳՈՒՌ — խշտակ, խոտէ բարձ,  
 զոր օրօրոցի մէջ կը դնեն, Երա-  
 խաները վրան պատկեցնելու հա-  
 մար:  
 ԽՈՐԹ — անհարպատ, խորդախ, ա-  
 պօրինի ծնունդ:  
 ԽՈՐԻՍ — խորիս, խարկուած իւղա-  
 լիւրի խիւս, փոխինդ, զոր դա-  
 թայի խմորով կը փաթթեն ու կը  
 թխեն, կամ խարկուածը կ'ուտեն:  
 ԽՈՐՈՄ — հնճուած խոտի կամ ցորե-  
 նի շարք, շերտ:  
 ԽՈՐՈՏԻԿ — գեղեցիկ, սիրուն, ազ-  
 ուոր. ծաղկանուն:  
 ԽՈՐՎՈՒ — խորտիկ, խորոված,  
 կարմրցուած միս:  
 ԽՈՅՏՈՒԿ — խիթ, որովայնի սաս-  
 տիկ ցու:  
 ԽՈՓ — արօրի կամ գութանի փայա-  
 կայ խոփտունի վրայ անցուած  
 սրածայր երկաթեայ մաս, որով  
 հողը կը հերկուի:  
 ԽՈՒԽՈՒՇԻԿ — կակուղ, թոյլ, քրք-  
 րբրած. ցօղուններէ շինուած հի-  
 զակ:  
 ԽՈՒԼ — սրբատեղիներու մէջ Սբ. Ա-  
 լեւտարանի ծառայող: Ընդհան-  
 խապէս կոյս աղջիկներ՝ ուխտեալ  
 եւ նուիրուած հաւատքով կը  
 մտնէին այդ ծառայութեան:  
 ԽՈՒԼԱՃ — 7 ոտքի չափով չափանիչ,  
 մարդահասակ, երկու թեւերու  
 բացուածքի չափ տարածութիւն:  
 ԽՈՒԿԼԻ — տհաս, անյի եւ անխմոր  
 հաց:  
 ԽՈՒՄԱՐ — շիլ, ծուռ նայուածք,  
 խոժոռ. նաեւ բախտախոզ:  
 ԽՈՒՄՐԱ — պայտը, մորթին վրայ  
 պոյապած ուռ, հիւանդութիւն:  
 ԽՈՒՆԿ — անուշահոտ ուտիւն, զոր  
 կրակի վրայ դնելով կը ծխեն Ե-  
 կեղեցիներու եւ սրբալայրերու

մէջ: Աւանդական սովորութեամբ  
 եւ հաւատքով, Շարաթ իրիկուն-  
 ները տուներու մէջ եւս կը ծխեն՝  
 մեռելներու ուրիներու այցելու-  
 թեան ի պատիւ:  
 ԽՈՒՇԿԻ — մանրուք աղբ, ոչխարի,  
 ձիու կամ որեւէ անասունի:  
 ԽՈՒՉԿՈՒՐՈՒՐԻԿ — ծաղկաչն  
 պուպրիկ, Համբարձման տօնի  
 տօնակատարութեան առթիւ կը  
 պատրաստեն:  
 ԽՈՒՊԱ — կոնձեւ տանիք:  
 ԽՈՒՌՈՒՄ — հպարտանալ, յոխոր-  
 տիլ, չունեցածը ունեցած ցուց-  
 նել:  
 ԽՈՒՓԵՆԵՐԱՆ — գաղանապահ, ան-  
 խօս, անդիտակից ձեւացնել:  
 ԽՈՒՐՁ — խոտի կամ ցորենի կապ:  
 ԽՈՒՐՏ ՈՒ ԽՈՄ — ջարգուած, փըշ-  
 րուած, ձեւուած, շատ յոգնած:  
 ԽՈՒՐՏԱ — մանր դրամ, մանրուք,  
 կտորներու ակնյուկ:  
 ԽՈՒՓ — կափարիչ, ամանի բերնդիր:  
 ԽՊԼԱ — հարաւակոցմ, Մէքքէ Մէ-  
 տինէի ուղղութիւն:  
 ԽՊԼԻԿ — պուպրիկ, խրտուիակ, զոր  
 կայի կամ դաշտի մէջ, հացահա-  
 տիկներու գէղերու վրայ կը դը-  
 նեն, թոչունները պոչապնելու  
 համար:  
 ԽՊԼԿԻ ՔՈԼՈՍ — կախարդական զօ-  
 րութեամբ պիտարի:  
 ԽՊԵԼԻ — ամշտայ, ամօթխած ըլլալ:  
 ԽՈՒԿԼԻԼ — իրար անցնիլ, սարսափել,  
 անակնկալի պալ:  
 ԽՈՒԸՄ — գերանդի, ցորեն կամ խոտ  
 հնճոց սուր պործիք:  
 ԽՈՒԹԻԿ — մանուկներու յատուկ հի-  
 ւանդութիւն, որուն հետեւանքով  
 ձայնը կը քաշուի, խօսելու անըն-  
 դունակ կը դառնայ. այդ պարա-

դային դանկը կ'ածիլեն եւ նշդրա-  
կով դանկէն արիւն կ'առնեն, ո-  
րուն՝ խորիկ գարնել անունը կու-  
տան :  
**ԽՌՌՈՒԿ** — քիչ, սակաւ, դոյզն,  
 պղտիկ, շնչին :  
**ԽՌՆՏԱՏ** — վայրի տունկ՝ թմրեցու-  
 ցիչ բնոյթով :  
**ԽՌՊԱ** — աւերակ, դերբուկ :  
**ԽՌՊԻԼ** — աւրուիլ, երեւոյթը փո-  
 խել, սխալուիլ :  
**ԽՌՏԻԼ** — խրտչիլ, յանկարծակի զա-  
 լով ցնցուիլ :  
**ԽՌՓԵԼ** — խուզել, կտրել, մկրատել :  
**ԽՍԱ** — խօսք, զրոյց, պատմուածք  
 (օր. վի՞ր խսէն կ'էնիս) :  
**ԽՍԱՆՈՒ** — բամբասող, շատախօս,  
 բան մը չարափոխելով խօսող :

**ԽՍԻԼ** — խոտեղէլէ հիւսուած փը-  
 սիաթ :  
**ԽՍՈՒՐ** — թերութիւն, պակասու-  
 թիւն, անկանոնութիւն :  
**ԽՏԽՏԻԿ** — խոխոտեցնել, ենթակային  
 մարմնոյն որոշ մասին դպելով ա-  
 կամայօրէն խնդացնել :  
**ԽՏՈՒԸՏԱԼ** — ինքն իր տեղը թեթեւ  
 չարժիլ :  
**ԽՏՈՒՏ** — դեղնադոյն ծաղիկ, որուն  
 կաթնաման հիւթը աչքի ցաւի  
 իրը դեղ կը դործածեն : Նաեւ  
 չորցուած մանր ձուկ :  
**ԽՐԽԻՐ** — փխրուն, կակուղ, փա-  
 փուկ :  
**ԽՐԽՆՋԱԼ** — վրնջել, ձիու հանած  
 ձայն :  
**ԽՐԽՆՏՈՒԿ** — զարշահոտ բոյս մը :

Մ

**ՄԱԿԱԿԱՆՋ** — հետաքրքիր, ուրիշի  
 խօսքը զաղտնի ուկնդրող, բան մը  
 հետապնդող :  
**ՄԱՂԿՈՅ** — նշանախօսութեան առթիւ  
 հանդիսութիւն :  
**ՄԱՄ** — մաղ, վարս, հեր, դէս :  
**ՄԱՄԹԵԼ** — նուրբ հիւսուած թել-  
 կապ : Մամը եւ թելը միասին հիւ-  
 սելով, ճիւղ-ճիւղ կը կապեն :  
**ՄԱՄԿՏՐՈՒԿ** — մաղերը կտրուած.  
 անէծք. սուղի նշանակ :  
**ՄԱՄՈՆ** — ձիւթ, բոյսերու կաթէն  
 պատրաստուած խէժանման ծա-

մելէք : Լուսողոյն ձիւթը կերթի  
 բսուածն է :  
**ՄԱՅԹ** — թերահաւատ, դաւանանքին  
 հանդէպ երկմտող, հաւատքի մէջ  
 պակաս :  
**ՄԱՆԾԱՂ** — սակաւաջուր տեղ, դե-  
 տին. այն կէտը, ուր ջուրը հաղիւ  
 ծունկի մը բարձրութիւնը ունի :  
**ՄԱՆԾՂԻԼ** — թեթեւալ, պակսիլ,  
 մտային խանդարում ունենալ :  
**ՄԱՌԶԱՐԳԱՐ** — Մաղկադարդի կիրա-  
 կի տօն օրը :  
**ՄԱՐԻՐ** — սեւ փոշի, ծարրաքարի  
 մուր : Պչնասէր կանայք աչքերուն

կողերը կը քսեն կամ կը քաշեն  
 զարգարելու, դեղեցկացնելու մի-  
 սուսով :  
**ՄԱՓԿԻԿ** — հողաշէն պղտիկ պու-  
 տուկ :  
**ՄԵՐՏ** — ծիրա, լիւշանի աղբ :  
**ՄԷՐՔ** — աղիւ, բուրդին առաջին  
 զգուածը :  
**ՄԻԾԵՌ** — քարմանի գլուխ, կեռ եր-  
 կաթ :  
**ՄԻԾՂԱԼ** — խնդալ, ծիծաղիլ, ժրպ-  
 տիլ, զուարթանալ :  
**ՄԻՆ** — երեսի վրայ դուրս տուած մի-  
 սի փոքր գունդ, նշան, խօյ :  
**ՄԻՐԱՏ** — թլիկ, թաթ, կակաղախօս :  
**ՄՄՄԷՐ** — սանտու, կաթնտու մայր :  
**ՄՂԿԻԿ** — ծղօտ, ցորենի կամ խոտի  
 հասկով, ծղօտով պործուած զը-  
 խարկ :  
**ՄՂՕՆ** — ծղօտ, ցորենի կամ խոտի  
 ցօղուն :  
**ՄՄԱՅ** — շուք, արեւազուրկ տեղ :  
**ՄՆԵՖԻԿ** — կանաչ բոյս մը, որուն  
 ծիւերը թէ՛ կ'ուտեն եւ թէ՛ դեղի  
 համար կը դործածեն :  
**ՄՆԵՓԻԿ** — վառեակի առաջին հաւ-  
 կիթ, փոքր եւ կակուղ կեղեւով :  
**ՄՆԾՆԱԼ** — փոքր կաթիլներով կամ  
 բշտիկներով ջուրին երեւնալը :

**ՄՈՄ** — օրական մէկ ժուճ ուտելով  
 պահեցողութիւն :  
**ՄՈՐ** — հողէ կամ փայտէ ամբարնե-  
 րու բացուածք, ծորակ : Նոր  
 հնձուած ցորենի կամ խոտի ան-  
 կապ շարք. տարածուն :  
**ՄՈՅ** — կուրծքին վրայ, բազուկնե-  
 րուն մէջտեղը :  
**ՄՈՅՈՒՈՐ** — յղի կին, երկու հոգով  
 կին :  
**ՄՈՒԱՐ** — հաւաքատեղ, խմբաւո-  
 րում, ձուկերու բոյն :  
**ՄՈՒՌ** — խենթ, յիմար, անուղիղ,  
 անհաւասար, դէժ :  
**ՄՊԵՆԻ** — ծառ մը, որուն կեղեւով ա-  
 նասուններու չորցուած մորթերը  
 կարմիր կը ներկեն :  
**ՄՊԵՂ** — փոքր դերան, մարդակ,  
 փայտ :  
**ՄՌԵՆԱԿ** — խենթի երեւոյթով, խե-  
 լապարի նման, յիմարական երե-  
 ւոյթով :  
**ՄՌԹԻԿ** — խենդուկ, ըրած-չըրածը  
 չփացող :  
**ՄՌԿՏՈՒՔ** — միմտութիւն, երեսի  
 ծոմուք, ծամածոութիւն :  
**ՄՐՊԵԼ-ՄՐԻՊ** — կիսով զոցել, կէս  
 բաց :

Կ

**ԿԱԹ** — ճերմակ եւ անուշահամ հե-  
 ղուկ, որ բոյր ստնտուններու բս-  
 տինքներէն կը քամուի : Նաեւ կա-  
 թիլ, պուտ, քիչ մը :  
**ԿԱԹՆԿԵՐ** — ծծկեր, մանուկ, երա-

խայ, տհաս, անչափահաս :  
**ԿԱԹ** կամ **ԿՈՒՂ** — լարի, շուանի կամ  
 դերձանի փաթթուածքը՝ ար-  
 մուկի չափով :  
**ԿԱԼՄԱՍ** — կալոցի ժամանակ եկած

րերքէն հանուած մաս, բաժին, նուէր:

**ԿԱՆՈՒԿԱՊ** — համբ, լալ, ալլալլած, անխօսութեան դատապարտուած, բռնուած, կտուցուած:

**ԿԱԿԱ** — շաքարեղէն, անուշեղէն:

**ԿԱԿԱԶ** — կոծղէզաւոր տունկ, գունագեղ ծաղիկով: Կ'ըսուի թէ հոլանտացիները կակաչը Հայաստանէն փոխադրած են Հոլանտա, մշակելով ունեցած են այժմու հոլանտական համբաւաւոր կակաչը:

**ԿԱԿԱՌԹ** — թռչուններու գլխու վրայի կարմրագոյն մսէ ատամնաձեւ ցցուածք:

**ԿԱԿՕՍԻԿ** — անիմատ խրատ, քարոզ, դատարկ խօսք:

**ԿԱՂՃԻՆ** — օճառային յատկութեամբ կաւ: Կիներ այս կաւով մագերանին կը լուսային, կակուղ եւ դեղեկագոյն պահելու համար:

**ԿԱՄՊԵՏ** — կանեփի հատիկ, հում կամ խարկուած:

**ԿԱՆԹ** — անկ, ունկ, կաթսայի կամ որեւէ ամանի կողմերէն բռնելիքները:

**ԿԱՆԿԱՌ** — ուտելի բոյս: Կ'ըսեն՝ Մարտի տաւր, կանկառ պաւր:

**ԿԱՆԿԻԶ** — Երկճեղ փայտ, մասահիւս հաստ չուան մը ծայրը անցուած, կապը ամբասցնելու դիւրութիւն ընծայելու համար:

**ԿԱՆՏՐԻԻ** — հօրիքի շղթային անցրուած օղակը:

**ԿԱՊԱՆ** — կերճ, անցք, լեռնային դարձակէտ, կետուկ: Խնուս դաւառի մէջ նշանաւոր էին Յաղվերանայ, Գոպալայ եւ Չեռնակայ կետուկները, որոնք դժուարանցանելի էին, աւազակարոյններ էին:

**ԿԱՊԱՆԱԿ** — թաղիքէ շինուած, երկայն, հասակի շափով վերարկու:

**ԿԱՊԱ** — աղիքներու սղոցութիւն. կապել. գիւթութեամբ բանի մը արդիւք յարուցանել: Կը հաւատային որ գիւթանքով կապս կ'ընէին հարսն ու փեսան յառազատի գիշերը՝ անոնց մերձեցումը անհնարին դարձնելով:

**ԿԱՌ** — լայն տերեւներով տունկ մը (ուտելի):

**ԿԱՍԿ** — խոչոր հատիկներով կորեկի տեսակ մը:

**ԿԱՍԿԱՐԱԿ** — կրակարանի մէջ գործածուելիք մետաղեայ եռոտանի:

**ԿԱՐԱՅ** — կրնայ, կարողանայ, տակալ, բմբռնել:

**ԿԱՐԿԱՃԱ** — Չատկուան տօնին տօթիւ պատանիներու նուէրահաւար՝ ներկուած հակիթներէ:

**ԿԱՐՊԵՏ** — կապերտ, բուրդէ հիւսուած սփոռց:

**ԿԱՒ** — խեցեղէններ շինելու մասնաւոր հող:

**ԿԱՒԸՌ** — վեցամսեայ դառնուկ, ոչխար:

**ԿԵՄ** — խոտէ կամ խոտեղէղէ հիւսուած կապ, շուան, սպարան, ցորենի, խոտի կամ որեւէ հացահատիկի խորձերը կապելու համար. ջով:

**ԿԵՌ** — փայտի ծայրը անցուած երկաթ ժանիք, որով ցորենի կամ խոտի խորձերը կը քաշեն, երբեմն ալ իրը պէնք կը դորձածեն:

**ԿԵՐ** — փտախտ, անբուժելի վէրքի հիւանդութիւն:

**ԿԵՐԹ** — ճարձրուկի նմանոց բոյս մը, որուն արմատէն եախաւ սպեղանի կը շինեն, իսկ կաթէն՝ ծամոն ձիւթ կը պատրաստեն:

**ԿԷՄ** — կայծ, կրակէն ցատկոզ վառուած վիճակով փոքր բիծ, մաս:

**ԿԷՄԱԿ** — կայծակ, կայծ, հուր, կրակ, ամպերու շփումէն գոյացած էլեքտրական հրեղէն զծով թափմունք:

**ԿԷՄՈՒԿՐԱԿ** — շարածճի, անհանգարտ, արկածախնդիր:

**ԿԷԺ**, **ԿԷՍԺ** — շէկ, շիկահեր, գեղձամ, գեղձան մազ:

**ԿԷՐ ՈՒ ՉԿԷՐ** — կար ու չկար:

**ԿԸՌ** — խոյ, յարգութիւնը խանդարուած:

**ԿԹԽԱՅ** — պինի բամակ:

**ԿԹՈՒՆ** — բնկոյզի կամ կապինի միջուկ:

**ԿԻՏՈՒԹ** — մարտի, բոյսերու թշնամի թեւաւոր միջուկ:

**ԿԻՐԻՐԱՅ** — կրիայ:

**ԿԻԻԻԻ** — թռչուն մը, երկար սրունդներով, ջուրերու վրայ սպորց:

**ԿԼԱՊԻՏՈՆ** — արծաթէ կամ ոսկիէ թել, որով հաղուտներու վրայ դարդեր կը բանին:

**ԿԼՈՐ** — սելս:

**ԿԼՈՒԼԻԿ** — մանր՝ կլորուած միսով, կամ առանց միսի՝ գունդ կերակուր (օր. միսով կլուլիկ, սուտ կլուլիկ):

**ԿԽԱԼ** — տխուր, շարացուչակ ձայն հանել. թռչունի ձայն:

**ԿԾԿՈՒԿ** — խորամանկ, նենկամիտ, խարդախ:

**ԿԾՈ** — կծել, խածնել, մանկական ատամ, փոքր սկոտայ:

**ԿՆԳՈՒՂ** — սրածայր գլխանոց, կուսակրօն հողեւորականաց գլխանոց:

**ԿՆՃԱՅ** — լուծին կողմէն քաշող, օդնող, լծակից անասուն:

**ԿՆՈՒՆՔ** — Եկեղեցական խորհուրդ,

Երախայի մկրտութիւն, քրիստոնէական կնիք:

**ԿՆՏԵԼ** — խուզել, մազը կամ բուրդը կտրել:

**ԿՆՏԼՕԶ** — գլխարաց, անմաղ գլուխ, ճաղատ կուճտ (օր. կնտլօզ գրալիս):

**ԿՆՏՈՒԻԼ** — ամիլուիլ, սափրուիլ:

**ԿՇՏՆԿԻ** — քովնաթ, կողմի վրայ:

**ԿՈԹ** — մեղելի, բռնատեղ (օր. դաւակի կոք. բախի կոք. քիակոք):

**ԿՈԼ** կամ **ԳՈԼ** — լիճ, լճակ, անհասուն ջուրի հաւաքատեղ:

**ԿՈԼՈՏ** — կանացի փոքր գլխարկ, որուն վրայ նուրբ շղթաներով ոսկի կամ արծաթ զրամապարզեր կը կախեն:

**ԿՈՒՔ** — Երբ յդի կին մը, երկու այր մարդոց կեցած տեղին մէջէն անցնի, նորածին երախան կոխք կ'ըլլայ, այսինքն՝ ոչ լեզու կ'ելլի կամ ոչ քայլու կը սկսի:

**ԿՈԿԱՆ** — կոշտ, անտաշ, անձեւ քարի կտոր, սալարածեւ խիճ. ծուռ ու մուռ ձեւնափայտ:

**ԿՈԿՈԼ** — պոչատ, աղին կտրուած, կարճ, գունտ ու կտոր:

**ԿՈԿՆՈՏ** — մանր խիճերով լեցուն տեղ, վայր:

**ԿՈՂԵԼ** — հաց թխել, Եփել:

**ԿՈՂՊԷԶ** — փականք, կղզանք:

**ԿՈՃ** — կոճղ (օր. կաղնի կոճ, կոճի կոճ, մսի կոճ):

**ԿՈՃԱԿ** — գլխարկ իրարու կապելու համար օղակին մէջ անցնելիք մետաղէ, բուստէ կամ ոսկորէ շինուած կտրակ: Նախնական ձեւով լաթի մէջ կը զնէին կտրածեւ փայտ, ոսկոր, կամ խեցեւորթի կճեպ եւ ձեւաւորելով կոճակ կը շինէին:



ԿՈՃԱՆ — կոչա, բիրտ, անձեւ քարի կտոր:

ԿՈՃԱՏ — անդոյ պիւ:

ԿՈՃՂԷՁ — աչքաճպուռ ծաղիկի արմատ, համեղ եւ ուտելի: Խըլուրդները մեծ խնամքով կոճղէր կը հաւաքեն եւ կ'ամբարեն հողին տակ իբր պաշար: Քարնանամուտին երկրագործը մեծ վարպետութեամբ այս ամբարները կը դանկ, եւ այդ մաքրուած համեղ կոճղէր կը ճաշակէ: Կոճղէր արիւր կաթի հետ խառնելով պաղպաղակ կը շինէին: Ասոր ալիւրը սալէի կ'անուանէին:

ԿՈՃՈՃԻԿ — չորցած կոճղ, բուն, արմատ, վառելիքայտ:

ԿՈՆ — մաղկ պարանաթելերով շինուած վրան:

ԿՈՆԳ — գնդակախաղ:

ԿՈՆՏ — ճաղատ, գլուխի վրայ դուրս ելած ընկոյզաձեւ ուռեցք:

ԿՈՇԿՈՒ — չորցած ցելի կարծր հողագունդ, առապար:

ԿՈՇՏ — կոպիտ, տձեւ, չորցած անձեւ փոքր հողակոյտ:

ԿՈՊԱՐ — արտի կամ հողի սահման, եզր, սինառ:

ԿՈՊՂԷՁ-ԿՈՊՂ — մատուկի արմատը զարնան եղանակին՝ մատի ձեւ ունի. աշնան կը դառնայ կոճակաձեւ եւ կը կոչուի կոպղէզ:

ԿՈՊՈՒՄՈՒՄ — կոչա, կոպիտ, անկիրթ, անտաշ:

ԿՈՊՏՈՆ — խարկուած եւ իւղը առնուած կտաւատին տակուներ, զոր ձմեռ ստեն անասուններուն կը կերցնեն պարարտացնելու համար:

ԿՈՂ-ԿՈՒՇՏ — շրջապատ, մէջք, բուրբուր:

ԿՈՒԻ — հացահատիկները կամնելէ

առաջ, անասուններու խումբ մը՝ պարանով իրարու կապուած, կալին մէջ որայի վրայ կը դառնայ հասկերը մանրելու, կամնելու գիւրութեան համար:

ԿՈՒՌՈՓ — դունդ, դէզ, գոմէշի թրեք, աղբակոյտ:

ԿՈՒՐՆԵԼ — երեսի վրայ դարձնել:

ԿՈՎՈՒՄՈՒՄ — մողէզ, խլիզ, քարաթօշ:

ԿՈՏ — չափ, հացահատիկներ չափելու համար ժողովուրդէն եւ պետութենէն սահմանուած եւ ընդունուած երկաթէ կամ փայտէ չափ: Միւրու կտոր՝ պետականէ, խի Զաղջի կտոր՝ ժողովրդականն է: Նաեւ պատեան, արտաքին կեղեւ, խկութիւն (օր. կիրիկի կտա — կրիայի պատեան):

ԿՈՏԻԿ — բաժակ, ջուր խմելու հողաշէն դաւաթ:

ԿՈՏՈՇ — եղջիւր:

ԿՈՐԴ — պինդ, կոչա. հերկուած, վարուցան չեղած եւ հանգստեան թողուած հող, արտ (օր. կորդ հող, կորդ արտ):

ԿՈՐԵԿ — դեղին՝ փոքր հատիկներով կամ հունտերով հացահատիկ: Կ'րսեն՝ ցորեմի յարտը կարկուտ զարկեց, տեղը կորեկ ցանեցին:

ԿՈՐԻ — արտի կամ բանջարանոցի մէջ ակօսներու կամ առուներու շարք:

ԿՈՒԴԱՅ — վարունդի խոշոր՝ երկայն եւ նորր տեսակը, գրեթէ անկուտի:

ԿՈՒԶՈՒԶԻԿ — կորաքամակ, կոնակը ծուռ, կուղ:

ԿՈՒԹ — կարողէք:

ԿՈՒԺ — հողէ սափոր, որով աղբիւրէն ջուր կը բերեն:

ԿՈՒԼ — ցաւ, ախա, վիշտ (օր. ի՞նչ կուլն է դպի քրդի: Կուլի կեր էդիս):

ԿՈՒԼԱՊ — թաղիք, քէչա, լմուած բուրդէ սփոսց:

ԿՈՒԼԹ — կաթիլ, սւմպ, պուտ (օր. ջուրը կուլլ-կուլլ խմէ):

ԿՈՒԿՈՒ — կլորակ թանձր հաց, որ կ'ըսուի նաեւ շոռ կուկու: Սր. Սարգիսին շոռ կուկու կ'ուտեն Շարաթ իրիկուն, աղաք եւ աղջիկներ, գիշերը երազ տեսնելու ջերմ փափաքով: Երազին մէջ մէկը միւսին ջուր տուողը, ապաղայ փեսայուն կամ հարսնցուն կ'ըլլայ:

ԿՈՒՂԲ — հողէ հորին եւ հացահատիկին մէջեւ լեցուած յարդը՝ հացահատիկները խոնաւութենէն զերծ պահելու համար:

ԿՈՒՃԻԿ — գլուխ, փոքր գլուխ (մանկական բառ):

ԿՈՒՃՈՒՐԻ — թաղնուիլ, պահուրտիլ, կլորուած ինքն իր վրայ (օր. հաւերը կուցուրեր ին):

ԿՈՒՆՏ — անիւ, միակուտը կլոր փայտէ շինուած՝ եղան սայլի համար:

ԿՈՒՆՏՈՅ — բու, գիշերային յափըտակիչ թռչուն:

ԿՈՒՆՔ — նինջ, կարճ ժամանակով բուն:

ԿՈՒՇՏ — քով, կողմ, խէչ, շուրջ, մէջք. ստամոքսը լեցուն, փորը կուչա, յաղուրդ ստացած:

ԿՈՒԹԻԿ — պարեղօտ, կապայ, վերարկու, հագուստ:

ԿՈՒՏ — հացթուխի պահուն թոնրի կողէն մոխրի մէջ ինկած խմորը եփելով հացի ձեւը: Նաեւ թռչնաղդիներու կերակուր, կեր. պետուղներու մէջի կարծր մասը:

ԿՈՒՑԲ, ԿԻՑԲ — բուռ, ափ:

ԿՈՓ — սայլի տեղներու վրայ՝ առջեւի կամ ետեւի կողմերէն յաւելեալ տախտակամաս:

ԿՊԷՐ — փակէր, բոնէր, յարմարէր, բանը տեղ առնէր:

ԿՊՁԱՆՔ — կրակ սկսելու գիւրավառ նիւթ, շոր փայտ, մացառ, ցօղուն:

ԿՈՒՂԵԼ — գուշակել, նախատեսել, նախապագումը ունենալ:

ԿՈՒՆ — երկաթէ ծանր մուրճ, որով ապառաժներ կը կտորեն, ջրաղացի քարերը կը կտանեն:

ԿՈՒԲԵԼ — կշտամբել, յանդիմանել, սաստել, գիտողութիւն ընել:

ԿՈՒՃԵԼ — հեղուկ նիւթ մը՝ ամանով կամ փսխով տեղէ մը հաւաքել:

ԿՈՒՃՈՆ — աւելցուք, մանրուք, ուտելիքի մնացորդ:

ԿՈՒՄԻԼ — չորնալ, կծկուիլ, քաշուիլ:

ԿՈՆԻ ԿՈՃ — գաճաճ տեսակի ծառի արմատ՝ շատ տոկուն. կը գործածեն վրան փայտ կտորելու, միս ձեծելու եւ տոկունութիւն պահանջող նման գործերու համար: Առածի կարգ անցած էր, կ'րսէին ձեր եւ առողջ մարդոց՝ կոնի կոն է:

ԿՈՆՃԻԿ — տակաւին չկարծրացած ոսկոր:

ԿՆՃՈՒՄՈՒՄ — դժուարալուծելի, անբակտիլի դարձած:

ԿՈՆՆՈՒՄ — չորցած, այրուցքէ կըրկուած, ձեւը փոխած, ձերացած:

ԿՈՒՍԹ — ցորենի, գարիի եւ կամ որեւէ հացահատիկի հասած հասկ:

ԿՈՒՍՇՏ — կուչա, յաղեցած, դոճ, լաւ անանած:

ԿՈՒՁԱԼ — մէկուն վրայ սիրտը ելլել, բարկանալ, վայրանալ:

**ԿՈՓ** — ցօղունաւոր միատունկ մը, կը բուսնի ճախճախուտ տեղեր: Գլուխը ցուցամատի մը հաստութիւնը եւ երկայնութիւնը ունի. հիւսուածքը բամպականման է, եւ կը թուի թէ բուսն ճնշումով հիւսուածքը իրարու փակցուած բլլայ: Հափաղանց զգուշ էին, որ անոր հիւսուածքէն ախանջի մէջ չմտնէ. նախապաշարուած էին որ ախանջը կը խուլցնէ: Ձէթի մէջ թաթխելով, ձմեռ տանն, հարսանիքներու եւ ուրախութեանց հրափառութեան կը գործածէին:

**ԿՍԿՈՒԾ** — լաւ եփուած՝ վրան փոքրիկ բծախնկերով թարմ հաց:

**ԿՏԷ-ԿՏԷ** — այծը կամ ուլը կանչելու տանն արուած ձայն:

**ԿՏՈՏՈՒԻԼ** — ինքն իր վրայ փաթթուել, ոլորուել (օր. օձը կտտուուել է):

**ԿՏՈՒՐՍ** — աչքի ակնազրիւրի կողմերը հաւաքուած աղտեղութիւն:

**ԿՐԿՁԱԼ** — կարկաջել:

**ԿՐՈՐ** — գորտի ձայ, կերպարանափոխուել անառջ (նախնական վիճակը):

**ԿՐՏԱՆ** — ամբարշտած գոմէջ, կամ ամբարշտած որեւէ անասուն:

**ԿՐՏԵԼ** — ամբարշտել, կրտած, ներքինի, մալել:

**ԿՅՈ** — արիկունք ժամանցի խաղ:

Հ

**ՀԱԳՐՈՒՎՈՒԿ** — դուրանի կամ արօրի շղթայի ժանիքաւոր ծայրը:

**ՀԱԶԱՐԹԵՐԹԻԿ** — անասուններու ստամոքսի վարի մասը, կամ երրորդ ստամոքսը:

**ՀԱԼԱՀՈՒՇՏ** — խրտչեցնել, փախցընել:

**ՀԱԼԱԻ** — հազուատ, բնդհանուր առումով հանդերձ. զգեստ:

**ՀԱԼՈՒՈՐ** — ալեւոր, ծեր, տարեց:

**ՀԱԼՎԱ** — խորխոխ. խզով, մեղրով կամ շաքարով խաբկուած ալիւր, խաւիժ (համեղ եւ սննդարար ուտելիք):

**ՀԱՂՈՂ** — խաղող:

**ՀԱՄԱՅԻԼ** — հմայակ, զիւթական զեր:

**ՀԱՄԲԱ** — նշանաւոր անձ, անուանի մարդ, զիւրի կամ գաւառի մէջ մեծաւոր:

**ՀԱՄԲԱԿ** — տղէտ, ինքնահաւան, խաբերայ, կեղծ: (Շատ նմանութիւն ունի անգլերէն humbug (կրմպրկ) բառին նշումին եւ իմաստին հետ):

**ՀԱՅԵՆԱԿ** — հայկական, հայերէն ուձով, հայկական սովորութիւնով:

**ՀԱՆԱՔ** — կատակ, զուարճախօսութիւն:

**ՀԱՆԳ** — շունչ առնել, հանգչել, կազդուրուել. անգամ:

**ՀԱՆԳՍՏԳՆԱՅ** — գերեզմանատունը չհասած զապաղը զնելու հանգըստաւայր, ուր մասնաւոր

կարդ կը կատարուի, եւ «Մերձեցայ ի դուռն գերեզմանի» շարականը կ'երգեն:

**ՀԱՆԴՐՏԻԼ** — հանդարտել, հանգչել, կազդուրուել:

**ՀԱՆԿՈՒՇՏ** — հանգուց, զժուար քակտելի կապուածք:

**ՀԱՆԿՈՒՇՏԵԼ** — հանգուցել, կապել, կնճոտել, քակելը զժուարացնել:

**ՀԱՊԼՊԱՆ** — պարերգի տեսակի անուն, որակում:

**ՀԱՊՈՒԿԱ** — երկու բաժանումով հիւսուած պարկ:

**ՀԱՍՐԱԹ** — կարօտ, փափաք. նաեւ յատուկ անուն:

**ՀԱՏԻԿ** — խաչուած ցորեն, սիսեռ:

**ՀԱՐԻ** — միջուկ (օր. հարի ե՞րբ, հարի ո՞ր):

**ՀԱՐԻԳ** — համաճարակ, հարբուխ, պաղատութիւն:

**ՀԱԻԹԱԹ** — հաւր թառելու տեղ, կախուած փայտ կամ ձող:

**ՀԱԻԿԻԹ** — ձու, հաւու կամ որեւէ թռչնապղի ձու:

**ՀԱԻԿՈՒՐ** — արեւմուտէն ետք տեսողութեան կորուստ: Այս արկարուութիւնը Մեծ Պահոց բնթացքին՝ խիստ պահեցողներուն՝ ծերերուն կամ մանուկներուն վրայ կը տեսնուի:

**ՀԱԻՆԻՆՁ** — ննջել, հաւի մը քնանալու չափով կարճ քնանալ:

**ՀԱԻՔ** — հաւեղէն, թռչնապղի (օր. հաւի մի քուս յերկնուց):

**ՀԱՓ** — արագ շարժում (օր. հափ կերտ, հափ քուս):

**ՀԱՓՍԱՐ** — հաւասար, արդար բաժանում:

**ՀԵՄԿԱՆ** — հեղեղու յարմար անասուն, ձի, ջորի, էջ, եզ, գոմէջ: (Կ'ուսուի հեծկան է, լծկան չէ):

**ՀԵԿՈ** — ոխ, քէն, սխալալութիւն,

հակառակութիւն (օր. հեկո է կապի):

**ՀԵՂ** — անգամ, տանն (հեղ-հեղ — տաննը անգամ մը):

**ՀԵՊՐԻԿ** — ոչխարի բուրդը խուզելու յատուկ մկրատ:

**ՀԵՐԱՆՆԱԿԱՆ** — ամուսնական գործի մէջ միջնորդ, բարեխօս, գործակատար:

**ՀԵՐԻՇՏԱ, ՌՇՏԱ** — ցորեն ալիւրի խմոր՝ շերտաւոր կտրուած, չորցուած արեւի տակ, ապա խարկուած, որմէ կերակուր կը պատրաստեն:

**ՀԵՐԿ** — արօրով կամ գութանով վարուած հող:

**ՀԵՐԿԱԼ** — վարսակապ, ծամկապ, մետաղէ երկճիւղ ծամկապ:

**ՀԵՐՈՆ** — հերիւն, պողպատէ սրածայր գործիք (կօշկակարներու յատուկ):

**ՀԵՐՈՒ** — անցնող տարի նախանցեալ տարի:

**ՀԵՐՈՒԸՆԵԿ** — մէկ տարեկան երինջ, արջառ:

**ՀԵՐՏԿՈՒԻԼ** — հեռացուել, վաճառուել, քուլել, փտարուել:

**ՀԵՅ** — մաս, բաժին, կտոր, մարմնի անգամներէն մաս:

**ՀԷՆՔ, ՀԷՆԵԼ** — ջուլհակի հորի մէջ կապուած գործուելիք թելերու առաջին շարք:

**ՀԷՐ** — հայր (օր. հէրն անիծած, գէշ մարդ էր):

**ՀԸՅՊՈՒԿ** — խնայ, թեթեամիտ, կապէն փախած, յիմար:

**ՀԸՆԹՐԻՔ** — բնթրիք, իրիկուան ձայ:

**ՀԸՏԳԱՀՈՒՆ** — որուչեալ ժամուն, ժամանակին:

**ՀԸՐՈՐ** — արօր, հողը մշակելու գործիք:

**ՀԻՆԱՅ** — մազեր և եղունգներ ներկող գեղին դոյնով փոշի. հարսանեաց հանդիսութեան ատեն՝ հարսի, փեսայի և հարսնեւորներու ձեռքերը հինայով կը ներկեն. տարիքաւոր կանայք մազերը անով կը ներկեն, թէ՛ մազին դոյնը փոխելու և թէ՛ նախազիլէ գերծ մրնայու կանխազգուշութեամբ:

**ՀԻՏՐԱՅ** — միաթին, մէկտեղ, անբաժան, իրարու հետ:

**ՀԼՂԱԹ** — նուէր, պարգև:

**ՀԼՆԿԵԼ** — ձգելու գիտամով հրել, հրմշտկել:

**ՀԼՈՆՏԵԼ** — հոնտել, հրել, կողմ քշել:

**ՀԼՈՒՆ** — յուլունք, ուլունք, մարգրիտ:

**ՀԼՔԱԼ** — հեւալ, շնչասպառիլ:

**ՀՄԱԼ** — այդպէս, ատոր նման (օր. Երմալ բան կ'եղնի՞ — այդպէս բան կ'ըլլա՞յ):

**ՀՄԱՅ** — այսպէս, ատոր նման:

**ՀՄԿԱՅ** — հիմա, այժմ:

**ՀՆԳՈ** — սխալալուծիւն, գաղտնի թշնամութիւն, սխ, դաւադրութիւն:

**ՀՆԴՍԱՆ** — Հնդկաստան:

**ՀՇՈՇ** — անդամալոյծ, թափթփուն, արդահատելի:

**ՀՇՈՇԻԼ** — թուխալ, ծուլանալ, անշարժութեան գատապարտուիլ:

**ՀՈԼՔ** — հիւզ, հիւզակ:

**ՀՈՂԻ ՀՈՏ** — հող-կուէ շինուած անկաւոր աման, մէջը բարակ հող կը տաքցնեն՝ մանկիկներու տակը գնելու համար, որ չոր մնայ:

**ՀՈՇ** — էշ, աւանակ:

**ՀՈՉ** — գնդակխաղի ժամանակ որոշեալ նպատակակտր:

**ՀՈՌՈՎԼԷԼ** — մշակի Երզ, դաշտային աշխատանքի պահուն ընդհանրա-

պէս աւելի շատ կ'երգեն, արտը վարած ատեն, մասկալը և հօտադր խօսքը Եղան ուղղելով կ'երգեն «ղէ քաշեցէք սիրուն եզներ, յառաջ տարէք արօր»:

**ՀՈՍՆԱԾ** — հասունցած, արուած, **ՀՈՎՆԵԼ** — բարեխառնել, զովացնել, պաղեցնել:

**ՀՈՏԿԱԼ** — փայտակտոր, որով բրուտը կը վերցնէ հողաշէն ամանը զրգանէն:

**ՀՈՐԹՐԱՐԾ** — հորթերը արածեցնող:

**ՀՈՒ ՀՈՒ** — բնաւ, Երբեք, ամենեւին:

**ՀՈՒՃԸՔ** — լայն թևերով շապիկներու թևկապ:

**ՀՈՒՆ** — անցք, ջուրը ծանծաղ եղած կէտ:

**ՀՈՒՇՈՅՔ** — հայհոյանք, բամբասանք, յիշոցք, կրօնի Սրբոց կամ ուել մէկուն զէմ շարախօսութիւն:

**ՀՈՒՍ** — ձիւնաղէզ: Գարնանամուտին՝ լեռնանցքները ձիւնի դէզբու փլուզումներ տեղի կ'ունենան, Երբեմն մարդկային և անասուններու զոհեր խլելով:

**ՀՈՒՍԱԿ** կամ **ՀՈՒՍՏԱԿ** — մաղի հիւսք, հիւսուած ծամի ճիւղ:

**ՀՈՒՐ ՀՐԱՆ** — փառլոուն, փողփողուն, լուսափայլ:

**ՀՉՈՒԿ** — Երկճիւղ փայտ, պարանի ծայրը կը կապեն, բևր կապելու համար. պարանը Երբ ծայրին կը հասնի՝ կ'ամբացնեն այդ փայտին:

**ՀՊԱՆ** — մախաղ, կաշիկ պարկ (հօփիւներ կը գործածեն):

**ՀՌՄՈՒԿ** — եղկելի վիճակ, թոշնած, քրքրած, ձերայած:

**ՀՌՇԿԵԼ** — գիտումնաւոր կերպով մէկուն վրայ ջուր թափել:

**ՀՌԶՈ** — ասոյց, կայտառ, արջի Երևոյթ:

**ՀՌՓՈՅ** — դոփիւն, յանկարծական ազմուկ, զղրդիւն:

**ՀՐԱՄԳԱՅ** — յետ միջօրէի փոքր ճաշի ժամանակ:

**ՀՐԻ ՕՐ** — մինչև իսկ, նոյնիսկ:

**ՀՐՇՏԱԿ** — հրեշտակ, մարդէն դերագանց մաքուր Երկնային ուղի:

**ՀՕՂԲԷՐ** կամ **ՀՕՐՕՂԲԷՐ** — հօրեղբայր:

**ՀՕՂԲԵՐԿԻՆ** — հօրեղբոր կին:

**ՀՕՏԱՂ** — սրտանի Երկրագործ, որ արօրի հօրեքի Եղները կը վարէ, և կամ լուծքի Եղները կ'արածեցնէ:

**ՀՕՐԻԳԻԼ** — տարի, մեծ պահոց կէսին պատրաստուած բազարջ հաց:

**ՀՕՐԻՔ** — արօրի կամ գութանի լուծ: Արօրը մէկ տուն լուծ կ'ունենայ, մինչ գութանը մինչև ութ տուն լուծ կ'ունենայ:

**ՀՕՐՔՈՒՐ** — հօրաքոյր:

Չ

**ՉԱԳ** — որդի, գաւակ: Հաւասարապէս կը գործածուի մարդոց, անասուններու և թռչնազգիներու նկատմամբ:

**ՉԱԳԱՌ** — կոնաձև անօթ, վարի կողմէն փոքր խողովակով մը աւարտած: Հեղուկ մը ամանէ մը ուրիշ աման մը փոխանցելու ատեն կը գործածեն:

**ՉԱՆԾՂՈՒԿ** — մտամոլոր, ցրուած, անկապ արտաբարձութիւն, ցրնդած, անհաստատ միտք:

**ՉԱՐ** — ձիու աղիի մաղ. ոչխարի կամ այծի մորթէն քաշուած և չորցուած բարակ կաշեթել, որով մաղ կը հիւսեն:

**ՉԱՒԱՐ** — հում ցորենի հատիկէ պատրաստուած՝ կեղևը հանուած կորկոտ:

**ՉԱՒՈՏԵԼ** — մեծ խօսիլ, շատախօ-

սել, զրպարտել, անխելք խօսիլ:

**ՉԱՒԲԵԼ** — անիմաստ խօսիլ, պոռոտախօսել, զրախօսել:

**ՉԵԻՆԵԼ** — ճեղքել, Երկու մասի բաժնել, իրարմէ զատել:

**ՉԵԻԻՉ** — արօրի խփին սրածայր մասը:

**ՉԷԹ** — խարկուած կտաւառէն քամուած իւղ:

**ՉԻ** — չորբոտանի բնտանի կենդանի: Անյիշատակ ժամանակէ իվեր մարդուն ծանօթ, հեծնելու համար կը պահեն: Մեր գաւառին մէջ նշանաւոր էին Բէկլան, նազէ տեսակի նշանաւոր Երիփարները, զորս մեր սրտամաղիբները կը յիշատակեն:

**ՉԻԱՒՈՐ** — ձի հեծնոց, այր ու ձի:

**ՉԻԹՂԱՅ** — ձիթհանք, տեղը կամ շէնքը ուր կտաւատը կը խարկուի

և ԶԷթը հանելու կամ քամելու գործողութիւնը տեղի կ'ունենայ:  
**ՉԿԵՆՈՒԼ** — ջրեղերքները սպրոզ խոչոր և տարազնայ թուշուն մը:  
**ՉՉՈՒՄ** — խնայի. մամուներ հարող հողէ կամ փայտէ աման:  
**ՉՄԷԹ** — աչքի հիւանդութիւն: Չմեւ ատեն արեւին ճառագայթներուն ցոլացումը ձիւնի վրայ՝ կը պատճառէ աչքի այս հիւանդութիւնը:  
**ՉՄՈՒՄԵՑ** — երկարատեւ ձմեռ: Երբ ձիւնհալքը կը յամենայ, և գարունը կ'ուշանայ, ձմեռեմն է նստել կ'ըսէին:  
**ՉՆՋՐԻԿ** — ջուրի ձայն. ձիւնհալքէն գոյացած ջուրերու մասնայատուկ ձայն:

**ՉՈՐ** — լեռներու կամ բլուրներու միջև բացուած քր, խոր կամ ցած տեղը:  
**ՉՈՐՉ** — բուրձի հին կտորներու գունդ:  
**ՉՈՒՍՑԵՂ** — իւրով տապկուած հասկիթ:  
**ՉՈՒԹ** — ձիւթ, ծաման, ծամելու համար տունկերու կաթէն պատրաստուած խէժանման փոքր կըրտրածեւ գունդ: Մանօթ էին կերքի ձուր, կանկրի ձուր և ուրիշ տեսակներ:  
**ՉՈՒՆ** — ձիւն, Լրկինքէն տեղացող ստոած ջուր:  
**ՉՐԹԵՆԻ** — մշտադալար փշոտ տունկ մը:

Ղ

**ՂԱՐԻՊ** — օտար. պանդուխտ:  
**ՂՈՒՆԿ** — եղունգ:

**ՂՈՐԴ** կամ **ՕՂՈՐԴ** — ստոյգ, շէտակ, իրաւ, ճշմարիտ:

Ղ

**ՃԱԿ** — էգ ձի, խորախ ձի:  
**ՃԱԿԵՂԿԱՊ** — լաթ՝ զոր կանայք կը կապեն ճակատին:  
**ՃԱՂ** — կողոտկը. հիւսելու փոքր,

բարակ երկաթ կամ փայտ (գուլպայի ֆաղ):  
**ՃԱՂՏԵԼ** — սուր ցաւ մը զգալ (օր. սիրտս ֆաղտեց, փոքս ֆաղտեց):

**ՃԱՄԱՃՈՒԵԼ** — ճոռոմարանել, երեւոյթները չափազանցել:  
**ՃԱՄՊՐՈՒԿ** — պայտասի, մախազ, տապրակ (քարքի, հապուկա):  
**ՃԱՆ** — վէյ, ոչխարի ետեւի սաքի սրունքի գուրս ցցուած ոսկոր:  
**ՃԱՍՎ** պատանիները խաղ կը խաղան, իսկ խաղամոլները՝ բախտախաղ:  
**ՃԱՆԿ** — ափ, լուփ, բուս, կուց:  
**ՃԱՌՃՈՒՈՒԿ** — տունկ մը:  
**ՃԱՌՏՈՒ** — ժայռ, ապտած, գնար, խոչոր քար:  
**ՃԱՐՆԿԱՆ** — մուրացկան, սղորմութիւն հայցող, ալքատ:  
**ՃԱՐՏԱՐ** — վարպետ, հնարամիտ, ուշիմ, խելացի:  
**ՃԱՐՕԵՔ** — մուրալ:  
**ՃԱԻԿ** — ճակնդեղի ծիրը և շուրջի տերեւներու կանաչ մասը:  
**ՃԵՆՋ** — կերակուրի երեսի ջրախորն իւղ, կամ ամանի տակը մնացած իւղ:  
**ՃԵՌՕՔ** — կատակ, սրախօսութիւն:  
**ՃԵՏ** — աքաղաղ, աքլոր:  
**ՃԵԻԱԼ** — վար վազել, քիթը կամ յորձունքը անհաճելի կերպով գէժքին վրայ երեւնալ ու վար վազել:  
**ՃՉՏԱՆ** — դրամապանակ՝ կաշիէ շինուած:  
**ՃՐՄ-ՃՐՄ** — ճախճախուտ:  
**ՃՐԻԱԼ** — ճշալ, աղաղակել, վախով պոռալ:  
**ՃՐԻԵԼ** — թեթեւ կերպով կտորել, ճեղգել:  
**ՃՐՓ** — ձախ, ձախլիկ:  
**ՃԹԻԿ** — առանց ներքանի թեթեւ կօշիկ:  
**ՃԹՆԻԿ** — սլարի ընթացքին՝ բխամատի և միջնեմատի իրար շփուելով գոյացուած ներդաշնակ եղանակաւորուած ձայն:

**ՃԻԹ** — մանուկ, կաթնիկ փոքրիկ երախայ:  
**ՃԻԼ** — եղեգանման խոտ, սրմէ փրփաթ կը պատրաստեն:  
**ՃԻԿ** — մանկական խաղ: Պահուրտելով՝ յանկարծ կը յայտնուին և կը ձայնեն նիկ, նիկ, նիկ:  
**ՃԻՃԵՆԻԿ** — փայտն, չոզոցուն, գեղեցիկ:  
**ՃԻՃԼԽՅՆԵԼ** — գիտամշակուր կերպով բան մը ցուցնել: Գիմացինը նեղացնելու կամ նախանձելու համար բաներ ցուցադրել:  
**ՃԻՃՈՒ** — ճճի, սրգ, միջատ:  
**ՃԻՏԿԵԼԼ** — հարստանայ, գոռոգանայ, ինքզինք շատ բանզէտ ցոյց տալ:  
**ՃԻՄ** — սեղուտ, սցմուտ կակուղ հող:  
**ՃԻՐԱԼ** — կաթիլթիլ, հեղուկի մը բարակ վազելը (օր. քիթը կը թիրայ):  
**ՃԻՐԱՆ** — ծիրանի չորը:  
**ՃԻՐԵԼ** — քամել, վերջին կաթիլը վազցնել:  
**ՃԻԻ** — ոտք:  
**ՃԼԸՔ** — ազահ, անկուշտ:  
**ՃԼՈՒԹ** — ապտակ, բաց ափով երեսին տրուած հարուած:  
**ՃԼՈՒԸԼԱԼ** — գեղեցիկ, ուրախութեամբ արտայայտուիլ, երգել:  
**ՃԼԱՆ** — ծինի. գրան ստորին մասը, սրուն վրայ գուրս կը բացուի:  
**ՃԼՂԵԼ** — սեղմել, բանի մը գորութիւն տալով ոյժ գործածել:  
**ՃԿԵԹԽԱՂ** — կանայք ձեռքերուն ճրկոյթ մասները իրարու անցուցած կը պարենայ պարը կ'անուանեն նկերխաղ:  
**ՃՂԼԱԿ** — փայտէ փրցուած մասնիկ մը, ճիւղ մը, շիւղ մը:

**ՃՂՈՐ** — սլարաններով կապուած սիւնէ-սիւն, կամ սլատէ-սլատ առկախ ճօճող օրօրոց: Մանուկները մէջը դնելով կ'օրօրեն:

**ՃՂՏԵԼ** — ճեղքել, երկուքի բաժնել:

**ՃՄԼՏԿԱԼ** — կտորտուիլ, յոյնութենէ կամ քունէ նոր արթննալով մարմինը ձեքձեքել, սթափելու կամ կազդուրուելու համար:

**ՃՄՈՒՌ** — կերակուր մը, պատրաստուած կորեկէ կամ ցորեն հացէ, իւզով եւ մեղրով թաթախուն:

**ՃՄՈՒՆԷԼ** — ձեռքերով սեղմել, ճմլել, քամել:

**ՃՄՌՈՒԿ** — աչքի ցաւ, ամառ ատեններ միշտ կ'ըլլայ, փոշիի եւ յարդի մանրուքի հետեւանքով: Վարակիչ է:

**Ճնթիկ** — աղաս աղջիկներու զլխակապի ձեւ մը:

**Ճնթկոց** — ձայն, շարժում, շշուէ:

**ՃնճՂՈՒԿ** — ճնճղուկ, թռչուն:

**ՃնՈՒՎԱԶ** — մանկական խաղի անուն:

**ՃնՏՐԻԿ** — մաքուր, յստակ, փայլուն, սիրուն (օր. ննաքիկ ոսկի):

**ՃՈԹ** — ծայր, բանի մը վերջատուութիւն, հիւսուածեղէն կտոր:

**ՃՈԿԱՆ** — մական, դաւադան, ձեռքնփայտ:

**ՃՈՂԻԼ** — աղեթափութիւն:

**ՃՈՃ** — լծակ:

**ՃՈՃՕՔ** — մատղաշ, երախայ, փոքրիկ:

**ՃՈՆՃՈՂ** — թոյլ, առկախ:

**ՃՈՇՔ** — բամբասանք, ուրիշի մը ետեւէն խօսիլ, բամբասել:

**ՃՈՌ** — ծուռ, ծոած, ձեւը փոխած (օր. նոռ քերան, նոռ մոսք):

**ՃՈՌԹԵԼ** — վիճակը փոխել, տղեղ երեւոյթ տալ, չափազանցել:

**ՃՈՒԳ** — զոյլ, երկու վէղերու համանման կեցուածքը, յաջող երեւոյթը:

**ՃՈՒԸՌՏԱԼ** — ուրախանալ, հրճուել, խայտալ:

**ՃՈՒԹ** — խաղողի ողկոյլ:

**ՃՈՒՌ** — ոտքի զնդերէն սկսեալ մինչեւ դարչապար հասնող մասը:

**ՃՈՒՏ** — հաւկիթէն նոր ելած հաւու ձագ:

**ՃՈՒԱԼ** — ճանչել, անախորժ ձայն հանել (օր. սէլը կը նոայ, դուռը կը նոայ):

**ՃՈՒՔԱՂ** — երկրորդ քաղուածք:

**ՃՈՒԱՆ** — կաթնտու անասուն (օր. էլ ի՞նչ կ'ուզես — հաւ մի գորան, կով մի նոքան):

**ՃՈՒԿ** — մշտահոս, յարափայլ:

**ՃՈՆԻԿ** — ոտքը հակասակորդի ոտքին անցնելով զայն զգետնելու փորձ:

**ՃՈՓԵԼ** — քաշել, փրցնել, դոփել:

**ՃՏԵԼ** — աչքը կխաղոցելով նայիլ, բացխուփ նայուածք:

**ՃՐԱԳ** — կանթեղ լամբար, հողէ կամ թիթեղ շինուած ափածեւ անոթ, որուն ծայրը կտցածեւ է, մէջը ձէթ կը լեցնեն եւ բամպակէ պատրոյց կը դնեն՝ վառելով լուսատուութիւն տալու համար:

**ՃՐԱԳԿԱԼ** — փայտէ կամ քարէ սիւնի վրայ ամբարցուած ընկալուչ, ուր կը դրուի ձէթի ճրագը:

**ՃՐԱԳՈՒ** — մսի վրայէն առնուած իւղ, կամ ոչխարի դմակի իւղ: Հալելէն ետք պաղած վիճակովը ճրագու կ'ըսուի:

Մ

**ՄԱԳՈԳ** — կկոց, ջուլհակի գործիք:

**ՄԱԶՊԱԹԱ** — հանրադրութիւն, բողոքալիբ՝ համայնքի մը կողմէ տրուած:

**ՄԱԹԻԼ** — մանր ոջիլ, անիծ:

**ՄԱԹ-ՄԱԹ** — պիշ-պիշ նայիլ, զարմացական նայուածք:

**ՄԱԹՐԱԹ** — կերակուրի համար գործածելի խեղեցէն աման, խոշոր քասայ:

**ՄԱԺԵԼ** — թեթեւակի շփել, շոյել: Փաղաքական սիրով, մանուկներու զլուիլը շոյել:

**ՄԱԼ** — անասուն, ամբարցուած ոչխար:

**ՄԱԼԱ** — թիթեղէ կամ փայտէ ձեռածեւ գործիք, զոր որմաղիքները կը գործածեն պատերը ձեփելու համար:

**ՄԱԼԱՂՄԱ** — հացահատիկներուն՝ ցորեն կամ գարի՝ յարգէն չգատուած վիճակը, որ անասուններուն, մասնաւորապէս ձիերուն սիրելի կերն է:

**ՄԱԼՈՆ** — սպատածեւ փոքրիկ փայտ մը, որ փոկի երկու ծայրերը կը կտայէ լուծին:

**ՄԱԼՈՒԼ** — տխուր, տրտում, վշտաբեկ, սրտաբեկ:

**ՄԱՆԱԹ** — ասեղի խոշոր տեսակը, որով հակերու կամ պարկերու բերանները կը կարեն:

**ՄԱՆՈՆ** — ձուարով եւ թթուած թանով եփուած թանձր թանապուր:

**ՄԱՄՈՒՆ** — մակարդով կամ խախացով թանձրացուած, սնդագուած կաթ:

**ՄԱԿԱՐԳ** — խախաց, կաթը խմորե-

լով թանձրացնող նիւթ, որ իբր թէ կաթնիկը գառի կամ հորթի խախացոցէն քերելով հանուած է: Խախացոց՝ որսնացող կենդանիներու շորերը ստամոքսն է, կամ ինչպէս մենք սովոր էինք ըսել հազար քերթիկ: Իբրեւ մակարդ կը գործածէին նաեւ դեղքափ քարը: Մակարդին կ'ըսէին նաեւ մայա:

**ՄԱԿՐԳՆՈՅ** — մածուն պատրաստելու տեղ, անկիւն:

**ՄԱՂ** — հացահատիկներ մաղելով մաքրելու գործիք: Տեսակներով եւ մասնաւոր անուններով կ'ըլլան: Կողերը փայտ կամ եղեգէ, նոյնիսկ թիթեղէ. յատակը լարէ կամ ձարէ: Մաղի տեսակներ են — սառատ, քարմաղ, ձարեմաղ, փոկեմաղ, ալրիմաղ կամ շարմաղ:

**ՄԱՂ-ՄԱՂ** — բարակ, հանգելու հասած կրակ:

**ՄԱՃ** — արօրին բռնատեղը:

**ՄԱՃԿԱԼ** — արօրին բռնատեղը՝ մաճը բռնող, ուղղութիւնը պահելու հողը փարող, հերկող անձ:

**ՄԱՄՇԻԼ** — խոնաութենէ բորբոսիլ:

**ՄԱՄՈՒՌ** — կանաչութիւն, որ կը բռնէ ծառի կոճկերուն կամ քարերու երեսին վրայ:

**ՄԱՅԻԼ** — հիանալ, զմայլել:

**ՄԱՆ** — հում կաթի երեսը բռնած սեր:

**ՄԱՆԳԻԼ** — սրմաթելով բանուած ծաղկաւոր թաշկինակ:

**ՄԱՆԿԵՌ** — երկրագործի գործիք՝ մատնածեւ, որ կը ծառայէ հեր-

կուսած հողի կոչանքը փչրելու և հարթելու :

**ՄԱՆԿԻՉՈՆ** — մանուկ, սրեւէ բուսականութիւն հնձելու համար երկրագործի գործիք, հօտոց :

**ՄԱՆԿՈՒՌ** — փայտէ կտրածեւ օղ, հորթերու պարանոցը կը կապեն և անոր կ'անցընեն կապը :

**ՄԱՆՏԱԿ** — մատի թանձրութեամբ տնկարոյս մը, հոտանոյշ և ուտելի :

**ՄԱՆՏՐ** — մանր, փոքր, պոտիկ :

**ՄԱՇԱ** — ունելի, բոնելու գործիք :

**ՄԱՇԿԻԿ** — հաւի ոտքի կաշիէն կամ մաշկէն խաղաղորդելով պատրաստուած փոքրիկ պարկ, որուն մէջ կը պահէին աչքի ծարբերը, կամ ինչպէս սոյնը էին բսելու քուլս դեղը :

**ՄԱՌԱՆ** — շտեմարան, ամբարանոց, ուտեստեղէնի և գինիի պահեստատուն :

**ՄԱՌՆԵԼ** — սայլակի անիւները երկաթ օղերով շրջապատել. դօղել :

**ՄԱՍ** — բաժին, կտոր, մասնիկ : Նաև Եկեղեցիի մէջ բաշխուած օրհնուած անխմոր հաց, բանձրարի :

**Մաշկ** պատրաստուած թեթև կօշիկ (փողաւոր), նման կարծ գուլպայի :

**ՄԱՍՈՒՐ** — փայրի փարդենիի պտուղ (կոճակաձև, ուտելի) :

**ՄԱՏԱԿ** — կգ, իրական (օր. մատակ ձի, մատակ գովեշ, մատակ առիւծ) :

**ՄԱՏԻ ՇՈՒՆՉ** — մատի ծայրը և գունդի և մօի մէջ գոյացող վէրք : Կը թարախոտի, կոտորացող ցուտի. Երբեմն պատճառ կ'ըլլայ Եգունդին կորսուելուն : Տնային բժշկութեան մէջ գարմանըն կը հակեթի դեղնուց և մե-

գրը իրարու խօսնելով մըլիամ սպեղանի կը շինէին. վէրքին վերայ գնելով ապօթք մըն ալ կը կարգային և վէրքը կ'աղէկնար : Հիւանդութեան նախնական շրջանին Երինջ կօվու կաթը տաք-ցրնելով՝ մատը զիմանալու շափ՝ մէջը կը գնէին : Այս գործողութիւնը կրկնելով՝ առանց վէրք բացուելու՝ կ'աղէկնար :

**ՄԱՏՆԻՔ** — մատանի, մատին գրուելիք օղակ, մատնի, կնիք :

**ՄԱՏՈՒԿ** — մատնաձև արմատով բոյս մը (ուտելի) :

**ՄԱՏՈՒՏԱԿ** — բուժիչ յատկութիւնով անկարոյս մը, որուն արմատէն կը պատրաստեն օշարակ :

**ՄԱՏՈՒՐ** — կոյր, լուսապուրկ, տեսողութենէ զուրկ :

**ՄԱՐԱԳ** — խոտի և յարդի ամբար :

**ՄԱՐԱԼ** — փայրի ոչխար, Եզնիկ :

**ՄԱՐԱՆ** — սայլի փայտէ անիւ, կունտ :

**ՄԱՐՄԱՆԴ** — հանդարտ, խաղաղ, հանդիստ :

**ՄԱՐՍ** — նարաի խաղի մէջ՝ զոյգ թիւով շահիլ :

**ՄԱՔԻ** — կգ ոչխար :

**ՄԳԼԿԻԼ** — թուրպ ամպ, անձրեւելու Երևույթը զգացնող ծանր ամպ :

**ՄԳԼՈՏ** — հոտած, աւրուած, բորբոսած, նեխած :

**ՄԳՆԱՅ** — ջրուտքի տուն՝ դանդաղ և ցրուած հոտանքով ջուրը արտի կամ հողի վրայ կապել :

**ՄԵՉԱՐ** — բուրդէ թելով հիւսուած գոգնոց. նաև բուրդէ կամ մազէ թելերէ հիւսուած բերու մեղաք, որուն մէջ կաթի կուժը կամ բլղկը փաթթած, շայակով տուն կը ամանին բէր տեղէն :

**ՄԵՇԱՐԵՆՑ** — մեծի խօսք, իմաս-

տուն ասացուածք, նախնեաց պատուէր :

**ՄԵՂԴՐԵԼ** — մեղադրել, մեղապարտ համարել, յանցաւոր նկատել :

**ՄԵՂՈՆ** — մեղու :

**ՄԵՂՕՔ** — Եկեղեցիի օրինաց ղէմ, մեղք. արդիւեայ, ապօրէն խնամիութիւն :

**ՄՁԵՂ** — սրածայր փայտի կտոր, ճղակ :

**ՄԷԿՏԱԿ** — առանց ծայրի (օր. մէկ-տակ հարս է — այսինքն քօղով հարս է) :

**ՄԸԺ-ՄՈՒԺ** — մէկ, մշուշ :

**ՄԹՈՒԻԼ** — տխրիլ, Երևս կախել, խոժտիլ :

**ՄԺԷԺ** — միտք, ուղեկ, մտածողութիւն, տրամադրութիւն :

**ՄԺՂԵԼ** կամ **ԺՂԵԼ** — հաճոյալի խօսակցութեամբ ժամանակ անցընել :

**ՄԻ** — բացասական բառ : Կը գործածուի արդեւք մը յարուցանելու իմաստով (օր. մի՛ գար, մի՛ տար, մի՛ լար) :

**ՄԻԱԺՈՒՄ** — ծոմապահութիւն, օրը միայն մէկ անգամ ուտել :

**ՄԻՉԱՐ** — կանացի գոգնոց, բուրդի թելով հիւսուած — ծաղկաւոր կամ պարզ :

**ՄԻՋԻՆԵԿ** — Երկրորդ դասակ :

**ՄԼԵԼ** — խոթել, բան մը սեղմելով տեղը գնել :

**ՄԼՐՏԻԿ** — մանրուկ՝ կարմբուն և ջրոտ խնձորի տեսակ մը :

**ՄԼԿ** — հաւի կամ սրեւէ թաշապղի վրայ գտնուող սջիլ, մլուկ :

**ՄԽԼՈՒ** — հաւիթով եփուած ջրայի կերակուր :

**ՄԽԿՈՒ** — կծուած, աւրուած, նեխած, բորբոսած, համը փոխած :

**ՄԽՐՈՏ** — մուխէն սեւցած, կամ

մուխի հոտը առած, սեւցած :

**ՄԿԱՅ** — հիմա, այժմ :

**ՄԿԻ-ԲԿԻ** — անասուններու բերանի կապ (փայտաշէն) :

**ՄԿԼԱ** — մէկալ, այդպէս :

**ՄԿԼԵՉ** — մոզէս (սողուն) :

**ՄՂԼԱԿ** — գրան կղզանքի այն մասը, որ բացուածքի մէջ կ'Երթայ : Երկաթէ կամ փայտէ շինուած կ'ըլլայ բնոց հանրապէս :

**ՄՂԼԵԼ** — մակողել, հանդարտիլ, քնանայ (օր. ոչխարի հոտը մըղլիք է) :

**ՄՂԼԻԼ** — մակողել, անասուններու հաւաքական հանգիստ :

**ՄՂՄՂՈՒՆ** — սրտակեղեք, տխրաղ-դեցիկ, գոչոց, ցնցոց :

**ՄՆԻԿ** — մանուկ մը ոտքի հանելու առաջին փորձ :

**ՄՈՉ** — աննպատակ վայր : Ամառնային տաք օրերուն՝ բոռեխ գեռուեր կը նախ անասուններու կըրնակին կամ յետոյքին, կծելով՝ պատճառ կը գտնայ արտասուփոր խկայար վայրի :

**ՄՈՉԻԿ** — մայրակորոյս հորթ, խորթ գուակ : Առանցիկներ Մոզէս մարդարէն Մոզիկ Մովսէս կանուանէ կերբ :

**ՄՈՅԻԼ** — կայծ, փառած փայտէն գուրս ցատկոց բիծ :

**ՄՈՀՈՒՐ** — կնիք, մատանիի վրայ փորագրուած անունով :

**ՄՈՄԻ** — կանանց գլխակապ, լաչակ, թաշկինակ : Մասնաւոր ձևի պատրաստուած գլխակապ :

**ՄՈՇԻ** — կապի ընտանիքին վերաբերող ծառ մը, որ բարակ և անուշահոտ կեղեւ մը ունի :

**ՄՈՒ** — մութ կապոյտ, Երկնագոյն, յեղակապոյն :

**ՄՈՐԵՄՈՒԿ** — թթուանոյշ պտուղ

մը, վայրի ելակի ընտանիքէն :  
 Նաև ամուլ, անձնունդ :  
**ՄՈՒՂԱՐԻՉ** — նուէր : Նոր հագուստ  
 մը կամ կահարասի մը՝ հաճոյ-  
 քով եւ երջանկութեամբ վայելե-  
 լու մաղթանքին առիթով՝ տրբ-  
 ունիք նուէր : Ասոր յատուկ ա-  
 սացուածքն էր՝ մէկը հագար է-  
 նիս, բարով մաշիս, մուղարիչը  
 քաշիս :  
**ՄՈՒՌ** կամ **ՉԱՄՈՒՌ** — տնաշինու-  
 թեան համար գործածուելիք շա-  
 դախ :  
**ՄՈՒՌՏԱԼ** — աղտոտ, կեղտոտ, ան-  
 մաքուր :  
**ՄՈՒՐԱՔԱՊ** — մեղան (սեւ, կապոյտ,  
 կարմիր) :  
**ՄՈՒՐԻԿ** — անձկանօք կատարուած

փնտուտուք :  
**ՄՈՒՐՈՒ** — խորթ, անհարազատ :  
**ՄՈՒՆՂ** — շատ բարակ՝ փոշիանման  
 յարդի մանրուք :  
**ՄՈՒԹԸՊ** — զնչու, բոշա, չինկանա :  
**ՄՈՒՋԱՆ** — բուստ :  
**ՄՈՒՈՒ** — կծու, տաք, այրող, լացնող :  
**ՄՈՒՈՒԹ** — շրթունք, պոռնկ : Քիթ  
 ու մոուք — դիմադիծ :  
**ՄՐԸՓԻԼ** — մրափել (օր. շո՛ւտ գնա  
 մրըփի) :  
**ՄՐՍՈՒԿ** — սառած, պաղած (օր.  
 մրսուկ քալամ է — սառած կա-  
 դամբ է) :  
**ՄՔՈՒՅ** — երաշտէն գոյացած հողի  
 ձեղք :  
**ՄՕՐԷՄԵՐԿ** — տնանկ, աղքատ, չքա-  
 ւոր, խեղճ, մերկ :

Յ

**ՅԱՂԷՉ** — ծանծաղ կէտ, քիչ ջուր ե-  
 ղած տեղ, նոր ցամքած տեղ :  
**ՅԱՄՈԼ** — դուրսնի կամ արօրի ծա-  
 նրը բերը քաշող լծկան :  
**ՅԱՆԳՆԱԼ** — ուշանալ, ժամանակէն  
 ետ մնալ :  
**ՅԱՆԿԱՃ** — ականջ :  
**ՅԱՆԿՍԿԾԻ** — անակնկալօրէն, յան-  
 կարծակի :  
**ՅԱՊՈՎ** — համար (օր. բու յապով  
 — քեզի համար) :  
**ՅԱՌԵՂ** — սայլի մարմինը՝ վրան  
 հաստատուող փայտէ ձողը :  
**ՅԱՏԿԻԼ** — ժամանել, գործի մը կամ  
 բանի մը կարենալ հասնիլ :

**ՅԱՐՏ** — արտ, հող՝ ուր հացահատիկ  
 կը սերմանեն :  
**ՅԵՐԻՇ** — դրոհ, յարձակում, կռուե-  
 լու գիտաւորութեամբ նախայար-  
 ձակում :  
**ՅԵԼ** — զառիվեր :  
**ՅԵԼԱՒՈՒՐ** — ուրիշ օրուան, գալիք  
 օրուան, հետագային :  
**ՅԵԼՄԱՆ** — յորդած, վարարած. տա-  
 բողութենէն դուրս ելած (օր.  
 յելման գետ) :  
**ՅԵԼՆԱԼ** — ելլել, տեղէն շարժիլ,  
 կանդնիլ :  
**ՅԷԺԸՆՈՒԹԻԻՆ** — աժանութիւն,  
 մատչելի գին :

**ՅԵԿՈՂՔ** — այգողք, այգուց, թաղ-  
 ման յաջորդ առաւօտեան ննջեց-  
 եալի շիրիմին այցելութեան երթ :  
 (Ըստ Խաչատուր Մխարեանի  
 փիլիսոփայութեան, մեռելը զե-  
 րեզմանէն փախած չրլլալը բու-  
 սուղելու այցելութիւն, կամ մը-  
 նացելոց կողմէ ննջեցեալին վեր-  
 ջին հրամարական) :  
**ՅԵՐԴԻԿ** — տանիքի վրայէն բացուած  
 լուսամուտ, ուրիշ լոյսը ներս կը  
 թափանցէ եւ մուխը դուրս կ'ել-  
 լի :  
**ՅԷՉԻՆ-ԵՉԻՆ** — անասուններու զու-  
 գաւորման ցանկայարոյց շրջան :  
**ՅԷՐԴ** — յարգ, հացարոյսերու չոր-  
 ցած ցողուններու մանրուք :  
**ՅԷՐԿԷՆ** — երկայն, երկայնահասակ :  
**ՅԸՂՈՂԵԼ** — բան մը ջուրին հետ  
 խառնել :  
**ՅԸՆԳԱՆ** — ուշուշ ատեն, իրիկուան  
 զէմ, վերջին պահ :  
**ՅԸՆԿՆԱԼ** — իյնալ, բարձրութենէ մը  
 վար նետուել, սայթաքիլ :  
**ՅԸՆԿՆԱՒՈՐ** — լուսնոտ, դիւահար :  
**ՅԸՐՈՂԵԼ** — ջուրը կամ ջրախառն ու-  
 տելիքները զտել :

**ՅԻՄԱՅ** — արթուն (յիմցաւ — լսեց,  
 հասկցաւ) :  
**ՅԻՇՆՆԱԼ** — համարձակիլ, կարենալ,  
 քաջութիւն ունենալ :  
**ՅԻՇՏԱՊ** — արագ, աճապարանօք,  
 արտօրանօք, շտապով :  
**ՅՈՆԿՈՒՅ** — նշանակուած տեղէն,  
 այն տեղէն (օր. յոնկուց չուրի  
 յուտայ — այն տեղէն մինչեւ  
 հոս) :  
**ՅՈՈ** — յետոյք, նստարան :  
**ՅՈՈԸՆՉՅԵՏԻ** — երեսը դէպի ազին,  
 էջամբարձ (անարդանքի համար) :  
**ՅՈՏՄՇԻԼ** — յոգնիլ, անասուններու  
 կճղակներու մաշիլը :  
**ՅՈՐԻ** — ինչու :  
**ՅՈՒՋԿԱՆ** — հարսնութեան համար  
 ազջիկ ուղելու դացող :  
**ՅՈՒՆԱՅ** — այն տեղ, հոն :  
**ՅՈՒՆՅԿԱՅ** — այս տեղէն, հոսկէ :  
**ՅՈՒՍԷ՞Ն** — ուսկի՞ց, ուրկէ՞ :  
**ՅՈՒՏԱՅ** — այս տեղ, հոս :  
**ՅՕՏԱՅ** — սենեակ, ախոռի յօտայ :  
 Ախոռին մէջ բաժնուած առանձին  
 սենեակը, որ ձմեռ ատեն այրե-  
 բու հաւաքատեղին կ'ըլլայ : Հարկ  
 եղած ատեն կը գործածեն որպէս  
 ննջարան հիւրերու համար :

Ն

**ՆԱՁԷ** — ազնուազարմ ձի. կանացի  
 յատուկ անուն :  
**ՆԱԼ** — պայտ, ձիերու, ջորիներու եւ  
 էջերու ոտքին զամելու երկաթ :

**ՆԱԼՁԱ** — փոքրիկ պայտ, զոր կօշիկ-  
 ներու կրունկներուն կ'ամբացնեն :  
**ՆԱՍԻՐ** — անասուններու խումբ, ե-  
 բամակ, որ կը տարուի դաշտ ա-

բաժնու։  
 ՆԱՍՆԻ — նախահայր, հին սերունդ, նախնիք։  
 ՆԱՍԻՔՆԱՅ — գիւղերու մէջ նշանակուած յատուկ տեղ, ուր նախիրը կը հաւաքուի արօտատեղի տարուելու։  
 ՆԱՍԻԹՈՂ — աշնան եղանակի վերջաւորութիւնը բնորոշող ժամանակ, երբ նախիրը դաշտը արածելու չ'երթար։  
 ՆԱՍԻՐՐԻԳ — անասուններու նախիրը դաշտ տանող, արածեցնող։  
 ՆԱԿԱՍՏԱՆ — անակնկալ, յանկարծակի, մէկէն ի մէկ։  
 ՆԱՄ — խոնաւ, թաց, տամուկ։  
 ՆԱՄԱԹ — օրհնուած հաց։  
 ՆԱՆԷ — մայր, մեծ մայր։  
 ՆԱՇ — դաղաղ կամ փայտէ պատգարակ, որուն վրայ դիակը դնելով կը փոխադրեն գերեզմանոց։  
 ՆԱՐ — նուազի փողանման գործիք մը, շրթներուն դնելով, շունչ տալով, եւ մատները ծակտիքներուն վրայ համաչափ շարժելով կ'եղանակուի։  
 ՆԱՐԱՆ — դունդակի ծաղիկ մը։  
 ՆԱՐԳԻՍ — ծաղիկ մը։  
 ՆԱՐՕՏԻԿ — գոյնը գոյն թել, գոր աճուանութեան ատեն, պսակի արարողութեան ընթացքին, պսակաղիք քահանան օրհնելով կը կապէ փեսային եւ հարսի գլուխներուն։  
 ՆԵՂ — դժուարին, տուգնապալի, քիչ՝ կամ շատ քիչ լայնք ունեցող տեղ։  
 ՆԵՃԻՐ — որս։ Նեհիրուան — սրսորդ։  
 ՆԵՐ — երկու եղբոր հարսերը։  
 ՆԵՐԻ — նոխաղ, արու այծ։  
 ՆԵՐԿ — գոյն, բոյսերէ կամ տունկի

արմատներէ պատրաստուած գոյն, որով բուրդի կամ բամպակի թելերը կը ներկուին։  
 ՆԻԳ — դրան փականք, լծակ։  
 ՆԻՇԱ կամ ՆԻՇԱՍՏԱ — բարակ ալիւր։ Յորենը որոշ ժամանակով ջրախառն ամանի մը մէջ կը պահեն, երբ ծլարձակի, կը հանեն, կը չորցնեն, յետոյ սանդի մէջ կը ծեծեն, եւ ալիւրը կը պատրաստեն։  
 ՆԽՇՈՒՆ — նախշուն, կիտուած, երփներանգ բանուած։  
 ՆՂԵԼ-ՆՂՆՂԵԼ — եղանակ մը գեղեցկացնելով երգել, նուագել։  
 ՆՄՈՒՇ — զիմպիծ, օրինակ, տեսակ, նմանութիւն, կերպարանք։  
 ՆՆՁԱԼ — մրափել, ննջել, թեթեւ քնանալ։  
 ՆՇԱՆՏՈՒՔ — հարսնախօսութիւն, նշանախօսութիւն, խօսք կապ։  
 ՆՇԽԱՐՔ — բաղարջ հաց՝ Քրիստոսի նկարով կաղապարուած, եւ եկեղեցիի մէջ պատարազի ընթացքին օրհնուած։  
 ՆՇՈՎ ՕՐ — տօնական օր, սուրբ օր, նշանաւոր օր։  
 ՆՈՐ — լուսին. լուսնի նորոգում։  
 ՆՈՐԱՓՈՐԻԿ — անդրանկածին մայր, կին։  
 ՆՈՒԱԼ — մլաւել, կատուի ձայն հանել։  
 ՆՈՒԻԿ — փայլի բոյս մը, արեւի տակ կը չորցնեն, եւ կը պահեն ձմեռ ատեն ուտելու համար։ Ասոր չոր՝ պաղ ջուրի մէջ կը դնեն։ Կարճ ժամանակ՝ ջուրի մէջ մնալով, իր բնական գոյնը եւ թարմութիւնը կը վերագտնէ։ Կը խաշեն եւ կ'ուտեն դանդաղան ձեւերով։  
 ՆՈՒԿԻ — կշիռքով ծանրութեան

սահմանումի մէկ անունը, լիւրին 16-րդը։  
 ՆՈՒՊԱՐ — առաջին բերք. ծաղիկի անուն, կանացի անուն։

ՆՈՒՍԽԱ — կախարդական թուղթ, աղօթքով գրուած կանոն։  
 ՆՈՒՆՈՒԱԼ — տքալ, ցաւադին ձայն հանել, հեծեծել։

Շ

ՇԱԼԱԿ — կոնակ, պառեկ, կոնակը առած բեռ։  
 ՇԱՀԱՏ — վկայ, իրողութիւն մը տեսնող եւ հաստատող անձ։  
 ՇԱՀՆԱ — կապալաոտի ծառայ. հացահատիկներու շեղջը կնքող, տասանորդը հաւաքող անձ։  
 ՇԱՂ — ցօղ, պարզ գիշերները տունկերու վրայ նստող ջուրի կաթիլ։  
 ՇԱՂԱՓ — հիւանի գործիք, դանակաձեւ սուր շեղրով։  
 ՇԱՂԳՄՈՒԿ — փայլի բողբոջ։  
 ՇԱՂՈՒԼ — թեթեւ քրտնիլ։  
 ՇԱՄԱՄ — սեխ (շատ հտուտէ տեսակէն)։  
 ՇԱՅԱՍ — կերպաս, ասուի, բուրդէ եւ մետաքսէ խառն հիւտուածեղէն։  
 ՇԱՇ — շիլ, թիւրակին, ծուռ նայուածք (շաշուփառ)։  
 ՇԱՇԻԿ — ազատ ազգիկներու լաշակով ծամերը կապելու ձեւ։  
 ՇԱՇԼՂ — կանացի գլխարկ, որուն վրայ սակեղէն կամ արծաթեղէն գարգեր կը կարեն կամ կը կախն։  
 ՇԱՄՇՈՒԼ — շուարիլ, շիթիլ, տարակուսիլ, ճամբան կորսնցնել։  
 ՇԱՊԱՇ — նուագածուներու գրամական նուէր։  
 ՇԱՊԻԿ — մերկ մարմնի վրայ հազ-

ուելիք լաթ։  
 ՇԱՊՈՒԽՏԱ — փայտէ դաւադան, որով բուրդ կամ բամպակ կը քրքրեցնեն։  
 ՇԱՍԱՏ — կոտուակը, խոտաբար։  
 ՇԱՍ ՈՒ ՇՈՒՌ — կապ ու կռիւ բատեղծել, ուրիշ մը՝ իր շործած յանցանքին համար մեղադրել։  
 ՇԱՏ — բազում, մեծաքանակ։ Նաեւ ուրախութիւն պատճառել (Երուսաղէմի շատնդի շինած քաղաքը, ուրախութիւն բերող)։  
 ՇԱՐ — սնդուս, մետաքսահիւ նուրբ գործուածք (օր. շարէ շապիկ)։  
 ՇԱՐԱԿԱՆ — նուիրական բանաստեղծութիւններու գիրք, որ կը կարգացուի եկեղեցիի մէջ։  
 ՇԱՐԲԱԶԱ — գատարկապարս, անգործ, ծոյլ։  
 ՇԱՐՄԱՂ — բարակ մաղ (ալիւրը մաղելու յատուկ)։  
 ՇԱՐՓՈՒՇ — փուշի, սեւ գոյնով նըրբահիւս գլխարկ։  
 ՇԱՔԱՐ — շատ անոյշ հիւթ, կը պատրաստուի շաբարեղեցի կամ ձակեղեցի։  
 ՇԵՂԲ — շոյ, փայլ. դանակի, գեղանկի կամ սուրի սրածայր յաստ։  
 ՇԵՂՁ — յարդէն զտուած, մաքրուած



ցորենի կամ որևէ հացահատիկի կոյտ:

**Շեն** — մէզ, ջրփաթ, գոլ:

**Շենթ** — փայտէ խոշոր գզալ, չոկէկ:

**Շերճ** — կտոր, մաս, բաժին (օր. ամերուկի շերտ, հողի շերտ):

**Շերի** — գաղանի խորհրդակցութիւն, փոփոխք:

**Շեփ** — խարազանի ծայրի լարանի նման բարակ կաշի:

**Շէկ** — խարտաւաչ, գեղինի զարնող կարմիր գոյն, ոսկեգոյն:

**Շէլի** — սեմ, դրան մուտքի վարի մաս:

**ՇէՅՏՈՒԿ** — անդամալոյծ, խեղանդամ:

**Շէնթ** — ոտքերը բացուելու չափ մեծ քայլ (օր. շէնթ մի տեղ):

**ՇէՊ** — պաղլէզ:

**Շիթ** — բշտիկ, ուռեցք:

**Շիլա** — կարմիր կտաւ (օր. Բաղէշի շիլա):

**Շիլաճ կամ ՇիՏԱ** — կաթնիկեր դառնուկի կամ ուլի չորրորդ ստամոքս (հազար քերթիկ):

**ՇինԱԿԱՆ** — գիւղացի, գիւղական, Երկրագործ: Տարբեր իմաստով կը նշանակէ կոպիտ, բիրտ, արմարդի, անքաղաքափար:

**ՇինՈՒԿ** — շինուած, պատրաստ, կառուցուած, կարգադրուած:

**Շիրին** — սիրուն, քաղցր, անոյշ, սիրելի:

**Շիտ** — ուռի ծառի գայար ճիւղ:

**ՇլՈՐ** — թթուանոյշ սալոր:

**ՇլՈՓի ՇՈՒՆ** — անձրեւախառն ձիւնի տակ մնացած շան երեւոյթ, թափթիուն, եղկելի վիճակ, արգահատելի երեւոյթ:

**ՇՄԼԻ** — փակիլ, կպիլ, տեղ մը առուր փակիլ մնալ:

**ՇՄՇԱՏ** — տօտախ, ազնիւ տեսակի փայտ, որմէ կը շինեն զգալ, շերեփ, չոկէկ եւ ուրիշ բաներ:

**ՇՄՓԱԿ** — դրան ներսի կողմէն գործածուելիք փայտէ փականք:

**ՇնթՈՒԿԵԼ** — անարդ կեանք ապրիլ, հանրութիւնէ հալածական ըլլալ:

**ՇՆԹՈՒԿԻՐ** — գետին անցիլ, խաղաղի՛ր, քնացի՛ր, լո՛ւէ՛:

**Շնիկ** — հացահատիկներ չափելու սահմանաւորում, չափ:

**ՇնԼԱԿ** — շուներուն տրուած կերակուր:

**ՇնԿՇՆԿՈՅ** — հովի եղանակաւոր սուլոց, սիւք, բարակ ու անոյշ հով, քաղցրանուազ հովիկ:

**ՇնՈՅՈՐ** — մահտարածամ, անբուժելի հիւանդութիւն, քաղցկեղ, շան ցաւ:

**ՇնՏՈ ՇՈՒՆ** — թափառաչըջիկ, դատարկապորտ:

**ՇՇԱԿ** — մէկ տարեկան էգ ոչխար, դառնուկ:

**ՇՈԳ** — տաք, այրող, գոլ:

**ՇՈԼ** — ոլոտն, պարկճաւոր կլոր հունտեր, գորս խաշելով՝ աղի ջուրէն անցրնելէ ետք կ'ուտեն:

**ՇՈՂ** — արեւի ճառագայթ, բարակ լոյս, ջերմութիւն, շոյ:

**ՇՈՂԻՆԹ** — յորձուք, անհող կերպով բերնէն վար վաղող թուք:

**ՇՈՇՆԻԼ** — թուլնալ, ուժաթափիլ, յոյնածութեան երեւոյթ ցուցադրել:

**ՇՈՇՈՐԹՔ** — հետք, նշան, աղղեցութիւն, հետեանք:

**ՇՈՊԱ** — վարցաւ, սաստիկ ջերմութիւն առթող տարափոխիկ հիւանդութիւն:

**ՇՈՌ** — աղի, աղեհամ:

**ՇՈՌԱՆ** — աղի դաշտ, աղի հող, աղի մարզ:

**ՇՈՐ** — լաթ, կտորեղէն. ընդհանուր առումով հազուատ:

**ՇՈՐՈՐ** — նաղելաճեմ քալուածք, կողմէ կողմ ձեքծեքուելով քալուածք:

**ՇՈՐՏԻԿ** — սկսնակի մը գործուածքը, հիւսուածքը. երբ գուլպայ հիւսել կը սորվին, առաջին փորձի արդիւնքը:

**ՇՈՒԱԼ** — սուլել, շրթունքներով թեթեւ ձայն հանել:

**ՇՈՒԻԿ** — ուռի ճիւղէն կամ կահողէն շինուած սուլիչ:

**ՇՈՒԼԱԼ** — պարզ, հասարակ խոշոր կար:

**ՇՈՒԼԵՑԻԿ** — խռովարար, ամէն գործի խառնուող եւ վէճ ստեղծող:

**ՇՈՒԼԼԸԻԻԼ** — ակամայ փակիլ, փաթթուիլ, կպիլ:

**ՇՈՒՄՐԱ** — երկաթի, անուխի կամ թիթեղի այրելիք տաքութեան հոտէն բոնուիլ, հիւանդանայ:

**ՇՈՒՆ ՈՒ ՇՆԿԱԼ** — անբաղձալի՝ հասած չհասած հիւր, գիրքին անհաւասար մարդ:

**ՇՈՒՇԱ ՅՈՐԵՆ** — յարգէն դատուած մաքուր ցորեն:

**ՇՈՒՇՏԱԿ** — թաշկինակ, մաղկապ: Շուշտակ վարդապետ՝ կնոջ մահէն ետք կղերական կամ կուսակրօնութեան կոչում ստացող:

**ՇՈՒՇՓԱ** — շարժ, մաքուր կտաւ: Աւետարանի, համայնի կամ նրման նուիրական գիրքերու եւ մասունքներու փաթթոց:

**ՇՈՒՈՏ** — ճիւղ, հրէչ, սաստնայ. նաեւ Փետրուար ամիս: Փոստփորդին քով նախապաշարուած կար, որ Փետրուար ամիսը հրէչներու ամիս է: Անոր վերջին օրը՝ իրիկունը՝ մեծ աղմուկով պղնձ ամաններուն հարուածելով, ոչխարի կամ այծի չոր մորթերը ձեծելով, կը պտտային. «Շուտա դուրս, Մարտ մերս»: Նոյն պահուն, տան շէմքին վրայ, աման մը լեցուն ջուր կը դնէին:

**ՇՈՒՌ** — ինքն իր վրայ դառնայ, պտտուիլ, ժուս գայ:

**ՇՈՒՐ ՈՒ ՄՈՒՍԱԼ** — սուր եւ վահան:

**ՇՈՒՐԿԱՅ** — ապուր, սոսոյ, թանով կամ որևէ տեսակ ապուր:

**ՇՊՈՒԿ-ՇՊԼԵՆ** — փետուրով պոպոկի ջուրը տանել եւ հիւանդոտ աչքը յուս:

**ՇՌԵԼ** — միդել, ջրփաթիլ:

**ՇՌԻԿ** — վազան, յարահոս:

**ՇՌՇՈՒԱԼ** — յորդատտ ջուր թափիլ, տեղատարափ անձրեւիլ:

**ՇՏՈՒԿ** — կապոյտ ջուր (պանիրէ, մածունէ կամ թանկ մնացած):

**ՇՐԻՏ** — չուան, յարան, պարան:

**ՇՐԻԹ** — մասնագործ, բաժնեկից, մասնագական օրէնքով հարստութեան մասնակից:

**ՇՐՁՈՒՔ** — հակառակ կողմ, ներսը դուրս դարձուած:

**ՇՐՓԱԼ** — տեղայ (օր. անձրեւը կը շրփայ. ձիւնը շրփայէն կ'իջայ):

**ՇՕ-ՇՕ** — շուները՝ ձայնով կանչել:

Ո

**ՈՁՆԻ** — փշածածկ երկակենցազ կենդանի մր (չորքոտանի), կրխայի նմանութեամբ: Գծուար է ոգնին մորթել: Գլուխը փշայի պատեանին մէջ կը քաշէ. շատ համբերանքով կը սպասեն մինչև գլուխը դուրս հանէ. արագ շարժումով մտնալով գլուխը կամ վիզը բռնելով կը մորթեն. մարմինը մորթագերմ ընելով միտր կը կարմրցնեն եւ կ'ուտեն:

**ՈՁՈՐ** — ծուռ, անուղիղ:

**ՈՁՐԵԼ** — ծուռ, վրան դարձնել:

**ՈԼՈՔ** — սրունքի կամ բազուկի սուկոր:

**ՈՂՄԿԻԼ** — բնկողմանի, կողմի վրայ ծուր:

**ՈՂՁՈՅՆ** — բարեւարատ (քահանաներու յատուկ):

**ՈՁՆԱՐ** — չորքոտանի սրածացող կենդանի. պիտանի է իր կաթին, բուրդին եւ միսին համար:

**ՈՍԿԵՐԻՉ** — սակիէ կամ արծաթէ գորգեր եւ պերճանքի առարկաներ շինող:

**ՈՍՊ** — սապն, պարկճուոր տունկ՝ նման ոլտանի, պարկուճը չորնալը նշան է հասնելուն. ասոր ազցուածը կամ լմանը ապուր կը շինեն:

**ՈՍՏ** — ճիւղ. ծառի ճիւղը երբ կրտրեն, քիչ մը բարձր մնացած մասնիկը ոստ է:

**ՈՏՆԱԳՆԷՆ** — հասարակաց հաւաքատեղ:

**ՈՐԱՅ** — ցորենի, խոտի կամ այլ հացահատիկի գէղ:

**ՈՐԲ** — ծնողագուրկի գուակ. հորմէ, մօրմէ կամ երկուքին մահուամբ

անտնցմէ զրկուած գուակ:

**ՈՐԲԵԻԷՐԻ** — այրիացած, այրի մարդ, որուն կինը մեռած է, կամ կին՝ որուն այրը մեռած է:

**ՈՐԳ** — ճճի:

**ՈՐԳԻ** — գուակ, աղայ կամ աղջիկ:

**ՈՐՁ** — արու, արական:

**ՈՐՁԱՅ, ՈՐՁԱՅՆ** — տունկի մէջի ծիր, որ սերմ կամ հատիկ կը բրունէ (օր. սոխի որովայ, ժախի որովայ, խաւրովիլի որովայ):

**ՈՐՈՅ, ՈՐՈՐ** — օրօրոց, օրսրան, մանուկներու մահճակալ:

**ՈՒԼ** — այծի փոքրիկ ձուգ, եղնիկի ձուգ:

**ՈՒՆԱԼ** — հողէ կլորածեւ աման, մէկ կամ երկու կանթով (օր. եղի ուխալ):

**ՈՒՆՏ** — գաշինք, Աստուծոյ առջեւ եղած խոստում, նուիրական խօսք:

**ՈՒՄԵՏ-ՈՒՄԵԿ** — յոյս, ակնկալութիւն:

**ՈՒՆՉՔ** — պերս, քիթին առջեւը վերի շրթունքին վրայ բուսած մազ:

**ՈՒՆՔ** — յօնք, աչքին վրայ աղեղածեւ մազ:

**ՈՒՇՔ** — յիշողութիւն, ուշադրութիւն, միտք:

**ՈՒՆԵՅՔ** — ուռ, մարմնի վրայի պարար. ցուէ կամ հարուածէ գուրս ինկած գունդ, կոշտ:

**ՈՒՌԻ** — ուսնի ծառ, տամուկ տեղերու մէջ աճող ծառ:

**ՈՒՍՏԻ** — սակից, սրկէ, ինչ տեղէ:

**ՈՒՏԻՉ ՏԵՂ** — զանգա, ձմեռ ատեն բացօթեայ՝ ոչխարները կերակրելու տեղ:

**ՈՒՏԻՔ** — այն կերակուրը որ պահէ չէ. պահք չբռնած օր:

**ՈՒՐ** — իր:

**ՈՒՐԱԿ** — հատու զործիք, որով փայտը կը տաշեն կամ կը մանրեն:

**ՈՒՐԲԱԹ** — շարթուան Ե. օրբ. պաս օր (օր. Ուրբաք է, պաս է):

**ՈՒՐԹ** — ջրարաշխութիւն, ջրաուրի ատեն հանդարտ վազքով եւ ցրուած տարածութեան վրայ ջուրը կապել:

**ՈՒՐԻՆ** — իրեն (օր. ուրին ի՞նչ — իրեն ի՞նչ):

**ՈՒՐՄՇԻԼ** — յարմարել, նմանիլ, պատշաճիլ:

**ՈՒՐՈՒԿ** — բոստ, քոստ, զողեցուկ:

**ՈՒՐՈՒՃԻԷԿ** — ժամանակացոյց (Մեծ Պահոց Եօթը շարաթները հաշուելու համար մամիկները գլուխ մը սոխի կամ գունդ մը խմորի վրայ Եօթը հաստ փետուր կը շարեն, նարօտի եռագոյն բուրգէ հաստ թելի մը ամբացուած, թոնրատան երդիքէն կը կախեն: Ամէն կիրակնամուտին մէկ հաստ փետուր կը քաշեն եւ երդիքէն վար կը ձգեն թոնիրին մէջ վառելու, մինչև որ Եօթը փետուրները կը հատնին եւ Սր. Չատիկը կու գայ):

Չ

**ՉԱԹՄԱ** — փահլեւանին պարանի վրայ հեծնելու ձեւով վեր վար ցատկելով Ելնել իջնելը:

**ՉԱԼ** — խատուտիկ:

**ՉԱՄ** — մայրի ծառ, մայրի ծառի փայտ:

**ՉԱՄԻՉ** — չորցուած խաղող:

**ՉԱՅԻՐ** — արօտատեղի, մարդագետին, խոտաւէտ դաշտ:

**ՉԱՆՉ** — պատի կամ առաստաղի վրայ սարդի ոստայն: Սանտրագործիկ:

**ՉԱՊԱԼԵՆ** — սպտակ, ձեռքի հինգ մատներով արուած հարուած:

**ՉԱՊԻՃ** — Երկու տարեկան այծ:

**ՉԱՐԱՉ** — չոր մրդեղէն, կամ շաքա-

րդէն: Հարսանեաց եւ խնճոյքի հաւաքոյթներուն կը բաշխեն ներկաներուն:

**ՉԱՐՈՒՊ** — թեթեւ կօշիկ, առանց ներբանի, հում կամ խաղաղորդուած կաշիէ պատրաստուած:

**ՉԱՐՉԻ** — փերեզակ, մանրավաճառ:

**ՉԱՒՏԱՐ** — վայրի ցորեն՝ ինքնիրեն բուսած, անմշակ:

**ՉԱՓ** — իրերը համբելու, կշռելու եւ չափելու ծառայող միութիւն մը (օր. մատնաչափ, քիգ, ոտք, շէնք, գագաչափ կամ խուլաք, սրշուն կամ հալապի: Տրամ, նուկի, հոխա, լիտր, կոտ, քանկարակ, սոմար):

**ՉԱՓԱՌ** — մացառ, փշացանկ՝ արտերու եւ բանջարանոցներու բուրբութեամբ կը քաշեն ապահովութեան համար:

**ՉԱՓՈՒՆԵԼ** — չըջապատել, չուրջկալել, պաշարել:

**ՉԱՓՈՒԿ** — ուռնիի ճիւղերէն հիւսուած փոքրիկ կողով:

**ՉԲԵՐ** — ամուլ, անդաւակ:

**ՉԵՆ** — կանեփի ցօղուններէ կամ եղէղէ շինուած արուեստական պատնէշ. հաւասար կարգով իրարու կապուած բարձրութեան համեմատ, քանի մը տեղէ. ամառատեն խոտը կամ յարդը կը պատնէշեն, խի ձմեռ տուն՝ ձիւնը:

**ՉԵՇՆԻԿ** — նմոյշ, օրինակ, տեսակ:

**ՉԵՉ** — մեղրի դատարկ բլիշ հաց, կամ հարած մեղրի տակունք:

**ՉԵՉՈՏ** — ծաղկախոտն երեսի վրայ մնացած փոսիկներու հետք:

**ՉԷ** — ոչ: Չէ, չէ — ոչ, երբեք:

**ՉԸԼԱ** — քառասունք, ձմեռուան պաղ 40 օրերը:

**ՉԸԼԽ** — բոլոր հաւկիթ, թուխի տունն ապականած հաւկիթ, որմէ ձաղ չ'իլլեր:

**ՉԸՌՉԸԿԻԼ** — նպատակի չհասնիլ, ամուլ, անպատակ, անժառանգ մնալ:

**ՉԻՆԻ** — յախճապակի կամ չինական խեցեղէն աման:

**ՉԻՆՑ** — բաց կապոյտ աչք:

**ՉԻՉԽԱՆ** — տեսակ մը ծառ, փշալից, կարմրադոյն եւ դիմացկուն: Սիւսեռի չափ մանր պտուղներ ունի:

**ՉԻՐ** — չորցուած մրդեղէն (օր. տաճի չիբ, խնձորի չիբ):

**ՉԼՈՒԹ** — մերկ, տկուր, անզարդ:

**ՉԽԱԼՊՏՈՒՂ** — կապոյտ աչք, չար աչք:

**ՉԽԼՈՒՏԱԼ** — կափկափել, կամ ատամները իրարու զարնելով ձայն հանել:

**ՉԽՉԽԻԿ** — ջաղացքի քարէ սղօրիքի վրայ յատկապէս թոյլ կախուած փայտիկը, զոր ստէպ, ստէպ սղօրիքին զարնել-աղմկելով, ջաղացքի կենդանութիւնը կ'ազդարարէ:

**ՉՈՆՏՐԻԿ** — կաւ հողէ փոքր տաշտ. մանուկներու լողանքի համար պորձածելի:

**ՉՈԿԱՆ** — թրծուած հողէ աման:

**ՉՈԿԵԿ** — փայտէ խոշոր դգալ, շերեփ:

**ՉՈՌ** — համաճարակ, տարափոխիկ հիւանդութիւն:

**ՉՈՐ** — յամառ, պինդ գլուխ, խոնաւութենէ զուրկ, չորցած:

**ՉՈՐԵՔԴԻՄԱՅ** — ամէն կողմէ, կամ չորս կողմէ չըջապատուած:

**ՉՈՐԹ** — կոշտ, կոպիտ, անկիրթ:

**ՉՈՐԹԱՆ** — քամուած եւ չորցուած թանի դունդ:

**ՉՈՐՓՈՐԻԼ** — պնդութիւն, աղեկապութիւն ունենալ:

**ՉՈՒԱՆ** — պարան. բուրդէ, կանեփէ կամ մաղէ հիւսուած հաստ կապ, լար:

**ՉՈՒԻ** — սրածայր փոքր փայտ կամ երկաթ, որով կամ բան մը կ'ամրացնեն եւ կամ գերանները կը ճեղքեն:

**ՉՈՒԽԱ** — աղնիւ տեսակի բրդեղէն պորձուած ասուի:

**ՉՈՒՇՏԼԻՔ** — տարատ՝ նեղ տեսակ, սրունքներուն գրեթէ փակած:

**ՉՈՒՉՈՒԼԻԿ** — երախտն ուսերու վրայ առնելով խոլոցնել:

**ՉՈՒՌ** — պատանիներու յատուկ բերդ-խաղ. չիկահեր. չէկի եւ ճերմակի միջին՝ բաց դոյնը:

**ՉՈՒՐԻ** — մինչեւ:

**ՉՈՒՌՉԽԱՆԱ** — դատարկապորտ, անպէտք մարդ:

**ՉՈՓ** — ափով ջուրը երեսին զարնել:

**ՉՈՔ** — ծունկ:

**ՉՈՒԿ** — ծորակ, ակ (օր. աղբի չոիկ):

**ՉՈՆԵԼ** — պտուղի, ման դալ:

**ՉՏԵՍ** — սպէտ, բան չտեսած, ազբատ:

**ՉՐԱՏԵԼ** — դանակով կամ անկիով արայ գործողութեամբ մարմնին վրայ տեղ մը կտրել, կամ երակ մը բանալ:

**ՉՔԻԼ** — խրիլ, մխրճուիլ, խոթուիլ (օր. փուշը ստֆն է չֆի):

Պ

**ՊԱԼ** — ժայռ, ապառաժ, խոշոր քար, կաղճիկի կամ կաւ հողի թումբ:

**ՊԱԼԱՆՏՐԿԻ** — անհաշիւ գործ, անըպատակ, անհաւասար նետուած հարուած:

**ՊԱԼԱՔ** — գոյնզգոյն, սեւ ու ճերմակ բիծեր:

**ՊԱԼՈՒԼ** — պլլել, նորածին մանկան փաթթոցը:

**ՊԱՀՈՒՆԻ** — պահեստի, մասնաւոր առիթներու համար պահուած բան:

**ՊԱՂ** — ցուրտ, սառ, պաղ հով, քամի:

**ՊԱՂԼՈՒԼԱՅ** — մասնաձեւ սառ, ծառերէն կամ տանիքի ցուրտներէն կախուած:

**ՊԱՃԻԿ** — պառկիլ, քնանալ, անկողին մտնել: Մանուկը քնացնելու պահուն պանիկ եղիլ կ'ըսեն:

**ՊԱՅԱ** — հետխան, ոտքով քայլել:

**ՊԱՇԱՂ** — քաղհունձի մամանակ՝ արտին մէջ մնացած հացահատիկի հաւաքը: Այլքաաները հաս-

կերու մնացորդները կը հաւաքելին:

**ՊԱՇԻՎ** — գիշերային աշխատանքի համար տրուած ճաշ: (Առհասարակ ձմեռ եղանակին՝ աշխատանքի համար պատրաստուած ճաշը կապոյտով մը յախտի մէջի յառգլիլ սիւնէն կը կախեն):

**ՊԱՉԻԿ** — պաղ, համբոյր, մանուկներուն տրուած համբոյր:

**ՊԱՊԿՈՐՈՒՍ** — որր, հորր մահէն ետք ծնած դուստկ:

**ՊԱՌԵԿ** — կոնակ. ուսերէն վար միջեւ գնդերները:

**ՊԱՍ** — պահք, ոչ-ուտիք:

**ՊԱՏԻԼ** — ինայ (օր. գետին պատաւ: Արեւ պատաւ — արեւը ժայռ մը տաւ: Փստայ, պատայ, պառեկ-սի, օպրաւ):

**ՊԱՐ** — պարել, խաղալ, խմբովին պար բռնել. շարք:

**ՊԱՐԱՆ** — մաղէ հիւսուած լարան, խարան, շուան:

**ՊԱՐԶԵՆԿՈՏ** — պարձենցող, հարա-տացող, անձնագող:

**ՊԱՐԶԿԱՅ** — անամպ երկինք, աստ-ղազարդ երկնակամար, պարզ եւ ցուրտ եղանակ:

**ՊԱՐՉՈՒՆ** — թոյլ կտակ պարկ-թանքամիշ — մածուն եւ թանքամեղիք:

**ՊԱՐՈՐ** — ցաքի երկու կողմի երկար ձողեր (ցաքի պարոր):

**ՊԱՐՍԵՆՏ** — պարսատիկ: Տեսակ մը պատերազմական զենք էր եւ կը պորձածուէր մինչեւ 1915-ի մեծ եղեւնը: Կազմը հետեւեալն էր — կաշիէ թաթ մը, որուն երկու ծայրերը կանեփի թելերէ հիւս-տած կապ կը կապէին թաթին մէջ քար կը դնէին ռութ մատը և ցու-ցամատը երկու թելերու ծայրերը շինուած օղակներու մէջ կ'անցը-նէին եւ կը սկսէին պարսատիկը կողմնակի կամ գլխու վրայէն ու-լորել. երբ թափը՝ առնէր՝ թելին մէկ ծայրը բաց կը թողէին, քարը ուժգին թա-փով սուրալէն կամ ինչպէս կ'ըսէինք վնկալէն կը նետուէր սարսուզղեցիկ ձայն հանելով: Հարուածը մահացու կ'ըլլար:

**ՊԱՐՏԿԵԼ** — թաղցնել, դորձուած յանցանքը ծածկել:

**ՊԱՅՆՏՈՒԻԼ** — պահուելով, թաղ-նուել, աներեւութանալ, ծած-կուել:

**ՊԵՆ** — բնչացք. քիթին առջև՝ շրթ-թունքի վրայ աճող մաղ:

**ՊԷԾ** — կայծ, փոքրիկ լոյս, կրակէն փրթած բիծ:

**ՊԹՈՒԿ** — խաշխաշի վրայ հունտով լեցուն դունդ:

**ՊԻԱՐ** — խոպան, անմշակ հող, ան-բերք հողամաս:

**ՊԻՆՁ** — ոունդ, քիթի ծակ:

**ՊԻՊԻՃ** — գուռնայի (փող՝ նուագա-րան) եղէպէ մասը, դոր կ'անցընէ փողին վրայ եւ շրթներուն մէջ առած կը փչէ: Պիպիջն է առա-ջին ձայնատուն:

**ՊԻՊՆՈՏ** — դիմազծին կամ երեսի մորթին վրայ երեւցող սեւ ու ճերմակ բիծեր, պիսակ, պուտ, պուտ նշան:

**ՊԼԻԿ** — պղինձէ հին դրամ. ժամանց-խաղի համար մասնաւոր կտրուած մանր քառակուսի փայտի կտոր-ներ:

**ՊԼՆԿԱԶ** — աղքատ, տնանկ, անօք, անօղնական:

**ՊԼՆԿԻԿ** — հանքային ջուրի բազմիք. բուժիչ ջուրի տեղ, որուն ցեխը մարմնոյ վրայ կը քսեն, եւ արեւ-ւի տակ կը պառկին հիւանդութե-նէ բուժուելու հաւատքով (Մա-րուֆ դիւղի պլնկիկ, Գովանդու-կի թալալոց):

**ՊԼՈՃ** — ձմերուկի, վարունգի եւ սե-խի վերջին հունձք:

**ՊԼՈՒԹ** — մերկ, անօթի, աղքատ:

**ՊՃԵՂ** — կճղակ, որոճացող կենդա-նիներու եղունգ:

**ՊՃԿԵԼ** — քրքրել, բան մը խառնելով պարունակութիւնը դուրս բերել:

**ՊԵՂՈՒԿ** — կաղին, խողկաղին:

**ՊԵՂՈՒԼ** — յորդիւ. ջուրը իր տարր-ղութեան հասնելով կանգ առնել:

**ՊՊՁԻԼ** — կզած՝ ոտքերու վրայ նըս-տելու ձեւ առնել:

**ՊՈԶ** — ծորակ ակ, խողովակ (օր-յերկնքի պոզն է փրթեր):

**ՊՈԼՈՃԻԿ** — երկիմունք:

**ՊՈՄԱՌ** — պայծառ, փայլուն, մա-քուր:

**ՊՈՂՈՍԱԿ** — փայտէ պտուտակ, ձիթ-հանքի գերանները ճնշելով կտա-ւատէն ձէթը կը քամէ:

**ՊՈՃԻ** — շնիկ, շան ձագ, փոքր տե-սակի շուն:

**ՊՈԶ** — աղի, ծայրամաս (օր. եզան պոչ, ձիու պոչ, գոմէշի պոչ, իշու պոչ):

**ՊՈՊՈՃԱԿ** — ծոծրակ, վզին ետեւի մասը:

**ՊՈՒԼՈՒՉԻԿ** — տունի կոնածեւ կը-տուր:

**ՊՈՒՆ** — գլխարկէն կամ գլխանոցէն կախուած մետաքս թելէ ծոպ:

**ՊՈՒՇ** — կարճատես, հեռուն չտես-նող:

**ՊՈՒՊՈՒՇ** — մաքուր, յստակ, կո-կիկ, յարգարուած:

**ՊՈՒՏ** — կաթիլ (օր. պուտ մը ջուր, պուտ մը կաթ):

**ՊՈՊՁՄԱՆ** — լեփլեցուն, տարողու-թեւէն աւելի լեցուն:

**ՊՈՌՆԿ** — շրթունք, եզր, եղբք, ծայր, գետափ, սահման (օր. գետի պորունկ — դետեղր):

**ՊՍԱԿ** — պսակ հարսանեաց. սովո-րութիւն կար հարսանիքի ատեն

նոր փեսայի գլխուն պսակ դնել: Պսակը կը շինէին ցորենի ծղոտ-ներէն եւ մետաքսէ կամ բուրդէ նսորը թելերէ հիւսելով, քառա-թեւ կամ ճաճանչաւոր խաշի նը-մանութեամբ: (Մանօթ. ըստ Շահապիւանի ժողովի կանոննե-րուն, կուսանաց ծաղկեպսակ կը դնէին. իսկ կրկին ամուսնացելոց ուռէ պսակ: Պսակ դնելու սովո-րութիւնը կար մեր պաւտին մէջ մինչեւ 1915-ի մեծ եղեւնը):

**ՊՏՂԻ** — վանքի համար վանականնե-րու ձեռամբ հաւաքուած նուէր, տուրք:

**ՊՏՂՈՒՆՑ** — քշիկ մը, մասնիկ մը, երկու մասներու բոնելու չափ բան:

**ՊՏՊՈՒՆ** — նախուն, բժաւոր:

**ՊՏՈՒՂ** — աչքի կլոր դունդ, բիբ: Նաեւ թարմ պտուղ, միրգ:

**ՊՏՈՒՐ** — թրիք, փշկուլ. այծի, ոչխարի կամ ուղտի քակոր:

**ՊՐՈՒՆՃ** — փոսիկ, լճակ:

Չ

**ՋԱԼԱՊ** — ոչխարի հօտերու առետրա-կան:

**ՋԱԼՈՒԲԻՐ** — չիլիկ խաղալ: Փոքր փայտ մը գետին կը դնեն, դաւա-զանով մը անոր ծայրին թեթեւ մը կը զարնեն՝ օղին մէջ հանե-լով, ապա ուժով մը կը զարնեն փոքր փայտին նշանակէտը հաս-ցընելու յառաջադրութիւնով, խաղի ընթացքին կը բացական-

չեն «Տլուր տիք»:

**ՋԱՆ** — հողի, կեանք:

**ՋԱՆԱՂԱ** — կեսրայր, ամուսինին հայրը:

**ՋԱՆԱՂԲԻՐ** — տաղը, ամուսինին եղ-բայրը:

**ՋԱՆԱՒԱՐ** — ալլանդակ տարօրինակ երեւոյթով կենդանի:

**ՋԱՆԲԵՉԱՐ** — հայ յեղափոխութեան զէմ կուուելու համար, թուրք

կառավարութենէն կազմուած յատուկ աւազակախումբը:

**ՋԱՆՅԻՏԱՆ** — անձնագոհ, հայ յեղափոխականները, առաւելագէտ Գաշնակցութիւնը թուրքերու կողմէ ջանֆիտան անուանուեցան:

**ՋԱՌՄԱ** — տուգանք, պատիժ, նիւթական հասուցում:

**ՋԱՏՈՒԿ** — վհուկ, կախարհ, խարերայ (օր. ջատուկ պատա):

**ՋԱՐՋԱՌ** — վարսանդ. սանդի մէջ հացահատիկը ձեռնելու փայտեղանց զործիք:

**ՋԱՒԱՀԻՐ** — զոհար քար, նաեւ կանացի անուն:

**ՋԵՐՄՈՒԿ** — բնական տաք ջուրի աղբիւր, նաեւ թիւ կամ լեզի ջուրի աղբիւր:

**ՋԵԻԻ** — զոյգ, երկուորեակ, երկուորածին, ջուխտակ:

**ՋԷՃԻՄ** — մաղէ թելով երկու երեսէն զործուած կապերտի տեսակ մը:

**ՋԷՅՐԱՆ** — եղնիկ, այժեամ (օր. ջէյրան բոյիդ խորպան):

**ՋԷՐԳԱՅ** — կարգ, շարք, դասաւորում (օր. երկու ջէրգայ ֆշանկ):

**ՋԸԻՋՈՒՐ** — կերակուր: կը պատրաստուի հաւիթով, սոխով՝ ջրախառն. երբեմն սուսկ ալ կը խառնեն:

**ՋԻԳՐ** — բարկանայ, սխակայ բլրայ, հակառակիլ:

**ՋԻԼՔ** — ջիւղ, նեարդ, մարմնի հիւսուածք:

**ՋԻՆ** — թանկութիւն, սղութիւն, սով (օր. ջիւն տարի — սովի տարի):

**ՋԻՆԱ** — սոհմ, սերունդ, յաղպատոհմ:

**ՋԼԸՂՓԱԼ** — ջուրի կամ որեւէ հեղուկի խոտնելով ելած ձայնը:

**ՋՀԷՋ** — օժիտ, հարսնցուի տանէն հարսին հետ տարուած նուէր:

**ՋՂԱԹՈՒՓ** — լայն տերեւներով,

փարդապոյն ծաղիկներով բոյս մը: Տերեւները բաժիչ յատկութիւն ունին: Ձաննք կը գնեն վերքի վրայ, սրտկալի թարախը մաքրելով՝ վերքը բժշկէ:

**ՋՂԷ-ՋՂԷ** — գտնուկները կանչելու ձայնարկութիւն:

**ՋՂՋՊԵԼ** — բան մը տեղէ տեղ զարնել, պատէ պատ դարնել, ինքզինք նեղել:

**ՋՆԱԶ** — հուքաշ. հաւի կուրծքի երկձիւղ սակորը երկու հոգի քաշելով կը կտրեն: Ասով զրաւի կու գան, մէկը միւսը խարելու որոշումով:

**ՋՆՋՆԵԼ** — ջախջախել, կտրել, ջարդու բուրդ բնել:

**ՋՆՋՈՅ** — պարզ լաթ, ամաններ սրբելու, փոշիներ առնելու, նաեւ թոնիքի կողեր սրբելու յատուկ:

**ՋՆՋՕՐԻԿ** — մաղէ պարանոյ առկաթ օրորան:

**ՋՈԹ** — ձիթհանքի մէջ աշխատող զործաւոր:

**ՋՈԿ** — գատ, առանձին, ինքն իրեն, միայնակ:

**ՋՈՋ** — մեծ, տարիքաւոր, ծանր, խոշոր զանդուած:

**ՋՈՋԻԿ** — մեծ մայր, մամ, հանի, հօրը կամ մօրը մայրը:

**ՋՈՋՊԱՊ** — մեծ հայր, պապ:

**ՋՈՐԻ** — ձիւ ե իշու խոտնուրդ. անձին՝ անբեղուն բնասնի կենդանի:

**ՋՈՐՈՎ** — հալիւ, մեծ զժուարուութեամբ:

**ՋՈՐԻ-ՋՈՐԻ** — հաւերը կամ թռչունները կանչելու ձայնարկութիւն:

**ՋՈՒԼՂԱԿ** — ստաշանակ, բամպակ թելէ կտաւ հիւսող, կամ մետաքսէ, բարդէ սպանայ հիւսող անձ, զործաւոր:

**ՋՈՒՆՏԱԿ** — զոյգ, երկու հատ, ջուխտ մը, կրկին, երկու, իրար նման. երկուորեակ, երկուորածին:

**ՋՈՒՂԱՊ** — պատասխան, խօսք, յանձնարարական:

**ՋՈՒՏԱՄ** — անպէտք, անարժէք, թուլամորթ, ծոյլ, գատարկպարտ:

**ՋՈՒՏԱՊ** — իւզով եւ ձուարի բման հատով եփուած կերակուր:

**ՋՈՒ** — լայն բերան կարաս (օր. ձէյի ջոա):

**ՋՈՊԵԼ** — փորձել, ստուգել, հաստատարժութիւնը հաստատելու համար փորձարկութիւն կատարել, քննելով բնորել, հասնել:

**ՋՐԱՅ** — ճաշի ժամանակ, ժամ, կարգ, կանոն (օր. արկ ու ջրայ):

**ՋՐԱՐԻ** — այն մշակելի արտը կամ հողը, որ հնարաւորութիւն ունի ջրուելու:

**ՋՐԲԱՆԴ** — ամբարտակ, նաեւ ջրաբաշխ անձ:

**ՋՐԳԱՅ** — ջուրի ճամբայ. այն սփորական տեղը ուրիշ ջուրը միշտ կ'երթայ:

**ՋՐԴԵՂԵԼ** — երկաթին ջուրի գոյն տալ:

**ՋՐԹԱՓ** — ջրվէժ, սահանքով թափող ջուրի բնթացք:

**ՋՐԹՈՂ** — ամբարտակէն բաժնուած խոշոր առուններէ գատուած ջուրի ճամբայ, ապուղայ, ուրիշ ջուրը կը բաժնուի արտերուն վրայ:

**ՋՐԻՏ** — ձիարշառ, ձի խաղցնել կամ փողցնել, մրցանակի կամ հաճութի համար:

**ՋՐԽԱՇ** — կերակուր մը, որ սպող կամ սխտուով կ'ելփեն, հետք ալիւրէ խիւս խառնելով:

**ՋՐԽՈՒՆ** — ջուրերու վրայ ապրող խոշոր թաղանդաւոր սաքերով թռչուն:

**ՋՐԽՈՅ** — ջրգոյտթիւն հիւանդութենէ յատկապէս կամ խոց, ցաւ:

**ՋՐԿԱԿ** — ապուղայ կամ ձակ՝ ուրիշ ջուրը գուրս կը ծորի:

**ՋՐԿԱԿԻԿ** — ծաղկախաթի թեթեւ տեսակը: նաեւ ձերձակ ծաղիկ մը, որուն ծաղկելուն եւ մանուկներու ծաղկախաթի հիւանդութեան ժամանակը իրարու կը զուգակցին, նաեւ սասնց բիծելու նմանութեան միջեւ շատ մօտիկ եղբեր կան:

**ՋՐՀՈՐ** — խորունկ գուր կամ հոր, ուրիշ ջուր կը քաշեն:

**ՋՐՀՈՒՆ** — ջրային կենդանի, կուղք, մնկայ, գարշահատութիւն բուրդ անասուն:

**ՋՐԶԵՆԵԼ** — ջուր սրակել, ցնցուղով ջրել:

**ՋՐՎԱԹ** — մէկ, գոյ, ջուրթափ:

**ՋՐՏՈՒՔ** — արար ջրել, ստուգել, ջուրը ցանուած արաթ վրայ կապել ջրակու համար:

**ՋՐՓՈՍԻԼ** — ստարութեան մէջ, ջուրի փոփոխութեան հետեւանքով հիւանդութիւն: Ծանօթ. — Ջրքփոխելու հիւանդութենէն զերծ մնալու հասաքով, զարկաւորութիւն գացողին հետ, հայրենի հողէն «ափ մը հող» կ'ընկերացնելին, եւ կ'ըսեն որ «ամէն անգամ որ, նոր տեղի մը ջուրը խըմեա, պողանց մը այս սուրբ հողէն, ջուրի հետ խոտնէ եւ լսմէ, որ չջրփոխուի»: Հայրենիքի եւ հողի սերը խորհրդանշող, ինչ սքանչելի անուղապահութիւն, որ կը յայնարարուէր «ափ մը հող»ով:

**ՋՐՓՁԵԼ** — ջուրը բերանը առած ցընցուցի նման փշել:

**ՋՅՏԻԿ** — աքացի, կից, սաքով հարուած:

Ռ

**ՌԱԶԻՆ** — անամօթ, խայտառակ, բանէ չամչցող, աներես:

**ՌԱՆԻ** — օլի, ցփի, արաղ, ողելեց ըմպելի:

**ՌԱՆՏ** կամ **ԽԱՅՏ** — ձիերու ոտքերուն անցուելիք մետաղեայ կալանք: Առջևի ոտքերուն կ'անցրնեն, կը կղպեն եւ թող կու տան զաչաը արածելու. երբ բռնել ուղեն՝ զիւրաւ կրնան բռնել:

**ՌԱՀԱՆ** — անուշահոտ շրթնածաղիկ բոյս, զոր կերակուրի մէջ կը դնեն:

**ՌԱՄ** — բախտապուշակներու յատուկ մատենան:

**ՌԱՄԻԿ** — հասարակ, զուհի, տղէտ:

**ՌԱՆԳ** — զոյն, թոյր, զիմաստուեր:

**ՌԱԶԱԼ** — շերտուած եւ պահեստի համար չորցուած զղում:

**ՌԱՍ** — անակնկալ հանդիպում, պատահարար դէմը ելլել:

**ՌԱՏԱՄ** — արօրի այն մասը, որուն վրայ կ'անցուի խոփը:

**ՌԱՖԱՏԱ** — ուռնիի դալար ճիւղերէն հիւսուած թաթ: Ասոր վրայ ճերմակ կտաւ կ'անցրնեն, մէջտեղը խոտ կը լեցնեն, բաւական բարձրացնելով բարձի ձեւ կու տան, հաց թխած ատեն խմորի բացուածը վրան կը դնեն եւ կը զարնեն թոնիրի տաք կողին՝ եփելու համար:

**ՌԷԶ** — կարգ, տող, շարան, դիծ, հետք, արահետ:

**ՌԷՍ** — զիւղապետ:

**ՌՇԻԿ** — ոտնաման:

**ՌՈՒԹ** — մերկ, տկլոր, չքաւոր, աղքատ:

**ՌՈՒՉՔ** — զիմպիծ, Լերեոյթ, նրկար, զիմաստուեր:

**ՌՈՒՊ** — թութի կամ խաղողի քամուած հեղուկը (պէֆմէզ):

Ս

**ՍԱԳՈՒ** — ախոռի մէջ կտրուած այն բաժանմունքը, ուր կը նստին ժամանցի համար խօսելու:

**ՍԱԶ** — լարաւոր նուազարան, զործիք:

**ՍԱԼ** — հարթ տափարակ քար, զոր կը գործածեն բակերը կամ ճամբաները սալալատակելու:

**ՍԱԼԱ** — ափսէածեւ սակառ:

**ՍԱԼԱՖՏԱՐ** — վաշխառու, մեծ տուկոսով զբամ փոխ տուող մարդ:

**ՍԱԼԹԱ** — հաղուստ, պարեզօտ:

**ՍԱԼՎԻ** — նոճի ծառ (օր. բոյլը բարձր, սալվի չիմար, և. այլն):

**ՍԱԽ** — ատանց թաթի Երկայնափող գուլպայ, ձմեռ ատեն սրունքները տաք պահելու համար կը հագնին (պահիմ, գանկապան):

**ՍԱՂՐ** — նօսր, ցանցառ, ջուրի նուաղ չափը (օր. գետի հունը սաղր է):

**ՍԱՄԱԽԵՂԴ** — սամիի ժիր կապին հետեւանքով խեղդուել:

**ՍԱՄԱԽՈՐ** — աղնիւ տեսակի Երկաթի շինուած ձող:

**ՍԱՄԵԹԵԼ** — սամին կապող թել:

**ՍԱՄԻ** — սղորկ փայտ, զոյգ մը այս փայտերը կ'իջեցնեն լուծի ծակերուն մէջ, որով լուծը կը կապեն անասունի վիզին:

**ՍԱՄԻՐ** — կորեկէն՝ կաթով պատրաստուած ճաշ:

**ՍԱՆԴ** — քարփօր զուռ, որուն մէջ փարսանդով հայտհատիկներ — սիսեռ, կանեփ, ձաւար — կը ծեծեն:

**ՍԱՆԹՐԱՃ** — քառակուսի, սնտուկաձեւ (սանթրաքի կ'ըսէին նաեւ բախտախաղին):

**ՍԱՆՁՈՒ** — խիթ, փորի ցաւ, որ ատենը անպամ մը կը բռնէ եւ կ'անցնի:

**ՍԱՆՍԱԻԱՆ** — Լրախայի մկրտութեան առթիւ, կնքահօր կողմէ մանուկ սանուկին արուած կտորեղէն նուէր: Ընդհանրապէս առաջին անպամ Երբ Լրախան ատանցնէ կը հանէին անով կը փաթթէին կամ կը հաղուեցնէին:

**ՍԱՆՏԵՐՔ** — բարձր զղելու համար փայտի վրայ ամբարցուած Երկաթի ատամներով գործիք:

**ՍԱՆՏՐԱԳՐՈՒԹԻԿ** — մամուկ, սարդ, մանողակ:

**ՍԱՉԼՈՒԽ** — կանանց զիտալիք՝ արծաթ թելերով կամ յուլունքներու շարանով փայլչօրէն շինուած:

**ՍԱՌԱՏ** — խոչոր ծակերով մաղ:

**ՍԱՏԱՆԱԽԱԲ** — կանանց Երազափորձութիւն:

**ՍԱՏԱՖ** — սաթ, բուստ:

**ՍԱՏՐ** — բարձր նստարան, շինուած հողէ, քարէ կամ փայտէ. թախթ:

**ՍԱՏՐԱՆՃ** — ժամանցի խաղ, ճատրակ, շախմատ:

**ՍԱՐԵԿ** — գառնուկի կամ հորթի մորթին պատրաստուած բերնկապ, որով կը կապեն ամաններու բերանները:

**ՍԱՐՎԱԶ** — ձիու, ջորիի կամ աւանակի համետը եւ անոր բնկերացող կարդ ու սարքը: Սարվազ բառը կը բնորոշէր նաեւ համարձակ մարդը:

**ՍԱՒՏՈՒԿ** — բարակ եւ Երկայն տերեւներով խոտաբոյս, ճերմակ ծաղիկներով: Արմատը կեղուելով կ'ուտեն:

**ՍԱՖԱ** — հողէ շինուած ջուրի աման, կոտիկ, գաւաթ:

**ՍԵՆ** — սրածայր փայտ:

**ՍԵԿ** — ոչխարի կամ այծի մորթ, մաղերը պոկուած եւ չորցուած:

**ՍԵՊԵԱՆ** — զետնառիւծ: Գոյնը պարզային համեմատ փոխող կենդանի:

**ՍԵՐԱԿ** — ցանցառ, հատիկ-հատիկ:

**ՍԵՒԹՈՖԱՆ** — անէծքի իմաստով ասացուածք:

**ՍԵՒՌՆՈՒՏ** — սեւ, մութ, թխագոյն:

**ՍԷԶ** — խոտի տեսակ մը, որ մշակուած արտերու մէջ երբ բուսնի, հունձքին շատ մնաս կը հասցնէ:

**ՍԷԻՍ** — կարճ ժամանակի համար առնուած ծառայ:

**ՍԷԼ** — փայտէ միակտուր կլոր անիւներով սալակ, Եղան սալ:

**ՍԷԼԳՆԱՅ** — սալի ուղի, ճանապարհ:

**ՍԷՐՍՈՒՓ** — մաքուր, ջինջ, անարատ, անբիծ:

**ՍԸՌ** կամ **ՍՈՒՌ** — առաւօտեան պաղ հով, սիւք, ցուրտ քամի. նաեւ

զազանիք, վարպետութիւն, թա-  
 դուն դիտութիւն:  
**Սթրիլ** — հանդարտիլ, տեղաուր-  
 ուիլ, ինքն իր վրայ ամփոփուիլ:  
**Սիւս** — սպտակ (օր. հրմալ սիլա  
 մի զարկեց յերեսին, որ մատնե-  
 բու տեղ կ'երեւայ):  
**Սիւ** — տիղմ, սիկահող, ամանի տա-  
 կը նստած մրուր:  
**Սիւ** — սղինձէ, սղոզատէ կամ ար-  
 ծաթէ քաշուած բարակ թել:  
**ՍինԱՄ ՀԱՒՔ** — սիրամարդ թռչուն,  
 նշանաւոր իր գունազեղ փետուր-  
 ներով եւ աննման զեղեցկութիւ-  
 նով:  
**Սինի** — սղինձէ ախէ, սկուտեղի,  
 սեղան, սկաւառակ:  
**Սինջ** — վարսաւոր բոյս, կանաչ մա-  
 սը կ'ուտեն, կաթէն ձիւթ կը  
 պատրաստեն:  
**ՍինՈՒ** — սահման, եզր՝ կալուածի,  
 դիւղի. դաւառի, նահանգի կամ  
 պետութեան իրաւասութեան  
 պատկանող կէտր, սահմանը:  
**ՍիՊեռ** — վայրի բոյս, ցօղունը աղ-  
 ջուր կը գնեն: Աղջուրին մէջ հաս-  
 նելէ ետք, կ'ուտեն՝ սրսկս աղ-  
 ցան: Արմատը խաշուած կ'ուտեն:  
**ՍիՒՏԱԿ** — ճերմակ, սպիտակ:  
**ՍԼԱԼ** — սահիլ, սայթաքիլ:  
**ՍԼԿՏԱԼ** — լրտեսելու համար աննր-  
 կատ՝ տեղէ տեղ մտնել ելլել:  
**ՍնՏՈՐ** — սոխի բնասանիքէն կոճղի-  
 դաւոր տունկ, բարկ հոտով, ա-  
 ոռողջարար:  
**ՍԿԱՌՓԻՆ** — կօշիկ, ոտնաման —  
 թէթեւ եւ նուրբ կաշիէ պատ-  
 րաստուած:  
**ՍԿԻԼ** — ջուրի մէջ սուղուիլ, խորա-  
 սուզուիլ:  
**ՍՂԱՆԳ** — բոյս-արմատ, որուն գայ-  
 լի ախանջ անուեն ալ կու տան:

Ասոր արմատը կը չորցնեն եւ տը-  
 նային բժշկութեան մէջ վէրքեր  
 բուժելու համար կը գործածեն:  
**ՍՂԿԵԼ** — մանրել, ճղմելով փոշիա-  
 ցնել:  
**ՍՃԵՖ** — հալուստի թեւերու բերանը  
 կամ կուրծքի բուրբը կը կարուի,  
 տոկունութիւն եւ վայելչութիւն  
 տալու համար: Շատ անգամ մե-  
 տաքսաթելէ, արծաթ կամ ոսկէ-  
 թելէ կ'ըլլայ՝ աւելի վայելչու-  
 թեան նկատուամով:  
**ՍՆԳՈՒՏԱԼ** — կէս մը լալով խորունկ  
 շունչ առնել, հառաչել:  
**ՍնՈՒԼ** — վէրքի կամ կոտորուած ոս-  
 կորի լաւնալու երեւոյթ, նշան:  
**ՍնԿԼԻՅԱՆԿԱՃ** — խեցի, ոստրէի  
 պատեան:  
**ՍնՏՈՒ** — կաւ-հողէ շինուած թոնի-  
 րի վարի շրթունքի մաս:  
**ՍնՏՈՒԿ** — արկղ, տուփ, պահարան:  
**ՍՈԹԵԼ** — ժողովել, վեր առնել, ամ-  
 փոփել, քշտել:  
**ՍՈԼ** — թէթեւ կօշիկ, առանց ներ-  
 բանի ոտնաման:  
**ՍՈՍ** — շուշանաղզիներու բնասանի-  
 քէն արմատաւոր բանջար, ծիւր  
 կանաչ կ'ուտեն, խի կոճղիդաւոր  
 արմատը թէ՛ կանաչ եւ թէ՛ չոր  
 կ'ուտեն:  
**ՍՈՍՈՒԿ** — վայրի շուշանաղզիներուն  
 պատկանող բոյս, սոխի նմանող,  
 բարակ ցօղունով եւ ուտելի:  
**ՍՈՂՆԱԿ** — ատամնաւոր փայտէ բա-  
 նալի: Սողնակը բացատրելու հա-  
 մար վերցնենք արականը եւ ի-  
 դականը. արական սողնակը բա-  
 նալին է, իդական սողնակը կըղ-  
 պանքն է: Արական սողնակը կ'ու-  
 եննայ 4 կամ 5 ատամ: Այս սող-  
 նակ-բանալին զբան վրայի իդա-

կան սողնակի բացուածքը անցնե-  
 լով նոյնանման ատամներուն  
 շփուելով դիւրութիւն կ'ընծայէ  
 գուռը բանալու:  
**ՍՈՄԱՐ** — չափ, հոցահատիկներ չա-  
 փելու չափանիշ: Մէկ սոմարը հա-  
 տասար է 16 միլու կոտի:  
**ՍՈՆՈ** — բարձրահասակ, վայելուչ:  
**ՍՈՍՐԱԹ** — ալյանդակ, տղեղ, ան-  
 ճտանի, կոպիտ, անշորհք:  
**ՍՈՐՍՈՐԱԼ** — քամուիլ, զարհուրել,  
 դողալ:  
**ՍՈՒԼՈՒԼԻԿ** — սրածայր:  
**ՍՈՒՆ** — սիւն, փայտէ կամ քարէ  
 սիւն, յենարան:  
**ՍՈՒՆԿ** — հովանոցանման զլուխով  
 ճերմակ բանջար, արագ աճող,  
 դիշերուան մէջ կը մեծնայ, ցօ-  
 ղունը մինչեւ կանգուն մը կը  
 բարձրանայ, խի զլուխը մինչեւ  
 երեք մատի թանձրութիւն կ'ու-  
 նենայ:  
**ՍՈՒՍՐ** — կարմիր կաւ: Ասով՝ կո-  
 տրուած խեցեղէնները կը կոկեն,  
 իրարու կը փակցնեն եւ փակ-  
 ցուած տեղը կը յղկեն: Միացման  
 կէտր կոկ կ'անուանեն:  
**ՍՈՒՏԱՆՈՒՆ** — ծածկանուն, զըշա-  
 նուն, զրական անուն:  
**ՍՈՒՏՄԵՌՈՒԿ** — կեղծ մեռելալ ձե-  
 ւանալ, սուտ մեռելի նմանիլ:  
**ՍՈՒՐԲ** — անմեղ, անարատ, մաքուր,  
 ամէն մեղքէ զերծ:  
**ՍՈՒՐԻ** — ոչխարի երամակ, կեն-  
 դանեաց խումբ, ճիւղ:  
**ՍՈՒՐՈՒՆ** — սրածայր քար, ժայռ:  
**ՍՈՒՔԵԼ** — շինել, կառուցանել, զու-  
 գել:  
**ՍՊԻՏԿՈՒԿ** — սոխանման բոյս մը, որ  
 զարնան սկիւրը կը բուսնի. հա-  
 տաքելով պարանի նման կը հիւսեն

եւ կը չորցնեն ձմեռուան համար  
 սրպէս պաշար:  
**ՍՊԻՏԿՈՒՅ** — ճերմկուց, աչքի ճեր-  
 մակը, հաւիթի ճերմկուցը:  
**ՍՊԼԻԼ** — սպրդիլ, սայթաքիլ, ան-  
 դիտակցօրէն կամ անակնկալօրէն  
 վար իշխալ:  
**ՍՊՈՒԼ** — վախի ազդեցութենէն զոյ-  
 նը նետել: Հիւանդութենէ ապա-  
 քինելու շրջանին ստացած զոյնի  
 փափխութիւն:  
**ՍՈՒԹՂԿԱԼ** — անցուսպ ցանկութիւն,  
 բանի մը դէմ դողալ:  
**ՍՈՒՆԵԼ** — անկապ խօսիլ, անիմաստ  
 բաներ բռնել, մանր եւ խոշոր բա-  
 ներ իրարու խառնել:  
**ՍՏԵՐՁ** — անսպուռ, ամուլ, անծին,  
 չոր:  
**ՍՐԲԱՏԱՇ** — մաքուր տաշած, կոկած  
 եւ փայլեցուած երեսով քար:  
**ՍՐԳՈՂԻԼ** — սլոգալ, զղուիլ, դանիլ,  
 խոռովիլ:  
**ՍՐԵՄ** — կաշիի բարակ շերտ, թել:  
**ՍՐՄԱ** — ծարիր (օր. աչքիք սրմա է  
 դրի. էն ի՞նչ խորտիկ էր):  
**ՍՐՍՈՒՐ** — մաքուր, դուռած, հա-  
 տիկ-հատիկ:  
**ՍՐՍՈՒԱԼ** — հոցահատիկը պարկի մէ-  
 ջէն անձանթ ծակէն դուրս հո-  
 սիլ:  
**ՍՐՍՓԱԼ** — զողողալ, ցուրտէն կամ  
 վախէն ցնցուիլ:  
**ՍՐՏԱՆՈՅ** — կանացի կրծկալ, ազնիւ  
 բուրդի թելերէ հիւսուած, օղա-  
 կով մը կ'անցրնեն վիզին, վարի  
 մասը մէջքը կը կապեն՝ նուրբ  
 թելերէ հիւսուած կապերով:  
**ՍՔԹԱ** — ցից, սրածայր փայտ, սայ-  
 լակի չորս անկիւնները կը տնկեն:  
**ՍՔԼԻԼ** — կծկուիլ, պապանձիլ, վա-  
 խէն լռել:

Վ

ՎԱԳ — ջրաղացի փայտէ խողովակի (օլուղ) վարի մասը, բերանը:  
 ՎԱԹԵԼ — թափել, հոսեցնել:  
 ՎԱՆԵՐԱԿ — բազիկերակ:  
 ՎԱԿԱՍ — պատարադիչ քահանայի շուրջառին վերել, ուսերու վերայէն վիզին բոլորով ծածկոց:  
 ՎԱՆՔ — մենաստան, միաբան կուսակրօններու տուն, եղբայրանոց, դպրութեան եւ քրիստոնէական վարդապետութեան ուսուցման կեդրոն:  
 ՎԱՌԵԿ — վառեակ, հաւու ձագ, քիչ մը մեծցած հաւու ճուտ:  
 ՎԱՍՏԱԿ — գործի, աշխատանքի շահ, արդիւնք:  
 ՎԱՐԱՄ — թոքախտ, քրպիսա:  
 ՎԱՐԴ — անուշահոտ դուրեղնազ ծաղիկ:  
 ՎԱՐԴԱՆՏ — հարսանիք, եռացական հիւանդութիւն, որուն նշանն է մորթին վրայ կարմիր բիծեր հանել: 5-15 տարեկան մանուկներ անկէ կը բռնուին. տարափոխիկ է:  
 ՎԱՐԴՇԱԼԱԿ — տղայ գաւակին յաջորդող աղջիկ գաւակը վարդաշաղկ է: Հակահիշ՝ քաշալակ:  
 ՎԱՐՈՑ — դաւար փայտ:  
 ՎԱՐԺԱՊԵՏ — ուսուցիչ, դաստիարակ, սորվեցնող, վարպետ:  
 ՎԱՐՈՒՎԵՑԿԻ — արօրադրութիւն:  
 ՎԱՐՍԱՆԴ — մուրճի նման գունտ փայտ, որով հացահատիկը կը

ծեծեն սանդիւն մէջ:  
 ՎԵՂԱՐ — կուսակրօնի կնուզաւոր գլխարկ:  
 ՎԵՑԿԻ — վեց եզներով լծուած փոքր դուրբան:  
 ՎԷՐԻ — վայրի, լեռնային (օր. վերի էծ, մարալ, ջէյրաֆ):  
 ՎԶՆՈՅ — մանեակ, վիզին կապելիք ոսկիէ կամ թանկագին քարէ դարդ:  
 ՎԺԱԼ — բռնադրօսիկ լաց, մանկական յարատեւ լաց:  
 ՎԻԹ — հոլ, տղոց յատուկ փայտէ խաղալիկ, փոքր կլոր գունտի մը չափ, վերի մասը լայն, աստիճանաբար դէպի վար կը դառնայ սրածայր: Մտրակով կը քաշեն, ինքն իր վրայ կը դառնայ, սառոյցի կամ հարթ դեմնի վրայ կը խաղան ասիկա:  
 ՎԼԱՅՔ-ԼՈՒԱՅՔ — լուացք:  
 ՎՆԿՁՏԱԼ — պարսատիկով նետուած քարի հանած ձայն:  
 ՎՈՒՁ — աճապարանք, արագ, հապճեպ:  
 ՎՈՒԿ — անժուռ, առանց միտի կամ իւղի ապուր (օր. օղմէ վոնիկ):  
 ՎՈՆԻԿ — նիհար, տխրոյց, մատղաշ ուլ, դառնուկ կամ հորթ:  
 ՎՈՇԻԿ — ոչտունեաց դաւառացի:  
 ՎՈՎՈՒԱԼ — քրթմնջել, տրտնջալ, շատախօսել, ինքն իրեն խօսիլ:  
 ՎՐԹՎՐԹՈՅ — տրտունջ, դանդաղ, առտոց, քրթմնջոց:

Տ

ՏԱԳՐ — կնոջ մը ամուսինին եղբայրը:  
 ՏԱԼԱՂ — փայծաղի հիւանդութիւն: Նաեւ տալաղ մեղր, անհայ, մոմպատ:  
 ՏԱԼԱՇ — շերտ, որոշ չափով մը կարուածք:  
 ՏԱԼԱՊ — անասուններու դուրսուրման ժամանակի բնորոշում:  
 ՏԱԼՏԱՊԱՆ — մեծամարմին, խոշոր կազմուածք, հոկայ:  
 ՏԱՆՏ — յատակ: Փայտէ շինուած յատակը տախտակամածն է, իսկ կաւով կամ ցեխով յատակակա հարթուած դետինը տախտ կ'ըսուի:  
 ՏԱՄԱ — ժամանցի համար խաղ:  
 ՏԱՄՊՈՒՐԱ — նուագարան, սոպանման երաժշտական գործիք:  
 ՏԱՆԻՔ — տանը ծածքը — գերաններով, մարդակներով, ցախով եւ հողով ծածկուած:  
 ՏԱՇԵՂ — փայտէն տաշուած մասնիկներ:  
 ՏԱՇՈՆ — հիւսիսային հով, սառնամանիք:  
 ՏԱՊԱԼ — շէնքին տանիքի եւ պատի միացման կէտր:  
 ՏԱՊԱՆ — անասուններու հիւանդութիւն, ախտ, որ ոտքերէն կամ բերանէն կը սկսի:  
 ՏԱՊԿՈՅ — փոքրիկ ճաշ. Համարձման տօնի օրը սրբախոյրեր ուխտի գացած ատեն, բացօթեայ ճաշ կը պատրաստեն, որուն տապկոց կ'ըսեն:  
 ՏԱՏՄԻՐ — դայեակ, մանկարար:  
 ՏԱՏՆԻԼ — գանիլ, պփղալ, սրդոյիլ, բանէ մը զզուել:

ՏԱՐԱ — կշիւ. բան մը կշտելու համար բուն նիւթին խակական ծանրութիւնը ճշգրտ ամանին կամ պարկին կշիւքը հանել, տարան տանել:  
 ՏԱՐԵԿԱՆ — հաճար, անձակ ցորեն, չատար. մէկ տարուան ժամանակամիջոց. մէկուն կեանքի ժամանակաշրջանը:  
 ՏԱՐԹ — ոչխարներու գոմին մէջ թանձրացած թրիքը, որ գարնան սկիզբը կտրելով կը չորցնեն եւ իրբեւ վասեյանիթ կը գործածեն:  
 ՏԱՐԻ — հօրեղի. բազարջ հաց, ավսի մը մեծութեամբ: Այս հացը կը թխեն մեծ պահոց Գ. շարթու կէտին (Միջինքին): Խմորին մէջը մատանի կամ արծաթ պրամ մը կը դնեն, այն հաւատարմ, որ սրուն հացարածինին մէջ որ ելլէ, անոր միճակուած կ'ըլլայ ասան հարստութիւնը: Բազարջ հացը թանիքն հանած ատեն՝ ասան արու գաւակներէն փոքրիկի մը չափակը կը դնեն գաւակն գարս հանելու, յոյսին ու արեւին ցոյց տալու, եւ նորէն ներս բերելու: Գիշերը վրայ կ'անցնի, յաջորդ օրը կը կտրեն տարին եւ կը բամբակ անցնեն:  
 ՏԱՐԲԱՏԱՂ — ցրտել, հովին տայ, հիմնադատակ կործանել:  
 ՏԱՐՈՒԻԼ — կորսնցնել՝ խաղի մէջ, ատեւտրի մէջ եւ փոխ-յարարելութեան մէջ:  
 ՏԱՎԱՐ — գուար, բնտանի կենդանիներ:



**ՏԱՓԻԼ** — թաղնուիլ, սրահուիլ, տեսողութենէ կամ հետազոտումէ խուսափիլ:

**ՏԱՓՈՒԿ** — թաղնուած, խորամանկ, նենգամիտ:

**ՏԱՓՍԱԼ** — տափարակ, հարթ, հասար:

**ՏԵՂՏ** — տուգտ, մորտ:

**ՏԶԸԿՈՏԻԼ** — թեթև բանով մը խոսիլ, աննշան բանով վշտանալ:

**ՏԶԿՈՒԻԼ** — թրջուիլ, անխելութիւն համար երեսը թրջել:

**ՏԶՄԱՆ** — խոչոր, բիրտ, մեծազանդուած:

**ՏԸԽ** — ծաղկախոտի դէմ պատուատ:

**ՏԺՏԺԱԼ** — ալրուիլ, ճենճերիլ, բարկ կրակի վրայ խղի կամ միտի ալրուելու ձայն հանել:

**ՏԻԶ** — անասուններու ոջիլ:

**ՏԻԼ** — տիղմ, ցեխ, դայա, աղտեղութիւն:

**ՏԻՆ** — անմարտողութիւն: Տնային բժշկութեան մէջ բուժելու կերպն է՝ ծնօտը եւ վարի կողմէն դէպի վեր վիզի երակները շփել, մինչև որ յորանջի:

**ՏԻՏԵՆԻԿ** — մանկական խոց: Մանուկին թաթիկները ծունկերուն առնելով, ձեռքի երեսի մորթը երկու մատներով թեթև մը կրամրթելով վեր կը քաշեն. նոյն պահուն մեղմ ձայնով ալսակէս կ'երգեն «Տիտեխիկ տիտմարտիկ, զուռնայ վիզիկ, էփէ պաթայ ու կուլուճա, ուտէ խմէ, հագնի, կապէ, յեղնայ...»:

**ՏԻՏԻԿ ԸՆՅԵԼ** — հանդարտ նստիլ, հանդիստ մնալ:

**ՏԼՈՆՔ** — կակուղ, յեղեղուկ, լրկուած:

**ՏԼԸՊԻԼ** — թմբիլ, թեթև քնանալ:

**ՏԼՈՒՐ** — պատանիներու խոց. դայն

կը խոցան Տ-10 մատնաչափ փոքր փայտ մը օղին մէջ նետելով եւ ձեռնափայտով կը ջանան անոր գորնել նշանակէտին հասցնելու համար:

**ՏԽԿԵԼ** — կամոց գորնել, թեթև հարուածել:

**ՏԽԿԻ** — անուշահոտ կեղևով ծառ մը:

**ՏԿԼՈԶ** — մերկ, առանց հագուստի՝ պարզ մարմնով, պղտու չհագած:

**ՏԿՏԿԻԶ** — լեզուին տալ, յամառօրէն խօսիլ, բնդդիմարտել:

**ՏՂԱՅԿԱՆ** — մանկան ծնունդէն ետք ծննդաբերքին յաջորդող մօրը վիճակին բնորոշումը:

**ՏՆԱԶ** — ուրիշ մը անդոտնել, վրան խնդալ, ծաղրել, խեղկատակել:

**ՏՈԼ** — անբարոյական, շնացող, բրդջախոճ:

**ՏՈՂՐԱՄԱ** — ծխախոտի տերեւներու փաթթուած ձև:

**ՏՈՌՆ** — շուան, անասուններու վրդկապ, ետլար:

**ՏՈՏԻԿ** — փոքրիկ ոտք, գանուակի եւ հօրթի ոտք:

**ՏՈՐԻ-ՏՈՐԻ** — կարմրապոյն. հաւանարար առնուած տարրն անուռնէն, սրմէ կարմիր ներկ կը պատրաստեն:

**ՏՈՒԱՅՈՒՐԻԿ** — տաղանդ, հանճար, բնատուր պարզեւ, աստուածալին շնորհք:

**ՏՈՒԴՈՒ** — պուպրիկ, խամաճիկ, պահու ճապատանք:

**ՏՈՒԹ ՈՒ ՌՈՒԹ** — մերկ, տիլոր, աղբատ, բնչապուրկ:

**ՏՈՒՏՐ** — կամուրջի կամար:

**ՏՈՒՐԻԿ** — պարկ, տապակ, մախոց, պայուսակ:

**ՏՈՒՐՈՒՏԱՓ** — հոգեվարք, մահամերձ, շիջելու, հանդելու վիճակ:

**ՏՈՒՐՈՒՐԻԿ** — դատարկ, պարապ, անխելք:

**ՏՈՒՆՏՈՒՃԻԿ** — անակ, հիւղակ, առն շինելու նմանութեամբ մանկական խոց:

**ՏՌԱԼ** — ծոյլ, դատարկապարտ, աշխատանքէ խուսափող:

**ՏՌՏԸՉՏԱԼ** — դեղելիլ, երերայ, տատանիլ, ակամայ պարել, դանդող շարժիլ:

**ՏՌՏՌԱԼ** — շտախոսել, վալրահաչաթիւն:

**ՏՐԱՏ** — անհամբեր, արտորանքով բան մը բնելու որոշում տալ, իրարանցնել:

**ՏՐՃԻԿ** — ցատկոտութ, խայտալ, անասուններու ցատկոտութ՝ ետեւի սորերը օղին մէջ վեր վար հանելով:

**ՏՐՄՈՒԶ** — ջալապրի թանրիւն մէջ եփուած բազարջ հաց:

**ՏՓՈՅ** — ձեծ, փայտով գորնել, թափով լաթը ձեծել:

**ՏՕԹ** — տաք, տապ, հեղձուցիչ, նեղացուցիչ օդ:

Ր

**ՐՈՒՐԻԿ** — մանկիկի օրօրոցին քով օրօր բնել:

Յ

**ՅԱՆ** — շորքած ուտի կամ ծառի ճիւղ:

**ՅԱՄԱՔ** — շոր, անջուր (օր. ցամաք կաց, ցամաք ձոր):

**ՅԱՅԵԼ** — լուացքի սրահուն, պաղ ջուրէ անցրնելու գործողութիւնը:

**ՅԱՆ** — Լօթը շէնք տեղ, հոյր չափելու բնդունուած չափանիշ, արտափար. շորքուած քակոր:

**ՅԱՆՈՅ** — վառելանիլ թերու ամբարանոց:

**ՅԱՆՔ** — սերմանում, սերմանուած հացահատիկներու ամբողջութիւն:

**ՅԱՔ** — հոգակոչները հարթոց երկրապորձական գործիք:

**ՅԽԱԵԼ** — մացառներու ճիւղերէն կամ շորքած ուտիներէն կապուած աւել:

**ՅՈՒՏԱԼ** — ջուրի կեղբունէն ցատկած կաթիլներ, բարակ անձրեկէլ:

**ՅՆԿՆԻԼ** — շունի ձայ բերելը, աւել, բաղմանալ:

**ՅՆՈՐԱՅ** — պակասամիտ, յիշողութիւնը խանդարուած:

**ՅՆՅՂԵԼ** — ցնցել, թոթուել, շարժման ենթարկել:

**ՅՈՂ** — ցոյսն, կանկոփի, ցորենի կամ սեւէ տանկի եղկոր, ծիր:

**ՅՈՂՈՒԿ** — ցորեն, հացահատիկ:

**ՅՈՔԼՈՒԱ** — արտասովոր բարձր հասակ, ուղղաձիգ:

**ՅՈՒԻՔ** — քիւ, շէնքի մը տանիքին կորը, պատին յեցած յաւելեալ մասը:

**ՅՈՒՐՈՒՐ** — ուրուր, ցին թոշուն:

**ՅՈՒՐՏ** — պապ, սատ. պապուկ:

**ՅՈՒՅԱՔ** կամ **ՅՈՒՅՔ** — անտոնի,

այլանդակ, տղեղ, տարօրինակ,  
այլակերպ:  
ՅՌՊԵՆ — ջրախառն թրիք:  
ՅՐԸՆԻԼ — կերածը սխալ ճամբայով  
գացած ատեն հազար, մուրբիլ:  
ՅՐՅՆԿԵԼ — սրսկել, ջրջնկել:

ՅՐՆԻԼ — սպակիր կամ խեցեղէնի  
անկումով բազմաթիւ կտորներու  
բաժնուիլ:  
ՅՕՂ — շող, դիշեր ատեն իջնող թե-  
թեւ ջուր:  
ՅՓՆԵԼ — սփռել, տարաղնել:

Փ

ՓԱԹ — կարգ, պարի շրջան մը, կէ-  
տէ մը շրջան ընելով նոյն կէտին  
հասնիլ:  
ՓԱԼԱՆ — սկզանման խոտ, որմէ  
կեմ կը շինեն խոտի կամ ցորենի  
խուրձեր կապելու համար:  
ՓԱԿԱՆ — վանքի բակ, նախնական  
մուտք:  
ՓԱՀԼԵԻԱՆ — դօտեմարտող, լարա-  
խաղաց: Վերջինին համար ժո-  
ղովուրդին հաւատքը այն էր, որ  
փահչիւանը երբ երազ տեսնէ, թէ  
Սր. կարապետը իրեն յայտնէ թէ  
փահչիւան պիտի ըլլաս, պէտք է  
երթայ Մշոյ Սր. կարապետի  
փանքը ուխտի, հոն սուրբին գե-  
րեզմանին վրայ աղօթած ատեն  
գօրծ թիւն կը ստանայ եւ կը դառ-  
նայ փահչիւան:  
ՓԱՅՆԿ — թղթատար, սուրհանդակ,  
նամակարեր:  
ՓԱՆՁԱՀԱՐ — քար մը որ հակաթոյ-  
նի բնոյթ ունի (տես դեղքափ):  
ՓԱՆՃ — ճանկ:  
ՓԱՌ — կղզանք, փականք:  
ՓԱՌԱՆԻ — դայիբու փոհմակ:  
ՓԱՌԵԿ — ծուռ, զոգաւոր սրունք:  
ՓԱՌԿԱԼ — չափական զործիք, կար-

կին, խօսքի չափ, սահման, խո-  
հական արտայայտութիւն:  
ՓԱՐԹ — տերեւ, համասփիւռ ծաղի-  
կի թուփ:  
ՓԱՐՉ — հողէ սափոր:  
ՓԱՐՏԵԼ — թոնիրը, հնոցը կամ փու-  
ռը լաթով մը մաքրել:  
ՓԱՓ — թաթ, կամ բաց ձեռքով տըր-  
ուած հարուած:  
ՓԵԳԱԼ — անասունի անհանդարտ  
չարժումով ոտքով գետին դար-  
նելը (օր. ձին փեգաց):  
ՓԵԹԱԿ — մեղուններու հողաչէն  
տուն, բնակարան. նաեւ հողամ-  
բար:  
ՓԵՂԿԵԼ — երկուքի բաժնել, գատել,  
ձեղքել:  
ՓԵՃԿԵԼ — պոկել, արմատախիլ քա-  
շել, փետրատել:  
ՓԵՐԹ — կտոր, բաժին, մաս:  
ՓԷՃ — ուս, թիկունք:  
ՓԷՇ — քղանցք, հազուատի վարի  
կախումը ծայրերը, շուրջը:  
ՓԷՇԱՇՈՐԻԿ — քղանցքը թոյլ թողե-  
լով քալուածք:  
ՓԷՏ — փայտ, գաւազան, ձեռնա-  
փայտ կամ որեւէ տեսակի փայտ:

ՓԸՌՉ — մալ, դէս, վարս, հեր. մա-  
ղի կոշտ տեսակը:  
ՓԸՍՏ — ապարդիւն, պարտպ, ան-  
ըրպատակ:  
ՓԹՐՈՒԿ — կակուղ, անմարմին փո-  
շեման նիւթ:  
ՓԻՆ — շան կամ կատուի կղզղանք:  
ՓԻՆԱ — հազուատի կամ կոշիկի վր-  
այ դրուած կարկան, քոռոպ:  
ՓԻՐ — մաքուր, առաքինի. նաեւ  
քիւրտ խղղլլալ աղանդաւորնե-  
րու կրօնաւոր:  
ՓԻՅԱԻ — մեռու, սատկեցաւ, ան-  
շրնչացաւ:  
ՓԻՅՈՒԿ — սատակ, դիակ (օր. քըր-  
դու փիցուկ, շան փիցուկ):  
ՓԼԱՅ — իւզով, բրինձով կամ պուր-  
զուրով պատրաստուած կերու-  
կուր:  
ՓԼՈՒՆԿ — սրածայր փայտ, ցից, ո-  
րով հողը կը փորեն, հոնկէ բան  
մը դուրս հանելու համար:  
ՓՄԱԼ — տոփայ, ցանկանայ, ցան-  
կայարոյց պացում ունենայ:  
ՓՆԱԼ — սիրել, տաքնայ (օր. էն խո-  
րոտիկ աղջիկնի որ տեսայ, սիրտ-  
սի ընտրա վրայ փընաց):  
ՓՆՁՈՒԿ — տձեւ, ճմոթուած,  
ջախջախուած դիմադիծ (օր.  
փնչխուկ քիթ):  
ՓՇԱՄՁԻԼ — վախէ ցնցուիլ, մորթը  
կծկուիլ, սարսափիլ:  
ՓՇԹՈՒՔ-ՓՇԹՈՎ — երկփող ատրը-  
ձանակ, դէնք:  
ՓՇԿՈՒԼ — ոչխարի կամ այծի թը-  
րիք, պտուր:  
ՓՈԴԻԿ — դառնուկի կամ սրիչ կեն-  
դանիի մորթէ շինուած տձեւ ե-  
րեսոյթով վերարկու:  
ՓՈԹՐՈՅՈՅ — փոթորիկ, աղմուկ,  
իրարանցում:  
ՓՈՆ — մէկէ մը առնուած բան մը,

վերադարձնելու պոյմանով:  
ՓՈՈՒՆԻ — աղնձուած ցորենի ա-  
լիւր. չաքարի, մեղրի կամ ուս-  
պի ջուրով շաղկով կ'ուտեն  
պահք օրերուն: Փոթիկը ճաշը կը  
պատրաստեն Սր. Սարգիսի պահ-  
քին, եւ այդ ճաշը կերած ատեն  
երթատարը աղայ կամ աղջիկ  
բաժին մը կը գնեն սանր քիւր,  
անձեղներու բաժին: Քոշունը  
ճաշը ստեղծէ ետք, ս'ը սպաս-  
թեամբ որ թոխ, այդ կողմէն կու  
գայ աղային հարմարուն, իսկ աղ-  
ջրկան՝ փեսացուն:  
ՓՈԿ — կաշիի պարան, թակ, շուան:  
ՓՈԳ — սրինգ, փչողական նուազա-  
բան, որուն մէջը պարտպ է, շին-  
ուած փայտ կամ մետաղէ, վր-  
ան ծակեր բացուած են. փոյնի  
բերանը շրթունքներուն ստնկով  
կապնակի՝ կը փչեն:  
ՓՈԳԱՆ — փոցոց, գրան տաջեկէն բա-  
կրոց ճանապարհ:  
ՓՈԳՈՅ — թոնիրներէ հանուած մո-  
խիրներու հաւաքատեղի, հրա-  
պարակային աղբանոց, ճամբայ:  
ՓՈԳՊՈՏ — օձիք, վզկապ:  
ՓՈԳՐՈԿ — կաւ հող, շինուած եւ  
թրծուած խողովակ, ազուպայ:  
ՓՈՆԹ — կնճստ, թնճուկ, ծալք,  
ծուռ:  
ՓՈՍԹ — մորթ, կաշի, մաշկ:  
ՓՈՐ — մարմնի բնութեքը, աղիքնե-  
րու ամփոփումը:  
ՓՈՅՆ — մանրատը գործիք, երկ-  
բալարը կը գործածէ նոր հրե-  
ձուած օրուն՝ գետինի վրայ հա-  
ւաքելու համար:  
ՓՈՒԼ — բլուր, թուր, հաղաթումք:  
ՓՈՒՃ — պարտպ, գառարկ, անթ-  
մաստ, անթիւկ:

**ՓՈՒՇ** — վարդի, կամ որևէ տունկի վրայի սրածայր խայթող սատր:  
**ՓՈՒՇԻ** — չլարչ, գոյնըզոյն ներկուած նուրբ գործուածքով ծուպատր գլխակապ:  
**ՓՈՒՌՆԻԿ** — թոնիբի մէջ տար մոխրի վրայ եփուած թանձր գունդ հաց:  
**ՓՈՒՍՈՒԼԱՅ** — Երկտող գրութիւն, կողմնացոյց (օր. փուսուլան կորցուցեր է):  
**ՓՈՒՏ** — փտած, փտութիւն, ծակծկած (օր. փուտ փայտ, փուտ քար):  
**ՓՈՒՐԽ** — կակաչ, թեթեւ՝ չոր ձիւն (օր. փուրխ է էս օրուան էկած ձիւնը): Հողը փուրխ է = կակուղ. արդասատր:

**ՓՈՒՔ** — բարկութիւն, առելութեան կամ ջինարկութեան ցուցադրութիւն: Նաև հով արտադրող գործիք մը:  
**ՓՈՔՐԱՒՈՐ** — վանական կուսակրօններուն ծառայող անձը:  
**ՓՈՒՆԷԼ** — սփռել, բանալ, պարզել:  
**ՓՈՒԹԵԼ** — պատուել, կտրակել, կտոր-կտոր բնել, մաշկցնել:  
**ՓՈՒԹԻԿ** — կտոր, մաս, բաժին, ձորձի կտրած մաս:  
**ՓՈՏԿԵԼ** — քրքրել, խառնշտկել (օր. հար գտանքի հողնի կը փռակէ):  
**ՓՍՏԱԼ** — սահել, սայթաքել:  
**ՓՐԽԿԱԼ** — անակնկալ կերպով բարձրաձայն խնկալ:  
**ՓՔԻԼ** — ուռիլ, հզարտանալ, բարկանալ, օգով լեցուիլ:

**Ք**

**ՔԱԼ** — խակ, տհաս, հասունութեան պակաս:  
**ՔԱԼԱՃՕՇ** — կերակուրի տեսակ մը, թանով կամ չորթանով եփուած:  
**ՔԱԼԱՓՁԱ** — Երկաթեայ կալանակապ, բանտարկեալի ստղին կամ ձեռքին անցընելով կը կղպեն:  
**ՔԱՄԱՓՆՁԵԼ** — սրարչաւ ձին երբ նշանակեալին հասնի, շունչը՝ քիթ ու բերնէն չողխացած փրփուրի հետ դուրս կու գայ. այս վիճակն է քամափնչել:  
**ՔԱՄԻ** — հով, փոթորիկ. յողացալ:  
**ՔԱՄՊԱՆ** — աւերակ, անբնակ, քարոքանդ:  
**ՔԱՆՔՈՂՅՆԵԼ** — բանի մը բաղձալ, ղժուարութեամբ խնդրանք մը ստանալ:

**ՔԱՁՔ** — ողի, դեւ, կիսաստուած, բարձրարեւձ լեռներու կամ անդրնդախոր ձորերու մէջ բնակող հսկայ:  
**ՔԱՍԱ** — պնակաձեւ լայն բերան՝ մէջը փոս, խոր. հողէ աման:  
**ՔԱՍՂԱՆ-ԳԱՍՍԱՆ** — խմորը չաղելու տաշտ:  
**ՔԱՐԱՔՈՍ** — քարի վրայ կապուած բար, քոս:  
**ՔԱՐԹՈՒ** — հինցած, չորցած, օթեկ հաց:  
**ՔԱՐԽԷԾ** — քալելէն՝ ստղի տակ գոյացած վէրք, ուռեցք:  
**ՔԱՐ ՀԱՆԳՈՒՐՁ-ՔԱՐ ՀԱՆԿՈՒՇՏ** — անբակտեիլի հանդոյց (Գորղեան հանդոյց):

**ՔԱՐՃԻԿ-ՔԱՐԱՃԻԿ** — թռչնաղբիւն-բու ստամօքս  
**ՔԱՐՃԻՆ** — վայրի տանձ:  
**ՔԱՐԱՆ** — բուրդէ, բամպակէ կամ մազէ թել մանող գործիք:  
**ՔԱՐՈՒԱՁ** — ծանծաղ ջուրի մէջ քարաչարք, սրուն վրայէն քալելով ջուրը կ'անցնին:  
**ՔԱՐՈՒՊԱՐ** — դեղին կամ սև սաթ:  
**ՔԱՐՍԻԿ** — խաշուած ևւ աղնձուած կանաչ ուրտն:  
**ՔԱՐՓԻՃ** — սուտ քար, խամ հողի ցելով հետք յարկ խառնուած ևւ արևի տակ շորցուած կղմինար:  
**ՔԱՅԱՆ** — թխուած գինի, կծու՝ ախախորձ հոս, անհանդուրժելի բնատրութիւն:  
**ՔԱԻԹԱՆ** — ձերացած. սյժք, կորոզութիւնը կորսնցուցած, հինցած:  
**ՔԱԻՈՐ** — կնքահայր, խաչեղբայր, խաչքաւոր:  
**ՔԵՂՈՒՆԷԼ** — կեղուել, բանջարի, կամ պատուի վրայի կեղեւր հանել:  
**ՔԵԹՐԻԼ** — կողմնակի ծոխի, վար իյնալու կէտին հասնիլ:  
**ՔԵՂՐԹԵԼ** — կեղեւր հանել, մաշկազերծ բնել, մորթաղբերծել:  
**ՔԵՉԱ** — թաղիք, կուլապ, ոչխարի բուրդէ շինուած սփռոց:  
**ՔԵՌԻ** — մօրեղբայր:  
**ՔԵՐԹԵԼ** — մորթաղբերծ բնել, կաշին մարմնոյ վրայէն հանել:  
**ՔԵՓԻԼ** — սայթաքիլ, անդիտակցարար բանի մը դարձուելով, իյնալու վտանգին ենթարկուիլ:  
**ՔԸԱ** — դաճ, մարած կրափոշի:  
**ՔԸԱԱՄ** — կնքամայր, կնքամած:  
**ՔԸՁԱԼ** — ճաղատ, կնատակ, տաղ, գլխու վրայ մաղ չունեցող:  
**ՔԸՊԱՊ-ԸՆՔԱՊԱՊ** — կնքահայր:

**ՔԸՌԱ** — քարակոյտ, քարքարուտակ, ուր խոշոր ու մանր քարաբլուրներ կան:  
**ՔԸՌՁ** — ցնցոտի, հին լաթ, կտրուած հագուստ:  
**ՔԸՐՊ** — ցաւ, վիշտ, դառնութիւն, մտածմունք:  
**ՔԸՖ** — իւրը կամ մեղըը Լոռացած սառն Երեսին կապած փրփուրը:  
**ՔԹՈՅ** — կաթը մէջը կթելու կթոց. փայտէ, հողէ կամ պղինձէ դոյլ:  
**ՔԻԹԱՒ** — փոքր ճպտ, սրով ձէթի ճրպի պատրոյրը դուրս կը քաշուի:  
**ՔԻՐԱՄԻՏ** — մասնաւոր կաւհող պատրաստուած ևւ թրծուած կըղմինար:  
**ՔԻՍ** — հացահատիկներու հասկին շուրջի փշաձեւ մաղբեր:  
**ՔԻՍԱՅ** — գրամապնակ, քսակ:  
**ՔԻՍՆԱԼ** — դպիլ, դարձուիլ, քսուիլ, հանդիպիլ:  
**ՔԻՓ** — մօտ, սեղմ, ժիր կապուած, ամուր բնուած:  
**ՔՃՈՒՃ** — թռչնաղբիւններուն՝ հողի կամ աղբի մէջ բրած փնտռուող (ֆերնել):  
**ՔՄԷՆ** — կտրծիքով, հասկացողութեամբ, գատողութիւնով:  
**ՔՆԱԹԱԹԱՆ** — քնանալով թաթախուած, տակաւին չզարթնած, կէսբուն-կէս արթուն:  
**ՔՆԹՈՒԼ** — քունը փակցնել, անքուն մնալ:  
**ՔՇԱ** — հաւերը կամ թռչունները քշելու, վանելու արտայայտութիւն:  
**ՔՇԱՆՏԵԼ** — փէշերը ևւ թեւերը հաւաքելով աշխատելու պատրաստուիլ:  
**ՔՇՏԵԼ** — հայուստին քղանցքը կամ թեւերը վեր առնել, սոթթել:

**ԲՇՓԵԼ** — յանդիմանել, բարկանալ:  
**ԲՈԶ** — բոցը հանդած, մարմանդ կրակ:  
**ԲՈՂ** — առանց եղջիւրի, անկոտոր:  
**ԲՈՂՈՍ** — թաղիքէ զլիսարկ, կործ պտակածեւ զլիսուն կլորութիւնով նստած: Կոնածեւ, սրածայր, 5—10 մատնաչափ բարձրութեամբ. նաեւ թաղածեւ, 10-15 մատնաչափ բարձրութեամբ վարէն վեր նոյն հաստարութեամբ:  
**ԲՈՂՈՍԻԿ** — զեղնազոյն ծաղիկ, կոկոնը նման է քուտս զլիսարկին:  
**ԲՈՆ** — խրճիթ, հիւզակ, անշուք սնակ:  
**ԲՈՄԵԼ** — ժողվել, հաւաքել, ամփոփել:  
**ԲՈԶ** — հաւաքական ուղեւորութիւն, խմբովին գաղթ, ճամբորդութիւն:  
**ԲՈՍՈՏ** — բորոտ, մորթային հիւանդութիւն ունեցող:  
**ԲՈՔ** — արմատ, բուն, հիմ, վերջի ծայր:  
**ԲՈՔՈՂ** — ուս, կոնակ, պտակ, շալակ (օր. բոքոլ առնիմ, բոքոլ հանիմ):  
**ԲՈՔՈՒՌՈՒԿ** — զարդարուած, շքեղ հագուած, պճնադարդ:  
**ԲՈՒԼԱՔ** — եղէզնախալտէ շինուած դոյլ:  
**ԲՈՒԹՐ-ԲՈՒՐՈՒՄ-ԲՈՒՐՈՒԿ** — անդամալոյծ, անկ, անկար, տընանկ:  
**ԲՈՒՆՁ** — անկիւն, խոտոչ, խորչ, պատուարան:  
**ԲՈՒՇԱ** — արժանապատուութիւն, վեհանձնութիւն:  
**ԲՈՒՇՆԱ** — որուն:  
**ԲՈՒՈՒԿ** — ձիու կամ իշու մտրուկ:  
**ԲՈՒՈՒԻ** — առանց յենարանի փայտաչէն ցածիլի աթոռ, նստարան:

**ԲՈՒՈՒՇԱ** — զարնանամուտին՝ ձիւնի երեսը բարակ խաւով կապած սառոյց:  
**ԲՈՒՍՊ** — խարկուած կտաւատի ալիւր:  
**ԲՈՒԹԵԼ** — քերել, սկրտել (օր. Գըրան առջեւի ձիւնը բոքէ):  
**ԲՈՒՆՈՒԿ** — երեսի կամ դէմքի վրայ ծաղկախոտի հետքերու երեւոյթ:  
**ԲՈՒՋԻԿ** — թթու կաղամբով եփուած կերակուր:  
**ԲՈՒՓԼՇՏՈՒՆ** — կոշտ, կոպիտ, անտաշ, անողորկ: Հոմանիշ՝ փըշփըտուն:  
**ԲՍԱԿ** — մազէ շինուած մասնաւոր կապ: Ձմեռ ատեն ձիերու ոտքերուն կապելով, սառի կամ ձիւնի վրայ ազատ քալելու հնարաւորութիւն կու տայ: (Քսենոֆոն իր «Նահանջ Բիւրոց»ին մէջ կ'ըսէ — Խնուսի Մելիքը սորվեցուց մեզի որ ձիերու ոտքին տակ քրսակ կապենք):  
**ԲՍԽԱ** — մանր սոխ, սերմնցուի համար մասնաւորապէս չորցուած կը պահեն:  
**ԲՍՄՐՈՒԿ** — անկար, անճարակ, հիւանդկախ:  
**ԲՐՏՆԺԵՌ** — քրտնաթոր:  
**ԲՐՊՈՏ** — բարկացոտ, անհանդարտ, ջղայնոտ:  
**ԲՓՍԵԼ** — խճողել, թխմել, տարողութենէն աւելի լեցնել:  
**ԲՓՍՈՒՆ** — ծայրէ ծայր լեցուն, թխմուած:  
**ԲՕՂՔ** — հարսնութեան ատեն հարսին երեսին վրայի ծածկոց: (Ծանօթ. աղջիկը երբ հարսնութեան կ'երթայ, մասնաւոր արարողութեամբ հարսանեկան հարստները կը հաղցնեն, զլուխը, ծնօտը՝ ճերմակ շղարչով կամ

ըր հարսին ծնողքը կու տայ. աւոր վրայ կը զնեն քոզ մը, որուն քամագի անունը կու տան: Թամազին կնքահօր նուէրն է: Ասոր վրայ կը զնեն ուրիշ քոզ մը, որուն փուլի անունը կու տան: Փուլին նոր փեսայի ծնողքը կը նուիրէ: Պսակադրութեան արարողութենէն քանի մը ժամ, երբեմն մէկ կամ երկու օր ետք, երբ նարօտը վերցնեն, փուլին հարսին երեսի վրայէն կիսով մը

զլիսուն վրայ կը դարձնեն: Առաջատէն շարաթ մը ետք՝ աւիկա կը վերցնեն, կը մնայ քամագի քոզը մինչեւ անդրանիկ գաւակին ծնունդը: Եօթներորդ օրը երախան կը մկրտեն, այդ քոզն ալ կը վերցնեն, եւ իրաւունք կու տան երկու տակ զլիսակապ կապելու՝ բաց երեսով:

**ԲՕՍԱ** — ազուամաղ, անմօրուս, ճաղատ, անփուշ:

Օ

**ՕԶՈՐ** — կոր, ծուռ, շեղ:  
**ՕԶՐՈՒԿ** — ոլորուած (օգոր-մոգոր):  
**ՕԼԸՐՈՒԻԼ** — ուղղութիւնը փոխել, ետ դառնալ, կողմ դառնալ:  
**ՕԼԸՐՏԻԼ** — պտըտիլ, ման գալ, շըրջապալիլ:  
**ՕԼՈՐ** — եկող, դարձող, ժամանակի յիշատակութիւն (օր. օլոր տարուն):  
**ՕԼՈՐ-ՄՈԼՈՐ** — դարձդարձիկ:  
**ՕԼՈՒՆ** — ջրաղացքի ջուրը առուի բարձրութենէն մինչեւ վարը՝ քօփտուն՝ անիւին հասցնող փայտաչէն խողովակը. ջրորդան:  
**ՕՆԷՇ** — թեթեւութեան զգացումի արտայայտութիւն:  
**ՕՄՆԻ-ՕԶՆԻ** — ոզնի, փշապատեան երկակենցաղ կենդանի մը: Շատ համեղ միս ունի, նման լորամարգիի (իւղոտ է):  
**ՕԿԵԼ** — հողէ ամանները, խեցեղէն-

ներու ճեղքուածքները լեցնելով յղկել (օր. կարասը օկեցիմ, ձր-ձուր օկեցիմ):  
**ՕԶՈՒԵՆԻ** — օձի նմանութիւն ունեցող, օձակերպ, օձածեւ:  
**ՕԶՈՒՏ** — այն վայրը ուր շատ օձեր կը գտնուին:  
**ՕՂ** — զինդ, ականջի դարդ. անուր, կամ մետաղէ շրջանակ:  
**ՕՂԱԿ** — զգեստի մը վրայ մասնաւոր բացուածք ճեղք, կոճակը բռնելու համար:  
**ՕՂԻ** — ոգելից ըմպելի, ռախի, ալքոհոլ պարունակող արբեցուցիչ ըմպելի:  
**ՕՂԻԿ-ՄՈՂԻԿ** — ծուռ ու մուռ, օղակ-օղակ:  
**ՕՂԻՆ** — բոյս մը, որուն կանաչ տերեւերը եփելով կ'ուտեն, իսկ արմատը չորցնելով շրէշ կը պատրաստեն:

**ՕՂՆԱՐ** — լերան թիկունքը անցնելը:  
**ՕՂՈՐԳ** — ճշմարիտ, շիտակ, իրական:  
**ՕՂՈՐԴՄԱ** — խեղապէս, ճշմարտապէս, հաստատ, իրաւէն:  
**ՕՂՈՒՆ** — փայտէ տաշտ, որուն մէջ հացահատիկը կը լեցնեն, եւ ուրկէ կը ծորի ջրազայքի երկանաքարերուն մէջ եւ կ'աղցուի:  
**ՕՂՏՈՒՆ** — օդին բոյսով առատ հողամաս, դեղին:  
**ՕձԱՅ** — բուխերիկ, կրակարան, բընակարան, տուն, թոնիր:  
**ՕՆՈՒՈՐ** — հունձքի ժամանակ աշխատող մշակներու հաւաքականութիւն:  
**ՕՇ-ՕՇ** — երիցուկ(դեղին ծաղիկ մը):  
**ՕՌՎԱՆՔ** — դրուած բուրդի տակունք:  
**ՕՌՏՈՒ** — անբարոյական, աննկարագիր, պոռնիկ, բող, հանրային կին:  
**ՕՌՔԻ** — պալար, մորթի վրայի ուռնեք (չոր կամ շարաւալից):

**ՕՍԿԻ** — սակի, թանկարժէք դեղին մետաղ:  
**ՕՐԱՆ** — կամենելու համար պատրաստուած ցորենի կամ որեւէ հացահատիկի դէզ:  
**ՕՐ ԹԷ** — թէ որ:  
**ՕՐԾԼԱՅ** — տունկի, բոյսի կամ բանջարի մէջի ծիլը, նման սոխի, կաղամբի եւ խաւարծիլի:  
**ՕՐՆՁԿՏԱԼ** — յօրանջեւ, յողնութեան նշան ցոյց տալ:  
**ՕՐՕՃԻԿ** — զոյնզոյն խոշոր յունքներ, զորս կը պատրաստեն խիտնջի պատեաններէն եւ կը զործածեն զարդի համար: Փահլեաններ, եռզուրճիներ եւ քուչակներ՝ այս յունքներով կը դարդարեն խաղի յատուկ իրենց հազուսանները:  
**ՕՐՕՔ** — ապրելու ժամանակաշրջան (օր. իմ օրօք հրմլա բան չըմ տեւերի):

Ֆ

**ՖԱԼ** — բախտ բանալ:  
**ՖԸՌԹ** — ումպ:  
**ՖԸՌՖԸՌԻԿ** — խաղալիք: Խեցեղէնէ կամ փայտէ կը շինուի, կտրակ փայտի կամ խեցեղէնի մէջտեղէն երկու ծակեր կը բացուին, ուրկէ թել մը անցրնելով՝ թելին երկու ծայրերը աջ եւ ձախ ձեռքի մատներուն անցրնելով թելը կը քաշեն եւ կ'ոլորեն, առաձգականութիւն մը տալով: Խեցին կամ փայտը

անտեսանելի արագութեամբ կը դառնայ եւ ձայն կը հանէ, ձայնը կը Ֆրոֆրայ, եւ այդ ձայնի անունով ֆրոֆրաի կ'ըսուի:  
**ՖԹԸՍԻԼ** — հեղձամահ բլլալ, օդի նուազութենէն նուաղել:  
**ՖԹՖԸՌԱԼ** — ջղայնոտ բլլալ, անհանդարտ երեւոյթ ցուցադրել:  
**ՖԻՆՃԱՆ** — սուրճի փոքր դաւաթ (օր. ֆառփուռի ֆինճան):

**ՖԻՍՏԱՆ** — կանանց շրջագետ:  
**ՖԻՏԻԼ** — պատրոյց: Լամպայի ֆիտիլի ծայրը պէտք է կտրել, որ լաւ լոյս տայ:  
**ՖԵՇԱԼ** — դայրադին սուլէլ (օր. օճը կը ֆշշայ, վայրի վարագը կը

ֆշշայ):  
**ՖԵՏԵԼ** — բուսն ուժով դուրս գալ, ցայտել:  
**ՖԻՄԵԿԻ** — կոպանք:  
**ՖՈՌՈՒ** — խաղաբարտի մէջ խաղը յայթանակով չահել:

ԱԶԳԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԲՆՈՐՈՇՈՂ, ԲԱՌԵՐ

**ՏՂԱՅ** — արու դաւակ:  
**ԱՂՋԻԿ** — դուստր՝ իզական:  
**ԹՈՌ** — դաւակին դաւակը, տղուն կամ աղջկան դաւակը:  
**ՃԻԺ** — փոքր երախայ, կաթնկերութեան շրջանէն մինչեւ երեք տարեկան:  
**ԱԲՑ** կամ **ԿԸՔԷ** — մեծ հայր:  
**ՆԱՆԷ, ՋՈՋՕ ԿԱՄ ՋՈՋԻԿ** — ՄԼՑ մայր:  
**ՇՈՂԲԷՐ, ԱՄՈՒ** — հօրեղբայր:  
**ՇՐՔՈՒՐ** — հօրաքոյր:  
**ՔԵՌԻ** — մօրեղբայր:  
**ՄՕՐՔՈՒՐ** — մօրաքոյր:  
**ՇՕՂԲԿԻՆ** — հօրեղբոր կին:  
**ՔԵՌԵԿԻ** — մօրեղբոր կին:  
**ԱՆԵՐ** — կնոջ հայր:  
**ՋՈՔԱՆՉ** — կնոջ մայր:  
**ԱՆԵՐՉԱԿ** — կնոջ եղբայր:  
**ՔԵՆԻ** — կնոջ քոյր:  
**ՓԵՍԱՅ** — դատեր ամուսին, կամ քրոջ ամուսին, կամ մօտիկ ազգականի՝ հօրաքրոջ, մօրաքրոջ կամ անոնց աղջիկներու ամու-

սինները:  
**ՏԱԻՐ** — ամուսնոյն եղբայրը:  
**ՆԵՐ** — տաղեր կին, ամուսնոյն եղբոր կինը:  
**ՏԱԼ** — ամուսնոյն քոյրը:  
**ՊԱՃԱՆԱՅ** — քենեկայ, կնոջ քրոջ ամուսին:  
**ՋԱՆԱՂԱՅ** — տաղեր կինը:  
**ՋԱՆԱՂԲԷՐ** — ամուսնոյն եղբայր, տաղը:  
**ՍԱՆԱՄԷՐ** — սանամայր, սանին մայրը:  
**ՍԱՆԱՇԷՐ** — ՍԱՆ(Շ)ԷՐ — սանին հայրը:  
**ՍԱՆԻԿ** — սանուկ, սան:  
**ՔՈՒՈՐ, ՔՈՊԱՊ, ԽԱՉՔՈՒՈՐ** — կրնա՝ քահայր:  
**ՔՈՄԱՄ, ՔՈՒՈՐԿԻՆ** — կնոջ մայր:  
**ՔՈՒՈՐՔՈՅՐ** — կնոջ քոյր:  
**ՔՐՈՐԻԻ, ՆԱԵ ԵԿԷԵ, ԽՈՒԱՐՉ** — քրոջ դասակ:  
**ԱՂԲՈՐԻԻ** — եղբոր դասակ:  
**ԽՆԱՄԻ** — ամուսնութեան կապով հաստատուած ազգակցութիւն:

### Ա Ս Ա Ց Ո Ւ Ա Ծ Ք Ն Ե Ր

ԱՐԱՄ-ՏԱՐԱՄ — դարձացած :  
 ՄԱՐԱԾ-ՄՈՒՐԱԾ — շուարած :  
 ԱՐՈՒՇ-ԲԱՐՈՒՇ — հաշտ, անխռով :  
 ԱՆՈՒՆ-ԱՆԿՈՒՆ — անուանի, նշա-  
 նաւոր :  
 ԱՐՆԷ-ԱՐՑՈՒՆՔ — դառնութիւն,  
 ցաւ ու վիշտ :  
 ԱՆԿ ՈՒ ԿՈՒՐ — անդամալոյծ, կոյր :  
 ԱՓԱԼ-ԹԱՓԱԼ — աճապարանք, շը-  
 ւարիկ :  
 ԱԿԻՆ-ԿՐԱԿԻՆ — հրահրել, խառնել :  
 ԱԼԱՆ-ԹԱԼԱՆ — կողոպուտ, հարըս-  
 տահարութիւն :  
 ԱԼԱՊ-ՉԱԼԱՊ — աճապարանք, հապ-  
 ճեպ :  
 ԱՌԱԿ-ՉԱՌԱԿ — տարօրինակ :  
 ԱՄՊԱԿ-ՉԱՄՊԱԿ — անհամ, անհաս-  
 կընալի :  
 ԲԱԺ-ԲԱԼԵՆ — հասակ, դիմազիծ :  
 ԲԱՐՈՎ-ԽԷՐՈՎ — բարութեամբ, բա-  
 րեկամութեամբ :  
 ԳՐՈՑ-ԲՐՈՑ — ուսումնական, կար-  
 դացուոր :  
 ԳՈԼ-ԳԼՈՒԿ — զաղջ :  
 ՉԸՐԿ ՈՒ ՄԸՐԿ — անխրաւուած,  
 զրկուած :  
 ՉՈՒԳԵՆ-ՉԱՐԴՐԵՆ — հազուեցնեն,  
 արդուզարդեն :  
 ՉԱՐՄՕՔ-ՉԱՒԱԿՕՔ — զաւակներով,  
 թոռներով :  
 ԹԱԼԱ-ԹՕՍԵԼ — անկանոն գործը-  
 նել, գործ մը անհոգութեամբ եւ  
 աճապարանօք ընել :  
 ԹԱՌ ՈՒ ՎԱՌ — աւերակ, ամայի,  
 քանդուած :

ԹՈՒՔ-ՄՈՒՐ — անարգանք, կշտամ-  
 բանք :  
 ԺՐԱԽ-ԺՐՊՆԴԱԽ — առողջացաւ,  
 կազդուրուեցաւ :  
 ԼԱՓ-ԼԱՓ — դարձացած, ապշահար :  
 ԽՈՒՐՏ-ԽԱՄ — աշխատանքէ խիստ  
 յոյնած, պարտասաց :  
 ԾԷԹ-ԲԷԴ — մեծ ու պղտիկ, մանր ու  
 խոշոր :  
 ԿՈՒՇՏ ՈՒ ԿՈՒՌ — ունեւոր :  
 ԿՈՒՇՏ ՈՒ ԿՈՒՌՇՏ — բարեկեցիկ,  
 հարուստ :  
 ՀԱՅԻԼ ՈՒ ՄԱՅԻԼ — սքանչանալ,  
 հիանալ :  
 ՀՈՒՐ-ՀԱՐԱՄ — անախորժ, խափա-  
 նելի :  
 ՄԱԼ-ՄՈՒԼՔ — անասուն, կալուածք :  
 ՄԹԷ-ՄՈՒԹ — շատ մութ :  
 ՄԱՆՐ-ՄՈՒՆՐ — փոքր, պղտիկ :  
 ՄՈՒՐԻԿ-ՄՈՒՐԻԿ — հետաքրքիր,  
 մանրազնին :  
 ՄՕՐԷ-ՄԵՐԿ — մերկ, անհազուստ :  
 ՇԱՐՈՒԷ-ՇԱՐԱՆ — կարգով :  
 ՇՈՒՆ ՈՒ ՇՆԿԱԼ — անբաղձալի այ-  
 ցելու, անարժան մարդ :  
 ՇՈՒՐ ՈՒ ՄՌԹԱԼ — սուր եւ վաճան :  
 ՉԻԼ-ՉԻՓԼԱՆ — մերկ, անհազուստ :  
 ՅԱԽ ՈՒ ՉՈՒ — հիւանդութիւն, հա-  
 մաճարակ :  
 ՏՈՒՐ ՈՒ ՏԱՓ — հոգեվարք :  
 ՏՈՒԹ ՈՒ ՌՈՒԹ — մերկ, աղքատ,  
 ընչազուրկ :  
 ՓԱՅ-ԲԱԺԻՆ — հաւասար բաժնել :  
 ՔԻԹ ՈՒ ՄՌՈՒԹ — ծամածուրթիւն :  
 ՕՐՕՐ-ՇՕՐՕՐ — նազելաճեմ քալ-  
 ուածք :

### ԱՆՁՆԱՆՈՒՆՆԵՐՈՒ ՅԱՆԿ

#### Ա

Աբէք 94  
 Աբէլ 4, 92  
 Աբրահամ Գրիչ 107  
 Աբրահամեան (փրոֆ.) 173  
 Աբրո 47, 80, 123, 228, 249, 266, 280  
 Աբրո (Պիֆօ Աբրո) փ. 239  
 Աբրո (Ուստա) 145  
 Ագարանգեղոս 78  
 Ադամ 4  
 » Խալփա 188  
 Ա-Դօ 21  
 Ազեֆ 251  
 Ազիսի 57, 269, 302  
 Ագօ 266  
 Աբլաս 168  
 Աբրիսըն (Տաքթ.) 151  
 Ալատտին Բէկ 26, 228  
 Ալայ Խմիլ 202  
 Ալեմարեան Ստեփան 107  
 Ալեքսան 26, 274  
 Ալեքսան (չեւիքմեցի) 222  
 Ալքիպարմաղ 24, 26, 167  
 Ալքիպարմաղեան Մովսէս 327  
 Ալքուն 99  
 Ալի աղա 26, 51, 62, 135, 195, 199,  
 221, 269, 278  
 Ալի (մարգարէ) 303  
 Ալի Օզման 82  
 Ալի փաշա 229  
 Ալիշան Հայր Ղեւոնդ 3, 91  
 Ալիսարունի Աբրահամ (Ձեղիմ խան)  
 228—9  
 Ալօ 281, 296  
 Ախմէտ Էֆէնտի 270  
 Ախմէտ (շէյխ) 214  
 Ախմայէ Դրէժ 32

Ադաբէկով 71  
 Ադաման 29  
 Ադամանի Աբրո 31, 93, 252  
 Ադամեանց Գիւտ աւագ ֆահանայ 68,  
 124  
 Ադասի 254  
 Ադանի (Միրաֆեանի ազգիկ) 70  
 Ադեֆանդր 50, 275  
 » Բզմունի 117  
 Ադէկեան Ադեֆանդր 72, 309  
 » Գեղամ 72, 409  
 » Լեւոն 327  
 » Յակոբ 245  
 Ադեմեղիֆ 29  
 Ազգիկ Մայրամ 323  
 Ահամ օղլի Խուսիֆ 44  
 Ահառեան 322  
 Ահմու Ռուսիֆ աղա 44, 61, 277, 279,  
 307  
 Ամատունի Յովհաննէս 178  
 Ամար 32  
 Ամուրեան Ա. 242  
 Ամրէեան Հմայեակ 319  
 » Նազար 319  
 Ամրոյեան Արտաշէս 323  
 » Գրիգոր 309  
 » Երանոս 309  
 » Ընտանիֆ 123  
 » Ղազար 309  
 » Մանուկ 144, 147  
 » Մկրտիչ 323  
 » Տիգրան 323  
 Անապատայ Գեորգ զգնաւոր 204  
 » Իզնատիոս վրդ. 206  
 Անդրանիկ Զօրավար 33, 37, 43, 62,  
 73, 80, 88, 144, 233, 249, 261,  
 311  
 Անքոյեան Մուշեղ 274

Անյաղր Դաիք 3  
 Անօ 202  
 Անտոնեան Մելիֆոն 173  
 » Վարազդատ 173—5, 282  
 Անտրօ Բատէ Ժ, 58, 176, 250, 266, 282  
 Աշրֆեան Խորէն Սրբազան 90  
 Աշոտ 103  
 Աշուղ - Շահէն 84  
 Ասօ Մհեր 171  
 Աջապահեան Խաղ Սրբազան 179  
 Առաքել 202, 205—7, 212, 250, 254  
 » Տաղու 128  
 Առաքելեան Սահակ (Հրլօ Ընֆէ Սահակ) 69, 124, 129—132, 309  
 Ասատուր 235  
 Ասլան Բէկ 56  
 Ասլօ Ատալ 60  
 Ասոյեան Արօ 51  
 Ասուատուր 126, 320  
 Ասօ 78, 123, 176, 222  
 Ապտրլ Մէնիտ 278—9  
 Ատլաս 180  
 Արարօ 63, 233  
 Արամ 27, 42, 141—2, 256, 277, 297—8  
 Արամեան Արամ (Աշոտ Թաքուլ) 80, 164, 232, 239, 255, 257—8, 261, 263  
 Արեգնագ 251  
 Արքիմ 219, 309  
 Արիֆ 76, 220  
 Արմենակ 222, 310  
 Արմէն Գարօ 231  
 Արծիւ խումբ 18  
 Արծրունի Սենեֆերիմ 210  
 Արշակ 34, 89, 235, 273—4  
 Արոյեան Մարգրիտ 327  
 Արուսեան Յովհաննէս 178  
 Արփիար 235, 284  
 Աւագ Ժ, 202, 261  
 Աւագ Վրժ. 285

Աւագեան Մանուկ 320  
 Աւագեան Միսակ 23, 27  
 Աւետիս 55, 72, 250, 257, 289  
 Աւետիսեան Անդրանիկ 310—11  
 » Մելիֆոն 51, 233, 249  
 Աւիկ (բերդեցի) 239  
 Աւօ (խուրբեցի) 233  
 Աւտալ (ռէս) 123  
 Աւտօ 31, 266  
 Արփանեան Աշխէն 316

**Բ**

Բարս Բէկ 214  
 Բարախեան Արեք 323  
 » Արքահամ 327  
 » Ասպետ 310  
 » Ռաֆֆի 310  
 » Սալբի 310  
 » Սէլվի 176  
 » Տէր Սուրէն աւագ ֆհնյ. ԺԱ, 59, 176—80, 255, 310, 327, 333, 467  
 » Վարդան 176  
 Բարխու տուն 59, 123, 221  
 Բագրատ Աւագի տղան 41  
 Բագրատունի Տէր Կարապետ Մ. Վրդ. 133  
 Բաղաս 75  
 Բաղրր խան 243  
 Բաղէ (Բաղօ) 52—3, 58, 266  
 Բալոյեան Վրրդօ 322  
 Բաղէեան Լեւոն 323  
 Բաղտասար 74  
 Բաղտասարեան Յովհաննէս 135  
 Բաղտիկ 94  
 Բաստրմանեան 302  
 Բատուհանի տուն 75  
 » (Բատօ Օհանեան) Գաիք. 72, 118, 228, 230  
 » Մարոս 65, 73, 236  
 » Մկրէ 281

Բատօ Օհան 230  
 Բատօ Օհանեան (Բատոյեան) Գեղամ 323, 333  
 Բատօ Օհանեան (Բատոյեան) Եղուարդ 323  
 Բարաղամեան Հանի Յովհաննէս 62, 118  
 Բարսեղ Էֆ. 26, 194  
 Բարսեղ Տէր 199  
 Բարսեղեան Արամ 320  
 Բենօ 282  
 Բետիկ 281  
 Բէկ 285  
 Բղղոյեան Միօ 51  
 Բղտօ Գեւոյի տղան՝ Մոշօ 321  
 Բուզուրեան 321  
 Բրուտ Կարապետ 206  
 » Մուրատ 123

**Գ**

Գարէ Մուրատի Մուշեղ 73, 75, 231, 417  
 Գարրիէլ աղա 26  
 Գարրիէլեան Տոքթ. Մ. Ս. 49  
 Գագանեան Պետրոս 83  
 Գագանի Գեորգ 75—6  
 Գալօ 75. 118. 261  
 Գալստեան Վ. 243—4  
 Գամպուրեան Յովհ. 144  
 Գանտիլեան Արեգնագ 162  
 Գասպար 27. 51. 53. 62—3, 74, 76, 99, 270, 276. 290  
 Գասպարեան Անոյշ 323  
 » Գեորգ 84, 310, 320  
 » Մուշեղ 323  
 » Ն. 118  
 » Պետրոս 320  
 » Բարգէն ֆհնյ. 182—3, 310  
 Գարագաշեան Արմենակ 169, 253  
 Գարախան Լեւոն 152—3  
 Գարապէֆիք 233, 249  
 Գարեգին 272, 288—9, 296

Գարէ 262  
 Գարօ Արմէն 258  
 Գաւափեան Գարեգին 178  
 Գաւափեան Գեղամ 178  
 Գետաղարձ Պետրոս 210  
 Գեղամ Էֆ. 107  
 Գեւէ Մոսօ 72  
 Գեւօ 44, 46, 53, 80  
 » Միսակ 73  
 » Պետօ 146  
 Գեորգեան Ալբրուս 163  
 » Ասանէք 162  
 » Արամ 162—3, 323  
 » Արեգնագ 163  
 » Արշակ 163, 320  
 » Արտաշ 163  
 » Գարեգին 163  
 » Լուրֆիկ 163  
 » Խաչատուր Էֆ. 162—64  
 » Կիլիկ 163  
 » Համասփիտ 164  
 » Մահտեսի 26, 162  
 » Մարիամ 162  
 » Միսակ աղա Մահտեսի 23, 162, 222  
 » Մկրտիչ 162—3  
 » Յովհաննէս 162  
 » Խորդուր 162  
 » Շարքաթ (Մաքրուհի) 164  
 » Պետրոս (Գեւօ-Պետոյ) 71, 310  
 » Սեդրակ 164, 242  
 » Սմբատ 327  
 » Վարդան 178  
 » Վերգին 164  
 » Տիգրան 162, 164  
 » Տուրուն 164  
 » Հիմարտն 50, 274  
 Գեորգի Յունան 281  
 Գրգ-Ալի 62  
 Գիմէ վիտալ 20, 27  
 Գիմդ - Երանելի Սուրբ 102

Գիրգոր 126  
 Գիւզալ (Սիւսո Պետոյի աղջիկ) 72, 309  
 Գոհար 180  
 Գորգուսեան Արամ 47, 276  
 » Նագար աղա 46, 276—7  
 » Տիգրան 47, 276  
 Գուլագեան Բենիամին 179  
 Գուրգէն 33  
 Գրգէեան Աղեֆսանդր Յարդոյի 321  
 Գրգոյեան Օհան 222  
 Գրգո 123  
 Գրէ 88  
 Գրիգոր 199, 202, 206, 209  
 Գրիգոր պատուելի խարա 211  
 Գրիգոր Եպիսկ. 201  
 Գռուզեան Գրիգոր 328  
 Գրիգորեան Արշակ 319  
 » Խաչիկ 310  
 » Խգրոյ (Խգորոյ) 69, 135  
 » Հապէ 322  
 » Հմայեակ 310  
 » Մանուկ 135  
 » Յարութիւն 310  
 » Ներսէս 310  
 » Տիկին Լուսիս 310  
 Գօգոյի Աւագ 33, 54, 226, 231—2

Գ

Գահմաս (Շահ) 81, 126  
 Գանիէլի գիրք 198  
 Գարբին Ղազար 27  
 Գարբինեան Գասպար 84—5, 255—8, 310  
 Գաւիթ (գեղամեցի) 107  
 Գաւիթ (գովանդուկցի) 50, 236, 276  
 Գաւիթ (խարբերդցի) 41, 118  
 Գաւիթ վարդապետ 193  
 Գաւիթեան Արրահամ 188  
 » Գաւիթ 188  
 » Ղուկաս 188  
 » Ղաւմար 188

Գաւիթեան Մարկոս 188  
 » Շուշան 188  
 » Սարգիս 188  
 » Պատուելի Սիւսոն 60, 67, 76, 82, 84, 124, 135, 186—7  
 » Ստեփան 188  
 Գերեմիկ 33, 94, 103, 235, 266  
 Գերիշ աղա 87—8, 268  
 Գուրեան Սրբազան 178  
 Գրո 144

Ե

Եագուպեան Յակոբ 328  
 Եգնիկ վրդ. 26  
 Եղագարեան ռէս Աւաֆ Մահտեսի 135  
 Եղիայեան Բիւզանդ 154  
 Եղիշէ (Շահվալատի Սամսոնի տղայ) 73  
 Եղնար (Մելիֆոնի աղջիկ) 31  
 Եղօ 93, 206—7  
 Երանոս 88—9, 266  
 Երէցեան Լեւոն 323  
 » Սեդրակ 323  
 Երուանդ 26, 182, 235  
 Եւա 4  
 Եուսուֆ աղա 220  
 Եուսուֆ փաշա 17  
 Եօթնեղբայրեան Արգար վրդ. 24, 45, 272

Զ

Զարեհ Ա. Կաթողիկոս 179, 181, 183  
 Զարգանդ 248  
 Զաւարեան Ս. 261  
 Զաւէն Արք. (պատրիարք) 21  
 » վարդապետ 258  
 Զաֆար (Ասմարի տղայ) 51  
 Զաֆարեան Արեգնագ 467  
 » Եղբայրներ 36, 39, 62, 123  
 » Եղուարդ 323  
 » Եղիշէ 36, 276, 320  
 » Զաֆար 175, 467

Զաֆարեան Պետրոս 37  
 Զաֆարէ 219  
 Զէֆի փաշա 301  
 Զըֆէի Ֆարէ 267  
 Զիլան շէյխ 71  
 Զլոյեան Կարօ 51  
 Զուլէ Մոսո 58, 176, 266, 281—2  
 Զրուան 4  
 Զֆէ Ղազօ 320  
 Զֆէեան Սեւտին 323

Է

Էլոյեան վարուժան (ժան) 101, 322  
 Էհման (պատուելի) 151  
 Էղօ (գովանդուկցի) 33  
 Էմիր փաշա 301  
 Էնկէ 252  
 Էնկէեան Անդրանիկ 327  
 Էվլիա էֆ. 19

Ը

Ընգալիս 301  
 Ըոքստակէս 107  
 Ըոֆօ (Առաքել) 59

Թ

Թաթէոս 107  
 Թաթոսիկայ Մահմէտ պէկ 201  
 Թաթուլ 249, 258  
 Թաժտին 35, 38, 44, 61, 141, 269, 278, 301, 305  
 Թալալ Նագար 27  
 Թահիր պէյ 269, 274, 284  
 Թամէ 196  
 Թամիր աղա 28, 222, 301  
 Թամօ Յարթէնի 219  
 Թաշնեան Լեւոն 178  
 Թաշնի 41, 123

Թաշնու Յակոյ 241  
 Թարկէեան Յարութիւն 83  
 Թումանեան Թուման (Թորգոմ) 250, 263  
 Թերգեան Հայկանոյշ 181  
 Թերզի Յովհաննէս 27  
 Թեոդիկ 54—5, 58, 223, 247  
 Թիլկու Միսիկի Աւիկ 320  
 Թիլկու Սարգիսի տղա՝ Անդրանիկ Խ Միսակ 320  
 Թիւրխնեան Արշակ 68, 117  
 » Գասպար 68, 147  
 Թովմաս 211  
 Թորգոմ 152  
 Թորոյի Աւօ 321  
 Թորոս 209  
 Թորօ 118  
 Թովալ Առաքել 222  
 » Եղիշէ 233  
 » Համիտ աղա 27—8  
 » Վարժապետ 34  
 Թրօպրին 207  
 Թովուզեան Յակոբ 191

Ժ

Ժոքէո Փիէր Անտէ 17  
 Ժամկոյ Արրահամ 64

Ի

Իգնատիոս վարդապետ 204  
 Իկիբի Միսակ 93, 280  
 » Պօղոս 31, 93, 236, 252, 266—7  
 » Ռուսուֆ 277  
 Իննիճեան Հայր Ղուկաս վրդ. 81, 98, 126  
 Իպրահիմ Խալիլ 207  
 Իսա Նուրի 243—4  
 Իսախ էֆէնտի 51  
 Իսկէնտերեան Վ. (Գերեմիկ) 63, 93



Խամայիլ 49, 172, 225  
 Խարայէլ 39, 276  
 Խսօ Խալլէ 149, 271, 274, 289  
 Իրիցալ Գեւէ Մոսօ 144, 417  
 » Գեբղաստան 165  
 » Խշէ տուն 15, 106  
 » Կարապետի Պետոյ 66  
 » Տէր Գեորգի տուն 75  
 » Օհան 58, 282  
 Իրիցփոխան Առաքել 135  
 » Կալուստ 135  
 Իւսուֆ 26, 45, 240, 301

Լ

Լալայեան Երուանդ 3, 66  
 Լարենց Լեւոն 20  
 Լաւանդ 285  
 Լեւոն 71, 148, 233, 235, 285  
 » Թագաւոր 209  
 Լինչ 11, 13—4, 20, 81, 90  
 Լիպարիտ (Պարոն) 107  
 Լիւլէնեան Լեւոն Կ. 154, 157  
 Լուսարարեան 103  
 Լուսաւորիչ Գրիգոր 78, 103  
 Լօյտ Ռըտ 161

Խ

Խաղխագեան Արսէն 274  
 » Աւետիս աղա 23, 26, 274  
 » Միսակ 27  
 Խազօ Միսակ 146  
 » Սեդրակ 27, 163, 222  
 Խարունիկ 240  
 Խաժօ Օհան 31, 123  
 Խալըք Պէյ 277  
 Խալրտ աղա 76  
 Խալիք Էփէնտի 208  
 Խալիլ Պէյ 276—7  
 Խալոյեան Վահան 148  
 Խալլոյի Հիւսէյն 290

Խալօ Բէկ 54, 89, 215, 226, 286,  
 » Մեկոնի Արամ 27, 74, 141, 162,  
 311  
 Խալփա Սամէլ 68  
 Խահվէնի Օփիկ 27  
 Խանամիրեան Արսէն 310  
 » Աւետիս 311  
 » Եղիշէ 77  
 » Մուշեղ 72, 77, 310, 467  
 Խանըմ Սանօ 123  
 Խանրմի Տօնոյի տուն 3, 31  
 Խանի խումբ 18  
 Խանտիլեան Տիկին Արեգնազ 223, 311,  
 333, 467  
 Խանտիլի Խալէ 125  
 » Մարտիրոս (Մարտիրոս Խան-  
 տիլեան) 33, 58—9, 63, 176, 282,  
 417  
 Խանոյի Հասան 289, 292, 294  
 Խանօ 286—8  
 » Բէկ 233  
 Խաչանեյիֆ 29  
 Խաչան Մեյիֆ 29  
 Խաչատուր Էֆ. 26—7, 47, 147, 222  
 Խաչատուրեան Մինաս 327—8  
 Խաչատրեան Աստուածատուր 266  
 Խաչիկ 219, 257  
 Խաչիկեան Սօսի 316  
 Խապրիմալ Աւագ 41  
 Խասրմ պէյ 272  
 Խասոյեան Արէյ 69  
 Խասօ Սարգսի Այօ 294  
 Խարազաւորեան Տուրքուն 319  
 Խարա Ռուսուֆ 210  
 Խազրլ Ահմէտ 293  
 Խզրոյի Միսակ 32  
 Խզրոյի Սեդրակ 92  
 Խրբէ 281  
 Խննէ Յարթին 288  
 » Յովիկ 286  
 Խոբերու Մարգար 263, 272  
 » Սահակ 117

Խոզ-Ալի 62  
 Խոզլուցի Խուռչուտ 266  
 Խոյնասարայ շէյխ 269  
 Խոտեւան 224—5  
 Խոստօ 224  
 Խուսրով Բէկ 26  
 Խուլի Խան Բէկ 51, 269, 284, 302  
 Խուլօ 292—4  
 Խուռչուտ 42, 57, 123, 180,  
 » պէյ 26, 137  
 Խուռչուտի Գարէ 281  
 Խուռչուտեան Աիկ (Եասին) 233  
 » Ռազմիկ 311  
 » Սարգիս 223, 311  
 » Վարուժ 311  
 Խուրտ Օղլի Մահմէտ 307  
 Խշէ տուն (Պուլանըլս) 50, 88, 123  
 » Աւոյի Մեսրօ 290, 294, 296  
 Խշէեան Սեդրակ 320  
 » Օհանեան Արշակ 321  
 Խչօ (գովանդուկցի) 33  
 Խպտի Մուրատ 41  
 Խոմշու 301  
 Խրիմեան Հայրիկ 26, 49, 84, 139,  
 240

Կ

Կալէ 91—2  
 Կակօ 27, 85, 99  
 Կանկօ Զատէ Մահմէտ աղա 303  
 Կատանի Աւագ 33, 78, 123, 222, 266  
 Կարապետ 26, 47, 75, 165, 172, 207,  
 212  
 » աղբար 151  
 » դպիր 107  
 Կարապետ Եպիսկոպոս 51  
 Կարապետ (Կազօ) 75—6  
 Կարապետեան Աբրօ (Քեռի) 233  
 » Ազնիւ 327  
 » Արտաշէս 323  
 » Գասպար 72, 183, 311

Կարապետեան Լուսիկ Աւէյի 320  
 » Հրանդ 323  
 » Ճոզէֆ 311  
 » Պետրոս (Կարապետի Պետօ)  
 73, 228, 233, 236, 262:  
 » Տիգրան 51, 323  
 » Փառանճեմ 183  
 » Փօլ 183, 311  
 » Ֆրենկ 311  
 Կարոյեան Մեյիֆ 51  
 Կարօ 31, 221  
 Կարօ Գեւօ 176  
 Կըքուն 165  
 Կըռան աղա 162  
 Կիրակոս 39, 276  
 » Եպիսկոպոս 192  
 Կիրակոսեան Յովսէֆ (Պլէնեան) 234  
 —5:  
 Կոնիքէր Ֆրէտերիֆ 82  
 Կոշօ 63  
 Կոսոյի Միսաֆ 281  
 Կոստանտիայ Կրօնաւոր 107, 209  
 Կորին (Գոմսայ Խսօ) 33, 74, 80,  
 103, 246, 261—3, 286  
 Կուլան 74  
 Կուլէ Արտաշ 323  
 Կուլէ Մայրիկ 38, 323  
 Կուկունեան 18, 31  
 Կուլոյի Ղազար 267  
 Կուրտիկեան Ստեփան 178  
 Կոփոյեան Լեւոն 311  
 » Տիկին Արուսեակ 311  
 Կնեագ 233, 235, 266  
 Կնոյ (Ռսկերիչ) 75  
 Կրպօ 132  
 Հ  
 Հագրոյեան Նարոյէն 327  
 Հագրօ 51, 123, 276  
 » Գասպար 39

Հագրո կիրակոս 149  
 » Մելքոն 41  
 Հալիլ Բարա 60  
 Հալսէ 208  
 Հանի աղա 76, 117, 280, 292, 294  
 » Արիֆ 290  
 » Գրուպրգ 62  
 » Իսաֆ էֆ. 269, 284, 291  
 » Համոտի պէյ 269, 271, 275, 285  
 » Հայտար (Կեազօ) 43, 58—9, 63, 176, 254  
 Հանու Շֆօ 289  
 Համազասպ 50, 229, 262, 276  
 Համօ 31, 266, 278, 252  
 Համիտ աղա 141  
 Համօ 141  
 Հ. Յ. Դաշնակցութիւն 259  
 Հայկ Նահապետ 3, 46, 90  
 Հայկազուն 288—9, 292  
 Հայկանոյշ 168  
 Հայպուկ Գասպար 21  
 Հանէսեան 175  
 Հաշարատ 171  
 Հաջուեան Գսպօ 321  
 Հասան աղա 293, 301  
 Հասրաք 248  
 Հարամկու Առաքել 200  
 Հեթում քազաուր 209  
 Հել-հել 63, 123  
 Հերակլէս 46  
 Հերֆօ 203  
 Հեֆիմ Յակոբ 293  
 Հզերու Ռաշօ 292  
 Հէնիմեան Կարապետ 194  
 Հէնսըն վ. Ա. 238  
 Հըլլաքեան 166  
 Հըլլօ Ռոֆէ 75—6, 88, 123  
 Հիրապ 41, 123, 220  
 Հլոյեան Արշակ 88  
 » Երանոս 84, 223, 235—8, 284, 311

Հլոյեան Մանուէլ 235  
 Հոտանի Խաչիկ 176  
 Հոսէյն աղա 26, 207—8  
 Հովիւեան Պատ. Մատթէոս 67  
 Հոսս (Հոփսիմէ) 106  
 Հրայր (Արմենակ Ղազարեան) 33, 46, 103, 228, 232, 234, 238, 251, 263—4, 266  
 Հրանդ (Հրօ) 58, 254  
 Հրաչ 176, 266  
 Հրաչեայ 23, 35, 148, 266—7

Ղ

Ղազար աղա 26—7  
 » Ամու 139, 141, 245  
 » (Աշուղ) 75  
 » Վարդապետ 196  
 Ղազարեան Բաղդասար 311  
 » Իսահակ եպս. 327  
 » Կիւզէլ 327  
 » Մուշեղ 327  
 » Յարէք 311  
 » Յարութիւն 327  
 Ղասրմ 220  
 Ղազղազեան Մկրտիչ 257  
 » Յովհաննէս 257  
 Ղարիբեան 257  
 Ղարիպեանեան Միսակ 223, 311  
 Ղեւոնդ 66  
 Ղեւոնդեան Եսայի վրդ. 108  
 Ղուլի բէկ 214  
 Ղուկաս 209  
 Ղուկասեան Արփիար (Ալպերք) 223  
 » Լեւոն 324  
 » Պատ. Թադէոս 72, 288, 293  
 » Յակոբ 123  
 Ղուռշուտ պէկ 202, 208  
 Ղուրտ Օղլու 26  
 Ղատու Սարգիս 74

Ճ

Ճարտար 231  
 Ճանկիւլեան Յարութիւն 254  
 Ճաննիկեան Կարապետ աղա 41  
 Ճանսըն 154  
 Ճաշուա Փիլաստի 137  
 Ճին-Մամօ 42  
 Ճուրէ Սարգիս 274  
 » Տուն 15, 49  
 Ճուրէեան Լեւոն 321

Մ

Մագիստրոս Գրիգոր 3, 97  
 Մալխաս 206  
 Մալխասեան ընտանիք 238  
 » Աղէֆսանդր (Յարթէնի տը-րան) 228  
 » Արամ 319  
 » Գեղամ 319  
 » Խաչիկ 320  
 » Կարապետ 228, 236, 238, 254, 274  
 » Համազասպ 275  
 » Յարթէն 50  
 » էֆ. Յովհան 23, 297  
 » Յովնան էֆ. 26  
 Մալոյեան Եսաւ 256  
 Մալօ 84, 123, 194, 196, 198, 202—203, 207—8  
 » Ղազար 207  
 Մահմէտ (Մահմատ) 26, 164, 211, 239, 305—6  
 Մահմուտ աղա 26, 76, 141, 280:  
 Մահտեսի Գէորգ 162, 202:  
 » Եղիա 201  
 Մազաֆ 84, 195  
 Մամբրէ 282  
 » Վարդապետ 208  
 » Տարօնացի 133, 139

Մամիկոնեան Յարութիւն Արշեանց 82, 204  
 Մամիկոնէից 209  
 Մայրամ 72, 179  
 Մայրօ Յովհաննէսի Արամ 320  
 Մանթաշով 229  
 Մանուէլ 151  
 Մանուկ 79, 207, 256, 266  
 » աղա 141  
 Մանուկեան Աւետիս 70—71  
 » Կնեազ (Աւագ) 239  
 » Մարտիրոս 70, 283, 289  
 » Ն. 319, 322  
 Մանսուրեան Մկրտիչ էֆ. 24, 148  
 Մաթէոս 213  
 » Կաթողիկոս 306  
 Մարալ 266  
 Մարալեան Սերոբ 257  
 Մարգար 70, 222, 263  
 Մարէ Ապգար 321  
 » Արօ 321  
 » Մարտօ 321  
 » Մովսէս 321  
 Մարթա 107  
 Մարիցա 124, 142  
 Մարկոսի Միսակ 31, 93, 252, 266  
 Մարկոս (ուստա) 285  
 Մարտիրոս Ժ, 83, 93—4, 175, 266, 282—3, 289  
 » Պատուելի 211  
 Մարտիրոսեան Միսիթար 51  
 » Մնացական նահապետի 320  
 Մարտոյեան Անթուան 327  
 Մարտօ (ուստա) 34, 220  
 Մեղեյեան Նազարէք 96  
 Մելգոնեան Արամ (Խալօ Մելգոնի Ա-րամ) 23, 239—40  
 » Արտօ (Խենթ Սեթօ) 240  
 » Գասպար 69, 12  
 Մելէ 41  
 Մելիք 164, 266

- Մեկի՛ք Գասպար 21, 39, 123, 135, 138
- » Պօղոս 21, 75, 123-143, 195, 199-200
- Մեկի՛քեան Ազգուլ 144
- » Ազնե՛ 144
- » Աքլաս 143
- » Ալքուն 144
- » Ալմաստ 144
- » Աղբուր 144
- » Աննա 143-4
- » Ասիկ 143
- » Արամ 143
- » Արաքսի 159
- » Արշակ 72-3, 144
- » Աւետիս 145
- » Բաղտասար 143
- » Գասպար 141, 143, 145, 235
- » Գեվորգ (ռէս) 135
- » Եղիշէ (Ե. Յ. Մ.) Ա, Բ-Ե, Ը, Ժ, 60, 69, 76-7, 129, 142, 144, 197, 209, 243-4, 255, 266, 304, 312
- » Էլօ 144
- » Լեւոն 144
- » Խանէ 144, 146
- » Խորէն Սայրբս 161
- » Խորէն - Սիրաք Ժ, 144, 156, 159-60, 312
- » Խորէն Սիրաք կրտսեր 157
- » Համօ 143
- » Հայկանոյ 146
- » Հմայեակ - Եղիշէ 144
- » Ղազար 143
- » Մանուկ 143, 240
- » Մասիս 145
- » Մարգարիտ 143-4
- » Մարիցա 146
- » Մեկին 143, 146, 241
- » Մըշէլ 159
- » Միսակ 143, 145
- » Միսիկ 143, 146, 241

- Մեկի՛քեան Մկրտիչ 143, 145
- » Միեք 143
- » Յարութիւն 143-4
- » Յովհաննէս Գ, Է, 64, 68,
- Մեկինեան վահան 24
- 143-4, 228, 240
- » Նազար 143, 145
- » Նազեմիկ 144
- » Նարգուլ 144
- » Շուշան 143, 146
- » Պետէ 144
- » Զաւահիր 143, 145-6
- » Սալվի 144
- » Սանամ 143-4
- » Սատաֆ 144
- » Սեդրակ 143-145
- » Սէնօ 144
- » Սիրանոյ 145
- » Սիրվարդ 155, 157, 159
- » Սօֆիա - Ծիածան 144
- » վահան ֆհնյ. 74, 141-2, 146, 241
- » վահան վարժապետ 72-3, 143, 236, 262
- » Տիգրան 72, 143, 312
- » Տուտէ 143
- » Տօնապետ 143
- » Բապըրք Արմէն 157, 159
- » Փայլակ 145
- » Քերէն - Աննա 159
- » Ֆալօ 143, 146
- Մեկինով Յակոբ (Ռաֆֆի) 213
- Մեկի՛ք Թանգեան Ներսէս Արքեպս. 243
- Մեկին 27, 204, 208, 123
- Մեկինեան Պատ. Կարապետ 69, 288, 293
- » Յովհաննէս 285
- Մելօ (արօսցի) 33
- Մեծ Պարոն 107
- Մեծն Գանիէլ 102
- Մենակ 250
- Մեսրօ 296

- Մեսրոպ Մաշտոց 15
- Մեսրոպեան Մալօ 83
- Մէլէ 222
- Մըհրկ 214
- Մըլբօ 263
- » Յովն. 164
- Մըռքըպ Շեո 289
- Միլէ 123
- Միլլէք (Յովհաննէս) 257
- Միլլաք պաշի Յակոբ աղա 19, 24
- Մինասեան Գրիգոր 321
- » Իկօ 321
- » Հղաք 31
- Մինասի Մանուկ աղա 92-3, 123
- Միսակ 21, 27, 47, 73-4, 80, 222, 236, 262, 266, 276-7, 290
- » աղա 26, 251
- » Զապթիա 74, 287-9, 296
- Միսաքեան Շաւարշ 178
- Միսեկ 219
- Միրաքեան Արամ 72, 312
- » Թուիկ (Պերպէրեան) 312
- » Հայկ 72, 312
- » Պատ. Մուրատ 70
- Միրաքեան վահան (Փրոֆ.) 69-70, 312
- Միրաքի Յովսէփ 290
- » Տուն 75, 123
- Միրզայեան վահան 327
- Միրզօ տուն 75, 123
- » Բենոյ 72
- » Յովսէփ 228
- » Սեդօ 286, 294
- Միրախորեան Կ. Մանուկ 21, 78, 86, 95
- Միր Խամայիլ 306
- Միրօ 210
- Միրսէյիտ 298
- Միրզի Միէ 301
- Միֆայէլ 202
- Միֆայէլեան Գարրիէլ աղա 19, 23, 35
- » Մեսրոպ 274

- Միսիքար 195
- » աղա 27
- Միսիքարեան Անդրանիկ 39
- » Գասպար 135
- » Եղիշէ Աւագ. ֆհնյ. 50, 84, 144, 171, 180-81, 314
- » Կնեազ 241
- » Լեւոն 327
- Միսիկ 418
- Միսօ կամ Միսիքար 49-50, 171, 221
- » Գսպէ Միսիկ 72, 75, 285, 417
- » Գսպէ Յովօ 74
- » Սահակ 39, 123, 267
- Մկրտիչ աղա 26
- Մկրտիչեան Արամ 313-4
- » Արմենակ 314
- » Գարեգին 324
- » Խորէն 49
- » Միսակ 329
- » Մկրտիչ 313-4
- » Յովհաննէս 53
- » Սիմոն Ժ, 176
- » Վարդգէս 313-4
- » Վրէժ 313-4
- » Տիգրան 239
- Մկրօ Ասօ 234
- Մկրօ Պօղոս 258
- Մկօ-Յովսէփ Սուֆիաս 274
- Միեք 106, 123, 125
- » աղա 180
- » Սեքօ 236, 285
- Միեքի Խուրշուտ 75, 274
- Միեքի Շահնազար 89, 123
- Միեքեան Լեւոն Դաւիթ 321
- » Կնեազ 314, 321
- » Միսակ 242
- » Պօղոս 314
- » Պօղոս Վրդ. 102
- » Սանտրիկ 84
- » Քարամ Դաւթի 321
- » Քիշմիշ 324
- Մնօ 176, 219

Մշեցու Համբո 321  
 Մշտո-Ըոնո 49, 171-2, 225  
 Մոլլա խուլանիլի Ահմէտ աղա 221  
 Մոկլոգեան 27  
 » Արմենակ աղա 19, 23, 27  
 » Միսաֆ 274  
 Մոո 269, 276, 279, 302  
 Մոսո 419  
 Մովսէս 46, 144, 223, 276-7, 302, 467  
 » Մեսրոպ 274  
 » Անդրանիկ' (Միսո Սահակի  
 աղայ) 39  
 » Գասպար 135  
 » Կնեազ 241  
 Մովսիսեան Փրոֆ. Արգար 59, 144  
 Մուխո 49  
 Մուխի Գեորգի Տիգրան էֆ. 238  
 Մուխամէտ 222, 301-2  
 » էֆ. 221  
 Մուխատին պէյ 26, 269  
 Մուղսու Միսակ աղա 24, 26, 89, 162,  
 223, 311, 467  
 Մուղտատ աղա 76, 291  
 Մուշեղ ժ, 418  
 Մուսա աղա 76, 288, 290  
 » Պէյ 221, 271-2  
 Մուսքաֆա էֆէնտի 224-4  
 » Քեմալ 44  
 Մուրատեան Արտաշէս (Շէյխ Զիւան)  
 ժ, 72, 77, 229, 242-4, 308  
 » Բաղտասար 135  
 » Գրիգոր 72, 314  
 » Դաւիթ 41, 117, 222, 242,  
 244, 277  
 » Եղայրնեք 314  
 » Իգնատիոս 178  
 » Լեոն 244, 319  
 » Կարապետ 72, 75, 288, 293,  
 314  
 » Հայկազուն 118, 281, 285,  
 287  
 » Մարկոս 244

Մուրատեան Մկրտիչ 49  
 » Մուրատ 72, 244, 314  
 » Յակոբ 66, 72, 75, 118, 228  
 242, 244-5, 266, 273-4,  
 287-9  
 » Յարութիւն 72, 314  
 » Տիգրան 52, 72, 74, 244-6,  
 261-3, 274, 285, 307  
 Մուրատ 152, 171, 222, 233, 240, 254  
 Մստաֆա 281, 283  
 Մսո 292-4  
 Մօհրեանց Գրիգոր 82, 204  
 Մօստկո 278

Յ

Յաբեթ 4, 72  
 Յակոբ 26, 31, 92, 117, 197-8, 217,  
 289, 292, 294-5  
 » (Մծրնայ Հայրապետ) 111  
 » Եպս. 26  
 Յակոբոս Եպս. 124  
 Յակո 44-6, 73, 80, 123, 222, 224, 250  
 Յարթէն 39, 94, 118  
 Յարութիւն 196, 202, 206-7, 213  
 » Վրդպ. 191  
 Յեսաւ 85, 228, 244  
 Յեկո Մկրո 47, 236  
 Յեփրեմ Ալմաստ 320  
 Յովհաննէս 82, 92, 213  
 Յովհաննէսի Արշօ 281  
 Յովհաննէսեան Առաքել (Հրլօ Ըոբէ)  
 72, 76  
 » Դաւիթ 72  
 » Լինա 72  
 » Խաչիկ (Ս. Պալաթոն) 324  
 » Մահտեսի Սեդրակ աղա  
 (Մկո Յովո) 23, 27  
 » Մկրտիչ 72  
 » Յովհաննէս 72  
 » Պօղոս 72  
 » Սարգիս 82, 204

Յովնան 22  
 Յովսէփ 54, 75, 209, 291  
 Յովսէփեան Գարեգին Արք. 322  
 Յովսէփեան Պօղոս 69  
 Յովոյ (Գաֆան) 75  
 Յորկնոցայ Յակոբ սարկաւազ 90, 302  
 Յունան 314  
 Յունանի Յովէ 286  
 Յունո Սարգիս 34  
 Յօհան 208  
 Յօվսօեան ուէս Միխիթար 135

Ն

Նալպանտեան Ալեքսան 324  
 » Արշակ 324  
 » Վահան 327  
 Նանէ Գոհար 139  
 » Նուպար 171  
 Նաու Ֆ. 306  
 Նատր աղա 196  
 Նատո 214  
 Նափ (Պատուելի) 208-9, 211  
 Ներսէս 213  
 » Կաթողիկոս 212  
 Ներսէսեան Օր. Ազնիւ (Բժշկուհի) 314  
 Ներսիսեան Վարժարան 181  
 Նիկար 163  
 Նիկոլ 33, 169, 253  
 Նիկոլեան Եղուարդ 327  
 » Հմայեակ 327  
 Նիկողայոս Եպիսկոպոս 191  
 Նիկո կարապետ 253  
 Նիւարատին բէկ 26  
 Նոյ բէկ 27  
 Նուրատին պէյ 269  
 Նուրի 269  
 Նուրի Պահրի փաշա 90

Շ

Շահէնի Ապրէ 321

Շահմուրատեան Յովհաննէս 24, 148,  
 274  
 Շահմուրատեան Սեդրակ 23, 27, 298  
 Շահպազ 281  
 Շահնագար (շապատինցի) 80  
 Շահվալատ 21, 73-4  
 Շահվալատի Սամսոն 73, 279  
 Շահօ Խալիօ 53, 89, 226, 231-2, 252,  
 278, 302  
 Շամլեան Արշալիր 254  
 Շամտաննեան 178  
 Շանոյ Արքո 75  
 Շաշօ 241  
 Շապուհ 266, 276-7, 417-8  
 Շապօ 42, 417  
 Շաֆիր փաշա 215, 217-8, 256  
 Շաֆգի 32  
 Շերիֆ էֆ. 290, 294  
 Շերունի Մանաս 207  
 Շէք 213  
 Շէխ Մուրատ 45, 60  
 » Սայիտ 43, 63, 293, 300-1  
 Շէկ Դաւիթ 33, 246-7, 266  
 » Յակո 33, 93, 252, 280  
 Շէֆէի էֆէնտի 211  
 Շիկահեր Ալի 302  
 Շիրազ Յովհաննէս 317  
 Շուշանիկ 179  
 Շուշէ Թուսօ 57  
 » Մոսօ ժ, 33, 58, 63, 93-4, 176,  
 247-8, 266, 268, 418  
 Շուֆրի 52-3, 246, 269, 280

Ո

Ոգր պատուելի 211  
 Ոլիմպիոզորոս 4  
 Ոչխէ Տոնէ 322  
 Ուգուն-Հասան 20  
 Ուլիէմս (պատուելի) 211  
 Ուորըն Ըրլ 238  
 Ուտոյէ Բրօ 214, 219, 269

Չ

Չամչեան 3-4  
 Չառու Գեորգ 33, 80, 87-8, 93, 103, 230, 247, 265-8  
 Չափարեան Գեորգ 179  
 Չեմպըրո 81  
 Չեօկիսեան Տիգրան 178  
 Չիքչեան Պատ. Գարեգին 72, 240, 266  
 Չլխատեան Մկրտիչ Վրդ. 17, 22, 24 109  
 Չուլաֆեան Մուշեղ 315  
 Չուլֆայեան Խաչիկ 173  
 Չրաֆեան Տիրան (Ինտրա) 178

Պ

Պաքալ բէկ 49, 123, 225  
 Պալաֆեան Գրիգորիս Եպս. 181  
 Պալիկ 88  
 Պալսօ Խալըտ 28  
 Պահրի բէկ 26  
 Պահրի փաշա 302  
 Պաղէ Մլսօ 49, 123, 180, 225-6  
 Պաղտասար 143  
 Պաղտասարեան Գրիգոր 135  
 » Պրսօ 315  
 » Նուարդ 329  
 Պաղտօ 86  
 Պաղօ 208  
 Պապա 277, 301  
 Պասկելի 51, 75, 99  
 Պասմանեան Կարապետ 257  
 Պաստրմանեան Տիգրան (Արմէն Գա-րոյի հօրեղբայրը) 258  
 Պարնրմ (պատուելի) 211  
 Պարոնեան Եղուարդ 315  
 » Յովսէփ 245  
 Պետոյ 72, 221  
 Պետրոս 126, 201, 206, 213  
 » Վրդ. 193, 196  
 Պետրոս Եպս. 190

Պետրոսեան Աննա 324  
 » Առաքել 324  
 » Արգամ 31  
 Պէբուդով Զօրապետ 212  
 Պէկրաշի Վալի 207  
 Պէնկլի Ահմէտ 207  
 Պէշիկբաշեան Նշան Թ  
 Պէտրիսան 71  
 Պէրպէր Սաֆար 27  
 Պէրպէրեան Թուիկ Միրազեան 72  
 » Շահան 178  
 » Տոֆթ. Յակոբ 179  
 Պըտէեան Պաղտասար 83  
 Պիդատոս 43  
 Պլէնեան Յովսէփ 39  
 Պղէ Մլսոյի տուն 171  
 Պղէեան Մուրատ 135  
 Պլէնեան Յովսէփ 39  
 Պղտոյ 221  
 Պուլուքեան Արամ 314  
 » Մինաս 315  
 » Վահան 315  
 Պուտաղի Տիգրան 41-2, 276-7, 279  
 Պուղան 75  
 Պտէ Ալահվերտու կին՝ Քնֆուշ 320  
 Պրանք 202  
 Պրէնդ 20, 126  
 Պրպէնֆ 210  
 Պօզոս 126, 207, 216  
 » Վրդպտ. 203  
 Պօղոսեան Աբէք 315  
 » Արամ 59  
 » Դաիթ 184, 315  
 » Լուսի 317  
 » Մկրտիչ 315  
 » Յովհաննէս (Պօզսէ Յովօ) 315  
 » -Մկրտիչեան 251-52  
 Պոյանեան Մուրատ 80, 254  
 Պօզսէ 118  
 Պօզսէ Յովօ 281  
 Պօնափարթեան Խաչատուր 273

Ջ

Ջալալ 231  
 Ջալալեան Սարգիս Եպիսկոպոս 212-3  
 Ջիւանի (Աշուղ) 231, 417  
 Ջնդի 57, 302, 418  
 » Ա. 234, 251, 266  
 Ջնդոյի Յարթէն 321

Ռ

Ռաշիտ 277, 301  
 Ռաշօ 293  
 Ռեզո 164  
 Ռէս Աւտալ 63, 135  
 » Եղոյ (Խոմլսայի) 135  
 » Գրգոյ 256  
 » Խաչոյ 246  
 » Խչէ 144, 172  
 » Կակօ 41, 222  
 » Կարօ 31, 252  
 » Կօրէն 135  
 » Մարգար (Շէպօ) 74, 246, 261-3  
 » Մարտոյ 222  
 » Մկրտիչ 135  
 » Միեթ 49, 135, 236, 242  
 » Մովսէս (Քոչօ) 15, 59, 281  
 » Յակոյ 47  
 » Յարութ 135  
 » Պատէն 135  
 » Պետոյ 74, 241  
 » Պետրոս 69, 135  
 » Պօզոս 135  
 » Սարգիս 135, 204  
 Ռիզս (պատուելի) 211  
 Ռիզս Շահ 243  
 Ռիչէրտսն (պատուելի) 211  
 Ռուբէն (Տէր Մինասեան) 38-9, 50, 226, 242, 247, 256, 265  
 Ռշմանեան Հմայեակ 162

Ս

Սալիմ բէկ 240  
 Սալուկ 114  
 Սալման աղայի տուն 76  
 Սալուորկայ Ղազար 86  
 Սալվար 203  
 Սահակ 25, 75, 87, 163, 219, 274  
 » (Շէպօ) 75  
 Սահակեան Անդրանիկ 320  
 » Գագիկ 320  
 » Ղեւնդ 320  
 Սահակի Կոսօ 176  
 Սաղէ 88, 123  
 Սաղէեան Եղիազար (Սաղէ Եղօ) 88, 248-9  
 Սամէլի Յարթէն 228  
 Սայիտ 269, 302  
 Սանամ՝ Յունանի Յետոյի կինը 272  
 Սանտարսկի (Գենեբալ) 152  
 Սապոննեան Միքիան 257  
 Սասունի Կ. 307  
 Սատի աղա 31, 57, 269, 280-81, 283, 302, 307, 418  
 Սատօ 214, 220-21  
 Սարաֆ-Հանօ 36  
 Սարգիս 21, 195, 250, 266  
 » Կարողիկոս 209  
 » (գաբթիա) 21, 73  
 » (ուստա) 59, 123, 221  
 Սարգիսեան Արամ 47, 321  
 » (Պօղոսեան) Գեղամ 320  
 » Զանօ 323, 329  
 » Օր. Լուսին 181  
 » Խաչատուր 47  
 » Վահան 324  
 » Փիլոս (վաշտապետ Փիլոս) 52-3, 249  
 Սարկաւազ Վարդեվար 193  
 Սարիատեաններ 39-40, 46, 123  
 Սարիատեան Երուանդ 329  
 » Տիկ. Լուսիա 39, 46, 329

Սարխատեան Մելիք 39, 46, 328-9  
 » Մկրտիչ 39  
 » Սեդրակ 39, 47, 328-9  
 Սարեան Մարտիրոս 317  
 Սարոյեան Աւետիս 54, 68, 147  
 » Մերք Սուրէն 328  
 Սափար 75  
 Սափարի Մուշեղ 73  
 Սափօ (վալատ) 33, 51, 246, 249-50, 266  
 Սեդրակ 27, 45, 72-3, 146, 276-7, 315  
 Սեդրակեան Համագասպ 315  
 » Միսակ 46  
 » Սիմոն (Միսերի Խուռշուտի տղան՝ Սամուրիկ) 72, 316  
 Սեդո 39, 72, 75, 296  
 Սելիմ 93, 290  
 Սենեֆերիմ 288  
 Սեպէ Գրիգոր 321  
 Սեպուհ 33-4, 152, 249-50, 261  
 Սերոբ Ազրիւր (Սերոբ փաշա) 33, 80, 231-3, 241, 261, 263  
 Սերոբեան Յակոբ 23, 26  
 Սերոբի Պետիկ 176  
 Սեւ-Ստեփան 58-9  
 Սեւտին 276  
 Սէիտ Ջէմալ 151  
 Սէլիմ բէկ 57, 214, 269, 280, 302  
 Սէյրան էֆ. 150  
 Սէյֆէտտին բէկ 51  
 Սրիօ 244  
 Սըֆօ 53  
 Սթարլըրն 154  
 Սիմոն (Բալանուխի) 56  
 Սիմոնեան (րնտանիք) 26, 165-70  
 » Ազգապի 166  
 » Աղանի 169  
 » Եղիշէ (Ալքիպարմախ) 166, 297  
 » Եսքեր 135, 187  
 » Եուվան 169  
 » Իվան 236, 253-4, 274

Սիմոնեան Լեւոն 170  
 » Կարապետ 168  
 » Միհրան 84, 165-6, 223, 316  
 » Միհրանիկ 166, 316  
 » Միսաֆ 168  
 » Մկրտիչ 168-9  
 » Յարէր 168  
 » Սեդրակ (Սափար) 165-6  
 » Վարդան 23, 167-8  
 » Վարդգէս 170  
 Սիմէ 58, 251-2  
 Սիւօ - Ըսֆէ 64-5, 75, 123  
 » Օհան 31, 93, 235, 252-3, 280  
 » Գրօ 41-2, 277  
 Սիմոն 210, 222, 258  
 Սիէեան Կիրակոս 321  
 Սմբատ 233, 249, 256  
 Սմբուլ 22, 33  
 Սողոմոն 72  
 » Քինյ. 288  
 Սողոյեան Գասպար 316  
 » Հրաչ (Տէրտրոզ Գասպարի տղան) 316  
 Սոպաչեան Ավեան 319  
 » Գեղամ 319  
 » Մանուկ 84, 316  
 Սուլէման աղա 206  
 Սուլթան 59  
 » Ապտիւլ Համիտ 44, 48, 53, 55, 64, 90, 225, 229, 299  
 Սուրէն 175  
 » (Պայազիսցի) 24, 148  
 Սուֆօ 203  
 Սուֆիա 46  
 Ստալին 151, 229  
 Ստեփան 254  
 » Քէշիշօղլու 222  
 Ստեփանեան Անդրանիկ 324  
 » Խաչօ 51  
 » Յարութիւն 324, 326  
 Ստեփէ տներ 49

» Ճուրէ 123  
 Սրգէ 49, 123, 126, 163, 208, 221  
 » Գրիգոր 27, 144  
 » տներ 171  
 » Ղզո 176  
 Սրգէեան Խուռշուտ 69  
 Սրուանձտեանց Գարեգին վրդ. 11, 13, 15, 28-9, 60, 69, 124

Վ

Վակներ Ֆրիտլինկ 183  
 Վահագունի Յովհաննէս Արքա 60, 82, 102  
 Վահան 27, 142, 239, 274  
 » Վարժապետ 68, 147, 241  
 Վահէ վարժապետ 36  
 Վահտի 32  
 Վարդան 152  
 » (Ալիցիսացի) 233  
 » Քահանայ 209  
 Վարդանեան Գրիգոր 329  
 » Դանիէլ 329  
 » Հայկ 263  
 » Նիկոս 329  
 » Վստան 329  
 Վարդանույր Վիլլի 251  
 Վեպիանոս 211  
 Վիլլան 255, 316  
 Վասիէան 178  
 Վտակ 68, 250  
 Վրդէ Յատէ 282  
 Վրդայենց տուն 59, 221  
 Վրդօ 123

Տ

Տարսան բէկ 302  
 Տամատեան Միհրան 58, 254  
 Տայուս 212  
 Տանուտէր Գասպար 123  
 Տատուրեան Աւարոն 178  
 Տարօնցի Պողոս 207

Տելեմաֆ 68  
 Տեիօ 256  
 Տէլի Քէշիշ 79  
 Տէնիֆի 153  
 Տէր Ասովեան Պրն. Մկրտիչ 212  
 » Ավոյեան Յեղոսն Ավոյի 320  
 » Արքանոս 135  
 » Աւետիս 15, 44-5, 106, 123, 144, 174, 276-7, 281  
 » Բարրօղիմէոս 26, 417  
 » Գեորգ 123  
 » Դաիթ 107  
 Տէրեան Վստան 152  
 Տէր Զամարեան 123, 210  
 » Զամարեան Արեգնօղ, 144, 223, 316, 333  
 » Զամարեան Զամար 223, 255, 316, 333  
 » Զամարեան Մերի (Մարթիմ) 316-17  
 » Զամարեան Մովսէս (Իրիգու Մոսոյ) 57, 8, 175, 216, 333  
 » Զամարեան Փոյ (Փոլլոյ) 316  
 » Զամարեան Օհան (Սէֆիլ Օհան) 58, 176, 228, 254-5, 266  
 » Զամարեան կամ Իրիգու տուն 59  
 » Քովմտտեան Մոսեակ 178  
 » Խոչատուրեան Արտուշէո Գ  
 » Համբարձում Քինյ. 182  
 » Ղեոնդեան Անդր 422  
 » Ղեոնդեան Հրաչեայ 34, 274  
 » Ղեոնդեան Յակոբ 90  
 » Մարգարեան Գեղամ 320  
 » Յովհաննէսեան Միհրան 36  
 » Յովսէֆ Մերոնի 79  
 » Սոսակ 54, 228, 293  
 » Սոսակեան Յ. Պ. 197  
 » Սարգիսեան Խաչօ 51  
 » Սողոմոն 64-5, 118, 281, 289, 293  
 » Սողոմոնեան Գարեգին 70, 285, 287

Տէր վարդանեան Հայկ (Վարիպ վարդ) 260  
 Տէրտրոջ Արշակ 272  
 » Գասպար 65, 73, 236  
 » Սիմոն 36, 39, 123, 276  
 » Տիգրան 267, 417  
 Տէր Օհանի տղայ՝ Արշակ 321  
 Տրիկըկայ Յակոյ 34  
 Տընֆօր 82, 194, 207  
 Տըվըլէ Ալպէր 20  
 Տիգրան ժ. 26, 53, 176, 211, 229, 231, 251, 255-8, 274, 277, 280, 282, 285  
 Տիւրն 256  
 Տիւլպար 326  
 Տիտոս 211  
 Տիտո 245  
 Տիբան Եպս. 315  
 Տիբացեան Ալեքսան Էֆ. 23  
 » Առաքել Տացու 124, 128  
 » Արքիմ աղա 222  
 » Արշակ 297  
 » Գուրգէն 317-8  
 » Էտուրքա 318-9  
 » Լուսին 184  
 » Փրոֆ. Յարութիւն (Հէնրի) 184-5, 318-9  
 » Ռուբէն 318-9  
 » Սանամ 297  
 » Սարաֆ Էդօ 26  
 » Սեդրակ 184, 317  
 » Վահան 24, 148  
 Տիբացու Մաղաֆ 195  
 Տիբարն 11  
 Տնկոյեան Մերսո 329  
 Տնկոյի Կոթէ 75  
 Տոն Ուարքըն 161  
 Տուրպախ 80, 85-6, 232, 250, 261, 266,  
 Տօնապետեան Թորգոմ ֆհնյ. 74, 141, 241

Տօնապետեան Գրիգոր վարժապետ 49, 84  
 » Տիգրան 84  
 Տոնոյեան Սալվի 321  
 Տօնօ 203  
 Փ  
 Փալանեան Գէորգ աղա 23, 27, 144, 274  
 Փալուլ օնպաշի 53, 74, 245, 280  
 Փայլակ 41  
 Փանոս 26  
 Փասրքրմանեան 99  
 Փիլարտոս 99  
 Փիլիպոս վարդապետ 26  
 » Էֆ. 162  
 Փիլոս վաշտապետ ժ. 33, 52-3, 80, 93, 103, 235, 266  
 Փիտն Գէորգ 20, 302  
 Փիփոք 193, 196  
 Փոքիկեան Սարգիս 23, 27  
 Փոլիս Արամ 26  
 Փուրթօ Ղազար 31, 93, 267, 280

Ք  
 Քաղփկու Արքո 267  
 » Օհան 33, 63, 93, 230, 252, 266  
 Քամ 4  
 Քարահատեան Պատուելի Պօղոս 67, 116-7, 222  
 Քաւէ 294  
 Քէաքիպ Միրզա 269, 290-91  
 Քեռի 249  
 Քեռի Գեւօ 280  
 » Դաւիթ 172, 246  
 » Պետօ 169, 253  
 Քերկէ տուն 209  
 Քէմալեան Անդրանիկ 319

Քէշիշ Տոնոյեան Զարդար 322  
 » Օղլուեանց Ստեփան 163  
 Քէօն Հիւսէյն փաշա 301  
 Քիրվա վարժապետ 292, 294  
 Քիւշէրեան Պետրոս 108  
 Քոլս 3. 90  
 Քոչէեան Շոքօ 320  
 Քոչոյեան Լեւոն 322  
 Քրիստոս 302, 306  
 Քրմոյեան Ալեքսան 27, 258-9, 283  
 » Արամ 27, 274  
 » Արմենակ 27, 169, 236, 253, 259-60  
 Քօչօ 15, 106, 123  
 » Յարրէն 34  
 Քօչօեան ռէս Պաղտասար 135  
 Քօռ ուստա Յակոբ 60  
 Քօֆրըն 210

Օ

Օգմանի Ալի 74  
 Օգօ 32, 418  
 Օհան 31, 80, 94, 125-6, 266  
 Օհանեան Վահան 326

Օդոնյի Դանէլ 176, 282  
 Օճնիկ 256  
 Օշին 107  
 Օսման Զաւուշ 269, 276  
 Օրմանեան Մաղափա Արք. 3, 13, 22, 68  
 Օֆիկեան Միսակ 31

Ֆ

Ֆաքէ 301  
 Ֆալամազ 26  
 Ֆախի Ահմէտ 214, 219  
 Ֆայիմ Էֆէնտի 267  
 Ֆարխատին աղա 74, 76, 244, 262, 280, 288-9, 293-4  
 Ֆարիատ 250  
 Ֆարիատի Մանուկ աղա 84, 123  
 Ֆէյզլի 269, 279  
 Ֆէյզուլլա 45  
 Ֆրլօ 266  
 Ֆէրտուսի 306  
 Ֆիրունց Յակոբ 87  
 Ֆոուննի Յովհաննէս 27  
 Ֆրիսօ Միսակ 76



# ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐՈՒ ԵՒ ՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՑՍՆԿ

## Ա

Աբելի Յաղբուր 66  
 Աբելի Գեքեզման 14  
 Ադամ 4  
 Աթենք 254  
 Աթենքի Ամերիկեան Գոլէն 70, 312  
 Ալաշկերտ 5, 7, 11, 18, 28, 44, 46, 76, 90, 149, 229, 273  
 Ալի 304  
 Ալի Մուր 101  
 Ալախաբան 300  
 Ալվատինջ 171  
 Ալօ 97  
 Ախլաք 210  
 Ախլաք 250  
 Ախր Զիման (Յաւերժադար) 13, 92  
 Ակն 150, 157  
 Ամասիա 194  
 Ամերիկա 49, 69, 71, 117, 124, 129, 143, 146, 152, 157, 161-2, 236, 255, 260, 309-12, 314-7, 319  
 Ամերիկա (հարաւային) 70  
 Ամերիկեան Ազգային Գիտական Հիմնարկութիւն 184  
 Ամրտօրութիւն վանք 189  
 Աղզոնիկ 303  
 Աղեքսանդրապոլ (Լեւոնական) 242  
 Աղի - հանք 36  
 Աղնալար 196  
 Աղնամելիք 29-32, 93, 95-6, 105, 108, 123, 197, 219, 252-3, 278

Ազգային 9  
 Ազգերան 6, 9, 61, 98, 195, 201  
 Ազգերանայ Գէտուկ 98  
 Ազրիէօլ 48  
 Այնգուրդ 11  
 Անանիա Առաքելոյ Աջ 191  
 Անապատ 191  
 Անգլիա 29, 62, 197, 314, 317  
 Այնթապ 240  
 Այնթապի Ամերիկեան Գոլէն 69, 129, 309  
 Անթափ 44  
 Անչա 316  
 Անտալազոմ 95, 98, 285  
 Աշտիշատ 266  
 Ապտուլլա 98  
 Առաքելոց վանք 188-9, 209  
 Առիս 210  
 Առնիս 99  
 Ասիական բերդ 212  
 Ատափագար 197  
 Ատրպատական 20  
 Արարկիւր 150, 157, 181, 194, 207  
 Արագած 18  
 Արածանի 3, 7, 9, 13, 19, 32, 36, 41, 48, 52, 55, 61, 65, 77, 91, 101, 104, 146-7, 277, 297  
 Արամեան Վրժ. 108  
 Արապօ 97, 282  
 Արարատ 71, 243-4  
 Արաֆս 6, 10, 98-9  
 Արխանկէլ 152  
 Արծկէ 210

Արկոն 254  
 Արնէշ 209  
 Արնէշի Արնօնից վանք 301  
 Արմաշի դպրեմանք 22, 70  
 Արմաւիր 151  
 Արջաձոր 14, 33, 103, 283-84  
 Արշուգ վանք 196  
 Արտէն 317  
 Աւերակ ջաղաց 70  
 Աւստրիա 314  
 Անիկ 99  
 Աւրան 263  
 Արօս 11, 13-4, 32-5, 37, 87, 95-6, 103, 108, 118, 176, 216, 220, 230, 266-7, 283, 314, 320, 322

## Բ

Բագու 229  
 Բաղնոց 301  
 Բազկան 297  
 Բաքում 236, 263  
 Բալու 191  
 Բաղէշ 17, 41, 79, 187, 189, 208-11, 219  
 Բաշիֆլիկ 100  
 Բաղջա 19, 100  
 Բայազետ 218  
 Բաշֆէօյ 320  
 Բասեն 5-6, 10-1, 50, 76, 235-6, 239-40, 251, 253, 257, 260, 263, 266, 272-3  
 Բարմազարգ 101  
 Բելաջապու 99  
 Բերիա 191  
 Բիթլիս 21, 63  
 Բիւրակն (Պիւնկէօլ) 4-9, 11, 18, 43, 45, 61, 146, 176, 266  
 Բշերիկ 266  
 Բոկ - Մահմէտ 49, 99  
 Բոնտան 100  
 Բորժի Մասուր 100, 102

Բուրխան 12, 140  
 Բուռնազ 144, 214, 219, 278

## Գ

Գաբրիէլի գոմ 35, 95, 283  
 Գազպէ Տաղ 5, 44  
 Գահիրէ 178  
 Գամիշլի 38, 124, 142, 146, 178, 323-4, 326  
 Գարազեօղ 36  
 Գարախազ 41, 198, 240  
 Գարակէօղեան Որբանոց 178  
 Գարազազման 100  
 Գարա Մահմէտ 49, 99  
 Գարաչոպան (Վարաչոպան) 6, 9, 11, 21, 35-40, 45, 61, 86, 95-96, 105, 108, 123, 149, 234, 241, 270, 274-7, 288, 291  
 Գարապուրաֆ 40, 95-6, 285  
 Գարափոնար 145  
 Գարաֆէօփրո 41-3, 95, 105, 219, 222, 241-2, 259, 277-8  
 Գարաֆիլիսէ 46, 99, 229  
 Գերմանիա 183, 310, 316-7  
 Գէօկ սու 214  
 Գրգմուսա 95  
 Գրգրլապէ կամ Երգրլապէ 98  
 Գիւնդ 102  
 Գիտուրա 48, 85  
 Գծուակ 210  
 Գոգսուայ վանք 103  
 Գոգարդարա 99  
 Գոգրլ Պապա 5, 14, 36, 45, 61, 86, 98, 275-8  
 Գոքերի կամուրջ 150  
 Գոլթիսար կամ Խոլիսասար 43-4, 95  
 Գոմաձոր 257  
 Գոմ. Մահմէտ 100  
 Գոմբգան 97-8  
 Գոպալ 11, 44-7, 95-6, 105-6, 108, 144, 147, 149, 236, 271-2, 276,



277, 285, 287-8, 307  
 Գուպլայ - Գեղուկի 29, 36, 44-5, 149  
 Գուննով 56, 67, 295  
 Գովանդուկ (կովանդուկ) 12-3, 33, 42, 48-50, 85, 95, 104, 108, 144, 171, 180, 219, 228-9, 236, 242, 267, 270  
 Գունիմարա 98, 321  
 Գունսուզ 98, 278-9  
 Գրիգորի Աբու 107

Գ

Գամասկոս 28, 327  
 Գանել զեա 14, 56, 58, 63, 65, 128, 140, 176  
 Գանուբ 200  
 Գաշիէն 101  
 Գասնաուբ 5, 98  
 Գատավերան 98, 278-9  
 Գատուան 210  
 Գարկեահ 19, 24  
 Գեղրափ 5, 14, 55, 61, 65, 81, 90, 98, 103, 250  
 Գեմիրնի 97  
 Գերջան 5, 11, 162, 274, 302  
 Գերէ Ա. Սարգիս 86, 261  
 Գերէլէր 99  
 Գրոնոնի կամ Թոչոնի 97  
 Գիմաֆեսան Վրժ. 108  
 Գիւանի Հիսէյն 97  
 Գուն Գում 101  
 Գուրախան 44  
 Գուրան 17, 39, 266  
 Գրմերտ 209-10

Ե

Եահիա 50-1, 62, 95-6, 103, 106, 143, 246, 249, 266, 284  
 Եաղան 6

Եաղնի խան 193  
 Եափա 193  
 Եգարէնիտար 163  
 Եգլպասա 315  
 Երովպիա 22  
 Երպիա 52-3, 67, 95, 215, 280  
 Եղիվարդ 322  
 Եղրալի կամ Գասպարի զիւղ 53, 95, 123, 216, 279  
 Ենիֆէոյ 33, 53-5, 89, 95-6, 103-4, 108, 140, 179, 207, 215, 231-2, 294  
 Եոզղաս 240  
 Եոննարու 99, 144, 210  
 Երասի 194, 196  
 Երեան 59, 88, 101, 244, 298, 320, 322  
 Երզնկա 76, 150-1, 157, 181, 291, 296, 301  
 Երիտասարդական Միութիւն 109  
 Երուսաղէմ 124, 182, 189, 191, 193, 211  
 Երուն 208  
 Եղոկիա 194  
 Եփրատ (Մուրատ) 3, 6, 10, 78, 91, 150  
 Եֆմալ 96

Զ

Զանգեզուր 233, 247, 249  
 Զեռնակայ Սար 5, 9, 13, 29-30, 36, 55, 89, 214, 278, 284  
 Զրրզընա 98  
 Զիարաթ 69  
 Զոկնու 101

Է

Էգէպատ 235  
 Էլ Ագարա 300  
 Էլպիս 13, 15, 96, 203, 208, 219, 230

Էլուրիս 101  
 Էն Արարի Միշիկրն Համալսարան 184  
 Էշտիա 322  
 Էրզրում (տես նաեւ Կարին) 21, 29, 39, 41, 47, 63, 69, 76-7, 79, 83, 101, 164, 169, 226, 236, 253-4, 258, 265-6, 296, 302, 314  
 Էրզրումի Ամերիկեան Բարձրագոյն Վարժարան 70, 76, 305  
 Էրզրումի Ամերիկեան միսիոնարութիւն 63, 67, 81, 83  
 Էջմիածին 82, 96, 107, 139, 195, 197, 213, 306, 322  
 Էջմիածնի Գեորգեան ձեմարան 23, 35, 139  
 Էրկամս 101  
 Էրուն 212

Ը

Ընկուզնակ 171

Թ

Թարոս 11-2, 99, 194, 242  
 Թարոսիկ 194  
 Թալալոց 12, 48, 176  
 Թակահակի Տուրմա 153  
 Թանկերակ 97  
 Թամբլ Համալսարան 183  
 Թամպով 152  
 Թաշֆեսասն 12, 14, 100, 196  
 Թաշֆենտ 99  
 Թաունզէնտ 69  
 Թարածիգ 95  
 Թարգման (Թագման, Թեֆման) կամ Մարդաղի 5-7, 11-2, 50-1, 100, 102, 127, 214, 284, 302, 307  
 Թարգմանչաց Գերեզմաններ 189  
 Թարիգ 162, 243, 249

Թեհրան 223, 243, 311  
 Թէյմուր Թաղ 243  
 Թէֆասա 319  
 Թրպպէզըրայ 101  
 Թրպպէզըր 101  
 Թրրիշ 97  
 Թիլ 171  
 Թիֆլիզ (Թիֆլիս) 24, 59, 73, 105, 148, 151, 212-3, 250, 418  
 Թուով 101  
 Թոնդրակ կամ Թանարլի 90, 95, 285  
 Թորիա 322  
 Թուլա 152  
 Թուխապսէ 72  
 Թուխ - Մանուկ 54, 64-5, 86, 103, 105  
 Թոտովերան 257  
 Թուրփիա 149  
 Թոփրազգալէ 98  
 Թոչոնց Բոյն 327

Ժ

Ժածան քար 31

Ի

Իզմուռնիա 193  
 Իլինա 149, 271  
 Ի Մի Լաքի 92  
 Ի Նախ 101  
 Իվո ձիւնա 185, 319  
 Իտալիա 157, 314  
 Իրան 243-4  
 Իրիցու Դար 64  
 Իւնիէն Սիբի 310-11

Լ

Լազարեան ձեմարան 148  
 Լաքար 210  
 Լաքափա 178-9, 324, 333

Լակլկու Դար 64, 289  
 Լաֆայուտաղ 95, 106, 171, 277  
 Լեգիկ 5  
 Լեմինական 297, 319—22  
 Լեոնա-Հայաստան 88,  
 Լիբանան 327  
 Լիզ 209, 240  
 Լիմ Անապատ 191  
 Լիոն 223  
 Լիփսեմպուրկ 317  
 Լոնկոյի ճակատամարտ 314  
 Լոնտոն 29, 68, 82  
 Լոռի 151  
 Լոս Անճէլլոս 310, 312, 316  
 Լուիզիանա 319  
 Լուպեանֆա 153  
 Լուսաւորչայ վանք 59

Խ

Խաբրանլար 99  
 Խաբրանլըղ 12  
 Խալաֆուլս 100  
 Խալիֆազ լեռ 9  
 Խալիսալ 5  
 Խալչաուշ (Խալիլ - չաուշ, Խաչալոյս)  
 14, 56, 58, 67, 70, 95-6, 104,  
 106, 108, 123, 163-4, 173, 176,  
 215, 218, 221-2, 228, 242, 247,  
 250-1, 254, 258, 280-82, 310,  
 315-6, 320, 417-8  
 Խամշով ձոր 48, 171, 225  
 Խամուր բերդ 3-6, 9, 12-3, 29, 91,  
 94, 97, 125-6, 197, 225, 242,  
 282, 296, 301  
 Խայապաշի 19, 24-5  
 Խանասար 18  
 Խանդրէժ 97  
 Խանլի - Տէրէ 62  
 Խանպէկի 99  
 Խաշխաշեան 108  
 Խաչ ֆարեր 14, 65-6

Խան ի Փոզան 92  
 Խասապխանա 24  
 Խասէ կամ Խաշէ, Կաշէ 97  
 Խաստալար 19, 24  
 Խարաեղի 12  
 Խարակուիժ 96  
 Խարախուլա 99  
 Խարաղան 100  
 Խարաղըլ 210  
 Խարանի 100  
 Խարաչօպան 200  
 Խարապա 101  
 Խարապուրախ 97-8  
 Խարափուղար 99  
 Խարաֆէօփրի 96, 117, 168, 207, 314,  
 321, 417  
 Խարբերդ 42, 66, 69, 157, 194, 228  
 244, 291, 304, 308  
 Խարբուխ քաղ 418  
 Խարեազի 5  
 Խարզաշ 100  
 Խարս 72, 82, 126, 144, 163, 204, 228,  
 246, 249, 261, 263  
 Խզլնի չուր 194  
 Խզուսա 97  
 Խէյպիան 69  
 Խըզըլախմառ 97, 280  
 Խըզըլթէփէ 100  
 Խըզըլխանա 98  
 Խըզըլաղան 263  
 Խըզըլնա 100  
 Խըզլխանա 99  
 Խըրբան 101  
 Խըռխրոուր 100  
 Խըսըլի 100  
 Խըտօմուն 99  
 Խըրր (Հերթ) 13-4, 45, 53, 60, 67,  
 95-6, 106, 279  
 Խըրխար 100  
 Խըրմխայա 14, 61, 95-6, 202, 275,  
 321-2  
 Խըրպէգօր կամ Խէրպըձոր 99

Խնձոր 10  
 Խնուլ 3  
 Խնուն 3  
 Խոբելր 75, 209, 263  
 Խոզան 61, 95, 98, 285  
 Խոզլի կամ Գասպարի գեղ 9, 15, 53,  
 61-3, 70, 95-6, 104, 106, 108,  
 123, 198-200, 216, 219-20, 233,  
 239, 261, 278-9, 284, 294-5, 314  
 Խոլիմախսուտ 97  
 Խոլխասար 285, 300  
 Խոյ 233  
 Խոյլի Պապա 61  
 Խոնդուռ 95  
 Խոտեւան 97  
 Խորասան 114  
 Խորէնեան վարժարան 108  
 Խորհրդային Հայաստան 144, 297  
 Խորունկ ձոր 142  
 Խուլք 191  
 Խուշխուշ 210  
 Խուրունուխ 100  
 Խրիմ 153  
 Խօթուէշ 87  
 Խօլաղասի 202  
 Խօշավանք 236

Մ

Միսաու 7  
 Մովսեսար 81  
 Մոտոտ Բուլ 56

Կ

Կազլով 152  
 Կազգուան 146, 241  
 Կաղնիսի Փուլ 29  
 Կայէնի Բլուր 4, 66  
 Կանի Պագ 101  
 Կանիէ Մշկան 97  
 Կառնէն 64, 68, 147

Կարին 5, 11, 17, 22-23, 27, 32, 35-  
 36, 47, 50-1, 58-9, 67, 70, 99,  
 102, 144-51, 157, 162, 164,  
 175, 181, 188, 193-8, 201, 207,  
 217-21, 239-40, 242, 246, 256,  
 260-1, 271, 274, 276, 291,  
 294, 304, 308  
 Կարակալա 9  
 Կարմիր Գարայ 48  
 Կարմիր Տուզան 13  
 Կարմրակ 189  
 Կարմրական 12, 24-5  
 Կարնոյ Առաջնորդարան 21, 272  
 Կարնոյ Կեդրոնական Բանտ 65, 73,  
 172, 238-9, 241, 253, 259-60,  
 263, 290  
 Կարնոյ Սանասարեան վարժարան 23,  
 54, 59, 68, 85, 92, 255  
 Կարս 200, 207, 257  
 Կառ Գրեր 289  
 Կեալեռէշ 98  
 Կեալալու 213  
 Կեդրոնական Խաղաղական 319  
 Կեզի 207  
 Կենն 5  
 Կեսարիա 78  
 Կեօկսու (Կեօֆուս) 5, 9, 12, 50,  
 98-9, 103, 203, 284, 302  
 Կեօֆօղլան 101  
 Կրլասփորի 11  
 Կիզէլ Տէրէ 98  
 Կիմիշ Մատեն 150  
 Կիմլիխմ (Պաշինետ) 9-10, 270  
 Կնեսազ 274  
 Կորալ 123  
 Կողնի 210  
 Կոհոթի սար 73  
 Կոյնիկ - սու 5, 10  
 Կովածոուի (Գովածոուի) 96, 123,  
 171, 199  
 Կովկաս 17-8, 24, 26, 23, 28, 42, 48,  
 51, 56, 62, 64, 70, 72, 75, 89,

93-4, 98-102, 132, 146, 151, 163, 224, 228-9, 231, 235-6, 239, 241, 246-7, 249, 252-3, 258, 260-1, 263, 265-6, 309, 311, 417  
 Կովկասեան լեռնաշղթայ 151  
 Կուտալգանալ 317  
 Կունտէ Համօ 97  
 Կունտեմիր 10  
 Կունտէ Պարոյր 98  
 Կուրէ Հասան 99  
 Կովիայ վանք 210  
 Կրէսինա 211

Հ

Հազրր Պապա 5, 36, 61, 74, 86  
 Հագօ 302  
 Հալէպ 28, 40, 42, 323-4, 326-7, 329, 333  
 Հալիփէ 101  
 Հանի Սէյիտ՝ Պէկզատի Ահմատի գում 98  
 Հանի Գոպրի Պաղջա 62, 278-9, 295  
 Հանի Եուսուփ 97  
 Համազգային հեմարան 323, 329  
 Համզան կամ ձերկոյի գիւղ 101  
 Համզաշէլս 10, 210  
 Հայաստան 3-5, 8, 17, 51, 59, 75, 84, 91, 145, 153, 163, 198, 243, 298, 315, 322  
 Հայաստանի Հանրապետութիւն 88, 153, 298  
 Հ.Բ.Ղ.Միւսթիւն 312  
 Հայկ կամ Փայկ 4-5, 91, 197  
 Հայկաշէն 91  
 Հայկաձոր 83  
 Հ.Յ.Գաշնակցութիւն 169, 181-2, 226-228, 230, 235, 238, 242-3, 245  
 Հայոց Հայրենասիրական Գաշնակցութիւն 49  
 Հասան Գալէ 239-40  
 Հասիչէ 183

Հարամիկ 4, 9, 14-21, 56, 58, 63, 65, 68-9, 76-7, 91, 95-6, 105-6, 108, 118, 120, 123, 140-1, 146, 157, 165, 167, 169, 180, 184, 202-3, 205, 210, 213, 215, 220, 222, 228, 230-1, 236, 239, 241-2, 244-5, 254, 261, 270, 274, 467  
 Հարաւային Ֆրանսա 314  
 Հաւատամք 5-7  
 Հաւատալարիկ 194  
 Հաւայի 319  
 Հաւքըվան 213  
 Հաւարար 73  
 Հերթինք 81, 135, 187-8  
 Հերեան կամ Ներքին գեղջ 3  
 Հերթն 3  
 Հերտեւ 196, 207  
 Հզեր 97, 281, 293-4, 296  
 Հէֆիարի 300, 308  
 Հրպան 98  
 Հիսան 210  
 Հիւսէնիկ 228, 244  
 Հնչակեան Կուսակցութիւն 227, 230, 240, 254  
 Հնոստան 114  
 Հոլանտա 317  
 Հորմրզան 97  
 Հոհնոս 317  
 Հոով 211, 314  
 Հոովմկլայ 209  
 Հօրէգում 99

Ձ

Ձարիցին (Ստալինկրատ) 151  
 Ձիքեհեաց Լեռ 192

Ղ

Ղալարիա 153  
 Ղալայնի 100-1

Ղամարու 229  
 Ղամիք 4, 92, 176  
 Ղանտար Տաղ 5  
 Ղարա - Բուղաղ 216  
 Ղարաչոպան 38  
 Ղարաֆէօփրու 107, 214, 219  
 Ղարաֆիլիսէ 320  
 Ղարս 36, 46, 194, 233, 266  
 Ղզանայ 22  
 Ղըզըլչաղչաղ 233  
 Ղընէմիէ 179

Ճ

Ճապաղջուր 5, 10, 125, 162  
 Ճրքք Մահիէ 19, 267  
 Ճիպէյլ 327  
 Ճորոխ 200

Մ

Մագրաձոր 41  
 Մալազկէրտ 5, 9, 11, 56, 96, 126, 273, 301  
 Մալասոր 101  
 Մահլա - պաշի 19  
 Մադալէ Սոք 307  
 Մամախաբուն 291  
 Մաման կամ Մամիկոնեան 101  
 Մամիկոնեան Բնկերութիւններ 108  
 Մայիկոպ 320  
 Մանանաղի 11, 101  
 Մառնիկ 190  
 Մասաչուսէք 69  
 Մասիս 4  
 Մատեն 157  
 Մատին Առաքելաց վանք 190  
 Մասրաք 99  
 Մարդաղի կամ Մարգաղի 12-3, 100

Մարգուանի Ամերիկեան Գոլէճ 69, 70, 194, 311  
 Մարիանա 319  
 Մարշրլ 319  
 Մարտի 12, 33, 67, 71, 77-8, 96, 123, 182, 215, 221-2, 278, 310  
 Մարտլլ (Ֆրանսա) 36, 181, 314  
 Մեյլն 100  
 Մեյլիք (վանատառու) 39  
 Մեծ - Ասու 67  
 Մեղրագեա 210  
 Մեղափ գեա 10  
 Մերկեօր 101  
 Մէգրիէ 151  
 Մէնիարու 11, 98, 100  
 Մէրիսուք 101  
 Մէրմէր գում 101  
 Մրտարօ (Քալիփօրմիա) 255-6, 310  
 Մժնկերտ 11, 15, 78-9, 90, 95-6, 103, 123, 175, 285, 310,  
 Միացեալ Բնկերութիւն 23, 108, 144  
 Միացեալ Նահանգներ 184, 309, 333  
 Միլլար Պաշու 26  
 Միջին Արաբա 317  
 Միքսիա 101  
 Մշկանայ Տուգան 13, 279  
 Մոլախուրան 100  
 Մոլաստատ 95, 100, 285  
 Մոսկուա 21, 59, 124, 126, 152-3  
 Մոսկովիցիներու բող 64  
 Մուզնու 418  
 Մուգասա 278  
 Մուշ 5, 7, 11, 17, 20, 28, 49, 59, 70, 75, 79, 90, 117, 126, 128, 162, 171, 190-1, 194, 201, 206-209, 211-3, 234, 246, 263, 265-7, 302  
 Մուսուլ 182, 195  
 Մուրաս չայ 91  
 Մուտուրկայ 271  
 Մուրիան 44, 99

Յ

Յախոռչիման (Յաւերժադալար) 56, 92  
 Յարդերդ գիւղ 51  
 Յոբի ձոր 64, 289  
 Յովհաննէս բերդ 194  
 Յոտնչոր 132  
 Յունան 175  
 Յունաստան 70, 157, 183, 312

Ն

Նազէ 99  
 Նայիրի (տարագիրներու կոմիտէ) 243  
 Նատիր Շահ 97  
 Նարտիւան 145  
 Ներսէսեան վարժարան 108  
 Նըֆրըֆ 12, 97  
 Նիակարաֆոլս 310, 314  
 Նիկոմիդիա 187, 193  
 Նիւ Նորֆ 49, 157, 160, 162, 183, 315  
 Նիւ ձրրգի 310-1  
 Նորելածի վանք 14, 283-4, 298  
 Նոր Հէպրիտէս 317  
 Նորշնչոզ 210  
 Նոր Քալէտոնիա 317

Շ

Շախշախ 99  
 Շահ - Շափուրէ 20  
 Շահվերան կամ Շահվերտի 92-3, 97  
 Շամ 28, 40  
 Շապատին 67, 74, 80, 91, 95-6, 104, 108, 123, 215, 221-2, 261, 274, 278, 291, 320  
 Շատախ 126  
 Շատր 97  
 Շարան - ֆարեր 14, 56, 104, 176, 418  
 Շերիան (Շարիան) 5, 9

Շէկակ 100  
 Շէնիկ 264  
 Շիկաֆո 312  
 Շիրվանշէխ 219  
 Շոդալար 150, 246  
 Շոռաղներ 13, 52, 104  
 Շորակեալ 62, 71,  
 Շուշար 5-7, 10-12, 101, 302-3, 307, 312

Ո

Ոսկեհասկ 322  
 Որմիա 213  
 Որկնոց 209  
 Ուէյն Սթէյք Ինիվըքսիթի 184-5  
 Ուլուս ձոր 289  
 Ունան 207  
 Ուշմանա 322  
 Ուշֆիլիսէ (Ալաշկերտ) 233  
 Ուֆրանիա 153, 157

Չ

Չաթալ ֆար 176  
 Չաթուխ 99  
 Չադրղան 60, 74, 92  
 Չամուրի 98  
 Չարպուհուր (Չարպուհար) 7, 10, 56, 101, 172, 192, 292, 297  
 Չաուշ գիւղ 98  
 Չարէշ 5  
 Չելիքի (Չաուրմա) 14, 35, 60, 67, 70, 81-5, 90, 95-6, 104, 108, 118, 123, 135-6, 144, 168, 194, 196-7, 209-10, 215-7, 220-1, 224, 228, 240, 244, 256  
 Չէֆմէն 5  
 Չըլ Թընտուր (ֆառասուն բոնիր) 90  
 Չրո ու Չաթ 144, 297  
 Չիտուր 272  
 Չուլու 98

Պ

Պալու - Քիթ 19  
 Պաղզա 24, 55, 298  
 Պաղտատ 45, 182, 273, 285  
 Պալազիտ 90, 126  
 Պալրոք 183  
 Պաշէնտ 101  
 Պաշէոյ 100  
 Պաստոֆ 101  
 Պասրա 182  
 Պարսկաստան 41, 61, 63, 71, 162, 223, 243, 305, 318  
 Պաֆու 236  
 Պելնիֆա 317  
 Պեկուրտի 95, 100, 285  
 Պէյրուք 39, 46, 178, 181, 193, 323-4, 326-7, 329  
 Պէրպէրեան Բրձ. Վարժ. 174, 178  
 Պըրլինկըն (Վերմոնթ) 316  
 Պիթիաս 178  
 Պիթլիս 5, 144, 259, 263  
 Պինկէտ կամ Բինգոլ 10, 12, 14, 19, 55, 66, 70, 78-9, 81, 89, 100-1, 126, 225, 307  
 Պլնկիկ 12  
 Պոզ Փուլ 149, 274  
 Պոլիս (Վ. Պոլիս) 20-1, 28, 34, 36, 40-42, 59, 70, 78, 90, 131, 143-145, 153-4, 157, 173-5, 178-9, 193-4, 207, 213, 229, 242, 249, 254, 261, 269, 272, 299, 314, 319  
 Պոլսոյ Հայոց Ազգ. Պատրիարքարան 21, 67, 124, 133-4, 139, 272  
 Պոլսոյ Սր. Փրկիչ Հիւանդանոց 59  
 Պոսթըն 69, 71, 124, 129, 238, 309-312, 315-6  
 Պուզու 99  
 Պուլանուխ (Պուլանըխ, Բուլանըխ) 5, 9-11, 28-9, 31, 38, 50, 61, 77, 79, 89, 144, 162, 172, 225, 234,

240, 263, 266, 272, 278, 301  
 Պուլկարիա 154, 157, 178  
 Պուռնագ կամ Բուռնագ 14, 48, 85-6, 95, 165-6, 220-21, 261, 278  
 Պուրիան կամ Բուրիան 96, 98, 221, 289  
 Պրուֆլին 162

Ջ

Ջալալօղլի 162  
 Ջուլֆա 233  
 Ջրիկ 190

Ռ

Ռաշան 99  
 Ռեվանտուր 300  
 Ռըքլըր 312  
 Ռիազան 152  
 Ռուպեր Գուլէն 173, 175, 282,  
 Ռումանիա 154, 157, 263  
 Ռուսաստան (Ռուսիա) 126, 135, 163, 195, 213, 310  
 Ռստամգեսուկ 56  
 Ռտո էյլէնտ 314

Ս

Սալմուկ 114  
 Սալմաստ 213  
 Սալուրի - Սարուսի 86-7, 95-6, 275  
 Սամսոն 194  
 Սայլու 19, 25, 37, 104, 106, 123, 164, 235, 248, 268, 311, 314-5, 321-2  
 Սանամ Քարեր 100  
 Սանասարեան 36, 148, 164, 266  
 Սահսար Դարա 150, 240, 254, 274  
 Սան Ֆրանսիսկո (Քալիֆորնիա) 316  
 Սաուլու կամ Սաուլի 87-9, 95, 199, 284

Սասուն 8, 17, 62, 125, 135, 143, 171, 187, 190, 234, 247, 252, 254, 256, 263-5, 272

Սարաթով 152-3

Սարթ - Մէշա 62-3

Սարիխամիշ 146, 241, 249

Սարտաուուտ 56

Սեբաստիա 194, 209

Սելանիկ 22

Սելի մօրուֆ 4

Սեկրերի ձոր 36

Սեղնափար կամ Սիւնափար 101

Սեմ 4

Սեպուհ 34

Սերկիի լեռ 7

Սերոյս 5

Սեւրֆան 101

Սեւիկ 99

Սեւ Ծով 70, 72, 153

Սեւ հոգեր 91

Սէլի Մուրուֆ 66, 74, 92

Սէմալ 264

Սէյրան 185, 319

Սէօյլէմէզ 99, 302

Սըլտըզ 100

Սիմ 4

Սիմոն 132

Սիմամերկ 207

Սիմուզ 59, 254

Սիպիր 71, 89, 152, 157, 229, 236, 244

Սիսիան 88, 249

Սիւրիա (Սուրիա) 142, 146, 310, 323

Սիփանայ սար 146

Սլիվան 266

Սկիւտար 22, 174

Սզերդ 212, 308

Սննար 194

Սոլոմոն կղզիներ 317

Սոխում 70, 242

Սովետական Հայաստան 244

Սուլույս 207, 268

Սուկաւէտ 93

Սոկիւքլի 89, 95, 101

Սբ. Աստուածածին 19, 83, 99, 104

Սբ. Գէորգ 49, 53, 80, 104

Ս. Գէորգեան 108

Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցի 50, 314

Ս. Դանիէլ 91-2

Սբ. Երուսաղէմ 26

Ս. Երրորդուքիւն Մայր Եկեղեցի 310, 314

Սբ. Լուսաւորիչ 49

Ս. Կարապետ 22, 84, 101, 105

Ս. Կարապետի վանք (Իննակնեան կամ Գլակայ վանք) 5, 14-5, 17, 21, 26, 29, 35, 49, 57, 76, 78-9, 103, 107, 133, 139-40, 172, 181, 188, 190-1, 201, 286

Ս. Կարապետի լեռ 7

Ս. Կարապետի վանքի ժառանգաւորաց վրժ. 240-2, 254

Ս. Ղեւոնդեան 36, 105, 108

Ս. Մեսրոպ 105

Ս. Մեսրոպեան Ազգ. վարժարան 41

Ս. Յակոբ 36, 105, 179, 191

Ս. Յարութիւն 106

Սբ. Յովաննու վանք (Ս. Յովաննէս) 51, 103, 106, 190-1, 209

Սբ. Սահակ 88

Սբ. Սահակեան 67, 107

Ս. Սարգիս Եկեղեցի 14, 57, 85, 105-106, 176, 303, 310

Ս. Ստեփանոս 209

Սբ. Փրկիչ 42

Սպիտակ սար (Ազ տաղ) 5, 8-9, 12-3, 36, 44-5, 60-61, 63, 67, 85, 90, 98, 140, 282

Ստամպոլ 138

Սրմանց 4-5, 7, 19

Վ

Վան 5, 21, 28, 63, 210, 212, 229, 241, 274

Վանքիկ 56, 104, 176

Վառնա 178

Վարազայ վանք 210

Վարաժնունիք 3, 10, 32, 97

Վարդաւան 196

Վարդօ 5-7, 10-1, 100-1, 132, 144, 263, 284, 297, 301-2, 307

Վենեսիկ 3, 69

Վերան Շեհիր (Վերանշահար) 100, 296

Վոթրրթաւուն 311

Վոլկա 151

Վոլոտկա 152

Վրէժ (Ատրպատական) 243

Տ

Տանկահայաստան 93, 305, 308,

Տանկաստան 135

Տանկներու թաղ 64

Տաշխան (Կարնոյ Կեդր. բանտ) 50, 164

Տարբան 4

Տարիալի կիրն 151

Տարօն 4, 17, 33, 42, 93, 258, 261, 263-4, 268, 307

Տարօն (Վառնաստան) 39

Տերպեսիէ 183

Տէլիկթաշ 99

Տէկիրմէն տէրէ 150

Տէսին 249

Տէվէ Պոյուն 149, 271

Տէտէ վերան 12

Տէրէ Դորեան 212

Տէրսիմ 42, 151, 157, 291, 302-4

Տէրտրոջ թաղ 64

Տէրտրոջ ջաղացք 295

Տիբրոյիս 59, 94, 163, 179, 184,

238, 310-1, 315-7, 333, 467

Տիկրանկերտ 21-2, 24, 44, 190, 194, 211

Տիվրիկ 194

Տիւան 221

Տիւզիւրտ 99

Տոբախան 98, 276

Տուարածատափ 3, 5, 98-9

Տուզա 30

Տուքաղ 45, 149, 273

Տուկրաշէն 99

Տուման 33, 53, 89-90, 95-6, 105, 163, 215, 226, 231-2, 240, 278, 302

Տուրուբերան 3-4, 32, 36

Տրապիզոն 22

Տփղիս 36

Ր

Րէյս 69

Ց

Ցրօն 4

Փ

Փալանթոֆեան 12, 194

Փայաճուկ 213

Փայկ կամ Հայկ 4, 35, 90-1, 95, 197, 220, 283

Փայվերան 98

Փարիզ 20, 68, 243, 254, 316

Փափուայ 317

Փէլլուսայտ Փարք 315

Փէնսիլվէնիա 183, 312, 316

Փոֆր Ասիա 20, 302

Փոֆր Մասիս 243

Փրակայի Համալսարան 178

Փրովիտէնա 310, 312, 314-5, 319

Ք

- Քազապլանքա 314
- Քալիֆորնիա 84-5, 89, 135, 166, 170, 187, 223, 236-8, 256, 260, 310, 312, 314
- Քաղֆիկ 4, 31, 56, 58, 63, 65, 67, 80, 91-6, 106, 108, 117-8, 123, 140, 166, 201, 206, 215, 222-3, 230, 235-6, 240, 246, 252-4, 267, 278, 280, 309, 311
- Քառասուն Մանկունք 13-4, 55, 60, 102, 200
- Քարաբլուր 293
- Քար - Սիրտ 51
- Քարեր 291
- Քաւառ 97
- Քեմալս 150, 157
- Քեչեյու 100
- Քերձ 97
- Քեշիշան 98, 276
- Քեչեյան 101
- Քէօշֆ կամ Հանի Ամիր ֆէօյ 99, 220
- Քէօփր ֆէօյ 207, 263
- Քիւլի 11, 99, 196
- Քըքաննի 98
- Քըռէֆ 14, 91
- Քըոսա 98
- Քըրքիս Ինսքիքիք աֆ Միւզիշըն 183
- Քըրն փողոց 237
- Քզի 5, 69, 76

- Քունաւ 100
- Քրդագով 206
- Քօր Օղլու կամ Արշակ բագաւորի բերդ 54, 101
- Քօռ ջուր կամ Գոռ ջուր 98, 285


Օ

- Օբերա Քըմբանի 183
- Օձ ֆաղաֆ 208
- Օձի հագինա 14, 66, 92
- Օտապաշու Չաւուրմա 99
- Օտեսա 124, 126, 153-4
- Օֆլէնտ (Քալիֆորնիա) 316
- Օֆրին Թէննիսի 310

Ֆ

- Ֆիլատելֆիա 161, 183, 255, 310-11, 314-6, 322, 333, 467
- Ֆիլատելֆիա Լասալ Գոլէն 312
- Ֆիլատելֆիոյ Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցի 181
- Ֆինի Այլընտ 317
- Ֆլիք 266
- Ֆրանսա 37, 181, 223, 249, 310, 317
- Ֆրանֆին (Մասաչուսէց) 316
- Ֆրէզնօ (Քալիֆորնիա) 84, 165-6, 170, 181, 223, 237-8, 310-11, 314, 316, 319:
- Ֆրէզնօյի Հայաստան գերեզման 256

Ն Կ Ա Ր Ն Ե Ր Ո Ւ Ց Ա Ն Կ



Եղիշէ Յ. Մելիքեան	Ե
Պինկէօլ	6
Պինկէօլի Բարձրաւանդակը	7
Աղ Տաղը եւ հնուսի Դաշտը Հարաւէն Դիտուած	8
Խամուր Լեռ	9
Արաֆս Գետը՝ հնուսի և Բասենի Միջեւ	10
Որբերը՝ Մարգանֆի Պահուն	18
հնուս Բերդ	28
Ժածան Քար	30
Սեպուհ	34
Պետրոս Էֆէնտի Չաֆարեան	37
Կուլէ Մայրիկ	39
Սարիատեան Եղբայրներ Իրենց Ընտանեկան Կազմով	40
Տիգրան Գորգմագեան	47
Խմբապետ Փիլոս Սարգիսեան	52
Մովսէս Տէր Չաֆարեան	58
Պատուելի Արշակ Թիւրքիւնեան	68
Փրոֆ. Վահան Միլրագենց	70
Աւետիս Մանուկեան	71
Արտաշէս Մուրատեան	72
Եղիշէ՝ Շահվալատի Սամսոնի Տղան	73
Էրզրումէն Խմբանկար (*)	77

(\*) Էջ 77 — Խմբանկար. ընկողմանած՝ Եղիշէ Մելիքեան, Յաւակ Թերզեան (Խարբերող), Բ. կարգ. աչէն՝ Կ. Լիւլէնեան (Խարբերող), Արտաշէս Մուրատեան, Տօֆթ Մասիս Օհանեան (Շապին Գարահիսարցի), Եղիշէ Խամամիրեան, Գ. կարգ. աչէն՝ Յակոբ Յակոբեան (Խարբերող)՝ այժմ Հայաստան, բժիշկ), Օննիկ Մանուկեան (Գրեցի), Մուշեղ Խամամիրեան:

	Էջ
Հրայր	80
Ֆրէզնոյէն հմբանկար	84
Տուրպախ	85
Գերեզման՝ համուր Լերան Բարձունքին	94
Մկրտիչ Վարդապետ Զլխատեան	109
Արօրով Արտը կը Հերկեն	115
Խնուսցի Կիներ Պլզուր կը Մաքրեն	116
Խնուսի Հարամիկ Գիւղացիներ Փալախէն Կեմ Կոլորեն	120
Սահակ Առաքելեան	129
Սահակ Առաքելեանի Նամակին Պատնէնը	130
Հանրագրութեան Պատնէն	134
Պատ. Սիմոն Դաւիթեանի Օրագրութեան Բիշէնքեր 136, 137, 187, 204, 205	205
Տիգրան Ամրոյեան	145
Եղիշէ Մելիքեան և իր Եղբայրը՝ Լեւոն	148
Եղիշէ և Սիրվարդ Մելիքեան	155
Սիրաք Մելիքեան	156
Եղիշէ Մելիքեան իր Զակին և Թոռնիկներուն Հետ	157
Մեքենայի Գիւտի Մեհաշնորհի Պատնէն	158
Մելիքեան Ընտանիք	159
Նիւ Եոթ Գոլումպիա Պրօսէլտսիկն Սիսթըմ Թէլէվիժընի Կայանին Մէջ	160
Արշակ Գէորգեան և իր Ընտանիքը	163
Սեդրակ Գէորգեան	164
Միհրան Սիմոնեան եւ Որդին՝ Միհրանիկ	167
Վարագդատ Անտոնեան և Խաչիկ Զուլֆայեան	173
Տէր Սուրէն Ա. Քհնյ. Բարախեան	177
Տէր Եղիշէ Ա. Քհնյ. Մխիթարեան	180
Տէր Բարգէն Քհնյ. Գասպարեան	182
Փօլ Կարապետեան	183
Փրոֆ. Յարութիւն Տիրացեան	184
Պատուելի Սիմոն Դաւիթեան	186
Սերոբ Ազբիւրի Խումբը	232
Նրանոս Հըլոյեան	235
Նրանոս Հըլոյեանի Զինուորական Ծառայութեան Վկայագիրը	237
Նդիագար Սաղէեան	248
Նդիշէ Յ. Մելիքեան և Զաքար Տէր Զաքարեան	255
Ալեքսան Գրմոյեան	259
Արմենակ Գրմոյեան	260
Կորիւն (Գոմսայ Իսօ)	262

	Էջ
Գէորգ Զաուշ	265
Քրտական Համիտիէ Հեծելագօրք	270
Սանամ Տիրացեան և իր Որդին՝ Արշակ	297
Շէյխ Սայիտ	300
Նդիշէ Յ. Մելիքեան, Տէրսիմի Քրտական Տարագով Թաժտին	304
Խորէն (Սիրաք) Մելիքեան	305
Մկրտիչ Մկրտիչեան	312
Արամ Մկրտիչեան	313
Վրէժ Մկրտիչեան	313
Վարդգէս Մկրտիչեան	313
Օրիորդ Մէրի Տէր Զաքարեան	317
Գուրգէն Տիրացեան	318
Ռուբէն Տիրացեան	318
Հէնրի Տիրացեան	318
Էտուրքո Տիրացեան	318
Ժան Էլոյեան	322
Խաչիկ Յովհաննէսեան	324
Եղիշէ Յ. Մելիքեան Տարօնցիներուն Հետ (Հալէպ)	325, 326
Մինաս Խաչատուրեան, Եղիշէ Յ. Մելիքեան և Մելիք Սարիատեան	328
Խմբանկար Սեդրակ Սարիատեանի Յարկին Տակ	328
Եղիշէ Յ. Մելիքեան՝ Խնուսցի Երկու Աշակերտներուն Հետ	329
Փեհիլանը Գործի Վրայ	459
Ճիտու Կոխ	462
Գնչուն Արջ կը Խաղցնէ	463



## Վ Ր Ի Պ Ա Կ

Էջ	Սխալ	Ուղիղ
4	<i>Սկիւմօրուք</i>	<i>Չաղրղան</i>
70	<i>Ճաղացի</i>	<i>Չաղացի</i>
71	1877	1887
75	<i>Սահակ (Շէպօ)</i>	<i>(Քանքառ) Սահակ</i>
75	<i>Մարգար (Քանքառ)</i>	<i>(Շէպօ) Մարգար</i>
78	<b>ՉԱ.</b>	<b>ՉԱ.</b>
97	<i>Խոլիմախսուտ (կրկնուած)</i>	
98-9	<i>Խարապուրախ (կրկնուած)</i>	
99-100	<i>Թաչքեասան (կրկնուած)</i>	
100-101	<i>Ղալաճի (կրկնուած)</i>	
108	<i>Շիւչէրեան</i>	<i>Քիւչէրեան</i>
120	<i>Գեմ</i>	<i>Կեմ</i>
142	<i>Աստուած երրորդը</i>	<i>Աստուած երրորդը խնայէ</i>
154	DRAGONIAN	DRAGOMAN
190	<i>Ճայ</i>	<i>Ճար</i>
322	<i>աշխատասիրութիւնը</i>	<i>աշխատասիրութիւնը</i>
327	<i>Խնուցիներ</i>	<i>Խնուցիներ</i>
339	<i>քաշի</i>	<i>դաշի</i>
386	<i>Թօփալ Թօ</i>	<i>Թօփալ Թօ-Թօ</i>
432	<b>Չ</b>	<b>Ճ</b>
489	<i>Թամբլիշակ</i>	<i>Թամբլիմշակ</i>
509	<i>Հեղնելու</i>	<i>Հեծնելու</i>
521	<i>չամչոխ</i>	<i>չամոխ</i>
526	<i>օլլիս</i>	<i>չլլիս</i>